Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Ф.М.ДОСТОЕВСКИЙ

Братья Карамазовы

Роман

II

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН–1984

Ֆ.Մ.ԴՈՍՏՈԵՎՍԿԻ

Կարամազով եղբայրներ

Վեպ

II

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ–1984

ԳՄԴ 84 Ռ1
Դ 798

ԿԱՐԳԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆԻ
թարգմանությամբ

Դոստոևսկի Ֆ. Մ.

Դ 798 Կարամազով եղբայրներ։ Վեպ/Կ. Սուրենյանի թարգմ.— II — Եր.։ Սովետ. գրող, 1984,— (Ռուս. դաս. գ-բան). 1984, 640 էջ։
4702010100(3)
705(01)84 — 84 «8»

ԳՄԴ 84 Ռ1
Բ 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանություն և ձևավորման ոճաբար, 1984

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գիրք յոթերորդ

ԱԼՅՈՇԱ

I

ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉԸ

Ննջեցյալ սքեմազգյաց աբեղա սրբահայր Զոսիմայի մարմինը թաղման պատրաստեցին ըստ սահմանված կարգի։ Մահացած վանականներին և սքեմազգյացներին, ինչպես հայտնի է, չեն լվանում։ «Հորժամ ումն ի վանականաց հանգչի ի տեր (ասված է մեծ ծիսարանում), ապա սահմանյալ վանականը (այսինքն՝ այդ բանի համար նշանակվածը) տաք ջրով սրբում է մարմինը նորա, նախապես սպունգով խաչակնքելով ճակատը վախճանյալի, կուրծքը, ձեռքերը և ոտքերն ու ծնկները, և ոչինչ առավել»։ Այդ բոլորը հայր Պաիսին կատարեց անձամբ։ Սրբումից հետո վանական զգեստ հագցրեց ննջեցյալին և պարուրեց պատմուճանով, որ փոքր-ինչ կտրատեց ըստ կանոնի, որպեսզի պարուրի խաչաձև. գլխին ութանկյուն խաչով մի փեղույր դրեց։ Ննջեցյալի դեմքը ծածկեցին սև շուշփայով, իսկ փեղույրը բաց մնաց։ Ձեռքերի մեջ փրկչի սրբապատկերը դրեցին։ Եվ այդ հանդերձանքով էլ առավոտյան դեմ փոխադրեցին դագաղի մեջ, որն արդեն վաղուց էր՝ նախապատրաստված։ Եվ որոշեցին դագաղն ամբողջ օրը թողնել խուցում (այն մեծ սենյակում, ուր հանգուցյալ սրբահայրն ընդունում էր մի քանիներին ու աշխարհականներին)։ Քանի որ ննջեցյալը սքեմազգյաց աբեղա էր իր հոգևորական կարգով, վանական աբեղաներն ու սարկավագները

ջարտավոր էին նրա աճյունի վրա ոչ թե սաղմոս, այլ ավետարան կարդալ։ Ընթերցումն սկսեց հայր Իոսիֆը, հոգեհանգստյան արարողությունից անմիջապես հետո։ Իսկ հայր Պափսին, որ կամենում էր հետո անձամբ կարդալ ամբողջ օր ու գիշեր, առայժմ դեռ շատ զբաղված ու մտահոգ էր, ինչպես և մենաստանի մեծավորը, որովհետև հանկարծ անսովոր մի բան սկսել էր ի հայտ գալ թե՛ վանքի միաբանության, թե՛ աշխարհականների մեջ, որոնք խումբ-խումբ գալիս էին վանքի հյուրանոցներից ու քաղաքից. անլուր ու նույնիսկ «անպատշաճ» մի հուզմունք էր դա, անհամբեր մի ակնկալություն, որ հետզհետե ավելի ու ավելի ակնբախ էր դառնում։ Թե՛ մեծավորը, թե՛ հայր Պափսին ամեն ջանք ի գործ էին դնում, որ հնարավորին չափ հանդարտեցնեն խռովահույզ մարդկանց այդպիսի իրարանցումը։ Երբ արդեն օրը բավական լուսացավ, քաղաքից սկսեցին ժամանել նույնիսկ մի քանի այնպիսի մարդիկ, որոնք բերել էին նաև իրենց հիվանդներին, մանավանդ երեխաներին, կարծես թե դիտմամբ այս բոպեին էին սպասել դրա համար, երևի ապավինելով բուժման անմիջական զորությանը, որ ննջեցյալի աճյունը պետք է շուտով ի հայտ բերեր, ըստ նրանց հավատի։ Եվ ահա այս առթիվ միայն պարզվեց, թե մեր քաղաքում բոլորն էլ ի՜նչ աստիճան վարժվել էին անտարակուսելի ու մեծագործ մի սուրբ նկատելու ննջեցյալ սրբահորը՝ դեռ իր կենդանության օրոք։ Եվ միայն հասարակ խավի մարդիկ չէին եկողները։

Հավատացյալների այդ մեծ ակնկալությունը, որ արտահայտվում էր այնքան հապճեպորեն ու բացեիբաց, նույնիսկ անհամբերությամբ ու գրեթե պահանջկոտությամբ, աներկբայելի գայթակղություն էր թվում հայր Պափսիին. ու թեև նա վաղուց նախազգացել էր այդ, բայց իրականությունը գերազանցեց նրա սպասածը։ Վանականների մեջ հանդիպելով այդպիսի հուզվողների, հայր Պափսին սկսեց նույնիսկ հանդիմանել նրանց. «Այս կերպ և այսքան անմիջականորեն ակնկալել մի մեծ բան,— ասում էր նա,— թեթևամտություն է, աշխարհականների համար՝ կարելի, բայց մեզ համար՝ անվայելուչ։ Սակայն քիչ էին լսում նրան, և հայր Պափսին անհանգստությամբ էր նկատում այդ, հակառակ որ ինքն էլ նույնիսկ (եթե ամեն ինչ ճշմարտորեն վերհիշենք), իր հոգու խորքում, գաղտնորեն, գրեթե նույն բանն էր սպասում և չէր կարող ինքն իրեն չխոստովանել այդ, թեև վրդովվում էր չափազանց անհամբեր ակնկալություններից

ու դրանց մեջ թեթևամտություն և ունայնություն էր տեսնում։ Այնուամենայնիվ, նրա համար հատկապես տհաճ էր հանդիպել որոշ մարդկանց, որոնք իր մեջ, ինչ-որ նախազգացման թելադրանքով, մեծ տարակուսանք էին հարուցում։ Ննջեցյալի խուցում խռնված բազմության մեջ նա հոգեկան զզվանքով նկատեց (և անմիջապես էլ ինքն իրեն հանդիմանեց այդ զզվանքի համար), օրինակ, Ռակիտինի ներկայությունը, և կամ էլ օրդորսկցի վանականի, որ դեռ հյուր էր մնում վանքում. և հանկարծ այդ երկուսին էլ, չգիտես ինչու, հայր Պափսին կասկածելի համարեց, թեև այդ նույն առումով կարող էր նկատել ոչ միայն նրանց, այլև ուրիշներին։ Օբդորսկցի վանականը այդ հուզված բազմության մեջ աչքի էր ընկնում որպես մի մարդ, որ ամենից ավելի էր իրար անցել. նրան կարելի էր նկատել ամենուրեք, բոլոր անկյուններում։ Ամեն տեղ նա հարցուփորձ էր անում, ամեն տեղ ականջ էր դնում, ամեն տեղ փսփսում էր մի առանձնահատուկ, խորհրդավոր տեսքով։ Խիստ անհամբեր մի արտահայտություն կար դեմքին և կարծես արդեն նյարդայնացել էր, որ ակնկալվածը չի կատարվում այդքան երկար ժամանակ։ Իսկ գալով Ռակիտինին, նա, ինչպես պարզվեց հետո, մենաստանում այդքան կանուխ հայտնվել էր տիկին Խոխլակովայի հատուկ հանձնարարությամբ։ Այս բարեսիրտ, բայց փոփոխամիտ կինը, որ չէր կարող անձամբ մուտք գործել մենաստան, հենց որ զարթնեց ու իմացավ հանգուցյալի մասին՝ հանկարծ այնպիսի սաստիկ մի հետաքրքրությամբ տոգորվեց, որ անմիջապես Ռակիտինին մենաստան ուղարկեց իր փոխարեն, որպեսզի նա աչալուրջ դիտի և անհապաղ, մոտավորապես կես՝ ժամը մեկ, գրավոր հաղորդի իրեն ամեն ինչ, որ կատարվում է։ Տիկին Խոխլակովան խիստ բարեպաշտ ու հավատացյալ մի երիտասարդ էր համարում Ռակիտինին, որն ահա ա՜յդ աստիճան ընդունակ էր հաճոյանալ բոլորին և ամեն մեկի ցանկության համաձայն ներկայացնել իր անձը, եթե դրա մեջ նվազագույն մի շահ տեսներ իր համար։

Ջինջ, լուսապայծառ օր էր, և ուխտավորներից շատերը խմբվել էին դամբարանների մոտ, որոնք հատկապես խիտ էին տաճարի շուրջ ու նաև տարտղնված՝ մենաստանի ամբողջ շրջափակում։ Շրջելով մենաստանում, հայր Պափսին հանկարծ հիշեց Ալյոշային և անդրադարձավ, որ վաղուց չէր տեսել նրան, համարյա թե գիշերվանից։ Եվ հենց որ հիշեց, իսկույն եթե նկա-

տեց նրան մենաստանի ամենահեռավոր անկյունում, պարսպի մոտ՝ ի հնուց հանգուցյալ և իր սրբագործությամբ նշանավոր մի վանականի շիրմաքարի վրա նստած։ Թիկունքը դարձրել էր մենաստանին, երեսը՝ պարսպին, և կարծես թաքնվում էր հուշարձանի ետև։ Ընդհուպ մոտենալով, հայր Պախոմն տեսավ, որ նա, երկու ափով դեմքը ծածկած, արտասվում է անձայն, բայց դառնապես, ամբողջ մարմնով ցնցվելով հեծկլտանքներից։ Հայր Պախոմն մի պահ կանգնեց կողքին։

— Բավական է, որդյակ սիրելի, բավական է, սրտակից իմ,— ասաց նա ի վերջո զգացված,— ինչո՞ւ այդպես։ Ուրախացի՛ր, այլ ոչ թե արտասվիր։ Եվ կամ թե չգիտե՞ս, որ այս օրը մեծագույնն է նրա օրերից։ Հապա հիշիր լոկ այն, թե որտե՞ղ է նա հիմա, սույն րոպեիս։

Ալյոշան հայացքը բարձրացրեց ու նայեց նրան, բացելով իր դեմքը, որ արցունքից ուռել էր փոքրիկ երեխայի դեմքի նման, բայց և անմիջապես շրջվեց, առանց մի բառ ասելու, և նորից երեսը ծածկեց ափերով։

— Բայց թերևս այդպես է պետք,— ասաց հայր Պախոմն մտախոհ,— գուցե լավ է, որ արտասվես, Քրիստոս է ուղարկել քեզ այդ արտասուքը։ «Այս քո սրտառուչ արտասուքը հանգիստ է լոկ հոգեկան և զվարթություն կտա քո անուշ սրտին»,— ավելացրեց նա իր մտքում, հեռանալով Ալյոշայից և գորովահույզ մտածելով նրա մասին։ Բայց և փութով հեռացավ, որովհետև զգաց, թե ինքն էլ կարող էր արտասվել՝ նրան նայելով։ Իսկ ժամանակն անցնում էր, ննջեցյալի համար վանական արարողություններն ու հոգեհանգիստները շարունակվում էին ըստ կարգի։ Հայր Պախոմն դագաղի մոտ նորից փոխարինեց հայր Իոսիֆին և նորից ինքը շարունակեց ավետարանի ընթերցումը։ Բայց դեռ հետմիջօրեի ժամը երեքը չէր անցել, երբ կատարվեց մի բան, որին ակնարկել եմ դեռ նախորդ գրքի վերջում. դա այնքան անսպասելի էր բոլորիս համար և այնքան ներհակ էր համընդհանուր ակնկալության, որ, կրկնում եմ, այդ դեպքը մինչև օրս էլ ունայնամտորեն ու չափազանց կենդանի մանրամասներով հիշվում էր մեր քաղաքում և մեր ամբողջ շրջակայքում։ Այստեղ մի անգամ ես անձնապես իմ կողմից ավելացնեմ, թե ինձ համար դրեթե խորշելի է հիշել այդ սին ու գայթակղիչ դեպքը, որ ըստ էության շատ անիմաստ մի բան էր, բնական մի երևույթ. և ես, անշուշտ, առանց որևէ հիշատակության զանց

կանեի այդ պատահարը, եթե դա շատ ուժեղ ու որոշակի կերպով չներգործեր իմ այս պատմության գլխավոր, թեև ապագա հերոսի՝ Ալյոշայի հոգու և սրտի վրա, մի տեսակ բեկում ու շրջադարձ առաջ բերելով նրա հոգեկան աշխարհում, ցնցելով, բայց և արդեն վերջնականապես, ցկյանս ամրացնելով նրա բանականությունը և պարզորոշ նպատակի ծառայելով։

Եվ արդ, վերադառնանք պատմության։ Երբ դեռ լուսածագից առաջ սրբահոր պատանված մարմինը դրել էին դագաղի մեջ ու բերել առաջին սենյակը՝ նրա նախկին ընդունարանը, դագաղի մոտ գտնվողների մեջ հարց էր ծագել, թե պե՞տք է արդյոք սենյակի լուսամուտները բանալ։ Սակայն այդ հարցը, որ ներկաներից մեկը դրել էր ի միջի այլոց և հարևանցիորեն, անպատասխան ու գրեթե աննկատելի մնաց. գուցե միայն ներկաներից ոմանք նկատեցին, այն էլ իրենց մտքում, և լոկ այն իմաստով, թե կատարյալ անհեթեթություն է այդպիսի հանգուցյալի մարմնից նեխում և ապականության շունչ ապասել, և թե նույնիսկ ցավալի բան է (եթե ոչ ծիծաղելի) այդ հարցը դնող մարդու թերահավատությունն ու թեթևամտությունը։ Վասնզի ճիշտ հակառակն էին ապասում։ Եվ ահա, փեսօրն հագիվ էր անցել, երբ սկսվեց մի բան, որ սենյակ մտնող ու ելնողներն սկզբում ընկալում էին լռելյայն ու մտովի, և նույնիսկ յուրաքանչյուր ոք հայտնապես վախենում էր որևէ մեկին հաղորդել իր մեջ ծագող միտքը։ Բայց ժամը երեքի մոտ էր, երբ արդեն այդ բանն այնքան պարզ ու անհերքելիորեն ի հայտ եկավ, որ լուրը վայրկենապես տարածվեց մենաստանում և բոլոր ուխտավոր այցելուների մեջ, խսկույն թափանցեց նաև վանք և զարմանքի մատնեց բոլոր վանականներին, ու վերջապես, ամենակարճ ժամանակում, հասավ քաղաք և ալեկոծեց բոլորին՝ թե՛ հավատացյալներին, թե՛ անհավատներին։ Անհավատներն ուրախացան, իսկ ինչ վերաբերում է հավատացյալներին՝ նրանց մեջ գտնվեցին ոմանք, որ նույնիսկ ավելի ուրախացան, քան բուն իսկ անհավատները, որովհետև «մարդիկ սիրում են արդարի անկումն ու նվաստացումը», ինչպես հանգուցյալ սրբահայրը ինքն էր ասել իր հորդորներից մեկում։

Ենդիրն այն է, որ դագաղից ապականության շունչն սկսեց դուրս գալ կամաց-կամաց, բայց հետզհետե ավելի ու ավելի նկատելիորեն, իսկ ժամը երեքին արդեն չափազանց որոշակիորեն ի հայտ եկավ ու աստիճանաբար սաստկացավ։ Նման մի գայթակղություն, ինչպիսին այդ դեպքից անմիջապես հետո

երբեմն եկավ բուն իսկ վանականների մեջ, վաղուց չէր եղել ու նույնիսկ չէր էլ կարելի հիշել մեր վանքի ամբողջ անցյալ կյանքում. այդպիսի կոպտորեն սանձարձակ գայթակղությունը հնարավոր էլ չէր որևէ այլ դեպքում։ Հետագայում արդեն, և նույնիսկ շատ տարիներ հետո, որոշ խելամիտ վանականներ, մանրամասն վերհիշելով ամբողջ այդ օրը, զարմանում էին ու զարհուրում, թե ինչպե՞ս այն ժամանակ գայթակղությունը կարող էր այդ աստիճանին հասնել։ Որովհետև առաջ էլ պատահում էր, որ մահանում էին հույժ արդարակյաց վանականներ՝ ծերունիներ աստվածավախ, որոնց սրբակեցությունը ակնհայտ էր բոլորի համար, այնինչ նրանց դագաղներից ևս ելնում էր ապականության շունչը, հայտնվելով բնականորեն, ինչպես բոլոր մեռյալներից, բայց դա գայթակղություն առաջ չէր բերում, ոչ էլ նույնիսկ որևէ դույզն խռովք։ Իհարկե, մեզ մոտ եղել էին նաև ի հնուց հանգուցյալ հայրեր, որոնց հիշատակը դեռ վառ պահվում էր վանքում և որոնց աճյունները, ըստ ավանդության, նեխման նշաններ չէին ցուցաբերել. այդ երևույթը սրտառուչ ու խորհրդավոր էր թվացել միաբանությանը, հիշվելով պահպանվել էր որպես բարեբարդ ու հրաշալի մի բան, նաև իբրև խոստում, որ ապագային ավելի ևս մեծ փառք է ակնկալվում նրանց դամբարաններից, եթե միայն, կամոքն աստծո, հասնի դրա ժամանակը։ Այդպիսիներից էր հարյուր հինգ տարի ապրած վանական Հոքը՝ նշանավոր մոնազն, մեծանուն ծոմապահ ու լուսկյաց, որ արդեն վաղուց, ներկա դարի տասական թվականներին հանգել էր ի տեր և որի հիշատակը պահպանվում էր առանձին գուրգուրանքով. նրա շիրիմը հատուկ և բացառիկ հարգանքով էին ցույց տալիս առաջին անգամ եկող բոլոր ուխտավորներին, ըստ որում խորհրդավոր ակնարկություններ անելով ինչ-որ մեծ հույսերի մասին։ (Դա այն նույն շիրիմն էր, որի վրա Ալյոշան նստել էր առավոտյան, երբ հայր Պաիսին գտավ նրան)։ Ի հնուց անտի հանգուցյալ այս վանականից բացի, նույնպիսի կենդանի հիշատակ էր մնում նաև համեմատաբար ոչ շատ վաղուց հանգուցյալ սքեմազգյաց աբեղա, մեծանուն սրբահայր Վարսոնոֆիից. սա հենց այն սրբահայրն էր, որին հաղորդել էր հայր Զոսիման և որին, իր կենդանության օրոք, վանք այցելող բոլոր ուխտավորները ուղղակի կրոնախև էին համարում։ Այս երկուսի մասին պահպանվել էր այն ավանդությունը, թե նրանք իրենց դագաղներում պառկած էին կենդանի մարդու նման և թաղվել էին

առանց դույզն ինչ նեխած լինելու, և թե նրանց դեմքերը կարծես պայծառացել էին դագաղի մեջ։ Իսկ ոմանք էլ նույնիսկ հիշում էին ու պնդում, թե նրանց մարմիններից անուշ բուրմունք էր ելնում հայտնապես։ Բայց, համենայն դեպս, նույնիսկ շնչած այս հույժ պատկառելի հիշատակներին, դժվար կլիներ բացատրել այն անմիջական պատճառը, որ կարող էր այնքան թեթևամիտ, անհեթեթ ու շարախինդ մի երևույթի առիթ տալ սրբահայր Զոսիմայի դագաղի առաջ։ Ես անձնապես կարծում եմ, որ այստեղ շատ բաներ զուգադիպել են՝ այլազան պատճառներ ազդել են միաժամանակ։ Այդպիսի պատճառներից մեկն է, օրինակ, այն արմատացած թշնամությունը սրբահայրության կարգի դեմ, որպես շարաղետ մի նորության, այն ընդդիմությունը, որ վանքում դեռ խորապես պահպանվել էր բազմաթիվ վանականների մտայնության մեջ։ Իսկ հետո, անշուշտ և գլխավորը, նախանձն էր ննջեցյալի սրբության նկատմամբ՝ նրա կենդանության օրոք այնքա՜ն հաստատապես նվիրագործված սրբության, որի դեմ առարկելն իսկ արգելված էր կարծես թե։ Քանզի թեև հանգուցյալ սրբահայրը շատերին էր առինքնել՝ ոչ այնքան հրաշքներով, որքան սիրով, և փարծես սիրավետ հոգիների մի ամբողջ աշխարհ էր կերտել իր շուրջ, բայց այնուամենայնիվ ու առավել ևս այդ իսկ պատճառով նախանձ էր հարուցել իր դեմ, ուստի և վաստակել էր անողոք թշնամիներ՝ թե՛ բացահայտ, թե՛ թաքուն, և ոչ միայն վանականների մեջ, այլև նույնիսկ աշխարհականների։ Ոչ ոքի, օրինակ, վնաս չէր տվել, բայց թե՝ «Ինչո՞ւ այնքան սուրբ են համարում նրանց»։ Եվ այս մեկ հարցը միայն, տակավ առ տակավ կրկնվելով, ի վերջո անհագուրդ քինախնդրության մի ամբողջ անդունդ էր ստեղծել։ Ահա թե ինչու կարծում եմ, որ շատերը, ապականության հոտն առնելով նրա մարմնից, և այն էլ այդքա՜ն շուտ — որովհետև դեռ մի օր էլ չէր անցել նրա մահից հետո — անսահմանորեն ուրախացան. ու նմանապես՝ մինչ այժմ սրբահորը հարգող ու նրան նվիրված մարդկանց մեջ էլ իսկույն գտնվեցին այնպիսիներ, որոնք գրեթե անձնապես վիրավորված ու անարգված զգացին այդ դեպքից։ Իսկ դեպքի աստիճանական ընթացքը հետևյալ կերպ եղավ։

Հազիվ էր սկսել ի հայտ գալ նեխումը, և արդեն ննջեցյալի խուցը մտնող վանականների տեսքից միայն կարելի էր կռահել, թե ինչու են նրանք գալիս։ Մտնում էին, մի քիչ կանգնում, հետո շտապում էին դուրս գալ՝ հաստատելու համար լուրը ուրիշների

առաջ, որոնք խուսնարամ սպասում էին դրսում։ Այս սպասողներից ոմանք իրենց գլուխներն էին շարժում վշտահար, բայց ուրիշներն արդեն չէին էլ ուզում թաքցնել իրենց ուրախությունը, որ բացահայտորեն փայլում էր նրանց չարախիզ հայացքների մեջ։ Եվ այլևս ոչ ոք չէր կշտամբում նրանց, ոչ ոք մի արդար ձայն չէր բարձրացնում, և դա նույնիսկ տարօրինակ էր, որովհետև ննջեցյալ սրբահորը նվիրված մարդիկ այնուամենայնիվ մեծամասնությունն էին վանքում. բայց դե երևի նույնինքն աստված թույլ էր տվել, որ այս անգամ փոքրամասնությունը ժամանակավորապես հաղթանակ տաներ։ Շուտով խուցում երևացին նաև աշխարհականներ՝ առավելաբար զարգացած այցելուներից, նույնպես լրտեսելու մտադրությամբ։ Իսկ հասարակ մարդիկ քիչ էին մտնում, թեև այդ խավի մի մեծ բազմություն հավաքվել էր մենաստանի դարպասի առաջ։ Կարելի է հաստատ ասել, որ հատկապես ժամը երեքից հետո խիստ մեծացավ աշխարհական այցելուների հոսանքը, և հենց գայթակղիչ լուրի հետևանքով։ Մարդիկ, որոնք գուցե բոլորովին էլ չէին գալու այդ օրը և միտք էլ չունեին գալու, այժմ եկել էին դիտմամբ, և նրանց մեջ կային մի քանի բարձրաստիճան անձինք։ Սակայն պատշաճությունը գեռ արտաքնապես չէր խախտվում, և հայր Պախոմին, խստադեմ, շարունակում էր ընթերցել ավետարանը բարձրաձայն, անվարան ու հստակ արտասանելով, կարծես չնկատելով այն, ինչ կատարվում էր, թեև վաղուց էր արդեն անսովոր մի բան նկատել։ Բայց ահա նրա ականջին էլ սկսեցին հասնել ձայներ, որոնք սկզբում շատ մեղմ էին, բայց աստիճանաբար ուժեղանում էին ու քաջալերվում։ «Երևո՜ւմ է, որ աստվածային դատաստանն ա՛յլ է, քան մարդկայինը»,— լսեց հանկարծ հայր Պախոմին։ Առաջինը, որ այդ խոսքն արտասանեց, մի աշխարհական էր՝ քաղաքաբնակ պաշտոնյա, արդեն տարեց և, ինչպես ասում էին, շատ աստվածավախ մի մարդ. բայց նա, բարձրաձայն արտասանելով, պարզապես կրկնեց այն, ինչ վանականները վաղուց էին փսփսում իրար ականջին։ Նրանք վաղուց արդեն ասել էին այդ անբարեհույս խոսքը, և ամենավատթարն այն էր, որ այդ խոսքի հետ հաղթական մի տրամադրություն էր ի հայտ գալիս ու զարգանում բոպե առ բոպե։ Սակայն շուտով արտաքին պատշաճությունն էլ սկսեց խախտվել, և ահա բոլորը կարծես զգացին, թե նույնիսկ մի տեսակ իրավունք ունեն խախտելու։ «Եվ ինչպե՞ս կարող էր պատահել այս

բանը,— ասում էին վանականներից ոմանք, սկզբում կարծես նույնիսկ ցավ զգալով,— մարմինը փոքր էր, չորուկ, ոսկորներին կպած, որտեղի՞ց կարող էր լինել ապականության շունչը»։— «Ուրեմն աստված ուզում էր հատկապես մատնացույց անել»,— շտապում էին ավելացնել ուրիշները, և նրանց կարծիքն անմիջապես ընդունվում էր անվիճելիորեն, քանզի նշում էին դարձյալ, որ եթե նույնիսկ բնականորեն գոյանար ապականության շունչը, ինչպես որևէ մեղավոր ննջեցյալի մարմնից, պետք է համենայն դեպս ավելի ուշ ի հայտ գար, գոնե մի օր հետո, այլ ոչ թե այսքան ակնհայտորեն շուտափույթ. իսկ «այս մեկը բնությունն էլ կանխեց», ուրեմն այստեղ գործում է աստված ու դիտավորյալ մատը նրա։ Ուզում էր մատնացույց անել։ Այս դատողությունը ներգործում էր անդիմադրելիորեն։ Հեզահամբույր հայր Իոսիֆ աբեղան, մատենադարանապետը, որ հանգուցյալի սիրելին էր, փորձեց առարկել չարախոսներից ոմանց, թե «ամեն տեղ չէ, որ այդպես է», և թե արդարակյաց մարդկանց մարմինների անապականությունը դավանաբանական անհրաժեշտ մի դրույթ չէ ուղղափառ եկեղեցվո մեջ, այլ լոկ մի կարծիք. նույնիսկ ամենաուղղափառ երկրներում, օրինակ Աթոսում, ապականության շունչն այնքան էլ շփոթության առիթ չի տալիս, և փրկյալների փառավորման գլխավոր նշանը համարվում է ոչ թե մարմնի անապականությունը, այլ գույնը նրանց ոսկորների, երբ նրանց մարմինները բաղում տարիներ մնացել են հողի մեջ ու նույնիսկ փտել են այնտեղ։ «Եվ եթե ոսկրերն ի հայտ գան մեղրամոմի նման դեղնագույն՝ ահա ուրեմն մեծամեծ նշանը, որ աստված փառավորել է ննջեցյալ արդարակյացին. իսկ եթե ի հայտ գան ոչ թե դեղնագույն, այլ սևացած, ուրեմն աստված այդպիսի մարդուն չի արժանացրել փառավորման. ահա ա՛յս է նշանը Աթոսում՝ մեծ սրբավայրում, ուր ուղղափառ հավատքն ի Տնուց անտի պահպանվում է անխախտ ու պայծառագույն մաքրությամբ»,— եզրակացրեց հայր Իոսիֆը։ Սակայն խոնարհաբիրտ հոր խոսքերը մնացին ապարդյուն և նույնիսկ հեգնական ընդդիմություն առաջ բերեցին։ «Այդ բոլորը գիտություն են ու նոր-նոր բաներ, լսել անգամ չարժե»,— որոշեցին վանականները։ «Մենք հին ձևով ենք հավատում. քի՞չ նորություններ են մեջտեղ հանում հիմա, պետք է այդ բոլորին հետևե՞նք»,— ավելացնում էին ուրիշները։ «Մենք էլ ունեցել ենք սուրբ հայրեր, և ոչ նրանցից պակաս։ Նրանք

այնտեղ նստել են թուրքի լծի տակ և ամեն ինչ մոռացել են։ Նրանց ուղղափառությունն էլ վաղուց պղտորվել է, և նույնիսկ զանգեր չունեն»,— հարում էին ամենից ավելի ծաղրասիրները։

Հայր Իոսիֆը մի կողմ քաշվեց վշտաբեկ, մանավանդ որ շատ վստահորեն չէր հայտնել իր կարծիքը, ինքն էլ ասես քիչ հավատալով դրան։ Այլն շփոթահար կանխատեսեց, որ շատ անվայելուչ մի բան է սկիզբ առնում, և որ մինչև անգամ գլուխ է բարձրացնում բուն իսկ անհնազանդությունը։ Հայր Իոսիֆից հետո բոլոր խելամիտ ձայները լռեցին հետզհետե։ Եվ մի տեսակ այնպես պատահեց, որ բոլոր նրանք, ովքեր սիրում էին հանգուցյալ սրբահորը և գորովագին հնազանդությամբ ընդունել էին սրբահայրության կարգի հաստատումը, հանկարծ սոսկալի վախեցան մի բանից և, երբ հանդիպում էին իրար, երկչոտ նայում էին միմյանց երեսին։ Իսկ նրանք, ովքեր թշնամի էին սրբահայրության կարգին՝ որպես նորամուծության, հպարտորեն բարձրացրին իրենց գլուխները։ «Հանգուցյալ սրբահայր Վարսանոֆիից ոչ միայն ապականության շունչ ի հայտ չեկավ, այլև անուշ բուրմունք արտահոսեց,— հիշեցնում էին նրանք շարախնդորեն,— բայց նա ոչ թե սրբահայր լինելով արժանացավ դրան, այլ որովհետև ինքն էր սրբակյաց»։ Ու հետայսու արդեն պարսավանքներ ու մինչև իսկ բուն մեղադրանքներ թափվեցին նորոգ հանգուցյալ սրբահայր Զոսիմայի վրա։ «Սխալական էր ուսուցանում. ուսուցանում էր, թե կյանքը մեծ ուրախություն է, այլ ոչ թե արտասվալից խոնարհություն»,— ասում էին հույժ անմիտներից սմանք։ «Հավատում էր ըստ նորույթի, չէր ընդունում, որ դժոխքի հուրը նյութական է»,— ավելացնում էին առավել ևս անմիտները։ «Ծոմապահության նկատմամբ խստապահանջ չէր, քաղցրավենիք էր թույլատրում իրեն, բալի անուշ էր ուտում թեյի հետ. շատ էր սիրում այդ անուշը, տիկիններն էին ուղարկում նրան։ Սքեմազգեաց վանականը թե՞յ կխմի»,— լսվում էր որոշ նախանձորդներից։ «Հպարտացած նստում էր,— դժգոհամտորեն հիշում էին ամենից ավելի շարախինդները,— սուրբ էր համարում իրեն. ծնկի էին ընկնում նրա առաջ և իբրև պատշաճ էր ընդունում այդ»։— «Խոստովանանքի խորհուրդն էր չարաշահում»,— քինոտ փսփսուքով ավելացնում էին սրբահայրության ամենակատաղի հակառակորդները։ Եվ սրանց մեջ նույնիսկ կային երիցագույն ու խստակրոն վանականներ՝ ճշմարիտ ծոմապահներ ու լռակյացներ, որոնք լուռ էին մնացել ննջեցյալի

կենդանության օրոք, բայց այժմ հանկարծ բացել էին իրենց շրթները. և դա արդեն սոսկալի էր, որովհետև նրանց խոսքերը մեծապես ազդում էին երիտասարդ ու դեռ չկազմավորված վանականների վրա։ Սուրբ Սիլվեստրից եկած օբդորսկցի հյուրն էլ մեծ հետաքրքրությամբ ականջ էր դնում ասվածներին, խոր հառաչանքներ արձակելով ու գլուխը շարժելով։ «Չէ՞, երևում է, որ հայր Ֆերապոնտը երեկ ճշմարիտ էր դատում»,— մտածում էր նա, և մեկ էլ ահա երևաց հայր Ֆերապոնտը. կարծես հենց խոովությունը սաստկացնելու համար էր նա դուրս եկել իր խուցից։

Արդեն հիշել եմ նախօրոք, որ նա հազվադեպ էր դուրս գալիս փեթականոցում գտնվող իր փայտաշեն խուցից, նույնիսկ եկեղեցվո մեջ շատ հազվադեպ էր երևում, և որ նրան, որպես կրոնախեի, թույլ էին տալիս այդ բանը, ազատ կացուցանելով ընդհանուրի համար պարտադիր կարգ ու կանոնից։ Բայց եթե ամբողջ ճշմարտությունն ասենք, այդ բոլորը նրան թույլ էին տալիս որոշ անհրաժեշտությունից ելնելով։ Որովհետև՝ նույնիսկ մի տեսակ ամոթալի կլիներ, եթե ընդհանուր կանոնադրությամբ ծանրաբեռնեին այդքան մեծ ծոմապահին ու լռակյացին, որ աղոթում էր օր ու գիշեր (նույնիսկ նիրհում էր ծնրադիր)։ Եթե ինքը չէր ուզում ենթարկվել, բայց պարտադրեին, վանականները կարող էին ասել. «Նա մեր բոլորից էլ ավելի սուրբ է և դժվարագույնն է կատարում, ավելին, քան կանոնադրությունը. և եթե եկեղեցի չի գնում, ուրեմն ի՞նքը գիտե, թե երբ պետք է գնա, իր սեփական կանոնադրությունը ունի»։ Հենց այս հավանական տրտունջքին ու գայթակղության տեղի չտալու համար է, որ հանդիսաբար էին թողնում հայր Ֆերապոնտին։ Ինչպես բոլորին հայտնի էր արդեն, հայր Ֆերապոնտը սաստիկ չէր սիրում սրբահայր Զոսիմային։ Եվ ահա հանկարծ նրա խուցն էլ հասավ այն լուրը, թե «աստվածային դատաստանն ուրեմն այլ է, քան մարդկայինը, և թե նույնիսկ բնությունն էլ կանխեց»։ Պետք է ենթադրել, որ լուրը տանելու համար նրա մոտ վազող առաջին մարդկանցից մեկը օբդորսկցի հյուրն էր, որ երեկ այցելել էր հայր Ֆերապոնտին և սարսափած հեռացել նրանից։ Ինչպես արդեն ասացի, հայր Պաիսին հաստատակամ ու անհողդողդ կանգնած ընթերցում էր դագաղի վրա, ու թեև չէր կարող լսել ու տեսնել, թե ինչ է կատարվում խուցից դուրս, բայց սրտի խորքում անսխալականորեն կռահեց տիրող տրամադրությունը,

որովհետև շատ լավ գիտեր իր միջավայրը։ Ու լշփոթվեց, այլ առանց վախի սպասեց, թե ինչ դեպքեր կարող են կատարվել տակավին. թափանցող հայացքով հետամուտ էր լինում այդ խռովության հնարավոր վախճանին, որն արդեն պատկերացնում էր մտովի։ Եվ հանկարծ միջանցքում բարձրացած մի արտասովոր աղմուկ, որ արդեն ակնհայտորեն խախտում էր պատշաճությունը, նրա ականջը ծակեց։ Դուռը լայն բացվեց մեկեն, և շեմքին երևաց հայր Ֆերապոնտը։ Նրա ետևում, ինչպես պարզ երևում էր խուցից, անդաստակի առաջ խռնվել էին բազում վանականներ, որոնք ընկերակցում էին նրան, և աշխարհականներ էլ կային խմբի մեջ։ Սակայն ընկերակցողները ներս չմտան և անդաստակ էլ չբարձրացան, այլ մնացին ներքևում և սպասեցին, թե ինչ է ասելու հայր Ֆերապոնտը և ինչ է անելու հետո, որովհետև նրանք, հակառակ իրենց ամբողջ հանդգնության, մինչև իսկ որոշ վախով նախազգում էին, որ նա իզուր չի եկել։ Կանգնելով շեմքին, հայր Ֆերապոնտը ձեռքերը վեր նետեց, և նրա աջ թևի տակից սուր ու խուզարկու հայացքով նայեցին օրդոբսկցի հյուրի փոքրիկ աչքերը. նա միակն էր, որ չէր համբերել և հայր Ֆերապոնտի ետևից վազել ու բարձրացել էր սանդուղքով, իր ահռելի հետաքրքրասիրությունից մղված։ Իսկ մյուսները, ընդհակառակն, ավելի ևս ընկրկել էին անակնկալ վախից, երբ դուռը բացվել էր այդպիսի շռնդալի աղմուկով։ Համբառնալով զձեռս ի լերինս, հայր Ֆերապոնտը հանկարծ գոռաց.

— Հրաժարեցե՛ք հրաժարիմ,— և անմիջապես սկսեց ձեռքով խաչակնքել խուցի պատերն ու չորս անկյունները, մեկ կողմից մյուսը դառնալով հաջորդաբար։ Ընկերակցողներն անմիջապես հասկացան հայր Ֆերապոնտի այդ արարմունքը, քանզի գիտեին, որ նա միշտ, ուր էլ մտներ, այդպես էր անում, և որ չէր նստի ու մի բառ անգամ չէր ասի, մինչև չվտարեր շար ոգիներին։

— Ե՛լ աստի, սատանա, ե՛լ աստի, սատանա,— կրկնում էր նա յուրաքանչյուր խաչակնքման հետ։— Հրաժարեցե՛ք հրաժարիմ,— գոռաց նա նորից։

Իր կոշտ պարեգոտն էր հագել, մեջքին պարան կապած։ Կանեփե շապկի տակից երևում էր սպիտակ մազերով ծածկված մերկ կուրծքը։ Իսկ ոտքերը բոլորովին բոբիկ էին։ Հենց որ սկսեց ձեռքերը թափահարել, պարեգոտի տակ դղրդացին ու զնգզնգացին այն դաժան շղթաները, որ կրում էր իր մարմնի վրա։ Հայր Պախոմն ընդհատեց ընթերցումը, առաջ եկավ ու կանգնեց նրա դիմաց, սպասելով։

— Ձի՞րդ եկար, պատվական հայր։ Ընդէ՞ր պատշաճությունն ես խախտում։ Ընդէ՞ր խռովում ես հոտը խոնարհ,— ասաց նա վերջապես, խստահայաց նայելով նրան։

— Վասն է՞ր եմ եկյալ։ Ձի՞նչ հայցեմ։ Որպե՞ս հավատաս,— գոռաց հայր Ֆերապոնտը խնորեն։— Եկա վտարելու ձեր այստեղի հյուրերին՝ պիղծ դևերին։ Եկա նայելու՝ շա՞տ եք ժողովել դրանց իմ բացակայության ժամանակ։ Ցարասենու ավելով ավլել-հանել եմ ուզում դրանց։

— Չար ոգուն ես վտարում, բայց գուցե ինքդ էլ ծառայում ես դրան,— անհերկյուղ շարունակեց հայր Պախոմն։— Եվ ո՞վ կարող է ասել ինքն իր մասին՝ ասուրբ եմ ես։ Արդյոք դո՞ւ, հայր պատվական։

— Պիղծ եմ ես, այլ ոչ սուրբ։ Չեմ նստի բազկաթոռին ու չե՛մ տենչա, որ երկիր պագանեն իմ առաջ՝ իբրև կուռքի,— որոտաց հայր Ֆերապոնտը։— Այժմ մարդիկ սուրբ հավատքն են կործանում։ Հանգուցյալը, ձեր սո՛ւրբ մարդը,— դարձավ նա ամբոխին, մատով ցույց տալով դագաղը,— ժխտում էր դևերին։ Լուծողական էր տալիս դևերի դեմ։ Ահա և նրանք ածել ու բազմացել են ձեր մեջ, ինչպես սարդերն անկյուններում։ Իսկ այժմ ինքն էլ նեխեց։ Ի սմա տեսնում ենք մեծամեծ նշանն աստուծո։

Իսկ նրա ակնարկած դեպքն իրոք պատահել էր մի անգամ հայր Զոսիմայի կենդանության օրոք։ Վանականներից ոմն սկսել էր երազում տեսնել շար ոգուն, և ի վերջո նաև արթուն վիճակում սատանան պատկերանում էր նրա աչքին։ Եվ երբ նա, սաստիկ վախեցած, այդ բանը հայտնեց սրբահորը, հայր Զոսիման խորհուրդ տվեց անընդհատ աղոթել ու խստագույն ծոմ պահել։ Բայց երբ այդ էլ չօգնեց, սրբահայրը խորհուրդ տվեց նրան, որ շարունակելով հանդերձ ծոմն ու աղոթքը, նաև մի որոշ դեղ ընդունի։ Այն ժամանակ շատերը գայթակղվեցին և գլուխները շարժելով խոսում էին այդ մասին և ամենից ավելի՝ հայր Ֆերապոնտը. որոշ բանսարկուներ շտապել էին իսկույն հաղորդել նրան այդ «արտառոց» հորդորի մասին, որ սրբահայրը տվել էր այդպիսի յուրահատուկ դեպքի առթիվ։

— Ե՛լ աստի, հայր սուրբ,— հրամայականորեն ասաց հայր Պախոմն,— ոչ թե մարդիկ են դատում, այլ աստված։ Գուցե այս-

տեղ տեսնում ենք այնպիսի մի «նշան», որ ո՛չ ես, ո՛չ դու և ո՛չ ոք ի զորու չէ հասկանալու։ Ե՛լ ասա, հայր սուրբ, և մի՛ խռովիր հոգն հավատացելոց,— կրկնեց նա պնդորեն։

— Պահոց կանոնները չէր պահպանում ըստ իր նվիրապետական կարգի, ուստի և եղև նշան։ Ակներև է այս, և թաքուցանելն՝ մեղանչա՞նք,— չէր հանգստանում մոլագարը, որ անմտանալու չափ տարվել էր իր մոլեռանդությամբ։— Շաքարեղենով էր հրապուրվում, տիկիններն էին բերում նրան լի գրպաններով, թեյ էր ճաշակում, որկորն էր պաշտում, քաղցրավենիքով լցնելով զայն, իսկ միտքը՝ գոռոզությամբ... Ահա և այս պատճառով նախատինք կրեց...

— Թեթևամիտ են խոսքերը քո, հայր սուրբ,— իր ձայնը բարձրացրեց հայր Պախոմին։— Հիանում եմ քո ծոմապահությամբ ու խստակրոնությամբ, բայց թեթևամիտ են խոսքերը քո, կարծես թե ասած լինի աշխարհական մի պատանի՝ անկայուն ու մանկամիտ։ Օ՜ն, ե՛լ ասա, հայր սուրբ, հրամայո՛ւմ եմ քեզ,— որոգայթոստ եզրափակեց հայր Պախոմին։

— Ե՛ս ինքս ելանիցեմ ասա՞ի,— ասաց հայր Ֆերապոնտը, կարծես թե փոքր-ինչ շփոթված, սակայն չհրաժարելով իր գաղղումից,— գիտունն ե՞ք եք դուք։ Մեծ խելք ունեք և գոռոզությամբ եք նայում իմ ոչնչությանը։ Թերուս եկի այստեղ, և իմացածս էլ այստեղ մոռացա, ինքն ասված ձեր գերիմաստությունից պաշտպանեց ինձ՝ տկարիս...

Հայր Պախոմին կանգնել էր նրա առաջ և սպասում էր անդրդվելի։ Հայր Ֆերապոնտը լռեց և հանկարծ, վշտաբեկ, աչ ափը դրեց այտին ու սկսեց խոսել լացակումած ձայնով, նայելով ննջեցյալ սրբահոր գագաղին.

— Վաղն առավոտ «Պահապան և օգնական» պիտի երգեն նրա վրա՝ այդ փառավո՞ր կանոնը, իսկ երբ ես սատակեմ՝ ընդամենը «Որպիսի՞ քաղցրություն կենաց» են երգելու, փոքրիկ մի տաղ[1],— ասաց նա արտասվագին ափսոսանքով։— Հպարտացել եք ու գոռոզացե՞լ, ունա՞յն մի վայր է սա,— գոռաց նա հանկարծ խելագարի նման և, ձեռքը թափ տալով, արագորեն շրջվեց ու արագորեն վայր իջավ անդաստակի սանդուղքից։ Ներքևում սպասող բազմությունը տատանվեց. ոմանք անմիջապես հետևեցին նրան, բայց ոմանք էլ համեցան, որովհետև խուցի դուռը դեռ բաց էր և հայր Պախոմին, անդաստակ ելնելով հայր Ֆերապոնտի ետևից, կանգնած դիտում էր։ Սակայն մոլեգնած ծերունին դեռ ամեն ինչ չէր վերջացրել. հեռանալով քսան քայլ, նա հանկարծ դարձավ վերջալույսի արևին, ձեռքերը գլխից վեր նետեց ու արմատախիլ ծառի նման փռվեց գետին՝ ահռելի մի գոռոցով։

— Տե՛ր իմ հաղթանակեց։ Քրիստոս հաղթե՛ց մայր մրտնող արևին,— գոռաց նա խելահեղորեն, ձեռքերը մեկնելով դեպի արևը, և երեսնիվայր գետին ընկնելով հեկեկաց բարձրաձայն, փոքրիկ երեխայի նման, ոտքից մինչև գլուխ ցնցվելով ու թևերը տարածելով գետնի վրա։ Այս անգամ արդեն բոլորը վազեցին նրա մոտ, բացականչություններ լսվեցին, արձագանքող հեծկլտոցներ... Մի տեսակ մոլագարություն պատեց բոլորին։

— Ահա՞ թե ով է սուրբ։ Ահա՞ թե ով է արդարակյաց,— բացականչում էին ոմանք՝ արդեն անհերկյուղ։— Ահա՞ թե ով պետք է սրբահայր լինի,— ավելացնում էին ուրիշներ՝ արդեն շարասիրությամբ։

— Նա սրբահայրություն չի անի... Ինքը կմերժի... չի ծառայի անիծյալ նորությունին... չի հետևի նրանց հիմարություններին,— անմիջապես վրա բերեցին ուրիշ ձայներ։ Եվ նույնիսկ դժվար է պատկերացնել, թե ո՞ւր կհասներ այս ամբողջը, բայց հենց այդ բոպեին զանգը զողանջեց, կանչելով ժամերգության։ Բոլորը հանկարծ սկսեցին խալակնքել։ Վեր կացավ նաև հայր Ֆերապոնտը և, նշանավ խաչի պահպանելով իրեն, առանց ետ նայելու գնաց դեպի իր խուցը, դեռ շարունակելով բացականչություններ արձակել, բայց նրա ասածն արդեն բոլորովին անկապակից մի բան էր։ Մի քանի հոգի, սակավաթիվ մի խումբ, հետևեցին նրան, սակայն մեծամասնությունն սկսեց ցրվել, շտապելով ժամերգության։ Հայր Պախոմին ընթերցումը հանձնեց հայր Իոսիֆին և իջավ ներքև։ Մոլեռանդների խելահեղ գոռում-գոչյունները չէին կարող սասանել նրան, բայց նրա սիրտը հանկարծ տրտմեց ու վշտագին զգացումով լցվեց, և նա զգաց, թե

[1] Հասարակ վանականի և աբեմագլխաց մոնազի հուղակավորության ժամանակ (երբ անչունը խուցից տանում են եկեղեցի և, հոգեհանգստյան արարողությունից հետո, եկեղեցուց գերեզմանատուն) երգվում է «Որպիսի՞ քաղցրություն կենաց...» տաղաշարը։ Իսկ եթե ննջեցյալը աբեմագլխաց արհեղա է, երգում են «Պահապան և օգնական» կանոնը։

որոշակի մի բան էր դրա պատճառը։ Կանգ առավ ու հանկարծ հարց տվեց ինքն իրեն. «Ինչո՞ւ տրտում է անձն իմ՝ նույնիսկ վշտության չափ»։ Եվ զարմանքով կռահեց իսկույն, թե իր այդ անակնկալ տրտմությունն ըստ երևույթին հետևանք էր մի շատ փոքր ու մանկակի պատճառի. խուցի դռան առաջ խոնված տագնապահույզ ամբոխի մեջ նկատել էր նաև Ալյոշային, և հիմա հիշեց, որ այդ պահին, տեսնելով նրան, իր սրտում մի տեսակ ցավ էր զգացել անմիջապես։ «Բայց մի՞թե այդ մանուկն այսքա՜ն մեծ նշանակություն ունի այժմ իմ սրտում»,— հանկարծ զարմանքով հարցրեց նա ինքն իրեն։ Եվ հենց այդ րոպեին էլ Ալյոշան անցնում էր նրա մոտից, կարծես շտապելով մի տեղ, բայց ոչ դեպի եկեղեցի։ Նրանց աչքերը հանդիպեցին։ Ալյոշան արագորեն շրջեց հայացքը և խոնարհեց գետին, և արդեն պատանու տեսքից միայն հայր Պաիսին կռահեց, թե այդ րոպեին ինչպիսի՜ մեծ փոփոխություն է կատարվում նրա մեջ։

— Գուցե դո՞ւ ևս գայթակղվեցիր,— գոչեց հանկարծ հայր Պաիսին։— Բայց մի՞թե դո՞ւ ևս թերահավատների հետ ես,— ավելացրեց նա վշտագին։

Ալյոշան կանգ առավ և մի տեսակ անորոշ նայեց հայր Պաիսին, բայց նորից արագորեն շրջեց հայացքը և խոնարհեց գետին։ Կանգնած էր կողքով և դեմքը չդարձրեց նրա կողմը, ով հարց էր տվել իրեն։ Հայր Պաիսին դիտում էր ուշադիր։

— Իսկ ո՞ւր ես ճամապարում։ Ջանքը հրավիրում է ժամերգության,— ասաց նա կրկին, բայց Ալյոշան դարձյալ պատասխան չտվեց։

— Գուցե հեռանո՞ւմ ես մենաստանից։ Բայց ինչպե՞ս թե. առանց թողության խնդրելո՞ւ, առանց օրհնություն ստանալո՞ւ։

Ալյոշան հանկարծ ծուռ ժպտաց, մի տարօրինակ, շատ տարօրինակ հայացք նետեց հայր սուրբի վրա, որ իրեն հարց էր տալիս, այն հայր սուրբի, որի խնամքին էր հանձնել իրեն իր նախկին առաջնորդը, իր սրտի ու մտքի նախկին տերը, իր սիրելի սրբահայրը՝ մեռնելու պահին։ Եվ հանկարծ, նորից առանց պատասխան տալու, ձեռքը թափ տվեց, կարծես նույնիսկ հոգ չանելով ակնածանքի մասին, և արագ քայլերով գնաց դեպի դարպասը՝ դուրս մենաստանից։

— Դեռ կվերադառնա՞ս,— շշնջաց հայր Պաիսին, վշտագին զարմանքով նայելով նրա ետևից։

II

ԲԱԽՏՈՐՈՇ ՄԻ ՊԱՀ

Հայր Պաիսին չսխալվեց անշուշտ, երբ որոշեց, թե իր «սիրելի տղան» կվերադառնա նորից, և գուցե նույնիսկ կռահեց (թեկուզ ոչ լրիվ, բայց այնուամենայնիվ խորաթափանցորեն) Ալյոշայի հոգեվիճակի բուն իմաստը։ Եվ սակայն խոստովանում եմ անկեղծորեն, որ ինձ համար էլ շատ դժվար կլիներ հիմա որոշապես բացահայտել բուն իմաստը այդ տարօրինակ ու տարտամ պահի, որ հասել էր իմ այնքա՜ն սիրած ու դեռ այնքա՜ն երիտասարդ հերոսի կյանքում։ Հայր Պաիսիի տված վշտագին հարցին՝ «Մի՞թե դո՞ւ ևս թերահավատների հետ ես», կարող էի անշուշտ վստահորեն պատասխանել Ալյոշայի փոխարեն. «Ոչ, նա թերահավատների հետ չէ»։ Նույնիսկ ավելին. ճիշտ հակառակն էր տեղի ունեցել՝ նրա շփոթմունքն առաջացել էր հենց այն պատճառով, որ նա շատ էր հավատում։ Բայց համենայն դեպս շփոթմունքն առաջացել էր ու կար, և այնքա՜ն տանջալից էր, որ նույնիսկ հետագայում, երկար ժամանակ անցնելուց հետո, Ալյոշան իր կյանքի ամենածանր ու ճակատագրական օրերից մեկն էր համարում այդ վշտալի օրը։ Իսկ եթե ուղղակի հարցնեն՝ «Բայց մի՞թե այդ ամբողջ վիշտն ու այդպիսի տագնապը կարող էին նրա մեջ առաջ գալ պարզ այն պատճառով, որ նրա սրբահոր մարմինը, փոխանակ անմիջապես բուժական զորություն ի հայտ բերելու, ընդհակառակն, այդպիսի կանխահաս նեխման ենթարկվեց», ես կպատասխանեմ առանց երկմտության. «Այո, իրոք այդպես էր»։ Միայն թե կխնդրեի ընթերցողից, որ դեռ չշտապի ծիծաղի առարկա դարձնել իմ պատանի հերոսի մաքուր սիրտը։ Իսկ ինքս ոչ միայն մտադիր չեմ ներողամտություն խնդրելու նրա նկատմամբ և կամ նրա պարզամիտ հավատքն արդարացնելու, օրինակ, պատանեկան տարիքի թերություններով կամ էլ ուսման մեջ նրա ունեցած նվազ առաջադիմությամբ և այլն, և այլն, ընդհակառակն, նույնիսկ հայտարարում եմ անվարան, որ անկեղծ հարգանք եմ զգում նրա սրտի այդ բնատուր հատկության հանդեպ։ Իհարկե, մի ուրիշ պատանի, որ զգուշությամբ է ընկալում սրտաշարժ տպավորությունները և որ արդեն կարող է սիրել ոչ թե խանդակաթ ջերմությամբ, այլ պարզապես գաղջորեն, թեկուզ և ուղղակշիռ,

բայց տարիքի համեմատ չափազանց խոհեմ (ուստի և էժանագին) խելքով, այդպիսի պատանին, ասում եմ, կխուսափեր այն բանից, որ պատահեց իմ նորատի հերոսին։ Բայց որոշ դեպքերում, ճիշտն ասած, ավելի պատվաբեր է անձնատուր լինել թեկուզ անխոհեմ, բայց այնուամենայնիվ մեծ սիրուց ծնված զգացմունքի, քան բոլորովին չենթարկվել դրան։ Եվ առավել ևս՝ պատանեկան տարիքում, որովհետև անբարեհույս է այն պատանին, որ չափից դուրս հարատևորեն խոհեմություն է անում, և չի կարելի մի մեծ արժեք տալ նրան. ահա՛ իմ կարծիքը։ «Բայց,— գուցե բացականչեն հիմա խելամիտ մարդիկ,— չի կարող ամեն մի պատանի այդպիսի նախապաշարմունքի հավատալ, և ձեր պատանի հերոսը օրինակ չէ մնացյալների համար». Դրան ես դարձյալ կպատասխանեմ՝ այո՛, իմ պատանի հերոսը հավատում էր, հավատում էր սրբանվեր ու անսասան, բայց այնուամենայնիվ ես ներողամտություն չեմ խնդրում նրա նկատմամբ։

Գիտե՞ք ինչ. թեև ես քիչ առաջ հայտարարեցի (և գուցե շատ հապճեպորեն), որ չեմ սկսի բացատրություններ տալ ու արդարացնել իմ հերոսին, բայց տեսնում եմ, որ համենայն դեպս անհրաժեշտ է պարզել մի որոշ բան, որպեսզի հասկանալի լինի պատմության հետագա ընթացքը։ Ուրեմն ասեմ ահա. խնդիրն այստեղ հրաշքը չէ։ Թեթևամիտ անհամբերությամբ չէ, որ Ալյոշան հրաշքի էր սպասում։ Եվ ոչ թե ինչ-որ համոզմունքների հաղթանակի համար էր, որ հրաշք էր պետք նրան այն ժամանակ (այդ արդեն բոլորովին բացառված է), ոչ թե ինչ-որ կանխակալ դաղափարի համար, որ մի ուրիշ գաղափարի վրա հաղթանակ տաներ շուտով, ո՛չ, ամենևին ոչ. այդ բոլորի մեջ ամենից առաջ տեսնում էր մի դեմք, ու միայն մի դեմք՝ դեմքն իր սիրեցյալ սրբահոր, դեմքն այն արդարակյաց մարդու, որին նա այդպես պաշտելու չափ մեծարում էր։ Հենց այս է խնդիրը. «բոլորի և ամեն ինչի» նկատմամբ այն սերը, որ պահված էր նրա պատանեկան մաքուր սրտում, այդ օրերին ու նախորդող ամբողջ տարվա ընթացքում կարծես լիովին կենտրոնանում էր (և գուցե նույնիսկ սխալ կերպով) լոկ մի էակի վրա առավելապես, գոնե իր սրտի ուժեղագույն մղումների դրսևորման պահին. և այդ էակը իր սիրեցյալ սրբահայրն էր՝ այժմ արդեն հանգուցյալ։ Ճիշտ է, այդ էակն այնքա՛ն երկար ժամանակ նրա առաջ կանգնել էր որպես անվիճելի իդեալ, որ նրա սրտի բոլոր թարմ ուժերը չէին

կարող արդեն չձգտել բացառապես դեպի այդ իդեալը, մերթ ընդ մերթ «բոլորին և ամեն ինչ» մոռանալու ասպիճան։ Հետագայում ինքն էր հիշում, որ այդ ծանր օրվա ընթացքում բոլորովին մոռացավ իր եղբայր Դմիտրիին, որի մասին այնքա՛ն մտահոգվել ու տրտմել էր նախորդ օրը. մոռացավ նաև երկու հարյուր ռուբլին տանել Իլյուշայի հայրիկին, մի բան, որ այնպիսի՛ եռանդով մտադրել էր կատարել նույնպես նախորդ օրը)։ Սակայն դարձյալ՝ ոչ թե հրաշք էր պետք նրան, այլ լոկ «գերագույն արդարություն», որ խախտվել էր ի հեճուկս իր հավատքի, որով և այնքա՛ն դաժանորեն ու անակնկալորեն վիրավորվել էր իր սիրտը։ Եվ ի՞նչ փույթ, թե այդ «արդարությունը», իրերի իսկ բերումով, հրաշքի ձև էր ստացել Ալյոշայի ակնկալությունների մեջ, այն հրաշքի, որ անմիջականորեն սպասվում էր իր պաշտած առաջնորդի անչունից։ Չէ՞ որ վանքում բոլորն էլ այդպես էին մտածում ու ակնկալում, նույնիսկ նրանք, որոնց խելքի առաջ խոնարհվում էր Ալյոշան. հենց հայր Պաիսին, օրինակ։ Եվ ահա Ալյոշան, առանց տարակուսներով խռովելու ինքն իրեն, իր իղձերին էլ տվեց այն նույն ձևը, որ բոլորն էին տվել։ Եվ վազուց արդեն նրա սիրտն այդ կերտվածքն էր ստացել, մի ամբողջ տարվա վանական կյանքի սովորությամբ, և նա արդեն վարժվել էր այդպես ակնկալելու։ Բայց նա ծարավի էր արդարության, արդարությա՛ն, և ոչ թե լոկ հրաշքի։ Եվ ահա այն մարդը, որ, ըստ Ալյոշայի ակնկալության, պետք է բոլորից վեր դասվեր ամբողջ աշխարհում, այդ նո՛ւյն մարդն ահա, փոխանակ իրեն արժանի փառքով փառավորվելու, հանկարծ տապալվել ու անարգվել էր։ Վասն ինչի՞։ Ո՞վ էր գտել։ Ո՞վ կարող էր այդպիսի վճիռ արձակել։ Ահա այն հարցերը, որ անմիջապես տանջեցին նրա անփորձ ու կուսական սիրտը։ Չէր կարող նա առանց վիրավորանք կրելու, առանց սրտակուր ցասման հանդուրժել, որ արդարների մեջ արդարագույնը մատնվի ամբոխի շարախինդ ծաղրուծանակին, այնքա՛ն թեթևամիտ և նրանից այնքա՛ն ցածր կանգնած ամբոխի։ Դե լավ, թող բոլորովին էլ հրաշք չպատահեր, թող ոչ մի հրաշակերպ բան չհայտնվեր ու շարդարանային անմիջական ակնկալությունները, բայց ինչո՞ւ այս անփառունակությո՛ւնը հայտնվեց, ինչո՞ւ թույլատրվեց այս նախատի՛նքը, ինչո՞ւ եղավ այս շուտափույթ նեխո՛ւմը, «որ գեությունը կանխեց», ինչպես չարամիտ վանականներն էին ասում։ Ինչո՞ւ այս «նշանը», որ նրանք այնպես հաղթականորեն

հետևցնում են հայր Ֆերապոնտի հետ միասին, և ինչո՞ւ նրանք հավատում են, թե նույնիսկ իրավունք են ստացել այդպես հետևցնելու։ Իսկ ո՞ւր է նախախնամությունը և մատը նրա։ Ինչո՞ւ նախախնամությունը թաքցրեց իր մատը «ամենակարեոր քոպեին» (մտածում էր Ալյոշան) և կարծես ինքն իսկ ուզեց ենթարկվել բնության կույր, համր, անողոք օրենքներին։

Ահա թե ինչու արյուն էր կաթում Ալյոշայի սրտից, և անշուշտ, ինչպես ասացի արդեն, նրա վշտի բուն շարժառիթը այն մա՛րդն էր, որին ամենից ավելի էր սիրում աշխարհում, և որ «նախատինք» էր կրել, «փառազրկվել» էր։ Ասենք թե իմ պատանի հերոսի այս տրտունջը թեթևամիտ ու անխոհեմ բան էր, սակայն դարձյալ ու երբորդ անգամ կրկնում եմ (և նախօրոք համաձայն եմ, որ գուցե նույնպես թեթևամտություն եմ անում)— ուրախ եմ, որ իմ պատանի հերոսը այդքան խոհեմության չցուցաբերեց այդպիսի պահին, որովհետև խելացի մարդու համար միշտ էլ կգա խոհեմության ժամանակը, բայց եթե այդպիսի բացառիկ պահին անգամ սե՛րը չտիրի պատանու սրտում, այլևս ե՞րբ է տիրելու։ Եվ սակայն չեմ ուզում այս առթիվ լռության մատնել մի տարօրինակ երևույթ, որ թեև հարևանցիորեն, բայց այնուամենայնիվ ի հայտ եկավ Ալյոշայի մտքում՝ նրա համար ճակատագրական ու անստույգ այդ պահին։ Վայրկենաբար առկայծած այդ նոր բանը տանջալի մի տպավորություն էր՝ Իվանի հետ ունեցած երեկվա խոսակցությունից, որ հիմա Ալյոշայի միտքն էր գալիս անդադար։ Այո, հենց հիմա, այս պահին։ Օ՜, ոչ թե որևէ բան խախտվել էր նրա հոգու հիմնական, այսպես ասած տարերային հավատից, ո՞չ։ Նա սիրում ու անսասան հավատում էր իր աստծուն, թեև անակնկալորեն տրտնջացել էր նրա դեմ։ Բայց, համենայն դեպս, Իվանի հետ երեկվա խոսակցության վերհիշումից ծնվող տարտամ, բայց տանջալից ու հոռի տպավորությունը հիմա հանկարծ վերբստին սկսել էր խլրտալ նրա հոգում և ավելի ու ավելի համառորեն պահանջում էր մակերես բարձրանալ։

Մութն իջնում էր արդեն, երբ Ռակիտինը, որ մենաստանից վանք գնալիս անցնում էր սոճու պուրակով, հանկարծ նկատեց Ալյոշային՝ ծառի տակ երեսնիվայր պառկած, անշարժ ու ասես քնած։ Նա մոտեցավ ու ձայն տվեց։

— Դու... այստե՞ղ ես, Ալեքսեյ։ Բայց մի՞թե դու...— սկսեց նա զարմացած, սակայն խոսքը կես թողեց։ Ուզում էր ասել՝ «Մի՞թե դու ա՛յս բանին հասար»։ Ալյոշան չնայեց, բայց նրա մի տարտամ շարժումից Ռակիտինն անմիջապես իմացավ, որ նա լսում է իրեն ու հասկանում։

— Իսկ ի՞նչ է պատահել քեզ,— շարունակում էր նա զարմանալ, բայց նրա դեմքին զարմանքն սկսում էր փոխվել ժպիտի, որն ավելի ու ավելի հեգնական էր դառնում։

— Լսի՛ր, ախր երկու ժամից ավելի է՝ քեզ եմ փնտրում։ Հանկարծ կորար աչտեղից։ Բայց ի՞նչ ես անում այստեղ։ Ի՞նչ հիմարաբանություն է մտել գլուխդ։ Դե գոնե նայի՛ր ինձ...

Ալյոշան գլուխը բարձրացրեց, նստեց ու մեջքով հենվեց ծառին։ Չէր արտասվում, բայց դեմքին տառապանքի արտահայտություն կար, իսկ աչքերի մեջ չղայնություն էր երևում։ Սակայն նայում էր ոչ թե Ռակիտինին, այլ մի ուրիշ կողմ։

— Գիտե՞ս, դեմքդ բոլորովին փոխվել է։ Քո այն նախկին նշանավո՞ր հեզությունից բան չի մնացել։ Բարկացե՞լ ես որևէ մեկի վրա, ինչ է։ Անպատվե՞լ են քեզ։

— Հանգի՛ստ թող ինձ,— ասաց հանկարծ Ալյոշան, դեռ շարունակելով ուրիշ կողմ նայել և ձեռքի հոգնած մի շարժում անելով։

— Օհո՜, դրա՞ն հասանք։ Սկսեցինք բոլորա՞լ, իսկ և իսկ ուրիշ մահկանացուների նման։ Եվ սա երկնքի՜ց իջած հրեշտակ է, հա՜։ Է՜, Ալյոշկա, զարմացրիր ինձ, գիտե՞ս, անկեղծ եմ ասում։ Այստեղ վաղուց չէի զարմացել որևէ բանի վրա։ Բայց, համենայն դեպս, քեզ զարգացած մարդ էի համարում...

Ալյոշան վերջապես նայեց նրան, բայց մի տեսակ մտացիր, կարծես դեռ լավ չհասկանալով նրա ասածը։

— Բայց մի՞թե իսկապես պատճառը քո ծերուկի հոտելն է միայն։ Ինչ է, լրջորեն հավատո՞ւմ էիր, որ նա կսկսի հրաշքներ թափել,— գոչեց Ռակիտինը, նորից շատ անկեղծորեն զարմանալով։

— Հավատում էի, հավատում եմ, ուզո՛ւմ եմ հավատալ և պիտի հավատա՜մ, դե էլ ի՞նչ ես ուզում ինձնից,— գոռաց Ալյոշան ջղայնորեն։

— Ոչինչ չեմ ուզում, սիրելիս։ Թո՛ւհ, գրողը տանի, ախր տասներեք տարեկան դպրոցականն էլ հիմա չի հավատում դրան։ Բայց դե հե՛րն անիծած... է՜հ, ուրեմն հիմա դու զայրացել ես քո աստծո դեմ, ըմբոստացել ես, հա՞, այսինքն թե՝ աստիճանի

բարձրացո՞ւմն աչքաթող արեցին, տոնի առթիվ շքանշա՞ն չտվեցին։ Էխ, տիպեր եք, հա՞։

Ալյոշան մի երկար հայացք նետեց Ռակիտինի վրա, աչքերը մի տեսակ կկոցած, և հանկարծ մի բան փայլատակեց նրա աչքերում... բայց դա ոչ թե զայրույթ էր Ռակիտինի հանդեպ։

— Ես իմ ասածս դեմ չեմ ըմբոստանում. ուղղապես «չեմ ընդունում նրա աշխարհը»,— ծուռ ժպտաց հանկարծ Ալյոշան։

— Ինչպե՞ս թե չես ընդունում աշխարհը,— մի քիչ մտածեց Ռակիտինը նրա պատասխանի վրա։— Ա՞յդ ինչ ցնդաբանություն է։

Ալյոշան չպատասխանեց։

— Դե բավական է քրքրենք այդ դատարկ բաները։ Գործի անցնենք. մի բան կերե՞լ ես այսօր։

— Չեմ հիշում... կարծեմ կերել եմ։

— Քեզ կաղդուրվել է պետք, դատելով դեմքիցդ։ Մարդ որ երեսիդ նայի, մեղքանալը կգա։ Գիշերն էլ ախր չես քնել, լսում էի, ժողով ունեիք այնտեղ։ Եվ հետո՝ այս ամբողջ քաշկռտուքն ու խծբծանքը... Կա-չկա՝ նշխարի մի կտոր ես կերել։ Գրպանումս երշիկ ունեմ, ցերեկը համենայն դեպս վերցրել էի քաղաքից, երբ այստեղ էի գալիս։ Միայն թե դու երշիկ չես ուտի...

— Դե տո՛ւր, երշիկ տուր։

— Էհե՛, Ուրեմն ա՛յ թե ինչ։ Դե ասա՝ կատարյալ ապշտամբությո՛ւն է, բարիկադներո՛վ է՞, ախպերս, չի կարելի այսպիսի բանը աչքաթող անել։ Գնանք իմ սենյակը... Հիմա ինքս էլ մի քիչ օդի կկոնծեի, մեռնում եմ հոգնությունից։ Բայց երևի օդին չես համարձակվի... թե՞ կխմես, հա՞։

— Տո՛ւր, օդի էլ տուր։

— Բահո՞, շշմեցնում ես, ախպերս,— աչքերը լայն բացեց Ռակիտինը։— Դե լավ, այսպես թե այնպես, օդի լինի թե երշիկ՝ հոյակա՞պ բան է, լավ առիթ է, չի կարելի բաց թողնել։ Գնա՞նք։

Ալյոշան լուռ վեր կացավ գետնից ու հետևեց Ռակիտինին։

— Իվան եղբայրդ տեսնե՞ր այս բանը, ա՞յ թե կզարմանար, հա՞։ Ի դեպ, Իվան Ֆյոդորովիչդ այս առավոտ թռավ-գնաց Մոսկվա, գիտե՞ս, թե չէ։

— Գիտեմ,— անտարբեր ասաց Ալյոշան, և հանկարծ նրա մտքում առկայծեց Դմիտրիի դեմքը, բայց միայն առկայծեց մի վայրկյան, ու թեև մի բան հիշեցրեց, շտապ մի գործ, որն արդեն ոչ մի բոպե չէր կարելի հետաձգել, ինչ-որ մի պարտակա-

նություն, ահավոր մի անհրաժեշտություն, սակայն այդ հիշեցումն էլ ոչ մի տպավորություն չգործեց նրա վրա, չհասավ սրտին, հենց նույն վայրկյանին դուրս թռավ հիշողությունից ու մոռացվեց։ Բայց Ալյոշան հետագայում երկար ժամանակ չկարողացավ մոռանալ այդ վայրկյանը։

— Քո եղբայր Վանյան մի անգամ բարբառե՞ց իմ մասին, թե ես մի «անշնորհք, լիբերալ տոպրակ» եմ։ Եվ դու էլ մի անգամ չդիմացար ու իմ կտուրը քար գցեցիր, թե «անազնիվ» եմ ես... Լա՞վ, թող այդպես լինի։ Դե հիմա կտեսնեմ ձեր շնորհքն ու ազնվությունը։ (Այս վերջինը քթի տակ ասաց Ռակիտինը, փսփսալով)։ Թո՛ւհ, լսի՛ր,— սկսեց նա նորից բարձրաձայն,— վանքը մի կողմ թողնենք, ուղղակի քաղաք գնանք արահետով... Հը՞մ։ Պետք է, ի դեպ, Խոխլակովային հանդիպեմ։ Երեսակայիր, ես նրան գրավոր տեղեկացրի ամբողջ պատահածը, և, պատկերացնո՞ւմ ես, նա իսկույն ինձ պատասխանեց մատիտով գրած մի երկտողով (այդ տիկինը սոսկալի սիրում է երկտողներ գրել)։ «Ոչ մի կերպ,— ասում է,— այդպիսի՞ արարք չէի սպասում այնքան պատկառելի մի սրբահայրից, ինչպիսին հայր Զոսիման է»։ Հենց այդպես էլ գրել է՝ «արա՞րք»։ Նույնպես գայրացե՛լ է ախր։ Է՞խ, բոլորդ էլ տիպե՞ր եք։ Սպասի՛ր,— հանկարծ գոռաց նա նորից, մեկեն կանգ առավ և, բռնելով Ալյոշայի ուսը, նրան էլ կանգնեցրեց։

— Գիտե՞ս, Ալյոշկա,— խուզարկու հայացքով նայեց Ռակիտինը նրա աչքերի մեջ, ամբողջովին տարված մի նոր մտքով, որ հանկարծ ծագել էր իր գլխում. ու թեև ծիծաղում էր արտաքուստ, բայց ըստ երևույթին վախենում էր բարձրաձայն ասել այդ իր նոր միտքը, որովհետև Ալյոշայի ներկա տրամադրությունը ա՛յն աստիճան տարօրինակ ու անսպասելի էր թվում, որ դեռ չէր կարողանում հավատալ դրան։— Ամենալավը, Ալյոշկա... գիտե՞ս ուր գնայինք հիմա,— ասաց նա վերջապես վարանոտ ու շողում մի շեշտով։

— Միևնույն է... ուր որ ուզես։

— Գնանք Գրուշենկայի մոտ, հը՞։ Կգա՞ս,— ասաց ի վերջո Ռակիտինը, մինչև իսկ դողալով վարանոտ սպասումից։

— Գնանք Գրուշենկայի մոտ,— հանգիստ պատասխանեց Ալյոշան իսկույն, նեթ, և այդպիսի անմիջական ու հանգիստ պատասխանը այնքան անսպասելի էր Ռակիտինի համար, որ քիչ մնաց նա ետ ցատկեր։

— Դե՜... դե լա՛վ... Այ ահա՜,— սկսել էր գոռալ նա շշմած, բայց հանկարծ պինդ թևանցուկ արեց Ալյոշային և արագորեն տարավ նրան արահետով, դեռ սաստիկ երկյուղ կրելով, որ նրա այդ խիզախությունը հանկարծ հօդս կցնդի։ Լուռ քայլում էին, Ռակիտինը նույնիսկ վախենում էր խոսել։

— Ինչպե՞ս կուրախանա հիմա Գրուշենկան, ինչպե՞ս կուրախանա... — սկսեց մրթմրթալ նա, բայց նորից բերանը փակեց։ Եվ արդեն բնավ էլ Գրուշենկային ուրախացնելու համար չէր, որ Ալյոշային տանում էր նրա մոտ. լուրջ մարդ էր Ռակիտինը և առանց իր համար շահաբեր մի նպատակ ունենալու ոչինչ չէր ձեռնարկում։ Իսկ հիմա նա երկակի նպատակ ուներ. նախ՝ ուզում էր վրեժ առնել, այսինքն տեսնել «արդարակյացի խայտառակվելը»՝ Ալյոշայի «անկումը սրբությունից դեպի մեղսագործություն», որն արդեն նախօրոք ըմբռշխնում էր մտովի, և երկրորդ՝ աչքի առաջ ուներ նաև նյութական մի որոշ շահագրգռություն, իր համար շատ օգտաբեր, որի մասին խոսք կլինի ստորև։

«Ուրեմն այսպիսի բախտորոշ մի պահ ստացվեց,— մտածում էր նա ինքնիրեն չարախինդ զվարթությամբ,— այ ուրեմն հիմա կբռնենք սրա շլնքից, այսինքն այս պահի, որովհետև շատ ձեռնտու է մեզ համար»։

III

ՄԻ ԿԱՆԱՉ ՍՈՒ

Գրուշենկան ապրում էր քաղաքի ամենաքանուկ մասում, Մայր եկեղեցու հրապարակի մոտ. վարձել էր փայտե փոքր մի շենք՝ վաճառականի այրի Մորոզովայի տան բակում։ Մորոզովայի տունը մեծ էր, քարաշեն, երկհարկանի, հին ու շատ անբարետես. այնտեղ մեկուսացած ապրում էր պառավ տանտիրուհին իր երկու զարմուհիների հետ, որոնք նույնպես տարեց օրիորդներ էին։ Նա կարիք չուներ բակի շենքը վարձով տալու, բայց բոլորը գիտեին, թե Գրուշենկային վարձակալ էր ընդունել (դեռ չորս տարի առաջ) միմիայն ի հաճույս իր ազգականի՝ վաճառական Սամսոնովի, որ Գրուշենկայի բացահայտ հովանավորն էր։ Ասում էին, թե խանդոտ ծերունին երբ իր «սիրեցյալին» տեղավորում էր Մորոզովայի տանը՝ սկզբում նկատի ուներ

այն, որ պառավն իր սուր աչքով կհետևի նոր վարձակալի վարքուբարքին։ Բայց շուտով պարզվեց, որ սուր աչքն ավելորդ է, Մորոզովան սկսեց նույնիսկ հազվադեպորեն հանդիպել Գրուշենկային և ի վերջո բոլորովին չէր ձանձրացնում նրան որևէ տեսակի հսկողությամբ։ Ճիշտ է, արդեն չորս տարի էր անցել այն օրից, երբ ծերունին նահանգային կենտրոնական քաղաքից այս տունն էր բերել տասնութամյա երկչոտ, ամոթխած, երբաղեղ, նիհարիկ, մտածկոտ ու տխուր աղջկան, և շատ շրեր էին հոսել դրանից հետո։ Եվ սակայն մեր քաղաքում քիչ բան գիտեին այս աղջկա կենսագրությունից, այն էլ տարտամորեն. վերջին ժամանակներս էլ որևէ նոր բան չիմացան՝ նույնիսկ երբ շատ-շատերն սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել Ագրաֆենա Ալեքսանդրովնայի նկատմամբ, որ չորս տարվա ընթացքում «չքնաղ գեղեցկուհի» էր դարձել։ Միայն լուր էր պտտվում, թե մարդու մեկը, իբրև թե մի սպա, խաբել ու հետո անմիջապես լքել է Գրուշենկային, երբ նա դեռ տասնյոթ տարեկան մի աղջնակ էր։ Սպան թողել-գնացել է ու հետո ամուսնացել է մի տեղ, իսկ Գրուշենկան մնացել է աղքատության մեջ, պատիվը կորցրած։ Եվ սակայն ասում էին, որ թեև ծերունին իսկապես աղքատությունից է հանել Գրուշենկային, բայց աղջիկը սերում է հոգևորական դասին պատկանող մի պատվավոր ընտանիքից՝ ինչ-որ անպաշտոն սարկավագի կամ նման մի մարդու դուստրն է։

Եվ ահա ուրեմն, չորս տարվա ընթացքում, խղճուկ, անարգված ու զզայուն որբուհին դարձել էր վարդագեղ ու լիամարմին ռուս գեղեցկուհի, համարձակ ու վճռական բնավորության տեր մի կին, որ հպարտ էր ու աներես, գիտեր փողի արժեքը, ժլատ էր, զգուշավոր, ամեն ինչ ձեռք էր բերում արդար կամ անարդար միջոցներով և արդեն կարողացել էր, ինչպես ասում էին, իր սեփական փոքր դրամագլուխը դիզել։ Միայն մի բան կար, որին բոլորը հաստատ համոզված էին. դժվարամատչելի էր Գրուշենկան, և բացի նրա ծերունի հովանավորից՝ չորս տարվա ընթացքում չէր եղել մի մարդ, որ կարողանար պարծենալ, թե նրա բարեհաճությունն է վայելել։ Դա անտարակուսելի փաստ էր, որովհետև այդ բարեհաճությունը ձեռք բերելու համար բավականաչափ հավակնորդներ էին մեջտեղ ընկել, հատկապես վերջին երկու տարիներին։ Սակայն բոլոր փորձերն իզուր էին անցել, իսկ դարպասողներից ոմանք, հանդիպելով հաստատակամ պար-

մանուհու անհոգդոզդ ու հեգնական ընդդիմության, ստիպված էին եղել մինչև իսկ զավեշտական ու ամոթալի նահանջի դիմել։ Հայտնի էր նաև, որ այս պարմանուհին, հատկապես վերջին տարվա ընթացքում, սկսել էր այսպես կոչված «ձեռնտու գործերով» զբաղվել և այդ ուղղությամբ ցուցաբերել էր արտակարգ ընդունակություններ, այնպես որ շատերն ի վերջո իսկական չհուզ էին կոչել նրան։ Ոչ թե վաշխառուական տոկոսներով փող էր պարտք տալիս, այլ ուրիշ գործարքներ էր անում. հայտնի էր դարձել, օրինակ, որ մի որոշ ժամանակից ի վեր ընկերացել է Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի հետ և, իբրև, մուրհակներ գնելով է զբաղվում. առնում է չնչին գնով՝ ռուբլու դիմաց տասը կոպեկով, իսկ հետո որոշ մուրհակներից տասնապատիկ օգուտ է անում՝ տասը կոպեկի դիմաց մի ռուբլի ձեռք բերելով։

Այրի ու հիվանդ Սամսոնովը, որի ոտքերն ուռել էին և վերջին տարում մատնվել անշարժության, ժլատ ու անողոք մի մեծահարուստ էր, իր հասուն որդիների բռնակալը, սակայն ընկել էր իր պաշտպանյալի ուժեղ ազդեցության տակ, թեև սկզբում նրան իր բուի մեջ էր պահում ու ամեն կերպ ճնշում էր, ստիպում էր «ծում բռնել», ինչպես ծաղրասեր մարդիկ ասում էին այն ժամանակ։ Բայց Գրուշենկան կարողացել էր ազատագրվել, միաժամանակ իր հավատարմության նկատմամբ անսահման վստահություն ներշնչելով ծերունուն։ Այս ծերունին (այժմ արդեն վաղուց հանգուցյալ) խիստ գործարար մարդ էր և նույնպես աչքի էր ընկնում իր բնավորությամբ, մանավանդ շատ կծծի էր ու կայծքարի նման անկոտրում. ու թեև Գրուշենկան այնպես էր նվաճել նրան, որ ծերունին չէր էլ կարող ապրել առանց իր պաշտպանյալի (մանավանդ վերջին երկու տարիներին հենց այդպես էր), բայց ժլատ վաճառականը այնուամենայնիվ մի մեծ դրամագլուխ չհատկացրեց Գրուշենկային, և եթե վերջինս նույնիսկ սպառնար բոլորովին լքել նրան, նորից էլ ծերունին անդրդվելի կմնար։ Բայց, համենայն դեպս, մի փոքր դրամագլուխ հատկացրել էր, և նույնիսկ այդ էլ զարմացրեց բոլորին, երբ հայտնի դարձավ։ «Դու ինքդ էլ հաշիվդ իմացող կնիկ ես,— ասաց նա Գրուշենկային, ութ հազար ռուբլի տալով,— և ինքդ էլ գործ արա, բայց իմացիր, որ այլևս ինձից ոչինչ չես ստանա մինչև մեռնելս, բացի առաջվա նման քո տարեկան ապրուստի փողից, և կտակիս մեջ էլ ոչինչ չեմ հատկացնելու քեզ»։ Եվ նա իր խոսքը կատարեց. մեռավ ու ամեն

ինչ թողեց իր որդիներին, որոնց, կանանց ու երեխաների հետ, ծառաների պես էր պահել իր ամբողջ կյանքում, իսկ Գրուշենկային իր կտակում բոլորովին չհիշատակեց նույնիսկ։ Այս ամբողջը հայտնի դարձավ հետագայում։ Բայց նա Գրուշենկային շատ էր օգնում իր խորհուրդներով, թե ինչպես պետք է գործի դնել «սեփական դրամագլուխը», և շահաբեր «գործեր» էր ցույց տալիս նրան։ Երբ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովը, որ սկզբում մի պատահական «ձեռնտու գործի» առիթով էր կապվել Գրուշենկայի հետ, վերջ ի վերջո իր համար բոլորովին անսպասելիորեն սիրահարվեց նրան և այն էլ խելքը թացնելու աստիճան, ծերունի Սամսոնովը, մահամերձ հիվանդ լինելով հանդերձ, սկսեց կուշտ ու կուտ ծիծաղել նրա վրա։ Ուշադրավ է այն, որ Գրուշենկան լիովին ու նույնիսկ սրտանց անկեղծ էր իր ծերունու հանդեպ՝ իրենց ամբողջ ծանոթության ընթացքում, և կարծես թե ծերունին աշխարհում միակ մարդն էր, որին նա այդպես էր վերաբերվում։ Վերջերս, երբ Դմիտրի Ֆյոդորովիչն էլ հանդես էր եկել իր բուն սիրով, Սամսոնովը դաղարեց ծիծաղելուց։ Ընդհակառակն, մի անգամ անժպիտ լրջությամբ խորհուրդ տվեց Գրուշենկային. «Եթե պետք լինի ընտրել երկուսից մեկին՝ հորը կամ որդուն, դու ծերուկին ընտրիր, բայց այն պայմանով, որ պառավ սրիկան անպատճառ ամուսնանա քեզ հետ և նախապես գոնե մի որոշ դրամագլուխ փոխանցի քո անվանը։ Իսկ կապիտանի հետ գլուխ մի՛ դնիր, խեր չկա նրանից»։ Ահա հենց այս խոսքերն ասաց ծերունի հեշտասերը, որ այն ժամանակ արդեն նախազգում էր իր մոտալուտ մահը և, իսկապես էլ, Գրուշենկային այս խորհուրդը տալուց հինգ ամիս հետո մեռավ։ Հարևանցիորեն նշեմ նաև, որ թեպետ այդ ժամանակ մեր քաղաքում շատերը գիտեին հայր և որդի Կարամազովների անհեթեթ ու անճոռնի մրցակցության մասին, որի առարկան էր Գրուշենկան, բայց հազիվ թե որևէ մեկը հասկանում էր այդ երկուսի հանդեպ նրա վերաբերմունքի բուն իմաստը։ Նույնիսկ Գրուշենկայի երկու սպասուհիները հետագայում վկայություն տվեցին դատարանում (երբ արդեն կատարվել էր այն ազնտը, որի մասին խոսելու եմ տակավին), թե Ագրաֆենա Ալեքսանդրովնան պարզապես վախից դրդված ընդունում էր Դմիտրի Ֆյոդորովիչին՝ իբրև թե այն պատճառով, որ նա «սպառնում էր արյուն թափել»։ Ընդամենը երկու սպասուհի ուներ Գրուշենկան. դեռ իր ծնողներից մնացած մի պառավ խո-

հարարուհի, որ հիվանդ էր ու համարյա խուլ, և նրա թոռը՝ քսանամյա ժիր, նորատի մի աղջիկ, որ Գրուշենկայի աղախինն էր։ Իսկ Գրուշենկան շատ ծպատ էր ապրում և տան կահավորումը բնավ էլ շքեղ չէր։ Նրա վարձած շենքում ընդամենը երեք սենյակ կար՝ քսանական թվականների հին, կարմիր փայտե կահ-կարասիով, որ պատկանում էր տանտիրուհուն։

Երբ Ռակիտինն ու Ալյոշան նրա տունը մտան, արդեն մութն ընկել էր համարյա, բայց սենյակները դեռ լուսավորված չէին։ Գրուշենկան պառկել էր իր հյուրասենյակի խոշոր, անճոռնի, կոշտ բազմոցի վրա, որ կարմիր փայտե թիկնակ ուներ ու երեսապատված էր վաղուց մաշված ու ծակծկուն կաշվով։ Անկողնից բերված երկու սպիտակ, փետրալից բարձեր կային գլխի տակ։ Մեջքի վրա մեկնվել էր անշարժ, երկու ձեռքերը գլխի ետևը դրած։ Զուգվել-զարդարվել էր, կարծես հատուկ մի մարդու էր սպասում. մետաքսյա սև շրջազգեստ էր հագել ու դրել էր ժանյակե թեթև մի գլխազարդ, որ վայելուչ էր. ուսերին ժանեկահյուս մի վարշամակ էր դրել՝ ոսկե մեծզի զարդասեղով ամրացրած։ Նա հենց մի հատուկ մարդու էր սպասում, պառկել էր ասես անձկությամբ լի ու անհամբեր, դեմքը մի քիչ գունատված, շրթունքներն ու աչքերը վառվում էին, աջ ոտքի ծայրով անհանգիստ թխթխկացնում էր բազմոցի արմունկին։ Հապիվ էին երևացել Ռակիտինն ու Ալյոշան, երբ մի թեթև իրարանցում տեղի ունեցավ. նախասենյակից լսվեց, թե ինչպես Գրուշենկան արագորեն վեր թռավ բազմոցից և հանկարծ վախեցած գոչեց. «Այդ ո՞վ է»։ Բայց հյուրերին դիմավորեց աղախինը և անմիջապես պատասխանեց իր տիրուհուն.

— Չէ, նա չէ, ուրիշ մարդիկ են, բան չկա։

«Ի՞նչ կարող է պատահած լինել»,— մրթմրթաց Ռակիտինը, Ալյոշային ձեռքից բռնած տանելով հյուրասենյակ։ Գրուշենկան կանգնել էր բազմոցի մոտ, կարծես դեռ վախեցած։ Նրա մուգ շագանակագույն ծամերից մի հատ փունջ, հանկարծ դուրս սահելով գլխազարդի տակից, ընկավ աջ ուսին, բայց նա չնկատեց այդ ու չուղղեց, քանի դեռ ուշադիր նայում էր հյուրերին, չանալով ճանաչել նրանց։

— Ա՜խ, դո՞ւ ես, Ռակիտկա։ Քիչ մնաց վախեցնիր ինձ։ Ո՞ւմ հետ ես եկել։ Այդ ո՞վ է կողքիդ։ Տե՜ր աստված, ա՜յ թե ումն է բերել,— բացականչեց նա, ճանաչելով Ալյոշային։

— Դե ասա, որ մոմեր բերեն,— խոսեց Ռակիտինը ամենամուրիկ ծանոթի և մտերիմ մարդու աղատ վարվելակերպով, մի մարդու, որ նույնիսկ իրավունք ունի կարգադրություններ անելու տան մեջ։

— Մոմե՞ր... իհարկե մոմեր... Ֆենյա, մի մոմ բեր սրան... Է՜հ, ժամանակ գտար մարդուն հետդ բերելու,— բացականչեց նա նորից՝ գլխով ցույց տալով Ալյոշային, և դեպի հայելին դարձավ ու սկսեց արագորեն ուղղել մազերը երկու ձեռքով։ Կարծես թե դժգոհ էր։

— Ի՞նչ է, լկարողացա՞ սրտիդ յուղ քսել,— հարցրեց Ռակիտինը, գրեթե նեղանալով իսկույն։

— Վախեցրիր ինձ, Ռակիտկա, հասկանո՞ւմ ես,— դարձավ Գրուշենկան, ժպտալով Ալյոշային։— Մի՛ վախենար ինձնից, Ալյոշա, ջանիկս, սոսկալի ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ, իմ անսպասելի՜ հյուրս։ Իսկ դու, Ռակիտկա, վախեցրիր ինձ. կարծեցի, որ Միտյան է ներս խուժում։ Հասկանո՞ւմ ես, քիչ առաջ խաբեցի նրան, ստիպեցի երդվել, որ հավատում է ինձ, բայց ինքս ասա խոսեցի։ Ասացի, որ Կուզմա Կուզմիչի մոտ եմ գնում, իմ ծերուկի մոտ, ամբողջ երեկոն այնտեղ եմ լինելու և մինչև ոչ գիշեր փող եմ հաշվելու հետը։ Չէ՞ որ ամեն շաբաթ գնում եմ նրա մոտ, ամբողջ երեկոն նստում ենք ու հաշիվները նայում։ Դուռը կողպում ենք, նա շրխկացնում է համրիչի վրա, իսկ ես նստում եմ՝ գրանցում գրքի մեջ, ի՜նձ է վստահում միայն։ Եվ Միտյան հավատաց, որ ես այնտեղ եմ, բայց ահա փակվել եմ իմ տանը, նստել եմ՝ մի լուր եմ սպասում։ Ինչպե՞ս եղավ, որ Ֆենյան ձեզ ներս թողեց։ Ֆե՜նյա, Ֆե՜նյա։ Վազի՛ր դարպասի մոտ, բաց արա և նայիր չորս կողմը, կապիտանը չի՞ երևում որևէ տեղ։ Թաքնվել է գուցե և աչք է պահում, մեռնում եմ վախից։

— Ոչ ոք չկա, Ագրաֆենա Ալեքսանդրովնա, հենց նոր ամեն կողմ նայեցի. բոպեն մեկ գնում ու ճեղքից էլ եմ նայում, ինքս էլ գողում եմ վախից։

— Փեղկերը փա՞կ են, Ֆենյա։ Վարագույրն էլ իջեցնենք, ա՜յ այսպես։— Նա ինքը իջեցրեց ծանր վարագույրները։— Թե չէ՝ հենց լույսը տեսնելով ներս կխուժի։ Միտյայից, քո եղբայր Միտյայից եմ վախենում այսօր, Ալյոշա։— Գրուշենկան բարձր էր խոսում՝ թեև տագնապած, բայց և համարյա ցնծությամբ լի։

— Ինչո՞ւ այդպես վախենում ես այսօր Միտյայից,— ուզեց,

իմանալ Ռակիտինը։— Կարծեմ նրանից վախեցողը չէիր, քո ծափով է նա պար գալիս։

— Ասում եմ քեզ, լուր եմ սպասում, մի ոսկի՞ լուր, այնպես որ Միտյան հիմա բոլորովին ավելորդ է։ Եվ չհավատաց էլ նա, զգում եմ, չհավատաց, որ Կուզմա Կուզմիչի մոտ գնացի։ Ծրևի նստել է հիմա այնտեղ, այգում, Ֆյոդոր Պավլովիչի տան ետևը, ինձ վրա է աչք պահում։ Իսկ եթե այնտեղ է թաքնվել, ուրեմն այստեղ չի գա, դե ավելի՞ լավ։ Բայց ես իրոք գնացի Կուզմա Կուզմիչի մոտ, հենց Միտյան էլ ինձ ուղեկցեց. ասացի՝ մինչև կեսգիշերը նստելու եմ, և խնդրեցի, որ ինքն էլ անպայման դա կեսգիշերին, տուն բերի ինձ։ Թողեց գնաց, իսկ ես մի տասը րոպե նստեցի ծերուկի մոտ, ու նորից եկա այստեղ։ Ո՞ւյ, ինչպես էի վախենո՞ւմ՝ վազում էի, որ նրան չհանդիպեմ։

— Իսկ ինչո՞ւ ես զուգվել-զարդարվել, ո՞ւր ես գնում։ Այդ ի՞նչ հեռաքրքիր զարդ ես դրել գլխիդ։

— Բայց թե ի՞նքդ ինչ հեռաքրքիր մարդ ես, հա՞, Ռակիտին։ Ասում եմ քեզ, մի լավ լուր եմ սպասում։ Լուրը եկավ թե չէ՝ ցատկում եմ տեղիցս ու թռնում, էլ ինձ չե՞ք տեսնի։ Հենց զուգվել-զարդարվել եմ, որ պատրաստ լինեմ։

— Իսկ ո՞ւր ես թռնում։

— Շատ իմանաս, շուտ կծերանաս։

— Մի տես, է՛, Փայլում է ուրախությունից... Քեզ երբեք այսպես չէի տեսել մինչև հիմա։ Հագվել-շքվել ես՝ ոնց որ պարահանդես ես գնալու։

— Շա՞տ բան ես հասկանում պարահանդեսներից։

— Իսկ դու շա՞տ ես հասկանում։

— Ես տեսել եմ պարահանդես։ Նախանցյալ տարի Կուզմա Կուզմիչն իր տղային էր ամուսնացնում, ես էլ նայում էի վերնահարկից։ Ինչ է, Ռակիտկա, հիմա ես քե՞զ հետ խոսեմ, երբ այսպիսի մի իշխան է կանգնած այստեղ։ Այսպիսի հյո՞ւր։ Ալյոշա, սիրելիս, նայում եմ քեզ ու չեմ հավատում. աստվա՞ծ իմ, ինչպե՞ս եղավ որ դու հայտնվեցիր իմ տանը։ Ճիշտն ասեմ քեզ՝ չէի սպասում, մտքովս էլ չէր անցնում, և առաջ էլ երբեք չեմ հավատացել, որ դու կարող էիր գալ։ Թեև հիմա այն հարմար րոպեն չէ, բայց սոսկալի ուրախ եմ, որ եկել ես։ Նստիր բազմոցին, ահա այստեղ, ա՛յ այսպես, լուսնյա՛կ իմ նորելուկ։ Ճի՞շտ, կարծես դեռ աչքերիս չեմ հավատում... է՛հ, Ռակիտկա, եթե երե՛կ բերած լինեիր նրան, կամ էլ անցյալ օրը... Բայց

այսպես էլ ուրախ եմ։ Գուցե ավելի լավ է, որ հիմա՛ եկավ, այսպիսի րոպեին, և ոչ թե անցյալ օրը...

Նա ժիր ու զվարթ նստեց Ալյոշայի կողքին, բազմոցի վրա, և ուղղակի զմայլանքով նայեց նրան։ Եվ իսկապես ուրախ էր, չէր ստում այդպես ասելով։ Աչքերը վառվում էին, շրթունքները ծիծաղում, բայց ծիծաղում էին ուրախ, բարեսրտորեն։ Ալյոշան նույնիսկ չէր սպասում, որ այդպիսի բարի արտահայտություն կտեսնի նրա դեմքին... Մինչև երեկ նա քիչ էր հանդիպել Գրուշենկային, ահաբեկող մի կարծիք էր կազմել նրա մասին, իսկ երեկ Կատերինա Իվանովնայի գլխին նրա խաղացած չարախինդ ու ենդ խաղից այնպես էր ցնցվել, որ հիմա շատ զարմացավ, երբ հանկարծ ասես բոլորովին տարբեր, անսպասելի մի անձնավորություն տեսավ իր առաջ։ Եվ որքան էլ հիմա ընկճված էր իր սեփական վշտից, այնուամենայնիվ աչքերն ակամա կանգ առան Գրուշենկայի վրա և ուշադիր նայեցին։ Նրա ամբողջ վարվելակերպն էլ կարծես խպառ բարեփոխվել էր երեկվանից հետո, գրեթե բոլորովին չկար երեկվա այն քաղցրավունությունը խոսվածքի մեջ, չկային այն փափկասուն ու սեթևեթ շարժումները... Նրա մեջ ամեն ինչ պարզ էր, սրտաբաց, շարժումներն արագ էին, շիտակ, դյուրավստահ, բայց նա շատ էր հուզված։

— Տե՛ր աստված, ինչե՞ր են կատարվում այսօր իրար ետևից, ճի՞շտ որ,— սկսեց նորից ճլվլալ։— Եվ ինչո՞ւ այսքան ուրախ եմ քեզ տեսնելով, ինքս էլ չգիտեմ, Ալյոշա։ Հարցնես էլ՝ չգիտեմ։

— Դե լա՞վ, չգիտե՞ս, թե ինչու ես ուրախ,— քմծիծաղ տվեց Ռակիտինը։— Մի բան կար երևի, որ միշտ էլ կպել էիր ականջիս՝ բե՞ր նրան, բե՞ր նրան։ Մի նպատակ ունեիր անշուշտ։

— Առաջ ուրիշ նպատակ ունեի, իսկ հիմա անցավ դա, հիմա այն բոլորն չէ։ Այ ասեմ, ուզում եմ հարգ ու պատիվ տալ ձեզ։ Հիմա ես բարի եմ դարձել, Ռակիտկա։ Բայց դու էլ նստիր, Ռակիտկա, ինչո՞ւ ես կանգնել։ Ինչ է, նստե՞լ ես արդեն։ Չվախենա՞ք, Ռակիտուշկան իր անձը մոռացողը չէ։ Այ հիմա նստել է մեր դիմաց, Ալյոշա, և նեղանում է՝ ինչո՞ւ քեզնից առաջ նրա՞ն չհրավիրեցի, որ նստի։ Ո՞ւյ, խռովկան է մեր Ռակիտկան, այնքան շո՞ւտ է նեղանում,— ծիծաղեց Գրուշենկան։— Մի՛ բարկանա, Ռակիտկա, ես բարի եմ այսօր։ Բայց ինչո՞ւ այսպես տխուր նստել ես, Ալյոշկա, գուցե ինձնի՞ց ես վախենում,— զվարթ հեգնանքով նայեց Ալյոշայի աչքերի մեջ։

— Վիշտ ունի։ Ատոիճանի բարձրացում չտվեցին,— քսմՏ բեց Ռակիտինը։

— Ի՞նչ ատոիճանի բարձրացում։

— Նրա սրբահայրը հոտեց։

— Ինչպե՞ս թե հոտեց։ Հիմար-հիմար դուրս ես տալիս, երևի ուզում ես մի որևէ գարշելի բան ասել։ Ջայնդ կտրի՞ր, խելքի տուպրակ։ Ալյոշա, թույլ կտա՞ս, որ ծնկներիդ նստեմ, ա՛յ այսպես։— Եվ հանկարծ նա մոտ թռավ, ծիծաղելով նստեց Ալյոշայի ծնկներին, փաղաքուշ կատվի նման, և աջ թևով նրա վիզը գրկեց քնքշորեն։— Կուրախացնեմ քեզ, իմ բարեպա՞շտ մանչուկս։ Ջէ, իրոկապես, թույլ կտա՞ս, որ ծնկներիդ նստեմ, չե՞ս բարկանա։ Ուզում ես՝ վեր կենամ։

Ալյոշան լուռ մնաց։ Նստել էր ու վախենում էր շարժվել. լսեց նրա վերջին ասածը— «Ուզում ես՝ վեր կենամ», բայց չպատասխանեց, կարծես ընդարմացել էր։ Բայց նրա զգացածն այն չէր, ինչ կարող էր ակնկալել կամ երևակայել հիմա թեկուզ Ռակիտինը, օրինակ, որ ցանկասիրաբար դիտում էր նրան իր նստած տեղից։ Ալյոշայի հոգին լցնող մեծ վիշտը կլանում էր բոլոր այն զգացողությունները, որոնք կարող էին ծնվել նրա սրտում, և եթե այս րոպեին ի վիճակի լիներ լիուլի հաշիվ տալու իրեն, ինքն էլ պիտի գիտակցեր, որ հիմա շատ ամուր զրահով է պաշտպանված ամեն մի գայթակղության ու փորձության դեմ։ Բայց այնուամենայնիվ, չնայած իր հոգեվիճակի անխոս շփոթահարության և ընկճող վշտին, նա ակամա զարմանքով նկատում էր, որ մի նոր ու տարօրինակ զգացողություն է ծնվում իր սրտի մեջ։ Այս կինը, այս «սարսափելի» կինը նախկին վախը չէր պատճառում հիմա իրեն, այն վախը, որ առաջ զգում էր, երբ կին արարածի մասին որևէ մի անուրջ խոսվում էր իր հոգին մերթ ընդ մերթ։ Ընդհակառակը, այս կինը, որից ամենից ավելի էր վախենում, հիմա իր ծնկներին նստած ու իրեն գրկած՝ բոլորովին տարբեր մի զգացում էր հարուցում հանկարծ իր մեջ, անսպասելի ու յուրահատուկ մի զգացում՝ մի տեսակ անսովոր, մեծագույն և ամենապարկեշտ հետաքրքրություն նրա նկատմամբ, և արդեն առանց որևէ երկյուղի. մինչև իսկ հետք չէր մնացել իր նախկին սարսափից։ Ահա ա՛յս էր գլխավորը, և ա՛յս էր, որ ակամա զարմացնում էր իրեն։

— Դե բավական է հիմարություններ դուրս տաք,— գոռաց

Ռակիտինը,— ավելի լավ կլինի՝ շամպայն հյուրասիրես։ Պարտքդ է, գիտե՞ս ինչու։

— Իրոք որ պարտքս է։ Ախր ես նրան, Ալյոշա, շամպայն էլ էի խոստացել ամեն բանի վրա, եթե քեզ այստեղ բերեր։ Դե հա՛, թող շամպայն լինի, ե՞ս էլ կխմեմ։ Ֆե՛նյա, Ֆե՛նյա, մեզ շամպայն բեր, այն շիշը, որ Միտյան թողեց, շո՛ւտ արա։ Ես թեև ժլատ եմ, բայց մի շիշ կդնեմ սեղանին, ո՞չ թե քեզ համար Ռակիտկա, դու սունկ ես, իսկ նա՝ իշխան։ Ու թեև հիմա իմ հոգին ուրիշ բանով է լցված, բայց թո՞ղ այդպես լինի, ես էլ կխմեմ ձեզ հետ, սիրտս խրախճա՞նք է ուզում։

— Բայց այդ ի՞նչ հատուկ բոպեի, մասին ես խոսում, ի՞նչ «լուր» է, որ սպասում ես, կարելի՞ է հարցնել, թե՞ գաղտնիք է,— նորից մեջ բերեց Ռակիտինը հետաքրքրված, միաժամանակ գերագույն ճիգ անելով, որպեսզի ձևացնի, թե կարևորություն անգամ չի տալիս անընդհատ իրեն հասցեագրվող խայթոցներին։

— Է՛խ, գաղտնիք չէ, և ինքդ էլ գիտես արդեն,— հանկարծ մտահոգ շեշտով ասաց Գրուշենկան, գլուխը դարձնելով Ռակիտինի կողմը և մի քիչ ետ թեքվելով Ալյոշայից, թեև շարունակում էր նստած մնալ նրա ծնկներին, թևով նրա վիզը գրկած,— սպան է գալիս, Ռակիտին, իմ սպա՞ն է գալիս։

— Լսել եմ, որ գալիս է, բայց այսքան մո՞տ է արդեն։

— Մոկրոեում է հիմա, այնտեղից սուրհանդակ է ուղարկելու այստեղ. ինքն է այդպես գրել, այսօր նամակ ստացա։ Նստել ու սպասում եմ սուրհանդակին։

— Այ քեզ բա՞ն։ Ինչո՞ւ Մոկրոեում։

— Երկար պատմություն է, և էլ բավական է հարցնես։

— Ըհը՞, հիմա Մփոենկան... օհո-հո՞։ Իսկ նա գիտի՞ թե ոչ։

— Ո՞նց թե գիտի։ Բոլորովին չգիտի։ Որ իմանար, կսպաներ։ Բայց ես հիմա բնավ էլ չեմ վախենում դրանից, չեմ վախենում նրա դանակից։ Լսի՛ր, Ռակիտկա, մի՛ հիշեցրու ինձ Դմիտրի Ֆյոդորովիչի մասին, նա իմ սիրտը չարդուփշուր արեց։ Եվ ոչ մի այդպիսի բանի մասին չեմ էլ ուզում մտածել այս րոպեին։ Ա՜յ, Ալյոշկայի մասին կարող եմ մտածել, Ալյոշկայի՞ն եմ նայում ես... Դե ժպտա՛ ինձ, սիրելիս, զվարճացի՛ր, խնդա՛ իմ հիմարության, իմ ուրախության վրա... Օ՜, ժպտաց ահա, ժպտա՛ց։ Տես, ի՞նչ սիրալիր է նայում։ Գիտե՞ս, Ալյոշա, անընդհատ մտածում էի, որ դու ինձ վրա բարկանում ես անցյալ օրվա

համար, այդ օրիորդի համար... Շուն էի այդ օրը, այ ասեմ ահա... Բայց համենայն դեպս լավ էր, որ այդպես եղավ։ Ծ՛վ վատ էր, և՛ լավ,— մտածկոտ ժպտաց հանկարծ Գրուշենկան, և մի դաժան նշույլ կայծկլտաց նրա ժպիտի մեջ։— Միտյան ասում էր, որ նա զոռացել է՝ «Մտրակո՛վ պետք է ծեծել նրանց։ Այո, շատ խիստ վիրավորեցի օրիորդին։ Կանչել էր ինձ, հաղթել էր ուզում, ուզում էր իր շոկոլադով հրապուրել... Չէ՞, լավ էր, որ այդպես եղավ,— ժպտաց նորից Գրուշենկան։— Բայց այ վախենում եմ, որ դո՛ւ բարկացած լինես...

— Ով ճի՞շտ որ,— լուրջ զարմանքով վրա բերեց հանկարծ Ռակիտինը։— Ախր նա իսկապես քեզնից վախենում է, Ալյոշա, քեզ նման ճուտիկից։

— Քե՛զ համար է նա ճուտիկ, Ռակիտկա, հասկացա՞ր... որովհետև դու խիղճ չունես, հասկացա՞ր։ Տեսնում ես, հոգո՛վ եմ սիրում նրան, հասկացա՞ր։ Ալյոշա, հավատո՞ւմ ես, որ ես քեզ սիրում եմ ամբո՛ջ հոգով։

— Ա՛խ, անամոթ։ Սե՛ր է բացատրում քեզ, Ալեքսեյ։

— Ինչ կա որ, սիրում եմ, այո՛։

— Իսկ սպա՞ն։ Ով ոսկի լո՛ւրջ Մոկրոեից։

— Դա մի բան է, սա՝ ուրիշ։

— Այ քեզ կնկա տրամաբանություն։

— Մի՛ բարկացնիր ինձ, Ռակիտկա,— տաքացած վրա տվեց Գրուշենկան,— դա մի բան է, սա՝ ուրիշ բան։ Ես Ալյոշային ուրիշ ձևով եմ սիրում։ Ճիշտ է, Ալյոշա, առաջ քո նկատմամբ մի նենգ նպատակ ունեի։ Ես ախր ստոր եմ, կատաղի մի արարած, բայց թե լինում են բոպեներ, Ալյոշա, որ քեզ իմ խղճի տեղն եմ դնում։ Շարունակ մտածում եմ՝ «Այդպիսի մեկը հիմա ինչպե՞ս պետք է արհամարհի ինձ նման զզվելի արարածին։ Անցյալ օրն էլ այդ մտածեցի, երբ օրիորդի տնից վազեցի եկա այստեղ։ Վաղուց քեզ այսպես եմ նկատել, Ալյոշա, և Միտյան գիտի, ասել եմ նրան։ Ա՛յ, Միտյան հասկանում է։ Կհավատա՞ս, Ալյոշա, ճիշտ եմ ասում, երբեմն նայում եմ քեզ և ամաչում եմ, ուրից-գլուխ ամաչում... Ով ինչպե՞ս եղավ, որ քո մասին այսպես սկսեցի մտածել, երբվանի՞ց՝ չգիտեմ ու չեմ հիշում...

Ֆենյան ներս մտավ ու սեղանի վրա դրեց մատուցարանը, որի վրա բացված մի շիշ կար ու շամպայնով լեցուն երեք բաժակ։

— Շամպա՞ն բերեցին,— գոչեց Ռակիտինը։— Բռնկվել ես, Ագրաֆենա Ալեքսանդրովնա, և գլուխդ կորցրել։ Մի բաժակ խմես՝ կսկսես պար գալ։ Է՜-է՛խ, սա էլ նույնիսկ չեն կարողանում անել,— ավելացրեց նա, դիտելով շամպայնի շիշն ու բաժակները։— Գառավն է լցրել խոհանոցում, շիշն էլ առանց խցանի են բերել, և տաք։ Դե լավ, թեկուզ և այսպես լինի։

Նա մոտեցավ սեղանին, վերցրեց բաժակը, մի շնչով խմեց ու նորից լցրեց իր համար։

— Հաճախ չէ, որ շամպայն է ընկնում ձեռդ,— ասաց նա, շրթունքները լիզելով։— Դե տեսնեմ, Ալյոշա, վերցրու բաժակը, ցույց տուր շնորհքդ։ Ինչի՞ կենացը խմենք։ Դրախտի դռների՞։ Վերցրո՛ւ բաժակը, Գրուշա, դու էլ խմիր դրախտի դռների կենացը։

— Ի՞նչ դրախտի դռների։

Գրուշենկան վերցրեց բաժակը։ Ալյոշան էլ վերցրեց, խմեց մի ումպ և բաժակը ետ դրեց։

— Չէ, ավելի լավ է չխմեմ,— մեղմ ժպտաց նա։

— Հե՛, գլուխդ էիր գովում,— գոռաց Ռակիտինը։

— Դե՛հ, եթե այդպես է՝ ես էլ չեմ խմի,— վրա բերեց Գրուշենկան,— և չեմ էլ ուզում։ Խմիր, Ռակիտկա, ամբողջ շիշը մենակդ խմիր։ Եթե Ալյոշան խմի, ես էլ կխմեմ։

— Հորթային սիլիբիլին սկսվե՞ց,— ձեռ առավ Ռակիտինը։— Ով մեկ էլ նրա ծնկների՞ն է նստել։ Ասենք թե նա վիշտ ունի, իսկ քե՞զ ինչ է պատահել։ Նա իր աստծո դեմ է ըմբոստացել, պատրաստ էր երշիկ խժռելու...

— Ինչպե՞ս թե։

— Նրա սրբահայրը մեռավ այսօր, հայր Զոսիման, սուրբը։

— Ուրեմն մահացե՞լ է Զոսիման,— բացականչեց Գրուշենկան։— Աստվա՞ծ իմ, իսկ ես չգիտեի՞։— Նա բարեպաշտորեն խաչակնքեց։— Մեղա՞ տեր, ի՞նչ եմ անում, նրա ծնկներին եմ նստել այսպիսի բոպեի՞ն,— վեր թռավ նա մեկեն, կարծես վախեցած, վայրկենապես իջավ նրա ծնկներից և նստեց բազկաթոռի վրա։ Ալյոշան երկար նայեց նրան զարմանքով, և կարծես մի լույս ծագեց իր դեմքին։

— Ռակի՛տին,— ասաց նա հանկարծ բարձրաձայն ու հաստատակամորեն,— մի՛ ծաղրիր ինձ, թե ես ըմբոստացել եմ իմ աստծո դեմ։ Չեմ ուզում բարկանալ քեզ վրա, ուրեմն դու էլ ավելի բարի եղիր։ Կորցրել եմ այնպիսի մի գանձ, որի նմանը

դու երբեք չես ունեցել, և հիմա դու չես կարող դատել ինձ։ Ավելի լավ է՝ նայիր ահա նրան, տեսա՞ր, թե ինչպես խնայեց ինձ։ Ես այստեղ եկա մի շար հոգի գտնելու, հենց ինքս ձգտում էի դրան, որովհետև ստոր էի ու շար, բայց մի անկեղծ քույր գտա, գտա մի գանձ՝ մի սիրաշերմ հոգի... Նա ինձ խնայեց հիմա... Ագրաֆենա Ալեքսանդրովնա, ես քո մասին եմ խոսում։ Դու իմ հոգին վերականգնեցիր այս բոպեիս։

Ալյոշայի շրթները դողացին, շունչը կտրվեց, ու նա կանգ առավ։

— Իբրև թե հենց ուղղակի փրկեց քեզ, հա՞,— ծիծաղեց Ռակիտինը չարախնդորեն։— Իսկ նա ուզում էր քեզ կուլ տալ, գիտե՞ս այդ բանը։

— Կա՛ց, Ռակիտկա,— վեր թռավ հանկարծ Գրուշենկան,— երկուսդ էլ լռեցեք։ Ամեն ինչ ասեմ հիմա։ Լռիր, Ալյոշա, որովհետև քո այդպիսի խոսքերից ամոթս է գալիս, որովհետև ես չար եմ, ոչ թե բարի. ահա՛ թե ինչ ագռիկ եմ ես։ Իսկ դու, Ռակիտկա, լռի՛ր, որովհետև սուտ ես խոսում։ Ունեցել եմ մի այդպիսի ստոր միտք, այո, ուզում էի կոպ տալ նրան, բայց հիմա՝ սուտ ես ասում, հիմա բոլորովին այն չէ արդեն... և էլ երբե՛ք չեմ ուզում ձայնդ լսել, Ռակիտկա։— Այս բոլորն արտասանեց հուզմունքով ասաց Գրուշենկան։

— Սրա՞նց տեսեք, երկուսն էլ ցնդել են,— թշաց Ռակիտինը, զարմացած դիտելով նրանց,— խելագար լինեն կարծես։ Ծիծաղո՞ց եմ ընկել, ինչ է։ Երկուսի էլ լարերը թուլացել են, հիմա՞ կսկսեն լաց լինել։

— Եվ այո՛, կսկսեմ լաց լինել, կսկսեմ, կսկսե՛մ լաց լինել,— վրա բերեց Գրուշենկան։— Նա ինձ իր քույրը կոչեց, և էլ երբե՛ք չեմ մոռանա այդ խոսքը։ Միայն թե ասեմ քեզ, Ռակիտկա, ես թեև չար եմ, բայց համենայն դեպս մի կանաչ սոխ եմ տվել։

— Ի՞նչ։ Ո՞նց թե կանաչ սոխ։ Թո՛ւհ, գրողը տանի, խակա՞ պե՞ս որ սրանք գժվել են։

Ռակիտինը զարմանում էր նրանց ոգևորության վրա, վիրավորվում ու բորբոքվում էր, թեպետ կարող էր և կշռադատել ու հասկանալ, որ երկուսի համար էլ հասել է կյանքում հազվագիպորեն պատահող այն պահը, երբ մարդկային հոգին ցնցող բոլոր ազդակները զուգադիպում են իրար։ Բայց Ռակիտինը, որ ընդունակ էր շափազանց զգայուն կերպով ընկալել իր անձին

վերաբերող ամեն ինչ, շատ կոպտորեն էր հասկանում իր մերձավորների ապրումներն ու զգացողությունները՝ մասամբ իր երիտասարդական անփորձության պատճառով, մասամբ էլ իր ահռելի եսասիրության հետևանքով։

— Գիտե՞ս, Ալյոշկա,— հանկարծ նյարդային մի ծիծաղով դարձավ նրան Գրուշենկան,— Ռակիտկայի առաջ պուխս գովեցի, որ մի կանաչ սոխ եմ տվել, բայց քո առաջ չեմ պարծենա, ուրիշ նպատակով կասեմ այդ նույն բանը։ Դա պարզապես մի առակ է, բայց լավ առակ. դեռ երեխա էի, երբ լսեցի իմ պառավ Մատրյոնայից, որ մինչև հիմա էլ իմ խոհարարուհին է։ Լսիր, այսպես է առակը. «Լինում է, չի լինում, մի շար, շատ շար կին է լինում։ Մի օր էլ այս կինը մեռնում է։ Եվ ոչ մի բարի գործ չի մնում նրանից։ Սատանաները բռնում են նրան ու նետում հրեղեն լիճը։ Իսկ նրա պահապան հրեշտակը կանգնում ու մտածում է՝ ի՞նչ բարի գործ հիշեմ նրանից, որ ասեմ աստծուն։ Հիշում է և աստծուն ասում. նա իր պարտեզում, ասում է, մի կանաչ սոխ հանեց արմատից ու աղքատ կնոջ տվեց։ Եվ աստված պատասխանում է նրան. ա՛ռ ուրեմն այդ նույն կանաչ սոխը, ասում է, երկարիր նրան, թող բռնի ու վեր ձգվի, և եթե նրան դուրս քաշես լճից, թող գա դրախտ, իսկ եթե պոկվի կանաչ սոխը, ուրեմն կինը պետք է մնա այնտեղ, ուր որ է հիմա։ Հրեշտակը վազում է կնոջ մոտ, երկարում կանաչ սոխը. ահա՛, կնիկ, ասում է, բռնիր ու վեր ձգվիր։ Եվ սկսում է զգույշ վեր քաշել նրան, և արդեն լրիվ դուրս էր քաշել, բայց լճում եղած մյուս մեղավորները, երբ տեսնում են, որ կնոջը դուրս են քաշում, սկսում են կախ ընկնել նրանից, որպեսզի իրենց էլ դուրս քաշեն նրա հետ։ Իսկ այդ կինը չար է լինում, շատ չար, և սկսում է քացի տալ նրանց. «Ինձ են վեր քաշում, ոչ թե ձեզ, ի՛մ սոխն է, ոչ թե ձեր սոխը»։ Հենց որ ասում է այդ բանը, կանաչ սոխը պոկվում է։ Եվ ընկնում է կինը լճի մեջ ու մինչև օրս էլ այրվում է այնտեղ։ Իսկ հրեշտակը լաց է լինում ու հեռանում է»։ Այս է ահա առակը, Ալյոշա, անգիր եմ հիշում, որովհետև հենց ինքս եմ այդ նույն չար կինը։ Ռակիտկայի առաջ պուխս գովեցի, թե մի կանաչ սոխ եմ տվել, բայց քեզ ուրիշ կերպ ասեմ. ընդամենը մի փոքրիկ կանաչ սոխ եմ տվել իմ ամբողջ կյանքում, հենց միայն այդ մի բարի գործն եմ արել։ Եվ էլ ինձ մի՛ գովիր դրանից հետո, Ալյոշա, մի՛ համարիր, թե ես բարի եմ. չար եմ ես, չար, շատ չար, և եթե գովես, ամոթով կթողնես

ինձ։ Է՜հ, աբի ամեն ինչ խոստովանեմ։ Լսիր, Ալյոշա։ Ես այնքա՜ն էի ցանկանում իմ ձեռք գցել քեզ և այնքա՜ն էի կպել Ռակիտկայի օձիքից, որ նրան քսանհինգ ռուբլի խոստացա, որպեսզի քեզ բերի ինձ մոտ։ Կա՛ց, Ռակիտկա, սպասի՛ր— Նա արագ քայլերով մոտեցավ սեղանին, բացեց դարակը, դրամապանակը վերցրեց և մի քսանհինգ ռուբլիանոց հանեց այնտեղից։

— Ա՜յ քեզ հիմարություն։ Ա՜յ քեզ հիմարություն,— բացականչում էր Ռակիտինը շլմորած։

— Վերցրո՛ւ, Ռակիտկա, պարտքս է, չե՞ս հրաժարվի, ինքդ էիր խնդրում։— Եվ շպրտեց նրան փողը։

— Ա՜յն էր պակաս, որ հրաժարվեի,— բամբեց Ռակիտինը, հայտնապես ամոթահար, սակայն կորիճորեն քողարկելով իր զգացած ամոթը։— Սա մեզ համար շատ ձեռնտու բան է, հիմարներն էլ ստեղծվել են հենց նրա համար, որ խելոք մարդուն օգուտ բերեն։

— Իսկ հիմա սկզբիր, Ռակիտկա, հիմա ի՞նչ էլ որ ասեմ՝ քո ականջների համար չէ այլևս։ Նստիր այդ անկյունը և ձայնդ կտրիր, դու չես սիրում մեզ, ուրեմն պապանձվիր։

— Եվ ինչի՞ համար սիրեմ որ ձեզ,— դիմադարձեց Ռակիտինը, արդեն իր զայրույթը չթաքցնելով։ Քսանհինգանոց բանկնոտը գրպանը խցկեց, և ուղղակի ամոթ էր զգում, որ Ալյոշայի աչքի առաջ է անում այդ։ Հույս ուներ, որ հետո՛ կստանա վարձը և Ալյոշան չի էլ իմանա, իսկ հիմա ամոթից գազազեց։ Մինչև այդ բոպեն, հակառակ Գրուշենկայի բոլոր հարվածներին, Ռակիտինը ճարտար հաշվենկատություն էր համարում շատ չհակառակելը նրան, որովհետև պարզ էր, որ նա ինչ-որ իշխանություն ուներ իր վրա։ Բայց հիմա ինքն էլ զայրացել էր.

— Մարդ մի որևէ բանի համար է սիրում, իսկ դուք երկուսդ էլ ի՞նչ եք արել ինձ համար։

— Իսկ դու առանց որևէ բանի սիրիր, ա՜յ ինչպես Ալյոշան է սիրում։

— Ինչո՞վ է նա քեզ սիրում և ի՞նչ մի սեր ցույց տվեց, որ այդպես իրար հետ անցել։

Գրուշենկան կանգնել էր սենյակի մեջտեղում, խոսում էր հրայրքով, և նրա ձայնի մեջ հիստերիկ շեշտեր լսվեցին։

— Լռի՛ր, Ռակիտկա, դու ոչինչ չես հասկանում մեզնից։ Եվ էլ սրանից հետո չհամարձակվես ինձ դու ասել, չեմ ուզում թույլ տալ քեզ, և որտեղի՞ց է քո այդպիսի հանդգնությունը, հա՞։ Դե

կմացի՛ր։ Նստիր անկյունը և ձայնդ կտրիր, ոնց որ իմ ծառան լինես։ Իսկ հիմա, Ալյոշա, ամբողջ ճշմարտությունն եմ ասելու քեզ, քի՛ զ միայն, որպեսզի տեսնես, թե ինչպիսի՞ արարած եմ ես։ Ոչ թե Ռակիտկային, այլ քեզ եմ ասում։ Ուզում էի խորտակել քեզ, Ալյոշա, ա՛յս է բուն ճշմարտությունը, ուղղակի որոշել էի. այնքա՜ն էի ուզում, որ փողով կաշառեցի Ռակիտկային, որպեսզի քեզ բերի այստեղ։ Եվ ինչո՞ւ ուզեցի անել այդ բանը։ Դու ոչինչ չգիտեիր, Ալյոշա, երես էիր դարձնում ինձնից, երբ անցնում էիր իմ մոտով՝ աչքերդ էիր իջեցնում, բայց ես մինչև հիմա հարյուր անգամ նայել եմ քեզ, սկսել էի բոլորին հարցնել քո մասին։ Քո դեմքը դրոշմվել էր իմ սրտում։ «Արհամարհում է ինձ, մտածում էի, նույնիսկ չի էլ ուզում երեսիս նայել»։ Եվ ի վերջո ինձ այնպիսի մի զգացում տիրեց, որ ինքս էլ զարմանում էի, թե ինչո՞ւ եմ վախենում այսպիսի մի երեխայից։ Ուղղակի կուլ տամ նրան ու հետո ծիծաղեմ։ Բոլորովին գազազել էի։ Կհավատա՞ս, ո՞չ ոք այստեղ չի համարձակվի ասել կամ մտածել, որ կարող է այդ վատ բանի համար գալ Ագրաֆենա Ալեքսանդրովնայի մոտ. միայն ու միայն ծերուկ Կուզմայի հետ եմ, կապվել ու ծախվել եմ նրան, սատանան է մեզ պսակել, բայց ուրիշ ոչ ոքի հետ չեմ եղել։ Բայց նայելով քեզ, որոշեցի՝ պիտի կոպ տամ։ Պիտի կոպ տամ ու ծիծաղեմ։ Տեսնո՞ւմ ես ինչ կատաղի շուն եմ ես, իսկ դու ինձ քո քո՛ւյրը կոչեցիր։ Եվ ահա հիմա եկել է այն սպան, որ իմ պատիվը խորտակեց, ու ես նրստել, լուրի եմ սպասում։ Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է եղել ինձ համար այդ մարդը։ Հինգ տարի առաջ, երբ Կուզման ինձ այստեղ բերեց, օրեր էին լինում, որ մարդկանցից թաքնվում, նստում էի տանը, որպեսզի ոչ ոք չտեսնի ու լսի ինձ. նիհարիկ ու հիմար մի աղջիկ՝ նստում ու հեկեկում էի, գիշերնե՞ր էի լուսացնում, մտածում էի. «Իսկ ո՞ւր է արդյոք նա հիմա, ինձ անպատվո՞ղը։ Երևի ծիծաղո՞ւմ է ինձ վրա մի ուրիշի հետ, ա՜խ ես նրան, մտածում էի, միայն տեսնե՞մ նրան, հանդիպեմ երբևիցե՝ այնպե՞ս մուտս կհանեմ նրանից, այնպե՞ս մուտս կհանեմ»։ Գիշերը, մթին, երեսս թաղում էի բարձի մեջ ու հեկեկում, անընդհատ որոճում էի այդ բոլորը, սիրտս դիտմամբ պատառ-պատառ էի անում, զայրույթով էի լցնում. «Այնպե՞ս մուտս կհանեմ, այնպե՞ս մուտս կհանեմ նրանից»։ Երբեմն հենց այսպես էլ փոռում էի մթան մեջ։ Բայց երբ հանգարծ հիշում էի, թե ոչինչ էլ չեմ անի նրան, իսկ նա ծիծաղո՞ւմ է ինձ վրա, գուցե և քա-

լորովին մոռացել է, չի էլ հիշում, է՞խ, ուղղակի անկողնից նետվում էի հատակին, անզոր արցունքներ էի թափում և մինչև առավոտ ցնցվում էի, ցնցվո՞ւմ ոտից գլուխ։ Առավոտյան վեր էի կենում շնից էլ ավելի կատաղած, ամբողջ աշխարհը տալին՝ ուրախությամբ կհոշոտեի։ Իսկ հետո, ի՞նչ ես կարծում, սկսեցի դրամազլուխ դիզել, անգութ դարձա, հաստացա, և կարծում ես խելքի՞ եկա, հա՞։ Չէ՞, չկարծես. ամբողջ տիեզերքում ոչ ոք չի տեսնում ու չգիտի, բայց երբեմն, հենց որ իջնում է գիշերվա մութը, հիշա նույն ձևով պառկում ու առամներս եմ կրճատցնում ինչպես հինգ տարի առաջ, հիմար աղջնակի նման, և ամբողջ գիշերը լաց եմ լինում, մտածում եմ «Ա՞խ ես նրան, ա՞խ ես նրա՞ն»։ Լսեցի՞ր այս ամբողջը։ Դե ուրեմն ի՞նչ կհասկանաս հիմա ինձնից, եթե ասեմ, որ մեկ ամիս առաջ հանկարծ եկավ այդ նամակը՝ թե գալիս է նա, այրիացել է, ուզում է ինձ տեսնել։ Շունչս կտրվեց ուղղակի, ասես՞ծ իմ, և հանկարծ մտածեցի՝ եթե գա ու մի սուլոցով կանչի ինձ, սողալո՞վ կգնամ մոտը՝ ծեծված, մեղավոր շնիկի նման։ Մտածում էի այդպես ու չէի հավատում ինքս ինձ. «Ստո՞ր եմ, թե չէ, կվազե՞մ նրա մոտ, թե չեմ վազի»։ Եվ ինքս ինձ հանդեպ այնպիսի՞ մի կատաղությամբ լցվեցի այս ամբողջ ամսվա ընթացքում՝ նույնիսկ ավելի՞ վատ, քան հինգ տարի առաջ։ Տեսնո՞ւմ ես հիմա, Ալյոշա, ի՞նչ գազազած աղջիկ եմ ես, ի՞նչ կատաղի աղջիկ, ամբողջ ճշմարտությունը ասացի քեզ։ Միայայի հոգու հետ էի խաղում, որպեսզի լվազեմ մյուսի մոտ։ Լռի՞ր, Ռակիտկա, դու չես, որ պիտի դատես ինձ, քեզ համար չեն իմ ասածները։ Ձեր գալուց առաջ պառկել էի այստեղ, սպասում էի, մտածում, ամբողջ ճակատագիրս էի որոշում, և երբեք չեք կարող իմանալ, թե ինչ էր կատարվում իմ սրտի մեջ։ Չէ՞, Ալյոշա, ասա՛ քո այդ օրիորդին՝ թող լաբկանա անցյալ օրվա համար... Եվ ամբողջ աշխարհում ոչ ոք չգիտի, թե ինչ է հիմա իմ վիճակը, չի էլ կարող իմանալ... Որովհետև... գուցե այսօր դանա՞կ տանեմ հետս այնտեղ, դեռ չեմ որոշել...

Եվ այս վերջին «եղերական» խոսքն ասելով, Գրուշենկան լռիմացավ, կես թողեց, երեսը ծածկեց ձեռքերով, նետվեց բազմոցի վրա՝ բարձերի մեջ, և սկսեց հեկեկալ փոքր երեխայի նման։ Ալյոշան վեր կացավ ու մոտեցավ Ռակիտինին։

— Միշա,— ասաց նա,— մի՛ բարկանար։ Նա վիրավորեց քեզ, բայց մի՛ բարկանար։ Լսեցի՞ր նրա ասածը հիմա։ Չի կարելի այսքան շատ պահանջել մարդկային հոգուց, պետք է ավելի գթասիրտ լինել...

Ալյոշան սրտի անդիմադրելի մղումով ասաց այդ։ Պետք է արտահայտեր իր զգացածը և դիմեց Ռակիտինին։ Եթե Ռակիտինը չլիներ, ինքնիրեն էր բացականչելու։ Սակայն Ռակիտինը հեգնականորեն նայեց նրան, և Ալյոշան կանգ առավ։

— Երեկ գիշեր քո սրբահոր քարոզով լցրին քեզ, և հիմա հենց այդ քարոզն էլ կրակեցիր ինձ վրա, Ալյոշենկա, ա՛յ դու աստծո մարդուկ,— ասաց Ռակիտինը առելությամբ լի ժպիտով։

— Մի՛ ծիծաղիր, Ռակիտին, մի՛ ծաղրիր, մի՛ խոսիր հանգուցյալի մասին. նա ավելի բարձր էր, քան որևէ մեկը աշխարհում,— գոչեց Ալյոշան արտասվալից ձայնով։— Ես ոչ թե որպես դատավոր ելա քեզ խոսելու, այլ որպես ամենահետինը մեղադրյալների մեջ։ Ո՞վ եմ ես այս կնոջ մոտ։ Ես այստեղ գալիս էի կործանվելու համար և ասում էի ինքս ինձ՝ «Թո՛ղ այդպես լինի», և դա՝ իմ փոքրոգության հետևանքով. իսկ նա, հինգ տարվա տանջանքից հետո՝ հենց որ մեկը եկավ և առաջին անգամ անկեղծ խոսք ասաց նրան, ամե՞ն ինչ ներեց, ամե՞ն ինչ մոռացավ ու արտասվում է։ Վերադարձել է այն մարդը, որ խորտակեց նրան, կանչում է հիմա, և ամեն ինչ ներում է այդ տղամարդուն, ուրախությամբ շտապում է հանդիպելու և դանակ չի տանի հետը, չի տանի։ Չէ, ես այդպիսին չեմ։ Չգիտեմ, Միշա, դու այդպիսի՞ն ես, թե չէ, բայց ես այդպիսին չեմ։ Ահա այս դասն ստացա այսօր, այս պահին... Նա ավելի բարձր է իր սիրաշեղ սրտով, քան մենք... Դու առաջ լսե՞լ էիր այն, ինչ պատմեց հիմա։ Ոչ, չէիր լսել. եթե լսած լինեիր, վաղուց կհասկանայիր ամեն ինչ... և մյուս օրիորդն էլ, որ անարգվեց անցյալ օրը, թող նույնպես ների՛ նրան։ Եվ կների, եթե իմանա... և կիմանա՛... Դեռ խաղաղություն չի գտել այս հոգին, պետք է կարեկցել նրան... կարող է դանակ բռնել այս հոգու մեջ...

Ալյոշան լռեց, որովհետև շունչն էր կտրվել։ Ռակիտինը, հակառակ իր ամբողջ զայրույթին, զարմանքով էր նայում նրան։ Երբեք այդպիսի մի ճառ չէր սպասում մեղմաբարո Ալյոշայից։

— Այ քեզ փաստաբա՞ն։ Ինչ է, արդեն սիրահարվեցի՞ր նրան։ Ագրաֆենա Ալեքսանդրովնա, մեր ծոմապահն ախր իս-

կապե՞ս սիրահարվել է քեզ, հաղթեցի՞ր,— գոռաց նա ժպիրհ ծիծաղով։

Գրուշենկան գլուխը վեր առավ բարձից և Ալյոշային նայեց գորովագին մի ժպիտով, որ փայլում էր արցունքից ուռած նրա դեմքին։

— Թո՛ղ նրան, Ալյոշա, հրեշտակս, տեսնո՞ւմ ես նա ինչպիսին է, նա այն մա՞րդն է, որին ասես քո խոսքերը։ Միխայիլ Օսիպովիչ,— դարձավ նա Ռակիտինին,— ուզում էի քեզնից ներողություն խնդրել, որ կոպտեցի քեզ, բայց հիմա չեմ ուզում այլևս։ Ալյոշա, արի ինձ մոտ, նստիր այստեղ,— կանչեց նա բերկրալի ժպիտով,— ա՛յ այսպես, նստիր ահա այստեղ, ասա ինձ (նա վերցրեց Ալյոշայի ձեռքը և ժպտալով նայեց նրա դեմքին), ասա ինձ՝ սիրո՞ւմ եմ այդ մարդուն, թե չէ։ Այն մարդուն, որ խորտակեց ինձ՝ սիրո՞ւմ եմ, թե չէ։ Ձեր գալուց առաջ պառկել էի այստեղ մթան մեջ և անընդհատ հարց էի տալիս իմ սրտին՝ սիրո՞ւմ եմ նրան, թե չէ։ Լուծիր իմ հարցը, Ալյոշա, ժամանակը եկել է, քո որոշածն է լինելու։ Ներե՞մ նրան, թե ոչ։

— Բայց ահա ներել ես արդեն,— ասաց Ալյոշան ժպտալով։

— Եվ իսկապես ներել եմ,— մտախոհ վրա բերեց Գրուշենկան։— Ա՛յս ինչ անպիտան սիրտ է։ Իմ անպիտա՛ն սրտի կենացը,— թափով վերցրեց հանկարծ բաժակը սեղանից, մի շնչով խմեց, հետո բաժակը վեր առավ ու թափով նետեց հատակին։ Բաժակը չարդուփշուր եղավ ու ճնգաց։ Դաժան մի բիծ երևաց նրա ժպիտի մեջ։

— Բայց և գուցե դեռ չեմ ներել,— ասաց նա մի տեսակ սպառնագին, աչքերը վար առնելով, կարծես ինքն իր հետ էր խոսում։— Գուցե սիրտս դեռ միայն պատրաստվում է ներելու։ Դեռ կպայքարեմ այս սրտիս դեմ։ Հասկանո՞ւմ ես, Ալյոշա, ես սոսկալի սիրել եմ իմ հինգ տարվա արցունքները... Գուցե իմ կրած անպատվությո՞ւնն եմ սիրել միայն, ոչ թե նրան։

— Օ՜, ես չէի ուզենա այդ մարդու տեղը լինել,— թշշաց Ռակիտինը։

— Եվ չես էլ լինի, Ռակիտկա, երբեք չես լինի այդ մարդու տեղը։ Դու իմ կոշիկներն ես մաքրելու, Ռակիտկա, ա՛յ թե ինչի համար եմ քեզ օգտագործելու։ Ինձ նմանին դու երբեք չես տեսնի... Եվ այդ մարդն էլ գուցե չի տեսնի...

— Նա էլ չի տեսնի։ Իսկ ինչո՞ւ ես զուգվել-զարդարվել,— թունոտ շեշտով ծաղրեց Ռակիտինը։

— Երեսովս մի՛ տա իմ զուգվել-զարդարվելը, Ռակիտկա, դու դեռ լրիվ չես ճանաչում իմ սիրտը։ Ուզեմ՝ կպոկեմ այս արդուզարդը, հենց հիմա կպոկեմ, ա՛յս րոպեին,— գոռաց նա զընգուն ձայնով։— Դու չգիտե՞ս, թե ինչի համար է այս զուգվել-զարդարվելը, Ռակիտկա։ Գուցե կանգնեմ նրա առաջ ու ասեմ. «Ինձ այսպես տեսնե՞լ էիր մինչև հիմա, թե չէ»։ Ախր ես տասնըյոթ տարեկան բարալիկ, հյուծախտավոր, լալկան մի երեխա էի, երբ նա ինձ թողեց։ Հիմա կնստեմ կողքին, կհրապուրեմ, կբորբոքեմ նրան. «Տեսա՞ր ինչպիսինն եմ հիմա, կասեմ նրան, դե ուրեմն ախորժակդ քեզ պահիր, հարգելի պարո՛ն, բերնիդ ջրերը վազեցին, բայց փորդ քաղցած մնաց»։ Ա՛յ, գուցե սրա համար է այս զուգվել-զարդարվելը, Ռակիտկա,— վերջացրեց Գրուշենկան շարախինդ ծիծաղով։— Գազազած աղջիկ եմ ես, Ալյոշա, կատաղի։ Կպոկեմ իմ արդուզարդը, կայլանդակեմ ինքս ինձ, իմ գեղեցկությո՛ւնը, կխանձեմ իմ դեմքը և կկտրատեմ դանակով, կգնամ մուրացկան կդառնամ։ Եթե ուզեմ՝ հիմա ոչ մի տեղ էլ չեմ գնա, եթե ուզեմ՝ հենց վաղն իսկ Կուզմային հետ կուղարկեմ ամե՛ն ինչ, որ նվիրել է ինձ, և փողե՛րն էլ լրիվ հետ կտամ, իսկ ինքս կգնամ օրավարձով կաշխատեմ ամբո՛ղջ կյանքումս... Կարծում ես՝ չե՞մ անի այդ բանը, Ռակիտկա, չե՞մ հանդգնի անել։ Կանե՛մ, կանե՛մ, հենց հիմա կարող եմ անել, միայն թե մի՛ ջղայնացրեք ինձ... Իսկ այդ մարդուն կվոնդեմ, սա՛ ցույց կտամ նրան, եղունգիս ծա՛յրն էլ չի տեսնի։

Վերջին բառերը նա գոռաց հիստերիկ ձայնով, բայց նորից չդիմացավ, ձեռքերով ծածկեց երեսը, նետվեց բարձի վրա և սկսեց ցնցվել հեծկլտոցներից։ Ռակիտինը վեր կացավ։

— Գնանք,— ասաց նա,— ուշ է, վանքի դռները կփակեն, ներս չեն թողնի։

Գրուշենկան խսկույն վեր թռավ տեղից։

— Բայց մի՞թե ուզում ես գնալ, Ալյոշա,— բացականչեց նա վշտահար զարմանքով,— ի՞նչ վիճակի մեջ ես թողնում հիմա ինձ. ամբողջ իմ հոգին տակնուվրա արեցիր, և հիմա նորի՞ց այս գիշերը, նորի՞ց մենակ եմ մնալու։

— Նա հո քեզ մոտ չի գիշերելու։ Բայց դե՛հ, եթե ուզում է՝ թող մնա։ Ես մենա՛կ էլ կգնամ,— թունոտ կատակեց Ռակիտինը։

— Լռի՛ր, չարաբիրտ,— գոռաց Գրուշենկան զայրագին.— գու ինձ երբեք չես ասել այնպիսի խոսքեր, որ նա եկավ ասելու։

— Իսկ ի՞նչ ասաց որ քեզ,— ջղայնորեն քրթմնջաց Ռակիտինը։

— Չգիտեմ, չեմ իմանում, բոլորովին չեմ իմանում, թե ինչ ասաց ինձ, սի՛րտս իմացավ նրա խոսքերը, նա իմ սիրտը շուռ ավեց... Նա առաջինն էր, միակն էր, որ ինձ խղճաց, հասկանո՞ւմ ես։ Մինչև հիմա ինչո՞ւ չէիր գալիս, հրեշտա՛կ իմ,— փանկարծ նա ծնկի ընկավ Ալյոշայի առաջ, կարծես մոլեգնահար— Ես իմ ամբողջ կյանքում սպասում էի քեզ նման մեկին, գիտեի՛, որ այսպիսի մեկը կգա ու ինձ կների։ Հավատում էի, որ ինձ էլ կսիրի մեկը, ինձ նման գարշելիին, ո՞չ միայն խայտառակության համար...

— Ի՞նչ մի առանձին բան արեցի քեզ համար,— պատասխանեց Ալյոշան զորովագին ժպտալով ու հակվեց Գրուշենկայի վրա, քնքշորեն վերցրեց նրա ձեռքերը,— մի կանաչ սոխ միայն տվեցի քեզ, մի շատ փոքրիկ կանաչ սոխ, ա՛յդ էր միայն, ուրիշ ոչինչ...

Եվ այդ ասելով՝ ինքն էլ փղձկաց։ Նույն րոպեին հանկարծ ազմուկ բարձրացավ դավիթում, ինչ-որ մեկը նախասենյակ մտավ։ Գրուշենկան վեր թռավ՝ կարծես սոսկալի վախեցած։ Գոռում-գոչումով ներս վազեց Ֆենյան։

— Տիրուհի՛ս, աղավնյա՛կ իմ, տիրուհի՛ս, սուրհանդակը եկավ,— գոչում էր նա ուրախ ու շնչակտուր— Կառք են ուղարկել Մոկրոեից, ձեզ տանելու, Տիմոֆեյն է կառապանը, հենց իսկույն նոր ձիեր կլծեն... Նամա՛կ, նամա՛կ, տիրուհիս, ահա նամա՛կ։

Նամակը նա բռնել էր ձեռքում և գոռալու ժամանակ անընդհատ շարժում էր օդի մեջ։ Գրուշենկան նամակը խլեց նրանից ու մոտեցրեց մոմին։ Մի փոքրիկ գրություն էր միայն, մի քանի տող, և նա մի վայրկյանում կարդաց։

— Կանչո՞ւմ է,— գոռաց լիովին գունատվելով, գեմքը ախտագին մի ժպիտով այլայլված,— սուլե՛ց։ Դե սոդա՛ ուրեմն, ծեծվա՛ծ շնիկ։

Բայց միայն մի վայրկյան նա կանգնած մնաց, ասես տատանվելով. հանկարծ արյունը խուժեց գլուխը և այտերը վառվեցին։

— Գնո՞ւմ եմ,— գոչեց նա մեկեն։— Իմ կյանքի հի՛նգ տարիներ։ Մնաք բարո՛վ։ Մնաս բարով, Ալյոշա, բախտս վճռվեց... Հեռացե՛ք, հեռացե՛ք, հեռացե՛ք հիմա ինձնից բոլորդ, էլ չտեսնե՛մ ձեզ... Գրուշենկան թռավ դեպի նոր կյանք... Դու էլ իմ վատը մի՛ հիշիր, Ռակիտկա։ Գուցե դեպի մա՛հ եմ գնում։ Ո՞ւմ։ Հարբե՛լ եմ կարծես։

Նա հանկարծ թողեց նրանց ու վազեց իր ննջասենյակը։

— Դե՛հ, հիմա մենք ավելորդ ենք նրա համար,— քրթմնջաց Ռակիտինը։— Գնանք. թե չէ՝ մեկ էլ տեսար նորից կսկսի այդ կանացի ճվճվոցը։ Էլ պուխս գնացել է այս լալկան գոռում-գոչումներից...

Ալյոշան մեքենաբար թույլ տվեց, որ նա իրեն դուրս տանի։ Բակում կանգնած էր ուղեկառքը, լծից արձակում էին ձիերին, այս ու այն կողմ էին վազվզում լապտերով։ Ձիերի մի նոր եռյակ էին ներս բերում բաց դարպասից։ Սակայն հազիվ էին Ալյոշան ու Ռակիտինը սանդուղքից բակ իջել, երբ հանկարծ Գրուշենկայի ննջասենյակի լուսամուտը բացվեց և նա հնչեղ ձայնով գոռաց Ալյոշայի ետևից.

— Ալյոշկա՛, ողջույնս հաղորդիր քո եղբայր Միտենկային և ասա՛, որ իմ վատը չհիշի, չնայած ես չարիք հասցրի նրան։ Եվ մեկ էլ իմ բառերով ասա՝ «Սրիկայի՛ն բաժին ընկավ Գրուշենկան, և ոչ թե քեզ՝ ազնիվ մարդուն»։ Եվ այս էլ ավելացրու, որ Գրուշենկան մի ժամ սիրել է նրան, միայն մի ժամ է սիրել ընդամենը, այնպես որ նա սրանից հետո իր ամբողջ կյանքում թող հիշի այդ մի ժամը. ասա՝ Գրուշենկան այդպե՛ս պատվիրեց քեզ, ամբո՛ղջ կյանքում...

Նա վերջացրեց հեծեծալից ձայնով։ Լուսամուտը շրխկոցով փակվեց։

— Հը՛մ, հը՛մ,— մուլտաց Ռակիտինը ծիծաղելով,— մոռթեց քո Միտենկային, և մեկ էլ հրամայում է, որ իր ամբողջ կյանքում հիշի։ Ա՛լ քեզ գիշատիչ կնիկ։

Ալյոշան ոչինչ չպատասխանեց, կարծես չէր էլ լսել։ Նա արագ քայլում էր Ռակիտինի կողքին, ասես սարսափելի շտապում էր. անզգայացել էր մի տեսակ, մեքենաբար էր նետում քայլերը։ Ռակիտինը հանկարծ մի սուր ծակոց զգաց, կարծես մատով դիպել էին իր թարմ վերքին։ Բնավ էլ այս չէր իր սպասածը, երբ Գրուշենկային ու Ալյոշային իրար մոտ բերեց մի ժամ առաջ. բոլորովին ուրիշ բան պատահեց, և ոչ թե այն, ինչ ինքը շատ էր ցանկանում։

— Լեհ է այդ մարդը՝ նրա այդ սպան,— սկսեց խոսել նորից, զսպելով իրեն,— և սպա էլ չէ հիմա, Սիբիրում մաքսատան պաշտոնյա է եղել՝ չինական սահմանի մի անկյունում, երևի ճլորած լեհուկի մեկն է։ Ասում են՝ պաշտոնն է կորցրել։ Լսել է հիմա, որ Գրուշենկայի ձեռքին դրամագլուխ կա, և ահա վերադարձել է։ Հենց սա է ամբողջ գաղտնիքը։

Ալյոշան նորից չէր լսում կարծես։ Ռակիտինը չդիմացավ։

— Ինչ է, մեղավորին դարձի՞ բերեցիր,— չարախնդորեն ծիծաղեց նա Ալյոշայի երեսին։— Անառակ կնոջը ճշմարիտ ուղու վրա՞ դրեցիր։ Յոթը դևերը դուրս քշեցիր, հա՞։ Ա՛յ թե որտեղ կատարվեցին այն հրաշքները, որ սպասում էինք այսօր։

— Վերջ տուր, Ռակիտին,— պատասխանեց Ալյոշան տառապալից սրտով։

— Ինչ է, քիչ առաջվա քսանհինգ ռուբլու համար ինձ «արհամարհո՞ւմ ես» հիմա։ Այսինքն թե՝ ծախեցի՞ ճշմարիտ բարեկամիս։ Բայց ախր դու Քրիստոս չես, ես էլ Հուդա չեմ։

— Ախ, Ռակիտին, հավատացնում եմ քեզ, որ նույնիսկ մոռացել էի դրա մասին,— գոչեց Ալյոշան,— ինքդ հիմա հիշեցրիր...

Բայց Ռակիտինն արդեն վերջնականապես կատաղեց։

— Դե գրողի ծո՞ցը գնաք բոլորդ էլ,— բղավեց նա հանկարծ,— ի՞նչ գործ ունեի կապվեցի քեզ հետ, չոր ու ցա՛վ։ Չեմ էլ ուզում երեսդ տեսնել սրանից հետո։ Գնա՛, մենակդ գնա, ա՛յ քո ճանապարհը։

Եվ նա շեշտակիորեն դարձավ մի ուրիշ փողոց, Ալյոշային մենակ թողնելով խավարի մեջ։ Ալյոշան քաղաքից դուրս եկավ ու դաշտի միջով գնաց դեպի վանք։

IV

ԿԱՆԱ ԳԱԼԻԼԵԱՑՈՒ

Արդեն շատ ուշ էր ըստ վանական կարգուկանոնի, երբ Ալյոշան հասավ մենաստան. դռնապանը հատուկ մի մուտքից նրան ներս թողեց։ Ժամը ինն էր եղել արդեն՝ ընդհանուր հանգստի և խաղաղության ժամը, բոլորի համար այնքա՛ն տագնապալի օրից հետո։ Ալյոշան վախվխելով դուռը բացեց և մտավ սրբահոր խուցը, ուր հիմա նրա դագաղն էր դրված։ Բացի հայր Պաիսիից, որ դագաղի առաջ ավետարանն էր կարդում մենության մեջ, և բացի պատանի նորընծա Պորֆիրիից, որ պատանեկան պինդ քնով քնել էր մյուս սենյակի հատակին՝ երեկ գիշերվա զրուցատրությունից և այսօրվա իրարանցումից հոգնած, խուցում ուրիշ ոչ ոք չկար։ Հայր Պաիսին թեև լսեց Ալյոշայի ներս մտնելը, բայց նույնիսկ չնայեց նրա կողմը։ Ալյոշան դարձավ դեպի աջ անկյունը, ծնրադրեց ու սկսեց աղոթել։ Հորդալիր էր նրա հոգին, բայց մի տեսակ խառնաշփոթ, և ոչ մի առանձին զգացողություն որոշակի դրսևորմամբ չէր զատորոշվում, այլ ընդհակառակը, ամեն մեկը դուրս էր մղում մյուսին՝ հանդարտ ու համաչափ մի հոլովույթի մեջ։ Բայց սիրտը քաղցրությամբ էր լի, և, տարօրինակ բան, Ալյոշան չէր զարմանում դրա համար։ Նորից իր առաջ տեսնում էր այդ դագաղը՝ չորս կողմից փակված այդ թանկագին մեռյալին, բայց իր հոգում չկար այն արտասվալից, մորմոքուն, տանջագին ցավը, որ զգում էր առավոտյան։ Ներս մտնելով, անմիջապես ծունկի ընկավ դագաղի առաջ՝ որպես սրբարանի, բայց ցնծություն, ցնծությո՛ւն էր շողշողում նրա մտքի մեջ ու սրտի մեջ նրա։ Խուցի պատուհաններից մեկը բաց էր, թարմ ու զովաշունչ օդ կար սենյակում։ «Ուրեմն հոտն ավելի է սաստկացել, եթե որոշել են բանալ պատուհանը»,— մտածեց Ալյոշան։ Բայց նույնիսկ ապականության շնչի այդ միտքը, որ դեռ ցերեկվա ժամերին այնքա՛ն սարսափելի ու անփառունակ էր թվում իրեն, այժմ նրա մեջ չհարուցեց անցյալ վիշտն ու վրդովմունքը։ Նա հանդիստ սկսեց աղոթել, բայց շուտով ինքն էլ զգաց, թե համարյա մեքենաբար էր աղոթում։ Մտքերի բեկորներ առկայծում էին նրա հոգու մեջ, մի պահ վառվում էին աստղերի նման և իսկույն հանգում, դրանց փոխարինում էին ուրիշ բեկորներ. սակայն և նրա հոգու մեջ տիրում էր ամբողջական, ամուր, հագեցնող մի բան, և ինքն էլ գիտակցում էր այդ։ Երբեմն մի աղոթք էր սկսում բուռն ջերմեռանդությամբ, այնքա՛ն էր ուզում զեղել իր շնորհակալությունն ու սերը... Բայց սկսելով աղոթքը, հանկարծ անցնում էր մի ուրիշ բանի, մտասուզվում էր ու մոռանում թե՛ աղոթքը, թե՛ այն բանը, որ ընդհատման պատճառ էր եղել։ Սկսեց ունկնդրել այն, ինչ ընթերցում էր հայր Պաիսին, սակայն, շատ հոգնած լինելով, հետզհետե սուզվեց մրափի մեջ...

«Եվ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց,— ընթերցում էր հայր Պաիսին,— և անդ էր մայրն Յիսու-

պի: Կոչեցաւ և Յիսուս, և աշակերտքն նորա ի հարսանիսն»:

«Հարսանի՞ք։ Ի՞նչ է դա... հարսանիք... — հոգմի նման անցավ Ալյոշայի մտքով,— նա նույնպես երջանկության մեջ է հիմա, Գրուշենկան... գնաց խնջույքի... Ոչ, դանակ չտարավ հետը, դանակ չտարավ... Դա «եզերական» մի խոսք էր միայն... է՛հ... պետք է ներել եզերական խոսքերը, անպայման ներել։ Եզերական խոսքերը թեթևացնում են հոգին... մարդկանց վիշտը չափազանց ծանր կլիներ առանց այդ խոսքերի։ Ռակիտինը կողմնակի փողոցը գնաց։ Քանի դեռ Ռակիտինը մտածում է իր կրած վիրավորանքների մասին, նա միշտ էլ կողմնակի փողոց պիտի գնա... Իսկ ճանապարհը... մեծասքա՞նչ ճանապարհը լայն է, ուղիղ, լուսապայծառ, բյուրեղյա, և արև՞ն է մյուս ծայրում... Հա... ի՞նչ են ընթերցում»։

«...Եւ ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն Յիսուսի. Գինի ոչ ունին...»,— *հասավ Ալյոշայի ականջին։*

«Ախ այո՞, բաց էի թողնում այս համարը, իսկ չէի ուզում բաց թողնել, այս հատվածը սիրում եմ. Կանա Գալիլիականն է, առաջին հրաշքը... Ախ, այս հրա՞շքը, ախ, այս թանկագի՞ն հրաշքը։ Ոչ թե մարդկային վշտին, այլ ուրախությա՞նն իր այցելությունը բերեց Քրիստոս, մարդկային ուրախությանն աջակից եղավ՝ իր առաջին հրաշքը կատարելով... «Ով սիրում է մարդկանց՝ սիրում է նաև նրանց ուրախությունը...»։ Հանդուցյալն ամեն բոպե կրկնում էր այս խոսքը, նրա առաջնագույն մտքերից մեկն էր դա... Առանց ուրախության չի կարելի ապրել, ասում է Միտյան... Այո, Միտյան... Ամեն ինչ, որ ճշմարիտ է ու գեղեցիկ, միշտ լեցուն է համատարած ներողամտությամբ. այս բանն էլ նա էր ասում դարձյալ...»։

«... Եւ ասէ ցնա Յիսուս. Ի՞նչ կայ իմ և քո, կի՛ն դու. չե՛ հասեալ ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջի՛ք»:

«Արասջի՛ք... Ուրախությունը, ուրախությո՛ւնը այդ աղքատ, շատ աղքատ մարդկանց... Անշո՛ւշտ թե աղքատ, քանի որ նույնիսկ հարսանիքի համար բավականաչափ գինի չի եղել... Ահա գրա՛մ են պատմաբանները, թե այդ ժամանակ Գեննեսարեթա ծովակի շուրջ և բոլոր այդ վայրերում ապրող մարդիկ չքավորագույն բնակչությունն էին, որ կարելի է երևակայել... Եվ այդ հարսանիքին ներկա եղող մյուս վսեմ էակի՝ Հիսուսի մոր մեծաշնորհ սիրտը պիտո՞ր անշուշտ, թե որդին եկել է ոչ միայն իր վեհագույն ու սարսափելի մեծագործության համար, այլ թե նրա սրտին մատչելի է նաև անկեղծ, անպաճույճ զվարճությունը ինչ-որ անգետ, անուս ու պարզամիտ էակների, որոնք սիրալիր կանչել են նրան իրենց խեղճուկրակ հարսանիքին։ «Դեռ չի հասել իմ ժամանակը»,— ասում է նա մեղմ ժպիտով (անպայմա՞ն նա հեզորեն ժպտացել է իր մորը)... Եվ իրոք, մի՞թե աղքատ հարսանիքներում գինին շատացնելու համար էր, որ նա իջավ երկիր։ Բայց թե ահա գնաց ու կատարեց այդ բանը՝ իր մոր խնդրանքով... Ա՜խ, նորից է ընթերցում»։

«... Ասէ ցնոսա Յիսուս. Լցէ՛ք զքակոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչև ի վերս։ Եւ ասէ ցնոսա. Արդ՝ առէ՛ք և բերէք տաճարապետիդ. և նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն զինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն, խօսի ընդ փեսային տաճարապետն և ասէ. Ամենայն մարդ զանոյշ զինին յառաջագոյն պաշտէ, և յորժամ արբենան՝ յայնժամ զլաւին. դու պահեցեր զանոյշ զինիդ մինչև ցայժմ»:

«Բայց ի՞նչ է սա, ի՞նչ է սա։ Ինչո՞ւ է լայնանում սենյակը... Ախ այո՞..., չէ՞ որ ամուսնություն է սա, հարսանիք... այո, անշուշտ։ Ահա՛ հյուրերը, ահա և երիտասարդ զույգը, և զվարթ բազմությունը և... իսկ ո՞ւր է իմաստուն տաճարապետը։ Բայց ո՞վ է սա։ Ո՞վ։ Նորից լայնանում է սենյակը... Ո՞վ է ոտքի ելնում այնտեղ՝ մեծ սեղանի եռևից։ Ի՞նչ... Նա՞ էլ այստեղ է։ Բայց չէ՞ որ դագաղի մեջ է նա... Բայց և այստեղ է միաժամանակ... ոտքի ելավ, տեսավ ինձ, գալիս է ինձ մոտ... Տե՛ր աստված...»։

Այո, նրան, նրան՝ Ալյոշային մոտեցավ այդ փոքրամարմին, նիհարուկ ծերունին, որ մանր կնճիռներ ուներ դեմքին և ժպտում էր ուրախ ու մեղմիվ։ Դագաղ չկա արդեն, և հագել է այն նույն զգեստը, որով նստած էր երեկ իրենց հետ, երբ հյուրերը հավաքվել էին նրա մոտ։ Բաց է դեմքը լրիվ, աչքերը փայլում են։ Բայց ինչպե՞ս թե. ուրեմն նա՝ ևս մասնակցում է խնջույքին, նույնպես հրավիրվել է հարսանիքի՝ ի Կանա Գալիլիացվոց...

— Նույնպես, քաղցրիկդ իմ, նույնպես հրավիրյալ եմ, հրավիրյալ ու կոչեցյալ,— լսեց Ալյոշան այդ մեղմ ձայնը իր գլխի վերևս։— Ինչո՞ւ ես պահ մտել այստեղ ու չես երևում... գնանք, դու էլ եղիր մեզ հետ։

Նրա՞ ձայնն է, սրբահայր Զոսիմայի ձայնը... Եվ ինչպե՞ս կարող է նա՝ չլինել, երբ կանչո՞ւմ է։ Սրբահայրն իր ձեռքով բարձրացրեց ծնկադիր Ալյոշային, և Ալյոշան ոտքի ելավ։

— Զվարճանում ենք,— շարունակեց նիհարուկ ծերունին,— նոր գինի ենք խմում, նոր ուրախության, մեծ ուրախության գինին, տեսնո՞ւմ ես, որքա՜ն հյուր կա։ Ահա՜ փեսան ու հարսը, ահա և տաճարապետն իմաստուն, փորձում է նոր գինին։ Ինչո՞ւ ես զարմացած նայում ինձ։ Մի կանաչ սոխ տվեցի, և ահա ես էլ այստեղ եմ հիմա։ Եվ այս հրավիրյալներից շատերը մի կանաչ սոխ են տվել միայն, լոկ մի փոքրիկ կանաչ սոխ... Ի՞նչ են մեր արած գործերը։ Դո՛ւ ես, մեղմիկ իմ որդյակ, դո՛ւ ես, հեզահամբույր մանչուկ իմ, դո՛ւ ես կարողացար այսօր մի կանաչ սոխ տալ ծարավի կնոջ։ Սկսի՛ր քո գործը, քաղցրիկդ իմ, սկսի՛ր, հեզաբարո պատանյակ... Իսկ տեսնո՞ւմ ես արևը մեր, տեսնո՞ւմ ես նրան։

— Վախենում եմ... չեմ համարձակվում նայել... — շշնջաց Ալյոշան։

— Մի՛ երկնչիր նրանից։ Մեր առջև սարսափելի է նա իր վեհությամբ, ահավոր է իր բարձրությամբ, սակայն գթառատ է անհունորեն, նա մեր կերպարանքն է զգեցել սիրո հորդորմամբ և ուրախանում է մեզ հետ, շուրջ վերածում է գինվո, որպեսզի ընդհատվի ուրախությունը հյուրերի, ու նոր հրավիրյալների է սպասում, անդադար կանչում է նորերին և արդեն հավիտյանս հավիտենից։ Ահա և նոր գինի են բերում, տեսնո՞ւմ ես, թակուկներն են բերում...»։

Հուրհրատող մի բան վառվում էր Ալյոշայի սրտում, հանկարծ մի բան լիուլի լցրեց նրա սիրտը՝ ցավեցնելու աստիճան, հափշտակության արցունքները ձգտում էին դուրս ժայթքել նրա հոգու խորքից... Նա թևերը տարածեց, մի հիլ արձակեց ու արթնացավ...

Նորից դագաղը, բաց լուսամուտը և ավետարանի մեղմ, ծանրալուրջ, հստակաձայն ընթերցումը։ Բայց Ալյոշան արդեն չէր լսում, թե ինչ են ընթերցում։ Տարօրինակ բան, նա քնել էր ծնրադիր, իսկ հիմա կանգնած էր ոտքի, և հանկարծ, ասես պոկվելով իր կանգնած տեղից, երեք ամուր ու արագ քայլերով ընդհուպ մոտեցավ դագաղին։ Նույնիսկ ուսով դիպավ հայր Պաֆնութին և չնկատեց այդ։ Հայր Պաֆնութն աչքերը մի վայրկյան վեր առավ գրքից ու նայեց նրան, բայց իսկույն իջեցրեց հայացքը

նորից, հասկանալով, որ մի տարօրինակ բան է պատահել տղային։ Ալյոշան մոտ կես բոպե նայեց դագաղին՝ ծածկված ու անշարժ մեռյալին, որ պառկած էր դագաղի մեջ՝ սրբապատկերը կրծքի վրա և ութանկյուն խաչով փեղույրը գլխին։ Դեռ նոր էր լսել նրա ձայնը, և այդ ձայնը տակավին հնչում էր իր ականջներում։ Ու դեռ ունկնդրում էր, դեռ նոր հնչյունների էր սպասում... Բայց հանկարծ կտրուկ շրջվեց ու դուրս ելավ խուցից։

Կանգ չառավ նաև անդաստակում, այլ արագորեն վազ խլավ։ Ցնծությամբ լցված նրա հոգին ծարավի էր ազատության, լայնարձակ տարածության։ Գլխի վերև անհունորեն խորանում էր անծայրածիր երկնակամարը՝ մեղմ ու փայլփլուն աստղերով լեցուն։ Դեռ անորոշ Ծիր Կաթինը երկնչելով երկարում էր բարձրակեսից մինչև հորիզոն։ Զովաշունչ ու անշարժության չափ խաղաղ գիշերը պարուրել էր երկիրը։ Մայր տաճարի սպիտակ աշտարակներն ու ոսկի գմբեթները ճաճանչում էին շափյուղա երկնքի դիմաց։ Տան շուրջը, բուրաստանների մեջ, աշնանային փարթամ ծաղիկները նիրհել էին մինչ առավոտ։ Երկրային լությունը կարծես միաձուլվել էր երկնային լության, երկրի խորհուրդն առնչվում էր աստղերի խորհուրդին... Ալյոշան կանգնած նայում էր և հանկարծ ամբողջ մարմնով վայր նետվեց ու երկիր պագանեց գետնատարած։

Նա չգիտեր, թե ինչու է գրկում երկիրը, չէր կշռադատում, թե ինչու այնպես անդիմադրելիորեն ուզում է համբուրել այն, համբուրել ամբողջությամբ, բայց համբուրո՞ւմ էր արտասվելով, հեկեկալով, իր արցունքներո՞վ էր ողողում երկիրը և հափշտակությամբ երդվում էր սիրել այն, սիրել հավիտյանս հավիտենից։ «Թրջիր երկիրն արցունքներով քո ուրախության ու սիրիր այդ արցունքները քո...»,— հնչեց նրա հոգում։ Վասն ինչի՞ էր արտասվում նա։ Օ՜, իր ցնծության մեջ արտասվում էր նույնիսկ այդ աստղերի վրա, որոնք փայլփլում ու նայում էին իրեն տիեզերքի անհունից, և «չէր ամաչում այդ հափշտակությունից»։ Աստուծո բոլոր այդ անհամար աշխարհներից հանկարծ թելեր էին կարծես ի մի ելել իր հոգում, և ամբողջովին թրթռում էր իր հոգին, «հաղորդակցելով այլ աշխարհների հետ»։ Տենչում էր ներել բոլորին ու ամեն ինչի համար, և ներումն խնդրել, օ՜, ոչ թե իր համար խնդրել, այլ բոլոր մարդկանց, ընդհանուրի և ամեն ինչի, իսկ «ինձ համար ուրիշներն էլ են խնդրում», հնչեց նորից նրա հոգու մեջ։ Բայց վայրկյան առ վայրկյան նա զգում

էր հայտնաբար ու կարծես շոշափելիորեն, թե այդ երկնակամարի պես հաստատուն ու անսասան մի բան իջնում ու տիրում էր իր հոգուն։ Ասես մի գաղափար գահակալում էր իր մտքում՝ ու ցկյանս արդեն ու հավիտյանս հավիտենից։ Որպես մի տկար պատանի ենթվել էր երկիր պագանելու, բայց ուրքի ելավ որպես ցկյանս հաստատակամ մի մարտիկ և այդ բանը գիտակցեց ու զգաց հանկարծ՝ իր հափշտակության այդ նույն պահին։ Ու երբեք, երբեք Ալյոշան չէր կարող մոռանալ այդ պահը իր ամբողջ հետագա կյանքում։ «Անծանոթ մեկն այցելեց իմ հոգին այդ ժամին»,— ասում էր նա հետագայում, հաստատապես գավազանելով իր ասածին...

Երեք օր հետո նա հեռացավ վանքից, և այդ քայլը համապատասխանում էր նաև իր հանգուցյալ սրբահոր այն հորդորին, թե նա պետք է «աշխարհիկ կյանքը ճանաչի»։

Գիրք ութերորդ

ՄԻՏՅԱ

I

ԿՈՒԶՄԱ ՍԱՐՍԱՌՈՒ

Իսկ Դմիտրի Ֆյոդորովիչը, որին Գրուշենկան, դեպի նոր կյանք սուրալով, իր վերջին ողջույնն էր հղել ու «պատվիրեք» էր ընդմիշտ հիշել իր մի ժամվա սերը, այդ բոպեին նույնպես սահմանոր հուզմունքի ու հոգսերի մեջ էր ու ոչինչ չգիտեր Գրուշենկայի գլխով անցած-դարձած բաների մասին։ Վերջին երկու օրերի ընթացքում նա այնպիսի անհրեակայելի վիճակի մեջ էր, որ իսկապես կարող էր հիվանդանալ ուղեղի բորբոքումով, ինչպես ինքն էր ասում հետո։ Ալյոշան նախորդ օրն առավոտյան չէր կարողացել գտնել նրան, իսկ Իվանն էլ չէր կարողացել նույն օրը տեսակցություն ունենալ նրա հետ գինետանը։ Նրա վարձած բնակարանի տանտերերը, անսալով իր հրամանին, թաքցրել էին նրա հետքերը։ Իսկ ինքն այդ երկու օրվա մեջ բառացիորեն խոյանում էր այս ու այն կողմ, «պայքարելով իր ճակատագրի դեմ ու փրկելով իրեն», ինչպես ինքն իսկ արտահայտվեց հետո։ և նույնիսկ մի քանի ժամով քաղաքից դուրս սլացավ հրատապ մի գործ կարգադրելու, չնայած որ իր համար սարսափելի էր հեռանալ ու գեթ մի բոպե աչքից հեռու թողնել Գրուշենկային։ Այդ բոլորը հետագայում պարզվեցին ամենայն մանրամասնությամբ ու վավերագրական վկայություններով, բայց այժմ նշենք փաստորեն ամենակարևոր պատահարները նրա կյանքի այդ երկու սարսափելի օրերից, որոնց հաջորդեց ահավոր աղետը՝ այնքան անակնկալորեն պայթելով նրա գլխին ու շուռ տալով ճակատագիրը։

Թեև Գրուշենկան, ճիշտ է, մի ժամ սիրել էր նրան ճշմարտապես ու անկեղծորեն, բայց և, միաժամանակ, իրոք որ դաժանորեն ու անողոք կերպով տանջում էր նրան երբեմն։ Գլխավորն այն էր, որ Միտյան ոչինչ չէր կարողանում կռահել նրա մտադրություններից։ Սիրալիրությամբ կամ բռնի կերպով մի բան կորզելը նույնպես անհնար էր. Գրուշենկան ոչ մի կերպ տեղի չէր տա, այլ պարզապես կարող էր բարկանալ ու բոլորովին երես դարձնել նրանից։ Միտյան որոշակիորեն հասկանում էր այդ։ Շատ իրավացիորեն կասկածում էր, որ Գրուշենկան նա ներքին մի պայքարով է տվայտում, տատանվում է արտասովոր մի անորոշության մեջ, ուզում է մի բան վճռել ու չի կարողանում հստակ որոշում տալ։ Ուստի և Միտյան հիմք ուներ ենթադրելու, որ նա մերթ ընդ մերթ պետք է պարզապես ասի իրեն՝ Միտյային, ասի իր ցուցաբերած կիրքը. և սիրտը նվաղում էր այդ ենթադրությունից։ Դուցե և իրոք այդպես էր, բայց նա այնուամենայնիվ չէր հասկանում, թե ինչն էր Գրուշենկայի սրտենեղության բուն պատճառը։ Ճիշտն ասած, ամբողջ այդ տանջալի հարցը նրա համար երկու եզր ուներ միայն. «Կա՞մ ինքը՝ Միտյան, կա՞մ Ֆյոդոր Պավլովիչը»։ Ի դեպ, այստեղ պետք է մի որոշակի փաստ նշել. նա լիովին համոզված էր, որ Ֆյոդոր Պավլովիչն անպայման օրինական ամուսնություն կառաջարկի Գրուշենկային (եթե արդեն չի առաջարկել), և ոչ մի բոպե չէր հավատում, թե ծերունի հեշտամոլը կարող է հույս ունենալ միայն երեք հազար ռուբլով գործը գլուխ բերելու։ Միտյան այդ եզրակացությանն էր հասել, ծանոթ լինելով Գրուշենկայի բնավորությանը։ Ահա թե ինչու երբեմն նրան կարող էր թվալ, թե Գրուշենկայի ամբողջ տանջանքի և անվճռականության պատճառը նույն երկընտրանքն է պարզապես, այսինքն չգիտե, թե ո՞ւմ բնտրի նրանցից, ո՞ր մեկն ավելի շահավոր կլինի իրեն։

Տարօրինակ բան, այդ օրերին Միտյայի մտքով իսկ չանցավ, թե շուտով վերադառնալու է «սպան», այսինքն այն մարդը, որ ճակատագրական դեր էր կատարել Գրուշենկայի կյանքում, և որի ժամանումին նա սպասում էր այնպիսի՜ հուզմունքով ու վախով։ Ճիշտ է, որ Գրուշենկան վերջերս այդ խնդրի շուրջ ծպտուն չէր հանել Միտյայի ներկայությամբ։ Սակայն Միտյային քաջ հայտնի էր այն նամակը, որ մի ամիս առաջ Գրուշենկան ստացել էր այդ իր երբեմնի գայթակղիչից, մասամբ հայտնի էր նաև նամակի բովանդակությունը։ Գրուշենկան այն ժամանակ, զայրույթի մի բոպեին, ցույց էր տվել նամակը, բայց զարմանքով տեսել էր, որ Միտյան ոչ մի կարևորություն չընծայեց դրան։ Եվ շատ դժվար կլիներ բացատրել, թե ինչու. պատճառը գուցե պարզապես այն էր, որ Միտյան, այս կնոջ սիրուն իր հարազատ հոր դեմ մղած պայքարի ահավոր այլանդակությունից ճնշված, այլևս ոչ մի ավելի սարսափելի ու վտանգավոր բան չէր էլ կարող ենթադրել իր համար, գոնե այդ ժամանակ։ Ու պարզապես չէր հավատում, որ մի սիրեկան, հինգ տարի անհայտանալուց հետո, հանկարծ լույս աշխարհ է ընկնում չգիտես որտեղից, և ավելի ևս չէր հավատում, որ նա կգա շուտով։ Մանավանդ որ «սպայի» առաջին նամակում, որ տեսել էր Միտյան, շատ անորոշ կերպով էր խոսվում այդ նոր մրցակցի գալստյան մասին. նամակը շատ մշուշապատ էր, շատ վերամբարձ և միայն դյուրազգաց խոսքերով լեցուն։ Պետք է նշել, որ Գրուշենկան նրանից թաքցրել էր նամակի վերջին տողերը, ուր մի քիչ ավելի որոշակի էր խոսվում վերադարձի մասին։ Բացի այդ, Միտյան հետագայում հիշեց, որ այդ պահին հենց Գրուշենկայի դեմքին էլ ակամա ու հպարտամիտ մի արհամարհանք էր նշմարել՝ Սիբիրից եկած այդ գրության նկատմամբ։ Այնուհետև Գրուշենկան այլևս ոչինչ չէր հայտնել այդ նոր մրցակցի հետ իր հետագա փոխհարաբերությունների մասին։ Այսպիսով, կամաց-կամաց, Միտյան նույնիսկ բոլորովին մոռացել էր այդ սպային։ Նա միայն մտածում էր այն մասին, թե ինչ էլ լիներ հետևանքը, ինչպիսի ընթացք էլ ստանար խնդիրը, այնուամենայնիվ Ֆյոդոր Պավլովիչի հետ իր վերջնական ընդհարումը չափազանց մոտալուտ էր արդեն և պետք է իր վախճանին հասներ ուրիշ որևէ բանից առաջ։ Ամեն բոպե Գրուշենկայի վճռին էր սպասում սրտի նվաղումով և հավատում էր շարունակ, որ դա տեղի կունենա մի տեսակ անակնկալորեն, բոպեական ներշնչումով։ Նա

հանկարծ կասի իրեն՝ «Ա՜ռ ինձ, ես քոնն եմ Հավիտյան», և ամեն ինչ կվերջանա. իսկույն եթե կգրկի նրան ու կտանի աշխարհի մյուս ծայրը։ Օ՜, անմիջապես կտանի նրան հեռու, որքան կարելի է հեռու, եթե ոչ աշխարհի ծայրը, գոնե Ռուսաստանի հեռավոր մի անկյունը, կամուսնանա այնտեղ նրա հետ ու բնակություն կհաստատի incognito, այնպես որ այլևս ո՜չ ոք ոչինչ չիմանա իրենց մասին, ո՜չ այստեղ, ո՜չ այնտեղ ու ո՜չ մի տեղ։ Եվ այն ժամանակ, օ՜, այն ժամանակ բոլորովին նո՜ր մի կյանք կսկսի անմիջապես։ Այդ տարբեր, վերանորոգված և արդեն «առաքինի» («անպայման, անպայման առաքինի») կյանքի մասին նա երազում էր ամեն բոպե ու տենդագին։ Սարավի էր այդ հարության ու վերանորոգության։ Նրան շատ էր տանջում այն նողկալի ճահճափոսը, որի մեջ խրվել էր իր սեփական կամքով, և նա, ինչպես շատ-շատերը նման դեպքերում, ամենից ավելի հավատում էր միջավայրի փոփոխության. միայն թե չլինեն այս մարդիկ, միայն թե չլինեն այս հանգամանքները, միայն թե ինքը փախչի-գնա՜ այս անիծյալ տեղից, և ամեն ինչ կվերածնվի, ամեն ինչ կընթանա նոր ձևով։ Ահա թե ինչի էր հավատում, ահա թե ինչ էր տենչում։

Բայց դա կարող էր լինել՝ հարցի առաջին, երջանիկ լուծման պարագային։ Կար նաև մի այլ լուծում, հնարավոր էր նաև մի այլ, բայց արդեն սարսափելի վախճան։ Գրուշենկան հանկարծ կարող էր ասել՝ «Գնա՜ բանիդ, հենց նոր ես գործը կարգադրեցի Ֆյոդոր Պավլովիչի հետ և նրա՜ հետ էլ ամուսնանում եմ, իսկ դու ինձ պետք չես»... և այդ դեպքում... բայց այդ դեպքում... Սակայն Միտյան չգիտեր, թե ինչ է լինելու այդ դեպքում, մինչև վերջին ժամը չգիտեր. այս հարցում պետք է արդար լինել նրա նկատմամբ։ Որոշակի մտադրություն չուներ, ոճիր չէր ծրագրել։ Հետամտում էր պարզապես, լրտեսում ու տանջվում էր, բայց համենայն դեպս իր ճակատագրի առաջին, երջանիկ լուծմանն էր պատրաստվում միայն։ Որևէ այլ մտմտուք վանում էր նույնիսկ իրենից։ Բայց ահա այստեղ բոլորովին ուրիշ մի տանջանք էր սկսում արդեն, իր առաջ ծառանում էր բոլորովին նոր ու կողմնակի մի հանգամանք, որ նույնպես ճակատագրական էր ու անլուծելի։

Այսինքն, եթե Գրուշենկան ասի իրեն՝ «Ես քոնն եմ, տար ինձ այստեղից», ինչպե՞ս տանի նրան։ Որտեղի՞ց դրա համար գտնի միջոցներ, փող։ Հենց այդ ժամանակ սպասվել էին իր

բոլոր այն եկամուտները, որ մինչև հիմա այնքա՞ն տարի անընդհատ ստանում էր Ֆյոդոր Պավլովիչից, ողորմության պես։ Գրուշենկան իհարկե փող ուներ, բայց այդ հարցում հանկարծ սոսկալի մի հպարտություն ի հայտ եկավ Միտյայի մեջ, ի՛նքն էր ուզում տանել նրան և ի՛ր միջոցներով մի նոր կյանք սկսել նրա հետ։ Երևակայել անգամ չէր կարող, որ փող կվերցնի նրանից, և այդ միտքը տաժանագին նողկանք ազդելու չափ լցկում էր իրեն։ Այս փաստի մասին երկար չեմ խոսի այստեղ, չեմ վերլուծի, այլ միայն կնշեմ, որ այսպիսի մի տրամադրություն էր տիրում նրա հոգու մեջ այդ պահին։ Այս ամբողջը կարող էր նույնիսկ անուղղակիորեն և մի տեսակ անգիտակցաբար առաջացած լինել այն թաքուն խղճի խայթից, որ նա զգում էր՝ Կատերինա Իվանովնայի փողը գողեգող յուրացրած լինելու համար։ «Մեկի առաջ սրիկա դուրս եկա և մյուսի առաջ էլ իսկույն սրիկա կլինեմ նորից,— մտածում էր նա այն ժամանակ, ինչպես ինքը խոստովանեց հետագայում,— և Գրուշենկան եթե իմանա, ի՛նքը նախ կհրաժարվի այսպիսի սրիկայից»։ Եվ այսպես ուրեմն, որտեղի՞ց գտնել միջոցները, որտեղի՞ց գտնել այդ ճակատագրական փողը։ Այլապես ամեն ինչ կկորչի ու ոչինչ չի-իրագործվի, «և միայն այն պատճառով, որ փո՞ղն էր պակասում, օ՜ խայտառակություն»։

Առաջ անցնելով ասեմ, որ նա հենց գիտե՛ր գուցե, թե որտեղից կարող է ձեռք բերել այդ փողը, գուցե գիտեր նաև, թե այդ փողը որտեղ է գտնվում։ Առայժմ ավելի մանրամասնորեն չեմ խոսի այս մասին, որովհետև հետագայում ամեն ինչ պարզ է դառնալու։ Բայց ահա ասեմ, թեև տարտամորեն, թե ինչն էր զլխավոր դժբախտությունը նրա համար. որպեսզի կարողանար վերցնել այդ ինչ-որ մի տեղ գտնվող միջոցները, որպեսզի իրավունք ունենար վերցնելու, պետք է նախ և առաջ Կատերինա Իվանովնային վերադարձներ երեք հազարը. այլապես՝ «գրպանահատ եմ ես, սրիկա, իսկ չեմ ուզում սրիկա լինելով սկսել իմ նոր կյանքը»,— որոշեց Միտյան։ Ուստի վճռեց ամբողջ աշխարհը շուռ տալ, եթե պետք լիներ, բայց անպայման այդ երեք հազարը վերադարձնել Կատերինա Իվանովնային՝ ամեն գնով և ամեն բանից առաջ։ Այդ վճիռը վերջնականապես հաստատված, այսպես ասած, նրա կյանքի ամենավերջին ժամերին, այսինքն Ալյոշայի հետ իր վերջին հանդիպումից սկսած՝ երկու օր առաջ, երեկոյան, ճանապարհի վրա, այն բանից հետո, երբ Գրուշենկան անպատվել էր Կատերինա Իվանովնային. իսկ Միտյան, լսելով Ալյոշայից այդ պատմությունը, խոստովանել էր, որ ինքը սրիկա է, և պատվիրել էր հաղորդել իր այդ խոստովանությունը Կատերինա Իվանովնային, «եթե դա կարող է որևէ չափով մխիթարել նրան»։ Եվ հենց այդ ժամանակ էլ, այդ գիշեր, բաժանվելով եղբորից, նա իր մոլեգնության մեջ ունեցել էր այն զգացումը, թե նույնիսկ ավելի լավ է «սպանել ու կողոպտել որևէ մեկին, բայց պարտքը վերադարձնել Կատյային անպայմանորեն»։ «Ավելի լավ է՝ մարդ սպանող ու կողոպտող ավազակ դառնամ բոլորի աչքին, Սիբիր գնամ, քան թե Կատյան իրավունք ունենա ասելու, թե ես իրեն դավաճանեցի և հենց ի՛ր փողերը գողացա և ի՛ր փողերով էլ փախա Գրուշենկայի հետ՝ առաքինի՞ մի կյանք սկսելու համար։ Այդ բանը չե՞մ կարող անել»։ Այդպես էր ասել Միտյան ատամները կրճտացնելով, և իսկապես մերթ ընդ մերթ նրան կարող էր թվալ, թե ի վերջո ուղեղի բորբոքում կստանա։ Բայց առայժմ պայքարում էր...

Տարօրինակ բան։ Կարծես թե այդ վճռից հետո այլևս նրա համար ոչինչ չէր մնում, բացի հուսահատությունից, որովհետև որտեղի՞ց հանկարծ կարող էր այդպիսի գումար գտնել, այն էլ նրա նման անկուտի մեկը. և սակայն մինչև վերջ էլ հույս ուներ, որ ձեռք կբերի այդ երեք հազարը, հույս ուներ, որ այդ գումարը կգա, ինքնիրեն կընկնի իր ձեռքը՝ թեկուզ նույնիսկ երկնքից։ Բայց հենց այդպես է լինում վիճակը այն մարդկանց, որոնք, Դմիտրի Ֆյոդորովիչի նման, իրենց ամբողջ կյանքում կարող են միայն ծախսել ու վատնել ժառանգաբար իրենց հասած ձրի դրամը, բայց ոչ մի պատկերացում չունեն, թե ինչպես է դրամը ձեռք բերվում։ Երկու օր առաջ, Ալյոշայից բաժանվելուց անմիջապես հետո, պատրանքների ամենացնորական մի մրրիկ բարձրացավ նրա գլխում և խառնեց բոլոր մտքերը։ Եվ այդպիսով, հենց սկզբից էլ բացարձակապես արտառոց մի քայլի դիմեց։ Գուցե այս, հենց այսպիսի պայմաններում, հենց այսպիսի մարդկանց համար, առաջին իսկ քայլից հնարավոր են թվում ամենից ավելի անկարելի ու ցնորական միջոցառումները։ Նա հանկարծ որոշեց գնալ վճռական Սամսոնովի մոտ, այն ծերունու, որ Գրուշենկայի հովանավորն էր, և մի «ծրագիր» առաջարկել նրան, այդ «ծրագրի» հաշվին էլ նրանից ուղղակի ձեռք բերել ամբողջ անհրաժեշտ գումարը։ Գործառնության տեսակետից իր ծրագրի շահաբեր լինելու մասին ոչ մի տարակույս չուներ. միակ տարա-

կույսն այն էր, թե Սամսոնովն ի՞նչ աչքով կնայի իր այդ անսովոր արարքին, եթե հանկարծ ուզենա հարցը դիտել ոչ միայն վաճառաշահության առումով։ Միայն թեև դեմքով գիտեր այդ վաճառականին, բայց անձնապես ծանոթ չէր ու մի բառ անգամ չէր փոխանակել հետը։ Սակայն, չգիտես ինչու, արդեն վաղուց նրա մեջ հաստատվել էր այն համոզմունքը, թե այդ ծեր անառակը, որ այժմ մահվան դուռն էր հասել, դուցե այս բոպեիս բնավ էլ չի ընդդիմանա, եթե Գրուշենկան պատվավոր մի ձևով դասավորի իր կյանքը և ամուսնանա «վստահելի մարդու» հետ. ու ոչ միայն չի ընդդիմանա, այլև ցանկանում է այդ բանը, և եթե առիթը ներկայանա՝ ի՞նքը կնպաստի դրան։ Միտյան, իր ականջին հասած լուրերի՞ց, թե Գրուշենկայի ինչ-որ ասածից ելնելով, եզրակացրել էր նաև, թե ծերունին Գրուշենկայի համար դուցե նախընտրեր իրեն՝ Միտյային, քան թե Ֆյոդոր Պավլովիչին։ Մեր այս վեպի ընթերցողներից շատերին դուցե թվա, թե Դմիտրի Ֆյոդորովիչը չափից ավելի կոպիտ ու անբծախնդիր հաշվենկատությամբ էր վարվում՝ ապավինելով այդպիսի օգնության և մտադրվելով իր հարանացուին առնել, այսպես ասած, նրա հովանավորի ձեռքից։ Կարող եմ միայն նշել, որ Գրուշենկայի անցյալը արդեն վերջնականապես անցած-գնացած բան էր թվում Միտյային։ Նա անհուն կարեկցանքով էր նայում այդ անցյալին և իր կրքի ամբողջ հրայրքով որոշել էր, որ եթե Գրուշենկան ասի իրեն՝ «Սիրում եմ քեզ ու կամուսնանամ քեզ հետ», ապա իսկույն ևեթ ծնունդ կառնի բոլորովին նոր մի Գրուշենկա և միաժամանակ բոլորովին նոր մի Դմիտրի Ֆյոդորովիչ՝ արդեն բոլոր արատներից զերծ, միայն բարեմասնություններով զարդարված, երկուսն էլ կներեն իրար և արդեն բոլորովին նոր ձևով կսկսեն իրենց կյանքը։ Իսկ գալով Կուզմա Սամսոնովին, Միտյան նրան համարում էր մի մարդ, որ ճակատագրական դեր է խաղացել Գրուշենկայի կյանքի այդ անցած-գնացած շրջանում, և որին, սակայն, երբեք չի սիրել Գրուշենկան, մի մարդ, որն արդեն (և այս էր գլխավորը) նույնպես «անցել է», վերջացել, այնպես որ նա բոլորովին գոյություն էլ չունի։ Եվ բացի այդ, Միտյան հիմա նույնիսկ մարդ էլ չէր կարող համարել նրան, որովհետև քաղաքում ամեն ոք գիտեր, թե նա պարզապես հիվանդ մի ավերակ էր և, այսպես ասած, միայն հայրական փոխհարաբերություն էր պահպանում Գրուշենկայի հետ, այլ ոչ թե նախկին հիմունքներով էր կապված, և դա վաղուց արդեն այդպես էր, համարյա թե մի տարի է այդպես էր։ Համենայն դեպս, Միտյայի կողմից բավականաչափ պարզամտություն էլ կար այս բոլորի մեջ, որովհետև նա, իր բոլոր մոլություններով հանդերձ, շատ պարզամիտ մարդ էր։ Հենց իր այդ պարզամտության հետևանքով էլ նա, ի միջի այլոց, ամենայն լրջությամբ համոզված էր, որ Կուզման, պատրաստվելով անդենական աշխարհ մեկնելու, անկեղծորեն ցղջում է Գրուշենկայի հետ իր ունեցած անցյալի համար, և որ հիմա Գրուշենկան չունի ավելի անձնվեր մի հովանավոր ու բարեկամ, քան արդեն անվնաս այս ծերունին։

Վանքի ճանապարհին Ալյոշայի հետ իր խոսակցությունից հետո գրեթե անքուն մի գիշեր անցկացնելով, հաջորդ օրն իսկ, առավոտյան ժամը տասի մոտ, նա հայտնվեց Սամսոնովի տանը և պատվիրեց, որ իր մասին զեկուցեն տանտիրոջը։ Հին էր այդ տունը, մոայլ, շատ ընդարձակ, երկհարկանի, ուներ կցաշենք և այլ օժանդակ շինություններ բակում։ Ներքևի հարկում ապրում էին Սամսոնովի երկու ամուսնացած որդիներն իրենց ընտանիքներով, ինչպես և տարեց քույրն ու չամուսնացած մի աղջիկը։ Իսկ կցաշենքում բնակվում էին նրա երկու գործակատարները, որոնցից մեկը նույնպես բազմանդամ ընտանիք ուներ։ Թե՛ զավակները, թե՛ գործակատարները խճողված էին ապրում, բայց ծերունին մեն-մենակ՝ գրավել էր տան ամբողջ վերնամասը և չէր թողնում, որ նույնիսկ աղջիկն ապրի իր հետ, թեև այդ օրիորդն էր նրան խնամում և, հակառակ իր ունեցած շնչարգելության, պարտավոր էր ամեն անգամ ներքևից վեր վազել, երբ հասներ որոշյալ ժամը կամ էլ երբ հայրը որևէ ժամանակ կանչեր նրան։ Այդ «վերնամասը» բաղկացած էր բազմաթիվ մեծ շքասենյակներից, որոնք կահավորված էին վաճառական դասի հին ոճով՝ կարմիր փայտե անճոռնի բազկաթոռների և աթոռների երկար, միապաղաղ շարքեր, ծածկոցով պատված բյուրեղապակյա շահեր, պատերի վրա մոայլ հայելիներ։ Բոլոր այդ սենյակները մնում էին դատարկ ու անբնակ, որովհետև հիվանդ ծերունին ամփոփվել էր հեռավոր մի անկյունում գտնվող իր փոքրիկ ննջասենյակի մեջ, ուր նրան ծառայում էին պառավ ու լայնակավոր սպասուհին և մեկ էլ «լաճը», որի մշտական տեղը միջանցքի օթոցն էր։ Ծերունին, իր ուռած ոտքերի պատճառով, արդեն համարյա բոլորովին չէր կարողանում քայլել. երբեմն միայն բարձրանում էր կաշվե բազկաթոռից, և պա-

Ռամվ սպասուհին, թևերի տակից բռնելով, մեկ-երկու անգամ տանում-բերում էր նրան սենյակում։ Նույնիսկ այս պառավի հանդեպ նա խոժոռ էր ու մունջ։ Երբ նրան զեկուցեցին «կապիտանի» այցելության մասին, իսկույն ևեթ հրամայեց մերժել։ Բայց Միտյան համառեց ու կրկին զեկուցել տվեց։ Կուզմա Կուզմիչը մանրամասն հարցուփորձի ենթարկեց լաճին, թե՝ ի՞նչ տեսք ունի, գուցե հարբա՞ծ է։ Խենթուխելառ չի՞ գոռգոռում։ Եվ պատասխան ստացավ, թե «խելքը տեղն է, բայց գնալ չի ուզում»։ Սերունին նորից հրամայեց մերժել։ Այդ ժամանակ Միտյան, որ նախատեսել էր այս բոլորը և հատկապես թուղթ ու մատիտ էր վերցրել հետը այսպիսի մի դեպքի համար, թղթի կտորի վրա հստակորեն գրեց մի տող՝ «Ամենակարևորագույն գործով, որ սերտ կապ ունի Ագրաֆենա Ալեքսանդրովնայի հետ», և ուղարկեց ծերունուն։ Մի քիչ մտածելուց հետո, ծերունին կարգադրեց, որ լաճն այցելուին տանի հյուրասրահ, իսկ պառավ սպասուհուն ուղարկեց ներքև՝ հրամայելով, որ կրտսեր որդին անմիջապես բարձրանա իր մոտ։ Այս կրտսեր որդին, տասներկու վերշոկ հասակով և ահռելի ուժի տեր մի տղամարդ, որ երեսն ածիլում էր ու եվրոպացու նման էր հագնվում (Սամսոնովն ինքը կաֆտան էր հագնում և մորուք ուներ), անհապազ ու լուռումունջ վեր եկավ։ Նրանք բոլորն էլ դողում էին իրենց հոր առաջ։ Հայրն այս ածդահային կանչեց ոչ թե որովհետև վախենում էր կապիտանից (նա բոլորովին էլ վախկոտ բնավորություն չուներ), այլ հենց այնպես, ավելի ճիշտ՝ որևէ գիպքում մի վկա ունենալու համար։ Սամսոնովն ի վերջո քարշ եկավ հյուրասրահ՝ իրեն թևանցուկ արած որդու և լաճի ընկերակցությամբ։ Պետք է ենթադրել, թե նա բավական ուժեղ մի հետաքրքրություն էլ էր զգում։ Այդ հյուրասրահը, ուր սպասում էր Միտյան, վիթխարի, մռայլ, մարդու հոգին տխրությամբ խեղդող մի սենյակ էր՝ երկշաթ լուսամուտներով, վերնատնով, «մարմարակերպ» պատերով և երեք բյուրեղապակյա հսկա ջահերով, որոնք ծածկոցով էին պատած։ Միտյան մուտքի դռան մոտ նստել էր աթոռակի վրա և ջղային անհամբերությամբ սպասում էր իր բախտին։ Երբ ծերունին երեսց հանդիպակաց գտնվեց, մոտ քսան մետր հեռու, Միտյան ընդոստ վեր կացավ ու իր ամուր, կանգուն-նաչափ, զինվորական քայլերով ընդառաջ գնաց։ Վայելուչ էր հագնվել Միտյան՝ կոճկված սերթուկ, սև ձեռնոց, կլոր գլխարկը ձեռքին, ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես երեք օր առաջ վանքում՝ սրբահոր մոտ, Ֆյոդոր Պավլովիչի ու եղբայրների հետ ընտանեկան հավաքույթին։ Սերունին, կանգնած, սպասում էր ամբարտավան ու խստադեմ, և Միտյան անմիջապես զգաց, որ նա ոտից գլուխ զննեց իրեն, երբ ինքը մոտենում էր։ Միտյային զարմացրեց նաև Կուզմա Կուզմիչի դեմքը, որ արտակարգորեն ուռել էր վերջերս. ստորին շրթունքը, որ արդեն հաստ էր, հիմա մի տեսակ կախ ընկած բլիթ էր թվում։ Ծանրաբարո ու լռելյայն գլուխ տվեց նա հյուրին, բազմոցի մոտ մի բազկաթոռ մատնանշեց նրա համար, իսկ ինքը դանդաղորեն, որդու թևին հենվելով ու ցավագին տնքալով, սկսեց նստել բազմոցի վրա՝ Միտյայի դիմաց, այնպես որ Միտյան, ի տես նրա ցավագին ճիգերի, անմիջապես զղջահարվեց ու նրբազգաց մի ամոթով լցվեց, գիտակցելով իր այժմու ոչնչությունը այդ այնքան կարևոր անձնավորության առաջ, որին ինքը անհանգստացրել էր։

— Ի՞նչ էիք ուզում ինձնից, պարոն,— վերջապես նստելուց հետո ասաց ծերունին դանդաղորեն, հստակ, խիստ, բայց քաղաքավարի շեշտով։

Միտյան ցնցվեց, ընդոստ վերկացավ, բայց նորից նստեց։ Հետո անմիջապես սկսեց խոսել բարձր, արագ, ջղային, ձեռքերը շարժելով ու կատարյալ մոլուցքի մեջ ընկած։ Երևում էր, որ մարդը հասել է կործանման եզրին և մի վերջին ելք է փնտրում, իսկ եթե այդ էլ չհաջողվի՝ թեկուզ հենց այս բոպիս պատրաստ է ջուրը նետվելու։ Սերունի Սամսոնովը թերևս մի ակնթարթում հասկացավ այս բոլորը, թեև նրա դեմքը սառն ու անփոփոխ էր մնում արձանի նման։

«Մեծապատիվ Կուզմա Կուզմիչը հավանաբար բազմիցս լսել է արդեն իմ ընդհարումների մասին հորս հետ՝ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի, որ կողոպտել է ինձ հասնող ժառանգությունը իմ հարազատ մորից հետո... քանի որ ամբողջ քաղաքն արդեն շաղակրատում է այդ մասին... որովհետև այստեղ բոլորն էլ պետք չեղած բաների մասին են շաղակրատում... Եվ բացի այդ, կարող էր հասնել նաև Գրուշենկայի միջոցով... ներողություն, Ագրաֆենա Ալեքսանդրովնայի... աղնվափայլ Ագրաֆենա Ալեքսանդրովնայի, որին ես շատ եմ հարգում...»։ Այսպես սկսեց և առաջին իսկ խոսքից սայթաքեց Միտյան։ Բայց մենք բառացիորեն չենք մեջ բերի նրա ամբողջ ճառը, այլ դրա շարադրանքը միայն կներկայացնենք։ Այսինքն թե, նրա ասելով, խնդիրն այն է, որ ինքը, Միտյան, դեռ երեք ամիս առաջ հատ-

կապես դիտավորյալ խորհրդակցել է (նա հենց ասաց «հատկապես դիտավորյալ», և ոչ թե «դիտմամբ») փաստաբանի հետ նահանգային կենտրոնում, «նշանավոր փաստաբանի, Կուզմա Կուզմիչ, երևելի Պավել Պավլովիչ Կորնեպլոդովի հետ, թերևս բարեհաճե՞լ եք լսել նրա մասին։ Բեղուն գլուխ է, համարյա պետական գործչի խելք ունի... ձեզ նույնպես ճանաչում է... լավագույնս արտահայտվեց ձեր մասին...»,— սայթաքեց նորից Միտյան։ Բայց սայթաքումները չէին կանգնեցնում նրան, իսկույն ցատկում էր դրանց վրայից և սլանում ավելի ու ավելի առաջ։ Իբր թե այդ Կորնեպլոդովը, ուրեմն, մանրամասն հարցուփորձ անելով և քննելով այն փաստաթղթերը, որ Միտյան կարող էր ներկայացնել նրան (փաստաթղթերի մասին Միտյան անորոշ արտահայտվեց և հատկապես շտապ անցավ այդ հարցի վրայից), կարծիք է հայտնել, թե իսկապես հնարավոր կլիներ դատական գործ սկսել Ջերմաշնյա գյուղի նկատմամբ, որ պետք է պատկաներ իրեն՝ Միտյային, մոր կողմից. և այդպիսով կարելի է շշմեցնել անառակ ալևորին՝ իր հորը... «որովհետև բոլոր դռները հո փակ չեն, և արդարադատությունը գիտե անշուշտ, թե որտեղից կարելի է խցկվել»։ Մի խոսքով, կարելի կլիներ հույս ունենալ նույնիսկ մի վեց հազար ռուբլու հավելյալ գումար ստանալու Ֆյոդոր Պավլովիչից, մինչև իսկ յոթ հազար, քանի որ Ջերմաշնյայի արժեքն այնուամենայնիվ քսանհինգ հազարից պակաս չէ, այսինքն թերևս էլ քսանութ հազար է, «երեսո՜ւն, երեսո՜ւն, Կուզմա Կուզմիչ, իսկ ես, պատկերացրեք, տասնյո՛թ հազար էլ չեմ ստացել այդ դաժան մարդուց...»։ Այսպես ուրեմն ես, այսինքն Միտյան, այդ ժամանակ ձեռք քաշեցի այդ գործից, որովհետև գլուխ չունեմ դատական օրենքների հետ, իսկ երբ այստեղ եկա՝ իմ դեմ հարուցված հակահայցը ինձ ապշեցրեց ուղղակի (այս կետում Միտյան նորից խճճվեց ու նորից կորուկ ցատկեց առաջ)։ այ ուրեմն, չե՞ք ցանկանա դուք, ազնվամեծար Կուզմա Կուզմիչ, վերցնել իմ բոլոր իրավունքները այդ հրեշի դեմ, իսկ ինքներդ երեք հազար միայն տվեք ինձ... Դուք ոչ մի դեպքում չեք կարող կորուստ ունենալ, ազնվությամբ, ազնվությա՛մբ եմ երդվում. ընդհակառակը, կարող եք վեց կամ յոթ հազար շահել երեք հազարի փոխարեն... Բայց գլխավորն այն է, որ այս գործը վերջանա «հենց այսօր իսկ»։ «ես ձեզ հենց նոտարի միջոցով, կամ էլ ինչպես որ պետք է... մի խոսքով, ամեն ինչի պատրաստ եմ, ձեր պահանջած բոլոր թղթերը կտամ,

ամեն ինչ կստորագրեմ... և մենք իսկույն կվերջացնեինք այդ թուղթը, և եթե կարելի է, եթե միայն կարելի է, հենց այսօր, այս առավոտ անեինք... Դուք ինձ այդ երեք հազարը տայիք... որովհետև այս փոքրիկ քաղաքում ո՞վ կարող է մրցել ձեզ հետ որպես դրամատեր... և դրանով կփրկեիք ինձ մի այնպիսի՜ բանից... մի խոսքով, կփրկեիք իմ խեղճ գլուխը մի ազնվագույն գործի համար, կարելի է ասել՝ վսեմագո՜ւյն գործի համար... որովհետև ազնվագույն զգացումներ եմ տածում մի որոշ անձնավորության նկատմամբ, որին դուք շատ լավ գիտեք, և որի հանդեպ դուք հոգածու եք հայրաբար։ Այլապես չէի էլ դա, եթե հայրաբար չլիներ։ Եվ, եթե ուզում եք ճիշտը, այստեղ երեք հոգի ճակատ-ճակատի են եկել, որովհետև մարդուս ճակատագիրը մի ճիվա՜ղ է, Կուզմա Կուզմիչ։ Ռեալի՜զմ, Կուզմա Կուզմիչ, ռեալի՜զմ։ Եվ քանի որ ձեզ վաղուց արդեն պետք է բացատրել, ուրեմն մնում են երկու ճակատ իրար կպած, ինչպես ասացի. զուցե և վայելուչ մի արտահայտություն չէ դա, բայց դե ես գրագրող չեմ։ Այսինքն մեկը իմ ճակատն է, իսկ մյուսը՝ այդ հրեշինը։ Ուրեմն ընտրեցեք՝ ե՞ս, թե այդ հրեշը։ Հիմա ամեն ինչ ձեր ձեռքումն է՝ երեք ճակատագիր և երկու բախտ... Ներեցեք, ամեն ինչ իրար խառնեցի, բայց դուք հասկանում եք... ձեր պատվական աչքերից եմ տեսնում, որ հասկացաք... Իսկ եթե չհասկացաք, մնում է, որ հենց այսօր իսկ ջո՛ւրը նետվեմ, ահա՛»։

Միտյան այդ «ահա»-ով էլ ընդհատեց իր անհեթեթ ճառը և, քնքուշ վեր կենալով, պատասխան սպասեց իր հիմար առաջարկությանը։ Վերջին նախադասությունն ասելու վայրկյանին նա հանկարծ հուսահատորեն զգաց, որ ամեն ինչ հօդս էր ցրնդել, և որ մանավանդ ահռելի մի ցնդաբանություն էր դուրս տվել։ «Տարօրինակ բան, երբ այստեղ էի գալիս, ամեն ինչ լավ էր թվում, իսկ հիմա ցնդաբանությո՛ւն եղավ ահա»,— անցավ հանկարծ նրա հուսալքված մտքով։ Երբ նա խոսում էր, ծերունին անշարժ նստել էր շարունակ և աչքերի մեջ սառցաստան մի արտահայտությամբ հետևում էր նրան։ Ու վերջապես, մոտ մի րոպե նրան սպասողական վիճակի մեջ պահելուց հետո, Կուզմա Կուզմիչը ամենավճռական ու անբարեհույս շեշտով ասաց.

— Ներեցեք, մենք այդպիսի գործերով չենք զբաղվում։

Միտյան հանկարծ զգաց, որ ոտքերը թուլանում են։

— Իսկ ի՞նչ է լինելու իմ բանը հիմա, Կուզմա Կուզմիչ,— մրթմրթաց նա գունատ ժպտալով— Ուրեմն էլ կործանվեցի՞ հիմա. ի՞նչ եք կարծում։

— Ներեցեք խնդրեմ...

Միտյան շարունակում էր կանգնած մնալ և անշարժ նայում էր, աչքերը հառած։ Ու հանկարծ մի շարժում նկատեց ծերունու դեմքին։ Ցնցվեց։

— Գիտե՞ք ինչ, պարոն, այդպիսի գործերը անհարմար բաներ են մեզ համար,— ասաց ծերունին դանդաղորեն,— դատաստան, փաստաբաններ՝ կրակ ու պատիժ։ Բայց եթե ուզում եք, մի մարդ կա այստեղ, ա՛յ նրան դիմեցեք...

— Տե՛ր աստված, ո՞վ է այդ մարդը... Դուք ինձ կյանք եք տալիս, Կուզմա Կուզմիչ,— սկսեց հանկարծ թոթովել Միտյան։

— Այստեղացի չէ այդ մարդը, և այստեղ էլ չէ հիմա։ Գյուղացի է, փայտի առուտուր է անում, Լյագավի են ասում նրան։ Ահա մի տարի է՝ Ֆյոդոր Պավլովիչի հետ սակարկություն է անում այդ ձեր Ջերմաշնյայի պուրակի համար, բայց գնի մասին չեն համաձայնվում, գուցե թե լսել եք։ Հենց այս օրերիս նորից է եկել, մնում է Իլյինսկոեի տերտերի մոտ, Վոլովյա կայանից մի տասներկու վե՞րստ է, թե ինչ՝ այդ Իլյինսկոե գյուղը այսինքն։ Նա ինձ էլ նամակ գրեց հենց այդ գործով, այսինքն այդ պուրակի մասին, խորհուրդ էր հարցնում։ Ֆյոդոր Պավլովիչն ինքը ուզում է նրա մոտ գնալ։ Դե ուրեմն, եթե դուք Ֆյոդոր Պավլովիչին կանխեք և Լյագավիին առաջարկեք հենց այս բանը, որ ինձ ասացիք, գուցե թե նա...

— Հանձարե՞ղ միտք,— ընդհատեց Միտյան հրճվանքով։— Հենց նա՛ է, հենց նրա՛ն է ձեռնտու։ Սակարկում է մարդը, թանկ են ուզում նրանից, և մեկ էլ ահա նրա ձեռքն են տալիս հենց այն փաստաթուղթը, որով ինքն է տեր դառնում, հա-հա-հա՛։— Եվ Միտյան հանկարծ սկսեց քրքջալ կարճ-կարճ, փայտաձայն ծիծաղով, բոլորովին անսպասելիորեն, այնպես որ նույնիսկ Սամսոնովը ցնցվեց։

— Ինչպե՞ս շնորհակալություն հայտնեմ ձեզ, Կուզմա Կուզմիչ,— եռում էր Միտյան։

— Ոչինչ բան է,— գլուխը խոնարհեց Սամսոնովը։

— Բայց դուք չգիտե՞ք, դուք փրկեցի՞ք ինձ, օ՜, նախազգացումն էր, որ ինձ բերեց ձեզ մոտ... Դե ուրեմն, վազե՞նք այդ տերտերին գտնելու։

— Չարժե շնորհակալություն հայտնել։

— Շտապում եմ, թոչում։ Չարաշահեցի ձեր առողջությունը։ Հավիտյա՛նս չեմ մոռանա, ո՞ւս մարդն է ասում ձեզ այս բանը, Կուզմա Կուզմիչ, ո-ո՞ւս մարդը։

— Բա ո՞նց։

Միտյան հենց ուզում էր բռնել նրա ձեռքը, որպեսզի թոթվի, բայց ծերունու աչքերում շարանենք մի բան երևաց։ Միտյան ետ քաշեց ձեռքը, սակայն ինքնիրեն հանդիմանեց կասկածամտության համար։ «Պարզապես հոգնել է...»,— անցավ նրա մտքով։

— Նրա՞ սիրույն։ Գրո՞ւշենկայի սիրույն, Կուզմա Կուզմիչ։ Դուք հասկանում եք, որ այս բոլորը նրա՞ սիրույն է,— գոռաց նա հանկարծ ամբողջ սրահով մեկ, գլուխ տվեց, կտրուկ շրջվեց և նույն արագ, կանգունաչափ քայլերով, առանց ետ նայելու սլացավ դեպի դուռը։ Դողում էր ցնծությունից։ «Արդեն կործանվում էր ամեն ինչ, և ահա պահապան հրեշտակը փրկեց,— անցնում էր նրա մտքով։— Եթե այս ծերունու նման գործարար մարդը (ազնվագույն ծերունի է, ի՞նչ կեցվածք ունի), եթե այսպիսի մարդն է այս ուղին ցույց տալիս, ուրեմն... ուրեմն անջո՞ւշտ թե շահեցինք գործը։ Հենց հիմա պետք է թռչել-գնալ։ Մինչև գիշե՞ր կվերադառնամ, գիշե՞ր կվերադառնամ՝ միևնույն է, գործը հաղթանակով արված է արդեն։ Կարո՞ղ է պատահել, որ ծերուկը քթիս ծիծաղած լինի»։ Այսպես բացականչելով Միտյան գնում էր դեպի իր բնակարանը, և անշուշտ ուրիշ կերպ չէր էլ կարող պատկերացնել, այսինքն՝ կա՛մ գործնական մի խորհուրդ է դա (այսպիսի մի գործարար մարդու), և ծերուկը գիտե այս գործը, գիտե այդ Լյագավիին (տարօրինակ ազգանուն), և կամ էլ... կամ էլ Սամսոնովն իր քթին ծիծաղեց։ Ավա՜ղ, հենց այս վերջին միտքն էր միայն ճշմարիտ։ Հետագայում, երկար ժամանակ հետո, երբ արդեն կատարվել էր աղետը, ծերունի Սամսոնովն ինքը խոստովանեց ծիծաղելով, որ այն ժամանակ ձեռք էր առել «կապիտանին»։ Չարաստիրտ, անկարեկից ու հեգնասեր մարդ էր նա, և այդ բոլորի վրա դեռ հիվանդագին հակակրանքի պոռթկումներ էլ էր ունենում։ Չգիտեմ, թե ինչը մղեց ծերունուն՝ արդյոք կապիտանի հուզաբորբոք արտահայտությո՞ւնը, արդյոք «փողը քամուն տվող այդ լոթու» հիմար համոզմո՞ունքը, թե նա, Սամսոնովը, կարող է տեղի տալ նրա «ծրագրի» նման ցանցառ մի բանի, արդյոք խանդի զգացմո՞ւն-

քը Գրուշենկայի համար, որի անունով «այդ թոկից փախածը» եկել էր փող պոկելու ինչ-որ մի ցնդաբանություն առաջարկելով,— չգիտեմ, բայց հենց այն րոպեին, երբ Միտյան կանգնած էր նրա առաջ և զգում էր, որ ոտքերը թուլանում են ու անիմաստ բացականչում էր, թե կործանվել է, այդ րոպեին ահա ծերունին անսահման շարասրտությամբ նայեց նրան և որոշեց քթին ծիծաղել։ Երբ Միտյան դուրս գնաց, Կուզմա Կուզմիչը, զայրույթից գունատվելով, դարձավ իր որդուն և հրամայեց այնպես անել, որ այդ քրջոտն այլևս ոտք չդնի իր տունը և նույնիսկ բակի դուռը չբացեն նրա առաջ, թե չէ՞...

Նա խոսքը չվերջացրեց, չասաց իր սպառնալիքը, բայց նույնիսկ որդին, որ հաճախ էր նրա բարկությունը տեսել, վախից դողաց։ Հետո մի ամբողջ ժամ ծերունին ոտից գլուխ ցնցվում էր զայրույթից, իսկ Երեկոյան հիվանդացավ և մարդ ուղարկեց բժիշկ կանչելու։

II

ՀՈՒԳԱՍԻ

Այսպես ուրեմն, պետք է «քառատրոփ» սուրար, բայց թե ձիերի համար վճարելու ոչ մի կոպեկ փող չուներ, այսինքն երկու քսանկոպեկանոց կար գրպանում, և այդ էր ամբողջը, ամբո՞ղջը, որ մնում էր այնքան տարիների բարեկեցիկ կյանքից։ Սակայն տանը արծաթե մի հին ժամացույց կար, որն արդեն վաղուց դադարել էր աշխատելուց։ Ուղղակի վերցրեց այդ ժամացույցը և տարավ մի հրեա ժամագործի մոտ, որ մի փոքրիկ խանութ ուներ շուկայում։ Հրեան վեց ռուբլի տվեց դրա դիմաց։ «Այսքա՞նն էլ չէի սպասում»,— գոչեց Միտյան խանդավառված (դեռ շարունակվում էր նրա խանդավառ հոգեվիճակը), վերցրեց իր վեց ռուբլին ու տուն վազեց։ Տանը ավելացրեց գումարը, երեք ռուբլի պարտք առնելով տանտերերից, որոնք այնքան էին սիրում նրան, որ հաճույքով տվեցին, թեև իրենց վերջին կոպեկներն էին դրանք։ Միտյան իր խանդավառությամբ տարված՝ տեղն ու տեղը հայտնեց նրանց, թե իր բախտն է վճռվում, և պատմեց, անշուշտ սոսկալի շտապելով, համարյա ամբողջ այն «օրագիրը», որ հենց նոր ներկայացրել էլ Սամսոնովին, ապա և Սամսոնովի որոշումը, իր ապագա հույսերը և այլն, և այլն։ Տանտերերն առաջ էլ իրազեկ էին դառնում նրա շատ գաղտնիքներին, և այդ պատճառով էլ նրան համարում էին իրենց մարդը, այլ ոչ երբեք հպարտ մի պարոն։ Այսպես ինը ռուբլի հավաքելով, Միտյան փոստակայանի ձիեր բերել տվեց՝ մինչև Վոլովյա կայանը գնալու համար։ Բայց այդպիսով մարդկանց հիշողության մեջ տեղ գրավեց այն փաստը, թե «մի որոշ դեպքի նախորդ օրը, կեսօրին, Միտյան ոչ մի կոպեկ փող չուներ և փող ճարելու համար ժամացույցը ծախեց ու երեք ռուբլի պարտք առավ տանտերերից, և այդ բոլորը՝ վկաների ներկայությամբ»։

Նախօրոք նշում եմ այս փաստը. հետո կպարզվի, թե ինչու եմ այսպես անում։

Սուրալով դեպի Վոլովյա կայանը, Միտյան թեև փայլում էր այն բերկրալի նախազգացումից, թե վերջապե՞ս կլուծի ու կվերջացնի «բոլոր այս խնդիրները», բայց այնուամենայնիվ դողում էր նաև վախից՝ ի՞նչ կանի հիմա Գրուշենկան իր բացակայության ընթացքում։ Հապա եթե հենց այսօ՞ր որոշի վերջապես գնալ Ֆյոդոր Պավլովիչի մոտ։ Ահա թե ինչու Միտյան մեկնելուց առաջ ոչինչ չասաց նրան և տանտերերին էլ պատվիրեց ոչ մի դեպքում չհայտնել, թե ուր է գնացել ինքը, եթե որևէ տեղից գան և իրեն հարցնեն։ «Անպայման, անպայման այս երեկո պետք է վերադառնամ,— կրկնում էր նա տմբտմբալով կառքի մեջ,— իսկ այդ Լյագավիին լավ կլինի, որ քարշ տամ բերեմ այստեղ... որ այս գործը վերջացնենք...»։ Այսպիսի երազներով էր տարվում Միտյան և սիրտը թրթռում էր, բայց ավա՞ղ, բոլորովին բախտ չէր վիճակվել նրան, որ երազանքները կատարվեին ըստ իր կազմած «օրագրի»։

Նախ և առաջ, ուշացավ. Վոլովյա կայանից բռնեց գյուղամիջյա կարճ ճանապարհը, բայց պարզվեց, որ այդ կարճ ճանապարհը ոչ թե տասներկու, այլ տասնութ վերստ է։ Երկրորդ՝ տանը չգտավ Իլյինսկոեի քահանային, որ հարևան գյուղն էր գնացել։ Մինչև որ Միտյան նույն հոգնած ու տանջված ձիերով հասավ այդ հարևան գյուղը և գտավ նրան, արդեն համարյա գիշեր եղավ։ Տեր հայրը, ամոթխած ու սիրալիր երևույթով մի մարդուկ, անմիջապես բացատրեց նրան, որ այդ Լյագավին թեև սկզբում իր տանն էր իջևանել, բայց հիմա գտնվում է Սուխոյ Պոսյոլոկում, այնտեղ անտառապահի խրճիթում է գիշերելու ամսոր, որովհետև այնտեղ էլ փայտանյութ է սակարկում։ Երբ Միտյան թախանձագին խնդրեց, որ նա իրեն հենց անմիջապես տանի Լյագավիի մոտ և «այդպիսով, այսպես ասած, փրկի

իրեն», տեր հայրն սկզբում տատանվեց թեև, բայց վերջապես համաձայնվեց ուղեկցել նրան մինչև Սուխոյ Պոսյոլոկ, երևի հետաքրքրություն զգալով. բայց դժբախտաբար խորհուրդ տվեց «ոտքով գնալ», քանի որ ընդամենը մի վերստ ճանապարհ կլիներ, դե «մի քիչ էլ ավել»։ Միտյան, բնական է, համաձայնվեց ու ճամփա ընկավ իր կանգունաչափ քայլերով, այնպես որ խեղճ տեր հայրը համարյա վազում էր նրա ետևից։ Դեռ ոչ ծեր ու շատ զգուշավոր մի մարդուկ էր նա։ Միտյան նրա հետ էլ անմիջապես սկսեց խոսել իր ծրագրերի մասին, եռանդով ու ջղայնորեն խորհուրդներ հարցրեց Լյագավիի վերաբերյալ և խոսե՛ց ու խոսեց ամբողջ ճանապարհին։ Տեր հայրը ուշադիր լսում էր, բայց քիչ էր խորհուրդ տալիս։ Միտյայի հարցերին խուսափուկ էր պատասխանում. «Չգիտեմ, օհ, չգիտեմ, ես ո՞նց կարող եմ իմանալ էդ բանը» և այլն։ Երբ Միտյան սկսեց խոսել ժառանգության հարցով հոր հետ իր ընդհարումների մասին, տեր հայրը նույնիսկ վախեցավ, որովհետև ինչ-որ փոխհարաբերություններ ուներ Ֆյոդոր Պավլովիչի հետ և նրանից կախյալ դրության մեջ էր։ Բայց և այնպես նա զարմացած հարցրեց, թե ինչո՞ւ Միտյան Լյագավի է կոչում այդ առևտրական գյուղացի Գորստկինին, և բարի եղավ բացատրելու, որ նա թեև իսկապես Լյագավի է կոչվում, բայց և Լյագավի չէ, որովհետև սարսափելի վիրավորվում է այդ անունից, պետք է անպայման Գորստկին ասել նրան, «թե չէ ոչինչ չեք կարող անել նրա հետ, չի էլ լսի ձեզ»,— եզրակացրեց տեր հայրը։ Միտյան մի բոպե որոշ զարմանք զգաց և բացատրեց, որ Սամսոնովն ինքը այդպես էր կոչում նրան։ Լսելով այդ բանը, տեր հայրն իսկույն խոսակցությունը փոխեց, թեև լավ կաներ՝ հենց այդ բոպեին էլ Դմիտրի Ֆյոդորովիչին հայտներ իր ենթադրությունը, որ եթե Սամսոնովն ինքը նրան ուղարկել է այդ գյուղացու մոտ և Լյագավի անունն է ավել, արդյոք ծիծաղելու համար չի՞ արել այդպես, և արդյոք մի վատ բան չկա՞ դրա մեջ։ Բայց Միտյան ժամանակ չուներ «այդպիսի մանրուքների վրա» կանգ առնելու։ Շտապում էր նա, քայլում էր մեծ-մեծ քայլերով և Սուխոյ Պոսյոլոկ հասնելուց հետո միայն նկատեց, որ անցել էին ոչ թե մի վերստ, ոչ էլ մեկուկես, այլ երևի երեք վերստ. սրտնեղեց դրանից, բայց ձայն չհանեց։ Մտան խրճիթ։ Տեր հոր ծանոթ անտառապահն ապրում էր խրճիթի մի կեսում, իսկ մյուս, ավելի մաքուր կեսում, միջանցքի մյուս կողմը, Գորստկինն էր տեղավորվել։ Մտան այդ

մաքուր սենյակը և ճարպամոմ վառեցին։ Խրճիթը սաստիկ տաքացված էր։ Սոճեփայտե սեղանի վրա հանգած մի ինքնաեռ կար, նաև մի մատուցարան՝ բաժակներով, ոսմի դատարկ մի շիշ, մի մեծ շիշ էլ օղի՝ դեռ կեսը լեցուն, և ցորենահացի մնացուկներ։ Իսկ ինքը՝ եկվորը մեջքի վրա պառկել էր նստարանին, գլխի տակ ճմռթված վերնազգեստն էր դրել բարձի փոխարեն և ծանր խռմփացնում էր։ Միտյան վարանած կանգնեց։ «Իհարկե պետք է արթնացնել. իմ գործը չափազանց կարևոր է, շտապե՞լ եմ այնպես, և շտապում եմ այսօր իսկ վերադառնալ»,— սկսեց տագնապել Միտյան։ Բայց տեր հայրն ու անտառապահը լուռ կանգնել էին, չէին հայտնում իրենց կարծիքը։ Միտյան մոտեցավ և ինքը չանաց արթնացնել նրան, չանաց եռանդով, բայց քնած գյուղացին չէր արթնանում։ «Հարբած է,— որոշեց Միտյան,— բայց ի՞նչ անեմ հիմա ես, աստված իմ, ի՞նչ անեմ»։ Եվ հանկարծ սոսկալի անհամբերությամբ սկսեց քաշքշել նրա ձեռքերից, ոտքերից, ցնցել գլուխը, բարձրացնել ու նստեցնել նստարանին, բայց և այնպես, շատ երկար չանքերից հետո, կարողացավ հասնել միայն մի բանի՝ քնածն սկսեց անիմաստ բառաշյուններ արձակել և թունդ հայհոյել, թեև անորոշ արտասանելով բառերը։

— Չէ, ավելի լավ է սպասեք մի քիչ,— ասաց վերջապես տեր հայրը,— որովհետև երևում է՝ չի կարող։

— Ամբողջ օրը խմում էր,— ձայնակցեց անտառապահը։

— Տե՛ր աստված,— աղաղակեց Միտյան,— եթե միայն իմանայիք, թե որքա՞ն անհրաժեշտ է նա ինձ և ի՞նչ հուսահատության մեջ եմ հիմա։

— Չէ, բայց ավելի լավ կլիներ սպասեք մինչև առավոտ,— կրկնեց տեր հայրը։

— Մինչև առավո՞տ։ Ի սե՛ր աստծո, անկարելի է դա։— Եվ հուսահատությունից մղված՝ հենց նորից էր նետվում հարբածի վրա, որ արթնացնի, բայց իսկույն ձեռք քաշեց, հասկանալով, որ իր բոլոր չանքերն անօգուտ են լինելու։ Տեր հայրը լուռ էր մնում, քնաթաթախ անտառապահը մռայլ կանգնել էր։

— Ռեալի՞զմը, ռեալիզմը ի՞նչ սարսափելի ողբերգություններ է բերում մարդկանց գլխին,— ասաց Միտյան կատարելապես հուսահատած։ Քրտինքը թափվում էր երեսից։ Օգտվելով հարմար բոպեից, տեր հայրը շատ խելամտորեն բացատրեց, որ եթե նույնիսկ հաջողվեր արթնացնել քնածին, այնուամենայնիվ

նա, հարբած լինելով, չէր կարողանա որևէ խոսակցություն վարել, «իսկ ձեր գործը կարևոր է, այնպես որ իսկապես լավ կլիներ համբերեիք մինչև առավոտ...»։ Միտյան ձեռքերը տարածեց ու համաձայն եղավ։

— Ես այստեղ կմնամ, տեր հայր, մոմն էլ վառած կթողնեմ և կբռնեմ հարմար բոպեն։ Հենց որ զարթնի, կսկսեմ... Մոմի համար կվճարեմ քեզ,— դարձավ նա անտառապահին,— գիշերելու համար էլ կվճարեմ, դու չե՞ս մոռանա Դմիտրի Կարամազովին։ Բայց միայն թե, տեր հայր, հիմա չգիտեմ ձե՛ր բանն ինչպես անենք. որտե՞ղ եք պառկելու։

— Չէ, ես տուն գնամ։ Այ նրա ձիուկն ինձ տուն կհասցնի,— ցույց տվեց նա անտառապահին։— Արդ ուրեմն մնաք բարով, ցանկանում եմ լրիվ գոհացում ստանաք։

Այդպես էլ արեցին։ Տեր հայրը ձի նստեց ու մեկնեց, ուրախացած, որ վերջապես օձիքն ազատել էր, բայց և շփոթահար շարժելով գլուխը և մտմտալով, թե արդյոք հարկավոր չէ՞ վաղն և իսկ, դեռ բանը բանից չանցած, այս տարօրինակ դեպքի մասին հայտնել բարեբար Ֆյոդոր Պավլովիչին, «թե չէ մեկ էլ տեսար, սատանայի ականջը, կիմանա հանկարծ, կբարկանա և էլ շնորհ չի անի»։ Անտառապահը գլուխը քոր տվեց ու լուռումունջ գնաց իր սենյակը, իսկ Միտյան նստեց նստարանին, որպեսզի, ինչպես ասաց, բռնի հարմար բոպեն։ Խորունկ մի տխրություն պատեց նրա հոգին, ծանր մշուշի նման։ Խորունկ, սարսափելի մի տխրություն։ Նստած մտածում էր, բայց ոչինչ չէր կարողանում կշռադատել։ Մոմն այրուցք էր կապում և լույսն ուղղանում էր, մի ծղրիդ ճռճռում էր անընդհատ, տաքացված սենյակում օդը ծանրանում էր անտանելիորեն։ Նրա մտքում հանկարծ պատկերացավ այգին, անցքը այգու ետևում, հոր տանը մի դուռ բացվեց խորհրդավոր կերպով, Գրուշենկան վազելով ներս անցավ... Նա վեր թռավ նստարանից։

— Ողբերգությո՞ւն,— ասաց ատամները կրճտացնելով, մեքենաբար մոտեցավ քնած մարդուն և սկսեց նրա դեմքին նայել։ Բարակ-մարակ, միջին տարիքի մի գյուղացի էր, խիստ երկարավուն դեմքով, խարտյաշ գանգուրներով, մորուքը երկար էր, բարակ ու կարմրավուն, հագել էր լիքն վերնաշապիկ ու սև բաճկոնակ, որի գրպանից երևում էր արծաթե ժամացույցի շղթան։ Միտյան սոսկալի ատելությամբ էր դիտում այդ դեմքը, և, չգիտես ինչու, այդ մարդու գանգուր մազերը ունենալը հատկապես

նրա ատելությունն էր գրգռում։ Անտանելիորեն վիրավորական էր մանավանդ այն, որ ահա ինքը, Միտյան, այնքա՞ն բան զոհելով, այնքա՞ն բան մի կողմ թողնելով, կատարելապես տանջված, իր անհետաձգելի գործի համար կանգնել է նրա գլխին, իսկ «այս պորտաբույծը, որից հիմա իմ ամբողջ ճակատագիրն է կախված, այնպես է խոմփացնում, որ կարծես ոչինչ էլ չի եղել, կարծես ինքը ուրիշ մոլորակից է իջել»։ «Օ՜, ճակատագրի հեգնա՜նքը»,— բացականչեց Միտյան և հանկարծ, բոլորովին գլուխը կորցնելով, նորից նետվեց հարբած գյուղացուն արթնացնելու։ Մի տեսակ կատաղությամբ էր աշխատում արթնացնել նրան, քաշքշում էր, հրում, նույնիսկ ծեծում, բայց, մոտ հինգ բոպե չարչարվելուց ու նորից արդյունքի չհասնելուց հետո, անզոր հուսահատությամբ վերադարձավ իր նստարանին ու նստեց։

— Հիմարությո՜ւն է, հիմարությո՜ւն,— բացականչում էր Միտյան։— Եվ... ի՞նչ անպատվաբեր է այս ամբողջը,— ավելացրեց նա հանկարծ, չգիտես ինչու։ Գլուխն սկսեց սարսափելիորեն ցավել։ «Ձե՞ռք քաշեմ գուցե։ Թողնեմ ու գնա՞մ,— անցավ նրա մտքով։— Բայց չէ, սպասեմ մինչև առավոտ։ Այ, հենց դիտմամբ եմ սպասելու, գիտմա՛մբ։ Էլ ինչո՞ւ եմ եկել։ Եվ ձի-մի էլ չկա, որ գնամ, ինչպե՞ս կարող ես հիմա այստեղից հեռանալ, օ՜ տխմարություն»։

Բայց նրա գլուխն ավելի ու ավելի էր ցավում։ Անշարժ նստել էր և էլ չէր հիշում, թե ինչպես սկսեց մրափել ու հանկարծ քունը տարավ՝ այդպես նստած։ Երևի քնեց մի երկու ժամ ու թերևս ավելի։ Զարթնեց անտանելի գլխացավից, այնքան անտանելի, որ ուզում էր գոռալ։ Քունքերը մրճահարվում էին, գագաթը ցավում էր։ Զարթնելուց հետո դեռ երկար ժամանակ չէր կարողանում լրիվ ուշքի գալ ու հասկանալ, թե ինչ է պատահել իրեն։ Վերջապես ըմբռնեց, որ խիստ տաքացված սենյակը լցվել է սարսափելի ածխահոտով, և որ ինքը գուցե կարող էր մեռնել։ Իսկ հարբած գյուղացին դեռ պառկել ու խոմփացնում էր։ Մոմը հալվել էր և պետք է հանգչեր շուտով։ Միտյան բռնաց ու երբալով նետվեց միջանցք՝ դեպի անտառապահի սենյակը։ Անտառապահը շուտով զարթնեց, բայց լսելով, որ մյուս սենյակը ածխահոտով է լցվել, տարօրինակ անտարբերությամբ ընդունեց այդ փաստը, թեև գնաց կարգի գցելու. դա վիրավորական թվալու չափ զարմացրեց Միտյային։

— Բայց նա մեռա՞վ, նա մեռա՞վ, և այդ դեպքում... ի՞նչ

եմ անելու այդ դեպքում,— մոլեգնած գոռում էր Միտյան նրա առաջ։

Բաց արեցին դռները, լուսամուտը, բացեցին ծխնելուղը, Միտյան մի դույլ ջուր բերեց միջանցքից, նախ իր գլուխը թրջեց, հետո լաթի մի կտոր գտավ, թաթախեց ջրի մեջ ու դրեց Լյագավիի գլխին։ Իսկ անտառապահը շարունակում էր մի տեսակ նույնիսկ արհամարհանքով վերաբերվել այդ ամբողջ դեպքին և, լուսամուտը բանալով, մոայլորեն ասաց՝ «Դե լավ է բսենց», ու գնաց վերստին քնելու, թիթեղյա լապտերը թողնելով Միտյային։ Միտյան կես ժամի չափ զբաղվեց հարբած ու ածխահար գյուղացիով, շարունակ թրջելով նրա գլուխը, և արդեն լրջորեն մտադրվել էր ամբողջ գիշերը չքնել, բայց արդեն ուժասպառ եղած, մի բոպե նստեց շունչ քաշելու և վայրկենապես աչքերը փակեց, հետո խսկույն անդիտակցորեն մեկնվեց նստարանի վրա և քնեց մեռածի նման։

Սոսկալի ուշ զարթնեց։ Մոտավորապես առավոտյան ժամը ինն էր արդեն։ Արևը պայծառ փայլում էր խրճիթի երկու լուսամուտներից։ Երեկվա զանգրահեր գյուղացին նստել էր նստարանի վրա, արդեն բանկոնը հագած։ Նրա առաջ մի նոր ինքնաեռ ու մի նոր շիշ օղի էր դրված։ Երեկվա կիսատ շիշը դատարկել էր և նորի էլ կեսից ավելին խմել էր արդեն։ Միտյան վեր թռավ ու վայրկենապես հասկացավ, որ անիծյալ գյուղացին հարբել էր նորից, հարբել էր մինչև ուղն ու ծուծը, անհուսալիորեն։ Մի բոպե նայեց նրան, աչքերը չռած։ Իսկ գյուղացին լուռ ու խորամանկ հայացքներ էր նետում նրա վրա՝ մի տեսակ վիրավորական հանդարտությամբ, նույնիսկ մի տեսակ արհամարհական մեծամտությամբ, ինչպես թվաց Միտյային։ Նա խոյացավ գյուղացու մոտ։

— Ներեցեք, գիտե՞ք... ես... դուք երևի լսել եք այստեղի անտառապահից, որ այն սենյակում է, լսել եք՝ ես պորուչիկ Դմիտրի Կարամազովն եմ, ծերունի Կարամազովի որդին, դուք բարեհաճում եք պուրակը գնել նրանից...

— Փչո՛ւմ ես էդ բանը,— ասաց հանկարծ գյուղացին՝ հաստատ, կտրուկ և հանգիստ շեշտով։

— Ինչպե՞ս թե փչում եմ։ Ֆյոդոր Պավլովիչին գիտեք, չէ՞,

— Ոչ մի քո Ֆյոդոր Պավլովիչին էլ չգիտեմ,— ասաց գյուղացին, մի տեսակ ծանր շարժելով լեզուն։

— Պուրակը, պուրակն եք ուզում նրանից գնել։ Դե զարթնեք, ուշքի եկեք։ Իլյինսկոեի հայր Պավելը բերեց ինձ այստեղ... Դուք գրել եք Սամսոնովին, և նա ինձ ձեզ մոտ ուղարկեց...— շնչասպառ հևում էր Միտյան։

— Փըչ-չո՛ւմ ես,— կարճ ու կտրուկ ասաց նորից գյուղացին։

Միտյայի ոտքերը սառեցին։

— Ի սե՞ր աստծո, կատակ չէ իմ ասածը։ Դուցե գինով եք։ Բայց վերջապես կարող եք խոսել, հասկանալ... թե չէ... թե չէ ոչի՞նչ չեմ հասկանում։

— Դու է՛ՀՀ ներկող ես։

— Ի սե՞ր աստծո, ես Կարամազովն եմ, Դմիտրի Կարամազովը, առաջարկություն ունեմ ձեզ... շահավոր առաջարկություն... շատ շահավոր... հենց պուրակի կապակցությամբ։

Գյուղացին լուրջ-լուրջ շոյում էր մորուքը։

— Չէ՞, դու կապալով վերցրիր ու սրիկա դուրս եկար։ Սրիկա՛ ես դու։

— Բայց հավատացնում եմ ձեզ՝ սխալվո՞ւմ եք,— ձեռ ու ոտ էր ընկել Միտյան հուսահատած։ Գյուղացին շարունակ մորուքն էր շոյում և հանկարծ խորամանկորեն կկոցեց աչքերը։

— Չէ՞, դու ա՛յ թե ինչ ցույց տուր ինձ, ցույց տուր էնպիսի մի օրենք, որ թույլ է տրվում կեղտոտ բաներ անել, լսո՞ւմ ես։ Սրիկա՞ ես դու, հասկանո՞ւմ ես, թե չէ։

Միտյան մոայլորեն ետ քաշվեց, և հանկարծ ասես «մի բան խփվեց ճակատին», ինչպես ինքն ասաց հետո։ Ակնթարթորեն մի լույս ծագեց նրա մտքում, «մի ջահ վառվեց, և ես ամեն ինչ հասկացա»։ Քարացած կանգնել էր նա և զարմանում էր, թե ինչպե՞ս ինքը, համենայն դեպս խելացի մարդ լինելով, կարող էր տեղի տալ այսպիսի հիմարության, խճճվել այսպիսի արկածախնդրության մեջ և համարյա մի ամբողջ օր ու գիշեր շարունակել այս բոլորը, զբաղվել այս կյագավիի հետ, սրա գլուխը թրջել... «Դե հարբած է մարդը, մինչև ուղն ու ծուծը հարբած, և դեռ մի ամբողջ շաբաթ կխմի ու կխմի, էլ ի՞նչ սպասես սրանից։ Բայց չլինի՞ Սամսոնովը դիտմամբ ինձ ուղարկեց այստեղ։ Չլինի՞ թե Գրուշենկան... Օ՜ ասված իմ, ի՞նչ արեցի...»։

Գյուղացին նստած նայում էր նրան ու քթի տակ ծիծաղում։ Եթե ուրիշ ժամանակ լիներ, Միտյան գուցե կատաղությունից սպաներ այդ հիմարին, բայց հիմա ինքը ամբողջ մարմնով թու-

լացել էր երեխայի նման։ Հանգիստ մոտեցավ նստարանին, վերցրեց իր վերարկուն, լուռ հագավ ու դուրս գնաց։ Անտառապահին չգտավ մյուս սենյակում. ոչ ոք չկար այնտեղ։ Գրպանից հիսուն կոպեկ մանր գրամ հանեց ու դրեց սեղանին որպես վարձ՝ գիշերելու, մոմի և պատճառած անհանգստության համար։ Խրճիթից դուրս գալով, տեսավ, որ շուրջն ամբողջ անտառ է միայն և ուրիշ ոչինչ։ Քայլեց պատահական մի ուղղությամբ, չհիշելով նույնիսկ, թե խրճիթից ո՞ր կողմը պետք է գնա՝ ա՞ջ թե ձախ. երեկ գիշեր շտապելով տեր հոր հետ՝ ճանապարհը չէր նկատել։ Նրա սրտում ոչ մեկի նկատմամբ վրիժառության զգացում չկար, ոչ իսկ Սամսոնովի։ Անտառային նեղ արահետով քայլում էր անպատակ, ինքնակորույս, «խորհուրդը կորցրած» և բոլորովին չմտահոգվելով, թե ուր է գնում։ Որևէ մի երեխա կարող էր զգեստնել նրան, այնքա՞ն ուժաթափվել էր հանկարծ հոգեպես ու մարմնապես։ Բայց համենայն դեպս մի կերպ անտառից դուրս եկավ. հանկարծ իր առաջ բացվեցին հնձված, մերկ դաշտերը՝ անծայրածիր տարածությամբ։ «Ի՜նչ հուսահատություն, ի՜նչ մեռելություն ամեն կողմ»,— կրկնում էր նա, շարունակ առաջ ու առաջ քայլելով։

Պատահական անցորդներ փրկեցին նրան. մի կառապան գյուղամիջյա ճանապարհով տանում էր ծերունի մի վաճառականի։ Երբ կառքը հասավ ետևից, Միտյան հարցրեց ճանապարհը, և պարզվեց, որ նրանք նույնպես գնում են դեպի Վոլովյա։ Պայմանների մասին խոսեցին ու Միտյային վերցրին իրենց հետ։ Երեք ժամից տեղ հասան։ Վոլովյա կայանում Միտյան անմիջապես փոստային ձիեր պատվիրեց մինչև քաղաք և հանկարծ անդրադարձավ, որ ահռելիորեն քաղցած է։ Քանի դեռ ձիերն էին լծում, մի ձվածեղ պատրաստեցին նրա համար։ Մի վայրկյանում կերավ ամբողջ ձվածեղը, կերավ հացի մեծ կտորն ամբողջությամբ, մի կտոր էլ երշիկ կերավ ու երեք ըմպանակ օղի խմեց։ Ուտելուց հետո աշխուժացավ, սիրտը նորից բացվեց։ Ուղղակի թռչում էր ճանապարհով, շտապեցնում էր կառապանին, և հանկարծ մի նոր ու արդեն «անխախտ» ծրագիր կազմեց, թե ինչպես հենց այսօր իսկ, մինչև երեկո ձեռք է բերելու «այդ անիծյալ փողը»։ «Եվ մի բոպե մտածե՞ս, հենց միայն մտածես, թե այդ չնչին երեք հազարի պատճառով մարդու ճակատագի՞ր է խորտակվում,— բացականչեց նա արհամարհանքով։— Հենց ա՛յսօր իսկ կլուծեմ հարցը»։ Եվ եթե նրան շարունակ չանհան-

գստացներ այն միտքը, թե արդյոք մի բան չի՞ պատահել Գրուշենկային, նա գուցե նորից շատ զվարթ լիներ։ Բայց Գրուշենկայի մասին այդ միտքը սուր դանակի պես խրվում էր իր սրտի մեջ ամեն բոպե։ Վերջապես հասան, և Միտյան իսկույն վազեց Գրուշենկայի մոտ։

III

ՈՍԿՈՒ ՀԱՆԳՈՒՅՑ

Դա Միտյայի հենց այն այցելությունն էր, որի մասին Գրուշենկան այնպիսի սարսափով պատմում էր Ռակիտինին։ Այն ժամանակ նա իր «սուրհանդակին» էր սպասում և շատ ուրախ էր, որ Միտյան չէր եկել ո՛չ նախորդ օրը, ոչ էլ նույն օրը. հույս ուներ, որ գուցե, սատված տա, մինչև իր մեկնումը չի էլ երևա, բայց ահա նա վրա հասավ հանկարծ։ Մնացյալը հայտնի է մեզ. որպեսզի գլուխն ազատի, Գրուշենկան վայրկենապես համոզեց նրան, որ իրեն ուղեկցի մինչև Կուզմա Սամսոնովի տունը, ուր իբրև թե ինքը պետք է խիստ անհրաժեշտորեն գնար «փող հաշվելու». Միտյան իսկույն ուղեկցեց, իսկ Կուզմայի տան դարպասի առաջ Գրուշենկան ցտեսություն ասաց նրան և սուրբ խոսք տալ, որ գիշերվա ժամը տասներկուսին նորից կգա և իրեն ետ կտանի տուն։ Միտյան նույնպես ուրախ էր այդպիսի կարգադրության համար. «Կնստի Կուզմայի մոտ, ուրեմն Ֆյոդոր Պավլովիչի մոտ չի գնա... եթե միայն սուտ չի ասում»,— ավելացրեց նա իսկույն։ Բայց իր տեսածի համաձայն՝ կարծես թե սուտ չէր նրա ասածը։ Միտյան հենց այն տեսակի մի խանդոտ էր, որ սիրած կնոջ բացակայությամբ անմիջապես սկսում էր ասված գիտե էլ ինչպիսի՞ սարսափելի բաներ հնարել, այսինքն թե ինչեր են գալիս արդյոք նրա գլխին և ինչպես է նա իրեն «դավաճանում», բայց երբ նորից վազում էր նրա մոտ՝ ամբողջ հոգով ցնցված, վշտաբեկ, արդեն անդառնալիորեն հավատացած, որ նա համենայն դեպս հասցրել է դավաճանել իրեն, և երբ առաջին իսկ հայացքից տեսնում էր այդ կնոջ դեմքը՝ խնդուն, զվարթ ու սիրալիր դեմքը, իսկույն ևեթ վերակենդանանում էր, իսկույն ևեթ մոռանում էր ամեն մի կասկած և բերկրալի ամոթով հանդիմանում էր ինքն իրեն՝ իր խանդի համար։ Գրուշենկային ուղեկցելուց հետո նա տուն վազեց։ Օ՜, դեռ այնքան անելիք բաներ ուներ այսօր։ Բայց գոնե սիրտը թեթևացել

էր։ «Միայն թե պետք է շուտով իմանամ Սմերդյակովից՝ երեկ իրիկուն բան-ման չի՞ եղել այնտեղ, չլինի՞ թե Գրուշենկան գնացել է Ֆյոդոր Պավլովիչի մոտ, ո՜ւխ»,— անցավ նրա մտքով։ Այնպես որ նա դեռ չէր էլ հասել իր բնակարանը, երբ արդեն նորից խանգն սկսեց խլրտալ նրա ապերասան սրտում։

Խա՜նգ։ «Օթելլոն խանդոտ չէ, դյուրահավատ է»,— նկատել է Պուշկինը, և միայն այդ կոահումն իսկ վկայում է մեր մեծ բանաստեղծի արտասովոր խորամտությունը։ Օթելլոյի հոգին է ջախջախվել պարզապես և մթագնել է նրա ամբողջ աշխարհայացքը, որովհետև նրա իդեալն է խորտակվել։ Բայց Օթելլոն չի սկսի թաքնվել, լրտեսել, դարանակալ հսկել. նա դյուրահավատ է։ Ընդհակառակը, պետք էր մեծ ջանքեր ի գործ դնելով ուղղություն տալ նրան, հրմշտել, բորբոքել, որպեսզի նա ի վերջո կոահեր դավաճանությունը։ Իսկական խանդոտ մարդն այդպես չէ։ Նույնիսկ անհնար է պատկերացնել այն ամբողջ խայտառակությունն ու բարոյական անկումը, որ խանդոտ մարդն ընդունակ է կրելու առանց որևէ խղճի խայթի։ Եվ հո չի կարելի ասել, թե բոլոր խանդոտները գռեհիկ ու կեղտոտ հոգիներ են։ Ընդհակառակը, մարդը կարող է բարձր զգացմունքներ ունենալ ու սիրել մաքուր, ինքնազոհությամբ լի սիրով, և միաժամանակ թաքնվել սեղանների տակ, կաշառել ամենաստոր մարդկանց ու համակերպվել լրտեսելու և ականջ դնելու ամենագարշելի խայտառակության հետ։ Օթելլոն ոչ մի կերպ չէր կարող հաշտվել դավաճանության հետ (ոչ թե ներել չէր կարող, այլ հաշտվե՛լ չէր կարող), թեև նրա հոգին անհիշաչար ու անմեղ էր՝ երեխայի հոգու նման։ Այդպես չէ իսկական խանդոտ մարդը. դժվար է պատկերացնել, թե ինչպիսի՞ բաների հետ կարող են համակերպվել ու հաշտվել և ինչե՞ր կարող են ներել որոշ խանդոտ մարդիկ։ Հենց խանդոտները ամենից ավելի հոժար են ներելու, և բոլոր կանայք գիտեն այդ բանը։ Օրինակ, խանդոտ մարդն ընդունակ է չափազանց շուտ ներելու (իհարկե, սկզբում սոսկալի մի տեսարան սարքելուց հետո) համարյա արդեն ապացուցված դավաճանությունը, իր աչքով իսկ տեսած գրկախառնումներն ու համբույրները, եթե, ասենք, միաժամանակ համոզվի որևէ կերպ, որ դա «վերջին անգամ» էր, և որ իր մրցակիցն այդ բոպեից իսկ կլքվի, կգնա աշխարհի մյուս ծայրը, և կամ ի՞նքը իր սիրած կնոջը կտանի այնպիսի մի տեղ, ուր այլևս չի հայտնվի այդ իր սարսափելի մրցակիցը։ Իհարկե, հաշտություն մեկ ժամ միայն կտևի, որովհետև եթե նույնիսկ իրոք մրցակիցը չքանա, խանդոտ մարդը հաջորդ օրն իսկ նորը կհնարի և կսկսի խանդել այդ նոր մրցակցին։ Մարդ կարող է մտածել, թե ի՞նչ կա այն սիրո մեջ, որի ետևից պետք է այդպես լրտեսել, և ի՞նչ արժի այն սերը, որն այդքան ուժեղ հսկողության պետք ունի։ Բայց ահա հենց այս բանը երբեք չի հասկանա իսկական խանդոտը, այնինչ, ճիշտն ասած, նրանց մեջ պատահում են նույնիսկ վսեմ սրտի տեր մարդիկ։ Ուշագրավ է և այն, որ հենց այդ վսեմ սրտի տեր մարդիկ, թաքնված կանգնելով մի որևէ խցիկում, ականջ դնելով ու լրտեսելով, իրենց «վսեմ սրտի» շնորհիվ պարզ հասկանում են այն ամոթալի վիճակը, որի մեջ իրենք իսկ ընկել են կամավորաբար, սակայն և այնպես, գոնե այդ խցիկում կանգնած պահին, երբեք խղճի խայթ չեն զգում։ Գրուշենկայի ներկայությամբ չքանում էր Միտյայի խանդը, և մի վայրկյան նա դյուրահավատ ու ազնիվ էր դառնում, նույնիսկ արհամարհում էր ինքն իրեն՝ իր վատ զգացումների համար։ Բայց դա պարզապես նշանակում էր, որ այդ կնոջ հանդեպ իր սիրո մեջ շատ ավելի բարձր մի բան կար, քան ինքն էր ենթադրում, և ոչ թե միայն սեռային կիրք, ոչ թե միայն «մարմնի կորագիծ», որի մասին նա ասել էր Ալյոշային։ Սակայն բավական էր, որ Գրուշենկան հեռանար աչքից, Միտյան իսկույն ևթ սկսում էր նորից կասկածել ու դավաճանության բոլոր ստորություններն ու նենգությունները տեսնել նրա մեջ։ Ընդ որում ոչ մի խղճի խայթ չէր զգում։

Եվ այսպես, խանդը նրա մեջ նորից սկսեց եռալ։ Համենայն դեպս պետք էր շտապել։ Նախ և առաջ պետք է գոնե մի քիչ փող ճարեր, կարճ ժամանակով պարտք առներ մի տեղից։ Երեկվա ինը ռուբլին գրեթե ամբողջությամբ ծախսվել էր ճանապարհի համար, իսկ առանց փողի, պարզ է, ոչ մի քայլ չես կարող անել։ Բայց դեռ ցերեկը, կառքի մեջ, իր նոր ծրագիրը կազմելիս մտածել էր նաև, թե որտեղից ճարի այդ մի քիչ փողը կարճ ժամանակով։ Մենամարտի լավ ատրճանակ ուներ մի զույգ, փամփուշտներն էլ հետը, և եթե մինչև հիմա դրանք գրավի չէր դրել, պատճառն այն էր, որ իր ունեցած բոլոր իրերից ավելի էր սիրում։ «Մայր քաղաք» գինետանը վաղուց արդեն ծանոթացել էր մի երիտասարդ պաշտոնյայի հետ և հենց գինետանն էլ մի օր իմացել էր, որ այդ ամուրի և շատ բարեկեցիկ պաշտոնյան կբրքոտ սեր ունի զենքերի նկատմամբ, գնում է ատրճանակի տե-

սակներ, գաշույններ, տանը կախում է պատերի վրա, ցույց է տալիս ծանոթներին, պարծենում և վարպետորեն բացատրում է ատրճանակի կառուցվածքը, լցնելու ձևը և այլն։ Առանց երկար մտածելու, Միտյան անմիջապես գնաց նրա մոտ և առաջարկեց տասը ռուբլով գրավի վերցնել ատրճանակները։ Պաշտոնյան, ուրախացած, սկսեց նրան համոզել, որ ուղղակի ծախի, բայց Միտյան չհամաձայնվեց, և պաշտոնյան տասը ռուբլի տվեց նրան, հայտարարելով, որ ոչ մի դեպքում տոկոս չի վերցնի։ Բաժանվեցին որպես բարեկամներ։ Միտյան շտապում էր և սուրաց դեպի Ֆյոդոր Պավլովիչի տան ետևը՝ դեպի իր տաղավարը, որպեսզի հնարավորին չափ շուտ կանչի Սմերդյակովին։ Բայց այդպիսով հաստատվեց ևս մի փաստ. Միտյան ոչ մի կոպեկ չուներ որոշ մի դեպքից ընդամենը երեք-չորս ժամ առաջ (այդ դեպքի մասին խոսելու եմ ստորև), և նա տասը ռուբլով գրավի դրեց իր սիրած առարկան, այնինչ հանկարծ, երեք ժամ հետո, հազարներ հայտնվեցին նրա ձեռքում... Բայց չշտապեմ առաջ ընկնել։

Մարյա Կոնդրատևնայից (Ֆյոդոր Պավլովիչի հարևանուհուց) իմացավ Սմերդյակովի հիվանդության անսպասելի լուրը, որ չափազանց զարմացրեց ու խռովեց նրան։ Լսեց ամբողջ պատմությունը. նրա նկուղ ընկնելը, հետո ընկնավորության նոպան, բժշկի այցելությունը, Ֆյոդոր Պավլովիչի ցուցաբերած խնամքը. հետաքրքրությամբ իմացավ նաև, թե իր եղբայր Իվան Ֆյոդորովիչն արդեն Մոսկվա է մեկնել այդ առավոտ։ «Երևի ինձնից առաջ է Վոլովյայով անցել,— մտածեց Դմիտրի Ֆյոդորովիչը, բայց Սմերդյակովի հարցն էր նրան սոսկալի անհանգստացնում։— Իսկ ի՞նչ է լինելու հիմա, ո՞վ պիտի հսկի, ո՞վ պիտի լուր բերի ինձ»։ Ագահորեն սկսեց հարցուփորձել այդ կանանց՝ արդյոք որևէ բան չե՞ն նկատել երեկ իրիկուն։ Նրանք շատ լավ հասկանում էին, թե ինչ էր ուզում իմանալ, և լիովին վստահացրին նրան. ոչ ոք չի եկել, դիշերել է Իվան Ֆյոդորովիչը, «ամեն ինչ կարգին էր բացարձակապես»։ Միտյան մտածմունքի մեջ ընկավ։ Իհարկե, այսօր էլ պետք է հսկել, բայց ո՞ւր. այստե՞ղ, թե Սամսոնովի դարպասի առաջ։ Որոշեց՝ և՛ այստեղ, և՛ այնտեղ, ըստ հանգամանքների բերման, իսկ մինչ այդ, մինչ այդ... Խնդիրն այն է, որ հիմա նրա առաջ կանգնած էր այն «ծրագիրը», նոր ու արդեն հաստատ ծրագիրը, որ այսօր կազմել էր ճանապարհին, և որի իրագործումն այլևս անկարելի էր

հետաձգել։ Միտյան որոշեց մի ժամ զոհել գրան. «մի ժամվա մեջ ամեն ինչ կլուծեմ, ամեն ինչ կիմանամ և հետո, հետո՝ նախ ո՛ւղղակի Սամսոնովի տունը, կիմանամ՝ այնտե՞ղ է Գրուշենկան, և ո՛ւղղակի նորից այստեղ, մինչև տասնմեկը կսպասեմ այստեղ, հետո նորի՛ց Սամսոնովի դռան առաջ, որպեսզի նրան ետ տանեմ տունս։ Ահա այսպես որոշեց նա։

Տուն վազեց, լվացվեց, սանրվեց, մաքրեց հագուստը, հագնվեց և գնաց տիկին Խոխլակովայի մոտ։ Ավա՜ղ, նրա «ծրագիրն» այդ տիկնոջ հետ էր կապված։ Որոշել էր երեք հազար ռուբլի պարտք առնել նրանից։ Եվ մանավանդ որ հանկարծ, մի տեսակ անակնկալորեն, արտակարգ մի վստահություն էր զգացել, թե նա իրեն չի մերժի։ Գուցե զարմանան, որ եթե այդպիսի վստահություն ուներ, ապա ինչո՞ւ հենց սկզբից չէր գնացել այդ տիկնոջ մոտ՝ այսպես ասած ի՛ր շրջանակի մարդու մոտ, այլ դիմել էր Սամսոնովին՝ ուրիշ կերտվածքի տեր մի մարդու, որի հետ նույնիսկ չգիտեր, թե ինչպես պետք է խոսի։ Բայց խնդիրն այն է, որ վերջին ամսվա ընթացքում համարյա թե բոլորովին կտրել էր իր ծանոթությունը Խոխլակովայի հետ, և առաջ էլ շատ ծանոթ չէին իրար, ու բացի այդ՝ շատ լավ գիտեր, որ այդ տիկինը տանե՛լ չէր կարող իրեն։ Խոխլակովան հենց սկզբից էլ ատել էր Միտյային պարզ այն պատճառով, որ նա Կատերինա Իվանովնայի փեսացուն է, և միաժամանակ այդ տիկինը, չգիտես ինչու, հանկարծ փափագել էր, որ Կատերինա Իվանովնան երես դարձնի նրանից և ամուսնանա «համակրելի, ասպետորեն նրբակիրթ Իվան Ֆյոդորովիչի հետ, որ այնպե՛ս հիանալի վարվելաձև ունի»։ Իսկ Միտյայի վարվելաձևն ատում էր նա։ Միտյան ուղղակի ծիծաղում էր նրա վրա և մի առիթով ասել էր, թե այդ տիկինը «նույնքան աշխույժ ու անզուսպ է, որքան անուս»։ Եվ ահա այս առավոտ, կառքի մեջ, ամենափայլուն միտքն էր ծագել իր գլխում. «Է՛հ, եթե նա այնքա՛ն չի ուզում, որ ես ամուսնանամ Կատերինա Իվանովնայի հետ, և ա՛յդ աստիճան չի ուզում (գիտեր, որ նա համարյա հիստերիկա է բարձրացնում այդ առիթով), էլ ինչո՞ւ մերժի հիմա այդ երեք հազարը տալ ինձ, տալ հենց այն նպատակով, որ ես այդ փողի շնորհիվ կարողանամ թողնել Կատյային և հավիտյանս հավիտենից գնամ այստեղից։ Այս երես առած բարձրաշխարհիկ տիկինները եթե մի բան այնպե՛ս ուզեցին, որ քմահաճույքի հարց դարձավ, էլ ոչինչ չեն խնայի, որ իրենց ուզածը լինի։ Մանավանդ որ այս

մեկն էլ այնքա՞ն հարուստ է»,— դատում էր Միտյան։ Իսկ գալով բուն «ծրագրին», ամեն ինչ նախկինի նման էր, այսինքն առաջարկելու էր իր իրավունքները Չերմաշնյայի վրա, բայց արդեն ոչ թե շահաբերության իմաստով, ինչպես երեկ առաջարկել էր Սամսոնովին, ոչ թե ջանալու էր այս տիկնոջը ևս հրապուրել՝ երեք հազարի փոխարեն վեց կամ յոթ հազարի կրկնակի մի պատառ պոկելու հնարավորությամբ, այլ պարզապես իր իրավունքները հանձնելու էր որպես աննենգ մի երաշխիք՝ պարտքի դիմաց։ Զարգացնելով իր այդ նոր միտքը, Միտյան հասավ ոքանչացման, բայց նա միշտ էլ հանում էր այդ հոգեվիճակին, երբ մի նոր բան էր նախաձեռնում, մի անակնկալ որոշում էր ընդունում։ Կրքով էր հանձնվում ամեն մի նոր մտքի։ Բայց այնուամենայնիվ, երբ ուշ դրեց տիկին Խոխլակովայի տան շքամուտքի սանդուղքին, հանկարծ սոսկումի սարսուռ անցավ նրա կոնակով. միայն այդ վայրկյանին նա գիտակցեց լիուլի և մաթեմատիկական հստակությամբ, որ սա իր վերջին հույսն է արդեն, և որ եթե այստեղ էլ ձախորդություն լինի, էլ ուրիշ ոչինչ չի մնում աշխարհում, քան «սպանել ու կողոպտել որևէ մեկին այդ երեք հազարի համար, էլ ուրիշ ոչի՞նչ...»։ Ժամը յոթ անց կես էր, երբ նա հնչեցրեց դռան զանգը։

Սկզբում կարծես թե բախտը ժպտաց. հազիվ էր գեկուցել իր այցը, և խնդրեցին նրան արտակարգ փութկոտությամբ։ «Կարծես սպասում էր ինձ»,— անցավ Միտյայի մտքով, և հետո, երբ նրան հյուրասենյակ առաջնորդեցին, սանտիրուհին գրեթե ներս վազեց և հանկարծ ուղղակի հայտարարեց, թե սպասում էր նրան...

— Սպասո՞ւմ էի, սպասում։ Չէի՞ էլ կարող մտածել, թե դուք ինձ մոտ կգաք, ընդունեցե՛ք այս բանը. և սակայն սպասում էի ձեզ, զարմացե՛ք իմ բնազդի վրա, Դմիտրի Ֆյոդորովիչ, ամբողջ օրը համոզված էի, որ դուք այսօր կգաք։

— Դա իրոք որ զարմանալի է, տիկին,— ասաց Միտյան, անճարակորեն նստելով,— բայց... ես չափազանց կարևոր մի գործով եմ եկել... ամենակարևորագույնից էլ կարևոր, այսինքն ի՞նձ համար, տիկին, միայն ինձ համար... և շտապում եմ...

— Գիտեմ, որ ամենակարևորագույն գործով է, Դմիտրի Ֆյոդորովիչ, այստեղ ոչ թե ինչ-որ նախազգացումների հարց է, ոչ թե հրաշքներ գործելու հետադիմական հավակնություն (լսե՞լ եք սրբահայր Զոսիմայի մասին), այստեղ մաթեմատիկա է, մա-

թեմատիկա։ Կատերինա Իվանովնայի գլխին եկած այդ բոլոր բաներից հետո դուք չէիք կարող չգալ, չէի՞ք կարող, չէի՞ք կարող, մաթեմատիկա է դա։

— Իրական կյանքի ռեալիզմն է, տիկին, այ թե ինչ է դա։ Բայց թույլ տվեք բացատրել...

— Հենց ռեալիզմ, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Ես հիմա ամբողջ հոգով ռեալիզմի կողմն եմ, լա՞վ խելքի եկա հրաշքների հարցում։ Լսե՞լ եք, որ սրբահայր Զոսիման մեռավ։

— Ոչ, տիկին, առաջին անգամն եմ լսում,— մի քիչ զարմացավ Միտյան։ Նրա մտքում պատկերացավ Ալյոշայի դեմքը։

— Այս գիշեր է եղել, և պատկերացրեք, որ...

— Տիկի՛ն,— ընդհատեց Միտյան,— ես միայն այն եմ պատկերացնում, որ ամենահուսահատական դրության մեջ եմ, և եթե դուք ինձ չօգնեք, ամեն ինչ փուլ կգա, և ամենից առաջ ե՛ս փուլ կգամ։ Ներեցեք տափակ արտահայտությանս համար, բայց ես տենդի մեջ եմ, վառվում եմ...

— Գիտեմ, գիտեմ, որ դուք վառվում եք, ամեն ինչ գիտեմ, դուք չեք էլ կարող ուրիշ հոգեվիճակի մեջ լինել, և ինչ էլ որ ասեք հիմա, ես ամեն ինչ նախօրոք գիտեմ։ Ես վաղուց եմ խորհրդածության նյութ դարձրել ձեր ճակատագիրը, Դմիտրի Ֆյոդորովիչ, հետևում եմ նրան և ուսումնասիրում... Օ՜հ, հավատացեք, որ ես հոգիների փորձառու բժիշկ եմ, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Տիկին, եթե դուք փորձառու բժիշկ եք, ես էլ ուրեմն փորձառու հիվանդ եմ,— սիրալիր լինելու ճիգ արեց Միտյան,— և նախազգում եմ, որ եթե դուք այդպես հետևում եք իմ ճակատագրին, ուրեմն և կօգնեք, որ նա չխորտակվի։ Բայց դրա համար թույլ տվեք բացատրեմ վերջապես այն ծրագիրը, որով հանդգնել եմ գալ ձեզ մոտ... և այն բանը, որ սպասում եմ ձեզնից... Ես եկել եմ, տիկին...

— Մի՛ բացատրեք, դա երկրորդական է։ Իսկ ինչ վերաբերում է օգնության, դուք առաջին մարդը չեք, որին օգնում եմ, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Հավանաբար լսել եք իմ զարմուհի Բելմեսովայի մասին, նրա ամուսինը կործանվում էր, փուլ էր գալիս, ինչպես հատկանշականորեն արտահայտվեցիք, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Եվ ի՞նչ եք կարծում, ես նրան ցույց տվեցի ձիաբուծության ուղին, և նա հիմա բարգավաճում է։ Դուք գաղափար ունե՞ք ձիաբուծության մասին, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Նշո՞ւլն անգամ չունեմ, տիկին, օ՜հ, տիկին, նշուլն անգամ,— գոչեց Միտյան ջղային անհամբերությամբ և նույնիսկ վեր կացավ տեղից։— Ես միայն աղաչում եմ ձեզ, տիկի՜ն, լսեցեք ինձ, թույլ տվեք միայն երկու բոպե ազատ խոսեմ, որպեսզի նախ բացատրեմ ձեզ ամեն ինչ, ամբողջ այն ծրագիրը, որով եկել եմ ձեզ մոտ։ Մանավանդ որ սուղ է ժամանակս, սոսկալի շտապո՜ւմ եմ... — հիստերիկ ձայնով գոռաց Միտյան, զգալով, որ նա հենց անմիջապես կսկսի խոսել նորից, և հույս ունենալով, որ կարող է կանխել նրան։— Ես եկել եմ հուսահատ... ծայր աստիճանի հուսահատ, եկել եմ, որ երեք հազար ռուբլի պարտք խնդրեմ ձեզնից, պա՜րտք, բայց ապահով, ապահովագո՜ւյն երաշխիքով, տիկին, ապահովագո՜ւյն գրավակով։ Միայն թույլ տվեք բացատրեմ...

— Այդ բոլորը հետո, հետո՜ կասեք,— իր հերթին ձեռքը թափահարեց տիկին Խոխլակովան,— և ի՞նչ էլ որ ասեք, ես այդ բոլորը նախօրոք գիտեմ, արդեն ասացի ձեզ։ Դուք ինչ-որ գումար եք խնդրում, երեք հազար է ձեզ հարկավոր, բայց ես ձեզ ավելի՞ն կտամ, անչափորեն ավելի, ես կփրկեմ ձեզ, Դմիտրի Ֆյոդորովիչ, բայց պետք է լսեք ինձ։

Միտյան կրկին վեր թռավ տեղից։

— Մի՞թե իրո՞ք այդքան բարի եք դուք, տիկին,— գոչեց նա արտասովոր զգացմունքով։— Աստվա՞ծ իմ, փրկեցիք դուք ինձ։ Տիկին, դուք մի մա՜րդ եք փրկում հարկադրական մահից, ատրճանակի փամփուշտից... Իմ հավիտենական շնորհակալությունը...

— Ես ձեզ անհունորեն, անհունորե՞ն ավելի կտամ, քան այդ երեք հազարը,— գոչեց տիկին Խոխլակովան, շողշողուն ժպիտով նայելով Միտյայի հիացմունքին։

— Անհունորե՞ն։ Բայց պետք էլ չէ այդքանը։ Այդ երեք հազարն է միայն անհրաժեշտ, ինձ համար ճակատագրակա՞ն այդ երեք հազարը, և ես իմ կողմից անհուն շնորհակալությամբ եմ այդ գումարը երաշխավորում և ձեզ առաջարկում եմ մի ծրագիր, որը...

— Բավական է, Դմիտրի Ֆյոդորովիչ, ասված է և կատարված,— կարճ կտրեց տիկին Խոխլակովան՝ բարերարուհու պարկեշտ հաղթությամբ։— Խոստացա փրկել ձեզ ու կփրկեմ։ Կփրկեմ ձեզ, ինչպես Բելմեսովին փրկեցի։ Ի՞նչ եք մտածում ոսկու հանքերի մասին, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Ոսկու հանքերի՞ մասին, տիկին։ Ոչ մի բան էլ չեմ մտածել երբեք։

— Բայց ե՞ս մտածել եմ ձեր փոխարեն։ Երկա՞ր ու երկար եմ մտածել։ Արդեն մի ամիս է հետևում եմ ձեզ՝ այդ նպատակով։ Հարյուր անգամ նայել եմ ձեզ, երբ անցնում էիք, և միշտ էլ ասել եմ ինքս ինձ. ահա՜ եռանդուն մի մարդ, որ պետք է ոսկու հանքերը գնա։ Նույնիսկ ուսումնասիրել եմ ձեր քայլվածքը և եզրակացրել՝ այս մարդը շատ հանքեր կգտնի։

— Իմ քայլվածքի՞ց, տիկին,— ժպտաց Միտյան։

— Ի՞նչ կա որ, քայլվածքից էլ, այո։ Ինչ է, մի՞թե դուք ժխտում եք, որ քայլվածքից կարելի է ճանաչել բնավորությունը, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Բնական գիտությունները հաստատում են այդ բանը։ Օ՜, ես հիմա ռեալիստ եմ, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Այսօրվանից սկսած, վանքի այդ ամբողջ պատմությունից հետո, որ ինձ այնպե՞ս տակնուվրա արեց, ես բացարձակորեն ռեալիստ եմ և ուզում եմ ամբողջովին նվիրվել գործնական կյանքին։ Բուժվել եմ ես։ Բավակա՞ն է, ինչպես ասել է Տուրգենևը։

— Բայց, տիկին, այդ երեք հազարը, որն այնպես մեծահոգաբար խոստացաք փոխ տալ ինձ...

— Կունենաք, Դմիտրի Ֆյոդորովիչ,— անմիջապես նրա խոսքը կտրեց տիկին Խոխլակովան։— Միևնույն է թե ձեր գրպանում է այդ երեք հազարը, և ոչ թե երեք հազար, այլ երեք միլիո՞ն, Դմիտրի Ֆյոդորովիչ, ամենակարճ ժամանակում։ Ասեմ, թե ինչ է լինելու ձեր գաղափարը. ոսկու հանքեր կգտնեք, միլիոններ կշահեք, ես կգաք ու գործիչ կդառնաք, մեզ էլ կշարժեք տեղից, կառաջնորդեք դեպի բարին։ Մի՞թե ամեն ինչ պետք է թողնենք չհուզներին։ Շենքեր պիտի շինեք և զանազան ձեռնարկություններ։ Պիտի օգնեք աղքատներին, իսկ նրանք պիտի օրհնեն ձեզ։ Հիմա երկաթուղիների դար է, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Դուք հայտնի մարդ կդառնաք և անհրաժեշտ կլինեք ֆինանսների մինիստրությանը, որ այնքա՞ն կարիքներ ունի հիմա։ Մեր վարկային ռուբլու արժեքազրկումը քնել չի տալիս ինձ, Դմիտրի Ֆյոդորովիչ, այդ կողմից լավ չգիտեն ինձ մարդիկ...

— Տիկի՜ն, տիկի՜ն,— անհանգիստ մի նախազգացումով ընդհատեց նորից Դմիտրի Ֆյոդորովիչը,— ես գուցե սիրով, սիրով հետևեմ ձեր խորհուրդին, ձեր այդ խելացի խորհուրդին, տիկին, և գուցե գնամ այնտեղ... այդ ոսկու հանքերը... նորից

կգամ այդ մասին խոսելու... նույնիսկ շատ անգամներ կգամ... բայց հիմա այդ երեք հազա՞րը, որ դուք այնպե՞ս մեծահոգաբար... Օ՜, այդ գումարն ազատություն կտար ինձ, և եթե հնարավոր է այսօր... Այսինքն, գիտե՞ք, հիմա ոչ մի բոպե, ոչ մի բոպե ժամանակ չունեմ...

— Բավակա՞ն է Դմիտրի Ֆյոդորովիչ, բավակա՞ն է,— համառորեն ընդհատեց նորից տիկին Խոխլակովան։— Հարցնում եմ՝ գնո՞ւմ եք ոսկու հանքերը, թե ոչ, վճռե՞լ եք լիովին, պատասխանեցե՛ք մաթեմատիկական ճշգրտությամբ։

— Գնում եմ, տիկին, հե՛տո... Կգնամ ո՞ւր որ ուզեք, տիկին... բայց հիմա...

— Սպասեցե՛ք,— գոչեց տիկին Խոխլակովան ու վեր թռավ, վազեց դեպի իր հոյակապ գրասեղանը, որ անհամար գզրոցիկներ ուներ, և սկսեց մեկը մյուսի հետևից քաշել գզրոցիկները, մի բան փնտրելով ու սոսկալի աճապարելով։

«Երեք հազա՞րը,— մտածեց Միտյան սրտատրոփ,— և հենց անմիջապես, առանց թղթեր մրոտելու, առանց վավերագրերի... օ՜, չենտմենությո՞ւն է սա։ Հոյակապ կին է, և եթե միայն այսքան խոսելու մարմաջ չունենար...»։

— Ահա՛,— գոչեց տիկին Խոխլակովան ուրախացած, վերադառնալով Միտյայի մոտ,— ահա՛ թե ինչ էի փնտրում։

Դա մի շատ փոքրիկ, արծաթյա սրբապատկեր էր երիզակով, որի նմանները երբեմն կրում են մարմնի վրա՝ խաչի հետ միասին։

— Կիևից է սա, Դմիտրի Ֆյոդորովիչ,— շարունակեց նա երկյուղածությամբ,— մեծ նահատակ սուրբ Վարվառայի մասունքներից։ Թույլ տվեք անձամբ կախեմ ձեր վզին և այդպիսով նոր կյանք ու նոր սխրագործություններ բարեմաղթեմ ձեզ։

Եվ նա իրոք Միտյայի վզին անցկացրեց սրբապատկերը և սկսեց տեղավորել։ Միտյան, խիստ շփոթված, առաջ հակվեց ու սկսեց օգնել նրան և վերջապես փողկապի ու օձիքի տակից սրբապատկերը կախեց կրծքի վրա։

— Ահա հիմա կարող եք գնալ,— ասաց տիկին Խոխլակովան, հանդիսավորությամբ նստելով նորից իր տեղը։

— Տիկի՛ն, ես այնքան զգացված եմ... և չգիտեմ նույնիսկ, թե ինչպես շնորհակալությունս հայտնեմ... այսպիսի զգացմունքների համար, բայց... եթե իմանայիք, թե ինձ համար որքա՞ն թանկ է ժամանակը հիմա... Այն գումարը, որ ես այնպե՞ս

սպասում եմ ձեր մեծահոգությունից... Օ՜ տիկին, քանի որ դուք այնքան բարի՞ եք իմ նկատմամբ, այնքան սրտաշարժորեն մեծահոգի,— բացականչեց հանկարծ Միտյան ներշնչումով,— ուրեմն թույլ տվեք հայտնել ձեզ... թեև դուք արդեն վաղուց գիտեք... որ ես այստեղ սիրում եմ մի էակի... Ես դավաճանեցի Կատյային... ուզում եմ ասել Կատերինա Իվանովնային։ Օ՜, անմարդկային և անազնիվ գտնվեցի նրա հանդեպ, բայց ես մի ուրիշին սիրեցի այստեղ... մի կնոջ, որին գուցե դուք արհամարհում եք, տիկին, որովհետև ամեն ինչ գիտեք արդեն, բայց ես ոչ մի կերպ չեմ կարող թողնել նրան, ո՞չ մի կերպ, և այդ պատճառով էլ հիմա, այդ երեք հազարը...

— Թողե՛ք ամեն ինչ, Դմիտրի Ֆյոդորովիչ,— ամենավճռական շեշտով ընդհատեց տիկին Խոխլակովան։— Թողեք ամեն ինչ, և հատկապես կանանց։ Ձեր նպատակը ոսկու հանքերն են, և հարկ չկա այնտեղ կանանց տանելու։ Հետո, երբ վերադառնաք հարստությամբ ու փառքով, ամենաբարձր հասարակության մեջ սրտակից ընկերուհի կգտնեք ձեզ համար։ Ժամանակակից աղջիկ կլինի, գիտելիքների տեր և առանց նախապաշարումների։ Մինչ այդ արդեն հասունացած կլինի կանանց հարցը, որ սկիզբ է առել հիմա, և կհայտնվի նոր կինը...

— Տիկի՛ն, այդ չէ հարցը, այդ չէ հարցը... — Միտյան ձեռքերը միացրեց աղաչալից։

— Այդ է հենց, Դմիտրի Ֆյոդորովիչ, դա հենց այն է, որ պետք է ձեզ, այն, որ դուք տենչում եք, առանց ինքներդ գիտենալու։ Ես բոլորովին էլ դեմ չեմ կանանց հարցին, որ բարձրանում է այսօր, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Կանանց զարգացումը և նույնիսկ կնոջ քաղաքական դերը ամենամոտիկ ապագայում՝ ահա՛ իմ իդեալը։ Ես ինքս էլ դուստր ունեմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, և այդ կողմից լավ չգիտեն ինձ մարդիկ։ Այս առթիվ ես մի նամակ եմ ուղարկել գրող Շչեդրինին։ Այդ գրողն ինձ այնքա՞ն բան է սովորեցրել կնոջ կոչման մասին, որ ես անցյալ տարի անանուն մի նամակ ուղարկեցի նրան, ընդամենը երկու տող՝ «Գրկում ու համբուրում եմ ձեզ ժամանակակից կնոջ անունից, իմ սիրելի գրող, շարունակեցե՛ք»։ Եվ ստորագրեցի՝ «Մայր»։ Ուզում էի ստորագրել «Ժամանակակից մայր» և տատանվում էի, բայց ի վերջո կանգ առա պարզ «մայր» բառի վրա. ավելի շատ բարոյական գեղեցկություն կա դրա մեջ, Դմիտրի Ֆյոդորովիչ, և բացի այդ՝ «ժամանակակից» բառը նրանց կհիշեցներ

«Սովրեմենիկ»-ը[1], դաան մի հիշողություն նրանց համար՝ նկատի ունենալով ներկա գրաքննությունը... Ա՜խ ասված իմ, ի՞նչ պատահեց ձեզ։

— Տիկի՜ն,— վեր թռավ վերջապես Միտյան, անզոր աղաչանքով ափերն իրար միացնելով նրա առաջ,— դուք ինձ կատիպեք լաց լինել, տիկին, եթե ուշացնեք այն, ինչ այնպիսի մեծահոգությամբ...

— Այո, լացե՛ք, Դմիտրի Ֆյոդորովիչ, լացե՛ք։ Գեղեցիկ զգացումներ են դրանք... ձեզ սպասում է այնպիսի՜ մի ուղի։ Արցունքը կթեթևացնի ձեզ, հետո կվերադառնաք և կսկսեք ուրախանալ։ Հատկապես կվազեք կգաք ինձ մոտ Սիբիրից, որպեսզի ինձ հետ միասին ուրախանաք...

— Բայց թո՛ւլ տվեք, որ ես էլ... — գոռաց հանկարծ Միտյան,— վերջին անգամ աղաչում եմ, ասացե՛ք, կարո՞ղ եմ այսօր ստանալ ձեր խոստացած գումարը։ Եվ եթե ոչ, ե՞րբ գամ ստանալու։

— Ի՞նչ գումար, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Ձեր խոստացած երեք հազարը... որ դուք այնպիսի մեծահոգությամբ...

— Երեք հազա՞ր։ Ռուբլի՞։ Օ ո՜չ, երեք հազար ռուբլի չունեմ,— ասաց տիկին Խոխլակովան մի տեսակ հանդիսավոր զարմանքով։

Միտյան քարացավ...

— Բայց ինչպե՞ս թե... դուք հիմա... հենց հիմա... նույնիսկ ասացիք՝ միևնույն է թե իմ դրպանում է այդ երեք հազարը...

— Օհ ո՜չ, դուք ինձ սխալ եք հասկացել, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Եթե այդպես է, ուրեմն չեք հասկացել ինձ։ Ես խոսում էի ոսկու հանքերի մասին... Ճիշտ է, ես ավելին խոստացա, անհունորեն ավելի, քան երեք հազար, հիմա ամեն ինչ հիշում եմ, բայց ես միայն ոսկու հանքերը նկատի ունեի։

— Իսկ փո՞ղը։ Երեք հազա՞րը,— անհեթեթորեն բացականչեց Միտյան։

— Օ՜, եթե ձեր մտքինը փողն էր, ես փող չունեմ։ Հիմա ես բոլորովին փող չունեմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, հիմա ես հենց

[1] «Սովրեմենիկ» բառը (հայերեն ամենագրի անուն) հայերեն նշանակում է «ժամանակակից»։ Ս. Ք.։

կռիվ եմ անում իմ կառավարչի հետ և ինքս էլ այս օրերս հինգ հարյուր ռուբլի պարտք եմ վերցրել Միուսովից։ Ոչ, ոչ, ես փող չունեմ։ Եվ գիտե՞ք, Դմիտրի Ֆյոդորովիչ, եթե նույնիսկ ունենայի, չէի տա ձեզ։ Նախ և առաջ, ես ոչ ոքի պարտք չեմ տալիս։ Պարտք տալ՝ նշանակում է գժտվել։ Բայց ձեզ, ձե՛ղ հատկապես չէի տա, ձեզ սիրելուց է, որ չէի տա, ձեզ փրկելո՛ւ համար չէի տա, որովհետև միայն մի բան է հարկավոր ձեզ՝ ոսկու հանքեր, հանքեր ու հանքեր...

— Օ՜, գրո՛ղը տանի... — մռնչաց հանկարծ Միտյան և բռունցքն ամբողջ ուժով խփեց սեղանին։

— Ա-ա՜յ,— ճչաց Խոխլակովան վախեցած և թռավ սենյակի մյուս ծայրը։

Միտյան թքեց ու արագ քայլերով դուրս եկավ սենյակից, տնից՝ փողոց, դեպի խավա՜ր։ Գնում էր խելագարի նման, խփելով իր կրծքին, կրծքի հենց այն տեղին, ուր խփել էր երեկու օր առաջ Ալյոշայի ներկայությամբ, երբ վերջին անգամ խոսում էր նրա հետ երեկոյան, ճանապարհի վրա, խավարի մեջ։ Թե ի՞նչ էր նշանակում այդ կուրծք ծեծելը, կրծքի այդ տեղին խփելը, և թե ինչ էր նա ուզում արտահայտել դրանով՝ առայժմ գաղտնիք էր, մի գաղտնիք, որ ոչ ոք չգիտեր աշխարհում, մի գաղտնիք, որ այն ժամանակ չէր հայտնել նույնիսկ Ալյոշային, բայց այդ գաղտնիքն իր մեջ թաքցնում էր մի բան, որ ավելի քան խայտառակություն էր նրա համար, թաքցնում էր կործանում և անձնասպանություն. այդպե՞ս էր որոշել նա, եթե չկարողանար ճարել երեք հազարը, որպեսզի վերադարձնի Կատերինա Իվանովնային և դրանով իսկ հանի իր կրծքից խայտառակությունը, որ կրում էր «կրծքի այդ տեղում», և որ այնպե՞ս ճնշում էր իր խղճի վրա։ Այս ամբողջը հետագայում լրիվ կպարզվի ընթերցողի համար, բայց հիմա, երբ արդեն վերջին հույսն էլ չքացել էր, ֆիզիկապես այնքան ուժեղ այդ մարդը, Խոխլակովայի տնից հազիվ մի քանի քայլ հեռանալուց հետո, հանկարծ սկսեց ազի արցունք թափել՝ փոքրիկ երեխայի նման։ Քայլում էր նա և, ինքնիրեն մոռացած, արցունքներն էր սրբում բռունցքով։ Այդպես նա հասավ հրապարակ և հանկարծ զգաց, որ ամբողջ մարմնով ընդհարվեց մի բանի։ Լավեց ճեղքան վայնասունը մի պառավ կնոջ, որին նա համարյա գետին էր տապալել։

— Վա՜յ ասված իմ, քիչ էր մնում սպանեի՞ր։ Ինչի՞ չես նայում առաջդ, թոկի՛ց փախած։

— Ի՞նչ, դո՞ւք եք,— գոչեց Միտյան, պառավին ճանաչելով խավարի մեջ։ Նա հենց այն պառավ սպասուհին էր, որ ծառայում էր Կուզմա Սամսոնովին, և որին հատկապես նկատել էր երեկ Միտյան։

— Իսկ դուք ինքնե՞րդ ով եք, հեր օրհնած,— ասաց պառավը բոլորովին ուրիշ ձայնով,— չեմ կարողանում ձեզ ճանաչել էս խավարում։

— Դուք ապրում եք Կուզմա Կուզմիչի մո՞տ, ծառայում եք նրա՞ն։

— Շատ ճիշտ եք, հեր օրհնած, հենց նոր գնացել էի Պրոխորիչի մոտ... Բայց էս ինչի՞ չեմ կարողանում ձեզ ճանաչել։

— Ասացե՛ք, մայրիկ, Ագրաֆենա Ալեքսանդրովնան ձեզ մո՞տ է հիմա,— հարցրեց Միտյան խելակորույս ակնկալությամբ։— Քիչ առաջ ինքս բերեցի նրան ձեզ մոտ։

— Մեզ մոտ էր, հեր օրհնած, եկավ, մի քիչ նստեց ու գնաց։

— Ի՞նչ։ Գնա՞ց,— գոչեց Միտյան։— Ե՞րբ գնաց։

— Այ հենց եկավ ու գնաց, հենց մի բոպե մնաց մեզ մոտ։ Մի հեքիաթ պատմեց Կուզմա Կուզմիչին, ծիծաղացրեց ու վազեց գնաց։

— Սո՛ւտ ես ասում, անիծյա՛լ պառավ,— մռնչաց Միտյան։

— Ա-ա՛յ,— ճչաց պառավը, բայց Միտյայի հետքն անգամ կորել էր։

Նա ամբողջ ուժով վազեց Մորոզովայի տունը։ Դա հենց այն ժամանակ էր, երբ Գրուշենկան արդեն ճամփա էր ընկել դեպի Մոկրոե, հազիվ քառորդ ժամ էր անցել նրա մեկնումից։ Ֆենյան խոհանոցում նստած էր իր տատիկի՝ խոհարարուհի Մատրյոնայի հետ, երբ հանկարծ ներս վազեց «կապիտանը»։ Ճանաչելով նրան, Ֆենյան ամբողջ ձայնով սկսեց ճչալ։

— Ծվո՞ւմ ես,— մռնչաց Միտյան։— Ո՞ւր է նա։

Բայց չիմանալով, որ գոնե մի բառ ասի սարսափահար Ֆենյան, հանկարծ ընկավ աղջկա ոտքերը.

— Ֆենյա, տերն մեր Հիսո՞ւս Քրիստոսի սիրուն, ասա՛, ո՞ւր է նա։

— Ոչինչ չգիտեմ, հոգուդ մատաղ, սիրելի Դմիտրի Ֆյոդորովիչ, ոչի՞նչ չգիտեմ, սպանեք էլ՝ ոչի՞նչ չգիտեմ,— երդումպատառ եղավ Ֆենյան,— մի երկու ժամ առաջ ինքներդ նրա հետ գնացիք...

— Ծ՛ա եկավ նա...

— Չի եկել, ջանիկս, երդվում եմ աստծո անունով, չի՛ եկել։

— Սո՛ւտ ես ասում,— գոռաց Միտյան,— հենց միայն քո վախենալուց դիտեմ, թե որտեղ է նա...

Միտյան դուրս նետվեց։ Ահաբեկված Ֆենյան ուրախ էր, որ գլուխն էժան ազատեց, բայց և շատ լավ հասկացավ, որ նա պարզապես ժամանակ չուներ, թե չէ՝ իր վիճակը կարող էր վատ լինել։ Բայց Միտյան, դուրս վազելիս, իր մի շատ անսպասելի արարքով զարմացրեց, թե՛ Ֆենյային, թե՛ պառավ Մատրյոնային։ Սեղանի վրա պղնձե մի սանդ կար, մեջն էլ մի սանդկոթ, պղնձե մի փոքր սանդկոթ՝ ընդամենը քառորդ կանգուն երկարությամբ։ Միտյան, դուրս վազելով ու արդեն մի ձեռքով բանալով դուռը, մյուս ձեռքով հանկարծ հափշտակեց սանդկոթը և կողքի գրպանը խոթեց, այդպես էլ հեռը տարավ։

— Ա՜խ աստված իմ, ուզում է ինչ-որ մեկին սպանե՞լ,— ձեռքերն իրար զարկեց Ֆենյան։

IV

ԹԱՎԱՌԻ ՄԵՋ

Ո՞ւր վազեց նա։ Պարզ է. «էլ ո՞ւր կարող է լինել Գրուշենկան, եթե ոչ Ֆյոդոր Պավլովիչի մոտ։ Սամսոնովի տնից ուղղակի վազել է նրա մոտ, հիմա արդեն պարզ է դա։ Բացահայտ է հիմա ամբողջ խարդավանքը, ամբողջ խաբեությունը...»։ Այս բոլորը մրրիկի նման պտտվում էին նրա գլխում։ Մարյա Կոնդրատենայի տունը չհանդիպեց. «Կարիք չկա այնտեղ գնալու, բոլորովին կարիք չկա... Թող ոչ մի իրարանցում չլինի... խնդրելու կտան ու կդավաճանեն... Մարյա Կոնդրատենան երևի դավադրության մեջ է, Սմերդյակովն էլ, Սմերդյակովն էլ, բոլորն էլ կաշառված են»։ Մի ուրիշ բան ծրագրվեց նրա մտքում. կրտրելով կողմնակի փողոցը և մի մեծ շրջան անելով, վազեվազ շրջանցեց Ֆյոդոր Պավլովիչի տունը, վազեց Դմիտրովսկայա փողոցն ի վար, վազելով անցավ փոքրիկ կամուրջը և ուղղակի մտավ հետնամասի այն ամայի ու անմարդաբնակ նրբանցքը, որ մի կողմից եզերված էր հարևան բանջարանոցի ճյուղորմով, իսկ մյուս կողմից՝ Ֆյոդոր Պավլովիչի այգին շրջապատող բարձր, ամուր ցանկապատով։ Այստեղ նա ընտրեց մի կետ, երևի

հենց այն կետը, որտեղից, ըստ Միտյային հայտնի ավանդության, Լիզավետա Սմերդյաշչայան մի ժամանակ անցել էր ցանկապատի վրայով։ «Էհ, եթե նա՝ կարողացել է անցնել,— չգիտես ինչու այդ միտքը ծագեց նրա գլխում,— ե՞ս ինչու չկարողանամ»։ Եվ իրոք, վեր ցատկեց ու վայրկենապես կարողացավ բռնել ցանկապատի ծայրից, հետո աշխուժորեն վեր ձգվեց, միանգամից բարձրացավ ու ձի հեծնելու նման նստեց ցանկապատի վրա։ Մոտը, այգու մեջ, բաղնիքն էր, բայց ցանկապատից երևում էին նաև տան լուսավոր պատուհանները։ «Ըհը՛, ճիշտ է, բիձուկի ննջարանում լույս կա, այնտե՛ղ է Գրուշենկան»։ Եվ նա ցանկապատից ցատկեց այգու մեջ։ Թեև գիտեր, որ Գրիգորին հիվանդ է, դուցե Սմերդյակովն էլ հիվանդ է խկապես և ուրեմն մարդ չի կարող լսել իրեն, բայց բնազդաբար թաքնվեց, անշարժացավ ու սկսեց ականջ դնել։ Սակայն մեռելային լռություն էր ամեն կողմ և, կարծես դիտմամբ, լիակատար հանդարտություն էր տիրում, քամու շունչն իսկ չկար։

«Լռությունն է լոկ շշնջում,— չգիտես ինչու այդ բանաստեղծական տողը նրա միտքը եկավ,— միայն թե մարդ լսած չլինի իմ ցատկելը։ Կարծես թե՝ չէ, ոչ ոք»։ Մի բոպե կանգնելուց հետո, կամացուկ առաջ գնաց այգու մեջ, խոտի վրայով շրջանցելով ծառերն ու թուփերը, քայլեց դանդաղորեն, երկար, յուրաքանչյուր քայլը գաղտագողի նետելով, ինքն իսկ ականջ դնելով իր ամեն մի քայլին։ Շուրջ հինգ բոպե տևեց, մինչև հասավ լուսավոր պատուհանի մոտ։ Հիշում էր, որ ուղղակի պատուհանի տակ թանթրվենու և փոնչնու մի քանի մեծ, բարձր, խիտ թփեր կային։ Դեպի այդի ելնող դուռը, որ տան ճակատի ձախ կողմն էր գտնվում, փակ էր հիմա, և նա անցնելու ժամանակ հատկապես ուշադրություն դարձրեց դրան։ Վերջապես հասավ նաև թփերի մոտ և թաքնվեց դրանց ետև։ Շունչը պահեց։ «Հիմա պետք է սպասեմ մի քիչ,— մտածեց նա։— Եթե լսել են իմ քայլերը և ականջ են դնում, պետք է փարատվի նրանց կասկածը... Միայն թե չհազամ, չփռշտամ...»։

Մոտ երկու բոպե սպասեց, բայց սիրտը սոսկալի բաբախում էր, և վայրկյաններ էին լինում, երբ շունչը կտրվում էր գրեթե։ «Չէ, չի անցնի այս սրտի խփոցը,— մտածեց նա,— չեմ կարող ավելի սպասել»։ Կանգնած էր թփի ետև, սովերում։ Թփի մյուս կեսի վրա ընկել էր պատուհանի լույսը։ «Այս փոնչնին, պատուհները, ինչ կարմի՞ր են»,— շշնջաց նա, չգիտեր ինչու։

Հատ-հատ, անլսելի քայլերով կամացուկ մոտեցավ պատուհանին ու վեր ձգվեց ոտքի մատների վրա։ Ֆյոդոր Պավլովիչի սմբոզջ ենջասենյակը բացվեց նրա աչքին։ Մի փոքր սենյակ էր դա, որ լայնակի երկու մասի էր բաժանված կարմիր, «չինական» վարագույրներով, ինչպես կոչում էր դրանք Ֆյոդոր Պավլովիչը։ «Չինական,— անցավ Միտյայի մտքով,— իսկ վարագույրի ետև՝ Գրուշենկան»։ Սկսեց դիտել Ֆյոդոր Պավլովիչին։ Նա հագել էր իր նոր, մետաքսե, շերտավոր տնազգեստը, որ դեռ երբեք չէր տեսել Միտյան, և մեջքին կապել էր նույնպես մետաքսե ծոպավոր մի երիզ։ Տնազգեստի օձիքի տակից երևում էր պճնամոլի մաքուր շապիկը, որ հոլանդական նուրբ կտորից էր և ոսկե կոճակներ ուներ։ Ֆյոդոր Պավլովիչի գլխին այն նույն կարմիր կապն էր, որ տեսել էր Ալյոշան։ «Հագվել-շքվել է»,— մտածեց Միտյան։ Ֆյոդոր Պավլովիչը կանգնած էր պատուհանի մոտ, երևի մտասուզված. հանկարծ նա գլուխը վեր առավ, մի թեթև ականջ դրեց և ոչինչ լսելով՝ մոտեցավ սեղանին, կես ըմպանակ կոնյակ լցրեց ջրամանից ու խմեց։ Հետո հառաչեց ամբողջ կրծքով, նորից կանգնեց մի բոպե, մտամոլոր մոտեցավ պատի հայելուն, աջ ձեռքով մի քիչ բարձրացրեց կարմիր կապը ճակատից և սկսեց դիտել կապտաթծերն ու ցավոտ սպիները, որոնք դեռ չէին անցել։ «Մենակ է,— մտածեց Միտյան,— ամենայն հավանականությամբ մենակ է»։ Ֆյոդոր Պավլովիչը հեռացավ հայելուց, հանկարծ դարձավ դեպի պատուհանը և դուրս նայեց։ Միտյան ակնթարթորեն ետ ցատկեց սովերի մեջ։

«Դուցե նրա մոտ է Գրուշենկան, վարագույրի ետև, գուցե արդեն քնել է»,— մի սուր ծակոց զգաց Միտյան իր սրտում։ Ֆյոդոր Պավլովիչը հեռացավ պատուհանից։ «Գրուշենկայի համար էր դուրս նայում պատուհանից, ուրեմն նա այստեղ չէ։ Ինչո՞ւ պետք է աչքերը տնկի խավարի մեջ... Ուրեմն անհամբերությունն է ուտում նրան»։ Միտյան իսկույն մոտ թռավ ու նորից սկսեց պատուհանից ներս նայել։ Սերունին արդեն նստել էր սեղանի առաջ, ըստ երևույթին ծանր թախիծ զգալով։ Վերջապես նա հենվեց արմունկին և աջ այտը ափին դրեց։ Միտյան ագահորեն դիտում էր։

«Մենա՛կ է, մենա՛կ,— պնդեց նորից ինքնիրեն։— Եթե Գրուշենկան այստեղ լիներ, նրա դեմքն ուրիշ արտահայտություն կունենար»։ Տարօրինակ բան, Միտյայի սրտում հանկարծ մի անիմաստ ու զարմանալի վրդովմունք բռնկվեց այն պատճա-

ռով, որ Գրուշենկան այստեղ չէ։ «Ոչ թե այն պատճառով, որ նա այստեղ չէ,— անմիջապես ըմբռնեց ու ինքն իրեն պատասխանեց Միտյան,— այլ որովհետև ոչ մի կերպ չեմ կարողանում հաստատ իմանալ՝ այստե՞ղ է, թե ոչ»։ Հետագայում Միտյան ինքն էր հիշում, որ այդ բոպեին իր միտքն արտակարգորեն հստակ էր և ամեն ինչ կշռադատում էր մինչև հետին մանրամասնությունը, ըմբռնում էր ամեն մի կետ։ Բայց նրա սրտում անասելի արագությամբ աճում էր տվայտանքը, անտեղյակության ու անվճռականության տվայտանքը։ «Այստե՞ղ է նա վերջապես, թե այստեղ չէ»,— բորբոքվեց նրա սիրտը զայրույթով։ Եվ հանկարծ որոշեց անելիքը. ձեռքը երկարեց ու մեղմ թխկացրեց պատուհանի շրջանակը։ Թխկացրեց այն պայմանական նշանը, որ ծերունին ասել էր Սմերդյակովին. առաջին երկու անգամը՝ դանդաղ, իսկ հետո երեք անգամ՝ ավելի արագ՝ թրք-թրք-թրք, որ նշանակում էր՝ «Գրուշենկան եկավ»։ Ծերունին ցնցվեց, գլուխն ընդոստ վեր առավ, արագորեն թռավ տեղից ու նետվեց դեպի պատուհանը։ Միտյան ետ ցատկեց ստվերի մեջ։ Ֆյոդոր Պավլովիչը բացեց պատուհանը և ամբողջ գլուխը դուրս հանեց։

— Գրուշենկա, դո՞ւ ես։ Դո՞ւ ես, հա՞,— ասաց նա մի տեսակ դողահար կիսաշշուկով։— Ո՞ւր ես, հոգյակս, հրեշտակս, ո՞ւր ես։— Սարսափելիորեն հուզված էր նա, շունչը կտրվում էր։

«Մենա՛կ է»,— վճռեց Միտյան։

— Բայց ո՞ւր ես,— գոռաց նորից ծերունին և ավելի ևս դուրս հանեց գլուխը, մինչև ուսերը դուրս հանեց ու նայեց բոլոր կողմերը, աջ ու ձախ։— Արի՛ այստեղ, մի փոքրիկ նվեր եմ պատրաստել քեզ համար, արի՛, ցույց տամ...

«Սրարած երեք հազար ռուբլու մասին է»,— անցավ Միտյայի մտքով։

— Բայց ո՞ւր ես, ո՞ւր... Հա՞, դուռն մո՞տ։ Հիմա կբացեմ...

Ու ծերունին համարյա դուրս կախվեց պատուհանից, նայելով դեպի աջ՝ այն կողմը, ուր այգու վրա բացվող դուռն էր, և չանալով տեսնել խավարի մեջ։ Հաջորդ վայրկյանին նա անպայման պետք է վազեր դուռը բանալու, առանց սպասելու Գրուշենկայի պատասխանին։ Միտյան նայում էր կողքից ու չէր շարժվում։ Ծերունու ամբողջ այդ պրոֆիլը, որից այնպես զզվում էր, նրա կախ ընկած ադամախնձորը, կեռ քիթը, հեշտագին սպասումով ժպտացող շրթունքները՝ այդ բոլորը վառ լուսավորված էին լամպի շեղ լույսով, որ ընկնում էր ձախից, սենյակի խորքից։ Միտյայի սրտում հանկարծ մի ահավոր, կատաղի ցասում ժայթքեց. «Ահա՛ նա, իմ մրցակիցը, ինձ տանջողը, իմ կյանքի հոգեա՛ռը»։ Դա ժայթքումն էր հենց այն անակնկալ, վրեժխնդիր ու կատաղի ցասման, որի մասին, կարծես նախազգալով, ասել էր նա Ալյոշային չորս օր առաջ, տաղավարում, երբ պատասխանել էր Ալյոշայի հարցին՝ «Ինչպե՞ս կարող ես ասել, թե կսպանես հայրիկին»։

«Չգիտե՛մ, չգիտե՛մ,— ասել էր նա այն ժամանակ։— Գուցե չսպանեմ, գուցե և սպանեմ։ Վախենում եմ, որ նա հանկարծ ատելի դառնա ինձ այդ նույն բոպեին՝ իր այդ դեմքո՛վ։ Ատո՛ւմ եմ նրա ադամախնձորը, նրա քիթը, նրա աչքերը, նրա անամոթ քմծիծաղը։ Անձնական զզվանք եմ զգում։ Դրանից եմ վախենում ահա։ Հանկարծ չկարողանամ զսպել ինձ...»։

Անձնական նողկանքն անտանելիորեն սաստկանում էր։ Միտյան արդեն կորցրեց իրեն և հանկարծ գրպանից դուրս քաշեց պղնձե սանդկոթը...

. . . . . .

Աստված հսկում էր ինձ այդ բոպեին,— ասաց Միտյան ինքը հետագայում։ Ճիշտ այդ պահին իր անկողնում զարթնեց Գրիգորի Վասիլևիչը, որ հիվանդ էր։ Նույն օրը, երեկոյան դեմ, նա ընդունել էր այն յուրահատուկ բուժումը, որի մասին Սմերդյակովը պատմում էր Իվան Ֆյոդորովիչին. այսինքն, կնոջ օգնությամբ, ամբողջ մարմինը շփել էր օղիով, որի մեջ գաղտնի ձևով պատրաստված մի շատ թունդ չրաթուրմ էին խառնել, հետո դրա մնացորդը խմել էր, մինչ կինը «մի որոշ աղոթք» էր շշնջում նրա գլխին, և պառկել էր քնելու։ Մարֆա Իգնատենան նույնպես ճաշակել էր այդ խառնուրդը և, խմիչքի անսովոր լինելով, մեռածի նման քնել էր ամուսնու կողքին։ Եվ ահա, բոլորովին անակնկալորեն, Գրիգորին հանկարծ զարթնեց գիշերը, մի բոպե մտածեց ու թեև իսկույն մի սուր ցավ զգաց նորից իր գոտկատեղում, բայց վերկացավ ու նստեց անկողնին։ Հետո նորից մտածեց մի քիչ, ոտքի ելավ ու շտապ հագնվեց։ Գուցե իրեն խայթ զգաց, որ ինքը քնում է և տունը առանց պահակի է մնացել «այսպիսի վտանգավոր մի ժամանակ»։ Ընկնավորության նոպայից ուժաթափված Սմերդյակովը մյուս սենյակում անշարժ պառկել էր։ Մարֆա Իգնատենան չերեցաց նույնիսկ։ «Թլֆել է կնիկը»,— մտածեց Գրիգորի Վասիլևիչը նրան նայելով, հետո տնքալով գնաց անդաստակ։ Իհարկե, նա ուզում էր պարզապես

մի այլ գրել անդաստակից, որովհետև ի վիճակի չէր քայլելու, գոտկատեղին և աջ ոտքը անտանելիորեն ցավում էին։ Բայց հանկարծ հիշեց, որ այդու դռնակը չէր կողպել երեկոյան։ Ջափաղանց ճշտապահ ու բծախնդիր մարդ էր նա, մի մարդ, որ հավատարիմ էր մի անգամ ընդմիշտ հաստատված կարգուկանոնին ու իր բազմամյա սովորություններին։ Կաղալով ու կծկվելով ցավից, իջավ բակ ու գնաց դեպի այգի։ Այո, դռնակը լրիվ բաց էր։ Մեքենաբար այգի մտավ։ Գուցե մի բա՞ն երևաց աչքին, կամ գուցե մի որևէ ձա՞յն լսեց, համենայն դեպս նայեց դեպի ձախ ու տիրոջ պատուհանը բաց տեսավ. արդեն դատարկ էր պատուհանը, ոչ ոք դուրս չէր նայում այնտեղից։ «Ինչո՞ւ բաց է, ամառ չէ հիմա»,— մտածեց Գրիգորին, և հանկարծ, հենց նույն վայրկյանին, ուղղակի իր դիմացը անսովոր մի բան երևաց այգու մեջ։ Իրենից քառասուն քայլ հեռու, խավարի մեջ, կարծես թե մի մարդ էր վազում, մի ստվեր շարժվում էր շատ արագորեն։ «Տե՞ր աստված»,— գոչեց Գրիգորին և, մոռանալով իրեն, մոռանալով գոտկատեղի ցավը, նետվեց առաջ՝ վազող մարդու առաջը կտրելու։ Նա ավելի կարճ ճամփա վերցրեց, երևի այլին ավելի լավ ծանոթ էր նրան, քան վազող մարդուն. իսկ այդ մարդը դեպի բաղնիք գնաց, վազեց բաղնիքի ետև, նետվեց դեպի ցանկապատը... Գրիգորին հետևում էր նրան, բաց չթողնելով աչքից, և վազում էր խելակորույս։ Ցանկապատի մոտ հասավ ճիշտ այն բոպեին, երբ փախստականն արդեն մագլցում էր վերև։ Գրիգորին խելահեղորեն գոռաց, խոյացավ ու երկու ձեռքով փաթաթվեց նրա ոտքին։

Այո, նախազգացումը չէր խաբել նրան. ճանաչեց փախչողին. նա՛ էր, «հայրասպան ճիվա՞ղը»։

— Հայրասպա՞ն,— գոռաց ծերունին, և ձայնը տարածվեց ամբողջ շրջակայքում։ Բայց միայն այդ բառը հասցրեց գոռալ. հանկարծ նա շանթահար գետին ընկավ։

Միտյան նա ցատկեց այգու մեջ և հակվեց տապալված ծերունու վրա։ Գնձն սանդկոթը բռնել էր ձեռքին և մեքենաբար նետեց խոտի մեջ։ Սանդկոթն ընկավ Գրիգորիից երկու քայլ հեռու, բայց ոչ թե խոտի մեջ, այլ արահետի վրա՝ ամենից ավելի ակնառու մի տեղ։ Մի ցանի վայրկյան զննեց իր առաջ պառկած մարմինը։ Ծերունու գլուխն ամբողջովին արյունոտվել էր։ Միտյան ձեռքը երկարեց ու սկսեց շոշափել։ Հետագայում նա պարզ հիշեց, որ այդ բոպեին սոսկալի ուզում էր «լիովին համոզվել»,

ջարդե՞լ է արդյոք ծերունու գանգը, թե «շշմեցրել է» նրան, սանդկոթով հարվածելով գագաթին։ Բայց արյունը հոսում էր, հոսում սարսափելիորեն, և Միտյայի դողահար մատները վայրկենապես ոզողվեցին տաք շիթերով։ Հիշում էր, որ գրպանից հանեց իր նոր, սպիտակ թաշկինակը, որ հետը վերցրել էր Խոխլակովայի մոտ գնալուց առաջ, և դրեց ծերունու գլխին, անիմաստորեն ջանալով սրբել արյունը նրա ճակատից ու դեմքից։ Բայց թաշկինակն էլ վայրկենապես թրջվեց արյունով։ «Բայց ինչո՞ւ եմ անում այս բանը, տե՞ր աստված,— սթափվեց հանկարծ Միտյան,— եթե իրոք ջարդել եմ, ինչպե՞ս կարող եմ իմանալ այս բոպեին... Եվ էլ ի՞նչ օգուտ հիմա,— ավելացրեց նա հանկարծ անհուսորեն,— եթե սպանել եմ, ուրեմն սպանել եմ... Փորձանքի ընկար, բիձուկ, դե այսպես էլ մնա՛»,— ասաց նա բարձրաձայն և հանկարծ նետվեց դեպի ցանկապատը, մագլցեց ու ցատկեց նրբանցքը և սկսեց փախչել։ Արյունաթաթախ թաշկինակը, որ ճմռթել էր աջ բռունցքի մեջ, վազելու ժամանակ խոթեց սերթուկի ետևի գրպանը։ Վազում էր գլխապատառ, և մի քանի հազվադեպ անցորդներ, որ պատահեցին նրան խավարի մեջ, քաղաքի փողոցներում, հետագայում հիշեցին, թե ինչպես այդ գիշեր հանդիպել էին կատաղորեն վազող մի մարդու։ Նա նորից սլացավ Մորոզովայի տունը։ Մի ժամ առաջ Ցենյան, Միտյայի գնալուց անմիջապես հետո, վազել էր ավագ դռնապան Նազար Իվանովիչի մոտ և «ի սեր Քրիստոսի» սկսել էր աղաչել, որ նա «այլևս կապիտանին ներս չթողնի ո՛չ այսօր, ո՛չ էլ վաղը»։ Նազար Իվանովիչը լսեց ու համաձայն եղավ, բայց դժբախտաբար թողեց ու բարձրացավ տանտիրուհու մոտ, որ անակնկալորեն կանչել էր նրան, և ճանապարհին հանդիպելով իր զարմիկին՝ վերջերս գյուղից եկած քսանամյա մի տղայի, պատվիրեց, որ նա իր տեղը կանգնի բակում, սակայն մոռացավ պատվիրել կապիտանի մասին։ Միտյան վազելով հասավ մինչև դարպասը և ուժեղ թակեց։ Տղան իսկույն ճանաչեց նրան. Միտյան արդեն մի քանի անգամ նրան մանր փող էր նվիրել։ Նա անմիջապես բացեց դռնակը, ներս թողեց Միտյային և, ուրախ ու սիրալիր ժպտալով, շտապեց հայտնել, որ «ախր Ագրաֆենա Ալեքսանդրովնան տանը չէ հիմա»։

— Իսկ ո՞ւր է նա, Գրոխոր,— հանկարծ կանգ առավ Միտյան։

— Մի երկու ժամ առաջ գնաց Մոկրոե, Տիմոֆեյի հետ։

— Ինչո՞ւ,— գոռաց Միտյան։

— Էդ մեկը չդիտեմ, ինչ-որ սպայի մոտ գնաց, էնտեղից կանչել էին, ձիեր էին ուղարկել...

Միտյան թողեց նրան ու խելագարի նման վազեց Ֆենյայի մոտ։

V

ԱՆԱԿՆԿԱԼ ՈՐՈՇՈՒՄ

Ֆենյան իր տատիկի հետ նստել էր խոհանոցում, երկուսն էլ պատրաստվում էին քնելու։ Հույս դնելով Նազար Իվանովիչի վրա, նրանք այնպես էլ չէին կողպել դուռը ներսից։ Միտյան ներս խուժեց, խոյացավ Ֆենյայի վրա և ամուր բռնեց նրա կոկորդից։

— Հենց իսկույն ասա՛, որտե՞ղ է նա, ո՞ւմ հետ է հիմա Մոկրոեում,— մռնչաց նա մոլեգնած։

Կանայք երկուսն էլ ճչացին։

— Ա՜յ, կասեմ, ա՜յ, Դմիտրի Ֆյոդորովիչ, ջանիկս, ամեն ինչ կասեմ իսկույն, ոչինչ չեմ թաքցնի,— արագ-արագ ճվճվաց Ֆենյան, որ մահու շափ վախեցել էր։— Մոկրոե գնաց, սպայի մոտ։

— Ի՞նչ սպա,— մռնչաց Միտյան։

— Էն նախկին սպան, էն նույնը, էն իր նախկինը, որ հինգ տարի առաջ, էն որ թողել գնացել է,— բլբլաց Ֆենյան նույն շուտասելուկի արագությամբ։

Դմիտրի Ֆյոդորովիչը ետ քաշեց ձեռքերը, որոնցով նրա կոկորդն էր սեղմում։ Աղջկա դիմաց կանգնել էր մեռելի նման գունատ ու անձայն, բայց աչքերից երևում էր, որ ամեն ինչ հասկացել էր մեկեն, առաջին իսկ բառից հասկացել էր ամեն ինչ, ամե՛ն ինչ կետ առ կետ, կռահել էր ամբողջ իրավիճակը։ Խեղճ Ֆենյան այդ վայրկյանին անշուշտ չէր կարող նկատել՝ հասկացե՞լ է նա, թե ոչ։ Ինչպես որ նստել էր սեղանի վրա Միտյայի ներս վազելու րոպեին, այնպես էլ մնում էր հիմա, ոտից գլուխ դողալով, և այդ դիրքում քարացել էր՝ ձեռքերն առաջ պարզած, կարծես պաշտպանվելու համար։ Վախից լայնացած, սոսկումնալից բիբերն անշարժ սևեռել էր Միտյային։ Մանավանդ որ՝ Միտյայի երկու ձեռքերն էլ արյունոտ էին։ Ճանապարհին, վազելու ժամանակ, նա երևի ձեռքերը ճակատին էր

տարել՝ քրտինքը սրբելով երեսից, այնպես որ թե՛ ճակատի, թե՛ աջ այտի վրա քսմսված արյան կարմիր բծեր կային։ Քիչ էր մնում, որ Ֆենյան հիստերիկ նոպայի մեջ ընկներ, իսկ պառավ խոհարարուհին տեղից վեր էր թռել ու նայում էր խելագարի նման, համարյա գիտակցությունը կորցրած։ Դմիտրի Ֆյոդորովիչը մի բոպե կանգնած մնաց ու հանկարծ մեքենաբար փուլ եկավ աթոռի վրա, Ֆենյայի մոտ։

Նստել էր նա և ոչ թե մտածում էր, այլ ահաբեկվել էր կարծես, անզգայացել էր մի տեսակ։ Բայց ամեն ինչ պարզ էր լույսի պես. այդ սպան... գիտե՞ր այդ սպայի մասին, շատ լավ գիտեր ամեն ինչ, գիտեր հենց Գրուշենկայից, գիտեր, որ մի ամիս առաջ նամակ էր ուղարկել նա։ Ուրեմն մի ամիս, ամբողջ մի ամիս այդ բանը կատարվում էր իրենից գաղտնի, խորապես գաղտնի, մինչև որ ահա այսօր եկել էր այդ նոր մարդը, իսկ ինքը չէ՞ր էլ մտածում նրա մասին։ Բայց ինչպե՞ս կարող էր, ինչպե՞ս կարող էր չմտածել նրա մասին։ Ինչո՞ւ այն ժամանակ հենց այնպես էլ մոռացավ այդ սպայի գոյությունը, մոռացավ հենց իմանալուց անմիջապես հետո։ Ահա այն հարցը, որ մի տեսակ հրեշի նման կանգնել էր նրա առաջ։ Եվ նա այդ հրեշին նայում էր իսկապես ահաբեկված, ահից սառելով։

Բայց նա հանկարծ սկսեց մեղմ ու հեզահամբույր խոսել Ֆենյայի հետ, հանգիստ ու սիրալիր երեխայի նման, կարծես բոլորովին մոռանալով, որ դեռ մի բոպե առաջ այնպես վախեցրել էր նրան, վիրավորել ու տանջել։ Սկսեց Ֆենյային հարցուփորձ անել արտակարգ ճշգրտությամբ, որ նույնիսկ զարմանալի էր նրա դրության մեջ։ Իսկ Ֆենյան թեև վայրի հայացքով նայում էր նրա արյունոտ ձեռքերին, բայց նույնպես զարմանալի պատրաստակամությամբ ու աճապարանքով սկսեց պատասխանել նրա յուրաքանչյուր հարցին, կարծես նույնիսկ շտապելով հայտնել ամբողջ ճշմարտությունը, «ճիշտ ու ճիշտ ճշմարտությունը»։ Կամաց կամաց նույնիսկ մի տեսակ ուրախությամբ սկսեց պատմել բոլոր մանրամասնությունները, և ոչ թե ուղիղով տանջել նրան, այլ կարծես ջանալով ի սրտե ծառայություն մատուցել, որքան որ կարող էր։ Ամենահետին մանրամասնություններով պատմեց նաև ամբողջ այդ օրվա մասին, նկարագրեց Ռակիտինի և Ալյոշայի այցելությունը, և թե ինչպես ինքը, Ֆենյան, պահակ էր կանգնել, ինչպես տիրուհին մեկնեց, ինչպես լուսամուտից գոռաց Ալյոշային, որ իր ողջույնը հաղորդի նրան,

այսինքն Միտյային, և որ Միտյան «հավիտենապես հիշի, թե ինչպես ինքը մի ժամ սիրել է նրան»։ Լսելով ողջույնի մասին, Միտյան հանկարծ ժպտաց, և նրա գունատ այտերը վառվեցին։ Նույն րոպեին Ֆենյան ասաց նրան, այլևս մաղալափ անգամ չվախենալով իր ցուցաբերած հետաքրքրության համար։

— Բայց էդ ի՞նչ են եղել ձեր ձեռքերը, Դմիտրի Ֆյոդորովիչ, ամբողջ արյո՞ւն է։

— Այո,— պատասխանեց մեքենաբար Միտյան, մտամոլոր նայեց իր ձեռքերին և իսկույն մոռացավ իր ձեռքերն էլ, Ֆենյայի հարցն էլ։ Նորից խորասուզվեց լռության մեջ։ Ներս վազելուց հետո արդեն քսան րոպե էր անցել։ Քիչ առաջվա նրա վախը չքացել էր, բայց երևի մի նոր, անդրդվելի վճռականություն էր արդեն տիրել նրա հոգուն։ Նա հանկարծ վեր կացավ ու մտախոհ ժպտաց։

— Տեր իմ, էդ ի՞նչ է պատահել ձեզ,— ասաց Ֆենյան, նորից ցույց տալով նրա ձեռքերը։ Աղջիկը կարեկցանքով ասաց այդ բանը, կարծես հիմա ինքը ամենավշտակից էակն էր նրա համար։

Միտյան նորից նայեց իր ձեռքերին։

— Արյուն է, Ֆենյա,— ասաց նա, տարօրինակ մի արտահայտությամբ նայելով աղջկան,— մարդկային արյուն է և, աստվա՞ծ իմ, ինչո՞ւ թափվեց այս արյունը։ Բայց... Ֆենյա... մի ցանկապատ կա այստեղ (Միտյան նայում էր նրան, կարծես հանելուկ առաջարկելով), մի բարձր ցանկապատ, և սարսափելի՞ է դրա տեսքը, բայց... վաղը, արշալույսին, երբ «վեր սլանա արեգակը», Միտենկան կցատկի այդ ցանկապատի վրայից... Չես հասկանում, Ֆենյա, թե ինչ ցանկապատ է, բայց դե ոչինչ... միևնույն է, վաղը կլսես և ամեն ինչ կհասկանաս... իսկ հիմա մնա՞ս բարով։ Չեմ խանգարի նրան, մի կողմ կքաշվեմ, գիտե՞մ մի կողմ քաշվելու ձևը։ Ապրի՞ր, իմ ուրախություն... գու ինձ մե՞կ ժամ սիրեցիր, այդպես էլ հիշի՞ր հավիտյան Միտենկա Կարամազովին... Նա միշտ էլ ինձ Միտենկա էր ասում, հիշո՞ւմ ես։

Եվ այս խոսքերն ասելով նա հանկարծ դուրս ելավ խոհանոցից։ Իսկ Ֆենյան նրա այդպես գնալուց համարյա ավելի ևս վախեցավ, քան քիչ առաջ, երբ նա ներս էր վազել ու խոյացել իր վրա։

Ուղիղ տասը րոպե հետո Դմիտրի Ֆյոդորովիչը մտավ Պյոտր Իլյիչ Պերխոտինի տունը, այն երիտասարդ պաշտոնյայի, որի մոտ մի քանի ժամ առաջ գրավ էր դրել իր ատրճանակները։ Ժամը ութ անց կես էր արդեն, և Պյոտր Իլյիչը, տանը թեյ խմելուց հետո, հենց քիչ առաջ սերթուկն էր հագել նորից, որպեսզի գնա «Մայր քաղաք» գինետունը՝ բիլիարդ խաղալու։ Միտյան վրա հասավ այն րոպեին, երբ նա դուրս էր գալիս։ Պյոտր Իլյիչը, տեսնելով նրան և արյան բծերը նրա դեմքին, ուղղակի քացականչեց.

— Տե՞ր աստված։ Ի՞նչ է պատահել ձեզ։

— Գիտե՞ք ինչ,— ասաց Միտյան արագ-արագ,— եկա իմ ատրճանակները վերցնելու, փող բերեցի ձեզ։ Շնորհակալությամբ։ Շտապում եմ, Պյոտր Իլյիչ, խնդրում եմ՝ շո՛ւտ։

Պյոտր Իլյիչն ավելի ու ավելի էր զարմանում։ Միտյայի ձեռքին ահագին փող տեսավ հանկարծ, և մանավանդ նկատեց, որ նա այդ փողը ձեռքում բռնել ու ներս էր մտել այնպես, ինչպես ոչ ոք չի մտնում որևէ տեղ՝ փողն այդ ձևով բռնած. բանկտոմսերի ամբողջ կապոցը բռնել էր աջ ձեռքում և ձեռքն ուղղակի մեկնել էր առաջ՝ կարծես փողը ցուցադրելու համար։ Պյոտր Իլյիչին ծառայող մանչը, որ միշանցքում դիմավորել էր Միտյային, հետագայում պատմում էր, որ նա փողը հենց այդ ձևով բռնած միշանցք էր մտել փողոցից, ուրեմն և փողոցում էլ ճիշտ նույն ձևով էր բռնել՝ աջ ձեռքն առաջ մեկնած։ Թղթադրամները բոլորն էլ հարյուրանոց էին, վարդագույն, և նա արյունոտ մատներով էր բռնել դրանք։ Հետագայում, երբ հետաքրքրվող անձինք հարց տվեցին, թե որքա՞ն էր այդ փողը, Պյոտր Իլյիչը հայտարարեց, որ այն ժամանակ դժվար էր աչքի չափով գուշակել, գուցե երկու հազար էր, գուցե երեք հազար, բայց մի մեծ, «բավական հաստ» կապոց էր։ Պյոտր Իլյիչը հետագայում վկայեց նաև, որ Դմիտրի Ֆյոդորովիչը «կարծես բոլորովին կորցրել էր գլուխը, բայց հարբած չէր, այլ մի տեսակ հափշտակության մեջ էր թվում, շատ մտացիր էր, բայց և միաժամանակ ասես կենտրոնացած, կարծես թե մի բանի մասին էր մտածում, մի բան էր ուզում և չէր կարողանում որոշման հանգել։ Շատ էր շտապում, կտրուկ ու խիստ տարօրինակ պատասխաններ էր տալիս, իսկ լինում էին վայրկյաններ, երբ կարծես բոլորովին վշտահար չէր թվում, այլ նույնիսկ ուրախ»։

— Բայց ի՞նչ է պատահել ձեզ, ի՞նչ է պատահել ձե՛զ,—

գոռաց Պյոտր Իլյիչը, վայրի հայացքով նայելով իր հյուրին։— Ինչպե՞ս է, որ արյունոտվել եք ոտից գլուխ, ընկե՞լ եք, ինչ է, նայեցե՞ք։

Նա բռնեց Միտյայի արմունկից ու մոտեցրեց հայելուն։ Միտյան, տեսնելով իր արյունոտ դեմքը, ցնցվեց ու մոայլվեց զայրալից։

— Է՛, գրո՛ղը տանի։ Ա՛յս էր պակաս,— մրթմրթաց նա բարկացած, թղթադրամների կապոցն աջ ձեռքից արագորեն առավ ձախ ձեռքը և ջղաձիգ մի շարժումով թաշկինակը հանեց գրպանից։ Բայց պարզվեց, որ թաշկինակն էլ ամբողջովին արյունաթաթախ էր (հենց այդ թաշկինակով սրբել էր Գրիգորիի գլուխն ու դեմքը)։ Համարյա ոչ մի սպիտակ տեղ չէր մնացել թաշկինակի վրա, և ոչ թե պարզապես սկսել էր շորանալ, այլ մի տեսակ գնդաձև քարացել էր ու չէր ուզում բացվել։ Միտյան զայրույթով այն շպրտեց հատակին։

— Է՛, գրո՛ղը տանի։ Մի լաթի կտոր չունե՞ք... գոնե սրբվեի...

— Ուրեմն պարզապես քսմսվե՞լ է արյունը, չե՞ք վիրավորվել։ Դե ուրեմն ավելի լավ է լվացվեք,— պատասխանեց Պյոտր Իլյիչը։— Ահա լվացամանը, ջուրը ես կթափեմ։

— Լվացամա՞ն։ Լավ է... միայն թե ո՞ւր դնեմ այս բանը,— արդեն բոլորովին տարօրինակ մի վարանումով ցույց տվեց հարյուրանոցների կապոցը Պյոտր Իլյիչին, հարցական նայելով նրան, կարծես նա՛ պետք է որոշեր, թե ինքը ուր դնի իր սեփական փողերը։

— Դրեք ձեր գրպանը, կամ էլ ա՛յ այստեղ դրեք, սեղանի վրա, չի կորչի։

— Գրպա՞նս։ Հա՛, այո, գրպանս։ Լավ է... Չէ, գիտե՞ք ինչ, հիմարությո՛ւն է այս ամբողջը,— գոռաց նա, կարծես հանկարծ սթափվելով իր ցրված վիճակից։— Լսեցեք, նախ այդ գործը վերջացնենք, ատրճանակների հարցը. ետ տվեք ինձ, և ահա՛ ձեր փողը... որովհետև ինձ շատ, շատ պետք են դրանք... և ոչ մի բոպե, ոչ մի բոպե, ոչ մի բոպե ժամանակ չունեմ...

Եվ կապոցից հանելով վերևի հարյուրանոցը՝ երկարեց Պյոտր Իլյիչին։

— Բայց ես չեմ էլ կարողանա մանրել,— նկատեց պաշտոնյան,— ավելի մանր դրամ չունե՞ք։

— Չէ,— ասաց Միտյան, նորից նայելով կապոցին, և կարծես իր ասածի վրա վստահ չլինելով՝ երկու-երեք թղթադրամ թերթեց վերևից,— չէ, բոլորն էլ նույնն են,— ավելացրեց նա և նորից հարցական նայեց Պյոտր Իլյիչին։

— Բայց որտեղի՞ց եք այսպես հարստացել,— հարցրեց Պյոտր Իլյիչը։— Սպասեցեք, ես իմ մանչին կուղարկեմ Պլոտնիկովների մոտ։ Նրանք ուշ են փակում, վազելով կհասնի։ Գուցե թե մանրեն։ Հե՛յ, Մի՛շա,— գոռաց նա դեպի միջանցքը։

— Պլոտնիկովների խանո՞ւթը. հոյակա՛պ,— գոռաց նաև Միտյան, կարծես մի նոր միտք էր ծագել նրա գլխում։— Մի՛շա,— դարձավ նա ներս մտած մանչին,— գիտե՞ս ինչ, վազի՛ր Պլոտնիկովների խանութը և ասա, որ Դմիտրի Ֆյոդորովիչը բարևում է և ինքն էլ հենց իսկույն կգա... Բայց լսի՛ր, լսի՛ր. ասա՝ մինչև իմ գալը շամպայն պատրաստեն, մի երեսուն-քառասուն շիշ, և դարսեն այն օրվա պես, որ Մոկրոե գնացի... Այդ օրը մոտ հիսուն շիշ վերցրի նրանցից,— հանկարծ դիմեց Պյոտր Իլյիչին,— նրանք գիտեն արդեն, մի՛ անհանգստանա, Միշա,— նորից տղային դարձավ։— Եվ լսի՛ր. պանիր էլ թող դնեն, ստրասբուրգյան կարկանդակ, ապխտած սիգ, խոզապուխտ, խավյար, դե ամեն ինչ, ամե՛ն ինչ, որ ունեն, մի հարյուր կամ հարյուր քսան ռուբլու, ինչպես այն օրը... Եվ լսի՛ր. անուշեղենն ու միրգն էլ չմոռանան՝ կոնֆետ, տանձ, երկու կամ երեք հատ ձմերուկ, կամ էլ չո՛րս հատ... չէ, չէ, մի ձմերուկը բավական է, բայց շոկոլադ, մոնպանսիե, տեսակ-տեսակ շաքարներ, դե մի խոսքով՝ ամե՛ն ինչ, որ այդ օրը ինձ հետ տարա Մոկրոե, մի երեք հարյուր ռուբլու բան թող լինի շամպայնի հետ... Դե այ ուրեմն, հիմա էլ ճի՛շտ այդ օրվա պես լինի։ Բայց հիշիր, Միշա, եթե անունդ Միշա է... Անունը հո Միշա է, չէ՞,— նորից դարձավ նա Պյոտր Իլյիչին։

— Բայց սպասեցեք մի բոպե,— ընդհատեց Պյոտր Իլյիչը, անհանգստությամբ լսելով ու դիտելով նրան,— ավելի լավ է ինքներդ գնաք և ասեք այդ բոլորը, իսկ նա ամեն ինչ կխառնի իրար։

— Կխառնի՞, տեսնում եմ, որ կխառնի։ Է՛խ, Միշա, ես էլ ուզում էի քեզ համբուրել այս հանձնարարության համար... Եթե չխառնես՝ տասը ռուբլի քեզ, դե թո՛ր շուտով... Շամպայնը, շամպա՛յնն է գլխավորը, թող դարսե՛ն, և կոնյակն էլ, կարմիր գինի, սպիտակ գինի, ամե՛ն ինչ այդ օրվա պես... Նրանք գիտեն, թե ինչպես էր այդ օրը։

— Բայց լսեցե՛ք ախր,— ընդհատեց Պյոտր Իլյիչն արդեն անհամբեր։— Ասում եմ ձեզ՝ նա թող պարզապես վազի փողը մանրելու և ասի, որ խանութը չփակեն, իսկ դուք կգնաք և ինքներդ կպատվիրեք... Տվեք ձեր հարյուրանոցը։ Մա՛րշ, Միշա, գնալդ ու գալդ մեկ լինի։— Պյոտր Իլյիչը կարծես դիտմամբ շտապեց դուրս անել Միշային, որովհետև տղան կանգնած մնում էր հյուրի առաջ, լայն բացված աչքերը հառել էր նրա արյունոտ դեմքին, արյունոտ ձեռքերին, նրա դողացող մատների մեջ այդ փողի կապոցին, զարմանքից ու վախից բերանը բաց արած, և ըստ երևույթին քիչ բան հասկանալով Միտյայի բոլոր այդ պատվերներից։

— Դե հիմա եկեք լվացվելու,— խստագույն ասաց Պյոտր Իլյիչը։— Փողերը դրեք սեղանի վրա կամ էլ ձեր գրպանը... Այ այդպես, դե եկեք։ Բայց հանեցեք սերթուկը։

Նա սկսեց Միտյային օգնել սերթուկը հանելու և հանկարծ նորից գոչեց.

— Տեսե՛ք, ձեր սերթուկն էլ արյունոտ է։

— Չէ... սերթուկը չէ։ Միայն մի քիչ այստեղ՝ թևքի վրա... Իսկ սա էլ այստեղ միայն, թաշկինակի տեղը։ Գրպանից է դուրս մղվել։ Հենց թաշկինակի վրա էի նստել Ֆենյայի մոտ, և արյունն էլ հենց քամվել է,— իսկույն բացատրեց Միտյան՝ մի տեսակ զարմանալի դյուրավստահությամբ։ Պյոտր Իլյիչը լսեց խոժոռվելով։

— Ի՞նչ է փչել ձեր խելքին. երևի կռվել եք մեկի հետ,— մրթմրթաց նա։

Միտյան սկսեց լվացվել։ Պյոտր Իլյիչը բռնել էր կուժը և շուր էր թափում։ Միտյան շտապում էր և լավ չօճառեց ձեռքերը։ (Նրա ձեռքերը դողում էին, ինչպես Պյոտր Իլյիչը հիշեց հետագայում)։ Պյոտր Իլյիչն անմիջապես պարտադրեց ավելի շատ օճառել և ավելի լավ շփել ձեռքերը։ Այդ րոպեին նա կարծես մի տեսակ գերիշխում էր Միտյայի վրա, և հետզհետե ավելի ու ավելի էր շեշտվում այդ։ Ի դեպ նշենք, որ այս երիտասարդը հանդուգն բնավորության տեր մարդ էր։

— Տեսեք, լավ չմաքրեցիք եղունգները։ Դե հիմա ձեր երեսը շփեցեք, այ այստեղ՝ քունքերը, ականջի մոտ... Այս շապիկով էլ գնալո՞ւ եք։ Իսկ ո՞ւր եք գնում։ Տեսեք, աչ թևքի ծայրը ամբողջովին արյունոտ է։

— Այո, արյունոտ է,— նկատեց Միտյան, դիտելով շապկի թևածալը։

— Դե ուրեմն փոխեցեք շապիկը։

— Ժամանակ չունեմ։ Բայց ահա այսպես, այսպես, տեսնո՞ւմ եք... — նույն դյուրավստահությամբ շարունակեց Միտյան, երեսն ու ձեռքերը սրբելով և հագնելով սերթուկը,— ահա այստեղ կծալեմ թևքի ծայրը, և չի երևա սերթուկի տակ... Տեսնո՞ւմ եք։

— Ասացեք հիմա, որտե՞ղ եք այս փորձանքի մեջ ընկել։ Ինչ է, կռվե՞լ եք որևէ մեկի հետ։ Գինետա՞նը նորից, ինչպես այն օրը։ Չլինի՞ նորից կապիտանին կպաք, ծեծեցիք ու քաշ տվեցիք նրան,— հիշեց Պյոտր Իլյիչը, կարծես հանդիմանելով։— Էլ ուրիշ ո՞ւմ ծեծեցիք... կամ դուցե սպանեցիք, հա՞։

— Հիմարությո՛ւն,— ասաց Միտյան։

— Ինչպե՞ս թե հիմարություն։

— Կարիք չկա,— ասաց Միտյան և հանկարծ ժպտաց։— Մի պառավ կին էր, քիչ առաջ ոտի տակ տվեցի հրապարակում։

— Ոտի տակ տվեցի՞ք։ Պառավ կի՞ն։

— Պառավ մա՛րդ,— գոռաց Միտյան, նայելով ուղղակի Պյոտր Իլյիչի դեմքին, ծիծաղելով և այնպես գոռալով, որ կարծես դիմացինը խուլ լիներ։

— Է՛, գրո՛ղը տանի, պառավ կին, պառավ մարդ... Ինչ է, սպանե՞լ եք որևէ մեկին։

— Հաշտվեցինք։ Կպանք իրար... և հաշտվեցինք։ Մի տեղ։ Մտերմորեն բաժանվեցինք։ Հիմարի մեկն էր... Ներեց ինձ... հիմա արդեն վստահ եմ, որ ներեց... Եթե վեր կենար, չէ՞ր ներ,— աչքով արեց հանկարծ Միտյան,— միայն թե, գիտե՞ք ինչ, գրողի ծո՞ցը նրան, լսո՞ւմ եք, Պյոտր Իլյիչ, գրողի ծո՞ցը, կարիք չկա՛։ Այս րոպեիս չե՞մ ուզում,— վճռականորեն կարճ կտրեց Միտյան։

— Իմ ասածը պարզապես այն է, որ ի՞նչ գործ ունեք՝ կրպնում եք սրա-նրա հետ... Ինչպես այն օրը այդ փոխկապիտանի հետ՝ դատարկ բանի համար... Կռվել եք և հիմա վազում եք քեֆ անելու։ Ահա՛ ձեր ամբողջ բնավորությունը։ Քառասո՞ւն շիշ շամպայն... ո՞ւր եք տանում այդքանը։

— Բռա՞վո։ Հիմա տվե՛ք ատրճանակը։ Աստված վկա, ժամանակ չունեմ։ Այո՛, կուզեի քեզ հետ խոսել, սիրելիս, բայց ժամանակ չկա։ Եվ կարիք էլ չկա բոլորովին, ուշ է խոսելը։ Հա՛,

ո՞ւր է փողը, ո՞ւր դրեցի,— գոչեց նա և սկսեց ձեռքերը խոթել գրպանները։

— Սեղանի վրա դրեցիք... ինքներդ... այ այնտեղ էլ մնում է։ Մոռացա՞ք։ Իսկապես որ փողը ձեզ համար աղբ կամ ջուր լինի։ Ահա ձեր ատրճանակը։ Տարօրինակ է, ժամը վեցին եկավ ու տասը ռուբլով գրավի դրեց, իսկ հիմա ա՛յ քեզ բան, հազարներ ունեք։ Երկո՞ւ հազար ասենք, թե երեք։

— Երեք ասա,— ծիծաղեց Միտյան, փողը ճխտելով տաբատի գրպանը։

— Կկորցնեք այդպես։ Ոսկու հանքե՞ր ունեք, ինչ է։

— Հանքե՞ր։ Ոսկու հանքե՞ր,— ամբողջ ուժով գոռաց Միտյան և սկսեց քրքջալ— Ուզո՞ւմ եք ոսկու հանքերը գնալ, Պերխոտին։ Այստեղ մի տիկին կա, հենց իսկույն երեք հազարը կթափի ձեր առաջ, միայն թե գնաք։ Իմ առաջ թափե՞ց, այնքան է սիրում նա հանքերը։ Խոխլակովային ճանաչո՞ւմ եք։

— Սանոթ չեմ, բայց լսել ու տեսել եմ։ Ինչ է, իսկապես նա՞ տվեց ձեզ երեք հազարը։ Հենց այնպես թափե՞ց ձեր առաջ,— տարակուսանքով նայեց նրան Պյոտր Իլյիչը։

— Է՛հ, վաղն առավոտ, հենց որ վեր սլանա արեգակը, թեվերը բացի ու թռչի՝ հավետ երիտասարդ Ֆեբուսը, գովաբանելով ու փառաբանելով աստծուն, վաղն առավոտ գնացեք նրա մոտ, այդ Խոխլակովայի մոտ, և ինքներդ հարցրեք՝ թափե՞ց իմ առաջ երեք հազարը, թե չէ։ Դե՛հ, ստուգեցեք։

— Ես չգիտեմ ձեր հարաբերությունները... Եթե այսքան հաստատ եք ասում, ուրեմն տվել է... Բայց փողը ձեռք եք գցել, և փոխանակ Սիբիր գնալու, բոերով քամուն եք տալիս... Բայց իսկապես, ո՞ւր եք գնում հիմա, հը՞։

— Մոկրոե։

— Մոկրոե՞։ Բայց գիշե՞ր է։

— Երեկ կար, այսօր չկա,— ասաց հանկարծ Միտյան։

— Ինչպե՞ս թե չկա։ Այսպիսի հազարներ մարդու ձեռքում, և չկա՞։

— Հազարների մասին չէ իմ ասածը։ Գրողի ծո՛ցը հազարները։ Կանացի բնավորությո՛ւնն եմ ասում.

Դյուրաթեք է կնոջ սիրտը,
Անկայուն ու անառակ։

Ես համաձայն եմ Ոդիսևսի հետ, նա է ասում այս բանը։

— Ձեմ հասկանում ձեզ։

— Հարբա՞ծ եմ, ինչ է։

— Ոչ թե հարբած, ավելի վատ։

— Ոգո՛վ եմ հարբած, Պյոտր Իլյիչ, ոգո՛վ եմ հարբած, և էլ բավական է, բավական...

— Այդ ի՞նչ եք անում, ատրճանա՞կն եք լցնում։

— Ատրճանակն եմ լցնում։

Եվ իսկապես, բացելով ատրճանակների տուփը, Միտյան վառոդի սրվակ հանեց և ուշադրությամբ լցրեց վառոդը ատրճանակի մեջ։ Հետո մի փամփուշտ վերցրեց և, խցկելուց առաջ, երկու մատով բարձրացրեց մոմի լույսին՝ աչքերի դիմաց։

— Ինչո՞ւ եք այդպես նայում փամփուշտին,— անհանգիստ հետաքրքրությամբ հետևում էր Պյոտր Իլյիչը։

— Հենց այնպես։ Երևակայություն։ Ա՛յ եթե խելքիդ փչեր այս փամփուշտը խրել ուղեղիդ մեջ, ատրճանակը լցնելիս կնայեի՞ր սրան, թե չէ։

— Ինչո՞ւ նայեմ։

— Ուղեղիս մեջ է մտնելու, դե ուրեմն հետաքրքիր է մի հայացք գցել, տեսնենք ի՞նչ բան է... Բայց հիմարություն է, բոպեական հիմարություն։ Ահա վերջացավ,— ավելացրեց նա, մեջը դնելով փամփուշտը և ձողիկի ծայրով խրելով։— Պյոտր Իլյիչ, սիրելիս, հիմարությո՛ւն է, կատարյալ հիմարություն, և եթե իմանայի՞ր, թե ինչ աստիճանի հիմարություն է ամեն ինչ։ Դե հիմա մի կտոր թուղթ տուր։

— Ահա քեզ թուղթ։

— Չէ, հարթ, մաքուր թուղթ, գրելու թուղթ։ Հա՛, այդպես։— Եվ Միտյան, սեղանից վերցնելով գրիչը, արագորեն մի երկու տող գրեց թղթի վրա, հետո չորս տակ ծալեց ու գրեց բաճկոնակի գրպանը։ Ատրճանակները տեղավորեց տուփի մեջ, կողպեց փոքրիկ բանալիով ու տուփը ձեռքն առավ։ Հետո նայեց Պյոտր Իլյիչին և երկար, մտախոհ մտաց։

— Հիմա գնանք,— ասաց նա։

— Ո՞ւր գնանք։ Չէ, սպասեցեք, մի բոպե... Գուցե դուք ձե՞ր ուղեղի մեջ եք ուզում խրել դա, այդ փամփուշտը... — ասաց Պյոտր Իլյիչն անհանգստացած։

— Փամփուշտը հիմարությո՛ւն է։ Ես ապրել եմ ուզում, ես կյա՛նքն եմ սիրում։ Իմացիր այս բանը։ Ես սիրում եմ ոսկեհեր

Ֆեբուսին և նրա շերմ յուլան եմ սիրում։ Սիրելի Պյոտր Իլյիչ, դու ընդունա՞կ ես մի կողմ քաշվելու։

— Ինչպե՞ս թե մի կողմ քաշվելու։

— Ճանապարհ տալու։ Սիրելի էակին և ատելիին էլ ճանապարհ տալու։ Եվ այնպես, որ ատելին էլ սիրելի գառնա. ահա այդպե՞ս ճանապարհ տալու։ Եվ ասելու նրանց՝ ասողված ձեզ հետ, գնացեք, անցեք ու գնացեք, իսկ ես...

— Իսկ դո՞ւք։

— Բավական է, գնանք։

— Աստված վկա, պիտի ասեմ որևէ մեկին,— նայեց նրան Պյոտր Իլյիչը,— պիտի ասեմ, որ ձեզ չթողնեն այնտեղ գնաք։ Ի՞նչ պետք ունեք հիմա Մոկրոե գնալու։

— Նին կա այնտեղ, կի՞ն, և էլ բավական է խոսես, Պյոտր Իլյիչ, վե՛ր։

— Լսեցեք, դուք թեև վայրի մարդ եք, բայց միշտ էլ մի տեսակ զուր եք եկել ինձ... և դրա համար էլ անհանգստանում եմ։

— Շնորհակալ եմ, ախպերս։ Ես վայրի եմ, ասում ես։ Վայրենինե՞ր, վայրենինե՞ր։ Ես հենց այդ մի բանն եմ ասում ու ասում՝ վայրենինե՞ր։ Բայց հա՞, Միշան եկավ, իսկ ես նույնիսկ մոռացել էի նրան։

Շտապ-շտապ ներս մտավ Միշան՝ մանր թղթադրամները ձեռքին, և զեկուցեց, որ Պլոտնիկովների խանութում «բոլորն իրար անցան» և քարշ են տալիս շշերը, ձուկն էլ, թեյն էլ, հենց իսկույն ամեն ինչ պատրաստ կլինի։ Միտյան վերցրեց մի տասանոց ու տվեց Պյոտր Իլյիչին, մի ուրիշ տասանոց էլ Միշային գցեց։

— Չհամարձակվե՞ք,— գոչեց Պյոտր Իլյիչը։— Իմ տանը չի կարելի, և դա վատ բան է, երես եք տալիս։ Պահեցե՛ք ձեր փողերը, այ այստեղ դրեք, ի՞նչ կարիք կա վատնելու։ Հենց վաղը կարող են հարկավոր լինել, և վստահ եմ՝ հենց ինձ մոտ էլ կգաք, որ մի տասը ռուբլի խնդրեք։ Ինչո՞ւ եք անընդհատ կողքի գրպանը խցկում։ Է՛յ, կկորցնե՞ք։

— Լսի՛ր, սիրելի բարեկամ, գնա՞նք միասին Մոկրոե։

— Ե՞ս ինչու պետք է գնամ այնտեղ։

— Լսի՛ր, արի հիմա մի շիշ բացեմ, խմե՞նք կյանքի կենացը։ Ուզում եմ խմել, և մանավանդ քե՛զ հետ խմելս Քեզ հետ երբեք չեմ խմել, չէ՞։

— Դե լավ, կարելի է գինետանը, գնանք, հիմա ինքս էլ գնում էի այնտեղ։

— Ժամանակ չունեմ գինետուն գնալու։ Պլոտնիկովների խանութում խմենք, հետո սենյակում։ Ուզո՞ւմ ես, քեզ մի հանելուկ ասեմ։

— Ասա։

Միտյան բաճկոնակի գրպանից հանեց թղթի կտորը, բացեց ու ցույց տվեց։ Հստակ ու խոշոր ձեռագրով գրված էր.

«Պատժում եմ ինձ իմ ամբողջ կյանքի համար, իմ ամբողջ կյա՛նքն եմ պատժում»։

— Իսկապես, պիտի ասեմ որևէ մեկին, հենց հիմա գնամ ու ասեմ,— գոչեց Պյոտր Իլյիչը, թուղթը կարդալով։

— Չես հասցնի, անուշս, գնանք ու խմե՞նք, մա՛րշ։

Պլոտնիկովների խանութը Պյոտր Իլյիչի անից համարյա մի շենք անդին էր, փողոցի անկյունը։ Դա Նպարեղենի ամենամեծ խանութն էր մեր քաղաքում, պատկանում էր հարուստ վաճառականների և շատ էլ լավ ապրանքներ ուներ։ Կար ամեն ինչ, որ կարելի է գտնել մայրաքաղաքային որևէ խանութում, ամեն տեսակի նպարեղեն՝ «ելիսեև եղբայրների վաճառահանած» գինի, մրգեր, սիգարներ, թեյ, շաքար, սուրճ և այլն։ Երեք դրծակատար մշտապես սպասարկում էին, իսկ երկու ցրորդ տղաներ վազում էին տները։ Թեև մեր երկրամասն աղքատացել էր, կալվածատերերը հեռացել էին, նվազել էր առևտուրը, բայց նպարեղենի խանութները բարգավաճում էին առաջվա նման և նույնիսկ տարվետարի ավելի ու ավելի ակնբախորեն. այդ ապրանքների համար միշտ էլ գնորդներ կային։ Միտյային անհամբերությամբ էին սպասում խանութում։ Շատ լավ հիշում էին, թե ինչպես նա երեք-չորս շաբաթ առաջ ճիշտ նույն ձևով, միանգամից, մի քանի հարյուր ռուբլու ապրանք ու գինի էր վերցրել ամեն տեսակի, գումարը տեղն ու տեղը վճարելով (ապառիկ վճարով ոչինչ չէին վստահի նրան իհարկե), հիշում էին, որ այն ժամանակ էլ, ինչպես հիմա, նրա ձեռքում հարյուրանոցների մի ամբողջ կապոց կար և նա անհարկիորեն ցրիվ էր տալիս դրանք առանց սակարկելու, չէր մտածում ու չէր էլ ուզում մտածել, թե իր ինչի՞ն է պետք այդքան ապրանքը, գինին և այլն։ Ամբողջ քաղաքում խոսում էին, որ նա այդ օրը, Գրուշենիայի հետ Մոկրոե գնալով, «միանգամից երեք հազար է վատնել մի գիշերվա և հաջորդ օրվա ընթացքում և գինարբուքից վերադարձել է առանց

կոպեկի, տիպ-տկլոր»։ Ոտքի է հանել գնչուների մի ամբողջ թափառախումբ (որ այն ժամանակ քոչել էր մեզ մոտ), և ասում էին, թե նրանք հարբած Միտյայից անհաշիվ փող են կորզել երկու օրվա ընթացքում և անհաշիվ քանակությամբ թանկարժեք գինի են խմել։ Միտյայի վրա ծիծաղելով պատմում էին, որ նա Մոկրոեում շամպայնով է հարբեցրել կոշտ ու կոպիտ գյուղացիներին, իսկ գյուղի աղջիկներին ու կանանց կշտացրել է շաքարեղենով ու ստրասբուրգյան կարկանդակներով։ Ծիծաղում էին նաև՝ հատկապես գինետանը, Միտյայի արած այն բացսիրտ ու հրապարակային խոստովանության վրա (նրա երեսին չէին ծիծաղում անշուշտ, մի քիչ վտանգավոր բան էր նրա երեսին ծիծաղելը), թե այդ ամբողջ խելառության համար հենց մի շնորհ է միայն ստացել Գրուշենկայից՝ աղջիկը «թույլ է տվել, որ նա իր ոտքը համբուրի, և էլ ուրիշ ոչինչ թույլ չի տվել»։

Երբ Միտյան ու Պյոտր Իլյիչը հասան խանութ, դռան առաջ տեսան եռաձի մի կառք, որ պատրաստ կանգնել էր՝ գորգերով ծածկված ու զանգակներով և զանգուլակներով, իսկ կառապան Անդրեյն սպասում էր Միտյային։ Խանութում արդեն համարյա «կարգի էին գցել» ապրանքներով լեցուն մի արկղ և միայն սպասում էին Միտյայի երևալուն, որպեսզի արկղը փակեն, մխիեն ու դնեն կառքի մեջ։ Պյոտր Իլյիչը զարմացավ։

— Բայց որտեղի՞ց հասավ քեզ համար այս կառքը,— հարցրեց նա Միտյային։

— Վազում էի քեզ մոտ, պատահեցի ա՛յ սրան՝ Անդրեյին, և պատվիրեցի՝ ուղղակի դա այստեղ, խանութի առաջ։ Պետք չէ ժամանակ կորցնել։ Անցյալ անգամ Տիմոֆեյի հետ եմ գնացել, բայց հիմա Տիմոֆեյը ծլկե՛լ է, չկա՛, ինձնից առաջ թռել-գնացել է մի կախարդուհու հետ։ Անդրեյ, շա՞տ ենք ուշանում։

— Գուցե հազիվ մի ժամով մեզնից առաջ լինեն, էլքանն էլ չէ, դե ամենաշատը մի ժամ, հա՛,— շտապ պատասխանեց Անդրեյը։— Տիմոֆեյին ե՛ս սարքի գցեցի, գիտե՞մ ոնց կգնան։ Նրանց գնալը մերի նման չի լինի, Դմիտրի Ֆյոդորովիչ, որտեղի՞ց։ Մի ժամ առաջ էլ չեն հասնի,— եռանդով վրա տվեց Անդրեյը՝ դեռ ոչ շատ հին մի կառապան, շիկավուն մազերով, լղար մի երիտասարդ, որ անթև մի բաճկոն էր հագել ու վերնազգեստը գցել էր ձախ թևին։

— Հիսո՛ւն ռուբլի քեզ, եթե մեկ ժամով միայն ետ մնաս։

— Մի ժամը վստահ ենք, Դմիտրի Ֆյոդորովիչ, է՛խ, ոչ թե մի ժամ, կե՛ս ժամով էլ առաջ չեն լինի։

Միտյան թեև այս ու այն կողմ վազելով կարգադրություններ էր անում, բայց մի տեսակ տարօրինակորեն էր խոսում ու հրամաններ տալիս, խառնափնթոր, և ոչ թե կարգ ու կանոնով։ Սկսում էր ասել մի բան ու մոռանում էր վերջացնել։ Պյոտր Իլյիչն անհրաժեշտ գտավ միջամտել ու օգնել գործին։

— Չո՛րս հարյուր ռուբլու, չորս հարյուրից ոչ պակաս, ճիշտ ու ճիշտ այդ օրվա պես,— հրամայում էր Միտյան։— Հիսուն շիշ շամպայն, մի հատ պակաս չլինի։

— Ինչի՞դ է պետք այդքանը, ինչի՞ համար։ Սպասի՛ր,— գոռաց Պյոտր Իլյիչը։— Ի՞նչ արկղ է սա։ Ի՞նչ կա մեջը։ Չորս հարյուր ռուբլու բա՞ն կա այստեղ։

Իրար անցած գործակատարներն անմիջապես քաղցր-մեղցր խոսքերով բացատրեցին նրան, որ այդ առաջին արկղում ընդամենը վեց շիշ շամպայն կա և «առաջին իսկ առիթով անհրաժեշտ զանազան բաներ»՝ խորտիկներ, շաքարեղեն, մոնպանսիե և այլն։ Իսկ գլխավոր «ապրանքները» առանձին կփաթաթվեն ու կուղարկվեն իսկույն, ինչպես անցյալ անգամ, նույնպես եռաձի հատուկ կառքով և ճիշտ ժամանակին ձեռքի տակ կլինեն, «գուցե ընդամենը մի ժամ ուշ հասնեն Դմիտրի Ֆյոդորովիչի ետևից»։

— Մի ժամից ո՛չ ավելի, մի ժամից ավելի չուշանա՛, և որքան կարելի է շատ մոնպանսիե և ձյութանուշ դրեք. աղջիկերքն այնտեղ սիրում են այդ բաները,— եռանդով պնդեց Միտյան։

— Ձյութանո՞ւշ. վնաս չունի։ Բայց հիսուն շիշ շամպա՞յնն ինչիդ է պետք։ Տաս-տասնհինգը բավական է,— համարյա բարկացել էր արդեն Պյոտր Իլյիչը։ Նա սկսեց սակարկել, ապրանքների հաշիվն էր պահանջում, չէր ուզում հանգստանալ։ Բայց ընդամենը մի հարյուր ռուբլի կարողացավ փրկել։ Վերջապես համաձայնվեցին, որ միայն երեք հարյուր ռուբլու ապրանք ուղարկվի, ոչ ավելի։

— Է՛, գրողի ծո՛ցը բոլորդ էլ,— գոռաց Պյոտր Իլյիչը, կարծես հանկարծ միտքը փոխելով,— ի՞մ ինչ գործն է։ Գցի՛ր ջուրը փողերդ, եթե ձրի ես գտել։

— Արի այստե՛ղ, տնտես ախպեր, արի այստե՛ղ, մի՛ բարկանա,— քարշ տվեց նրան Միտյան խանութի ետևի սենյակը։— Ա՛յ հիմա այստեղ մի շիշ կբերեն մեզ և կկոնծենք։ է՛խ, Պյոտր

Իլյիչ, արի՛ գնանք մթամին, որովհետև դու անուշ մարդ ես, սիրում եմ քեզ նման մարդկանց։

Միտյան նստեց մի հյուսած աթոռակի վրա, փոքրիկ մի սեղանի առաջ, որ ծածկված էր շատ կեղտոտ սփռոցով։ Պյոտր Իլյիչը տեղավորվեց նրա դիմաց, և անմիջապես երևաց շամպայնը։ Նաև ոստրե առաջարկեցին՝ «առաջնակարգ ոստրեներ, հենց նոր ստացված». պարոնայք չէի՞ն ցանկանա արդյոք։

— Գրողի ծո՛ցը ոստրեները, ես չեմ ուտում դրանք։ Եվ ոչինչ էլ պետք չէ,— համարյա զայրացած վրա տվեց Պյոտր Իլյիչը։

— Ժամանակ չկա ոստրեների համար,— նկատեց Միտյան,— և աֆորժակ էլ չկա։ Գիտե՞ս, բարեկամս,— ասաց նա հանկարծ զգացմունքով,— ես երբեք էլ չեմ սիրել այս ամբողջ անկարգությունը։

— Իսկ ո՞վ է սիրում որ։ Քառասո՛ւն շիշ շամպայն գյուղացիների համար, ի սե՛ր աստծո, դա ո՛ւմ ասես չի տրաքացնի։

— Այդ չէ իմ ասածը։ Գերագույն կարգ ու կանոնի մասին եմ ասում։ Կարգ ու կանոն չկա իմ մեջ, գերագո՛ւյն կարգ ու կանոն... Բայց... վերջացավ այդ ամբողջը, կարիք չկա ախ ու վախ անելու։ Ուշ է, և հե՛րն էլ անիծած։ Ամբողջ իմ կյանքն անկարգություն է եղել, և պետք է կարգ ու կանոն հաստատել։ Բառախաղ եմ անում, հը՞։

— Զառանցում ես, ոչ թե բառախաղ անում։

— Փա՞ռք բարձրյալին տիեզերաց,
Փա՞ռք բարձրյալին իմ հոգու։

Այս երկու տող բանաստեղծությունը իմ հոգուց է ժայթքել մի ժամանակ, ոչ թե բանաստեղծություն է, այլ արցունք... ինքս եմ հորինել... բայց ոչ այն ժամանակ, երբ փոխկապիտանին քարշ էի տալիս մորուքից...

— Ինչո՞ւ հանկարծ նրան հիշեցիր։

— Ինչու հանկարծ նրան հիշեցի՞։ Հիմարությո՛ւն։ Ամեն ինչ վերջանում է, ամեն ինչ մի հայտարարի գալիս, տակը մի գիծ... և հաշվեհարթա՛ր։

— Անկեղծ եմ ասում, անընդհատ քո ատրճանակներն են երևում աչքիս։

— Ատրճանա՛կն էլ հիմարություն է։ Ամի՛ր ու մի՛ ցնորքանիր։ Կյա՛նքն եմ սիրում, շա՛տ-շատ եմ սիրում կյանքը, այնքա՞ն շատ, որ զզվելի է նույնիսկ։ Բավակա՛ն է։ Կյանքի՛ կենացը, սիրելիս, կյանքի կենա՛ցը խմենք, կյանքի՛ համար կենաց եմ առաջարկում։ Ինչո՞ւ գոհ եմ ես ինձնից։ Ստոր եմ, բայց գոհ եմ ինձնից։ Եվ սյնուամենայնիվ առնչվում եմ դրա համար, այսինքն որ ստոր եմ, բայց գոհ եմ ինձնից։ Օրհնարանո՛ւմ եմ արարչությունը, հենց այս րոպեիս պատրաստ եմ օրհնելու աստծուն և արարչությունը նրա, բայց... բայց պետք է ոչնչացնել մի զազրելի միջատի, որպեսզի նա չսողա, չփչացնի ուրիշների կյանքը... Խմե՛նք կյանքի կենացը, սիրելի եղբայր։ Կյանքից ավելի թանկ ի՞նչ կարող է լինել։ Ոչի՛նչ, ոչի՛նչ։ Կյանքի կենացը և մեր թագուհո՛ւ կենացը, թագուհիների՞ թագուհու։

— Խմենք կյանքի կենացը, գե՛ք քո թագուհու կենացն էլ, եթե ուզում ես։

Խմեցին մեկական բաժակ։ Միտյան թեև ցնծագին ու զիզուն տրամադրության մեջ էր, բայց և տրտում էր մի տենչակ։ Կարծես մի անհաղթահարելի ու ծանր մտահոգություն կանգնած էր նրա գլխին։

— Միշա՛... քո Մի՞շան է ներս մտնողը։ Միշա, անուշիկս, Միշա, արի՛ այստեղ, խմիր այս բաժակը իմ սիրուն՝ վաղվա ասկեհեր Ֆերուսի կենացը։

— Ինչո՞ւ ես տալիս նրան,— գոռաց Պյոտր Իլյիչը լղայնորեն։

— Դե թույլ տուր, գե՛ք հենց այնպես, ուզո՞ւմ եմ։

— Է-է՛խ։

Միշան խմեց բաժակը, գլուխ տվեց ու դուրս փախավ։

— Կհիշի մի օր,— նկատեց Միտյան։— Կին եմ սիրում, կի՞ն։ Ի՞նչ է կինը։ Երկրի թագուհի՞։ Տխուր եմ, տխուր, Պյոտր Իլյիչ։ Հիշո՞ւմ ես Համլետին. «Այնքան տխո՞ւր եմ, այնքան տխո՞ւր, Հորացիո... Ա՜խ, խեղճ Յորիկ»։ Գուցե հենց ես եմ Յորիկը։ Հենց հիմա՛ եմ Յորիկ, իսկ հետո՝ գանգ։

Պյոտր Իլյիչը լսում էր ու լուռ մնում։ Միտյան էլ լռեց։

— Այդ ի՞նչ շնիկ է,— մտացիր հարցրեց նա հանկարծ գործակատարին, մի փոքրիկ, սիլուանիկ, սևալվի բոլոնյան շնիկ նկատելով անկյունում։

— Մեր տանտիրուհու շնիկն է, Վարվառա Ալեքսեևնայինը,— պատասխանեց գործակատարը։— Ինքը բերեց քիչ առաջ և մոռացավ այստեղ։ Գնաց է նա տանել։

— Ճիշտ այսպիսի մի շնիկ եմ տեսել... մեր փնգում...—

մտախոհ ասաց Միտյան։— Միայն թե նրա ետևի ոտքը կոտրվել էր... Պյոտր Իլյիչ, ուզում էի մի հարց տալ քեզ, ի միջի այլոց. կյանքումդ երբևիցե մի բան գողացե՞լ ես, թե չէ։

— Ա՞յդ ինչ հարց է։

— Չէ, հենց այնպես։ Հասկանո՞ւմ ես՝ ասենք որևէ մեկի գրպանից, ուրիշին պատկանող մի բան։ Պետական գանձի մասին չեմ ասում. բոլորն են թալանում պետական գանձը, և անշուշտ դո՛ւ էլ...

— Գնա՛ գրողի ծոցը։

— Ասում եմ՝ ուրիշի՛ն պատկանող մի բան, ուղղակի ուրիշի գրպանից, քսակից, հը՞։

— Մի անգամ մի քսան կոպեկ եմ գողացել մորիցս, ինը տարեկան էի։ Կամացուկ վերցրի սեղանից ու ամուր պահեցի ձեռքիս մեջ։

— Է՛, հետո՞։

— Հետո ոչինչ։ Երեք օր պահեցի, ամոթս եկավ, խոստովանեցի ու ետ տվի։

— Հետո՞։

— Պարզ է, ծեծ կերա։ Բայց ինչո՞ւ ես հարցնում, հո ինքդ չե՞ս գողացել մի բան։

— Գողացել եմ,— խորամանկորեն աչքով արեց Միտյան։

— Ի՞նչ ես գողացել,— հետաքրքրվեց Պյոտր Իլյիչը։

— Քսան կոպեկ մորիցս, ինը տարեկան էի, երեք օր հետո ետ տվի։

Այդ ասելով, Միտյան հանկարծ վեր կացավ։

— Դմիտրի Ֆյոդորովիչ, չշտապե՞նք,— գոռաց հանկարծ Անդրեյը խանութի դռնից։

— Պատրա՞ստ է։ Գալի՞ս ենք,— իրար անցավ Միտյան։— Մի վերջին ասելիք էլ և... Անդրեյին իսկույն մի բաժակ օղի՛ ճանապարհից առաջ։ Եվ կոնյա՛կ էլ նրան, օղուց բացի, մի բաժակ կոնյակ։ Այս տուփը (ատրճանակները) դնել իմ նստարանի տակ։ Մնաս բարո՞վ, Պյոտր Իլյիչ, իմ վատը մի՛ հիշիր։

— Բայց վաղը վերադառնում ես, չէ՞։

— Անպայման։

— Հաշիվը հիմա կբարեհաճե՞ք փակել,— մոտ թռավ գործակատարը։

— Ա՛հ, այո, հաշի՛վը։ Անպայմա՛ն։

Նա նորից դուրս քաշեց թղթադրամների կապոցը գրպանից,

հանեց երեք հատ հարյուրանոց, նետեց վաճառասեղանին և շտապ դուրս եկավ խանութից։ Բոլորը հետևեցին նրան և, գլուխ տալով, ողջերթ մաղթեցին ու բարի ցանկություններով ճանապարհ դրին։ Անդրեյը փնչաց հենց նոր խմած կոնյակից և ցատկեց նստիքի վրա։ Բայց հազիվ էր Միտյան կառք բարձրանում, երբ հանկարծ, բոլորովին անսպասելիորեն, իր առաջ հայտնվեց Ֆենյան։ Աղջիկը շնչակտուր վազելով մոտեցավ, մի ճիչ արձակեց, ձեռքերը աղերսագին միացրեց իրար և ուղղակի ընկավ նրա ոտքերը։

— Տե՛ր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, ջանիկս, մի՛ կործանեք իմ տիրուհուն։ Եվ մեկ էլ ե՛ս պատմեցի ձեզ ամեն ինչ... Նրա՞ն էլ մի՛ սպանեք, էն սպային, առաջ նա է եղել ախր, նա է իմ տիրուհու մարդը։ Հիմի նա պսակվում է Ագրաֆենա Ալեքսանդրովնայի հետ, հենց դրա համար է եկել Սիբիրից... Տե՛ր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, մի՛ կործանեք ուրիշի կյանքը։

— Օ-հո-հո՛, ահա՛ թե ինչ։ Էլ ինչե՞ր հիմա չես անի այնտեղ,— մրթմրթաց ինքնիրեն Պյոտր Իլյիչը։— Ամեն ինչ հասկանալի է հիմա, ամեն ինչ պարզ եղավ։ Դմիտրի՛ Ֆյոդորովիչ, դե հենց անմիջապես տո՛ւր ինձ ատրճանակները, եթե ուզում ես մարդ լինել,— բարձրաձայն գոռաց նա Միտյային,— լսո՞ւմ ես, Դմի՛տրի։

— Ատրճանակնե՞րը։ Սպասի՛ր, անուշս, ճանապարհին ջուրը կգցեմ դրանք,— պատասխանեց Միտյան։— Ֆենյա, վեր կաց, այդպես գետնին մի՛ մնա իմ առաջ։ Չի կործանի Միտյան, էլ սրանից հետո ո՛չ ոքի չի կործանի այս հիմարը։ Եվ գիտե՞ս ինչ, Ֆենյա,— գոչեց նա արդեն նստելով,— ես քիչ առաջ վիրավորեցի քեզ, ների՛ր ինձ ու թողություն շնորհիր, ների՛ր մի սրիկայի... Բայց չներես էլ՝ միևնույն բանն է։ Որովհետև էլ ամե՛ն ինչ միևնույնն է հիմա։ Քշի՛ր, Անդրեյ, թռի՛ր թռչունի պես։

Անդրեյը քշեց. վանդակները զնգզնգացին։

— Մնաս բարո՞վ, Պյոտր Իլյիչ։ Քե՛զ համար է իմ վերջին արցունքը...

«Հարբած չէ հո, բայց ի՞նչ ցնդաբանություններ է դուրս տալիս»,— մտածեց Պյոտր Իլյիչը նրա ետևից նայելով։ Նա տրամադիր էր մնալ ու հետևել, թե ինչպես են մնացյալ մթերքներն ու գինիները պատրաստելու և բարձելու հաջորդ եռաձի կառքի վրա, որովհետև նախազգում էր, որ անպայման կխաբեն Միտյային, պակաս կուղարկեն։ Բայց հանկարծ, ինքն իր վրա

բարկանալով, թքեց ու գնաց գինետուն՝ իր բիլիարդը խաղալու։

— Հիմարի մեկն է, թեև լավ տղա է...— մրթմրթում էր նա ճանապարհին։— Գրուշենկայի այդ «առաջվա» սպայի մասին լսել եմ։ Դե՛, եթե եկել է, ուրեմն...է՛խ, այդ աորճանակները։ Բայց գրողի ծո՛ցը. ես նրա դաստիարա՞կն եմ, ինչ է։ Թող ի՞նչ ուզում են անեն։ Եվ ոչինչ էլ չեն անի։ Բոռբոան տիպեր են, ուրիշ ոչինչ։ Կհարբեն ու կկռվեն, կկռվեն ու կհաշտվեն նորից։ Գործ անող մա՞րդ են սրանք։ Բա՞ն էր ասում՝ «մի կո՞ղմ կքաշվեմ», «ինքս ինձ կպատժե՛մ». ոչինչ էլ չի անի։ Հազար անգամ է այդպիսի մեծ-մեծ խոսքեր գոռացել գինետանը, հարբած։ Բայց հիմա հարբած չէ։ «Ոգո՞վ եմ հարբել». վերամբարձ խոսքեր են սիրում սրիկաները։ Նրա դաստիարա՞կն եմ, ինչ է։ Եվ կռվել է արդեն, ամբողջ ռեխը արյուն էր։ Ո՞ւմ հետ արդյոք։ Կիմանամ գինետանը։ Եվ թաշկինակն էլ լրիվ արյունոտ էր... Թո՛ւհ, գրողի ծոցը, այդ թաշկինակը իմ տանը մնաց, հատակին... Թքա՛ծ։

Նա գինետուն մտավ շատ վատ տրամադրությամբ և անմիջապես սկսեց բիլիարդ խաղալ։ Առաջին խաղը զվարթացրեց նրան։ Մի երկրորդ խաղ էլ խաղաց և հանկարծ սկսեց խաղընկերներից մեկի հետ խոսել այն մասին, թե Դմիտրի Կարամազովը նորից փող է ձեռք բերել, մոտ մի երեք հազար. ասաց, որ իր աչքով է տեսել այդ փողը, և որ Միտյան նորից քշեց-գնաց Մոկրոե՝ Գրուշենկայի հետ խրախճանք անելու։ Նրան լսողները գրեթե անսպասելի մի հետաքրքրությամբ ընդունեցին այդ լուրը։ Եվ բոլորն սկսեցին խոսել՝ ոչ թե ծիծաղելով, այլ մի տեսակ տարօրինակ լրջությամբ։ Նույնիսկ խաղն ընդհատեցին։

— Երեք հազա՞ր։ Բայց որտեղի՞ց կարող է երեք հազար ունենալ։

Շարունակեցին հարցեր տալ։ Խոխլակովայի մասին պատմվածը տարակուսանքով ընդունեցին։

— Իսկ բիձուկին չի՞ կողոպտել արդյոք, ա՛յդ է խնդիրը։

— Երե՞ք հազար։ Կասկածելի է մի տեսակ։

— Գլուխն էր գովում բոլորի առաջ, որ կապանի հորը, չէ՞. բոլորն էլ այստեղ լսել են այդ բանը։ Հենց երեք հազարի մասին էր խոսում...

Պյոտր Իլյիչը լսում էր և հանկարծ սկսեց շոր ու ցցկոտ պատասխանել հարցերին։ Միտյայի դեմքի ու ձեռքերի արյունոտ լինելու մասին ոչ մի բառ չասաց, թեև այդ էլ էր ուզում պատմել քիչ առաջ, գինետուն գալու ժամանակ։ Երրորդ խաղն

սկսեցին, Միտյայի մասին խոսակցությունն աստիճանաբար դադարեց։ Բայց վերջացնելով երրորդ խաղը, Պյոտր Իլյիչն այլևս չուզեց շարունակել, կիսը վար դրեց և առանց ընթրելու, հակառակ իր մտադրության, գինետնից դուրս եկավ։ Հրապարակում նա կանգ առավ շփոթահար, նույնիսկ զարմանալով ինքն իր վրա։ Հանկարծ գիտակցեց, որ այդ բոպեին ուզում էր Ֆյոդոր Պավլովիչի տունը գնալ՝ իմանալու համար, թե մի բան չի՞ պատահել արդյոք։ «Բայց մի հիմարություն է դուրս գալու տակից, և հիմարության համար ոտքի՞ հանեմ ուրիշի տունը, խայտառակությո՞ւն անեմ։ Թո՛ւհ, գրողի ծո՛ցը, ես նրանց դաստիարա՞կն եմ, ինչ է»։

Շատ վատ տրամադրությամբ քայլեց ուղղակի դեպի իր տունը և հանկարծ հիշեց Ֆեննյային։ «Է՛, գրողի ծո՛ց, եթե քիչ առաջ հարցնեի նրան, ամեն ինչ կիմանայի»,— մտածեց նա վրդովմունքով։ Ու մեկեն այնպիսի՞ մի ցանկություն զգաց Ֆեննյայի հետ խոսելու և ամեն ինչ իմանալու, այնպե՞ս անհամբեր դարձրեց այդ համառ ցանկությունը նրան, որ կես ճանապարհից կտրուկ դարձավ դեպի Մորոզովայի տունը, ուր բնակվում էր Գրուշենկան։ Հասնելով դարպասին, թակեց, և գիշերվա լռության մեջ այդ թակոցը կարծես հանկարծ նորից սթափեցրեց ու զայրացրեց նրան։ Եվ մանավանդ որ ոչ ոք պատասխան չտվեց, բոլորը քնել էին տանը։ «Այստե՞ղ էլ խայտառակություն եմ անելու հիմա»,— մտածեց նա, արդեն մի տեսակ տառապանք զգալով իր հոգում, բայց թողնելու և վերջնականապես գնալու փոխարեն հանկարծ սկսեց նորից թակել, այս անգամ ամբողջ ուժով։ Փողոցով մեկ աղմուկ բարձրացավ։ «Դե լա՛վ ուրեմն, չէ՞, կթակեմ, կթակե՛մ, մինչև բաց անեք»,— մտմտում էր նա, ամեն մի հարվածի հետ կատաղելու չափ զայրանալով ինքն իր վրա, բայց և միաժամանակ ավելի ու ավելի ուժգնորեն հարվածելով դարպասին։

VI

ԵՍ ԻՆՁԱՍ ԵՄ ԳԱԼԻՍ

Իսկ Դմիտրի Ֆյոդորովիչը սուրում էր ճանապարհով։ Մինչև Մոկրոե քսան վերստից մի քիչ ավելի էր, բայց Անդրեյի եռաձին այնպես քառատրոփ էր սլանում, որ կարող էր հասնել մի ժամ ու մի քառորդից։ Սաթրշավ ընթացքը կարծես հանկարծ

թարմացրեց Միտյային։ Օդը զով էր, սառնավուն, մաքուր երկընքում խոշոր աստղեր էին փայլում։ Դա հենց այն նույն գիշերն էր, գուցե և նույն ժամը, երբ Ալյոշան, նետվելով գետին, «հափշտակությամբ երդվեց սիրել երկիրը, սիրել հավիտյանս հավիտենից»։ Բայց խառնաշփոթ էր Միտյայի հոգին, խիստ խառնաշփոթ, ու թեև շատ բաներ տանջում էին հիմա նրա սիրտը, սակայն նրա ամբողջ էությունն այդ պահին անդիմադրելիորեն ձգտում էր միայն դեպի իր թագուհի՛ն, և նա սլանում էր իր թագուհու մոտ, որպեսզի վերջին անգամ նայի նրան։ Միայն մի բան կարող եմ վստահ ասել. նրա սիրտը ոչ մի բոպե չէր տատանվում։ Գուցե չհավատան ինձ, եթե ասեմ, որ այս խանդոտ սիրահարը մաղալափ անգամ խանդ չէր զգում այդ նոր մարդու հանդեպ՝ այդ նոր մրցակցի, այդ «սպայի», որ հանկարծ բուսել էր հողի տակից։ Ուրիշ որևէ մեկի նկատմամբ իսկույն պիտի խանդեր և գուցե նորից այրյունով թրջեր իր սարսափելի ձեռքերը, բայց ա՛յս մեկի հանդեպ, «նրա առաջինի» հանդեպ ոչ միայն խանդի ատելություն չէր զգում այս պահին, երբ սլանում էր եռաձիով, այլ թշնամական զգացում էլ չուներ... թեև ճիշտ է, որ դեռ չէր տեսել նրան։ «Այստեղ արդեն վեճի հարց չկա, այստեղ երկուսն էլ իրավունք ունեն. սա իր առաջին սերն է, որ չի մոռացել այս հինգ տարվա ընթացքում, ուրեմն նրա՛ն է միայն սիրել ամբողջ հինգ տարի, իսկ ես, ե՞ս ինչու մեջ ընկա այստեղ։ Ե՞ս ինչ եմ այստեղ, ե՞ս ինչ գործ ունեմ։ Մի կո՛ղմ քաշվիր, Միտյա, և ճամփա՛ տուր։ Եվ հետո՝ էլ ի՞նչ եմ որ ես հիմա։ Հիմա առանց այդ սպայի էլ ամե՛ն ինչ վերջացավ արդեն, թեկուզ բոլորովին էլ նա մեջտեղ չգար՝ միևնույն է, ամե՛ն ինչ վերջացել էր արդեն...»։

Ահա թե ինչպիսի բառերով նա կարող էր մոտավորապես արտահայտել իր զգացողությունները, եթե ի վիճակի լիներ դատելու։ Բայց այս պահին նա չէր կարող դատել արդեն։ Նրա ամբողջ այս վճռական քայլը ծնվել էր առանց դատողությունների, մի ակնթարթում. զգացումն էր թելադրել այս քայլը քիչ առաջ, Ֆենյայի մոտ, աղջկա առաջին իսկ խոսքերից, և նա լրիվ ընդունել էր զգացման թելադրածը՝ բոլոր հետևանքներով։ Եվ այնուամենայնիվ, չնայած իր ամբողջ վճռականության, խառնաշփոթ էր նրա հոգին, տառապելու չափ խառնաշփոթ. վճռականությունն էլ չէր հանգստացրել նրան։ Շատ-շատ բան մնում էր ետևում, և այդ բոլորը տանջում էին։ Լինում էին վայրկյաններ, երբ այդ տանջանքը տարօրինակ էր թվում նրան. չէ՞ որ ի՞նքն իսկ իր ձեռքով գրել էր իր դատավճիռը թղթի վրա՝ «պատում եմ ինքս ինձ, իմ կյանքը», և այդ թուղթը հենց իր մոտ էր, իր գրպանում, պատրաստ. չէ՞ որ ատրճանակը լցված էր արդեն, չէ՞ որ արդեն որոշել էր, թե ինչպես է վաղը դիմավորելու «ոսկեհեր Ֆեբուսի» առաջին շերմ ճառագայթը։ Բայց, համենայն դեպս, անհնար էր հաշիվները փակել անցյալի հետ, ետևում մնացած և իրեն տանջող այդ բոլոր բաների հետ. շարչարվելու չափ զգում էր դա, և այդ միտքը մխրճվում էր նրա հոգու մեջ, հուսահատություն բերելով։ Ճանապարհին եղավ մի վայրկյան, երբ նա հանկարծ ուզեց կանգնեցնել Անդրեյին, դուրս ցատկել կառքից, վերցնել իր լցված ատրճանակն ու վերջացնել ամեն ինչ, էլ չսպասելով արևածագին։ Բայց այդ վայրկյանը կայծի նման թռավ ու անցավ։ Ու եռաձի կառքն էլ թռչում էր, «լափելով տարածությունը», և քանի նա մոտենում էր նպատակին, դարձյալ նրա հոգում տիրական էր դառնում Գրուշենկան, միայն Գրուշենկան, ավելի ու ավելի ուժգնորեն գրավելով նրա էությունը և նրա սրտից դուրս մղելով բոլոր մյուս սարսափելի ուրվականները։ Օ՜, այնքան էր ուզում նայել իր թագուհուն, գեթ մի վայրկյա՛ն, գեթ հեռվից։ «Նրա հետ է հիմա, այդ սպայի, տեսնեմ, թե ինչպես է զգում նրա հետ, իր առաջին սիրեցյալի հետ, և միայն ա՛յդ է ինձ պետք»։ Ու դեռ երբեք նրա կրծքում այնքան հորդաբուխ սեր չէր բարձրացել այդ կնոջ նկատմամբ՝ իր կյանքում ճակատագրական այդ կնոջ, դեռ երբեք չէր ունեցել այսպիսի նոր, անծանոթ մի զգացում, մի զգացում, որ անակնկալ էր նույնիսկ ի՛ր համար, մի զգացում, որ նուրբ էր աղապատանքի չափ, նրա առաջ հալվելու, անէանալու չափ։ «Եվ կանէանա՛մ»,— ասաց նա հանկարծ՝ մի տեսակ հիստերիկ հափշտակության նոպայի մեջ։

Մոտ մի ժամ քառատրոփ սուրացել էին արդեն։ Միտյան լուռ էր մնում, իսկ Անդրեյը թեև զրուցասեր գյուղացի էր, բայց դեռ նույնպես ոչ մի բառ չէր արտասանել, կարծես վախենում էր խոսելուց և միայն աշխուժորեն խթանում էր իր երեք աշխեռ, նիհար, բայց կրակոտ ձիերին։ Եվ հանկարծ Միտյան բացականչեց ահռելի անհանգստությամբ.

— Անդրե՛յ։ Իսկ եթե քնո՞ւմ են նրանք։

Հանկարծ այդ բանը միտքն ընկավ, իսկ մինչև հիմա չէր էլ մտածել դրա մասին։

— Պետք է ենթադրել, որ արդեն պառկել են, Դմիտրի Ֆյոդորովիչ։

Միտյան ցավագին խոժոռվեց. ա՜յս ինչ բան է իրոք, ինքը սուրալով գալիս է... այսպիսի զգացումներով... իսկ նրանք քնում են... գուցե նա՛ էլ քնել է հենց նույն տեղը... Մի զայրագին զգացում բորբոքվեց նրա սրտում։

— Քշի՛ր, Անդրեյ, հասցրո՛ւ, Անդրե՛յ, շուտ, շո՛ւտ,— գոռաց նա մոլեգնորեն։

— Բայց մի գուցե դեռ չեն էլ պառկել,— դատեց Անդրեյը մի քիչ լռելուց հետո։— էն է Տիմոֆեյն ասում էր, որ շատ մարդ է հավաքվել էնտեղ...

— Կալանո՞ւմ։

— Չէ՛, կալանում չէ, Գլաստունովների մոտ, նրանց պանդոկում։ այսինքն նրանք էլ ձի են տալիս, մասնավոր կայան է։

— Գիտեմ։ Բայց ի՞նչ է, ասում ես շա՞տ են նրանք։ Ո՞ր տեղից են շատ։ Ովքե՞ր են,— վեր թռավ Միտյան, այդ անակնկալ լուրից սոսկալի տագնապած։

— Դե ասում էր Տիմոֆեյը, էլի, ազաներ են բոլորն էլ։ Երկուսը քաղաքից, թե ովքե՞ր են՝ չեմ իմանում, միայն Տիմոֆեյն ասում էր՝ երկուսն էս մեր կողմի ազանեերից են, էն մյուս երկուսն էլ ոնց որ դրսից են եկել, գե մի գուցե ուրիշներն էլ կան, մի իարգին չհարցրի, էլի։ Ասում էր՝ սկսել են թուղթ խաղալ։

— Թուղթ խաղա՞լ։

— Ըհը։ Դե այ որ սկսել են թուղթ խաղալ, գուցե թե չեն քնում, էլի։ Ասենք հիմի տասնմեկը կլինի, ոչ ավել։

— Քշի՛ր, Անդրեյ, քշի՛ր,— ջղայնորեն գոռաց նորից Միտյան։

— Էն ի՞նչ էր, ուզում եմ հարցնել ձեզ, պարոն,— սկսեց նորից Անդրեյը մի փոքր լռելուց հետո,— միայն թե վախենում եմ բարկանաք, չեմ ուզում քարկացնեմ, տեր իմ։

— Ի՞նչ է եղել։

— Էն որ քիչ առաջ Ֆեդոսյա Մարկովնան ձեր ոտերն էր ընկել, աղաչում էր՝ իր տիրուհուն չկործանեք, մեկ էլ մի ուրիշի... այ ուրեմն ես էլ հիմի տանո՞ւմ եմ ձեզ էնտեղ, պարոն... Ներեցեք ինձ պարոն. հենց էնպես, խելքս է, էլի, գուցե թե հիմար բան ասացի։

Միտյան հանկարծ ետևից բռնեց նրա ուսերը։

— Դու կառապա՞ն ես։ Կառապա՞ն,— սկսեց նա մոլեգին։

— Հա, կառապան...

— Դե ուրեմն գիտե՛ս, որ պետք է ճամփա տալ։ Ի՞նչ կառապան, եթե ոչ ոքի ճամփա չի տալիս, քշում է, կոխկռտում անցնում. թե ի՞նչ է՝ ե՛ս եմ գալիս։ Չէ՛, կառապան, մի՛ կոխկրտիր։ Չի կարելի կոխկռտել մարդուն, չի կարելի փչացնել մարդկանց կյանքը։ Իսկ եթե կյանք փչացրիր, պատժի՛ր ինքդ քեզ... եթե փչացրիր, եթե կործանեցիր որևէ մեկի կյանքը՝ պատժի՛ր ինքդ քեզ ու դեն գնա։

Միտյան կարծես կատարյալ հիստերիկայի մեջ դուրս տվեց այդ ամբողջը։ Անդրեյը թեև զարմացավ պարոնի վրա, բայց շարունակեց խոսակցությունը։

— Ճիշտ է, տեր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, ճիշտ եք ասում, որ չպետք է մարդուն կոխոռճել, չպետք է և տանջել, և ոչ էլ մի ուրիշ որևէ արարածի, որովհետև ամեն մի արարած աստծու ստեղծածն է, ա՛յ, թեկուզ ասենք ձին. որովհետև մարդ կա՝ իզուր տալիս հա տալիս է մտրակով, դու ասա մեր կառապաններից էլ կան էդպիսիք... Եվ չեն էլ զսպում իրենց, հենց ուղղակի տալիս հա տալիս են, քշում հա քշում։

— Ո՞ւր, դժո՞խք,— ընդհատեց մեկեն Միտյան և քրքջաց իր հանկարծակի, կարճ ծիծաղով։— Անդրե՛յ, պարզասի՛ր մարդ,— նորից ամուր բռնեց նրա ուսերից,— ասա՝ դժո՞խք է ընկնելու Դմիտրի Ֆյոդորովիչ Կարամազովը, թե ոչ, ի՞նչ ես կարծում։

— Չգիտեմ, ջանիկս, ձեզնից է կախված, որովհետև դուք... Գիտե՞ս, պարոն, երբ աստծու որդին խաչվեց ու մեռավ, խաչի վրայից ուղղակի դժոխք իջավ և ազատեց բոլոր մեղավորներին, որ տանջվում էին։ Եվ դժոխքն սկսեց ախ ու վախ անել, մտածեց, որ էլ հիմա ոչ մեկը չի գա իր մոտ, այսինքն ոչ մի մեղավոր։ Եվ էն ժամանակ աստված ասաց նրան. «Ախ մի՛ քաշի, դժո՛խք, որովհետև սրանից հետո էլ ամեն տեսակ իշխաններ, կառավարիչներ, գլխավոր դատավորներ ու հարուստներ գալու են քեզ մոտ, և դու կլցվես ճիշտ էնպես, ինչպես որ եղել ես դարից դար, մինչև որ ես նորից գամ։ Էս ճիշտ բան է, ասվել է էս խոսքը...

— Ժողովրդական առասպե՛լ է, հոյակա՛պ բան։ Մորաքի՛ր ձախ կողմինը, Անդրեյ։

— Ա՛յ ուրեմն ում համար է դժոխքը, պարոն,— մտրակեց

Անդրեյը ձախ կողմի ձին,— իսկ դուք ոնց որ փոքր երեխա լինեք, էլի... մենք էդպես ենք նայում ձեզ, պարոն... Թեև բարկացկոտ եք, պարոն, էդ էլ ասենք, բայց ձեր անկեղծ սրտի համար աստված կների ձեզ։

— Իսկ դու, դո՛ւ կներե՞ս ինձ, Անդրեյ։

— Ե՞ս ինչի ներեմ ձեզ, դուք ինձ ոչինչ չեք արել։

— Չէ՛, բոլորի՛ փոխարեն, բոլորի՝ դո՛ւ միայն, ահա այս բոպեիս, այստեղ, ճանապարհին, կներե՞ս ինձ բոլորի փոխարեն։ Ասա՛, գեղջուկի պարզ հոգի, ասա՛։

— Օ՜հ, պարոն։ Մարդ վախենում է ձեզ ճանապարհ տանելուց, ձեր զրույցը տարօրինակ է ոնց որ...

Բայց Միտյան չլսեց։ Մոլեռանդորեն աղոթում էր նա և հրայրքով շշնջում ինքն իրեն.

— Ո՛վ տեր աստված, ընդունի՛ր ինձ իմ ամբողջ անօրենությամբ, բայց մի՛ դատիր ինձ։ Թո՛ղ տուր անցնեմ առանց քո դատաստանի... Մի՛ դատիր, որովհետև ես ինքս դատապարտել եմ ինձ։ Մի՛ դատիր, որովհետև սիրում եմ քեզ, ո՜վ տեր աստված։ Նողկալի եմ ինքս, բայց սիրում եմ քեզ. գժոխք իսկ ուղարկես, այնտեղ էլ պիտի սիրեմ և այնտեղից էլ պիտի գոռամ, որ սիրում եմ քեզ հավիտյանս հավիտենից... Բայց թույլ տուր նաև, որ սիրեմ մինչև վերջ... այստե՛ղ, հիմա՛ սիրեմ մինչև վերջ, հի՛նգ ժամ ընդամենը՝ մինչև առաջին ջերմ ճառագայթը քո... Վասնզի ես սիրում եմ իմ հոգու թագուհուն։ Սիրում եմ ու չեմ կարող չսիրել։ Ինքդ տեսնում ես իմ ամբողջ էությունը։ Կհասնեմ, կընկնեմ նրա ոտքերն ու կասեմ՝ իրավունք ունես, որ թողեցիր ինձ ու անցար... Մնաս բարով և մոռացի՛ր քո զոհին, մի՛ խոովիր դու քեզ երբեք։

— Մոկրոե՛,— գոռաց Անդրեյը, մտրակով ցույց տալով դիմացը։

Գիշերվա դժգույն խավարի մեջ հանկարծ սևին տվեց շենքերի հաստատուն մի զանգված, որ փռվել էր ահագին տարածության վրա։ Մոկրոե գյուղը երկու հազար բնակիչ ուներ, բայց այդ ժամին արդեն ամբողջովին քուն էր մտել, և միայն տեղտեղ առանձին լույսեր պլպլում էին տակավին։

— Քշիր, քշի՛ր, Անդրեյ։ Գալի՛ս եմ,— բացականչեց Միտյան ասես տենդահար։

— Չեն քնել,— ասաց Անդրեյը նորից, մտրակով ցույց տալով Պլաստունովների պանդոկը, որ գտնվում էր գյուղի հենց

սեմին, դեպի փողոց նայող վեց պատուհանները վառ լուսավորված էին։

— Չեն քնել,— կրկնեց Միտյան ուրախությամբ,— թնդացրո՛ւ, Անդրեյ, քշիր քառատրոփ, զրնգացրո՛ւ, շրխկոցո՛վ քշիր։ Հասիր։ Թող իմանա՛ն ով է գալիս։ Ե՛ս եմ գալիս։ Ես ի՛նքս եմ գալի՛ս,— մոլեգնորեն բացականչում էր Միտյան։

Անդրեյը քառատրոփ վազքով քշեց ուժասպառ եռյակը, իսկապես շրխկոցով հասավ պանդոկի բարձր անդաստակի առաջ և կանգնեցրեց իր զրեթե շնչահեղձ ձիերին, որոնցից գոլորշի էր բարձրանում։ Միտյան դուրս ցատկեց կառքից, և հենց նույն բոպեին էլ պանդոկապանը, որ արդեն գնում էր պառկելու, անդաստակից դուրս նայեց հետաքրքրված, թե ով էր այդպիսի դղրդյունով ժամանել։

— Տրիֆոն Բորիսիչ, դո՞ւ ես։

Պանդոկապանը հակվեց, ուշադիր նայեց, շեշտակի վազեց սանդուղքն ի վար և ստորաքարշ հրճվանքով նետվեց դեպի հյուրը։

— Տե՛ր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Ձե՞զ ենք տեսնում նորից։

Այս Տրիֆոն Բորիսիչը թիկնեղ ու առողջ մի գյուղացի էր, միջահասակ, մի քիչ հաստ դեմքով։ Խիստ ու անհաշտ էր նրա տեսքը, հատկապես մոկրոեցի գյուղացիների հանդեպ, բայց նա ընդունակ էր իսկույն ևթ ամենաստորաքարշ արտահայտությունը տալու իր դեմքին, երբ շահի հոտն առներ։ Հագնվում էր ռուսական ձևով՝ կողքից կոճկվող օձիքով վերնաշապիկ և անթև ու երկար բաճկոն։ Բավական փող էր դիզել, բայց ավելի բարձր դիրք էր երազում անընդհատ։ Գյուղացիների կեսից ավելին նրա ճանկերի մեջ էր, բոլորն էլ գլխովին պարտք էին նրան։ Կալվածատերերից հող էր վարձում և հետո գնելով տեր դառնում, իսկ այդ հողը նրա համար գյուղացիներն էին մշակում պարտքի դիմաց, որի տակից երբեք չէին կարողանում դուրս գալ։ Այրի էր նա և չորս հասուն աղջիկ ուներ։ Նրանցից մեկը նույնպես այրիացել էր արդեն և հոր մոտ ապրում էր իր երկու փոքր երեխաներով՝ նրա թոռներով, և նրա համար աշխատում էր վարձու բանվորուհու նման։ Մի ուրիշ աղջիկն ամուսնացել էր մի մանր պաշտոնյայի հետ, որ քծնելով-մծնելով գրագիր էր դարձել, և պանդոկի սենյակներից մեկում, պատի վրա, ամենամանր չափի ընտանեկան լուսանկարների շարքին կարելի էր տեսնել նաև

այդ չնչին պաշտոնյային՝ համազգեստով ու պաշտոնական ուսադիրներով։ Երկու կրտսեր աղջիկները, եկեղեցական տոներին կամ մի տեղ հյուր գնալիս, հագնում էին կապույտ կամ կանաչ, ըստ նորաձևության կարված հագուստներ՝ պիրկ ձգված ետևից ու կանգունաչափ պոչով, բայց հաջորդ օրն իսկ, սովորականի պես, առավոտյան վեր էին կենում հաղիվ լույսը բացված, և ցարասենու ավելը ձեռքներին՝ մաքրում էին սենյակները, դուրս տանում կեղտաջուրն ու կենվորներից մնացած աղբը։ Չնայած իր դիզած հազարներին, Տրիֆոն Բորիսիչը շատ էր սիրում փող պոկել խնջույք անող կենվորից. և հիշելով, որ դեռ մի ամիս էլ չէր անցել այն օրից, երբ Դմիտրի Ֆյոդորովիչից ինքը ավելի քան երկու հարյուր ռուբլի էր շահել, եթե ոչ երեք հարյուր, Գրուշենկայի հետ նրա խրախճանքի ժամանակ, հիմա նրան փութկոտ ուրախությամբ դիմավորեց, որովհետև նորից որսի հոտն առավ արդեն՝ հենց միայն տեսնելով, թե ինչպես Միտյան մոտեցավ ու կանգ առավ պանդոկի առջև։

— Տե՛ր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, ձե՞զ ենք նորից ընդունում մեզ մոտ։

— Սպասի՛ր, Տրիֆոն Բորիսովիչ,— սկսեց Միտյան,— նախ և առաջ ամենակարևորը՝ ո՞ւր է նա։

— Ագրաֆենա Ալեքսանդրովնա՞ն,— անմիջապես հասկացավ պանդոկապանը, աչալուրջ նայելով Միտյայի դեմքին,— նա էլ հիմի... էստեղ է...

— Ո՞ւմ հետ, ո՞ւմ հետ։

— Անցվոր հյուրեր են, տիա՛ր... Մինը պաշտոնյա է, ոնց որ թե լեհ լինի, խոսելու ձևից է երևում. հենց նա է, որ էստեղից ձիեր ուղարկեց՝ Ագրաֆենա Ալեքսանդրովնային բերելու։ Իսկ մյուսն էլ սրա ընկե՞րն է, թե ուղեկի՞ցը, ո՛վ իմանա։ Քաղաքացիական են հագել...

— Իսկ ինչ է, քե՞ֆ են անում։ Հարա՞ստ են։

— Քե՞ֆ։ Սրան էլ քե՞ֆ կասեն։ Ոչինչ բան է, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Ոչինչ բա՞։ Դե լավ, մյուսնե՞րը։

— Քաղաքից են նրանք, երկու պարոն... Ջերմեռից էին վերադառնում, էստեղ էլ մնացին։ Մինը շահել է, ոնց որ թե պարոն Միուսովի ազգականը լինի, միայն թե մոռացա անունը ինչ էր... իսկ մյուսին, կարծում եմ, դուք էլ գիտեք՝ կալվածատեր Մաքսիմով, ասում է՝ ուխտի է եկել էդ ձեր վանքը, և այ հիմա

համփորդում է պարոն Միուսովի էդ շահել ազգականի հետ...

— Ուրիշ մարդ չկա՞։

— Չէ։

— Սպասի՛ր, լռի՛ր, Տրիֆոն Բորիսիչ, հիմա ամենակարևորն ասա՝ ի՞նչ է անում նա, ինչպե՞ս է զգում։

— Դե այ քիչ առաջ եկավ ու նստել է նրանց հետ։

— Ուրա՞խ է։ Սիծաղո՞ւմ է։

— Չէ՛, շատ էլ չի ծիծաղում ոնց որ... Նույնիսկ բոլորովին էնպես տխուր նստել է, էն շահելի մազերն էր սանրում։

— Էն լեհի՞, էն սպայի՞։

— Լեհի՞։ Նա որտեղի՞ց շահել, սկի սպա էլ չէ։ Չէ, տեր իմ, ոչ թե նրա, էն մյուսի՝ Միուսովի ազգականը, շահելը... ո՞նց եմ մոռացել անունը։

— Կալգա՞նով։

— Հա՛, հենց Կալգանով։

— Լավ, ինքս կտեսնեմ։ Թո՞ւղթ են խաղում։

— Խաղում էին, բայց էլ չեն խաղում, թեյ խմեցին, էն պաշտոնյան մրգաղի ուղեց։

— Սպասի՛ր, Տրիֆոն Բորիսիչ, սպասիր, հոգիս, ինքս կտեսնեմ։ Հիմա ամենակարևորն ասա՝ գնչուներ կա՞ն։

— Գնչուները հիմի սկի չեն երևում, Դմիտրի Ֆյոդորովիչ, իշխանությունը քշեց նրանց էստեղից։ Բայց ա՛յ, չհուղներ կան էստեղ, ծնծղա և ջութակ են նվագում, էս հարևան գյուղում են, դե հենց հիմի էլ կարելի է մարդ ուղարկել։ Կգան։

— Ուղարկի՛ր, անպայման ուղարկի՛ր,— գոչեց Միտյան.— Իսկ աղջիկներին էլ կարելի է կանչել, ինչպես այն օրը, հատկապես Մարյային, և Ստեպանիդային էլ, Արինային էլ։ Երկո՞ւ հարյուր ռուբլի՝ երգչախմբի համար։

— Բա՞, որ էդքան փող ես տալիս՝ ամբո՞ղջ գյուղը ոտի կհանեմ քեզ համար, թեկուզ և հիմի պառկել ու խոմփացնում են։ Բայց տեր իմ, Դմիտրի Ֆյոդորովիչ, արժի՞ որ էդպիսի շնորհ ես անում էստեղի գյուղացիներին, թեկուզ և ասենք աղջկերանց։ Էդպիսի գումա՞ր ես գցում սրանց ատորության ու կոպտության համար։ Էս մեր գյուղացին սիգար ծխելու մա՞րդ է որ... իսկ դու նրանց տալիս էիր։ Ախր նա հոտածի մեկն է, է՞, ավազա՛կը։ Իսկ աղջկերքը բոլորն էլ ոջլոտ են։ Ախր ես իմ սեփական աղջկերանց ոտի կհանեմ քեզ համար՝ ձրի՞, ոչ թե էդպիսի գումարով։ Հենց նոր պառկեցին քնելու, իսկ ես ոտով կտամ նրանց

մեջքին ու կստիպեմ, որ քեզ համար երգեն։ Էն անգամը շամպայն խմացրիք դյուղացիներին, է-է՞խ։

Տրիֆոն Բորիսիչն իզուր էր կարեկցում Միտյային. անցյալ անգամ ինքն էր հինգ-վեց շիշ շամպայն թաքցրել նրանից, իսկ սեղանի տակ ընկած մի հարյուրանոց թղթադրամ վերցրել ու սեղմել էր ափի մեջ։ Այդպես էլ նրա բռունցքի մեջ մնաց այդ թղթադրամը։

— Տրիֆոն Բորիսիչ, այն օրը հազարից ավելի շաղ տվեցի այստեղ։ Հիշո՞ւմ ես։

— Շաղ տվեցիք, ջանիկս, ո՞նց չհիշենք ձեզ, վայ թե մի երեք հազար թողեցիք մեզ մոտ։

— Դե՛հ, հիմա էլ եկել եմ նույնը անելու, տեսնո՞ւմ ես։

Եվ նա հանեց ու պանդոկապանի հենց քթին մոտեցրեց թղթադրամների իր կապոցը։

— Հիմա լսիր ու հասկացի՛ր, մի ժամից գինին է գալու, խորտիկները, կարկանդակները, շաքարեղենը, այդ բոլորն էլ իսկույն վերև կբերես։ Այս մի արկղն էլ, ա՛յ, որ Անդրեյի մոտ է, հենց հիմա վերև կբերես, կբացես և իսկույն շամպայնը կմատուցես... Իսկ գլխավորը՝ աղջիկների՛ն կանչիր, աղջիկներին, և Մարյային անպայման...

Նա դարձավ դեպի կառքը և իր ատրճանակների տուփը դուրս քաշեց նստարանի տակից։

— Վարձքդ վերցրո՛ւ, Անդրեյ։ Ահա քեզ տասնհինգ ռուբլի՝ ճամփու ծախսը, այս հիսունն էլ՝ օղու փող... քո պատրաստակամության, քո սիրո համար... Հիշի՛ր ազնվական Կարամազովին։

— Վախենում եմ, տեր իմ... — տատանվեց Անդրեյը,— մի հինգ ռուբլի եթե հաճեք, ավելին չեմ ընդունի։ Տրիֆոն Բորիսիչը վկա։ Ներեցեք իմ հիմար խոսքը...

— Ինչի՞ց ես վախենում,— Միտյան հայացքով լափեց նրան։— Դե լա՛վ, դո՛ւ էլ գրողի ծոցը, եթե այդպես է,— գոռաց նա, հինգ ռուբլի նետելով կառապանին։— Դե հիմա ինձ սուսուփուս վերև տար, Տրիֆոն Բորիսիչ, և այնպես արա, որ նախ և առաջ մի աչք գցեմ նրանց վրա, բայց նրանք ինձ չնկատեն։ Որտե՞ղ են նրանք, կապույտ սենյակո՞ւմ։

Տրիֆոն Բորիսիչը վախվխելով նայեց Միտյային, բայց նրա պահանջն իսկույն կատարեց հնազանդորեն. զգուշությամբ առաջնորդեց նրան միջանցք, ինքը մտավ առաջին մեծ սենյակը, որ գտնվում էր հյուրերի զբաղեցրած սենյակի կողքին, և մոմ բերեց այնտեղից։ Հետո կամացուկ ներս տարավ Միտյային ու կանգնեցրեց անկյունում, մթան մեջ, որտեղից նա կարող էր ազատորեն դիտել սեղանի շուրջ նստածներին, ինքը անտեսանելի մնալով։ Բայց Միտյան երկար չնայեց, և չէր էլ կարող ուշադիր նայել. տեսավ Գրուշենկային, և սիրտն սկսեց ուժգին տրոփել, աչքերը մթագնեցին։ Գրուշենկան կողքով էր նստել սեղանին, բազկաթոռի մեջ, իսկ նրա մոտ, բազմոցի վրա, նստել էր սիրունիկ ու դեռ շատ երիտասարդ Կալգանովը։ Գրուշենկան նրա ձեռքն էր բռնել ու կարծես ծիծաղում էր, իսկ երիտասարդը, առանց նրան նայելու, մի բան էր ասում բարձրաձայն, ասես վրդովված, դիմելով Մաքսիմովին, որ նստել էր սեղանի մյուս կողմը՝ Գրուշենկայի դիմաց։ Իսկ Մաքսիմովը քրքջում էր։ Բազմոցի վրա նստած էր նա, իսկ մի ուրիշ անծանոթ էլ՝ բազմոցի կողքին, աթոռի վրա, պատի տակ։ Բազմոցի վրա նստողը մեկնվել էր ու ծխամորճ էր ծխում, և Միտյան մի վայրկյան միայն տեսավ, որ նա լայն դեմքով ու հաստլիկ մի մարդուկ էր, երևի կարճահասակ ու կարծես մի բանից բարկացած։ Իսկ նրա ընկերը, մյուս անծանոթը, չափից ավելի բարձրահասակ թվաց Միտյային։ Բայց Միտյան ուրիշ ոչինչ չկարողացավ տեսնել այլևս։ Շունչը կտրվեց։ Մի բոպե իսկ չկարողացավ դիմանալ, ատրճանակների տուփը դրեց սեղանին, և սրտատրոփ, ասես ցրտից դողալով, ուղղակի մտավ կապույտ սենյակը՝ նրանց մոտ։

— Ա՛յ,— ճչաց Գրուշենկան վախեցած, մյուսներից առաջ նկատելով նրան։

VII

ԱՌԱՋԻՆՆ ՈՒ ԱՆՎԻՇԵԼԻՆ

Միտյան իր արագ ու երկար քայլերով մոտեցավ ուղղակի սեղանին։

— Պարոնա՛յք,— սկսեց նա բարձրաձայն, համարյա գոռալով, բայց կակազելով յուրաքանչյուր բառի վրա,— ես... ես ոչի՛նչ։ Մի՛ վախենաք,— բացականչեց նա,— ես... դե ոչինչ, ոչի՛նչ,— դարձավ նա հանկարծ Գրուշենկային, որ իր բազկաթոռի մեջ հակվել էր Կալգանովի կողմը և ամուր կպել նրա ձեռքից։— Ես... ես էլ եմ ճամփորդ։ Մնալու եմ մինչև առավոտ։

Պարոնա՛յք, անցորդ ուղևորը... կարո՞ղ է ձեզ հետ լինել... մինչև առավոտ։ Միայն մինչև առավոտ, վերջի՜ն անգամ, հենց այս սենյակում, կարելի՞ է։

Այդ վերջին հարցն արդեն ուղղեց հասուկիկ մարդուկին, որ նստել էր բազմոցի վրա և ծխամորճն էր ծխում։ Մարդուկը մեծամտորեն հեռացրեց ծխամորճը շրթներից և ասաց խիստ շեշտով.

— Պանե, մենք այստեղ առանձնակի ենք։ Ուրիշ սենյակներ կան։

— Օ՜, դո՜ւք եք, Դմիտրի Ֆյոդորովիչ, էլ ինչո՞ւ եք հարցնում,— պատասխանեց հանկարծ Կալգանովը։— Դե նստեցի՜ք մեզ հետ, բարև՛ ձեզ։

— Բարև՛, սիրելի բարեկամ... և անգի՜ն բարեկամ։ Ես միշտ հարգել եմ ձեզ... — ուրախությամբ ու եռանդագին պատասխանեց Միտյան, անմիջապես իր ձեռքը նրան մեկնելով սեղանի վրայից։

— Օ՜յ, ինչ ամուր սեղմեցիք։ Ուղղակի կոտրեցիք մատներս,— ծիծաղեց Կալգանովը։

— Այ նա միշտ էլ այդպես է սեղմում, մի՜շտ,— ուրախ վրա բերեց Գրուշենկան, դեռ երկյուղ ժպտալով. կարծես հանկարծ համոզվել էր Միտյայի տեսքից, որ նա կռվաղանություն չի անելու, և դիտում էր նրան սոսկալի հետաքրքրությամբ ու դեռ անհանգստացած։ Միտյայի դեմքին կար մի բան, որ ուղղակի ապշեցրել էր Գրուշենկային, և նա բնավ, բնավ չէր սպասում, որ Միտյան կարող է այսպիսի բոպեին այդ ձևով մտնել և այդպես խոսել։

— Բարև ձեզ, տիա՛ր,— քաղցրածոր ձայն տվեց նաև կալվածատեր Մաքսիմովը ձախից։ Միտյան նրա մոտ էլ վազեց։

— Բարև՛ ձեզ, դո՞ւք էլ այստեղ եք, որքա՞ն ուրախ եմ, որ դուք էլ այստեղ եք։ Պարոնա՛յք, պարոնա՛յք, ես... — նա նորից դարձավ ծխամորճ ծխող պանին, երևի նրան գլխավոր մարդը համարելով այստեղ։— Ես թռա եկա... ուզում էի այս սենյակում անցկացնել իմ վերջին օրն ու վերջին ժամը, հենց այս սենյակում... ուր ես պաշտե՛լ եմ... իմ թագուհուն... ների՛ր, պանե,— գոռաց նա մոլեգնորեն,— ես սուրալով գալիս էի այստեղ ու երդվեցի... Օ՜, մի՜ վախենաք, իմ վերջի՜ն գիշերն է... խմե՜նք հաշտության բաժակը, պանե։ Հենց հիմա գինի են մատուցելու... Ես ահա ա՛յս բերեցի։— Նա հանկարծ, չգիտես ինչու, հանեց իր թղթադրամների կապոցը։— Թո՜ւյլ տուր, պանե։ Ես երգ ու նվագ եմ ուզում, աղմուկ, աղաղակ, ամե՜ն ինչ, որ եղել է մի անգամ... Բայց որդը, անպետք որդը պիտի սողա գետնի վրա և պիտի չքվի՜։ Իմ ուրախության օ՜րն եմ հիշելու այս գիշեր՝ իմ վերջի՜ն գիշերը...

Նա գրեթե շնչահեղձ էր լինում։ Շատ, շատ բան էր ուզում ասել, բայց միայն տարօրինակ բացականչություններ դուրս թռան բերանից։ Պանը անշարժ նայում էր նրան, թղթադրամների նրա կապոցին, նայում էր Գրուշենկային և ակնհայտորեն ընկել էր տարակուսանքի մեջ։

— Եթե իմ թահուին կամենա...— սկսեց նա ասել...

— Ի՞նչ թահուի, ուզում եք թագուհի՞ ասել, ինչ է,— ընդհատեց հանկարծ Գրուշենկան։— Ա՜յ թե ծիծաղս է գալիս, որ այդ ձևով եք խոսում։ Նստի՜ր, Միտյա, այդ ի՞նչ բաներ ես ասում, հա՞։ Մի՜ վախեցրու խնդրեմ։ Չես վախեցնելու, չէ՞, չես վախեցնելու։ Եթե չես վախեցնելու, ուրախ եմ, որ եկար...

— Ե՞ս, ես վախեցնե՞մ,— գոչեց հանկարծ Միտյան, վեր նետելով իր ձեռքերը։— Օ՜, անցե՜ք իմ կողքով, անցեք գնացե՜ք, չեմ խանգարի...— Եվ հանկարծ նա, բոլորովին անսպասելիորեն, ոչ միայն բոլոր ներկաների, անշուշտ ի՜ր համար էլ անսպասելիորեն, նետվեց աթոռի վրա և սկսեց աղեկտուր լաց լինել, գլուխը դեպի հանդիպակաց պատը դարձնելով, իսկ թևերով ամուր գրկելով աթոռի հենակը, կարծես սեղմելով իր կրծքին։

— Դե՜, դե լա՜վ, ի՜նչ մարդ ես դու,— բացականչեց Գրուշենկան հանդիմանորեն։— Ա՜յ ճիշտ այսպես գալիս էր ինձ մոտ... հանկարծ սկսում է խոսել, իսկ ես ոչինչ չեմ հասկանում։ Մի անգամ էլ ա՜յ այսպես սկսեց լաց լինել, և ահա հիմա նորից... ամոթ է, ամո՜թ։ Ինչո՞ւ ես լաց լինում որ։ Գոնե մի պատճա՞ռ լիներ,— ավելացրեց նա հանկարծ, մի տեսակ ջղայնությամբ շեշտելով այդ իր առեղծվածային խոսքը։

— Չէ... լաց չեմ լինում... Դե լավ, բարև ձեզ,— վայրկենաբար ետ դարձավ նա աթոռի վրա և հանկարծ սկսեց ծիծաղել, բայց ոչ թե իր փայտաձայն, կարճ-կարճ խնդուքով, այլ մի տեսակ անլսելի, երկար, ջղային ու ցնցվող ծիծաղով։

— Ահա նորից... Դե զվարթացիր, զվարթացի՜ր,— համոզում էր նրան Գրուշենկան։— Ես շատ ուրախ եմ, որ եկար, շա՜տ

ուրախ, Միտյա, լսո՞ւմ ես, շատ ուրախ եմ։ Ես ուզում եմ, որ նա նստի՛ մեզ հետ այստեղ,— ասաց նա հրամայական շեշտով, կարծես թե դիմելով բոլորին, թեև նրա ասածը հայտնապես վերաբերում էր բազմոցի վրա նստած մարդուն։— Ուզո՛ւմ եմ, ուզո՛ւմ։ Իսկ եթե նա գնա, ե՛ս էլ կգնամ, ա՛յ իմացեք,— ավելացրեց նա, և աչքերը հանկարծ վառվեցին։

— Ինչ որ կամենում է իմ թագուհին՝ օրենք է,— ասաց պանը, բարեկրթորեն համբուրելով Գրուշենկայի ձեռքը։— Խնդրում եմ՝ պանը մասնակցի մեր սեղանին,— դիմեց նա Միտյային սիրալիր կերպով։ Միտյան նորից վեր թռավ՝ նորից մի ճառ արտասանելու ակնհայտ մտադրությամբ, բայց ուրիշ բան ստացվեց։

— Խմե՛նք, պանե,— ասաց նա հանկարծ կարճ ու կտրուկ, ճառի փոխարեն։ Բոլորը ծիծաղեցին։

— Տե՛ր աստված։ Ես էլ կարծեցի՝ նորից ուզում է ճառ ասել,— ջղայնորեն բացականչեց Գրուշենկան։— Լսո՞ւմ ես, Միտյա,— ավելացրեց նա պահանջող շեշտով,— էլ մի՛ վեր թռի, բայց հոյակապ բան ես արել, որ շամպայն ես բերել։ Ես էլ եմ խմելու, իսկ այս մրգոցին տանե՛լ չեմ կարող։ Ամենից լավն այն է, որ ինքդ եկար, թե չէ ձանձրույթից մեռնում էինք... Բայց ի՞նչ է, խնջույք սարքելո՞ւ ես եկել նորից։ Դի՛ր այդ փողերը գրպանդ։ Որտեղի՞ց ես այդքան ձեռք բերել։

Միտյան, շփոթված, արագորեն գրպանը խոթեց թղթադրամները, որ մինչ այդ ճմռթված բռնել էր ձեռքում, և որոնք բոլորի ու հատկապես լեհ պանների ուշադրությունն էին գրավել։ Կարմրեց նա։ Հենց այդ բոպեին պանդոկապանը շամպայնի բացված մի շիշ ու բաժակներ բերեց մատուցարանի վրա։ Միտյան թափով վերցրեց շիշը, բայց այնքան էր շփոթվել, որ մոռացավ, թե ինչ պետք է անի։ Կալգանովը շիշը առավ նրա ձեռքից և ինքը լցրեց բաժակները։

— Դեռ մի շիշ էլ, մի շի՛շ էլ,— գոռաց Միտյան պանդոկապանին և, մոռանալով բաժակ խփել պանի հետ, որին այնքան հանդիսավոր կերպով հրավիրել էր հաշտության կենաց խմելու, հանկարծ մենակ դատարկեց իր բաժակը, ոչ ոքի չսպասելով։ Նրա դեմքը լրիվ փոխվեց մեկեն։ Հանդիսավոր ու ողբերգական արտահայտության փոխարեն, որով ներս էր մտել, կարծես մանկական մի բան երևաց դեմքին։ Հանկարծ խաղաղվեց ու խոնարհ դարձավ մի տեսակ։ Ամոթխած և ուրախ հայացքով էր

նայում բոլորին, հաճախակի ու նյարդայնորեն քրքջալով, հանցանք գործած ու նորից ներս ընդունված, նորից փայփայված շնիկի երախտապարտ տեսքով։ Կարծես ամեն ինչ մոռացել էր և հիացմունքով, մանկական ժպիտով էր նայում բոլորին։ Իսկ Գրուշենկային նայում էր անընդհատ ծիծաղելով ու իր աթոռն ընդհուպ մոտեցրել էր նրա բազկաթոռին։ Կամաց-կամաց զննեց նաև երկու լեհ պաններին, թեև դեռ շատ բան չէր հասկանում նրանցից։ Բազմոցին նստած պանը նրա վրա տպավորություն էր գործում իր արժանավայել կեցվածքով, լեհական առոգանությամբ ու մանավանդ ծխամորճով։ «Դե ի՞նչ կա որ,— մտորում էր Միտյան,— լավ է, որ ծխամորճ է ծխում»։ Պանի մի քիչ թառամած, համարյա արդեն քառասնամյա դեմքն իր շատ փոքր քթով, որի տակ երևում էին երկու բարալիկ, սուր, ներկված ու ժպիրհ բեղիկներ, դեռ նույնպես ամենադույզն տարակուսանք ժպիրհ բեղիկներ, դեռ նույնպես ամենադույզն տարակուսանք չէր հարուցում Միտյայի մեջ։ Մինչև իսկ պանի քնձոտ կեղծամը, որ պատրաստված էր Սիբիրում, և որի քունքերը շատ հիմար ձևով առաջ էին սանրված, մի հատուկ զարմանք չպատճառեց Միտյային։ «Ուրեմն այդպես է պետք, եթե կեղծամ է դնում»,— շարունակում էր նա մտորել, երանության մեջ ընկած։ Իսկ պատի տակ նստած պանը, որ ավելի երիտասարդ էր և որ հանդուգն ու մոլեգին հայացքով էր նայում բոլորին, լուռ արհամարհանքով լսելով ընդհանուր խոսակցությունը, դարձյալ Միտյային զարմացրեց միայն իր շատ բարձր հասակով, որ սոսկալի անհամաչափություն էր ստեղծում նրա և բազմոցին նստած պանի միջև։ «Եթե ոտքի կանգնի, կլինի մի տասնմեկ վերշոկ»,— անցավ Միտյայի մտքով։ Ի միջի այլոց մտածեց նաև, թե այդ բարձրահասակ պանը հավանաբար մյուս պանի բարեկամն ու կամակատարն է, մի տեսակ «թիկնապահը», և թե ծխամորճ ծխող կարճլիկ պանը իհարկե իշխում է բարձրահասակ պանի վրա։ Բայց այս բոլորն էլ հոյակապ ու անվիճելի բաներ էին թվում Միտյային։ Փոքրիկ շնիկի մեջ հանգել էր ախոյանության ամեն մի զգացում։ Գրուշենկայի հոգեվիճակից ու նրա մի քանի ասածների առեղծվածային շեշտից դեռ ոչինչ չէր հասկացել. հասկացել էր միայն, որ նա սիրալիր է իր նկատմամբ, «ներեց» իրեն ու կողքին նստեցրեց, և Միտյայի սիրտը ուրախությամբ էր թրթռում դրա համար։ Հրճվանքից կորցնում էր իրեն, տեսնելով, թե ինչպես է Գրուշենկան ըմպում շամպայնը բաժակից։ Սակայն տիրող լռությունը կարծես հանկարծ

անակնկալի բերեց նրան, և նա մեկ առ մեկ նայեց բոլորին՝ մի բան սպասող աչքերով. «Բայց ինչո՞ւ ենք այսպես նստել, ինչո՞ւ մի որևէ բան չենք սկսում, պարոնայք»,— ասում էր կարծես նրա խնդուն հայացքը։

— Այ նա անընդհատ սուտ բաներ է ասում, և մենք էլ անընդհատ ծիծաղում էինք,— սկսեց հանկարծ Կալգանովը, ասես կռահելով նրա միտքը և ցույց տալով Մաքսիմովին։

Միտյան ուղղակի աչքերը հառեց Կալգանովին և հետո անմիջապես Մաքսիմովին նայեց։

— Սուտ բանե՞ր,— ծիծաղեց նա իր կարճ, փայտաձայն ծիծաղով, անմիջապես ուրախանալով չգիտես ինչի համար,— հա-հա՜։

— Այո։ Պատկերացրեք, պնդում է, որ իբր թե քսանական թվականներին մեր ամբողջ հեծելազորը ամուսնացել է լեհուհիների հետ։ Բայց դա սոսկալի անմտություն է, այնպես չէ՞։

— Լեհուհիների հե՞տ,— կրկնեց նորից Միտյան և արդեն ուղղակի հրճվանքով։

Կալգանովը շատ լավ հասկանում էր Միտյայի հարաբերությունները Գրուշենկայի հետ, կռահում էր նաև լեհ պանի դերը, բայց այդ բոլորը այնքան էլ չէին հետաքրքրում նրան, գուցե և բոլորովին չէին հետաքրքրում. ամենից ավելի նրան հետաքրքրում էր Մաքսիմովը։ Նա Մաքսիմովի հետ պատահաբար ընկել էր այստեղ և կյանքում առաջին անգամ հանդիպել էր պաններին այս պանդոկում։ Իսկ Գրուշենկային ճանաչում էր նախօրոք և նույնիսկ մի անգամ նրա տանն էր եղել ինչ-որ մեկի հետ. այն ժամանակ նա դուր չէր եկել իրեն։ Բայց այստեղ Գրուշենկան շատ սիրալիր էր նայում նրան. մինչև Միտյայի գալը նույնիսկ շոյում էր նրան, սակայն նա մի տեսակ անզգա էր մնում։ Հաղիվ քսան տարեկան պատանի էր Կալգանովը, պճնամոլի հագուստ-կապուստով, շատ սիրունիկ ու սպիտակ դեմքով և խարտյաշ, խիտ, սքանչելի մազերով։ Այդ սպիտակ դեմքին կենդանություն էին տալիս բաց կապույտ, գեղեցիկ աչքերը, որոնք խելացի էին, երբեմն էլ ստանում էին խորունկ, նույնիսկ տարիքին անհամապատասխան արտահայտություն, չնայած որ մերթ ընդ մերթ պատանին ուղղակի երեխայի նման էր խոսում ու նայում և բոլորովին էլ չէր ամաչում դրա համար, մինչև իսկ երբ ինքն էր գիտակցում այդ բանը։ Ընդհանրապես նա շատ յուրօրինակ մարդ էր, նույնիսկ քմահաճ, թեև միշտ էլ սիրալիր։

Երբեմն նրա դեմքի արտահայտության մեջ անշարժ ու անդրդվելի մի բան էր երևում. նայում էր ձեզ, լսում, բայց կարծես միաժամանակ անշեղորեն երազում էր իրեն զբաղեցնող մի ուրիշ բանի մասին։ Մերթ դառնում էր ալարկոտ ու ծույլ, մեկ էլ հանկարծ սկսում էր հուզվել՝ երբեմն կարծես ամենադատարկ մի պատճառով։

— Երևակայեցեք, արդեն չորս օր է, որ հետս եմ տան ածում նրան,— շարունակեց նա, կարծես մի քիչ ծույլ-ծույլ երկարացնելով բառերը, բայց առանց որևէ թեթևսոլիկության, այլ շատ բնականորեն։— Հիշո՞ւմ եք, հենց այն օրից, երբ ձեր եղբայրը նրան կառքից դուրս հրեց և նա ետ-ետ թռավ։ Այդ ժամանակ, երբ տեսա այդ բանը, նա իմ հետաքրքրությունը շարժեց, և ես նրան հետս տարա գյուղ. բայց հիմա անընդհատ սուտ է խոսում, այնպես որ ամաչում եմ նրա հետ լինել։ Ետ եմ տանում նրան...

— Պանը լեհ օրիորդ չի տեսել, և իր ասածը չէր կարող պատահել,— առարկեց ծխամորճով պանը Մաքսիմովին։

Ծխամորճով պանը կարգին ռուսերեն գիտեր, գոնե շատ ավելի լավ, քան ձևացնում էր։ Ռուսերեն բառերը, եթե գործածում էլ էր, աղավաղում էր ու արտասանում լեհական ձևով։

— Բայց չէ՞ որ ինքս էլ ամուսնացել եմ լեհ օրիորդի հետ,— մանր-մանր քրքջալով պատասխանեց Մաքսիմովը։

— Ինչ է, դուք հեծելազորո՞ւմ եք ծառայել։ Չէ՞ որ խոսում էիք հեծելազորի մասին։ Ուրեմն դուք հեծելազորի սպա՞ եք եղել,— իսկույն վրա բերեց Կալգանովը։

— Դե իհա՜րկե, հեծելազորի սպա՞ է նա, հա-հա՜,— գոռաց Միտյան, որ ագահորեն լսում էր և իր հարցական հայացքն անմիջապես դարձնում ամեն մի խոսողի կողմը, կարծես թե լսելիքը-չլսվածը մի բան էր սպասում ամեն մեկի ասածից։

— Բայց չէ, գիտե՞ք ինչ,— դարձավ նրան Մաքսիմովը,— ես այն եմ ասում, որ այնտեղի օրիորդները... սիրունի՜կ օրիորդները... հենց որ մեր ուլանի հետ մազուրկա են պարում... հենց որ պարեց-պրծավ մազուրկան, իսկույն թռնում է ուլանի ծնկներին, կատվի նման, գիտե՞ք... ճերմկուկ կատվի ձագի... իսկ պան-հայրիկն ու պանի-մայրիկը տեսնում ու թույլ են տալիս... թույլ են տալիս, չէ՞... իսկ մեր ուլանը մյուս օրը գնում ու ձեռքն է խնդրում... այ այդպես... ձե՜ռքն է խնդրում, հիհի՜,— վերջացրեց Մաքսիմովը քրքջալով։

— Պանը լայդա՛կ է,— բրթմնջաց հանկարծ աթոռի վրա նստած բարձրահասակ լեհը և ոտքը ոտքին դրեց։ Միտյան հենց միայն նկատեց նրա հսկայական երկարաճիտ կոշիկը, որ յուղած էր և հաստ ու կեղտոտ ներքան ուներ։ Եվ ընդհանրապես երկու պաններն էլ բավական աղտոտ էին հագնված։

— Դե՛, դե՛, այ քեզ լայդակ։ Ինչո՞ւ է այդպես նախատում,— բարկացավ հանկարծ Գրուշենկան։

— Պանի Ագրիպպինա, պանը մեր լեհաց երկրում հասարակ աղջկերք է տեսել, ոչ թե ազնվական օրիորդներ,— նկատեց ծխամորճով պանը, դառնալով Գրուշենկային։

— Կարող ես վստահ լինել,— արհամարհանքով վրա տվեց բարձրահասակ պանը։

— Այ քեզ բա՛ն։ Թողեք խոսի մարդը։ Խոսում են, լսում, ի՞նչ կարիք կա խանգարելու։ Նրանց հետ ես ուրախ եմ զգում,— խայթեց Գրուշենկան։

— Ես չեմ խանգարում, պանի,— նշանակալից ասաց կեղծամով պանը, երկար մի հայացք նետելով Գրուշենկայի վրա, և մեծամտորեն լռեց ու նորից սկսեց ծծել իր ծխամորճը։

— Բայց չէ, չէ, պանը ճիշտ էր ասում հիմա,— տաքացավ նորից Կալգանովը, կարծես թե խոսքը մի շատ կարևոր հարցի մասին էր։— Չէ՞ որ նա Լեհաստանում չի եղել, ուրեմն էլ ինչպե՞ս կարող է խոսել Լեհաստանի մասին։ Դուք հո Լեհաստանում չեք ամուսնացել, չէ՞։

— Չէ, չէ, Սմոլենսկի նահանգում։ Միայն թե՝ դրանից առաջ մի ուլան բերել էր նրան Լեհաստանից, այսինքն իմ կնոջը, ապագա կնոջը, տի՛րք, և պանի-մայրիկին էլ հետը, տանտիին[1] էլ, և դեռ մի ազգականուհու էլ, որ հասուն տղա ուներ... հենց ուղղակի Լեհաստանից, բուն Լեհաստանից... և իր բերած օրիորդին ինձ զիջեց։ Մեր պորուչիկներից մեկն էր այդ ուլանը, մի աքանչելի երիտասարդ։ Սկզբում ինքն էր ուզում ամուսնանալ, բայց չամուսնացավ, որովհետև պարզվեց, որ օրիորդը կաղ էր...

— Ուրեմն դուք կաղ օրիորդի հե՞տ ամուսնացաք,— բացականչեց Կալգանովը։

— Այո՛, կաղ օրիորդի հետ։ Հասկանո՞ւմ եք, երկուսն էլ մի քիչ խաբեցին ինձ այն ժամանակ, թաքցրին բանը։ Ես կար-

[1] Տանտի (Ֆրանս. tante բառից)— հորաքույր կամ մորաքույր։

ծում էի, որ օրիորդը ցատկոտում է... դե անընդհատ ցատկոտում էր, ես կարծեցի, որ ուրախանում է այդպես...

— Ուրախանո՞ւմ է, որ ձե՞զ հետ է ամուսնանում,— գոչեց Կալգանովը մի տեսակ մանկական, զրնգուն ձայնով։

— Այո, ուրախանո՞ւմ։ Բայց դուրս եկավ, որ պատճառը բոլորովին ուրիշ բան էր։ Հետո, երբ պսակվեցինք, հենց պսակից հետո, նույն իրիկունը, խոստովանեց օրիորդը և շա՞տ հուզիչ կերպով ներողություն խնդրեց։ Երբ փոքր էի, ասաց, մի անգամ շրափոսի վրայով թռա և ոտքս վնասվեց։ Հի-հի՞։

Կալգանովը քահ-քահ ծիծաղեց ուղղակի մանկական ծիծաղով ու համարյա ընկավ բազմոցի վրա։ Գրուշենկան նույնպես ծիծաղեց։ Իսկ Միտյան երշանկության գագաթն էր հասել։

— Գիտե՞ք, գիտե՞ք, այս մեկն արդեն ճի՞շտ է ասում, այս մեկն արդեն սուտ չէ՞ հիմա,— բացականչում էր Կալգանովը, դառնալով Միտյային։— Եվ գիտե՞ք, նա երկու անգամ է ամուսնացել, հիմա իր առաջին կնոջ մասին էր խոսում, իսկ երկրորդ կինը փախել է, գիտե՞ք, և մինչև հիմա էլ ողջ է դեռ, գիտե՞ք այս բանը։

— Չէ, իսկապե՞ս,— Միտյան արագորեն դարձավ Մաքսիմովին, և նրա դեմքին արտասովոր մի զարմանք երևաց։

— Այո՛, փախավ, այդպիսի մի տհաճություն ունեցա,— համեստորեն հաստատեց Մաքսիմովը։— Մի մսյուի հետ գնաց։ Բայց ի՞նչն է կարևորը. իմ ամբողջ փոքրիկ գյուղը հենց միայն իր անունով է վեր դրել նախօրոք, ամեն բանից առաջ։ Դու զարթցած մարդ ես, ասաց, կարող ես ինքդ մի կտոր հաց ճարել։ Ասաց ու թեթևանս փակեց։ Մի պատկառելի եպիսկոպոս կար, նա մի անգամ ինձ այնպես ասաց. քո մի կինը կաղ էր, ասաց, իսկ մյուսի էլ ոտքը շատ թեթև էր, հի-հի՞։

— Լսեցե՛ք, լսեցե՛ք ինձ,— հենց ուղղակի եռում էր Կալգանովը,— եթե նույնիսկ սուտ է ասում (և նա համախ է սուտ ասում), միմիայն նրա համար է, որ բոլորիս էլ հաճույք պատճառի։ Դա հո ստորություն չէ, ստորություն չէ, ճի՞շտ է։ Գիտե՞ք, ես նրան սիրում եմ երբեմն։ Նա շատ ստոր մարդ է, բայց բնականություն կա նրա ստորության մեջ, հը՞։ Ի՞նչ եք կարծում։ Մարդ կա, որ մի որևէ բանի համար է ստորություն անում, մի շահ ստանալու համար, իսկ նա՝ հենց այնպես, բնականից... Երևակայեցեք, օրինակ, նա հավակնում է, որ... (երեկ ամբողջ ճանապարհին վիճում էր այդ հարցով), որ Գոգոլը «Մեռյալ հո-

գիներ»-ում նրա մասին է գրել։ Հիշո՞ւմ եք, գրքում մի կալվածատեր Մաքսիմով կա, որին ծեծում է Նոզդրևը, և Նոզդրևին դատի են տալիս՝ «հարբած վիճակում կալվածատեր Մաքսիմովին ճիպոտով ծեծելու և անձնական վիրավորանք հասցնելու համար», դե հիշում եք, չէ՞։ Եվ ի՞նչ եք կարծում... պատկերացրե՞ք, նա հավակնում է, որ ինքն է եղել այդ կալվածատեր Մաքսիմովը և իրե՞ն են ծեծել։ Է՞, կարո՞ղ է այդպիսի բան լինել։ Չիչիկովն ամենաուշը քսանական թվականներին էր անում իր ճամփորդությունը, քսանականների սկզբին, այնպես որ տարեթվերը բոլորովին չեն բռնում։ Նա չէր կարող այն ժամանակ ծեծ ուտել։ Չէր կարող, չէր կարող, չէ՞։

Դժվար էր պատկերացնել, թե ինչո՞ւ Կալգանովն այդպես տաքացել էր, բայց նա անկեղծորեն էր բորբոքվում, Միտյան անվերապահորեն ձայնակցեց նրան։

— Լավ, բայց եթե իրո՞ք ծեծել են,— գոռաց նա քահ-քահ ծիծաղելով։

— Ոչ թե ուղղակի ծեծեցին, այլ հենց այնպես,— վրա բերեց Հանկարծ Մաքսիմովը։

— Է, եղա՞վ։ Կա՛մ ծեծել են, կամ էլ ոչ, հը՞։

— Ժամը քանի՞սն է, պանե,— լեհերեն հարցրեց ծխամորճով պանը բարձրահասակ պանին, ձանձրացող մարդու արտահայտությամբ։ Բարձրահասակ պանը ուսերը թոթվեց. երկուսն էլ ժամացույց չունեին։

— Իսկ ինչո՞ւ չխոսեն։ Թողեք, որ ուրիշներն էլ խոսեն։ Եթե դուք ձանձրանում եք, ուրեմն մյուսները չպետք է խոսեն, հա՞,— վրա տվեց նորից Գրուշենկան, և հայտնի էր, որ դիտմամբ կրգչում էր։ Միտյայի մտքում կարծես թե առաջին անգամ լինելով մի բան առկայծեց։ Պանն արդեն ակնհայտ շղայնությամբ պատասխանեց այս անգամ.

— Պանի, ես ոչ մի հակառակ բան չասացի, ես ոչինչ չասացի։

— Դե լավ, եթե այդպես է։ Իսկ դու պատմի՛ր,— գոռաց Գրուշենկան Մաքսիմովին։— Ինչո՞ւ բոլորդ էլ լռեցիք։

— Չէ, գիտե՞ք, պատմելու բան էլ չկա այստեղ, պարզապես հիմարություն է այդ ամբողջը,— իսկույն վրա բերեց Մաքսիմովը ակնհայտ գոհունակությամբ ու մի քիչ սեթևեթելով։— Եվ Գոգոլն էլ այդ ամբողջը պարզապես այլաբանության ձևով է արել, որովհետև բոլոր ազգանուններն էլ այլաբանական է դարձրել։ Նոզդրևը, գիտե՞ք, ոչ թե Նոզդրև էր, այլ Նոսով, իսկ դե Կուվշիննիկովը արդեն բոլորովին նման էլ չէ, որովհետև նա Շկվորնև էր։ Իսկ Ֆենարդին իսկապես Ֆենարդի էր, միայն թե իտալացի չէր, այլ ռուս, Պետրով, և մամղել Ֆենարդին էլ սիրունիկ օրիորդ էր, ոտքերին տրիկո էր հագնում, սիրունի՛կ ոտքերին, շրջազգեստը կարճլիկ էր՝ զանակներով, և ահա նա էր արագ-արագ պտտվում, բայց ոչ թե չորս ժամ, այլ ընդամենը չորս բոպե միայն... և բոլորին գլխահան էր անում...

— Բայց ինչո՞ւ ծեծեցին, ինչո՞ւ, ինչո՞ւ ծեծեցին քեզ,— գոռաց Կալգանովը։

— Պիրոնի համար,— պատասխանեց Մաքսիմովը։

— Ի՞նչ Պիրոնի,— գոռաց Միտյան։

— Ֆրանսիացի հայտնի գրող է՝ Պիրոն։ Խմում էինք այդ օրը, մի մեծ խմբով հավաքվել էինք, գինետանն էր, հենց այն տոնավաճառում։ Ինձ նրանք էին հրավիրել, ես էլ հենց ուղղակի սկսեցի էպիգրամներ արտասանել. «Այդ դո՞ւ ես, Բուալո, ի՞նչ ծիծաղելի հագուստ»։ Իսկ Բուալոն պատասխանում է, որ դիմակահանդես է գնում, այսինքն քաղնիք, հի-հի՞, և իմ ասածը նրանք իրենց վրա վերցրին։ Դե ես էլ հենց իսկույն մի ուրիշը արտասանեցի, մի կծու էպիգրամ, բոլոր զարգացած մարդիկ լավ գիտեն այս մեկը.

Դու Սաֆոն ես, ես՝ Ֆաոնը, այդ մասին էլ չեմ վիճում,
Բայց դու վիշտ ես ինձ պատճառում՝
Սովի ճամփան չես իմանում։

Նրանք ավելի շատ վիրավորվեցին և սկսեցին դրա համար ինձ հայհոյել անպատշաճ խոսքերով։ Դե ես էլ հենց, իմ շար բախտից, ուզեցի կացությունը փրկել և տեղն ու տեղը մի շատ բարեկիրթ անեկդոտ պատմեցի Պիրոնի մասին, թե ինչպես նրան ֆրանսիական ակադեմիա չեն ընդունել, և նա էլ, վրեժ լուծելու համար, իր սեփական դամբանագիրն է գրել այսպես.

Ci-gît Piron qui ne fut rien
Pas même académicien[1].

Եվ մեկ էլ նրանք ինձ բռնեցին ու ծեծեցին։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ։

[1] Սառ հանգչի Պիրոնը, որ ոչինչ չկարողացավ լինել, ոչ իսկ ակադեմիկոս (ֆրանս.)։

— Իմ զարգացած լինելու համար։ Քի՞չ պատճառներ կան, որի համար մարդիկ կարող են ծեծել մարդուն,— եզրակացրեց Մաքսիմովը հեգ ու խրատական շեշտով։

— Է՛, բավական է, զզվելի է այդ ամբողջը, չեմ ուզում լսել. կարծում էի՝ մի ուրախ բան կլինի,— ընդհատեց հանկարծ Գրուշենկան։ Միտյան իրար անցավ և անմիջապես վերջ տվեց ծիծաղելուն։ Բարձրահասակ պանը վեր կացավ աթոռից և, խորթ միջավայրում ձանձրացող մարդու մեծամիտ արտահայտությամբ, սկսեց անկյունից անկյուն քայլել սենյակում, ձեռքերը մեջքին դրած։

— Սրա՞ն նայեցեք, քայլե՛լ սկսեց,— արհամարհանքով նայեց նրան Գրուշենկան։ Միտյան սկսեց անհանգստանալ, մանավանդ որ նկատեց, թե բազմոցի վրա նստած պանը զրգռված արտահայտությամբ նայում է իրեն։

— Պա՛ն,— գոռաց Միտյան,— խմե՛նք, պանե։ Եվ մյուս պանն էլ միասին. խմե՛նք, պանովե։— Վայրկենապես երեք բաժակ առաջ քաշեց նա ու շամպայն լցրեց։

— Լեհաստանի կենա՛ցը, պանովե, խմում եմ ձեր Լեհաստանի՛ կենացը, լեհաց երկրի կենացը,— բացականչեց Միտյան։

— Ինձ շատ հաճելի է, պանե, խմենք,— ասաց բազմոցի վրա նստած պանը փքուն ու բարեհաճ շեշտով և վերցրեց իր բաժակը։

— Եվ մյուս պանն էլ, ի՞նչ է անունը, է՛յ, պայծառափա՛յլ, վերցրո՛ւ բաժակը,— հետամտում էր Միտյան։

— Պան Վրուբլյովսկի,— հուշեց բազմոցի վրա նստած պանը։

Պան Վրուբլյովսկին օրորվելով մոտեցավ սեղանին ու բաժակը վերցրեց, ոտքի կանգնած։

— Լեհաստանի կենացը, պանովե, ուռա՛,— գոռաց Միտյան, բաժակը բարձրացնելով։

Երեքն էլ խմեցին։ Միտյան թափով վերցրեց շիշը և անմիջապես լցրեց երեք բաժակները նորից։

— Հիմա Ռուսաստանի՛ կենացը, պանովե, և եղբայրանա՛նք։

— Մեզ էլ լցրու,— ասաց Գրուշենկան,— ես էլ ուզում եմ խմել Ռուսաստանի կենացը։

— Ես էլ,— ասաց Կալգանովը։

— Դե ես էլ կուզեի... անուշիկ Ռուսաստանի կենացը՝ մեր պառավ տատիկի,— մանր-մանր քրքջաց Մաքսիմովը։

— Բոլորս, բոլո՛րս,— գոչում էր Միտյան։— Վարպե՛տ, մյուս շշե՛րն էլ։

Միտյայի բերած արկղից մնացած երեք շշերն էլ դրեցին սեղանին։ Միտյան բաժակները լցրեց։

— Ռուսաստանի կենացը, ուռա՛,— գոչեց նա նորից։ Բոլորը խմեցին, բացի լեհ պաններից, իսկ Գրուշենկան մի անգամից դատարկեց իր ամբողջ բաժակը։ Պաները նույնիսկ ձեռք չտվեցին իրենց բաժակներին։

— Է՛, ի՞նչ եք անում, պանովե,— բացականչեց Միտյան։— Ուրեմն այդպես, հա՞։

Պան Վրուբլյովսկին վերցրեց բաժակը, բարձրացրեց ու ասաց հնչեղ ձայնով.

— Ռուսաստանի կենացը, բայց մինչև 1772 թվականի սահմաններով։

— Ա՛յ դա լավ է,— գոռաց մյուս պանը լեհերեն, և երկուսն էլ միանգամից դատարկեցին իրենց բաժակները։

— Է՛, հիմարներ եք դուք, պանովե,— թռավ հանկարծ Միտյայի բերանից։

— Պա-նե՛,— գոռացին նրանք երկուսն էլ սպառնագին, աքլորների նման ցցվելով Միտյայի դեմ։ Հատկապես բորբոքվեց պան Վրուբլյովսկին։

— Մարդ կարո՞ղ է չսիրել իր երկիրը,— աղաղակեց նա։

— Լռեցե՛ք։ Ցկովե՛ք։ Կռիվ-մռիվ չեմ ուզում,— գոռաց Գրուշենկան տիրականորեն և ոտքը զարկեց հատակին։ Նրա դեմքը շառագունեց, աչքերը փայլատակեցին։ Երևում էր հենց նոր խմած բաժակի ազդեցությունը։ Միտյան սոսկալի վախեցավ։

— Պանովե, ներեցե՛ք։ Ես եմ մեղավորը, էլ չեմ անի։ Վրուբլյովսկի, պա՛ն Վրուբլյովսկի, էլ չեմ անի...

— Դե գոնե դո՛ւ սուս կաց, նստի՛ր, ա՛յ քեզ հիմար,— ասաստեց նրան Գրուշենկան զայրագին վրդովմունքով։

Բոլորը նստեցին, բոլորն էլ լռեցին, բոլորն էլ սկսեցին իրար նայել։

— Պարոնայք, ես էի այդ բոլորի պատճառը,— սկսեց նորից Միտյան, որ ոչինչ չէր հասկացել Գրուշենկայի վրդովմուն-

քից։— Դե ինչո՞ւ ենք այսպես նստել։ Ինչո՞վ զբաղվենք, որ... ուրախ լինի, նորից ուրախ լինի։

— Ա՜խ, իսկապես որ սոսկալի տխուր է,— ծուլլ-ծուլլ ծամծմեց Կալգանովը։

— Մի փոքր բանկ խաղայինք, ինչպես քիչ առաջ...—մաղմաղեր քրքջաց Մաքսիմովը հանկարծ։

— Բա՞նկ։ Հոյակա՜պ,— վրա բերեց Միտյան,— եթե միայն պանները...

— Օշ է, պանե,— մի տեսակ դժկամորեն պատասխանեց բազմոցի վրա նստած պանը։

— Ճիշտ է ասում,— ձայնակցեց նաև պան Վրուբլյովսկին։

— Օ՞շ։ Ի՞նչ է այդ «օշը»,— հարցրեց Գրուշենկան։

— «Ուշ» է նշանակում, պանի, ուշ, ուշ է ժամը,— բացատրեց բազմոցի վրա նստած պանը։

— Ամե՜ն ինչ ուշ է նրանց համար, ոչ մի բան կարելի չէ նրանց համար,— գրեթե ճչաց Գրուշենկան վրդովմունքով։— Ինքները թթվել նստել են և ուզում են, որ ուրիշներն էլ թթվեն։ Մինչև քո գալը, Միտյա, սրանք ա՛յ այսպես լեզուները փորը գցել նստել էին անընդհատ և վոթվոթում էին ինձ վրա...

— Իմ աստվածուհի՜,— գոչեց բազմոցի վրա նստած պանը,— դու ինչ ասես, այն է լինելու։ Տեսնում եմ՝ լավ չես տրամադրվել, դրա համար էլ տխուր եմ։ Պատրաստ եմ, պանե,— ավելացրեց նա, դառնալով Միտյային։

— Սկսի՛ր, պանե,— արձագանքեց անմիջապես Միտյան, գրպանից դուրս քաշելով թղթադրամները և երկու հատ հարյուրանոց դնելով սեղանին։— Ուզում եմ տարվել քեզ, պա՛ն, մեծ գումար տարվել։ Վերցրու խաղաթղթերը, դի՛ր բանկը։

— Բայց պանդոկապանի խաղաթղթերով ենք խաղում, պանե,— լրջորեն պնդեց կարճահասակ պանը։

— Ամենալավը դա է,— վրա բերեց պան Վրուբլյովսկին։

— Պանդոկապանի՞։ Լավ, հասկանում եմ, թո՛ղ այդպես լինի, լավ ասացիք, պանովե։ Խաղաթղթե՛ր,— հրամայեց Միտյան պանդոկապանին։

Պանդոկապանը խաղաթղթերի մի նոր, չբացված կապոց բերեց և հայտնեց Միտյային, որ աղջիկներն արդեն հավաքվում են, ծնծղա նվագող ջհուդներն էլ շուտով կգան երևի, և որ պարենը բերող եռաձին դեռ չի հասել։ Միտյան իսկույն վեր թռավ ու վազեց կողքի սենյակը, որպեսզի անմիջապես կարգադրություններ

անի։ Բայց ընդամենը երեք աղջիկ էին եկել, և դեռ Մարյան էլ չկար։ Միտյան ինքն էլ չգիտեր, թե ինչ կարգադրություն պետք է անի և ինչու այդպես հանկարծ դուրս վազեց։ Միայն պատվիրեց, որ արկղից ամեն տեսակի շաքարեղեն հանեն ու աղջիկներին էլ տան իրենց բաժինը։ «Եվ Անդրեյին էլ օղի, օղի՜ Անդրեյին,— հրամայեց նա շտապելով,— ես նեղացրի Անդրեյին»։ Եվ այդ վայրկյանին հանկարծ նրա ուսին ձեռք տվեց Մաքսիմովը, որ նրա ետևից դուրս էր վազել։

— Հինգ ռուբլի տվեք ինձ,— փսփսաց նա Միտյային,— ես էլ ուզում եմ բախտս փորձել, հի-հի՜։

— Սքանչելի՜ է, հոյակա՜պ։ Տասը ռուբլի վերցրեք, ըհը՜։— Նա նորից իր բոլոր թղթադրամները դուրս քաշեց գրպանից և մի տասանոց գտավ ու տվեց։— Իսկ եթե տարվես, նորի՛ց արի, նորի՛ց արի...

— Լավ, տիար իմ,— ուրախ փսփսաց Մաքսիմովը և վազեց մյուս սենյակը։ Իսկույն վերադարձավ նաև Միտյան և նեղողություն խնդրեց, որ ստիպել էր սպասել իրեն։ Պաներն արդեն նստել էին և բացել խաղաթղթերի նոր կապոցը։ Իսկ նրանց հայացքները շատ ավելի ջերմ, համարյա սիրալիր էին դարձել։ Բազմոցի վրա նստած պանը մի նոր ծխամորճ վառեց և պատրաստվեց թուղթ գցելու։ Նրա դեմքին նույնիսկ մի տեսակ հանդիսավորություն երևաց։

— Գրավեցեք ձեր տեղերը, պանովե,— գոչեց պան Վրուբլյովսկին։

— Չէ, ես այլևս չեմ խաղա,— պատասխանեց Կալգանովը,— ես քիչ առաջ արդեն հիսուն ռուբլի տարվեցի նրանց։

— Պանի բախտը չէր բերում, իսկ հիմա կարող է բախտը բացվել,— նկատեց բազմոցի վրա նստած պանը՝ խոսքը նրան ուղղելով։

— Որքա՞ն կա բանկում։ Փոխադա՞րձ,— տաքացավ Միտյան։

— Նայած, պանե, դուցե հարյուր, դուցե երկու հարյուր, նայած դու որքան ես դնում։

— Միլիո՜ն,— քահ-քահ ծիծաղեց Միտյան։

— Պան կապիտանը դուցե լսե՞լ է պան Պոդվիսոցկու մասին։

— Ի՞նչ Պոդվիսոցկի։

— Վարշավայում խաղատուն կա, ով ուզում է՝ գալիս բան-

կին փոխադարձ է դնում։ Գալիս է Պոդվիսոցկին, հազար ոսկի տեսնում, ասում է՝ վա-բանկ։ Բանկատերն ասում է. «Պանե Պոդվիսոցկի, ոսկի՞ ես դնում, թե պատվի խոսք»։— «Պատվի խոսք, պանե»,— ասում է Պոդվիսոցկին։— «Ավելի լավ, պանե»։ Բանկատերը գցում է տալիան, Պոդվիսոցկին շահում է ոսկին։ «Ստացի՛ր, պանե,— ասում է բանկատերը, քաշում դարակը և միլիոն տալիս,— վերցրու, պանե, ահա քո հաշիվը»։ Բանկում միլիոն է եղել։ «Ես չգիտեի»,— ասում է Պոդվիսոցկին։ «Պանե Պոդվիսոցկի,— ասում է բանկատերը,— դու քո՛ պատիվը դրեցիր, մենք էլ մե՛ր պատիվը»։ Պոդվիսոցկին միլիոնը վերցնում է։

— Դա սուտ բան է,— ասաց Կալգանովը։

— Պանե Կալգանով, ազնվական հասարակության մեջ այսպես վայել չէ խոսել։

— Հա՛, լեհ խաղամոլը հենց այնպես էլ մի միլիո՞ն կտա քեզ, էլի,— բացականչեց Միտյան, բայց իսկույն խոսքը կուլ տվեց։— Ներիր, պանե, մեղավոր եմ, սխալվեցի նորից, կտա, կտա՞ միլիոնը, պատվի խոսքով կտա, լեհակա՞ն պատվի։ Տեսնո՞ւմ ես, ինչպես եմ լեհերին խոսում, հա-հա՛։ Ա՛յ, տասը ռուբլի եմ դնում, վալետի վրա։

— Իսկ ես՝ մի ռուբլի թագուհու վրա, սրտիկի թագուհու, սիրունիկ պանուհու, հի-հի՛,— մանր-մանր քրքջաց Մաքսիմովը, առաջ դնելով իր թագուհին, և կարծես իր անելիքը թաքցնելու համար բոլորից՝ ուղղակի հակվեց սեղանին և արագորեն երեսը խաչակնքեց սեղանի տակ։ Միտյան շահեց։ Շահեց նաև ռուբլին։

— Անկյո՛ւն,— գոռաց Միտյան։

— Իսկ ես՝ նորից մի ռուբլի, մեկ հատիկ եմ դնում, պստլիկ, պստլիկ մի հատիկ,— երանագին մրմնջում էր Մաքսիմովը՝ սոսկալի ուրախացած, որ մի ռուբլի էր շահել։

— Կորա՛վ,— գոռաց Միտյան։— Ցոթնոց՝ կրկնակի։

Կորավ նաև կրկնակին։

— Վերջ տվեք,— ասաց հանկարծ Կալգանովը։

— Կրկնակի, կրկնակի՛,— կրկնապատկում էր Միտյան խաղագումարը, և ամեն անգամ, որ դնում էր կրկնակիի վրա՝ կորցնում էր։ Իսկ Մաքսիմովի ռուբլիները շահում էին։

— Կրկնակի՛,— բղավեց Միտյան կատաղած։

— Երկու հարյուր ռուբլի տարվել ես, պանե։ Նորի՞ց երկու հարյուր ես դնում,— հարցրեց բազմոցի վրա նստած պանը։

— Ի՞նչ, արդեն երկու հարյուր տարվե՞լ եմ։ Դե ուրեմն՝ էլի՛ երկու հարյուր։ Ամբողջ կրկնակի՛։— Եվ գրպանից դուրս քաշելով իր փողերը, երկու հարյուր ռուբլի ուզեց նետել թագուհու վրա, բայց հանկարծ Կալգանովն իր ափով ծածկեց խաղաթուղթը։

— Բավակա՞ն է,— գոռաց նա իր զրնգուն ձայնով։

— Ի՞նչ եք անում,— Միտյան աչքերը հառեց նրան։

— Բավակա՞ն է, չեմ ուզում։ Էլ մի՛ խաղաք։

— Ինչո՞ւ։

— Հենց այնպես։ Թքե՞ք ու գնացեք, ա՛յ թե ինչու։ Էլ չեմ թողնի, որ խաղաք։

Միտյան շշմած նայում էր նրան։

— Թո՛ղ, Միտյա, գուցե նա ճիշտ է ասում։ Առանց այն էլ շատ տարվեցիր,— ասաց նաև Գրուշենկան՝ ձայնի մեջ տարօրինակ մի շեշտով։ Երկու պաներն էլ հանկարծ վեր կացան սոսկալի վիրավորված արտահայտությամբ։

— Կատա՞կ ես անում, պանե,— ասաց կարճահասակ պանը և մի խիստ հայացքով չափեց Կալգանովին։

— Ինչպե՞ս եք համարձակվում այդպիսի բան անել,— բղավեց նաև պան Վրուբլյովսկին Կալգանովի վրա։

— Չհամարձակվե՛ք, չհամարձակվե՛ք գոռգոռալ,— բոռաց Գրուշենկան։— Ա՛խ դուք հնդու աքլորնե՛ր։

Միտյան հերթով նայում էր բոլորին։ Բայց հանկարծ Գրուշենկայի դեմքին տեսավ մի բան, որ ուղղակի ապշեցրեց նրան, և հենց նույն վայրկյանին մի նոր միտք փայլատակեց նրա գլխում, բոլորովին նոր ու տարօրինա՞կ մի միտք։

— Պանի Ագրիպպինա,— սկսում էր խոսել կարճահասակ պանը, զայրույթից ամբողջովին կարմրած, բայց հանկարծ Միտյան մոտեցավ նրան ու թփթփացրեց նրա ուսին։

— Պայծառափա՛յլ, ուզում եմ մի երկու խոսք ասել քեզ։

— Ի՞նչ ես ուզում, պանե։

— Գնանք այն սենյակը, այն մյուս սենյակը, մի երկու խոսք պետք է ասեմ քեզ, ամենալավ խոսքերը, գո՛հ կմնաս։

Կարճահասակ պանը զարմացավ ու վարանումով նայեց Միտյային։ Եվ սակայն իսկույն համաձայնվեց, բայց այն պայմանով, որ պան Վրուբլյովսկին էլ գա իր հետ։

— Թիկնապահ՞ը։ Դե նա՝ էլ թող գա, նա էլ պետք է ինձ։ Նա անպայման պետք է,— բացականչեց Միտյան։

— Մա՛րշ, պանովե։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց Գրուշենկան անհանգստացած։

— Մի վայրկյանից կվերադառնանք,— պատասխանեց Միտյան։ Նրա դեմքը հանկարծ փայլատակեց մի տեսակ համարձակությամբ, անակնկալ մի կայտառությամբ. բոլորովին այլ էր նրա դեմքի արտահայտությունը, երբ մի ժամ առաջ այդ սենյակը մտավ։ Նա պաներին առաջնորդեց դեպի աջ, ոչ թե այն մեծ սենյակը, ուր հավաքվում էր աղջիկների երգչախումբը և սեղանն էին դնում, այլ դեպի այն փոքր ննջասենյակը, ուր կային սնդուկներ, փաթեթներ ու երկու մեծ մահճակալ՝ յուրաքանչյուրի վրա բլրի նման դասված լթե բարձերով։ Սենյակի հենց անկյունում, մի փոքրիկ նրբակերտ սեղանի վրա, մոմ էր վառվում։ Պանն ու Միտյան այդ սեղանի մոտ նստեցին դեմ դիմաց, իսկ հսկա պան Վրուբլյովսկին կանգնեց նրանց կողքին, ձեռքերը մեջքին դրած։ Պաները նայում էին խստահայաց, բայց ակնհայտ հետաքրքրությամբ։

— Ի՞նչ ծառայություն կարող եմ մատուցել պանին,— թոթովեց կարճահասակ պանը։

— Լսի՛ր ինձ, պանե, ես շատ չեմ երկարացնելու. ահա քեզ փող,— հանեց նա իր թղթադրամները,— ուզո՞ւմ ես երեք հազար, վերցրու և գնա՝ բանիդ, հեռացի՛ր այստեղից։

Պանը նայում էր ուշի-ուշով, աչքերը շորս բացած, հենց ուղղակի հայացքը բևեռել էր Միտյայի դեմքին։

— Երեք հազա՞ր, պանե։— Կարճահասակ պանն ու Վրուբլյովսկին իրար նայեցին։

— Երեք հազար, պանովե, երեք հազար։ Լսի՛ր, պանե, տեսնում եմ, որ դու հասկացող մարդ ես։ Երեք հազար վերցրու և գնա՝ գրողի ծոցը, Վրուբլյովսկուն էլ տար հետդ, լսո՞ւմ ես։ Բայց՝ հենց հիմա, հենց ա՛յս րոպեիս, և էլ երբե՛ք չերևաս, հասկանո՞ւմ ես, պանե, երբե՛ք։ Այ հենց այս դռնից էլ հիմա դուրս կգնաս ու վե՛րջ։ Ի՞նչ ունես այնտեղ՝ վերարկո՞ւ, մուշտա՞կ։ Կբերեմ քեզ։ Հենց այս վայրկյանիս ձիերը կլծեն քեզ համար, և գնա՛ս բարով, պանե։ Հը՞։

Միտյան վստահորեն սպասում էր պատասխանի։ Չէր տարակուսում։ Պանի դեմքին չափազանց վճռական մի արտահայտություն երևաց։

— Իսկ փո՞ղը, պանե։

— Փողի հարցն այսպես ենք անում, պանե. հենց այս րոպեիս հինգ հարյուր ռուբլի քեզ՝ ճանապարհածախս և կանխավճար, իսկ երկու հազար հինգ հարյուրն էլ վաղը՝ քաղաքում. պատվով եմ երդվում, կլինի՛ փողը, գետնի տակից կհանեմ,— գոռաց Միտյան։

Լեհերը նորից իրար նայեցին։ Կարճահասակ պանի դեմքն սկսեց դժգոհ արտահայտություն ստանալ։

— Ցո՛ւ հարյուր, յոթ հարյուր, ոչ թե հինգ, ա՛յս րոպեիս, հենց այս րոպեիս տալիս եմ ձեռքդ,— ավելացրեց գումարը Միտյան, մի անախորժ բան զգալով։— Ի՞նչ է, պան։ Չե՞ս հավատում։ Հո չեմ կարող երեք հազարը միանգամից տալ քեզ։ Թե տամ, հենց վաղն ես կարող ես վերադառնալ Գրուշենկայի մոտ... Եվ հիմա մոտս չունեմ էլ երեք հազար ռուբլի, տանն է, քաղաքում,— թոթովեց Միտյան, վախվխելով ու իր ամեն մի խոսքից հետո ավելի վհատվելով,— ասված վկա, տանն է փողը, պահել եմ...

Հանկարծ, մի վայրկյանում, կարճահասակ պանի դեմքին բացառիկ մի արժանապատվության զգացում երևաց։

— Ինչ է, էլ ուրիշ բան չե՞ս ուզում,— հարցրեց նա հեգնանքով։— Ամոթ, է՛, ամո՛թ։— Եվ նա թքեց։ Թքեց նաև պան Վրուբլյովսկին։

— Գիտե՞մ ինչու ես թքում, պանե,— ասաց Միտյան հուսակտուր, հասկանալով, որ ամեն ինչ վերջացել էր,— գիտե՞մ ինչու. հույս ունես ավելի շա՛տ շանթել Գրուշենկայից։ Կատաղած աչքերներ եք երկուսդ էլ, ուրիշ ոչինչ։

— Մայր աստիճան վիրավորվա՞ծ եմ,— բացականչեց կարճահասակ պանը լեհերեն, հանկարծ խեցգետնի պես կարմրելով, և սոսկալի վիրավորված դուրս գնաց սենյակից արագորեն, կարծես ոչ մի խոսք չցանկանալով այլևս լսել։ Վրուբլյովսկին օրորուն քայլվածքով հետևեց ընկերոջը, իսկ նրանց ետևից դուրս եկավ Միտյան՝ շփոթահար ու մոլորուն։ Նա վախենում էր Գրուշենկայից, նախազգում էր, որ պանն իսկույն աղմուկ կբարձրացնի։ Այդպես էլ եղավ։ Պանը մտավ ընդհանուր սենյակը և թատերական կեցվածքով կանգնեց Գրուշենկայի առաջ։

— Պանի Ագրիպպինա, ծայր աստիճան վիրավորվա՞ծ եմ,— սկսեց նա բացականչել լեհերեն, բայց Գրուշենկան հանկարծ

վերջնականապես կորցրեց իր համբերությունը, կարծես նրա ամենացավոտ տեղին էին դիպել։

— Ռուսերին խոսիր, ռուսերե՛ն, էլ ո՛չ մի լեհերեն բառ,— գոռաց նա պանի վրա։— Խոսո՛ւմ էիր առաջ ռուսերեն, հինգ տարվա մեջ մոռացա՞ր, ինչ է։— Նա ամբողջովին կարմրեց զայրույթից։

— Պանի Ագրիպպինա...

— Ես Ագրաֆենա եմ, Գրուշենկա. ռուսերեն խոսիր, թե չէ չե՛մ ուզում լսել։

Պանն սկսեց փնչալ վիրավորված արժանապատվությամբ և, կոտրտելով ռուսերենը, արագորեն և ճոռոմ շեշտով ասաց.

— Պանի Ագրաֆենա, ես եկա անցածը մոռանալ և ներել, մոռանալ ինչ որ եղել է մինչև այսօր...

— Ինչպե՞ս թե ներել։ Ի՞նձ ներելու ես եկել,— ընդհատեց Գրուշենկան ու տեղից վեր թռավ։

— Ճիշտ այդպես, պանի, ես փոքրոգի չեմ, ես մեծահոգի եմ։ Բայց ես զարմացել եմ, երբ որ տեսա քո սիրեկանները։ Պան Միտյան այն սենյակում ինձ երեք հազար ռուբլի կտար, որ ես գնամ։ Ես պանին երես թքեցի։

— Ի՞նչ։ Նա քեզ փո՞ղ էր տալիս ինձ համար,— ճչաց Գրուշենկան հիստերիկ ձայնով։— Ճի՞շտ է, Միտյա։ Բայց ինչպե՞ս ես համարձակվե՞լ։ Ես ծախո՞ւ եմ ինչ է, հա՞։

— Պանե, պանե,— բղավեց Միտյան,— նա մաքուր է, նա շողշողում է, ես երբեք նրա սիրեկանը չեմ եղել։ Սո՛ւտ ես ասում այդ բանը...

— Դու ինչպե՞ս ես համարձակվում ինձ պաշտպանել նրա առաջ,— աղաղակեց Գրուշենկան։— Ես առաքինության համար չէ, որ մաքուր էի մնում, ոչ էլ որովհետև վախենում էի Կուզմայից, ո՛չ, այլ որպեսզի սրա՛ առաջ հպարտ լինեմ և հանդիպելու ժամանակ իրավունք ունենամ սրիկա՛ ասելու սրան։ Բայց ինչ է, նա իսկապես մերժե՞ց փողը։

— Չէ, չէ, առնո՛ւմ էր, առնո՛ւմ,— բացականչեց Միտյան,— միայն թե միանգամից էր ուզում ամբողջ երեք հազարը, իսկ ես ընդամենը յոթ հարյուր ռուբլի կանխավճար էի տալիս։

— Դե՛հ, հասկանալի՞ է. լսել է, որ ես փող ունեմ, դրա համար էլ եկել է ամուսնանալու։

— Պանի Ագրիպպինա,— սկսեց գոռալ պանը,— ես ապե՞ւ եմ, ես շլյախտիչ, ոչ թե լայդակ։ Ես եկել եմ քեզ կին առնեմ,

բայց տեսնում եմ ուրիշ պանի, ոչ թե առաջվան օրիորդ, տեսնում եմ կամակոր և անամոթ կին։

— Դե կորի՛ր գնա այն գրողի ծոցը, որտեղից եկել ես։ Կհրամայեմ, որ հենց ա՛յս րոպեիս դուրս շպրտեն քեզ, և կշպրտե՞ն,— գոռաց Գրուշենկան մոլուցքով։— Հիմա՞ր, հիմա՞ր էի ես, որ հի՞նգ տարի տանջեցի ինձ։ Բայց չէ՞, այս մարդու համար չէ, որ տանջում էի ինձ, բնա՛վ երբեք. ես զայրույթի՞ց էի տանջում ինձ։ Եվ սա բոլորովին ուրիշ մեկն է, ոչ թե ա՛յն։ Նա այսպիսի՞ն էր միթե։ Սա նրա հայրը լինի կարծես։ Որտեղի՞ց ես ճարել այդ կեղծամը, հա՞։ Նա բազե էր, իսկ սա՝ բադ։ Նա ծիծաղում ու երգեր էր երգում ինձ համար... Եվ ես, ես հի՞նգ տարի արցունք էի թափում, հիմա՞ր եմ եղել, անիծյա՛լ հիմար, ստոր եմ ես, անամո՞թ եմ։

Նա ընկավ իր բազկաթոռին ու երեսը ծածկեց ափերով։ Այդ րոպեին հանկարծ ձախ կողմի սենյակից լսվեց Մոկրոեի աղջիկների երգչախումբը. վերջապես հավաքվել էին նրանք և պարային կայտառ մի երգ սկսեցին։

— Իսկական Սոդոմ-Գոմո՞ր,— բղավեց հանկարծ պան Վրուբլյովսկին։— Պանդոկապե՞տ, քշի՞ր անամոթներին։

Պանդոկապանը, որ արդեն վաղուց հետաքրքրությամբ նայում էր դռան ետևից, լսելով գոռգոռոցը և հասկանալով, որ հյուրերի մեջ գժտություն է ընկել, անմիջապես սենյակ մտավ։

— Ի՞նչ ես գոռում, ի՞նչ ես կոկորդդ ճղում,— դիմեց նա Վրուբլյովսկուն, մի տեսակ նույնիսկ անհասկանալի կոպտությամբ։

— Անասո՛ւն,— բղավեց պան Վրուբլյովսկին։

— Անասո՞ւն։ Իսկ դու ի՞նչ խաղաթղթերով էիր խաղում հիմի։ Ես քեզ մի նոր կապոց տվեցի, իսկ դու թաքցրիր իմ տվածը։ Դու կե՛ղծ խաղաթղթերով էիր խաղում։ Ես քեզ էդ կեղծ խաղաթղթերի համար կարող եմ Սիբիրի ճամփեն ցույց տալ, գիտե՞ս էդ բանը. որովհետև դա միևնույնն է թե կեղծ փող լինի...

Եվ նա, մոտենալով բազմոցին, մատները խոթեց թիկնակի ու բարձի մեջտեղը և այնտեղից դուրս քաշեց խաղաթղթերի չբացված կապոցը։

— Ահա իմ տված կապոցը, չի՞ բացված։— Նա բարձրացրեց ու չորս կողմը դառնալով ցույց տվեց բոլորին։— Ախր ես տեսա էնտեղից, է՞, տեսա ո՞նց նա իմ կապոցն էդ ճեղքի մեջ խցկեց

և իր խարդախ թղթերով սկսեց խաղալ։ Դու խաբեբայի՛ մեկն ես, ոչ թե պան։

— Իսկ ես տեսա, թե ինչպես մյուս պանը երկու անգամ կեղծ թուղթ քաշեց,— գոռաց Կալգանովը։

— Ախ ի՜նչ ամոթ է, ինչ ամո՜թ,— բացականչեց Գրուշենկան ձեռքերն իրար զարկելով, և իրոք կարմրեց ամոթից։— Աստվա՜ծ իմ, այս ի՜նչ մարդ է դարձել, ինչ մա՜րդ։

— Ես էլ այդ բանն էի մտածում,— գոռաց Միտյան։ Բայց նա դեռ չէր վերջացրել իր ասածը, երբ պան Վրուբլյովսկին, շփոթահար ու կատաղած, դարձավ Գրուշենկային, բռունցքով սպառնաց նրան ու բղավեց.

— Հասարակաց պոռնի՜կ։

Բայց հազիվ էր նա ասել այդ խոսքը, Միտյան անմիջապես խոյացավ, բռնեց նրան երկու ձեռքով, օդ բարձրացրեց ու մի վայրկյանում տարավ աջ կողմի սենյակը, որտեղից հենց նոր էին դուրս եկել։

— Պառկեցրի հատակին,— հայտնեց նա, խսկույն վերադառնալով ու հուզմունքից հևալով։— Կռվտում է սրիկան, բայց հանգիստ եղեք, նա չի՛ գա այնտեղից։

Միտյան փակեց դռան մի կեսը, իսկ մյուս կեսը բաց թողնած՝ գոռաց կարճահասակ պանին.

— Պայծառապի՜ղ, դուք էլ չե՞ք ուզում նույն տեղը գնալ։ Շատ-շատ-շա՜տ ենք խնդրում։

— Տեր իմ, Միտրի Ֆյոդորովիչ,— գոչեց Տրիֆոն Բորիսիչը,— ախր ե՜տ վերցրու փողերը, էն, որ տարվեցիր։ Ախր միևնույն է թե գողացել են քեզնից։

— Ես չեմ ուզում իմ հիսուն ռուբլին ետ վերցնել,— վրա բերեց հանկարծ Կալգանովը։

— Ծ՛ս էլ, ե՛ս էլ չեմ ուզում իմ երկու հարյուրը,— բացականչեց Միտյան,— ոչ մի դեպքում չեմ վերցնի, թող մնա իրեն, թող մխիթարվի դրանով։

— Հոյակա՜պ է, Միտյա։ Կեցցե՛ս,— գոչեց Գրուշենկան, և նրա բացականչության մեջ սոսկալի քինախնդիր մի շեշտ հնչեց։

Կարճահասակ պանը, կատաղությունից կաս-կարմիր կտրած, բայց մազալափ իսկ չկորցնելով իր մեծաշուք կեցվածքը, արդեն սկսել էր դեպի դուռը գնալ, սակայն մեկեն կանգ առավ, դարձավ Գրուշենկային ու ասաց լեհերեն.

— Պանի, եթե ուզում ես գալ ինձ հետ՝ արի՛, իսկ եթե ոչ՝ մնա՛ս բարով։

Ու փքվելով վրդովմունքից և պատվախնդրությունից, գնաց դեպի դուռը։ Հաստատակամ մարդ էր. պատահած բոլոր բաներից հետո նա դեռ չէր կորցրել հույսը, որ պանին կամուսնանա իր հետ. այնքա՜ն էր գնահատում ինքն իրեն։ Միտյան շրխկոցով փակեց դուռը նրա ետևից։

— Կողպեցեք դուռը բանալիով,— ասաց Կալգանովը։ Սակայն փականքը նրանց կողմից չխկաց, իրենք կողպեցին բանալիով։

— Հրաշալի՜ է,— գոռաց նորից Գրուշենկան քինախնդիր ու անխնա։— Հրաշալի՜ է։ Ա՜յդ է նրանց տեղը։

VIII

ՋԱՌԱՆՑԱՆՔ

Համարյա խելահեղ մի զինարբուք սկսվեց, հրապարակային մի խրախճանք։ Առաջինը Գրուշենկան գոռաց, որ գինի տան իրեն. «Խմե՛լ եմ ուզում, լրիվ հարբել եմ ուզում, ինչպես այն օրը, հիշո՞ւմ ես, Միտյա, հիշո՞ւմ ես, թե ո՞նց մենք իրար հետ մտերմացանք այստեղ»։ Իսկ Միտյան կարծես զառանցանքի մեջ էր և նախազգում էր «իր երջանկությունը»։ Սակայն Գրուշենկան անընդհատ նրան հեռացնում էր իրենից. «Գնա՛, զվարճացիր. ասա նրանց, որ պարեն, որ բոլորն էլ զվարճանան, թող թնդա՛ տունը, թող պատերը թնդան, ինչպես այն օրը, ինչպես այն օ՜րը»,— շարունակում էր նա բացականչել։ Կրակ ու բոց էր դարձել նա։ Եվ Միտյան վազում էր նրա հրամանները կատարելու։ Երգչախումբը կողքի սենյակում էր հավաքվել։ Իսկ այն սենյակը, ուր նստել էին մինչ այդ, բավական նեղ էր, չթե վարագույրով կիսված. վարագույրի ետև հսկա մի մահճակալ կար՝ փետրալից փափուկ ներքնակով ու նույնպես բլրի նման դարսված չթե բարձերով։ Եվ պանդոկի չորս «մաքուր» սենյակներում էլ մահճակալներ կային։ Գրուշենկան տեղավորվեց հենց դռան առաջ, Միտյան նրա համար բազկաթոռ դրեց այնտեղ. Ճիշտ նույն ձևով էր նստել նաև «այն օրը», իրենց առաջին խրախճանքի օրը այս սենյակներում, և այդ տեղից նայել էր երգողներին ու պարողներին։ Ա՛յդ օրվա բոլոր ազդեցությունները եկել

էին նորից. եկան նաև ջութակ ու կիթառ նվագող չհուդները, և վերջապես հասավ նաև գինի ու պարեն բերող եռաձի կառքը, որին անհամբեր սպասում էին։ Միոյան դեսուդեն էր վազում։ Կողմնակի մարդիկ էլ սենյակ էին մտնում նայելու համար՝ գյուղացիներ ու կնիկներ, որոնք զարթնել էին և լսեսնված մի հյուրասիրության հոտն էին առել, ինչպես մի ամիս առաջ։ Միոյան բարևում ու գրկում էր ծանոթներին, հիշում էր դեմքերը, շշերը բացում ու գինի էր տալիս ամեն մի հանդիպողի։ Միայն աղջիկներն էին աչք տնկում շամպայնի վրա, իսկ գյուղացիներին ավելի դուր էին գալիս ռոմն ու կոնյակը և հատկապես տաք պունշը։ Միոյան կարգադրեց, որ շոկոլադ եփեն բոլոր աղջիկների համար, և որ ամբողջ գիշերն անընդհատ երեք ինքնաեռ վառված մնան, որպեսզի միշտ լինեն թեյն ու պունշը, և ով որ ուզում է՝ խմի։ Մի խոսքով, խառնաշփոթ ու անհեթեթ մի բան ծայր առավ. բայց Միոյան կարծես իր հարազատ տարերքի մեջ էր, և որքան ավելի անհեթեթ էր դառնում այդ ամբողջը, այնքան ավելի ոգևորվում էր նա։ Եթե այդ րոպեին որևէ մի գյուղացի փող խնդրեր Միոյայից՝ նա իսկույն կհաներ թղթադրամների իր ամբողջ կապոցը և կսկսեր անհաշիվ բաժանել աջ ու ձախ։ Ահա թե ինչու պանդոկապանը, Տրիֆոն Բորիսիչը, գրեթե կրնկակոխ պատվում էր Միոյայի շուրջ, երևի պաշտպանելու համար նրան. մարդը կարծես բոլորովին միտք չուներ այլևս քնելու այդ գիշեր, սակայն քիչ էր խմում (ընդամենը մի բաժակ պունշ էր համտեսել) և աչալուրջ հետևում էր իր հասկացած ձևով, որպեսզի չտուժեն Միոյայի շահերը։ Գետք եղած րոպեին նա սիրալիր կերպով ու ծառայամտորեն կասեցնում էր նրան և համոզում, չէր թողնում, որ նա «սիգարներ ու հենոսյան գինիներ» և մանավանդ, ասես՝ ծ չանի, փող նվիրի գյուղացիներին, ինչպես «այն օրը», և շատ էր վրդովվում, որ աղջիկները լիկյոր են խմում ու շաքարեղեն են ուտում. «Ոչլոտ բաներ են ոտից գլուխ, Միտրի Ֆյոդորովիչ,— ասում էր նա,— ես ծնկով կտամ նրանց ամեն մեկի մեջքին, և մեկ էլ կասեմ, որ պատիվ համարեն էդ բանը, ա՛յ էսպիսին են սրանք»։ Միոյան նորից հիշեց Անդրեյին և կարգադրեց, որ նրան պունշ տանեն։ «Ես նեղացրի նրան քիչ առաջ»,— կրկնում էր նա նվաղուն ու խանդաղատալից ձայնով։ Կալգանովը չէր ուզում խմել, և աղջիկների երգն սկզբում բոլորովին դուր չէր գալիս նրան, բայց ևս երկու բաժակ շամպայն խմելուց հետո նա սոսկալի աշխուժացավ, սկսեց սենյակից սենյակ անցնել, ծիծաղել, գովել բոլորին ու ամեն ինչ, երգն էլ, երաժշտությունն էլ։ Մաքսիմովը, հարբած ու երանելի վիճակում, անընդհատ ընկերանում էր նրան։ Գրուշենկան նույնպես սկսել էր հարբել և, Կալգանովին ցույց տալով, ասում էր Միոյային. «Ի՞նչ անուշիկ տղա է, ի՞նչ հրաշալի տղա»։ Եվ Միոյան, զմայլված, վազում էր համբուրելու Կալգանովին ու Մաքսիմովին։ Օ՜, նա ինչե՞ր էր նախազգում։ Գրուշենկան դեռ ոչ մի առանձին բան չէր ասել նրան և նույնիսկ հայտնապես դիտմամբ ուշացնում էր իր ասելիքը, միայն մերթ ընդ մերթ նայում էր նրան գորովալից, տաք հայացքով։ Վերջապես նա հանկարծ ամուր բռնեց Միոյայի ձեռքից և ուժգնորեն քաշեց իր մոտ։ Այդ րոպեին նստել էր դռան առաջ, բազկաթոռին։

— Այդ ի՞նչ ձևով քիչ առաջ ներս մտար, հա՞։ Այդ ի՞նչ ձևով մտար... այնպես վախեցա՜։ Ուրեմն ուզում էիր գիշե՞լ, գիշե՞լ ինձ նրան, հա՞։ Իսկապե՞ս ուզում էիր գիշել։

— Քո երջանկությո՛ւնը չէի ուզում խորտակել,— թոթովեց Միոյան երանության մեջ։ Բայց Գրուշենկային պետք էլ չէր նրա պատասխանը։

— Դե գնա՛... զվարճացիր,— հեռացրեց նա նորից Միոյային։— Դե լավ, լաց մի՛ լինի, նորից կկանչեմ։

Ու Միոյան վազելով գնում էր, իսկ Գրուշենկան նորից ականջը տալիս էր երգերին ու դիտում պարերը, թեև հայացքով հետևում էր Միոյային՝ որտեղ էլ լիներ նա։ Բայց քառորդ ժամ հետո նորից կանչում էր նրան, և Միոյան նորից վազում գալիս էր։

— Դե հիմա նստիր կողքս, պատմիր՝ ինչպե՞ս երեկ իմացար, որ ես այստեղ եմ եկել։ Առաջին անգամ ումի՞ց իմացար։

Եվ Միոյան սկսում էր ամեն ինչ պատմել, անկապ, անկանոն, տենդագին, բայց և տարօրինակ էր պատմում, հաճախակի խոժոռվում էր հանկարծ և քեղհատում էր։

— Ինչո՞ւ ես հոնքերդ կիտում,— հարցնում էր Գրուշենկան։

— Ոչինչ... մի հիվանդ թոռնիկ այնտեղ։ Եթե առողջանա՞ր, եթե իմանայի, որ առողջացե՞լ է, տասը տարի կտայի իմ կյանքից հիմա։

— Դե՛հ, ասված օգնի նրան, եթե հիվանդ է։ Ուրեմն իսկապե՞ս ուզում էիր վազը անձնասպան լինել, այ քեզ հիմա՞։ Բայց ինչո՞ւ, ի՞նչ է եղել որ։ Ա՛յ, այսպես քեզ նման խելառ-

ներին եմ սիրում,— թոթովում էր նա մի քիչ ծանրացած լեզվով։— Ուրեմն դու ինձ համար ամե՞ն ինչ կանես։ Հա՞։ Եվ մի՞թե իսկապես ուզում էիր վաղը անձնասպան լինել, հիմա՛ր տղա։ Չէ՞, սպասիր դեռ, վաղը ես գուցե մի բան ասեմ քեզ... այսօր չեմ ասի, վա՛ղը։ Իսկ դու ուզում էիր այսո՞ր։ Չէ, ես այսօր չեմ ուզում... Դե գնա, գնա՛ հիմա, զվարճացիր։

Մի անգամ, սակայն, Գրուշենկան նրան կանչեց ասես տարակուսանքի մեջ ընկած ու մտահոգ։

— Ինչո՞ւ տխուր ես։ Տեսնում եմ, տխուր ես... Չէ՞, տեսնում եմ, տեսնում,— ավելացրեց նա, ուշադիր նայելով նրա աչքերի մեջ։— Թեև այնտեղ համբուրվում ես գյուղացիների հետ, գոռում-գոչում ես, բայց ես մի բան տեսնում եմ։ Չէ, ուրախացի՛ր դու։ Ես ուրախ եմ։ Գո՛ւ էլ ուրախացիր... Այստեղ մեկը կա, որին սիրում եմ։ Գուշակիր՝ ո՞վ է... Ա՜խ, նայիր՝ քնել է մանչուկը, հարբել է, շանի՛կս։

Նա խոսում էր Կալգանովի մասին։ Պատանին իսկապես հարբել էր ու մի բոպե քնել՝ բազմոցի վրա նստած։ Եվ ոչ միայն գինովությունից էր քնել, այլև հանկարծ, չգիտես ինչու, տխրել էր, և կամ, ինչպես ինքն էր ասում, «ձանձրույթ» էր զգացել։ Վերջ ի վերջո խիստ ընկճվել էր նաև աղջիկների երգերից, որոնք հետզհետե, որքան ավելի էր սաստկանում գինարբուքը, սկսում էին արդեն չափազանց անվայելուչ ու սանձարձակ մի բան դառնալ։ Եվ նրանց պարերը նույնպես. երկու աղջիկ արջի նման շորեր հագան, իսկ Ստեպանիդան, որ ժիր աղջիկ էր, ձեռքը մի գավազան վերցրեց ու սկսեց արջ խաղացնողի դեր կատարել։ «Ցուցադրելով» նրանց։ «Դե, շարժվի՛ր, Մայա,— գոռում էր նա,— թե չէ փայտը կուտես»։ Արջերը վերջապես գետին գլորվեցին, բայց արդեն մի տեսակ շատ անվայելուչ ձևով, և իրար գլխի հավաքված գյուղացի կնիկների ու տղամարդկանց խայտաբղետ բազմությունը քահ-քահ ծիծաղեց. «Դե լավ, թող ա՛յդ էլ անեն, այդ էլ անեն,— խրատելու պես ասում էր Գրուշենկան՝ դեմքին երանավետ արտահայտությամբ,— մի օր են գտել՝ զվարճանում են մարդիկ, ինչո՞ւ չուրախանան»։ Իսկ Կալգանովն այնպես էր նայում, որ կարծես մի կեղտոտ բան էր կպել իրեն։ «Խոզություն է ոտից գլուխ՝ այս ամբողջ ժողովրդական ասվածը,— նկատեց նա մի կողմ քաշվելով,— սրանք գարնանային խաղեր են, մի ամբողջ գիշեր պարում են ամառը, որ արևը մնա երկնքում»։ Բայց հատկապես նրան դուր չեկավ մի «նոր» երգ, որ երգվում էր

պարային աշխույժ եղանակով և ուր նկարագրվում էր, թե ինչպես ազնվական մեծատունը գալիս ու փորձում է աղջիկներին։

Աղան փորձեց աղջկանց՝
Սիրո՞ւմ են իրեն, թե չէ։

Բայց աղջիկներին թվում է, որ չի կարելի սիրել մեծատունին.

Շատ վատ կծեմի աղան,
Էլ ես ոչ սիրեմ նրան։

Հետո գալիս է գնչուն և նույնպես փորձում.

Գնչուն փորձեց աղջկանց՝
Սիրո՞ւմ են իրեն, թե չէ։

Բայց գնչուին էլ չի կարելի սիրել.

Գնչուն գողություն կանի,
Իսկ իմ ցավը ո՞վ տանի։

Եվ շատ մարդիկ գալիս ու անցնում են այսպես, փորձելով աղջիկներին, նույնիսկ զինվորը.

Զինվորն փորձեց աղջկանց՝
Սիրո՞ւմ են իրեն, թե չէ։

Բայց զինվորին արհամարհանքով են մերժում.

Զինվորն էգուց կգնա,
Իսկ իմ...

Շատ անվայել մի տող էր դա, որ երգվեց ուղղակի բացեիբաց և աղմկալի հրճվանք առաջ բերեց ունկնդիրների մեջ։ Վերջապես գործը հասնում է վաճառականին.

Վաճառականը փորձեց՝
Սիրո՞ւմ են իրեն, թե չէ։

Եվ պարզվում է, որ շատ են սիրում, այսինքն թե՝

Նա իր ապրանքը ծախի՞,
Ես էլ լինեմ թագուհի։

Կալգանովը զայրացավ նույնիսկ.

— Հենց երեկվա երգն է սա,— նկատեց նա բարձրա-

ձայն։— Եվ ո՞վ է սրանց համար հնարում այս բաները։ Մնում է, որ երկաթուղայինը կամ շհուդն էլ գան ու փորձեն աղջկանց. նրանք բոլորին էլ կհաղթեին։— Եվ համարյա թե վիրավորված, նա տեղնուտեղը հայտարարեց, որ ձանձրույթ է զգում, նստեց բազմոցին և հանկարծ սկսեց մրափել։ Նրա սիրունիկ դեմքը մի քիչ գունատվեց ու ետ ընկավ բազմոցի բարձին։

— Նայիր, ինչ սիրունիկն է,— ասաց Գրուշենկան, տանելով Միտյային նրա մոտ,— քիչ առաջ մազերն էի սանրում. ասես վուշ լինեն մազերը և այնքան խիտ են...

Ու զորովալից հակվելով պատանու վրա, Գրուշենկան համբուրեց նրա ճակատը։ Կալգանովն իսկույն բացեց աչքերը, նայեց նրան, վեր կացավ և ամենամտահոգ արտահայտությամբ հարցրեց, թե որտե՞ղ է Մաքսիմովը։

— Ա՜յ թե ով է պետք նրան,— ծիծաղեց Գրուշենկան.— Դե մի բոպե նստիր ինձ հետ։ Միտյա, վազիր գտիր սրա Մաքսիմովին։

Պարզվեց, որ Մաքսիմովը չէր էլ կարողանում հեռանալ աղջիկներից, միայն մեկ-մեկ վազում ու մի քիչ լիկյոր էր ճնկում, իսկ երկու բաժակ էլ շոկոլադ էր խմել արդեն։ Նրա փոքր-մոքր դեմքը կարմրել էր, իսկ քիթը կաս-կարմիր էր դարձել, աչքերը խոնավացել էին, մեղր էին ծորում։ Նա մոտ վազեց ու հայտարարեց, որ հիմա ինքը «սաբոտյոր» պարն է ուզում պարել «մի սիրունիկ եղանակով»։

— Գիտե՞ք, երբ ես փոքր էի, բոլոր այդ ազնվակիրթ, բարձրաշխարհիկ պարերը սովորեցրին ինձ...

— Դե լավ, գնա, գնա նրա հետ, Միտյա, ես այստեղից կնայեմ, թե ինչպես է պարելու։

— Չէ՞, ես էլ գնում եմ նայելու, ե՞ս էլ,— բացականչեց Կալգանովը, ամենամիամիտ ձևով մերժելով առաջարկը Գրուշենկայի, որ ուզում էր մի բոպե նստել նրա հետ։ Եվ բոլորը գնացին նայելու։ Մաքսիմովն իսկապես պարեց իր պարը, բայց ոչ մեկին էլ չհիացրեց առանձնապես, բացի Միտյայից։ Ամբողջ պարը բաղկացած էր ինչ-որ ցատկռտուքներից, միաժամանակ ոտքերն այս ու այն կողմ դարձնելով՝ ներքանները դեպի վեր, և Մաքսիմովն ամեն մի ցատկի հետ ափը ներքանին էր խփում։ Կալգանովը բոլորովին չհավանեց, բայց Միտյան նույնիսկ պաչպըշեց պարողին։

— Է՜հ, շնորհակալություն, հոգնեցի՞ր գուցե, ի՞նչ ես նայում այս կողմը. կոնֆետ ես ուզում, հա՞։ Գուցե սիգա՞ր ես ուզում։

— Մի գլանակ։

— Խմել չե՞ս ուզում։

— Այստեղ լիկյոր կա, ես արդեն, արդեն... Իսկ շոկոլադի կոնֆետներ չունե՞ք։

— Ահա՜, սեղանի վրա մի ամբողջ կույտ կա, ընտրիր ո՞րը ուզում ես, սիրելիս, հոգյակս։

— Չէ՞, ես մի այնպիսի... վանիլով շոկոլադ... ծերուկների համար... Հի-հի՜։

— Չէ, ախպերս, այդպիսի հատուկ բաներ չկան։

— Լսեցե՞ք,— թեքվեց հանկարծ ծերուկը և փսփսաց ուղղակի Միտյայի ականջին,— ա՜յ այս աղջնակը, Մարյուշկան, հի-հի՜, մի կերպ ծանոթանալի հեռը, եթե կարելի է, ձեր բարի օգնությամբ...

— Մի տե՞ս սրան, ինչե՞ր է ուզում։ Չէ, ախպերս, փչում ես։

— Ես ո՞չ ոքի վատ բան չեմ անում,— փսփսաց Մաքսիմովը հուսալքված։

— Դե լավ, լավ։ Այստեղ միայն երգում ու պարում են, ախպերս։ Բայց թե... գրո՞ղը տանի։ Սպասիր... Առայժմ կեր, խմիր, ուրախացիր։ Փողի պետք ունե՞ս։

— Գուցե հետո,— ժպտաց Մաքսիմովը։

— Լավ, լավ...

Միտյայի գլուխը վառվում էր։ Ելավ ֆերի փայտե պատը-գամբը, որ շենքի մի մասն ընդգրկում էր բակի կողմից։ Թարմ օդն ուշքի բերեց նրան։ Կանգնած էր առանձին, խավարի մեջ, անկյունում, և հանկարծ երկու ձեռքով բռնեց գլուխը։ Ցաքուցրիվ մտքերը հանկարծ ի մի եկան, զգացողությունները միաձուլվեցին, և այդ բոլորից մի լույս ցայտեց։ Սարսափելի, ահավո՞ր մի լույս։ «Ահա՜, եթե անձնասպան եմ լինելու, էլ ե՞րբ, եթե ոչ հիմա,— անցավ նրա մտքով։— Գնամ, ատրճանակը բերեմ այստեղ, և հենց այս կեղտոտ ու խավար անկյունում վերջացնեմ հաշիվը»։ Գրեթե մի բոպե կանգնեց անորոշության մեջ։ Մի քանի ժամ առաջ, երբ սուրալով գալիս էր այստեղ, իր ետևում ամոթն ու անպատվությունն էր մնում՝ այն գողությունը, որ կատարել էր արդեն, և այդ արյունը, արյո՞ւնը... Բայց այն ժամանակ ավելի հեշտ էր, օ՜, ավելի հեշտ։ Ամեն ինչ վերջացել էր արդեն այն ժամանակ. կորցրել էր Գրուշենկային, զիջել էր, Գրուշենկան

վերջացել էր իր համար, չքացել, և օ՜, դատավճիռն ավելի հեշտ էր իր համար այդ պահին, գոնե թվում էր անխուսափելի, անհրաժեշտ, որովհետև ինչո՞ւ այլևս մնար աշխարհում։ Իսկ հիմա՜։ Մի՞թե նույն բանն է հիմա։ Հիմա գոնե մի ուրվական, մի հիվաղ վերացել է մեջտեղից. չքացել է այդ նրա «առաջինն» ու անվիճելին, այդ ճակատագրական մարդը հետք անգամ չի թողել։ Սարսափելի ուրվականը հանկարծ վերածվեց այնքա՜ն փոքր, այնքա՜ն զավեշտական մի բանի. ձեռքի վրա տարվեց ննջասենյակ ու դուռն էլ բանալիով կողպվեց վրայից։ Այլևս երբեք չի վերադառնա այդ ուրվականը։ Ամաչում է Գրուշենկան, և նրա աչքերից պարզ երևում է արդեն, թե ո՜ւմ է սիրում։ Ահա հենց հիմա պետք է ապրել և... և չի՞ կարելի ապրել, չի՞ կարելի, օ՜ անեծք։ «Աստվա՜ծ իմ, կենդանացրո՜ւ ցանկապատի մոտ ընկածին։ Անցո՜ այս սարսափելի բաժակն ինձնից։ Չէ՞ որ ինձ նման մեղավորների համար կատարե՞լ ես հրաշքներ, ո՜վ աստված։ Իսկ եթե կենդանի՞ է, կենդանի՞ է ծերունին։ Օ՜, այդ դեպքում ես կմաքրե՞մ մյուս անպատվության նախատինքը, կվերադարձնեմ գողացված դրամը, կտամ, գետնի տակից կհանեմ ու կտամ... Խայտառակության հետքն իսկ չի մնա, միայն իմ սրտո՜ւմ կմնա առհավետ։ Բայց ոչ, ոչ, օ՜, անկարելի երազներ, փոքրոգի երազներ։ Օ՜ անեծք»։

Բայց այնուամենայնիվ կարծես հույսի մի ճառագայթ շողաց նրան խավարի մեջ։ Նա պոկվեց այդ անկյունից ու վազեց սենյակ՝ նրա՜ մոտ, նրա՜ մոտ նորից, իր թագուհո՜ւ մոտ հավերժական։ «Բայց մի՞թե նրա սիրո մե՜կ ժամը, մեկ վայրկյա՜նը մնացյալ ամբողջ կյանքը չարժե, նույնիսկ եթե անպատվության տանջանքներով լեցուն լինի այդ կյանքը»։ Այս արտառոց հարցը տիրեց Միտյայի սրտում։ «Նրա՜ մոտ, նրա մո՜տ միայն, նրա՜ն տեսնել, նրա՜ն լսել ու չմտածել ո՛չ մի բանի մասին, ամեն ինչ մոռանալ, գոնե միայն ա՛յս գիշեր, գեթ մի ժամ, գեթ մի ակնթա՜րթ»։ Հենց միջանցքի դռան առաջ, դեռ պատշգամբի վրա, նա հանդիպեց պանդոկապան Տրիֆոն Բորիսիչին։ Պանդոկապանը մի տեսակ մռայլ ու մտահոգ թվաց, և կարծես թե նա եկել էր փնտրելու հենց իրեն՝ Միտյային։

— Ի՞նչ է, Բորիսիչ, հո ինձ չէի՞ր փնտրում։

— Չէ, տեր իմ, ձեզ չէ,— կարծես հանկարծ շշմեց պանդոկապանը,— ինչո՞ւ պետք է փնտրեի՝ ձեզ։ Իսկ դուք... որտե՞ղ էիք։

— Ի՞նչ ես այդպես քիթդ կախել։ Հո չե՞ս բարկանում։ Սպասիր, շուտով կգնաս ու կպառկես... Ժամը քանի՞սն է։

— Դե արդեն երեքը կլինի։ Գուցե նույնիսկ անցել է երեքը։

— Կվերջացնենք, կվերջացնենք շուտով։

— Խնդրեմ, վնաս չկա։ Նույնիսկ որքան որ ուզում եք...

«Ի՞նչ է պատահել սրան»,— հարևանցիորեն մտածեց Միտյան ու վազեց այն սենյակը, ուր աղջիկներն էին պարում։ Բայց Գրուշենկան այնտեղ չէր։ Կապույտ սենյակում էլ չէր. միայն Կալգանովն էր՝ բազմոցի վրա քնած։ Միտյան նայեց վարագույրի հետ՝ այնտեղ էր Գրուշենկան։ Նստել էր անկյունը, սնդուկի վրա, թևերն ու գլուխը դրել էր կողքի մահճակալին և այդպես հակված՝ դառնորեն լաց էր լինում, ճիգ անելով, որ զսպի իրեն ու խեղդի իր ձայնը, որպեսզի չլսեն։ Տեսնելով Միտյային, կանչեց իր մոտ. և երբ նա վազելով մոտեցավ, Գրուշենկան ամուր բռնեց նրա ձեռքը։

— Միտյա, Միտյա, չէ՞ որ ես սիրո՜ւմ էի նրան,— սկսեց նա շշնջալով։— Այնպե՞ս սիրում էի նրան, հինգ տարի շարունակ, անընդհատ, անընդհա՜տ։ Նրա՞ն էի սիրում, թե՞ իմ զայրույթը միայն։ Ոչ, նրա՜ն։ Ախ, նրա՜ն։ Սուտ եմ ասում, սո՜ւտ, որ միայն իմ զայրույթն էի սիրում և ոչ թե նրան։ Միտյա, չէ՞ որ ես տասնյոթ տարեկան էի այն ժամանակ, նա այնքա՜ն սիրալիր էր ինձ հետ, այնքա՜ն ուրախ, երգեր էր երգում ինձ համար... Կամ էլ թվացել է այդպես՝ ինձ նման հիմար աղջնակին... Իսկ հիմա, աստվա՜ծ իմ, սա այն մարդը չէ, բոլորովին նա չէ։ Եվ դեմքով էլ տարբեր է, բոլորովին տարբեր։ Դեմքից էլ չճանաչեցի նրան։ Գալիս էի այստեղ Տիմոֆեյի հետ և անընդհատ մտածում էի, ամբողջ ճանապարհին մտածում՝ «Ինչպե՞ս եմ հանդիպելու նրան, ի՞նչ եմ ասելու, ինչպե՞ս պիտի նայենք միմյանց...»։ Հոգիս թուլանում էր, և ահա նա կարծես մի դույլ կեղտոտ ջուր թափեց գլխիս։ Դասատուի պես էր խոսում՝ գիտունգիտուն բաներ, ծանր-ծանր, այնպես փքվա՜ծ դիմավորեց, որ շվարած մնացի։ Առիթ չէր լինում, որ մի խոսք ասեմ։ Սկզբում կարծեցի, թե նա իր այդ երկարահասակ լեհից է ամաչում։ Նստել նայում էի նրանց և մտածում էի՝ ինչո՞ւ հիմա չեմ կարողանում մի սրեէ բան ասել նրան։ Գիտե՞ս, կինն է փչացրել նրան, այ հենց այն կինը, որի համար ինձ լքեց ու ամուսնացավ... Այդ կինն է այսպես փոխել նրան։ Միտյա, ի՞նչ ամոթ է, ինչ ամո՜թ։ Օ՜հ, ամաչում եմ, Միտյա, ամաչում եմ, օ՜հ, ամաչում եմ իմ

ամբողջ կյանքի համար։ Անիծվեն, անիծվե՛ն այդ հինգ տարիները, անիծյա՛լ լինեն։

Եվ նա նորից սկսեց աղի արցունք թափել, բայց չթողեց Միտյայի ձեռքը, ամուր կառչեց նրանից։

— Միտյա, հոգիս, սպասիր, մի՛ գնա, ուզում եմ մի խոսք ասել քեզ,— շշնջաց նա և հանկարծ դեմքը վեր առավ, նայեց նրան։— Լսիր, ասա՛ ինձ՝ ո՞ւմ եմ սիրում։ Ես մի մարդ եմ սիրում այստեղ։ Ո՞վ է այդ մարդը. ահա ա՛յս բանն ասա ինձ։— Արցունքից ուռած նրա դեմքը լուսավորվեց ժպիտով, աչքերը փայլեցին կիսամթան մեջ։— Հանկարծ մի բազե ներս մտավ, և սիրտս մարմրեց։ «Հիմար աղջիկ, ա՛յ թե ում ես սիրում»,— հենց այսպես էլ շշնջաց սիրտս անմիջապես։ Դու ներս մտար և ամեն ինչ լուսավորվեց։ «Բայց ինչի՞ց է վախենում»,— մտածեցի։ Վախենում էիր դու, չէ՞, վախենում էիր ուղղակի, խոսել չէիր կարողանում։ Ո՞չ թե նրանցից է վախենում, մտածեցի. կարո՞ղ ես դու որևէ մեկից վախենալ։ Ինձնից է վախենում, մտածեցի, միայն ինձնից։ Ուրեմն Ֆենյան պատմեց քեզ, չէ՞, ա՛յ դու հիմարիկ, պատմեց, թե ինչպես Ալյոշային գոռացի ես լուսամուտից, գոռացի, որ մի ժամ սիրել եմ Միտենկային, իսկ հիմա գնում եմ սիրելու... ուրիշին։ Միտյա, Միտյա, ինչպե՞ս կարող էի ես մտածել, հիմա՛ր աղջիկ, ինչպե՞ս կարող էի մտածել, թե քեզնից հետո ուրիշին եմ սիրում։ Ներո՞ւմ ես, Միտյա։ Ներո՞ւմ ես ինձ, թե չէ։ Սիրո՞ւմ ես ինձ։ Սիրո՞ւմ ես։

Նա վեր թռավ ու երկու ձեռքով բռնեց Միտյայի ուսերից։ Միտյան, ցնծությունից համբացած, նայում էր նրա աչքերին, նրա դեմքին, նրա ժպիտին, և հանկարծ պինդ գրկեց նրան ու սկսեց համբուրել հրայրքով։

— Եվ կներե՞ս, որ տանջեցի քեզ։ Զայրույթից էր, որ տանջում էի ձեզ բոլորիդ։ Զայրույթից էր, որ այդ ծերուկին խենթացրի դիտմամբ... Հիշո՞ւմ ես, ինչպես մի անգամ իմ տանը խմում էիր, և բաժակը կոտրեցիր։ Դա միտքս մնաց, և ես էլ այսօր մի բաժակ կոտրեցի, «իմ ստոր սրտի» կենացը խմեցի։ Միտյա, արծի՛վս, ինչո՞ւ չես համբուրում ինձ։ Մի անգամ համբուրեց ու ետ քաշվեց, նայում է, լսում է... Ի՞նչ կարիք կա ինձ լսելու։ Համբուրի՛ր ինձ, ավելի ուժե՛ղ համբուրիր, ա՛խ, այսպե՛ս։ Սիրում ենք, ուրեմն սիրե՛նք ինչպես պետքն է։ Քո ստրուկն եմ լինելու հիմա, քո ստրուկը՝ իմ ամբո՛ղջ կյանքում։ Քա՛ղցր է ստրուկ լինել... Համբուրի՛ր։ Սեծի՛ր ինձ, տանջի՛ր ինձ, ի՞նչ

ուզում ես արա ինձ... Օ՜խ, իսկապես ինձ պետք է տանջել... Կա՛ց։ Սպասիր, հետո՛, հիմա չեմ ուզում այդպես...— ետ մղեց հանկարծ Միտյային։— Դե գնա՛, Միտյա, հիմա ինքս էլ պիտի գամ ու խմեմ, ուզում եմ հարբե՛լ, պիտի հարբած պարե՛մ հիմա, ուզո՛ւմ եմ, ուզո՛ւմ։

Գրուշենկան նրանից պոկվեց ու դուրս եկավ վարագույրի ետևից։ Միտյան հարբածի պես հետևեց նրան։ «Թո՛ղ լինի, թո՛ղ լինի, ինչ էլ պատահի հիմա՝ մեկ րոպեի համար ամբողջ աշխարհը կտամ»,— փայլատակեց նրա մտքում։ Գրուշենկան իսկապես մի բաժակ էլ շամպայն խմեց մի շնչով և հանկարծ ջատ գինովցավ։ Նստեց բազկաթոռի մեջ, նախկին տեղը, երանավետ ժպիտով։ Այտերն սկսեցին բոցկլտալ, շրթունքները վառվեցին, աչքերը պղտոր մի փայլ ստացան, հայացքը դարձավ կրքոտ ու կանչող։ Նույնիսկ Կալգանովը խայթ զգաց սրտում և մոտեցավ նրան։

— Դու զգացի՞ր, թե ինչպես քիչ առաջ համբուրեցի քեզ, երբ քնած էիր,— թոթովեց Գրուշենկան։— Հարբած եմ հիմա, հասկանո՞ւմ ես... Իսկ դու չե՞ս հարբել։ Իսկ Միտյան ինչո՞ւ չի խմում։ Ինչո՞ւ չես խմում, Միտյա։ Ես հարբել եմ, իսկ դու չես խմում..

— Հարբել եմ։ Այնպես էլ հարբել եմ... քեզնո՞վ եմ հարբել, իսկ հիմա ուզում եմ գինիով էլ հարբել։

Նա մի բաժակ էլ խմեց և այդ վերջին բաժակից գինովցավ, հանկարծ գինովցավ. իրեն էլ տարօրինակ թվաց այդ բանը, որովհետև միշտ էլ սթափ էր մինչ այդ, հիշում էր։ Այդ րոպեից ամեն ինչ սկսեց պտտվել նրա շուրջ, ասես զառանցանքի մեջ էր ընկել։ Քայլում էր, ծիծաղում, խոսում էր բոլորի հետ, և այդ ամբողջն անում էր կարծես ինքն իրեն մոռացած։ Միայն մի անդրդվելի ու այրող զգացում ամեն րոպե ծակում էր նրա սիրտը, «կարծես մի շիկացած ածուխ լիներ սրտիս մեջ», ինչպես հիշեց նա հետագայում։ Մոտենում էր Գրուշենկային, նստում նրա կողքին, նայում էր նրան, լսում էր նրան... Իսկ Գրուշենկան սոսկալի շատախոս էր դարձել. բոլորին կանչում էր իր մոտ, հանկարծ երգչախմբից մի որևէ աղջկա ձեռքով էր անում, աղջիկը մոտենում էր, իսկ ինքը կա՛մ համբուրում էր նրան ու բաց թողնում, կամ էլ երբեմն խաչակնքում էր ձեռքով։ Եվս մի րոպե, և նա կարող էր լաց լինել։ Նրան շատ էր զվարճացնում նաև «բիձուկը», ինչպես կոչում էր նա Մաքսիմովին։ Ծերուկն ամեն րոպե վազում էր Գրուշենկայի մոտ՝ համբուրե-

լու նրա ձեռքերը «և ամեն մի մատիկը», և վերջապես նա մի պար էլ պարեց մի հին երգի տակ, որ ինքն անձամբ երգեց։ Հատուկ եռանդով էր պարում մանավանդ հանկերգի ժամանակ.

Խոզուկը՝ խրթ-խրթ, խրթ-խրթ,
Հորթուկը՝ մու-մու, մու-մու,
Թռչիկը՝ վակ-վակ, վակ-վակ,
Սագիկը՝ գա-գա, գա-գա։
Հավն էլ բակից բակ է նորից գնում-գալիս,
Կրտ-կրտ-կրտ-կրտ, կրտ-կրտ ասում, ման է գալիս,
Վայ-վա՛յ, հավը ման է գալիս։

*— Մի բան տուր նրան, Միտյա,— ասաց Գրուշենկան,— նվիրիր, աղքատ է նա, չէ՞։ Ա՜խ, աղքատնե՛ր, անարգվածնե՛ր... Գիտե՞ս, Միտյա, ես վանք եմ մտնելու։ Չէ, իսկապես, կգա մի օր՝ միանձնուհի կդառնամ։ Այսօր ինձ Ալյոշան մի խոսք ասաց՝ ամբողջ կյանքումս չեմ մոռանա... Այո... Բայց դե այսօր պարե՞նք։ Վաղը՝ վանք, իսկ այսօր պարենք։ Ուզում եմ չարաճճիություն անել, բարի՛ մարդիկ։ Է՛հ, ինչ կա որ, աստված կնոջի։ Եթե ես աստված լինեի, բոլոր մարդկանց կնոջի։ «Իմ սիրելի մեղավորներ, այս օրվանից ներում եմ բոլորիդ»։ Եվ ես էլ պիտի ներումն խնդրեմ. «Ներեցե՛ք մի հիմար կնոջ, բարի՛ մարդիկ, հասկանո՞ւմ եք»։ Գազան եմ ես, հասկանո՞ւմ եք։ Բայց ուզում եմ աղոթել։ Մի կանաչ սոխ եմ տվել ես։ Ինձ նման չարագործ կինն աղոթե՞լ է ուզում։ Միտյա, թող պարեն, մի՛ խանգարիր։ Բոլորն էլ լավ մարդիկ են աշխարհում, բոլո՞ր, մինչև վերջին մարդը։ Աշխարհը լավ բան է։ Թեև զզվելի ենք մենք, բայց լա՞վ բան է աշխարհը։ Զզվելի ենք ու լավ, թե՛ զզվելի, թե՛ լավ... Չէ՛, ասացեք ինձ, հարց եմ տալիս ձեզ, մոտեցեք բոլորդ և լսեցեք իմ հարցը. ասացեք ինձ բոլորդ էլ՝ ինչո՞ւ այսպես լավն եմ ես։ Ես լավ մարդ եմ, շատ լավ մարդ։ Դե ասացեք ուրեմն՝ ինչո՞ւ այսպես լավն եմ ես։— Ահա այսպես բլբլում էր Գրուշենկան, ավելի ու ավելի գինովնալով, և վերջապես ուղղակի հայտարարեց, որ հիմա ինքն է ուզում պարել։ Վեր կացավ բազկաթոռից ու երերաց։— Միտյա, էլ ինձ գինի չտաս, խընդրեմ էլ՝ չտաս։ Գինին հանգստություն չի բերում։ Եվ ամեն ինչ պտտվում է, վառարանն էլ, ամեն ինչն էլ պտտվում է։ Պարել եմ ուզում։ Թող բոլորը նայեն, թե ինչպես եմ պարում ես... ի՜նչ լավ, ի՜նչ գեղեցիկ եմ պարում...

Նա լրջորեն ուզում էր պարել։ գրպանից հանեց բատիստե սպիտակ թաշկինակը և աջ ձեռքով բռնեց մի ծայրից, որպեսզի ճոճի պարելու ժամանակ։ Միտյան սկսեց դեսուդեն վազել, աղջիկները լռեցին, պատրաստվեցին առաջին իսկ նշանով պարային մի երգ թնդացնել խմբովին։ Մաքսիմովը երբ իմացավ, թե Գրուշենկան ինքը ուզում է պարել, հրճվանքի մի ճիչ արձակեց ու սկսեց ցատկոտել նրա շուրջ, երգելով՝

Բարակ ոտքեր, զնգուն կոնքեր,
Պոչն էլ ցցված՝ կեռի պես։

Բայց Գրուշենկան թաշկինակը թափահարեց նրա գլխին ու դեն քշեց.

— Շ-շ՛շ։ Միտյա, ինչո՞ւ չեն գալիս։ Թող բոլորն էլ գան... նայելու։ Նրա՞նց էլ կանչիր, այն սենյակում փակվածներին... Ինչո՞ւ նրանց փակեցիր այնտեղ։ Ասա՛, որ պարում եմ ես, թող նրանք էլ նայեն, թե ինչպես եմ պարում։

Միտյան հարբածի թափով մոտեցավ փակ դռանը և սկսեց բռունցքներով թակել ու կանչել լեհ պաններին։

— Է՛յ դուք... Գողվիսոցկինե՛ր։ Դուրս եկեք, նա ուզում է պարել, ձեզ է կանչում։

— Լայդակ,— գոռաց պաններից մեկը պատասխանի փոխարեն։

— Իսկ դու լայդակի լակո՞տն ես։ Մանր սրիկայի մեկը։ Հասկացա՞ր ինչ ես, հը՞։

— Դե լավ, բավական է Լեհաստանի վրա ծիծաղեք,— խրատական շեշտով նկատեց Կալգանովը, որ նույնպես իր լափից ավելին էր խմել։

— Լռիր, մանչուկ։ Եթե ես նրան սրիկա ասացի, դա չի նշանակում, որ ամբողջ Լեհաստանին եմ սրիկա ասել։ Մի լայդակը Լեհաստան չէ։ Լռիր, անուշիկ մանչուկ, կոնֆետ կեր։

— Ա՜խ ինչ տիպեր են։ Կարծես մարդ չլինեն։ Ինչո՞ւ չեն ուզում հաշտվել,— ասաց Գրուշենկան ու ելավ պարելու։ Երգչախումբը թափով սկսեց. «Ա՜խ դու գավիթ, իմ լայն գավիթ»։ Գրուշենկան գլուխը ետ նետեց, կիսովին բացեց շրթունքները, ժպտաց, թաշկինակը ճոճեց և հանկարծ, սաստիկ երերալով, կանգնեց մնաց սենյակի մեջտեղում՝ վարանած։

— Թույլ եմ...— ասաց նա մի տեսակ ուժասպառ ձայնով,— ներեցեք, թույլ եմ, չեմ կարող... Մի՛ մեղադրեք...

Նա գլուխ տվեց երգչախմբին, հետո սկսեց նաև հերթով գլուխ տալ չորս կողմը։

— Մի՛ մեղադրեք... Ներեցեք...

— Խմել ես մի քիչ, տիրուհի, խմել ես, սիրունիկ տիրուհի,— չորս կողմից ձայներ լսվեցին։

— Շատ է խմել,— բացատրեց Մաքսիմովն աղջիկներին, մանր-մանր քրքջալով։

— Միտյա, տա՛ր ինձ... ա՛ռ ինձ, Միտյա,— ասաց Գրուշենկան թուլացած։ Միտյան խոյացավ նրա մոտ, վերցրեց նրան թևերի վրա և իր թանկագին ավարը գրկած՝ վազեց վարագույրի ետև։ «Է՛հ, էլ թողնեմ ու գնամ հիմա»,— մտածեց Կալգանովը։ և կապույտ սենյակից դուրս գալով, դռան երկու փեղկերն էլ փակեց իր ետևից։ Բայց մեծ սենյակում թնդում ու շարունակվում էր խրախճանքը, թնդում էր ավելի շռնդալից թափով։ Միտյան անկողնի վրա դրեց Գրուշենկային և հրայրքով համբուրեց նրա շրթունքները։

— Ձեռք մի՛ տա ինձ...— աղերսագին ձայնով թոթովեց Գրուշենկան,— ձեռք մի՛ տա, մինչև քոնը լինեմ... Ասացի, որ քոնն եմ, բայց դու ձեռք մի՛ տա... խնայիր... Նրանց մոտ, նրանց ներկայությամբ չի կարելի։ Նա այստեղ է։ Զզվելի է այստեղ...

— Հնազա՛նդ եմ քեզ։ Մոքովս էլ չի անցնի... պաշտո՛ւմ եմ,— մրմնջում էր Միտյան։— Այո, զզվելի է այստեղ, օ՜, անարգ։— Եվ իր թևերի մեջ գրկած պահելով Գրուշենկային, նա ծնկի իջավ մահճակալի առաջ, հատակի վրա։

— Գիտեմ, թեև գազան ես դու, բայց ազնիվ ես,— ասաց Գրուշենկան, բառերը դժվար արտասանելով։— Այդ բանը պետք է ազնվորեն... սրանից հետո ամեն ինչ ազնվորեն... և մենք էլ ազնիվ լինենք, մենք էլ բարի լինենք, ոչ թե գազան, այլ բարի... Տար ինձ այստեղից, տար հեռու մի տեղ, լսո՞ւմ ես... Ես այստեղ չեմ ուզում, հեռու մի տեղ թող լինի, հեռու, հեռո՜ւ...

— Օ՜հ, այո, այո՛, անպայմա՛ն,— ասաց Միտյան, սեղմելով նրան իր գրկում,— կտանեմ քեզ, թռչելով կգնանք... Օ՜հ, ամբողջ կյանքս հիմա կտամ մի տարվա դիմաց, միայն թե իմանամ ինչ եղավ այդ արյո՞ւնը։

— Ի՞նչ արյուն,— հարցրեց Գրուշենկան զարմացած։

— Ոչի՛նչ,— ասաց Միտյան ատամները սեղմած։— Գրուշա, դու ուզում ես, որ ազնիվ լինենք, բայց ես գող եմ։ Ես Կատյայի փողերը գողացա... Խայտառակություն է, խայտառակություն։

— Կատյայի՞։ Այդ օրիորդի՞։ Ոչ, չես գողացել։ Ետ տուր նրան, ինձնի՛ց վերցրու... Ի՞նչ ես իրար անցնում։ Հիմա իմ ամեն ինչը քոնն է։ Փո՞ղն ինչ է մեզ համար։ Առանց այն էլ ծախսելու ենք շռայլորեն... Մենք այն մա՞րդն ենք, որ չշռայլենք։ Բայց ավելի լավ է, որ մենք գնանք ու հողը հերկենք։ Ես ուզում եմ ահա այս ձեռքերով քերել հողը։ Պետք է աշխատել, լսո՞ւմ ես։ Ալյոշան այդպես պատվիրեց։ Ես սիրուհի չեմ լինելու քեզ համար, ես քեզ հավատարիմ եմ լինելու, քո ստրուկն եմ լինելու, աշխատելո՛ւ եմ քեզ համար։ Մենք կգնանք օրիորդի մոտ ու երկուսս էլ կխոնարհվենք, որպեսզի ների մեզ, և կհեռանանք այստեղից։ Իսկ եթե չների, այնպես էլ կհեռանանք։ Բայց դու փողը տար նրան, և ինձ սիրիր... Իսկ նրան մի՛ սիրիր։ Էլ մի՛ սիրիր նրան։ Եթե սիրես, կխեղդեմ նրան... Երկու ալքերն էլ ասեղով կհանեմ...

— Քեզ եմ սիրում, միայն քեզ, Սիբիրում քեզ պիտի սիրեմ...

— Ինչո՞ւ Սիբիր։ Բայց ինչ կա որ, թո՛ղ Սիբիրում լինի, եթե ուզում ես։ Միևնույն է... պիտի աշխատենք... Սիբիրում ձյուն է... Ես սիրում եմ ճամփորդել ձյան վրա... և սիրում եմ, որ զանգակ լինի... Լսո՞ւմ ես, զանգակի ձայն... Որտե՞ղ է զնգզնգում այդ զանգակը։ Մարդիկ են գալիս... ահա լռեց զանգակը։

Նա ալքերը փակեց թուլացած և հանկարծ քնեց մի բոպե։ Զանգակն իսկապես զնգզնգում էր հեռավոր մի տեղ և հանկարծ դադարեց զնգզնգալ։ Միտյան գլուխը խոնարհեց նրա կրծքին։ Ջնկատեց, թե զանգակը դադարել էր զնգզնգալ, բայց և չնկատեց, թե ինչպես հանկարծ դադարեցին նաև երգերը, և երգերի ու գինարբուքային գոռում-գոչումի փոխարեն մեռելային մի լռություն տիրեց ամբողջ տան մեջ, մի տեսակ շատ անակնկալորեն։ Գրուշենկան ալքերը բացեց։

— Ի՞նչ է, քնե՞լ էիր։ Այո... զանգակը... Քնել էի ու երազ տեսա. իբր թե սահնակով գնում եմ ձյան վրա... զնգզնգում է զանգակը, իսկ ես նիրհում եմ։ Իբր թե գնում եմ իմ սիրած մարդու հետ, քեզ հետ։ Եվ գնում եմ հեռո՜ւ-հեռու։ Գրկում էի, համբուրում քեզ, սեղմվում քո մարմնին, մրսում էի իբր թե, իսկ ձյունը փայլում էր... Գիտե՞ս, երբ գիշերը փայլում է ձյունը, իսկ լուսինը

նայում է վերևից... և կարծես երկրից դուրս մի տեղ լինեի... Արքնացա, տեսա մոտս է իմ սիրելին, ինչ լա՜վ է...

— Մոռդ,— մրմնջում էր Միտյան, համբուրելով նրա հագուստը, կուրծքը, ձեռքերը։ Եվ հանկարծ նրան թվաց, թե մի տարօրինակ բան է կատարվում, թվաց, թե Գրուշենկան նայում է ուղիղ իր դիմացը, բայց ոչ թե նրան՝ Միտյային, ոչ թե նրա դեմքին, այլ նրա գլխից վեր, նայում է սևեռուն և տարօրինակորեն անշարժ հայացքով։ Հանկարծ Գրուշենկայի դեմքին զարմանք երևաց, համարյա թե վախ։

— Միտյա, ո՞վ է մեզ նայում այնտեղից,— փսփսաց նա մեկին։ Միտյան ետ նայեց ու տեսավ, որ իսկապես մեկը բացել է վարագույրը և կարծես դիտում է իրենց։ Եվ կարծես մեկ հոգի էլ չէ։ Միտյան վեր թռավ ու արագ մոտեցավ նայողին։

— Եկե՛ք այստեղ, համեցեք մեզ մոտ, այստեղ,— ասաց նրան մի ձայն, մեղմորեն, բայց հաստատ ու պահանջող շեշտով։

Միտյան դուրս եկավ վարագույրի ետևից ու անշարժացավ մնաց։ Ամբողջ սենյակը մարդկանցով էր լեցուն, բայց ուրիշ, բոլորովին նոր մարդիկ էին սրանք։ Վայրկենական մի սարսուռ անցավ Միտյայի կռնակով, և նա ցնցվեց։ Մի ակնթարթում ճանաչեց բոլոր այդ մարդկանց։ Ահա այս բարձրահասակ ու պնդակազմ ծերունին, որ վերարկու է հագել ու կոկարդով գլխարկ, նահանգային ոստիկանապետն է՝ Միխայիլ Մակարիչը։ Իսկ այս «հյուծախտավոր», կոկիկ պճնամոլը, որ «միշտ այսպիսի փայլուն կոշիկներ է հագնում», գատախպեի օգնականն է։ «Չորս հարյուր ռուբլի արժող քրոնոմետր ունի, ցույց է տվել ինձ»։ Իսկ այս կարճահասակ, ակնոցավոր երիտասարդը... Միտյան պարզապես նրա ազգանունն էր մոռացել, բայց նրան էլ ճանաչում էր, տեսել էր. քննիչ է նա, դատական քննիչ, «հիրավաբանականից», հենց վերջերս է եկել։ Իսկ ահա այս մեկը գավառական ոստիկանապետն է՝ Մավրիկի Մավրիկիչը, սրան արդեն լավ գիտե, ծանոթ մարդ է։ Բայց թե ա՜յ սրանք, կրծքի վրա վահանակներով, սրա՞նք ինչ գործ ունեն այստեղ։ Եվ դեռ այս երկու հոգին էլ, գյուղացիներ... Իսկ ահա այնտեղ, դռան մոտ, Կալգանովն ու Տրիֆոն Բորիսիչը...

— Պարոնայք... Ի՞նչ եք այսպես, պարոնայք...— սկսեց ասել Միտյան, բայց հանկարծ, ասես ինքնիրենից դուրս գալով, ասես գլուխը կորցրած, բացականչեց բարձրագոչ, ամբողջ ձայնով.

— Հաս-կա-նո՜ւմ եմ։

Ակնոցավոր երիտասարդը հանկարծ առաջ շարժվեց ու մոտենալով Միտյային՝ սկսեց խոսել արժանավայել կեցվածքով, բայց կարծես մի քիչ հապճեպորեն.

— Մենք ձեր նկատմամբ... մի խոսքով, խնդրում եմ ձեզ գալ այստեղ, բազմոցի մոտ... խիստ անհրաժեշտ է բացատրվել ձեզ հետ։

— Ծերո՜ւկը,— գոռաց Միտյան մոլեգնահար,— ծերուկը և նրա արյո՜ւնը... Հաս-կա-նո՜ւմ եմ...

Եվ ծնկները թուլացան, ուղղակի փուլ եկավ, կարծես ընկավ կողքի աթոռին։

— Հասկանո՜ւմ ես։ Հասկացա՜վ։ Հայրասպան հրե՜շ, ծերուկ հորդ արյո՜ւնն է աղաղակում քո դեմ,— մռնչաց հանկարծ նահանգային ոստիկանապետը, մոտենալով Միտյային։ Սաստիկ հուզված էր ծերունին, կաս-կարմիր էր եղել և ուղղակի դողում էր ամբողջ մարմնով։

— Բայց անկարելի է՛ այսպես,— գոչեց կարճահասակ երիտասարդը։— Միխայի՛լ Մակարիչ։ Միխայի՛լ Մակարիչ։ Չի կարելի այդպես, չի՛ կարելի... խնդրում եմ թողնեք, որ միայն ես խոսեմ... Բնավ չէի կարող այսպիսի մի միջադեպ ակնկալել ձեզնից։

— Բայց չէ՞ որ զառանցանք է սա, պարոնայք, զառանցա՜նք,— բացականչում էր նահանգային ոստիկանապետը։— Նայեցե՛ք սրան՝ դիշերվա այս ժամին, հարբած, և անառակ մի կնոջ հետ, և հոր արյունն է կաթում վրայից... Զառանցա՜նք։ Զառանցա՜նք։

— Ամենայն լրջությամբ խնդրում եմ, որ այս անգամ զսպեք ձեր զգացմունքները, սիրելի Միխայիլ Մակարիչ,— սկսեց արագ-արագ փսփսալ դատախազի օգնականը ծերունուն,— այլապես հարկադրված կլինեմ դիմել...

Բայց կարճահասակ քննիչը չթողեց, որ նա վերջացնի, դարձավ Միտյային և արտասանեց հաստատապես, բարձրաձայն ու արժանավայել կերպով։

— Պարոն պաշտոնաթող պորուչիկ Կարամազով, ես պետք է ձեզ հայտարարեմ, որ դուք մեղադրվում եք ձեր հոր՝ Ֆյոդոր

Պավլովիչ Կարամազովի սպանության մեջ, որ տեղի է ունեցել այս գիշեր...

Նա դեռ մի բան էլ ասաց, դատախազը ևս մի բան ավելացրեց, իսկ Միտյան թեև լսում էր, բայց արդեն չէր հասկանում նրանց։ Վայրի մի հայացքով նայում էր բոլորին...

Գիրք իններորդ

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

I

ՊԱՌՈՏՈՆՅԱ ՊԵՐԽՈՏԻՆԸՆ ԻՐ ԱՊԱԳԱՅԻ ՀԻՄԱՆ Է ԴՆՈՒՄ

Պյոտր Իլյիչ Պերխոտինը, որին մենք թողեցինք այն պահին, երբ նա ամբողջ ուժով քախում էր Մորոզովայի տան ամուր ու փակ դարպասը, վերջապես անշուշտ կարողացավ այնպես անել, որ բացեն դուռը։ Ֆենյան, որ այնպե՞ս վախեցել էր երկու ժամ առաջ և դեռ չէր կարողանում պառկել ու քնել՝ հուզմունքից ու «մտքերից», հիմա լսելով այդ կատաղի թակոցը դարպասին, նորից վախեցավ, համարյա հիստերիկայի հասնելու աստիճան. երևակայեց, թե նորից Դմիտրի Ֆյոդորովիչն է թակում (չնայած որ ինքը անձամբ տեսել էր նրա մեկնելը), որովհետև ոչ ոք չէր կարող այդպես «անզուսպ» թակել բացի նրանից։ Ֆենյան վազեց դռնապանի մոտ, որն արթնացել էր ու արդեն գնում էր դեպի դարպասը, և սկսեց աղաչել նրան, որ չբանա դուռը։ Բայց դռնապանը հարցուփորձ անելով իմացավ, թե ով է թակողը, և թե նա ուզում է Ֆեդոսյա Մարկովնային տեսնել շատ կարևոր մի գործով, ու վերջապես որոշեց ներս թողնել նրան։ Երբ Պյոտր Իլյիչը մտնում էր մեզ ծանոթ խոհանոցը, Ֆենյան «սրտի հանգստության համար» խնդրեց, որ նա դռնապանին էլ թույլ տա ներս մտնելու։ Պյոտր Իլյիչը իր հարցուփորձը սկսեց և անմիջապես իմացավ ամենակարևորը, այսինքն այն, թե Դմիտրի Ֆյոդորովիչը, երբ դուրս էր վազում Գրուշենկային փնտրելու, սանդից վերցրել էր սանդկոթը, իսկ երբ վերադարձել էր՝ սանդկոթը չկար արդեն, բայց ձեռքերն արյունոտ էին։ «Եվ արյունն էլ դեռ կաթո՞ւմ էր, ուղղակի կաթում

նրա ձեռքերից, ուղղակի կաթո՞ւմ»,— բացականչում էր Ֆենյան, և պարզ է, որ այդ զարհուրելի մանրամասնությունը ինքն էր ստեղծել իր խանգարված երևակայության մեջ։ Բայց Պյոտր Իլյիչն անձամբ էր տեսել այդ արյունոտ ձեռքերը, թեև արյունը չէր կաթում դրանցից, ինքն էլ օգնել էր Միտյայի լվացվելուն, և վերջապես հարցը այն չէր, թե արյունը շուտ էր չորացել կամ ոչ, այլ այն, թե ո՞ւր էր վազել Դմիտրի Ֆյոդորովիչն այդ սանդկոթը վերցրած, այսինքն հաստատապես Ֆյոդոր Պավլովիչի մո՞տ էր վազել արդյոք, և ի՞նչ հիման վրա կարելի էր վճռականորեն հերքակացնել այդ բանը։ Պյոտր Իլյիչը մանրամասնորեն կանգ էր առնում այս կետի վրա, ու թեև հաստատապես ոչինչ չիմացավ, բայց այնուամենայնիվ հանգեց գրեթե այն համոզման, որ Դմիտրի Ֆյոդորովիչը ուրիշ ոչ մի տեղ չէր կարող գնացած լինել, այլ միայն իր հոր տունը, և որ ուրեմն այնտեղ մի բան պետք է պատահած լինի անպայման։ «Իսկ երբ նա վերադարձավ,— ավելացրեց Ֆենյան հուզախառով,— ես ամեն ինչ խոստովանեցի նրան, հետո սկսեցի հարցնել՝ Դմիտրի Ֆյոդորովիչ, ջանիկս, ինչո՞ւ ձեր երկու ձեռքերն էլ արյունոտ են». և իբր թե Միտյան հենց ուղղակի պատասխանել է, որ դա մարդու արյուն է, և որ ինքը հենց քիչ առաջ մարդ է սպանել։ «Հենց ուղղակի էդպես ասաց, ամեն ինչ խոստովանեց ինձ էստեղ, հետո հանկարծ գժի պես դուրս վազեց։ Ես նստեցի ու սկսեցի մտածել՝ էդ ո՞ւր վազեց հիմա գժի պես։ Կգնա Մոկրոե, մտածեցի, և էնտեղ կսպանի իմ տիրուհուն։ Վազեցի գնացի, որ աղաչեմ նրան՝ չսպանի իմ տիրուհուն, նրա տունն էի վազում, մեկ էլ Պլոտնիկովների խանութի մոտ տեսնում եմ՝ նա արդեն ճանապարհ է ընկնում և ձեռքերն էլ արդեն արյունոտ չեն»։ (Ֆենյան նկատել ու հիշել էր այդ)։ Ֆենյայի պատավ տատը, որքան որ կարող էր, հաստատեց իր թոռան բոլոր ցուցմունքները։ Մի քանի բան էլ հարցնելուց հետո Պյոտր Իլյիչն այդ տնից դուրս եկավ ավելի ևս խռովահար, քան մտնելու պահին էր։

Կարծես թե նրա համար ամենից ավելի անմիջական բանը հիմա այն էր, որ գնա ուղղակի Ֆյոդոր Պավլովիչի տունը և իմանա՝ որևէ բան չի՞ պատահել այնտեղ, և եթե այո՝ ի՞նչ է պատահել հատկապես. և անժխտելիորեն համոզվելուց հետո միայն գնալ ոստիկանապետի մոտ, ինչպես արդեն հաստատ որոշել էր Պյոտր Իլյիչը։ Բայց մութ գիշեր էր, Ֆյոդոր Պավլովիչի տան դարպասներն ամուր էին, պետք էր նորից թակել, իսկ

Ֆյոդոր Պավլովիչի հետ հեռվից-հեռու էր ծանոթ։ Հապա՞ եթե երկար թակելուց հետո դուռը բանային և հանկարծ պարզվեր, թե ոչինչ էլ չի պատահել այնտեղ. ծաղրասեր Ֆյոդոր Պավլովիչը վաղն ևեթ անեկդոտ կդարձներ այդ բոլորը և ամբողջ քաղաքում կպատմեր, թե ինչպես Պերխոտին անունով մի անծանոթ պաշտոնյա կեսգիշերին իր դուռն էր շարդում՝ իմանալու համար, թե արդյոք որևէ մեկը չի՞ սպանել իրեն։ Խայտառակությո՞ւն։ Իսկ Պյոտր Իլյիչն աշխարհում ամենից ավելի վախենում էր խայտառակությունից։ Եվ այնուամենայնիվ, նրան առաջ մղող զգացումը այնքան ուժեղ էր, որ նա ոտքը զայրույթով գետին խփեց ու նորից հայհոյեց ինքնիրեն, բայց անմիջապես սլացավ մի այլ ճանապարհով՝ ոչ թե Ֆյոդոր Պավլովիչի տունը, այլ տիկին Խոխլակովայի։ Եթե այդ տիկինը, մտածեց նա, պատասխանի այն հարցին, թե ի՞նքն է արդյոք Դմիտրի Ֆյոդորովիչին երեք հազար ռուբլի տվել այսօր, այսինչ ժամին, ապա ժխտական պատասխանի դեպքում իսկույն կգնա ոստիկանապետի մոտ, առանց Ֆյոդոր Պավլովիչի տունը հանդիպելու. հակառակ դեպքում ամեն ինչ կթողնի վաղվան և տուն կվերադառնա։ Այստեղ անմիջապես կարելի է պատկերացնել անշուշտ, որ երիտասարդի այդ որոշումը,— գիշերվա ժամը տասնմեկին բարձրաշխարհիկ ու բոլորովին անծանոթ մի տիկնոջ տունը գնալ, թերևս անկողնից հանել նրան՝ զարմանալի հանգամանք ունեցող մի հարց տալու համար,— խայտառակություն առաջ բերելու շատ ավելի մեծ առիթ էր ստեղծում գուցե, քան Ֆյոդոր Պավլովիչի մոտ գնալը։ Բայց երբեմն այդպես են լինում ամենաճշտասեր ու սառնարյուն մարդկանց որոշումները, մանավանդ այսպիսի դեպքերում։ Իսկ Պյոտր Իլյիչն այդ րոպեին արդեն սառնարյուն էլ չէր։ Նա հետո իր ամբողջ կյանքում հիշում էր, թե ինչպես մի անհաղթահարելի անհանգստություն, աստիճանաբար տիրելով իր էությանը, վերջապես հասել էր ամենաբարձր աստիճանին ու նույնիսկ հակառակ իր կամքին քշել-տարել էր իրեն։ Իհարկե, նա համենայն դեպս ամբողջ ճանապարհին նախատում էր իրեն, որ գնում է այդ տիկնոջ մոտ, բայց «գործը կհասցնեմ, կհասցնե՛մ մինչև վերջ» կրկնում էր արդեն տասներորդ անգամ, կրճատացնելով ատամները, և իսկապես իր մտադրությունը կատարեց՝ գործը հասցրեց մինչև վերջ։

Ժամը ուղիղ տասնմեկն էր, երբ մտավ տիկին Խոխլակովայի տունը։ Բավական շուտ բացեցին նրա առաջ բակի դուռը,

բայց այն հարցին, թե քնա՞ծ է արդեն տիկինը կամ դեռ չի՞ պառկել արդյոք՝ դռնապանը չկարողացավ որոշակի պատասխան տալ, միայն ասաց, թե սովորաբար պառկում է այդ ժամին։ «Գնացեք վերև, հայտնեցեք. եթե ուզեն ընդունել ձեզ՝ կընդունեն, եթե չուզեն՝ չեն ընդունի»։ Պյոտր Իլյիչը վեր բարձրացավ, բայց գործն ավելի դժվարացավ այստեղ։ Սենեկապանը չուզեց զեկուցել ու վերջապես կանչեց աղախնին։ Պյոտր Իլյիչը քաղաքավարի, բայց պնդող շեշտով խնդրեց նրան զեկուցել տիրուհուն, որ ահա եկել է Պերխոտին անունով տեղացի մի պաշտոնյա, եկել է մի հատուկ գործով, և եթե շատ կարևոր չլիներ այդ գործը, չէր էլ համարձակվի գալ. «հենց այս բառերով, հենց այս բառերով զեկուցեցեք»,— խնդրեց նա աղախնին։ Աղջիկը գնաց։ Պյոտր Իլյիչն սպասեց նախագավիթում։ Տիկին Խոխլակովան թեև չէր պառկել տակավին, բայց արդեն քաշվել էր իր ննջասենյակը։ Միտյայի այցելությունից ի վեր նա հուզախտով վիճակի մեջ էր և նախազգում էր արդեն, որ գիշերն անխուսափելի է միգրենը՝ սովորական իր գլխացավը նման դեպքերում։ Նա զարմանքով լսեց աղախնի զեկույցը, բայց ջղայնորեն հրամայեց մերժել, չնայած որ այսպիսի ուշ ժամին անծանոթ մի «տեղացի պաշտոնյայի» անակնկալ այցելությունը արտակարգորեն գրավել էր նրա կանացի հետաքրքրությունը։ Բայց Պյոտր Իլյիչն այս անգամ ջորու նման համառեց. լսելով մերժումը, նա չափազանց հարապնդորեն խնդրեց, որ կրկին զեկուցի աղախինը և հաղորդի «հենց այս բառերով», թե ինքը «արտակարգորեն կարևոր մի գործով է եկել, և տիկինը գուցե զղջա հետո, եթե հիմա չընդունի իրեն»։ «Կարծես գլխիվայր գլորվում էի այն ժամանակ»,— պատմում էր հետագայում Պյոտր Իլյիչը։ Աղախինը զարմացած նայեց նրան և գնաց կրկին զեկուցելու։ Տիկին Խոխլակովան ապշեց, մտածեց, հարցուփորձ արեց, թե ինչ տեսք ունի այցելուն, և իմացավ, որ նա «շատ վայելուչ է հագնվել, երիտասարդ է և այնքա՞ն քաղաքավարի»։ Հարևանցիորեն նկատենք փակագծերի մեջ, որ Պյոտր Իլյիչը բավական գեղեցիկ երիտասարդ էր և ինքն էլ գիտեր այդ բանը։ Տիկին Խոխլակովան վերջապես որոշեց տեսնել այցելուին։ Արդեն իր տնային վերնազգեստն ու հողաթափերն էր հագել, բայց մի սև շալ նետեց ուսերին։ «Պաշտոնյայից» խնդրեցին, որ հյուրասենյակ մտնի, հենց այն սենյակը, ուր մի քանի ժամ առաջ ընդունել էին Միտյային։ Տիկինը հյուրասենյակ եկավ խիստ ու հարցական արտահայտությամբ, և

առանց հյուրին հրավիրելու, որ նստի, ուղղակի հարցրեց. «Ի՞նչ եք ուզում»։

— Ես համարձակվեցի ձեզ անհանգստացնել, տիկին, մեր ընդհանուր ծանոթ Դմիտրի Ֆյոդորովիչ Կարամազովին վերաբերող մի խնդրով,— սկսեց Պերխոտինը, բայց հազիվ էր այդ անունն արտասանել, երբ հանկարծ տանտիրուհու դեմքին սաստիկ շրջադարձություն երևաց։ Նա գրեթե ճչաց ու մոլեգնորեն ընդհատեց նրան։

— Դեռ երկա՞ր, երկա՞ր են ինձ տանջելու այդ սարսափելի մարդու պատճառով,— գոռաց նա գազազած։— Ինչպե՞ս եք համարձակվել, պարո՛ն, ինչպե՞ս եք հանդգնում անհանգստացնել անծանոթ մի տիկնոջ՝ իր տան մեջ և այս ժամին... և նրա մոտ եկել եք խոսելու մի մարդու մասին, որ հենց այստեղ, հենց այս հյուրասենյակում, ընդամենը երեք ժամ առաջ, ուզում էր սպանե՛լ ինձ, ոտքերը խփում էր հատակին և այնպե՛ս դուրս գնաց, ինչպես ոչ ոք չէր գնա պատվավոր տնից։ Գիտցե՛ք, պարո՛ն, ես գանգատ եմ ներկայացնելու ձեր դեմ, ես չեմ ների ձեզ այս բանը, հաճեցեք ա՛յս րոպեին իսկ հանգիստ թողնել ինձ... Ես մա՛յր եմ, ես իսկույն... ես... ես...

— Սպանե՛լ։ Ուրեմն նա ուզում էր ձե՞զ էլ սպանել։

— Բայց ի՞նչ է, արդեն սպանե՛լ է որևէ մեկին,— թափով հարցրեց տիկին Խոխլակովան անմիջապես։

— Բարեհաճեցեք կես րոպե միայն լսել ինձ, տիկի՛ն, և ես երկու բառով կբացատրեմ ձեզ ամեն ինչ,— հաստատակամորեն պատասխանեց Պերխոտինը։— Այսօր, կեսօրից հետո ժամը հինգին, պարոն Կարամազովը տասը ռուբլի պարտք վերցրեց ինձնից ընկերաբար, և ես հաստատ գիտեմ, որ նա փող չուներ, բայց հենց այսօր էլ, ժամը իններին, նա ինձ մոտ եկավ՝ ձեռքին հարյուրանոց թղթադրամների մի կապոց բռնած ուղղակի աչքիս առաջ, մոտավորապես երկու կամ նույնիսկ երեք հազար ռուբլի։ Իսկ ձեռքերն ու դեմքը ամբողջովին արյունոտ էին, և ինքն էլ խելագարված էր թվում։ Երբ հարցրի՝ որտեղի՞ց է վերցրել այդքան փողը, նա որոշակիորեն պատասխանեց, թե դրանից մի քիչ առաջ ձեզնից է ստացել, դուք երեք հազար ռուբլի եք փոխ տվել նրան, որպեսզի իբր թե ոսկու հանքերը գնա...

Տիկին Խոխլակովայի դեմքին հանկարծ արտակարգ ու ցավագին մի հուզմունք երևաց.

— Աստվա՛ծ իմ։ Իր ծերունի հո՞րն է սպանել,— բացա-

կանչեց նա, ձեռքերն իրար զարկելով։— Ո՞չ մի փող չեմ տվել նրան, ո՞չ մի փող։ Օ՜, վազեցեք վազեցե՛ք... էլ ոչ մի խոսք մի՛ ասեք։ Փրկեցեք ծերունուն, վազեցեք նրա հոր մոտ, վազեցե՛ք։

— Ներեցեք, տիկին, ուրեմն դուք նրան փող չե՞ք տվել։ Հաստատ հիշո՞ւմ եք, որ ոչ մի դումար չեք տվել նրան։

— Չեմ տվել, չե՛մ տվել։ Ես մերժեցի տալ, որովհետև նա չէր կարողանում գնահատել։ Նա կատաղած դուրս գնաց և ոտքերը հատակին խփեց։ Նա ինձ վրա հարձակվեց, իսկ ես ետ ցատկեցի... Եվ դեռ ասեմ ձեզ, որպես մի մարդու, որից այլևս հիմա ոչ մի բան թաքցնելու միտք չունեմ, ասեմ ձեզ՝ նա նույնիսկ թքեց ինձ վրա, կարո՞ղ եք պատկերացնել։ Բայց ինչո՞ւ ենք այսպես կանգնած։ Ախ, նստեցեք... ներեցեք, ես... Կամ ավելի լավ՝ վազեցեք, վազեցե՛ք, պետք է վազեք ու փրկե՛ք դժբախտ ծերունուն սարսափելի մահից։

— Բայց եթե արդեն սպանե՞լ է նրան։

— Ա՜խ, աստված իմ, իրո՞ք որ։ Դե ուրեմն ի՞նչ ենք անելու հիմա։ Ինչ եք կարծում, ի՞նչ պետք է անել հիմա։

Բայց միաժամանակ նա Պյոտր Իլյիչին ստիպեց նստել և ինքն էլ նրա դիմացը նստեց։ Պյոտր Իլյիչը համառոտակի, բայց բավական հստակորեն պատմեց խնդիրը, գոնե այն մասը, որին ինքն էր այսօր ականատես եղել, պատմեց նաև քիչ առաջվա իր այցելությունը Ֆենյային և սանդկոթի մասին էլ ասաց։ Բոլոր այդ մանրամասնությունները ծայր աստիճան ցնցեցին հուզագրգիռ տիկնոջը, որ ճիչեր էր արձակում և աչքերը փակում ձեռքերով...

— Ներեցեք, ես նախազգո՞ւմ էի այդ բոլորը։ Ես օժտված եմ այդ հատկությամբ, ի՞նչ որ պատկերացնեմ՝ կատարվում է։ Եվ քանի, քանի՜ անգամ նայել եմ այդ սարսափելի մարդուն և միշտ մտածել եմ՝ ահա՛ մի մարդ, որ վերջ ի վերջո կսպանի ինձ։ Եվ ահա այդպես էլ եղավ... Այսինքն՝ եթե հիմա սպանեց ոչ թե ինձ, այլ իր հորը, պատճառն անշուշտ այն է, որ աստծո մատն այստեղ երևաց ու ինձ պաշտպանեց, և բացի այդ՝ ինքն էլ ամաչեց ինձ սպանելու, որովհետև ես ինքս իմ ձեռքով, այս սենյակում, հենց այստեղ, նրա վզին կախեցի մի սրբապատկեր, որի մեջ մեծ նահատակ Վարվառայի մասունքները կային... Ուրեմն ես այդ վայրկյանին որքա՞ն մոտ էի մահվան, չէ՞ որ ուղղակի մոտեցել էի այդ սարսափելի մարդուն, ընդհուպ մոտեցել էի, և նա իր ամբո՞ղջ վիզը երկարեց իմ առաջ։

Գիտե՞ք, Պյոտր Իլյիչ (ներեցեք, կարծեմ ասացիք, որ Պյոտր Իլյիչ է ձեր անունը), գիտե՞ք, ես չեմ հավատում հրաշքների, բայց այդ սրբապատկե՞րը և այս ակնհայտ հրա՞շքը, որ կատարվեց հիմա ինձ հետ՝ սա ցնցում է ինձ, և սկսում եմ նորից հավատալ ինչի՞ որ ուզեք։ Լսե՞լ եք հայր Զոսիմայի մասին... Բայց չգիտեմ ինչ եմ ասում... Եվ պատկերացրեք, սրբապատկերը վզին էր ու նորից էլ թքեց ինձ վրա... Իհարկե, թքեց միայն, ոչ թե սպանեց, և... և ահա թե ո՞ւր վազեց գնաց։ Բայց մե՞նք ուր գնանք, մե՞նք ուր գնանք հիմա, ի՞նչ եք կարծում։

Պյոտր Իլյիչը վեր կացավ ու հայտարարեց, որ հիմա ուղղակի պետք է գնա ոստիկանապետի մոտ և ամեն ինչ պատմի նրան, իսկ հետո նրա՛ գործն է արդեն։

— Ա՜խ, նա սքանչելի, սքանչելի մարդ է, ես ծանոթ եմ Միխայիլ Մակարովիչի հետ։ Անպայման, հենց նրա մոտ պետք է գնալ։ Ի՞նչ հնարամիտ մարդ եք, Պյոտր Իլյիչ, և ինչ լա՜վ մտածեցիք այդ բոլորը։ Գիտե՞ք, եթե ես ձեր տեղը լինեի, ոչ մի կերպ չէի կարող այդ բանը մտածել։

— Մանավանդ որ ես էլ լավ ծանոթ եմ ոստիկանապետի հետ,— նկատեց Պյոտր Իլյիչը. նա դեռ շարունակում էր կանգնած մնալ և հայտնապես ուզում էր շուտով ազատվել այդ խիստ աշխույժ տիկնոջից, որ ոչ մի կերպ առիթ չէր թողնում նրան հրաժեշտ տալու և դուրս գնալու։

— Եվ գիտե՞ք, գիտե՞ք,— բլբլացնում էր տիկինը,— եկեք ու ասացեք ինձ ամեն ինչ, որ կտեսնեք ու կիմանաք այնտեղ... և այն, ինչ կպարզվի... և թե ի՞նչ կորոշեն նրա համար, ի՞նչ պատիժ կտան։ Ասացեք, մեր երկրում մահապատիժ չկա, չէ։ Բայց անպայման եկեք, թեկուզ գիշերվա երեքին, թեկուզ չորսին, նույնիսկ չորս անց կեսին... Պատվիրեցեք, որ ինձ արթնացնեն, ցնցեն, տեղից շարժեն, եթե վեր չկենամ... Օ՜ ասուած իմ, ես նույնիսկ չեմ էլ քնի։ Գիտե՞ք, ես էլ չգա՞մ արդյոք ձեզ հետ...

— Ո-ոչ, տիկին բայց ա՛յ եթե հիմա ձեր ձեռքով մի երեք տող գրեիք, համենայն դեպս... գրեիք, թե ոչ մի փող չեք տվել Դմիտրի Ֆյոդորովիչին, գուցե ավելորդ չլիներ... համենայն դեպս...

— Անպայմա՛ն,— հրճվանքով նետվեց տիկին Խոխլակովան դեպի իր գրասեղանը։— Եվ գիտեք, դուք ինձ շշմեցնում եք, դուք ինձ պարզապես ցնցում եք ձեր հնարամտությամբ, այսպիսի գործերի մեջ ձեր ունեցած հմտությամբ... Դուք այստե՞ղ

եք պաշտոնավարում։ Ի՞նչ հաճելի է լսել, որ այստեղ եք պաշտոնավարում...

Եվ դեռ այդ ասելու ընթացքում նա արագորեն խզմզեց հետևյալ երեք մեծատառ տողերը կես թերթ նամակի թղթի վրա.

«Երբեք իմ կյանքում երեք հազար ռուբլի պարտք չեմ տվել այսօր դժբախտ Դմիտրի Ֆյոդորովիչ Կարամազովին (քանի որ նա համենայն դեպս դժբախտ է հիմա), և ուրիշ ոչ մի փող էլ չեմ տվել երբեք, երբե՞ք։ Երդվում եմ ամեն ինչով, որ սուրբ է մեր աշխարհում։

Խոխլակովա»։

— Ահա՛ երկտողը,— արագորեն դարձավ Պյոտր Իլյիչին։— Գնացեք ուրեմն, փրկեցեք։ Սա մի մեծ սխրագործություն է, որ անում եք։

Եվ նա երեք անգամ խաչակնքեց Պյոտր Իլյիչին։ Նույնիսկ վազեց նրան ուղեկցելու մինչև նախագավիթը։

— Որքա՜ն երախտապարտ եմ ձեզ։ Ձեզ կարող երևակայել, թե որքա՜ն երախտապարտ եմ հիմա ձեզ այն բանի համար, որ ամենից առաջ ինձ մոտ եկաք։ Ինչպե՞ս է, որ մինչև հիմա չենք հանդիպել իրար։ Ինձ համար շատ հաճելի կլիներ այսուհետև ընդունել ձեզ իմ տանը։ Եվ որքա՜ն հաճելի է լսել, որ դուք այստեղ եք պաշտոնավարում... և այսպիսի ճշտասիրությամբ, այսպիսի հնարամտությամբ... Բայց ձեզ պետք է գնահատեն, պետք է հասկանան ձեզ, և հավատացեք, ի՞նչ որ կարող եմ անել ձեզ համար, ես... Օ՜, այնպե՞ս եմ սիրում երիտասարդ սերունդը։ Սիրահարվել եմ երիտասարդ սերնդին։ Երիտասարդները մեր այժմու տառապյալ Ռուսաստանի հիմքն են, ամբողջ հույսը... Օ՜, գնացեք, գնացեք...

Բայց Պյոտր Իլյիչն արդեն դուրս էր վազել, այլապես տիկինն այդքան շուտ բաց չէր թողնի նրան։ Եվ սակայն տիկին Խոխլակովան բավական հաճելի տպավորություն էր գործել նրա վրա, և դա նույնիսկ մի քիչ մեղմացրել էր նրա այն մտահոգությունը, թե ինքը խրվում է այսպիսի զզվելի մի գործի մեջ։ Ճաշակները լափազանց բազմապիսի են լինում, հայտնի բան է դա։ «Եվ տարիքը այնքան էլ մեծ չէ բոլորովին,— մտածեց նա հաճելի մի զգացումով,— ընդհակառակը, կարող էի իր աղջկա տեղ ընդունել նրանց։

Իսկ գալով տիկին Խոխլակովային, նա ուղղակի հմայվել

էր այդ երիտասարդով։ «Այսքա՜ն ձեռնհասություն, այսքա՜ն ճշտասիրություն, և այդպիսի երիտասա՜րդ մի մարդու մեջ, մեր օրերում, և այդ բոլորի հետ՝ նաև այսպիսի՜ վարվելաձև ու արտաքին։ Մեկ էլ ասում են ժամանակակից երիտասարդների մասին, թե նրանք ոչ մի բանի ընդունակ չեն. ահա՜ ձեզ մի օրինակ» և այլն, և այլն։ Այնպես որ նա պարզապես մոռացավ «սարսափելի դեպքը» և միայն անկողին մտնելու պահին հանկարծ հիշեց նորից, թե «որքան մոտ էր եղել մահվան», և ասաց. «Ա՜խ, սարսափելի է, սարսափելի՜»։ Բայց անմիջապես քնեց ամենաքաղցր և ամուր քնով։ Այնուամենայնիվ, ես երկար-բարակ չէի խոսի այսպիսի աննշան ու պատահական մանրամասնությունների մասին, եթե երիտասարդ պաշտոնյայի և դեռ բոլորովին էլ ոչ տարեց այրի տիկնոջ այս տարօրինակ հանդիպումը հետագայում հիմք չծառայեր այդ գործնական ու ճշտասեր երիտասարդի ամբողջ ապագայի համար։ Մինչև հիմա էլ մեր քաղաքում զարմանքով են հիշում այս բանը, և գուցե մենք էլ հատկապես մի քանի խոսք ասենք այս առնչությամբ, երբ ավարտենք մեր երկար պատմությունը Կարամազով եղբայրների մասին։

II

ՏԱՎԵՐՆ

Մեր ոստիկանապետ Միխայիլ Մակարովիչ Մակարովը, պաշտոնաթող փոխգնդապետ, որ քաղաքացիական ծառայության մեջ արքունի խորհրդականի աստիճան էր ստացել, այրի ծերունի էր և լավ մարդ։ Ընդամենը երեք տարի առաջ էր եկել մեզ մոտ, բայց արդեն ընդհանուր համակրանք էր շահել՝ մանավանդ այն պատճառով, որ «գիտեր հասարակությունն ի մի բերելու ձևը»։ Նրա տանը միշտ հյուրեր էին լինում, և կարծես նա չէր էլ կարող ապրել առանց նրանց։ Ամեն օր մեկն ու մեկը նրա տանը ճաշում էր անպայման. թեկուզ երկու, թեկուզ մեկ հյուր լիներ միայն, բայց առանց հյուրի սեղան չէին նստում։ Հատուկ ճաշկերույթներ էլ էր տալիս որևէ մի առիթով, և երբեմն նույնիսկ անսպասելի մի բան էր լինում այդ առիթը։ Կերակուրները թեև շատ ընտիր չէին լինում, բայց մատուցվում էին առատորեն, ձկնակարկանդակները մանավանդ հոյակապ էին, իսկ գինիներն

այնքան էլ չէին փայլում որակով, բայց դրա տեղը բռնում էր քանակը։ Առաջին սենյակում բիլիարդի սեղան կար՝ շատ վայելուչ պարագաներով շրջապատված, այսինքն նույնիսկ անգլիական արշավանքների նկարներ կային պատերի վրա՝ սև շրջանակների մեջ, մի բան, որ, ինչպես հայտնի է, որևէ մի ամուրի մարդու բիլիարդանոցի անհրաժեշտ զարդն է կազմում։ Ամեն երեկո թուղթ էին խաղում, թեկուզ միայն մեկ սեղանի վրա։ Բայց շատ հաճախ հավաքվում էր նաև մեր քաղաքի ամբողջ լավագույն հասարակությունը, մայրիկներով ու օրիորդներով հանդերձ, և պարում էին։ Միխայիլ Մակարովիչը թեև այրի էր, բայց ընտանեկան կյանքով էր ապրում, որովհետև նրա մոտ էր բնակվում վաղուց այրիացած դուստրը, որ իր հերթին մայրն էր երկու աղջիկների։ Միխայիլ Մակարովիչի այդ թոռներն արդեն հասուն, իրենց կրթությունն ավարտած օրիորդներ էին, որոնք բավական հաճելի արտաքին ունեին և ուրախ բնավորություն, ու թեև բոլորը գիտեին, որ նրանք ոչ մի օժիտ չունեն, բայց այնուամենայնիվ իրենց պապիկի տունը հրապուրիչ էին դարձնում մեր բարձրաշխարհիկ երիտասարդության համար։

Միխայիլ Մակարովիչը շատ էլ լավ չէր հասկանում իր գործը, բայց պաշտոնը կատարում էր ոչ ավելի վատ, քան ուրիշ շատ մարդիկ։ Եթե ուղղակի ասենք, նա բավական թերուս մարդ էր և նույնիսկ հոգ չէր տանում, որ պարզ հասկանա իր վարչական իշխանության սահմանները։ Չի կարելի ասել, թե նա չէր կարողանում լիովին ըմբռնել ներկա թագավորության կատարած որոշ բարենորոգումները, բայց մի քիչ սխալ էր հասկանում դրանք, և երբեմն շատ նկատելի էին լինում նրա սխալները. պատճառը բնավ էլ նրա ինչ-որ հատուկ անընդունակությունը չէր, այլ պարզապես նա անհոգ էր իր բնավորությամբ, որովհետև միշտ էլ ժամանակ չուներ խնդրի մեջ խորամուխ լինելու «ես ավելի զինվորական հոգի ունեմ, պարոնայք, քան թե քաղաքացիական»,— ասում էր նա ինքը իր մասին։ Նույնիսկ ճորտատիրության վերացման բուն սկզբունքների մասին նա դեռ կարծես վերջնական ու անխախտ պատկերացում չէր կազմել և դրանք իմանում էր, այսպես ասած, տարեցտարի, իր գիտելիքներն ավելացնելով գործնականորեն և ակամա, այնինչ ինքն էլ կալվածատեր էր։

Պյոտր Իլյիչը վստահ գիտեր, որ այդ երեկո Միխայիլ Մակարովիչի մոտ անպայման կհանդիպի հյուրերից որևէ մեկին,

միայն չգիտեր, թե ո՛ւմ հատկապես։ Եվ հենց այդ պահին էլ ոստիկանապետի հետ նստած թուղթ էին խաղում դատախազը և մեր գավառական բժիշկ Վարվինսկին։ Վերջինս հենց նոր Պետերբուրգից եկած մի երիտասարդ էր՝ Պետերբուրգի բժշկական ակադեմիայի փայլուն շրջանավարտներից մեկը։ Իսկ դատախազ Իպոլիտ Կիրիլովիչը (այսինքն դատախազի օգնական էր նա, բայց մեր քաղաքում բոլորն էլ դատախազ էին կոչում նրան) յուրօրինակ մի մարդ էր, տակավին երիտասարդ, ընդամենը երեսունհինգ տարեկան, բայց խիստ հակամետ էր թոքախտի, ըստ որում ամուսնացել էր մի շատ գեր ու ամուլ կնոջ հետ, ինքնաբեր էր ու շղայլին, թեև շատ պատկառելի խելք ուներ և նույնիսկ բարի սիրտ։ Նրա բնավորության ամենադժբախտ կողմը կարծես այն էր, որ իր մասին մի քիչ ավելի բարձր կարծիք ուներ, քան թույլ էին տալիս իր արժանիքները։ Եվ ահա թե ինչու նա մշտապես անհանգիստ էր թվում։ Մանավանդ որ ավելի բարձր և նույնիսկ գեղարվեստական հավակնություններ էլ ուներ. այսպես օրինակ, հավակնում էր, որ ինքը հոգեբանական ներթափանցման ձիրքն ունի, և հավատում էր, որ ինքը հատկապես գիտե մարդկային հոգին, առանձնահատուկ շնորհ ունի ճանաչելու ոճրագործին և նրա կատարած ոճրագործությունը։ Այս իմաստով նա իրեն մի քիչ վիրավորված էր զգում, համարելով, որ արժանի պաշտոն չեն տվել իրեն, և միշտ այն համոզմունքին էր, թե բարձրագույն շրջաններում չկարողացան իրեն գնահատել, և թե ինքը թշնամիներ ունի։ Մասյլ բոպենիերին սպառնում էր նույնիսկ թողնել պաշտոնը և քրեական գործերի դատապաշտպան դառնալ։ Կարամազովների այս հայրասպանության անսպասելի գործը մի տեսակ լրիվ թափ տվեց նրան. «Այնպիսի՜ գործ է, որ կարող է ամբողջ Ռուսաստանով մեկ հայտնի դառնալ»։ Բայց այս բանն արդեն ժամանակից շուտ եմ ասում։

Հարևան սենյակում, օրիորդների հետ, նստել էր նաև մեր երիտասարդ դատական քննիչ Նիկոլայ Պարֆյոնովիչ Նելյուդովը, որ ընդամենը երկու ամիս առաջ եկել էր Պետերբուրգից։ Հետագայում մեզ մոտ խոսակցության ու նույնիսկ զարմանքի առարկա դարձավ այն, թե կարծես դիտմամբ բոլոր այդ անձնավորությունները գործադիր իշխանության տանն էին հավաքվել «ոճրագործության» իրիկունը։ Այնինչ խնդիրը շատ ավելի պարզ էր, չափազանց բնականորեն էր պատահել այդ բանը։ Արդեն երկրորդ օրն էր, ինչ Իպոլիտ Կիրիլովիչի կնոջ ատամներն էին

ցավում, և մարդը պետք է վերջապես փախչեր նրա տնքոցներից, գնար մի տեղ։ Բժիշկն արդեն իր բնավորության իսկ բերումով չէր կարող մի երեկո անցկացնել առանց թղթախաղի։ Իսկ Նիկոլայ Նելյուդովը դեռ նույնիսկ երեք օր առաջ միտքն էր դրել այդ երեկո հանդիպել Միխայիլ Մակարովիչի տունը, իբր թե այսպես ասած պատահականորեն, որպեսզի անակնկալի բերեր և դավադրաբար շշմեցներ մեծ օրիորդին՝ Օլգա Միխայլովնային, ասելով, թե գիտե նրա գաղտնիքը, գիտե, որ այսօր նրա ծննդյան օրն է, և որ նա դիտմամբ ուզեցել է թաքցնել այդ բանը մեր հասարակությունից, որպեսզի ամբողջ քաղաքը չհրավիրի պարահանդեսի։ Նելյուդովը պատկերացնում էր, թե որքան պիտի ծիծաղեն ու ակնարկություններ անեն նրա տարիքի վերաբերյալ, որ իբր թե օրիորդը վախենում է ի հայտ բերել, բայց հիմա որ ինքը՝ Նելյուդովը գիտե նրա գաղտնիքը, վաղն ևեթ ասելու է բոլորին և այլն, և այլն։ Այս սիրունիկ երիտասարդը մի մեծ չարաճճի էր այսպիսի հարցերում, մեր տիկնայք հենց այդպես էլ նրան չարաճճի էին կոչել, և կարծես դա շատ էր դուր գալիս նրան։ Բայց նա շատ լավ հասարակության մեջ էր մեծացել, լավ ընտանիքից էր՝ լավ դաստիարակությամբ ու լավ զգացումներով, ու թեև հաճոյասեր մարդ էր, բայց շատ անմեղ ու միշտ քարեվայելուչ։ Կարճահասակ էր նա՝ թույլ ու նուրբ կազմվածքով։ Բարակ ու գունատ մատների վրա միշտ էլ մի քանի չափազանց խոշոր մատանիներ էին փայլփլում։ Իսկ իր պաշտոնը կատարելու ժամանակ արտակարգորեն ծանրակշիռ էր դառնում, կարծես սրբության պես ընկալելով իր նշանակությունն ու իր պարտավորությունները։ Հարցաքննությունների ընթացքում հատկապես կարողանում էր շփոթության մատնել ռամիկ դասին պատկանող մարդասպաններին և այլ չարագործներին, և իսկապես, եթե ոչ հարգանք, համենայն դեպս որոշ զարմանք էր հարուցում նրանց մեջ իր նկատմամբ։

Մտնելով ոստիկանապետի տունը, Պյոտր Իլյիչը պարզապես շշմեց. հանկարծ տեսավ, որ ամեն ինչ գիտեն արդեն։ Իսկապես, թողել էին թղթախաղը, բոլորը ոտքի էին կանգնել ու դատողություններ էին անում, և նույնիսկ Նիկոլայ Պարֆյոնովիչն օրիորդներին թողել ու վազել-եկել էր, ամենամարտական ու խոյընթաց տեսք ընդունելով։ Պյոտր Իլյիչին դիմավորեց այն շշմեցուցիչ լուրը, թե իսկապես Ֆյոդոր Պավլովիչին սպանել են

այդ երեկո իր տան մեջ, սպանել են ու կողոպտել։ Իսկ այդ լուրը հենց նոր էր հասել ոստիկանապետին, հետևյալ ձևով։

Մարֆա Իգնատենան, ցանկապատի մոտ զգետնված Գրիգորիի կինը, պինդ քնել էր իր անկողնում և կարող էր այդպես էլ քնած մնալ մինչև առավոտ, բայց հանկարծ արթնացավ։ Նրան զարթեցրեց ընկնավորի այն սարսափելի աղաղակը, որ կողքի սենյակում ուշակորույս պառկած Սմերդյակովն արձակեց։ Այդ աղաղակով էին միշտ սկսում նրա նոպաները և միշտ էլ սոսկալի վախ էին պատճառում Մարֆա Իգնատենային, հիվանդագին ազդեցություն էին գործում նրա վրա։ Նա երբեք էլ չէր կարողանում վարժվել դրանց։ Քնաթաթախ վեր թռավ կինը և գրեթե խելակորույս վազեց Սմերդյակովի սենյակը։ Բայց մութ էր այնտեղ, նա միայն լսեց, որ հիվանդն սկսում է սոսկալի խռխռալ ու տապլտկել։ Եվ Մարֆա Իգնատենան ինքը սկսեց ճչալ ու ամուսնուն կանչել, բայց հանկարծ գիտակցեց, որ երբ ինքը վեր էր կենում անկողնից, Գրիգորին կարծես թե այնտեղ չէր։ Վազեց մահճակալի մոտ և սկսեց շոշափել նորից, բայց իսկապես դատարկ էր անկողինը։ Ուրեմն Գրիգորին ելել գնացել էր. իսկ ո՞ւր էր գնացել։ Կինը դուրս վազեց ու սանդուղքի վրայից վեհերոտ ձայնով կանչեց ամուսնուն։ Պատասխան չստացավ անշուշտ, բայց գիշերային լռության մեջ ինչ-որ տնքոցներ լսեց հեռվից, կարծես թե այգու խորքից։ Ականջ դրեց. տնքոցները կրկնվեցին, և պարզ դարձավ, որ դրանք իսկապես այգուց էին գալիս։ «Տե՞ր աստված, ոնց որ Լիզավետա Սմերդյաշչայան լն ժամանակ»,— անցավ նրա խռովահար մտքով։ Վեհերոտ քայլերով իջավ աստիճաններից ու տեսավ, որ այգու դռնակը բաց է։ «Հա՞, երևի էնտեղ է, հոգուն մատաղ»,— մտածեց նա, մոտեցավ դռնակին և հանկարծ պարզ լսեց, որ Գրիգորին կանչում է իրեն՝ «Մարֆա՞, Մարֆա՞», կանչում է թույլ, հառաչուն, սարսափելի ձայնով։ «Տե՞ր աստված, պահիր մեզ փորձանքից»,— փսփսաց Մարֆա Իգնատենան, վազեց դեպի ձայնը և ահա այդպես գտավ Գրիգորիին։ Բայց գտավ ոչ թե ցանկապատի մոտ, ոչ թե այնտեղ, ուր նա ընկել էր, այլ մոտավորապես քսան քայլ հեռու ցանկապատից։ Հետո պարզվեց, որ Գրիգորին, ուշքի գալով, սողացել է, և հավանաբար երկար ժամանակ է սողացել, մի քանի անգամ կորցնելով գիտակցությունը և նորից ուշակորույս մնալով։ Մարֆա Իգնատենան իսկույն նկատեց, որ նա ամբողջովին արյունաթաթախ է, և սկսեց բարձր ձայնով ճչալ ու օգ-

նություն կանչել։ Իսկ Գրիգորին թոթովում էր կամաց ու անկապ. «Սպանեց... հորը սպանեց... ի՞նչ ես գոռում, հիմար կնիկ... վազիր... մարդ կանչիր...»։ Բայց Մարֆա Իգնատենան խելքի չէր գալիս ու շարունակում էր ճչալ. և հանկարծ տեսնելով, որ իր տիրոջ պատուհանը բաց է և լույս կա այնտեղ, վազեց այդ կողմը և սկսեց կանչել Ֆյոդոր Պավլովիչին։ Սակայն երբ պատուհանից ներս նայեց, ահավոր մի տեսարան բացվեց նրա առաջ. տերը մեջքի վրա ընկել էր հատակին, անշարժ։ Բաց գույնի վերնազգեստն ու կրծքի վրա սպիտակ շապիկն արյունոտ էին։ Սեղանի վրա վառվող մոմը պայծառ լուսավորում էր արյունն ու Ֆյոդոր Պավլովիչի անկենդան դեմքը։ Այստեղ արդեն ծայր աստիճան ահաբեկված, Մարֆա Իգնատենան ետ քաշվեց պատուհանից, դուրս վազեց այգուց, քաշեց դարպասի փականը և ետևի կողմից գլխապատառ վազեց դեպի հարևանուհու տունը։ Մարյա Կոնդրատենան և իր դուստրը քնել էին արդեն, բայց Մարֆա Իգնատենայի ճիչերից ու լուսամուտի փեղկին հասցրած կատաղի թակոցներից զարթնեցին ու վազեցին լուսամուտի մոտ։ Մարֆա Իգնատենան սկսեց անկապ-անկապ ճչալ ու գոռգոռալ, բայց կարողացավ հայտնել բուն իրողությունը և օգնության կանչեց։ Հենց այդ օրն էլ նրանց մոտ էր գիշերել թաքառական Ֆոման։ Անմիջապես արթնացրին նրան ու երեքը մեկ վազեցին դեպի ոճրագործության վայրը։ Ճանապարհին Մարյա Կոնդրատենան հասցրեց հիշել, որ այդ երեկո, ժամը ինների մոտ, մի սարսափելի, ականջ ծակող աղաղակ էր լսել նրանց այգուց. և դա անշուշտ հենց այն աղաղակն էր, որով Գրիգորին «Հայրասպա՞ն» էր գոռացել ամբողջ թաղով մեկ, երբ ձեռքերով կառչել էր ցանկապատի վրա նստած Դմիտրի Ֆյոդորովիչի ոտքից։ «Միայն մի մարդ էր՝ գոռաց ու հանկարծ լռեց»,— վկայում էր Մարյա Կոնդրատենան վազելով։ Հասնելով այն տեղը, ուր գետնին պառկել էր Գրիգորին, երկու կանայք Ֆոմայի օգնությամբ նրան տեղափոխեցին բակի շենքը։ Լույսը վառեցին ու տեսան, որ Սմերդյակովի վիճակը դեռ չի թեթևացել, տապլտկում է նա իր սենյակում, աչքերը շլվել են, իսկ շրթունքներից փրփուր է հոսում։ Գրիգորիի գլուխը սրբեցին քացախաջրով, և նա արդեն լիովին ուշքի եկավ ջրի շնորհիվ ու իսկույն հարցրեց. «Սպանվա՞ծ է Ֆյոդոր Պավլովիչը, թե ոչ»։ Այն ժամանակ երկու կանայք ու Ֆոման շտապեցին Ֆյոդոր Պավլովիչի մոտ, և երբ այգի մտան, այս անգամ տեսան, որ ոչ միայն պատուհանը, այլև

ունից դեպի այգի տանող դուռն էլ լրիվ բաց է, այնինչ Ֆյոդոր Պավլովիչն ամբողջ վերջին շաբաթվա ընթացքում անձամբ կողպում էր այդ դուռը ամեն երեկո և նույնիսկ Գրիգորիին թույլ չէր տալիս որևէ պատրվակով գալ ու թակել։ Բաց տեսնելով այդ դուռը, երեքն էլ իսկույն վախեցան գնալ Ֆյոդոր Պավլովիչի մոտ, «որպեսզի տակից մի բան դուրս չգա հետո»։ Իսկ երբ բակի շենքը վերադարձան, Գրիգորին հրամայեց իսկույն ևեթ վազել հենց ոստիկանապետի մոտ։ Եվ ահա այդ ժամանակ է, որ Մարյա Կոնդրատևնան վազեց ու բոլորին ոտքի հանեց ոստիկանապետի տանը։ Ընդամենը հինգ րոպեով կանխեց նա Պյոտր Իլյիչին, այնպես որ վերջինս եկավ ոչ թե արդեն իր ենթադրություններն ու եզրակացությունները միայն հայտնելու, այլ որպես ականատես վկա, որ իր պատմածով ավելի ևս հաստատեց այն ընդհանուր կասկածը, թե ով է ոճրագործը (մի կասկած, որին նա իր հոգու խորքում չէր ուզում հավատալ մինչև այդ վերջին րոպեն)։

Որոշեցին գործել արագ ու թափով։ Քաղաքի ոստիկանական տեսչի օգնականին անմիջապես հանձնարարեցին չորս հոգի հավաքել որպես ենթավկա, և ըստ բոլոր կանոնների, որոնք այլևս չեմ նկարագրում այստեղ, մտան Ֆյոդոր Պավլովիչի տունը և քննություն կատարեցին ոճրագործության վայրում։ Գավառական բժիշկը, տաքարյուն ու նոր մարդ լինելով, գրեթե աղաչեց, որ ինքն էլ ընկերանա ոստիկանապետին, դատախազին ու քննիչին։ Համառոտակի նշեմ միայն, որ Ֆյոդոր Պավլովիչին գտան կատարելապես սպանված. ջախջախվել էր գլուխը, բայց ինչո՞վ. շատ հավանաբար այն նույն զենքով, որով հետո հարված էր տացել նաև Գրիգորին։ Եվ ահա տեղն ու տեղը գտան նաև այդ զենքը, երբ Գրիգորին, հնարավոր բժշկական օգնություն ստանալուց հետո, թույլ ու բեկբեկուն ձայնով ու բավական կապակցված խոսելով պատմեց, թե ինչպես էր ինքը տապալվել։ Սկսեցին լապտերներով փնտրել ցանկապատի մոտ և գտան պղնձե սանդղոթը, որ նետված էր ուղղակի այգու արահետի վրա, ամենից ավելի ակնառու մի տեղ։ Ոչ մի անկարգություն չնկատեցին այն սենյակում, ուր ընկած էր Ֆյոդոր Պավլովիչը, բայց վարագույրի հետև, նրա մահճակալի մոտ, հատակից վերցրին մի մեծ, գրասենյակային չափսի, հաստ թղթից ծրար, որի վրա գրված էր՝ «Ինձ հազար ռուբլի նվեր իմ հրեշտակ Գրուշենկային, եթե ուզենա գալ»։ Իսկ ներքևում, հավանաբար ավելի ուշ, Ֆյոդոր Պավլովիչն ավելացրել էր՝ «և ճուտիկինս։ Կարմիր կնքամոմի երեք խոշոր կնիք կար ծրարի վրա, որ սակայն ոչնչացված ու դատարկ էր արդեն. փողը հանված էր։ Հատակին գտան նաև այն բարակ, վարդագույն ժապավենը, որով կապված էր ծրարը։

Պյոտր Իլյիչի ցուցմունքների մեջ, ի միջի այլոց, կար մի հանգամանք, որ արտակարգ տպավորություն գործեց դատախազի ու քննիչի վրա, այսինքն այն ենթադրությունը, թե Դմիտրի Ֆյոդորովիչն անպայման անձնասպան կլինի առավոտյան դեմ, թե նա ինքն է որոշել այդ բանը, ինքն է այդպես ասել Պյոտր Իլյիչին, որի ներկայությամբ լցրել է ատրճանակը, մի երկտող է գրել ու դրել է գրպանը և այլն, և այլն։ Իսկ երբ Պյոտր Իլյիչը, դեռ չուզենալով հավատալ նրան, սպառնացել է, որ կգնա ու կհայտնի որևէ մեկին, որպեսզի կանխվի անձնասպանությունը, Միտյան քմծիծաղով պատասխանել է՝ «Ձես հասցնի»։ Ուրեմն պետք էր շտապել, ժամանակին հասնել Մոկրոե ու բռնել ոճրագործին, քանի դեռ իսկապես նրա խելքին չի փչել անձնասպան լինել։ «Դա պարզ է, պա՛րզ,— կրկնում էր դատախազը արտակարգորեն հուզված,— նրա նման թոկից փախածները ճիշտ ու ճիշտ այդպես են՝ վազը կսպանե՞մ ինքս ինձ, իսկ մահից առաջ քեֆ եմ անում»։ Խանութից գինի և ուտեստեղեն գնելու պատմությունն ավելի ևս բորբոքեց դատախազին։ «Հիշո՞ւմ եք այն տղային, պարոնայք, որ վաճառական Օլսուֆևին սպանեց, գողացավ հազար հինգ հարյուր ռուբլին և իսկույն գնաց մազերը գանգրացրեց, հետո էլ լավ շթաքցնելով փողերը, համարյա թե նույնպես ձեռքում բռնած, վազեց աղջիկների մոտ»։

Սակայն հետաքննությունը, Ֆյոդոր Պավլովիչի տան խուզարկությունը, ձեռակերպումները և այլն ուշացնում էին բոլորին։ Այդ ամբողջը ժամանակ էր պահանջում, ուստի իրենց գնալուց երկու ժամ առաջ Մոկրոե ուղարկեցին գավառական ոստիկանապետ Մավրիկի Մավրիկիևիչ Շմերցովին, որ նախորդ օրն առավոտյան քաղաք էր եկել իր ռոճիկն ստանալու։ Ըստ տրված հրահանգի, Մոկրոե հասնելուց հետո Մավրիկի Մավրիկիևիչը, առանց որևէ տագնապ հարուցելու, պետք է անդադար հետևեր «ոճրագործին» մինչև պետական իշխանությունների ժամանումը, ինչպես և պետք է նախապատրաստեր ենթավկաներին, գյուղական ոստիկանության վերակացուներին և այլն, և այլն։ Այդպես էլ վարվեց Մավրիկի Մավրիկիևիչը, մնալով incognito և միայն իր հին ծանոթ Յրիֆոն Բորիսովիչին մասամբ հայտնելով գաղտնիքը։

Դա հենց այն ժամանակ էր, երբ Միտյան պատշգամբում, մթան մեջ հանդիպեց պանդոկապանին, որ փնտրում էր նրան, ընդ որում անմիջապես էլ ինչ-որ անակնկալ փոփոխություն նկատեց Տրիֆոն Բորիսովիչի դեմքին ու խոսքերի մեջ։ Այսպիսով, ոչ Միտյան, ոչ էլ ուրիշ որևէ մեկը գիտեր, որ հետևում են իրենց։ Իսկ ատրճանակների տուփը վաղուց արդեն փախցրել էր Տրիֆոն Բորիսովիչը և պահել հարմար մի տեղ։ Եվ միայն առավոտյան չորսից հետո, համարյա լուսադեմին, երկու եռաձի ուղեկառքով ժամանեցին բոլոր իշխանավորները՝ նահանգային ոստիկանապետը, դատախազն ու քննիչը։ Իսկ բժիշկը Ֆյոդոր Պավլովիչի տանը մնաց, նպատակ ունենալով առավոտյան դիահերձում կատարել սպանվածի մարմնի վրա, բայց նա գլխավորաբար հետաքրքրվել էր հիվանդ ծառայի՝ Սմերդյակովի վիճակով. «Քիչ կարող ես հանդիպել ընկնավորության այսպիսի դաժան ու երկարատև նոպաների, որոնք երկու օր անընդհատ կրկնվում են, և սա պետք է գիտության սեփականությունը դառնա»,— ոգևորությամբ ասաց նա իր գործակիցներին, որոնք մեկնում էին արդեն և ծիծաղելով շնորհավորեցին նրան այդ գյուտի համար։ Միաժամանակ բժիշկն ամենավճռական շեշտով ավելացրեց, թե Սմերդյակովը մինչև առավոտ չի ապրի, և դատախազն ու քննիչը շատ լավ հիշեցին նրա ասածը։

Այժմ, այս երկար, բայց կարծեմ անհրաժեշտ բացատրությունից հետո, վերադարձանք մեր պատմության հենց այն պահին, ուր կանգ էինք առել նախորդ գրքում։

III

ՀՈԳԻՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՉԱՐՇԱՐԱՆՔՆԵՐԻ ՈՒԼԻՈՎ ՉԱՐՇԱՐԱՆՔ ԱՌԱՋԻՆ

Եվ այսպես, Միտյան նստել ու վայրի հայացքով նայում էր ներկաներին, չհասկանալով, թե ինչ են ասում իրեն։ Հանկարծ նա վեր կացավ, ձեռքերը վեր նետեց ու բարձրաձայն գոռաց.

— Մեղք չունե՛մ։ Ա՛յդ արյան մեջ մեղք չունեմ։ Հորս արյան մեջ մեղք չունեմ... Ուզում էի սպանել, բայց մեղք չունե՛մ։ Ես չե՛մ։

Բայց հազիվ էր նա գոռացել այդ, մեկ էլ հանկարծ վարա-

գույրի ետևից դուրս նետվեց Գրուշենկան և հենց ուղղակի փուլ եկավ ոստիկանապետի ոտքերի առաջ։

— Ե՛ս եմ, ե՛ս, անիծյալ լինեմ, ե՛ս եմ մեղավորը,— աղաղակեց նա սրտակեղեք ձայնով, դեմքն արցունքով ողողված, ձեռքերը մեկնելով բոլորին,— ի՞մ պատճառով սպանեց նա... Ե՛ս տանջեցի նրան և հասցրի այդ բանին։ Այդ խեղճ ծերուկի՞ն էլ, հանգուցյալին էլ տանջեցի՞ իմ չարությունից, և հասցրի սրա՞նս։ Ե՛ս եմ մեղավորը, ե՛ս եմ ամենից առաջ, ե՛ս եմ գլխավորը, ե՛ս եմ մեղավորը։

— Այո՛, դու ես մեղավորը։ Դո՛ւ ես գլխավոր հանցագործը։ Դու կատաղած կին ես, դու անառա՛կ ես, դո՛ւ ես ամենից առաջ մեղավորը,— գոռաց ոստիկանապետը, ձեռքով սպառնալով Գրուշենկային, բայց այս անգամ արդեն արագ ու վճռակտորեն զսպեցին Միխայիլ Մակարովիչին։ Դատախազը նույնիսկ երկու թևով գրկեց նրան։

— Սա արդեն բոլորովին անկարգություն է, Միխայիլ Մակարովիչ,— գոռաց նա,— դուք ուղղակի խանգարում եք դատաքննությունը... գործն եք փչացնում...— գրեթե շնչահեղձ էր լինում դատախազը։

— Միջոցներ ձեռք առնել, միջոցներ, միջոցնե՞ր ձեռք առնել,— սոսկալի բորբոքվեց նաև Նիկոլայ Պարֆյոնովիչը,— այլապես ուղղակի անհնար է...

— Միասի՞ն դատեցեք մեզ,— շարունակում էր մոլեգնորեն բացականչել Գրուշենկան, դեռ ծնկների վրա մնալով։— Միասի՞ն պատժեք մեզ, հիմա ես նրա հետ մահապատժի՞ էլ կգնամ։

— Գրուշա, դու իմ կյա՞նքս, իմ արյո՞ւնս, սրբությո՞ւնս իմ, Գրուշա,— նրա կողքին ծնկի նետվեց նաև Միտյան և ամուր սեղմեց նրան իր գրկում։— Մի՛ հավատաք նրան,— գոռաց,— մեղավոր չէ նա, ոչ մի բանում մեղավոր չէ, ոչ մի արյուն, ո՞չ մի բան։

Հետագայում նա հիշեց, որ մի քանի հոգի ուժով ետ քաշեցին իրեն Գրուշենկայից և նրան հանկարծ տարան, իսկ ինքը ուշքի եկավ, երբ արդեն նստել էր սեղանի մոտ։ Իր կողքին ու իր ետևում կանգնած էին այն մարդիկ, որոնք վահանակներ ունեին կրծքի վրա։ Իր դիմացը, սեղանի մյուս կողմը, բազմոցի վրա նստել էր դատական քննիչ Նիկոլայ Պարֆյոնովիչը, և անընդհատ համոզում էր մի քիչ ջուր խմել սեղանի վրա դրված բաժակից. «Դա կթարմացնի ձեզ, կհանգստացնի ձեզ, մի՛ վա-

խենաք, մի՛ անհանգստանաք»,— ավելացնում էր նա չափազանց քաղաքավարի կերպով։ Բայց Միտյային, ինչպես ինքն էր հիշում հետո, հանկարծ սոսկալի հետաքրքրեցին քննիչի խոշոր մատանիները, որոնցից մեկի վրա մեղեսիկ կար, իսկ մյուսի վրա՝ վառ դեղին ու թափանցիկ մի շողակ, որ այնքան գեղեցիկ փայլ ուներ։ Եվ հետագայում դեռ նա երկար ժամանակ զարմանքով հիշում էր, որ այդ մատանիներն անդիմադրելիորեն գրավում էին իր հայացքը հարցաքննության բոլոր այդ սարսափելի ժամերի ընթացքում, այնպես որ նա, չգիտես ինչու, ոչ մի կերպ չէր կարողանում պոկվել ու մոռանալ դրանք՝ որպես իր դրության բոլորովին չհամապատասխանող բաներ։ Միտյայի ձախ կողմը, այնտեղ, ուր երեկոյի սկզբում նստել էր Մաքսիմովը, հիմա դատախազն էր տեղ գրավել, իսկ Միտյայի աջ կողմը, այնտեղ, ուր Գրուշենկան էր առաջ, տեղավորվել էր վարդագույն այտերով մի երիտասարդ, որ մի տեսակ որսորդական ու խիստ մաշված բաճկոն էր հագել, և որի առաջ թանաքման ու թուղթ կար։ Պարզվեց, որ նա քննիչի գրագիրն է, և քննիչը նրան բերել է իր հետ։ Իսկ ոստիկանապետը հիմա կանգնած էր պատուհանի մոտ, սենյակի մյուս ծայրը, Կալգանովի կողքին, որ նույն պատուհանի մոտ նստել էր աթոռի վրա։

— Մի քիչ շուր խմեցեք,— կրկնեց մեղմորեն քննիչը արդեն տասներորդ անգամ։

— Խմեցի, պարոնայք, խմեցի... բայց... է՛հ, պարոնայք, ճշմեցեք ինձ, պատժեցե՛ք, վճռեցե՛ք իմ ճակատագիրը,— բացականչեց Միտյան, սոսկալիորեն անշարժ ու շոված հայացքով նայելով քննիչին։

— Այսպես ուրեմն, դուք հաստատապես պնդում եք, որ մեղավոր չե՞ք ձեր հոր՝ Ֆյոդոր Պավլովիչի մահվան մեջ,— հարցրեց քննիչը մեղմ, բայց հաստատուն շեշտով։

— Մեղավոր չե՛մ։ Մեղավոր եմ մի ուրիշ արյուն թափելու մեջ, մի ուրիշ ծերունու արյուն, բայց ոչ թե իմ հոր։ Եվ ողբո՛ւմ եմ։ Սպանեցի, սպանեցի ծերունուն, սպանեցի ու տապալեցի գետին... Բայց ծանր է այդ արյան դիմաց պատասխան տալ մի ուրիշ արյունով, սարսափելի՛ արյունով, որի համար մեղավոր չեմ... Ահավոր մեղադրանք է, պարոնայք, կարծես բռունցքով խփեցիք քթիս-բերանիս։ Բայց ո՞վ է սպանել հորս, ո՞վ է սպանել։ Ո՞վ կարող է սպանած լինել, եթե ես չեմ։ Հրաշք է սա, անհեթեթ բան, անկարելի՛ բան...

— Այո, ո՞վ կարող է սպանած լինել...— սկսում էր քննիչը, բայց դատախազ Իպոլիտ Կիրիլովիչը (այսինքն դատախազի օգնականը, բայց մենք էլ նրան կարճորեն դատախազ կոչենք), մի հայացք փոխանակելով քննիչի հետ, դարձավ Միտյային ու ասաց.

— Դուք իզուր եք անհանգստանում ծերունի ծառա Գրիգորի վասիլևիչի համար։ Իմացեք, որ նա կենդանի է, ուշքի է եկել, և չնայած այն ծանր հարվածներին, որոնց նա ենթարկվել է ձեր կողմից, ըստ նրա և ձեր այժմու ցուցմունքի, կարծես թե կենդանի կմնա անտարակույս, գոնե բժշկի ասելով։

— Կենդանի՞ է։ Ուրեմն կենդանի է՞,— գոչեց հանկարծ Միտյան, ձեռքերն իրար զարնելով։ Նրա դեմքը լրիվ պայծառացավ։— Ո՞վ ասված, շնորհակալ եմ քեզնից այն մեծագույն հրաշքի համար, որ ցուցաբերեցիր ինձ՝ մեղավորիս ու չարագործիս, լսեցի՞ր իմ աղոթքը... Այո, այո, իմ աղոթքի պատասխանն է դա, ես ամբո՞ղջ գիշեր աղոթում էի...— և նա երեք անգամ խաչակնքեց։ Համարյա շունչը կտրվում էր։

— Եվ ահա ուրեմն, հենց այդ Գրիգորիից էլ մենք այնքան կարևոր ցուցմունքներ ստացանք ձեր մասին, որ դուք...— շարունակում էր դատախազը, բայց հանկարծ Միտյան վեր թռավ աթոռից։

— Մի րոպե, պարոնայք, ի սեր աստծո, միա՛յն մի լոպե, վազեմ Գրուշենկայի մոտ...

— Ներեցե՛ք։ Այս րոպեիս ո՛չ մի կերպ չի կարելի,— համարյա ճչաց Նիկոլայ Պարֆյոնովիչը և նույնպես վեր թռավ։ Միտյային բռնեցին այն մարդիկ, որոնք վահանակներ ունեին կրծքի վրա, բայց նա իր կամքով նստեց աթոռին...

— Շատ ափսոս, պարոնայք։ Միայն մի վայրկյան ուզում էի տեսնել նրան... ուզում էի հայտնել, որ սրբվեց, լքացա՛վ այն արյունը, որ ամբողջ գիշերը նստել էր սրտիս վրա, և էլ մարդասպան չե՞մ։ Նա իմ հարսնացուն է, պարոնայք,— ասաց նա հանկարծ ցնծությամբ ու ակնածանքով, նայելով շուրջը՝ բոլորին։— Օ՜, շնորհակալ եմ ձեզնից, պարոնայք։ Օ՜, ինչպե՞ս վերակենդանացրիք, կյանք տվեցիք ինձ մի վայրկյանում... Այդ ծերունին իր ձեռքերի վրա է պահել ինձ, պարոնայք, նա ինձ լվանում էր տաշտում, երբ երեք տարեկան երեխա էի և բոլորը լքել էին ինձ։ Նա հարազատ հա՞յր է եղել ինձ համար...

— Այսպես ուրեմն, դուք...— սկսեց նորից քննիչը։

— Թույլ տվեք, պարոնայք, մի բոպե ևս թույլ տվեք,— ընդհատեց Միտյան, երկու արմունկները դնելով սեղանին և ափերով ծածկելով դեմքը,— թողեք մի քիչ մտածեմ, թողեք շունչ քաշեմ, պարոնայք։ Սոսկալի ցնցում են այս բոլորը, սոսկալի, մարդը հո թմբուկի կաշի չէ, պարոնա՛յք։

— Նորից մի քիչ ջուր խմեիք...— մրմնջաց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

Միտյան ձեռքերը հեռացրեց դեմքից ու ծիծաղեց։ Կորովի էր նրա հայացքը, կարծես լրիվ կերպարանափոխվել էր նա մի վայրկյանում։ Փոխվել էր նաև նրա ամբողջ կեցվածքը. արդեն նորից այդ բոլոր մարդկանց հետ, այդ իր նախկին ծանոթների հետ նստել էր որպես նրանց հավասար մի մարդ, ճիշտ այնպես, ինչպես եթե մի բարձրաշխարհիկ հավաքույթի մեջ հանդիպած լինեին այդ բոլորը երեկ, երբ դեռ ոչինչ չէր պատահել։ Ի դեպ նշենք, որ Միտյան, երբ դեռ նոր էր եկել մեզ մոտ, սիրալիր ընդունելություն էր գտել ոստիկանապետի տանը, բայց հետո, հատկապես վերջին ամսվա ընթացքում, համարյա չէր այցելում նրան, իսկ ոստիկանապետը երբ պատահաբար հանդիպում էր Միտյային, օրինակ փողոցում, սաստիկ խոժոռվում էր և միայն քաղաքավարության սիրույն ողջույն էր տալիս, և Միտյան շատ լավ նկատել էր այդ։ Դատախազի հետ ավելի քիչ էր ծանոթ, բայց երբեմն շատ հարգալից այցելություն էր տալիս նրա տիկնոջը, որ ցնորքներով տարված ու ջղային մի կին էր, և Միտյան ինքն էլ չէր հասկանում, թե ինչու է գնում նրա մոտ, իսկ դատախազի կինը միշտ էլ նրան սիրալիր էր ընդունում, մինչև վերջին օրերս հետաքրքրվում էր նրանով՝ չգիտես ինչու։ Իսկ քննիչի հետ դեռ չէր հասցրել ծանոթանալ, թեև նրան էլ մեկ կամ երկու անգամ հանդիպել էր ու նույնիսկ խոսել հետը՝ երկու անգամ էլ գեղեցիկ սեռի մասին։

— Ինչպես տեսնում եմ, դուք շատ վարպետ քննիչ եք, Նիկոլայ Պարֆյոնովիչ,— ուրախ ծիծաղեց հանկարծ Միտյան,— բայց հիմա ինքս կօգնեմ ձեզ։ Օ՜ պարոնայք, ես վերածնվեցի... և ծուռ աչքով մի՛ նայեք ինձ, որ այսպես առանց ձևականության, այսպես ուղղակի դիմում եմ ձեզ։ Մանավանդ որ մի քիչ էլ հարբած եմ, ասեմ ձեզ անկեղծորեն։ Կարծեմ պատիվն եմ ունեցել... պատիվն ու հաճույքն եմ ունեցել հանդիպելու ձեզ իմ ազգական Միուսովի մոտ, Նիկոլայ Պարֆյոնովիչ... Պարոնայք,

պարոնայք, ես հավակնությունը չունեմ հավասարի պես խոսելու ձեզ հետ, ես շատ լավ եմ հասկանում, թե որպես ո՛վ եմ նստել հիմա ձեր դիմաց։ Ինձ վրա ընկնում է... եթե Գրիգորին է իմ դեմ ցուցմունք տվել... ուրեմն ինձ վրա ընկնում է... օ՜, իհարկե ընկնում է այդ ահավոր կասկածը։ Սարսափելի է, սարսափելի, ես շատ լավ եմ հասկանում դա։ Բայց գործի անցնենք, պարոնայք, պատրաստ եմ ես, և մենք հիմա մի վայրկյանում վերջ կտանք դրան, որովհետև... լսեցեք, լսեցե՛ք, պարոնայք։ Դե քանի որ գիտեմ, թե ես մեղավոր չեմ, ուրեմն մի վայրկյանում վերջ կտանք անշուշտ։ Այնպես չէ՞։ Այնպես չէ՞։

Միտյան արագ ու շատ էր խոսում, խոսում էր ջղայնորեն ու բաց սրտով, կարծես իր ունկնդիրներին ուղղակի համարելով իր լավագույն բարեկամները։

— Այսպես ուրեմն, մենք առայժմ կարձանագրենք, որ դուք կտրականապես ժխտում եք ձեր վրա բարդվող մեղադրանքը,— ասաց Նիկոլայ Պարֆյոնովիչը ազդեցիկ շեշտով, դարձավ գրագրին և կիսաձայն թելադրեց նրան, թե ինչ պետք է արձանագրել։

— Արձանագրե՞լ։ Ուզում եք արձանագրե՞լ այդ բանը։ Դե լավ, արձանագրեցեք, համաձայն եմ, տալիս եմ իմ լիակատար համաձայնությունը, պարոնայք... Միայն թե գիտե՞ք ինչ... Սպասեք, սպասեք, այսպես գրեցեք. «Կովազանության մեջ մեղավոր է, խեղճ ծերուկին ծանր հարվածներ հասցնելու մեջ մեղավոր է»։ Դե՛հ, մեկ էլ ինքն իր ներսում, իր հոգու խորքում մեղավոր է, բայց այս մեկը պետք չէ գրել,— դարձավ նա հանկարծ գրագրին,— սա արդեն իմ անձնական կյանքն է, պարոնայք, սա արդեն ձեզ չի վերաբերում, այդ հոգու խորքե՛րը այսինքն... Բայց իմ ծերունի հոր սպանության մեջ՝ մեղավոր չե՛մ։ Դա վայրենի՛ միտք է։ Բացարձակապես վայրենի միտք... Ես կապացուցեմ ձեզ, և դուք վայրկենապես կհամոզվեք։ Ու պիտի ծիծաղե՛ք, պարոնայք, ինքներդ պիտի քահ-քահ ծիծաղեք ձեր կասկածի վրա...

— Հանգստացեք, Դմիտրի Ֆյոդորովիչ,— հիշեցրեց քննիչը, երևի ցանկանալով իր հանդարտությամբ հաղթել մոլուցքի մեջ ընկած մարդուն։— Նախքան հարցաքննությունը շարունակելը ես կցանկանայի ձեզնից լսել, եթե անշուշտ համաձայն եք պատասխանելու, կցանկանայի լսել, որ դուք հաստատում եք այն փաստը, թե կարծեմ չէիք սիրում հանգուցյալ Ֆյոդոր Պավլովի-

չին, նրա հետ անընդհատ ինչ-որ գժտություն ունեիք... Համենայն դեպս հիմա այստեղ, մի քառորդ ժամ առաջ, կարծեմ ասացիք, թե նույնիսկ ուզում էիք սպանել նրան։ «Չեմ սպանել,— դոռացիք,— բայց ուզում էի սպանել»։

— Այդպիսի բա՞ն ասացի։ Ա՜խ, կարող է պատահել, պարոնայք։ Այո, դժբախտաբար, ուզում էի սպանել նրան, շատ անգամ ունեցել եմ այդ ցանկությունը... դժբախտաբար, դժբախտաբա՜ր։

— Ուզում էիք։ Չե՞ք համաձայնվի բացատրել մեզ, թե հատկապես ի՞նչ սկզբունքներ էին ձեզ դեկավարում, երբ այդպիսի ատելություն էինք զգում ձեր ծնողի անձնավորության նկատմամբ։

— Բացատրելու ի՞նչ կա, պարոնայք,— մռայլորեն ուսերը թոթվեց Միտյան, հայացքն իջեցնելով։— Ես հո չէի թաքցնում իմ զգացմունքները, ամբողջ քաղաքը գիտե այդ մասին, գինետանը բոլորն էլ գիտեն։ Դեռ վերջերս վանքում հայտարարեցի՝ սրբահայր Զոսիմայի խուցում... Նույն օրը, երեկոյան, ծեծեցի հորս և քիչ մնաց սպանեի, հետո էլ երդվեցի, որ նորից կգամ ու կսպանեմ, վկաների ներկայությամբ... Օ՜, հազար հոգի կարող է վկայել։ Ամբողջ մի ամիս գոռում էի, բոլորն են վկա... Աչքի առաջ է փաստը, խոսում է փաստը, գոռում, բայց... զգացմունքնե՞րը, պարոնայք, զգացմունքնե՞րը... սա արդեն ուրիշ բան է։ Գիտե՞ք ինչ, պարոնայք,— խոժոռվեց Միտյան,— ինձ թվում է, թե զգացմունքների մասին դուք իրավունք չունեք ինձ հարցնելու։ Ճիշտ է, ձեզ իշխանություն է տրված, հասկանում եմ, բայց դա ի՞մ գործն է, իմ ներքին գործը, խիստ անձնական, թեև... քանի որ սրանից առաջ չեմ թաքցրել իմ զգացմունքները... գինետանը, օրինակ... քանի որ խոսել եմ աջ ու ձախ, բոլորին, ուրեմն... ուրեմն հիմա էլ գաղտնիք չեմ դարձնի դրանք։ Գիտե՞ք, պարոնայք, ես հո հասկանում եմ, որ այս դեպքում սարսափելի հանցանշաններ կան իմ դեմ. բոլորին ասել եմ, որ կսպանեմ նրան, և հանկարծ իրոք նրան սպանեցին։ Ուրեմն պետք է որ ե՞ս լինեմ սպանողը այդ դեպքում։ Հա-հա՜։ Ներում եմ ձեզ, պարոնայք, բացարձակապես ներում եմ։ Չէ՞ որ ես ինքս էլ շշմել եմ մինչև մազերիս ծայրը, որովհետև ո՞վ է սպանել նրան վերջապես, ո՞վ է սպանել այդ դեպքում, եթե ե՞ս չեմ։ Ճիշտ չե՞մ ասում։ Եթե ես չեմ, հապա ո՞վ է, ո՞վ։ Պարոնա՜յք,— բացականչեց հանկարծ Միտյան,— ես ուզում եմ իմանալ, նույնիսկ պահանջում եմ ձեզնից, պարոնայք, ո՞րտեղ

է սպանվել նա։ Ինչպե՞ս է սպանվել, ինչո՞վ և ինչպե՞ս։ Ասացե՛ք ինձ,— հարցրեց նա արագորեն, փոխնիփոխ նայելով դատախազին ու քննիչին։

— Մենք նրան գտանք հատակին ընկած, մեջքի վրա, իր առանձնասենյակում, ջախջախված գլխով,— ասաց դատախազը։

— Ահավո՞ր է դա, պարոնայք,— ցնցվեց հանկարծ Միտյան, արմունկները դրեց սեղանին ու երեսը ծածկեց աջ ձեռքով։

— Շարունակենք,— ընդհատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։— Այսպես ուրեմն, ինչն էր այն ժամանակ ձեզ դեկավարում ատելության ձեր զգացմունքների մեջ։ Դուք կարծեմ հրապարակով հայտարարել եք, թե խանդի զգացմո՞ւնքն էր։

— Դե հա՛, խանդը, և ոչ միայն խանդը։

— Փողի վեճե՞ր։

— Դե հա՛, փողի վեճերն էլ։

— Կարծեմ վեճը երեք հազար ռուբլու մասին էր, որ իբր թե մնացել է ձեզ հասնող ժառանգությունից ու չի վճարվել ձեզ։

— Ի՜նչ երեք հազար։ Ավելի, ավելի,— տաքացավ հանկարծ Միտյան,— վեց հազարից էլ ավելի, գուցե տասից էլ ավելի։ Բոլորին էի ասում, գոռո՜ւմ էի բոլորի առաջ։ Բայց թե՝ թո՜ղ այդպես լինի, մտածեցի, որոշեցի երեք հազարով գործը վերջացնել։ Այդ երեք հազարը կյանքի չափ հարկավոր էր ինձ... այնպես որ այն կապոցը, որի մեջ երեք հազար ռուբլի կար և գիտեի, որ նրա բաբձի տակ է, պատրաստել է Գրուշենկայի համար, ուզղակի ինձնից գողացված էի համարում մի տեսակ, ա՛յ ասում եմ, պարոնայք, իմն էի համարում այդ կապոցը, մինչև անգամ թե իմ սեփականությունը լիներ...

Դատախազը մի նշանակալից հայացք փոխանակեց քննիչի հետ և հացրեց աննկատելիորեն աչքով անել նրան։

— Մենք դեռ կվերադառնանք այդ խնդրին,— ասաց իսկույն քննիչը,— իսկ այժմ դուք մեզ թույլ կտաք նշել ու արձանագրել հենց այդ մի փոքրիկ կետը, թե դուք այդ ծրարի մեջ եղած փողը մի տեսակ ձեր սեփականությունն էիք համարում։

— Գրեցեք, պարոնայք, ես հասկանո՜ւմ եմ, որ դա նորից մի հանցանշան է իմ դեմ, բայց ես հանցանշաններից չեմ վախենում և ի՛նքս եմ խոսում իմ դեմ։ Լսո՜ւմ եք, ի՛նքս, անձա՜մբ։ Գիտե՞ք ինչ, պարոնայք, կարծեմ դուք ինձ բոլորովին ուրիշ մարդու տեղ եք դնում, իսկ ես այդպիսին չեմ,— ավելացրեց նա հանկարծ մռայլորեն ու տխրությամբ։— Ձեզ հետ խոսում է մի

ազնիվ մարդ, ազնվագույն մի անձնավորություն, և մանավանդ (այս մեկը բաց մի՛ թողնեք ձեր աչքից) մանավանդ մի մարդ, որ հաղար ու մի ստոր բաներ է արել, բայց միշտ եղել ու մնացել է ազնվագույն մի էակ, որպես ներքին էակ, խորքում, դե՛հ, մի խոսքով, չեմ կարողանում արտահայտվել... Հենց դա՛ է ինձ տանջել իմ ամբողջ կյանքում, ազնվության ծարավն եմ ունեցել, այսպես ասած տառապյալն եմ եղել ազնվության, լապտերով եմ փնտրել ազնվությունը, Դիոգինեսի լապտերով, այնինչ ամբողջ կյանքումս զզվելի բաներ եմ արել միայն, ինչպես մենք բոլորս, պարոնայք... այսինքն ինչպես ի՛նքս միայն, պարոնայք, ոչ թե բոլորը, սխալվեցի, ե՛ս, ե՛ս միայն... Պարոնայք, գլուխս է ցավում,— կնճռոտվեց նա տառապալից։— Հասկանո՞ւմ եք, պարոնայք, ինձ համար տհաճ էր նրա արտաքինը, անազնիվ մի բան ուներ, պարծենկոտ մի արհամարհանք, ոտնահարում էր ամեն սրբություն, հեգնող էր, անհավատ, զզվելի՞ է, զզվելի։ Բայց հիմա, երբ արդեն նա մահացել է, ուրիշ կերպ եմ մտածում։

— Ինչպե՞ս թե ուրիշ կերպ։

— Ոչ թե ուրիշ կերպ, այլ ցավում եմ, որ այդպես ատում էի նրան։

— Զղջո՞ւմ եք։

— Չէ, ոչ թե զղջում եմ, մի՛ գրեք այդ բանը։ Ես ինքս մի բարի պտուղ չեմ, պարոնայք, հասկանո՞ւմ եք, ես ինքս շատ էլ գեղեցիկ չեմ, ուրեմն իրավունք չունեի նրան էլ զզվելի համարելու, ա՛յս է ահա։ Գրեցեք այս, եթե ուզում եք։

Այդպես ասելուց հետո Միտյան հանկարծ չափազանց տրխրեց։ Արդեն վաղուց, պատասխանելով քննիչի հարցերին, նա հետզհետե ավելի ու ավելի մռայլ էր դառնում։ Եվ հանկարծ, հենց այդ վայրկյանին, նորից մի անսպասելի տեսարան տեղի ունեցավ։ Թեև քիչ առաջ հեռացրել էին Գրուշենկային, բայց շատ հեռու չէին տարել՝ ընդամենը երկու սենյակ անդին այն կապույտ սենյակից, ուր կատարվում էր հարցաքննությունը։ Մեկ լուսամուտով փոքրիկ մի սենյակ էր դա՝ կից այն մեծ սենյակին, ուր պարում էին գիշերը և մեծ խնջույք անում։ Այնտեղ նստել էր Գրուշենկան, և առայժմ նրա հետ էր միայն Մաքսիմովը, որ սոսկալի շշմել էր, սոսկալի վախեցել ու կպել Գրուշենկային, կարծես փրկություն փնտրելով նրա կողքին։ Դռան առաջ մի գյուղացի էր կանգնել՝ կրծքին վահանակով։ Գրուշենկան լաց

էր լինում, և ահա հանկարծ, երբ վիշտն արդեն չափազանց ծանր ճնշեց, նա վեր թռավ, թևերը տարածեց, բարձրաձայն աղաղակեց՝ «վայ ինչ կրա՞կ էր, վա՞յ», ու նետվեց սենյակից դուրս՝ դեպի Միտյան, դեպի իր Միտյան, և այնքան անսպասելիորեն, որ ոչ ոք չհասցրեց կանգնեցնել նրան։ Իսկ Միտյան, լսելով նրա աղաղակը, ուղղակի սարսռաց, ցատկեց տեղից, մռնչաց ու շեշտակի խոյացավ նրան ընդառաջ, կարծես լրիվ մոռանալով ինքնիրեն։ Բայց նորից չթողեցին, որ նրանք միանան, թեև արդեն տեսել էին իրար։ Միտյային ամուր բռնեցին ձեռքերից. նա մաքառեց, աշխատեց ազատվել, երեք կամ չորս հոգի պետք եղավ, որպեսզի զսպեն նրան։ Բռնեցին նաև Գրուշենկային, և Միտյան տեսավ, թե ինչպես նա գոռալով ձեռքերը մեկնում էր իրեն՝ Միտյային, երբ տանում էին նրան։ Երբ տեսարանը վերջացավ, Միտյան նորից ուշքի եկավ իր նախկին տեղում, սեղանի առաջ, քննիչի դիմաց, և սկսեց գոռգոռալ, դիմելով նրանց.

— Ի՞նչ եք ուզում նրանից։ Ինչո՞ւ եք տանջում նրան։ Նա անմեղ է, անմե՛ղ...

Դատախազն ու քննիչը աշխատում էին հանգստացնել նրան։ Այդպես անցավ մի որոշ ժամանակ, մոտ տասը րոպե։ Վերջապես Միխայիլ Մակարովիչը, որ դուրս էր եկել, շտապ սենյակ մտավ ու բարձրաձայն, հուզված, դիմեց դատախազին.

— Հեռացված է նա, ներքևում է, ինձ թույլ չե՞ք տա մի խոսք ասել այս դժբախտ մարդուն, միայն մի խոսք, պարոնայք։ Ձեր ներկայությամբ, պարոնայք, ձե՛ր ներկայությամբ։

— Ամենայն սիրով, Միխայիլ Մակարովիչ,— պատասխանեց քննիչը,— ովյալ դեպքում մենք առարկելու ոչինչ չունենք։

— Դմիտրի Ֆյոդորովիչ, լսի՛ր, սիրելիս,— սկսեց Միխայիլ Մակարովիչը, դիմելով Միտյային, և նրա հուզված դեմքին ջերմ, գրեթե հայրական կարեկցանք արտահայտվեց դժբախտի նկատմամբ,— ես ինքս քո Ագրաֆենա Ալեքսանդրովնային տարա ներքև ու հանձնեցի պանդոկապետի աղջիկներին, և հիմա անընդհատ նրա հետ է այդ ծերուկ Մաքսիմովը։ Ես համոզեցի նրան, լսո՞ւմ ես, համոզեցի ու հանգստացրի. բացատրեցի, որ քեզ հիմա արդարանալ է հարկավոր, ուրեմն նա չպետք է խանգարի քեզ, չպետք է հուզմունք պատճառի քեզ, թե չէ դու կարող ես շփոթվել ու սխալ ցուցմունքներ տալ ինքդ քո դեմ, հասկանո՞ւմ ես։ Դե, մի խոսքով, ասացի և նա հասկացավ։ Խե-

լացի աղջիկ է, սիրելիս, բարի է, ուզում էր իմ ձեռքերը համբուրել, այս իմ ծերունական ձեռքերը, քեզ համար օգնություն էր խնդրում։ Ի՞նքը ուղարկեց ինձ այստեղ, որ ասեմ քեզ՝ մի՛ մտահոգվիր նրա համար, հանգիստ եղիր. և պե՛տք է, սիրելիս, պետք է գնամ ու ասեմ նրան, որ դու հանգիստ ես և չես մտահոգվում նրա համար։ Դե հանգստացիր ուրեմն, հասկացի՛ր դու այս բանը։ Ես մեղավոր եմ նրա առաջ, քրիստոնյա հոգի ունի այդ աղջիկը, այո՛, պարոնայք, հեզ հոգի է նա և ոչ մի բանում մեղավոր չէ։ Ուրեմն ի՞նչ ասեմ նրան, Դմիտրի Ֆյոդորովիչ, հանգիստ պիտի նստե՞ս, թե չէ։

Բարեսիրտ ոստիկանապետը ավելորդ բաներ շատ ասաց, բայց Գրուշենկայի վիշտը, մարդկային վիշտը տոգորել էր նրա բարի սիրտը, և նույնիսկ արցունք կար նրա աչքերի մեջ։ Միտյան վեր թռավ ու վազեց նրա մոտ։

— Ներեցեք, պարոնայք, թույլ տվեք, օ՜, թույլ տվեք,— գոչեց նա։— Հրեշտակի հոգի ունեք դուք, հրեշտակի՛, Միխայիլ Մակարովիչ, շնորհակալ եմ Գրուշենկայի համար։ Հանգիստ կլինեմ, հանգիստ, զվարթ կլինեմ. ասացեք նրան ձեր հոգու անչափ բարությամբ, ասացեք, որ ես զվարթ եմ, ուրախ, նույնիսկ կսկսեմ ծիծաղել հիմա, գիտենալով, որ ձեզ նման մի պահապան հրեշտակ ունի նա։ Ա՛յս րոպեիս կվերջացնեմ ամեն ինչ, և հենց որ ազատվեմ՝ իսկույն կվազեմ նրա մոտ, կտեսնի՛ նա, թող սպասի։ Պարոնա՛յք,— դարձավ նա հանկարծ դատախազին ու քննիչին,— հիմա իմ ամբողջ հոգին կրանամ ձեր առաջ, կզեղեմ ամբողջությամբ, մի վայրկյանում կվերջացնենք այս բանը, ուրախ կվերջացնենք, և վերջում կծիծաղենք իհարկե, այնպես չէ՞, կծիծաղե՞նք։ Բայց այդ կինը իմ սրտի թագուհի՞ն է, պարոնայք։ Օ՜, թույլ տվեք ինձ ասել այս բանը, ա՛յս մեկն արդեն կրանամ ձեր առաջ... Տեսնում եմ, չէ՞, ազնվագույն մարդկանց հետ է իմ գործը։ Նա իմ լույսն է, իմ սրբությո՞ւնը, և եթե իմանայի՞ք... Լսեցիք, թե ինչպես էր գոռում՝ «Քեզ հետ մահապատժի՞ էլ կգնամ»։ Իսկ ի՞նչ եմ տվել ես նրան, ես՝ աղքատի, տկլորի մեկը, ինչո՞ւ այդպիսի սեր իմ նկատմամբ, արժանի՞ եմ արդյոք ես՝ անշնորհք, խայտառակ մի արարած, խայտառակ դեմքով, արժանի՞ եմ այդպիսի սիրո, արժանի՞ եմ, որ նա ինձ հետ աքսոր գնա։ Ինձ համար քիչ առաջ ձեր ոտքերն էր ընկել, նա՛, որ հպարտ է և ոչ մի մեղք չունի։ Ինչպե՞ս չպաշտեմ նրան, ինչպե՞ս չաղաչեմ, չսուրամ նրա մոտ՝ ոտ,

ինչ արեցի հիմա։ Օ՜ պարոնայք, ներեցեք ինձ։ Բայց հիմա, հիմա արդեն սփոփվել է իմ սիրտը։

Եվ նա ընկավ աթոռին, երկու ափով ծածկեց դեմքը և սկսեց աղիողորմ լաց լինել։ Բայց դրանք արդեն երջանիկ արցունքներ էին։ Վայրկենապես ուշքի եկավ։ Մերունի ոստիկանապետը շատ գոհ էր, և իրավաբաններն էլ կարծես գոհ էին. նրանք զգացին, որ հարցաքննությունը հիմա նոր փուլի մեջ կմտնի։ Երբ ոստիկանապետը դուրս էր գնում, Միտյան պարզապես ուրախ էր արդեն։

— Է՛հ, պարոնայք, հիմա ձերն եմ, լրիվ ձերը։ Եվ... եթե լինեին բոլոր այս մանրուքները, մենք անմիջապես կհասկանայինք իրար։ Ես նորից մանրուքների մասին եմ ասում։ Ձեր տրամադրության տակ եմ, պարոնայք, բայց, ազնիվ խոսք, փոխադարձ վստահություն է պետք՝ դուք իմ նկատմամբ, ես ձեր նկատմամբ, այլապես մենք երբեք չենք կարող վերջացնել։ Հենց ձեր օգտին եմ ասում։ Գործի անցնենք, պարոնայք, գործի, և գլխավորը՝ մի՛ փորփրեք այդպես իմ հոգին, մի՛ տանջեք ինձ դատարկ բաներով, գործի հետ կապ ունեցող փաստերը միայն հարցրեք, և ես անմիջապես կգոհացնեմ ձեզ։ Իսկ մանրուքները՝ գրողի ծո՛ցը։

Այսպես էր բացականչում Միտյան։ Հարցաքննությունը նորից սկսվեց։

IV

ՉԱՐՉԱՐԱՆՔ ԵՐԿՐՈՐԴ

— Դուք չգիտեք, թե մեզ էլ ինչպե՞ս եք քաջալերում ձեր այդ պատրաստակամությամբ, Դմիտրի Ֆյոդորովիչ...— սկսեց խոսել Նիկոլայ Պարֆյոնովիչն աշխույժ արտահայտությամբ. նա իր ակնոցը հանել էր մի րոպե առաջ, և նրա խոշոր ու բաց մոխրագույն, դուրս ընկած, խիստ կարճատես աչքերի մեջ փայլում էր ակնհայտ գոհունակությունը։— Եվ դուք հիմա իրավացիորեն արեցիք այդ նկատումը փոխադարձ վստահության վերաբերյալ, առանց որի երբեմն նույնիսկ անկարելի է արդյունքի հասնել այսպիսի կարևորություն ունեցող գործերում, այն պարագային, երբ կասկածելի անձը իրոք ցանկանում է, հույս ունի և կարող է արդարացնել իրեն։ Մենք մեր կողմից ի գործ կդրնենք ամեն ինչ, որ կախված է մեզնից, և նույնիսկ դուք ինք-

ներդ կարող էիք տեսնել հիմա, թե ինչպես ենք վարում գործը...։ Դուք հավանություն տալի՞ս եք, Իպոլիտ Կիրիլովիչ,— դարձավ նա հանկարծ դատախազին։

— Օ՜, անտարակույս,— հավանություն տվեց դատախազը, թեև նրա շեշտը մի քիչ ավելի չոր էր՝ Նիկոլայ Պարֆյոնովիչի եռանդի հետ համեմատած։

Մի անգամ ընդմիշտ նշեմ, որ դեռ վերջերս մեզ մոտ եկած Նիկոլայ Պարֆյոնովիչը, իր գործունեության հենց սկզբից, բացառիկ հարգանք էր զգացել մեր դատախազ Իպոլիտ Կիրիլովիչի հանդեպ և համարյա թե նրա արտակից բարեկամն էր դարձել։ Նա գրեթե միակ մարդն էր, որ անպայմանորեն հավատացել էր «չգնահատված ու վշտացած» մեր Իպոլիտ Կիրիլովիչի հոգեբանական ու հռետորական արտակարգ տաղանդին և լրիվ հավատում էր նաև, որ նա իսկապես վշտացած է։ Նրա մասին դեռ Պետերբուրգում էր լսել։ Բայց և Նիկոլայ Պարֆյոնովիչն էլ, իր հերթին, ամբողջ աշխարհում եղավ միակ մարդը, որին մեր «վշտացած» դատախազն անկեղծորեն սիրեց։ Ճանապարհին, այստեղ գալու ժամանակ, նրանք հասցրել էին որոշ հարցերում խոսք մեկ անել ու պայմանավորվել առաջիկա գործի վերաբերյալ, և հիմա, երբ նստել էին սեղանի առաջ, Նիկոլայ Պարֆյոնովիչի սուր միտքն անմիջապես որսում ու հասկանում էր ամեն մի ցուցմունք, ամեն մի շարժում իր ավագ պաշտոնակցի դեմքին, կռահում էր կես բառից, մի հայացքից, աչքերի մի թեթև թարթումից։

— Պարոնայք, միայն թե թույլ տվեք, որ ինքս պատմեմ, մի՛ ընդհատեք ինձ դատարկ բաներով, և ես մի վայրկյանում ամեն ինչ կնկարագրեմ,— տաքացավ Միտյան։

— Սքանչելի է։ Շնորհակալ եմ։ Բայց ձեր հաղորդման ունկնդրությանն անցնելուց առաջ թույլ տայիք ինձ՝ ես մի փոքրիկ փաստի մասին հավաստիանալ, մեզ համար շատ հետաքրքրական մի փաստի։ Խնդիրը այն տասը ռուբլին է, որ դուք երեկ, ժամը հինգի մոտ, փոխ եք վերցրել ձեր բարեկամ Պյոտր Իլյիչ Պերխոտինից՝ գրավ դնելով ձեր ատրճանակները։

— Գրավ եմ դրել, պարոնայք, գրավ եմ դրել՝ տասը ռուբլու դիմաց։ Հետո՞ ինչ։ Ա՛յդ է եղած-չեղածը։ Հենց որ քաղաք վերադարձա, ուղղակի գնացի գրավ դրեցի։

— Քաղաք վերադարձա՞ք։ Իսկ դուք քաղաքից դո՞ւրս էիք գնացել։

— Գնացել էի, պարոնայք, քառասուն վերստ հեռու տեղ էի գնացել, իսկ դուք լսիտե՞ք, ինչ է։

Դատախազն ու Նիկոլայ Պարֆյոնովիչը իրար նայեցին։

— Եվ ընդհանրապես, լավ չէ՞ր լինի, եթե ձեր պատմությունն սկսեիք ձեր երեկվա ամբողջ օրը կանոնավորաբար նկարագրելով՝ հենց առավոտից սկսած։ Թույլ տվեք, օրինակ, իմանալ, թե ինչո՞ւ բացակայեցիք քաղաքից և հատկապես ո՞ր ժամին գնացիք, ո՞ր ժամին վերադարձաք... և բոլոր այս փաստերը...

— Դե ուրեմն այսպես էլ հարցնեիք հենց սկզբից,— բարձրաձայն ծիծաղեց Միտյան։— Եվ եթե ուզում եք, պետք է սկսել ոչ թե երեկվա օրից, այլ անցյալ օրվա հենց առավոտից, այն ժամանակ կհասկանաք, թե որտեղ, ինչու և ինչպես եմ գնացել։ Անցյալ օրը, պարոնայք, առավոտյան գնացի վաճառական Սամսոնովի մոտ՝ երեք հազար ռուբլի փոխ վերցնելու նրանից, ամենահաստատ գրավականով. հանկարծ սոսկալի պետք եղավ այդ գումարը, պարոնայք, սոսկալի պետք եղավ...

— Թույլ տվեք ընդհատել ձեզ,— քաղաքավարի կերպով վրա բերեց դատախազը,— ինչո՞ւ հանկարծ պետք եղավ, և հենց այդպիսի մի գումար, այսինքն երեք հազար ռուբլի։

— Է՜, պարոնայք, մի կողմ թողնենք մանրուքները՝ ինչպե՞ս, ե՞րբ, ինչո՞ւ, և ինչո՞ւ հենց այդքան փող և ոչ թե այսքան, ձեռք քաշեիք այդ ամբողջ գլխացավանքից... այդ ձևով երեք հատորն էլ չի հերիքի, և դեռ վերջաբա՞ն էլ պետք կլինի։

Միտյան այդ բոլորն ասաց բարեհոգի, բայց անհամբեր մի մտերմավարությամբ, որ հատուկ է ամբողջ ճշմարտությունն ասել ցանկացող և ամենաբարի նպատակներով տոգորված մարդուն։

— Պարոնա՛յք,— մի տեսակ խոսքը փոխեց նա հանկարծ,— դուք ինձնից մի՛ դժգոհեք իմ վեր-վեր թռնելու համար, նորից եմ խնդրում՝ հավատացեք, որ ես լիակատար հարգանք եմ զգում ձեր նկատմամբ և հասկանում եմ իրերի իսկական դրությունը։ Մի՛ կասկածեք, որ հարբած եմ։ Արդեն սթափվել եմ հիմա։ Եվ հարբած լինելն էլ չէր խանգարի բոլորովին։ Իմ բանն այսպես է ախր՝

Ուշքի եկավ, խելքի եկավ՝ հիմար դարձավ։
Մի լավ խմեց, խելքը կորցրեց՝ խելոքացավ։

Հա-հա՜։ Բայց տեսնում եմ, պարոնայք, որ դեռ ինձ համար անվայել բան է ձեր առաջ սրամտելը, այսինքն քանի դեռ չենք բացատրվել։ Թույլ տվեք պահպանել նաև իմ սեփական արժանապատվությունը։ Ես լավ հասկանում եմ տարբերությունը այս բոպեիս. չէ՞ որ ես համենայն դեպս որպես հանցագործ եմ նստել ձեր առաջ, ուրեմն բացարձակապես ձեր հավասարը չեմ, իսկ ձեր պարտականությունն է դիտել ու հսկել ինձ։ Հո չե՞ք շոյելու իմ գլուխը, որ այդպիսի բան արեցի Գրիգորիին. իրոք որ չի կարելի ծերուկների գլուխը ջարդել ու անպատիժ մնալ, և իհարկե դրա համար ինձ կնստեցնեք դատ-դատաստանով, դե ասենք կես տարի, կամ թեկուզ մի տարի ուղղիչ տանը, չգիտեմ ինչ պատիժ կտաք վերջապես, բայց թե առանց իրավազրկման, այնպես չէ՞, պարոն դատախազ, առանց իրավազրկման, չէ՞։ Դե ուրեմն տեսնում եք, պարոնայք, հասկանում եմ այդ տարբերությունը... Բայց և համաձայնվեցեք, որ այդպիսի հարցեր տալով կարող եք հենց աստծուն էլ մոլորեցնել. ո՞ւր կոխեցիր, ինչպե՞ս կոխեցիր, ե՞րբ կոխեցիր, ինչի՞ վրա կոխեցիր։ Եթե այդպես լինի, կարող եմ շփոթվել հանկարծ, իսկ դուք անմիջապես լուրջի տեղ կընդունեք ու կարձանագրեք։ Եվ ի՞նչ դուրս կգա։ Ոչի՛նչ էլ դուրս չի գա։ Եվ վերջապես, եթե նույնիսկ մեծ-մեծ բրդել սկսեցի հիմա, դե ուրեմն մինչև վերջ ասեմ, իսկ դուք, պարոնայք, որպես բարձրագույն կրթություն ունեցող և ազնվագույն մարդիկ, ներեցեք ինձ։ Հենց մի խնդրանքով վերջացնեմ խոսքս. մոռացե՛ք այլևս այդ պաշտոնական, ձևական հարցաքննությունը, այսինքն, հասկանո՞ւմ եք, իբր թե նախ ինչ-որ չընչին, անպետք բաներից սկսել՝ ինչպե՞ս վերկացար, ի՞նչ կերար, ինչպե՞ս թքեցիր, և այդ ձևով «հանցագործի ուշադրությունը ցրելուց» հետո, հանկարծ շշմեցնող մի հարց ես տալիս ու բռնում նրան՝ «Ո՞ւմ սպանեցիր, ո՞ւմ կողոպտեցիր»։ Հա-հա՜։ Այս է ահա ձեր պաշտոնական ձևը, չէ՞, ձեր օրենքն է դա, ահա՜ թե ինչի վրա է հիմնված ձեր ամբողջ խորամանկությունը։ Բայց դուք գյուղացիների՛ն կարող եք ուշադրությունից շեղել այդպիսի խորամանկություններով, ոչ թե ինձ։ Ես հասկանում եմ այս գործը, չէ՞, ինքս եմ ծառայության մեջ եղել, հա-հա-հա՜։ Չե՞ք բարկանում, պարոնայք, ներո՞ւմ եք իմ հանդգնությունը,— գոռաց նա, գրեթե զարմանալի մի բաբեհոգությամբ նայելով նրանց։— Միտյա Կարամազովն է ասում, չէ՞, ուրեմն

և կարելի է ներել, որովհետև խելացի մարդուն ներելի չէ, իսկ Միտյային ներելի է։ Հա-հա՜։

Նիկոլայ Պարֆյոնովիչը լսում էր և նույնպես ծիծաղում։ Դատախազը թեև չէր ծիծաղում, բայց սևեռուն դիտում էր Միտյային, առանց աչքերը վար անելու, կարծես շուզելով բաց թողնել նրա ամենափոքր բառն իսկ, ամենափոքր շարժումը, ամենափոքր դիմագծի ամենափոքր կծկումը։

— Բայց մենք այդպես էլ սկսեցինք ձեզ հետ հենց առաջին բոպեից,— պատասխանեց Նիկոլայ Պարֆյոնովիչը, դեռ շարունակելով ծիծաղել։— Ձգձգեցինք շփոթեցնել ձեզ այդպիսի հարցերով՝ թե ինչպե՞ս եք վեր կացել առավոտյան և ի՞նչ եք կերել, այլ սկսեցինք հենց ամենաէականից։

— Հասկանում եմ, հասկացա և գնահատեցի, և ավելի ևս գնահատում եմ այս բոպեիս ձեր բարությունը իմ նկատմամբ, անօրինակ բարությունը, որ արժանի է ազնվագույն հոգիներին։ Մենք այստեղ, երեք ազնիվ մարդիկ, հանդիպել ենք իրար, և թող այսպես էլ ամեն ինչ մեր միջև փոխադարձ վստահության վրա լինի, քանի որ զարգացած ու նրբակիրթ մարդիկ ենք՝ ազնվական ծագումով ու պատվի զգացումով իրար կապված։ Համենայն դեպս, թույլ տվեք ձեզ իմ լավագույն բարեկամները համարել իմ կյանքի այս բոպեին, իմ պատվի նվաստացմա՞ն այս բոպեին։ Դա հո վիրավորական չէ՞ ձեզ համար, պարոնայք, վիրավորական չէ՞։

— Ընդհակառակը, դուք այնքա՞ն սքանչելի արտահայտեցիք այդ բոլորը, Դմիտրի Ֆյոդորովիչ,— համաձայնվեց Նիկոլայ Պարֆյոնովիչը, ծանրակշիռ ու հավանություն տվող շեշտով։

— Իսկ մանրուքները, պարոնայք, բոլոր այդ սմսեղուկ մանրուքները դե՛ն գցենք,— բացականչեց Միտյան ոգևորված,— թե չէ՝ պարզապես... սատանան գիտե, թե ուր կհասնենք։ Ճիշտ չե՞մ ասում։

— Լիովին կհեռանամ ձեր ողջամիտ խորհուրդներին,— մեջ ընկավ հանկարծ դատախազը, դիմելով Միտյային,— բայց և այնպես իմ հարցերից չեմ հրաժարվի։ Խիստ էականորեն անհրաժեշտ է մեզ իմանալ, թե հատկապես ինչի՞ համար պետք եղավ ձեզ այդպիսի գումարը, այսինքն հենց երեք հազար ռուբլին։

— Ինչի համար պետք եղա՞վ։ Է՞, մի բանի համար պետք եղավ, էլի... դե պարտք ունեի տալիք։

— Ո՞ւմ հատկապես։

— Այդ մեկը ուղղակի հրաժարվում եմ ասել, պարոնայք։ Հասկանո՞ւմ եք, ոչ թե որովհետև չեմ կարող ասել կամ չեմ համարձակվում և կամ թե վախենում եմ. թքա՛ծ ունեմ այդ բոլորի վրա, դրանք բացարձակապես դատարկ բաներ են։ Չեմ ասում, որովհետև սկզբունքի հարց է. իմ անձնական կյանքն է դա, և չեմ թողնի, որ խառնվեն իմ անձնական կյանքին։ Ահա՛ իմ սկզբունքը։ Ձեր հարցը գործի հետ կապ չունի, և գործի հետ կապ չունեցող ամե՛ն ինչ իմ անձնական կյանքին է վերաբերում։ Ուզում էի պարտքս վերադարձնել, պատվո պարտքս էի ուզում տալ, բայց թե ում՝ չեմ ասի։

— Թույլ տվեք մեզ արձանագրել այս կետը,— ասաց դատախազը։

— Խնդրեմ։ Հենց այնպես էլ արձանագրեցեք՝ չեմ ասի ու չեմ ասի։ Գրեցեք, պարոնայք, որ նույնիսկ անազնիվ եմ համարում ասել այդ բանը։ Ա՛յ թե գրում ու գրում եք հա՛, ժամանա՛կ ունեք վատնելու։

— Թույլ տվեք, հարգելի պարոն, նախազգուշացնել ձեզ ու կրկին անգամ հիշեցնել, եթե անշուշտ չգիտեիք այս բանը,— ասաց դատախազը մի հատուկ ու բավական խիստ հորդորանքով,— որ դուք լիակատար իրավունք ունեք չպատասխանելու այն հարցերին, որոնք առաջարկվում են հիմա ձեզ, իսկ մենք էլ, ընդհակառակը, ոչ մի իրավունք չունենք պատասխաններ կորզելու ձեզնից, եթե ինքներդ խուսափում եք պատասխանել այս կամ այն պատճառով։ Դա թողնվում է ձեր անձնական դատողության։ Բայց և միաժամանակ մեր պարտքն է այսպիսի դեպքում ձեր ուշադրությանը հանձնել ու բացատրել ամբողջ չափը այն վնասի, որ ինքներդ պատճառում եք ձեզ, հրաժարվելով տալ այս կամ այն ցուցմունքը։ Իսկ այժմ խնդրում եմ շարունակել։

— Պարոնայք, ես հո չեմ բարկանում... ես— սկսեց մրթմրթալ Միտյան, մի քիչ շփոթված այդ նախազգուշացումից,— դե հասկանո՞ւմ եք, պարոնայք, հենց այդ Սամսոնովը, որի մոտ գնացի այն ժամանակ...

Մենք, իհարկե, մանրամասնորեն չենք մեջ բերի նրա պատմածը, որ արդեն ծանոթ է ընթերցողին։ Նա անհամբեր ուզում էր պատմել ամեն ինչ, մինչև ամենահետին մանրամասնությունը, և միաժամանակ ուզում էր շուտ վերջացնել։ Բայց որքան ցուցմունք էր տալիս, այնքան արձանագրում էին, ուստի և անհրաժեշտորեն ընդհատում էին նրան։ Դմիտրի Ֆյոդորովիչը կշտամբում էր դրա համար, բայց ենթարկվում էր. բարկանում էր, բայց դեռ բարեհոգաբար։ Ճիշտ է, երբեմն բացականչում էր՝ «Պարոնա՛յք, դա հենց աստծուն էլ համբերությունից կհանի», և կամ՝ «Պարոնա՛յք, գիտե՞ք, որ պարզապես իզուր ջղայնացնում եք ինձ»։ Բայց այնուամենայնիվ, այդպես բացականչելով հանդերձ, նա դեռ պահպանում էր իր բարեկամական, զեղուն տրամադրությունը։ Այսպես, նա պատմեց, թե ինչպես երկու օր առաջ Սամսոնովը «խաբեց» իրեն։ (Հիմա արդեն լիովին հասկանում էր, որ իրեն խաբել են այն ժամանակ)։ Ճանապարհածախսի համար ժամացույցը վեց ռուբլով ծախելը, մի փաստ, որ դեռ բոլորովին անծանոթ էր քննիչին ու դատախազին, անմիջապես նրանց արտակարգ ուշադրությունը գրավեց, և դա արդեն չափից դուրս վրդովեց Միտյային, որովհետև անհրաժեշտ գտան մանրամասնորեն արձանագրել այդ փաստը՝ որպես կրկնակի մի հաստատում այն հանգամանքի, թե նախորդ օրն էլ նա համարյա ոչ մի կոպեկ փող չուներ արդեն։ Հետզհետե Միտյան սկսեց մռայլվել։ Հետո, նկարագրելով Լյազավիին տեսնելու համար կատարած ճամփորդությունը, ածխահոտով թունավորված խրճիթում գիշերելը և այլն, պատմությունը հասցրեց մինչև քաղաք վերադառնալու պահը։ Եվ այստեղ արդեն ինքն անձամբ, առանց իրավաբանների կողմից հատուկ խնդրանքի, սկսեց մանրամասնորեն նկարագրել Գրուշենկայի նկատմամբ իր խանդի տանջանքները։ Լուռ և ուշադիր լսում էին նրան։ Հատկապես խորացան այն հանգամանքի մեջ, որ Միտյան վազուց արդեն Գրուշենկային հետևելու համար դիտակետ է ունեցել Ֆյոդոր Պավլովիչի տան «հետևի կողմը», Մարյա Կոնդրատեևայի այգում, և որ Սմերդյակովն էր տեղեկություններ բերում նրան։ այս կետը շեշտակի նշեցին ու արձանագրեցին։ Իր խանդի մասին նա խոսեց հուսահատությամբ ու ընդարձակորեն, ու թեև ներքուստ ամաչում էր, որ իր ամենաթաքուն զգացմունքները դնում է, այսպես ասած, «ընդհանուր պարտավանքի» առաջ, բայց երևի հաղթահարում էր ամոթը, որպեսզի ճշմարտությունը պատմի։ Ի վերջո Միտյային սաստիկ խռովեցին քննիչի ու մանավանդ դատախազի սեռուն հայացքները, որոնք անկարեկից խստությամբ ուղղվել էին նրան, երբ նա իր պատմությունն էր պատմում։ «Այս երեխան, Նիկոլայ Պարֆյո-

նովիչը, որի հետ դեռ ընդամենը մի քանի օր առաջ հիմարություններ էի խոսում կանանց մասին, և այս հիվանդ դատախազը արժանի չեն, որ այս բանը պատմեմ նրանց,— մտածեց նա տխրությամբ,— խայտառակություն՝ն է»։— «Համբերիր, խաղաղվիր ու լռիր»,— վերջացրեց նա իր մտածմունքը այս բանաստեղծական տողով, բայց այնուամենայնիվ ոգեպնդեց ինքն իրեն նորից, որպեսզի շարունակի իր պատմությունը։ Անցնելով Խոխլակովային կատարած իր այցելության, նույնիսկ զվարթացավ երկին և նույնիսկ ուզեց գործի հետ կապ չունեցող մի նոր անեկդոտ պատմել այդ տիկնոջ մասին, բայց քննիչը կանգնեցրեց նրան և քաղաքավարի կերպով առաջարկեց անցնել «ավելի էական» հարցերի։ Վերջապես, նկարագրելով իր հուսահատությունը, պատմեց այն բոպեի մասին, երբ, Խոխլակովայի տնից դուրս գալով, նույնիսկ մտածել էր «թեկուզ սպանել որևէ մեկին, բայց ձեռք բերել երեք հազարը»։ այստեղ նորից ընդհատեցին նրան և արձանագրեցին, որ «ուզում էր սպանել»։ Միտյան լուռումունջ թողեց, որ արձանագրեն։ Եվ վերջապես հասավ պատմության այն պահին, երբ հանկարծ իմացել էր, որ Գրուշենկան խաբել է իրեն և իր ուղեկցելուց անմիջապես հետո գնացել է Սամսոնովի տնից, այնինչ իրեն ասել էր, որ մինչև կեսգիշեր նստելու է ծերունու մոտ։ «Եթե այդ բոպեին ես չսպանեցի այդ Ֆենյային, պարոնայք, պատճառը միայն այն էր, որ ժամանակ չունեի»,— թռավ հանկարծ նրա բերանից, երբ պատմության այդ կետին էր հասել։ Այդ էլ ուշի-ուշով արձանագրեցին։ Միտյան մոայլ դեմքով սպասեց, հետո սկսեց պատմել այն մասին, թե ինչպես հոր այգին էր վազել, բայց հանկարծ քննիչը կանգնեցրեց նրան, բացեց իր խոշոր թղթապանակը, որ դրել էր կողքին, բազմոցի վրա, և այնտեղից հանեց պղնձե սանդղակը։

— Ձեզ ծանո՞թ է այս առարկան,— ցույց տվեց նա սանդղակը Միտյային։

— Ա՜խ, այո,— մոայլ ծիծաղեց Միտյան,— ինչպե՜ս թե ծանոթ չէ։ Տվեք մի նայեմ... Բայց դե դրո՛ղը տանի, պետք չէ։

— Դուք մոռացաք հիշել այս բանը,— նկատեց քննիչը։

— Է՜, գրո՛ղը տանի։ Հո չէի թաքցնելու ձեզնից։ Ինչ է, կարծում էիք առանց դրան կվերջանա՞ր պատմությունը։ Հիմա պարզապես հիշողությունիցս դուրս էր թռել։

— Բարեհաճեցեք հանգամանորեն պատմել, թե ինչպես գինվեցիք սրանով։

— Ենգրեմ, կբարեհաճեմ, պարոնայք։

Եվ Միտյան պատմեց, թե ինչպես վերցրեց սանդղակը և վազեց։

— Բայց ի՞նչ նպատակ ի նկատի ունեիք, երբ գինվում էիք այսպիսի զենքով։

— Ինչ նպատա՞կ։ Ո՛չ մի նպատակ։ Վերցրի ու վազեցի։

— Բայց ինչո՞ւ, եթե նպատակ չունեիք։

Միտյայի սրտում բորբոքվում էր վրդովմունքը։ Նա սևեռուն նայեց «երեխայինն» և մոայլ ու զայրացած քմծիծաղեց։ Ավելի ու ավելի ամոթ էր զգում, որ իր խանդի պատմությունն այնքա՜ն անկեղծորեն և այդպիսի զեղումներով պատմել էր «այսպիսի մարդկանց»։

— Թքե՛լ եմ սանդղակի վրա,— պոռթկաց նա հանկարծ։

— Բայց համենայն դեպս...

— Դե լավ, շնորհ՛ց պաշտպանվելու համար, էլի։ Դե մութ էր, էլի... Դե մի բա՛ն կարող էր պատահել, էլի։

— Իսկ առաջ էլ, երբ գիշերը դուրս էիք գալիս, մի որևէ զենք վերցնո՞ւմ էիք ձեզ հետ, եթե այդպես վախենում էիք մութից։

— Է՜, գրո՛ղ, թո՛ւհ։ Պարոնայք, բացարձա՛կապես չի կարելի խոսել ձեզ հետ,— գոռաց Միտյան ծայր աստիճան զզվեցած, և դառնալով գրագրին, զայրույթից կուս-կարմիր կորած, ձայնի մեջ մոլեգին մի շեշտով ասաց նրան.

— Գրի՛ր անմիջապես... անմիջապես... որ հետո վերցրի սանդղակը, որպեսզի վազեմ սպանելու հորս... Ֆյոդոր Պավլովիչին... գլխին հարվածելով։ Էհ, գո՞հ եք հիմա, պարոնա՛յք։ Սրտներդ հանգստացա՞վ,— ասաց նա, աչքերը հանդիմանորեն սևեռելով քննիչի ու դատախազի վրա։

— Մենք չատ լավ հասկանում ենք, որ այսպիսի ցուցմունքը հիմա դուք տվեցիք մեր դեմ զզվանքով ու վրդովվելով այն հարցերից, որ առաջարկում ենք ձեզ, և որ դուք մանր եք համարում, բայց որ շատ էական են,— լոր-լոր պատասխանեց նրան դատախազը։

— Բայց ի սե՛ր աստծո, պարոնայք։ Դե լավ, սանդղակը վերցրի... Է՜հ, մարդ ինչո՞ւ այսպիսի դեպքերում մի բան է վերցնում ձեռքը։ Ես չգիտեմ ինչու։ Վերցրի ու վազեցի։ Ուրիշ

ոչինչ։ Ամոթ է պարոնայք, passons, թե չէ՝ երդվում եմ, էլ ոչինչ չեմ պատմի։

Նա արմունկները սեղանին դրեց ու գլուխը հենեց ձեռքին։ Իր կողքն էր դարձրել նրանց ու պատին էր նայում, աշխատելով մի վատ զգացում հաղթահարել իր մեջ։ Եվ իրոք, սոսկալի ուզում էր վեր կենալ ու հայտարարել, որ այլևս ոչ մի բառ չի ասի, «թեկուզ կախաղան հանեցեք»։

— Գիտե՞ք ինչ,— պարոնայք,— ասաց նա հանկարծ, դժվարությամբ հաղթահարելով ինքն իրեն,— գիտե՞ք ինչ։ Լսում եմ ձեզ, և ինձ թվում է... գիտե՞ք ինչ, ես երբեմն մի երազ եմ տեսնում... մի այնպիսի երազ, որ հաճախ եմ տեսնում, միշտ կրկնվում է նույնը... որ մեկը հալածում է ինձ, այնպիսի մեկը, որից ես սոսկալի վախենում եմ, և նա հալածում է խավարի մեջ, գիշերը, ինձ է փնտրում, իսկ ես թաքնվում եմ նրանից մի որևէ տեղ՝ մի դռան ետև, մի պահարանի ետև, թաքնվում եմ նվաստացնող ձևով, և խնդիրն այն է, որ նա շատ լավ գիտե որտեղ եմ թաքնվել, բայց կարծես դիտմամբ ձևացնում է, թե չգիտե որտեղ եմ նստում, որպեսզի ավելի երկար տանջի ինձ, որպեսզի ըմբոշխնի իմ վախը... Այ հենց ա՛յդ եք անում հիմա։ Հենց դրա՞ն է նման։

— Դուք այդպիսի երազնե՞ր եք տեսնում,— հարցրեց դատախազը։

— Այո, այդպիսի երազներ եմ տեսնում... Ինչ է, չե՞ք ուզում այս էլ արձանագրել,— ծուռ ժպտաց Միտյան։

— Ոչ, արձանագրելու պետք չկա, բայց համենայն դեպս հետաքրքրական են ձեր երազները։

— Իսկ հիմա արդեն երազ չէ։ Ռեալիզմ է, պարոնայք, իրակա՛ն կյանքի ռեալիզմը։ Ես գայլ եմ, իսկ դուք՝ որսորդներ։ Է՛հ, հալածո՛ւմ եք գայլին։

— Դուք իզուր այդպիսի համեմատություն արեցիք...— սկսեց Նիկոլայ Պարֆյոնովիչը չափազանց մեղմ շեշտով։

— Իզուր չէ, պարոնայք, իզուր չէ՛,— բորբոքվեց կրկին Միտյան, թեև նորից սկսել էր բարեհոգի դառնալ, երևի անակնկալ զայրույթի այդ պոռթկումը թեթևացրել էր սիրտը։— Դուք կարող եք չհավատալ հանցագործին կամ մեղադրյալին, որ շարաչար տանջվում է ձեր հարցերից, բայց չե՞ք կարող չհավատալ ազնվագույն մարդուն, հոգու ազնվագո՛ւյն մղումներին (համարձակորեն գոռում եմ այս բանը), ո՞չ, պարոնայք, չե՞ք կարող չհավատալ դրան... նույնիսկ իրավո՛ւնք չունեք չհավատալու... բայց՝

լռիր, սիրտ իմ,
Համբերիր, խաղաղվիր ու լռիր։

Է՛հ, ինչ եք ասում, շարունակե՞մ,— մռայլորեն ընդհատեց նա։

— Խնդրեմ, շնորհ արեք,— պատասխանեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

V

ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑԱՐԱՆԸ

Միտյան թեև մռայլորեն սկսեց խոսել, բայց երևում էր, որ ավելի ևս աշխատում է ոչ մի մանրամասնություն չմոռանալ ու բաց չթողնել իր պատմածից։ Պատմեց, թե ինչպես ցանկապատի վրայով ցատկել էր հոր այգին, ինչպես գնացել էր մինչև պատուհանը և վերջապես ամեն ինչ, որ տեղի էր ունեցել պատուհանի տակ։ Հստակ, ճշգրիտ, կարծես քանդակելով նկարագրեց այն զգացմունքները, որ այդ վայրկյաններին հուզել էին նրան այգու մեջ, երբ այնպե՞ս սոսկալիորեն ուզում էր իմանալ՝ հոր մո՞տ է Գրուշենկան, թե ոչ։ Բայց տարօրինակ բան՝ այս անգամ և՛ դատախազը, և՛ քննիչը մի տեսակ ահավոր ժուժկալությամբ էին լսում, շոր-շոր նայում էին, շատ ավելի քիչ հարցեր էին տալիս։ Միտյան ոչինչ չէր կարողանում կռահել նրանց դեմքերից։ «Բարկացան ու վիրավորվեցին,— մտածեց նա,— դե թող։» Իսկ երբ պատմեց, թե ինչպես ի վերջո սիրտ էր արել հորը նշան տալ, որ Գրուշենկան եկել է, ուստի և նա պետք է բաց անի պատուհանը, դատախազն ու քննիչը բնավ ուշադրություն չդարձրին «նշանա» բառի վրա, կարծես բոլորովին էլ չհասկանալով, թե ինչ իմաստ ունի այս պարագային այդ բառը, այնպես որ Միտյան նույնիսկ նկատեց այդ։ Վերջապես հասավ իր պատմության այն վայրկյանին, երբ տեսնելով պատուհանից դուրս ցցված իր հորը, առելությամբ էր բորբոքվել ու գրպանից հանել էր սանդիկոթը։ Եվ հանկարծ այստեղ, կարծես դիտմամբ, կանգ առավ ու լռեց։ Նստած նայում էր պատին և գիտեր, որ նրանք իրենց աչքերն ուղղակի բևեռել էին իրեն։

— Դե լավ,— ասաց քննիչը,— հանեցիք զենքը և... և ի՞նչ պատահեց հետո։

— Հետո՞։ Է՛հ, հետո սպանեցի... հասցրի գագաթին և շախշախեցի գանգը... Այդպես է, չէ՞, ձե՛ր կարծիքով այդպես է,— փայլատակեցին հանկարծ նրա աչքերը։ Մեղմացած զայրույթը հանկարծ արտակարգ ուժով բորբոքվեց նրա հոգում։

— Մե՛ր կարծիքով,— կրկնեց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— պե՛ լավ, իսկ ձե՛ր կարծիքով։

Միտյան հայացքն իջեցրեց ու երկար ժամանակ լուռ մնաց։

— Ըստ իս, պարոնայք, ըստ իս, ահա թե ինչպես եղավ,— մեղմորեն սկսեց խոսել նա։— Չգիտեմ՝ լա՞ց եղավ մեկը այդ վայրկյանին, արդյոք մա՞յրս աղաչեց աստծուն, արդյոք պայծառ մի ոգի՞ համբուրեց ինձ հանկարծ՝ չգիտեմ, բայց սատանան տապալվեց իմ մեջ։ Ես դեն նետվեցի պատուհանից և վազեցի գնպի ցանկապատը... Հայրս վախեցավ և առաջին անգամ այդ վայրկյանին տեսավ ինձ, ճչաց ու ետ ցատկեց պատուհանից։ Այս բանը շատ լավ եմ հիշում։ Իսկ ես այդու միջով վազեցի գնպի ցանկապատը... և ահա այստեղ է, որ իմ ետևից հասավ Գրիգորին, երբ ես արդեն նստել էի ցանկապատի վրա...

Եվ Միտյան վերջապես աչքերը բարձրացրեց ու նայեց իր ունկնդիրներին։ Իսկ նրանք կարծես բացարձակորեն անվրդով ուշադրությամբ դիտում էին նրան։ Զայրույթի մի ջղաձգություն տարսեց Միտյայի հոգին։

— Բայց դուք այս բոպեին ծիծաղո՞ւմ եք ինձ վրա, պարոնայք,— ընդհատեց նա հանկարծ։

— Ինչո՞ւ եք այդպես ենթադրում,— նկատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Իմ ոչ մի բառին չեք հավատում, ահա՛ թե ինչու։ Դե հասկանում եմ իհարկե, բանը հասավ ամենակարևոր կետին. ծերուկը հիմա այնտեղ ընկած է շախշախված գլխով, իսկ ես... ողբերգականորեն նկարագրում եմ, թե ինչպես ուզում էի սպանել նրան և ինչպես արդեն հանել էի սանդկոթը... և հետո հանկարծ թողնում ու փախչում եմ պատուհանի մոտից... Գոնե՞մ է։ Զգիտե՞մ պոեմ։ Կարելի՞ է հավատալ կտրիճ մարդու խոսքին։ Հա-հա՛։ Դուք սիրում եք ծաղրե՛լ մարդուն, պարոնայք։

Եվ նա ամբողջ մարմնով շրջվեց աթոռի վրա, այնպես որ աթոռը ճռճռաց։

— Իսկ դուք չնկատեցի՞ք արդյոք,— սկսեց հանկարծ դատախազը, կարծես ուշադրություն էլ չդարձնելով Միտյայի հուզմունքին,— պատուհանից դեն վազելու ժամանակ չնկատեցի՞ք արդյոք, թե քա՞ց կամ փա՞կ էր այն դուռը, որ գտնվում է տան մյուս ծայրին, այգու կողմը։

— Ոչ, բաց չէր։

— Բաց չէ՞ր։

— Փակ էր, ընդհակառակը, և ո՞վ կարող էր բաց անել որ։ Բահո՞, դո՞ւռը, սպասե՞ք,— կարծես հանկարծ ուշքի եկավ նա և համարյա թե ցնցվեց։— Ի՞նչ է, դուռը բա՞ց գտաք։

— Բաց էր։

— Ուրեմն ո՞վ կարող էր բաց անել, եթե ինքներդ չեք բացել,— սոսկալի զարմացավ հանկարծ Միտյան։

— Դուռը լրիվ բաց էր, և, անտարակույս, ձեր ծնողին սպանողն այդ դռնից է ներս մտել և սպանությունը կատարելուց հետո այդ դռնից էլ դուրս է եկել,— դանդաղ ու հատիկ-հատիկ ասաց դատախազը, կարծես ամեն մի բառը դրոշմելով։— Մեզ համար դա բացարձակապես պարզ է։ Սպանությունը ակնհայտորեն կատարվել է սենյակում, ոչ թե պատուհանից, և դա հաստատապես երևում է կատարված հետաքննությունից, մարմնի դիրքից և ամեն ինչից։ Այս հանգամանքը ոչ մի տարակույսի չի կարելի ենթարկել։

Միտյան ահռելիորեն ապշել մնացել էր։

— Բայց դա ուղղակի անկարելի՞ է, պարոնայք,— գոռաց նա, բոլորովին իրեն կորցնելով,— ես... ես չեմ մտել... ես հաստատ եմ ասում, որոշակի եմ ասում ձեզ, որ դուռը փակ էր ամբողջ ժամանակ երբ ես գտնվում էի այգում և երբ փախչում էի այգուց։ Ես միայն պատուհանի տակ էի կանգնել և պատուհանից նրան տեսա, այդքան միայն, այդքան... Մինչև վերջին բոպեն հիշում եմ։ Եվ չհիշեի էլ, միևնույնն է՝ գիտեմ, որովհետև նշանները ես ու Սմերդյակովը միայն գիտենք, մեկ էլ նա՝ հանգուցյալը, իսկ նա աշխարհում ո՛չ ոքի առաջ դուռը չէր բանա առանց այդ նշանների։

— Նշաննե՞ր։ Իսկ ի՞նչ նշաններ են դրանք,— ասաց դատախազը ագահ, գրեթե հիստերիկ հետաքրքրությամբ ու վայրկենապես կորցրեց իր ամբողջ զուսպ կեցվածքը։ Վեհերոտ սողոսկելու պես հարցրեց նա։ Մի կարևոր, իրեն անծանոթ փաստի հետևանքով և նույն վայրկյանին սաստկապես զգաց այն վախը, թե Միտյան գուցե չցանկանա լիովին բաց անել գաղտնիքը։

— Ինչ է, չգիտեի՞ք,— աչքով արեց նրան Միտյան, հեգնական ու քինոտ մի ժպիտով,— է՞, հապա եթե չասե՞մ։ Ումի՞ց կարող եք իմանալ այդ դեպքում։ Չէ՞ որ նշանների մասին մե՛նք միայն գիտենք՝ հանգուցյալը, ես և Սմերդյակովը, ուրիշ ոչ ոք. մեկ էլ երկինքը գիտեր, բայց հո երկինքը ձեզ չի ասի։ Իսկ փաստը հետաքրքրակա՞ն է, սատանան գիտե, թե ինչեր կարելի է կառուցել դրա վրա, հա-հա՛։ Հանգիստ եղեք, պարոնայք, այդ էլ կհայտնեմ, հիմարություններ եք մտածում։ Չգիտեք, թե ո՞ւմ հետ է ձեր գործը։ Դուք գործ ունեք այնպիսի մի մեղադրյալի հետ, որ ինքն իր դեմ է ցուցմունք տալիս, ի վնաս իրեն։ Այո, պարոնայք, որովհետև ես պատվո ասպետ եմ, իսկ դուք՝ ոչ։

Դատախազը կուլ տվեց այդ բոլորը. նա պարզապես դողում էր նոր փաստն իմանալու անհամբերությունից։ Միտյան հստակ ու մանրամասն պատմեց ամեն ինչ այդ նշանների մասին, որ Ֆյոդոր Պավլովիչը հնարել էր Սմերդյակովի համար, բացատրեց, թե ինչ էր հատկապես նշանակում ամեն մի թխկոցը պատուհանին, նույնիսկ թխկացրեց այդ նշանները սեղանի վրա։ Եվ երբ Նիկոլայ Պարֆյոնովիչը հարցրեց, թե ուրեմն նա ծերունու պատուհանին թխկացրել է հենց ա՞յն նշանը, որի իմաստն էր «Գրուշենկան եկավ», Միտյան որոշակիորեն պատասխանեց՝ այո, ճիշտ այդպես է թխկացրել, այսինքն թե՝ «Գրուշենկան եկավ»։

— Ահա խնդրեմ, հիմա կառուցե՛ք աշտարակը,— ընդհատեց Միտյան և կրկին երես դարձրեց նրանցից՝ արհամարհանքով։

— Եվ այդ նշանները հայտնի էին միայն ձեր հանգուցյալ ծնողին, ձեզ և ծառա Սմերդյակովի՞ն։ Ուրիշ ո՞չ ոքի,— հարցրեց նորից Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Այո, ծառա Սմերդյակովին և մեկ էլ երկնքին։ Երկնքի մասին էլ արձանագրեցեք։ Ավելորդ չի լինի։ Եվ դուք ինքներդ էլ աստծո կարիքը կունենաք։

Եվ անշուշտ արձանագրում էին արդեն, բայց արձանագրելու ժամանակ հանկարծ դատախազը, կարծես բոլորովին անակնկալորեն մի նոր միտք հղանալով, ասաց.

— Բայց եթե Սմերդյակովն էլ գիտեր այդ նշանները, իսկ դուք արմատապես ժխտում եք ձեր նկատմամբ որևէ մեղադրանք ձեր ծնողի մահվան հարցում, ապա գուցե նա՞ է, որ թխկացրել է պայմանագրված նշանը, ձեր հորն ստիպել է դուռը բաց անել, իսկ հետո նա... կատարել է ոճիրը։

Միտյան խորապես հեգնական, բայց և միաժամանակ ահավոր ատելությամբ լեցուն մի հայացքով նայեց դատախազին։ Նայեց երկար ու լուռ, այնպես որ դատախազն սկսեց հաճախակի թարթել աչքերը։

— Նորի՞ց բռնեցիք աղվեսին,— ասաց վերջապես Միտյան,— ճզմեցիք թշվառականի պոչը և բռնեցիք, հե-հե՛։ Ձեր ուղն ու ծուծն ես տեսնում, դատախա՛զ։ Հենց այդպես էլ մտածում էիք, չէ՞, կարծում էիք, որ անմիջապես տեղիցս վեր կցատկեմ, կկառչեմ այն բանից, որ դուք ինձ հուշում եք, և կոկորդս պատռելով կգոռամ. «Ա՜յ, Սմերդյակո՛վն է, ահա՛ մարդասպանը»։ Խոստովանեցեք, որ մտածեցիք այդ բանը, խոստովանեցեք, և այդ դեպքում կշարունակեմ։

Բայց դատախազը չխոստովանեց։ Լուռ սպասում էր։

— Սխալվեցի՞ք, չեմ գոռա, թե Սմերդյակովն է,— ասաց Միտյան։

— Եվ նույնիսկ բոլորովին չե՞ք կասկածում նրա վրա։

— Իսկ դուք կասկածո՞ւմ եք։

— Նա էլ կասկածի տակ է։

Միտյան աչքերը հառեց հատակին։

— Կատակը մի կողմ,— ասաց նա մռայլորեն,— լսեցե՛ք. հենց սկզբից, համարյա թե այն րոպեին, երբ ես վարագույրի ետևից դուրս վազեցի ու եկա ձեզ մոտ, իմ մտքից արդեն անցավ այդ բանը՝ «Սմերդյակո՛վ»։ Նստել էի այս սեղանի առաջ և գոռում էի, որ մեղավոր չեմ, իսկ իմ մեջ անընդհատ մտածում էի՝ «Սմերդյակո՛վ»։ Եվ հոգուս կպել էր Սմերդյակովը։ Վերջապես հենց հիմա նույնը մտածեցի հանկարծ՝ «Սմերդյակո՛վ», բայց միայն մի վայրկյան. դրա հետ անմիջապես մտածեցի՝ «Ո՜չ, Սմերդյակովը չէ»։ Սա նրա գործը չէ, պարոնա՛յք։

— Այդ դեպքում մի ուրիշ անձնավորության վրա կասկած չունե՞ք,— զգուշորեն հարցրեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Չգիտեմ ով կամ ինչ անձնավորություն, երկնքի՞ ձեռքն է, թե սատանայի ձեռքը, բայց... Սմերդյակովը չէ՛,— կտրուկ վճռականությամբ ասաց Միտյան։

— Բայց ինչո՞ւ դուք այսպես հաստատ և այսպես համառորեն պնդում եք, որ նա չէ։

— Այդպես եմ համոզված։ Այդ է տպավորությունս։ Որովհետև Սմերդյակովը ամենաստոր բնավորությամբ մի մարդ է և վախկոտ։ Ոչ թե վախկոտ է, այլ աշխարհի բոլոր վախկոտու-

թյունների հանրագումարը, որ քայլում է երկու ոտքի վրա։ Հավից է նա ծնվել։ Երբ խոսում էր ինձ հետ, ամեն անգամ էլ դողում էր վախից, որ կսպանեմ իրեն, այնինչ ես ձեռքս էլ չէի բարձրացնում։ Ընկնում էր ոտքերս և լաց էր լինում, համբուրում էր ահա այս կոշիկները, տառացիորեն համբուրում և աղաչում էր, որ «չվախեցնեմ» իրեն։ Լսո՞ւմ եք. «Չվախեցնե՞մ»։ Սա՞ ինչ խոսք է։ Իսկ ես նույնիսկ նվեր էի տալիս նրան։ Ցավագար մի հավ է նա, ընկնավոր, թուլամիտ, և ուշ տարեկան մի տղա կարող է նրան ծեծել։ Դա ի՞նչ մի բնավորություն է որ։ Չէ, Սմերդյակովը չէ, պարոնայք, և նա փող էլ չի սիրում, երբեք չէր վերցնում իմ նվիրածը... Եվ հետո ինչո՞ւ նա սպանի ծերունուն։ Չէ՞ որ ինքն էլ նրա որդին է գուցե, ապօրինի որդին, գիտե՞ք այս բանը։

— Լսել ենք այդ առասպելը։ Բայց չէ՞ որ դուք էլ ահա ձեր հոր որդին եք, և սակայն հենց ինքներդ էլ ասել եք բոլորին, որ ուզում էիք սպանել նրան։

— Ք՞ր եք գցում իմ կտուրը։ Եվ ստո՛ր, զզվելի մի քար։ Չե՛մ վախենում։ Օ՜ պարոնայք, գուցե շատ մեծ ստորություն է, որ հենց իմ երեսին ասում եք այդ բանը։ Ստորություն եք անում, որովհետև այդ բանը ի՛նքս եմ ասել ձեզ։ Ոչ միայն ուզում էի, այլև կարող էի սպանել, և դեռ, ավելին, ինքս կամովի՛ն մեղք բարդեցի ինձ վրա, ասելով, թե քիչ մնաց սպանեի։ Բայց չէ՞ որ չսպանեցի նրան, չէ՞ որ ինձ փրկե՛ց իմ պահապան հրեշտակը. ահա ա՛յս է, որ դուք հաշվի չառաք... Դրա համար էլ ստորություն եք անում, ստորությո՛ւն։ Որովհետև ես չե՛մ սպանել, չե՛մ սպանել, չե՛մ սպանել։ Լսո՞ւմ եք, դատախա՛զ. չե՛մ սպանե՛լ։

Համարյա թե շնչահեղձ եղավ նա։ Ամբողջ հարցաքննության ընթացքում գեռ ոչ մի անգամ այդպես չէր հուզվել։

— Իսկ ի՞նչ ասաց ձեզ նա, պարոնայք, այդ Սմերդյակովը,— ավելացրեց նա հանկարծ, մի քիչ լռելուց հետո։— Կարո՞ղ եմ այս բանը հարցնել ձեզնից։

— Դուք կարող եք ամեն ինչ հարցնել մեզնից,— սառն ու խիստ արտահայտությամբ պատասխանեց դատախազը,— ամեն ինչ, որ վերաբերում է գործի փաստական կողմին, իսկ մենք, կրկնում եմ, նույնիսկ պարտավոր ենք գոհացում տալ ձեր յուրաքանչյուր հարցին։ Մասա Սմերդյակովին, որի մասին հարցնում եք դուք, ուշագնաց պառկած գտանք իր անկողնում՝ ընկնավորության չափազանց ուժեղ, գուցե տասը անգամ իրար վրա կրկնված նոպայի մեջ։ Մեզ հետ եղող բժիշկը, քննելով հիվանդին, նույնիսկ ասաց, որ գուցե նա չապրի մինչև առավոտ։

— Է՜, այդ դեպքում սատանա՞ն է սպանել հորս,— պոռթկաց հանկարծ Միտյան, կարծես մինչև այդ վայրկյանը նա դեռ հարց էր տալիս ինքն իրեն՝ «Սմերդյակո՞վն է, թե Սմերդյակովը չէ»։

— Մենք դեռ կվերադառնանք այդ փաստին,— որոշեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։— Իսկ այժմ չե՞ք ցանկանա շարունակել ձեր ցուցմունքը։

Միտյան հանգստանալու թույլտվություն խնդրեց։ Քաղաքավարի կերպով թույլ տվեցին նրան։ Հանգստանալուց հետո շարունակեց պատմել։ Բայց երևում էր, որ տաժանելի է նրա համար։ Տանջվել էր նա, վիրավորվել ու ցնցվել բարոյապես։ Եվ մանավանդ որ հիմա դատախազը, արդեն կարծես դիտմամբ, սկսեց ամեն րոպե շղայնացնել նրան, բռնելով «մանրուքներին» պոչից։ Հազիվ էր Միտյան նկարագրել, թե ինչպես ինքը, ցանկապատի վրա նստած, սանդկոթով հարվածել էր իր ձախ ոտքից կառչած Գրիգորիի գլխին և հետո իսկույն ետ էր ցատկել տապալված ծերունու մոտ, և ահա դատախազն ընդհատեց նրան ու խնդրեց ավելի մանրամասն նկարագրել, թե ինչպես էր նստել ցանկապատի վրա։ Միտյան զարմացավ։

— Ա՛յ այսպես էի նստել ահա, ձի հեծնելու պես, մեկ ոտքս այս կողմ, մյուս ոտքս այն կողմ։

— Իսկ սանդկո՞թը։

— Սանդկոթը ձեռքիս էր։

— Եվ ոչ թե գրպանո՞ւմ։ Այդպես որոշակի հիշո՞ւմ եք։ Լավ, իսկ ուժգի՞ն թափ առաք ձեռքով։

— Երևի ուժգին էր, բայց դա ձեր ինչի՞ն է պետք։

— Լավ կլիներ, եթե հիմա աթոռի վրա նստեիք ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ նստել էիք ցանկապատի վրա, և, պարզելու համար, մեր աչքի առաջ ցույց տայիք, թե ինչպես և ո՛ր կողմից թափ առաք, ո՛ր կողմը շարժեցիք ձեր ձեռքը։

— Բայց ինչ է, դուք ծիծաղո՞ւմ եք ինձ վրա,— հարցրեց Միտյան, հպարտորեն նայելով հարցաքննողին, բայց վերջինս աչքերն անգամ չթարթեց։ Միտյան ջղաձգորեն դարձավ, ձիավորի պես նստեց աթոռին և թափահարեց ձեռքը.

— Ա՛յ այսպես խփեցի։ Ա՛յ այսպես սպանեցի։ Էլ ի՞նչ ենք ուզում։

— Շնորհակալ եմ։ Իսկ հիմա նեղություն չե՞ք կրի բացատրելու, թե ինչո՞ւ, հատկապես ի՞նչ նպատակով վար ցատկեցիք և ինչ նկատի ունեիք հատկապես։

— Է՛, գրո՛ղը տանի... ցատկեցի ընկած ծերուկի մոտ։ Չգիտեմ ինչու։

— Այդպիսի հուզված վիճակո՞ւմ։ Եվ փախչելով հանդե՞ր։

— Այո, հուզված վիճակում և փախչելով հանդերձ։

— Օգնել էիք ուզում նրան։

— Ի՞նչ օգնել... Այո, գուցե և ուզում էի օգնել, չեմ հիշում։

— Չէ՞ր գործում ձեր հիշողությունը։ Այսինքն նույնիսկ մի որոշ չափով անզգայացե՞լ էիք։

— Օ՜ ո՜չ, բոլորովին էլ չէի անզգայացել, ամեն ինչ հիշում եմ։ Մինչև վերջին մանրամասնությունը։ Ցատկեցի, որ նայեմ նրան, և թաշկինակով սրբեցի արյունը։

— Տեսանք ձեր թաշկինակը։ Հույս ունեիք, որ ուշքի՞ կբերեք ձեր զգեստած մարդուն։

— Չգիտեմ, հույս ունեի՞, չունեի՞։ Պարզապես ուզում էի համոզվել՝ կենդանի՞ է, թե չէ։

— Ա՛, ուրեմն ուզում էիք համոզվե՞լ։ Եվ ի՞նչ։

— Ես բժիշկ չեմ, չկարողացա որոշել։ Փախա, մտածելով, որ սպանել եմ, բայց ահա ուշքի է եկել։

— Հիանալի է,— վերջացրեց դատախազը։— Շնորհակալ եմ։ Այդ էր միայն իմ ուզածը։ Հաճեցեք շարունակել։

Ավա՜ղ, Միտյան թեև հիշում էր, բայց մտքովն էլ չանցավ պատմել, որ ծերուկի մոտ ցատկել էր խղճահարությունից մղված, և նույնիսկ, կանգնելով նրա գլխին, մի քանի կարեկցական խոսք էր ասել. «Փորձանքի քնկար, բիձուկ, էլ ի՞նչ կարող եմ անել, դե այդպես էլ մնաս։ Իսկ դատախազը մեկ եզրակացություն միայն հանեց. այսինքն թե մարդը «այդպիսի բոպեին և այդպիսի հուզված վիճակում» ցատկել է՝ պարզապես հատատաս համոզվելու համար, որ իր ոճրագործության միակ վկան կենդանի՞ է, թե ոչ։ Եվ որ, ուրեմն, ի՞նչ ուժ, վճռականություն, պաղարյունություն ու հաշվենկատ վերաբերմունք է ունեցել մարդը նույնիսկ այդպիսի բոպեին... և այլն, և այլն։ Դատախազը գոհ էր. այսինքն թե՝ «դյուրաբորբոք մարդուն գրգռեցի «մանրուքներով», և նա իր ասել չուզածն էլ բերանից թռցրեց»։

Միտյան տանջահար սրտով շարունակեց պատմել։ Բայց այս անգամ արդեն Նիկոլայ Պարֆյոնովիչն անմիջապես ընդհատեց նրան.

— Իսկ ինչպե՞ս կարողացաք վազել սպասուհի Ֆեոդոսյա Մարկովնայի մոտ, երբ այդպես արյունոտ էին ձեր ձեռքերը և, ինչպես պարզվել է հետո, նաև ձեր դեմքը։

— Բայց այդ պահին բոլորովին էլ չէի նկատել, որ արյունոտվել եմ,— պատասխանեց Միտյան։

— Ճշմարտանման է ասում, հենց այդպես էլ լինում է,— դատախազը մի հայացք փոխանակեց Նիկոլայ Պարֆյոնովիչի հետ։

— Չէի նկատել հենց, շատ լավ ասացիք, դատախա՛զ,— հանկարծ հավանություն տվեց նաև Միտյան։

Իսկ այնուհետև Միտյան պատմեց, թե ինչպես ինքը անակնկալորեն որոշել էր «մի կողմ քաշվել» և «ճանապարհ տալ երջանիկներին»։ Բայց արդեն ոչ մի կերպ չէր կարող նորից բաց անել իր սիրտը քիչ առաջվա նման և պատմել «իր հոգու թագուհու» մասին։ Նողկանք էր զգում այդ սառնասիրտ մարդկանցից, որոնք «փայտոշիլների նման կպել էին իրենց»։ Այդ պատճառով էլ կարճ ու կտրուկ պատասխանեց կրկին ու կրկին տրվող ճարցերին.

— Դե՛հ, վճռեցի սպանել ինքս ինձ։ Էլ ինչո՞ւ պետք է ողջ մնայի. այս հարցը ինքն իրեն կանգնում էր իմ առաջ։ Հայտնվել էր նրա առաջին, անվիճելի սիրահարը, այն մարդը, որ նրա սիրտն էր կոտրել, բայց հիմա, հինգ տարի հետո, վազելով եկել ու իր սերն էր բերել՝ օրինական ամուսնությամբ քավելու համար իր հասցրած վիրավորանքը։ Դե ուրեմն հասկացա, որ ամեն ինչ կորել էր ինձ համար... Իսկ իմ ետևում՝ խայտառակությո՞ւն, և ահա այդ արյունը, Գրիգորիի արյունը... էլ ինչո՞ւ ապրեի։ Դե ուրեմն գնացի ետ առնելու գրավ դրած ատրճանակներս, որպեսզի լցնեմ դրանք և լուսադեմին փամփուշտը խրեմ գանգիս մեջ...

— Իսկ մինչ այդ՝ գիշերը փառավոր մի խնջո՞ւյք։

— Այո, գիշերը փառավոր խնջույք է՞, գրողը տանի, պարոնայք, շուտ արեք, վերջացրեք։ Ուզում էի անպայման ցրիվ տալ գանգս, ա՛յ այստեղ՝ հեռու չէ, գյուղի ծայրին, և առավոտը ժամը հինգին պետք է մաքրեի իմ հաշիվը, գրպանումս մի երկտող էի պատրաստել արդեն։ Պերխոտինի մոտ էի գրել, երբ ատրճանակն էի լցնում։ Ահա՛ այդ թուղթը, կարդացեք։ Ձեզ հա-

մար չէ՛, որ պատմում եմ,— ավելացրեց նա հանկարծ արհամարհանքով։ Քաճկոնակի գրպանից հանեց թուղթը և նետեց սեղանի վրա. քննիչները հետաքրքրությամբ կարդացին և, ըստ սովորականի, այդ թուղթն էլ միացրին գործին։

— Եվ նույնիսկ երբ պարոն Գերխոտինի մոտ գնացիք, դեռ չէի՞ք մտածում ձեր ձեռքերը լվանալ։ Ուրեմն չէի՞ք վախենում կասկածներից։

— Ի՞նչ կասկածներ։ Կասկածներն կամ ոչ՝ միևնույն է, ես պիտի սուրալով գայի այստեղ ու ժամը հինգին վերջ տայի կյանքիս, և դուք ոչինչ էլ չէիք հասցնի անել։ Եթե չլիներ հորս դեպքը, դուք ոչինչ էլ չէիք իմանա և չէիք գա այստեղ։ Օ՜, սատանա՜ն է արել այդ բանը, սատանա՜ն է սպանել հորս, և հենց սատանայի շնորհիվ այդքան շուտ իմացաք։ Ինչպե՞ս է, որ այդքան շուտ հասաք այստեղ։ Հրաշք է, ցնո՞ւրք։

— Պարոն Գերխոտինը հաղորդեց մեզ, որ դուք, երբ մտնում էիք նրա մոտ, ձեր ձեռքում... արյունոտ ձեռքում... բռնել էիք ձեր դրամը... մի մեծ գումար... հարյուրանոց թղթադրամների մի կապոց, և նրան ծառայող մանչն էլ տեսել է այդ բանը։

— Ճիշտ է, պարոնայք, հիշում եմ, որ այդպես էր։

— Հիմա մի փոքրիկ հարց է մեջտեղ գալիս։ Չե՞ք կարող մեզ հայտնել,— չափազանց մեղմորեն սկսեց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— որտեղի՞ց վերցրիք հանկարծ այդքան փողը, քանի որ գործից երևում է, որ եթե ժամերի հաշիվը անենք՝ նույնիսկ տուն էլ չեք գնացել։

Դատախազը մի քիչ խոժոռվեց, որ հարցն այդպես ուղղակի է դրվում, բայց լռեցրեց Նիկոլայ Պարֆյոնովիչին։

— Ոչ, տուն չեմ գնացել,— պատասխանեց Միտյան, ըստ երևույթին շատ հանգիստ, բայց նայելով հատակին։

— Թույլ տվեք այդ դեպքում կրկնել հարցը,— շարունակեց Նիկոլայ Պարֆյոնովիչը, մի տեսակ սողոսկելով դեպի բուն խնդիրը։— Որտեղի՞ց կարող էիք այդպիսի գումար ձեռք բերել միանգամից, երբ նույն օրը, ժամը հինգին, ձեր իսկ խոստովանությամբ...

— Տասը ռուբլու կարիք ունեի և սարքանակները գրավ դրի Գերխոտինի մոտ, հետո գնացի Խոխլակովայից երեք հազար ռուբլի խնդրելու, բայց նա չտվեց, և այլն, և այլն, ահա այդպիսի բաներ,— կտրուկանորեն ընդհատեց Միտյան։— Հա՛ ուրեմն, պարոնայք, փող չունեի, և մեկ էլ հանկարծ երե՞ք հազար ռուբլի բուռով գտանի ուսկից, հը։ Գիտե՞ք ինչ, պարոնայք, հիմա երկուսիդ էլ փորը վախ է ընկել՝ հապա եթե չասի՞, թե որտեղից է վերցրել այդ փողը։ Հենց այդպես էլ է. չեմ ասի, պարոնայք, ճիշտ կռահեցիք։ Չե՛ք իմանա այդ բանը,— ասաց հանկարծ Միտյան, արտակարգ վճռականությամբ շեշտելով իր խոսքը։ Քննիչները մի պահ լուռ մնացին։

— Հասկացեք, պարոն Կարամազով, մեզ համար էականորեն անհրաժեշտ է իմանալ այդ բանը,— ասաց Նիկոլայ Պարֆյոնովիչը մեղմ ու հեզաբարո։

— Հասկանում եմ, բայց և այնպես՝ չեմ ասի։

Միշամտեց նաև դատախազը և նորից հիշեցրեց, որ հարցաքննվողն անշուշտ կարող է չպատասխանել հարցերին, եթե այդպես անելը իր համար շահավոր է համարում և այլն, բայց նկատի ունենալով, որ կասկածի ենթակա անձը ինչպիսի՞ վնաս կարող է հասցնել իրեն իր լռությամբ, և հատկապես նկատի առնելով այսպիսի կարևորություն ունեցող հարցերը, որոնք...

— Եվ այլն, պարոնայք, և ա՛յլն։ Բավական է, լսեցի արդեն այդ քարոզը,— նորից ընդհատեց Միտյան։— Ինքս էլ հասկանում եմ, որ խնդիրը շատ կարևոր է, և որ հենց ա՛յս է ամենաէական կետը, բայց և այնպես՝ չեմ ասի։

— Է՛հ, մի՞զ ինչ, սա հո մեր գործը չէ, ձե՛ր գործն է, ինքներդ ձեզ կվնասեք,— ջղայնորեն նկատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Գիտե՞ք ինչ, պարոնայք, կատակը մի կողմ թողնենք,— աչքերը բարձրացրեց Միտյան և հատատակամորեն նայեց երկուսին էլ։— Հենց սկզբից արդեն նախազգում էի, որ մենք այս կետի վրա ճակատ-ճակատի ենք խփվելու։ Բայց քիչ առաջ, երբ սկսեցի ցուցմունքներս տալ, այս ամբողջը դեռ հեռավոր մշուշի մեջ էր, վայրիվերո մի բան, և ես նույնիսկ այնքա՜ն պարզամիտ եղա, որ «մեր միջև փոխադարձ վստահություն» առաջարկելով սկսեցի։ Հիմա ինքս եմ տեսնում, որ այդ վստահությունը չէր էլ կարող լինել, որովհետև համենայն դեպս պետք է հասնեինք այս անիծյա՛լ պատնեշին։ Է՛հ, հասանք ուրեմն։ Չի՛ կարելի, և վե՛րջ։ Բայց դե ես չեմ մեղադրում ձեզ. դո՛ւք էլ չեք կարող պարզապես իմ խոսքին հավատալ, հասկանում եմ իհարկե։

Նա մոայլորեն լռեց։

— Իսկ չէի՞ք կարող, առանց որևէ կերպ խախտելու ձեր այդ վճռականությունը, որով ուզում եք չխոսել ամենագլխավո-

րի մասին, չէ՞ք կարող միաժամանակ ամենափոքր մի ակնարկությամբ մեզ հասկացնել, թե այդ ի՞նչ ուժեղ շարժառիթներ են հատկապես, որ ներկա հարցաքննության այս վտանգավոր պահին կարող են ձեզ մղել լուռ մնալու։

Միայն տխուր ու մի տեսակ մտախոհ ժպտաց։

— Ես շատ ավելի բարի եմ, քան դուք կարծում եք, պարոնայք։ Կհայտնեմ ձեզ, թե ինչու չեմ ասում, և կանեմ այդ ակնարկությունը, թեև դուք արժանի չեք դրան։ Չեմ ասում, պարոնայք, որովհետև ինձ համար անպատվություն է դա։ Հարցնում եք, թե որտեղի՞ց եմ վերցրել այդ փողը. դրա պատասխանն ինձ համար այնպիսի մի անպատվություն է, որի հետ չէր կարող համեմատվել նույնիսկ հորս սպանելն ու կողոպտելը, եթե իրոք սպանած ու կողոպտած լինեի նրան։ Ահա թե ինչու չեմ կարող ասել։ Անպատվության վախից է, որ չեմ կարող։ Բայց ի՞նչ է, պարոնայք, ուզում եք արձանագրե՞լ։

— Այո, պետք է արձանագրենք,— թոթովեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Պետք է արձանագրեիք այս բանը, անպատվությունը այսինքն։ Իմ սրտի բարությունից է միայն, որ հայտնեցի ձեզ, բայց կարող էի և չհայտնել։ Ես ձեզ, այսպես ասած, նվեր արեցի, իսկ դուք անմիջապես պոչից բռնեցիք։ Դե լա՜վ, գրեցեք, գրեցեք ինչ ուզում եք,— եզրակացրեց նա արհամարհանքով ու զզվանքով,— չեմ վախենում ձեզնից և... հպարտ եմ զգում ձեր առաջ։

— Իսկ չե՞ք ասի, թե ի՞նչ բնույթի է այդ անպատվությունը,— կմկմաց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

Դատախազը սոսկալի խոժոռվեց։

— Չէ-չէ, c'est fini[1], իզուր մի՛ հոգնեք։ Զարմի էլ, որ ձեռքերս կեղտոտեմ։ Այնպես էլ արդեն կեղտոտվեցի ձեզ հետ շփվելով։ Արժանի չեք, ոչ ոք արժանի չէ... Բավական է, պարոնայք, վերջ եմ տալիս։

Զափազանց վճռականորեն ասվեց այդ բանը։ Նիկոլայ Պարֆյոնովիչը չպնդեց այլևս, բայց Իպոլիտ Կիրիլովիչի աչքերից անմիջապես նկատեց, որ նա դեռ հույսը չի կորցնում։

— Չե՞ք կարող գոնե հայտնել, թե ի՞նչ գումար ունեիք

1 Վերջացավ (ֆրանս.)։

ձեր ձեռքում, երբ մտաք պարոն Պերխոտինի տունը, այսինքն քանի՞ ռուբլի հատկապես։

— Այդ էլ չեմ կարող հայտնել։

— Պարոն Պերխոտինին, կարծեմ, ասել եք երեք հազար ռուբլու մասին, որ իբր թե ստացել եք տիկին Խոխլակովայի՞ց։

— Գուցե և ասել եմ։ Բավական է, պարոնայք, չեմ ասի, թե ինչ գումար էր։

— Այդ դեպքում բարի եղեք նկարագրել, թե ինչպես եկաք այստեղ և ամեն ինչ, որ արեցիք այստեղ գալուց հետո։

— Է՜հ, դրա մասին հարցրեք բոլոր այստեղացիներին։ Բայց դի լավ, ես էլ կպատմեմ։

Ու պատմեց, բայց մենք չենք կրկնի նրա պատմածը։ Պատմեց չոր ու հարևանցի։ Իր սիրո խայտանքների մասին բոլորովին չխոսեց։ Պատմեց, սակայն, թե ինչպես չքացավ անձնասպան լինելու իր վճիռը՝ «նոր փաստերի շնորհիվ»։ Պատմում էր առանց պատճառաբանելու, առանց մանրամասնությունների մեջ մտնելու։ Եվ քննիչներն էլ այս անգամ շատ չանհանգստացրին նրան. պարզ էր, որ նրանց համար ևս գլխավոր կետը այդ չէ հիմա։

— Մենք այդ բոլորը կստուգենք, մենք դեռ կվերադառնանք այդ բոլորին՝ վկաների հարցաքննության ժամանակ, որ անշուշտ ձեր ներկայությամբ տեղի կունենա,— Նիկոլայ Պարֆյոնովիչն ավարտեց հարցաքննությունը։— Իսկ այժմ թույլ տվեք մի խնդրանք ներկայացնել ձեզ. դրեք սեղանի վրա ձեր ունեցած բոլոր իրերը և մանավանդ այն ամբողջ դրամը, որ գտնվում է հիմա ձեր գրպաններում։

— Դրա՞մը, պարոնայք։ Խնդրե՞մ, հասկանում եմ, որ այդպես է պետք։ Զարմանում եմ նույնիսկ, թե ինչպե՞ս ավելի շուտ չհետաքրքրվեցիք։ Ճիշտ է, ոչ մի տեղ էլ չէի կարող գնալ, նստել եմ ձեր աչքի առաջ։ Է՜հ, ահա իմ ունեցած դրամը, հաշվեցեք ահա, վերցրեք, կարծեմ այս է ամբողջը։

Լրիվ դատարկեց գրպանները, նույնիսկ մանր դրամը հանեց. երկու հատ քսանկոպեկանոց դուրս բերեց բամբակոնակի գրպանից։ Հաշվեցին դրամը. պարզվեց, որ ութ հարյուր երեսուն վեց ռուբլի քառասուն կոպեկ ուներ։

— Եվ ա՞յս է ամբողջը,— հարցրեց քննիչը։

— Այս է։

— Քիչ առաջ, երբ ձեր ցուցմունքներն էիք տալիս, հա-

ճեցիք ասել, որ Պլատնիկովների խանութում երեք հարյուր ռուբլի եք թողել, Պերխոտինին էլ տվել եք տասը ռուբլի, կառապանին՝ քսան, այստեղ երկու հարյուր ռուբլի տարվել եք, հետո...

Նիկոլայ Պարֆյոնովիչը հաշվեց այդ բոլորը։ Միտյան հոժարությամբ օգնեց նրան։ Հիշեցին յուրաքանչյուր կոպեկը և մտցրին հաշվի մեջ։ Նիկոլայ Պարֆյոնովիչն արագորեն հանեց ընդհանուր գումարը։

— Այս ութ հարյուրի հետ, ուրեմն, ընդամենը շուրջ հազար հինգ հարյուր ռուբլի՞ եք ունեցել սկզբում։

— Այդպես է երևի,— կարճ կտրեց Միտյան։

— Իսկ ինչպե՞ս են բոլորը պնդում, թե շատ ավելին էր։

— Թող պնդեն։

— Բայց դուք ինքներդ էլ պնդում էիք։

— Ես ինքս էլ պնդում էի։

— Մենք դեռ այս բոլորը կստուգենք՝ ուրիշ չհարցաքննված անձանց վկայություններով։ Ձեր դրամի մասին մի՛ մտահոգվեք, սրանք կպահվեն որտեղ որ պետք է և նորից ձեր տրամադրության տակ կլինեն, երբ վերջանա այս ամբողջը... որ սկսվել է... եթե պարզվի կամ այսպես ասած ապացուցվի, որ դուք անվիճելիորեն այս դրամի տերն եք։ Է՛, իսկ հիմա...

Նիկոլայ Պարֆյոնովիչը հանկարծ վեր կացավ և հաստատապես հայտարարեց Միտյային, որ «ստիպված է և պարտավոր է» ամենամանրամասն և ամենաստույգ խուզարկության ենթարկել «ձեր հագուստը և ամեն ինչը...»։

— Խնդրեմ, պարոնայք, բոլոր գրպանները շուռ կտամ, եթե ուզում եք։

Եվ նա իրոք սկսեց շուռ տալ գրպանները։

— Անհրաժեշտ կլինի նույնիսկ, որ ձեր հագուստն էլ հանեք։

— Ինչպե՞ս։ Հանվե՞մ։ Թո՛ւհ, գրողը տանի։ Դե հենց այսպես էլ խուզարկեցեք, էլի։ Չի՞ կարելի այսպես։

— Ոչ մի կերպ չի կարելի, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Պետք է հանեք հագուստը։

— Ինչպես ուզում եք,— մոայլորեն ենթարկվեց Միտյան,— միայն թե, խնդրում եմ, ոչ թե այստեղ, այլ վարագույրի ետև։ Ո՞վ է խուզարկելու։

— Իհարկե վարագույրի ետև,— գլուխը խոնարհեց Նիկոլայ Պարֆյոնովիչը՝ ի նշան համաձայնության։ Նրա դեմքին նույնիսկ մի յուրահատուկ, ծանրակշիռ լրջություն երևաց։

VI

ԴԱՏԱԽԱՋԸ ԲԱՑՈՒՄ Է ՄԻՏՅԱՅԻՆ

Սկսվեց մի բան, որ բոլորովին անսպասելի ու զարմանալի էր Միտյայի համար։ Նա ոչ մի կերպ ու երբեք, նույնիսկ մի բոպե առաջ չէր կարող ենթադրել, թե որևէ մեկը կարող է այդպես վարվել իր հետ՝ Միտյա Կարամազովի՝ հետ։ Եվ նամանավանդ՝ ստորացուցիչ մի բան կար դրա մեջ, իսկ նրանց կողմից՝ «ամբարտավան ու իր նկատմամբ արհամարհական» մի բան։ Սերթուկը հանելը դեռ ոչի՞նչ, բայց խնդրեցին, որ դեռ շապիկի հանվել։ Եվ ոչ թե պարզապես խնդրեցին, այլ ըստ էության հրամայեցին. ինքը շատ լավ հասկացավ այդ։ Հպարտությունից ու արհամարհանքից դրդված՝ նա լիովին ենթարկվեց, առանց որևէ բան ասելու։ Բացի Նիկոլայ Պարֆյոնովիչից, վարագույրի ետև եկավ նաև դատախազը, մի քանի գյուղացիներ էլ ներկա գտնվեցին, «անշուշտ ուժ գործադրելու համար,— մտածեց Միտյան,— և գուցե մի ուրիշ որևէ նպատակով էլ»։

— Է՛հ, ինչ է, վերնաշապի՞կս էլ հանեմ,— կտրուկ հարցրեց նա, բայց Նիկոլայ Պարֆյոնովիչը չպատասխանեց։ Դատախազի հետ միասին նա, կլանված, զննում էր սերթուկը, տաբատը, բանկոնակն ու գլխարկը, և երևում էր, որ երկուսն էլ խիստ հետաքրքրվել են այդ զննությամբ։ «Ոչ, մի բանից չեն քաշվում,— անցավ Միտյայի մտքով,— նույնիսկ անհրաժեշտ քաղաքավարությունն էլ չեն պահպանում»։

— Երկրորդ անգամ եմ հարցնում ձեզ՝ պե՞տք է հանեմ վերնաշապիկս, թե ոչ,— ասաց նա ավելի կտրուկ և ավելի ջղայնորեն։

— Մի՛ անհանգստանաք, կասենք ձեզ,— պատասխանեց Նիկոլայ Պարֆյոնովիչը՝ նույնիսկ մի տեսակ ժեծավորի շեշտով։ Գոնե Միտյային այդպես թվաց։

Այդ միջոցին քննիչն ու դատախազը ցածր ձայնով խորհրդակցում էին փուլեռանդորեն։ Պարզվել էր, որ սերթուկի վրա, հատկապես ձախ քղանցքին, հանի կողմից, արյան հսկայական բծեր կային՝ չորացած, քարացած ու դեռ այդպես էլ կոշտ մնացած։ Տաբատի վրա՝ նույնպես։ Նիկոլայ Պարֆյոնովիչը, բացի այդ, գյուղացի ենթավկաների ներկայությամբ, իր սեփական մատներով շոշափեց սերթուկի օձիքը, թևածալքերը, բոլոր

կարերը, տաքատն էլ շոշափեց վերից վար. մի բան էր փնտրում հայտնապես՝ անշուշտ թե փող։ Մինչև իսկ չէին թաքցնում Միտյայից իրենց կասկածները, թե նա կարող էր փողը հագուստի մեջ կարել, ընդունակ էր այդպիսի բան անելու։ «Այս արդեն՝ կարծես ուղղակի գողի՞ հետ է իրենց գործը, ոչ թե սպա-յի»,— քրթմնջաց նա ինքն իրեն։ Իսկ իրենց մտքերը տարօրինակ թվալու չափ բացահայտորեն հաղորդում էին իրար՝ Միտյայի ներկայությամբ։ Օրինակ, գրագիրը, որ նույնպես հայտնվել էր վարագույրի ետևում ու անընդհատ դեսուդեն էր ընկնում՝ ծառայություն մատուցելով, Նիկոլայ Պարֆյոնովիչի ուշադրությունը հրավիրեց գլխարկի վրա, որը նույնպես շոշափեցին. «Հիշո՞ւմ եք գրագիր Գրիդենկային,— նկատեց նա,— ամառը գնացել էր ամբողջ գրասենյակի ռոճիկներն ստանալու, իսկ վերադառնալուց հետո հայտարարեց, թե հարբած վիճակում կորցրել է փողը։ Եվ որտե՞ղ գտան, հիշո՞ւմ եք։ Այ հենց գլխարկի այս եզրակների մեջ. հարյուրանոցները բարակ-բարակ ոլորել ու այս եզրակների մեջ էր կարել։ Քննիչն ու դատախազը շատ լավ էին հիշում Գրիդենկայի դեպքը, ուստի Միտյայի գլխարկը մի կողմ դրեցին ու որոշեցին, որ այդ բոլորը պետք է լրջորեն զննել հետո, և առհասարակ ամբողջ հագուստը պետք է զննել։

— Ներեցե՞ք խնդրեմ,— գոչեց հանկարծ Նիկոլայ Պարֆյոնովիչը, նկատելով Միտյայի վերնաշապկի աջ թևքը, որի ներսը դարձած ծայրն ամբողջովին արյունոտ էր,— ներեցե՞ք խնդրեմ, սա՞ ինչ է, արյո՞ւն։

— Արյուն,— կարճ կտրեց Միտյան։

— Այսինքն ի՞նչ արյուն է... և ինչո՞ւ թևքի ծայրը ներս է դարձրած։

Միտյան պատմեց, թե ինչպես Գրիգորիի գլուխը մաքրելու ժամանակ թևքի ծայրն արյունոտվել էր, և թե հետո Պերխոտինի մոտ, երբ ձեռքերն էր լվանում, ներս էր դարձրել արյունոտ մասը։

— Ուրեմն ձեր վերնաշապիկն էլ պետք է վերցնենք, շատ կարևոր է... որպես իրեղեն ապացույց։

Միտյան կարմրեց ու կատաղեց։

— Ի՞նչ է, մե՞րկ մնամ,— գոռաց նա։

— Մի՛ անհանգստանաք... Մի կերպ կկարգադրենք։ Իսկ մինչ այդ՝ գուլպաներն էլ հանեցեք խնդրեմ։

— Հո կատակ չե՞ք անում։ Դա իսկապես անհրաժե՞շտ է,— ֆայլատակեցին Միտյայի աչքերը։

— Մենք կատակելու տրամադրություն չունենք,— խստորեն դիմադարձեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Դե լավ, եթե պետք է... ես...— մրթմրթաց Միտյան և, նստելով մահճակալին, սկսեց հանել գուլպաները։ Անտանելիորեն անհարմար էր զգում նա. բոլորը հագնված են, իսկ ինքը մերկ է և, տարօրինակ բան, այդպես մերկ լինելով՝ կարծես ինքն էլ մի տեսակ մեղավոր էր զգում իրեն նրանց առաջ, և մանավանդ ինքն էլ համաձայն էր գրեթե, որ իսկապես հանկարծ ավելի նվաստ էր դարձել, քան նրանք, և որ հիմա արդեն լիովին իրավունք ունեն արհամարհելու իրեն։ «Երբ բոլորն են մերկ՝ ամոթ չէ, բայց երբ մեկ հոգի է մերկ, իսկ բոլորը նայում են՝ խայտառակությո՞ւն է,— կրկին ու կրկին անցնում էր նրա մտքով։— Կարծես երազ լինի. երբեմն երազի մեջ ինքս ինձ տեսել եմ այսպիսի խայտառակ վիճակում»։ Բայց գուլպաները հանելը մինչև իսկ տանջալի էր նրա համար. շատ անմաքուր էին դրանք, և սպիտակեղենը՝ նույնպես, և հիմա բոլորը տեսնում էին այդ բանը։ Եվ մանավանդ՝ ինքն էլ չէր սիրում իր ոտքերը. ամբողջ կյանքում, չգիտես ինչու, անճոռնի էր համարել երկու ոտքերի բթամատները, հատկապես աջ ոտքի կոպիտ, տափակ, դեպի ներքև ծռված մի եղունգը, և ահա հիմա բոլոր այս մարդիկ կտեսնեն դա։ Անտանելի ամոթ զգալով, նա հանկարծ ավելի ևս կոպիտ սկսեց վարվել՝ արդեն դիտմամբ։ Ինքը անձամբ պոկեց ու հանեց իր վերնաշապիկը։

— Չե՞ք ուզում մի ուրիշ տեղ էլ խուզարկել, եթե չեք ամաչում։

— Ոչ, առայժմ պետք չէ։

— Ինչ է, հենց այսպես էլ մե՞րկ եմ մնալու,— ավելացրեց նա մոլեգնորեն։

— Այո, առայժմ այդպես է պետք... Բարի եղեք առայժմ այստեղ նստելու, կարող եք անկողնից վերցնել ծածկոցը և փաթաթվել, իսկ ես... ես այս բոլորը հիմա կկարգադրեմ։

Բոլոր իրերը ցույց տվեցին ենթավկաներին, կազմեցին խուզարկության ատենագրությունը, և վերջապես Նիկոլայ Պարֆյոնովիչը դուրս գնաց, իսկ հագուստը տարան նրա ետևից։ Իպոլիտ Կիրիլովիչը նույնպես դուրս գնաց։ Միտյայի մոտ մնացին միայն գյուղացիները, որոնք լուռ կանգնել էին ու իրենց հա-

յացքները չէին հեռացնում նրանից։ Միտյան վերցրեց ծածկոցը և փաթաթվեց. սկսել էր մրսել։ Մերկ ոտքերը դուրս էին ցցվել, և նա ոչ մի կերպ չէր կարողանում ծածկոցն այնպես հարմարեցնել իր վրա, որ ծածկի դրանք։ Նիկոլայ Պարֆյոնովիչը կարծես թե շատ ուշացավ, «տանջելու չափ շատ», «ինձ շան լակոտի տեղ է դնում», կրճատացնում էր ատամները Միտյան։ «Այդ անպիտան դատախազն էլ գնաց՝ իհարկե արհամարհելով ինձ, զզվեց մերկ մարդուն նայելուց»։ Միտյան այնուամենայնիվ ենթադրում էր, որ իր հագուստը կգնեն այնտեղ ու ետ կբերեն։ Բայց ինչպիսի՞ վրդովմունքով լցվեց նա հանկարծ, երբ Նիկոլայ Պարֆյոնովիչը վերադարձավ բոլորովին ուրիշ մի հագուստով, որ մի գյուղացի բերում էր նրա ետևից։

— Դե՛հ, ահա ձեզ հագուստ,— ասաց նա սանձարձակ մի շեշտով, ըստ երևույթին շատ գոհ լինելով, որ կարողացել էր հոգատարություն ցույց տալ։— Այս արտասովոր պարագաներում պարոն Կալգանովն է ձեզ ընծայում սրանք, ինչպես և մի մաքուր վերնաշապիկ։ Բարեբախտաբար հենց այս բոլորը կային նրա ճամպրուկի մեջ։ Կարող եք հագնել ձեր սեփական սպիտակեղենն ու գուլպաները։

Միտյան սոսկալի բորբոքվեց։

— Ջե՛մ ուզում ուրիշի հագուստը,— սպառնալից գոռաց նա,— ի՛մը տվեք։

— Անկարելի է։

— Տվե՛ք իմը, գրողի ծո՛ցը Կալգանովին, նրա հագուստն էլ, իրեն էլ։

Երկար աշխատեցին համոզել նրան։ Բայց մի կերպ հանգստացրին։ Հասկացրին, որ նրա հագուստը, արյունոտ լինելով, պետք է «մտցվի իրեղեն ապացույցների ցուցակի մեջ», և որ հիմա հագուստը նրան վերադարձնելու իրավունք անգամ չունեն... Նկատի առնելով, թե ո՛վ գիտե ինչ եղք կունենա գործը։ Միտյան մի կերպ հասկացավ այդ բանը վերջապես։ Մռայլորեն լռեց և սկսեց շտապ հագնվել։ Միայն թե հագնվելու ժամանակ ասաց, որ սա ավելի շքեղ է, քան իր հին հագուստը, և որ ինքը չէր ուզենա «օգտվել»։ Բացի այդ, «խայտառակորեն նեղ է այս հագուստը։ Ինչ է, ծաղրածուի դե՞ր եմ խաղալու սրանով... ձեր հաճույքի՞ համար»։

Նորից նրան հասկացրին, որ այս հարցում էլ չափազանցում է. պարոն Կալգանովը թեև ավելի բարձրահասակ է նրանից,

բայց ոչ այնքան, և գուցե տաբատը միայն երկար լինի մի քիչ։ Բայց սերթուկի ուսերն իսկապես նեղ եկան։

— Գրո՛ղը տանի, կոճկելն էլ դժվար է,— քրթմնջաց նորից Միտյան։— Բարի եղեք խնդրեմ, հենց այս վայրկյանիս հաճեցեք իմ կողմից հաղորդել պարոն Կալգանովին, որ ես ինքս չեմ խնդրել նրա հագուստը, ինձ ստիպեցին հագնել ու խեղկատակ դարձրին այսպես։

— Նա շատ լավ հասկանում է այդ բանը և ցավում է... այսինքն ոչ թե իր հագուստի համար է ցավում, այլ, ճիշտն ասած, այս ամբողջ դեպքի համար...— կմկմաց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Թքե՛լ եմ նրա ցավելու վրա։ Է՛հ, ո՞ւր գնամ հիմա։ Կամ թե շարունակե՞մ նստել այստեղ։

Խնդրեցին, որ նորից անցնի «այն սենյակը»։ Միտյան դուրս եկավ, զայրույթից մռայլված, աշխատելով ոչ ոքի չնայել։ Ուրիշ հագուստով նա իրեն բոլորովին խայտառակված էր զգում, նույնիսկ այդ գյուղացիների և Տրիֆոն Բորիսովիչի առաջ, որի դեմքը հանկարծ, չգիտես ինչու, երևաց գռան մեջ ու անհայտացավ։ «Եկավ մի աչք գցելու իմ կերպարանքի վրա»,— մտածեց Միտյան։ Նստեց իր նախկին տեղը՝ նույն աթոռին։ Ամեն ինչ մղձավանջային ու անհեթեթ էր երևում աչքին. թվում էր իրեն, թե խելքը կորցրել է։

— Է՛հ, հիմա՞ ինչ, սկսելու եք ճիպոտներով ծեծել, հը՞, էլ ուրիշ բան չմնաց, չէ՞,— հրճատացրեց նա ատամները, դիմելով դատախազին։ Նիկոլայ Պարֆյոնովիչի կողմը գառնալ անգամ չէր ուզում արդեն, կարծես արժանի էլ չհամարելով նրա հետ խոսել։ «Ջափից ավելի ուշադիր զննում էր իմ գուլպաները, որպեսզի բոլորին ցույց տա, թե ինչ կեղտոտ է իմ սպիտակեղենը»։

— Այ հիմա պետք է անցնենք վկաների հարցաքննության,— ասաց Նիկոլայ Պարֆյոնովիչը, կարծես պատասխանելով Դմիտրի Ֆյոդորովիչի հարցին։

— Այո՛,— ասաց դատախազը մտախոհ, ասես նույնպես մի բանի մասին մտմտալով։

— Մենք, Դմիտրի Ֆյոդորովիչ, հենց ձեր օգտին արեցինք ամեն ինչ, որ կարող էինք,— շարունակեց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— բայց երբ գուք այդքան կտրականորեն մերժում եք բացատրել մեզ, թե որտեղից եք ձեռք բերել այն գումարը, որ գտնվեց ձեզ մոտ, մենք տվյալ բոպեին...

— Այդ ի՞նչ քար է ձեր մատանու վրա,— ընդհատեց հանկարծ Միտյան, կարծես մտասույզ մի վիճակից սթափվելով։ Նա մատով ցույց տվեց մեկն այն երեք խոշոր մատանիներից, որոնք զարդարում էին Նիկոլայ Պարֆյոնովիչի աջ ձեռքը։

— Մատանի՞,— կրկնեց Նիկոլայ Պարֆյոնովիչը զարմացած։

— Այո, ահա այդ մեկը... միջնամատի վրա, բարալիկ երակներով քարը, ի՞նչ քար է,— պնդում էր Միտյան մի տեսակ չղայնորեն, համառ երեխայի նման։

— Սխագույն տպազիոն է,— ժպտաց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— ուզո՞ւմ եք նայել, հանեմ...

— Չէ, չէ, մի՛ հանեք,— մոլեգնորեն գոռաց Միտյան, հանկարծ ուշքի գալով ու զայրանալով ինքն իր վրա,— մի՛ հանեք, պետք չէ... Գրո՛ղը տանի... Կեղտոտեցի՛ք իմ հոգին, պարոնայք։ Մի՞թե կարծում եք, որ կպահեի ձեզնից, եթե իրոք սպանած լինեի հորս. խորամանկությո՞ւն կանեի, կստեի՞, կթաքնվեի՞։ Ո՛չ, այդպիսի մարդ չէ Դմիտրի Կարամազովը, նա չէր կարող հանդուրժել այդ, և եթե ես մեղավոր լինեի, երդվում եմ՝ չէի սպասի ձեր գալուն, չէի սպասի, որ ծագի արևը, ինչպես մտադիր էի սկզբում, այլ դրանից էլ առաջ կոչնչացնեի՛ ինքս ինձ, էլ չսպասելով արշալույսին։ Հիմա ես ի՞նքս իմ մեջ զգում եմ այդ բանը։ Քսան տարի էլ ապրեի, չէի կարող այնքան բան սովորել, որքան իմացա այս մի անիծյա՛լ գիշերվա մեջ... Եվ ես այսպե՞ս, այսպե՞ս կլինեի այս գիշեր և ահա այս բոպեիս, երբ նստել եմ ձեզ հետ, այսպե՞ս կխոսեի, այսպե՞ս կշարժվեի, այսպե՞ս կնայեի ձեզ և աշխարհին, եթե իրոք հայրասպան լինեի. այնինչ՝ պատահաբար Գրիգորիին սպանած լինելու գաղափարն անգամ հանգիստ չէր տալիս ինձ ամբողջ գիշերը, ո՞չ թե վախից, օ՜, ոչ թե հենց միայն ձեր պատիժը կրելու վախից։ Նախատի՞նքը։ Եվ դուք ուզում եք, որ մեկ էլ նորից սի՞րտս բանամ ձեզ նման ծաղրասերների առաջ, որոնք ոչինչ չեն տեսնում և ոչ մի բանի չեն հավատում, ուզում եք, որ ձեզ նման կույր խլուրդներին ու ծաղրասերներին պատմե՞մ իմ մի ուրիշ ստորությունն էլ, մի ուրի՞շ խայտառակություն, թեկուզ և, ասենք թե, այդ բանը փրկեր ինձ ձեր մեղադրանքից։ Չէ՜, ավելի լավ է աքսորն ու տաժանակիր աշխատանքը։ Ով որ բացել է հորս տան դուռը և մտել է այդ դռնից, հենց նա էլ սպանել է հորս, հենց նա էլ կողոպտել է։ Իսկ ո՞վ է նա. չեմ կարողանում կռահել և շշմում եմ, տանջվում։ Բայց Դմիտրի Կարամազովը չէ՛ այդ մարդը, իմացե՛ք. ահա այս է այն ամբողջը, որ կարող եմ ասել ձեզ, և բավակա՞ն է, հանգիստ թողեք ինձ... Աքսորեցեք, մահապատիժ տվեք, բայց էլ մի՛ չղայնացնեք ինձ։ Բերանս փակում եմ։ Կանչեցեք ձեր վկաներին...

Միտյան իր անակնկալ մենախոսությունն ասաց այնպես, որ կարծես արդեն որոշել էր վերջնականապես լռել դրանից հետո։ Հազիվ էր նա բերանը փակել, երբ դատախազը, որ շարունակ հետևում էր Միտյային, հանկարծ ամենասառն ու ամենահանգիստ արտահայտությամբ սկսեց խոսել, կարծես ամենահասարակ մի բան ասելով.

— Ահա հենց այդ բաց դռան առիթով, որի մասին դուք խոսեցիք հիմա, կարող ենք հայտնել ձեզ, և հենց այս բոպեիս տեղը եկավ հայտնելու, թե ձեր ձեռքով վիրավորված ծերունի Գրիգորի Վասիլևը տվել է մի չափազանց հետաքրքրական ցուցմունք, որ վերին աստիճանի կարևոր է թե՛ ձեզ, թե՛ մեզ համար։ Ուշքի գալուց հետո, պատասխանելով մեր հարցերին, նա հստակորեն հաղորդեց մեզ ու պնդեց, որ դեռ այն ժամանակ, երբ ինքը դուրս է եկել, սանդուղքի վրա և այգում մի աղմուկ լսելով որոշել է իջնել ու այգի մտնել դռնակից, որը բաց է եղել այդ պահին, ապա ուրեմն, մտնելով այգի, նախքան տեսնելը, թե դուք, ինչպես արդեն ինքներդ հայտնեցիք մեզ, մթան մեջ փախչում եք այն բաց պատուհանից, որի մեջ տեսել էիք ձեր հորը, նա, Գրիգորին, մի հայացք նետելով ձախ կողմը և նկատելով իսկապես բաց եղող այդ պատուհանը, միաժամանակ շատ ավելի մոտից նկատել է նաև լրիվ բացված դուռը, այն դուռը, որի մասին դուք հայտարարեցիք, թե փակ է եղել ամբողջ ժամանակ, երբ դուք գտնվել եք այգում։ Ջեմ թաքցնում ձեզնից, որ Վասիլևն ինքը հաստատորեն եզրակացնում է ու վկայում, թե դուք պետք է այդ դռնից դուրս փախած լինեք, թեև, իհարկե, նա իր աչքերով չի տեսել ձեր փախչելը, քանի որ երբ առաջին անգամ նկատել է ձեզ՝ դուք արդեն նրանից մի որոշ հեռավորության վրա եք եղել, այգու մեջ, դեպի ցանկապատը փախչելիս...

Միտյան դեռ այդ ճառի կեսին վեր էր թռել աթոռից։

— Տխմարությո՞ւն է,— բղավեց նա հանկարծ կատաղորեն,— լկտի խաբեբայությո՞ւն։ Նա չէր կարող դուռը բաց տեսնել, ուրվհետև փակ էր այն ժամանակ... Սո՞ւտ է ասում...

— Պարտք եմ համարում կրկնել, որ նրա ցուցմունքը հաս-

տատ է։ Չի վարանում։ Պնդում է իր ասածը։ Մի քանի անգամ հարցրինք նրան։

— Ճիշտ այդպես, ինքս մի քանի անգամ հարցրի,— եռանդով հաստատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Սո՛ւտ է, սո՛ւտ։ Կա՛մ զրպարտություն է իմ դեմ, կամ էլ խելագարի ցնորք,— շարունակեց գոռալ Միտյան։— Պարզապես աչքին է երևացել զառանցանքի մեջ, արյունվա, երբ ուշքի է եկել՝ վերքից ուժասպառ... Եվ ահա զառանցում է։

— Այո, բայց չէ՞ որ նա բաց դուռը նկատել է ոչ թե վերավորվելուց և ուշքի գալուց հետո, այլ դրանից առաջ, երբ հենց նոր է այգի մտել բակի շենքից։

— Բայց սո՛ւտ է ախր, սո՛ւտ, չի կարող այդպես լինել։ Ինչը հանելու համար զրպարտում է ինձ... Չէր կարող այդպիսի բան տեսնել... Դռնից դուրս չե՞մ եկել ես,— խեղդվում էր Միտյան։

Դատախազը դարձավ Նիկոլայ Պարֆյոնովիչին և ազգու մի շեշտով ասաց նրան.

— Ցույց տվեք։

— Ձեզ ծանո՞թ է այս իրը,— հանկարծ Նիկոլայ Պարֆյոնովիչը սեղանին գրեց հաստ թղթից խոշոր, գրասենյակային չափսի մի ծրար, որի վրա դեռ մնացել էին երեք կնիքները։ Բայց ծրարը դատարկ էր ու մի ծայրից պատռված։ Միտյան չռված աչքերով նայեց գրան։

— Դա... դա ուրեմն հոբս ծրարն է,— մրթմրթաց նա,— հենց այն ծրարը, որի մեջ այդ երեք հազարն էր... և եթե վրան մակագրություն կա... ներողություն, ահա՝ ահուտիկին... ահա՛, երեք հազար,— գոռաց նա,— երե՞ք հազար, տեսնո՞ւմ եք։

— Դե իհարկե, տեսնում ենք, բայց մեջը գրամ չկա՝ դատարկ էր ու քնկած էր հատակին, մահճակալի մոտ, ձեղկի ետև։

Միտյան մի քանի վայրկյան շշմածի նման կանգնեց մնաց։

— Պարոնա՛յք, Սմերդյակո՛վն է,— գոռաց հանկարծ ամբողջ ուժով,— նա՛ է սպանել, նա՛ է կողոպտել։ Միայն նա՛ գիտեր, թե ծերուկը որտեղ է պահել այս ծրարը... Նա է, նա՛, պարզ է հիմա։

— Բայց չէ՞ որ դուք էլ գիտեիք այս ծրարի մասին ու գիտեիք նաև, որ գրված էր բարձի տակ։

— Երբե՛ք չգիտեի, երբեք էլ չեմ տեսել, առաջին անգամն

եմ տեսնում հիմա, իսկ առաջ Սմերդյակովից եմ լսել միայն... Նա՛ միայն գիտեր, թե որտեղ է պահել ծերուկը, ես չգիտեի՛...— լրիվ շնչահեղձ էր լինում Միտյան։

— Եվ սակայն դուք ինքներդ քիչ առաջ հայտնեցիք մեզ, թե ծրարը դրված էր ձեր հանգուցյալ հոր բարձի տակ։ Հենց այդպես էլ ասացիք՝ բարձի տակ, ուրեմն գիտեիք, թե որտեղ էր դրված։

— Մենք այդպես էլ արձանագրեցինք,— հաստատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Հիմարությո՛ւն է, անհեթեթ բան։ Բոլորովին էլ չգիտեի, որ բարձի տակ էր։ Գուցե բնավ էլ բարձի տակ չէր... Ես հենց այնպես ասացի, թե բարձի տակ էր, պատահաբար ասացի... Իսկ ի՞նչ է ասում Սմերդյակովը։ Հարցրի՞ք նրան՝ ծրարը որտեղ էր։ Ի՞նչ է ասում Սմերդյակովը։ Այդ է գլխավորը... Իսկ ես դիտմամբ սուտ բաներ ասացի ինքս իմ դեմ... Առանց մտածելու փչեցի, թե բարձի տակ էր, իսկ դուք հիմա... Դե գիտե՞ք ինչ, հանկարծ բերնիցդ է թռնում, և ահա մի սուտ բան է՝ փչում ես։ Միա՛յն Սմերդյակովը գիտեր, միայն ու միայն Սմերդյակովը, ուրիշ ո՛չ ոք... Նա ինձ էլ չասաց ծրարի տեղը։ Բայց նա՛ է արել, նա՛։ Ոչ մի տարակույս՝ նա՛ է սպանել, հիմա ինձ համար պարզ է լույսի նման,— բացականչում էր Միտյան ավելի ու ավելի մոլեգնելով, անկապորեն կրկնելով ասածը, տաքանալով, կատաղելով։— Հասկացե՛ք այս բանը և ձերբակալեցե՛ք նրան՝ շուտ, շո՛ւտ... Հենց նա է սպանել, երբ ես փախչում էի, Գրիգորին էլ ընկել էր ուշաթափված, պարզ է հիմա, պարզ... Նա է թիկացրել նշանը, և հայրս բացել է նրա առաջ... Որովհետև նա՛ միայն գիտեր նշանները, իսկ հայրս ոչ ոքի առաջ չէր բանա դուռը առանց այդ նշանների...

— Բայց նորից դուք մոռանում եք այն հանգամանքը,— նկատեց դատախազն առաջվա նման զուսպ, բայց արդեն մի տեսակ հաղթական շեշտով,— որ կարիք էլ չկար նշանը թիկացնելու, եթե դուռը բաց էր արդեն ձեր այնտեղ եղած ժամանակ, երբ դեռ դուք այգում էիք գտնվում...

— Դուռը, դուռը,— մրմնջաց Միտյան և, համբանալով, աչքերը հառեց դատախազին, նորից աթոռի վրա ընկավ թուլացած։ Բոլորը լուռ մնացին։— Այո, դո՛ւռը... Ցնո՞րք է։ Աստվա՛ծ էլ դեմ է ինձ,— բացականչեց նա, արդեն բոլորովին մոակորույս հայացքով նայելով առաջը։

— Տեսնո՞ւմ եք ահա,— ասաց դատախազը ծանրակշիռ կերպով։— Եվ հիմա ինքներդ դատեցեք, Դմիտրի Ֆյոդորովիչ։ Մի կողմից՝ այդ ցուցմունքը բաց դռան մասին, որտեղից դուք դուրս եք վազել, մի ցուցմունք, որ ձեզ էլ է ընկճում, մեղ էլ։ Մյուս կողմից ձեր անհասկանալի, համառ ու գրեթե անդրդվելի լռությունը, որով հրաժարվում եք ասել, թե որտեղից եք ճարել այդ գրամը, մի գումար, որ հանկարծ հայտնվել է ձեր ձեռքում, այնինչ դեռ դրանից երեք ժամ առաջ, ձեր իսկ տված ցուցմունքի համաձայն, դուք գրավ եք դրել ձեր ատրճանակները, որպեսզի տա՞նը ռուբլի միայն ստանաք։ Նկատի ունենալով այս բոլորը, ինքներդ որոշեցեք՝ ո՞ր փաստին հավատանք և ո՞ր փաստի վրա հենվենք։ Եվ մի՛ մեղադրեք մեզ, որ «սառնասիրտ, անպատկառ ու ծաղրասեր մարդիկ» ենք և ընդունակ չենք ձեր հոգու ազնիվ մղումներին հավատալու... Ընդհակառակը, մեր վիճակի մեջ էլ մտեք...

Միտյան աներևակայելիորեն հուզվել էր։ Մեկեն գունատվեց։

— Լա՛վ,— բացականչեց նա հանկարծ,— կհայտնեմ ձեզ իմ գաղտնիքը, կասեմ, թե որտեղից եմ փողը վերցրել... Մեջտեղ կհանեմ իմ անպատվությունը, որպեսզի հետո ո՛չ ձեզ մեղադրեմ, ո՛չ էլ ինձ...

— Եվ հավատացեք, Դմիտրի Ֆյոդորովիչ,— վրա բերեց Նիկոլայ Պարֆյոնովիչը՝ մի տեսակ ուրախությունից փափկած ձայնով,— հավատացեք, որ հենց այս բոպեիս արված ձեր ամեն մի անկեղծ ու լիակատար խոստովանությունը հետագայում կարող է մեծապես նպաստել ձեր վիճակի թեթևացմանը և նույնիսկ, բացի այդ...

Սակայն դատախազը մի թեթև մշտեց նրան սեղանի տակ, և Նիկոլայ Պարֆյոնովիչը կարողացավ ճիշտ ժամանակին խոսքը կտրել։ Թեև, ճիշտն ասած, Միտյան չէր լսում նրան։

VII

ՄԻՏՅԱՅԻ ՄԵԹ ԳԱՂՏՆԻՔԸ։ ԾՎԱՑՆՈՒՄ ԵՆ

— Պարոնա՛յք,— սկսեց նա նույն հուզմունքով,— այդ փողը... ես ուզում եմ լրիվ խոստովանել... այդ փողը իմն էր։

Դատախազի ու քննիչի դեմքերը նույնիսկ կախ ընկան. բոլորովին այդ չէր նրանց սպասածը։

— Ինչպես թե ձերը,— կմկմաց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— երբ դեռ նույն օրը ժամը հինգին, ձեր իսկ խոստովանությամբ...

— Է՜, գրո՛ղը տանի նույն օրվա ժամը հինգն էլ, իմ խոստովանությունն էլ, խնդիրն այդ չէ հիմա։ Իմն էր այդ փողը, իմը, այսինքն իմ գողացածը... ոչ թե իմը այսինքն, այլ գողացված փող էր, ես էի գողացել, և հազար հինգ հարյուր ռուբլի էր, մոտս էի պահում, միշտ մոտս էի պահում...

— Բայց որտեղի՞ց եք վերցրել։

— Իմ վզից եմ վերցրել, պարոնայք, վզից, ա՛յ հենց այս իմ վզից... Այստեղ էր փողը, վզիս վրա, լաթի մեջ կարել ու կախել էի վզիցս, վաղո՜ւց, արդեն մի ամիս է՝ վզիս վրա կրում էի այդ փողը, ամոթով ու անպատվությամբ։

— Բայց ումի՞ց... յուրացրիք։

— Ուզում էիք ասել՝ «գողացաք», չէ՞։ Բառերը ուղղակի ասացեք հիմա։ Այո, ես համարում եմ, որ միևնույն է՝ գողացել եմ այդ փողը, իսկ եթե ուզում եք՝ «յուրացրել» եմ իրոք։ Բայց, ըստ իս, գողացել եմ։ Իսկ երեկ իրիկուն հենց ուղղակի գողացա արդեն։

— Երեկ իրիկո՞ւն։ Բայց դուք հիմա ասացիք, որ արդեն մի ամիս է, ինչ... ձեռք եք բերել։

— Այո, բայց ոչ թե հորիցս, ո՛չ թե հորիցս, մի՛ անհանգստանաք, ոչ թե հորիցս եմ գողացել, այլ այն օրիորդից։ Թողեք պատմեմ և մի՛ ընդհատեք։ Ծանր բան է։ Հասկանո՞ւմ եք՝ մի ամիս առաջ ինձ կանչեց Կատերինա Իվանովնա Վերխովցևան, իմ նախկին հարսնացուն... Ճանաչո՞ւմ եք նրան։

— Ինչպես թե, անշուշտ։

— Գիտեմ, որ ճանաչում եք։ Ազնվագույն մի հոգի, ազնիվների մեջ ազնվագույնը, որ սակայն ատում է ինձ, օ՜, վաղուց արդեն, վաղուց... և իրավունքով, իրավունքո՜վ է ատում։

— Կատերինա Իվանովնա՞ն,— զարմացած հարցրեց քննիչը։ Դատախազը նույնպես աչքերը սոսկալի սևեռեց։

— Օ՜, իզուր մի՛ առնեք նրա անունը ձեր բերանը։ Սրիկա՛ եմ ես, որ նրան էլ մեջտեղ եմ բերում։ Այո, ես տեսնում էի, որ նա ատում էր ինձ... վաղուց... հենց առաջին անգամից... հենց այն օրից, երբ իմ բնակարանում, դեռ այնտեղ... Բայց բավակա՞ն է, բավակա՞ն է, դուք արժանի էլ չեք այդ բանը իմանալու, պետք չէ, բոլորովին պետք չէ... Միայն մի բան պետք է ասեմ. մի ամիս առաջ նա կանչեց ինձ, երեք հազար ռուբլի

տվեց, որպեսզի Մոսկվա ուղարկեմ՝ իր քրոջը և իր մի ուրիշ ազգականուհուն (կարծես թե ի՞նքը չէր կարող ուղարկել), իսկ ես... դա իմ կյանքի հենց այն ճակատագրական պահն էր, երբ ես... դե մի խոսքով՝ երբ ես հենց նոր սիրել էի ուրիշին, նրան, հիմակվա իմ... այ նա հիմա նստել է ներքևում, Գրուշենկան... ես այն ժամանակ նրան բերեցի այստեղ՝ Մոկրոե, երկու օրում վատնեցի այդ անիծյալ երեք հազարի կեսը, այսինքն հազար հինգ հարյուր ռուբլի, իսկ մյուս կեսը պահեցի մոտս։ Ահա ուրեմն այդ իմ պահած հազար հինգ հարյուրն էր, որ կրում էի վզիս, հուռութի պես, իսկ երեկ հանեցի այդ փողը և ծախսեցի։ Ուրեմ հարյուր ռուբլի մնացորդը ձեր ձեռքումն է հիմա, Նիկոլայ Պարֆյոնովիչ, երեկվա հազար հինգ հարյուրի մնացորդն է դա։

— Ներեցեք, ինչպե՞ս թե, չէ՞ որ դուք երեք հազար եք ծախսել այստեղ մի ամիս առաջ, և ոչ թե հազար հինգ հարյուր։ Բոլորը գիտեն, չէ՞։

— Իսկ ո՞վ գիտե, ո՞վ։ Ո՞վ է հաշվել։ Ո՞ւմ եմ ես հաշիվ տվել։

— Ներեցեք, բայց դուք ինքներդ եք ասել բոլորին, թե ուզիղ երեք հազար եք ծախսել այդ ժամանակ։

— Ճիշտ է, ասել եմ, ամբողջ քաղաքին եմ ասել, ամբողջ քաղաքն էր խոսում, բոլորն այդպես էին կարծում, և այստեղ էլ՝ Մոկրոեում էլ բոլոր կարծում էին, թե երեք հազար էր։ Բայց ինչ էլ կարծեն, ես ոչ թե երեք հազար, այլ հազար հինգ հարյուր ծախսեցի, իսկ մյուս կեսը կարեցի լաթի մեջ ու վզիս կախեցի։ Ահա այսպես է եղել բանը, պարոնայք, ահա թե որտեղից երեկվա փողը...

— Դա գրեթե հրաշքի նման է...— կմկմաց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Թույլ տվեք հարցնել,— ասաց ի վերջո դատախազը,— այդ հանգամանքի մասին ոնոնց որևէ մեկին չե՞ք հայտնել մինչև հիմա... այսինքն թե՝ այդ հազար հինգ հարյուրը պահել եք ձեզ մոտ հենց այն ժամանակ, մեկ ամիս առաջ։

— Ոչ ոքի չեմ ասել։

— Տարօրինակ է։ Հենց այնպես էլ ոչ ոքի չե՞ք հայտնել, բացարձակապե՞ս։

— Բացարձակապես ոչ ոքի։ Ոչ ոքի, ոչ մեկին։

— Բայց ի՞նչն է նման գաղտնապահության պատճառը։ Ի՞նչը դրդեց ձեզ այդպիսի մի գաղտնիք գաղտնել այդ բանը։

Միտքս ավելի հստակ բացատրեմ. դուք վերջապես հայտնեցիք մեզ ձեր գաղտնիքը, որ ըստ ձեր ասածի այնքա՞ն «անպատվաբեր» է, թեև ըստ էության, այսինքն իհարկե համեմատաբար ասած, այդ արարքը, այսինքն հենց ուրիշի երեք հազար ռուբլին յուրացնելը, և միայն ժամանակավորապես անհասկած, այդ արարքը, գոնե իմ տեսակետով, վերին աստիճանի թեթևամիտ մի արարք է պարզապես, բայց ոչ այնքան անպատվաբեր, նկատի առնելով, բացի այդ, նաև ձեր նկարագիրը... Դե ասենք նույնիսկ վերին աստիճանի ամոթաբեր արարք է, համաձայն եմ, բայց ամոթաբեր, և ոչ համենայն դեպս անպատվաբեր... Այսինքն, ճիշտն ասած, խնդիրն այն է, որ այս վերջին ամսվա ընթացքում, առանց ձեր խոստովանության էլ, շատերն արդեն կռահել էին, որ այդ երեք հազարը վերցրել եք օրիորդ Վերխովցևայից ու վատնել եք։ Թեև անձամբ լսել եմ այդ առասպելը... Միխայիլ Մակարովիչը, օրինակ, նույնպես լսել է։ Այնպես որ դա ի վերջո առասպել իսկ չէ արդեն, այլ ամբողջ քաղաքում տարածված բամբասանք։ Բացի այդ, նշաններ կան, որ դուք ինքներդ էլ, եթե չեմ սխալվում, այդ բանը խոստովանել եք ինչ-որ մեկին, այսինքն թե այդ դրամը վերցրել էիք օրիորդ Վերխովցևայից... Ուստի ինձ չափազանց զարմացնում է, որ դուք մինչև հիմա, այսինքն մինչև հենց այս րոպեն, այդպիսի արտասովոր մի գաղտնիք եք դարձրել այդ հազար հինգ հարյուր ռուբլին, որ մի կողմ եք դրել ձեր ասելով, և նույնիսկ ինչ-որ սարսափելի բանի բնույթ եք տվել ձեր այդ գաղտնիքին... Անհավատալի է, որ այդպիսի մի գաղտնիք խոստովանելը կարող էր այնքա՞ն տանջանքներ արժել ձեզ համար... որովհետև դուք հիմա նույնիսկ զոռում էիք, որ ավելի լավ է աքսորն ու տաժանակրությունը, քան խոստովանելը...

Դատախազը լռեց։ Տաքացել էր հա։ Չէր թաքցնում իր վրդովմունքը, համարյա զայրույթը, և դուրս տվեց ամեն ինչ, որ կուտակվել էր իր մեջ, նույնիսկ չմտածելով ոճի գեղեցկության մասին, այսինքն անկապակից ու մինչև իսկ խառնափնթոր խոսելով։

— Ոչ թե հազար հինգ հարյուր ռուբլին էր անպատվությունը, այլ այն, որ այդ հազար հինգ հարյուրը անջատել էի երեք հազարից,— ասաց Միտյան անդրդվելիորեն։

— Հետո ի՞նչ,— ջղայնորեն քմծիծաղեց դատախազը,— ի՞նչ մի անպատվություն է այն, որ ըստ ձեր հայեցողության մի կողմ եք դրել երեք հազարի կեսը, այն երեք հազարի, որ արդեն

վերցրել եք ամոթաբեր ձևով և կամ, եթե ուզում եք, թեկուզ և անպատվաբեր ձևով։ Ավելի կարևոր է այն, որ դուք յուրացրել եք երեք հազարը, և ոչ թե այն, թե ինչպես եք տնօրինել այդ դրամը։ Ի դեպ, ինչո՞ւ եք հենց այդպես տնօրինել, այսինքն առանձնացրել եք այդ կեսը։ Ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակով եք այդպես արել, կարո՞ղ եք բացատրել մեզ։

— Օ՜ պարոնայք, հենց նպատակն է ամբողջ խնդիրը,— բացականչեց Միսյան։— Առանձնացրի, որովհետև ստոր էի, այսինքն հաշիվ ունեի, իսկ այս դեպքում հենց հաշիվն է ստորությունը... Եվ այդ ստորությունը շարունակվեց մի ամբողջ ամիս։

— Անհասկանալի է։

— Զարմանում եմ ձեզ վրա։ Բայց ավելի պարզ բացատրեմ, գուցե իրոք անհասկանալի է։ Լսեցեք հիմա, հետևեցեք իմ ասածին։ Ցուրացնում եմ երեք հազարը, որ հանձնել է ինձ վստահելով իմ պատվին, քեֆ եմ անում այդ փողով, մսխում ամբողջը, առավոտյան գնում եմ նրա մոտ և ասում. «Կատյա, մեղավոր եմ, վատնեցի քո երեք հազարը»։ Է՛հ, լա՞վ բան է դա։ Ոչ, լավ չէ, անաղնիվ բան է, փոքրոգի, դաղանային բան. մի մարդ, որ գազան դառնալու չափ անզուսպ է, հա՞, այնպես չէ՞։ Բայց համենայն դեպս գող չեմ տակավին։ Ձեք կարող ասել, որ ուղղակի գող եմ, չեք կարող, համաձայնվեցե՛ք։ Վատնել եմ, բայց չեմ գողացել։ Հիմա՝ երկրորդ պարագան, որ ավելի ևս նպաստավոր է. հետևեցեք իմ ասածին, թե չէ նորից կարող եմ շփոթվել, գլուխս պտտվում է մի տեսակ։ Ուրեմն երկրորդ պարագան. այստեղ վատնում եմ միայն հազար հինգ հարյուր ռուբլի այդ երեք հազարից, այսինքն կեսը։ Մյուս օրը գնում եմ մոտը և այդ կեսը տալիս եմ նրան. «Կատյա, վերցրու այս կեսը ինձնից՝ թշվառական ու թեթևամիտ մի սրիկայից, որովհետև փողի կեսը վատնել եմ, ուրեմն այս կեսն էլ կվատնեմ, այնպես որ գլուխս ազատի՛ր մեղքից»։ Է՛հ, ի՞նչ կասեիք այս դեպքում։ Ի՞նչ որ ուզեք՝ և գազան, և սրիկա, բայց գո՞ղ, ոտից գլուխ գո՞ղ՝ ո՛չ երբեք. որովհետև եթե գող լինեի, մնացած կեսը ետ չէի տա իհարկե, այլ կյուրացնեի։ Նա անմիջապես տեսնում է, որ քանի որ բերել եմ կեսը, ուրեմն մնացածն էլ կբերեմ, այսինքն վատնածս. ամբողջ կյանքումս կշանամ ճարել այդ գումարը, թեկուզ աշխատանքի կգնամ, բայց կճարեմ ու կվերադարձնեմ։ Այդպիսով, կարող եմ սրիկա լինել, բայց գո՞ղ, գո՞ղ՝ ո՛չ երբեք, բնա՛վ, կարող եք ամեն ինչ ասել, բայց ո՛չ գող։

— Ասենք, թե մի որոշ տարբերություն կա,— սառնորեն քմծիծաղ տվեց դատախազը։— Բայց համենայն դեպս տարօրինակ է, որ դուք դրա մեջ այդպիսի ճակատագրական տարբերություն եք տեսնում։

— Այո՛, այդպիսի ճակատագրական տարբերություն եմ տեսնում։ Ամեն մարդ կարող է սրիկա լինել, և գուցե իրոք էլ ամեն մարդ սրիկա է, բայց ամեն մարդ չի կարող գող լինել, միա՛յն գերբրիկան է ընդունակ։ Դե ես այդպիսի նրբությունները քննարկել չգիտեմ... Միայն՝ գողը սրիկայից էլ ստոր է, ահա իմ համոզմունքը։ Լսեցե՛ք. մի ամբողջ ամիս փողը մոտս եմ պահում, վաղն եթե կարող եմ վճռական լինել ու ետ տալ, և արդեն սրիկա չեմ լինի, բայց հենց վճռե՛լ չեմ կարողանում, հասկանո՞ւմ եք, թեև ամեն օր աշխատում եմ վճռել, ամեն օր մղում եմ ինքս ինձ՝ «վճռիր, վճռի՛ր, սրիկա՛», և ահա ամբողջ մի ամիս չեմ կարողանում վճռել, հասկանո՞ւմ եք։ Դե ինչ է, լա՞վ է այսպես, լա՞վ է ձեր կարծիքով, հը՞։

— Ասենք թե այնքան էլ լավ չէ, ես հիանալի կարող եմ հասկանալ այդ բանը և չեմ վիճում դրա դեմ,— զուսպ պատասխանեց դատախազը։— Եվ առհասարակ մի կողմ թողնենք բոլոր հակաճառությունները այդ նրբությունների և տարբերությունների մասին, և լավ կլիներ, որ հաճեիք նորից բուն խնդրին անցնել։ Իսկ խնդիրը հենց այն է, որ դուք դեռ չբարեհաճեցիք բացատրել մեզ, թեև մենք հարցրինք՝ ինչո՞ւ ամենից առաջ երկու մասի բաժանեցիք այդ երեք հազարը, այսինքն մի կեսը մսխեցիք, իսկ մյուս կեսը պահեցիք։ Հատկապես ի՞նչ նպատակով պահեցիք, հատկապես ինչի՞ համար ուզում էիք օգտագործել ձեր այդ առանձնացրած հազար հինգ հարյուր ռուբլին։ Ես պնդում եմ այս հարցը, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Հա՜, այո, իսկապես,— գոչեց Միսյան, ձեռքը խփելով ճակատին,— ներեցեք, տանջում եմ ձեզ, բայց ամենակարևորը չեմ բացատրում, թե չէ դուք մի վայրկյանում կհասկանայիք, որովհետև հենց այդ նպատա՛կը, այդ նպատա՛կն է անպատվությունը։ Հասկանո՞ւմ եք, խնդիրը այդ ծերուկն է նորից, հանգուցյալը. նա անընդհատ խոսվում էր Ագրաֆենա Ալեքսանդրովնային, իսկ ես խանդում էի և այն ժամանակ մտածում, որ նա տատանվում է իմ և ծերուկի միջև։ Եվ ահա ամեն օր մտահոգվում էի՝ ի՞նչ պետք է անեմ, եթե հանկարծ որոշում տա Գրուշենկան, եթե հոգնի ինձ տանջելուց և հանկարծ ասի՝ «Քեզ եմ սի-

բում, ոչ թե նրան, տար ինձ աշխարհի մյուս ծայրը»։ Ընդամենը մի երկու հատ քանկոպեկանոց ունեմ, ինչո՞վ կարող եմ տանել նրան, ի՞նչ անեմ այդ դեպքում։ Ուրեմն կորա... Ես չէ՞ճանաչում նրան այդ ժամանակ, չէի հասկանում նրան, կարծում էի՝ նրան փող է պետք և չի ների ինձ, որ աղքատ եմ։ Եվ ահա ես ենթադրեն հաշվեցի այդ երեք հազարի կեսը, առանձնացրի, ետնասրտորեն կարեցի լաթի մեջ, դեռ հարբելուց առաջ կարեցի, և հետո երբ արդեն կորել պրծել էի՝ մնացած կեսը վերցրի ու ընացի խմելու։ Չէ՞, դա ստորությո՞ւն է։ Հասկացա՞ք հիմա։

Գատախաղը բաձրաձայն ծիծաղեց, քննիչը՝ նույնպես։

— Ես նույնիսկ խոհեմ ու բարոյական եմ համարում, որ զսպել եք ձեզ և ամբողջ դրամը չեք մսխել,— քրքջաց Նիկոլայ Պարֆյոնովիչը,— որովհետև, ճիշտն ասած, ի՞նչ մի ռոսկալի բան կա դրա մեջ։

— Ի՞նչ։ Գողացել եմ, գողացե՞լ, այդ է սոսկալին։ Օ՜ ասված իմ, դուք ինձ սարսափեցնում եք ձեր անհասկացողությամբ։ Ամբողջ ժամանակ, որ այդ հազար հինգ հարյուրը պահում էի կրծքիս, լաթի մեջ կարված, ամեն օր ու ամեն ժամ ասում էի ինքս ինձ. «Գո՜ղ ես դու, գո՜ղ»։ Ինչո՞ւ էի կատաղել մի ամբողջ ամիս, ինչո՞ւ էի կռվում գինետունը, ինչո՞ւ ծեծեցի հորս, ինչո՞ւ, որովհետև գող էի զգում ինձ։ Նույնիսկ չկարողացա սիրտ անել, չհամարձակվեցի այդ հազար հինգ հարյուր ռուբլու մասին հայտնել եղբորս՝ Ալյոշային. ա՞յն աստիճան զգում էի, որ սրիկա եմ, մի ողորմելի գրպանահատ։ Բայց իմացե՞ք, քանի դեռ կրծքիս էր այդ փողը, ես միաժամանակ ամեն օր և ամեն ժամ ասում էի ինքս ինձ. «Չէ՞, Դմիտրի Ֆյոդորովիչ, դու գուցե գող չես տակավին»։ Ինչո՞ւ։ Հենց որովհետև կարող ես վազը գնալ ու հազար հինգ հարյուրը ետ տալ Կատյային։ Եվ ահա երեկ միայն վճռականությունն ունեցա վզիցս պոկելու իմ հուսությը, երբ Ֆենյայի տնից գնում էի Գերասիմի մոտ, իսկ մինչև այդ րոպեն սիրտ չէի անում. և հենց որ պոկեցի, նույն րոպեին արդեն վերջնականապես գող դարձա, ուղղակի գող ու անազնիվ մարդ՝ մինչև կյանքիս վերջը։ Ինչո՞ւ։ Որովհետև հուսության հետ պատռեցի նաև այն բաղձանքը, որ ինձ մղում էր գնալ ու ասել Կատյային։ «Ես սրիկա եմ, բայց ո՞չ գող»։ Հասկանո՞ւմ եք հիմա, հասկանո՞ւմ եք։

— Իսկ ինչո՞ւ հենց երեկ իրիկուն վճռեցիք այդ բանը,— ընդհատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Ինչո՞ւ։ Միծաղելի է հարցնելը։ Որովհետև մահվան էի դատապարտել ինքս ինձ. առավոտյան ժամը հինգին, այստեղ, լուսածագին։ «Մինչև այնք չէ՞, մտածեցի, որպես սրիկա՞ ես մեռնում, թե որպես ազնիվ մարդ»։ Բայց ահա պարզվեց, որ ո՞չ, մինչև այնք չէ՞։ Հավատացեք, պարոնայք, ամբողջ գիշերը տանջվում էի, բայց ոչ թե, ո՞չ թե այն պատճառով, որ ծերունի ծառային եմ սպանել և Սիբիր գնալու վտանգն է կախվել գլխիս, այն էլ ե՞րբ... երբ պսակներո՞վ է զարդարվել իմ սերը և նորից երկինքն է բացվել իմ առաջ։ Օ՜, դա ինձ տանջում էր, բայց ոչ այնքան. համենայն դեպս ոչ այնպես, ինչպես այն անիծյալ գիտակցությունը, թե վերջապես պոկեցի իմ կրծքից այդ անիծյա՛լ փողը և ծախսեցի և ուրեմն գո՛ղ եմ այլևս, գող եմ վերջնականորեն։ Օ՜ պարոնայք, նորից եմ ասում ձեզ, այրվող սրտով եմ ասում՝ շա՜տ բան իմացա այս գիշեր։ Իմացա, որ ոչ միայն սրիկայորեն ապրելն է անկարելի, այլև սրիկա մեռնելն իսկ անկարելի է... Չէ՞, պարոնայք, մարդ պետք է ազնի՛վ մեռնի...

Գունատ էր Միտյան։ Ուժասպառ ու տանջված մարդու տեսք ուներ դեմքը, հակառակ որ ծայր աստիճան հուզվել էր նա։

— Սկսում եմ հասկանալ ձեզ, Դմիտրի Ֆյոդորովիչ,— ծոր ավեց դատախազը մեղմորեն ու նույնիսկ մի տեսակ կարեկցանքով,— բայց այս ամբողջը, թույլ տվեք ասել, պարզապես ջղերի հարց է ըստ իս... ձեր վատառողջ ջղերի, ահա թե ինչ։ Եվ ինչո՞ւ, օրինակ, չազատվեիք գրեթե մի ամբողջ ամիս տևող այդպիսի տանջանքներից, չդեղչեիք ու չվերադարձնեիք այդ հազար հինգ հարյուրը այն օրիորդին, որ վստահել էր ձեզ այդ գրամը, ինչո՞ւ չբացատրեիք խնդիրը նրան, և հետո, նկատի առնելով ձեր այն ժամանակվա վիճակը, որ այնքա՜ն սարսափելի էր քան ձեր նկատրադրած, ինչո՞ւ չվերցնեիք այն կերպը, որ շատ բնականորեն կարող է մարդու միտքը գալ. այսինքն, ձեր սխալանքն ազնվորեն խոստովանելուց հետո, ինչո՞ւ հենց այդ օրիորդից էլ չխնդրեիք ձեր ծախսերի համար անհրաժեշտ գումարը, որ նա չէր մերժի անշուշտ, լինելով այդպիսի մեծասիրտ մի անձնավորություն և տեսնելով ձեր ծանր վիճակը, մանավանդ եթե գրամը ստացագրով վերցնեիք և կամ, վերջապես, թեկուզ այն նույն նրաշխիքով, որ ստացարկել եք վաճառական Սամսոնովին ու տիկին Խոխլակովային։ Կարծեմ մինչև հիմա էլ դեռ արժեքավոր եք համարում ձեր այդ երաշխիքը, չէ՞։

Միտյան հանկարծ կարմրեց.

— Բայց ի՞նչ է, նույնիսկ ա՞յդ աստիճան սրիկա եք համարում ինձ։ Լո՞ւրջ եք ասում այդ բանը. չի՞ կարող պատահել...— ասաց նա վրդովված, ուղղակի նայելով դատախազի աչքերին ու կարծես չհավատալով, որ այդպիսի բան է լսել նրանից։

— Հավատացնում եմ ձեզ, որ լուրջ եմ ասում... Ինչո՞ւ եք կարծում, որ լուրջ չէ,— զարմացավ իր հերթին դատախազը։

— Օ՜, ինչ ստո՜ր բան կլիներ դա։ Պարոնայք, գիտե՞ք, որ տանջում եք ինձ։ Խնդրե՜մ, ամեն ինչ ասեմ հիմա ձեզ, ուրիշ ճար չկա երևի, հիմա արդեն խոստովանեմ իմ ամբողջ դժոխային էությունը, բայց ձե՜զ ամաչեցնելու համար. և ինքներդ պիտի զարմանաք, թե ինչպիսի՜ ստորություն կարող է հասնել մարդկային զգացմունքների շփոթը։ Իմացեք ուրեմն, ես ինքս արդեն ունեի այդ ծրագիրը, այ հենց այն, ինչի մասին խոսեցինք հիմա, դատախա՜զ։ Այո, պարոնայք, ես էլ այդ միտքն եմ ունեցել այս ամբողջ անիծյալ ամսվա ընթացքում, այնպես որ համարյա վճռել էի արդեն գնալ Կատյայի մոտ, ա՞յդ աստիճան ստոր էի։ Բայց գնալ նրա մոտ, հայտնե՞լ նրան իմ դավաճանությունը և հենց նրանից էլ, հենց Կատյայից էլ փող խնդրել (խնդրել, լսո՞ւմ եք, խնդրե՜լ) հենց այդ դավաճանության համար, այդ դավաճանությունն իրագործելու համար, այդ դավաճանության պահանջած ծախսերի համար, և հետո անմիջապես նրանից փախչե՜լ ուրիշի հետ, նրա մրցակցի հետ, մի կնոջ հետ, որ ատում է նրան, անպատվել է նրան... Ներեցեք, բայց խելագարվե՜լ եք դուք, դատախա՜զ։

— Խելագարվել եմ թե չեմ խելագարվել, բայց... իհարկե, տաքացա մի քիչ ու հաշվի չառա... այ հենց այդ կանացի խանդը... եթե իսկապես կարող էր խանդ լինել այս հարցում, ինչպես հավատում եք... այո, կարծես թե այդ տեսակ մի բան կա,— ժպտաց դատախազը։

— Բայց դա արդեն այնպիսի՜ մի զզվանք կլիներ,— բղռունցքը կատաղորեն սեղանին խփեց Միտյան,— այնպիսի՜ մի գարշահոտություն, որ էլ չգիտե՜մ։ Եվ գիտե՞ք, որ նա կարո՞ղ էր տալ ինձ այդ փողը, և կտա՞ր, անպայման կտար, ինձնից վրե՜ժ լուծելու համար կտար, վրեժի հաճույքն զգալու, ինձ արհամարհելու համար կտար, որովհետև նա էլ դժոխային հոգի է, ահռելի ցասում ունեցող մի կին։ Իսկ ես կառնեի փողը, օ՜, կառնեի, այո, կառնեի, և հետո իմ ամբողջ կյանքում... օ՜

ասված իմ։ Ներեցեք, պարոնայք, ես այսպես գոռում եմ, որովհետև հենց վերջերս դեռ այդ միտքն ունեի, ընդամենը դեռ երկու օր առաջ, հենց այն գիշեր, երբ հոգիս հանեց այդ Լյագավին, և հետո՝ երեկ, այո, երեկ էլ, ամբողջ օրը, հիշում եմ, ուղղակի մինչև այս դեպքը...

— Մինչև ո՞ր դեպքը,— վրա բերեց Նիկոլայ Պարֆյոնովիչը հետաքրքրությամբ, բայց Միտյան լսեց։

— Ահավոր մի խոստովանություն արեցի ձեզ,— մռայլորեն եզրակացրեց նա։— Գնահատեցեք ուրեմն իմ ասածը, պարոնայք։ Բայց քիչ է դա, քիչ է գնահատելը, ոչ թե գնահատեցեք, այլ արժեքը իմացեք, իսկ եթե ոչ, եթե սրա՜ նկատմամբ էլ անտարբեր մնացին ձեր հոգիները, ուրեմն դուք արդեն ուղղակի չեք հարգում ինձ, պարոնայք, ա՜յ ասում եմ ձեզ, և ես ամոթի՜ց կմեռնեմ, որ խոստովանեցի ձեզ նման մարդկանց։ Օ՜, կսպանեմ ինքս ինձ։ Բայց տեսնում եմ արդեն, տեսնո՜ւմ եմ, որ չեք հավատում։ Ի՞նչ, ուրեմն ա՞յս էլ ուզում եք արձանագրել,— գոռաց նա արդեն վախեցած։

— Այ հենց այն, որ հիմա ասացիք,— զարմացած նայեց նրան Նիկոլայ Պարֆյոնովիչը,— այսինքն թե մինչև վերջին ժամն էլ դուք դեռ մտադիր էիք գնալ օրիորդ Վերխովցևայի մոտ և այդ գումարը խնդրել նրանից... Հավատացնում եմ ձեզ, դա շատ կարևոր ցուցմունք է մեզ համար, Դմիտրի Ֆյոդորովիչ, այսինքն ամբողջ այդ պարադան... և հատկապես ձե՜զ համար, հատկապես ձեզ համար է կարևոր։

— Դուք ունեցեք, պարոնայք,— ձեռքերն իրար զարկեց Միտյան,— գոնե այս բանը մի՜ դրեք, ամո՜թ ունեցեք։ Ես իմ հոգին պատռեցի ձեր առաջ, երկու կես արեցի, իսկ դուք օգտվում եք առիթից և երկու մասում էլ խառնում եք պատռվածքները ձեր մատներով... Օ՜ ասված իմ։

Հուսահատված՝ նա ձեռքերով ծածկեց դեմքը։

— Մի՜ անհանգստանաք այդպես, Դմիտրի Ֆյոդորովիչ,— ասաց դատախազը,— ամեն ինչ, որ արձանագրվում է հիմա, հետո ինքներդ կլսեք, և եթե համաձայն չլինեք որևէ բանի, կփոխենք ըստ ձեր ցանկության։ Իսկ հիմա երրորդ անգամ կրկնելու եմ մի փոքրիկ հարց. մի՞թե իսկապես ոչ ոք, հենց ուղղակի ոչ ոք չի լսել ձեզնից այն փողի մասին, որ կարել եք լաթի մեջ։ Ասեմ ձեզ, գրեթե անկարելի է պատկերացնել այդ բանը։

— Ո՛չ ոք, ո՛չ ոք, ասացի արդեն, այլապես դուք ոչինչ չեք հասկացել։ Հանգիստ թողեք ինձ։

— Խնդրեմ։ Այս հարցը պետք է պարզվի, և դրա համար դեռ շատ ժամանակ ունենք մեր առաջ, բայց առայժմ մտածեցեք՝ մենք գուցե տասնյակներով վկայություններ ունենք, որ հենց ինքներդ ամեն տեղ տարածել ու նույնիսկ գոռացել եք ձեր ծախսած այդ երեք հազարի մասին, եթե՞ք հազար, ոչ թե հազար հինգ հարյուր, և հիմա էլ դարձյալ, երեկվա դրամը ձեռք բերելուց հետո, նույնպես հաստատել եք շատերին իմացնել, թե նորից երեք հազար ռուբլի եք բերել ձեզ հետ...

— Ոչ թե տասնյակներով, այլ հարյուրներով վկայություններ ունեք ձեր ձեռքում, երկո՞ւ հարյուր վկայություն, երկո՞ւ հարյուր մարդ լսել է, հազա՞ր հոգի է լսել,— բացականչեց Միտյան։

— Դե այ, տեսնո՞ւմ եք, բոլորն են վկայում, բոլորը։ Եվ վերջապես բոլոր բառը մի որևէ բան նշանակում է, չէ՞։

— Ոչինչ էլ չի նշանակում։ Ես փչեցի, և իմ ետևից բոլորն էլ կրկնեցին իմ փչածը։

— Բայց ի՞նչ կարիք ունեիք այդպես «փչելու», ինչպես ասում եք։

— Է՜հ, սատանան գիտի։ Պարծենալու համար էր գուցե... հենց այնպես... թե տեսե՞ք՝ այսքան շատ փող եմ ծախսել, քեֆ եմ արել... Գուցե և մոռանալու համար այն փողը, որ կարել էի... այո՛, հենց դրա համար... գրո՛ղը տանի... քանի՞երորդ անգամն եք տալիս այդ հարցը։ Դե փչեցի՛, և վե՛րջ։ Փչել էի մի անգամ և էլ չուզեցի ուղղել։ Մարդ ինչո՞ւ երբեմն սուտ է փչում։

— Շատ դժվար է որոշել, Դմիտրի Ֆյոդորովիչ, թե ինչո՞ւ մարդ սուտ է փչում,— ասաց դատախազը ազդեցիկ շեշտով։— Բայց ասացեք, խոշո՞ր բան էր ձեր այդ հուսալի կոշածը, որ կախել էիք վզից։

— Ոչ, փոքր բան էր։

— Ի՞նչ մեծություն էր, օրինակ։

— Հարյուրական թղթադրամը կնոջից ծալեք, այ այդ մեծությունն։

— Լավ կլիներ, որ ցույց տայիք մեզ լաթի կտորները։ Պահել եք ձեր մի որևէ գրպանում, չէ՞։

— Է՜, գրո՛ղը տանի... ա՞յս ինչ հիմարություն է... չգիտեմ որտեղ են դրանք։

— Բայց ներեցեք, համենայն դեպս՝ որտե՞ղ և ե՞րբ եք հանել ձեր վզից։ Չէ՞ որ ինքներդ եք վկայում, որ տուն չեք գնացել։

— Այ երբ Ֆենյայի տնից դուրս եկա և գնում էի Պերխոտինի մոտ, ճանապարհին պոկեցի վզիցս և հանեցի փողը։

— Խավարի մե՞ջ։

— Դրա համար լո՞ւյս էր պետք։ Մատովս, հենց մի վայրկյանում արեցի։

— Առանց մկրատի՞, փողոցո՞ւմ։

— Հրապարակում էի կարծեմ։ Ի՞նչ մկրատ։ Հին լաթի կտոր էր, անմիջապես պատռվեց։

— Ի՞նչ արեցիք հետո այդ լաթը։

— Այնտեղ գցեցի։

— Ո՞ւր այսինքն։

— Դե հենց հրապարակում, էլի, առհասարակ հրապարակում։ Սատանան գիտե, թե հրապարակի ո՛ր մասն էր։ Բայց դա ձեր ինչի՞ն է պետք։

— Դա չափազանց կարևոր է, Դմիտրի Ֆյոդորովիչ, իրենցեն ապացույցներ՝ հենց ձեր ոգուին։ Ինչպե՞ս չեք ուզում հասկանալ այդ բանը։ Իսկ մեկ ամիս առաջ ո՞վ օգնեց ձեզ կարելու։

— Ոչ ոք չի օգնել, ինքս եմ կարել։

— Դուք կարել գիտե՞ք։

— Զինվորը պետք է իմանա կարել։ Բայց այդպիսի մի բան կարելու համար հմտություն էլ պետք չէ։

— Իսկ որտեղի՞ց վերցրիք նյութը, այսինքն՝ այդ լաթի կտորը, որի մեջ կարել եք։

— Ինչ է, հո չե՞ք ծիծաղում։

— Բնավ երբեք, և բոլորովին էլ ծիծաղելու տրամադրություն չունենք, Դմիտրի Ֆյոդորովիչ։

— Չեմ հիշում որտեղից եմ վերցրել լաթը, մի տեղից վերցրել եմ, էլի։

— Դոնե ա՛յդ պետք է հիշեիք կարծես թե, չէ՞։

— Աստված վկա, չեմ հիշում։ Գուցե մի որևէ սպիտակեղենից պատռել եմ մի կտոր։

— Դա շատ հետաքրքրական է։ Կարող էինք վազը ձեր բնակարանում գտնել այդ իրը՝ գուցե մի վերնաշապիկ, որից պատռել եք այդ կտորը։ Ի՞նչ կտավ էր՝ վո՞ւշ, բամբա՞կ։

— Սատանան գիտե, թե ինչ էր։ Սպասե՛ք... Կարծեմ ոչ մի բանից էլ չեմ պատռել։ Կոլենկորի մի կտոր էր... Կարծեմ իմ տանտիրուհու տնային գլխարկի մեջ կարեցի։

— Տանտիրուհու տնային գլխարկի՞։

— Այո, թոցրել էի նրանից։

— Ինչպե՞ս թե թոցրել էիք։

— Հասկանո՞ւմ եք, մի անգամ իսկապես, հիշում եմ, նրա տնային մի գլխարկը թոցրի, որ քուրջի տեղ օգտագործեմ, գուցե և գրիչս սրբելու համար։ Սուսուփուս վերցրի, որովհետև անպետք մի լաթ էր։ Հետո դրա կտորները մնացել էին, և մեկ էլ այդ հազար հինգ հարյուր ռուբլու հարցը ելավ. վերցրի կտորներից մեկը և կարեցի մեջը... Կարծեմ հենց այդ լաթի կտորն էր։ Կոլենկորն հին, անպետք մի բան, հազար անգամ լվացված։

— Եվ արդեն հաստա՞տ եք հիշում այդ բանը։

— Չգիտեմ, հաստա՞տ է, թե չէ։ Կարծեմ այդ գլխարկն էր։ Է՛, թքա՛ծ։

— Այդ դեպքում՝ գոնե ձեր տանտիրուհին կկարողանա՞ հիշել, թե կորել էր այդ իրը։

— Ոչ, նա լիմացավ անգամ։ Հին լաթ էր, ասում եմ ձեզ, հին ու մին լաթի կտոր, կոպեկ չարժեր։

— Իսկ ասե՞ք որտեղից վերցրիք, թե՞ք որտեղից։

— Վե՛րջ, էլ չեմ ուզում որևէ բան ասել։ Բավակա՞ն է,— բարկացավ ի վերջո Միտյան։

— Եվ համենայն դեպս տարօրինակ է, որ այդպես բոլորովին մոռացել եք, թե հրապարակի ո՞ր մասում հատկապես գցեցիք այդ... հուռութը։

— Է՛հ, հրամայեցեք, որ վաղը ավելն հրապարակը, գուցե գտնեք,— քմծիծաղեց Միտյան։— Բավական է, պարոնայք, բավական է,— վճռեց նա տանջահար ձայնով։— Պարզ տեսնում եմ՝ չհավատացիք ինձ։ Իմ ասածներին կոպեկի արժեք չտվեցիք։ Ես եմ մեղավորը, ոչ թե դուք, չպետք է ընդառաջեի ու մեջ ընկնեի։ Ինչո՞ւ, ինչո՞ւ խոստովանեցի իմ գաղտնիքը և զզվելի դարձրի ինքս ինձ։ Իսկ ձեզ համար դա ծիծաղի նյութ է, ձեր աչքերի՞ց եմ տեսնում։ Դո՛ւք էիք, որ ինձ հասցրիք սրան, դատախա՛զ։ Ձեր անձի գովքը երգեցեք, եթե կարող եք... Անիծյա՛լ լինեք դուք, չարչարողնե՛ր։

Նա գլուխը ծռեց ու դեմքը ծածկեց ձեռքերով։ Դատախազն ու քննիչը լուռ մնացին։ Մի բոպե հետո նա վեր առավ գլուխը

և մի տեսակ խելագարկ հայացքով նայեց նրանց։ Հիմա արդեն լիակատար, անդառնալի հուսահատություն էր արտահայտում դեմքը, և նա մի տեսակ սոկվել նստել էր ու կարծես մոռացել ինքն իրեն։ Եվ սակայն պետք է վերջացնեին գործը։ պետք էր անհապաղ անցնել վկաների հարցաքննության։ Առավոտյան ժամը ութն էր արդեն։ Մոմերը վաղուց հանգցրել էին։ Միխայիլ Մակարովիչն ու Կալգանովը, որոնք հարցաքննության ամբողջ ընթացքում ներս ու դուրս էին անում, այս անգամ նորից դուրս գնացին սենյակից։ Դատախազն ու քննիչը նույնպես չափազանց հոգնած էին երևում։ Մոայլ մի առավոտ էր բացվել, ամբողջ երկինքն ամպամած էր և տեղատարափ անձրև էր գալիս։ Միտյան գաստարկ հայացքով նայում էր լուսամուտներին։

— Կարո՞ղ եմ լուսամուտից դուրս նայել,— հարցրեց նա հանկարծ Նիկոլայ Պարֆյոնովիչին։

— Օ՛, որքան ուզում եք,— պատասխանեց քննիչը։

Միտյան վեր կացավ և մոտեցավ լուսամուտին։ Անձրևն ուղղակի մտրակում էր լուսամուտի փոքրիկ, կանաչավուն ապակիները։ Հենց լուսամուտի տակ ցեխոտ ճանապարհն էր, իսկ ավելի հեռու, անձրևային մառախուղի մեջ, շարք-շարք երևում էին սև, թշվառ, խեղճուկրակ խրճիթները, որոնք կարծես ավելի ևս սևացել ու խղճուկ էին դարձել անձրևի տակ։ Միտյան հիշեց «ոսկեհեր Ֆեբուսը» և թե ինչպես ինքը ուզում էր անձնասպան լինել այն պահին, երբ երևար առաջին ճառագայթը նրա։ «Այսպիսի մի առավոտ... գուցե և ավելի լավ լիներ»,— ժպտաց նա հանկարծ, վերից վար թափահարեց ձեռքը, դարձավ «չարչարողներին»։

— Պարոնա՛յք,— գոչեց նա,— ես հո տեսնում եմ, որ կորա արդեն։ Բայց նա՞, Գրուշենկա՞ն։ Ասացե՛ք ինձ նրա մասին, աղաչում եմ, մի՞թե նա էլ պետք է կորչի ինձ հետ։ Անմեղ է նա, հասկանո՞ւմ եք, երեկ պարզապես խելքը կորցրել էր, երբ գոռում էր՝ «ամեն ինչում մեղավոր եմ»։ Նա ոչ մի մեղք չունի, ո՛չ մի մեղք։ Աբողջ գիշերը սիրտս մղկտում էր, երբ նստել էի ձեզ հետ... Չի՞ կարելի արդյոք, չե՞ք կարող արդյոք ինձ ասել՝ ի՞նչ եք անելու նրան հիմա։

— Կատարելապես հանգիստ եղեք այդ մասին, Դմիտրի Ֆյոդորովիչ,— պատասխանեց դատախազն անմիջապես ու ակնհայտ աճապարանքով,— առայժմ մենք ոչ մի նշանակալից շարժառիթ չունենք որևէ ձևով անհանգստացնելու այն տիկնոջը։

որով դուք այնքան հետաքրքրվում եք։ Հույս ունեմ, որ գործի հետագա ընթացքն էլ նույն բանը ցույց կտա... Ընդհակառակը, այդ առնչությամբ մենք կանենք ամեն ինչ, որ հնարավոր է մեր կողմից։ Կատարելապես հանգիստ եղեք։

— Շնորհակալ եմ, պարոնայք, ես այդպես էլ գիտեի, որ դուք համենայն դեպս ազնիվ ու արդար մարդիկ եք, չնայած այս բոլորին։ Ազատեցիք իմ սիրտը ծանր բեռից... Դե լավ, էլ ի՞նչ ենք անելու հիմա։ Ես պատրաստ եմ։

— Է՛հ, պետք է շտապել։ Պետք է անհապաղ անցնենք վկաների հարցաքննության։ Այդ ամբողջը անպայման ձեր ներկայությամբ պետք է տեղի ունենա, ուստի և...

— Բայց նախ մի թեյ չխմե՞նք,— ընդհատեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։— Կարծեմ թե այլևս արժանի՛ ենք դրան։

Որոշեցին, որ եթե պատրաստ թեյ կա ներքևում (քանի որ Միխայիլ Մակարովիչը վստահաբար գնացել էր «թեյելու»), մեկական բաժակ խմեն ու հետո «շարունակեն ու շարունակեն»։ Իսկ բուն «նախաճաշը» հետաձգեն ավելի ազատ մի ժամի։ Ներքևում իսկապես պատրաստ թեյ կար և շուտով վեր բերեցին։ Միտյան սկզբում հրաժարվեց մի բաժակ թեյից, որ Նիկոլայ Պարֆյոնովիչը սիրալիր առաջարկում էր նրան, բայց հետո ինքը խնդրեց ու խմեց ագահորեն։ Եվ ընդհանրապես մի տեսակ զարմանալիորեն տանջված տեսք ուներ։ Կարելի էր մտածել, թե աժդահա ուժի տեր այդ մարդու համար ի՞նչ մի բան է մի գիշերվա գինարբուքը, թեկուզ և ամենաուժեղ հուզմունքներն ապրած լինի միաժամանակ։ Բայց նա ինքը զգում էր, որ հապիվ է կարողանում նստել, իսկ մերթ ընդ մերթ կարծես բոլոր իրերն սկսում էին ուզղակի պտտվել ու պար գալ իր աչքերի առաջ։ «Մի քիչ էլ, և արդեն կսկսեմ զառանցել երևի»,— մտածեց նա ինքն իրեն։

VIII

ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ։ ԵՐԻՖՈՆ

Վկաների հարցաքննությունն սկսվեց։ Բայց մենք այլևս մեր պատմությունը չենք շարունակի այնպիսի մանրամասնությամբ, ինչպես անում էինք մինչև հիմա։ Ուստի և զանց կառնենք այն, թե ինչպես Նիկոլայ Պարֆյոնովիչն ապդտրատում էր յուրաքանչյուր կանչված վկային, որ նա պետք է ցուցմունք տա ըստ ճշմարտության ու խղճի մտքի, և որ հետագայում պարտավոր է երդմամբ կրկնել իր այդ ցուցմունքը։ Եվ վերջապես չենք պատմի, թե ինչպես յուրաքանչյուր վկայից պահանջվում էր, որ նա ստորագրի իր ցուցմունքների արձանագրությունը և այլն, և այլն։ Նշենք միայն մի բան. ամենազգայուն կետը, որի վրա առավելաբար հրավիրվում էր հարցաքննվողների ուշադրությունը, նույն այդ երեք հազար ռուբլու հարցն էր, այսինքն՝ երե՞ք հազար ռուբլի էր այդ գումարը, թե հազար հինգ հարյուր, երբ Դմիտրի Ֆյոդորովիչն իր առաջին խնդրանքն էր արել այստեղ՝ Մոկրոեում, մեկ ամիս առաջ, և երեկ էլ, Դմիտրի Ֆյոդորովիչի երկրորդ խնդրանքին, երե՞ք հազար էր նորից, թե հազար հինգ հարյուր։ Ավա՜ղ, բոլոր վկայությունները, առաջինից մինչև վերջինը, Միտյայի դեմ եղան, և ոչ մեկը նրա օգտին չխոսեց. իսկ վկաներից ոմանք հենց ուղղակի նոր, զրեթե շշմեցուցիչ փաստեր բերեցին ի հեճուկս Միտյայի ցուցմունքների։ Առաջին հարցաքննվողը Տրիֆոն Բորիսիչն էր։ Նա հարցաքննողների առաջ կանգնեց առանց դույզն վախի. ընդհակառակը, մեղադրյալի դեմ խիստ ու դառն վրդովմունք ունեցողի տեսք ընդունեց և դրանով էլ, անկասկած, արտակարգ ճշմարտասիրության ու սեփական արժանապատվության տեր մարդու երևույթ տվեց ինքն իրեն։ Քիչ ու զուսպ խոսեց, սպասելով հարցերին և ճշգրիտ ու մտածված պատասխանելով։ Հաստատապես և առանց այլևայլի վկայեց, որ մեկ ամիս առաջ ծախսված գումարը չէր կարող երեք հազարից պակաս լինել, և որ այստեղի բոլոր գյուղացիները կարող են վկայել, թե հենց «Միտրի Ֆյոդորովիչից» են լսել այդ երեք հազարի մասին։ «Միայն գնչուհիներին ինչքա՜ն փող էր գցում։ Երևի մի հազարից էլ ավել հենց մենակ նրանց ավեց»։

— Գուցե մի հինգ հարյուր էլ չեմ ասել,— մռայլորեն նկատեց Միտյան դրա դիմաց,— միայն թե չհաշվեցի այն ժամանակ, հարբած էի, և ափսո՜ս, որ չհաշվեցի...

Միտյան այս անգամ կողքով էր նստել, մեջքը վարագույրին դարձրած, լսում էր մռայլորեն, ախուր ու հոգնած դեմքով, որ կարծես ասում էր՝ «Է՛հ, տվեք ինչ վկայություն որ ուզում եք, հիմա էլ ամե՛ն ինչ միևնույն է»։

— Հազարից ավել գնաց էդ գնչուհիների վրա, Միտրի Ֆյոդորովիչ,— անդրդվելիորեն ժխտեց Տրիֆոն Բորիսովիչը,— զուր գցում էիք, նրանք էլ վերցնում էին։ Էդ ժողովուրդն ախր գող ու խարդախ է. ձիերդեր են նրանք, քշեցին նրանց էստեղից,

թե չէ ինքները գուցե կգային ու վկա կլինեին, թե ինչքան են ձեզնից օգուտ ստացել։ Ինքս էն օրը ձեր ձեռքում էն գումարը տեսա. հաշվիլը՝ դե չհաշվեցի իհարկե, դուք իմ ձեռքը չտվեցիք, դա ճիշտ է, բայց լալքի չափով, հիշում եմ, հազար հինգ հարյուրից շատ-շատ ավել կլիներ... Ի՞նչ հազար հինգ հարյուր, է՞, Մենք էլ հո փող ենք տեսել, կարանք դատենք...

Իսկ երեկվա գումարի մասին Տրիֆոն Բորիսովիչն ուղղակի ասաց, թե Դմիտրի Ֆյոդորովիչը հենց կառքից իջել էր թե չէ՝ անձամբ հայտարարել էր իրեն, որ երեք հազար ռուբլի է բերել։

— Դե լա՛վ, էլի, այդպե՞ս է որ, Տրիֆոն Բորիսիչ,— առարկեց Միտյան։— Ինչ է, հենց այնպես էլ ուղղակի հայտարարեցի, որ երե՞ք հազար եմ բերել։

— Ասացիք, Միտրի Ֆյոդորովիչ։ Անդրեյի առաջ ասացիք։ Այ Անդրեյն ինքը էստեղ է, դեռ չի գնացել, կանչեք նրան։ Իսկ էն դահլիճում, որ երգչախմբին էիք պատիվ անում, հենց ուղղակի գոռացիք, որ վեցերորդ հազարն եք թողնում էստեղ, այսինքն էն անգամվա փողերն էլ հաշված. էդպես պետք է հասկանալ։ Ստեփանն ու Սեմյոնն էլ լսեցին էդ բանը, և Պյոտր Ֆոմիչ Կալգանովն էլ էդ բոպեին ձեր կողքին էր կանգնած, գուցե թե նա էլ հիշում է...

Վեցերորդ հազարի մասին վկայությունը արտակարգ տպավորություն գործեց հարցաքննողների վրա։ Դուր եկավ նոր ձևակերպումը. երեքին գումարած երեք՝ վեց է անում, ուրեմն երեք հազար այն անգամ, երեք հազարն էլ հիմա՝ ահա և վեց հազարը, պարզ հաշիվ էր ստացվում։

Հարցաքննեցին Տրիֆոն Բորիսովիչի մատնանշած բոլոր գյուղացիներին, Ստեփանին ու Սեմյոնին, կառապան Անդրեյին և Պյոտր Ֆոմիչ Կալգանովին։ Գյուղացիներն ու կառապանը առանց այլևայլի հաստատեցին Տրիֆոն Բորիսիչի ցուցմունքը։ Բացի այդ, հատկապես արձանագրեցին Անդրեյի պատմածը՝ ճանապարհին Միտյայի հետ նրա ունեցած այն խոսակցության մասին, թե «որտե՞ղ եմ ընկնելու ես՝ Դմիտրի Ֆյոդորովիչս, դրա՛խտ, թե դժոխք, և արդյոք կներե՞ն ինձ մյուս աշխարհում, թե ոչ»։ «Հոգեբան» Իպոլիտ Կիրիլովիչն այդ բոլորը լսեց մի նուրբ ժպիտով և ի վերջո հանձնարարեց «գործին կցել» նաև այդ ցուցմունքը, այսինքն այն մասին, թե որտեղ է «ընկնելու» Դմիտրի Ֆյոդորովիչը։

Կալգանովը, երբ կանչեցին, դժկամորեն ներս մտավ, խո-

ժոված, քմահաճ, և այնպես խոսեց դատախազի ու Նիկոլայ Պարֆյոնովիչի հետ, որ կարծես թե առաջին անգամ էր տեսնում նրանց իր կյանքում, այնինչ վաղեմի և ամենօրյա ծանոթն էր նրանց։ Հենց սկզբից էլ ասաց, որ «ոչինչ չգիտե այդ բոլորի մասին և չի էլ ուզում իմանալ»։ Բայց պարզվեց, որ լսել է «վեցերորդ հազարի» մասին, և ընդունեց, որ այդ բոպեին Միտյայի մոտ էր կանգնել։ Նրա կարծիքով՝ Միտյայի ձեռքում «չգիտեմ որքան» փող կար։ Իսկ այն մասին, թե լեհերը թղթախաղի մեջ խարդախություն արեցին, նա վկայեց հաստատապես։ Պատասխանելով կրկնակի հարցումներին, բացատրեց նաև, որ լեհերի դուրս արվելուց հետո Միտյայի գործն իսկապես լավ գնաց Ագրաֆենա Ալեքսանդրովնայի հետ, և որ վերջինս ինքն ասաց, թե սիրում է նրան։ Ագրաֆենա Ալեքսանդրովնայի մասին Կալգանովը զուսպ ու հարգալից արտահայտվեց, ասես նա ամենալավ հասարակության պատկանող մի ազնվական տիկին լիներ, և նույնիսկ ոչ մի անգամ իրեն թույլ չտվեց «Գրուշենկա» կոչել նրան։ Հակառակ որ երիտասարդն ակնհայտորեն զզվանք էր զգում վկայություն տալուց, Իպոլիտ Կիրիլովիչը երկար հարցաքննեց նրան և միայն նրանից իմացավ բոլոր մանրամասնություններն այն բանի, որն այսպես ասած Միտյայի «սիրավեպն» էր եղել այդ գիշեր։ Միտյան ոչ մի անգամ չընդհատեց Կալգանովին։ Վերջապես ազատ թողեցին երիտասարդին, և նա անսքող վրդովմունքով հեռացավ ենյակից։

Հարցաքննեցին նաև լեհերին։ Նրանք իրենց սենյակում թեև պառկել էին քնելու, բայց ամբողջ գիշերն արթուն էին մնացել, իսկ իշխանավորների ժամանումից հետո շտապ հագնվել ու պատրաստվել էին, հասկանալով, որ անպայման կկանչեն իրենց։ Արժանապատվությամբ ներկայացան նրանք, թեև մի քիչ էլ վախեցել էին։ Պարզվեց, որ գլխավոր, այսինքն կարճահասակ պանը տասներկուերորդ կարգի պաշտոնաթող աստիճանավոր է, որպես անասնաբույժ ծառայել է Սիբիրում, ազգանունն էլ Մուալովիչ է։ Իսկ պան Վրուբլյովսկին, բանից դուրս եկավ, առամնաբույժ է, որ աշխատում է առանց վկայագրի։ Չնայած որ Նիկոլայ Պարֆյոնովիչն էր հարցեր տալիս նրանց, բայց երկուսն էլ, հենց որ սենյակ մտան, իրենց պատասխաններն անմիջապես սկսեցին ուղղել մի կողմ կանգնած Միխայիլ Մակարովիչին, անգիտորեն կարծելով, թե նա է գլխավոր պետն ու ղեկավար դեմքը, և ամեն մի բառից հետո նրան կոչելով «պան գնդապետ»։

Մի քանի անգամ հենց Միխայիլ Մակարովիչը նկատել ովեց ու հետո միայն նրանք հասկացան, որ իրենց պատասխանները պետք է ուղղեն միայն Նիկոլայ Գարֆյոնովիչին։ Գարզվեց, որ կարող են շատ ճիշտ ռուսերեն խոսել, բացի որոշ բառերի արտասանությունից։ Գրուշենկայի հետ իր անցյալ ու ներկա փոխհարաբերությունների մասին պան Մուսյալովիչն սկսեց բարբաստել եռանդով ու հպարտորեն, այնպես, որ Միտյան անմիջապես համբերությունը կորցրեց ու գոռաց, որ «սրիկային» թույլ չի տա այդպես խոսել իր ներկայությամբ։ Պան Մուսյալովիչն իսկույն ևեթ ուշադրություն հրավիրեց «սրիկա» բառի վրա և խնդրեց, որ մտցնեն արձանագրության մեջ։ Միտյան կատաղությամբ բռնկվեց։

— Այո՛, սրիկա՛ է, սրիկա՛։ Գրեցե՛ք այս բանը, և այն էլ գրեցեք, որ չնայած արձանագրությանը ես դարձյալ գոռում եմ՝ սրիկա՛ է նա,— բղավեց Միտյան։

Նիկոլայ Գարֆյոնովիչը թեև մտցրեց այդ բանը արձանագրության մեջ, բայց այս տհաճ միջադեպի առիթով հույժ դրվատելի գործնականություն և հարցերը անօրինելու ընդունակություն ցուցաբերեց։ Միտյային խիստ նկատողություն անելուց հետո, ինքն էլ իսկույն դադարեցրեց գործի սիրավեպային կողմի հետ առնչված բոլոր հետագա հարցափնդումները և շուտով անցավ էական խնդրին։ Իսկ էական խնդրին պատասխանելիս պաները առաջ քաշեցին մի ցուցմունք, որ քննիչների արտակարգ հետաքրքրությունը շարժեց. այսինքն այն, թե ինչպես Միտյան փոքր սենյակում կաշառում էր պան Մուսյալովիչին և երեք հազար ռուբլի հրաժարագին էր առաջարկում՝ յոթ հարյուր ռուբլին առձեռն, իսկ մնացյալ երկու հազար երեք հարյուրն էլ «հենց վաղը առավոտ քաղաքում» տալու պայմանով, ըստ որում ազնիվ խոսքով երդվում էր, թե այստեղ, Մոկրոեում, առայժմ այդքան փող չունի մոտը, բայց թե քաղաքում փող ունի։ Միտյան, տաքացած, տեղն ու տեղը առարկեց, թե ինքը չի ասել՝ անպայման կտա վաղը քաղաքում. սակայն պան Վրուբլյովսկին հաստատեց ցուցմունքը, և Միտյան ինքն էլ մի որոշ մտածելուց հետո, հանգիստ կիսելով համաձայնվեց, որ ըստ երևույթին այնպես էլ եղել է, ինչպես ասում են պանները, որովհետև ինքը այդ պահին բորբոքված էր, ուստի և իրոք կարող էր այդպես ասած լինել։ Դատախազն ուղղակի կաուչեց այդ ցուցմունքից. հետաքննության համար պարզ էր դառնում (ինչպես իրոք եզրակացրին հետո),

որ Միտյայի ձեռքն անցած երեք հազար ռուբլու կեսը կամ մի մասը կարող էր իսկապես պահված լինել քաղաքում մի տեղ, կամ էլ դուցե նույնիսկ այստեղ՝ Մոկրոեում, մի որևէ անկյունում, այնպես որ այդ ձևով պարզվում էր նաև հետաքննության համար կենսական այն հանգամանքը, թե Միտյայի ձեռքին ընդամենը ութ հարյուր ռուբլի էին գտել։ Այդ հանգամանքը մինչև հիմա միակ ցուցմունքն էր, որ բավական չնչին լինելով հանդերձ՝ համենայն դեպս մի որոշ վկայություն էր հօգուտ Միտյայի։ Իսկ հիմա այդ նրա օգտին եղող միակ վկայությունն էլ խորտակվում էր։ Երբ դատախազը Միտյային հարցրեց, թե որտեղի՞ց էր նա վերցնելու մնացյալ երկու հազար երեք հարյուր ռուբլին՝ հաջորդ օրը պանին տալու համար, եթե ինքն իսկ պնդում է, որ ընդամենը հազար հինգ հարյուր ռուբլի ուներ, այնինչ միաժամանակ ազնիվ խոսք տալով չանացել է վստահեցնել պանին, Միտյան հաստատորեն պատասխանեց, թե ուզում էր հաջորդ օրը այդ «չհուկին» ոչ թե փող առաջարկել, այլ Ջերմաշնյա կալվածքի վրա իր ունեցած իրավունքները հանձնելու պաշտոնական վավերագիր, հենց այն իրավունքները, որ առաջարկել էր Սամսոնովին ու Խոխլակովային։ Դատախազը նույնիսկ ժպտաց «լքմեղանքի միամտության» վրա։

— Եվ դուք կարծում եք, որ նա կհամաձայնվե՞ր երկու հազար երեք հարյուր ռուբլի առձեռն դրամի փոխարեն ընդունել այդ «իրավունքները»։

— Անպայման կհամաձայնվեր,— վրա բերեց Միտյան եռանդով։— Ի՞նչ եք ասում, ոչ թե երկու, այլ չորս, նույնիսկ վե՞ց հազար կարող էր շնթել դրա դիմաց։ Անմիջապես կհավաքեր իր մաքր-մուր փաստաբաններին, լեհուկներին ու չեհուկներին, և ոչ թե երեք հազար, այլ ամբողջ Ջերմաշնյան կխլեին ծերուկից։

Իհարկե, պան Մուսյալովիչի ցուցմունքն ամենայն մանրամասնությամբ մտցրին արձանագրության մեջ։ Եվ դրանով էլ բավարարվեցին ու ազատ արձակեցին պաներին։ Իսկ թղթախաղի խարդախության փաստը համարյա թե չհիշատակեցին անգամ. ասենց այդ էլ Նիկոլայ Գարֆյոնովիչը շափազանց երախտապարտ էր նրանց և չէր ուզում դատարկ բաներով անհանգստանել, մանավանդ որ այդ ամբողջ թղթախաղը անիմաստ մի կռիվ էր եղել հարբած վիճակում, ուրիշ ոչինչ։ Էլ ի՞նչ կերուխում ու ալյանդարություն ասես չէր եղել այդ գիշեր... Եվ շորթված փողը, երկու հարյուր ռուբլի, այնպես էլ մնաց պանների գրպանում։

Այնուհետև կանչեցին ծերուկ Մաքսիմովին։ Նա վախվխելով ներս մտավ, մոտեցավ մանր քայլերով, թափթփված տեսք ուներ և շատ տխուր էր։ Մինչ այդ նա շարունակ պատսպարվել էր ներքևում, Գրուշենկայի մոտ, լուռ նստել էր նրա կողքին և «մեկ էլ տեսար՝ հակվում էր նրա վրա և սկսում էր հեկեկալ, իսկ աչքերը սրբում էր կապույտ, քառակուսավոր թաշկինակով», ինչպես պատմում էր հետո Միխայիլ Մակարովիչը։ Այնպես որ Գրուշենկան ինքն էր այլևս հանգստացնում ու մխիթարում նրան։ Ծերուկն իսկույն ևեթ, արցունքն աչքերին, խոստովանեց, որ մեղավոր է ինքը, որ Դմիտրի Ֆյոդորովիչից պարտք է վերցրել «տասը ռուբլի, տիարք, իմ աղքատության երեսից, տիարք», և որ պատրաստ է վերադարձնելու... Նիկոլայ Պարֆյոնովիչի այն ուղղակի հարցին, թե նա չի՞ նկատել արդյոք՝ որքան փող կար Դմիտրի Ֆյոդորովիչի ձեռքում, քանի որ պարտք վերցնելու ժամանակ ամենից ավելի մոտիկ կարող էր տեսնել նրա ձեռքի փողը, Մաքսիմովն ամենայն վճռականությամբ հայտարարեց, թե «քսան հազար» ռուբլի կար։

— Իսկ դուք առաջ երբևիցե քսան հազար ռուբլի տեսե՞լ եք որևէ տեղ,— հարցրեց Նիկոլայ Պարֆյոնովիչը ժպտալով։

— Ինչպե՞ս թե, տեսել եմ, տիարք, միայն թե ոչ քսան հազար, այլ յոթ հազար, երբ կինս գրավ դրեց իմ փոքրիկ գյուղակը։ Միայն հեռվից թողեց, որ նայեմ, պարծեցավ իմ առաջ։ Շատ խոշոր մի կապոց էր, բոլորը վարդագույն հարյուրանոցներ։ Դմիտրի Ֆյոդորովիչի ձեռքում էլ բոլորը վարդագույն էին...

Շուտով բաց թողեցին նրան։ Վերջապես հերթը հասավ նաև Գրուշենկային։ Քննիչները հայտնապես երկյուղ էին կրում այն բանից, թե ինչ տպավորություն կարող էր գործել նրա երևալը Դմիտրի Ֆյոդորովիչի վրա, և Նիկոլայ Պարֆյոնովիչը նույնիսկ մի քանի հորդորական խոսքեր մրթմրթաց Միտյային, բայց Միտյան լռելյայն խոնարհեց գլուխն ի պատասխան, հասկացնելով, որ «անկարգություն չի լինի»։ Միխայիլ Մակարովիչն անձամբ ներս բերեց Գրուշենկային։ Նա ներս մտավ խստահայաց ու մռայլ դեմքով, որ արտաքուստ գրեթե հանգիստ էր, և հանդարտորեն նստեց ցույց տրված աթոռին՝ Նիկոլայ Պարֆյոնովիչի դիմաց։ Շատ գունատ էր, մրսում էր կարծես, և պինդ փաթաթվել էր իր սքանչելի սև շալով։ Իրոք, մի թեթև, տենդագին դող էր բռնել նրան այդ պահին, և դա սկիզբն էր այն երկարատև հիվանդության, որով նա տառապեց այդ գիշերից հետո։

Նրա խստաշունչ տեսքը, շիտակ ու լուրջ հայացքը և հանգիստ վարվելակերպը շատ բարենպաստ տպավորություն գործեցին բոլորի վրա։ Նիկոլայ Պարֆյոնովիչն անմիջապես մի քիչ «հրապուրվեց» նույնիսկ։ Հետագայում տեղ-տեղ պատմելով այդ մասին, նա ինքը խոստովանում էր, որ այդ օրը միայն հասկացավ, թե որքան «գեղեցիկ է այդ կինը», իսկ առաջ թեև մերթ ընդ մերթ տեսել էր նրան, բայց միշտ էլ «գավառական ցնծուհուն նման մի բան էր համարել։ «Ամենաբարձր հասարակության վայել վարվելակերպ ունի»,— քերանից թոցրեց մի անցամ հիացմունքով, երբ տիկնանց շրջանակում խոսում էր նրա մասին։ Բայց նրա ասածն ընդունեցին լիակատար վրդովմունքով և անմիջապես «չարաճճի» անվանեցին նրան, և ինքը շատ գոհ մնաց այդ բանից։

Ներս մտնելով, Գրուշենկան պարզապես հարևանցի մի ակնարկ նետեց Միտյայի վրա, որն իր հերթին անհանգստությամբ նայեց նրան, բայց նրա տեսքը նույն րոպեին իսկ հանգստացրեց Միտյային։ Առաջին անհրաժեշտ հարցերից ու նախազգուշացումներից հետո, Նիկոլայ Պարֆյոնովիչը թեև մի քիչ կմկմալով, բայց և ամենաքաղաքավարի վերաբերմունքը պահպանելով հարցրեց Գրուշենկային, թե ի՞նչ փոխհարաբերություններ ունեք պաշտոնաթող պորուչիկ Դմիտրի Ֆյոդորովիչ Կարամազովի հետ։ Գրուշենկան մեղմ ու հաստատ ձայնով ասաց.

— Նա իմ ծանոթն էր, որպես ծանոթ ընդունում էի նրան։ Այս վերջին ամսում։

Հետագա պրպտուն հարցերին նա ուղղակի և լիակատար անկեղծությամբ պատասխանեց, որ թեև «լինում էին ժամեր», երբ հավանում էր Միտյային, բայց թե չէր սիրում նրան, «այլ գայթակղեցնում էր՝ «իմ նողկալի շարությունից մղված», նմանապես հրապուրում էր նաև այն «ծերուկին», տեսնում էր, որ Միտյան սաստիկ խանգ էր ցուցաբերում Ֆյոդոր Պավլովիչի և բոլորի նկատմամբ, սակայն դա պարզապես զվարճացնում էր իրեն՝ Գրուշենկային։ Իսկ Ֆյոդոր Պավլովիչի մոտ ինքը երբեք էլ չէր ուզում գնալ, հենց միայն ծիծաղում էր նրա վրա։ «Ներեց մասին, թե՛ հոր, թե՛ որդու, չէի էլ մտածում այս ամբողջ ամսվա ընթացքում։ Սպասում էի մի ուրիշ մարդու, որ մեղավոր էր իմ առաջ... Միայն թե կարծում եմ,— եզրակացրեց Գրուշենկան,— որ դուք կարիք չունեք գրանով հետաքրքրվելու, ես

էլ կարիք չունեմ պատասխանելու ձեզ, որովհետև դա իմ անձնական գործն է»։

Նիկոլայ Պարֆյոնովիչը հենց այդպես էլ վարվեց անմիջապես. նորից հրաժարվեց «սիրավեպային» կետերի վրա ծանրանալուց և ուղղակի անցավ լուրջ խնդրին, այսինքն նույն այն երեք հազար ռուբլու կտրեռրագույն հարցին։ Գրուշենկան հաստատեց, որ Մոկրոեում, մեկ ամիս առաջ, իսկապես երեք հազար ռուբլի էր ծախսվել, ու թեև ինքն անձամբ չէր հաշվել փողը, բայց հենց Դմիտրի Ֆյոդորովիչից լսել էր, որ երեք հազար ռուբլի էր գումարը։

— Առանձի՞ն առաց ձեզ այդ բանը, թե՞ ուրիշ մեկի ներկայությամբ, կամ էլ դուք պարզապես լսեցիք, երբ նա ձեր առաջ ուրիշների՞ հետ էր խոսում,— հարցրեց անմիջապես գատախազը։

Գրուշենկան դրան պատասխանեց, թե լսել է և՛ ուրիշների ներկայությամբ, լսել է, երբ Միտյան ուրիշների հետ էր խոսում, լսել է նաև անձամբ նրանից, երբ իրենք առանձին են եղել։

— Մե՞կ անգամ միայն նրանից լսեցիք առանձին, թե՞ մի քանի անգամ,— հարցրեց նորից դատախազը և իմացավ, որ Գրուշենկան մի քանի անգամ է լսել։

Իպոլիտ Կիրիլովիչը շատ գոհ մնաց այդ ցուցմունքից։ Հետագա հարցերից պարզվեց նաև, որ Գրուշենկային հայտնի է եղել, թե որտեղից էր այդ փողը, այսինքն թե Դմիտրի Ֆյոդորովիչը վերցրել էր Կատերինա Իվանովնայից։

— Իսկ թեկուզ մի անգամ չե՞ք լսել, որ ոչ թե երեք հազար է ծախսվել մեկ ամիս առաջ, այլ ավելի քիչ, և որ Դմիտրի Ֆյոդորովիչն այդ գումարի ամբողջ մի կեսը պահել է իր համար։

— Ոչ, երբեք չեմ լսել այդ բանը,— վկայեց Գրուշենկան։

Այնուհետև պարզվեց նույնիսկ, որ Միտյան, ընդհակառակը, հաճախ ասել է նրան այդ ամբողջ ամսվա ընթացքում, թե ոչ մի կոպեկ փող չունի։ «Միշտ սպասում էր, որ իր հորից կստանա»,— եզրակացրեց Գրուշենկան։

— Իսկ երբևիցե չի՞ ասել ձեր առաջ... կա՛մ մի տեսակ հարևանցիորեն, կամ էլ ջղայնության պահին,— վրա բերեց հանկարծ Նիկոլայ Պարֆյոնովիչը,— թե մտադիր է իր հոր կյանքի դեմ ոտնձգություն անելու։

— Ա՜խ, ասել է,— հառաչեց Գրուշենկան։

— Մե՞կ անգամ, թե մի քանի անգամ։

— Մի քանի անգամ հիշել է այդ բանը, միշտ էլ բարկացած ժամանակ։

— Եվ դուք հավատո՞ւմ էիք, որ կկատարի իր ասածը։

— Ոչ, երբե՛ք չեմ հավատացել,— հաստատ պատասխանեց Գրուշենկան,— հույս ունեի նրա ազնվության վրա։

— Պարոնա՛յք, թույլ տվեք,— գոչեց հանկարծ Միտյան,— թույլ տվեք՝ ձեր ներկայությամբ մի խոսք միայն ասեմ Ագրաֆենա Ալեքսանդրովնային։

— Ասացեք,— թույլատրեց Նիկոլայ Պարֆյոնովիչը։

— Ագրաֆենա Ալեքսանդրովնա,— վեր կացավ աթոռից Միտյան,— հավատա՛ ասածիս և ինձ. երեկ իրիկուն սպանված իմ հոր արյան մեջ ես մեղք չունե՛մ։

Այդ ասելուց հետո Միտյան նորից նստեց աթոռին։ Գրուշենկան վեր կացավ և դառնալով սրբապատկերին՝ ջերմեռանդորեն խաչակնքեց երեսը։

— Փա՜ռք քեզ, աստված,— ասաց նա կաթոգին, հուզաթաթավ ձայնով, և գեռ տեղը չնստած, դառնալով Նիկոլայ Պարֆյոնովիչին, ավելացրեց.— Ինչպես որ ասաց հիմա, հենց դրան էլ հավատացե՛ք։ Գիտեմ նրան. ինչե՛ր ասես դուրս չի տալիս՝ կա՛մ հանաքով, կամ էլ համառությունից, բայց եթե խղճի դեմ է՝ երբեք չի խաբի։ Ուղղակի ճշմարտությունը կասի, հավատացե՛ք դրան։

— Շնորհակալ եմ, Ագրաֆենա Ալեքսանդրովնա, ուժ տվեցիք հոգուս,— արձագանքեց Միտյան դողահար ձայնով։

Երբ հարցրին երեկվա փողի մասին, Գրուշենկան հայտարարեց թե չգիտե որքան էր գումարը, բայց լսել է ինչպես Միտյան երեկ բազմիցս ասում էր ուրիշներին, որ երեք հազար ռուբլի է բերել իր հետ։ Իսկ թե որտեղի՞ց է վերցրել փողը, այդ մասին նա ասել է միայն իրեն՝ Գրուշենկային, թե Կատերինա Իվանովնայից է «գողացել», և ինքն էլ պատասխանել է նրան, թե դա հիշա չէ, չի գողացել, և թե վաղն ևեթ պետք է վերադարձնի փողը։ Դատախազի ոնդած այն հարցին, թե ի՞նչ փոքի մասին էր ասում Միտյան, որ գողացել է Կատերինա Իվանովնայից՝ երեկվա՞ գումարը, թե՞ այն երեք հազարը, որ մեկ ամիս առաջ է ծախսվել այստեղ, Գրուշենկան հայտարարեց, թե նա խոսում էր մեկ ամիս առաջ ծախսված փողի մասին, և թե ինքը այդպես է հասկացել նրա ասածը։

Ի վերջո ազատ արձակեցին Գրուշենկային, ըստ որում Նիկոլայ Պարֆյոնովիչը փութաց հայտնել, որ նա կարող է թեկուզ նույն րոպեին քաղաք վերադառնալ, և որ եթե ինքը իր կողմից կարող է որևէ բանով աջակցել, օրինակ, ձիերի հարցում, կամ էլ, օրինակ, եթե նա ուղեկից է ցանկանում, ապա ինքը... իր կողմից...

— Շատ շնորհակալ եմ,— գլուխ տվեց նրան Գրուշենկան,— ես այն ծերուկի հետ կգնամ, կալվածատեր ծերուկի, նրան էլ տեղ կհասցնեմ, բայց առայժմ, եթե թույլ տաք, կսպասեմ ներքևում, որ իմանամ ինչ եք որոշելու Դմիտրի Ֆյոդորովիչի մասին։

Նա դուրս գնաց։ Միտյան հանգիստ էր և նույնիսկ լիովին սրտապնդված էր երևում, բայց միայն մի րոպե։ Ֆիզիկական տարօրինակ մի անզորություն էր տիրում նրան հետզհետե, ավելի ու ավելի սաստկորեն։ Աչքերը փակվում էին հոգնածությունից։ Վկաների հարցաքննությունը վերջապես ավարտվեց։ Սկսեցին պատրաստել արձանագրության վերջնական ձևակերպումը։ Միտյան վեր կացավ իր աթոռից ու գնաց անկյունը, վարագույրի մոտ, պառկեց գորգով ծածկված մի մեծ սնդուկի վրա և վայրկենապես քնեց։ Տարօրինակ մի երազ տեսավ, այնպիսի մի երազ, որ բոլորովին չէր համապատասխանում ո՛չ տեղին, ոչ էլ պահին։ Ահա իբր թե ճամփորդում է տափաստանում, այնտեղ, ուր ծառայել է մի ժամանակ, վաղուց, և մի գյուղացի քշում է երկձի սայլը ձյունախառն ցեխի մեջ։ Միայն թե կարծես մրսում է Միտյան, նոյեմբերի սկիզբն է, և ձյունը թափվում է խոշոր ու թաց փաթիլներով, և ընկնելով գետին՝ հալչում է անմիջապես։ Եվ աշխուժորեն քշում է գյուղացին, հոյակապորեն պլանում, շեկ ու երկար է մորուքը նրա, և ոչ թե ծեր է, այլ կլինի մի հիսուն տարեկան, գեղջկական գորշ կապա է հագել։ Եվ ահա մի գյուղ դիմացը, երևում են սեփ-սև խրճիթները, իսկ խրճիթների կեսն այրվել է, ցցված են միայն կիսայրված գերանները։ Գյուղի եզրին գեղջկուհիներ են շարվել ճանապարհի վրա, շատ ու շատ գեղջկուհիներ, մի ամբողջ շարք, բոլորն էլ նիհար, հյուծված, մի տեսակ դարչնագույն դեմքեր ունեն։ Ահա մանավանդ մեկը, որ կանգնել է շարքի ծայրը, բարձրահասակ, այնպե՞ս կմախքացած, քառասուն տարեկան է երևի, բայց գույն և ընդամենը քսան տարեկան, դեմքը երկար է, նիհար, իսկ նրա ձեռքերին մի փոքրիկ երեխա է լալիս, և այնքա՞ն չորացած են

երևում գեղջկուհու կրծքերը, ո՞չ մի կաթիլ կաթ չկա դրանց մեջ։ Եվ լալիս է, լալի՞ս է երեխան, երկարում փոքրիկ թևերը, մերկ թևերը, և պստլիկ բռունցքները բոլորովին կապտել են ցրտից։

— Ինչո՞ւ են լալիս։ Ինչո՞ւ են լալիս,— հարցնում է Միտյան, երբ թափով սլանում են նրանց մոտով։

— Երեխեն,— պատասխանում է կառապանը,— երեխեն է լալիս։

Ու Միտյային զարմացնում է այն, որ նա յուրովի, գեղջկական ձևով ասաց «երեխեն», և ոչ թե երեխան։ Ու նրան դուր է գալիս, որ գյուղացին «երեխեն» ասաց. դրա մեջ կարեկցանքն ավելի շատ է կարծես։

— Բայց ինչո՞ւ է լալիս,— պնդում է Միտյան հիմարի պես։— Ինչո՞ւ մերկ են թաթիկները, ինչո՞ւ չեն փաթաթում նրան։

— Դե մրսել է երեխեն, շորերը սառել են, այ դրա համար էլ չեն տաքացնում երեխուն։

— Բայց ինչո՞ւ է այդպես։ Ինչո՞ւ,— շարունակում է պնդել հիմար Միտյան։

— Դե աղքատ են, էլի, հրդեհից են տուժել, հաց չունեն, ոգորմություն են ուզում իրենց վառված տների համար։

— Չէ, չէ,— կարծես դեռ չի հասկանում Միտյան,— դու ասա ինձ՝ ինչո՞ւ են այդպես կանգնել հրդեհից տուժած մայրերը, ինչո՞ւ աղքատ են մարդիկ, ինչո՞ւ աղքատ է երեխեն, ինչո՞ւ մերկ է տափաստանը, ինչո՞ւ նրանք չեն գրկում իրար, ինչո՞ւ չեն համբուրում իրար, ինչո՞ւ չեն երգում ուրախ երգեր, ինչո՞ւ նրանք սևացել են այս սև ցավից, ինչո՞ւ չեն կերակրում երեխուն։

Եվ զգում է նա, որ թեև խենթ ու անօգուտ հարցեր է տալիս, բայց ուզում է անպայման հարցնել ճի՛շտ այդպես, և որ ճիշտ այդպես էլ պետք է հարցնել։ Եվ զգում է նաև, որ իր սրտում բարձրանում է մի խանդաղատանք, որի նմանը երբեք չի եղել իր մեջ, և ուզում է արտասվել, ուզում է բոլորի համար անել այնպիսի մի բան, որ այլևս լաց չլինի երեխեն, լաց չլինի նաև երեխու սևադեմ, չորացած մայրիկը, որ այս րոպեից սկսած ոչ ոք արցունք չթափի այլևս, և ուզում է խոսուն, իսկուն ևթ անել այդ բանը, առանց հետաձգելու և հակառակ ամեն ինչի, կարամազովյան ամբողջ ապերասանությամբ։

— Եվ ե՛ս էլ քեզ հետ, հիմա էլ չեմ հեռանա քեզնից։

մինչև կյանքիս վերջը քեզ հետ եմ դալիս,— լսվում են նրա կողքին Գրուշենկայի քաղցրալուր, որտալիր խոսքերը։ Եվ ահա բացվելուում է Միտյայի սիրտը և ձգտում դեպի հրաշալի մի լույս, ուզում է նա ապրել ու ապրել, գնալ ու գնալ մի նոր ճանապարհով, դեպի նոր, կանչող լույսը, և շուտով, շուտո՜վ, հենց հիմա, ա՛յս րոպեիս։

— Ի՞նչ։ Ո՞ւր,— բացականչում է նա, բանալով աչքերը և նստելով սնդուկի վրա, կարծես նվաղումից հետո լրիվ ուշքի եկած, և սակայն պայծառ ժպտալով։ Նրա գլխին կանգնել էր Նիկոլայ Պարֆյոնովիչը, որ հրավիրում էր լսելու արձանագրությունը և ստորագրելու։ Միտյան հասկացավ, որ քնել էր մի ժամ և գուցե ավելի, բայց նա չէր լսում Նիկոլայ Պարֆյոնովիչին։ Հանկարծ զարմացավ, որ իր գլխի տակ հայտնվել է մի բարձ, որ չկար քիչ առաջ, երբ ինքն ուժասպառ մեկնվել էր սնդուկի վրա։

— Ո՞վ իմ գլխի տակ այս բարձը դրեց։ Ո՞վ է այն մարդը, որ այդքան բարի՜ է եղել,— բացականչեց նա մի տեսակ ցնծագին, շնորհակալ զգացմունքով ու մի տեսակ արտասվալից ձայնով, կարծես թե մեծ բարիք էին արել նրան։ Այդ բարի մարդն այնպես էլ անհայտ մնաց, թերևս գյուղացի ենթավարկաներից որևէ մեկն էր, կամ էլ թերևս Նիկոլայ Պարֆյոնովիչի անձնական գրագիրը, որ կարեկցանքից մղված՝ մտածել էր բարձ դնել նրա գլխի տակ, համենայն դեպս Միտյայի ամբողջ հոգին ցնցվեց արտասուքով։ Նա մոռացավ ոեղանին և հայտարարեց, թե կստորագրի ամեն ինչ, որ ուզում են։

— Ես լավ երազ տեսա, պարոնայք,— ասաց նա մի տեսակ տարօրինակորեն, և մի նոր արտահայտություն կար դեմքին, որ կարծես ուրախությամբ էր լուսավորված։

IX

ՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՏՅԱՅԻՆ

Երբ արձանագրությունն ստորագրվեց, Նիկոլայ Պարֆյոնովիչը հանդիսավոր կերպով դարձավ մեղադրյալին և կարդաց նրան «Որոշումը», ուր ասված էր, թե այսինչ թվականին և այսինչ օրը, այսինչ վայրում, նահանգային այսինչ դատարանի դատաքննիչը, հարցաքննելով այսինչ մարդուն (այսինքն Միտյային) որպես այսինչ ու այնինչ հանցանքներում մեղադրյալի

(բոլոր հանցանքները ամենայն բծախնդրությամբ արձանագրված էին), և նկատի առնելով, որ մեղադրյալը, իր վրա բարդվող հանցագործությունների մեջ իրեն մեղավոր չճանաչելով հանդերձ, իր արդարացման համար ոչինչ չկարողացավ առաջադրել, մինչդեռ վկաները (այսինչ մարդիկ) և հանգամանքները (այսինչ ու այնինչ) լիովին ապացուցում են նրա հանցապարտությունը, և առաջնորդվելով «Պատժական օրենսգրքի» այսինչ ու այնինչ հոդվածներով և այլն, որոշեց. խափանելու համար այն միջոցները, որով այսինչը (Միտյան) կարող է խուսափել դատաքննությունից ու դատից, արգելափակել նրան այսինչ բանտում, որի մասին հայտնել մեղադրյալին, իսկ սույն որոշման պատճենը հաղորդել դատախազի օգնականին և այլն, և այլն։ Մի խոսքով, Միտյային հայտարարեցին, թե նա այդ րոպեից կալանավոր է, և թե նրան հիմա տանելու են քաղաք, որտեղ արգելափակելու են մի շատ տհաճ վայրում։ Միտյան, ուշադիր լսելուց հետո, պարզապես ուսերը թոթվեց։

— Է՜հ, պարոնայք, ես ձեզ չեմ մեղադրում, պատրաստ եմ... Հասկանում եմ, որ ձեզ ուրիշ ոչինչ չի մնում անելու։

Նիկոլայ Պարֆյոնովիչը մեղմորեն բացատրեց Միտյային, որ նրան իսկույն ևթ տանելու է գավառական ոստիկանապետ Մավրիկի Մավրիկիևիչը, որ հենց բախտի բերմամբ այստեղ է հիմա...

— Սպասեցեք,— ընդհատեց հանկարծ Միտյան և, դիմելով բոլոր նրանց, ովքեր գտնվում էին սենյակում, խոսեց անդիմադրելի մի զգացումով.— Պարոնա՛յք, մենք բոլորս էլ գաժան ենք, բոլորս էլ հրեշներ ենք, բոլորս էլ պատճառ ենք դառնում, որ լաց լինեն մարդիկ, մայրերն ու ծծկեր երեխաները, բայց բոլորից ավելի (է՜հ, թո՛ղ այդպես լինի վճիռը հիմա) բոլորից ավելի ե՛ս եմ ամենասոսոր սողունը։ Թո՛ղ այդպես լինի։ Ես իմ կյանքում ամեն օր, կուրծքս ծեծելով, խոստացել եմ ուղղվել և ամեն օր էլ նույն կեղտոտ բաներն եմ արել։ Հասկանում եմ հիմա, որ ինձ նմանների գլխին մի հարված է պետք, ճակատագրի հարվածը, կարծես օգապաքանով վզից բռնելու և արտաքին մի ուժով կապկպելու համար։ Ես երբեք, երբե՜ք ինքնաբերաբար չէի բարձրանա։ Բայց որոշը պայթեց։ Ընդունում եմ մեղադրանքի և հրապարակային նախատինքի տանջանքը, տառապել եմ ուզում և տառապանքո՛վ կմաքրվեմ։ Ու թերևս մաքրվեմ իրոք, պարոնայք, հա՞։ Բայց և այնպես, լսեցե՛ք վեր-

ջին անգամ՝ հորս արյան մեջ ես մեղք չունե՛մ։ Պատիժն ընդունում եմ՝ ոչ թե որովհետև սպանել եմ նրան, այլ որովհետև ուզում էի սպանել և դուցե իրոք սպանեի... Բայց համենայն դեպս մտադիր եմ պայքարել ձեր դեմ և հայտարարում եմ ձեզ այս բանը։ Պիտի պայքարեմ ձեր դեմ մինչև ամենավերջին վայրկյանը, և հետո թող աստվա՛ծ որոշի։ Մնաք բարով, պարոնայք, մի՛ նեղանաք, որ հարցաքննության ընթացքում գոռացի ձեզ վրա, օ՜, դեռ այնքա՜ն հիմար էի այդ ժամանակ... Եվս մի բոպե, և կալանավոր եմ ես, բայց հիմա, վերջին անգամ, որպես դեռ ազատ մարդ, Դմիտրի Կարամազովը մեկնում է ձեզ իր ձեռքը։ Հրաժեշտ տալով ձեզ՝ մարդկանց եմ հրաժեշտ տալիս։

Նրա ձայնը դողում էր, և իսկապես երկարեց իր ձեռքը, բայց Նիկոլայ Պարֆյոնովիչը, որ ամենից ավելի մոտ էր կանգնած, մի տեսակ հանկարծակի, գրեթե ջղաձիգ շարժումով ձեռքերը ետ տարավ ու պահեց մեջքին։ Միտյան վայրկենապես նկատեց դա և ցնցվեց։ Անմիջապես իջեցրեց իր մեկնած ձեռքը։

— Քննությունը դեռ չի ավարտվել,— կմկմաց Նիկոլայ Պարֆյոնովիչը, մի քիչ շփոթվելով,— պիտի շարունակենք քաղաքում, և ես, իհարկե, իմ կողմից պատրաստ եմ ձեզ ամենայն հաշողություն մաղթելու... ձեր արդարացման մեջ... Ճիշտն ասելով, Դմիտրի Ֆյոդորովիչ, ես միշտ էլ հակված եմ ձեզ նկատելու, այսպես ասած, ոչ այնքան մեղավոր, որքան դժբախտ մի մարդ... Մենք բոլորս էլ այստեղ, եթե անշուշտ կարող եմ համարձակվել բոլորի անունից արտահայտվելու, բոլորս էլ պատրաստ ենք ընդունելու ձեզ որպես իր խորքում ազնիվ մի երիտասարդի, որ սակայն, ավա՜ղ, մի քիչ չափից ավելի տարվել է որոշ կրքերով...

Նիկոլայ Պարֆյոնովիչի փոքրիկ դեմքն այդ ճառի վերջում կատարելապես մեծաշուք արտահայտություն էր ստացել։ Հանկարծ Միտյայի մտքով անցավ, որ այս «տղան» հիմա կմտնի իր թևը, մյուս անկյունը կտանի իրեն և կվերսկսի դեռ վերջերս իրենց ունեցած խոսակցությունը «աղջիկների» մասին։ Բայց ինչե՞ր ասես չեն անցնում նույնիսկ մահապատժի գնացող ոճրագործի մտքով, ի՞նչ մտորումներ, որոնք բոլորովին երկրորդական են ու անպատեհ։

— Պարոնայք, դուք բարի եք, ողորմասիրտ. կարո՞ղ եմ տեսնել նրան, մնաս բարով ասել վերջին անգամ,— հարցրեց Միտյան։

— Անտարակույս, բայց նկատի առնելով, որ... մի խոսքով, հիմա այլևս չի կարելի առանց հսկողության...

— Խնդրե՛մ, հսկեցեք։

Բերեցին Գրուշենկային, բայց հրաժեշտը կարճատև եղավ, քիչ խոսքեր ասվեցին, և դա չգոհացրեց Նիկոլայ Պարֆյոնովիչին։ Գրուշենկան խոր գլուխ տվեց Միտյային։

— Ասացի քեզ, որ քոնն եմ, և քոնն էլ պիտի լինեմ, հավիտյանս պիտի գամ քեզ հետ, ուր էլ ուղարկեն քեզ։ Մնաս բարո՞վ, անմեղորեն ինքն իրեն կործանած մարդ։

Նրա շրթունքները դողացին, արցունքը հոսեց աչքերից։

— Ներիր ինձ իմ սիրո համար, Գրուշա, ներիր, որ իմ սիրով քե՜զ էլ խորտակեցի։

Միտյան ուզում էր դեռ մի բան էլ ասել, բայց հանկարծ ինքն ընդհատեց ու դուրս գնաց։ Նրա շուրջ անմիջապես հայտնվեցին մարդիկ, որոնք ուշի-ուշով հետևում էին։ Ներքևում, անդաստակի առաջ, ուր երեկ այնպիսի դրմփոցով քշել հասել էր Անդրեյի եռաձին, հիմա արդեն պատրաստ կանգնած էին երկու ուրիշ կառքեր։ Մավրիկի Մավրիկիևիչը, կարճլիկ ու թիկնեղ մի մարդ, ուռած դեմքով, ջղայնացել էր մի բանից՝ անակնկալորեն պատահած ինչ-որ անկարգությունից, և բարկացած գոռում էր։ Մի տեսակ չափից ավելի խստորեն նա Միտյային հրավիրեց կառք նստելու։ «Առաջ, երբ գինետանը խմացնում էի սրան, բոլորովին ուրիշ դեմք ուներ մարդը»,— մտածեց Միտյան կառք բարձրանալով։ Անդաստակից իջավ նաև Տրիֆոն Բորիսովիչը։ Դարպասի առաջ խռնվել էին մարդիկ՝ գյուղացիներ, կանայք, կառապաններ, բոլորն էլ աչքերը հառել էին Միտյային։

— Մնացեք բարով ու ներեցե՛ք, ողորմած մարդիկ,— գոռաց հանկարծ Միտյան կառքից, դառնալով նրանց։

— Մեզ էլ ներիր,— լսվեց երկու-երեք ձայն։

— Դո՜ւ էլ մնաս բարով, Տրիֆոն Բորիսիչ։

Բայց Տրիֆոն Բորիսիչը շուտ չեկավ ու չնայեց անգամ, դուցե շատ էր զբաղված։ Նա էլ գոռգոռում էր ու իրար էր անցել։ Պարզվեց, որ դեռ ամեն ինչ կանոնավոր չէր երկրորդ կառքում, որի մեջ գյուղական ոստիկանության երկու վերակացու պետք է ուղեկցեին Մավրիկի Մավրիկիևիչին։ Այն գյուղացին, որին հանձնարարել էին քշել երկրորդ կառքը, կապան էր հագնում և բուռն վիճում էր, թե Ակիմը պետք է գնա, ոչ թե ինքը։

Բայց Ակիմը չկար. վազել էին նրան փնտրելու։ Գյուղացին պընդում էր և աղաչում, որ սպասեն։

— Մեր էս ժողովուրդն սկի՛ ամոթ չունի ախր, Մավրիկի Մավրիկիևիչ,— բացականչում էր Տրիֆոն Բորիսիչը։— Անցյալ օրն Ակիմը քեզ քսանհինգ կոպեկ տվեց, խմեցիր պրծար էդ փողը, հիմի էլ գոռգոռում ես։ Պարզապես զարմանում եմ, որ էսպես բարի եք վարվում մեր ստոր ժողովրդի հետ, Մավրիկի Մավրիկիևիչ, էլ ուրիշ բան չեմ ասում։

— Բայց մեր ինչի՞ն է պետք երկրորդ կառքը,— միջամտեց Միտյան,— մի կառքով գնանք, Մավրիկի Մավրիկիևիչ, մի՛ վախենա, չեմ ըմբոստանա, չեմ փախչի քեզնից, ի՞նչ կարիք կա պահնորդների։

— Հաճեցեք ինձ հետ խոսելու ձևն իմանալ, պարո՛ն, եթե դեռ չեք սովորել։ Հաճեցեք դու-ով չխոսել ինձ հետ, ես ձեր ընկերը չեմ, և ձեր խորհուրդներն էլ ուրիշ անգամվա համար պահեցեք...— կատաղորեն շշպռեց հանկարծ Մավրիկի Մավրիկիևիչը, կարծես ուրախանալով, որ զայրույթն է թափում։

Միտյան սսկվեց։ Կաս-կարմիր եղավ։ Մի վայրկյան հետո հանկարծ զգաց, որ սաստիկ մրսում է։ Անձրևը դադարել էր, բայց պղտոր երկինքը ծայրից ծայր ամպերով էր ծածկված, և սուր քամին ուղղակի դեմքին էր փչում։ «Մրսե՞լ եմ, ինչ է»,— մտածեց Միտյան, ներս քաշելով ուսերը։ Վերջապես Մավրիկի Մավրիկիևիչն էլ կառք մտավ, ծանրորեն ու լայն-լայն նստեց և, կարծես չնկատելով Միտյային, պինդ սեղմեց դեպի անկյունը։ Ճիշտ է, տրամադրությունը վատ էր, և տրված հանձնարարությունը խիստ տհաճ էր նրա համար։

— Մնա՛ս բարով, Տրիֆոն Բորիսիչ,— գոռաց նորից Միտյան, և ինքն էլ զգաց, որ ոչ թե բարեսրտության մղումով էր գոռում այս անգամ, այլ զայրույթից, իր կամքին հակառակ։ Բայց Տրիֆոն Բորիսիչը հպարտ կանգնել էր, ձեռքերը մեջքին կապած, աչքերն ուղղակի հառել էր Միտյային, նայում էր խիստ ու բարկացած և ոչինչ չպատասխանեց նրան։

— Գնաք բարո՛վ, Դմիտրի Ֆյոդորովիչ, գնաք բարո՛վ,— լսվեց հանկարծ Կալգանովի ձայնը։ Չգիտես որտեղից դուրս էր թռել նա հանկարծ, և վազելով կառքի մոտ՝ ձեռքը մեկնեց Միտյային։ Առանց գլխարկի էր։ Միտյան հասցրեց բռնել ու սեղմել նրա ձեռքը։

— Մնաս բարով, սիրելի՛ բարեկամ, չեմ մոռանա քո մեծահոգությունը,— բացականչեց Միտյան ջերմորեն։ Բայց կառքը շարժվեց, և նրանց ձեռքերը բաժանվեցին իրարից։ Ջանդուլակն սկսեց զնգզնգալ, և տարան Միտյային։

Իսկ Կալգանովը վազելով ներս մտավ, նստեց նախասենյակի անկյունը, գլուխը ծռեց, ձեռքերով ծածկեց դեմքը և սկսեց լաց լինել։ Երկար նստեց այդպես ու արտասվեց, կարծես դեռ մի փոքր տղա լիներ, և ոչ թե արդեն քսանամյա երիտասարդ։ Օ՜, նա գրեթե լիովին հավատում էր, որ մեղավոր է Միտյան։ «Այս ի՞նչ մարդիկ են, էլ ի՞նչ կարող են լինել մարդիկ սրանից հետո»,— անկապորեն բացականչում էր նա դառն արտմությամբ, համարյա հուսահատորեն։ Այդ վայրկյանին նա չէր էլ ուզում ապրել այս աշխարհում։ «Արժե՞ որ, արժե՞ որ»,— բացականչում էր դառնացած պատանին։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Գիրք տասներորդ

ՏՂԱՆԵՐԸ

I

ԿՈԼՅԱ ԿՐԱՍՈՏԿԻՆ

Նոյեմբերի սկիզբն էր։ Տասնմեկ աստիճան սառնամանիք էր մեր քաղաքում, բայց գետինը մերկ էր, սառցակալած։ Գիշերը չոր ձյուն էր տեղացել մի քիչ, և «չոր ու կծու» քամին բարձրացնում էր ձյունը, քշում էր տխուր-տրտում փողոցներով ու մանավանդ շուկայի հրապարակով։ Մռայլ առավոտ էր, բայց դադարել էր ձյունը։ Հրապարակից ոչ շատ հեռու, Պլոտնիկովների խանութի մոտ, մի փոքր տուն կար, որ շատ մաքուր էր թե՛ դրսից, թե՛ ներսից։ Այրի տիկին Կրասոտկինայի տունն էր դա։ Նահանգային քարտուղար Կրասոտկինը շատ վաղուց էր մահացել, գրեթե տասնչորս տարի առաջ, և նրա երեսնամյա այրին, որ դեռ շատ սիրունիկ մի տիկին էր, «իր դրամագլուխով» ապրում էր իր կոկիկ տանը։ Պարկեշտ ու ամոթխած մի կյանքով էր ապրում, բնավորությամբ մեղմ էր, բայց և բավական կենսուրախ։ Տասնութ տարեկան էր, երբ ամուսինը մեռավ. ընդամենը մեկ տարի էր ապրել նրա հետ և հենց նոր մի տղա էր ծնել։ Ամուսնու մահվան օրից նա իր ամբողջ կյանքը նվիրել էր այդ իր անգին մանչուկի՝ Կոլյայի, դաստիարակությանը, և թեպետ ամբողջ տասնչորս տարի խելակորույս սիրել էր նրան, բայց իհարկե, անհամեմատ ավելի տառապանք էր տեսել, քան ուրախություն, գրեթե ամեն օր ահուդողի մեջ ընկնելով, մեռնելով

այն վախից, թե տղան կհիվանդանա, կմրսի, շարություն կանի, աթոռի վրա կմագլցի ու վայր կընկնի և այլն, և այլն։ Իսկ երբ Կոլյան սկսեց դպրոց գնալ և հետո հաճախել մեր պրոգիմնազիան, մայրն էլ նրա հետ փութաց ուսումնասիրել բոլոր գիտությունները, որպեսզի օգնի նրան և դասերը սերտեն միասին, փութաց ծանոթանալ ուսուցիչների և նրանց կանանց հետ, փաղաքշել նույնիսկ Կոլյայի դպրոցական ընկերներին, հաճոյանալ նրանց, որպեսզի ձեռք չտան Կոլյային, չծաղրեն նրան, չծեծեն։ Եվ հասցրեց այնտեղ, որ ընկերներն իրոք սկսեցին ծաղրել նրան հենց մոր պատճառով, սկսեցին ձեռ առնել, որ նա մամայի բալիկ է։ Բայց տղան կարողացավ իր գլխին տեր կանգնել։ Խիզախ տղա էր, «սոսկալի ուժեղ», ինչպես լուր տարածվեց դասարանում, և շուտով էլ հաստատվեց, որ այդպես է իրոք. ճարպիկ էր, անկոտրում բնավորության տեր, հանդուգն ու նախաձեռնող ոգի ուներ։ Լավ էր սովորում, և նույնիսկ ասում էին, թե նա թվաբանության ու ընդհանուր պատմության մեջ հենց դասատու Դարդանելովին էլ կգլի-կանցնի։ Տղան թեև վերից էր նայում բոլորին, քթիկը տնկած, բայց լավ ընկեր էր և չէր մեծամտանում։ Դպրոցականների հարգանքն ընդունում էր որպես իրեն վայել մի բան, սակայն ընկերաբար էր վերաբերվում նրանց։ Մանավանդ չափ ու սահմանը գիտեր, հարկ եղած դեպքում կարող էր զսպել իրեն, և ուսուցիչների հետ իր փոխհարաբերությունների մեջ երբեք չէր անցնում այն վերջին ու նվիրական սահմանը, որից այն կողմ արդեն որևէ արարք չի հանդուրժվի, կդառնա անկարգություն, ընդվզում և անօրինություն։ Եվ սակայն բնավ, բնավ էլ դեմ չէր չարաճճիություններ անելու, և եթե որևէ հարմար առիթ ներկայանար, անելիքն անում էր ամենահետին մի լաճի նման, ոչ այնքան չարաճճիության սիրուն, որքան մի որևէ արտասովոր, հնարամիտ տարօրինակությամբ զարմացնելու, շշմեցնող տպավորություն գործելու և իրեն ցույց տալու համար։ Շատ ինքնասեր էր մանավանդ։ Նույնիսկ իր մայրիկին կարողացել էր ենթարկել իրեն, գրեթե բրոնակալի պես ազդելով նրա վրա։ Եվ մայրիկը ենթարկվել էր, օ՜, վաղուց էր արդեն ենթարկվել, բայց ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել միայն այն մտքի հետ, որ տղան «քիչ է սիրում» իրեն։ Նրան շարունակ թվում էր, թե Կոլյան «անզգա» է իր նկատմամբ, և լինում էին դեպքեր, երբ հիստերիկ արցունքներ թափելով սկսում էր հանդիմանել տղային՝ սառն վերաբեր-

մունքի համար։ Տղան չէր սիրում այդ բանը, և մայրը որքան ավելի էր նրանից սրտագին զեղումներ պահանջում, այնքան ավելի անդրդվելի էր դառնում նա՝ կարծես դիտմամբ։ Բայց նրա այդ վերաբերմունքը ոչ թե դիտումնավոր էր, այլ ակամա. այդպես էր բնավորությունը։ Մայրը սխալվում էր. նա շատ էր սիրում իր մայրիկին, միայն թե չէր սիրում «հորթային քնքշությունները», ինչպես ասում էր իր դպրոցական լեզվով։ Հորից մնացել էր մի գրապահարան, որի մեջ սակավաթիվ գրքեր կային. Կոլյան սիրում էր կարդալ և արդեն ինքնաբերաբար կարդացել էր դրանցից մի քանիսը։ Դա չանհանգստացրեց մորը, պարզապես նա զարմանում էր երբեմն, տեսնելով, թե ինչպես իր տղան ժամերով կանգնում էր պահարանի մոտ մի որևէ գրքի մեջ խորասուզված, փոխանակ դուրս գնալու և խաղալու։ Եվ այդպիսով Կոլյան կարդաց բաներ, որ չէր կարելի նրան թույլ տալ այդ տարիքում։

Տղան թեև չէր սիրում իր շարաճճիությունների մեջ մի որոշ սահմանից անդին անցել, բայց վերջերս սկսել էր անել այնպիսի շարաճճիություններ, որոնք լրջորեն վախեցնում էին մորը. ճիշտ է, անբարոյական բաներ չէին դրանք, բայց կապը կտրած մարդու սանձարձակ խելառություններ էին։ Հենց այդ տարվա հուլիսին, ամառային արձակուրդի ժամանակ, այնպես էր պատահել, որ մայրիկն ու տղան մի շաբաթով հյուր էին գնացել մի ուրիշ գավառ, յոթանասուն վերստ մեր քաղաքից, հեռավոր մի ազգականուհու մոտ, որի ամուսինը պաշտոնավարում էր երկաթուղային կայարանում (հենց այն կայարանում, որ ամենամոտն էր մեր քաղաքին, և որտեղից Իվան Ֆյոդորովիչ Կարամազովը մեկ ամիս հետո մեկնեց Մոսկվա)։ Կոլյան այնտեղ նախ և առաջ սկսեց մանրամասնորեն դիտել, ուսումնասիրել երկաթուղային կարգուկանոնը, հասկանալով, որ տուն վերադառնալուց հետո կարող է իր նոր գիտելիքներով փայլել պրոգիմնազիայի դպրոցականների մեջ։ Բայց հենց այդ նույն ժամանակ ուրիշ տղաներ էլ կային այնտեղ, և Կոլյան բարեկամացավ նրանց հետ. մի քանիսը կայարանում էին ապրում, մի քանիսն էլ շրջակայքում, ընդամենը վեց կամ յոթ պատանյակներ էին՝ տասներկուսից տասնհինգ տարեկան, և նրանցից երկուսն էլ մեր քաղաքից էին պատահմամբ։ Տղաները միասին խաղում էին, շարաճճիություններ անում, և ահա Կոլյայի հյուրագնացության չորրորդ կամ հինգերորդ օրը հիմար երեխաները

խելքից-մտքից դուրս մի գրաղ եկան երկու ռուբլու վրա. Կոլյան, որ գրեթե ամենափոքրն էր բոլորի մեջ և դրա համար էլ մի քիչ արհամարհվում էր մեծերից, ինքնասիրության կամ էլ անսանձ խիզախության մղումով առաջարկեց, որ գիշերը, երբ ժամը տասնմեկի գնացքը գա, ինքը երեսի վրա կպառկի երկաթգծի մեջտեղը և անշարժ կմնա, մինչև գնացքը սրընթաց արագությամբ անցնի իր վրայով։ Ճիշտ է, նախօրոք ստուգեցին ու պարզեցին, թե իրոք կարելի է այնպես մեկնվել գծերի մեջտեղը և տափակ պառկել, որ գնացքն անշուշտ անցնի առանց պառկողին դիպչելու, բայց դե, համենայն դեպս, հանո՞ք է այդպես պառկելը։ Կոլյան հաստատ պնդում էր, որ կպառկի։ Սկզբում ծիծաղում էին նրա վրա, սուտլիկ էին կոչում նրան, պոռոտախոս էին ասում, բայց դրանով ավելի ևս գրգռեցին տղային։ Եվ մանավանդ որ այդ տասնհինգ տարեկան տղաները չափից ավելի ցցում էին իրենց քթերը նրա առաջ, սկզբում նույնիսկ «ճստլիկ» էին համարում նրան և չէին ուզում ընդունել որպես իրենց ընկերը, իսկ դա արդեն անտանելիորեն վիրավորական էր։ Եվ ահա որոշեցին երեկոյան գնալ կայարանից մեկ վերստ հեռու, որպեսզի գնացքը, կայարանից դուրս գալուց հետո, հասցնի լրիվ թափ առնել։ Տղաները հավաքվեցին։ Հաստավ անլուսին գիշերը. ոչ թե մութ էր պարզապես, այլ գրեթե խավարամած։ Որոշյալ ժամին Կոլյան պառկեց գծերի միջև։ Մյուս հինգ տղաները, որոնք գրաղ էին եկել, սպասում էին ուղեթումբի ներքևում, թփերի մեջ՝ նվաղուն սրտով, հետո նաև վախով ու զղջումով։ Վերջապես հեռվում սկսեց դրմփալ գընացքը, որ դուրս էր եկել կայարանից։ Մթան խորքից երկու կարմիր լապտերները փայլեցին, հրեշը դղրդալով մոտենում էր։ «Փախի՛ր գծից, փախի՛ր»,— գոռացին ահաբեկված տղաները թփերի միջից, բայց արդեն ուշ էր. գնացքը վրա հասավ ու սուրալով անցավ գնաց։ Տղաները վազեցին Կոլյայի մոտ. նա անշարժ պառկել էր։ Սկսեցին քաշքշելով բարձրացնել գետնից։ Նա հանկարծ վեր կացավ ու առանց մի բառ ասելու գծից հեռացավ։ Ուղեթմբից ցած իջնելով, նա հայտարարեց, թե դիտմամբ այդպես պառկել էր ուշաթափվածի նման, որպեսզի վախեցնի նրանց. բայց ճշմարտությունն այն էր, որ նա իրոք ուշաթափվել էր, ինչպես ինքը խոստովանեց մորը, երբ արդեն երկար ժամանակ էր անցել այդ օրից։ Այսպիսով, ընդմիշտ ձեռք բերեց «քաջասիրտ» տղայի համբավը։ Այդ գիշեր երբ կա-

չարան վերադարձավ ու տուն մտավ՝ մոմի պես գունատ էր։ Հաջորդ օրը մի թեթև հիվանդացավ ջղային տենդով, բայց սոսկալի բարձր էր տրամադրությունը, ուրախ էր ու գոհ։ Դեպքը մեր քաղաքում իմացվեց ոչ թե անմիջապես, այլ նրանց վերադառնալուց հետո, և լուրը հասավ դպրոց, տնօրենության ականջը։ Բայց Կոլյայի մայրիկը իսկույն վազեց տնօրենի մոտ, աղաչեց, որ չպատժեն իր տղային, և ի վերջո Դարդանելովը, որ հարգված ու ազդեցիկ դասատու էր, Կոլյային պաշտպանեց ու բարեխոսեց նրա օգտին. գործն անհետևանք թողեցին, իբրև թե բնավ էլ չի եղել։

Այս Դարդանելովը, ամուրի և միջին տարիքի մի մարդ, երկար տարիներ բուռն սիրահարվել էր տիկին Կրասոտկինային և արդեն մի անգամ, գրեթե մեկ տարի առաջ, համարձակվել էր նրա ձեռքը խնդրել՝ ամենահարգալից ձևով, վախից ու նրբանկատությունից դողահար. բայց տիկինը մերժել էր, համաձայնվելը գավաճանություն համարելով իր որդյակի նկատմամբ, թեև Դարդանելովը, որոշ խորհրդավոր նշաններից դատելով, գուցե նույնիսկ իրավունք ուներ հուսալու, որ ինքը այնքան էլ հակակրելի չէր այդ հմայիչ, բայց չափազանց առաքինի ու քնքշասիրտ այրի կնոջ համար։ Կոլյայի այդ խենթ չարաճճիությունը կարծես սառույցը կոտրեց, և Դարդանելովն իր արած բարեխոսության դիմաց հույսի մի նշույլ ստացավ, ճիշտ է՝ հեռավոր մի նշույլ, բայց թե Դարդանելովը ինքն էլ մաքրության ու նրբանկատության արտակարգ մի երևույթ էր, ուստի առայժմ դա էլ բավական էր նրա երջանկությունը լիակատար դարձնելու համար։ Նա սիրում էր Կոլյային, թեպետ նվաստացուցիչ պիտի համարեր հաճոյանալ նրան, և դասարանում խիստ ու պահանջկոտ էր նրա նկատմամբ։ Բայց Կոլյան ինքն էլ նրան պատկառելի հեռավորության վրա էր պահում, դասերը սովորում էր շատ լավ, դասարանի երկրորդն էր, Դարդանելովին չոր էր վերաբերվում և ամբողջ դասարանը հաստատ հավատում էր, թե ընդհանուր պատմության մեջ Կոլյան այնքան ուժեղ է, որ հենց Դարդանելովին էլ «կգլխի»։ Եվ իրոք, Կոլյան մի անգամ նրան հարց էր տվել՝ «Ո՞վ է հիմնել Տրովադան», և Դարդանելովը, պատասխանելով, խոսել էր առհասարակ ժողովուրդների, նրանց շարժումների ու գաղթերի, դարերի խորքի և առասպելաբանության մասին, բայց թե ո՞վ է հիմնել Տրովադան, այսինքն ո՞ր պատմական անձնավորությունները՝ չէր կարողացել պատասխանել և նույն-

իսկ, չգիտես ինչու, անիմաստ ու մտացածին էր համարել այդ հարցը։ Բայց տղաներն այնպես էլ մնացին այն համոզմունքին, որ Դարդանելովը չգիտե ով է հիմնել Տրովադան։ Իսկ Կոլյան Տրովադայի հիմնադիրների մասին կարդացել էր Սմարագդովի գրքում, որ գտել էր իր հորից մնացած գրապահարանի մեջ։ Ի վերջո բոլոր տղաներն սկսեցին հետաքրքվել, թե ով է հիմնել Տրովադան, բայց Կրասոտկինն իր գաղտնիքը չհայտնեց, և այդ բանը գիտենալու նրա համբավը անխախտ մնաց։

Երկաթուղու դեպքից հետո Կոլյայի վերաբերմունքը մի քիչ փոխվեց մոր նկատմամբ։ Երբ Աննա Ֆյոդորովնան (Կրասոտկինի այրին) իմացավ իր որդյակի սխրագործության մասին, համարյա թե խելագարվեց սարսափից։ Մի քանի օր, մեջընդմեջ, այնպիսի ահավոր հիստերիկ նոպաներ ունեցավ, որ Կոլյան, արդեն լրջորեն վախեցած, աղեխիվ խոսք տվեց մորը, թե նման չարաճճիություններն այլևս երբեք չեն կրկնվի։ Նա ծնկադիր երդվեց սրբապատկերի առաջ, երդվեց հոր հիշատակով, ինչպես պահանջում էր տիկին Կրասոտկինան, ընդ որում «արիասիրտ» Կոլյան ինքն էլ փղձկաց ու երկար լաց եղավ վեց տարեկան մանչուկի պես։ Եվ ամբողջ այդ օրը մայր ու որդի անընդհատ իրար գիրկ էին նետվում ու արցունք թափում հեկեկալով։ Հաջորդ օրը Կոլյան առաջվա պես «անզգա» արթնացավ, բայց դարձավ ավելի սակավախոս, ավելի խոնարհ, խստաբարո ու մտախոհ։ Ճիշտ է, մեկուկես ամիս հետո նա նորից բռնվեց մի չարաճճիության մեջ, և նրա անունը մինչև իսկ հայտնի դարձավ մեր հաշտարար դատավորին, բայց այդ չարաճճիությունն արդեն բոլորովին ուրիշ տեսակի էր, նույնիսկ զվարճալի ու հիմարիկ մի բան, և հետո պարզվեց նաև, որ նա ինքը չէր արել այդ բանը, այլ մասնակից էր եղել միայն։ Բայց դրա մասին դեռ առիթ կլինի պատմելու։ Մայրը շարունակում էր դողալ ու տանջվել, իսկ որքան ավելանում էին նրա տագնապները, Դարդանելովն այնքան ավելի մեծ հույսեր էր տածում։ Պետք է նկատել, որ Կոլյան այդ առնչությամբ հասկանում ու կռահում էր Դարդանելովի ձգտումը և, ի՜հա՜րկե, խորապես արհամարհում էր նրան այդ «զգացմունքների» համար. առաջ նա նույնիսկ այնքան աններբանկատ էր, որ իր այդ արհամարհանքը ցույց էր տալիս մոր ներկայությամբ, հեռվից հեռու ակնարկելով, որ հասկանում է ինչի է ձգտում Դարդանելովը։ Բայց երկաթուղու դեպքից հետո այս հարցում էլ փոխեց իր վարմունքը. այլևս

իբրեն թույլ չէր տալիս ամենահեռավոր ակնարկներն անգամ անել, իսկ Դարդանելովի մասին սկսեց ավելի հարգալից խոսել մոր առաջ, և զգայուն կինն անմիջապես հասկացավ այդ բանը՝ տիրտն անսահման երախտագիտությամբ լցված։ Բայց և այնպես, եթե Կոլյայի ներկայությամբ մի որևէ հյուր ամենափոքր, ամենազգուշավոր խոսքն ասեր Դարդանելովի մասին, Աննա Ֆյոդորովնան հանկարծ վարդի պես կարմրում էր ամոթից։ Իսկ Կոլյան այդպիսի բոպեներին կա՛մ լուսամուտից դուրս էր նայում խոժոռված, կա՛մ ձևացնում էր, թե զբաղված է իր կոշիկները դիտելով, կամ էլ կատաղորեն կանչում էր Պերեզվոնին՝ իր փրշոտ, բավական խոշոր ու քոսոտ շանը, որին չգիտես որտեղից գտել էր մի ամիս առաջ, բերել էր տուն և չգիտես ինչու գաղտնորեն պահում էր ներսում, իր ընկերներից ոչ մեկին ցույց չէր տալիս։ Սոսկալի բռնանում էր շան վրա, ամեն տեսակ խաղեր ու հնարքներ էր սովորեցնում, և խեղճ շանը հասցրեց այն օրին, որ երբ ինքը դպրոցում էր լինում՝ նա ոռնում էր տիրոջ կարոտից, իսկ երբ ինքը գալիս էր՝ ուրախությունից վնգստում էր կենդանին, ցատկոտում էր խենթի նման, կանգնում նեռի թաթերի վրա, պառկում գետնին ու մեռած ձևանում և այլն, մի խոսքով, ցուցադրում էր տիրոջ սովորեցրած բոլոր հնարքները, և արդեն ոչ թե նրա պահանջով, այլ պարզապես իր հրճվալից զգացմունքների ու երախտագետ սրտի խանդավառ մղումով։

Ի դեպ, մոռացա էլ ասելու, որ Կոլյա Կրասոտկինը հենց այն տղան էր, որի ազդրին գրպանի դանակով խփել էր պաշտոնաթող փոխկապիտան Սնեգիրյովի՝ որդին՝ արդեն ընթերցողին ծանոթ Իլյուշան, երբ պաշտպան էր կանգնել իր հորը, որին դպրոցականները ծաղրում էին «ճիլոպ» ասելով։

II

ԵՐԵՆԱՆԵՐԸ

Այսպես ուրեմն, նոյեմբերի այդ սառնաշունչ ու հողմաուռչ առավոտյան Կոլյա Կրասոտկինը նստել էր տանը։ Կիրակի էր, դպրոցը փակ էր։ Բայց արդեն ժամը տասնմեկը խփեց, իսկ նա անպայման պետք է տնից դուրս գնար «շատ կարևոր մի գործով», այնինչ ամբողջ տանը ինքն էր միայն մնացել ուղղակի որպես պահապան, որովհետև այնպես էր պատահել, որ

բոլոր մեծահասակ բնակիչները բացակայում էին տնից՝ արտակարգ ու եզակի մի իրադարձության պատճառով։ Այրի տիկին Կրասոտկինան իր տանը վարձու էր տվել երկու փոքրիկ սենյակից բաղկացած միակ հավելյալ հարկաբաժինը, որ միջանքով անջատված էր մյուս հարկաբաժնից, ուր ինքն էր բնակվում. վարձակալը բժշկի կին էր՝ երկու փոքրիկ երեխաներով։ Այս տիկինը Աննա Ֆյոդորովնայի տարեկիցն էր ու մտերիմ բարեկամուհին, իսկ նրա բժիշկ ամուսինը մոտ մի տարի առաջ գնացել էր մի հեռու տեղ, նախ Օրենբուրգ, հետո էլ Տաշքենդ, և ահա արդեն կես տարի է՝ բժշկից ոչ մի լուր չկար, այնպես որ եթե չլիներ տիկին Կրասոտկինայի հետ բարեկամությունը, որ մի քիչ մեղմացնում էր լքված կնոջ վիշտը, նա ուղղակի կբախեղդվեր արցունքից։ Եվ մեկ էլ ահա, կարծես ճակատագրի հարվածը լիակատար դարձնելու համար, բժշկի կնոջ միակ սպասուհին, Կատերինան, այդ նույն գիշերը հանկարծ բոլորովին անակնկալորեն հայտարարեց, թե նախատեսում է առավոտյան դեմ ծննդաբերել։ Համարյա հրաշք թվաց բոլորին, թե ինչպե՞ս էր պատահել, որ մինչ այդ ոչ ոք չէր նկատել այդ բանը։ Ապշած տիկինը բարվոք համարեց, քանի դեռ ժամանակ կար, Կատերինային տանել այն հատուկ հաստատությունը, որ մեր քաղաքում մի մանկաբարձուհի պահում է նման դեպքերի համար։ Քանի որ տիկինը շատ թանկ էր գնահատում այդ սպասուհուն, անմիջապես իրագործեց իր ծրագիրը, և ոչ միայն տարավ նրան, այլև ինքն էլ մնաց այնտեղ նրա կողքին։ Հետո, արդեն առավոտյան, չգիտես ինչու պետք եղավ, որ տիկին Կրասոտկինան ևս օգնության հասնի իր ամբողջ բարեկամական կարեկցանքով, մանավանդ որ նա այս դեպքում կարող էր մի որևէ բան խնդրել որևէ մեկից և ինչ-որ ձևով հովանավորություն ցույց տալ։ Այսպիսով, երկու տիկիններն էլ բացակա էին, իսկ տիկին Կրասոտկինայի սպասուհին, Ագաֆյան, շուկա էր գնացել, և ահա ուրեմն Կոլյան առժամապես պահապան ու հսկիչ էր դարձել «ճստոնների» համար, այսինքն բժշկի կնոջ տղայի ու աղջնակի, որոնք մեն-մենակ էին մնացել։

Կոլյան չէր վախենում տանը պահակ մնալուց, մանավանդ որ իր հետ էր նաև Պերեզվոնը, որին հրամայված էր փոքի վրա պառկել նախասենյակում, նստարանի տակ, և մնալ «առանց շարժվելու». հենց այդ պատճառով էլ, երբ Կոլյան տան մեջ եռ ու առաջ անելով նախասենյակ էր մտնում, կենդանին ամբողջ

գլխով սարսռում էր և պոչով երկու թունդ ու քծնական հարված էր տալիս հատակին, բայց ավա՜ղ, կանչի սուլոցը չէր լսվում։ Կոլյան սպառնալից նայում էր դժբախտ շանը, որ նորից քարանում մնում էր հնազանդ անշարժությամբ։ Միակ բանը, որ անհանգստացնում էր Կոլյային, «ճստոնների» հարցն էր։ Նա իհարկե խորագույն արհամարհանքով էր նայում Կատերինայի անակնկալ դեպքին, բայց որբացած ճստոններին շատ էր սիրում և արդեն մանկական գիրք էր տարել նրանց։ Մեծը, Նաստյան, ութ տարեկան աղջիկ էր և կարդալ գիտեր, իսկ փոքր ճստոն, Կոստյան, յոթ տարեկան մի մանչուկ, շատ էր սիրում լսել, երբ Նաստյան կարդում էր նրա համար։ Կրաստոկինն անշուշտ կարող էր ավելի հետաքրքրական ձևով զբաղեցնել երեխաներին, այսինքն կողք-կողքի կանգնեցնել նրանց ու զինվոր-զինվոր խաղալ և կամ պահմտոցի սկսել ամբողջ տան մեջ։ Առաջ նա շատ անգամ արել էր այդ բանը և չէր խորշում դրանից, այնպես որ իրենց դասարանում մի անգամ նույնիսկ լուր տարածվեց, թե Կրաստոկինն իր տանը փոքրիկ վարձակալների հետ ձի-ձի է խաղում, ցատկոտում է կողքի լծած ձիու նման, գլուխը ծռելով, բայց Կրաստոկինը հպարտորեն հակահարված տվեց այդ մեղադրանքին, դիտել տալով, որ «մեր դարում» իսկապես ամոթալի կլիներ ձի-ձի խաղալ իր տարեկիցների՝ տասներեք տարեկան տղաների հետ, բայց ինքն այդ բանը անում է «ճստոնների» համար, որովհետև սիրում է նրանց, իսկ իր զգացմունքների համար ոչ ոք իրավունք չունի հաշիվ պահանջելու իրենից։ Դրա դիմաց երկու «ճստոններն» էլ պաշտում էին նրան։ Բայց այս անգամ նա խաղով զբաղվելու ժամանակ չուներ։ Սեփական շատ կարևոր գործ էր սպասում նրան, ըստ երևույթին համարյա թե խորհրդավոր մի գործ նույնիսկ, այնինչ ժամանակն անցնում էր, իսկ Ագաֆյան, որի խնամքին կարելի էր հանձնել երեխաներին, կարծես դեռ միտք էլ չուներ վերադառնալու շուկայից։ Կոլյան արդեն մի քանի անգամ անցել էր միջանցքը, վարձակալների դուռը բացել ու մտահոգ նայել էր «ճստոններին», որոնք իր հրամանով նստել ու գիրք էին կարդում. ամեն անգամ երբ բացում էր դուռը, նրանք լուռ ժպտում էին ամբողջ բերանով, սպասելով, որ ա՜յ նա հիմա ներս կմտնի և սքանչելի, զվարճալի մի բան կանի։ Բայց Կոլյան տագնապել էր ու ներս չէր մտնում։

Վերջապես խփեց ժամը տասնմեկը, և նա հաստատորեն ու վերջնականապես որոշեց, որ եթե տասը րոպեից չվերադառնա «անիծյալ» Ագաֆյան, ինքը առանց նրան սպասելու կգնա տնից, իհարկե «ճստոններից» խոսք առնելով, որ իր գնալուց հետո չեն վախենալու, շարություն չեն անելու և լաց չեն լինելու վախից։ Այսպես մտածելով, նա հագավ իր մուշտակն ոձիքով ձմեռային բամբակած վերարկուն, ուսից կախեց պայուսակը և, հակառակ մոր բազմիցս կրկնած խնդրանքին, որ «այսպիսի ցրտին» դուրս գալու ժամանակ միշտ կրկնակոշիկներ հագնի, պարզապես արհամարհանքով նայեց դրանց, երբ անցնում էր նախասենյակով, և միայն կոշիկները հագած դուրս եկավ հարկաբաժնից։ Պերեզվոնը, հագնված տեսնելով նրան, սկսեց ավելի ուժեղ դմդմբացնել պոչը հատակին, ամբողջ մարմնով ջղաձգվելով, և նույնիսկ ազիոդորմ մի կաղկանձ արձակեց, բայց Կոլյան, տեսնելով իր շան այդպիսի բուռն ձգտումը, որոշեց, որ դա կարգապահության խախտում է, և թեկուզ մի րոպե ևս, բայց դեռ ստիպեց նրան մնալ նստարանի տակ և հետո միայն, երբ արդեն բացել էր միջանցքի դուռը, հանկարծ սուլեց։ Շունը խենթի նման վեր թռավ ու սկսեց նրա առաջ ցատկոտել հրճվանքից։ Անցնելով միջանցքը, Կոլյան մյուս դուռը բացեց ու նայեց «ճստոններին»։ Երկուսն էլ առաջվա պես նստել էին փոքրիկ սեղանի առաջ, բայց արդեն չէին կարդում, այլ տաք-տաք վիճում էին մի բանի մասին։ Այս երեխաները հաճախ իրար հետ վիճում էին կյանքի խոռվիչ հարցերի շուրջ, և Նաստյան, մեծը լինելով, միշտ հաղթում էր. իսկ Կոստյան եթե համաձայն չլիներ նրա հետ՝ գրեթե միշտ դիմում էր Կոլյա Կրաստոկինին, և վերջինս ինչ որ ասեր՝ այդ էլ մնում էր որպես բացարձակ վճիռ երկու կողմերի համար։ Այս անգամ «ճստոնների» վեճը մի քիչ հետաքրքրեց Կրաստոկինին, և նա դռան մեջ կանգ առավ լսելու։ Երեխաները տեսան, որ նա լսում է, և ավելի մեծ եռանդով շարունակեցին հակաճառել իրար։

— Երբեք էլ, երբեք էլ չեմ հավատա,— լեզվին էր տալիս Նաստյան,— չեմ հավատա, որ մամիկները փոքրիկ երեխաներին բանջարանոցում են գտնում, կաղամբների մեջ։ Հիմա ձմեռ է, ոչ մի կաղամբ էլ չկա, և մամիկը չէր կարող Կատերինային աղջիկ բերել։

— Ֆյո՜ւ,— զարմացած սուլեց Կոլյան ինքն իրեն։

— Կամ էլ թե չէ՝ բերում են մի տեղից, բայց միայն նրանց համար, ովքեր ամուսնացել են։

Կոստյան սեղանն նայում էր Նաստյային, խորամտորեն լսում էր ու կշռադատում։

— Ինչ հիմար ես դու, Նաստյա,— ասաց նա վերջապես հաստատորեն և առանց տաքանալու,— ինչպե՞ս կարող է Կատերինան երեխա ունենալ, քանի որ չի ամուսնացել։

Նաստյան սոսկալի բորբոքվեց։

— Դու ոչինչ չես հասկանում,— ջղայնացած վրա տվեց նա,— գուցե ամուսին ունի, միայն թե բանտում է նստած, և ինքն էլ ահա երեխա ծնեց։

— Բայց ի՞նչ է, նրա ամուսինը բա՞նտ է գնացել,— լուրջ-լուրջ հարցրեց խելամիտ Կոստյան։

— Կամ էլ թե չէ,— թափով ընդհատեց Նաստյան, բոլորովին մի կողմ թողնելով ու մոռանալով իր առաջին վարկածը,— նա ամուսին չունի, ճիշտ ես ասում, բայց ուզում է ունենալ, և այ սկսել է մտածել՝ ինչպե՞ս անի, որ ամուսին ունենա, և մտածել է, մտածել է, այնքա՞ն է մտածել, որ ա՞յ, ոչ թե ամուսին, երեխա է ունեցել։

— Լավ, գուցե այդպես է,— համաձայնվեց Կոստյան, լրիվ պարտված։— Բայց դու առաջ այդպես չասացիր, ես որտեղի՞ց իմանայի։

— Է՛, երեխանե՛ր,— ասաց Գուլյան, սենյակ մտնելով ու մոտենալով նրանց,— տեսնում եմ՝ վտանգավո՞ր մարդիկ եք դուք։

— Պերեզվո՞նն էլ ձեզ հետ է,— ժպտաց Կոստյան և սկսեց մատները շխկացնելով կանչել Պերեզվոնին։

— Ճստոներ, ես գժվար կացության մեջ եմ,— սկսեց Կրասոտկինը լուրջ դեմքով,— և դուք պետք է օգնեք ինձ։ Ագաֆյայի տոքն է ջարդվել իհարկե, քանի որ մինչև հիմա դեռ չի գալիս, դա արդեն հաստատ բան է։ Իսկ ես պետք է դուրս գնամ։ Կթողնե՞ք, որ գնամ, թե չէ։

Երեխաները մտահոգված նայեցին իրար, նրանց ժպտուն դեմքերին անհանգստություն երևաց։ Բայց դեռ լրիվ չէին հասկանում, թե ինչ էր իրենցից ուզվածը։

— Եթե ես գնամ, շարությունչե՞ք անի։ Գահարանի վրա չե՞ք ելնի, ոտներդ չե՞ք ջարդի։ Մենակ որ մնաք, լաց չե՞ք լինի վախից։

Երեխաների դեմքին սոսկալի տխրություն երևաց։

— Իսկ ես կարող եմ ձեզ մի բան ցույց տալ դրա դիմաց, պղնձե թնդանոթ, կարելի է իսկական վառոդ դնել մեջը և կրակել։

Երեխաների դեմքը վայրկենապես պայծառացավ։

— Ցույց տվեք թնդանոթը,— ասաց Կոստյան ուրախությունից փայլելով։

Կրասոտկինը ձեռքը խոթեց պայուսակի մեջ, մի փոքրիկ բրոնզե թնդանոթ հանեց ու դրեց սեղանին։

— Ըհը՞, ցույց տամ, հա՞։ Տես, անիվներ ունի,— քշեց նա խաղալիքը սեղանի վրա,— և կարելի է կրակել։ Կոտորուք լցնել մեջը և կրակել։

— Եվ կսպանի՞։

— Ում ասես կսպանի, միայն թե նշան բռնես,— և Կրասոտկինը բացատրեց, թե որտեղ պետք է դնել վառոդը, որտեղ պետք է լցնել կոտորուքը, հրանցքի նման մի փոքրիկ ծակ ցույց տվեց և ասաց, թե կրակելու ժամանակ թնդանոթը ետ է ցատկում։ Երեխաները լսում էին ահռելի հետաքրքրությամբ։ Նրանց երևակայությունը հատկապես բորբոքվեց, երբ իմացան, որ թնդանոթը ետ է ցատկում։

— Իսկ վառոդ ունե՞ք,— հարցրեց Նաստյան։

— Ունեմ։

— Վառո՞դն էլ ցույց տվեք,— ծոր տվեց աղջնակը խնդրող ժպիտով։

Կրասոտկինը նորից խառնեց պայուսակը և հանեց մի փոքրիկ սրվակ, որի մեջ իսկական վառոդ էր լցված մի քիչ, իսկ մի ծալված թղթի մեջ էլ մի քանի հատիկ կոտորուք կար։ Նույնիսկ բացեց սրվակը և մի քիչ վառոդ թափեց ափի մեջ։

— Ահա, միայն թե կրակ չլինի որևէ տեղ, թե չէ՝ հենց ուղղակի կպայթի և բոլորիս էլ կսպանի,— զգուշացրեց Կրասոտկինը տգավորություն գործելու համար։

Երեխաներն ակնածալի սարսափով էին դիտում վառոդը, և սարսափն ավելի էր սրում նրանց հաճույքը։ Բայց կոտորուքն ավելի դուր եկավ Կոստյային։

— Իսկ կոտորուքը չի՞ վառվում,— հարցրեց նա։

— Չէ, չի վառվում։

— Մի քիչ կոտորո՞ւք տվեք ինձ,— ասաց նա աղաչական ձայնով։

— Կնվիրեմ մի քիչ կոտորուք, ահա՛, վերցրու, միայն թե մամայիդ ցույց չտաս մինչև իմ գալը, թե չէ կկարծի, որ վառոդ է, և ուղղակի կմեռնի վախից, ձեզ էլ մի լավ կծեծի։

— Մաման մեզ երբեք էլ փայտով չի ծեծում,— նկատեց իսկույն Նաստյան։

— Գիտեմ, ես պարզապես խոսքս կլորացնելու համար ասացի։ Եվ մամային էլ երբեք մի՛ խաբեք, բայց այս անգամ՝ մինչև իմ գալը։ Դե ուրեմն, ճստոներ, կարո՞ղ եմ գնալ, թե չէ, կա՞ց չե՞ք լինի վախից, եթե գնամ։

— Կա՛ց կը-լի-նե՛նք,— ձայնը գցեց Կոստյան, արդեն լալու պատրաստ։

— Կա՛ց կլինենք, անպայման կա՛ց կլինենք,— շուտասելուի պես վրա բերեց Նաստյան վախկոտ շեշտով։

— Օ՜հ, երեխաներ, երեխաներ, ինչ վտանգավո՞ր է ձեր տարիքը։ Ինչ անես, պետք է ուրեմն ձեզ հետ նստեմ, ճուտիկներ, էլ չգիտեմ քանի րոպե։ Իսկ ժամանակը անցնում է, ժամանա՜կը, ո՜ւխ։

— Ասեք Պերեզվոնին՝ թող մեռա՜ծ ձևացնի,— խնդրեց Կոստյան։

— Է՜հ, ինչ անես, Պերեզվոնին էլ պիտի դիմենք ուզածչուզած։ Իսի՛, Պերեզվոն։— Եվ Կոլյան սկսեց հրամայել շանը, շունն էլ սկսեց կատարել իր բոլոր իմացած հնարքները։ Փչլոտ շուն էր, մի տեսակ գորշ ու բաց մանիշակագույն, բակի սովորական շան մեծությամբ։ Աչ աչքը կույր էր, իսկ ձախ ականջը չգիտես ինչու ճեղքված էր։ Վնգստում ու ցատկոտում էր նա, կանգնում էր ետևի թաթերի վրա, քայլում էր այդպես, պառկում էր մեջքի վրա և չորս թաթերը վեր ցցած մնում անշարժ, մեռածի նման։ Այս վերջինը կատարելու ժամանակ կուրը բացվեց ու շեմին երևաց տիկին Կրասոտկինայի սպասուհին՝ քառասնամյա, գեր, ծաղկատար դեմքով Ագաֆյան, որ շուկայից էր վերադարձել ու գնած մթերքներով լեցուն մի տոպրակ ուներ ձեռքին։ Նա կանգ առավ և, տոպրակը ձախ ձեռքում ուղիղ բռնած, սկսեց նայել շանը։ Կոլյան, հակառակ որ անհամբեր սպասում էր Ագաֆյային, շընդհատեց «ներկայացումը», մի որոշ ժամանակ Պերեզվոնին պահեց մեռած վիճակում, հետո վերջապես սուլեց. շունը վեր թռավ և սկսեց ցատկել ուրախությունից, որ կատարել էր իր պարտականությունը։

— Այ քեզ շո՜ւն,— ասաց Ագաֆյան խրատական շեշտով։

— Իսկ դու ինչո՞ւ ուշացար, կինարմա՛ռ,— հարցրեց Կրասոտկինը սաստելու պես։

— Կինարմա՛ռ։ Սրա՜ն տեսեք, պզո՜ւկ։

— Պզո՞ւկ։

— Հա՛, պզուկ։ Քե՞զ ինչ, որ ուշացա։ Եթե ուշացել եմ, ուրեմն էդպես էր պետք,— մրթմրթաց Ագաֆյան, որ սկսել էր վառարանով զբաղվել։ Նրա ձայնի մեջ բոլորովին էլ դժգոհություն կամ բարկություն չկար, այլ ընդհակառակը, շատ գոհ էր, կարծես ուրախանում էր, որ առիթ էր գտել մի փոքր զվարճալու իր դեռատի ու կենսուրախ տիրոջ հետ։

— Լսի՛ր, թեթևամիտ պառավ,— սկսեց Կրասոտկինը, վեր կենալով բազմոցից,— կարո՞ղ ես դու ինձ երդվել ամեն ինչով, որ սուրբ է այս աշխարհում, և դեռ դրանից էլ ավելի մի բանով երդվել, որ ուշի-ուշով հսկելու ես ճստոներին իմ բացակայության ժամանակ։ Ես գնում եմ։

— Իսկ ինչի՞ քեզ երդվեմ որ,— ծիծաղեց Ագաֆյան,— առանց այն էլ կնայեմ երեխեքին։

— Չէ, պետք է երդվես քո հոգու հավիտենական փրկությամբ։ Թե չէ՝ չեմ գնա։

— Էհ, մի՛ գնա, ի՞մ ինչ գործն է։ Ցուրտ է դրսում, նստիր տանը։

— Ճստոնե՛ր,— դարձավ Կոլյան երեխաներին,— այս կինը կմնա ձեզ հետ մինչև իմ գալը կամ էլ մինչև ձեր մամայի գալը, որովհետև նա էլ պետք է վաղուց վերադառնար արդեն։ Բացի այդ, ձեզ նախաճաշ էլ կտա։ Կտա՞ս նրանց մի բան, Ագաֆյա։

— Կարելի է։

— Ցտեսություն, ճուտիկներ, հանգիստ սրտով գնում եմ։ Իսկ դու, տատ ջան,— կես ձայնով ու լուրջ-լուրջ ասաց նա երբ անցնում էր Ագաֆյայի մոտից,— հույս ունեմ, որ Կատերինայի մասին ձեր սովորական կնկա հիմարությունները չես փչի նրանց առաջ, կինայես նրանց մատղաշ տարիքը։ Իսի՛, Պերեզվոն։

— Դե գնա՛ բանիդ,— սաստեց Ագաֆյան արդեն բարկացած։— Խայտառա՛կ։ Քե՛զ պետք է ծեծել էդպիսի խոսքերի համար, ա՛յ թե ինչ։

III

ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Բայց Կոլյան արդեն չէր լսում։ Վերջապես կարող էր գնալ։ Դուրս գալով դարպասից, շուրջը նայեց, վեր քաշեց ուսերը, «Սառնամանի՞ք է» ասաց, ուղիղ գնաց փողոցով և հետո դարձավ աջ նրբանցքը, որ շուկայի հրապարակն էր տանում։ Դեռ հրապարակ չհասած, նախավերջին տան դարպասի առաջ կանգ առավ, գրպանից մի սուլիչ հանեց և սուլեց ամբողջ ուժով, ասես պայմանական նշան էր տալիս։ Հազիվ մեկ րոպե ստիպված եղավ սպասել, հանկարծ դարպասի դռնակից դուրս թռավ կարմիր այտերով, մոտ տասնմեկ տարեկան մի տղա, որ նույնպես ձմեռային վերարկու էր հագել, կոկիկ, նույնիսկ պճնագեղ մի վերարկու։ Սմուրովն էր, նախապատրաստական դասարանի մի տղա (այնինչ Կոլյա Կրասոտկինն արդեն երկու դասարան բարձր էր նրանից)։ բարեկեցիկ մի պաշտոնյայի որդին էր նա, և ծնողները կարծես թույլ չէին տալիս ընկերություն անել Կրասոտկինի հետ, որ կապը կտրած չար տղայի համբավ ուներ, այնպես որ Սմուրովը, պարզ է, գողտուկ էր ճողոպրել հիմա տնից։ Այս Սմուրովը, եթե ընթերցողը չի մոռացել, մեկն էր այն տղաներից, որ երկու ամիս առաջ քար էին նետում Իլյուշայի վրա, և նա էր, որ այն ժամանակ Իլյուշայի մասին պատմել էր Ալյոշա Կարամազովին։

— Մի ամբողջ ժամ ձեզ եմ սպասում, Կրասոտկին,— ասաց Սմուրովը վճռական արտահայտությամբ, և տղաները քայլեցին դեպի հրապարակ։

— Ուշացա,— պատասխանեց Կրասոտկինը։— Որոշ հանգամանքներ կային։ Քեզ չե՞ն ծեծի, որ ինձ հետ ես գալիս։

— Դե լա՛վ, ինձ ե՞րբ են ծեծել որ։ Պերեզվո՞նն էլ ձեզ հետ է։

— Այո։

— Նրա՞ն էլ այնտեղ եք տանում։

— Նրան էլ։

—Ա՜խ, եթե Ժուչկան լիներ։

— Անկարելի է։ Ժուչկան չկա։ Ժուչկան կորավ անհայտության խավարի մեջ։

— Ախ, չէ՞ր կարելի, որ այսպես անեինք,— կանգ առավ

հանկարծ Սմուրովը։— Գիտե՞ս ինչ, Իլյուշան ասում է, որ Ժուչկան էլ փրչոտ է եղել, այսպես գորշ, ծխի գույն, ճիշտ Պերեզվոնի նման։ Չի՞ լինի որ ասենք՝ սա հենց այն Ժուչկան է, գուցե հավատա, հա՞։

— Դպրոցակա՞ն, խորշիր սուտ ասելուց, այս մեկ։ Նույնիսկ բարի գործի համար սուտ մի՛ խոսիր, այս էլ երկուս։ Իսկ ամենակարևորը՝ հույս ունեմ, որ այնտեղ ոչինչ չես ասել իմ գալու մասին։

— Աստվա՜ծ չանի, ես հո հասկանում եմ։ Բայց Պերեզվոնով նրան չես մխիթարի,— հառաչեց Սմուրովը։— Գիտե՞ս ինչ, նրա հայրը, այդ կապիտանը, «Ճիլո՜պը», մեզ ասաց, որ այսօր մի շան ձագ է բերելու նրան, իսկական գամփռի ձագ, սև գնչով։ Կարծում է, որ դրանով կմխիթարի Իլյուշային, բայց հազիվ թե, հա՞։

— Իսկ ինչպե՞ս է ինքը՝ Իլյուշան։

— Ա՜խ, վատ է վիճակը, վատ։ Կարծում եմ՝ թոքախտ է։ Ուշքը լրիվ տեղն է, միայն թե այնպես արագ-արագ է շնչում, վատ է շնչում, վատ։ Անցյալ օրը խնդրեց, որ մի քիչ ման ածեն իրեն, կոշիկները հագցնեն, փորձեց քայլել, բայց չէր կարողանում ոտքի վրա մնալ։ «Ախ հայրիկ,— ասաց,— քեզ ասել եմ, որ վատ են իմ կոշիկները, այս հին կոշիկները, առաջ էլ գժվար էի քայլում սրանցով»։ Կարծում էր՝ կոշիկներից է, որ չի կարողանում ոտքի վրա մնալ, բայց պարզապես թուլությունից էր։ Մի շաբաթ էլ չի ապրի։ Հերցենշտուբեն գալիս նայում է։ Հիմա նորից հարուստ են նրանք, շատ փող ունեն։

— Խաբեբաներ են։

— Ովքե՞ր են խաբեբաները։

— Բժիշկները և ամբողջ այդ բժշկական ոհմակը առհասարակ, և անշուշտ նաև մասնավորապես։ Ես չեմ ընդունում բժշկությունը։ Անօգուտ հաստատություն է։ Եվ սակայն այդ բոլորը դեռ կուսումնասիրեմ ես։ Բայց այդ ի՞նչ քնքուշ զգացմունքներ եք սկսել այնտեղ։ Կարծեմ ամբողջ դասարանով եք գնում մոտը, հա՞։

— Ոչ ամբողջ դասարանը, մերոնցից մի տասը հոգի գնում է միշտ, ամեն օր։ Բան չկա դրա մեջ։

— Այս բոլորի մեջ ինձ զարմացնում է Ալեքսեյ Կարամազովի դերը։ վաղը կամ մյուս օր նրա եղբորը դատում են այդ-

պիսի ոճրագործության համար, իսկ ինքը այնքա՞ն ժամանակ ունի, որ տղաների հետ փափկասրտություն է անում։

— Այստեղ ոչ մի փափկասրտություն էլ չկա։ Այ դու ինքդ էլ հիմա գնում ես Իլյուշայի հետ հաշտվելու։

— Հաշտվելո՞ւ։ Միծաղելի՛ խոսք։ Այն էլ ասեմ, որ ոչ ոքի թույլ չեմ տա իմ արարքները վերլուծել։

— Բայց Իլյուշան ինչպե՞ս կուրախանա, երբ քեզ տեսնի։ Նրա մտքովն էլ չի անցնում, որ դու կգնաս մոտը։ Ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չէիր ուզում գնալ,— հանկարծ սրտանց բացականչեց Սմուրովը։

— Դա ի՛մ գործն է, սիրելի տղաս, ոչ թե քոնը։ Ես իմ կամքով եմ գնում, որովհետև այդպես եմ ուզում, իսկ ձեզ բոլորիդ Ալեքսեյ Կարամազովը քաշ տվեց այնտեղ. դե ուրեմն տարբերություն կա։ Եվ որտեղի՞ց գիտես, գուցե բոլորովին էլ հաշտվելու չեմ գնում։ Հիմա՛ր խոսք։

— Ոչ, ոչ, Կարամազովը չէր, բոլորովին նա չէր։ Մերոնք հենց ինքները սկսեցին գնալ, սկզբում իհարկե Կարամազովի հետ։ Եվ ոչ մի այդպիսի բան էլ չեղավ, ոչ մի հիմարություն։ Նախ մեկը գնաց, հետո մյուսը։ Հայրը սոսկալի ուրախացավ, որ գնացինք։ Գիտե՞ս, նա պարզապես կխելագարվի, եթե մահանա Իլյուշան։ Նա տեսնում է, որ Իլյուշան կմեռնի։ Բայց ինչքա՞ն ուրախ էր, որ մենք եկանք ու հաշտվեցինք Իլյուշայի հետ։ Իլյուշան քո մասին հարցրեց, հետո էլ ոչինչ չասաց։ Հենց հարցնում է ու լռում։ Իսկ հայրը կա՞մ կխելագարվի, կամ էլ կկախի իրեն։ Առաջ էլ նա խելագարի պես էր պահում իրեն, չէ՞։ Գիտե՞ս, նա ազնիվ մարդ է, և այն ժամանակ սխալ բան եղավ։ Ամբողջ այդ հայրասպանն է մեղավոր՝ ծեծեց նրան այն ժամանակ։

— Բայց համենայն դեպս Կարամազովը հանելուկ է ինձ համար։ Կարող էի վաղուց ծանոթանալ հետը, բայց որոշ դեպքերում ես սիրում եմ հպարտ լինել։ Եվ մեկ էլ՝ նրա մասին մի որոշ կարծիք եմ կազմել և դեռ պետք է ստուգեմ իմ կարծիքը, պարզեմ։

Կոլյան լռեց՝ լուրջ դեմք ընդունելով։ Սմուրովն էլ լուռ մնաց։ Սմուրովն անշուշտ պաշտում էր Կոլյա Կրասոտկինին և չէր էլ համարձակվում մտածել, թե ինքը կարող է նրա հավասարը լինել։ Իսկ հիմա սաստիկ հետաքրքրվել էր, որովհետև Կոլյան ասաց, թե ինքը «իր կամքով» է գնում. ուրեմն անպայման մի հանելուկ կա այստեղ, եթե Կոլյան որոշել է հիմա գնալ, հենց այսօր։ Նրանք անցնում էին շուկայի հրապարակով, ուր գյուղերից եկած բազմաթիվ սայլեր կային ու տեսակ-տեսակ կենդանի թռչուններ։ Քաղաքի մանրավաճառ կանայք, տաղավարներում կանգնած, օղաբլիթ, կարի թել և այլ իրեր էին ծախում։ Այդպիսի կիրակնօրյա շուկաները մեր քաղաքում միամտորեն կոչվում են տոնավաճառներ, և այդպիսի տոնավաճառները հաճախ են լինում տարվա մեջ։ Պերեզվոնը վազվզում էր ամենաակայտառ տրամադրությամբ, անընդհատ շեղվելով աջ կամ ձախ՝ մի որևէ տեղ մի որևէ բան հոտոտելու։ Երբ ուրիշ շների էր հանդիպում, արտակարգ կտղանքով հոտվտում էր նրանց հետ, ըստ շնական բոլոր կանոնների։

— Ես սիրում եմ դիտել կյանքի ճշմարտությունը, Սմուրով,— ասաց հանկարծ Կոլյան։— Նկատե՞լ ես, թե ինչպես շները հանդիպում ու հոտվտում են իրար։ Բնության ընդհանուր մի օրենք կա նրանց արածի մեջ։

— Այո, մի տեսակ ծիծաղելի բան։

— Այսինքն ո՞չ թե ծիծաղելի, ճիշտ չես ասում։ Մարդն իր նախապաշարմունքներով ի՞նչ ուզում է կարծի, բնության մեջ ոչ մի ծիծաղելի բան չկա։ Եթե շները կարողանային դատողություններ անել և քննադատել մեզ, վստահ եմ՝ նրանք էլ իրենց տերերի, այսինքն մարդկանց սոցիալական փոխհարաբերությունների մեջ ծիծաղելի բաներ կգտնեին իրենց համար, նույնքան կգտնեին, եթե ոչ շատ ավելի. կրկնում եմ՝ եթե ոչ շատ ավելի, որովհետև հաստատ համոզված եմ, որ մեր հիմարությունները շատ ավելի շատ են։ Սա Ռակիտինի միտքն է, սքանչելի մի միտք։ Ես սոցիալիստ եմ, Սմուրով։

— Իսկ ի՞նչ է սոցիալիստը,— հարցրեց Սմուրովը։

— Այն է, որ բոլորը հավասար լինեն, բոլորը մի ընդհանուր սեփականություն ունենան, ամուսնություններ չլինեն, իսկ կրոնն ու բոլոր օրենքները՝ ով ինչպես ուզում է, և դեռ սրանց նման շատ բաներ։ Քեզ համար շուտ է, դեռ այնքան չես հասունացել, որ հասկանաս։ Բայց ցուրտ է, հա՞։

— Այո։ Տասներկու աստիճան է։ Քիչ առաջ հայրիկս ջերմաչափը նայեց։

— Եվ նկատե՞լ ես, Սմուրով, ձմեռվա կեսին եթե տասներեք աստիճան է լինում կամ նույնիսկ տասնութը, այնքան էլ ցուրտ չի թվում, ինչպես օրինակ հիմա, ձմեռվա սկզբին, երբ

Հանկարծ տասներկու աստիճան սառնամանիքն է կոխում միանգամից, այ ինչպես այսօր, և մանավանդ երբ ձյունն էլ քիչ է։ Դա նշանակում է, որ մարդիկ դեռ չեն վարժվել։ Ամեն ինչ սովորություն է մարդկանց կյանքում, ամեն ինչ, նույնիսկ պետական ու քաղաքական փոխհարաբերությունների մեջ։ Սովորությունը գլխավոր շարժիչ ուժն է։ Բայց տես, ի՞նչ ծիծաղելի է այս գյուղացին։

Կոլյան ցույց տվեց մի բարձրահասակ, ոչխարենու մորթի հագած գյուղացու, որ բարի դեմք ուներ և, իր սայլի մոտ կանգնած, ափերը ցրտից խփում էր իրար, թեև թաթմաններ կային ձեռքերին։ Նրա երկար, շեկ մորուքն ամբողջովին եղյամ էր պատել։

— Գյուղացու մորուքը սառե՞լ է,— բարձր ու գրգռիչ շեշտով դառաց Կոլյան, երբ անցնում էր նրա մոտից։

— Շատերինն է սառել,— հանգիստ ու խրատելու պես պատասխանեց գյուղացին։

— Մի՛ բարկացնի նրան,— նկատեց Սմուրովը։

— Ոչինչ, չի բարկանա, լավ մարդ է։ Մնաս բարով, Մատվեյ։

— Գնաս բարով։

— Բայց ինչ է, Մատվե՞յ է անունդ։

— Մատվեյ է։ Չէի՞ր իմանում։

— Չէ։ Հենց այնպես ասացի։

— Հլա տե՛ս։ Ինչ որ դպրոցական ես, հա՞։

— Հա, դպրոցական։

— Ինչ է, ծեծո՞ւմ են քեզ։

— Շատ էլ չէ, բայց մեկ-մեկ։

— Ցավո՞ւմ է։

— Դա էլ է պատահում։

— Է՛խ աշխարհ, աշխա՞րհ,— հառաչեց գյուղացին սրտի խորքից։

— Մնաս բարով, Մատվեյ։

— Գնաս բարով։ Անուշ տղա ես դու, այ ասեմ քեզ։

Տղաները շարունակեցին իրենց ճանապարհը։

— Լավ գյուղացի էր,— ասաց Կոլյան Սմուրովին։— Ես սիրում եմ խոսել ժողովրդի հետ և միշտ պատրաստ եմ նրան իրավունք տալու։

— Ինչո՞ւ նրան սուտ ասացիր, որ ծեծում են մեր դպրոցում,— հարցրեց Սմուրովը։

— Պե՛տք էր նրան մխիթարել, չէ՞։

— Ինչպե՞ս թե մխիթարել։

— Գիտե՞ս ինչ, Սմուրով, չեմ սիրում, երբ առաջին բառից չեն հասկանում մի բան և նորից են հարցնում։ Կան բաներ, որ բացատրել էլ չի լինի։ Գյուղացու հասկացողությամբ՝ դպրոցականին ծեծում են և պետք է ծեծեն. էլ ի՞նչ դպրոցական, եթե ծեծ չի ուտում։ Եվ մեկ էլ հանկարծ ասեի նրան, թե մեր դպրոցում չեն ծեծում, կտխրեր, չէ՞։ Բայց դու չես հասկանա այս բանը։ Պետք է ժողովրդի հետ խոսելու ձևն իմանալ։

— Միայն թե մի՛ նեղացնիր նրանց, խնդրում եմ, թե չէ նորից պատմություն կստացվի, ինչպես այն սագի դեպքը եղավ։

— Ինչ է, վախենո՞մ ես։

— Մի՛ ծիծաղիր, Կոլյա, իսկապես որ վախենում եմ։ Հայրս սոսկալի կբարկանա։ Ինձ խստիվ արգելված է քեզ հետ մտնելը։

— Հանգիստ եղիր, այս անգամ ոչինչ չի պատահի։ Բարև՛, Նատաշա,— գոռաց նա՝ տաղավարում կանգնած մանրավաճառ մի կնոջ։

— Չէ՛ մի, էլ ի՞նչ կասես. ես Մարյա եմ, ոչ թե Նատաշա,— ճղճղան ձայնով պատասխանեց կինը, որ դեռ բոլորովին էլ պառավ չէր։

— Շատ լավ է, որ Մարյա ես, ցտեսությո՛ւն։

— Ա՜խ, թոկից փախած լակոտ, մի թիզ բոյ ունես, բայց արդեն ճամփեն բռնել ես, հա՞։

— Դե, դե, ժամանակ չունեմ, մյուս կիրակի կպատմես,— ձեռքերը թափ տվեց Կոլյան, կարծես թե նա՛ էր իրեն խոսք գցել, ոչ թե ինքը նրան։

— Ե՞ս եմ քեզ բան պատմելու կիրակի օրը։ Ինքդ ինձ կպար, ոչ թե ես քեզ, կովազա՛ն լակոտ,— գոռգոռաց Մարյան։— Մի լավ պետք է դնքսել քեզ, հասկացա՞ր, աշխարհը գիտի, որ խուժանի մեկն ես, հասկացա՞ր։

Մյուս մանրավաճառ կանայք, որ Մարյայի հետ կանգնել էին տաղավարում, քահ-քահ ծիծաղեցին։ Մեկ էլ հանկարծ, չգիտես ինչու, մի ջղայնացած մարդ դուրս վազեց քաղաքային

խանութների կամարակապ նրբանցքից. առևտրական գործակատար էր կարծես, բայց մերոնցից չէր, այլ եկվոր, կապույտ ու երկար բաճկոն էր հագել, հովարով գլխարկ, երիտասարդ էր՝ մուգ շագանակագույն գանգուրներով ու երկար, գունատ, ծաղկատար դեմքով։ Մի տեսակ հիմարորեն բորբոքվել էր և անմիջապես սկսեց բռունցքով սպառնալ Կոլյային։

— Ես քեզ գիտե՞մ,— բացականչում էր ջղայնացած,— ճանաչու՞մ եմ քեզ։

Կոլյան ուշի-ուշով նայեց նրան։ Չէր էլ կարողանում հիշել, թե ինքը երբևիցե վեճ ու կռիվ ունեցե՞լ էր այդ մարդու հետ։ Բայց որքա՞ն ասես վեճ ու կռիվ էր ունեցել փողոցներում, հնարավո՞ր էր հիշել այդ բոլորը։

— Ճանաչո՞ւմ ես,— հեգնորեն հարցրեց նա։

— Ես քեզ գիտե՞մ։ Ես քեզ գիտե՞մ,— հիմարի պես իրենն էր պնդում քաղքենին։

— Ավելի լավ քե՛զ համար։ Դե՛հ, ժամանակ չունեմ, մնաս բարով։

— Ինչի՞ ես կովշտում,— գոռաց մարդը։— Էլի կռիվ ես ման գալի, հա՞։ Ես քեզ գիտե՞մ։ Էլի կռի՞վ ես ման գալի։

— Էլ քո ի՞նչ գործն է հիմա, ախպերս, կռի՞վ եմ ման գալի, թե չէ,— ասաց Կոլյան, կանգ առնելով ու շարունակելով գիտել նրան։

— Ո՞նց թե իմ ինչ գործը։

— Այնպես։ Քո գործը չէ։

— Իսկ ո՞ւմ գործն է։ Ո՞ւմ գործը։ Ո՞ւմ գործն է, հը՞։

— Հիմա դա Տրիֆոն Նիկիտիչի գործն է, ախպերս, ոչ թե քոնը։

— Էդ ո՞ր Տրիֆոն Նիկիտիչի,— ապուշ զարմանքով հարցրեց երիտասարդը և աչքերը չորս բացած նայեց Կոլյային, թեև դեռ շարունակում էր բորբոքված մնալ։ Կոլյան ոտից գլուխ չափեց նրան հայացքով։

— Սուրբ Հարություն գնացի՞ր,— հարցրեց նա հանկարծ խիստ ու անհողդողդ շեշտով։

— Ի՞նչ սուրբ Հարություն։ Ինչո՞ւ։ Չէ, չեմ գնացել,— շվարեց մի քիչ երիտասարդը։

— Սաբանեևին գիտե՞ս,— ավելի խիստ ու ավելի անհողդողդ շարունակեց Կոլյան։

— Ի՞նչ Սաբանեև։ Չէ, չգիտեմ։

— Դե ուրեմն գրո՛ղը տանի քեզ,— կարճ կտրեց հանկարծ Կոլյան և, կտրուկ աջ դառնալով, արագ շարունակեց իր ճամփան, կարծես թե խոսելն իսկ ավելորդ էր համարում այնպիսի մի տխմարի հետ, որ անդամ Սաբանեևին չի ճանաչում։

— Սպասի տո՛, հե՛յ։ Էդ ի՞նչ Սաբանեև է,— ուշքի եկավ երիտասարդը, նորից գլխովին բորբոքված։— Էդ ի՞նչ էր ասածը,— դարձավ հանկարծ մանրավաճառ կանանց, հիմարհիմար նայելով նրանց։

Կանայք ծիծաղեցին։

— Տարօրինակ տղա է, բան չես հասկանա,— ասաց նրբանցից մեկը։

— Էդ ի՞նչ Սաբանեև էր ասում, ի՞նչ Սաբանեև,— կրկնում էր երիտասարդը մոլեգնորեն, շարունակ թափ տալով աջ ձեռքը։

— Կա-չկա՝ դա էն Սաբանեևն է, որ Կուզմիչևների մոտ էր ծառայում, այ հենց նա է, նա,— կռահեց հանկարծ մի կին։

Երիտասարդը մի խուլ հայացք սևեռեց նրան։

— Կուզ-մի-չև՞,— մեջ ընկավ մի ուրիշ կին,— բա նրա անունը Տրիֆո՞ն է։ Կուզմա է, ոչ թե Տրիֆոն, իսկ տղեն Տրիֆոն Նիկիտիչ ասաց, ուրեմն նա չի։

— Ինձ լսեք, նա ոչ Տրիֆոն է, ոչ էլ Սաբանեև, Չիժով է, Չիժով,— վրա բերեց հանկարծ մի երրորդ կին, որ մինչ այդ լուռ կանգնել ու լրջորեն լսում էր։— Այնքսեյ Իվանիչ են ասում նրան։ Չիժով, Ալեքսեյ Իվանովիչ։

— Հենց էդպես էլ է՝ Չիժով,— վստահորեն հաստատեց չորրորդ կինը։

Շշմած երիտասարդը մեկ սրան էր նայում, մեկ նրան։

— Բայց ինչի՞ էր հարցնում, է՞, ինչի՞ էր հարցնում, ասեք ինձ, աս

— Ո՞վ կարող է իմանա ինչի է նա քեզ հարկավոր,— վրա բերեց մի ուրիշը,— ինքդ պետք է իմանաս ինչ ես ուզում նրանից, որ էսպես ղողոջը գցել ես։ Ախր նա քո՞ զ առաց, ոչ թե մեզ, այ թե հիմարն ես, հա՞։ Ինչ է, իսկապե՞ս չգիտես նրան։

— Ո՞ւմ։

— Զիժովին։

— Դե գրո՞ղը տանի Զիժովին էլ, քեզ էլ։ Մի լավ ջարդելու եմ նրան, ա՛յ ասում եմ։ Սիծաղու՞մ էր ինձ վրա։

— Էդ դու Զիժովի՞ն ես ջարդում, ինչ է։ Թե նա՞ է քեզ ջարդում։ Հիմարի մեկն ես, հա՞։

— Չէ, չէ, Զիժովին չէ, անպիտա՞ն կնիկ, օձի կծած, էն տղին եմ ջարդելու, հասկացա՞ր։ Բռնե՞ք նրան, բերեք էստեղ, ծիծաղում էր ինձ վրա։

Կանայք քրքջում էին։ Իսկ Կոլյան արդեն հեռացել էր հաղթական տեսքով։ Սմուրովը քայլում էր նրա կողքից, ետ դառնալով ու նայելով հեռվում զոռզոռացող այդ խմբին։ Նրա տրամադրությունն էլ շատ բարձր էր, թեև դեռ վախենում էր, որ չլինի թե փորձանքի մեջ ընկնի Կոլյայի հետ։

— Այդ ի՞նչ Սարաննեն էր,— հարցրեց նա Կոլյային, նախազգալով պատասխանը։

— Շա՞տ գիտեմ ինչ Սարաննեն է։ Հիմա նրանք մինչև իրիկուն կզոռզոռան։ Ես սիրում եմ թափ տալ հիմարներին՝ հասարակության բոլոր խավերում։ Ահա մի դմբո էլ է կանգնել, ահա այս գյուղացին, տես։ Ասում են՝ «Չկա ավելի հիմար բան, քան հիմար ֆրանսիացին», բայց նկատի ունեցիր, որ ռուսի դեմքն էլ մատնում է ինքն իրեն։ Դե ա՛յ, սրա դեմքին չի՞ գրված, որ հիմարի մեկն է, ահա այս գյուղացու դեմքին, հը՞։

— Հանգիստ թող նրան, Կոլյա, անցնենք գնանք։

— Չէ՞, ոչ մի դեպքում, ախորժակս եկել է արդեն։ Հե՞յ, բարի օր, գյուղացի ախպեր։

Կլոր ու հիմարավուն դեմքով, ալեխառն մորուքով հաղթանդամ գյուղացին, որ երևի խմել էր արդեն և դանդաղ անցնում գնում էր, գլուխը բարձրացրեց և նայեց տղային։

— Դե լավ, բարի օր, եթե հանաք չես անում,— պատասխանեց նա անշտապ։

— Իսկ եթե հանա՞ք եմ անում,— ծիծաղեց Կոլյան։

— Է՛հ, անում ես, արա, ասվածք քեզ հետ։ Ինչ կա որ։ Արածդ թող հանաք լինի, դա միշտ էլ կարելի է։

— Կներես, ախպերս, հանաք էր։

— Է՛հ, ասվածք քեզ ներե։

— Իսկ դու, դո՛ւ ներո՞ւմ ես։

— Շատ լավ էլ ներում եմ։ Գնա բանիդ։

— Տես է՞, դու խելոք գյուղացի ես երևում։

— Քեզնից խելոք եմ,— պատասխանեց գյուղացին անսպասելիորեն և նույն ծանրակշիռ արտահայտությամբ։

— Հազիվ թե,— շփոթվեց մի քիչ Կոլյան։

— Ճիշտ եմ ասում։

— Գուցե և այդպես է։

— Հա, էդպես է, ջանիկս։

— Մնաս բարով, գյուղացի ախպեր։

— Գնաս բարով։

— Գյուղացիները բոլորն էլ նույնը չեն լինում,— նկատեց Կոլյան մի փոքր լռելուց հետո, դիմելով Սմուրովին։— Որտեղի՞ց իմանալի, որ խելոքին կհանդիպեմ։ Ես միշտ պատրաստ եմ ընդունելու, որ խելք ասված բանը կա՛ ժողովրդի մեջ։

Հեռվում մայր եկեղեցու ժամացույցը տասնմեկ անգ կեսք խփեց։ Տղաներն սկսեցին շտապել և արագորեն, գրեթե առանց խոսելու անցան մնացած ճանապարհը, որ դեռ բավական երկար էր՝ մինչև փոխկապիտան Սենգիրյովի բնակարանը։ Քսան քայլ էր մնացել, երբ հանկարծ Կոլյան կանգ առավ և Սմուրովին պատվիրեց առաջ գնալ և Կարամազովին կանչել դուրս՝ իր մոտ։

— Գեղեցիկ է նախօրոք շոշափել մի քիչ,— նկատեց նա։

— Բայց ի՞նչ կարիք կա դուրս կանչելու,— առարկեց Սմուրովը,— հենց ուղղակի մտիր, սոսկալի կուրախանան, որ եկել ես։ Թե չէ այս ցրտին ծանոթանա՞լն ինչ է։

— Ե՛ս գիտեմ, թե ինչու եմ նրան դուրս կանչում այս ցրտին,— կարճ կտրեց Կոլյան տիրական շեշտով (նա շատ էր սիրում այդ ձևով խոսել այս «փոքրերի» հետ), և Սմուրովը վազեց հրամանը կատարելու։

IV

ԳՈՒՉԿԱՆ

Կոլյան դեմքի ծանրակշիռ արտահայտությամբ հենվեց ցանկապատին և սպասեց Ալյոշայի երևալուն։ Այո, վաղուց արդեն ուզում էր հանդիպել նրան։ Ալյոշայի մասին շատ էր լսել

տղաներից, բայց մինչև հիմա միշտ էլ արհամարհական անտարբերություն էր ցուցաբերել արտաքուստ, երբ խոսում էին նրա մասին, նույնիսկ «քննադատել» էր նրան, լսելով այն, ինչ հաղորդում էին իրեն նրա ասածներից։ Բայց սրտի խորքում շատ, շատ էր ուզում ծանոթանալ. համակրական ու գրավիչ մի բան կար այն բոլոր պատմությունների մեջ, որ լսել էր Ալյոշայի մասին։ Այսպիսով, ներկա պահը կարևոր էր Կոլյայի համար. նախ և առաջ, պետք է այնպես աներ, որ ամոթով չմնար, իր անկախությունը ցույց տար. «Թե չէ կմտածի, որ տասներեք տարեկան եմ և ինձ էլ սրանց նման երեխայի տեղ կդնի։ Իսկ ի՞նչ է ուզում այս երեխաներից։ Կհարցնեմ, երբ լավ ծանոթանամ հետը։ Բայց վատ է, որ այսքան կարճ է հասակս։ Տուզիկովը փոքր է ինձնից, բայց մի կես գլխով ավելի երկար է։ Բայց խելացի դեմք ունեմ. գեղեցիկ չեմ, նույնիսկ գիտեմ, որ զզվելի եմ դեմքով, բայց խելացի է դեմքս։ Եվ մեկ էլ՝ կարիք չկա շատ բացվելու, թե չէ հենց միանգամից որ գիրկն ընկնեմ, կարող է մտածել... Թո՛ւհ, ինչ զզվելի բան կլինի, եթե մտածի, որ...»։

Այսպես հուզվում էր Կոլյան, ամբողջ էությամբ ջանալով խիստ անկախ տեսք ընդունել։ Հատկապես նրան տանջում էր կարճ հասակը. ոչ այնքան իր «զզվելի» դեմքը, որքան հենց կարճ հասակը։ Տան մի անկյունում, պատի վրա, դեռ անցյալ տարի մատիտով մի գիծ էր քաշել, նշելով իր հասակը, և դրանից հետո երկու ամիսը մեկ մոտենում էր պատին անձկությամբ, տեսնելու համար, թե որքան է աճել։ Բայց ավա՜ղ, սոսկալի դանդաղ էր աճում, և դա երբեմն պարզապես հուսահատության էր մատնում նրան։ Իսկ դեմքը բնավ էլ «զզվելի» չէր, այլ ընդհակառակը՝ բավական առինքնող էր, սպիտակ, դալկավուն, պեպենոտ։ Մոխրագույն, փոքր, բայց վառվռուն աչքերը նայում էին հանդուգն հայացքով և հաճախ զգացմունքն էր բոցավառվում նրանց մեջ։ Այտոսկրերը մի քիչ լայն էին, շրթունքները՝ փոքր, ոչ շատ հաստ, բայց շատ կարմիր. քիթն էլ փոքր էր և որոշակիորեն վեր ցցված։ «Ուղղակի կճատ քիթ է, կճա՜տ քիթ»,— մրթմրթում էր ինքնիրեն Կոլյան, երբ հայելու մեջ էր նայում, և միշտ էլ վրդովմունքով էր հեռանում հայելուց։ «Բայց գուցե դե՞մքս էլ խելացի չէ»,— մտածում էր նա երբեմն, նույնիսկ դրան էլ կասկածելով։ Եվ սակայն պետք չէ կարծել, թե իր դեմքի ու հասակի մասին մտահոգությունը կլանում էր

նրա ամբողջ խելքն ու միտքը։ Ընդհակառակը, որքան էլ դառն լինեին այդ բոպեները հայելու առաջ, շուտով մոռանում էր դրանք, և նույնիսկ երկար ժամանակ մոռանում, «լիովին հանձնվելով գաղափարներին և իրական կյանքին», ինչպես ինքն էր բնորոշում իր գործունեությունը։

Ալյոշան շուտով երևաց և շտապ մոտեցավ Կոլյային։ Դեռ մի քանի քայլ հեռվից Կոլյան տեսավ, որ Ալյոշայի դեմքը մի տեսակ շատ ուրախ էր։ «Մի՞թե այդքան ուրախ է, որ ինձ է տեսնում»,— մտածեց Կոլյան գոհունակությամբ։ Այստեղ ի դեպ նշենք, որ Ալյոշան շատ էր փոխվել այն օրից, երբ վերջին անգամ տեսանք նրան. հանել էր պարեգոտը և սքանչելի կարված սերթուկ էր հագնում հիմա, կլոր ու փափուկ գլխարկ, մազերն էլ կարճ էին կտրված։ Այս բոլորը շատ էին գեղեցկացրել նրան, ուղղակի սիրունիկ մի տղամարդ էր դարձել։ Նրա առինքնող դեմքին միշտ էլ ուրախ արտահայտություն կար, բայց դա մի տեսակ մեղմ ու հանգիստ ուրախություն էր։ Կոլյան զարմացավ, որ Ալյոշան դուրս էր եկել առանց վերարկուի, հենց այն հագուստով, որով նստել էր սենյակում. երևում էր, որ շտապել է։ Նա ուղղակի ձեռքը մեկնեց Կոլյային։

— Ահա վերջապես դուք էլ եկաք։ Ի՞նչ անհամբեր սպասում էինք ձեզ բոլորս։

— Պատճառներ կային, հիմա ֆիմանաք։ Համենայն դեպս, ուրախ եմ, որ ծանոթանում եմ։ Վաղուց էի սպասում առիթի և շատ եմ լսել,— մրթմրթաց Կոլյան, և շունչը կտրվեց մի քիչ։

— Մենք այնուամենայնիվ պիտի ծանոթանայինք իրար, ինքս էլ ձեր մասին շատ եմ լսել։ Բայց այստեղ, այստե՞ղ ուշ եկաք։

— Ասացեք, ինչպե՞ս է դրությունը այստեղ։

— Իլյուշան շատ վատ է, կմահանա անպայման։

— Ի՞նչ եք ասում։ Ընդունեցեք, որ բժշկությունը ստոր բան է, Կարամազով,— բացականչեց Կոլյան եռանդագին։

— Իլյուշան հաճախ, շատ հաճախ էր հիշում ձեզ, նույնիսկ քնած ժամանակ, զառանցանքի մեջ, գիտե՞ք։ Երևում է, որ դուք առաջ շատ, շատ թանկ եք եղել նրա համար... մինչև այն գեպքը... դանակը... Մի ուրիշ պատճառ էլ կա... Ասացեք, սա ձե՞ր շունն է։

— Իմն է։ Պերեզվոն։

— Եվ ո՞չ թե Ժուչկա,— Ալյոշան ցավագին նայեց Կոլյայի աչքերի մեջ։— Այնպես էլ կորավ-գնա՞ց Ժուչկան։

— Գիտեմ, բոլորդ էլ կուզեիք, որ Ժուչկան լիներ, ամեն ինչ լսել եմ,— խորհրդավոր ժպտաց Կոլյան։— Լսեցեք, Կարամազով, ես ձեզ կբացատրեմ ամբողջ խնդիրը, հենց դրա համար եմ եկել, դրա համար էլ դուրս կանչեցի ձեզ. նախօրոք բացատրեմ ամբողջ պատմությունը, ներս մտնելուց առաջ,— աշխուժորեն սկսեց նա։— Հասկանո՞ւմ եք, Կարամազով, զարնանն էր՝ Իլյուշան նախապատրաստական դասարանը մտավ։ Դե գիտեք մեր նախապատրաստական դասարանը՝ պստիկ տղաներ են, երեխաներ։ Հենց իսկույն սկսեցին կպնել Իլյուշային։ Ես երկու դասարան բարձր եմ, և պարզ է՝ հեռվից եմ նայում, կողմնակի անձ։ Տեսնում եմ՝ փոքրիկ, թուլ տղա է, բայց գլուխ չի թեքում, նույնիսկ կռվում է նրանց հետ, հպարտ է, աչուկները վառվում են։ Սիրում եմ այդպիսիներին։ Իսկ մյուսները, տեսնում եմ, ավելի խիստ նեղացնում են նրան։ Մանավանդ որ նա այն ժամանակ մի զարհուրելի վերարկու էր հագնում, տոբաստը՝ նեղ-նեղ, կոշիկները՝ ծակ-ծակ։ Մեկ էլ դրա համար կպնում էին նրան։ Նվաստացնում էին։ Չէ՞, այդ արդեն չեմ սիրում։ Անմիջապես պաշտպան կանգնեցի և մի կարդին դաս տվեցի մյուսներին։ Ես ծեծում եմ նրանց, իսկ նրանք ինձ պաշտում են, գիտե՞ք, Կարամազով,— անկեղծ մղումով իր գլուխը գովեց Կոլյան։— Եվ առհասարակ սիրում եմ երեխաներին։ Հիմա էլ տանը երկու ճուտ նստած են իմ վզին, այսօր նույնիսկ պատմառ եղան, որ ուշանամ։ Այսպես ուրեմն, էլ վերջ տվեցին Իլյուշային ծեծելուն, և ես նրան իմ պաշտպանության տակ առա։ Տեսնում եմ՝ հպարտ տղա է, ասում եմ ձեզ՝ հպարտ, բայց վերջը ստրուկի պես նվիրվեց ինձ, իմ ամենափոքր հրամանները կատարում էր, այնպես էր հնազանդվում՝ կարծես տարված լիներ. ամեն ինչ անում էր, որ ինձ նմանվի։ Դասամիջոցներին իսկույն վազում էր ինձ մոտ, և միասին էինք ման գալիս։ Կիրակի օրերը նույնպես։ Մեր դպրոցում ծիծաղում են, երբ մեծը այդ ձևով ընկերություն է անում փոքրի հետ, բայց դա նախապաշարմունք է։ Սիրաս այսպե՞ս է ուզում և վե՛րջ. ճիշտ չե՞մ ասում։ Բան էի սովորեցնում նրան, զարգացնում էի, և ասացեք խնդրեմ՝ ինչո՞ւ չեմ կարող զարգացնել, եթե նա ինձ դուր է գալիս։ Չէ՞ որ ահա դուք էլ, Կարամազով, մոտիկացել եք բոլոր այս ճտերի հետ, ուրեմն ուզում եք ազդեցություն

գործել նոր սերնդի վրա, զարգացնել, օգտակար լինել, չէ՞։ Եվ խոստովանում եմ, ինձ ամենից ավելի հետաքրքրեց ձեր բնավորության ա՛յդ գիծը, որ իմացել եմ ձեր մասին իմ լսածներից։ Բայց անցնենք հարցին։ Նկատում էի, որ մի տեսակ զգայուն, փափկասիրտ բաներ են զարգանում տղայի մեջ, իսկ ես, գիտե՞ք, ուղղակի ատում եմ բոլոր տեսակի հոբբային քնքշությունները, հենց իմ ծնված օրից։ Եվ մեկ էլ հակասություններ էի տեսնում. հպարտ է, բայց ստրուկի պես նվիրվել է ինձ. ստրուկի պես նվիրվել է, բայց հանկարծ աչքերը վառվում են և նույնիսկ չի էլ ուզում համաձայնվել ինձ հետ, վիճում է, կատաղություններից ուտում իրեն։ Երբեմն այս կամ այն գաղափարն էի քարոզում. նա ոչ թե գաղափարները չէր ընդունում, այլ պարզապես տեսնում էի՝ ուզղակի ի՛մ դեմ է իր ըմբոստությունը, որովհետև ես սառն եմ պատասխանում իր քնքշություններին։ Դե ես էլ, պնդացնելու համար նրան, որքան ավելի քնքուշ էր լինում՝ այնքան ավելի սառն էի պահում ինձ, դիտմամբ էի անում, այդպես է իմ համոզմունքը։ Միտքս այն էր, որ բնավորությունը կոփեմ, ձևի մեջ դնեմ, մարդ ստեղծեմ... և հետո էլ... դե պարզ է, դուք մի բառից հասկանում եք ինձ։ Մեկ էլ հանկարծ նկատեցի՝ մի օր չէ, երկու օր չէ, երեք օր՝ գլուխը կախել է, ցավ ունի սրտում, բայց ոչ թե այդ քնքշությունների համար, չէ՞, մի ուրիշ բան է ցավը, ավելի կարևոր, բարձր մի բան։ Մտածեցի՝ ի՞նչ ողբերգություն է տեսնես։ Վրա տվեցի և հասկացա բանը. չգիտեմ ինչպես, ծանոթացել է Սմերդյակովի հետ՝ ձեր հանգուցյալ հոր ծառայի (իսկ ձեր հայրը դեռ կենդանի էր այն ժամանակ), և այդ Սմերդյակովն էլ, դու մի աստ, մի հիմար կատակ է սովորեցրել նրան, տխմար լակոտին, այսինքն վայրենի մի կատակ, ստոր կատակ. այսինքն թե՝ մի կոտոր հացի միջուկ վերցրու, ասեղ խոթիր մեջը և գցիր մի որևէ շան առաջ, այնպիսի մի շան, որ սովից ուղղակի կուլ է տալիս պատառը առանց ծամելու, և նայիր, թե ինչ կլինի հետո։ Ուրեմն այդպիսի մի կոտոր հաց են պատրաստում և գցում են հենց այդ փրչոտ Ժուչկային, որի համար այդպես իրար են անցել հիմա. բակի շուն է լինում դա, բայց տերերը պարզապես չեն կերակրում, և նա էլ ամբողջ օրը մռութը տնկած հաչում է։ (Սիրո՞ւմ եք այդ հիմար հաչոցը, Կարամազով։ Ես տանե՛լ չեմ կարող)։ Ուղղակի նետվել է հացի վրա, հենց կուլ տվել ու սկսել է կազկանձել, կլոր-կլոր պտտվել, հետո վազել-գնացել է, վա-

զել ու անընդհատ կաղկանձել ու այդպես էլ կորել է։ Իլյուշան ինքը այդպես նկարագրեց։ Խոստովանում էր արածը, բայց ինչպե՞ս էր լաց լինում, գրկում էր ինձ ու ցնցվում ոտից գլուխ։ «Վազում ու կաղկանձո՞ւմ էր, վազում ու կաղկանձո՞ւմ»,— հենց այս էր միայն կրկնում անընդհատ, սոսկալի ազդել էր վրան այդ պատկերը։ Է՞, տեսնում եմ՝ խիղճն է տանջում։ Լուրջ ընդունեցի հարցը։ Մանավանդ որ՝ առաջվա բաների համար էլ ուզում էի դաս տալ։ Եվ պետք է խոստովանեմ՝ խորամանկություն արեցի, ձևացրի, թե սոսկալի վրդովվել եմ, թեև այնքան էլ չէի վրդովվել դուցե։ «Ստոր բան ես արել,— ասացի,— սրիկա ես դու։ Ոչ ոքի չեմ ասի իհարկե, բայց առայժմ կապերս կտրում եմ քեզնից։ Կմտածեմ արածիդ մասին և Սմուրովի միջոցով իմաց կտամ քեզ (այ հենց այս տղան, որ հիմա ինձ հետ եկավ և միշտ էլ ինձ նվիրված է եղել)։ Իմաց կտամ,— ասացի,— շարունակելո՞ւ եմ սրանից հետո հարաբերություններս քեզ հետ, թե վերջնականապես դեն եմ գցելու քեզ որպես սրիկայի»։ Սոսկալի շշմեց։ Խոստովանում եմ, հենց նույն րոպեին էլ զգացի, որ գուցե չափից ավելի խիստ էի վերաբերվել, բայց ի՞նչ անես՝ այդպես էի մտածում այդ րոպեին։ Անցավ մի օր, Սմուրովին ուղարկեցի ասելու, թե այլևս «չեմ խոսում» հետը, այսինքն մենք այդպես ենք ասում, երբ երկու ընկեր կտրում են իրենց հարաբերությունները։ Թաքուն միտքս այն էր, որ ընդամենը մի քանի օր երես դարձնեմ նրանից, հետո երբ զղջալը տեսնեմ՝ նորից մեկնեմ իմ ձեռքը։ Հաստատ մտադրել էի այդպես։ Բայց ինչ եք կարծում՝ լսել է Սմուրովին, և հանկարծ աչքերը սկսել են վառվել։ «Ասա՛ իմ կողմից Կրասոտկինին,— գոռացել է,— սրանից հետո բոլո՞ր շներին ասեղով հաց եմ գցելու, բոլո՞ր շներին, բոլո՞ր»։— «Ըհը՞,— մտածեցի,— կոտոշներ են բուսել, պետք է ջարդել դրանք»,— և սկսեցի կատարյալ արհամարհանք ցույց տալ. ամեն անգամ, որ հանդիպում էի՝ երեսս շուռ էի տալիս կամ հեգնական ժպտում։ Եվ մեկ էլ հանկարծ նրա հոր այդ դեպքը պատահեց, հիշո՞ւմ եք, ճիլոպը։ Հասկացեք, այդ բոլորն արդեն այնպիսի հող էին պատրաստել նրա մեջ, որ նա պետք է սոսկալի բորբոքվեր։ Տղաները երբ տեսան, որ ես լքեցի նրան, վրա տվեցին և սկսեցին ծաղրել. «Ճիլո՞պ, ճիլո՞պ»։ Այ հենց այդ ժամանակ էլ սկսվեցին նրանց ճակատամարտերը, և ես սոսկալի ցավում եմ դրա համար, որովհետև, կարծեմ, մի անգամ շատ

վատ խփել են նրան։ Եվ ահա մի օր էլ նա բոլորի վրա հարձակվեց դպրոցի բակում, երբ դասից դուրս էին գալիս, իսկ ես էլ հենց կանգնել էի տասը քայլ հեռու և նրան էի նայում։ Երդվում եմ, չեմ հիշում, որ ծիծաղած լինեմ այդ րոպեին. ընդհակառակը, շատ, շատ մեղքացա նրան. և մի վայրկյան էլ՝ ու պիտի վազեի, որ պաշտպանեմ։ Բայց հանկարծ իմ հայացքը տեսավ. չգիտեմ ինչ թվաց նրան, բայց մեկեն գրպանի դանակը հանեց ու նետվեց ինձ վրա, խփեց ազդրիս՝ ահա այստեղ, աջ ոտքիս։ Չշարժվեցի. ճիշտն ասեմ, երբեմն ես քաջ եմ լինում, Կարամազով։ Պարզապես արհամարհանքով նայեցի նրան, կարծես հայացքով ասում էի՝ «Դե՛հ, ուզում ես մի անգամ էլ խփիր, եթե այսպես ես վարձատրում իմ բարեկամությունը. ծառա եմ կամքիդ»։ Բայց էլ չխփեց. լռիմացավ, ինքը վախեցավ, դեն գցեց դանակը, լաց ու կոծը դրեց ու վազելով փախավ։ Պարզ է, ես չծախեցի նրան և բոլորին էլ հրամայեցի, որ բերանները փակ պահեն, դասատուների ականջը չհասնի. նույնիսկ մորս էլ չասացի, մինչև վերքը լավացավ, և արդեն վերքն էլ դատարկ բան էր, հասարակ մի քերծվածք։ Հետո մեկ էլ լսեցի, որ նույն օրը քարակոիվ է արել և ձեր մատն է կծել, բայց թե հասկանո՞ւմ եք ինչ վիճակի մեջ էր նա։ Դե ինչ արած, իմ հիմարությունն էլ այն էր, որ երբ հիվանդացավ՝ չգնացի նրան նայելու, այսինքն հաշտվելու հետը, հիմա զղջում եմ։ Բայց դե արդեն մի ուրիշ բան էի մտածել այդ ժամանակ, մի հատուկ նպատակ ունեի։ Ահա ուրեմն ամբողջ պատմությունը... միայն թե կարծեմ հիմար բան արեցի, որ այսպես...

— Ախ ափսո՞ս,— բացականչեց Ալյոշան հուզված,— ափսո՞ս, որ ես առաջ չգիտեի ձեր այդ հարաբերությունները նրա հետ, թե չէ ինքս վազուց կգայի ձեզ մոտ և կխնդրեի, որ ինձ հետ միասին այցելեք նրան։ Կհավատա՞ք, հիվանդ պառկած, ջերմության մեջ, նա ձեր մասին էր զառանցում։ Ես չգիտեի էլ, թե որքա՞ն թանկ եք նրա համար։ Եվ մի՞թե, մի՞թե իսկապես չգտաք այդ ժուլկային։ Հայրը և բոլոր տղաները փնտրել են ամբողջ քաղաքում։ Կհավատա՞ք, այդպես հիվանդ, լաց լինելով, նա իմ ներկայությամբ արդեն երեք անգամ ասաց հորը. «Ժուլկային սպանեցի այն ժամանակ, դրա համար էլ հիվանդ եմ հիմա, հայրիկ, ասված ինձ պատժեց»։ Անկարելի է այդ բանը հանել նրա մտքից։ Եվ եթե գտնվե՞ր հիմա այդ ժուլկան, քերեին ու ցույց տային, որ չի մեռել, կենդանի է, ուրախությու-

նը կարծես թե կյանք կտար նրան։ Բոլորս էլ ձեզ վրա էինք հույս դրել։

— Իսկ ասացեք, ինչո՞ւ, ինչի՞ց ելնելով հույս ունեիք, որ կգտնեմ Ժուլկային, այսինքն թե հենց ե՞ս կլինեմ գտնողը,— հարցրեց Կոլյան արտակարգ հետաքրքրությամբ,— ինչո՞ւ հենց ինձ վրա էիք հույս դրել, ոչ թե ուրիշի։

— Ասում էին, որ դուք փնտրում եք և երբ գտնեք՝ պիտի այստեղ բերեք։ Սմուրովը այդպիսի մի բան էր ասում։ Մանավանդ որ բոլորս էլ աշխատում ենք համոզել Իլյուշային, որ Ժուլկան կենդանի է, տեսել են նրան մի տեղ։ Տղաները մի կենդանի նապաստակ էին ճարել ու բերել, բայց նա հենց նայեց միայն, հազիվհազ ժպտաց ու խնդրեց, որ բաց թողնեն դաշտում։ Այդպես էլ արեցինք։ Դեռ քիչ առաջ հայրը եկավ ու գամփռի ձագ բերեց, նույնպես ճարել է մի տեղից, մտածում էր, թե կմխիթարի դրանով, բայց կարծեմ ավելի վատ եղավ...

— Մի բան էլ ասացեք ինձ, Կարամազով. ի՞նչ մարդ է նրա այդ հայրը։ Ճանաչում եմ նրան, բայց ի՞նչ մարդ է ձեր կարծիքով՝ խեղկատա՞կ, միմո՞ս։

— Օհ ո՞չ, մարդիկ կան, որ խոր զգացումներ ունեն, բայց ճնշված են մի տեսակ։ Այդպիսիների խեղկատակությունը զայրալից հեգնանքի նման մի բան է այն մարդկանց դեմ, որոնց երեսին չեն համարձակվում ճշմարտությունը ասել, որովհետև երկար ժամանակ ստորացուցիչ երկչոտությամբ են նայել նրանց։ Հավատացեք, Կրասոտկին, այդպիսի խեղկատակությունը երբեմն չափազանց ողբերգական է։ Նրա համար ամե՛ն ինչ, ամբո՛ղջ աշխարհը հիմա Իլյուշայի մեջ է կենտրոնացել, և եթե մեռնի Իլյուշան, նա կա՛մ կխելագարվի վշտից, կամ էլ վերջ կտա իր կյանքին։ Երբ հիմա նայում եմ նրան, զրնթե համոզվում եմ, որ այդպես է։

— Հասկանում եմ ձեզ, Կարամազով, տեսնում եմ, որ դուք ճանաչում եք մարդկային հոգին,— ավելացրեց Կոլյան խելամտորեն։

— Եվ երբ այս շունը տեսա ձեզ մոտ, ուղղակի մտածեցի, որ հենց այդ Ժուլկային եք բերել։

— Սպասեցեք, Կարամազով, գուցե և գտնենք նրան, իսկ այս մեկը Պերեզվոնն է։ Հիմա ես սրան ներս կթողնեմ, և գուցե սա ավելի ուրախացնի Իլյուշային, քան այդ գամփռի ձագը։ Սպասեցեք, Կարամազով, հիմա մի որոշ բան կիմանաք։ Բայց

ասավա՞ծ իմ, ինչո՞ւ եմ ձեզ պահում այստեղ,— բացականչեց Կոլյան հանկարծակի մղումով։ — Միայն սերթուկով կանգնել եք այս ցրտին, իսկ ես երկար-բարակ պատմություններ եմ անում։ Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք ինչ եսասեր եմ։ Օ՜, մենք բոլորս էլ եսասեր ենք, Կարամազով։

— Մի՛ անհանգստանաք. ճիշտ է՝ ցուրտ է, բայց ես մրսկան չեմ։ Գնանք համենայն դեպս։ Ի միջի այլոց, ի՞նչ է ձեր անունը։ Գիտեմ, որ Կոլյա է, բայց լրի՞վ անունը։

— Նիկոլայ, Նիկոլայ Իվանով Կրասոտկին, կամ ինչպես ասում են պաշտոնական ձևով՝ որդի Կրասոտկին,— չգիտես ինչու ծիծաղեց Կոլյան, բայց հանկարծ ավելացրեց.— Պարզ է, ասում եմ իմ Նիկոլայ անունը։

— Իսկ ինչո՞ւ։

— Տափակ է, պաշտոնական...

— Տասներեք տարեկա՞ն եք,— հարցրեց Ալյոշան։

— Այսինքն տասնչորս, երկու շաբաթից տասնչորս եմ լինելու, շատ քիչ է մնում։ Նախօրոք խոստովանեմ ձեզ իմ թուլությունը, Կարամազով, սա արդեն հենց այնպես եմ ասում ձեզ, առաջին ծանոթության համար, որպեսզի միանգամից տեսնեք իմ ամբողջ բնավորությունը. ասում եմ, երբ հարցնում են իմ տարիքը, և դեռ ասելն էլ քիչ է... և վերջապես... իմ մասին, օրինակ, մի զրպարտություն են տարածել, թե անցյալ շաբաթ նախապատրաստական երեխաների հետ ավազակ եմ խաղացել։ Ճիշտ է, խաղացել եմ, բայց ուղղակի զրպարտություն է, երբ ասում են, թե ես ինձ համար եմ խաղացել, իմ սեփական հաճույքի համար։ Հիմքեր ունեմ կարծելու, որ ձեզ էլ հասել է լուրը, բայց ես ոչ թե ինձ համար էի խաղում, այլ երեխաների համար, որովհետև նրանք ոչինչ չէին կարողանում հնարել առանց ինձ։ Ահա, միշտ էլ մի որևէ հիմարություն են տարածում մեր քաղաքում։ Բամբասանքների քաղաք է, հավատացնում եմ ձեզ։

— Թեկուզ և ձեր հաճույքի համար խաղայիք, ի՞նչ կա որ։

— Է՜, եղա՞վ. իմ հաճույքի համա՞ր... Դուք հո ձի-ձի չէիք խաղա, չէ՞։

— Բայց դուք այսպես դատեցեք,— ժպտաց Ալյոշան։— Մեծերը, օրինակ, թատրոն են գնում, չէ՞, և թատրոնում էլ ամեն տեսակ հերոսների արկածներն են ներկայացնում, երբեմն

այնտեղ էլ ավազակներ են լինում, կոիվներ. դա նույն բանը չէ՞, ի՞նչ տեսակի մեջ անշուշտ։ Իսկ երբ փոքրերն զբոսանքի ժամին զինվոր-զինվոր կամ էլ ավազակ են խաղում, դա նույնպես արվեստ է իր սաղմնային վիճակում, դա արվեստի պահանջն է, որ ծնվում է դեռատի հոգու մեջ, և երբեմն նույնիսկ այդ խաղերը ավելի հնարամիտ են արվում, քան թատրոնի ներկայացումները։ Տարբերությունը միայն այն է, որ թատրոն են գնում դերասաններին նայելու, իսկ երբ փոքրերը խաղում են՝ հենց իրենք են դերասանները։ Բայց դա էլ հենց բնական է։

— Դուք այդպե՞ս եք մտածում։ Այդպե՞ս է ձեր համոզմունքը։— Կոլյան ակնդետ նայեց նրան։— Գիտե՞ք, բավական հետաքրքիր միտք հայտնեցիք։ Երբ տուն գնամ, ուղեղս կբանեցնեմ այդ ուղղությամբ։ Խոստովանում եմ՝ հենց այսպես էլ ենթադրում էի, հույս ունեի, որ կարելի է ձեզնից բան սովորել։ Ես եկել եմ սովորելու ձեզնից, Կարամազով,— եզրակացրեց Կոլյան խորազգաց ու զեղուն ձայնով։

— Ես էլ՝ ձեզնից,— ժպտաց Ալյոշան, սեղմելով նրա ձեռքը։

Կոլյան չափազանց գոհ էր Ալյոշայից։ Շշմել էր, որ նա բացարձակապես հավասարի տեղ է դնում իրեն և այնպես է խոսում, ինչպես «ուղղակի մեծի» հետ։

— Ես հիմա ձեզ մի հիմարություն եմ ցույց տալու, Կարամազով, նույնպես թատերական մի ներկայացում,— ջղայնորեն ծիծաղեց նա,— հենց դրա համար եմ եկել։

— Նախ մտնենք տանտիրոջ մոտ, ձախ կողմը. ձերոնք բոլորն էլ իրենց վերարկուները այնտեղ են թողնում, որովհետև սենյակում նեղվածք է և շոգ։

— Օ՜, ես մի վայրկյան եմ մնալու, կմտնեմ ու վերարկուով էլ կնստեմ։ Պերեզվոնը թող մնա այստեղ, միջանցքում, և թող մեռնի. «Խի՜, Պերեզվոն, պառկիր ու մեռի՜ր»։ Տեսնո՞ւմ եք, մեռավ։ Իսկ ես նախ մտնեմ, նայեմ ինչպես է դրությունը, և հետո երբ պետք լինի՝ կասեմ. «Խի, Պերեզվոն»։ Եվ կտեսնեք, իսենթի նման ներս կթռնի անմիջապես։ Միայն թե Սմուրովը չմոռանա և նույն վայրկյանին դուռը բաց անի։ Դե լավ, ես ամեն ինչ կկարգադրեմ և դուք կտեսնեք ներկայացումը...

V

ԻԼՅՈՒՇԱՅԻ ԱՆԿՈՂՆԻ ՄՈՏ

Մեզ արդեն ծանոթ սենյակում, ուր բնակվում էր պաշտոնաթող փոխկապիտան Սնեգիրյովի ընտանիքը, այդ րոպեին շատ մարդ էր հավաքվել և նեղվածք էր, տոթ։ Այս անգամ մի քանի տղա նստել էին Իլյուշայի մոտ, ու թեև բոլորն էլ, Սմուրովի նման, պատրաստ էին ժխտելու, որ Ալյոշան էր նրանց բերել այստեղ ու հաշտեցրել Իլյուշայի հետ, բայց իրոք այդպես էր։ Այս պարագային նրա ի գործ դրած ամբողջ ճարտարությունն այն էր, որ տղաներին մեկ առ մեկ բերել էր Իլյուշայի մոտ, առանց «հորթային քնքշությունների», կարծես բոլորովին պատահականորեն, և ոչ թե դիտմամբ։ Իսկ դա մեծապես թեթևացրել էր Իլյուշայի տառապանքը։ Նա շատ էր հուզվել, տեսնելով այդ տղաների, իր նախկին թշնամիների, համարյա քնքշալի բարեկամությունն ու կարեկցանքը իր նկատմամբ։ Միայն Կրասոտկինն էր բացակայում, և դա ծանր քարի պես նստել էր նրա սրտին։ Եթե Իլյուշայի դառն հիշողությունների մեջ կար մի բան, որ ամենից ավելի դառն էր, դա հենց Կրասոտկինի՝ իր նախկին միակ բարեկամի և պաշտպանի վրա դանակով հարձակվելու դեպքն էր։ Այդպես էր մտածում նաև Սմուրովը, այդ խելացի մանչուկը, որ առաջինն էր եկել հաշտվելու Իլյուշայի հետ։ Բայց երբ Սմուրովը հեռվից-հեռու ակնարկելով հասկացրեց Կրասոտկինին, թե Ալյոշան ուզում է նրա մոտ գալ «մի գործով», Կրասոտկինն իսկույն կարճ կտրեց ու փակեց ճանապարհը, Սմուրովին հանձնարարելով անմիջապես հայտնել «Կարամազովին», թե ինքը ավելի լավ գիտե ինչպես պետք է վարվի, ոչ ոքից խորհուրդ չի խնդրում, և եթե գնա էլ հիվանդի մոտ՝ ի՞նքը գիտե, թե երբ պետք է գնա, որովհետև «իր հաշիվը» ունի։ Դա այս կիրակի օրից երկու շաբաթ առաջ էր։ Ահա թե ինչու Ալյոշան անձամբ չէր գնացել նրա մոտ, հակառակ իր մտադրության։ Բայց և այնպես, սպասելով հանդերձ, նա մի անգամ ևս Սմուրովին ուղարկեց Կրասոտկինի մոտ, հետո մի երրորդ անգամ էլ։ Սակայն Կրասոտկինը նորից ու նորից մերժեց՝ արդեն կտրականապես ու խիստ անհամբեր պատասխանելով, որ եթե Ալյոշան անձամբ գա իրեն տանելու, հենց դրա համար էլ ինքը երբեք չի գնա Իլյուշայի մոտ, և որ այլևս թող չցավացնեն իր գլուխը։

Մինչև վերջին օրն էլ դեռ Սմուրովը չգիտեր, որ Կոլյան որոշել է հենց այդ առավոտ գնալ Իլյուշային տեսնելու, և միայն նախորդ երեկո, Սմուրովից բաժանվելիս, Կոլյան հանկարծ կտրուկ ասաց նրան, որ հաջորդ առավոտ տանը մնա և սպասի իրեն, որովհետև նրա հետ միասին գնալու է Սնեգիրյովների մոտ, բայց և զգուշացրեց, որ չհամարձակվի որևէ մեկին հայտնել իր գնալու մասին, որովհետև ուզում է անակնկալ անել։ Սմուրովը հնազանդվեց։ Իսկ նրա այն հույսը, թե Կոլյան կորած Ժուչկային էլ կբերի իր հետ, հիմնված էր այն հարևանցի խոսքի վրա, որ Կրասոտկինը ասել էր մի անգամ. «էշեր են բոլորն էլ, որ չեն կարողանում գտնել շանը, եթե անշուշտ չի մեռել կենդանին»։ Իսկ երբ Սմուրովը, հարմար առիթը գտնելով, երկչոտ մի ակնարկ էր արել շան վերաբերյալ իր ենթադրածի մասին, Կրասոտկինը հանկարծ սոսկալի զայրացել էր. «Ինչ է, ես է՞շ եմ, որ ուրիշի շանը փնտրեմ ամբողջ քաղաքով մեկ, երբ ես իմ Պերեզվոնն ունեմ։ Եվ ինչպե՞ս կարելի է հուսալ, որ ասեղ կուլ տված շունը կենդանի մնա։ Հորթային քնքշություններ են, ուրիշ ոչինչ»։

Իսկ Իլյուշան, արդեն երկու շաբաթ է, համարյա չէր ելնում իր անկողնից, պառկել էր անկյունը՝ սրբապատկերների տակ։ Դպրոց չէր գնում հենց այն օրից, երբ հանդիպեց Ալյոշային և նրա մատը կծեց։ Ի դեպ, նույն օրն էլ հիվանդացել էր, թեև դրանից հետո դեռ մի ամիս կարողանում էր մեկ-մեկ վերկենալ ու մի կերպ քայլել սենյակում և միջանցքում։ Բայց ի վերջո այնքան էր տկարացել, որ առանց հոր օգնության չէր էլ կարողանում շարժվել։ Հայրը դողում էր նրա վրա, նույնիսկ բոլորովին չէր խմում այլևս, համարյա խելագարվել էր այն վախից, թե կմեռնի իր մանչուկը, և հաճախ, մանավանդ Իլյուշային սենյակում թևանցուկ ման ածելուց և նորից անկողին պառկեցնելուց հետո, հանկարծ վազում էր միջանցքի մի մութ անկյունը, ճակատը հենում պատին և սկսում հեկեկալ մի տեսակ աղիողորմ, սասանվող լացով, զսպելով ձայնը, որպեսզի իր հեկեկանքը չհասնի Իլյուշայի ականջին։

Բայց երբ սենյակ էր վերադառնում, սովորաբար սկսում էր մի որևէ բանով զվարճացնել ու մխիթարել իր սիրելի մանչուկին, հեքիաթներ էր պատմում, ծիծաղաշարժ անեկդոտներ, և կամ իր հանդիպած զանազան ծիծաղելի մարդկանց տնազն էր անում, նույնիսկ կապկում էր կենդանիներին, ցույց տալով, թե

ինչ ծիծաղելի ձևով են նրանք ոռնում կամ զոռում։ Բայց Իլյուշան բնավ չէր սիրում, երբ հայրը ծռմռվում ու խեղկատակություն էր անում այդպես։ Տղան թեև աշխատում էր ցույց չտալ, թե իր համար տհաճ է դա, սակայն ցավ ի սիրտ գիտակցում էր, որ հայրը նվաստացած մարդ է հասարակության մեջ, շարունակ հիշում էր «ճիլոպը» և այն «սոսկալի օրը», հիշում անդիմադրելիորեն։ Նինոչկան, Իլյուշայի անդամալույծ ու հեզահամբույր քույրիկը, նույնպես չէր սիրում հոր խեղկատակությունները (իսկ Վարվառա Նիկոլաևնան վաղուց արդեն Պետերբուրգ էր գնացել՝ դասընթացների հետևելու), բայց տկարամիտ մայրիկը շատ էր զվարճանում և ամբողջ սրտով ծիծաղում էր, երբ ամուսինն սկսում էր որևէ բան ցուցադրել կամ ծիծաղելի շարժուձևեր անել։ Եվ միայն դրանով կարելի էր մխիթարել մայրիկին, իսկ մնացյալ ժամերին նա շարունակ փնթփնթում էր ու տրտնջում, թե հիմա բոլորն այլևս մոռացել են իրեն, թե իրեն ոչ ոք չի հարգում, թե բոլորը վիրավորում են և այլն, և այլն։ Բայց վերջին մի քանի օրվա ընթացքում նա էլ մի տեսակ լրիվ փոխվել էր հանկարծ։ Սկսել էր հաճախ նայել անկյունը՝ Իլյուշային, և մտածմունքի մեջ ընկնել։ Շատ ավելի լռակյաց էր դարձել, հանդարտվել էր, և եթե նույնիսկ սկսում էր լաց լինել, ապա ձայն չէր հանում, որպեսզի լսեն։ Փոխկապիտանը դառն տարակուսանքով նկատեց այդ փոփոխությունը նրա մեջ։ Տղաների այցելություններն սկզբում դուր չէին գալիս մայրիկին և պարզապես բարկացնում էին նրան, բայց հետո երեխաների ուրախ պոռչտուքն ու պատմությունները սկսեցին նրան էլ զվարճություն պատճառել և ի վերջո այնքան դուր եկան, որ եթե տղաները վերջ տային այցելություններին, նա սոսկալի պիտի տխրեր։ Երբ երեխաները մի որևէ բան էին պատմում կամ սկսում էին խաղալ, նա ծիծաղում էր և ծափ տալիս։ Ոմանց իր մոտ էր կանչում և համբուրում էր։ Հատկապես սիրել էր Սմուրովին։

Իսկ գալով փոխկապիտանին, հենց սկզբից էլ, երբ իր բնակարանում հայտնվեցին երեխաները, որոնք գալիս էին Իլյուշային զվարճացնելու, նրա սիրտը լցվեց հրճվագին ուրախությամբ և նույնիսկ այն հույսով, որ Իլյուշան այլևս չի տխրի և դուցե այդ պատճառով էլ ավելի շուտ կառողջանա։ Հակառակ Իլյուշայի համար իր զգացած վախին, մինչև վերջերս նա ոչ մի բոպի չէր տարակուսել, որ մանչուկը կառողջանա հանկարծ։ Հիացական մեծարանքով էր դիմավորում փոքրիկ հյուրերին, նրանց

շուրջն էր պտտվում, ծառայություններ մատուցում, պատրաստ էր իր ուսերի վրա մահ ածել նրանց, և նույնիսկ իրոք սկսել էր այդպես մահ ածել, բայց Իլյուշային դուր չեկան այդ խաղերը և վերջ դուսան։ Նրանց համար սկսեց քաղցրեղեններ, մեղրաբլիթ, կաղին գնել. թեյ էր հյուրասիրում, ինքն էլ կարագ էր քսում հացի շերտերի վրա։ Պետք է նշել, որ ամբողջ այդ ժամանակ նա միշտ էլ փող ուներ։ Կատերինա Իվանովնայից երկու հարյուր ռուբլին ընդունել էր ճիշտ այնպես, ինչպես գուշակել էր Ալյոշան։ Իսկ հետո Կատերինա Իվանովնան, ավելի մանրամասն իմանալով նրանց պայմանների և Իլյուշայի հիվանդության մասին, անձամբ այցելել էր նրանց բնակարանը, ծանոթացել ամբողջ ընտանիքի հետ և նույնիսկ կարողացել էր հմայել տկարամիտ մայրիկին։ Այդ օրից նրա ձեռքը միշտ էլ բաց էր եղել, իսկ փոխկապիտանը, ահաբեկված այն մտքից, թե իր մանչուկը կարող է մեռնել, մոռացել էր իր նախկին պատվախնդրությունը և խոնարհաբար ընդունում էր նպաստը։ Ամբողջ այդ ժամանակ դոկտոր Հերցենշտուբեն, Կատերինա Իվանովնայի հրավերով, երկու օրը մեկ ճշտապահորեն գալիս էր հիվանդի մոտ, բայց նրա այցելությունները քիչ էին օգուտ տալիս, և նա տղայի փորը դեղերով էր լցնում։ Բայց այդ օրը, այսինքն այդ կիրակի առավոտ, մի նոր բժիշկ էին սպասում փոխկապիտանի բնակարանում, Մոսկվայից եկած և Մոսկվայում նշանավոր դեմք համարվող մի բժիշկ։ Կատերինա Իվանովնան հատկապես հրավիրել էր նրան Մոսկվայից ահագին մի գումար ծախսելով՝ ոչ թե Իլյուշայի համար, այլ մի ուրիշ նպատակի, որի մասին կխոսենք իր տեղում։ Բայց քանի որ եկել էր բժիշկը, Կատերինա Իվանովնան խնդրեց, որ նա այցելի նաև Իլյուշային, և այդ մասին նախօրոք հայտնեց փոխկապիտանին։

Սակայն փոխկապիտանը ոչ մի կերպ չէր նախազգում, թե այդ օրը գալու է նաև Կոլյա Կրասոտկինը, թեև վաղուց էր ցանկանում, որ վերջապես գա այդ տղան, որի համար այնքան տանջվում էր իր Իլյուշան։ Այն վայրկյանին, երբ Կրասոտկինը դուրը բացեց ու երևաց սենյակում, փոխկապիտանը և բոլոր տղաները հավաքվել էին հիվանդի անկողնի մոտ և նայում էին հենց նոր բերված գամփռի ձագին, որ դեռ երեկ էր ծնվել, թեև փոխկապիտանը մի շաբաթ առաջ էր պատվիրել այն, որպեսզի զվարճացնի և մխիթարի Իլյուշային, որ շարունակ տխրում էր,

հիշելով կորած և իհարկե արդեն մեռած Ժուչկային։ Բայց Իլյուշան, որ արդեն երեք օր առաջ լսել էր ու գիտեր, թե իրեն մի շնիկ են նվիրելու, և ոչ թե հասարակ շնիկ, այլ իսկական գամփռի ձագ (մի բան, որ սոսկալի կարևոր էր անշուշտ), հիմա թեև նրբանկատ մի զգացումից մղվելով ցույց էր տալիս, թե ուրախ է նվերի համար, բայց բոլորն էլ, և՛ հայրը, և՛ տղաները, պարզ տեսնում էին, որ նոր շնիկը Իլյուշայի փոքրիկ սրտում գուցե ավելի սաստկորեն բորբոքում էր իր տանջած դժբախտ Ժուչկայի հիշատակը։ Շնիկը պառկել ու շարժկտում էր Իլյուշայի կողքին, և տղան, ցավագին ժպտալով, շոյում էր նրան իր բարալիկ, դժգույն, հյուծված ձեռքով. նույնիսկ երևում էր, որ շնիկը նրան դուր է եկել, բայց... չկա՞ր համենայն դեպս ժուչկան, այս շնիկը համենայն դեպս ժուչկան չէր, իսկ ա՜յ, եթե այս շնիկի հետ նաև ժուչկան լիներ հիմա, կատարյա՜լ երջանկություն կլիներ։

— Կրասո՜տկինը,— գոչեց հանկարծ տղաներից մեկը, որ ամենից առաջ էր տեսել ներս մտած Կոլյային։ Ակնհայտ մի իրարանցում եղավ. տղաները ետ քաշվեցին ու կանգնեցին անկողնի մեկ և մյուս կողմը, այնպես որ Իլյուշան երևաց ոտից գլուխ։ Փոխկապիտանը շեշտակի սլացավ Կոլյային ընդառաջ։

— Համեցե՜ք, համեցե՜ք... թանկագի՜ն հյուր,— սկսեց բլբլալ նա։— Իլյուշկա, պարոն Կրասոտկինն է եկել քեզ այցելության...

Բայց Կրասոտկինը, շտապ սեղմելով նրա ձեռքը, վայրկենապես ցույց տվեց, որ ինքը չափազանց լավ գիտե նաև բարեկիրթ հասարակության կանոնները։ Իսկույն ևեթ և ամենից առաջ դարձավ փոխկապիտանի տիկնոջը, որ նստել էր իր բազկաթոռին (հենց այդ րոպեին էլ կինը, սոսկալի դժգոհ, տրտնջում էր, թե տղաները կանգնել են Իլյուշայի անկողնի առաջ և չեն թողնում, որ ինքն էլ նայի նոր շնիկին), և չափազանց քաղաքավարի ողջունեց նրան՝ ոտքերը քստքստացնելով ու գլուխ տալով, հետո դարձավ Նինային և նրան էլ, որպես օրիորդի, նույն ձևով ողջունեց։ Այդ բարեկիրթ վարմունքը արտակարգորեն հաճելի տպավորություն գործեց հիվանդ տիկնոջ վրա։

— Ա՜յ իսկույն երևում է լավ կրթված երիտասարդը,— ասաց նա բարձր ձայնով ու ձեռքերը տարածելով։— Թե չէ մեր էն մյուս հյուրերն ի՞նչ՝ մեկը մյուսի վրա նստած գալիս մտնում են։

— Ինչպե՞ս թե մեկի մյուսի վրա նստած, մայրիկ, ի՞նչ եք ասում,— դժկամեց փոխկապիտանը՝ թեև սիրալիր, բայց «մայրիկի» ասածից փոքր-ինչ մտահոգված։

— Այ հենց էդպես էլ ներս են մտնում։ Միջանցքում մեկը մյուսի շալակին է նստում և էդպես գալիս մտնում են ազնիվ ընտանիքի մեջ, ոնց որ ձի հեծած։ Էդ ի՞նչ հյուր է որ։

— Բայց ո՞վ է այդպես ներս մտել, մայրիկ, ո՞վ, ո՞վ։

— Այ էս տղան էսօր են տղայի վրա նստած մտավ, իսկ ա՜յ էն էլ՝ նրա վրա...

Բայց Կոլյան արդեն կանգնել էր Իլյուշայի անկողնի մոտ։ Հիվանդը ակնհայտորեն գունատվել էր։ Մի փոքր բարձրացել էր անկողնում և ուշիուշով նայում էր Կոլյային։ Արդեն երկու ամիս է Կոլյան չէր տեսել իր նախկին փոքրիկ բարեկամին և հիմա հանկարծ բոլորովին զարմանահար կանգնել էր նրա առաջ. երևակայել անգամ չէր կարող, որ այսքա՞ն նիհարած ու դեղնած մի դեմք կտեսնի, այսպիսի տենդագին շերմության մեջ վառվող ու կարծես սոսկալի մեծացած աչքեր, այսպիսի բարակ ձեռքեր։ Վշտագին զարմանքով հառել էր աչքերը, տեսնելով, թե ինչպես խոր ու արագ-արագ է շնչում Իլյուշան, ինչպես են նրա շրթունքները չորացել։ Մի քայլ արեց, մոտեցավ նրան, ձեռքը մեկնեց և համարյա բոլորովին շշուկով՝ ասաց.

— Է՜հ, բիձուկ... ինչպե՞ս ես։

Սակայն ձայնը կտրվեց, չկարողացավ անկաշկանդ ձևանալ, դեմքը հանկարծ շրաձգվեց մի տեսակ, դող անցավ շրթունքներով։ Իլյուշան ցավագին ժպտում էր նրան ու դեռ չէր կարողանում մի բառ ասել։ Կոլյան հանկարծ ձեռքը բարձրացրեց և, չգիտես ինչու, շոյեց Իլյուշայի մազերը։

— Ո-չի՞նչ,— շշնջաց նա կմկմալով, կարծես քաշալերում էր հիվանդին, և կամ գուցե ինքն էլ չգիտեր, թե ինչու ասաց այդ բանը։ Մի բուռն նորից լուռ մնացին։

— Դա ի՞նչ է, նոր շնի՞կ ունես,— հանկարծ բոլորովին անկարեկից ձայնով հարցրեց Կոլյան։

— Հա-ա-ա՜,— պատասխանեց Իլյուշան երկարուն, հևապատ մի շշունջով։

— Քիթը սև է, ուրեմն կատաղի շուն կլինի, կապելու շուն,— նկատեց Կոլյան լուրջ ու անբիկմիտ, կարծես ամբողջ խնդիրը հենց շնիկն էր ու նրա սև քիթը։ Բայց իրողությունն այն էր, որ նա դեռ ամբողջ ուժով ճիգ էր անում հաղթահարել իր զգացումը, որպեսզի լաց չլինի «երեխայի նման», և չէր կարողանում հաղթահարել տակավին։— Ոնց մեծանա, հարկավոր կլինի շղթայով կապել, հաստատ գիտեմ։

— Հսկա՜ շուն է լինելու,— բացականչեց տղաներից մեկը։

— Դե պարզ է։ Գամփռ է։ Հսկա՜։ Ա՜յ այսքան։ Հորթի չափ,— լսվեցին հանկարծ տարբեր ձայներ։

— Հորթի չափ, իսկական հորթի,— վրա բերեց փոխկապիտանը,— ես դիտմամբ այս տեսակ շուն փնտրեցի, ամենա-ամենակատաղին, և սրա ծնողներն էլ հսկա են, այնպե՞ս կատաղի, գետնից ա՜յ այսքան բարձր... Նստեցեք խնդրեմ, ահա այստեղ՝ անկողնին, Իլյուշայի մոտ, կամ էլ այստեղ՝ նստարանի վրա։ Բարի եկաք, թանկագին հյուր, երկար սպասում էինք ձեզ... Ալեքսեյ Ֆյոդորովիչի հե՞տ հաճեցիք գալ։

Կրասոտկինն անկողնի վրա նստեց՝ Իլյուշայի ոտքերի մոտ։ Գուցե ճանապարհին մոռացել ու պատրաստել էր խոսակցության այնպիսի մի սկիզբ, որ անկաշկանդ լիներ, բայց հիմա բոլորովին կորցրել էր մտքի թելը։

— Չէ... Պերեզվոնի հետ եկա... Ես հիմա մի շուն ունեմ, Պերեզվոն է անունը։ Սլավոնական անուն է։ Սպասում է այնտեղ... սուլեմ՝ ներս կթռնի։ Ես էլ շուն եմ բերել,— դարձավ նա մեկեն Իլյուշային։— Հիշո՞ւմ ես Ժուչկային, բիձուկ,— հանկարծ շիփ-շիտակ նրա երեսին տվեց այդ հարցը։

Իլյուշայի փոքրիկ դեմքն այլայլվեց։ Նա տառապագին նայեց Կոլյային։ Դռան մոտ կանգնած Ալյոշան խոժոռվեց ու Կոլյային թաքուն մի նշան արեց գլխով, որ չխոսի Ժուչկայի մասին, բայց Կոլյան չնկատեց կամ չուզեց նկատել։

— Իսկ ո՞ւր է... Ժուչկան,— հարցրեց Իլյուշան բեկբեկուն ձայնով։

— Է՜հ, սիրելիս, քո Ժուչկան... Հե՜յ։ Կորա՜վ քո Ժուչկան։

Իլյուշան լուռ մնաց, բայց մի անգամ էլ ուշիուշով նայեց Կոլյային։ Ալյոշան, որսալով Կոլյայի հայացքը, շուտ-շուտ գլխով նշան արեց կրկին, բայց Կոլյան նորից հայացքը շուտ տվեց, ձևացնելով, թե չի նկատել։

— Վազել-մտել է մի անկյուն, այնտեղ էլ մեռել է։ Ինչպե՞ս չմեռներ այդպիսի համեղ պատառից հետո,— անգթորեն վրա էր տալիս Կոլյան, թեև ինքն էլ կարծես խեղդվում էր մի տեսակ։— Բայց ես մի շուն ունեմ... Պերեզվոն... Սլավոնական անուն է... Քեզ համար եմ բերել...

— Չեմ ու-զո՞ւմ,— ասաց հանկարծ Իլյուշկան։

— Չէ, չէ, ուզում ես, պետք է տեսնես անպայման... Կուրախանաս։ Դիտամամբ բերեցի... սա էլ փրշոտ է նրա նման.. Տիկին, թույլ կտա՞ք, որ այստեղ կանչեմ իմ շանը,— դարձավ նա հանկարծ տիկին Սենեգիրյովային, արդեն բոլորովին անհասկանալի մի հուզմունքով։

— Չե՞մ ուզում, չե՞մ ուզում,— բացականչեց Իլյուշան վրշտաթեկ ձայնով։ Կշտամբանքն առկայծեց նրա աչքերում։

— Դուք գուցե...— հանկարծ առաջ նետվեց փոխկապիտանը, որ դեռ հազիվ էր նստել պատի տակ դրված սնդուկին,— դուք գուցե... մի ուրիշ անգամ...— կմկմաց նա, բայց Կոլյան, որ անսանձելիորեն համառում էր, հանկարծ շտապ գոռաց Սմուրովին՝ «Բաց արա դուռը, Սմուրով», և հենց որ բացվեց դուռը, անմիջապես շվմացրեց։ Պերեզվոնը շեշտակի ներս թռավ։

— Կանգնի՞ր, Պերեզվոն, բարև կաց։ Բարև՛ կաց,— գոռաց Կոլյան վեր թռնելով, և շունը ետևի թաթերի վրա ուղիղ կանգնեց Իլյուշայի անկողնի առջև։ Ու պատահեց մի բան, որ ոչ ոք չէր սպասում. Իլյուշան ցնցվեց ու հանկարծ ամբողջ թափով շարժվեց առաջ, թեքվեց դեպի Պերեզվոնը և, կարծես քարանալով, նայեց նրան։

— Ժո՞ւչկան է,— գոռաց նա հանկարծ՝ տառապանքից ու երջանկությունից խզված ձայնով։

— Բա ի՞նչ էիր կարծում,— ամբողջ ուժով հնչեց Կրասոտկինի զրնգուն, երջանիկ ձայնը, և նա հակվեց շան վրա, գրկեց ու բարձրացրեց դեպի Իլյուշան։

— Նայիր, բիձուկ, տեսնո՞ւմ ես, մի աչքը կույր է և ձախ ականջը կտրված, ճիշտ այն նշանները, որ դու ինձ ասել էիր։ Հենց ա՛յս նշաններով էլ գտա։ Հենց այն ժամանակ գտա, անմիջապես։ Տեր լուներ շունը, տե՞ր լուներ,— բացատրեց նա, արագորեն դառնալով փոխկապիտանին, նրա տիկնոջը, Ալյոշային և հետո նորից Իլյուշային— Ֆեդոտովների ետևի բակում էր ապրում, ընտելացել էր այդ տեղին, բայց նրան չէին կերակրում. թափառական շուն էր, գյուղից էր փախել-եկել... Եվ ես գտա նրան... Տեսնո՞ւմ ես, բիձուկ, ուրեմն քո հացը կույլ չի տվել այն ժամանակ։ Եթե կույլ տար, կմեռներ իհարկե, չէ՞, իհա՞րկե կմեռներ։ Ուրեմն կարողացել է թքել-հանել բերնից, քանի որ հիմա ողջ է։ Իսկ դու չես էլ նկատել, թե նա թքել-հանել է։ Թքել է, բայց թե ասեղը ծակել է լեզուն, դրա համար էլ կաղկանձում էր։

վազում էր ու կաղկանձում, իսկ դու կարծել ես, թե լրիվ կույլ տվեց։ Իհա՞րկե սոսկալի պետք է կաղկանձեր, որովհետև շան բերանի մաշկը շատ նուրբ է լինում... ավելի նուրբ, քան մարդունը, շա՞տ ավելի նուրբ,— բացականչում էր Կոլյան մոլեգնորեն, հրճվանքից փայլող ու վառվռուն դեմքով։

Իսկ Իլյուշան չէր էլ կարողանում խոսել։ Նայում էր Կոլյային՝ իր խոշոր ու մի տեսակ սոսկալիորեն դուրս ցցված աչքերով, բերանը բաց, պատի պես գունատ։ Եվ եթե իմանար Կրասոտկինը, թե այդպիսի բոպեն ի՞նչ տանջալից ու մահացու ազդեցություն կարող էր ունենալ հիվանդ երեխայի առողջության վրա, ոչ մի դեպքում անշուշտ չէր հանդգնի այդպիսի խաղ խաղալ նրա գլխին. բայց այդ բանը նրա մտքով էլ չէր անցնում։ Սենյակում գուցե Ալյոշան էր միայն, որ հասկանում էր վտանգը։ Իսկ ինչ վերաբերում է փոխկապիտանին, նա կարծես ուղղակի էրեխա էր դարձել, փոքրիկ մի երեխա։

— Ժո՞ւչկա։ Ուրեմն սա՞ է Ժուչկան,— բացականչում էր նա երանավետ ձայնով։— Իլյո՞շա, տե՛ս, Ժուչկան է, քո Ժուչկան։ Մայրի՞կ, տե՛ս, Ժուչկան է, Ժուչկան։— Համարյա թե լաց էր լինում նա։

— Բայց ես ինպե՞ս գլխի չընկա,— բացականչեց Սմուրովը դառնորեն։— Ասում էի, չէ՞, որ նա կգտնի Ժուչկային, և ահա գտել է։ Նրան Կրասո՞տկին կասեն։

— Գտել է, գտե՞լ,— հրճվալից արձագանքեց մի ուրիշ տղա։

— Ապրե՞ս, Կրասոտկին,— զնգաց մի երրորդ ձայն։

— Ապրե՞ս, ապրե՞ս,— գոչեցին բոլոր տղաները և սկսեցին ծափ տալ։

— Դե սպասե՞ք, սպասե՞ք,— ջանում էր բոլորից բարձր գոռալ Կրասոտկինը,— պատմեմ, թե ինչպես եղավ, ա՞յդ է խնդիրը, այդ է խնդիրը, ուրիշ բան չէ։ Լսո՞ւմ եք, գտա նրան, մեր տուն տարա, հենց իսկույն պահեցի, տանը պահեցի, կողպած, և ոչ մեկին ցույց չէի տալիս, մինչև հենց այսօր։ Միայն Սմուրովը իմացավ երկու շաբաթ առաջ, բայց նրան համոզեցի, որ սրա անունը Պերեզվոն է, և նա գլխի չընկավ. իսկ ես այդ միջոցին ինչե՞ր ասես չսովորեցրի Ժուչկային, հիմա կտեսնեք, կտեսնեք, թե ինչե՞ր գիտի։ Ամեն ինչ սովորեցրի, որ մի լավ վարժեցրած, կարգին շուն բերեմ քեզ համար, բիձուկ, և ասեմ՝ տե՛ս, բիձուկ, ի՞նչ է դարձել հիմա քո Ժուչկան։ Բայց մի որևէ մսի կտոր չու-

նե՞ք, հիմա ձեզ մի այնպիսի բան ցույց կտա, որ կմեռնեք ծիծաղից։ Մի կտոր մխ, դե մի փոքրիկ կտոր, չունե՞ք, ինչ է։

Փոխկապիտանը դուրս վազեց, անցավ միջանցքը և մտավ տանտիրոջ խոհանոցը, ուր իրենք էլ իրենց ճաշն էին պատրաստում։ Իսկ Կոլյան, չկորցնելու համար թանկագին ժամանակը, սաստիկ շտապելով, «Մեռի՛ր» գոռաց Պերեզվոնին։ Եվ շունը հանկարծ գլորվեց, պառկեց մեջքի վրա և անշարժացավ՝ չորս թաթերը վեր ցցած։ Տղաները ծիծաղում էին, Իլյուշան նայում էր նույն տառապագին ժպիտով, բայց ամենից ավելի «մայրիկին» էր, որ դուր եկավ Պերեզվոնի մեռնելը։ Նա քահ-քահ ծիծաղեց ու սկսեց մատները շրթացնելով կանչել շանը.

— Պերեզվո՜ն, Պերեզվո՜ն։

— Ոչ մի դեպքում չի վեր կենա, ո՞չ մի դեպքում,— բացականչեց Կոլյան հաղթականորեն ու արդարացի հպարտությամբ,— թեկուզ ամբողջ աշխարհը գոռա։ Իսկ ա՞յ եթե ես կանչեմ, մի վայրկյանում վեր կթռնի։ Իսի՛, Պերեզվոն։

Շունը վեր թռավ ու սկսեց ցատկոտել, ուրախությունից վնգստալով։ Փոխկապիտանը ներս վազեց՝ մի կտոր խաշած մխ ձեռքին։

— Տաք չէ՞,— շտապ ու գործնական շեշտով հարցրեց Կոլյան, վերցնելով մսի կտորը,— չէ, տաք չէ։ Շները տաք բան չեն սիրում։ Դե ուրեմն նայեցեք բոլորդ էլ, նայի՛ր, Իլյուշա, դե նայիր, բիձուկ, նայի՛ր։ Ինչո՞ւ չես նայում։ Թերել եմ շանը, իսկ նա չի՞ էլ նայում։

Նոր հնարքն այն էր, որ շունը պետք է անշարժ կանգներ ու առաջ երկարեր քթիը, և մսի համեղ կտորը պետք է դրվեր հենց քթի ծայրին։ Եթե շունը պետք է անշարժ կանգներ՝ մսի կտորը քթին պահած, և այդպես մնար այնքան, որքան կամենար իր տերը, թեկուզ կես ժամ, առանց շարժվելու, առանց երերալու։ Բայց հազիվ մի բոպե այդպես պահեցին Պերեզվոնին, մի կարճ բոպե միայն։

— Հա՛փ,— գոչեց Կոլյան, և մի ակնթարթում մսի կտորը շան քթից թռավ բերանի մեջ։ Պարզ է, հանդիսատեսները հիացական զարմանք արտահայտեցին։

— Եվ մի՞թե, մի՞թե պարզապես շանը վարժեցնելու համար չէիք գալիս այսքան ժամանակ,— բացականչեց Ալյոշան ակամա կշտամբանքով։

— Հենց դրա համար,— գոչեց Կոլյան ամենամիամիտ անկեղծությամբ։— Ուզում էի նրան իր ամբողջ փառք ու պատվով ցույց տալ։

— Պերեզվո՜ն, Պերեզվո՜ն,— ձայնեց հանկարծ Իլյուշան, իր բարալիկ մատները շրթացնելով ու շանը կանչելով իր մոտ։

— Ի՞նչ ես ուզում, սպասի՞ր։ Թող ի՛նքը ցատկի քո անկողնի վրա։ Իսի՛, Պերեզվոն,— ափը անկողնին խփեց Կոլյան, և Պերեզվոնը նետի նման թռավ Իլյուշայի մոտ։ Տղան ուժգին գրկեց նրա գլուխը երկու ձեռքով, իսկ Պերեզվոնը դրա դիմաց անմիջապես լիզեց նրա այտը։ Իլյուշան սեղմեց նրան իր գրկում, մեկնվեց անկողնի վրա ու երեսը թաքցրեց նրա թավ մազերի մեջ։

— Տե՛ր աստված, տե՛ր աստված,— բացականչում էր փոխկապիտանը։

Կոլյան նորից նստեց անկողնի վրա, Իլյուշայի մոտ։

— Իլյուշա, ես քեզ կարող եմ մի ուրիշ բան էլ ցույց տալ։ Մի փոքրիկ թնդանոթ եմ բերել քեզ համար։ Հիշո՞ւմ ես, դեռ այն ժամանակ պատմել էի քեզ այդ թնդանոթի մասին, և դու ասացիր՝ «Ա՜խ, ես էլ տեսնեի»։ Դե ա՜յ, բերել եմ հիմա։

Եվ Կոլյան, աճապարելով, պայուսակից հանեց իր բրոնզե փոքրիկ թնդանոթը։ Աճապարում էր, որովհետև ինքն էլ շատ երջանիկ էր արդեն. ուրիշ առիթով լիներ, պիտի սպասեր, որ անցնի Պերեզվոնի թողած տպավորությունը, բայց հիմա աճապարեց, էլ ոչ մի համբերություն նկատի չառնելով, այսինքն թե՝ «այսպես էլ երջանիկ եք արդեն, դե առեք ձեզ մի բան էլ՝ ավելի երջանկացնեք»։ Իսկ ինքը ուղղակի արբեցության մեջ էր։

— Վաղուց էի տեսել այս բանը Մորոզովի մոտ, աչքս վրան էր՝ քեզ համար, բիձուկ, քեզ համար։ Մորոզովին պետք չէր, եղբորից էր նրան մնացել, և ահա փոխանակեցինք՝ ես մի գիրք տվեցի նրան, հոբս պահարանից մի գիրք՝ «Մուհամմեդի ազգականը կամ Բուժիչ հիմարություն»։ Հարյուր տարվա գիրք է, լկտի մի բան, Մոսկվայում է լույս տեսել, երբ դեռ գրաքննություն չկար։ Իսկ Մորոզովը այդպիսի բաների սիրահար է։ Դեռ շնորհակալություն էլ հայտնեց...

Կոլյան թնդանոթը բռնել էր ձեռքում՝ բոլորի աչքի առաջ, այնպես որ բոլորն էլ կարող էին տեսնել ու հրճվել։ Իլյուշան մի քիչ բարձրացել էր և, շարունակելով գրկել Պերեզվոնին աջ ձեռքով, հափշտակված դիտում էր խաղալիքը։ Տպավորությունը վերին աստիճանի ուժեղացավ, երբ Կոլյան հայտարարեց, թե վա-

ռող էլ ունի և կարելի է իսկույն կրակել. «եթե անշուշտ դա չի անհանգստացնի տիկիններին»։ «Մայրիկն» անմիջապես խնդրեց, որ իրեն թույլ տան ավելի մոտից նայել խաղալիքին, և իսկույն կատարվեց նրա խնդրանքը։ Նրան սոսկալի դուր եկավ բրոնզե փոքրիկ թնդանոթը, որ անիվներ ուներ, և կինը սկսեց ետ ու առաջ քշել խաղալիքը իր ծնկների վրա։ Երբ կրակելու թույլտվություն խնդրեցին, նա լիակատար համաձայնություն տվեց, թեև առանց հասկանալու, թե ինչ էին խնդրում իրենից։ Կոլյան ցույց տվեց վառոդն ու կոտորուքը։ Փոխկապիտանը, որպես նախկին զինվորական, հանձն առավ թնդանոթը լցնել. ամենադույշն քանակությամբ վառոդ լցրեց և խնդրեց, որ կոտորուքը մնա մի ուրիշ անգամվա համար։ Թնդանոթը դրին հատակին, փողը դատարկ մի կողմ ուղղելով, հրանցքի մեջ վառոդի երեք փոշեհատիկ խցկեցին ու վառած լուցկի մոտեցրին։ Փառավոր մի կրակոց ստացվեց։ Մայրիկը ցնցվեց մի վայրկյան, բայց իսկույն ևեթ սկսեց ծիծաղել ուրախությունից։ Տղաները լուռ նայում էին հաղթական մի զգացումով, բայց ամենից ավելի հրճվել էր փոխկապիտանը, որ երանությամբ նայում էր Իլյուշային։ Կոլյան վերցրեց թնդանոթը և անմիջապես նվիրեց Իլյուշային՝ կոտորուքն ու վառոդն էլ հետը։

— Քե՛զ համար եմ առել, քե՛զ համար։ Վաղուց էի պահել քեզ համար,—կրկնեց նա մի անգամ էլ, երջանկությամբ հորդելով։

— Ա՜խ, ինձ նվիրեք։ Չէ, ավելի լավ է ի՞նձ նվիրեք թնդանոթը,— սկսեց հանկարծ խնդրել մայրիկը, փոքր երեխայի նման։ Նրա դեմքին կսկծալի մի անհանգստություն կար, վախենում էր, որ չեն նվիրի իրեն։ Կոլյան շփոթվեց։ Փոխկապիտանն իրար անցավ։

— Մայրի՛կ, մայրի՛կ,— կնոջ մոտ վազեց նա,— թնդանոթը քոնն է, քոնը, բայց թող մնա Իլյուշայի մոտ, որովհետև նրան են նվիրել, բայց միևնույն է թե քոնն է, Իլյուշկան միշտ էլ կտա քեզ խաղալու, թող երկուսիդ էլ լինի, երկուսիդ էլ...

— Չէ՛, չեմ ուզում երկուսիս էլ, չեմ ուզում, թող միայն իմը լինի, ոչ Իլյուշայինը,— շարունակում էր մայրիկը, արդեն լալու պատրաստ։

— Ա՜ռ, մամա, վերցրու, քոնն է, քո՞նն է,—գոչեց Իլյուշան։— Կրասոտկին, կարո՞ղ եմ մամային նվիրել,— հանկարծ Կրասոտկինին դարձավ աղաչական մի արտահայտությամբ, կարծես վախենալով, որ նա կվիրավորվի, եթե ինքը ուրիշին տա նրա նվերը։

— Լրիվ կարող ես,— անմիջապես համաձայնվեց Կրասոտկինը և, վերցնելով թնդանոթը Իլյուշայի ձեռքից, անձամբ տվեց մայրիկին՝ ամենահարգալից մի խոնարհություն անելով։ Մայրիկը նույնիսկ լաց եղավ հուզմունքից։

— Իլյուշկա, անուշի՜կս... ա՜յ թե ով է սիրում իր մամային,— գորովալից բացականչեց նա և անմիջապես սկսեց նորից թնդանոթը ետ ու առաջ քշել ծնկների վրա։

— Մայրիկ, տուր ձեռքդ համբուրեմ,— մոտ վազեց ամուսինը և իսկույն կատարեց իր ասածը։

— Եվ մեկ էլ շա՞տ անուշիկ մի տղա որ տեսել եմ՝ այ էս բարի՜ տղան է,— ասաց երախտագետ տիկինը, ցույց տալով Կրասոտկինին։

— Սրանից հետո ինչքան ուզես՝ վառոդ կբերեմ քեզ համար, Իլյուշա։ Հիմա մենք ինքներս ենք վառոդ պատրաստում։ Բորովիկովն իմացավ բաղադրությունը. քսանչորս մաս բորակ ես վերցնում, տասը մաս ծծումբ, վեց մաս փայտածուխ, բոլորը միասին ծեծում-մանրացնում ես, ջուր ես լցնում, խառնում ես մինչև խմոր դառնա, հետո բարակ մաղում ես՝ ահա քեզ վառոդ։

— Սմուրովն ինձ պատմել է ձեր վառոդի մասին, միայն թե հայրիկս ասում է ,որ դա իսկական վառոդ չէ,— պատասխանեց Իլյուշան։

— Ինչպե՞ս թե իսկական չէ,— կարմրեց Կոլյան,— վառվում է։ Բայց թե ես չգիտեմ ճիշտ ասած...

— Չէ, ոչինչ, ոչինչ,— վեր թռավ հանկարծ փոխկապիտանը մեղավոր արտահայտությամբ։— Ճիշտ է, ասել եմ, որ իսկական վառոդը այդպես չեն պատրաստում, բայց ոչինչ, ոչինչ, այդպես էլ կարելի է։

— Չգիտեմ, դուք ավելի լավ գիտեք։ Մենք կավե ամանի մեջ վառել ենք, սքանչելի այրվում էր, լրիվ այրվեց, պստլիկ մի կտոր մուր մնաց տակը։ Բայց դա պարզապես խմորն էր, իսկ եթե մաղով անցկացվի... Բայց դե դուք ավելի լավ գիտեք, ես չգիտեմ... Իսկ Բուլկինը հորից ծեծ կերավ մեր վառոդի երեսից, լսե՞լ ես,— դարձավ նա հանկարծ Իլյուշային։

— Լսել եմ,— պատասխանեց Իլյուշան։ Նա անհուն հետաքրքրությամբ ու հանդիսությամբ լսում էր Կոլյային։

— Մի ամբողջ շիշ վառոդ էինք պատրաստել, նա իր մահճակալի տակ էր պահում։ Հայրը տեսել է։ Կարող է պայթել,

ասել է, և տեղն ու տեղը ծեծել նրան։ Ուզում էր գնալ դպրոց՝ դանդատվել իմ դեմ։ Հիմա նրան չեն թողնում, որ ինձ հետ ընկերություն անի, էլ ոչ ոքի չեն թողնում ինձ մոտ։ Սմուրովին էլ չեն թողնում, համբավս տարածվել է։ Ասում են, թե «կրակ ու պատիժ» եմ,— արհամարհանքով ժպտաց Կոլյան։— Այդ ամբողջը երկաթգծի պատմությունից սկսվեց։

— Օ՜, մենք ձեր այդ խիզախության մասին էլ լսել ենք,— բացականչեց փոխկապիտանը։— Ինչպե՞ս կարողացաք պառկել գնացքի տակ։ Ինչ է, բնա՞վ չվախեցաք, երբ անցնում էր գնացքը։ Սարսափելի էր, չէ՞։

Փոխկապիտանը ուղղակի շողոքորթում էր Կոլյային։

— Ո-ո՜չ այնքան,— անփութորեն պատասխանեց Կոլյան։— Իմ անունը ամենից ավելի այդ անիծյալ սագը փչացրեց այստեղ,— դարձավ նորից Իլյուշային։ Ու թեև նա անփույթ էր ձևանում խոսելիս, բայց դեռ չէր կարողանում իշխել իրեն և սայթաքում էր մի տեսակ։

— Ախ հա՜, սագի մասին էլ եմ լսել,— ծիծաղեց Իլյուշան, ու երեսը փայլեց ուրախությունից։— Պատմեցին. բայց չհասկացա, իսկապե՞ս դատավորը քեզ դատել է։

— Ամենահիմար, ամենանչին բանն էր, լուն ուղտ սարքեցին, ինչպես միշտ անում են մեզ մոտ,— սկսեց Կոլյան ազատհամարձակ։— Մի անգամ անցնում էի հրապարակով, և մեկ էլ տեսա՝ կենդանի սագեր են քշել-բերել։ Կանգնեցի ու նայում էի սագերին։ Հանկարծ այստեղացի մի տղա՝ Վիշնյակովը, նա, որ հիմա Գլոտնիկովների մոտ ցրիչ է աշխատում, կանգնեց ու ինձ նայեց, մեկ էլ ասաց՝ «Ինչ է, ինչի՞ ես նայում սագերին»։ Նայեցի նրան՝ հիմար, կլոր մի մուրթ, քսան տարեկան կլիներ։ Ես երբեք չեմ խուսափում ժողովրդից, հասկանո՞ւմ եք։ Սիրում եմ ժողովրդի հետ շփվել... Մենք ետ ենք մնացել ժողովրդից, աքսիոմ է սա... Կարծեմ բարեհաճում եք ծիծաղել, հա՞, Կարամազով։

— Չէ, քավ լիցի, սիրով լսում եմ ձեզ,— պատասխանեց Ալյոշան շատ անկեղծ արտահայտությամբ, և կասկածամիտ Կոլյան իսկույն քաջալերվեց։

— Իմ տեսությունը պարզ ու հստակ է, Կարամազով,— անմիջապես նա սկսեց շատախոսել նորից, ուրախացած։— Ես հավատում եմ ժողովրդին և միշտ պատրաստ եմ իրավունք տալու նրան, բայց առանց երբեք շփացնելու, դա sine qua[1] է... Հա՜,

[1] Sine qua non— անհրաժեշտ պայման (լատ.)։

սագի մասին էի ասում։ Դարձա ուրեմն այդ հիմարին ու պատասխանեցի. «Ա՛յ, մտածում եմ, թե արդյոք սա՞գը ինչի մասին է մտածում»։ Նայեց ինձ կատարյալ հիմարի պես։ «Ինչի՞ մասին է մտածում սագը»,— ասաց։ «Ահա տեսնո՞ւմ ես,— ասացի,— այնտեղ վարսակով լիքը սայլ է կանգնել։ Պարկից վարսակ է թափվում, և սագն էլ վիզը երկարել է հենց անիվի տակ, կտցում է, տեսնո՞ւմ ես»։— «Շատ լավ էլ տեսնում եմ»,— ասաց։ «Դե այ ուրեմն,— ասացի,— եթե հիմա այդ սայլը մի քիչ առաջ շարժվի՝ անիվը կկտրի՞ սագի գլուխը, թե չէ»։— «Անպայման կկտրի»,— ասաց և մինչև ականջները ժպտաց, ուղղակի հալվեց հրճվանքից։ «Դե ուրեմն գնանք,— ասացի,— դե արի՛»։— «Արի՞»,— ասաց անմիջապես։ Եվ շուտով էլ գլուխ բերեցինք գործը. նա հենց այնպես սուսուփուս կանգնեց սանձի մոտ, ես էլ կողքով կանգնեցի, որ սագին ուղղություն տամ։ Կառապանն էլ այդ րոպեին ուրիշ կողմ էր դարձել, խոսում էր մեկի հետ, այնպես որ ուղղություն տալու կարիք էլ չեղավ. սագը ինքնիրեն երկարեց վիզը սայլի տակ, որ վարսակը կտցի, հենց ուղղակի անիվի տակ։ Ես աչքով արեցի տղային, նա էլ սանձը քաշեց, և կրե՛խ՝ սագի վիզն ուղղակի կես եղավ։ Եվ մեկ էլ ահա, մեր բախտից, հենց նույն վայրկյանին գյուղացիները մեզ տեսան, ու միանգամից աղմուկը գցեցին. «Դիտմամբ արեցիր»։— «Չէ, դիտմամբ չարեցի»։— «Չէ՝, դիտմամբ արեցիր»։ Եվ սկսվե՛ց դավոցը։ «Դատավորի մոտ տարեք, դատավորի՛»։ Ինձ էլ բռնեցին. «Դո՜ւ էլ այստեղ էիր ուրեմն, հա՞, օգնո՞ւմ էիր նրան, քեզ ամբողջ շուկան գիտի»։ Եվ իսկապես էլ, չգիտեմ ինչու, ամբողջ շուկան ինձ ճանաչում է,— ավելացրեց Կոլյան ինքնապարծորեն։— Գնացինք բոլորս էլ հաշտարար դատավորի մոտ, սագն էլ բերեցին։ Մեկ էլ տեսնեմ, այս իմ ախպեր տղան վախեցավ, լացը դրեց, ուղղակի կնկա նման լաց էր լինում։ Իսկ սագերի տերը գոռում էր՝ «էս ձևով ինչքա՞ն ասես կարելի է սագ սպանել»։ Դե պարզ է, վկաներ կային։ Դատավորը մի վայրկյանում հաշիվը տեսավ. տղան թող մի ռուբլի տա սագի տիրոջը, սատկած սագն էլ թող ինքը վերցնի։ Եվ մեկ էլ թե՝ օրանից հետո այդպիսի կատակներ չանի երբեք։ Իսկ տղան անընդհատ ոռնում էր կնկա նման։ «Ես չեմ արել,— ասաց,— ալ նա՛ ինձ բռթեց»։ Եվ ինձ է ցույց տալիս։ Ես լրիվ սառնասրտությամբ պատասխանեցի, որ բոլորովին էլ չեմ դրդել նրան, հիմնական գաղափարն եմ հայտնել պարզապես, ծրագրային մի բան եմ ասել։ Դատավոր Նեֆեդովը ժպտաց,

բայց հենց անմիջապես էլ բարկացավ ինքն իր վրա, որ ժպտաց։ «Ես իսկույն ևեթ դպրոցի ղեկավարությանը գանգատ կներկայացնեմ ձեր դեմ,— ասաց,— որպեսզի սրանից հետո նստեք ու ձեր դասերը սովորեք, փոխանակ այդպիսի ծրագրային բաներով զբաղվելու։ Ղեկավարությանը գանգատ չներկայացրեց իհարկե, կատակ էր անում, բայց լուրը իսկապես տարածվեց ու դասատուների ականջը հասավ. չէ՞ որ լեզուները երկար են մեզ մոտ, ականջնե՞րն էլ։ Հատկապես մեր «հին աշխարհ» Կոլբասնիկովը ձայնը բարձրացրեց, բայց Դարդանելովը նորից պաշտպանեց ինձ։ Կոլբասնիկովը հիմա բոլորիս դեմ շարացել է, կանաչ էշի պես։ Լսել ես, չէ՞, Իլյուշա, ամուսնացավ մարդը. հազար ռուբլի օժիտ առավ Միխայլովներից, իսկ հարսը մի մոռ՞ւթ ունի՝ առաջին կարգի ու վերջին աստիճանի։ Երրորդ դասարանցիները իսկույն մի էպիգրամ գրեցին.

Դասարանն ամբողջ շշմել է լուրից՝
Կոլբասնիկովը փնթի առավ կողակից։

Եվ այլն, և այլն, շատ ծիծաղելի մի բան է, հետո կբերեմ քեզ։ Դարդանելովի մասին բան չեմ ասում. գիտուն մարդ է, ուղղակի գիտուն։ Այդպիսի մարդկանց հարգում եմ, և բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ ինձ պաշտպանեց։

— Բայց դու հաղթեցի՞ր նրան, երբ հարցրիր, թե ով է հիմնել Տրովադան,— վրա բերեց հանկարծ Սմուրովը, որ այդ բոպեին ուղղակի հպարտանում էր Կրասոտկինով։ Շատ էր նրան դուր եկել սագի պատմությունը։

— Հենց այնպես էլ հաղթեցի՞ք իսկապես,— շողոքորթ մի շեշտով ձայնակցեց փոխկապիտանը։— Այն հարցում, թե ո՞վ է հիմնել Տրովադան։ Լսել ենք, լսել ենք, որ հաղթել եք, այո։ Իլյուշկան հենց այն ժամանակ էլ պատմեց ինձ...

— Նա ամե՞ն ինչ գիտե, հայրիկ, մեր բոլորից էլ ավելի գիտե,— ձայնակցեց նաև Իլյուշան,— պարզապես ձևացնում է, որ այսպես է ինքը, բայց նա բոլոր առարկաներից էլ առաջինն է։

Իլյուշան անսահման երջանկությամբ նայում էր Կոլյային։

— Է՜հ, Տրովադայի մասին այդ ամբողջը հիմարություն է, դատարկ բան։ Ես ինքս այդ հարցը անիմաստ եմ համարում,— ասաց Կոլյան հպարտ համեստությամբ։ Նա արդեն լիովին ընկել էր իր հունի մեջ, բայց դեռ անհանգստանում էր մի քիչ. զգում

էր, որ հուզագրգիռ վիճակի մեջ է ներքուստ, և որ սագի մասին, օրինակ, չափից ավելի սրտանց էր պատմել, այնինչ Ալյոշան լուրջ դեմքով լսել էր ամբողջ այդ պատմությունը և լռել էր շարունակ։ Եվ ահա, կասկածն արդեն սկսել էր կամաց-կամաց փորփրել ինքնասեր տղայի սիրտը. «Չլինի՞ թե ինձ արհամարհելուց է այդպես լռում, մտածելով, որ ուզում եմ իր գովասանքը լսել։ Եթե նա համարձակվում է այդպես մտածել, այդ դեպքում ես...»։

— Ես այդ հարցը ուղղակի անիմաստ եմ համարում,— կրկնեց նա, հպարտորեն շեշտելով։

— Իսկ ես գիտեմ ով է հիմնել Տրովադան,— շատ անսպասելիորեն խոսեց հանկարծ մի տղա, որ մինչ այդ համարյա դեռ ոչինչ չէր ասել։ Լուռումունջ ու երևի ամաչկոտ տղա էր նա, շատ սիրունիկ, տասնմեկ տարեկան, ազգանունը՝ Կարտաշով։ Նստել էր հենց դռան մոտ։ Կոլյան զարմանքով ու ծանրակշիռ մի արտահայտությամբ նայեց նրան։ Ենդիրն այն էր, որ «ո՞վ է հիմնել Տրովադան» հարցը ուղղակի գաղտնիք էր դարձել ամբողջ դպրոցում, և այդ պարզելու համար պետք էր Սմարագդով կարդալ։ Սակայն Կոլյայից բացի ոչ ոք Սմարագդով չուներ։ Եվ ահա մի անգամ, երբ Կոլյան ուրիշ կողմ էր նայում, Կարտաշովը գաղտագողի մոտեցել էր նրա գրքերին, արագորեն բացել էր Սմարագդովի «Ընդհանուր պատմությունը» և ուղղակի ընկել այն էջի վրա, ուր խոսվում է Տրովադայի հիմնադիրների մասին։ Արդեն բավական երկար ժամանակ էր անցել այդ օրից, բայց Կարտաշովը միշտ էլ անհարմար էր զգացել մի տեսակ ու սիրտ չէր արել հրապարակով հայտնել, որ ինքն էլ գիտե, թե ով է հիմնել Տրովադան. վախեցել էր, որ անախորժ բան կարող է պատահել և Կոլյան մի որևէ կերպ ամոթանք կտա իրեն դրա համար։ Բայց հիմա հանկարծ, չգիտես ինչու, չդիմացավ ու ասաց։ Եվ արդեն վաղուց էր ուզում ասել։

— Է՜, ո՞վ է հիմնել տեսնենք,— գոռոզամիտ հոխորտանքով դարձավ նրան Կոլյան, արդեն նրա դեմքից կռահելով, որ իսկապես գիտե։ Եվ, բնական է, իսկույն պատրաստվեց դիմագրավելու դրա բոլոր հետևանքները։ Տիրող ներդաշնակ տրամադրության մեջ, այսպես ասած, մի անարբեհունչ ձայն հնչեց։

— Տրովադան հիմնել են Տեկրոսը, Դարդանոսը, Իլոսը և Տրոսոսը,— կարճ ու կտրուկ շարեց տղան և մի վայրկյանում

կարմրեց, այնպես կարմրեց, որ մարդ ցավ կզգար նրան նայելով։ Բայց տղաները բոլորն էլ շեշտակի նայեցին նրան, մի ամբողջ բոպե նայեցին, և հետո բոլոր այդ շեշտակի նայող աչքերը միանգամից դարձան Կոլյային։ Իսկ Կոլյան շարունակում էր իր արհամարհական ու սառնասիրտ հայացքով ոտից գլուխ չափել հանդուգն տղային։

— Այսինքն ինչպե՞ս են հիմնել,— վերջապես արժանի համարեց խոսել նա,— և առհասարակ ի՞նչ է նշանակում մի քաղաք կամ պետություն հիմնել։ Ի՞նչ են արել նրանք. եկել ու մեկական աղյո՞ւս են դրել, հա՞։

Մի ծիծաղ պայթեց։ Մեղավոր տղան կաս-կարմիր դարձավ։ Լեզուն կապվել էր, քիչ էր մնում՝ լաց լիներ։ Կոլյան դեռ մի բոպե ևս այդ վիճակի մեջ պահեց նրան։

— Որպեսզի խոսես այնպիսի պատմական դեպքերի մասին, ինչպիսին է ազգության հիմնադրումը, պետք է նախ և առաջ հասկանաս, թե ինչ է նշանակում դա,— խրատեց նա խիստ ու հատու շեշտով։— Բայց ես կարևորություն էլ չեմ տալիս այդ պառավական հեքիաթներին, և առհասարակ շատ էլ չեմ հարգում ընդհանուր պատմությունը,— ավելացրեց նա հանկարծ անփութորեն, արդեն դիմելով բոլորին։

— Ընդհանուր պատմությո՞ւնը,— հարցրեց հանկարծ փոխկապիտանը, կարծես մի տեսակ վախեցած։

— Այո, ընդհանուր պատմությունը։ Մարդկային մի շարք հիմարությունների ուսումնասիրումն է դա, ուրիշ ոչինչ։ Ես հարգում եմ միայն մաթեմատիկան և բնական գիտությունները,— փքվեց Կոլյան և աչքի տակով նայեց Ալյոշային. միայն նրա կարծիքից էր վախենում այստեղ։ Բայց Ալյոշան դեռ շարունակում էր լուռ մնալ և դեռ առաջվա նման լուրջ էր։ Եթե մի բան ասեր հիմա Ալյոշան, դրանով էլ կվերջանար ամեն ինչ, բայց Ալյոշան լուռ մնաց, իսկ «նրա լռությունը կարող էր արհամարհական լինել», և Կոլյան արդեն լրիվ բորբոքվեց։

— Եվ մեկ էլ նորի՞ց այդ դասական լեզուները հիմա. պարզապես խենթություն է դա, ուրիշ ոչինչ... Կարծեմ նորի՞ց համաձայն չեք ինձ հետ, Կարամազով։

— Համաձայն չեմ,— զուսպ ժպտաց Ալյոշան։

— Դասական լեզուները, եթե ուզում եք իմ լրիվ կարծիքն իմանալ, ոստիկանական միջոց են. ահա պարզապես, թե ինչու մտցրել են դրանք ծրագրի մեջ,— աստիճանաբար սկսեց նորից շնչասպառ լինել Կոլյան։— Մտցրել են, որովհետև ձանձրալի են դրանք, և որովհետև բթացնում են ընդունակությունները։ Ամեն ինչ ձանձրալի էր արդեն, ուրեմն ի՞նչ անեին, որ է՛լ ավելի ձանձրալի լիներ։ Ամեն ինչ անիմաստ էր, ուրեմն ի՞նչ անեին, որ ավելի անիմաստ լիներ։ Եվ ահա գյո՛ւտ արեցին՝ դասական լեզուն՝՝ Այս է իմ լրիվ կարծիքը դրանց մասին, և հույս ունեմ, որ երբեք չեմ փոխի կարծիքս,— կտրուկ վերջացրեց Կոլյան։ Երկու այտերին էլ մի-մի կարմիր բիծ երևաց։

— Ճիշտ է,— զրնգուն ու համոզված ձայնով համաձայնվեց հանկարծ Սմուրովը, որ աչալուրջ լսում էր։

— Իսկ ինքը առաջի՞նն է լատիներենից,— զոռաց հանկարծ տղաներից մեկը։

— Այո, հայրիկ, այդպես է ասում, բայց ինքը մեր դպրոցում առաջինն է լատիներենից,— արձագանքեց Իլյուշան։

— Հետո՞ ինչ,— անհրաժեշտ համարեց պաշտպանվել Կոլյան, թեև գովեստն էլ շատ հաճելի էր նրան։— Լատիներենն անգիր եմ անում, որովհետև այդպես է պետք, որովհետև մորս խոստացել եմ ավարտել դպրոցը. և կարծում եմ՝ եթե մի բան հանձն առար, պետք է լավ անես։ Բայց հոգուս խորքում խորապես արհամարհում եմ դասական լեզուները և ամբողջ այդ սորությունը... Համաձայն չե՞ք, Կարամազով։

— Բայց ինչո՞ւ «սորություն»,— ժպտաց նորից Ալյոշան։

— Ներեցեք, բայց չէ՞ որ դասականները թարգմանված են բոլոր լեզուներով. ուրեմն լատիներենը մտցրել են ոչ թե դասական հեղինակներին ուսումնասիրելու համար, այլ պարզապես նրանց պետք է եկել իրրև ոստիկանական միջոց, որպեսզի բթացնեն ընդունակությունները։ Է՛հ, եթե դա սորություն չէ, ի՞նչ է հապա։

— Բայց ո՞վ է ձեզ սովորեցրել այդ բոլորը,— բացականչեց Ալյոշան, որ զարմացել էր վերջ ի վերջո։

— Նախ՝ ես ինքս կարող եմ հասկանալ, առանց ուրիշի սովորեցնելուն, և երկրորդ՝ իմացեք, հենց այս նույն բանը, որ հիմա ես ձեզ ասացի դասականների թարգմանության մասին, մեր ուսուցիչ Կոլբասնիկովն է ասել ամբողջ երրորդ դասարանի առաջ։

— Բժի՞շկը եկավ,— բացականչեց հանկարծ Նինոչկան, որ մինչ այդ լուռ էր մնացել։

Իրոք, տան դարպասի առաջ կանգ էր առել տիկին Խոխլակովայի անձնական կառքը։ Փոխկապիտանը, որ առավոտից սպասում էր բժշկին, կայծակի արագությամբ վազեց դեպի դարպասը՝ նրան դիմավորելու։ «Մայրիկը» հավաքեց իրեն ու ծանրակշիռ մի արտահայտություն տվեց դեմքին։ Ալյոշան մոտեցավ Իլյուշային և սկսեց նրա բարձը ուղղել։ Նինոչկան անձկագին հետևում էր իր բազկաթոռից, թե ինչպես է նա կարգի բերում Իլյուշայի անկողինը։ Տղաներն շտապեցին հրաժեշտ տալ, մի քանիսը խոստացան գալ երեկոյան։ Կոլյան կանչեց Պերեզվոնին, և շունը անկողնից վար թռավ։

— Ես չեմ գնա, չեմ գնա,— հապճեպորեն ասաց Կոլյան Իլյուշային,— կսպասեմ միջանցքում և նորից կգամ, երբ բժիշկը գնա, Պերեզվոնի հետ կգամ։

Բայց արդեն ներս էր մտնում բժիշկը՝ ծանրակշիռ մի անձնավորություն, արջենու մուշտակ հագած, երկար ու մուգ գույնի այտամորուսներով, ծնոտը փայլուն ածիլված։ Շեմքից ներս անցնելով, նա հանկարծ կանգ առավ, կարծես շվարեց. երևի նրան թվաց, թե սխալ տեղ է մտել։ «Ի՞նչ է սա։ Որտե՞ղ եմ ես»,— քրթմնջաց նա, մուշտակը դեռ ուսերին պահելով ու նաև չհանելով գլխարկը, որ ծովարջի մորթուց էր կարված և նույն մորթուց էլ հովար ուներ։ Բաղմությունը ներսում, սենյակի աղքատությունը, պարանի վրա կախված սպիտակեղենը անկյունում՝ այս բոլորը շփոթեցրել էին նրան։ Փոխկապիտանը երկու ծալ դարձած խոնարհվում էր նրա առաջ։

— Այստեղ է, տիար, այստեղ է, տիար,— մրթմրթում էր նա ստորաքարշորեն,— այստեղ է, իմ տունն է, տիար, իմ տունն էիք գալիս, տիար...

— Սնե-գիր-յո՞վ,— ասաց բժիշկը հոխորտ ու բարձր ձայնով։— Պարոն Սնեգիրյովը... դո՞ւք եք։

— Ե՛ս եմ, տիար...,

— Ա՜։

Բժիշկը մի անգամ էլ շուրջը նայեց խորշոմ մի հայացքով և մուշտակը ետ նետեց։ Բոլորի աչքի առաջ շողշողաց նրա վզի փառավոր շքանշանը։ Փոխկապիտանը արագորեն բռնեց նրա մուշտակը, իսկ բժիշկն իր գլխարկը հանեց։

— Իսկ ո՞ւր է հիվանդը,— հարցրեց նա բարձրաձայն ու տիրական շեշտով։

VI

ԿԱՆԽԱՀԱՍՈՒԹՅՈՒՆ

— Ինչ եք կարծում, ի՞նչ կասի նրան բժիշկը,— շուտասելուկի նման հարցրեց Կոլյան։— Բայց ի՞նչ զզվելի մուրք է, չէ՞։ Տանե՛լ չեմ կարող բժշկությունը։

— Իլյուշան կմեռնի։ Ինձ թվում է, որ արդեն կասկած չի կարող լինել,— տխուր պատասխանեց Ալյոշան։

— Խաբեբանե՞ր։ Սո՛ւտ բան է բժշկությունը։ Բայց ուրախ եմ, որ ծանոթացա ձեզ, Կարամազով։ Վաղուց էի ուզում ծանոթանալ։ Միայն թե ցավում եմ, որ այս տխուր առիթով հանդիպեցինք...

Կոլյան շատ էր ուզում ավելի շերմ, ավելի զեղուն մի բան ասել, բայց կարծես ճնշվում էր մի տեսակ։ Ալյոշան նկատեց այդ, ժպտաց և սեղմեց նրա ձեռքը։

— Ես վաղուց սովոր եմ հարգելու ձեզ՝ որպես մի հազվագյուտ անձնավորության,— կմկմաց նորից Կոլյան, շփոթվելով ու տատամսելով։— Լսել եմ, դուք միստիկ եք և եղել եք վանքում։ Գիտեմ, որ միստիկ եք, բայց... դա ետ չպահեց ինձ։ Իրականության հետ շփվելը ձեզ կբուժի... Ձեզ նման բնավորությունները միշտ այդպես են լինում։

— Ի՞նչ եք հասկանում միստիկ ասելով։ Իմ ի՞նչը պետք է բուժվի,— զարմացավ մի քիչ Ալյոշան։

— Է՛, աստված-մաստված և այլն։

— Ի՞նչ, մի՞թե չեք հավատում աստուծո։

— Ընդհակառակը, ես ոչինչ էլ չունեմ աստծո դեմ։ Իհարկե, աստվածը պարզապես ենթադրություն է... բայց... ընդունում եմ, որ հարկավոր է նա, կարգ ու կանոնի համար... տիեզերական կարգ ու կանոնի և այլն... և եթե չլիներ աստված, պետք էր հնարել նրան,— ավելացրեց Կոլյան, սկսելով կարմրել։ Հանկարծ մի բան անցավ նրա մտքով. չլինի՞ հիմա Ալյոշան մտածում է, թե ինքը իր գիտելիքներն է ցուցադրում նրա առաջ՝ ցույց տալու համար իր «մեծ» լինելը։ «Իսկ ես բոլորովին էլ չեմ ուզում իմ գիտելիքները ցուցադրելս,— մտածեց Կոլյան վրդովմունքով։ Եվ հանկարծ սոսկալի տհաճ զգաց։

— Խոստովանում եմ, ես տանե՛լ չեմ կարող այսպիսի վեճերի մեջ մտնելը,— ասաց նա կտրականորեն։— Կարելի է նաև

առանց աստծուն հավատալու սիրել մարդկությանը, չէ՞, ի՞նչ եք կարծում։ Վոլտերը չէր հավատում աստծուն, բայց սիրում էր մարդկությանը, չէ՞։ («Նորից, նորի՞ց»,— մտածեց նա ինքնիրեն)։

— Վոլտերը հավատում էր աստուծո, բայց կարծեմ քիչ էր հավատում և, որքան գիտեմ, մարդկությանն էլ քիչ էր սիրում,— ասաց Ալյոշան հանգիստ, զուսպ ու կատարելապես բնական շեշտով, կարծես խոսում էր իր տարեկիցի կամ նույնիսկ իրենից մեծ մի մարդու հետ։ Կոլյային հատկապես զարմացրեց, որ Ալյոշան այդպես մի տեսակ անվստահորեն արտահայտեց իր կարծիքը Վոլտերի մասին, և որ կարծես իրեն՝ փոքրիկ Կոլյային թողեց այդ հարցի լուծումը։

— Իսկ դուք, ինչ է, կարդացե՞լ եք Վոլտերին,— ավելացրեց Ալյոշան։

— Ոչ, չեմ կարող ասել, թե կարդացել եմ... Բայց կարդացել եմ «Կանդիդը», ռուսերեն թարգմանությամբ... հին, այլանդակ, ծիծաղելի մի թարգմանություն... (Նորից, նորի՞ց)։

— Եվ հասկացա՞ք։

— Օ այո՛, ամեն ինչ... այսինքն... իսկ ինչո՞ւ եք կարծում, որ չէի կարող հասկանալ։ Իհարկե, պիղծ բաներ շատ կան այնտեղ... Ես անշուշտ կարող եմ հասկանալ, որ դա փիլիսոփայական վեպ է և գրվել է մի գաղափար առաջ քաշելու համար...— արդեն բոլորովին խճճվեց Կոլյան։— Ես սոցիալիստ եմ, Կարամազո՛վ, ես անուղղա սոցիալիստ եմ,— բոլորովին անկապորեն հայտարարեց նա մեկեն, կարճ կտրելով։

— Սոցիալի՞ստ,— ծիծաղեց Ալյոշան։— Բայց ե՞րբ եք հասցրել։ Կարծեմ դեռ տասներեք տարեկան եք միայն, չէ՞։

Կոլյան կծկվեց։

— Նախ՝ ոչ թե տասներեք, այլ տասնչորս, երկու շաբաթից՝ տասնչորս,— ուղղակի բռնկվեց նա կարմրելով,— և հետո՝ բոլորովին չեմ հասկանում, ի՞նչ գործ ունի այստեղ իմ տարիքը։ Ենդիրն այն է, թե ինչ համոզմունքներ ունեմ, և ոչ թե քանի տարեկան եմ։ Այնպես չէ՞։

— Նրբ ավելի մեծանաք, ինքներդ կտեսնեք, թե տարիքը ինչ նշանակություն ունի համոզմունքների համար։ Ինձ թվաց, թե դրանք ձեր սեփական խոսքերը չեն,— համեստ ու հանգիստ պատասխանեց Ալյոշան, բայց Կոլյան տաք-տաք ընդհատեց նրան.

— Ներեցեք, դուք հնազանդություն ու միստիցիզմ եք ուզում։ Ընդունեցեք, որ քրիստոնեական հավատքը, օրինակ, ծառայել է միայն հարուստներին ու մեծավորներին՝ ստրկության մեջ պահելու համար ցածր դասակարգը, այնպես չէ՞։

— Ա՜խ, ես գիտեմ որտեղ եք կարդացել այդ բանը, և անպայման ուրի՛շ մեկն է ասել ձեզ,— բացականչեց Ալյոշան։

— Ներեցեք, իսկ ինչո՞ւ անպայման պետք է կարդացած լինեմ։ Եվ բացարձակապես ոչ ոք չի ասել ինձ։ Ես ինքս էլ կարող եմ... Եվ եթե ուզում եք՝ ես դեմ չեմ Քրիստոսին։ Շատ մարդասեր մի անձնավորություն էր նա, և եթե մեր ժամանակներում ապրեր՝ ուղղակի հեղափոխականների շարքը կմտներ, գուցե և աչքի ընկնող դեր խաղար... Եվ անպայման այդպես կլիներ։

— Բայց որտեղի՞ց, որտեղի՞ց եք ձեր գլուխը մտցրել այդ բանը։ Ո՞ր հիմարի հետ եք շփվել,— բացականչեց Ալյոշան։

— Ներեցեք, ճշմարտությունը չի կարելի թաքցնել։ Ես իհարկե, մի որոշ առիթով, հաճախ եմ խոսում պարոն Ռակիտինի հետ, բայց... Ասում են, որ դեռ պապիս օրոք Բելինսկին էլ ասել է այդ բանը։

— Բելինսկի՞ն։ Ձեմ հիշում։ Նա ոչ մի տեղ այդպիսի բան չի գրել։

— Եթե չի գրել, ուրեմն ասել է. այդպես են ասում։ Ես դա լսել եմ մի մարդուց, որ... Բայց ոչինչ, գրո՛ղը տանի...

— Իսկ Բելինսկուն կարդացե՞լ եք։

— Գիտե՞ք ինչ... ոչ... կարգին չեմ կարդացել, բայց... այն հասկացել եմ կարդացել Տատյանայի մասին՝ թե ինչո՞ւ նա Օնեգինի հետ չգնաց։

— Ինչպե՞ս թե Օնեգինի հետ չգնաց։ Բայց ինչ է, դուք այդ բանն արդեն... հասկանո՞ւմ եք։

— Ներեցեք, երևի դուք ինձ փոքրիկ Սմուրովի տեղ եք դնում,— ջղայնորեն քմծիծաղեց Կոլյան։— Բայց խնդրեմ, մի՛ կարծեք, թե ես մի այնպիսի՛ հեղափոխական եմ։ Շատ հաճախ՝ ես համաձայն չեմ լինում պարոն Ռակիտինի հետ։ Տատյանա ասացի, բայց բոլորովին էլ կողմնակից չեմ կանանց ազատագրմանը։ Ես ընդունում եմ, որ կինը ստորադաս էակ է և պետք է հնազանդի։ Les femmes tricottent[1] ինչպես ասել է

1 Կանանց գործը հյուսելն է (ֆրանս.)։

Նապոլեոնը,— չգիտես ինչու ժպտաց Կոլյան,— և գոնե այս հարցում կատարելապես բաժանում եմ այդ կարծեցյալ մեծ մարդու տեսակետը։ Ես էլ, օրինակ, գտնում եմ, որ հայրենիքից Ամերիկա փախչելը ստորություն է, ստորությունից էլ վատ՝ հիմարություն։ Ինչո՞ւ Ամերիկա գնալ, երբ մեր երկրում էլ կարելի է մեծ օգուտ բերել մարդկությանը։ Մանավանդ հիմա։ Բեղուն գործունեության ահագին ասպարեզ կա։ Հենց այդպես էլ պատասխանեցի։

— Ինչպե՞ս թե պատասխանեցիք։ Ո՞ւմ։ Ինչ է, որևէ մեկը ձեզ Ամերիկա՞ է հրավիրել արդեն։

— Խոստովանում եմ՝ ինձ դրդում էին, բայց ես մերժեցի։ Սա մեր մեջ իհարկե, Կարամազով, լսո՞ւմ եք, ոչ ոքի ոչ մի խոսք։ Միայն ձեզ եմ ասում։ Բոլորովին ցանկություն չունեմ Երրորդ բաժանմունքի ճանկն ընկնելու և դասեր առնելու Շղթայավոր կամուրջի մոտ։

Դեռ կհիշե՞ս դու շենքն այն
Շղթայավոր կամուրջի մոտ։

Հիշո՞ւմ եք։ Հոյակապ է։ Ինչո՞ւ եք ծիծաղում։ Չլինի՞ կարծում եք, որ փչում եմ այս բոլորը ձեր առաջ։ («Իսկ եթե հանկարծ իմանա՞, որ հորս պահարանում «Կոլոկոլի» այդ մի համարն է ընդամենը, և էլ ուրիշ ոչ մի այդպիսի բան չեմ կարդացել»,— մտածեց Կոլյան հարևանցիորեն, բայց սարսռալով)։

— Օ՜հ, ոչ, ես չեմ ծիծաղում և բնավ էլ չեմ կարծում, որ սուտ խոսեցիք։ Հենց այն է խնդիրը, որ չե՞մ կարծում. որովհետև՝ կատարելապես ճշմարիտ է այդ ամբողջը, ավա՜ղ։ Բայց ասացեք, Պուշկինին կարդացե՞լ եք, հենց «Օնեգինը», օրինակ... Այ հիմա խոսում էիք Տատյանայի մասին։

— Ոչ, դեռ չեմ կարդացել, բայց ուզում եմ կարդալ։ Ես նախապաշարմունքներ չունեմ, Կարամազով։ Ես ուզում եմ երկու կողմերն էլ լսել։ Ինչո՞ւ հարցրիք։

— Հենց այնպես։

— Ասացե՛ք, Կարամազով, դուք սոսկալի արհամարհո՞ւմ եք ինձ,— կտրեց հանկարծ Կոլյան և ամբողջ հասակով մեկ ձգվեց Ալյոշայի առաջ, կարծես մարտական դիրք ընդունելով։— Հաճեցեք ուղղակի ասել, առանց այլևայլի։

— Արհամարհում եմ ձե՞զ,— զարմացած նայեց նրան Ալյոշան։— Բայց ինչո՞ւ։ Պարզապես տխրում եմ, որ ձեզ նման

հիանալի՜ մի բնավորություն, դեռ ապրել չսկսած, խեղաթյուրվել է արդեն այդ կոպիտ հիմարություններով։

— Իմ բնավորության մասին մի՛ մտահոգվեք,— ընդհատեց Կոլյան մի որոշ ինքնագոհությամբ։— Բայց ճիշտ է, որ ես կասկածամիտ եմ։ Հիմարորեն կասկածամիտ, կոպտորեն կասկածամիտ։ Ժպտացիք հիմա, և ինձ թվաց, որ դուք կարծես թե...

— Ախ, ես բոլորովին ուրիշ բանի համար ժպտացի։ Գիտե՞ք ինչու ժպտացի. վերջերս մի արտասահմանյան գերմանացու կարծիքը կարդացի մեր այժմյան ուսանող երիտասարդության մասին, Ռուսաստանում ապրած մի գերմանացու։ «Ռուս դպրոցականին,— գրում է,— ցույց տվեք աստղերի քարտեզը, որի մասին նա մինչ այդ ոչ մի գաղափար չի ունեցել, և վաղն ևեթ այդ քարտեզը ձեզ կվերադարձնի՝ վրան ուղղումներ արած։ Ոչ մի գիտելիք և անսահման ինքնահավանություն՝ ահա թե ինչ է ուզում ասել գերմանացին ռուս դպրոցականի մասին։

— Օ՜, դա բացարձակապես ճի՜շտ է,— սկսեց հանկարծ քրքջալ Կոլյան,— կետ առ կետ ճի՜շտ է, ճիշտիսիմո՜։ Բռա՜վո, գերմանացի։ Բայց այդ օտարը դրա լա՜վ կողմը չի տեսել, հը՞, ի՞նչ եք կարծում։ Ինքնահավանությո՞ւն։ Է՜հ, ինչ կա որ, դա երիտասարդ լինելուց է, հետո կուղղվի, միայն՝ եթե պետք է այդ ուղղվելը։ Բայց մյուս կողմից՝ անկախ, ինքնուրույն ոգի, համարյա թե մանկությունից սկսած. մտքի և համոզմունքների խիզախություն, և ոչ թե այդ երշիկ ուսողների ստրկամիտ ոգին, որ գլուխ է ծռում հեղինակությունների առաջ... Բայց համենայն դեպս լավ է ասել գերմանացին։ Բռա՜վո, գերմանացի։ Թեև՝ գերմանացիներին պետք է խեղդել, ճիշտն ասած։ Դե հա, ուժեղ են գիտության ասպարեզում, բայց համենայն դեպս պետք է խեղդել նրանց...

— Խեղդե՞լ։ բայց ինչո՞ւ,— ժպտաց Ալյոշան։

— Է՜հ, գուցե և հիմար բան ասացի, համաձայն եմ։ Երբեմն սոսկալի երեխա եմ դառնում, և երբ ուրախանում եմ մի բանից՝ չեմ կարողանում ինձ զսպել, սկսում եմ հիմար-հիմար դուրս տալ։ Բայց գիտե՞ք ինչ, մենք այստեղ դատարկ բաների մասին ենք շաղակրատում, իսկ այդ բժիշկը որքա՞ն երկար մնաց այնտեղ։ Դե գուցե «մայրիկին» էլ է քննում և այդ անդամալույծ Նինային։ Գիտե՞ք, այդ Նինան ինձ դուր եկավ։ Երբ սենյակից ելնում էի, հանկարծ ինձ փսփսաց. «Ինչո՞ւ մինչև հիմա չէիք գա-

լիս։ Եվ այնպիսի՞ մի ձայնով, կշտամբանքո՞վ։ Ինձ թվում է, սոսկալի բարի ու խեղճուկրակ աղջիկ է։

— Այո, այո։ Այ հիմա կսկսեք հաճախ գալ ու կտեսնեք, թե ի՞նչ մարդ է նա։ Ձեզ համար շատ օգտակար կլինի ճանաչել ահա այսպիսի էակներին, որպեսզի կարողանաք ուրիշ շատ բաներ էլ գնահատել, այդ բաները կիմանաք հենց այս մարդկանց հետ ծանոթանալու շնորհիվ,— նկատեց Ալյոշան փութեռանդորեն։— Ամեն ինչից ավելի հենց դա՛ ձեզ կվերափոխի։

— Օ՜, որքա՜ն ցավում եմ ու նախատում ինքս ինձ, որ չեմ եկել մինչև հիմա,— բացականչեց Կոլյան դառնագին մի զգացմունքով։

— Այո, շատ ցավալի է։ Ինքներդ տեսաք, թե ի՞նչ ուրախ տպավորություն գործեցիք խեղճ տղայի վրա։ Եվ ինչպես էր նա մորմոքվում՝ ձե՛զ սպասելով։

— Մի՞ ասեք ինձ։ Ավելի եմ բորբոքվում։ Բայց արժանի՞ եմ դրան։ ինքնասիրությունից է, որ չէի գալիս, եսապաշտ ինքնասիրություն, ստոր կամակորություն, որից ամբողջ կյանքումս չեմ կարողանում ազատվել, թեև ամբողջ կյանքումս էլ աշխատել եմ կոտրել իմ այդ գիծը։ Տեսնում եմ հիմա, շատ կողմերով ստո՛ր մարդ եմ ես, Կարամազով։

— Ոչ, դուք հիանալի բնավորություն ունեք, թեև աղճատված մի քիչ. և ես շատ լավ եմ հասկանում, թե ինչու այդպիսի ազդեցություն եք ունեցել այս աղնիվ ու հիվանդագին կերպով զգայուն տղայի վրա,— պատասխանեց Ալյոշան ջերմորեն։

— Եվ դուք ի՞նձ եք ասում այդ բանը,— գոչեց Կոլյան։— Իսկ ես, պատկերացրեք, կարծում էի... և հիմա էլ, այստեղ, քանի՞ անգամ մտքովս անցավ, որ դուք արհամարհում եք ինձ։ Եթե իմանայի՞ք, թե որքան թանկ է ինձ համար ձեր կարծիքը։

— Բայց մի՞թե իրոք այդքան կասկածամիտ եք։ Այս տարիքո՞ւմ։ Այո, երևակայեցեք, երբ քիչ առաջ դուք պատմում էիք սենյակում, ես էլ հենց ձեզ նայելով մտածեցի, որ երևի շատ կասկածամիտ պետք է լինեք։

— Ուրեմն այդպե՞ս մտածեցիք։ Բայց ի՞նչ սուր աչք ունեք, այ ասեմ ձեզ։ Դրազ կգամ, դա հենց այն պահին էր, երբ ես ստոր մասին էի պատմում։ Հենց այդ պահին մտքովս անցավ, որ դուք ինձ խորապես արհամարհում եք, որովհետև ես շտապում եմ իմ քաջությունը ցուցադրել. և նույնիսկ ատեցի ձեզ դրա համար, սկսեցի հանկարծ հիմարություններ դուրս տալ։ Հետո

էլ այստեղ, միջանցքում, երբ դեռ քիչ առաջ ասում էի՝ «Եթե լիներ ասված, պետք էր հնարել նրան», հանկարծ ինձ թվաց, թե չափից ավելի շտապում եմ իմ գիտելիքները ցուցադրել, մանավանդ որ գրքում եմ կարդացել այդ նախադասությունը։ Բայց երդվում եմ, սնափառությունից չէր, որ շտապում էի այդպես ցուցադրել ինքս ինձ. հենց այնպես, չգիտեմ ինչից էր, ուրախությունի՞ց էր, ուրախությունից, ասված վկա, ուրախությունից էր կարծես... Թեև շատ ամոթալի բան է, երբ մարդ ուրախությունից սկսում է բոլորի վզին փաթաթվել։ Գիտեմ։ Բայց հիմա արդեն համոզված եմ, որ դուք չեք արհամարհում ինձ և այդ բոլորը ինքս եմ երևակայել։ Օ՜ Կարամազով, ես խորապես դժբախտ եմ։ Երբեմն ասված գիտե՞ թե ինչեր եմ երևակայում, որ իբր թե բոլորը ծիծաղում են ինձ վրա, ամբողջ աշխարհը ծիծաղում է, և այդ ժամանա՞կ. այդ ժամանակ պարզապես ուզում եմ ոչնչացնել աշխարհի ամբողջ կարգուսարքը։

— Եվ տանջում եք ձեր շրջապատին,— ժպտաց Ալյոշան։

— Այո, տանջում եմ շրջապատիս, հատկապես մորս։ Ասացեք ինձ, Կարամազով, շա՞տ ծիծաղելի եմ հիմա։

— Է՜հ, մի՞ մտածեք դրա մասին, մի՞ մտածեք, քնա՞վ,— բացականչեց Ալյոշան։— Եվ ի՞նչ է նշանակում ծիծաղելի։ Մարդ քի՞չ անգամ ծիծաղելի է լինում կամ թվում այդպես։ Եվ հետո՝ գրեթե բոլոր ընդունակ մարդիկ հիմա սոսկալի վախենում են ծիծաղելի լինելուց և դրանով էլ դժբախտ են։ Ինձ զարմացնում է միայն, որ դուք այսքա՞ն շուտ սկսել եք զգալ այդ բանը, թեև, ճիշտն ասած, ես վաղուց արդեն նկատում եմ դա, և ոչ միայն ձեր մեջ։ Հիմա նույնիսկ երեխաներն էլ սկսել են տառապել այդ ցավով։ Համարյա թե խելագարություն է դա։ Սատանան է այդ ինքնասիրության կերպարանքն ստացել և մտել ամբողջ սերնդի մեջ, այո, հենց սատանա՛ն,— ավելացրեց Ալյոշան ու բոլորովին չժպտաց, այնինչ Կոլյան, որ շեշտակի նայում էր նրան, հենց այդ վայրկյանին կարծեց, թե ժպիտ կտեսնի նրա դեմքին։— Դուք էլ նման եք բոլորին,— եզրակացրեց Ալյոշան,— այսինքն շատ-շատերին, միայն թե չպետք է լինեք այնպես, ինչպես բոլորն են, ա՛յս է խնդիրը։

— Նույնիսկ երբ բոլո՞րն են այդպես։

— Այո, նույնիսկ երբ բոլորն են այդպես։ Դո՞ւք միայն այդպես մի լինեք։ Եվ իրոք էլ դուք այնպես չեք, ինչպես բոլորը. ա՛յ հիմա չամաչեցիք և խոստովանեցիք այն, ինչ վատ է և

նույնիսկ ծիծաղելի, չէ՞։ Իսկ մեր օրերում ո՞վ է խոստովանում այդ բանը։ Ոչ ոք։ Եվ նույնիսկ ինքնադատության կարիքն էլ չեն զգում այլևս։ Ուրեմն մի՛ լինեք այնպես, ինչպես բոլորն են, ու թեկուզ միակը մնաք, համենայն դեպս մի՛ նմանվեք բոլորին։

— Հոյակա՛պ է։ Ձեմ սխալվել ձեր նկատմամբ։ Դուք մխիթարելու շնորհն ունեք։ Օ՛, ինչպե՞ս էի ձգտում ծանոթանալ ձեզ հետ, Կարամազով, վաղուց, վաղու՛ց էի ուզում հանդիպել ձեզ։ Մի՞թե իսկապես դուք էլ մտածել եք իմ մասին։ Քիչ առաջ ասացիք, որ դուք էլ մտածել եք իմ մասին, չէ՞։

— Այո, լսել էի ձեր մասին և մտածում էի նույնպես... և եթե հիմա ինքնասիրությունն էր մասամբ, որ ձեզ մղեց այդ հարցը տալու, դե վնաս չունի։

— Գիտե՞ք ինչ, Կարամազով, մեր այս բացատրությունը նման է սիրո խոստովանության,— ասաց Կոլյան մի տեսակ նվազուն ու ամոթխած ձայնով։— Ծիծաղելի չէ՞ դա, ծիծաղելի չէ՞։

— Բոլորովին էլ ծիծաղելի չէ, ու թեկուզ ծիծաղելի էլ լինի՝ վնաս չունի, որովհետև լավ բան է,— պայծառ ժպտաց Ալյոշան։

— Բայց գիտե՞ք, Կարամազով, ընդունեցեք՝ դուք ինքներդ էլ հիմա մի քիչ ամաչում եք, որ ինձ հետ այսպես... Ձեր աչքերից եմ տեսնում,— ժպտաց Կոլյան մի տեսակ խորամանկորեն, բայց համարյա թե երջանիկ։

— Իսկ ինչո՞ւ պետք է ամաչեմ։

— Իսկ ինչո՞ւ կարմրեցիք։

— Բայց դո՛ւք այնպես արեցիք, որ կարմրեցի,— ծիծաղեց Ալյոշան և իրոք կաս-կարմիր եղավ։— Է՛, այո, մի քիչ ամաչում եմ՝ ասված գիտե, թե ինչու, չգիտեմ ինչու...— մրթմրթաց նա, համարյա նույնիսկ շփոթվելով։

— Օ՛, ինչպե՞ս եմ ձեզ սիրում ու գնահատում այս բոպեին՝ հենց դրա համար. դո՛ւք էլ ամաչում եք, որ այսպես խոսում եք ինձ հետ, և չգիտե՞ք ինչու։ Որովհետև դո՛ւք էլ ինձ նման եք,— բացահայտ հրճվանքով բացականչեց Կոլյան։ Աչքերը վառվում էին, աչքերը փայլում։

— Գիտե՞ք, Կոլյա, ի միջի այլոց, դուք նաև շատ դժբախտ մարդ եք լինելու կյանքում,— ասաց Ալյոշան ինչ-որ մղումով։

— Գիտեմ, գիտեմ։ Ինչպե՞ս ամեն ինչ իմանում եք նախօրոք,— հաստատեց իսկույն Կոլյան։

— Բայց այնուամենայնիվ, կյանքը պիտի օրհնեք ընդհանուր առմամբ։

— Շա՛տ ճիշտ է։ Ուռա՛։ Մարգարե եք դուք։ Օ՛, մենք կմտերմանանք, Կարամազով։ Գիտե՞ք, ինձ ամենից ավելի հիացնում է այն, որ դուք ինձ հետ բացարձակապես հավասարի նման եք վարվում։ Բայց մենք հավասար չենք, ո՛չ, հավասար չենք, դուք ավելի՛ բարձր եք։ Բայց կմտերմանանք։ Գիտե՞ք, ամբողջ մի ամիս ես ինքս ինձ ասում էի. «Կա՛մ միանգամից բարեկամներ կդառնանք հավիտյանս հավիտենից, կամ էլ հենց առաջին անգամից կբաժանվենք որպես թշնամիներ՝ ցմահ»։

— Եվ այդպես ասելով՝ անշուշտ սիրում էիք ինձ, չէ՞,— ուրախ ծիծաղեց Ալյոշան։

— Սիրում էի, սոսկալի՛ սիրում, սիրում էի ու երազում ձեր մասին։ Եվ ինչպե՞ս դուք նախօրոք իմանում եք այդ բոլորը։ Ա՜հ, ահա վերջապես բժիշկը։ Տեր աստված, ի՞նչ է ասելու արդյոք։ Տեսեք, դե՛մքը տեսեք։

VII

ԻՍՏՈՒՇԱ

Բժիշկը սենյակից դուրս եկավ նորից մուշտակի մեջ փաթաթված և գլխարկը գլխին։ Դեմքին համարյա բարկացած ու խորշող մի արտահայտություն կար, ասես դեռ վախենում էր, որ մի բանի դիպչելով կկեղտոտվի։ Մի հարևանցի հայացք նետեց միջանցքին ու միաժամանակ խստորեն նայեց Ալյոշային ու Կոլյային։ Ալյոշան դռնից նշան արեց կառապանին, և բժշկին բերող կառքը մոտեցավ մուտքի դռանը։ Փոխկապիտանը շեշտակի դուրս թռավ բժշկի ետևից և երկու ծալ լինելով, համարյա գալարվելով նրա առաջ, կանգնեցրեց ու մի վերջին խոսք խնդրեց նրանից։ Խեղճ մարդու դեմքին կյանք չէր մնացել, աչքերի մեջ վախ կար։

— Ձե՛ր գերազանցություն, ձե՛ր գերազանցություն... մի՞թե...— սկսեց նա ու չկարողացավ շարունակել, միայն ձեռքերը հուսահատորեն զարկեց իրար, թեև մի վերջին պաղատանքով նայում էր դեռ բժշկին, կարծես թե իր խեղճ մանչուկի ճակատագիրը կարող էր փոխվել այն մեկ խոսքից, որ ասելու էր բժիշկը հիմա։

— Ի՞նչ կարող եմ անել։ Աստված չեմ,— անփութորեն պատասխանեց բժիշկը, թեև նրա ձայնի մեջ ազդու մի շեշտ կար ըստ սովորության։

— Դոկտո՛ր... Ձե՛ր գերազանցություն... իսկ դա... շուտո՞վ է լինելու, շուտո՞վ։

— Պատ-բաստ ե-ղեք ամեն ինչի,— ասաց բժիշկը պարզ ու կտրուկ, շեշտելով յուրաքանչյուր վանկը, և աչքերը խոնարհեց, պատրաստվեց դուրս գալ շեմքից՝ դեպի կառքը։

— Ձե՛ր գերազանցություն, ի սե՛ր Քրիստոսի,— նորից կանգնեցրեց նրան փոխկապիտանը, վախեցած,— ձե՛ր գերազանցություն... էլ ուրեմն ոչի՞նչ չի փրկի նրան, ոչի՞նչ, բացարձակապես ոչի՞նչ...

— Հիմա այլևս ինձնից չի կախված,— ասաց բժիշկը անհամբեր,— և սակայն, հը՛մ,— կանգ առավ նա հանկարծ,— եթե դուք օրինակ, կարողանայիք... ու-ղար-կել... ձեր հիվանդին... Սի-բա-կու-զա... իսկույնևթ, առանց որևէ ուշացման (բժիշկն «իսկույնևթ, առանց որևէ ուշացման» բառերն արտասանեց ոչ թե պարզապես խստորեն, այլ համարյա ցասումնալից, այնպես որ փոխկապիտանը ցնցվեց նույնիսկ), ապա... նոր, բա-բե-բար կլի-մա-յա-կան պայմանների շնորհիվ... գուցե կարող է պատա-հել, որ...

— Սիբակու՛զա,— գոչեց փոխկապիտանը, կարծես դեռ ոչինչ չհասկանալով։

— Սիբակուզան գտնվում է Սիցիլիա կղզում,— վրա բերեց հանկարծ Կոլյան բարձրաձայն, որպես բացատրություն։ Բժիշկը նրան նայեց։

— Սիցի՛լիա։ Տեր իմ, ձե՛ր գերազանցություն,— գլուխը կորցրեց փոխկապիտանը,— բայց դուք տեսաք, չէ՞,— երկու ձեռքերը տարածեց նա շուրջանակի, ցույց տալով իր պայմանները— իսկ մայրի՞կը, իմ ընտանի՞քը։

— Ո-ոչ, ընտանիքին Սիցիլիա պետք չէ, ձեր ընտանիքը՝ Կովկաս, վաղ գարնան... ձեր դստերը՝ Կովկաս, իսկ կնոջը... հոդացավի համար նույնպես Կով-կա-սում հանքային ջրեր ընդունելուց հետո... անմիջապես ու-ղար-կել Փարիզ՝ հո-գե-բույժ դոկտոր Լը-պել-լըտյեի բուժարանը, ես կարող եմ ձեզ մի երկտող տալ նրա անունով, և այդ դեպքում... գուցե կարող է պատահել, որ...

— Դոկտո՛ր, դոկտո՛ր։ Բայց ախր տեսնո՛ւմ եք,— հանկարծ նորից ձեռքերը տարածեց փոխկապիտանը, հուսահատորեն ցույց տալով միջանցքի մերկ, գերանակապ պատերը։

— Ա՜, դա արդեն իմ գործը չէ,— ժպտաց բժիշկը,— ես պարզապես ասացի այն, ինչ գի-տու-թյունը կարող է պատասխանել՝ վերջին միջոցների մասին ձեր հարցին, իսկ մնացյալը... ցավում եմ, որ...

— Մի՛ անհանգստացեք, բուժա՛կ, իմ շունը ձեզ չի կծի,— խայթեց հանկարծ Կոլյան բարձր ձայնով, նկատելով բժշկի մի քիչ անհանգիստ հայացքը, որ ուղղված էր դռան մեջ կանգնած Պերեզվոնին։ Ցասումնալից մի շեշտ հնչեց Կոլյայի ձայնի մեջ։ Իսկ «բուժակ» բառը նա դիտմամբ ասաց «դոկտորի» փոխարեն, և «վիրավորելու համար» ասաց, ինչպես ինքը բացատրեց հետո։

— Ի՞նչ ա-սա-ցի՞ք,— գլուխը վեր ցցեց բժիշկը, աչքերը զարմացած սևեռելով Կոլյային։— Ո՞վ է սա-ա՜,— դարձավ հանկարծ Ալյոշային, կարծես հաշիվ պահանջելով նրանից։

— Պերեզվոնի տերն է, բուժակ, մի՛ մտահոգվեք իմ անձի մասին,— խայթեց նորից Կոլյան։

— Զվո՞ն,— կրկնեց բժիշկը, չհասկանալով, թե ինչ բան է Պերեզվոնը։

— Քայլ առաջ, օ՜։ Ցտեսություն, բուժա՛կ, կտեսնվենք Սիբակուզայում։

— Ո՞վ է սա-ա՜։ Ո՞վ է, ո՞վ,— հանկարծ սոսկալի բորբոքվեց բժիշկը։

— Դպրոցական է, դոկտոր, լարաճճի տղա է, ուշադրություն մի՛ դարձնեք,— ասաց Ալյոշան արագ-արագ, խոժոռվելով։— Լռեցե՛ք, Կոլյա,— գոռաց նա Կրասոտկինին։— Պետք չէ ուշադրություն դարձնել, դոկտոր,— կրկնեց նա արդեն մի քիչ անհամբեր։

— Սեծ-ծե՛լ, ծեծ-ծե՛լ է պետք, ծեծ-ծե՛լ,— ոտքը հատակին խփեց բժիշկը, որ, չգիտես ինչու, չափից ավելի կատաղել էր։

— Բայց գիտե՞ք, ինչ, բուժա՛կ, իմ Պերեզվոնը կարող է և կծել, գիտե՞ք,— ասաց Կոլյան դողացող ձայնով. գունատվել էր նա և աչքերը փայլատակում էին։— Իսի՛, Պերեզվոն։

— Կո՛լյա, եթե մի բառ էլ ասեք, այլևս երբեք չեմ խոսի ձեզ հետ,— գոռաց Ալյոշան հրամայականորեն։

— Բուժա՛կ, ամբողջ աշխարհում միայն մե՛կ մարդ կա, որ կարող է հրամայել Նիկոլայ Կրասոտկինին, այն էլ ահա ա՛յս

մարդն է,— Կոլյան ցույց տվեց Ալյոշային։— Հնազանդվում եմ նրան։ Մնաք բարով։

Նա խոյացավ դեպի սենյակի դուռը, բացեց ու արագ ներս մտավ։ Պերեզվոնը վազեց նրա ետևից։ Բժիշկը, կարծես ապուշ կտրած, դեռ մի հինգ վայրկյան էլ անշարժ կանգնեց, նայելով Ալյոշային, հետո հանկարծ թքեց ու արագ քայլերով գնաց դեպի կառքը, բարձրաձայն կրկնելով. «Ի՞նչ է սա-սա, ի՞նչ է, ի՞նչ է... չգիտե՞մ ինչ է»։ Փոխկապիտանը վազեց, որ օգնի նրան կառք նստելու։ Ալյոշան սենյակ մտավ Կոլյայի ետևից։ Կոլյան արդեն կանգնել էր Իլյուշայի անկողնի մոտ։ Իլյուշան բռնել էր նրա ձեռքը և հայրիկին էր կանչում։ Մի րոպեից վերադարձավ նաև փոխկապիտանը։

— Հայրի՞կ, հայրի՞կ, արի այստեղ... մենք...— սկսեց թոթովել Իլյուշան արտակարգորեն հուզված, բայց երևի չկարողանալով շարունակել՝ հանկարծ իր նիհարիկ թևերն առաջ նետեց ու միանգամից գրկեց թե՛ Կոլյային, թե՛ հորը, գրկեց այնքան ամուր, որքան կարող էր, միացնելով նրանց իր գրկում և ինքն էլ սեղմվելով նրանց։ Փոխկապիտանը հանկարծ սկսեց ամբողջ մարմնով ցնցվել լուռ հեծկլտանքից, իսկ Կոլյայի շրթներն ու ծնոտը դողդողացին։

— Հայրի՞կ, հայրի՞կ։ Որքա՞ն եմ մեղքանում քեզ, հայրիկ,— վշտամորմոք հառաչեց Իլյուշան։

— Իլյուշկա... հոգյակս... բժիշկն ասաց... կառողջանաս... երջանիկ կլինենք... բժիշկը...— սկսեց փոխկապիտանը, բայց չկարողացավ շուրանակել։

— Ա՜խ, հայրիկ։ Գիտեմ ինչ ասաց նոր բժիշկը... Տեսա՞,— բացականչեց Իլյուշան ու նորից ամբողջ ուժով սեղմեց երկուսին էլ իր գրկում, երեսը թաքցնելով հայրիկի ուսին։

— Լաց մի՛ լինի, հայրիկ... և երբ ես մեռնեմ, դու մի լավ տղա վերցրու, մի ուրիշ տղա... ինքդ ընտրիր նրանցից մեկին՝ մի լավ տղայի... անունը Իլյուշա դիր, և իմ տեղը նրա՛ն սիրիր...

— Սո՛ւս արա, բիձուկ, կառողջանա՛ս,— գոռաց հանկարծ Կրասոտկինը, ասես բարկանալով։

— Իսկ ինձ, հայրի՞կ, ինձ երբեք մի՛ մոռանա,— շարունակեց Իլյուշան,— միշտ արի ինձ մոտ, իմ գերեզմանը... և հետո գիտե՞ս ինչ, հայրիկ, ինձ թաղիր մեր մեծ քարի կողքին, ուր քեզ հետ գնում էինք ման գալու, և Կրասոտկինի հետ արի այն-

տեղ ինձ մոտ, իրիկունը... Եվ Պերեզվոնն էլ... Իսկ ես պիտի սպասեմ ձեզ... Հայրի՞կ, հայրի՞կ։

Նրա ձայնը կտրվեց, երեքն էլ կանգնել էին գրկված և արդեն լուռ էին։ Նինոչկան էլ մեղմ արտասվում էր իր բազկաթոռում, և հանկարծ մայրիկն էլ, տեսնելով նրանց լացը, սկսեց աղի արցունք թափել։

— Իլյո՞ւշկա։ Իլյո՞ւշկա,— բացականչում էր մայրիկը։

Կրասոտկինը հանկարծ դուրս եկավ Իլյուշայի գրկից։

— Ցտեսություն, բիձուկ, մայրս ինձ սպասում է ճաշին,— ասաց նա արագ-արագ։— Ափսո՞ս, որ նախօրոք չասացի նրան։ Շատ կանհանգստանա... Բայց ճաշից հետո անմիջապես կգամ քեզ մոտ, ամբողջ օրը կմնամ, ամբողջ իրիկունը, և այնքա՞ն բաներ կպատմեմ քեզ, այնքա՞ն բաներ։ Եվ Պերեզվոնին էլ կբերեմ, իսկ հիմա հետս եմ տանում, որովհետև առանց ինձ կսկսի ոռնալ և կխանգարի քեզ։ Ցտեսությո՛ւն։

Եվ նա վազեց միջանցք։ Չէր ուզում լաց լինել, բայց և այնպես միջանցքում սկսեց լալ։ Այդ վիճակում էլ գտավ նրան Ալյոշան։

— Կոլյա, դուք անպայման պետք է կատարեք ձեր խոսքը, և գաք, այլապես նա սոսկալի վիշտ կապրի,— ասաց Ալյոշան պարտադրող շեշտով։

— Անպայմա՛ն։ Օ՜, ինչպե՞ս եմ անիծում ինքս ինձ, որ մինչև հիմա չեմ եկել,— մրթմրթաց Կոլյան լալով և արդեն առանց ամաչելու, որ լաց է լինում։

Այդ րոպեին հանկարծ սենյակից դուրս թռավ փոխկապիտանը և իսկույն դուռը փակեց իր ետևից։ Նրա դեմքին մոլեգնահար մի արտահայտություն կար, շրթները դողում էին։ Կանգնեց երկու պատանիների առաջ և ձեռքերը վեր նետեց։

— Չե՛մ ուզում լավ տղա։ Չե՛մ ուզում ուրիշ տղա,— շշնջաց նա վայրագ մի փսփսուքով ու կրճտացնելով ատամները։— Եթե մոռացայլ զքեզ, Երուսաղեմ, մոռացի զիս աջ իմ...

Չկարողացավ շարունակել, կարծես շունչը կտրվեց, և ուժասպառ ընկավ ծնկների վրա՝ փայտե նստարանի առաջ։ Բռունցքներով սեղմեց գլուխը և սկսեց հեկեկալ, մի տեսակ անհեթեթ վնգվնգալով, բայց և ամբողջ էությամբ ճիգ անելով, որ չլսեն իր վնգվնգոցները սենյակում։ Կոլյան փողոց վազեց։

— Ցտեսությո՛ւն, Կարամազով։ Դուք ինքներդ գալո՞ւ եք,— կտրուկ ու բարկացած գոռաց նա Ալյոշային։

— Երեկոյան անպայման կգամ։

— Այդ ի՞նչ էր ասում Երուսաղեմի մասին... Դա ի՞նչ բան էր։

— Աստվածաշնչից է. «Եթե մոռացայց զքեզ, Երուսաղեմ», այսինքն եթե մոռանամ այն ամբողջը, որ ամենից ավելի թանկ է ինձ համար, եթե փոխեմ ուրիշ բանի հետ, ապա ուրեմն թո՛ղ պատժվի իմ...

— Հասկանում եմ, բավական է։ Դուք էլ եկեք անպայման։ Իսկ՝, Գերեզվոն,— արդեն ուղղակի կատաղորեն գոռաց նա շանը և խոշոր, արագ քայլերով գնաց տուն։

Գիրք տասնմեկերորդ

ԻՎԱՆ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ

I

ԳՐՈՒՇԵՆԿԱՅԻ ՄՈՏ

Ալյոշան գնաց Մայր եկեղեցու հրապարակը՝ Մարոզովայի տունը, Գրուշենկային տեսնելու։ Գրուշենկան դեռ վաղ առավոտյան ուղարկել էր Ֆեդյային՝ խնդրելով Ալյոշայից, որ նա անպայման գա իր մոտ։ Ֆեդյային հարցուփորձելով, Ալյոշան իմացել էր, որ մի մեծ, առանձին տագնապ է համակել նրա տիրուհուն՝ դեռ երեկվանից։ Միտյայի ձերբակալությունից հետո, անցած երկու ամսվա ընթացքում, Ալյոշան հաճախ էր այցելում Մարոզովայի տունը՝ թե՛ իր սեփական ցանկության մղումով, թե՛ Միտյայի հանձնարարությամբ։ Միտյայի ձերբակալությունից երեք օր հետո Գրուշենկան սաստիկ հիվանդացել էր ու գրեթե հինգ շաբաթ էր տևել նրա հիվանդությունը։ Մի ամբողջ շաբաթ պառկել էր ուշակորույս։ Շատ էր փոխվել դեմքը, նիհարել էր ու դեղնել, թեև ահա երկու շաբաթ է արդեն՝ կարողանում էր տնից դուրս գալ։ Բայց Ալյոշայի կարծիքով, նրա դեմքը մի տեսակ ավելի գրավիչ էր դարձել, և Ալյոշան սիրում էր հանդիպել նրա հայացքին, երբ մտնում էր նրա տունը։ Գրուշենկայի հայացքը կարծես ամրացել էր տոկուն ու

իմաստալից մի բանով։ Աչքերը մի որոշ հոգեկան հեղաշրջում էին արտահայտում՝ անխախտ, խոնարհ, բայց համառ ու անդրդվելի մի վճռականություն։ Ճակատին, հոնքերի միջև, մի փոքրիկ, ուղղահայաց կնճիռ էր երևացել, և դա ինքնամփոփ, առաջին հայացքից նույնիսկ խստաշունչ մտածկոտության տեսք էր տալիս նրա հմայիչ դեմքին։ Նախկին թեթևամտությունից, օրինակ, հետք անգամ չէր մնացել։ Ալյոշային տարօրինակ էր թվում և այն, որ չնայած խեղճ կնոջ գլխին եկած ամբողջ դժբախտության, չնայած որ նրա փեսացուին ձերբակալել էին ահավոր մի ոճրագործության համար՝ գրեթե հենց այն պահին, երբ ինքը նրա հարսնացուն էր դարձել, չնայած իր անցկացրած հիվանդության և վաղվա գրեթե անխուսափելի դատավճռին, որ կախվել էր սպառնալիքի նման, Գրուշենկան այնուամենայնիվ չէր կորցրել իր նախկին երիտասարդական կենսուրախությունը։ Նրա մի ժամանակ հպարտ աչքերի մեջ մի մեղմ լույս էր շողում հիմա, թեև... թեև այդ աչքերը մերթ ընդ մերթ դարձյալ բոցավառվում էին չարագուշակ մի հրով, երբ նրան կրկին ու կրկին այցելում էր անցյալի մի մտատանջություն, որ ոչ միայն չէր մեղմացել, այլ նույնիսկ ավելի էր սաստկացել նրա սրտում։ Այդ մտատանջության առարկան միշտ նույնն էր՝ Կատերինա Իվանովնան, որի մասին Գրուշենկան նույնիսկ զառանցել էր հիվանդ եղած ժամանակ։ Ալյոշան հասկանում էր, որ Գրուշենկան սոսկալի խանդում է նրան, չնայած որ Կատերինա Իվանովնան ոչ մի անգամ չէր գնացել կալանավոր Միտյայի մոտ, թեև ուզած ժամանակ կարող էր այցելել նրան բանտում։ Այս ամբողջը դժվար մի խնդիր էր դարձել Ալյոշայի համար, որովհետև նա միակ մարդն էր, որի առաջ Գրուշենկան բացում էր իր սիրտը և անբեղհատ խորհուրդ հարցնում. իսկ Ալյոշան երբեմն բացարձակապես ոչինչ չէր կարողանում ասել նրան։

Ալյոշան անհանգիստ սրտով մտավ նրա բնակարանը։ Արդեն տանն էր Գրուշենկան. կես ժամ առաջ վերադարձել էր Միտյայի մոտից, և հիմա այնպիսի մի արագ շարժումով վեր թռավ բազկաթոռից ու ընդառաջ վազեց, որ Ալյոշան հենց դրանից միայն հասկացավ, թե նա մեծ անհամբերությամբ սպասում էր իրեն։ Սեղանի վրա խաղաթղթեր կային, նոր էին սկսել «դուրաչկի» խաղալ։ Կաշվե բազմոցի վրա, սեղանի մյուս կողմը, անկողին էր փռված և այնտեղ ընկողմանել էր Մաքսիմովը, որ գիշերազգեստ էր հագել ու բամբակյա թասակ ուներ

գլխին. երևում էր, որ հիվանդ է նա, տկարացել է, թեև քաղցը ժպտում էր։ Այս անտունի ծերուկը դեռ այն ժամանակ, երկու ամիս առաջ, Գրուշենկայի հետ վերադառնալով Մոկրոեից, պարզապես մնացել էր նրա տանը և մինչև հիմա էլ մնում էր։ Երբ այդ օրը, անձրևին ու ցեխին, վերջապես Մոկրոեից տուն հասան, Մաքսիմովը, թրջված ու վախեցած, նստեց բազմոցի վրա և աչքերը լուռումունջ հառեց Գրուշենկային՝ երկչոտ ու խնդրող մի ժպիտով։ Գրուշենկան սոսկալի վշտի մեջ էր, արդեն սկսել էր նաև տենդը, և նա, տուն հասնելուց հետո զանազան հոգսերով տարված, համարյա մոռացավ նրան առաջին կես ժամվա ընթացքում։ Հետո հանկարծ մի տեսակ սևեռուն հայացքով նայեց նրան. ծերուկը խղճալիորեն ծիծաղեց իր մանր քրքիջով, շփոթված նայելով նրա երեսին։ Գրուշենկան կանչեց Ֆենյային ու պատվիրեց, որ ուտելու բան տան նրան։ Ամբողջ այդ օրը նա նստած մնաց իր տեղում, համարյա առանց շարժվելու։ Իսկ երբ մութն ընկավ ու փեղկերը փակեցին, Ֆենյան հարցրեց իր տիրուհուն։

— Ուրեմն ի՞նչ է, տիրուհի, պարոնը էստե՞ղ է մնալու գիշերը։

— Այո, անկողին գցիր բազմոցին,— պատասխանեց Գրուշենկան։

Ավելի մանրամասն հարցուփորձ անելով, Գրուշենկան իմացավ, որ նա հիմա, իրոք, բացարձակապես ոչ մի տեղ չունի ապաստանելու, և որ «պարոն Կալգանովը, իմ բարերարը, ուղղակի հայտարարեց, որ այլևս չի ընդունի ինձ և հինգ ռուբլի նվիրեց»։— «Դե լավ, ասված քեզ հետ, մնա՛ ուրեմն այստեղ»,— որոշեց վշտահար Գրուշենկան, կարեկցորեն ժպտալով նրան։ Այդ ժպիտը տակնուվրա արեց ծերուկի սիրտը, և նրա շրթները դողդողացին երախտապարտ արցունքներից։ Ու թափառական ձրիակերն այդպես էլ մնաց Գրուշենկայի մոտ այդ օրից ի վեր։ Նույնիսկ նրա հիվանդության օրերին չհեռացավ տնից։ Ֆենյան ու նրա մայրը, Գրուշենկայի խոհարարուհին, չվտարեցին նրան, այլ շարունակեցին կերակրել ու նրա համար անկողին փռել բազմոցի վրա։ Հետագայում Գրուշենկան նույնիսկ վարժվեց նրան և ամեն անգամ, երբ վերադառնում էր Միտյայի մոտից (որին սկսել էր այցելության գնալ իր առողջանալուց անմիջապես հետո, նույնիսկ դեռ լրիվ չապաքինված), իր տխրությունը փարատելու համար նստում ու սկսում էր այլևայլ

դատարկ բաներից խոսել «Մաքսիմուշկայի» հետ, միմիայն իր վիշտը մոռանալու նպատակով։ Պարզվեց, որ ծերուկը երբեմն կարողանում է հետաքրքրական բաներ պատմել, այնպես որ ի վերջո նա նույնիսկ անհրաժեշտ դարձավ Գրուշենկայի համար։ Բացի Ալյոշայից, որ գալիս էր, բայց ոչ ամեն օր, և միշտ էլ քիչ էր նստում, համարյա ուրիշ ոչ ոքի չէր ընդունում Գրուշենկան։ Իսկ նրա ծերունի վաճառականն այդ ժամանակ սոսկալի հիվանդ էր արդեն, «շունչը փչում էր», ինչպես ասում էին քաղաքում, և իսկապես՝ Միտյայի դատից մի շաբաթ հետո մեռավ։ Մահից երեք շաբաթ առաջ, զգալով մոտալուտ վախճանը, նա վերջապես իր որդիներին և նրանց կանանց ու երեխաներին կանչեց իր մոտ՝ վերին հարկը, և պատվիրեց, որ այլևս չհեռանան իրենից։ Հենց նույն բոպեին էլ ծառաներին խստորեն հրամայեց, որ էլ երբեք ներս չընդունեն Գրուշենկային, իսկ եթե գա՝ ասեն նրան. «Ձեզ երկար և ուրախ կյանք է մաղթում և ասում է, որ բոլորովին մոռանաք իրեն»։ Եվ սակայն Գրուշենկան գրեթե ամեն օր մարդ էր ուղարկում՝ նրա առողջությունը հարցնելու։

— Եկա՛ր վերջապես,— գոռաց նա, գցելով խաղաթղթերը և ուրախությամբ ողջունելով Ալյոշային,— իսկ Մաքսիմուշկան հենց մի գլուխ վախեցնում էր ինձ, թե գուցե էլ չես գա։ Ա՛խ, այնպե՛ս հարկավոր ես ինձ հիմա։ Նստիր սեղանի մոտ։ Ասա ինչ ես ուզում, սո՞ւրճ։

— Լավ կլիներ,— ասաց Ալյոշան, նստելով սեղանի մոտ,— շատ եմ քաղցած։

— Ահա՛, Ֆե՛նյա, Ֆենյա, սո՛ւրճ,— գոռաց Գրուշենկան։— Վաղուց արդեն եռում է սուրճը, քե՛զ է սպասում։ Կարկանդակ էլ բեր, և տաք-տաք բեր։ Հա՛, լսիր ինձ, Ալյոշա, այս կարկանդակների գլխին այսօր փոթորիկ պայթեց։ Հետս բանտ էի տարել նրա համար, բայց կհավատա՞ս՝ բռնեց ու ետ շպրտեց, այնպես էլ չկերավ։ Մի հատն էլ վերցրեց, ուղղակի գցեց հատակին ու տրորեց։ Ես էլ ասացի՝ «Պահակի մոտ կթողնեմ. եթե չուտե՞ս մինչև իրիկուն, ուրեմն քո թունոտ մաղձով ես կշտանում»։ Ասացի ու դուրս եկա։ Նորի՞ց կուվեցինք, հավատո՞ւմ ես դու սրան։ Երբ էլ որ գնամ, հենց մի գլուխ կռվում ենք։

Գրուշենկան մի շնչով ասաց այդ բոլորը, հուզված։ Մաքսիմովն անմիջապես վախ զգաց և աչքերը խոնարհելով սկսեց ժպտալ։

— Իսկ ա՞յս անգամ ինչու կովեցիք,— հարցրեց Ալյոշան։

— Է՜հ, բոլորովին չէի սպասում։ Երևակայիր, «նախկինին» համար խանդեց, այն լեհի։ Ասում է՝ «Ինչո՞ւ ես պահում նրան։ Ուրեմն սկսել ես պահել նրան, հա՞»։ Խանդում է, անընդհատ խանդում։ Քնում է՝ խանդում, ուտում է՝ խանդում։ Անցյալ շաբաթ էր՝ մի անգամ նույնիսկ Կուզմայի համար էլ խանդեց։

— Բայց չէ՞ որ նա գիտեր «նախկինի» մասին։

— Դե ա՛յ ասա։ Հենց սկզբից էլ գիտեր, մինչև այսօր գիտեր և այսօր հանկարծ վեր կացավ ու սկսեց հայհոյել։ Ուղղակի ամաչում եմ կրկնել ասածները։ Հիմա՜։ Երբ դուրս էի գալիս, Ռակիտկան եկավ մոտը։ Գուցե հենց Ռակիտկան է նրա գլուխը լցնում, հա՞։ Ի՞նչ ես կարծում,— ավելացրեց նա մի տեսակ ցրված։

— Սիրում է քեզ, հասկանո՞ւմ ես, շատ է սիրում։ Եվ հիմա ջղայնացած էլ է մանավանդ։

— Ինչպե՞ս չջղայնանա, վաղը դատն է։ Եվ գնացել էի, որ վաղվա համար իմ խոսքն ասեմ իրեն, որովհետև, Ալյոշա, սարսափո՞ւմ եմ նույնիսկ մտածել, թե ի՞նչ է լինելու վաղը։ Այ դու ասում ես, որ նա ջղայնացած է, բայց ե՞ս ինչ ջղային վիճակում եմ։ Իսկ նա լեհի՞ մասին է խոսում։ Այ քեզ հիմա՜։ Լավ է, գոնե Մաքսիմուշկայի համար չի խանդում։

— Իմ կինն էլ շատ էր խանդում ինձ,— վրա բերեց Մաքսիմովը։

— Ի՞նչ, քե՞զ,— ակամա ծիծաղեց Գրուշենկան։— Ո՞ւմ համար պիտի խանդեր որ։

— Աղախիններին։

— Է՜, սուս կաց, Մաքսիմուշկա, ծիծաղելու սիրտ չունեմ հիմա, նույնիսկ ջղայնություն է գալիս։ Կարկանդակների վրա էլ աչք մի՛ տնկիր, չեմ տա, վնաս է քեզ. սպիտակ ջրից էլ չեմ տա։ Ահա՛, մեկ էլ սրա՛ հոգսը պետք է քաշեմ. կարծես անկելանոց լինի իմ տունը, ճիշտ եմ ասում,— ծիծաղեց նա։

— Ես ձեր բարեբարությանն արժանի չեմ, ես չնչին մի սրարած եմ,— ասաց Մաքսիմովը լացակումած, բարալիկ ձայնով։— Ավելի լավ կլիներ՝ ձեր բարիքները շռայլեիք նրանց, ովքեր ինձնից ավելի պիտանի են։

— Է՜խ, ամեն մարդ էլ պիտանի է, Մաքսիմուշկա, և ինչպե՞ս իմանանք, թե ով ումից ավելի է պիտանի։ Գոնե բոլորովին չլիներ այդ լեհը, Ալյոշա, ախր նրա խելքին էլ փչել է այ-

ծոր հիվանդանալ։ Նրա մոտ էլ եղավ։ Եվ այ հիմա նրան էլ կարկանդակ եմ ուղարկելու. դիտմա՛մբ. չէի ուղարկում, բայց Միտյան ինձ մեղադրեց, որ ուղարկում եմ, դե այ ուրեմն դիտմամբ եմ ուղարկելու հիմա, դիտմա՛մբ։ Ախ, Ֆենյան նամա՛կ է բերում ահա։ Դե հա՜, պարզ է, նորից այդ լեհերն են, փո՞ղ են ուզում նորից։

Եվ իրոք, պան Մուսյալովիչը, ըստ իր սովորության, շափազանց երկար ու մանվածապատ մի նամակ էր ուղարկել, երեք ռուբլի պարտք էր խնդրում։ Նամակին կցված էր մի ստացագիր, որով նա պարտավորություն էր ստանձնում երեք ամսվա մեջ վերադարձնել փողը, ստացագրի տակ ստորագրել էր նաև պան Վրուբլյովսկին։ Գրուշենկան արդեն շատ էր այդպիսի նամակներ ստացել իր «նախկինից», և բոլորն էլ նույնպիսի ստացագրերով։ Եվ դա սկսվել էր հենց Գրուշենկայի առողջանալու օրից, երկու շաբաթ առաջ։ Բայց նա գիտեր, որ երկու պաները իր հիվանդության ժամանակ էլ գալիս էին իր առողջությունը հարցնելու։ Գրուշենկայի ստացած առաջին նամակը երկար էր՝ մի թերթ մեծադիր նամակաթղթի վրա գրված ու տոհմային խոշոր կնիքով դրոշմված, և այնքան մթին էր ու մանվածապատ, որ Գրուշենկան եռսք միայն կարդաց ու մի կողմ թողեց, բացարձակապես ոչինչ չհասկանալով։ Եվ նամակ կարդալու գլուխ էլ չուներ այդ օրերին։ Հաջորդ օրն այդ նամակին հետևեց երկրորդը, ուր պան Մուսյալովը երկու հազար ռուբլի պարտք էր խնդրում ամենակարճ ժամանակով։ Գրուշենկան այդ նամակն էլ առանց պատասխանի թողեց։ Հետո արդեն նամակների մի ամբողջ շարք հաջորդեց, օրը մի նամակ, և բոլորն էլ նույնպես ծանրակշիռ ու մանվածապատ, բայց լեհերի խնդրած պարտքի գումարը, հետզհետե իջնելով, հասավ հարյուր ռուբլու, քսանհինգ ռուբլու, տասը ռուբլու, և վերջապես Գրուշենկան ստացավ մի նամակ, ուր միայն մեկ ռուբլի էին խնդրում պաները, կցելով մի ստացագիր, որի տակ երկուսն էլ ստորագրել էին։ Այդ ժամանակ Գրուշենկան հանկարծ խղճաց ու անձամբ գնաց պանի մոտ, երեկոյան մթնշաղին։ Սոսկալի աղքատության մեջ գտավ երկուսին էլ, համարյա ծայրահեղ կարիքի մեջ. ոչ ուտելիք ունեին, ոչ վառելափայտ, ոչ ծխախոտ, ու նաև պարտք էին տանտիրուհուն։ Այն երկու հարյուր ռուբլին, որ Միտյայից շահել էին Մոկրոեում, շատ արագ չգիտես ուր չքացել էր։ Եվ սակայն Գրուշենկային զարմացրեց այն, որ երկուսն էլ իրեն ոչ-

մավորեցին ամբարտավան, անկախ տեսքով, մեծագույն քաղաքավարությամբ, փքուն ճառերով։ Գրուշենկան ծիծաղեց պարզապես և տասը ռուբլի տվեց իր «նախկինին»։ Եվ հենց այն ժամանակ էլ, ծիծաղելով, պատմեց այդ մասին Միտյային, և Միտյան բոլորովին չխանդեց։ Բայց դրանից հետո պանները կառչեցին Գրուշենկայից, ամեն օր նրան ոմբակոծում էին նամակներով ու փող խնդրում, և նա ամեն անգամ ուղարկում էր մի քիչ։ Եվ ահա այսօր Միտյայի խելքին փչել էր սոսկալի խանդել հանկարծ։

— Ես էլ, հիմարի պես, հենց մի բոպե նրա մոտ էլ մտա, երբ Միտյային տեսնելու էի գնում, որովհետև հիվանդացել է նա էլ՝ իմ նախկին պա՞նը,— սկսեց նորից Գրուշենկան, իրար անցնելով ու աճապարելով։— Ծիծաղում էի և պատմում Միտյային. «Պատկերացրու, ասում էի, իմ լեհի խելքին փչեց, որ կիթառի վրա իր նախկին երգերը երգի ինձ համար, կարծում է՝ կհուզվեմ և իր հետ կամուսնանամ»։ Եվ մեկ էլ Միտյան այնպե՞ս վեր թռավ ու սկսեց հայհոյել որ... Այդպես ուրեմն, հա՞, դե ես էլ կարկանդա՛կ կուղարկեմ պաններին։ Ֆենյա, ինչ է, նրա՞նք են այդ աղջնակին ուղարկել։ Ահա՛, երեք ռուբլի տուր նրան, մի տասը հատ էլ կարկանդակ փաթաթիր թղթի մեջ և ասա՛, որ տանի. իսկ դու էլ, Ալյոշա, անպայման պատմիր Միտյային, որ կարկանդակ ուղարկեցի նրանց։

— Ո՛չ մի դեպքում չեմ պատմի,— ասաց Ալյոշան ժպտալով։

— Է՛խ, դու կարծում ես, որ տանջվում է նա. չէ՞, նա դիտմամբ խանդեց, իսկ իր համար միևնույն է,— ասաց Գրուշենկան դառնորեն։

— Ինչպե՞ս թե դիտմամբ,— հարցրեց Ալյոշան։

— Հիմար ես դու, Ալյոշենկա, այ ասեմ քեզ. այդքան խելք ունես, բայց ոչինչ չես հասկանում այս հարցում, ահա՛։ Ինձ համար վիրավորականը այն չէ, որ նա խանդում է ինձ նման աղջկան. թե չէ՝ իսկապես վիրավորական կլիներ, եթե բոլորովին չխանդեր։ Ես այսպես եմ։ Խանդից չեմ վիրավորվում. ես ինքս էլ դաժան սիրտ ունեմ, ինքս էլ կարող եմ խանդել։ Միայն թե ինձ համար վիրավորական է, որ նա բոլորովին չի սիրում ինձ, իսկ հիմա դիտմամբ խանդեց, հասկացա՞ր։ Կո՞ւյր եմ, ինչ է, չե՞մ տեսնո՞ւմ։ Ինչո՞ւ հիմա հանկարծ նրա՛ մասին խոսեց, այդ Կատյայի. թե՝ այսպիսի՞ն է նա, այնպիսի՞ն է նա, Մոսկվա-

յից բժի՞շկ է կանչել իմ դատի համար, ինձ փրկելո՞ւ համար է կանչել, ամենից առաջնակարգ դատապաշտպանի՞ն էլ է կանչել, ամենագիտո՞ւն դատապաշտպանին։ Դե ուրեմն սիրում է այդ Կատյային, եթե սկսեց իմ աչքի առաջ գովել նրան, և մեկ էլ իր անամո՞թ աչքերով իմ երեսին էր նայում։ Ի՞նչն է մեղավոր իմ առաջ, դե դրա համար էլ կպել է ինձ, որ առաջինը ի՞նձ մեղավոր հանի և ամբողջ մեղքը վրաս գցի. ուզում է ասել՝ «դու ինձնից առաջ այդ լեհի հետ ես եղել, դե այ ուրեմն ես էլ իրավունք ունեմ, որ Կատյայի հետ եմ եղել»։ Ա՜յ, հասկացա՞ր։ Ամբողջ մեղքն ուզում է ինձ վրա գցել միայն։ Դիտմամբ է կպել ինձ, դիտմամբ, ասո՛ւմ եմ քեզ, բայց ես այնպե՞ս կանեմ որ...

Գրուշենկան չկարողացավ շարունակել, չասաց, թե ինչ կանի, թաշկինակով ծածկեց աչքերը և սկսեց սոսկալի հեկեկալ։

— Նա չի սիրում Կատերինա Իվանովնային,— ասաց Ալյոշան հաստատորեն։

— Դե լա՛վ, սիրում է թե չի սիրում՝ ի՞նքս շուտով կիմանամ,— ձայնի մեջ սպառնալից մի շեշտով ասաց Գրուշենկան, թաշկինակը հեռացնելով աչքերից։ Դեմքն այլայլվել էր։ Ալյոշան դառնությամբ տեսավ, թե ինչպես հանկարծ նրա հեզ ու մեղմախինդ դեմքը դարձել էլ մռայլ ու չարացած։

— Բավակա՞ն են այս հիմարությունները,— կտրեց նա հանկարծ,— դրա համար չէ, որ կանչել եմ քեզ։ Ալյոշա, ջանիկս, վա՛ղը ինչ է լինելու, վա՛ղը։ Ահա՛ թե ինչն է տանջում ինձ։ Եվ միայն ի՞նձ է տանջում, միա՛յն։ Նայում եմ բոլորին, ոչ ոք դրա մասին չի մտածում, ոչ ոքի հո՞գն էլ չէ։ Դո՛ւ գոնե մտածո՞ւմ ես դրա մասին։ Վաղը դատո՞ւմ են, հասկանո՞ւմ ես, վա՛ղը։ Ասա՛ ինձ, ինչպե՞ս են դատելու նրան։ Այդ ծառա՞ն, ծառան է սպանել, ծառա՞ն։ Աստվա՛ծ իմ։ Մի՞թե ծառայի տեղ նրա՞ն են դատապարտելու, և ոչ ոք, ո՞չ ոք չի՞ պաշտպանելու նրան։ Եվ այդ ծառային նեղություն էլ չեն տվել բոլորովին, հա՞։

— Խիստ հարցաքննության են ենթարկել,— նկատեց Ալյոշան մտախոհ,— բայց բոլորն էլ եկել են այն եզրակացության, որ նա չէ։ Հիմա հիվանդ պառկած է, լուրջ հիվանդ։ Այդ օրից հիվանդ է, այդ նոպայի օրից։ Իսկապես հիվանդ է,— ավելացրեց Ալյոշան։

— Աստվա՛ծ իմ, գոնե դու ինքդ գնայիր այդ դատապաշտպանի մոտ և երես առ երես պատմեիր գործը։ Ասում են՝ Պետերբուրգից են հրավիրել նրան, երեք հազար ռուբլով, հա՞։

— Մենք երեք հոգով ավելցինք երեք հազարը՝ ես, Իվանը և Կատերինա Իվանովնան։ Իսկ բժշկին նա անձամբ հրավիրեց Մոսկվայից՝ երկու հազարով։ Դատապաշտպան Ֆեոյուկովիչը ավելի թանկ կվերցներ, բայց այս գործը հռչակվել է ամբողջ Ռուսաստանում, բոլոր թերթերն ու ամսագրերը գրում են դրա մասին, և Ֆեոյուկովիչն ավելի իր փառքի համար համաձայնվեց գալ, որովհետև չափազանց նշանավոր գործ է դարձել արդեն։ Երեկ տեսա նրան։

— Եվ ի՞նչ։ Խոսեցի՞ր հետը,— խսկույն վեր թռավ Գրուշենկան։

— Լսեց ու ոչինչ չասաց։ Ասաց, որ արդեն որոշակի կարծիք է կազմել։ Բայց խոստացավ նկատի առնել իմ ասածը։

— Ինչպե՞ս թե նկատի առնել։ Ախ, ի՞նչ խաբեբաներ են։ Կկործանե՞ն նրան։ Իսկ բժշկի՞ն ինչու է կանչել այդ օրիորդը, բժշկի՞ն։

— Որպես փորձագետի։ Ուզում են ապացուցել, որ եղբայրս խելագարվել է և սպանել է խելացնոր վիճակում, չիմանալով, թե ինչ է անում,— մեղմ ժպտաց Ալյոշան։— Միայն թե եղբայրս չի համաձայնվի դրան։

— Ա՜խ, բայց ճշմարի՞տ է դա, եթե ինքն է սպանել,— բացականչեց Գրուշենկան։— Խելագար էր այն ժամանակ, կատարյալ խելագար, և ես էի, ե՛ս էի մեղավորը, ինչ սատո՞ր եմ ես։ Բայց ախր նա չի՞ սպանել, չի՞ սպանել։ Իսկ բոլո՞րը նրան են ցույց տալիս, թե սպանել է, ամբողջ քաղաքը։ Նույնիսկ Ֆենյան էլ այնպիսի ցուցմունք է տվել, որ դուրս է գալիս՝ նա է սպանողը։ Եվ մեկ էլ խանութի՞ մարդիկ, և մեկ էլ այդ պաշտոնյա՞ն, իսկ առաջ էլ գինետանն են լսել նրա ասածները։ Բոլորը, բոլորը նրա դեմ են, ուղղակի աղմուկ են գցել։

— Այո, վկայությունները սոսկալի բարդվել են,— մռայլորեն նկատեց Ալյոշան։

— Իսկ Գրիգորի՞ն, Գրիգորի Վասի՞լևիչը, ախր կանգնել է իր ասածի վրա, թե դուռը բաց է եղել։ Համառորեն պնդում է, որ տեսել է ինքը, չես կարող նրան ետ գցել իր ասածից։ Ինքս գնացի մոտը, ինքս խոսեցի հետը։ Դեռ հայհոյո՞ւմ էլ է։

— Այո, դա գուցե ամենաուժեղ վկայությունն է եղբորս դեմ,— ասաց Ալյոշան։

— Իսկ որ Միտյան խելագար է... դե հիմա էլ դրա նման մի բան է կարծես, ճիշտ եմ ասում,— սկսեց հանկարծ Գրուշենկան

մի տեսակ հատկապես մտահոգ ու խորհրդավոր արտահայտությամբ։— Գիտե՞ս, Ալյոշենկա, վաղուց էի ուզում ասել քեզ դրա մասին. ամեն օր գնում եմ մոտը և պարզապես զարմանում եմ։ Ասա ինձ, ի՞նչ ես կարծում՝ այդ ի՞նչ բաներ են, որ սկսել է ասել հիմա։ Խոսում է, խոսում՝ ոչինչ չեմ կարողանում հասկանալ. մտածում եմ՝ երևի խելոք բաներ է ասում, դե ես էլ հիմար եմ, իմ խելքի բանը չէ. այդպես եմ ասում ինքս ինձ։ Բայց հանկարծ սկսեց «երեխու» մասին խոսել, այսինքն ինչ-որ մանկիկի մասին, թե՝ «ինչո՞ւ աղքատ է երեխեն»։ «Հենց այդ երեխու համար էլ հիմա Սիբիր կգնամ. ես չեմ սպանել, բայց պետք է, որ Սիբիր գնամ»։ Ի՞նչ բան է դա, ի՞նչ «երեխու» մասին էր՝ այնպես էլ ոչինչ չհասկացա։ Միայն թե լացս եկավ, երբ խոսում էր, որովհետև շա՜տ լավ ասաց այդ բանը. ինքն էր լաց լինում, ես էլ սկսեցի լաց լինել, և մեկ էլ հանկարծ ինձ համբուրեց ու ձեռքով խաչակնքեց։ Ի՞նչ է դա, Ալյոշա, ասա՛ ինձ, ի՞նչ «երեխու» մասին է դա։

— Վերջերս Ռակիտինը, չգիտեմ ինչու, հաճախ նրա մոտ է գնում,— ժպտաց Ալյոշան,— բայց չէ... Ռակիտինի բանը չէ դա։ Երեկ չեմ եղել մոտը, այսօր կտեսնեմ նրան։

— Ոչ, Ռակիտկան չէ, Իվան Ֆյոդորովիչն է խռովում նրա հոգին, նա՛ է գնում մոտը, հասկանո՞ւմ ես...— ասաց Գրուշենկան և հանկարծ լեզուն իրեն քաշեց։ Ալյոշան աչքերը հառեց նրան, խիստ զարմացած։

— Ինչպե՞ս թե գնում է։ Բայց մի՞թե Իվանը գնացել է տեսակցության։ Միտյան ինքը ինձ ասաց, թե նա ոչ մի անգամ չի եղել մոտը։

— Դե ահա՜... ա՛յ թե ինչպիսի աղջիկ եմ ես։ Բերնի՞ցս թռցրի,— բացականչեց Գրուշենկան շփոթված, հանկարծ կարմրելով։— Սպասիր, Ալյոշա, սուս կաց. թող այդպես լինի. քանի որ բերնիցս թռավ արդեն, ասեմ ամբողջ ճշմարտությունը։ Իվանը երկու անգամ եղել է նրա մոտ։ Առաջին անգամ՝ երբ հենց նոր էր եկել. չէ՞ որ խսկույնևեթ վազեց-եկավ Մոսկվայից. ես դեռ անկողին էլ չէի ընկել այն ժամանակ։ Իսկ երկրորդ անգամ՝ մի շաբաթ առաջ է գնացել։ Միտյային էլ պատվիրել է, որ չասի քեզ դրա մասին, շատ խիստ է պատվիրել, և առհասարակ պատվիրել է, որ ոչ ոքի չասի։ Գաղտնի է գնացել մոտը։

Ալյոշան նստել էր մտասույզ և խորհրդածում էր մի բանի մասին։ Լուրը հայտնապես ապշեցրել էր նրան։

— Իվանը Միտյայի գործի մասին չի խոսում ինձ հետ,— ասաց նա դանդաղորեն,— և առհասարակ նա ինձ հետ շատ քիչ է խոսել ամբողջ այս երկու ամսվա ընթացքում. իսկ երբ գնում էի մոտը, միշտ էլ դժգոհ էր լինում, որ եկել եմ, այնպես որ արդեն երեք շաբաթ է՝ չեմ գնում այլևս։ Հը՛մ... Եթե նա մի շաբաթ առաջ է եղել այնտեղ, ուրեմն... Իսկապես, այս մի շաբաթվա ընթացքում ինչ-որ փոփոխություն է տեղի ունեցել Միտյայի մեջ...

— Փոփոխությո՛ւն, փոփոխությո՛ւն,— իսկույն վրա բերեց Գրուշենկան։— Մի գաղտնիք կա նրանց մեջ, գաղտնիք կա, գաղտնի՛ք։ Միտյան ինքը ինձ ասաց, որ գաղտնիք կա, և գիտե՞ս, այնպիսի՛ գաղտնիք, որ Միտյան չի էլ կարողանում հանգստանալ։ Առաջ նա զվարթ էր, չէ՞, այսինքն հիմա էլ է զվարթ, բայց, հասկանո՞ւմ ես, երբ որ սկսում է այսպես գլուխը շարժել, մեկ էլ գնում-գալիս է սենյակում, ահա այս աջ մատով էլ քունքի մազերն է սկսում խառնել, դե ես գիտե՞մ՝ մի բան է անհանգստացնում նրա սիրտը... հաստատ գիտեմ։ Թե չէ՝ նա զվարթ էր առաջ. բայց այսո՞ր էլ զվարթ էր։

— Բայց ասացիր՝ ջղայնացած էր, չէ՞։

— Դե ջղայնացած էլ էր, բայց զվարթ էր։ Միշտ էլ ջղայնանում է, բայց մի վայրկյան, հետո մեկ էլ զվարթ է լինում, հետո նորից ջղայնանում է հանկարծ։ Եվ գիտե՞ս, Ալյոշա, անընդհատ զարմանում եմ նրա վրա. ի՞նչ ահավոր փորձանք է կախվել գլխին, բայց նա մեկ-մեկ այնպիսի՛ դատարկ բաների համար սկսում է քրքջալ, կարծես ի՞նքը երեխա լինի։

— Եվ իսկապե՞ս պատվիրեց, որ Իվանի մասին բան չասես ինձ։ Հենց այդպես էլ «մի՛ ասա» ասա՞ց։

— Հենց այդպես էլ «մի՛ ասա» ասաց։ Քեզնից է հատկապես վախենում նա, այսինքն Միտյան, Միտյան։ Որովհետև գաղտնիք է, ինքը ասաց, որ գաղտնիք է... Ալյոշա, ջանիկս, գնա մոտը, իմացիր՝ այդ ի՞նչ բան է նրանց գաղտնիքը, և արի ասա ինձ,— վեր թռավ ու աղաչեց հանկարծ Գրուշենկան։— Հանգստացրու իմ սիրտը, մեղք եմ, ես էլ իմանամ, թե ինչ է լինելու իմ անիծյա՛լ բախտը։ Այ սրա՛ համար կանչեցի քեզ։

— Կարծում ես՝ քե՞զ վերաբերող մի բան է։ Բայց չէ՞ որ այդ դեպքում նա քեզ չէր ասի, թե գաղտնիք կա։

— Չգիտեմ։ Գուցե ուզում է ինձ ասել, բայց չի համար-

ձակվում։ Զգուշացնում է։ Այսինքն թե՝ գաղտնիք կա, բայց ինչ գաղտնիք է՝ չի ասում ինձ։

— Իսկ ինքդ ի՞նչ ես կարծում։

— Ի՞նչ կարծեմ։ Վերջս եկել է, ա՛յ թե ինչ եմ կարծում։ Նրանք երեքը միասին իմ գերեզմանն են փորում, որովհետև Կատյայի մատը կա այստեղ։ Ամբո՞ղջ այդ Կատյան է, նրանից է գալիս ամեն ինչ։ «Նա այսպե՞ս է, նա այնպե՞ս է», ուրեմն ես այնպես չեմ։ Նախօրոք ասում է Միտյան, նախօրոք զգուշացնում է ինձ։ Լքել է ուզում ինձ, այս է ահա ամբողջ գաղտնիքը։ Երեքով են այդ բանը մտածել՝ Միտյան, Կատյան և Իվան Ֆյոդորովիչը։ Ալյոշա, վաղուց էի ուզում հարցնել քեզ. մի շաբաթ առաջ նա հանկարծ ինձ ասաց, որ Իվանը սիրահարվել է Կատյային, որովհետև հաճախ նրա մոտ է գնում։ Ճի՞շտ ասաց, թե չէ։ Ձեռքդ խղճիդ դիր ու ասա՛, մի՛ խնայիր ինձ։

— Սուտ չեմ ասի քեզ։ Իվանը չի սիրահարվել Կատերինա Իվանովնային, այդպես եմ կարծում։

— Հա՛, ես էլ այդպես մտածեցի հենց այդ բոպեին։ Սո՛ւտ է ասում ինձ, անամո՛թը, դե պա՛րզ է։ Եվ հիմա խանդեց հանկարծ, որ հետո ինձ վրա գցի ամեն ինչ։ Հիմար է նա, հիմար, չի կարողանում գաղտնի պահել, այնքան բա՛ց է սիրտը, հասկանո՞ւմ ես... Բայց ես ցո՛ւյց կտամ նրան, ցո՛ւյց կտամ նրան։ Ասում է՝ «Դու հավատում ես, որ ես եմ սպանել». և ի՞նձ է ասում այդ բանը, ինձ, ի՞նձ է հանդիմանում դրանով, հա՞, է՛հ, ասուված նրա հետ։ Բայց սպասի՞ր, այդ Կատյան կստանա՞ ինձնից դատի ժամանակ։ Մի այնպիսի՞ սիրուն խոսք եմ ասելու որ... Ամեն ինչ, ամե՛ն ինչ կասեմ այնտեղ։

Ու նորից սկսեց դառնորեն լաց լինել։

— Ահա՛ թե ինչ կարող եմ ասել քեզ հաստատորեն, Գրուշենկա,— ասաց Ալյոշան վեր կենալով։— Նախ այն, որ Միտյան սիրում է քեզ, աշխարհում ամենից ավելի քեզ է սիրում, և միայն քեզ, հավատա՛ ինձ։ Գիտեմ ես։ Հաստատ գիտեմ։ Երկրորդ ասելիքս այն է, որ չեմ ուզում գաղտնիքը կորզել նրանից. իսկ եթե ինքը ինձ հայտնի այսօր, ես էլ ուղղակի կասեմ նրան, որ խոստացել եմ քեզ հաղորդել։ Եվ այդ դեպքում հենց այսօր էլ կգամ ու կասեմ քեզ։ Միայն թե.. ինձ թվում է... Կատերինա Իվանովնայի մասին խոսք անգամ չի կարող լինել, մի ուրիշ բան կա այդ գաղտնիքի տակ։ Եվ դա հաստատ այդպես է։ Բոլորո-

վին չի երևում, որ Կատերինա Իվանովնայի հարց կա այստեղ, ինձ այդպես է թվում։ Դե առայժմ ցտեսություն։

Ալյոշան նրա ձեռքը սեղմեց։ Գրուշենկան դեռ լաց էր լինում։ Ալյոշան տեսավ, որ նա շատ էլ չհավատաց իր մխիթարական խոսքերին, բայց Գրուշենկայի համար գոնե լավը այն եղավ, որ սիրտը պարպեց, վիշտը դուրս թափեց։ Ալյոշան ցավում էր, որ նրան պետք է թողնի այդ վիճակում, բայց դե շտապում էր։ Դեռ շատ գործ ուներ անելու։

II

ՀԻՎԱՆԴ ՈՏՔԸ

Նախ և առաջ տիկին Խոխլակովայի տանը մի գործ ուներ, և շտապեց այնտեղ, որպեսզի շուտով վերջացնի և չուշանա Միտյայի մոտ գնալու։ Տիկին Խոխլակովան արդեն երեք շաբաթ է՝ մի թեթև հիվանդ էր. չգիտես ինչու, ոտքն էր ուռել, ու թեև նա չէր պառկել անկողնում, բայց ցերեկն այնուամենայնիվ ընկողմանում էր իր զարդասենյակի օթոցի վրա՝ տնային հրապուրիչ, բայց վայելուչ զգեստով։ Ալյոշան մի անգամ անմեղ քմծիծաղով նկատել էր իր մտքում, թե տիկին Խոխլակովան, չնայած իր հիվանդության, համարյա թե սկսել է պճնամոլություն անել. ինչ-որ գլխազարդեր են երևացել, ժապավեններ, բացվիզ զգեստներ, և Ալյոշան կռահում էր դրա պատճառը, թեև այդպիսի մտքերը վանում էր որպես ունայն բաներ։ Վերջին երկու ամսվա ընթացքում տիկին Խոխլակովայի մշտական հյուրերից մեկն էր դարձել երիտասարդ պաշտոնյա Պերխոտինը։

Ալյոշան արդեն չորս օր է չէր այցելել, և հիմա, մտնելով այդ տունը, ուզեց շտապել և ուղղակի գնալ Լիզայի մոտ, որովհետև նրա հետ էր գործը. Լիզան դեռ երեկ մի աղախին էր ուղարկել, հատկապես խնդրելով Ալյոշայից, որ նա անմիջապես իր մոտ գա «մի շատ կարևոր գործի համար», և դա, որոշ պատճառներով, հետաքրքրել էր Ալյոշային։ Աղախինը հիմա գնաց Լիզային զեկուցելու, բայց տիկին Խոխլակովան ինչ-որ մեկից իմացավ, որ Ալյոշան է եկել, և անմիջապես մարդ ուղարկեց՝ խնդրելով, որ նա իր մոտ գա «միայն մի րոպեով»։ Ալյոշան հարմար դատեց նախ տիկնոջ խնդրանքը կատարել, որովհետև այլապես, քանի ինքը Լիզայի մոտ լիներ, մայրիկն ամեն

բոպե աղախնին ուղարկելու էր աղջկա սենյակը։ Տիկին Խոխլակովան պառկել էր օթոցի վրա, մի տեսակ հատկապես տոնական հագնված և, ըստ երևույթին, արտակարգորեն շղագրգիռ վիճակում։ Հրճվանքի ճիչերով դիմավորեց նա Ալյոշային։

— Դարերո՜վ, դարերո՜վ, ուղղակի դարերո՜վ չեմ տեսել ձեզ։ Մի ամբողջ շաբաթ, երևակայեցե՛ք։ Բայց ախ, չէ՞, ընդամենը չորս օր առաջ այստեղ էիք, շորեքշաբթի օրը։ Lise-ին տեսնելու եք եկել, և վստահ եմ՝ ուզում էիք ուղղակի մոտը գնալ, ուզում էիք մատների վրա քայլել, որ ես չլսեմ։ Սիրելի՜, սիրելի՜ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, եթե իմանայիք, թե ինչպե՜ս է նա ինձ մտահոգում։ Բայց սրա մասին՝ հետո, թեև սա է ամենագլխավորը, բայց հետո։ Սիրելի Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես լրիվ վստահում եմ ձեզ իմ Լիզային։ Հայր Զոսիմայի մահից հետո—աստվա՜ծ հոգին լուսավորե (նա խաչակնքեց)—նրա մահից հետո ես ձեզ նայում եմ որպես կրոնավորի, թեև դուք շա՜տ շնորհալի եք այս նոր զգեստով։ Որտեղի՞ց այդպիսի դերձակ եք գտել այս քաղաքում։ Բայց չէ, չէ, դա չէ գլխավորը. դրա մասին՝ հետո։ Ներեցեք, որ ես ձեզ երբեմն Ալյոշա եմ ասում, պառավ կին եմ, ամեն ինչ թույլատրելի է ինձ,— ժպտաց նա կոտրատվելով,— բայց սրա՜ մասին էլ՝ հետո։ Գլխավո՜րը, գլխավո՜րը չմոռանամ։ Խնդրեմ, ինքներդ ինձ հիշեցրեք, հենց որ սկսեմ երկարբարակ խոսել, ասացեք. «Իսկ գլխավո՞րը»։ Ա՜խ, որտեղի՞ց իմանամ, թե ինչն է հիմա գլխավորը։ Այն օրից, որ Lise-ը ետ առավ իր խոստումը, ձեզ հետ ամուսնանալո՞ւ իր խոստումը, իր մանկական՝ խոստումը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, այն օրից անշուշտ հասկացաք, որ դա մի հիվանդ աղջնակի մանկական, թուլուն ցնորք էր, երկար ժամանակ իր բազկաթոռին գամված աղջնակի ցնորք. փա՜ռք աստծո, հիմա արդեն կարող է քայլել։ Այս նոր բժիշկը, որին Կատյան Մոսկվայից է հրավիրել ձեր այդ դժբախտ եղբոր համար, որ վաղը... է՞հ, ինչ ասեմ վաղվա մասին։ Վաղվա մասին մտածելն անգամ մեռցնում է ինձ։ Եվ մանավանդ հետաքրքրությունի՞ց եմ մեռնում... Մի խոսքով, այդ բժիշկը երեկ այստեղ էր և տեսավ Lise-ին... Հիսուն ռուբլի վճարեցի նրան այցի համար։ Բայց դա էլ չէ խնդիրը, նորից դա չէ խնդիրը... Տեսնու՞մ եք, արդեն բոլորովին թելը կորցրի հիմա։ Շտապում եմ։ Ինչո՞ւ եմ շտապում։ Չգիտեմ։ Սոսկալի՞ է, այլևս ոչինչ չեմ կարողանում հասկանալ։ Ամեն ինչ խառնվել է ինձ համար, մի տեսակ կծիկ է դարձել։ Վախենում

եմ՝ հիմա ձանձրույթից վեր թռնեք ու փախչեք ինձնից, ու ձեզ տեսնելս ու չտեսնելս մեկ լինի։ Ա՜խ աստված իմ։ Ի՞նչ ենք նստել, նախ և առաջ՝ սո՛ւրճ։ Ցո՛ւպիա, Գլաֆի՛րա, սո՛ւրճ։

Ալյոշան շտապեց շնորհակալություն հայտնել և ասաց, որ հենց նոր է սուրճ խմել։

— Որտե՞ղ։

— Ագրաֆենա Ալեքսանդրովնայի մոտ։

— Այդ... այդ կնո՞ջ։ Ա՜խ, նա էր, որ կործանեց բոլորին, թեև հիմա, չգիտեմ, ասում են՝ սուրբ է դարձել, չնայած ուշ է արդեն։ Առա՛ջ թող այդպես լիներ, երբ պետք էր դա, իսկ հիմա ի՞նչ օգուտ։ Լռեցեք, լռեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, որովհետև այնքա՜ն բան ունեմ ասելու, որ վախենում եմ՝ ոչինչ չկարողանամ ասել։ Այդ սոսկալի դա՜տը... անպայման կգամ, պատրաստվում եմ, ինձ բազկաթոռի մեջ կտանեն, մանավանդ որ կարող եմ նստել, և ինձ հետ մարդիկ են լինելու և հետո գիտե՞ք, չէ՞, վկա են արձանագրել ինձ։ Ինչպե՞ս եմ խոսելու, ինչպե՞ս եմ խոսելու։ Չգիտեմ, ինչ եմ ասելու։ Պետք է երդում տալ, չէ՞, այնպես է, չէ՞։

— Այնպես է, բայց չեմ կարծում, որ դուք ի վիճակի լինեք ներկայանալու։

— Կարող եմ նստել այնտեղ։ ա՜խ, դուք ինձ շեղում եք։ Այս դա՜տը, այս վայրենի արա՜բքը, հետո էլ բոլորը Սիբիր են գնում, ոմանք ամուսնանում են, և այս բոլորը՝ արագ-արագ, և ամե՜ն ինչ փոփոխվում է, հետո վերջապես ոչինչ չի մնում, բոլորը ծերանում են, ալքերը դարձնում են դեպի գերեզման։ Է՜հ, ինչ ուզում է լինի, ես հոգնել եմ։ Այս Կատյան, cette charmante personne[1], բոլո՜ր իմ հույսերը խորտակեց. հիմա նա ձեր մի եղբոր ետևից Սիբիր կգնա, ձեր մյուս եղբայրն էլ նրա՛ ետևից կգնա ու կապրի հարևան քաղաքում, և բոլորն էլ իրար կտանջեն։ Դա ինձ խենթացնում է, և մանավանդ այս լայն արձագա՜նքը։ Պետերբուրգի և Մոսկվայի բոլոր թերթերում միլիոն անգամ գրեցին։ Ախ հա՜, երևակայեցեք, իմ մասին էլ են գրել, թե ես ձեր եղբոր «սիրելի բարեկա՜մն» էի... չեմ ուզում կրկնել նողկալի բառը, երևակայեցե՜ք, դե երևակայեցե՜ք։

— Չի կարող պատահել։ Բայց որտե՞ղ են գրել, ինչպե՞ս են գրել։

[1] Այս հմայիչ անձնավորությունը (ֆրանս.)։

— Հիմա ցույց կտամ։ Երեկ ստացա, երեկ էլ կարդացի։ Ահա այստեղ է, «Ասուլիս» թերթում։ Այս թերթն այս տարի են սկսել հրատարակել Պետերբուրգում, ես էլ սոսկալի սիրում եմ ասելն ու լսելը և բաժանորդագրվեցի։ Եվ ահա՜ գլխիս եկածը, ահա՜ թե ինչ ասուլիս է։ Ահա այստեղ, ահա այս պարբերությունը, կարդացե՛ք։

Եվ նա Ալյոշային երկարեց թերթը, որ իր բարձի տակ էր մինչ այդ։

Տիկին Խոխլակովան ոչ թե վրդովվել էր պարզապես, այլ մի տեսակ շփոթվել էր, և գուցե իրոք նրա գլխում ամեն ինչ խառնվել ու կծիկ էր դարձել։ Թերթում տպագրվածը շատ հատկանշական մի բան էր և, անշուշտ, պետք է նրա վրա ցնցող տպավորություն գործեր, բայց տիկինը, գուցե բարեբախտաբար, այս պահին ի վիճակի չէր կենտրոնանալու մի հարցի վրա, դրա համար էլ կարող էր մի բոպեից մյուսը մոռանալ նույնիսկ թերթը և թռնել բոլորովին ուրիշ նյութի։ Իսկ Ալյոշան վաղուց գիտեր, որ այս սոսկալի դատավարությունը արդեն հռչակվել էր ամբողջ Ռուսաստանում, և աստվա՜ծ իմ, այս երկու ամսվա մեջ, ճիշտ լուրերի հետ, ինչպիսի՜ արտառոց լուրեր ու թղթակցություններ էր կարդացել իր եղբոր մասին, Կարամազովների մասին ընդհանրապես, և նույնիսկ ի՞նչ մասին։ Մի թերթում նույնիսկ ասված էր, թե ինքը՝ Ալյոշան, եղբոր կատարած ոճրից վախեցած, սքեմ է ընդունել ու փակվել վանքում. մի ուրիշ թերթում հերքել էին այդ լուրը և գրել էին, ընդհակառակը, թե նա իր սրբահայր Զոսիմայի հետ ջարդել է վանքի դանձարկղը և միասին «ծլկել են վանքից»։ Իսկ «Ասուլիս» թերթի այս թղթակցությունը վերնագրված էր՝ «Կարամազովների դատավարությունը Սկոտոպրիգոնևսկում» (ավա՜ղ, այսպես է կոչվում մեր փոքրիկ քաղաքը. այսքան երկար ժամանակ թաքցրել էի այս անունը)։ Հոդվածը կարճ էր, տիկին Խոխլակովայի մասին բացահայտորեն ոչինչ չէր ասված, և առհասարակ ոչ մի անուն չէր հիշատակվում։ Պարզապես տեղեկություն էր տրվում, որ ոճրագործը, բանակային պաշտոնաթող մի կապիտան, անամոթ ու ծույլ մի տիպ, ճորտատիրության ներկայացուցիչ, որին այժմ դատելու են այնպիսի՜ շռնդյունով, անընդհատ սիրային արկածներով էր զբաղվել և հատկապես հմայել էր որոշ տիկինների, «որոնք ձանձրանում են մենակությունից»։

Եվ իբր թե այդպիսի մի տիկին, «ձանձրացող մի այրի», որ երիտասարդ կնոջ հովեր է առնում, թեև արդեն հասուն աղջիկ ունի, այնքան էր հրապուրվել այդ կապիտանով, որ ոճրագործությունից ընդամենը երկու ժամ առաջ երեք հազար ռուբլի է առաջարկել նրան, որպեսզի անմիջապես Սիբիր փախչեն միասին, գնան ոսկու հանքերը։ Բայց իբր թե շարագործը, հույս ունենալով, որ անպատիժ կմնա, նախընտրել է սպանել հորը և հենց երեք հազար ռուբլի գողանալ նրանից, քան թե քարշ գալ Սիբիր՝ ձանձրացող այրու քառասնամյա հմայքները տանելով իր հետ։ Այս թեթևսոլիկ թղթակցությունն ավարտվում էր, իհարկե, ազնիվ վրդովմունքով, որով նշավակվում էր հայրասպանության ու նախկին ճորտատիրական իրավունքի անբարոյականությունը։ Հետաքրքրությամբ կարդալուց հետո Ալյոշան թերթը ծալեց ու ետ տվեց տիկին Խոխլակովային։

— Դե ասացեք, իմ մասին չէ՞,— սկսեց բլբլացնել տիկինը նորից։— Ես էի, ես էի, որ դրանից գրեթե մի ժամ առաջ ոսկու հանքեր առաջարկեցի նրան, և ահա հանկարծ՝ «քառասնամյա հմայքներ»։ Բայց մի՞թե այդ էր իմ նպատակը։ Դիտմա՞մբ է գրել։ Այդ քառասնամյա հմայքների համար թող նրի՞ նրան հավիտենական դատավորը, ինչպես ես եմ նրում, բայց գիտե՞ք... գիտե՞ք ով է գրողը։ Ձեր բարեկամ Ռակիտինը։

— Կարող է պատահել,— ասաց Ալյոշան,— թեև ես ոչինչ չեմ լսել դրա մասին։

— Նա է, նա՛, և ոչ թե «կարող է պատահել»։ Չէ՞ որ ես վռնդել եմ նրան... Գիտեք այդ ամբողջ պատմությունը, չէ՞։

— Գիտեմ, դուք նրան առաջարկել եք, որ այլևս չայցելի ձեզ, բայց թե ի՞նչ պատճառով՝ այդ բանը ես... գոնե ձեզնից չեմ լսել։

— Ուրեմն նրանի՞ց եք լսել։ Ինչ է, նախատո՞ւմ է ինձ, շա՞տ է նախատում։

— Այո, նախատում է, բայց դե նա բոլորին է նախատում։ Իսկ թե ինչո՞ւ եք ձեր դուռը փակել նրա առաջ, այդ բանը նրանից էլ չեմ լսել։ Եվ առհասարակ ես շատ հազվադեպ եմ հանդիպում նրան։ Բարեկամներ չենք։

— Դե լավ ուրեմն, ասեմ ձեզ հիմա այդ ամբողջը. և ճար չկա, պետք է խոստովանեմ մեղքս, որովհետև այստեղ մի կետ կա, որի մեջ գուցե ինքս մեղավոր եմ։ Միայն թե փոքրիկ, փոքրի՛կ մի կետ է, շատ փոքրիկ, այնպես որ գուցե բոլորովին էլ

չկա այդ կետը։ Հասկանո՞ւմ եք, սիրելիս,— տիկին Խոխլակովան հանկարծ մի տեսակ ծեքծեքուն արտահայտություն ստացավ, և նրա շրթներին մի սիրունիկ, թեև առեղծվածային ժպիտ խաղաց,— հասկանո՞ւմ եք, ես կասկածում եմ, որ... Ներեցեք ինձ, Ալյոշա, ես մոր նման եմ ձեզ համար... օ ո՞չ, ո՞չ, ընդհակառակը, ես հիմա ձեզ հետ խոսում եմ ինչպես իմ հոր հետ... որովհետև այստեղ մայրը բոլորովին հարմար չէ... է՛հ, միևնույնն է թե խոստովանում եմ սրբահայր Զոսիմային, հենց դա է ամենաճիշտը, շատ հարմար է այդպես. չէ՞ որ քիչ առաջ ձեզ վանական կոչեցի... Եվ ահա ուրեմն այդ խեղճ երիտասարդը, ձեր բարեկամ Ռակիտինը (օ՜ ասուված իմ, պարզապես չեմ կարողանում բարկանալ նրա վրա։ Բարկանում եմ ու զայրանում, բայց ոչ շատ), մի խոսքով, այդ թեթևամիտ երիտասարդը հանկարծ, պատկերացրեք... կարծեմ խելքին փչել էր սիրահարվել ինձ։ Ես դա հետո, հետո՛ միայն նկատեցի հանկարծ, իսկ սկզբում, այսինքն մի ամիս առաջ, նա սկսեց ավելի հաճախ այցելել ինձ, գրեթե ամեն օր, թեև առաջ էլ մենք ծանոթ էինք։ Ոչինչ չգիտեի... բայց ահա հանկարծ մի լույս ծագեց մտքիս մեջ և սկսեցի նկատել, զարմանքո՛վ։ Գիտե՞ք, արդեն երկու ամիս է՝ իմ մշտական հյուրն է դարձել այն համեստ, համակրելի և արժանավոր երիտասարդը՝ Պյոտր Իլյիչ Պերխոտինը, որ պաշտոնավարում է այստեղ։ Դուք ինքներդ քանի-քանի անգամ հանդիպել եք նրան իմ տանը։ Եվ ճիշտ է, չէ՞, արժանավոր մարդ է նա, լուրջ մարդ։ Գալիս է երեք օրը մեկ, և ոչ թե ամեն օր (թեկուզ ամեն օր էլ գար՝ ուրախ կլիներ), և միշտ այնքա՞ն լավ է հագնվում. ես առհասարակ սիրում եմ երիտասարդներին, Ալյոշա, տաղանդավոր, համեստ երիտասարդներին, ա՜յ ինչպես դուք եք, իսկ նա համարյա պետական մարդու միտք ունի, այնպե՞ս շնորհալի է խոսում, և ես անպայման, անպայման պիտի բարեխոսեմ նրա համար։ Ապադա դիվանագետ է նա։ Այդ սարսափելի օրը համարյա մահից փրկեց ինձ, երբ գիշերը ինձ մոտ եկավ։ է՛հ, իսկ ձեր բարեկամ Ռակիտինը միշտ էլ այնպիսի՜ կոշիկներով է գալիս և ոտքերը փռում գորգի վրա... մի խոսքով, նա սկսեց նույնիսկ ինչ-որ ակնարկություններ անել ինձ, և մի անգամ էլ հանկարծ, երբ գնում էր, սոսկալի սեղմեց ձեռքս։ Հենց նա ձեռքս սեղմել էր, հանկարծ ոտքիս հիվանդություն սկսվեց։ Առաջ էլ նա ինձ մոտ հանդիպում էր Պյոտր Իլյիչին և, կհավատա՞ք, անընդհատ

խայթում էր նրան, խայթում, հենց ուղղակի մոլտում էր նրա վրա, չգիտես ինչու։ Ես պարզապես նայում էի երկուսին էլ, երբ իրար հետ էին լինում, և ներքուստ ծիծաղում էի։ Եվ ահա մի անգամ էլ նստել էի մենակ, այսինքն՝ ոչ, այն ժամանակ արդեն պառկում էի, մի անգամ ուրեմն պառկել էի մենակ, հանկարծ Ռակիտինը եկավ և, պատկերացրեք, իր գրած ոտանավորը բերեց, շատ կարճ մի ոտանավոր՝ իմ հիվանդ ոտքի մասին, այսինքն իմ հիվանդ ոտքն էր նկարագրել ոտանավորի ձևով։ Սպասեք, ինչպե՞ս էր.

Ա՜խ, այս ոտքը, ա՜խ, այս ոտքը
Հիվանդացել է մի քիչ...

Այսպիսի մի բան էր. այ երբե՞ք չեմ կարողանում ոտանավոր հիշել։ Մոտս է հիմա, այստեղ է, դե հետո ցույց կտամ ձեզ, բայց սքանչելի բան է, սքանչելի՜, և գիտե՞ք, միայն ոտքի մասին չէ, այլ նաև բարոյախոսություն կա մեջը, սքանչելի մի գաղափար, միայն թե մոռացել եմ. մի խոսքով, ուղղակի ալբոմի մեջ գրելու բան է։ Դե պարզ է, շնորհակալություն հայտնեցի, և նա ակներևորեն շոյված զգաց։ Հազիվ էի շնորհակալություն հայտնել, մեկ էլ Պյոտր Իլյիչը ներս մտավ, և Միխայիլ Իվանովիչը հանկարծ հոնքերը կիտեց սև ամպի պես։ Տեսնում էի, որ Պյոտր Իլյիչը խանգարեց նրան, որովհետև Միխայիլ Իվանովիչը անպայման ուզում էր մի բան ասել ոտանավորից հետո, ես նախազգում էի արդեն, և ահա մեկեն Պյոտր Իլյիչը ներս մտավ։ Ուղղակի ցույց տվեցի ոտանավորը Պյոտր Իլյիչին, բայց չասացի, թե ով է գրել։ Բայց վստահ եմ, վստահ եմ, որ նա իսկույն կռահեց, թեև մինչև հիմա էլ չի ընդունում, ասում է, որ չի կռահել. դիտմամբ է ասում։ Պյոտր Իլյիչն անմիջապես ծիծաղեց ու սկսեց քննադատել. անպետք ոտանավոր է, ասաց, երևի ճեմարանականի մեկն է գրել, և գիտե՞ք, այնպիսի՜ եռանդով, այնպիսի՜ եռանդով էր ասում։ Եվ մեկ էլ ձեր բարեկամը, փոխանակ ծիծաղելու, հանկարծ բոլորովին կատաղեց... Աստվա՜ծ իմ, մտածեցի, սրանք կկռվեն հիմա։ «Ես եմ գրել,— ասաց։— Կատակի համար եմ գրել, որովհետև սոսրություն եմ համարում ոտանավոր գրելը... Միայն թե իմ ոտանավորը լավ է։ Ձեր Պուշկինին հուշարձան են ուզում կանգնեցնել, որովհետև կանացի ոտքե՞րն է երգել, իսկ իմ ոտանավորի մեջ գաղափարական ուղղություն կա, իսկ դուք ինքներդ,

անձամբ, ճորտատիրության պաշտպան եք,— ասաց։— Դուք ո՞չ մի մարդասիրություն չունեք, ո՞չ մի ժամանակակից, լուսավորյալ զգացում չունեք, առաջադիմության նշույլն անգամ չկա ձեր մեջ, դուք մի շոր պաշտոնյա եք,— ասաց,— և դուք կաշո՞ռք եք վերցնում»։ Ո՜հ, ես էլ արդեն սկսեցի ճչալ ու աղաչել նրանց։ Իսկ Պյոտր Իլյիչը, գիտեք, բնավ էլ երկչոտ մարդ չէ նա, և հանկարծ ազնվագույն կեցվածքն ընդունեց. հեգնորեն նայեց նրան, լսեց ու ներողություն խնդրեց. «Ես չգիտեի,— ասաց։— Եթե իմանայի, այդպես չէի ասի, կգովեի... Բանաստեղծները,— ասաց,— այնքա՜ն դյուրագրգիռ են բոլորն էլ...»։ Մի խոսքով, ազնվագո՜ւյն կեցվածքի տակ, այսպիսի հեգնակա՜ն խոսքեր։ Ինքը հետո բացատրեց ինձ, որ այդ ամբողջը հեգնանք էր, իսկ ես կարծում էի, որ լուրջ է ասում։ Միայն թե պառկել էի այնպես, ա՜յ ինչպես հիմա ձեր առաջ եմ պառկել, և մտածում էի՝ արդյոք ազնի՞վ բան կլինի, եթե հանկարծ Միխայիլ Իվանովիչին դուրս անեմ, որովհետև իմ տանը անվայել կերպով գոռում է իմ հյուրի վրա։ Եվ ահա ուրեմն, կհավատա՞ք, պառկել եմ, աչքերս փակել ու մտածում եմ՝ ազնի՞վ բան կլինի արդյոք, թե ոչ, և չեմ կարողանում որոշել, տանջվում եմ, տանջվում եմ, սիրտս է բաբախում, գոռա՞մ, թե չգոռամ։ Մի ձայն ասում է՝ գոռա՛, մի ուրիշ ձայն ասում է՝ չէ, մի՛ գոռա։ Հենց որ այդ երկրորդ ձայնը խոսեց իմ մեջ, հանկարծ գոռացի և իսկույն նվաղեցի։ Դե, պարզ է, իրար անցան։ Ես հանկարծ վեր կացա և ասացի Միխայիլ Իվանովիչին. «Դառն է ասելը ինձ համար, բայց այլևս չեմ ցանկանում ձեզ տեսնել իմ տանը»։ Եվ այդպես էլ վռնդեցի։ Ա՜խ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Ինքս էլ գիտեմ, որ շատ վատ արեցի. ամբողջ սուտ էր իմ ասածը, բոլորովին էլ չէի բարկացել նրա վրա, բայց հանկարծ, մանավանդ հանկարծ ինձ թվաց, թե այնպիսի՜ լավ մի տեսարան կլինի դա... Բայց համենայն դեպս, կհավատա՞ք, բնական էր այդ տեսարանը, որովհետև ես լաց եղա նույնիսկ, հետո մի քանի օր շարունակ արցունք էի թափում, և մի օր էլ հանկարծ ճաշից հետո ամեն ինչ մոռացա։ Դե ահա արդեն երկու շաբաթ է՝ նա չի գալիս, և ես մտածում էի՝ չլինի՞ թե բոլորովին չի գալու այլևս։ Դեռ երեկ էի այդպես մտածում, և հանկարծ երեկոյան այս «Ասուլիս»-ը եկավ։ Կարդացի և բերանս բաց մնաց. ո՞վ է գրել, դե նա՛ է գրել անշուշտ. այն օրը տուն է գնացել, նստել ու գրել է տեղն ու տեղը, ուղարկել է, տպել են։ Չէ՞ որ դա եր-

կու շաբաթ առաջ էր։ Բայց սոսկալի շատախոսում եմ, հա՞, Ալյոշա, և բոլորովին չեմ ասում այն, ինչ պետք է ասեմ։ Ա՜խ, լեզուս ինքնիրե՞ն է խոսում։

— Այսօր ինձ սոսկալի անհրաժեշտ է, որ ժամանակին հասնեմ եղբորս մոտ,— կմկմաց Ալյոշան։

— Անշուշտ, անշո՞ւշտ։ Ամե՞ն ինչ ահա հիշեցրիք ինձ։ Լսեցեք, ի՞նչ բան է աֆեկտը։

— Ի՞նչ աֆեկտ,— զարմացավ Ալյոշան։

— Դատական աֆեկտը։ Այնպիսի աֆեկտ, որի համար ամեն ինչ ներում են։ Ինչ էլ արած լինեք, անմիջապես կներեն ձեզ։

— Բայց ի՞նչ եք ուզում ասել։

— Ահա թե ինչ. այդ Կատյան... Ա՜խ, ինչ անուշի՜կ, ի՜նչ անուշիկ աղջիկ է նա, միայն թե ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ում է սիրահարված։ Քիչ առաջ նստել էր այստեղ, և ես ոչինչ չկարողացա քաշել նրա բերանից։ Մանավանդ որ ինքը հիմա այնպիսի՜ մակերեսային բաներից է սկսում խոսել ինձ հետ, կարճ ասած՝ անընդհատ իմ առողջությունն է հարցնում, ուրիշ ոչինչ, և նույնիսկ այնպիսի՜ մի շեշտով է խոսում որ... է՜հ, ես էլ իմ մտքում ասացի՝ դե լավ, թո՛ղ այդպես լինի, արյուն ձեր՝ գլուխ ձեր... Ախ հա՜, այդ աֆեկտն էի ասում. ուրեմն այդ բժիշկն է եկել։ Գիտե՞ք, որ բժիշկ է եկել։ Դե անշո՞ւշտ գիտեք, այն բժիշկը, որ խելագարներին է հայտնաբերում, հենց դուք եք հրավիրել, այսինքն ոչ թե դուք, այլ Կատյան։ Ամե՞ն ինչ Կատյան։ Հասկանո՞ւմ եք ուրեմն. հանգիստ նստել է մարդը, բոլորովին էլ խելագար չէ, բայց հանկարծ աֆեկտ է ունենում։ Խելքը գլխին է և գիտե, թե ինչ է անում, բայց աֆեկտի մեջ է։ Ահա ուրեմն Դմիտրի Ֆյոդորովիչն էլ աֆեկտի մեջ է եղել։ Հենց որ այս նոր դատարանները բացեցին, խոկուլնեթ իմացան, որ աֆեկտ ասած բանը կա։ Դա նոր դատարանների բերած բարիքն է։ Այդ բժիշկը եկավ այստեղ և ինձ հարցուփորձ արեց այն երեկոյի մասին, դե այն ոսկու հանքերի մասին, այսինքն թե ի՞նչ վիճակում էր նա այն ժամանակ։ Իհա՞րկե աֆեկտի վիճակում. հենց եկավ թե չէ, սկսեց գոռալ՝ փո՞ղ-փո՞ղ, երեք հազա՞ր, տվեք երեք հազար ռուբլի, հետո էլ գնաց ու հանկարծ սպանեց։ Չեմ ուզում սպանել, ասում էր, չեմ ուզում սպանել, և հանկարծ սպանեց։ Այ հենց դրա համար էլ կներեն, որ չէր ուզում, բայց սպանեց։

— Բայց նա չի՞ սպանել,— մի քիչ խստորեն ընդհատեց Ալյոշան։ Ավելի ու ավելի անհանգստանում և անհամբեր էր դառնում նա։

— Գիտեմ, այդ ծերունի Գրիգորին է սպանել...

— Ինչպե՞ս թե Գրիգորին,— գոռաց Ալյոշան։

— Այո, այո, Գրիգորին։ Դմիտրի Ֆյոդորովիչը երբ հարվածել է նրան, նա էլ պառկել է գետնին, հետո վեր է կացել, տեսել է՝ դուռը բաց է, գնացել ու սպանել է Ֆյոդոր Պավլովիչին։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ։

— Աֆեկտ է ստացել։ Դմիտրի Ֆյոդորովիչը երբ հարվածել է գլխին, նա էլ ուշքի գալով աֆեկտ է ստացել, գնացել ու սպանել է։ Իսկ եթե ինքը ասում է, որ չի սպանել, գուցե պարզապես չի հիշում։ Միայն թե գիտե՞ք ինչ. ավելի լավ է, շատ ավելի լավ, եթե Դմիտրի Ֆյոդորովիչն է սպանել։ Եվ այդպես էլ եղե՞լ է. թեև ասում են, որ Գրիգորին է, բայց Դմիտրի Ֆյոդորովիչն է անկասկած, և դա շատ լավ է, շա՞տ ավելի լավ։ Ա՜խ, ավելի լավ է ոչ թե այն պատճառով, որ որդին հորն է սպանել, ես չեմ գովում այդ բանը. ընդհակառակը, զավակները պետք է հարգեն ծնողներին։ Բայց համենայն դեպս ավելի լավ է, եթե նա է արել, որովհետև այդ դեպքում կարիք էլ չուներ ողբալու, քանի որ առանց գիտակցելու է սպանել նա, կամ ավելի լավ է ասել՝ գիտակցել է, բայց չի իմացել, թե ինչ է անում։ Չէ՜, թող ներեն նրան. դա այնքա՞ն մարդասիրական կլինի, և հետո՝ թող մարդիկ տեսնեն, թե ինչպիսի՜ բարիք են նոր դատարանները։ Իսկ ես չգիտե՞ի, որ այդպես է, այնինչ ասում են՝ վաղուց է այդ բանը, և երբ երեկ իմացա, այնպե՞ս զարմացրեց ինձ, որ անմիջապես ուզեցի ձեզ կանչել։ Եվ հետո, եթե ներեն նրան, դատարանից ուղղակի բերում եք ինձ մոտ ճաշի, իսկ ես կհրավիրեմ մեր ծանոթներին և կխմենք նոր դատարանների կենացը։ Չեմ կարծում, որ նա վտանգավոր լինի, և բացի այդ՝ շատ-շատ հյուրեր կկանչեմ, այնպես որ միշտ էլ կարելի է նրան դուրս հանել, եթե որևէ բան անի։ Եվ հետո նա կարող է մի որևէ այլ քաղաքում հաշտարար դատավոր լինել կամ այդպիսի մի բան, որովհետև ամենից լավ դատում են այն մարդիկ, որ իրենք են դժբախտություն կրել։ Եվ մանավանդ, ո՞վ հիմա աֆեկտի մեջ չէ, դուք, ես, բոլորս աֆեկտի մեջ ենք, և որքա՞ն շատ են օրինակները. նստել է մարդը, ռոմանս է եր-

գում, հանկարծ մի որևէ բան դուր չի գալիս նրան, վերցնում է ատրճանակը և սպանում առաջին պատահած մարդուն, հետո էլ ամեն ինչ ներում են նրան։ Վերջերս կարդացի այս բանը, և բոլոր բժիշկներն էլ հաստատում են։ Բժիշկները հաստատում են հիմա, ամեն ինչ հաստատում են։ Խնդրե՜մ, իմ Lise-ը աֆեկտի մեջ է. դեռ երեկ լաց էի լինում նրա պատճառով, նախորդ օրն էլ լաց եմ եղել, բայց այսօր հանկարծ հասկացա, որ նա պարզապես աֆեկտից է ինձ լացացնում։ Օ՜հ, Lise-ն այնպե՜ս վշտացնում է ինձ։ Կարծում եմ, որ նա կատարելապես խելագարվել է։ Ինչո՞ւ է կանչել ձեզ։ Նա՞ է ձեզ կանչել, թե դուք ինքներդ եք եկել նրա մոտ։

— Այո, նա է կանչել, և հենց հիմա գնում եմ նրա մոտ,— վճռականորեն վեր կացավ Ալյոշան։

— Ա՜խ, սիրելի, սիրելի՜ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ահա գուցե ա՛յս է ամենագլխավորը,— գոչեց տիկին Խոխլակովան, հանկարծ սկսելով լաց լինել։— Տեսնում է աստված, ես իմ Lise-ին անկեղծորեն վստահում եմ ձեզ, և հոգ չէ, որ նա իր մորից գաղտնի է ձեզ կանչել։ Բայց Իվան Ֆյոդորովիչին, ձեր եղբորը, ներեցեք ինձ, չեմ կարող այդպես հեշտորեն վստահել իմ աղջիկը, թեև շարունակում եմ խիստ ասպետական մի երիտասարդ համարել նրան։ Բայց պատկերացրեք, մեկ էլ նա հանկարծ եկել է Lise-ի մոտ, իսկ ես ոչինչ չգիտեի այդ մասին։

— Ինչպե՞ս։ Ի՞նչ, ե՞րբ,— սոսկալի զարմացավ Ալյոշան։ Նա չէր նստում այլևս ու կանգնած էր լսում։

— Պատմեմ ձեզ. գուցե հենց դրա համար ձեզ կանչեցի, որովհետև չգիտեմ էլ, թե ինչու կանչեցի։ Այսպես ուրեմն, Իվան Ֆյոդորովիչը Մոսկվայից վերադառնալուց հետո ընդամենը երկու անգամ եղավ այստեղ, առաջին անգամը այցելության եկավ որպես ծանոթ, իսկ երկրորդ անգամը, դեռ վերջերս էր, Կատյան նստել էր ինձ մոտ, և նա եկավ, լսելով, որ Կատյան ինձ մոտ է։ Պարզ է, ես չէի էլ կարող պահանջել, որ նա հաճախակի այցելի ինձ, որովհետև գիտեմ, թե առանց այն էլ որքան հոգսեր ունի հիմա, vous comprenez, cette afaire et la mort terrible de votre papa[1], բայց հանկարծ իմացա, որ նա նորից է եկել, բայց ոչ թե ինձ մոտ, այլ Lise-ի, մի վեց օր առաջ է

[1] Հասկանո՞ւմ եք, այս գործը և ձեր հայրիկի սոսկալի մահը (ֆրանս.)։

եղել այդ բանը. եկել է, նստել է հինգ րոպե ու գնացել։ Իսկ ես երեք օր հետո իմացա Գլաֆիրայից, այնպես որ դա ինձ ֆրապե[1] արեց հանկարծ։ Անմիջապես կանչեցի Lise-ին, ծիծաղում է օրիորդս. «Մտածել էր, որ դուք քնած եք,— ասում է,— և ինձ մոտ եկավ, որ ձեր առողջությունը հարցնի»։ Իհարկե, հենց այդպես էլ եղել է։ Բայց Lise-ը, Lise-ը, օ՜ աստված իմ, ինչպե՜ս է նա ինձ վշտացնում։ Երևակայեցեք, հանկարծ մի գիշեր, լորս օր առաջ էր, այն օրը, երբ դուք վերջին անգամ այստեղ էիք, հանկարծ ձեր գնալուց հետո նոպա ունեցավ գիշերը, գոռում էր, ճչում, հիստերիկա։ Ե՞ս ինչու հիստերիկա չեմ ունենում երբեք։ Հետո հաջորդ օրն էլ նոպան բռնեց, հետո մյուս օրը նորից, և երեկ նորից, և ահա այդ աֆեկտը երեկ։ Հանկարծ սկսեց գոռալ. «Ատում եմ Իվան Ֆյոդորովիչին, պահանջում եմ, որ էլ չընդունեք նրան, չթողնեք, որ նա մեր տունը մտնի»։ Ես քարացա մնացի այդպիսի անակնկալից, և առարկեցի նրան՝ ի՞նչ ասելով չընդունեմ այդպիսի արժանավոր երիտասարդին, այն էլ այդպիսի՜ գիտելիքներ ունեցող երիտասարդին, և այնքան էլ դժբա՜խտ, որովհետև այս բոլոր պատմությունները դժբախտություն են համենայն դեպս, չէ՞, ոչ թե բարեբախտություն, ճիշտ չե՞մ ասում։ Նա հանկարծ քահ-քահ ծիծաղեց իմ խոսքերի վրա, և այնքա՜ն վիրավորական ձևով, գիտե՞ք, է՜հ, բայց ուրախ էի. մտածեցի, որ զվարճացրի նրան և նոպաները կանցնեն հիմա, մանավանդ որ ինքս էլ ուզում էի մերժել իմ հյուրընկալությունը Իվան Ֆյոդորովիչին և բացատրություն պահանջել նրանից, թե ինչո՞ւ առանց իմ համաձայնության այդպիսի տարօրինակ այցելություններ է անում։ Բայց հանկարծ այս առավոտ Լիզան զարթնում է և բարկանում Ցուլիայի վրա, և պատկերացրե՞ք, ապտակ է զարկում երեսին։ Սակայն դա monstrueux[2] բան է, ես «դուք»-ով եմ խոսում իմ աղախինների հետ։ Եվ հանկարծ մի ժամ հետո Ցուլիայի ոտքերն է գրկում ու համբուրում։ Իսկ ինձ լուր ուղարկեց, որ բոլորովին չի գալու մոտս և էլ երբեք չի ուզում ինձ տեսնել, բայց երբ ինքս քարշ եկա նրա մոտ՝ վազեց ինձ համբուրելու, լաց եղավ և այդպես համբուրելով էլ դուրս արեց ինձ, ոչ մի բառ չասաց, այնպես որ ոչինչ էլ չկարողացա իմանալ։ Հիմա ձեզ վրա եմ գնում իմ

[1] Ֆրանսերեն frapper բառից՝ զարնել, շշմեցնել։
[2] Հրեշավոր (ֆրանս.)։

բոլոր հույսերը, սիրելի Ալեքսեյ Ֆյոդորովիչ, և անշուշտ, իմ ամբողջ կյանքը, իմ ամբողջ ճակատագիրը ձեր ձեռքումն է հիմա։ Պարզապես խնդրում եմ՝ գնացեք Lise-ի մոտ, ամեն ինչ իմացեք նրանից, ինչպես որ դո՛ւք միայն կարող եք անել, և եկեք պատմեցեք ինձ, ի՞նձ՝ մորը, որովհետև, հասկանո՞ւմ եք, կմեռնե՛մ, պարզապես կմեռնեմ, եթե շարունակվի այս ամբողջը, կամ էլ կփախչեմ տնից։ Չեմ կարող այլևս։ Ես համբերություն ունեմ, բայց կարող եմ կորցնել համբերությունս, և այդ դեպքում... այդ դեպքում սարսափելի բաներ կլինեն։ Ա՜խ, աստված իմ, ահա Պյոտր Իլյի՛չը վերջապես,— գոչեց տիկին Խոխլակովան և հանկարծ փայլեց ուրախությունից, տեսնելով Պյոտր Իլյիչ Պերխոտինին, որ ներս էր մտնում։— Ուշացաք, ուշացա՛ք։ Դե լավ, նստեք, խոսեցեք, վճռեցեք մեր բախտը, ի՞նչ է ասում այդ դատապաշտպանը։ Բայց ո՞ւր եք գնում, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

— Lise-ի մոտ։

— Ա՜խ, այո։ Ուրեմն չե՞ք մոռանա, չե՞ք մոռանա այն, ինչ խնդրեցի։ Կյանքի հարց է, կյանքի՛ հարց, ճակատագի՛ր։

— Իհարկե չեմ մոռանա, եթե միայն հնարավոր լինի... բայց ես այնպե՞ս ուշացա,— մրթմրթաց Ալյոշան, շտապելով փախուստ տալ։

— Չէ, անպայման, անպայման եկեք, և ոչ թե «եթե հնարավոր լինի», այլապես կմեռնե՛մ,— գոռաց նրա ետևից տիկին Խոխլակովան, բայց Ալյոշան արդեն դուրս էր եկել սենյակից։

III

ՓՈՔՐԻԿ ԴԵՎԸ

Մտնելով Լիզայի սենյակը, Ալյոշան նրան ընկողմանած գտավ իր այն նախկին բազկաթոռի մեջ, որով ման էին ածում աղջկան, երբ դեռ չէր կարողանում քայլել։ Լիզան տեղից չշարժվեց դիմավորելու համար, բայց նրա սուր, սևեռուն հայացքը ուղղակի բևեռվեց Ալյոշայի երեսին։ Մի քիչ տենդոտ էր այդ հայացքը, իսկ դեմքը գունատ էր, դեղնած։ Ալյոշան զարմացավ տեսնելով, թե ինչպես է նա փոխվել երեք օրվա մեջ, նույնիսկ նիհարել։ Լիզան ձեռքը չմեկնեց նրան։ Ալյոշան ինքը հպավ աղջկա բարակ, երկար մատներին, որոնք անշարժ մնում էին նրա հագուստի վրա, հետո լուռ նստեց նրա դիմաց։

— Գիտեմ, որ շտապում եք բանտ գնալ,— ասաց Լիզան

կորուկ,— իսկ մաման երկու ժամ պահեց ձեզ, իմ ու Ցուլիայի մասին էր պատմում հենց նոր։

— Ինչպե՞ս իմացաք,— հարցրեց Ալյոշան։

— Դաղտնի լսում էի։ Ի՞նչ եք այդպես նայում ինձ։ Ուզում եմ գաղտնի լսել և լսում եմ, ոչ մի վատ բան չկա դրա մեջ։ Ներողություն չեմ խնդրում։

—Վրդովվե՞լ եք մի որևէ բանից։

— Ընդհակառակը, շատ ուրախ եմ։ Հենց հիմա մտածում էի նորից, երեսուներորդ անգամ մտածում՝ ի՞նչ լավ է, որ մերժեցի ձեզ և ձեր կինը չեմ դառնալու։ Դուք ամուսին լինելու բան չեք. ասենք, թե ամուսնանամ ձեզ հետ, իսկ հետո էլ հանկարծ մի երկտոզ տամ, որ տանեք այն մարդուն, որին սիրել եմ ձեզնից հետո, դուք կվերցնեք ու անպայման կտանեք, դեռ պատասխան էլ կբերեք։ Եվ քառասուն տարեկան էլ դառնանք, նորից կտանեք իմ այդպիսի երկտոզները։

Նա հանկարծ ծիծաղեց։

— Մի շար բան կա ձեր մեջ և միաժամանակ անկեղծ մի բան,— ժպտաց Ալյոշան։

— Անկեղծն այն է, որ չեմ ամաչում ձեզնից։ Եվ ավելին. ոչ միայն չեմ ամաչում, այլև չեմ ուզում ամաչել ձե՛ր առաջ, հենց ձեզնից։ Ալյոշա, ինչո՞ւ չեմ հարգում ձեզ։ Ես ձեզ շատ եմ սիրում, բայց չեմ հարգում ձեզ։ Եթե հարգեի, առանց ամաչելու չէի խոսի, չէ՞, այնպես չէ՞։

— Այնպես է։

— Իսկ հավատո՞ւմ եք, որ չեմ ամաչում ձեզնից։

— Ոչ, չեմ հավատում։

Լիզան նորից ծիծաղեց ջղայնորեն. արագ-արագ էր խոսում նա։

— Ես ձեր եղբորը, Դմիտրի Ֆյոդորովիչին, շաքարեղեն ուզարկեցի բանտը։ Ալյոշա, գիտե՞ք ինչ լավի՞կն եք դուք։ Ես ձեզ սոսկալի պիտի սիրեմ այն բանի համար, որ այսպես շուտով ինձ թույլ տվեցիք չսիրել ձեզ։

— Ինչո՞ւ այսօր ինձ կանչեցիք, Lise։

— Ուզում էի իմ ցանկությունը ասել ձեզ։ Ուզում եմ, որ մեկը տանջի ինձ, ամուսնանա ինձ հետ ու հետո տանջի, խաբի, լքի ու հեռանա։ Չե՛մ ուզում երջանիկ լինել։

— Անկարգությո՞ւնն է հրապուրել ձեզ։

— Ա՜խ, այո, անկարգություն եմ ուզում։ Անընդհատ ուզում

եմ վառել տունը։-Միշտ երեկայում եմ, թե ինչպե՞ս գաղտագողի մոտենում եմ ու կրակ տալիս, բայց անպայմա՞ն գաղտագողի։ Նրանք հանգցնում են, հանգցնում, տունն էլ վառվում է ու վառվում։ Ես գիտեմ, բայց լռում եմ։ Է՜հ, ինչ հիմարություններ են։ Եվ որքան ձանձրալի՜ է ամեն ինչ։

Նա զզվանքով թափ տվեց ձեռքը։

— Ձոխ եք ապրում,— ասաց Ալյոշան մեղմիվ։

— Ինչ է, ավելի լավ է աղքա՞տ ապրել։

— Այո, ավելի լավ է։

— Ձեր հանգուցյալ վանականն է այդպես ուսուցանել ձեզ։ Ճիշտ չէ։ Թո՜ղ ես հարուստ լինեմ, իսկ բոլորը՝ աղքատ. ես անուշեղեն կուտեմ ու սերուցք կխմեմ, և նրանցից ոչ մեկին չեմ տա։ Ա՜հ, մի՛ խոսեք, մի՛ խոսեք, ոչինչ մի՛ ասեք,— ձեռքը թափ տվեց նա, թեև Ալյոշան բերանն էլ չէր բացել,— մինչև հիմա այդ բոլորն ասել եք ինձ արդեն, ամեն ինչ անգիր գիտեմ։ Ձանձրալի է։ Եթե ես աղքատ լինեմ, կսպանե՞մ որևէ մեկին. բայց դե հարուստ էլ լինեմ՝ գուցե սպանեմ նորից, ինչո՞ւ ձեռքերս ծալած նստեմ որ։ Բայց գիտե՞ք, ուզում եմ հնձել, հաճար հնձել։ Կամուսնանամ ձեզ հետ, իսկ դուք գյուղացի կդառնաք, իսկական գյուղացի, և մենք ձիու քուռակ կունենանք, ուզո՞ւմ եք։ Կալգանովին ճանաչո՞ւմ եք դուք։

— Ճանաչում եմ։

— Նա անընդհատ թափառում է ու երազում։ Ասում է՝ ինչո՞ւ իսկական կյանքով ապրեմ, ավելի լավ է երազել։ Կարող ես ամենաուրախ բաները երազել ուզածիդ չափ, իսկ ապրելը ձանձրալի է։ Բայց դե ինքը ամուսնանում է շուտով, ի՜նձ էլ արդեն սեր է բացատրել։ Դուք կարո՞ղ եք հոլ գցել։

— Կարող եմ։

— Ալ նա հոլի նման է. փաթաթե՞ս նրան ու գցես, և ծեծես, ծեծես, ծեծե՞ս մտրակով։ Եթե ամուսնանամ հետը, ամբողջ կյանքումս կգցեմ նրան հոլի պես։ Ձե՞ր ամաչում, որ նստել եք ինձ հետ։

— Ոչ։

— Սոսկալի բարկանում եք, որ սուրբ բաների մասին չեմ խոսում։ Չեմ ուզում սուրբ լինել։ Ի՞նչ կանեն ինձ հանգերձյալ աշխարհում ամենամեծ մեղքի համար։ Դուք անշուշտ կետ առ կետ կիմանաք այդ բանը։

— Ասվածն կդատի,— ուշիուշով նայում էր նրան Ալյոշան։

— Ահա ես էլ այդ եմ ուզում։ Գնայի այնտեղ և ինձ դատեին, և ես էլ հանկարծ նրանց բոլորի երեսին ծիծաղեի։ Սոսկալի ուզում եմ կրակի տալ տունը, Ալյոշա, մե՛ր տունը, դեռ չե՞ք հավատում ինձ։

— Ինչո՞ւ չէ։ Նույնիսկ կան երեխաներ, ասենք տասներկու տարեկան, որոնք շատ են ուզում մի որևէ բան կրակի տալ և իսկապես կրակի են տալիս։ Դա հիվանդություն է մի տեսակ։

— Ճիշտ չէ դա, ճիշտ չէ, ասենք թե կան երեխաներ, բայց իմ ասածն ուրիշ է։

— Դուք չարն ընդունում եք որպես բարի. դա բոպեական մի ճգնաժամ է, գուցե այստեղ ձեր նախկին հիվանդությունն է մեղավոր։

— Բայց դուք արհամարհո՞ւմ եք ինձ համենայն դեպս։ Ես պարզապես չեմ ուզում բարիք անել, ուզում եմ չարի՜ք անել, և ոչ մի հիվանդություն էլ չկա այստեղ։

— Ինչո՞ւ չարիք անել։

— Որպեսզի ոչինչ չմնա աշխարհում։ Ախ, ի՜նչ լավ կլիներ, եթե ոչինչ չմնար։ Գիտե՞ք, Ալյոշա, երբեմն մտածում եմ՝ սոսկալի շատ չարիք անեմ ու ամեն տեսակի վատ բաներ, և երկար ժամանակ գաղտնի գործեմ, հետո հանկարծ բոլորը իմանան։ Բոլորը ինձ շրջապատեն ու մատով ցույց տան ինձ, իսկ ես բոլորի երեսին նայեմ։ Դա շատ հաճելի է։ Ինչո՞ւ այդքան հաճելի է դա, Ալյոշա։

— Հենց այնպես։ Մի որևէ լավ բան խորտակելու կամ էլ, ինչպես ասում էիք հիմա, վառելու պահանջ է։ Դա էլ լինում է երբեմն։

— Բայց ես ոչ թե հենց այնպես ասում եմ, այլև կանեմ։

— Հավատում եմ։

— Ախ, ինչպե՞ս եմ ձեզ սիրում նրա համար, որ ասում եք՝ հավատում եմ։ Եվ բոլորովին, բոլորովին չեք ատում, չէ՞։ Բայց գուցե կարծում եք՝ այս բոլորը դիտմա՞մբ եմ ասում, որպեսզի ձեզ բարկացնե՞մ։

— Ոչ, չեմ կարծում... Թեև մի քիչ էլ այդ պահանջն ունեք գուցե։

— Այո, մի քիչ ունեմ։ Երբեք չեմ կարող սուտ ասել ձեզ,— ասաց նա, և աչքերը կայծկլտացին մի տեսակ։

Ալյոշային ամենից ավելի զարմացնում էր Լիզայի լրջությունը. ծիծաղելու կամ կատակելու հետքն անգամ չկար աղջկա դեմքին, այնինչ մի ժամանակ, նույնիսկ իր «ամենալուրջ» բո-

պեներ։ Նա երբեք չէր կորցնում իր զվարթությունն ու կատակասիրությունը։

— Կան բոպեներ, երբ մարդիկ սիրում են ոճիրը,— ասաց Ալյոշան մտածկոտ։

— Այո, այո։ Դուք իմ միտքը ասացիք. սիրում են ոճիրը, բոլորն են սիրում և միշտ սիրում են, և ոչ թե «կան բոպեներ»։ Գիտե՞ք, կարծես թե մի ժամանակ բոլորը պայմանավորվել են ստել այդ հարցում, և այդ օրից էլ ստում են բոլորը։ Բոլորն էլ ասում են, թե ատում են վատը, բայց իրենց հոգում բոլորն էլ սիրում են դա։

— Առաջվա նման դեռ շարունակո՞ւմ եք վատ գրքեր կարդալ։

— Կարդում եմ, այո։ Մաման կարդում է և բարձի տակ պահում, ես էլ գողանում եմ։

— Ձե՞ք ամաչում, որ այդպես կործանում եք ձեզ։

— Ես ուզում եմ ինձ կործանել։ Այստեղ մի տղա կա, երկաթգծերի մեջտեղը պառկել է և գնացքն է անցել վրայից։ Ի՜նչ երանելի է այդ տղան։ Լսեցեք, ձեր եղբորը հիմա դատում են նրա համար, որ իր հորն է սպանել, և բոլորը սիրում են, որ նա իր հորն է սպանել։

— Սիրում են, որ հորն է սպանե՞լ։

— Սիրում են, բոլո՞րն էլ սիրում են։ Բոլորն էլ ասում են, որ դա սարսափելի է, բայց իրենց հոգու մեջ սոսկալի սիրում են։ Առաջինը ես եմ սիրում։

— Բոլորի մասին ձեր ասածի մեջ մի քիչ ճշմարտություն կա,— ասաց Ալյոշան մեղմ ձայնով։

— Ա՜խ, ինչ մտքե՞ր ունեք,— ճչաց Լիզան հրճվանքով,— և գեռ վանակա՞ն էլ եք։ Ձեզ հավատա, որքա՞ն եմ ձեզ հարգում, Ալյոշա, որ երբեք սուտ չեք խոսում։ Ա՜խ, իմ մի ծիծաղելի երազը պատմեմ ձեզ։ Երբեմն սատանաներ եմ տեսնում երազիս մեջ. իբր թե գիշեր է, ես առանձին եմ իմ սենյակում, մոմի լույսով, և հանկարծ ամեն կողմ սատանաներ են, բոլոր անկյուններում, սեղանի տակ էլ. դուռն եմ բացում, սատանաների մի ամբոխ կա դռան ետև, և ուզում են ներս մտնել, բռնել ինձ։ Եվ ահա մոտենում են արդեն, բռնում են։ Բայց հանկարծ խաչ եմ հանում երեսիս, և նրանք բոլորն էլ ետ են քաշվում, վախենում են, միայն թե չեն թողնում ու հեռանում բոլորովին, կանգ-

նում են դռան մոտ և անկյուններում, սպասում են։ Եվ հանկարծ ես սոսկալի ցանկություն եմ զգում բարձրաձայն նախատել աստծուն, և ահա սկսում եմ նախատել, նրանք էլ հանկարծ նորից մոտենում են ինձ ամբողջ բազմությամբ, ուղղակի ուրախանում են, նորից բռնում են ինձ, և ես հանկարծ նորից խաչ եմ հանում երեսիս, բոլորն էլ ետ են քաշվում։ Ահռելիորեն զվարճալի է, մարդու շունչն է կտրվում։

— Ես էլ տեսել եմ այդ նույն երազը,— ասաց հանկարծ Ալյոշան։

— Իսկապե՞ս,— գոչեց Լիզան զարմանքով։— Ի սե՛ր աստծո, Ալյոշա, մի՛ ծիծաղեք, դա սոսկալի կարևոր է. հնարավո՞ր բան է, որ երկու տարբեր մարդիկ միևնույն երազը տեսնեն։

— Երևի հնարավոր է։

— Ալյոշա, ասո՛ւմ եմ ձեզ, սոսկալի կարևոր է դա,— շարունակեց Լիզան, արդեն մի տեսակ չափից դուրս զարմացած։— Ոչ թե երազն է կարևորը, այլ այն, որ դուք էլ իմ տեսած երազն եք տեսել նույնությամբ։ Դուք երբեք սուտ չեք ասում ինձ, հիմա էլ սուտ մի՛ ասեք. ճի՞շտ է դա։ Ձե՞ք ծիծաղում։

— Ճիշտ է։

Լիզան սոսկալի շշմել էր և մի կես րոպե լուռ մնաց։

— Ալյոշա, հաճախ եկեք ինձ մոտ, հաճախ եկեք,— ասաց նա հանկարծ աղերսական ձայնով։

— Ես միշտ գալու եմ ձեզ մոտ, իմ ամբողջ կյանքում,— հաստատ պատասխանեց Ալյոշան։

— Միայն ձե՛զ եմ ասում այս բաները, հասկանո՞ւմ եք,— սկսեց նորից Լիզան։— Ինքս ինձ եմ ասում միայն, մեկ էլ ձեզ։ Միայն ձեզ՝ ամբողջ աշխարհում։ Եվ ավելի հոժար եմ ձե՛զ ասելու, քան ինքս ինձ։ Եվ բոլորովին չեմ ամաչում ձեզնից։ Ալյոշա, ինչո՞ւ ես բոլորովին չեմ ամաչում ձեզնից, բոլորովի՞ն։ Ալյոշա, ճի՞շտ է, որ ջհուդները զատկին երեխա են գողանում և մորթում։

— Չգիտեմ։

— Ես մի գիրք ունեմ, դրա մեջ մի դատի մասին կարդացի. չգիտեմ որտեղ է պատահել, ջհուդի մեկը չորս տարեկան տղա է գողացել և նախ երկու ձեռքի բոլոր մատները կտրել է, հետո էլ խաչել է նրան պատի վրա, մեխերով զամել ու խաչել է, իսկ հետո դատարանում ասել է, որ տղան շուտ մեռավ, չորս

ժամից։ Այ թե շո՛ւտ է։ Ասել է, որ տղան տնքում էր, անընդհատ տնքում, իսկ ինքը կանգնել ու հիացած նայում էր նրան։ Լավ է։

— Լա՞վ է։

— Լավ է, այո։ Երբեմն մտածում եմ, որ ինքս եմ խաչել։ Պատից կախված տնքում է նա, ես էլ դիմացը նստել եմ ու անանասի կոմպոտ եմ ուտում։ Շատ եմ սիրում անանասի կոմպոտը։ Դուք սիրո՞ւմ եք։

Ալյոշան լուռ նայում էր նրան։ Աղջկա դեղնագալուկ դեմքը հանկարծ այլայլվեց, աչքերը վառվեցին։

— Գիտե՞ք, երբ այդ չհուդի մասին կարդացի, ամբողջ գիշերը լաց եղա, ուղղակի դողում էի, ցնցվում։ Երևակայում էի, թե ինչպե՞ս էր ճչում և տնքում այդ փոքրիկ երեխան (չորս տարեկան տղան հասկանում է, չէ՞), իսկ իմ ուղեղին անընդհատ կպել էր այդ կոմպոտը։ Առավոտյան նամակ ուղարկեցի մի մարդու, որ անպայման գա ինձ մոտ։ Եկավ, ես էլ հանկարծ նրան պատմեցի, երեխայի ու կոմպոտի մասին, ամեն ինչ պատմեցի, ամեն ինչ, և ասացի, որ «լավ է»։ Նա հանկարծ ծիծաղեց և ասաց, որ իսկապես լավ է դա։ Հետո վեր կացավ ու գնաց։ Ընդամենը հինգ րոպե նստեց։ Արհամարհե՞ց նա ինձ, արհամարհե՞ց։ Ասացե՛ք, ասացե՛ք, Ալյոշա, արհամարհե՞ց նա ինձ, թե չէ,— Լիզան ուղիղ նստեց օթոցի վրա և աչքերը փայլատակեցին։

— Ասացեք ինձ,— հարցրեց Ալյոշան հուզախառով,— դուք ինքնե՞րդ կանչեցիք այդ մարդուն։

— Այո, ինքս։

— Նամա՞կ ուղարկեցիք։

— Այո, նամակ։

— Հենց այդ բանը հարցնելո՞ւ, այդ երեխայի մասի՞ն։

— Ոչ, բոլորովին էլ դրա համար չէր, բոլորովին։ Բայց երբ նա ներս մտավ, ես անմիջապես դրա մասին հարցրի։ Պատասխանեց, ծիծաղեց, վեր կացավ ու գնաց։

— Այդ մարդը ազնիվ է վարվել ձեզ հետ,— ասաց Ալյոշան մեղմիվ։

— Բայց արհամարհե՞ց ինձ։ Ծիծաղե՞ց ինձ վրա։

— Ոչ, որովհետև ի՛նքը գուցե հավատում է անանասի կոմպոտին։ Նա էլ շատ հիվանդ է հիմա, Lise։

— Այո, հավատո՛ւմ է,— ասաց Լիզան փայլատակող աչքերով։

— Նա ոչ ոքի չի արհամարհում,— շարունակեց Ալյոշան։— Պարզապես չի հավատում ոչ ոքի։ Քանի որ չի հավատում, ուրեմն և արհամարհում է անշուշտ։

— Ուրեմն ի՞նձ էլ արհամարհում է։ Ի՞նձ էլ։

— Ձեզ էլ։

— Լա՞վ է,— մի տեսակ ատամները կրճտացրեց Լիզան։— Երբ նա ծիծաղելով դուրս գնաց, ես զգացի, որ լավ է արհամարհված լինելը։ Կտրված մատներով երեխա՞ն էլ լավ է, արհամարհված լինե՞լն էլ լավ է։

Եվ նա մի տեսակ չարախնդորեն ու տենդագին ծիծաղեց Ալյոշայի երեսին։

— Գիտե՞ք, Ալյոշա, գիտե՞ք, ես պիտի ուզեի, որ... Ալյոշա, փրկեցե՛ք ինձ,— վեր թռավ հանկարծ օթոցից, խոյացավ ու պինդ գրկեց Ալյոշային։— Փրկեցե՛ք ինձ,— համարյա տընքաց նա։— Աշխարհում կա՞ մի մարդ, որին ասեի այն, ինչ որ ձե՛զ ասացի։ Իսկ ես ճշմարտությո՛ւնն ասացի ձեզ, ճշմարտությո՛ւնը, ճշմարտությո՛ւնը։ Կսպանե՛մ ինքս ինձ, որովհետև ամե՛ն ինչ զզվելի է ինձ համար։ Ամե՛ն ինչ զզվելի է ինձ համար, ամե՛ն ինչ զզվելի է։ Ալյոշա, ինչո՞ւ դուք ինձ բոլորովին, բոլորո՛վին, չեք սիրում,— վերջացրեց նա մոլեգնորեն։

— Ձէ՛, սիրո՛ւմ եմ,— ջերմորեն պատասխանեց Ալյոշան։

— Եվ պիտի լա՞ք ինձ համար, պիտի լա՞ք։

— Այո։

— Ո՞չ թե նրա համար, որ չուզեցի ձեր կինը լինել, այլ պարզապես, պարզապես պիտի լա՞ք ինձ համար։

— Այո։

— Շնորհակա՛լ եմ։ Միայն ձե՛ր արցունքներն են ինձ պետք։ Իսկ մյուս բոլորը թող խաչեն ինձ, ճղմեն ոտքերի տակ, բոլորը, բոլո՛ր, թող ոչ ոք բացառություն չլինի։ Որովհետև ես ոչ ոքի չեմ սիրում։ Լսո՞ւմ եք, ոչ ո՛ք։ Ընդհակառակը, ատո՛ւմ եմ։ Գնացեք, Ալյոշա, ժամանակն է, որ ձեր եղբոր մոտ գնաք,— պոկվեց հանկարծ նա Ալյոշայից։

— Բայց ինչպե՞ս թողնեմ ձեզ այս վիճակում,— ասաց Ալյոշան համարյա վախեցած։

— Գնացեք ձեր եղբոր մոտ, կփակեն բանտը, գնացե՛ք, ահա ձեր գլխարկը։ Համբուրեցեք Միտյային, գնացե՛ք, գնացե՛ք։

Եվ Լիզան համարյա բռնի ուժով դռնից դուրս հանեց նրան։ Ալյոշան նայում էր նրան վշտագին զարմանքով, երբ հանկարծ

իր աջ ձեռքում մի նամակ զգաց, մի փոքրիկ, պինդ ծալած ու կնքված նամակ։ Մի հայացք նետեց ու վայրկենապես կարդաց հասցեն՝ Իվան Ֆյոդորովիչ Կարամազովին։ Արագորեն Լիզային նայեց։ Աղջիկ դեմքը համարյա սպառնագին դարձավ։

— Տվե՛ք նրան, անպայմա՛ն տվեք,— հրամայեց նա մոլեգնորեն, ամբողջ մարմնով դողալով,— հենց այսօր, իսկո՛ւյն։ Թե չէ՝ թույն կխմեմ։ Հենց սրա համար էի կանչել ձեզ։

Եվ արագորեն շրմփացրեց դուռը։ Փականը շրխկաց։ Ալյոշան նամակը դրեց գրպանը և ուղղակի գնաց դեպի սանդուղքը, առանց տիկին Խոխլակովայի մոտ մտնելու, նույնիսկ մոռանալով նրան։ Իսկ Լիզան, Ալյոշայից հեռանալուց հետո, անմիջապես ետ քաշեց փականը, բացեց դուռը մի քիչ, մատը դրեց ճեղքի մեջ, ամբողջ ուժով շրմփացրեց դուռը նորից և ճզմեց մատը։ Տասը վայրկյան հետո մատն ազատելով, նա մեղմ, դանդաղ քայլերով գնաց դեպի իր բազկաթոռը, ուղիղ նստեց ու սկսեց ուշադիր նայել իր սևացած մատին ու եղունգի տակից արտածորող արյան։ Շրթները դողում էին, և նա արագ-արագ փսփսում էր ինքնիրեն.

— Սատ՛ր եմ, սատ՛ր, սատ՛ր, սատ՛ր։

V

ՕՐՀՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՔ

Արդեն շատ ուշ էր (և օրերն էլ արդեն կարճ են նոյեմբերին), երբ Ալյոշան մոտեցավ բանտի դարբասին ու զանգ տվեց։ Սկսել էր մթնել նույնիսկ։ Բայց Ալյոշան գիտեր, որ իրեն առանց որևէ արգելքի կթողնեն Միտյայի մոտ գնալ։ Այդ բանները մեր փոքրիկ քաղաքում էլ կատարվում են այնպես, ինչպես ամեն տեղ։ Իհարկե, սկզբում, ամբողջ նախնական քննության ավարտումից հետո, ազգականներն ու մի քանի ուրիշ անձինք համենայն դեպս որոշ անհրաժեշտ ձևականություններ պետք է լրացնեին՝ Միտյայի հետ տեսակցության իրավունք ստանալու համար, բայց հետագայում ոչ թե ձևականությունները մեղմացան, այլ Միտյայի այցելուներից գոնե ոմանց համար մի տեսակ ինքնըստինքյան բացառություն արվեց։ Եվ այն աստիճան, որ երբեմն նույնիսկ այցելուն ու կալանավորը համարյա թե դռնփակ էին խոսում իրար հետ՝ տեսակցության համար հատկացված սենյակում։ Սակայն այդպիսի բացառություն կազմող անձինք շատ քիչ էին. միայն Գրուշենկան, Ալյոշան ու Ռակիտինը։ Բայց Գրուշենկայի նկատմամբ հենց ոստիկանապետ Միխայիլ Մակարովիչն էր շատ բարյացակամ վերաբերվում։ Մերունու խղճի վրա ծանրացել էր այն գոռգոռոցը, որով նա Գրուշենկային հանդիմանել էր Մոկրոեում։ Հետագայում, իմանալով խնդրի ամբողջ էությունը, բոլորովին փոխել էր իր կարծիքը նրա մասին։ Եվ տարօրինակ բան, թեև Միխայիլ Մակարովիչը հաստատ համոզված էր, որ Միտյան հանցագործ է, բայց նրա բանտարկությունից հետո մի տեսակ ավելի ու ավելի մեղմ աչքով էր նայում նրան. «Գուցե լավ սիրտ ուներ մարդը, բայց արի տես, որ կորա՜վ-գնաց հարբեցողության ու անկարգության երեսից»։ Մերունու սրտում նախկին սարսափը տեղի տվեց մի տեսակ կարեկցության։ Գալով Ալյոշային, ոստիկանապետը շատ էր սիրում նրան և արդեն վաղուց ծանոթ էր հետը։ Իսկ Ռակիտինը, որի համար վերջերս սովորություն էր դարձել հանախակի այցելել կալանավորին, շատ մտերիմ ծանոթություն էր հաստատել «ոստիկանապետի օրիորդներին» հետ, ինչպես ինքն էր կոչում նրանց, և ամեն օր քարշ էր գալիս նրանց տանը։ Բացի այդ, նա բանտի վերակացուի տանն էլ դասեր էր տալիս, իսկ վերակացուն բարեհոգի մի ծերունի էր, թեև իր պաշտոնի կատարման մեջ՝ խիստ փութաջան։ Գալով դարձյալ Ալյոշային, նա վերակացուի առանձնահատուկ ու վաղեմի ծանոթն էր. ծերունին սիրում էր նրա հետ խոսել առհասարակ «իմաստուն բաների» մասին։ Իվան Ֆյոդորովիչին, օրինակ, ոչ թե պարզապես հարգում էր վերակացուն, այլ մանավանդ վախենում էր նրա դատողություններից, թեև ինքն էլ մեծ փիլիսոփա էր, անշուշտ «իր սեփական խելքով հասած»։ Բայց Ալյոշայի նկատմամբ նա մի տեսակ անհաղթահարելի համակրանք ուներ։ Մանավանդ որ վերջին տարվա ընթացքում ծերունին ուսումնասիրում էր պարականոն ավետարանները և անընդհատ իր տպավորությունները հայտնում էր իր երիտասարդ բարեկամին։ Առաջ նույնիսկ վանք էր գնում Ալյոշային տեսնելու և ժամերով խոսակցում էր նրա և աբեղաների հետ։ Մի խոսքով, Ալյոշան եթե նույնիսկ ուշ հասներ բանտ, բավական էր, որ վերակացուի մոտ գնար, և միշտ էլ ամեն ինչ հարթվում էր։ Բացի այդ, բանտում բոլորն էլ, մինչև իսկ վերջին

հակիչը, սովորել էին Ալյոշային։ Իսկ պահակն անշուշտ չէր նեղում նրան, միայն թե պետի թույլտվությունը լիներ։

Երբ Միտյային կանչում էին, նա միշտ էլ իր խցիկից իջնում էր այն սենյակը, որ հատկացված էր տեսակցությունների համար։ Ալյոշան, մտնելով այդ սենյակը, հանկարծ հանդիպեց Ռակիտինին, որն արդեն հրաժեշտ էր առնում Միտյայից։ Նրանք երկուսն էլ բարձրաձայն խոսում էին։ Միտյան, ճամփու դնելով նրան, կուշտուկուտ ծիծաղում էր մի բանի համար, իսկ Ռակիտինը կարծես փնթփնթում էր։ Հատկապես վերջերս Ռակիտինը չէր սիրում հանդիպել Ալյոշային, համարյա չէր խոսում նրա հետ, նույնիսկ դժկամ էր բարևում նրան։ Հիմա տեսնելով, որ Ալյոշան է ներս մտնողը, նա հատկապես խոժոռվեց և հայացքը ուրիշ կողմ դարձրեց, իբրև թե խիստ զբաղված էր իր խոշոր, տաք, մուշտակե օձիքով վերարկուն կոճկելով։ Հետո անմիջապես սկսեց փնտրել իր հովանոցը։

— Իմ մի որևէ բանը չմոռանամ այստեղ,— մրթմրթաց նա, պարզապես մի բան ասած լինելու համար։

— Դու ուրիշի՛ որևէ բանը մի՛ մոռանա,— կատակեց Միտյան և ինքն էլ իսկույն քահ-քահ ծիծաղեց իր արած սրամտության վրա։ Ռակիտինը վայրկենապես բռնկվեց։

— Դու քո կարամազովների՛ն տուր այդ խորհուրդը, ճորտատերի՛ ձագեր, ոչ թե Ռակիտինին,— գոռաց նա հանկարծ, ուղղակի դողալով զայրույթից։

— Ի՞նչ ես գոռում։ Կատակ էր ասածս,— գոչեց Միտյան։— Թո՛ւհ, գրողը տանի։ Այ, սրանք բոլորն էլ այսպես են,— դարձավ նա Ալյոշային, գլուխը շարժելով դեպի արագորեն հեռացող Ռակիտինի կողմը։— Նստել էր ու անընդհատ ծիծաղում էր, ուրախ էր, մեկ էլ հանկարծ տաքացա՛վ ահա։ Քեզ նույնիսկ գլխով էլ չարեց։ Բոլորովին գժտվե՞լ եք, ինչ է։ Ինչո՞ւ այսքան ուշացար։ Ամբողջ առավոտը սպասում էի, ոչ թե պարզապես սպասում, այլ տենչում էի քեզ։ Դե լավ, ոչինչ։ Տեղը կհանենք հիմա։

— Ինչո՞ւ է այդքան հաճախ գալիս քեզ մոտ։ Բարեկամացե՞լ ես հետը, ինչ է,— հարցրեց Ալյոշան, նույնպես գլուխը շարժելով դռան կողմը, ուր չքվել-գնացել էր Ռակիտինը։

— Ի՞նչ։ Միխայիլի՞ հետ եմ բարեկամացել։ Չէ՛, չկարծես։ Եվ ի՞նչ բարեկամություն, խոզի մեկն է։ Ինձ... սրիկա է համարում։ Կատակ էլ չեն հասկանում սրանք, ահա թե ինչն է ամենավատը։ Երբեք էլ կատակ չեն հասկանա։ Եվ չոր է սրանց հոգին, տափակ ու չոր, ճիշտ ինչպես բանտի պատերն էին այն օրը, երբ ինձ այստեղ էին բերում և ես նայում էի այդ պատերին։ Բայց խելացի մարդ է, խելացի։ Է՛հ, Ալեքսեյ, հիմա այլևս կորա՞վ խեղճ գլուխս։

Նա նստեց նստարանին և Ալյոշային էլ իր կողքը նստեցրեց։

— Այո, վաղը դատն է։ Ուրեմն ինչ է, բոլորովի՞ն հույս չունես, եղբայր,— ասաց Ալյոշան վեհերոտ մի զգացումով։

— Ինչի՞ մասին ես խոսում,— մի տեսակ անորոշ նայեց նրան Միտյան։— Ա՜խ, դա՞տն ես ասում։ Է՛հ, հերն էլ անիծած։ Մինչև հիմա քեզ հետ միշտ էլ դատարկ բաների մասին ենք խոսել, այ այս դատի մասին, իսկ ամենագլխավորի մասին ոչինչ չեմ ասել քեզ։ Այո, վաղը դատն է, բայց ես դատը նկատի չունեի, երբ ասացի, թե կորավ խեղճ գլուխս։ Գլուխս չի կորել. կորչում է այն, ինչ կար գլխիս մեջ։ Ինչո՞ւ ես այդպես քննադատող դեմքով նայում ինձ։

— Դո՞ւ ինչի մասին ես ասում, Միտյա։

— Գաղափարնե՛րը, գաղափարնե՛րը, հասկանո՞ւմ ես։ Էթիկա։ Ի՞նչ բան է այդ էթիկան։

— Էթիկա՞,— զարմացավ Ալյոշան։

— Այո։ Գիտություն՞ է դա, ինչ է։

— Այո, այդպիսի մի գիտություն կա... միայն թե... խոստովանում եմ, չեմ կարող բացատրել քեզ, թե ինչ գիտություն է։

— Ռակիտինը գիտե։ Շատ բան գիտե Ռակիտինը, գրո՛ղը տանի նրան։ Վանական չի դառնա։ Պատրաստվում է Պետերբուրգ գնալ։ Այնտեղ, ասում է, քննադատության ասպարեզը կմտնի, բայց ազնիվ ուղղությամբ։ Ինչ կա որ, կարող է օգուտ բերել և իր համար կարիերա ստեղծել։ Ո՜ւխ, կարիերայի վարպետներ են սրանք։ Գրողի ծո՛ցը էթիկան։ Ե՛ս կորա, Ալեքսեյ, ե՛ս, սիրելիս, ո՛վ դու ասածս մարդ։ Ես քեզ բոլորից ավելի եմ սիրում։ Սիրտս տակնուվրա է լինում քեզ համար, հասկանո՞ւմ ես։ Ո՞վ է եղել այդ Կարլ Բեռնարը։

— Կարլ Բեռնա՞ր,— զարմացավ նորից Ալյոշան։

— Չէ, Կարլ չէ, սպասիր, սխալ ասացի. Կլոդ Բեռնար։ Ի՞նչ բան է դա։ Քիմիա՞ է, ինչ է։

— Այնպիսի մի գիտական է երևի,— պատասխանեց Ալյոշան,— միայն թե, խոստովանում եմ, նրա մասին էլ շատ

բան չեմ կարող ասել։ Լսել եմ միայն, որ գիտնական է, բայց թե ի՞նչ գիտնական՝ չգիտեմ։

— Է՜հ, գրո՜ղը տանի նրան, ես էլ չգիտեմ,— հայհոյեց Միխյան։— Սրիկայի մեկն է երևի, ամենայն հավանականությամբ։ Եվ բոլո՜ր էլ սրիկա են դրանք։ Բայց Ռակիտինը կսպրդի ու կանցնի, Ռակիտինը արանքից կխցկվի, նա՛ էլ Բեռնար է։ Ո՞ւխ այդ Բեռնարները։ Մեկի պես բուսել են չորս կողմը։

— Բայց ի՞նչ է պատահել քեզ,— համառորեն հարցրեց Ալյոշան։

— Ուզում է հոդված գրել իմ մասին, իմ գործի մասին, և դրանով էլ իր դերն սկսել գրականության մեջ։ Դրա համար էլ գալիս է մոտս, իր բերնով ասաց։ Ուզում է գաղափարական հոդի վրա մի բան գրել. այսինքն թե՝ «չէր կարող չապանել, միջավայրը փչացրել էր նրան» և այլն, և այլն։ Բացատրեց։ Սոցիալիզմի երանգ է լինելու հոդվածի մեջ, ասում է։ Է՜հ, նրա հե՛րն էլ անիծած, երանգ է ուզում՝ թող երանգ դնի, ինձ համար միևնույնն է։ Իվանին չի սիրում, ասում է, քեզ էլ չի խնայում։ Բայց չեմ քշում նրան, որովհետև խելացի լակոտ է։ Թեև՝ շատ է գոռոզանում։ Այ հենց հիմա ասացի նրան. «Կարամազովները սրիկա չեն, այլ փիլիսոփա, որովհետև բոլոր իսկական ռուսները փիլիսոփա են, իսկ դու թեև սովորել ես, բայց փիլիսոփա չես, ռամիկի մեկն ես»։ Ծիծաղում է, շարախնդորեն այնպես։ Ես էլ ասացի՝ de գաղափարաբուս non est disputandum[1], լավ սրամտություն է, չէ՞։ Գոնե ես էլ դասականության ջրերը մտա,— քրքջաց հանկարծ Միխյան։

— Իսկ ինչո՞ւ ասացիր, որ կորար։ Հենց նոր այդպես ասացիր,— ընդհատեց Ալյոշան։

— Ինչու կորա՞։ Հը՜մ։ Ըստ էության... եթե ամբողջությամբ վերցնենք, աստծուն եմ ափսոսում, ահա՛ թե ինչու։

— Ինչպե՞ս թե աստծուն ես ափսոսում։

— Երևակայիր. ջղերի մեջ է խնդիրը, դլխի մեջ, այսինքն ուղեղի մեջ այդ ջղերը կան (դե գրո՜ղը տանի նրանց)... մի տեսակ պոչուկներ կան, հասկանո՞ւմ ես, այդ ջղերը պոչուկներ ունեն. է՜հ ուրեմն, հենց որ այդ պոչուկներն սկսեն թրթռալ... այսինքն հասկանո՞ւմ ես, այս իմ աչքերով նայում եմ մի որևէ բանի, այ, այսպես, և դրանք սկսում են թրթռալ, այդ պոչուկները այսինքն... և հենց որ սկսեն թրթռալ, պատկերն է երևում, և ոչ թե անմիջապես, այլ մի ինչ-որ ակնթարթ է անցնում, մի երկվայրկյան ասենք, և իբր թե այնպիսի մի պահ է երևում, այսինքն ոչ թե պահ (գրո՜ղը տանի պահը), պատկեր է երևում, այսինքն մի իր կամ գործողություն, դե ինչ որ է, գրո՜ղը տանի, և ահա թե ինչու տեսնում եմ, հետո էլ մտածում եմ... որովհետև պոչուկնե՞ր կան, էլի, և ո՞չ թե որովհետև ես հոգի ունեմ, իբր թե ի՛նքս պատկեր ու նմանություն եմ ինչ-որ, ո՞չ, այդ բոլորը հիմա՞ր բաներ են։ Միխայիլը դեռ երեկ բացատրեց ինձ այս բոլորը, եղբայր իմ, և կարծես շիկացած երկաթով խանձեցին ինձ։ Հոյակա՞պ է այս գիտություն ասածդ, Ալյոշա։ Նո՞ր մարդն է ծնվում, հասկանում եմ այդ բանը... Բայց համենայն դեպս ափսոսում եմ աստծուն։

— Է՜հ, գոնե այդ էլ լավ է,— ասաց Ալյոշան։

— Որ աստծո՞ւն եմ ափսոսում։ Քիմիան է, սիրելիս, քիմիա՞։ Ճար չկա, ձերդ սրբազնություն, ետ քաշվեցեք մի քիչ, քիմիա՞ն է գալիս։ Բայց չի սիրում աստծուն Ռակիտինը, ո՞ւխ, չի՜ սիրում։ Դա նրանց ամենացավոտ կողմն է, բոլորի՜ էլ։ Բայց թաքցնում են։ Սուտ բաներ են ասում։ Ձևեր են թափում։ «Ինչ է, դու քո քննադատության ասպարեզում ա՞յդ ես քարոզելու»,— հարցրի նրան,— «է՜, բացեիբաց անեմ՝ չեն թողնի»,— ասաց, ծիծաղեց։ «Բայց այդ դեպքում ի՞նչ է լինելու մարդ արարածը,— հարցրի։— Ի՞նչ է լինելու նրա վիճակը առանց աստծո և առանց հանդերձյալ կյանքի։ Ուրեմն այսպիսով ամեն ինչ թույլատրելի՞ է դառնում, ամեն ինչ կարելի՞ է անել»։— «Իսկ դու ինչ է, չգիտե՞ր»,— ասաց։ Ծիծաղեց։ «Խելացի մարդու համար ամեն ինչ կարելի է,— ասաց,— խելացի մարդը կարող է օձը ծակից հանել, իսկ ահա դու սպանեցիր ու ծակն ընկար,— ասաց,— և հիմա փտո՜ւմ ես բանտում»։ Իմ երեսի՞ն է ասում այդ բանը։ Խոզի՜ ծնունդ։ Առաջ ես այսպիսիներին դո՜ւրս էի շպրտում, բայց դե հիմա լսում եմ։ Խելացի բաներ էլ շատ է ասում։ Խելացի էլ գրում է։ Անցյալ շաբաթ մի հոդված էր սկսել կարդալ ինձ, մի երեք տող դիտմամբ արտագրեցի այն ժամանակ. սպասիր մի վայրկյան, ահա այստեղ է։

Միխյան, շտապելով, թղթի մի կտոր հանեց բաճկոնակի գրպանից և կարդաց։

— «Այս հարցը լուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ

[1] Գաղափարների մասին չեն վիճում (լատ.)։

է սեփական անձը հակադրել սեփական իրականությանը»։ Հասկանո՞ւմ ես, թե չէ։

— Չէ, չեմ հասկանում,— ասաց Ալյոշան։

Նա հետաքրքրությամբ նայում էր Միտյային ու լսում։

— Ես էլ չեմ հասկանում։ Մթին է ու անորոշ, բայց խելացի է ասված։ «Բոլորն էլ հիմա այսպես են գրում,— ասում է,— որովհետև միջավայրն է այդպես...»։ Միջավայրից են վախենում։ Ոտանավոր էլ է գրում սրիկան, Խոխլակովայի ոտքն է գովերգել, հա-հա-հա՜։

— Լսել եմ դրա մասին,— ասաց Ալյոշան։

— Լսե՞լ ես։ Իսկ ոտանավորը լսե՞լ ես։

— Ոչ։

— Ունեմ մոտս, ահա կարդամ։ Դու չգիտես, չեմ ասել քեզ, մի ամբողջ պատմություն է դա։ Սրիկա՜ն։ Երեք շաբաթ առաջ էր, ինձ ծաղրել ուզեց։ «Դու երեք հազար ռուբլու համար ծակն ընկար հիմարի նման,— ասաց,— իսկ ես հարյուր հիսուն հազար եմ շանթելու. մի այրի կնոջ հետ եմ ամուսնանում և քարաշեն տուն եմ գնելու Պետերբուրգում»։ Եվ պատմեց ինձ, որ սիլիբիլի է անում Խոխլակովայի հետ, իսկ այդ տիկինը մանկությունից արդեն խելոք չի եղել, հիմա էլ քառասունին է հասել ու բոլորովին խելքը թոցրել է։ «Բայց դե շատ զգացական կին է,— ասում է սրիկան,— այ հենց այդ լարից էլ կբռնեմ ու նրան ձեռքս կգցեմ։ Կամուսնանամ, Պետերբուրգ կտանեմ նրան, իսկ այնտեղ կսկսեմ թերթ հրատարակել»։ Եվ այնպիսի՜ մի զզվելի հեշտասիրությամբ էին վազում բերնի ջրերը, ոչ թե Խոխլակովայի համար, այլ այդ հարյուր հիսուն հազարի։ Եվ հավատացնում էր ինձ, հավատացնում, անընդհատ գալիս էր մոտս, ամեն օր. անձնատուր է լինում, ասում էր։ Փայլում էր ուրախությունից։ Եվ մեկ էլ հանկարծ վռնդեցի՜ն նրան. Պերխոտինը հաղթող ելավ, ապրե՜ս, Պյոտր Իլյիչ։ Այսինքն ուղղակի կհամբուրեի՜ այդ կուտը պակաս Խոխլակովային, որ այդպես վռնդել է նրան։ Այ հենց այդ օրերին էր, որ գրեց այս ոտանավորը, գալիս էր մոտս ու ասում. «Առաջին անգամն եմ կեղտոտում ձեռքերս, ոտանավոր եմ գրում,— ասում էր,— հրապուրելու համար է, ուրեմն օգտակար գործի համար։ Երբ ձեռքս գցեմ հիմար կնոջ դրամագլուխը, կարող եմ հետո հասարակական օգուտ բերել»։ Դե նրանք իրենց ամեն մի գարշելի գործի համար այս հասարակակա՜ն արդարացումը ունեն։ «Բայց համենայն դեպս քո Պուշկինից լավ եմ գրել,— ասաց,— որովհետև այս խեղկատակ ոտանավորի մեջ անգամ կարողացել եմ հասարակական վիշտը խցկել»։ Հասկանո՜ւմ եմ ինչ է ուզում ասել Պուշկինի մասին։ Է՜հ, եթե իսկապես ընդունակ մարդ էր այդ Պուշկինը, բայց միայն ոտքե՜ր է նկարագրել, ի՞նչ օգուտ։ Բայց թե ինչպե՜ս էր հպարտանում սրիկան իր գրած այս ոտանավորով։ Ինքնասիրությու՜նը սրանց, ինքնասիրությու՜նը։ «Իմ հոգածության առարկա հիվանդ ոտքի առողջացման ի խնդիր»,— այսպիսի վերնագիր է հնարել, ճարպի՜կ տիպ է։

Ա՜խ, այս ոտքը քնքուշ, դյութիչ,
Ափսո՜ս, ուռել է քիչ, մի քիչ։
Բժիշկներն են գալիս, նայում,
Փաթաթում են, չեն խնայում։

Ոտքի համար ես չեմ տրտմում,
Է՜հ, Պուշկինն է ոտքի երգիչ,
Գլխի համար եմ ես տրտմում,
Որ մտքերո՜վ ապրեր մի քիչ։

Ընկալում էր արդեն քիչ-քիչ,
Բայց հիմա ո՜տքն է խանգարում։
Թո՜ղ ուրեմն ոտքը դյութիչ
Բուժվի, որ տեղ բացվի գլխում։

Խո՜ղ է, կարգին խոզ, բայց պճլտուն բան է գրել ստահակը։ Եվ իսկապես «հասարակականը» խցկել է մեջը։ Բայց ինչպե՜ս էր ջղայնացել, երբ վռնդել էին։ Ատամներն էր կրճտացնում։

— Արդեն վրեժը հանել է,— ասաց Ալյոշան։— Խոխլակովայի մասին թղթակցություն է գրել։

Եվ Ալյոշան համառոտակի պատմեց «Ասուլիս» թերթում տպված թղթակցության մասին։

— Նա է, նա՛,— հաստատեց Միտյան խոժոռվելով,— նա՛ է։ Այդ թղթակցությունները... գիտեմ, չէ՞... այսինքն ի՞նչ ստորություններ են արդեն գրվել, օրինակ, Գրուշայի մասին... Եվ մյուսի մասին էլ՝ Կատյայի... Հը՞մ։

Նա մտահոգ սկսեց քայլել սենյակում։

— Նրբայր, ես չեմ կարող երկար մնալ,— ասաց Ալյոշան, մի փոքր լռելուց հետո։— Վաղը սոսկալի օր է, մեծ օր է քեզ համար. ատոծո դատաստանին ես ենթարկվելու... և ահա գար-

մանում եմ, որ քայլում ես այդպես, ու փոխանակ գործի մասին խոսելու, էլ չգիտեմ ինչեր ես ասում...

— Չէ, մի՛ զարմանա,— եռանդով ընդհատեց Միտյան— Ինչ է, այդ գարշահոտ շա՞ն մասին խոսեմ։ Այդ մարդասպանի՞։ Քեզ հետ շատ ենք խոսել դրա շուրջ, բավական է։ Էլ չեմ ուզում լսել Գարշահոտ Լիզավետայից ծնված այդ գարշահոտ լակոտի մասին։ Աստվա՛ծ կսպանի նրան, ա՛յ կտեսնես։ Դու սուս կաց։

Նա հուզմունքով մոտեցավ Ալյոշային և հանկարծ համբուրեց նրան։ Ալյոշայի աչքերը փայլեցին։

— Ռակիտինը չի հասկանա,— սկսեց նա մի տեսակ հափշտակությամբ,— բայց դու, դու ամեն ինչ կհասկանաս։ Դրա համար էլ տենչում էի քեզ։ Գիտե՞ս, այնքա՞ն բաներ էի ուզում ասել քեզ այս խունացած պատերի մեջ, վաղուց էի ուզում, բայց դեռ ոչինչ չեմ ասել ամենագլխավորի մասին. միշտ էլ կարծես ժամանակը դեռ չէր գալիս։ Սպասեցի այս վերջին ժամին, որպեսզի սիրտս զեղեմ քո առաջ։ Եղբա՛յր իմ, այս վերջին երկու ամսվա ընթացքում մի նո՛ր մարդ զգացի իմ մեջ, մի նո՛ր մարդ ծնվեց իմ հոգում։ Կա՞ր իմ մեջ այդ նոր մարդը, բայց երբեք չէր հայտնվի, եթե չպայթեր այս փոթորիկն իմ գլխին։ Սոսկալի՞ է։ Ի՞նչ փույթ թե քսան տարի հանքերի մեջ քար եմ կոտրելու մուրճով. բոլորովին չեմ վախենում դրանից. այլ մի ուրիշ բանից եմ սոսկում հիմա՝ չհասանա՞ այդ վերածնված մարդն ինձնից։ Այնտե՞ղ էլ նույնիսկ, այդ հանքախորշերում, գետնի տակ, կարող եմ մարդկային մի սիրտ գտնել իմ կողքին, նույնպիսի մի տաժանակիր կալանավորի և մարդասպանի մեջ, և կարող եմ մտերմանալ նրա հետ, որովհետև այնտե՞ղ էլ կարելի է ապրել, սիրել ու տառապել։ Կարելի է վերակենդանացնել սառած սիրտը այդ տաժանակիր մարդու մեջ, հարություն տալ նրան, կարելի է տարիներո՞վ հոգ տանել ու վերջապես մի բարձր հոգի լույս աշխարհ բերել մութ քարանձավից, մի տառապյալ գիտակցություն, կարելի է մի հրեշտա՛կ վերածել նրա մեջ, մի հերո՞ս կյանքի կոչել։ Եվ այնքա՞ն շատ են նրանք, հարյուրներո՞վ, և մենք բոլորս մեղավոր ենք նրանց համար։ Ինչո՞ւ այն ժամանակ «երեխու» մասին երազ տեսա, այդպիսի՞ բոպեին։ «Ինչո՞ւ աղքատ է երեխեն»։ Այդ բոպեին դա մարգարեական մի ուղեցույց էր իմ առաջ։ Եվ հենց «երեխու» համար կգնամ։ Որովհետև բոլորը մեղավոր են բոլորի համար։ Բոլո՞ր «երեխեքի» համար կգնամ, որովհետև

կան փոքր երեխաներ ու մեծ երեխաներ։ Բոլորը «երեխեք» են։ Եվ հենց բոլորի համար էլ կգնամ, որովհետև պե՞տք է որևէ մեկը գնա բոլորի համար։ Ես չեմ սպանել իմ հորը, բայց պետք է գնամ։ Ընդունո՞ւմ եմ։ Այստե՛ղ իմ մեջ ծագեց ամեն ինչ... ահա այս խունացած պատերի մեջ։ Ու չէ՞ որ շատ են նրանք, հարյուրնե՞ր են նրանք այնտեղ, գետնի տակ, մուրճերը ձեռքներին։ Օհ այո՛, մենք շղթայակապ ենք լինելու, և չի լինելու ազատություն, բայց հայնժամ, մեր ահագնամեծ վշտի խորքից, մենք կրկին պիտի բարձրանանք ուրախության, առանց որի չի կարող մարդն ապրել, և առանց որի աստված էլ չի կարող գոյություն ունենալ, որովհետև ուրախություն է տալիս աստված, դա նրա՛ մենաշնորհն է, մե՛ծ մենաշնորհը... Աստվա՛ծ իմ, հալվի՛ մարդ աղոթքի մեջ։ Ինչպե՞ս առանց աստծո լինեմ ես այնտեղ, այնտե՞ղ, գետնի տակ։ Փչո՛ւմ է Ռակիտինը, եթե աստծուն վտարեն երկրի վրայից, մենք նրան կդիմավորենք երկրի՛ տակ։ Տաժանակիր բանտարկյալը չի կարող ապրել առանց աստծո, նույնիսկ ավելի ևս չի կարող, քան ազատ մարդը։ Եվ հայնժամ մենք, ընդերկրյա մարդիկ, երկրի խորքերից ողբերգաձայն օրհներգությո՛ւն պիտի երգենք առ աստված, որ աղբյուրն է ուրախության։ Կեցցե՛ աստված և ուրախությունը նրա։ Սիրո՛ւմ եմ նրան։

Արտասանելով իր տարօրինակ ճառը, Միտյան համարյա շնչահեղձ էր լինում։ Գունատվել էր, շրթները դողում էին, արցունքներ էին գլորվում աչքերից։

— Չէ՞, լիուլի է կյանքը, գետնի՛ տակ էլ բաբախում է կյանքը,— սկսեց նա նորից։— Չես հավատա, Ալեքսեյ, ինչպե՞ս եմ ապրե՛լ ուզում հիմա, լինելու և գիտակցելու ինչպիսի՞ տենչանք է ծնվել իմ սրտում, հենց այս խունացած պատերի մեջ։ Ռակիտինը չի հասկանում այս բանը, նրա միակ երազն է տուն շինել ու վարձակալներ ունենալ։ Բայց ես քեզ էի սպասում։ Եվ ի՞նչ է վերջապես տառապանքը։ Չեմ վախենում դրանից, թեկուզ և լափ ու սահման չունենա։ Հիմա չեմ վախենում, առաջ վախենում էի։ Գիտե՞ս, գուցե և չպատասխանեմ դատի ժամանակ... Եվ ինձ թվում է, հիմա այնքա՞ն շատ է այդ ուժը իմ մեջ, որ ես ամեն ինչ կհաղթահարեմ, բոլո՞ր տառապանքները, որպեսզի միայն ասեմ ու ասեմ ինքս ինձ ամեն բոպե՝ ես կա՛մ։ Հազարավոր տանջանքների մեջ՝ ես կա՛մ, խոշտանգում են ինձ ու գալարվում եմ, բայց կա՛մ։ Նստել եմ աշտարակում մեն-մե-

նակ, բայց ե՞ս էլ գոյություն ունեմ, արե՞ն եմ տեսնում, իսկ եթե չեմ էլ տեսնում արևը, գիտեմ, որ նա կա։ Եվ գիտնալ, թե կա արևը՝ մի ամբողջ կյանք է արդեն։ Ալյոշա, հրեշտակ իմ, ինձ սպանում են այլազան փիլիսոփայությունները, գրո՛ղը տանի դրանք։ Իվանը...

— Իվանը ի՞նչ...— ընդհատեց Ալյոշան, բայց Միտյան լսեց։

— Հասկանո՞ւմ ես, առաջ ես այս տարակույսներից ոչ մեկը չունեի, բայց այս ամբողջը թաքնված էր իմ ներսում։ Գուցե հենց դրա համար էլ հաճախ հարբում էի, կռվում, կատաղում, որովհետև անծանոթ գաղափարներ էին ալեկոծվում իմ մեջ։ Դրանց հագուրդ տալու համար էի կռվում, զսպելու համար, ճնշելու համար։ Իվանը Ռակիտին չէ, նրա մեջ գաղափար է թաքնված։ Իվանը սֆինքս է և լռում է, միշտ լռում է։ Իսկ ինձ աստծո հարցն է տանջում։ Միայն դա է տանջում ինձ։ Հապա եթե չկա՞ նա։ Հապա՞ եթե ճիշտ է Ռակիտինը, որ դա արհեստական մի գաղափար է մարդկության մեջ։ Եթե աստված չկա, ուրեմն մարդն է երկրի, տիեզերքի պարագլուխը։ Հոյակա՞պ է։ Բայց թե ինչպե՞ս է մարդը առաքինի լինելու առանց աստծու։ Ահա՛ խնդիրը։ Ես անընդհատ այդ եմ մտածում։ Որովհետև՝ ո՞ւմ է սիրելու այդ դեպքում մարդ արարածը։ Ո՞ւմ է նա շնորհակալ լինելու, ո՞ւմ համար է երգելու իր օրհներգությունը։ Ռակիտինը ծիծաղում է։ Ռակիտինն ասում է, որ կարելի է առանց աստծո էլ սիրել մարդկությանը։ Է՞, փսլնքոտ ցանցառը միայն կարող է այդպես պնդել։ Իսկ ես չեմ կարող այդ բանը հասկանալ։ Ռակիտինի համար հեշտ է ապրելը. գիտե՞ս ինչ ասաց այսօր։ «Ավելի լավ կլինի, որ մարդու քաղաքացիական իրավունքների ընդլայնման համար աշխատես, կամ էլ գոնե ջանաս, որ մսի գինը չբարձրանա. դրանով ավելի պարզ ու անմիջական սեր ցուցաբերած կլինես մարդկության հանդեպ, քան թե փիլիսոփայություններով»։ Է՞հ, ես էլ դրա պատասխանը տվեցի՞։ «Իսկ դու եթե աստված չունես,— ասացի,— դեռ ինքդ էլ մի բանով կբարձրացնես մսի գինը, եթե ձեռքիցդ գա, և կոպեկի վրա մի ռուբլի կշորթես»։ Բարկացավ։ Որովհետև ի՞նչ է վերջապես առաքինությունը, պատասխանի՛ր ինձ խնդրեմ, Ալեքսեյ։ Առաքինությունը ինձ համար մի բան է, չինացու համար՝ ուրիշ բան, ուրեմն հարաբերական է դա։ Կամ էլ գուցե ո՞չ։ Հարաբերական չէ՞։ Փշոտ հարց է։ Ես ծիծաղի, եթե ասեմ, որ երկու գիշեր չեմ քնել դրա երեսից։ Ես հիմա զարմանում եմ միայն, թե ինչպե՞ս մարդիկ ապրում են աշխարհում և ոչինչ չեն մտածում դրա մասին։ Ունայնությո՞ւն։ Իվանը աստված չունի։ Գաղափար ունի։ Իմ սահմաններից դուրս է։ Բայց լռում է Իվանը։ Կարծում եմ՝ մասոն է նա։ Հարցրի իրեն՝ լռում է։ Միայն մի անգամ մի խոսք ասաց։

— Ի՞նչ ասաց,— իսկույն վրա բերեց Ալյոշան։

— Ես նրան հարցրի՝ ուրեմն ամեն ինչ թույլատրելի՞ է, եթե այդպես է։ Խժռոտվեց։ «Ֆյոդոր Պավլովիչը,— ասաց,— մեր հայրիկը, խոճկորի մեկն էր, բայց ճիշտ էր մտածում»։ Ահա՛ թե ինչ բարբառեց, խնդրե՛մ։ Այդ էր ամբողջ ասածը։ Սա արդեն Ռակիտինին էլ կոխեց-անցավ։

— Այո,— հաստատեց Ալյոշան դառնորեն— Ե՞րբ եկավ նա քեզ մոտ։

— Դրա մասին՝ հետո, հիմա ուրիշ բան եմ ասում։ Իվանի մասին գրեթե ոչինչ չեմ ասել քեզ մինչև հիմա։ Հետաձգում էի մինչև վերջին րոպեն։ Երբ իմ այս պատմությունը վերջանա այստեղ և դատավճիռը հայտնեն, այն ժամանակ մի որոշ բան կասեմ քեզ, ամեն ինչ կասեմ։ Մի ահավոր խնդիր կա... Եվ դու իմ դատավորը կլինես այդ խնդրում։ Իսկ հիմա մի՛ էլ սկսիր դրա մասին, հիմա՝ սո՛ւս։ Այ դու ասում ես վաղվա մասին, դատի մասին, բայց կհավատա՞ս, ես ոչինչ չգիտեմ։

— Այդ դատապաշտպանի հետ խոսե՞լ ես։

— Դատապաշտպա՞նն ինչ։ Ամեն ինչ ասացի նրան։ Նուրբ սրիկայի մեկն է, մայրաքաղաքի սրիկա։ Թեռնա՞ր։ Բայց չի հավատում ինձ, կոպեկի տեղ չի դնում իմ ասածը։ Հավատում է, որ ես եմ սպանել, երևակայիր։ Տեսնում եմ, չէ՞։ «Այդ դեպքում ինչո՞ւ եք եկել ինձ պաշտպանելու»,— հարցրի։ Թքե՛լ եմ նրանց վրա։ Բժիշկ էլ են հրավիրել, ուզում են ինձ խելագար հանել։ Ջե՞մ Թողնի։ Կատերինա Իվանովնան ուզում է մինչև վերջ կատարել «իր պարտքը»։ Ստիպո՞ւմ է ինքն իրեն,— դառը ժպտաց Միտյան— Կատու է, կատո՛ւ։ Դաժան սիրտ։ Գիտե՞, որ ես Մոկրոուսում իր մասին ասել եմ՝ «մեծ ցասում ունեցող» կին է։ Հասցրել են ականջը։ Այո՛, ցուցմունքները շատացել են ծովի ավազի չափ։ Գրիգորին կանգնել է իր ասածի վրա։ Գրիգորին ազնիվ է, բայց հիմար։ Շատ կան այնպիսի մարդիկ, որ ազնիվ են, որովհետև հիմար են։ Ռակիտինի միտքն է դա։ Գրիգորին թշնամի է ինձ։ Իսկ ոմանք էլ կան, որ ավելի լավ է

Թշնամի լինեն, քան բարեկամ։ Կատերինա Իվանովնայի մասին եմ ասում։ Վախենում եմ, օ՜, վախենում եմ, որ դատարանում հանկարծ պատմի, թե ինչպես մինչև գետին խոնարհվեց այն չորսուկես հազարից հետո։ Ամե՜ն ինչի տեղը կհանի, պարտքի տակ չի մնա։ Չե՛մ ուզում նրա զոհողությունը։ Ամոթա՜նք կտան ինձ դատարանում։ Ինչպե՞ս հանդուրժեմ։ Գնա՛ մոտը, Ալյոշա, խնդրիր, որ չասի այդ բանը դատի ժամանակ։ Ինչ է, չի՞ կարելի։ Դե լա՜վ, հերն էլ անիծած, միևնույն է, կհանդուրժեմ։ Իսկ նրան չեմ խղճում։ Ինքն է ուզում այդպես։ Կրակ բռնողը ձեռքը կայրի։ Ես իմ ասածը կասեմ, Ալեքսեյ,— նա նորից դառը ժպտաց.— Միայն թե... Միայն թե Գրուշան, Գրո՜ւշան, ասուված իմ։ Նա՞ ինչի համար այսպիսի տանջանք է կրում հիմա,— բացականչեց նա հանկարծ, և աչքերը լցվեցին։— Սպանո՞ւմ է ինձ Գրուշան, նրա մասին մտածելն իսկ սպանում է ինձ, սպանո՞ւմ։ Այսօր եկել էր...

— Պատմեց ինձ։ Այսօր նա շատ էր վշտացել քեզնից։

— Գիտեմ։ Գրո՜զը տանի իմ բնավորությունը։ Խանդեցի։ Հետո էլ երբ գնում էր՝ զղջացի, համբուրեցի նրան։ Ներողություն չխնդրեցի։

— Ինչո՞ւ չխնդրեցիր,— բացականչեց Ալյոշան։

Միտյան համարյա զվարթորեն ծիծաղեց հանկարծ։

— Սիրելի՜ մանչուկս, աստվա՛ծ չանի, որ երբևիցե քո հանցանքի համար ներողություն խնդրես քո սիրած կնոջից։ Մանավանդ սիրա՛ծ կնոջից, մանավա՜նդ, որքան էլ մեղավոր լինես նրա առաջ։ Որովհետև կինը... է՛հ, սատանան գիտե, թե ինչ բան է կինը, եղբայր իմ. ինչ էլ լինի, գոնե կի՜ն արարածից մի բան հասկանում եմ։ Դե փորձիր խոստովանել մեղքդ նրան, ասա «մեղավոր եմ, կներես, ներողություն եմ խնդրում», և տեղնուտեղը հանդիմանությունների կարկուտը կթափվի գլխիդ։ Ոչ մի դեպքում ուղղակի և պարզապես չի ների. կստորացնի քեզ, քրքի կտոր կդարձնի, չեղած մեղքն էլ վզիդ կգցի, ամե՜ն ինչ մեջտեղ կհանի, ոչինչ չի մոռանա, իր կողմից էլ մի բան կավելացնի և հետո՜ միայն կների քեզ։ Եվ սա դեռ նրանցից լավագույնն էլ կանի, լավագո՜ւյնը։ Ամենավերջին մանրուքները կքերի հատակից և գլխիդ կթափի, այո. և ասում քեզ, այնպե՞ս են քերթում նրանք մարդու կաշին, նրանց բնությա՜ն մեջ է այդ հատկությունը, բոլորի մեջ, առանց բացառության, բոլո՜ր այդ հրեշտակների մեջ, առանց որոնց մենք չե՜նք էլ կարող ապրել։

Գիտե՞ս ինչ, սիրելիս, անկեղծորեն ու պարզ ասեմ քեզ՝ ամեն մի պարկեշտ մարդ գոնե մի որևէ կնոջ կրունկի տակ պետք է լինի։ Այս է իմ համոզմունքը. ոչ թե համոզմունքը, այլ զգացմունքը։ Տղամարդը պետք է վեհանձն լինի, և դա չի արատավորի տղամարդուն։ Հերոսին անգամ չի արատավորի, Կեսարին էլ չի արատավորի։ Բայց դե այնուամենայնիվ ներողություն մի՛ խնդրիր, երբեք, ոչ մի դեպքում։ Հիշի՛ր այս օրենքը, որ եղբայրդ է ավանդում քեզ, կանանց երեսից կործանված Միտյան։ Չէ՜, ավելի լավ է առանց ներողություն խնդրելու արժանի լինեմ Գրուշենկային մի որևէ բանով։ Պաշտո՜ւմ եմ նրան, Ալեքսեյ, պաշտո՜ւմ եմ։ Միայն թե նա չի տեսնում, չէ՜, որքան էլ սիրեմ՝ քիչ է նրա համար։ Եվ տանջում է ինձ, իր սիրով է տանջում։ Առաջ ի՞նչ էր որ։ Առաջ մարմնի դժոխային կորագծերն էին միայն տանջում ինձ, իսկ հիմա նրա ամբողջ հոգին եմ առել իմ հոգու մեջ և նրա շնորհիվ ի՞նքս եմ մարդ դարձել։ Կպսակե՞ն մեզ։ Առանց դրան կմեռնեմ խանդից։ Ամեն օր էլ ուղղակի մի որևէ բան տեսնում եմ երազիս մեջ... Ի՞նչ ասաց իմ մասին։

Ալյոշան կրկնեց այն բոլորը, որ Գրուշենկան ասել էր այսօր։ Միտյան ամեն մի մանրամասնություն լսեց ուշադրությամբ, շատ բան վերստին հարցրեց ու գոհ մնաց։

— Ուրեմն չի՞ բարկանում, որ խանդում եմ,— բացականչեց նա։— Իսկական կին է ուղղակի, կի՜ն։ «Ես ինքս էլ դաժան սիրտ ունեմ»։ Ո՜ւխ, սիրում եմ այսպիսիներին, այսպիսի դաժան սիրտ ունեցողներին, թեև չեմ կարող հանդուրժել, երբ ինձ խանդում են, չե՛մ կարող հանդուրժել։ Պիտի կռվենք։ Բայց պիտի սիրեմ, անսահմա՜նորեն պիտի սիրեմ նրան։ Կպսակե՞ն մեզ արդյոք։ Կալանավորներին պսակո՞ւմ են թե չէ։ Այս է հարցը։ Առանց նրան ես չեմ կարող ապրել....

Միտյան խոժոռված դեմքով սկսեց քայլել սենյակում։ Համարյա մութ էր արդեն։ Նա հանկարծ սոսկալի մտահոգ դարձավ։

— Ուրեմն գաղտնիք կա ասում է, հա՞, գաղտնի՞ք։ Իբր թե մենք երեքով դավադրությո՜ւն ենք անում նրա դեմ, և իբր թե «Կատյան» էլ մատ ունի մեջը, հա՞։ Չէ՜, Գրուշենկա, չէ՜, ախպերս, այդպես չէ։ Այստեղ արդեն ճիշտ կետին չխփեցիր, քո կանացի հիմարիկ խելքը վրիպե՜ց։ Ալյոշա, սիրելիս, էհ, ինչ ուզում է լինի։ Ասեմ քեզ մեր գաղտնիքը։

Նա չորս կողմը նայեց, արագորեն և ընդհուպ մոտեցավ իր

առաջ կանգնած Ալյոշային և սկսեց խորհրդավոր մի արտա-
հայտությամբ փսփսալ նրան, թեև փաստորեն ոչ ոք չէր կարող
լսել նրանց խոսածը. ծերունի հսկիչը մրափում էր անկյունում,
նստարանի վրա, իսկ պահակ զինվորների ականջին ոչ մի բառ
չէր կարող հասնել։

— Մեր ամբողջ գաղտնիքը պարզեմ քեզ,— փսփսաց Միտ-
յան աճապարանքով։— Ուզում էի ավելի ուշ հայտնել, որով-
հետև կարո՞ղ եմ ես մի որևէ բան վճռել առանց քեզ։ Դու ամեն
ինչ ես ինձ համար։ Թեև ասում եմ, որ Իվանը ավելի բարձր է
մեզնից, բայց դու իմ հրեշտակն ես։ Միայն քո՛ որոշումն է
վճռելու ամեն ինչ։ Դուցե հենց դո՛ւ ես բարձր մարդը, և ոչ թե
Իվանը։ Հասկանո՞ւմ ես, խղճի հարց է այստեղ, գերագույն
խղճի հարց. այնքա՞ն կարևոր գաղտնիք է, որ ես ինքս չեմ կա-
րող գլուխ հանել և անընդհատ հետաձգում էի, որ ժամանակը
հասնի և ասեմ քեզ։ Բայց դեռ այնուամենայնիվ շուտ է որո-
շելու համար, որովհետև պետք է սպասել դատավճռին. երբ դա-
տավճիռը տան, այն ժամանակ դու կորոշես իմ բախտը։ Հիմա
մի՛ որոշիր։ Հիմա ես քեզ կասեմ, դու էլ կլսես, բայց մի՛ որո-
շիր։ Կանգնիր ու լուռ մնա։ Ամեն ինչ չեմ հայտնի քեզ։ Միայն
հիմնական միտքը կասեմ, առանց մանրամասնությունների,
իսկ դու լուռ լսիր։ Ոչ մի հարց, ոչ մի շարժում, համաձա՞յն ես։
Բայց ասուված իմ, աչքե՞րդ ինչ անեմ հապա։ Վախենում եմ,
որ աչքերդ ասեն քո որոշումը, թեկուզ և լուռ մնաս։ Օ՜, վա-
խենում եմ։ Ալյոշա, լսի՛ր։ Իվանն ինձ առաջարկում է փախչել։
Մանրամասնությունները չեմ ասում. ամեն ինչ նախատեսված
է, ամեն ինչ կարելի է կարգադրել։ Լռիր, մի՛ որոշիր։ Գրուշայի
հետ՝ Ամերիկա։ Առանց Գրուշայի չեմ կարող ապրել, հասկա-
նո՞ւմ ես։ Իսկ եթե նրան չթողնե՞ն որ գա ինձ մոտ՝ Սիբիր։ Կա-
լանավորներին պսակո՞ւմ են արդյոք։ Իվանն ասում է՝ ոչ։ Իսկ
առանց Գրուշայի ի՞նչ անեմ այնտեղ գետնի տակ, մուրճը ձեռ-
քիս, հա՞։ Պարզապես գլո՛ւխս կջարդեմ այդ մուրճով։ Բայց
մյուս կողմից՝ խի՞ղճը հապա։ Չէ որ տառապանքից եմ փա-
խած լինում։ Նշան եղավ ինձ՝ մերժում եմ նշանը. քավության
ուղին ցույց տրվեց՝ ուղղակի «հետ դարձ» եմ անում։ Իվանն
ասում է, որ Ամերիկայում, «եթե լավ հակումներ ունենաս»,
ավելի շատ օգուտ կբերես, քան գետնի տակ։ Է լա՛վ, բայց մեր
ընդերկրային օրհներգությունն ուր մնաց։ Ամերիկա՞ն ինչ է,
Ամերիկան էլ ունայնություն է նորից։ Եվ կարծում եմ, Ամե-

ռիկայում էլ խարդախություն շատ կա։ Խաչելությունի՞ց եմ
փախած լինում։ Քեզ եմ ասում, Ալեքսեյ, որովհետև միայն դու
կարող ես հասկանալ, ուրիշ ոչ ոք։ Ուրիշների համար հիմարու-
թյուն է, զառանցանք է այն ամբողջը, որ քեզ ասացի օրհներ-
գության մասին։ Կասեն՝ խելագարվել է կամ էլ հիմար է։ Բայց
ես չեմ խելագարվել, հիմար էլ չեմ։ Իվանն էլ հասկանում է
օրհներգությունը, օ՜խ, հասկանում է, բայց չի պատասխանում
դրան, լռում է։ Չի հավատում օրհներգության։ Մի՛ խոսիր, մի՛
խոսիր, տեսնո՞ւմ եմ ինչպես ես նայում. որոշել ես արդեն։ Մի՛
որոշիր, խնայիր ինձ, ես չե՞մ կարող ապրել առանց Գրուշայի,
սպասիր դատին։

Միտյան վերջացրեց մոլեգնահարի նման։ Երկու ձեռքով
բռնել էր Ալյոշայի ուսերից և իր տոչորուն, տենդագին հայաց-
քը ուղղակի բևեռել էր նրա աչքերի մեջ։

— Կալանավորներին պսակո՞ւմ են արդյոք,— կրկնեց նա
երրորդ անգամ, աղաչական ձայնով։

Ալյոշան ծայրահեղ զարմանքով էր լսում և խորապես
ցնցվել էր։

— Դու ինձ մի բան ասա,— հարցրեց նա,— Իվանը շա՞տ
է պնդում, և ո՞վ առաջին անգամ հղացավ այդ միտքը։

— Նա, նա՛ հղացավ, նա՛ է պնդում։ Երբեք չէր գալիս ինձ
մոտ և հանկարծ մի շաբաթ առաջ եկավ, ուղղակի դրանից
սկսվեց։ Սոսկալի պնդում է։ Չի խնդրում, հրամայում է ուղ-
ղակի։ Վստահ է, որ կհնազանդվեմ, թեև նրան էլ պարզեցի իմ
ամբողջ սիրտը և օրհներգության մասին խոսեցի, ինչպես հիմա
քո առաջ։ Պատմեց, թե ինչպես է կարգադրելու, բոլոր տեղե-
կությունները հավաքել է. բայց դրա մասին՝ հետո։ Խելահեղորեն
ուզում է։ Փողն է գլխավոր խնդիրը. քեզ տասը հազար ռուբլի
փախուստի համար, ասում է, քսան հազար էլ Ամերիկա գնա-
լու, իսկ տասը հազարով, ասում է, հոյակապ մի փախուստ
կկազմակերպենք։

— Եվ պատվիրեց, որ ոչ մի դեպքում չասե՞ս ինձ,— հարց-
րեց նորից Ալյոշան։

— Ոչ մի դեպքում, ոչ ոքի, մանավանդ քեզ. քեզ՝ բնա՜վ
երբեք։ Պարզ է, վախենում է, որ դու խղճի նման կկանգնես իմ
առաջ։ Մի՛ ասա նրան, որ հայտնել եմ քեզ։ Չլինի՛, որ ասես,
չէ՞։

— Իրավունք ունես,— եզրակացրեց Ալյոշան,— դատավճռից

առաջ անկարելի է մի բան որոշել։ Դատից հետո ինքդ կորոշես. այդ ժամանակ դու մի նոր մարդ կգտնես քո մեջ, և նա էլ կորոշի։

— Մի նոր մարդ կամ մի Բեռնար, որ բեռնարյա՛ն ձևով էլ կորոշի։ Որովհետև, ինձ թվում է, ես ինքս էլ անարդ մի Բեռնար եմ,— ասաց Միտյան դառն քմծիծաղով։

— Բայց մի՞թե, մի՞թե բոլորովին հույս չունես արդարանալու, եղբայր։

Միտյան ղողանջորեն վեր քաշեց ուսերը և գլուխը շարժեց բացասական։

— Ալյոշա, ժամանակն է, որ գնաս, անուշս,— ասաց նա հանկարծ անապարանքով։— Վերակացուն ահա սկսեց գոռալ բակում, շուտով այստեղ կգա։ Ուշ մնացինք, անկարգություն է։ Գրկիր ինձ, շո՛ւտ, համբուրիր, խաչակնքիր ինձ, անուշս, խաչակնքիր ինձ՝ վաղվա իմ կրելիք խաչի համար...

Գրկվեցին ու համբուրվեցին։

— Իսկ Իվանը, Իվա՛նը,— ասաց հանկարծ Միտյան,— փախչել առաջարկեց ինձ, բայց ինքը հավատո՞ւմ է, որ ես եմ սպանել։

Մի տխուր քմծիծաղ երևաց նրա շրթներին։

— Իսկ դու հարցրի՞ր նրան, թե հավատում է կամ ոչ,— հարցրեց Ալյոշան։

— Չէ, չհարցրի։ Ուզում էի հարցնել, բայց չկարողացա, քաջություն չունեցա։ Բայց միևնույն է, ես նրա աչքերից եմ տեսնում, չէ՞։ Դե լավ, ցտեսությո՛ւն։

Շտապ համբուրվեցին նորից, և Ալյոշան արդեն դուրս էր գալիս, երբ հանկարծ Միտյան ետ կանչեց նրան։

— Կանգնի՛ր իմ առաջ, ահա այսպես։

Եվ նա նորից երկու ձեռքով ամուր բռնեց Ալյոշայի ուսերից։ Դեմքը հանկարծ կատարելապես գունատվեց, այնպես որ համարյա մութ սենյակում անգամ դա սոսկալիորեն նկատելի դարձավ։ Շրթները ծռվեցին, հայացքը բեռվեց Ալյոշայի աչքերի մեջ։

— Ալյո՛շա, ասա՛ ինձ ամբողջ ճշմարտությունը, ինչպես պիտի ասեիր աստծո առաջ. հավատո՞ւմ ես, որ ես եմ սպանել, թե չես հավատում։ Դու ի՞նքդ քո մեջ, դո՛ւ, անձնապես՝ հավատո՞ւմ ես, թե չէ։ Բացարձակ ճշմարտությունն ասա, մի՛ ստիր,— գոռաց նա մոլեգնորեն։

Ալյոշան կարծես օրորվեց ամբողջ մարմնով և զգաց, որ կարծես մի սուր բան ծակեց իր սիրտը։

— Դե լա՛վ, ինչ ես ասում...— թոթովեց նա իրեն կորցրած։

— Ամբո՛ղջ ճշմարտությունը, ամբո՛ղջ, մի՛ ստիր,— կրկնեց Միտյան։

— Ոչ մի րոպե չեմ հավատացել, որ դու մարդասպան ես,— Ալյոշայի դողացող ձայնը պոկվեց հանկարծ կրծքի խորքից, և նա իր աջ ձեռքը վեր բարձրացրեց, կարծես ասածուն վկա կանչելով իր խոսքերի համար։

Միտյայի ամբողջ դեմքը վայրկենապես պայծառացավ երանությամբ։

— Շնորհակա՛լ եմ,— ասաց նա դանդաղորեն, կարծես նվաղումից հետո մի հառաչանք արձակելով։— Հիմա արդեն կյանք տվիր ինձ... Կհավատա՞ս, մինչև հիմա վախենում էի հարցնել քեզ, քե՞զ նույնիսկ, քե՞զ։ Դե գնա, գնա՛։ Ուժ տվիր ինձ վաղվա համար, ասվա՞ծ քեզ օրհնի։ Դե լավ, գնա՛, սիրիր Իվանին,— ասաց հանկարծ Միտյան, և այդ եղավ իր վերջին խոսքը։

Ալյոշան դուրս եկավ արտասվալից աչքերով։ Միտյայի այդ աստիճան կասկածամտությունը, նրա այդ աստիճան անվստահությունը նույնիսկ իր՝ Ալյոշայի նկատմամբ, այդ ամբողջը հանկարծ Ալյոշայի առաջ անհույս վշտի ու վհատության մի անդունդ բացեց իր դժբախտ եղբոր հոգում, այնպիսի մի անդունդ, որ իր մտքով անգամ չէր անցել մինչև հիմա։ Խորունկ, անհուն մի կարեկցանք համակեց ու տանջեց Ալյոշային վայրկենապես։ Նրա խոցված սիրտը սարսափելի ցավում էր։ «Սիրի՛ր Իվանին»,— հիշեց հանկարծ Միտյայի ասածը։ Եվ նա հենց գնում էր Իվանի մոտ։ Դեռ առավոտից սոսկալի կարիք էր զգում Իվանին տեսնելու։ Իվանի վիճակը նրան նույնքան տանջում էր, որքան Միտյայինը, իսկ հիմա, եղբոր հետ տեսակցությունից հետո, Իվանը իրեն մտահոգում էր ավելի քան երբեք։

V

ԴՈՒ ՔԵՐԵ, ԴՈՒ ՔԵՐԵ

Իվանի մոտ գնալու համար պետք է անցներ այն տան մոտով, ուր ապրում էր Կատերինա Իվանովնան։ Պատուհանների մեջ լույս կար։ Նա հանկարծ կանգ առավ ու որոշեց ներս մտնել։

Արդեն ավելի քան մի շաբաթ չէր տեսել Կատերինա Իվանովնային։ Բայց հիմա հանկարծ մտածեց, որ Իվանը կարող է նրա մոտ լինել այդ րոպեին, մանավանդ որ ճակատագրական օրվա նախօրյակն էր։ Ջանգը տվեց, և երբ բարձրանում էր սանդուղքով, որ չինական լապտերի աղոտ լույսով էր լուսավորված, վերևից իջնող մի մարդ տեսավ, իսկ երբ իրար մոտեցան, ճանաչեց մարդուն. իր եղբայրն էր։ Ուրեմն նա արդեն հրաժեշտ էր տվել Կատերինա Իվանովնային ու դուրս էր գալիս։

— Ախ, դու ես պարզապես,— ասաց Իվան Ֆյոդորովիչը չոր շեշտով։— Է՛հ, ցտեսություն։ Նրա մո՞տ ես գնում։

— Այո։

— Խորհուրդ չեմ տա. «հուզված» է նա, իսկ դու ավելի ևս կփչացնես տրամադրությունը։

— Ո՞չ, ո՞չ,— գոռաց հանկարծ մի ձայն վերևից՝ վայրկենապես բացված դռնից։— Ալեքսեյ Ֆյոդորովիչ, նրա մոտի՞ց եք գալիս։

— Այո, նրա մոտ էի։

— Պատվիրեց մի որևէ բա՞ն ասել ինձ։ Եկեք, Ալյոշա, և դուք էլ, Իվան Ֆյոդորովիչ, անպայման, անպայմա՛ն վերադարձեք։ Էլ-սո՞ւմ եք։

Կատյայի ձայնի մեջ այնպիսի մի հրամայական շեշտ հնչեց, որ Իվան Ֆյոդորովիչը, մի վայրկյան տատանվելուց հետո, այնուամենայնիվ որոշեց նորից վերև բարձրանալ Ալյոշայի հետ։

— Ականջ էր դնում,— ջղայնորեն փսփսաց նա քթի տակ, բայց Ալյոշան պարզ լսեց։

— Թույլ տվեք՝ վերարկուս չհանել,— ասաց Իվան Ֆյոդորովիչը, հյուրասենյակ մտնելով։— Չեմ էլ նստի։ Մի րոպեից ավելի չեմ մնալու։

— Նստեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— ասաց Կատերինա Իվանովնան, ինքը ոտքի մնալով։ Նա քիչ էր փոխվել այս երկու ամսվա ընթացքում, բայց նրա մուգ աչքերի մեջ չարագուշակ մի փայլ կար։ Ալյոշան հետագայում հիշեց, որ այդ րոպեին նա չափազանց սիրուն էր թվացել իրեն։

— Իսկ ի՞նչ պատվիրեց, որ ասեք ինձ։

— Միայն մի բան,— ասաց Ալյոշան, ուղիղ նրա երեսին նայելով,— որ դուք խնայեք ձեզ և դատարանում ոչինչ չասեք այն մասին...— նա մի քիչ կմկմաց,— այն մասին, ինչ որ եղել է ձեր միջև... ձեր առաջին ծանոթության ժամանակ... այն քաղաքում։

— Հա՛, այն, որ ես մինչև գետին խոնարհվեցի՞ այդ փողի համար,— վրա բերեց Կատյան, դառն ծիծաղելով։— Ինչ է, նա ի՞նչ համար է վախենում, թե ինձ համար, հա՞։ Ասում է, որ եկ խնայեմ... բայց ո՞ւմ։ Նրա՞ն, թե ինքս ինձ։ Ասացե՛ք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

Ալյոշան ուշադիր նայում էր, ջանալով հասկանալ նրանց։

— Ե՛վ ձեզ, և՛ նրան,— ասաց նա մեղմորեն։

— Հենց այդ է,— մի տեսակ չարախնդորեն վրա տվեց Կատյան ու հանկարծ կարմրեց։— Դուք դեռ չգիտեք ինձ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— ասաց նա սպառնագին,— և ես էլ դեռ չգիտեմ ինքս ինձ։ Գուցե վաղվա հարցաքննությունից հետո ուզենաք ինձ տրորել ձեր ոտքերի տակ։

— Դուք ազնվորեն վկայություն կտաք,— ասաց Ալյոշան,— այդ է պետք միայն։

— Կինը հաճախ անազնիվ է լինում,— կրճտացրեց Կատյան։— Դեռ մի ժամ առաջ մտածում էի, թե ինձ համար սարսափելի է ձեռք տալ այդ հրեշին... ասես իժ լինի... բայց չէ, նա դեռ մա՛րդ է ինձ համար։ Բայց սպանե՞լ է որ նա։ Նա՞ է սպանել արդյոք,— բացականչեց նա հանկարծ հիստերիկ ձայնով, արագորեն դառնալով Իվան Ֆյոդորովիչին։ Ալյոշան վայրկենապես հասկացավ, որ այդ նույն հարցը նա մինչև այդ տվել էր արդեն Իվան Ֆյոդորովիչին, գուցե իր գալուց ընդամենը մեկ րոպե առաջ, և ոչ թե առաջին, այլ հարյուրերորդ անգամ, և որ նրանք ի վերջո ընդհարվել էին։

— Ես տեսա Սմերդյակովին... Դու, դո՛ւ համոզեցիր ինձ, որ նա հայրասպան է։ Ես միայն քե՛զ հավատացի,— շարունակեց Կատյան, դիմելով Իվան Ֆյոդորովիչին։ Վերջինս բռնաբռսիկ ժպտաց։ Ալյոշան ցնցվեց, լսելով այդ «դու»-ն։ Նրա մտքով էլ չէր անցել, որ այդպիսի փոխհարաբերություններ կան նրանց միջև։

— Դե լավ, բավական է համենայն դեպս,— կարճ կտրեց Իվանը։— Գնում եմ։ Վաղը կգամ։— Եվ իսկույն դարձավ, դուրս եկավ սենյակից, ուղղակի գնաց դեպի սանդուղքը։

Կատերինա Իվանովնան հանկարծ տիրական մի շարժումով բռնեց Ալյոշայի երկու ձեռքերը։

— Գնացե՛ք նրա հետևից։ Հասե՛ք նրան։ Ոչ մի րոպե առանձնացմա՛ Թողնեք,— արագ-արագ շշնջաց նա։— Խելագար է։ Գիտե՞ք, որ խելագարվել է։ Տենդ ունի, ջղային տե՛նդ։ Բժիշկն

ինձ ասաց։ Գնացեք, վազեցե՛ք նրա ետևից...

Ալյոշան վեր թռավ ու խոյացավ Իվան Ֆյոդորովիչի ետևից, որ դեռ հազիվ հիսուն քայլ էր հեռացել։

— Ի՞նչ ես ուզում,— հանկարծ Իվան Ֆյոդորովիչը դարձավ Ալյոշային, տեսնելով, որ նա շտապում է հասնել իրեն։— Պատվիրեց, որ իմ ետևից վազես, որովհետև խելագար եմ։ Անգիր գիտեմ,— ավելացրեց նա ջղայնորեն։

— Դա սխալվում է իմարկե, բայց ճիշտ է ասում, որ հիվանդ ես,— ասաց Ալյոշան։— Ես հիմա այնտեղ քո դեմքին էի նայում։ Երևում է դեմքիցդ, որ շատ հիվանդ ես, Իվան, շա՛տ։

Իվանը քայլում էր առանց կանգ առնելու։ Ալյոշան էլ նրա ետևից։

— Իսկ դու գիտե՞ս, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, թե ինչպես են խելագարվում,— հարցրեց Իվանը հանկարծ բոլորովին մեղմ ձայնով, առանց որևէ ջղայնության, և նրա ձայնի մեջ ամենապարզամիտ հետաքրքրությունն զգացվեց մեկեն։

— Ոչ, չգիտեմ։ Ենթադրում եմ, որ խելագարության շատ այլազան տեսակներ կան։

— Իսկ մարդ կարո՞ղ է իր սեփական աչքով դիտել, որ խելագարվում է ինքը։

— Կարծում եմ, որ այդպիսի դեպքում մարդ չի կարող հստակորեն հետևել ինքն իրեն,— պատասխանեց Ալյոշան զգուշությամբ։

Իվանը մի կես րոպե լուռ մնաց։

— Եթե ուզում ես մի որևէ բանի մասին խոսել ինձ հետ, փոխի՛ր նյութը, խնդրում եմ,— ասաց նա հանկարծ։

— Հա, չմոռանամ, մի նամակ պետք է հանձնեմ քեզ,— ասաց Ալյոշան ամոթխածորեն և Լիզայի նամակը հանեց գրպանից, երկարեց նրան։ Հենց այդ րոպեին էլ նրանք մոտեցել էին լապտերասյանը։ Իվանն անմիջապես ձեռագիրը ճանաչեց։

— Ա՜, այդ դևի ձագն է ուղարկել,— ծիծաղեց նա չարախնդորեն ու հանկարծ, առանց ծրարը բացելու, կտոր-կտոր պատառոտեց նամակը և օդ նետեց։ Քամին թռցրեց ծվենները։

— Կարծեմ դեռ տասնվեց տարեկան էլ չկա, և արդեն առաջարկո՞ւմ է ինքն իրեն,— ասաց նա արհամարհանքով և շարունակեց քայլել փողոցն ի վար։

— Ինչպե՞ս թե առաջարկում է ինքն իրեն,— բացականչեց Ալյոշան։

— Գարշ է, ինչպես անառակ կանայք են առաջարկում։

— Ի՞նչ ես ասում, Իվան, ի՞նչ ես ասում,— գոչեց Ալյոշան վշտագին, ջերմորեն պաշտպանելով աղջկան։— Երեխա է նա, դու երեխայի՞ն ես վիրավորում։ Հիվանդ է աղջիկը, նա էլ շատ հիվանդ է, նա էլ գուցե խելագարվում է... Ես չէի կարող շհանձնել քեզ նրա նամակը... Ընդհակառակը, ուզում էի մի որևէ բան լսել քեզնից... որ փրկվի նա...

— Ինձնից ոչինչ էլ չես լսի։ Եթե երեխա է, ես նրա դայակը չեմ։ Լռի՛ր, Ալեքսեյ։ Մի՛ շարունակիր։ Ես դրա մասին չեմ էլ մտածում։

Նորից մի րոպե լուռ մնացին։

— Հիմա նա ամբողջ գիշերը պիտի աղոթի, որպեսզի մայր աստվածածինը ցույց տա, թե վաղը ինչպե՞ս վարվի դատարանում,— հանկարծ խոսեց նա նորից, կտրուկ ու զայրալից շեշտով։

— Դու... դու Կատերինա Իվանովնայի՞ մասին ես ասում։

— Այո։ Որպես Միտյայի փրկի՞չը հանգես գա, թե՞ կործանի նրան։ Գիտի աղոթի, որ վերևից մի լույս ծագի իր հոգում։ Ինքը դեռ չգիտի՞, հասկանո՞ւմ եք, դեռ չի՞ կարողացել մի որոշման գալ։ Սա էլ ինձ դայակի տեղ է դնում, ուզում է՝ օրո՞ր ասեմ իրեն։

— Կատերինա Իվանովնան սիրում է քեզ, եղբայր,— ասաց Ալյոշան տրտմորեն։

— Գուցե։ Միայն թե ես աչք չունեմ վրան։

— Տառապում է նա։ Իսկ ինչո՞ւ դու երբեմն... նրան ասում ես... այնպիսի խոսքեր, որ հույս են տալիս նրան,— շարունակեց Ալյոշան երկչոտ հանդիմանությամբ։— Գիտեմ, չէ՞, դու նրան հուսադրել ես, ներիր, որ այսպես եմ ասում,— ավելացրեց նա։

— Ջե՛մ կարող հիմա այնպես վարվել, ինչպես պետք է, այսինքն խզել կապերս և ուղղակի ասել նրան,— պատասխանեց Իվանը ջղայնորեն։— Պետք է սպասեմ, մինչև դատավճիռը հայտնեն մարդասպանին։ Եթե ես հիմա խզեմ կապերս, ինձնից վրեժ լուծելու համար վաղը այդ ստահակին կկործանի դատարանում, որովհետև ատում է նրան և գիտե, որ ատում է։ Կեղծի՛ք է այս ամբողջը, ստի վրա սուտ։ Հիմա երբ դեռ չեմ խզել կապերս, նա շարունակում է հույս ունենալ և չի խորտակի այդ հրեշին, դիտե, թե ես ինչպես եմ ուզում փորձանքից ազատել նրան։ Եվ ե՞րբ է գալու այդ անիծյալ դատավճիռը...

«Մարդասպան» և «հրեշ» բառերը ցավագին արձագանք տվեցին Ալյոշայի սրտում։

— Բայց ինչո՞վ նա կարող է խորտակել մեր եղբորը,— հարցրեց նա, մտածելով Իվանի ասածի վրա։— Ի՞նչ մի վկայություն կարող է բերել, այնպիսի մի վկայություն, որ ուղղակի խորտակեր Միտյային։

— Դու դեռ չգիտես այդ բանը։ Նրա ձեռքին մի փաստաթուղթ կա, հենց Միտյայի ձեռքով գրված մի փաստաթուղթ, որ մաթեմատիկական ճշգրտությամբ ապացուցում է, թե նա է սպանել Ֆյոդոր Պավլովիչին։

— Անկարելի՞ բան է դա,— բացականչեց Ալյոշան։

— Ինչպե՞ս թե անկարելի։ Ինքս եմ կարդացել։

— Այդպիսի փաստաթուղթ չի՞ կարող լինել,— կրկնեց Ալյոշան հոգով-սրտով,— չի՞ կարող լինել, որովհետև նա չէ՞ մարդասպանը։ Նա չէ՞ հայրիկին սպանողը, նա չէ՞։

Իվան Ֆյոդորովիչը հանկարծ կանգ առավ։

— Ո՞վ է ուրեմն մարդասպանը, ձեր կարծիքով,— հարցրեց նա մի տեսակ ակնհայտ սառնությամբ, և նույնիսկ ամբարտավան մի շեշտ հնչեց նրա հարցի մեջ։

— Ինքդ գիտես ով է,— ասաց Ալյոշան մեղմ ու հուզախառով ձայնով։

— Ո՞վ։ Այն ցնդած ապուշի, այն ընկնավորի մասին հեքիա՞թն ես ասում։ Սմերդյակո՞վը։

Ալյոշան հանկարծ զգաց, որ ինքը ամբողջ մարմնով դողում է։

— Ինքդ գիտես ով է,— ասաց նա ակամա, ուժասպառ ձայնով։ Շունչը կտրվում էր։

— Բայց ո՞վ, ո՞վ,— համարյա արդեն կատաղորեն գոռաց Իվանը։ Ամբողջ նրա զսպվածությունը հանկարծ հօդս ցնդեց։

— Ես միայն մի բան գիտեմ,— ասաց Ալյոշան նույն մեղմ ձայնով, համարյա շշնջալով։— Հայրիկին սպանողը դու չես։

— «Դու չե՞ս»։ Ի՞նչ է նշանակում՝ դու չես,— քարացավ Իվանը։

— Դու չես հայրիկին սպանողը, դու չե՞ս,— հաստատորեն կրկնեց Ալյոշան։

Կես րոպե լուռ մնացին։

— Դե ինքս էլ գիտեմ, որ ես չեմ, զառանցո՞ւմ ես,— ասաց Իվանը, գունատ ու այլայլված ժպտալով։ Կարծես աչքերով ուտում էր Ալյոշային։ Երկուսն էլ նորից կանգնել էին լապտերասյան տակ։

— Չէ, Իվան, դու ինքդ մի քանի անգամ ասել ես քեզ, որ դու ես մարդասպանը։

— Ե՞րբ եմ ասել... ես Մոսկվայում էի... Ե՞րբ եմ ասել,— թոթովեց Իվանը, կատարելապես շփոթված։

— Շատ անգամ ասել ես ինքդ քեզ, երբ առանձին ես մնացել այս երկու սարսափելի ամիսների ընթացքում,— շարունակեց Ալյոշան առաջվա նման մեղմ ու հստակ։ Բայց արդեն խոսում էր կարծես իրեն մոռացած, կարծես իր կամքից անկախ, մի անդիմադրելի հրամանի ենթարկվելով։— Դու մեղադրել ես անձդ և խոստովանել ես ինքդ քեզ, որ մարդասպանը դու ես միայն, ուրիշ ոչ ոք։ Բայց դու չե՞ս սպանողը, սխալվում ես, դու չես մարդասպանը, լսո՞ւմ ես ինձ, դու չե՞ս։ Աստված ինձ ուղարկեց, որ ասեմ քեզ այս բանը։

Երկուսն էլ լռեցին։ Մի ամբողջ երկար րոպե տևեց այդ լռությունը։ Երկուսն էլ կանգնել էին և անընդհատ նայում էին իրար աչքերի մեջ։ Երկուսն էլ գունատ էին։ Հանկարծ Իվանն սկսեց դողալ ամբողջ մարմնով և պինդ բռնեց Ալյոշայի ուսը։

— Դու եղել ես իմ սենյակո՞ւմ,— փսփսաց նա ատամները սեղմած։— Դու եղել ես իմ սենյակում գիշերը, երբ նա եկել էր... խոստովանիր... տեսա՞ր նրան, տեսա՞ր։

— Ո՞ւմ մասին ես ասում... Միտյայի՞,— հարցրեց Ալյոշան զարմանքով։

— Չէ՞, նա չէ, գրողի ծո՞ցը այդ հրեշը,— գոռաց Իվանը կատաղորեն։— Ուրեմն ինչ է, գիտե՞ս, որ նա ինձ մոտ է գալիս։ Ինչպե՞ս իմացար, ասա՛։

— Ո՞վ է նա։ Չգիտեմ ում մասին ես խոսում,— թոթովեց Ալյոշան արդեն վախենալով։

— Չէ, գիտես... թե չէ ինչպե՞ս կարող էիր... անկարելի է, որ իմացած չլինես...

Բայց հանկարծ նա մի տեսակ զսպեց իրեն։ Կանգնել էր ու կարծես մտածում էր մի բանի մասին։ Տարօրինակ մի քմծիծաղ ծռմռեց նրա շրթունքները։

— Ներեցեք,— սկսեց նորից Ալյոշան դողահար ձայնով,— ես քեզ այս բանը ասացի, որովհետև դու կհավատաս իմ խոսքին, գիտեմ։ Մի անգամ ընդմիշտ ասում եմ քեզ՝ դու չե՞ս։ Լսո՞ւմ ես, մի անգամ ընդմիշտ։ Եվ ասված էր, որ իմ սիրտը

մղեց ասելու քեզ այս բանը, թեկուզ և դու հենց այս րոպեից սկսես ատել ինձ քո ամբողջ կյանքում։

Բայց Իվան Ֆյոդորովիչն ըստ երևույթին արդեն կատարելապես իշխել էր իրեն։

— Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— ասաց նա սառն քմծիծաղով,— ես տանե՛լ չեմ կարող մարգարեներին ու ընկնավորներին, և մանավանդ աստծո պատգամախոսներին. դուք շատ լավ գիտեք այս բանը։ Այս րոպեից խզում եմ կապերս ձեզ հետ, և կարծեմ ընդմիշտ։ Խնդրում եմ՝ հենց հիմա, այս խաչմերուկի վրա մենակ թողնեք ինձ։ Եվ արդեն ձեր տան ճանապարհն էլ այս կողմնակի փողոցով է։ Հատկապես այսօր չգաք ինձ մոտ, զգուշացե՛ք։ Լսո՞ւմ եք։

Նա դարձավ և ուղիղ գնաց ամուր քայլերով, առանց ետ նայելու։

— Եղբա՛յր,— գոռաց Ալյոշան նրա ետևից,— եթե այսօր մի բան պատահի քեզ, ամենից առաջ ի՞մ մասին մտածիր...

Բայց Իվանը չպատասխանեց։ Ալյոշան կանգնեց խաչմերուկում, լապտերասյան տակ, մինչև Իվանը անհայտացավ խավարի մեջ։ Հետո դարձավ ու կողմնակի փողոցով դանդաղորեն գնաց դեպի իր բնակարանը։ Ե՛վ Ալյոշան, և՛ Իվան Ֆյոդորովիչը վարձով էին ապրում՝ տարբեր բնակարաններում. նրանցից ոչ մեկը չուզեց ապրել Ֆյոդոր Պավլովիչի ամայացած տանը։ Ալյոշան կահավորված սենյակ էր վարձել միջին դասի մի ընտանիքում։ Իսկ Իվան Ֆյոդորովիչը բավական հեռու էր ապրում նրանից, ընդարձակ ու բավական հարմարավետ կցաշենք էր վարձել բավական լավ տան կողքին, որ բարեկեցիկ ու այրի մի կնոջ սեփականությունն էր։ Բայց ամբողջ այդ կցաշենքում նրան սպասարկում էր միայն մի զառամյալ ու խուլ պառավ, որ տառապում էր հոդացավերից, պակում էր երեկոյան ժամը վեցին և առավոտյան ժամը վեցին վեր էր կենում։ Իվան Ֆյոդորովիչն այդ երկու ամսվա ընթացքում տարօրինակորեն սակավապահանջ էր դարձել և շատ էր սիրում կատարելապես առանձին մնալ։ Նույնիսկ ինքն էր մաքրում այն սենյակը, ուր ապրում էր, իսկ իր ձեռքի տակ եղող մյուս սենյակները հազվադեպ էր մտնում։

Հասնելով իր տան դարբասը, ձեռքը տարավ զանգին, բայց մեկեն կանգ առավ։ Զգաց, որ դեռ ոտից գլուխ դողում է զայրույթից։ Հանկարծ թողեց զանգը, թքեց, ետ դարձավ ու արագորեն գնաց դեպի քաղաքի մյուս, հանդիպակաց ծայրը, իր բնակարանից մոտ երկու վերստ հեռու, դեպի այն փոքրիկ, ծուռ, գերանակապ տնակը, ուր ապրում էր Մարյա Կոնդրատևնան՝ Ֆյոդոր Պավլովիչի նախկին հարևանուհին, որ ապուրի համար դալիս էր Ֆյոդոր Պավլովիչի խոհանոցը, և որի մոտ Սմերդյակովն այն ժամանակ իր երգերն էր երգում և կիթառ էր նվագում։ Մարյա Կոնդրատևնան ծախել էր իր նախկին տունը և հիմա իր մոր հետ ապրում էր այս տնակում, որ համարյա խրճիթ էր, իսկ հիվանդ, գրեթե մահամերձ Սմերդյակովը, հենց Ֆյոդոր Պավլովիչի մահից ի վեր, նրանց մոտ էր բնակություն հաստատել։ Եվ ահա Սմերդյակովի մոտ էր գնում հիմա Իվան Ֆյոդորովիչը՝ անակնկալ ու անհաղթահարելի մի մտադրության մղումով։

VI

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԵՐԴՅԱԿՈՎԻ ՀԵՏ

Մոսկվայից վերադառնալուց ի վեր՝ այս արդեն երրորդ անգամն էր, որ Իվան Ֆյոդորովիչը գնում էր խոսելու Սմերդյակովի հետ։ Աղեռից հետո առաջին անգամ նրան տեսել ու խոսել էր հենց իր վերադարձի օրը, այնուհետև մի անգամ ևս այցելել էր երկու շաբաթ անց։ Բայց այդ երկրորդ այցելությունից հետո նա դադարեցրել էր իր տեսակցությունները Սմերդյակովի հետ, այնպես որ հիմա արդեն մի ամսից ավելի էր, որ չէր տեսել նրան և համարյա ոչինչ չէր լսել նրա մասին։

Իվան Ֆյոդորովիչը Մոսկվայից վերադարձել էր իր հոր մահվան հինգերորդ օրը միայն, այնպես որ նրա դագաղն անգամ չէր տեսել. թաղումը տեղի էր ունեցել հենց նախորդ օրը։ Իվան Ֆյոդորովիչի ուշանալու պատճառն այն էր, որ Ալյոշան, որոշակի չիմանալով նրա մոսկովյան հասցեն, հեռագիր ուղարկելու համար դիմել էր Կատերինա Իվանովնային, իսկ վերջինս էլ, նույնպես նրա իսկական հասցեն չիմանալով, հեռագրել էր իր քրոջն ու մորաքրոջը, հույս ունենալով, որ Իվան Ֆյոդորովիչը Մոսկվա հասնելուն պես այցելած կլինի նրանց։ Բայց նա չորրորդ օրը միայն գնաց նրանց մոտ և, կարդալով հեռագիրը, պարզ է, գլխապատառ թռավ-եկավ մեր քաղաքը։ Ամենից առաջ հանդիպեց Ալյոշային, բայց, խոսելով նրա հետ, շատ զարմացավ ,որ նա չի էլ ուզում կասկածել Միտյայի վրա, այլ ուղղակի Սմերդյակովին է մատնացույց անում որպես մարդասպանի, մի բան, որ հակառակ էր մեր քաղաքում տարածված բոլոր մյուս

կարծիքներին։ Տեսակցելով այնուհետև ոստիկանապետի և գատախազի հետ, իմանալով մեղադրանքի և ձերբակալության մանրամասնությունները, ավելի ևս զարմացավ Ալյոշայի վրա և նրա կարծիքը վերագրեց պարզապես ծայր աստիճանի հասած նեղբայրական զգացմանն ու Միտյայի հանդեպ նրա կարեկցանքին, իսկ Իվանը գիտեր, որ Ալյոշան շատ է սիրում Միտյային։ Ի դեպ, Դմիտրի Ֆյոդորովիչի նկատմամբ Իվանի տածած զգացմունքների մասին մեկ-երկու խոսք ասենք մի անգամ ընդմիշտ. ուղղակի չէր սիրում նրան Իվանը, շատ-շատ՝ երբեմն կարեկցանք էր զգում նրա հանդեպ, բայց նույնիսկ այդ կարեկցանքն էլ զզվանքի հասնող արհամարհանքով էր խառնված։ Միտյայի ամբողջ անձը, նույնիսկ նրա ամբողջ արտաքին կերպարանքը ծայր աստիճան հակակրելի էր նրան։ Իվանին վրդովմունք էր պատճառում Կատերինա Իվանովնայի սերը Միտյայի հանդեպ։ Բայց և այնպես, նա իր ժամանման առաջին օրը տեսնվեց նաև ամբաստանյալ Միտյայի հետ, և այդ տեսակցությունը ոչ միայն չխախտեց իր համոզմունքը նրա մեղավոր լինելու նկատմամբ, այլ նույնիսկ ավելի ուժեղացրեց։ Եղբորը գտավ անհանգիստ վիճակում, հիվանդագին հուզմունքի մեջ։ Միտյան շատ էր խոսում, բայց մտացիր էր ու անընդհատ մի բանից անցնում էր մյուսը, շատ խիստ լեզվով էր արտահայտվում, մեղադրում էր Սմերդյակովին և սոսկալի խճճվում էր։ Ամենից ավելի խոսում էր նույն այն երեք հազարի մասին, որ հանգուցյալը «գողացել» էր իրենից։ «Իմ փողն էր, իմն էր այդ փողը,— պնդում էր Միտյան,— եթե նույնիսկ գողանալի, իրավացի կլինեի»։ Համարյա չէր վիճարկում իր դեմ ներկայացված հանցանշանները, և եթե փաստորեն իր օգտին էր մեկնաբանում, ապա դարձյալ խառնաշփոթ ու անհեթեթ ձևով էր անում դա. կարծես առհասարակ չէր էլ ցանկանում որևէ կերպ արդարանալ Իվանի կամ ուրիշ որևէ մեկի առաջ, ընդհակառակը՝ բարկանում էր, հպարտորեն արհամարհում մեղադրանքները, հայհոյում էր ու փրփրում։ Պարզապես արհամարհանքով ծիծաղում էր Գրիգորիի այն վկայության վրա, թե դուռը բաց է եղել, և հավատացնում էր, որ «սատանան է բացել»։ Սակայն այդ փաստի մասին ոչ մի կապակցված բացատրություն չէր կարողանում տալ։ Այդ առաջին տեսակցության ժամանակ նա նույնիսկ հասցրեց վիրավորել Իվան Ֆյոդորովիչին, կտրուկ ասելով նրան, թե իր վրա կասկածելու և հարցաքննելու իրավունք անգամ չունեն այն մարդիկ,

որ իրենք իսկ հայտարարում են, թե «ամեն ինչ թույլատրելի է»։ Եվ ընդհանրապես այդ օրը նա շատ անբարյացակամ էր Իվան Ֆյոդորովիչի նկատմամբ։ Միտյայի հետ այդ տեսակցությունից անմիջապես հետո էր, որ Իվան Ֆյոդորովիչն առաջին անգամ գնաց Սմերդյակովի մոտ։

Դեռ վագոնում, երբ շտապ գալիս էր Մոսկվայից, շարունակ մտածում էր Սմերդյակովի և նրա հետ իր վերջին խոսակցության մասին, որ ունեցել էր մեկնելու նախորդ իրիկունը։ Շատ բան խռովում էր նրան, շատ բան կասկածելի էր թվում։ Բայց երբ իր վկայությունն էր տալիս դատական քննիչին, Իվան Ֆյոդորովիչն առժամապես լռության մատնեց այդ խոսակցությունը։ Ամեն ինչ հետաձգվեց մինչև իր տեսակցությունը Սմերդյակովի հետ, որ այն ժամանակ գտնվում էր քաղաքային հիվանդանոցում։ Դոկտոր Հերցենշտուբեն և բժիշկ Վարվինսկին, որին հանդիպեց նա հիվանդանոցում, Իվան Ֆյոդորովիչի համառ հարցապնդումներին հաստատորեն պատասխանեցին, թե անտարակուսելի է Սմերդյակովի ընկնավորության նոպան, և նույնիսկ զարմանքով ընդունեցին նրա հարցը՝ «Արդյոք ազետի օրը Սմերդյակովը չի՞ կեղծել նոպան»։ Բժիշկները բացատրեցին, որ դա նույնիսկ արտասովոր մի նոպա էր, մի քանի օր շարունակվում էր ու կրկնվում, այնպես որ հիվանդի կյանքը ուղղակի վտանգի տակ էր, և որ միայն հիմա, ձեռք առնված միջոցներից հետո, կարելի է հաստատապես ասել, թե հիվանդը կենդանի կմնա, թեև շատ հնարավոր է (ավելացրեց դոկտոր Հերցենշտուբեն), որ նրա գիտակցությունը մասամբ խանգարված կլինի, «եթե ոչ ամբողջ կյանքում, գոնե բավական երկար ժամանակ»։ Իվան Ֆյոդորովիչի այն անհամբեր հարցին, թե «ուրեմն նա խելագա՞ր է հիմա», պատասխանեցին, որ «դեռ լրիվ իմաստով չկա այդ բանը, բայց նկատվում են որոշ անբնական երևույթներ»։

Իվան Ֆյոդորովիչը որոշեց անձամբ իմանալ, թե ինչ անբնական երևույթներ են դրանք։ Հիվանդանոցում անմիջապես թույլ տվեցին, որ նա տեսակցի հիվանդի հետ։ Սմերդյակովը գտնվում էր առանձին սենյակում և պառկել էր մահճակալին։ Կողքին մի ուրիշ մահճակալ էլ կար, և քաղաքաբնակ մի արհեստավոր էր պառկել այնտեղ, խիստ տկարացած մի հիվանդ, որ ամբողջովին ուռել էր ջրդողությունից և հայտնապես կմահանար վաղը կամ մյուս օր. խոսակցությանը նա չէր կարող խան-

գարել։ Տեսնելով Իվան Ֆյոդորովիչին, Սմերդյակովը կասկածոտ ժպտաց և առաջին վայրկյանին կարծես վախեցավ նույնիսկ։ Գոնե այդպես թվաց Իվան Ֆյոդորովիչին։ Բայց դա մի վայրկյան էր միայն, իսկ դրանից հետո, ընդհակառակը, ամբողջ տեսակցության ընթացքում Սմերդյակովը համարյա շշմեցրեց նրան իր հանդարտությամբ։ Առաջին իսկ հայացքից Իվան Ֆյոդորովիչն անտարակուսելիորեն համոզվեց, որ նա կատարելապես հիվանդ է. շատ թույլ էր, դանդաղ էր խոսում և կարծես դժվարությամբ էր շարժում լեզուն. խիստ նիհարել ու դեղնել էր։ Ամբողջ տեսակցության ընթացքում, քսան րոպե շարունակ, գանգատվում էր գլխացավից և մարմնի բոլոր անդամների մեջ կոտրտուքից։ Նրա ներքինիական չոր դեմքը այնքա՜ն փոքրացել էր կարծես, քունքի մազերը խճճված էին, գլխի նախկին մաղափնջի փոխարեն մի բարալիկ խոպոպ էր միայն տնկվել։ Բայց կկոցված, կարծես մի բան ակնարկող ձախ աչքը մատնում էր, որ նա մնացել է նույն Սմերդյակովը։ «Խելոք մարդու հետ քար կրի, խենթի հետ հաց մի՛ ուտի»,— հիշեց անմիջապես Իվան Ֆյոդորովիչը։ Նստեց նրա ոտքերի կողմը, աթոռակի վրա։ Սմերդյակովը, տառապագին մի շարժումով, մարմնի դիրքը փոխեց անկողնում, բայց ինքը չսկսեց խոսակցությունը, լուռ մնաց, և կարծես թե արդեն նայում էր առանց շատ հետաքրքրություն ցուցաբերելու։

— Կարո՞ղ ես խոսել ինձ հետ,— հարցրեց Իվան Ֆյոդորովիչը,— շատ չեմ հոգնեցնի։

— Իհարկե կարող եմ,— ծամծմեց Սմերդյակովը թույլ ձայնով։— Վաղո՞ւց բարեհաճել եք գալ,— ավելացրեց նա համբերատար կերպով, կարծես քաշալերելով շփոթված այցելուին։

— Այ հենց այսօր եմ եկել... Ձեր այստեղ եփած ապուրը ուտելու։

Սմերդյակովը հառաչեց։

— Ի՞նչ ես հառաչում, գիտեիր, չէ՞,— ուղղակի երեսին տվեց Իվան Ֆյոդորովիչը։

Սմերդյակովը մի րոպե ծանրակշիռ լռություն պահպանեց։

— Ո՞նց կարող էի չիմանալ։ Սկզբից էլ պարզ էր։ Միայն թե ո՞նց կարող էի իմանալ, որ այսպիսի բան կանեն։

— Ինչպե՞ս թե կանեն։ Թո՛ղ սատանայությունը մի կողմ։ Չէ՞ որ ինքդ նախօրոք ասացիր, թե ընկնավորության նոպա ես

ունենալու, և հենց նկուղ իջնելու րոպեին։ Հենց ուղղակի տեղն էլ նշեցիր՝ նկուղը։

— Այդ բանը հարցաքննության ժամանակ ասացի՞ք արդեն,— անվրդով հարցրեց Սմերդյակովը։

Իվան Ֆյոդորովիչը հանկարծ բարկացավ։

— Ոչ, դեռ չասացի, բայց կասեմ անպայման։ Դու հիմա շատ բան պետք է բացատրես ինձ, ախպերս, և իմացիր՝ չե՞մ թույլ տա, որ խաղ անես ինձ հետ։

— Իսկ իմ ինչի՞ն է պետք խաղ անելը, երբ իմ ամբողջ հույսը ձե՛ր վրա է մենակ, ոնց որ ասատուծո,— ասաց Սմերդյակովը նույն կատարյալ հանդարտությամբ, միայն մի վայրկյան աչքերը փակելով։

— Նախ և առաջ,— սկսեց Իվան Ֆյոդորովիչը,— ես գիտեմ, որ ընկնավորության նոպան չի կարելի նախատեսել։ Հարցրել եմ, սատանայություն մի՛ արա։ Օրն ու ժամը չի կարելի նախատեսել։ Իսկ ինչպե՞ս է, որ դու ինձ օրն ու ժամը նախօրոք ասացիր այն ժամանակ, և դեռ նկուղն էլ հետը։ Ինչպե՞ս կարող էիր նախօրոք իմանալ, որ նոպադ կբռնի և կընկնես հենց այդ նկուղը, եթե դիտմամբ չես կեղծել նոպան։

— Առանց այն էլ պետք է որ նկուղ իջնեի. նույնիսկ օրը մի քանի անգամ,— անշտապ ծոր տվեց Սմերդյակովը։— Հենց այդպես մի տարի առաջ ձեղունից ընկա։ Շատ ճիշտ է, որ ընկնավորության նոպան չի կարելի գուշակել օրով ու ժամով, բայց նախազգացումը միշտ էլ կարելի է ունենալ։

— Բայց դու գուշակեցիր օրն ու ժամը։

— Իմ ընկնավորության նոպայի մասին ավելի լավ կլինի, որ այստեղի բժիշկներից իմանաք, տիար իմ, կասեն ձեզ՝ խելակա՞ն էր, թե խելական չէր, իսկ ես այս հարցի շուրջ էլ ոչ մի ասելիք չունեմ ձեզ։

— Իսկ նկո՞ւղը։ Նկո՞ւղը ինչպես իմացար նախօրոք։

— Կպե՞լ եք այդ նկուղին։ Երբ այն օրը նկուղ էի իջնում, վախն ու կասկածը մտել էր մեջս։ Վախենալուս պատճառը ամենից ավելի այն էր, որ ձեզ կորցրել էի և էլ աշխարհում ոչ ոքի վրա հույս չէի կարող դնել, որ կպաշտպանի ինձ։ Այն օրը իջնում էի այդ նկուղը և մտածում՝ «Այ հիմա կգա, այ հիմա կխփի նոպան, կընկնե՞մ, թե չէ», և հենց այդ կասկածից էր, որ հանկարծ կոկորդս սեղմեց այդ անխուսափելի ջղաձգությունը... և ըհը՛, գլորվեցի ցած։ Այ հենց այս բոլորը և մեկ էլ մեր

ամբողջ խոսակցությունը ձեզ հետ, որ դրա նախորդ իրիկուն եղավ, դարբասի մոտ, երբ ես իմ վախը հայտնեցի ձեզ և նկուղի մասին ասացի, այս բոլորը մանրամասն պատմեցի դոկտոր Հերցենշտուբեին և քնիչ Նիկոլայ Պարֆյոնովիչին, և նրանք ամեն ինչ մտցրին արձանագրության մեջ։ Իսկ այստեղի բժիշկը՝ պարոն Վարվինսկին, այդպես էլ բոլորի առաջ հատուկ պնդեց, որ հենց այդ մտածմունքն է եղել պատճառը, այսինքն հենց այն իմ կասկածը, թե «այ հիմա կընկնե՞մ, թե չեմ ընկնի»։ Եվ հենց այդ բոպեին էլ նոպան բռնել է։ Այդպես էլ արձանագրեցին՝ անպայման այդ ձևով պետք է լիներ, այսինքն միայն իմ վախի պատճառով։

Վերջացնելով իր խոսքը, Սմերդյակովը խոր շունչ քաշեց, կարծես սոսկալի հոգնել ու տանջվել էր։

— Ուրեմն դու այդ բոլորը ասե՞լ ես քո վկայության մեջ,— հարցրեց Իվան Ֆյոդորովիչը, մի քիչ շվարած։ Ինքը հենց ուզում էր Սմերդյակովին վախեցնել, որ կհայտնի իրենց այդ օրվա խոսակցությունը, բայց պարզվեց, որ նա արդեն հայտնել է ամեն ինչ։

— Ի՞նչ ունեմ վախենալու։ Թող ամբողջ ճշմարտությունը գրեն ինչպես որ եղել է,— ասաց Սմերդյակովը հաստատակամորեն։

— Եվ դարբասի մոտ մեր ունեցած խոսակցությունը բառ առ բառ պատմեցի՞ր։

— Չէ, ամեն ինչ բառ առ բառ չէր իհարկե։

— Եվ որ կարող ես ընկնավորության նոպա կեղծել, ինչպես պարծենում էիր այդ օրը իմ առաջ, ասացի՞ր այդ էլ։

— Չէ, այդ էլ չասացի։

— Հիմա ասա՛ տեսնեմ, ինչո՞ւ այդ օրը դու ինձ Չերմաշնյա էիր ուղարկում։

— Վախենում էի, որ Մոսկվա կգնաք, իսկ Չերմաշնյան համենայն դեպս ավելի մոտ է։

— Ստում ես, դու ի՛նքդ ինձ առաջարկում էիր, որ գնամ, փորձանքից հեռու գնացեք ասում էիր։

— Դա պարզապես ձեր հանդեպ բարեկամության զգացումից էր և իմ անկեղծ նվիրվածությունից, նախազգալով, որ փորձանք է պատահելու տանը, ձեզ մեղքանալով։ Միայն թե ինձ ավելի էի մեղքանում։ Դրա համար էլ ասացի՝ հեռու գնացեք

փորձանքից, որպեսզի դուք հասկանաք, որ տանը վատ բան պետք է լինի և մնաք ձեր ծնողին պաշտպանելու։

— Դե ուրեմն ուղղակի ասեիր, հիմարի՛ գլուխ,— բռնկվեց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը։

— Իսկ ինչպե՞ս կարող էի այն ժամանակ ուղղակի ասել։ Մենակ վախն էր խոսում իմ մեջ, և հետո դուք էլ կարող էիք բարկանալ։ Ես իհարկե կարող էի վախենալ, որ Դմիտրի Ֆյոդորովիչը մի որևէ խայտառակ բան կանի և հենց այդ փողը կվերցնի ու կտանի, քանի որ այնպես էլ իր փողն էր համարում դա, բայց դե ո՞վ էր իմանում, որ այսպիսի սպանողությամբ կվերջանա գործը։ Մտածում էի, որ նա պարզապես կհափշտակի այդ երեք հազար ռուբլին, որ Ֆյոդոր Պավլովիչի անկողնի տակ էր դրված, ծրարի մեջ, բայց դե սպանեց ահա։ Եվ դո՛ւք էլ որտեղի՞ց կարող էիք գուշակել, տիար իմ։

— Դե ուրեմն եթե ինքդ ես ասում, որ չէր կարելի գուշակել, ինչպե՞ս կարող էի ես հասկանալ և տանը մնալ։ Այդ ի՞նչ հակասություն է,— ասաց Իվան Ֆյոդորովիչը, մտմտալով։

— Կարող էիք հասկանալ այն բանից, որ ես ձեզ այդ Մոսկվայի տեղ Չերմաշնյա էի ուղարկում։

— Բայց ինչպե՞ս կարող էի հասկանալ դրանից, ինչպե՞ս։

Սմերդյակովը շատ հոգնած էր երևում և նորից մի բոպե լուռ մնաց։

— Հենց դրանից էլ կարող էիք հասկանալ. եթե ես ձեզ Մոսկվայի տեղ Չերմաշնյա էի ուղարկում, ուրեմն ուզում էի, որ դուք մոտիկ մի տեղ լինեք, որովհետև Մոսկվան հեռու է, իսկ Դմիտրի Ֆյոդորովիչն էլ, իմանալով, որ դուք շատ հեռու չեք, այնքան չէր քաջալերվի։ Եվ մեկ էլ, եթե մի բան պատահեր, կարող էիք շուտով գալ և ինձ էլ պաշտպանել, որովհետև այդ բոլորից բացի ես ձեզ իմացրի, որ Գրիգորի Վասիլևիչը հիվանդ է, և այն էլ ասացի, որ ընկնավորության նոպայից եմ վախենում։ Իսկ բացատրելով ձեզ այն թխկոցները, որոնց միջոցով կարելի էր մտնել հանգուցյալի մոտ, և իմացնելով ձեզ, որ դրանք բոլորն էլ ես հայտնել եմ Դմիտրի Ֆյոդորովիչին, մտածում էի, թե դուք ինքներդ կհասկանաք, որ նա անպայման մի բան կանի, և նույնիսկ Չերմաշնյա էլ չեք գնա, այլ ուղղակի կմնաք այստեղ։

«Շատ կապակցված է խոսում,— մտածեց Իվան Ֆյոդո-

բովիչը,— թեև ժամծմում է. էլ ի՞նչ ընդունակությունների խանգարման մասին էր ասում Հերցենշտուբենը։

— Խորամանկություն ես անում իմ դլխին, գրո՞ղը տանի քեզ,— բացականչեց նա բարկացած։

— Իսկ ես, ճիշտն ասած, այն օրը մտածեցի, որ դուք լրիվ հասկացաք,— ասաց Սմերդյակովը ամենամիամիտ արտահայտությամբ, եռ մղելով հարվածը։

— Եթե հասկացած լինեի, կմնայի՞ ուրեմն,— գոռաց Իվան Ֆյոդորովիչը, նորից բորբոքվելով։

— Է՜, իսկ ես էլ մտածեցի, որ ամեն ինչ հասկացել եք, դրա համար էլ հենց միայն փորձանքից եք հեռանում ինչքան կարելի է շուտ, վախեցել եք և փախչում եք մի որևէ տեղ, որ ձեր գլուխն ազատեք։

— Կարծում էիր, բոլորն էլ քեզ նման վախկոտնե՞ր են։

— Ներեցեք, մտածում էի, որ դուք էլ ինձ նման եք։

— Իհարկե, պետք է հասկանայի,— հուզվում էր Իվանը,— և հասկանում էլ էի, որ հենց քեզնից մի որևէ զզվելի բան կարելի է սպասել... Միայն թե ստում ես, նորի՞ց ստում ես,— գոռաց նա, հանկարծ հիշելով։— Հիշո՞ւմ ես, այդ օրը դու մոտեցար կառքին և ասացիր ինձ. «Ախլոք մարդու հետ քար կրի, խենթի հետ հաց մի՛ ուտիր»։ Ուրեմն ուրախ էիր, որ գնում եմ, չէ՞, քանի որ գովեցիր։

Սմերդյակովը նորից ու նորից հառաչեց։ Կարծես թե մի թեթև գուլն երևաց դեմքին։

— Եթե ուրախ էի,— ասաց նա մի քիչ հևալով,— պատճառը միայն այն էր, որ համաձայնվեցիք ոչ թե Մոսկվա, այլ Չերմաշնյա գնալ։ Որովհետև ավելի մոտ էր համենայն դեպս։ Միայն թե այդ խոսքը ես ասացի ոչ թե գովելու համար, այլ հանդիմանելու։ Չեք հասկացել այդ բանը։

— Ինչպե՞ս թե հանդիմանելու։

— Որ դուք նախազգալով այդպիսի դժբախտությունը, լքում էիք ձեր ծնողին և չէիք ուզում մեզ պաշտպանել, որովհետև այդ երեք հազարի համար միշտ էլ կարող էին ինձ վրա մեղք գցել, թե գողացել եմ։

— Գրո՞ղը տանի քեզ,— նորից հայհոյեց Իվանը։— Սպասիր տեսնեմ. դու այդ նշանների, այդ թիկոցների մասին հայտնեցի՞ քննիչին ու դատախազին։

— Ամեն ինչ հայտնեցի ինչպես որ եղել է։

Իվան Ֆյոդորովիչը նորից զարմացավ ներքուստ։

— Եթե ես մի բան մտածեցի այն ժամանակ,— սկսեց նա նորից,— միայն այն էր, որ դո՛ւ կարող ես մի որևէ կեղտոտություն անել։ Դմիտրին կարող էր սպանել, բայց թե նա գողություն կանի՝ չէի հավատում այդ ժամանակ... Բայց քեզնից ամեն մի կեղտոտություն սպասում էի։ Ինքդ ինձ ասացիր, որ կարող ես ընկնավորություն կեղծել։ Ինչո՞ւ ասացիր այդ բանը։

— Պարզապես իմ միամտությունից։ Ես իմ կյանքում երբեք էլ ընկնավորություն չեմ կեղծել դիտմամբ, և հենց այնպես, ձեր առաջ գլուխս գովելու համար ասացի։ Պարզապես հիմարություն էր։ Ձեզ շատ էի սիրել այն ժամանակ և լրիվ անկեղծ էի ձեզ հետ։

— Եղբայրս ուղղակի քեզ է մեղադրում, որ սպանել ու կողոպտել ես։

— Դե նրան ուրիշ ի՞նչ է մնում անելու,— դառնորեն քմծիծաղեց Սմերդյակովը,— և ո՞վ կհավատա նրան բոլոր այդ հանցանշաններից հետո։ Դուք հո բաց է տեսել Գրիգորի Վասիլևիչը, էլ ի՞նչ կարելի է ասել դրանից հետո։ Է՜հ, աստված նրա հետ։ Թրենն փրկելու համար է դողում...

Նա առանց վրդովվելու լռեց և հանկարծ, ասես խորհրդածելուց հետո, ավելացրեց.

— Ահա խնդրեմ, նորից այդ բանը վերցնենք. նա ուզում է ինձ վրա գցել, որ դա իմ արած գործն է (ես արդեն լսել եմ դրա մասին), բայց ահա թեկուզ այդ բանը, որ ընկնավորություն կեղծելու վարպետ եմ, է՜հ, ես սկզբից կասե՞ի ձեզ, որ կարող եմ կեղծել, եթե իսկապես մի որևէ նպատակ ունենայի ձեր ծնողի հանդեպ։ Եթե այդպիսի սպանողություն մտածած լինեի, մարդ կարո՞ղ է այնքան հիմար լինել, որ սկզբից այդպիսի՞ մի հանցանշան թողնի ինքն իր դեմ, այն էլ սպանվողի հարազատ որդուն ասելով։ Ի սե՞ր աստծո։ Հավանականության նմա՞ն է դա։ Ասես, որ այդպիսի մի բան կարող է լինել, չէ՞, ընդհակառակը, երբեք էլ չի լինի։ Այ հիմա մեր այս խոսակցությունը ոչ ոք չի լսում, բացի հենց բուն իսկ նախախնամությունից, իսկ եթե դուք հայտնեիք դատախազին և Նիկոլայ Պարֆյոնովիչին, հենց դրանով էլ կարող էիք միանգամայն պաշտպանել ինձ, որովհետև այդ ի՞նչ շարագործ է այդ տեսակ, եթե սկզբից էլ այնքան միամիտ է։ Բոլորն էլ շատ լավ կարող են տեսնել այդ բանը։

— Լսի՞ր,— վերկացավ Իվան Ֆյոդորովիչը, շշմելով Սմեր-

դյակովի վերջին փաստաթղթից և ընդհատելով խոսակցությունը,— ես բոլորովին էլ չեմ կասկածում քո վրա և նույնիսկ ծիծաղելի եմ համարում քեզ մեղադրելը... ընդհակառակը, շնորհակալ եմ քեզ, որ ինձ հանգստացրիր։ Հիմա գնում եմ, բայց նորից կգամ։ Առայժմ մնաս բարով, առողջացիր։ Կարիք չունե՞ս որևէ բանի։

— Շնորհակալ եմ ամեն ինչի համար։ Մարֆա Իգնատիևնան չի մոռանում ինձ և առաջվա իր բարեսրտությամբ օժանդակում է ամեն ինչով, եթե մի բանի պետք ունենամ։ Ամեն օր ինձ այցելում են բարի մարդիկ։

— Ցտեսություն։ Բայց այն մասին, որ դու կարող ես ընկնավորություն կեղծել, ոչինչ չեմ ասի... և քեզ էլ խորհուրդ եմ տալիս, որ չասես,— ավելացրեց հանկարծ Իվանը, չգիտես ինչու։

— Շատ էլ լավ հասկանում եմ։ Եվ եթե դուք այդ բանը չասեք, ես էլ չեմ հայտնի մեր այն օրվա ամբողջ խոսակցությունը դարբասի մոտ...

Դրանից հետո այնպես պատահեց, որ Իվան Ֆյոդորովիչը հանկարծ դուրս եկավ, և արդեն տասը քայլ առաջացել էր միջանցքով, երբ նոր միայն զգաց, որ Սմերդյակովի վերջին նախադասության մեջ վիրավորական մի իմաստ կար։ Ուզեց վերադառնալ, բայց դա վաղանցուկ մի ակնթարթ էր միայն. «Հիմարությո՛ւն է»՝ ասաց քթի տակ և շտապեց դուրս գալ հիվանդանոցից։ Գլխավորն այն էր, որ իսկապես հանգստացած էր զգում իրեն, և նրան հանգստացրել էր հենց այն, որ մեղավոր է ոչ թե Սմերդյակովը, այլ իր եղբայր Միտյան, թեև կարծես թե հակառակը պետք է զգար։ Չէր ուզում այդ բոպեին վերլուծել, թե ինչու այդպես զգաց, նույնիսկ զզվելի էր թվում քրքրել իր զգացողությունները։ Կարծես մի բան կար, որն ուզում էր շուտով մոռանալ։

Հաջորդ մի քանի օրվա ընթացքում, երբ ավելի անմիջականորեն ու ավելի հիմնավոր կերպով ծանոթացավ Միտյայի վրա ծանրացող հանցանշանների, արդեն լրիվ համոզվեց, որ նա է մեղավորը։ Կային վկայություններ, որ ամենաչնչին մարդիկ էին տվել, ինչպես օրինակ Ֆենյան ու իր մայրը, բայց գրեթե ցնցող բաներ էին դրանք։ Էլ ի՞նչ ասեր այն վկայությունների մասին, որ տվել էին Պերխոտինը, գինետան մարդիկ, Պլոտնիկովների խանութի աշխատողները, Մոկրոեի վկաները։ Հատկապես մանրամասնությունները ճնշիչ տպավորություն էին գործում։ Գաղտնի «թիկոցների» խնդիրը գրեթե նույնքան շշմեցրել էր քննիչին ու դատախազին, որքան Գրիգորիի ցուցմունքը բաց դռան մասին։ Գրիգորիի կինը, Մարֆա Իգնատիևնան, ուղղակի պատասխանելով Իվան Ֆյոդորովիչի հարցափորձին, ասաց, թե Սմերդյակովն ամբողջ գիշերը պառկած էր իրենց տանը, միջնորմի մյուս կողմը, «մեր անկողնից երեք քայլ էլ չէր լինի»։ ու թեև ինքը, Մարֆա Իգնատիևնան, պինդ քնում էր, բայց քանի-քանի անգամ արթնացել էր նրա տնքոցներից. «Ամբողջ ժամանակ տնքում էր, անընդհատ տնքում»։ Խոսելով Հերցենշտուբեի հետ և հայտնելով իր տարակույսը, թե Սմերդյակովը բոլորովին էլ խելագար չի թվում իրեն, այլ պարզապես տկարացած, Իվանը մի նուրբ ժպիտ հարուցեց միայն ծերունի բժշկի դեմքին։ «Իսկ դուք գիտե՞ք, թե նա հիմա ինչով է զբաղվում հատկապես,— հարցրեց բժիշկը։— Ֆրանսերեն բառեր է անգիր սովորում. բարձի տակ մի տետրակ ունի, և մեկը ռուսական տառերով ֆրանսերեն բառեր է գրել մեջը, հե-հե-հե՞»։

Իվան Ֆյոդորովիչն ի վերջո մի կողմ թողեց իր բոլոր տարակույսները։ Այլևս չէր էլ կարողանում առանց զզվանքի մտածել Դմիտրիի մասին։ Բայց մի բան տարօրինակ էր համենայն դեպս. Ալյոշան համառորեն շարունակում էր պնդել, որ սպանել է ոչ թե Դմիտրին, այլ «ամենայն հավանականությամբ» Սմերդյակովը։ Իվանը միշտ էլ զգում էր, որ ինքը բարձր է գնահատում Ալյոշայի կարծիքը, ուստի հիմա շատ էր զարմանում նրա վրա։ Տարօրինակ էր և այն, որ Ալյոշան առիթ չէր փնտրում նրա հետ խոսելու Միտյայի մասին և ինքը երբեք չէր սկսում խոսակցությունը, այլ միայն պատասխանում էր Իվանի հարցերին։ Այդ էլ հատկապես նկատեց Իվան Ֆյոդորովիչը։ Բայց այդ ժամանակ նա շատ էր տարված բոլորովին կողմնակի մի բանով. վերադառնալով Մոսկվայից, հենց առաջին իսկ օրերից ամբողջովին և անդարձորեն անձնատուր եղավ Կատերինա Իվանովնայի հանդեպ իր տածած բուռն և խելահեղ տենչանքին։ Հիմա տեղը չէ խոսք բանալու Իվան Ֆյոդորովիչի այդ նոր զգացմունքի մասին, որ հետագայում անդրադարձավ նրա ամբողջ կյանքի վրա. դա կարող էր հենք լինել մի ուրիշ պատմության, մի ուրիշ վեպի համար, որ չգիտեմ՝ կգրե՞մ արդյոք երբեքից։ Բայց այնուամենայնիվ չեմ կարող հիմա լռության մատնել այն պարագան, որ երբ Իվան Ֆյոդորովիչը, ինչպես նկարագրեցի արդեն, գիշերը Ալյոշայի հետ դուրս էր եկել կա-

տերինա Իվանովնայի տնից և ճանապարհին ասաց՝ «Ես այլ չունեմ նրա վրա», այդ բոպեին նա ուղղակի սուտ էր ասում. խելահեղորեն սիրում էր Կատերինա Իվանովնային, թեև ճիշտ է և այն, որ մերթ ընդ մերթ ատում էր, և այն աստիճան, որ կարող էր նույնիսկ սպանել նրան։ Շատ պատճառների հետևանք էր այդ թնճուկը։ Միտյայի դեպքից խորապես ցնցված, Կատյան ընդառաջ վազեց ու կարծես իբրև իր փրկարարն ընդունեց Իվան Ֆյոդորովիչին, որ վերադարձել էր նրա մոտ։ Անարգված, վիրավորված, նվաստացած էր զգում իրեն Կատյան։ Եվ ահա եկավ նորից այն մարդը, որ առաջ էլ այնքան սիրում էր իրեն (օհ, նա շատ լավ գիտեր այդ բանը), և որի խելքն ու սիրտը միշտ էլ ինքը այնքա՜ն բարձր էր դասել իր սեփական անձից։ Բայց խստաբարո աղջիկը լիովին անձնատուր չեղավ, հակառակ իր սիրահարի կարամազովյան անզուսպ ցանկասիրության և հակառակ այն ամբողջ հմայքին, որով նա գերում էր իրեն։ Միաժամանակ անընդհատ տանջվում էր խղճի խայթից, որ ինքը դավաճանել է Միտյային, և գժտության ահավոր պահերին (իսկ այդպիսի պահերը հաճախ էին լինում) ուղղակի ասում էր այդ բանը Իվանի երեսին։ Հենց այդ էր, որ Իվանը «ստի վրա սուտ» կոչեց, երբ խոսում էր Ալյոշայի հետ։ Եվ իսկապես, սուտ բան շատ կար դրա մեջ, և այդ էր, որ ամենից ավելի ջղայնացնում էր Իվան Ֆյոդորովիչին... բայց այդ բոլորի մասին՝ հետո։ Մի խոսքով, առժամապես նա համարյա մոռացավ Սմերդյակովին։ Եվ սակայն, իր առաջին այցելությունից երկու շաբաթ հետո, նույն տարօրինակ մտքերը նորից սկսեցին տանջել նրան, ինչպես առաջ։ Բավական է ասել, որ նա սկսեց անընդհատ հարցնել ինքն իրեն՝ ինչո՞ւ այն վերջին գիշերը Ֆյոդոր Պավլովիչի տան մեջ, մեկնելուց առաջ, ինքը կամացուկ դուրս էր եկել սանդուղքի վրա, գողի նման, և ականջ էր դրել իմանալու, թե ի՞նչ է անում հայրը ներքևում։ Ինչո՞ւ զզվանքով էր հիշել այդ բանը հետո, ինչո՞ւ հաջորդ առավոտ այդպես հանկարծ տխրել էր ճանապարհին, իսկ Մոսկվա մտնելիս ասել էր ինքն իրեն՝ «Սրիկա՜ եմ ես»։ Եվ ահա հիմա եղավ մի պահ, երբ նա մտածեց, թե բոլոր այդ տանջալի մտքերի հետևանքով գուցե նույնիսկ պատրաստ է մոռանալու Կատերինա Իվանովնային. այնպե՞ս ուժգնորեն տիրել էին նորից այդ մտքերը իր հոգուն։ Հենց նոր էր մտածել այդ բանը, երբ փողոցում հանդիպեց Ալյոշային։ Անմիջապես կանգնեցրեց նրան ու հանկարծ հարց տվեց.

— Հիշո՞ւմ ես, երբ Դմիտրին ճաշից հետո ներս խուժեց և ծեծեց մեր հորը, հետո էլ ես քեզ ասացի բակում, որ «ցանկանալու իրավունքը» վերապահում եմ ինձ... ասա՛, մտածեցի՞ր այդ ժամանակ, թե ես մեր հոր մահն եմ ցանկանում կամ ոչ։

— Մտածեցի,— մեղմ պատասխանեց Ալյոշան։

— Բայց դա այդպես էր արդեն, կռահելու բան էլ չկար։ Իսկ այն ժամանակ մտքովդ չանցա՞վ նաև այն, թե ես հենց ուզում եմ, որ «մի սողունը կուլ տա մյուս սողունին», այսինքն հենց Դմիտրին սպանի ծերուկին, այն էլ որքան կարելի է շուտ... և որ ինքս էլ նույնիսկ դեմ չեմ նպաստելու դրան։

Ալյոշան թեթև գունատվեց ու լուռ նայեց եղբոր աչքերին։

— Դե խոսի՛ր,— բացականչեց Իվանը։— Ես սոսկալի ուզում եմ իմանալ, թե ինչ մտածեցիր այն ժամանակ։ Պետք է ինձ ճշմարտությո՛ւնը, ճշմարտությո՛ւնը։

Նա ծանր շունչ քաշեց, արդեն նախօրոք մի տեսակ զայրույթով նայելով Ալյոշային։

— Ներիր ինձ, այդ էլ մտածեցի այն ժամանակ,— շշնջաց Ալյոշան ու լռեց, ոչ մի «մեղմացուցիչ դեպք հանցանաց» շավելացնելով։

— Շնորհակալությո՛ւն,— կարճ կտրեց Իվանը և, թողնելով Ալյոշային, արագորեն հեռացավ իր ճամփով։ Այդ օրից Ալյոշան սկսեց նկատել, որ Իվանը մի տեսակ կտրականորեն խուսափում է իրենից և նույնիսկ հակակրանքով է վերաբերվում իրեն, այնպես որ հետո Ալյոշան ինքն էլ դադարեց գնալ նրա մոտ։ Բայց այդ բոպեին, այդ հանդիպումից անմիջապես հետո, Իվան Ֆյոդորովիչը տուն չգնաց, այլ ուղղակի Սմերդյակովի մոտ գնաց նորից։

VII

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԵՐԴՅԱԿՈՎԻՆ

Սմերդյակովն այն ժամանակ արդեն դուրս էր եկել հիվանդանոցից։ Իվան Ֆյոդորովիչը գիտեր նրա նոր բնակարանը, այսինքն հենց այն գերանակապ ծուռ տնակը, որ երկու սենյակ ուներ՝ միջանցքով բաժանված։ Մի սենյակում տեղավորվել էր Մարյա Կոնդրատենան իր մոր հետ, իսկ մյուսում ապրում էր Սմերդյակովը՝ առանձին։ Աստված գիտե, թե ինչ պայմանով էր բնակություն հաստատել նրանց մոտ՝ ձրի՞ էր ապրում, թե վարձ

էր տալիս։ Հետագայում ենթադրեցին, թե այնտեղ հաստատվել էր որպես Մարյա Կոնդրատենայի փեսացուն և առժամապես ձրի էր ապրում։ Մայր ու աղջիկ շատ էին հարգում և իրենցից բարձր մարդ էին համարում նրան։

Բախելուց հետո, երբ դուռը բացվեց, Իվան Ֆյոդորովիչը միջանցք մտավ, և Մարյա Կոնդրատենան ուղղակի ցույց տվեց դեպի ձախ՝ «կոկիկ սենյակը», ուր ապրում էր Սմերդյակովը։ Այդ սենյակում հախճաղյուսե վառարան կար և սաստիկ տաք էր։ Պատերին տեսք էր տալիս երկնագույն որմնաթուղթը, որ սակայն պատռված էր շատ տեղերից, իսկ որմնաթղթի տակ, ճեղքերի մեջ, սոսկալի քանակությամբ ուտիճներ էին վխտում, այնպես որ անդադրում մի խշրտոց կար անընդհատ։ Կահավորումը չնչին էր. երկու նստարան պատերի տակ և երկու աթոռ սեղանի մոտ։ Իսկ սեղանը թեև պարզ փայտե էր, բայց ծածկված էր սփոռոցով, որի վրա վարդագույն նախշեր կային։ Երկու փոքրիկ լուսամուտագոգերին մեկական ծաղկաման էր դրված, և դրանց մեջ խորդենի էր աճում։ Անկյունում սրբապատկերների տապանակ կար։ Սեղանի վրա դրված էր պղնձե մի փոքրիկ, խիստ ճմրթված ինքնաեռ և մի մատուցարան՝ երկու բաժակով։ Բայց Սմերդյակովն արդեն խմել էր թեյը, և ինքնաեռը հանգել էր... Նա նստել էր սեղանի առաջ, նստարանի վրա, և տետրակի մեջ նայելով մի բան էր գծծում գրչով։ Մոտը թանաքաման կար, ինչպես նաև երկաթե ցածլիկ մի մոմակալ, որի մեջ սակայն բնաճարպե մոմ էր վառվում։ Իվան Ֆյոդորովիչն անմիջապես հասկացավ Սմերդյակովի դեմքից, որ նա լրիվ ապաքինվել է հիվանդությունից հետո։ Դեմքը ավելի թարմ էր, ավելի գիրուկ, մազափունջը խնամքով վեր սանրված, քունքի մազերը օծանելիքով հարդարված։ Նստել էր գույնզգույն ու ներսից բամբակած տնային զգեստով, որ սակայն շատ էր մաշված ու կեղտոտ։ Քթին ակնոց կար, մի բան, որ Իվան Ֆյոդորովիչն առաջ երբեք չէր տեսել։ Այդ չնչին պարագան հանկարծ մի տեսակ կրկնակի զայրացրեց Իվան Ֆյոդորովիչին. «Այսպիսի՜ մի արարած, և դեռ ակնո՜ց էլ է դնում»։ Սմերդյակովը դանդաղորեն բարձրացրեց գլուխը և ակնոցի միջով ուշադիր նայեց ներս մտնողին. հետո դանդաղորեն հանեց ակնոցը և վեր կացավ նստարանից, բայց բոլորովին էլ ոչ այնքան հարգալից կերպով, նույնիսկ մի տեսակ ծուլորեն, պարզապես միայն պահպանելու համար այն նվազագույն անհրաժեշտ քաղաքավարությունը,

որն արդեն համարյա չի կարելի զանց առնել։ Այս ամբողջը վայրկենապես Իվանի ուշադրությունը գրավեց և նա միանգամից ըմբռնեց այդ բոլորը, մանավանդ Սմերդյակովի հայացքը՝ ուղղակի չարաշամ, անհյուրընկալ ու նույնիսկ զոռող մի հայացք, որ կարծես ասում էր՝ «Ինչ ես քաշ գալիս, չէ՞ որ ամեն ինչի մասին խոսքը մեկ արեցինք այն ժամանակ, էլ ինչո՞ւ եկար նորից»։ Իվան Ֆյոդորովիչը հազիվ զսպեց իրեն։

— Շոգ է այստեղ,— ասաց նա, դեռ ոտքի, և բացեց վերարկուն։

— Հանեցեք,— թույլատրեց Սմերդյակովը։

Իվան Ֆյոդորովիչը հանեց վերարկուն և նետեց նստարանին, դողացող ձեռքերով վերցրեց աթոռը, արագորեն մոտեցրեց սեղանին և նստեց։ Սմերդյակովն շտապեց նրանից առաջ նստել իր նստարանին։

— Նախ և առաջ, մենա՞կ ենք մենք,— հարցրեց Իվան Ֆյոդորովիչը խստորեն ու թափով։— Չե՞ն լսի մեզ այնտեղից։

— Ոչ ոք ոչինչ չի լսի։ Ինքներդ տեսաք. միջանցք է։

— Լսիր, սիրելիս, ի՞նչ էր քո փչածը այն օրը, երբ հիվանդանոցում ցտեսություն էի ասում քեզ, այսինքն որ եթե ես ոչինչ չասեմ այն մասին, թե դու ընկնավորություն կեղծելու վարպետ ես, դու էլ իբր թե քննիչին չես հայտնի մեր այն ամբողջ խոսակցությունը դարբասի մոտ։ Այդ ի՞նչ ամբողջի մասին է խոսքը։ Ի՞նչ միտք կարող էր լինել դրա տակ։ Չլինի՞ ապառնում էիր ինձ, հա՞։ Որ ինչ է, քեզ հետ մի որևէ դաշի՞նք եմ կնքել, հա՞, վախենո՞ւմ եմ քեզնից, հա՞։

Իվան Ֆյոդորովիչն ուղղակի կատաղությամբ ասաց այդ բանը, հայտնապես ու դիտմամբ հասկացնելով, որ արհամարհում է ամեն մի երկդիմություն, ամեն մի շրջանցում, և ուղղակի բաց է անում իր թղթերը։ Սմերդյակովի աչքերը չարանենգորեն փայլեցին, ձախ աչքն սկսեց թարթվել, և նա անմիջապես տվեց իր պատասխանը, թեև, քստ իր սովորության, դուսպ ու չափած-ձևած, կարծես ուզում էր ասել՝ «Բացեիբաց ես ուզում, դե ուրեմն ա՞ռ քեզ այդ բացեիբացը»։

— Իմ ասել ուզածն այն էր և այդ բանը այն մտքով ասացի, որ դուք, ձեր հարազատ ծնողի այս սպանողության հարցը նախօրոք դիտենալով հանդերձ, թողեցիք, որ նա գոհ գնա, և հիմա այնպես չլինի, որ մարդիկ մի որևէ վատ բան ենթադրացնեն ձեր զգացմունքների մասին, դուցե և մի ուրիշ բանի մա-

սին. ահա այս էր, որ այն ժամանակ խոստացա չհայտնել իշխանություններին։

Սմերդյակովը թեև խոսում էր առանց շտապելու և հայտնապես իշխելով իրեն, բայց նրա ձայնի մեջ հաստատակամ ու համառ, շարախիզ ու լկտիորեն զայրացուցիչ մի բան կար։ Հայացքը հանդգնորեն սևեռել էր Իվան Ֆյոդորովիչին, և առաջին րոպեին Իվանի աչքերը մթնեցին նույնիսկ։

— Ինչպե՞ս։ Ի՞նչ։ Խելքդ հո չե՞ս կորցրել։

— Կատարելապես խելքս գլխիս է։

— Բայց ինչ է, ես գիտեի՞ այն ժամանակ, որ սպանություն է լինելու,— գոռաց ի վերջո Իվան Ֆյոդորովիչը և բռունցքով ամուր խփեց սեղանին— Ի՞նչ է նշանակում «գուցե և մի ուրիշ բանի մասին», հը՞։ Խոսի՛ր, սրիկա՛։

Սմերդյակովը լուռ էր մնում և շարունակում էր նույն լկտի հայացքով դիտել նրան։

— Խոսի՛ր, գարշահո՛տ ստահակ, ի՞նչ է այդ «ուրիշ բանը»,— բղավեց Իվան Ֆյոդորովիչը։

— Իմ ասել ուզած «մի ուրիշ բանը» այս րոպեին այն էր, որ դուք ինքներդ էլ այն ժամանակ գուցե շատ էիք ցանկանում ձեր ծնողի մահը։

Իվան Ֆյոդորովիչը վեր թռավ և ամբողջ ուժով բռունցքը խփեց նրա ուսին, այնպես որ Սմերդյակովը ետ ընկավ դեպի պատը։ Նրա դեմքը վայրկենապես ողողվեց արցունքով։ «Ամո՞թ է հիվանդ մարդուն խփելը, պարոն»,— ասաց նա և հանկարծ իր շատ կեղտոտ, կապույտ քառակուսիներով թաշկինակն աչքերին տարավ, սկսեց մեղմ թսթսալով արցունք թափել։ Անցավ մի րոպե։

— Բավակա՛ն է։ Վերջ տուր,— ասաց ի վերջո Իվան Ֆյոդորովիչը հրամայական շեշտով, նորից նստելով աթոռին։— Այնպես մի՛ արա, որ բոլորովին կորցնեմ համբերությունս։

Սմերդյակովն իր լաթի կտորը հեռացրեց աչքերից։ Նրա կնճռոտված դեմքի ամեն մի գիծն արտահայտում էր հենց նոր կրած իր վիրավորանքը։

— Ուրեմն դու, սրիկա՛, այն ժամանակ մտածեցիր, որ ես էլ Դմիտրիի հետ ուզում եմ հորս սպանել, հա՞։

— Ես չգիտեի ինչ մտքեր ունեիք այն ժամանակ,— ասաց Սմերդյակովը վիրավորված,— և դրա համար էլ այն օրը ձեզ

կանգնեցրի դարբասի առաջ, որպեսզի հենց այդ կետում ստուգեմ ձեզ։

— Ի՞նչ ստուգես, ի՞նչ։

— Այ հենց այն հանգամանքը, այսինքն դուք ուզո՞ւմ էիք, որ ձեր ծնողը շուտով սպանվի, թե չէիք ուզում։

Իվան Ֆյոդորովիչին ամենից ավելի վրդովում էր այդ կամակոր, լկտի շեշտը, որից համառորեն չէր ուզում հրաժարվել Սմերդյակովը։

— Դո՛ւ ես սպանել,— բացականչեց նա հանկարծ։

Սմերդյակովը արհամարհական ժպտաց։

— Ինքներդ էլ շատ լավ գիտեք, որ ես չեմ սպանիչը։ Եվ ես կարծում էի, որ խելոք մարդը այլևս չի էլ խոսի դրա մասին։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այն ժամանակ այդպիսի կասկած ունեցար ինձ վրա։

— Ինչպես գիտեք արդեն, պարզապես վախից էր։ Որովհետև այնպիսի դրության մեջ էի այն ժամանակ, որ վախից դողալով՝ բոլորի վրա կասկածում էի։ Որոշեցի ձեզ էլ ստուգել, որովհետև եթե դուք էլ, մտածեցի, նույն բանն եք ցանկանում, ինչ որ ձեր եղբայրը, ուրեմն կարելի է վերջացած համարել այդ ամբողջ գործը, և ես էլ ուրեմն կկորչեմ ճանճի պես։

— Լսիր, դու երկու շաբաթ առաջ ուրիշ բան էիր ասում։

— Նույն բանն էի ուզում ասել, երբ հիվանդանոցում էլ խոսում էի ձեզ հետ, միայն թե կարծում էի, որ դուք առանց ավելորդ խոսքերի էլ կհասկանաք, և շատ խելոք մարդ լինելով՝ ինքներդ չեք ուզենա, որ բացեիբաց խոսակցություն լինի դրա մասին։

— Սրա՞ն նայեցեք։ Բայց պատասխանիր, պատասխանի՛ր, պնդում եմ. ի՞նչ էր բուն պատճառը, ի՞նչ կարող էի արած լինել, որ ինձ համար այնքա՞ն նվաստացուցիչ կասկած եմ հարուցել քո ստոր հոգու մեջ։

— Եթե սպանելը ասենք, դուք ինքներդ ոչ մի կերպ չէիք կարող անել այդ բանը, և չէիք էլ ուզում անել, իսկ եթե ասենք, թե ուզում էիք, որ ուրիշ մեկը սպանի, հենց ա՛յդ էր ձեր ուզածը իհարկե։

— Եվ ի՞նչ հանգիստ է խոսում, ի՞նչ հանգիստ։ Բայց ինչո՞ւ պետք է ուզեի, ի՞նչ մտքով պետք է ուզեի։

— Ինչպե՞ս թե ինչ մտքով։ Հապա ժառանգությո՞ւնը,— վրա բերեց Սմերդյակովը թունոտ ու նույնիսկ մի տեսակ վրիժառու

շեշտով։— Չէ՞ որ ձեր ծնողի մահից հետո երեք եղբայրներից ամեն մեկիդ մոտավորապես քառասուն հազար կարող էր հասնել, գուցե և ավելի, իսկ եթե Ֆյոդոր Պավլովիչն այն ժամանակ ամուսնանար այդ տիկնոջ, այսինքն Ագրաֆենա Ալեքսանդրովնայի հետ, ապա ուրեմն պսակից անմիջապես հետո տիկինը ամբողջ դրամագլուխն իր անվանը կփոխանցեր, որովհետև բավական խելք կա նրա գլխում, այնպես որ ձեր ծնողից երկու ռուբլի էլ չէր հասնի ձեզ՝ երեքիդ միասին։ Իսկ այն ժամանակ ի՞նչ էր մնում որ պսակվելու համար։ Մազ էր մնում. բավական էր,որ այդ տիկինը իր ճկույթով ա՛յ այսպես աներ նրա առաջ, և Ֆյոդոր Պավլովիչը իսկույն նրա ետևից եկեղեցի կվազեր, լեզուն կախ ընկած։

Իվան Ֆյոդորովիչը տանջալիորեն զսպեց իրեն։

— Լավ,— ասաց նա ի վերջո,— տեսնում ես, վեր չթռա, չծեծեցի քեզ, չսպանեցի քեզ։ Շարունակիր. ուրեմն, ըստ քեզ, ես որոշել էի, որ Դմիտրի՞ն կանի այդ բանը, նրա՞ վրա էի դրել իմ հույսը։

— Ինչպե՞ս նրա վրա չդնեիք ձեր հույսը. չէ՞ որ եթե նա սպաներ, ուրեմն կզրկվեր աղնվականության բոլոր իրավունքներից, իր տիտղոսից ու սեփականությունից, և աքսոր կգնար։ Եվ այդ դեպքում չէ՞ որ ժառանգության նրա բաժինը կմնար ձեզ ու ձեր եղբորը՝ Ալեքսեյ Ֆյոդորովիչին, կես-կես, ուրեմն ոչ թե այլևս քառասուն, այլ վաթսուն հազար կհասներ ամեն մեկիդ։ Դուք անպայմա՛ն Դմիտրի Ֆյոդորովիչի վրա էիք հույս դրել։

— Է՜հ, ինչեր եմ քաշում քեզնի՞ց։ Լսիր, անզգամ. եթե այն ժամանակ հույս էլ դնեի մեկի վրա, դո՛ւ կլիներիր իհարկե այդ մարդը, ոչ թե Դմիտրին, և երդվում եմ՝ նույնիսկ նախազգացի, որ մի որևէ ստորություն ես անելու... հիշո՛ւմ եմ իմ տպավորությունը... այդ օրը...

— Ես էլ այն օրը մտածեցի մի բոպե, որ ինձ վրա էլ հույս եք դնում,— հեգնական ժպտաց Սմերդյակովը։— Այնպես որ հենց դրանով ավելի ևս դուք ձեզ մատնեցիք իմ առաջ, որովհետև եթե իմ մասին նախազգացում ունեցաք և այնուամենայնիվ գնացիք այստեղից, ուրեմն հենց դրանով էլ կարծես թե ինձ ասացիք՝ կարող ես սպանել իմ ծնողին, արգելք չեմ լինի։

— Սրիկա՜։ Այդպես հասկացար ուրեմն, հա՞։

— Հենց այդ Չերմաշնյան էր ամբողջ հարցը։ Ներեցեք խնդրեմ։ Պատրաստվում էիք Մոսկվա գնալ, և ձեր ծնողը ինչքան էլ խնդրում էր, որ Չերմաշնյա գնաք, մերժում էիք։ Եվ միայն իմ մի հիմա՞ր խոսքի վրա հանկարծ համաձայնվեցիք։ Ձեր ինչի՞ն էր պետք, որ համաձայնվեցիք այդ Չերմաշնյային։ Քանի որ առանց պատճառի, միայն իմ խոսքի վրա Չերմաշնյա գնացիք, ոչ թե Մոսկվա, ուրեմն ինձնից մի բան էիք սպասում։

— Ո՞չ, երդվում եմ, ո՞չ,— գոռաց Իվանը, ատամները կրճտացնելով։

— Ինչպե՞ս թե ոչ։ Ուրեմն դուք, ընդհակառակը, որպես ձեր ծնողի որդին, պետք է անմիջապես ինձ ոստիկանատուն տանեիք իմ այդպիսի խոսքերի համար և պահանջեիք, որ մի լավ ծեծեն ինձ... կամ էլ գոնե ինքներդ տեղն ու տեղը մոութս ջարդեիք. բայց դուք, ներեցեք խնդրեմ, բոլորովին էլ չբարկացաք, ընդհակառակը, հենց անմիջապես բարեկամորեն կատարեցիք իմ շատ հիմար խոսքը և գնացիք, մի բան, որ ուղղակի անմտություն էր, որովհետև դուք պետք է մնայիք՝ ձեր ծնողի կյանքը պաշտպանելու համար... Ուրեմն ինչպե՞ս կարող էի եզրակացություններ չանել։

Իվանը նստել էր հոնքերը կիտած, բռունցքները չղաձգորեն հենել էր ծնկներին։

— Այո, ափսո՜ս, որ չչարդեցի մուութդ,— դառն ժպտաց նա։— Չէր կարելի քեզ նույն բոպեին ոստիկանատուն քարշ տալ. ո՞վ կհավատար ինձ և ի՞նչ մեղադրանք կարող էի ներկայացնել։ Բայց մուութիդ հասցնելը... ա՜խ, ափսոս, որ մտքովս չանցավ։ Թեև արդելված է քիթ-բերան չարդելը, բայց քո ռեխը մի լավ չարդուփշուր կանեի։

Սմերդյակովը գրեթե հրճվանքով էր նայում նրան։

— Կյանքի սովորական դեպքերում,— ասաց նա այն ինքնագոհ-վարժապետական շեշտով, որով մի ժամանակ, Ֆյոդոր Պավլովիչի ճաշասենյակում կանգնած, հավատքի մասին վիճել էր Գրիգորի Վասիլևիչի հետ ու չղայնացրել նրան,— կյանքի սովորական դեպքերում քիթ-բերան չարդելը այսօր իսկապես արգելված է օրենքով, և բոլորը վերջ են տվել այդ բանին, բայց դե կյանքի բացառիկ դեպքերում, ոչ միայն մեզ մոտ, այլև ամբողջ աշխարհով մեկ՝ թեկուզ և ամենալիակատար ֆրանսիական հանրապետությունը լինի, էլի շարունակում են մարդու քթին-բերանին խփել, ինչպես Ադամ-Եվայի ժամանակ, և երբեք էլ վերջ չեն տա դրան, բայց դուք բացառիկ դեպքում էլ չհամարձակվեցիք։

— Ինչո՞ւ ես ֆրանսերեն բառեր սովորում,— Իվանը գլխի շարժումով ցույց տվեց տեսրը սեղանի վրա։

— Իսկ ինչո՞ւ չսովորեմ, որպեսզի դրանով բարելավեմ իմ կրթությունը, ենթադրելով, որ մի օր գուցե ինքս էլ առիթ ունենամ գնալու Եվրոպայի այդ երջանիկ տեղերը։

— Լսի՛ր, Ճիվաղ,— փայլատակեցին Իվանի աչքերը և նա ցնցվեց ամբողջ մարմնով,— ես չեմ վախենում քո մեղադրանքներից, ի՞նչ ուզում ես վկայիր իմ դեմ, և եթե հիմա քեզ շան սատակ չարեցի, միա՛յն այն պատճառով, որ կասկածում եմ՝ դո՞ւ ես կատարել այդ ոճիրը, և քեզ դատարան եմ քարշ տալու։ Ես դեռ կպատռե՛մ քո դիմակը։

— Իսկ ըստ իս, ավելի լավ է լուռ մնաք։ Որովհետև՝ ի՞նչ մեղադրանք կարող եք ներկայացնել իմ դեմ, քանի որ ես կատարելապես անմեղ եմ, և ո՞վ կհավատա ձեզ։ Բայց եթե սկսեք, ես էլ ամեն ինչ կպատմեմ, որովհետև ինչպե՞ս կարող եմ չպաշտպանել ինձ։

— Կարծում ես՝ վախենո՞ւմ եմ հիմա քեզնից։

— Ասենք, թող դատարանում չհավատան իմ այս բոլոր խոսքերին, որ հիմա ասացի ձեզ, բայց հասարակությունը կհավատա, և դուք ամոթով կմնաք։

— Դրանով ուզում ես դարձյալ ասել՝ «խելոք մարդու հետ քար կրի», հա՞,— կրճտացրեց Իվանը։

— Ճիշտ կետին բարեհաճեցիք խփել։ Հենց այդ է՝ խելոք եղեք։

Իվան Ֆյոդորովիչը վեր կացավ՝ ոտից գլուխ դողալով զայրույթից, հագավ վերարկուն և, առանց այլևս պատասխանելու Սմերդյակովին, առանց նույնիսկ նայելու նրան, արագորեն դուրս եկավ խրճիթից։ Երեկոյան զով օդը թարմացրեց նրան։ Երկնքում փայլում էր լիալուսինը։ Մտքերի և զգացողությունների ահավոր մի մղձավանջ էր աղեկոծում նրա հոգին։ «Գնամ ու հայտնե՞մ հիմա Սմերդյակովի մասին։ Բայց ի՞նչ հայտնեմ. այնուամենայնիվ, մեղք չունի նա։ Ընդհակառակը, նա՛ ինձ կմեղադրի։ Իսկապես, ինչո՞ւ ես այն օրը ելա Չերմաշնյա գնալու։ Ինչո՞ւ, ինչո՞ւ,— հարցնում էր Իվան Ֆյոդորովիչը։— Այո, իհարկե, մի բան էի ակնկալում, և նա իրավունք ունի...»։ Եվ նա նորից հիշեց ,հարյուրերորդ անգամ, թե ինչպես վերջին գիշերն իր հոր տանը ականջ էր դրել սանդուղքից, բայց հիմա աջքին հիշեց այնպիսի տառապանքով, որ նույնիսկ տեղն ու տեղը կանգ

առավ, կարծես դաշույնով հարվածել էին նրան։ «Այո՛, ես ա՛յդ էի ակնկալում այն ժամանակ, ճիշտ է։ Ես ուզում էի, հենց ուզում էի, որ սպանություն լինի։ Ուզո՞ւմ էի սպանությունը, ուզո՞ւմ էի... Գնամ է սպանե՛մ Սմերդյակովին... Եթե չհանդգնեմ հիմա սպանել Սմերդյակովին, ուրեմն շարժի՛ էլ ապրել...»։ Իվան Ֆյոդորովիչը տուն չմտավ, այլ ուղղակի գնաց Կատերինա Իվանովնայի մոտ և վախեցրեց նրան իր տեսքով. խելագարի նման էր։ Պատմեց նրան իր ամբողջ խոսակցությունը Սմերդյակովի հետ, ամենայն մանրամասնությամբ։ Որքան էլ հորդորում էր Կատյան, Իվան Ֆյոդորովիչը չէր կարողանում հանգստանալ, շարունակ քայլում էր սենյակում և խոսում էր անկապ-անկապ, տարօրինակորեն։ Վերջապես նստեց, արմունկները դրեց սեղանին, գլուխն առավ ձեռքերի մեջ և տարօրինակ մի խոսք ասաց.

— Եթե սպանողը Դմիտրին չէ, այլ Սմերդյակովը, ուրեմն այդ դեպքում ես նրա մեղսակիցն եմ անշուշտ, որովհետև դրդել եմ նրան։ Դրդե՞լ եմ արդյոք՝ դեռ չգիտեմ։ Բայց եթե նա՛ է սպանել, և ոչ թե Դմիտրին, ուրեմն ես էլ մարդասպան եմ իհարկե։

Լսելով այդ, Կատերինա Իվանովնան լուռ վեր կացավ, մոտեցավ իր գրասեղանին, մի տուփ բացեց, թղթի մի կտոր հանեց այնտեղից ու դրեց Իվանի առաջ։ Այդ թղթի կտորը հենց այն փաստաթուղթն էր, որի մասին Իվան Ֆյոդորովիչը հետագայում հայտնեց Ալյոշային իբրև «մաթեմատիկական մի ապացույց», թե իրենց հորն սպանել է Դմիտրին։ Մի նամակ էր դա, որ Միտյան հարբած վիճակում գրել էր Կատերինա Իվանովնային, գրել էր հենց այն իրիկունը, երբ դաշտում հանդիպեց Ալյոշային, որ վանք էր վերադառնում Կատերինա Իվանովնայի տանը պատահած այն տեսարանից հետո, ուր Գրուշենկան վիրավորանք էր հասցրել օրիորդին։ Ալյոշայից բաժանվելով, Միտյան այդ իրիկուն վազեց Գրուշենկայի մոտ. չգիտեմ, տեսա՞վ արդյոք նրան, բայց գիշեր էր արդեն, երբ հայտնվեց «Մայր քաղաք» գինետունը և կուշտ ու կուռ խմեց։ Հարբելով, թուղթ ու գրիչ պահանջեց և գրեց մի բան, որ իր դեմ ծանրակշիռ փաստաթուղթ եղավ։ Մոլեգին, շաղակրատ ու անկապ նամակ էր դա, հենց ուղղակի «հարբած» մի նամակ։ Գրվել էր այնպես, ինչպես հարբած մարդը, տուն վերադառնալով, սկսում է արտակարգ եռանդով պատմել կնոջը կամ տնեցիներից որևէ մեկին, թե ինչպես դեռ քիչ

առաջ անպատվել են իրեն, թե ի՞նչ սրիկա է իրեն անպատվողը, իսկ ինքը, ընդհակառակը, ի՞նչ սքանչելի մարդ է, և թե ինչպե՞ս ինքը ցույց կտա այդ սրիկային. և այդ ամբողջը՝ երկար-բարակ, անկապ խոսքերով, փրփրելով, բռունցքները սեղանին խփելով, հարբածի արցունքներ թափելով։ Այն թուղթը, որ գինետանը տվեցին Միտյային, հասարակ գրենական թղթի մի կտոր էր, վատ տեսակի, կեղտոտ, և հակառակ կողմի վրա ինչ-որ հաշիվ էր գրված։ Պարզ երևում էր, որ տեղը քիչ էր եկել հարբածի շաղակրատության համար, և Միտյան ոչ միայն լցրել էր բոլոր լուսանցքները, այլ նույնիսկ վերջին տողերը շեղակի գրել էր արդեն գրված էջի վրա։ Նամակի բովանդակությունը հետևյալն էր.

«Ճակատագրակա՞ն Կատյա։ Վաղը փող կճարեմ և ետ կտամ քեզ քո երեք հազարը, և մնաս բարո՞վ, մեծ ցասման տեր կին, բայց և մնաս բարո՞վ, իմ սեր։ Վերջացնե՞նք։ Վաղը կճարեմ բոլոր մարդկանցից, իսկ եթե չճարեմ մարդկանցից, ազնիվ խոսք եմ տալիս քեզ՝ կգնամ հորս մոտ ու կջախջախեմ նրա գլուխը և կվերցնեմ բարձի տակից, միայն թե Իվանը գնացած լինի։ Թեկուզ աքսոր գնամ, բայց կտամ քո երեք հազարը։ Իսկ դու մնաս բարով։ Խոնարհվում եմ մինչև գետին, որովհետև սրիկա եմ քո առաջ։ Ներիր ինձ։ Չէ, ավելի լավ է մի՛ ներիր, ավելի հեշտ կլինի և՛ ինձ համար, և՛ քեզ համար։ Ավելի լավ է աքսորը, քան քո սերը, որովհետև ուրիշին եմ սիրում, իսկ նրան դու շատ լավ ճանաչեցիր այսօր, էլ ինչպե՞ս կարող ես ներել։ Պիտի սպանե՞մ ինձ կողոպտողին։ Պիտի հեռանամ ձեզնից, բոլորիցդ էլ, պիտի գնամ Արևելք, որպեսզի էլ ոչ ոքի չտեսնեմ։ Նրան էլ, որովհետև միայն դու չես ինձ տանջողը, նա էլ է։ Մնա՞ս բարով։

Հ. Գ. Անեծք եմ գրում, բայց պաշտո՞ւմ եմ քեզ։ Լսում եմ դա կրծքիս մեջ։ Մի լար է մնացել ու զնգում է։ Ավելի լավ է երկո՛ւ կես լինի սիրտս։ Կսպանեմ ինձ, բայց նախ այդ շանը համենայն դեպս։ Կխլեմ նրանից երեք հազարը և կգցեմ քեզ։ Թեև սրիկա եմ քո առաջ, բայց գող չեմ։ Սպասիր երեք հազարը։ Շան անկողնի տակն է, վարդագույն ժապավենով։ Ես չեմ գողը, բայց սպանելու եմ ինձ կողոպտող գողին։ Կատյա, արհամարհանքով մի՛ նայիր, Դմիտրին գող չէ՛, այլ մարդասպան։ Սպանել է իր հորը և կործանել իրեն, որպեսզի կանգուն մնա և քո հպարտությունը չհանդուրժի։ Եվ քեզ լսիրի։

Հ. Հ. Գ. Ոտքե՞րդ եմ համբուրում, մնաս բարով։

Հ. Հ. Հ. Գ. Կատյա, աղոթիր աստծուն, որ մարդիկ տան ինձ փողը։ Այդ դեպքում ձեռքերս արյունոտ չեն լինի, իսկ եթե չտան՝ արյո՛ւն կլինի։ Սպանիր ինձ։

Ստրուկդ ու թշնամիդ
Դ. Կարամազով»։

Երբ Իվանը կարդաց «փաստաթուղթը», համոզվեց արդեն։ Ուրեմն սպանել է եղբայրը, ոչ թե Սմերդյակովը։ Եվ եթե ոչ Սմերդյակովը, ուրեմն նաև ոչ ինքը՝ Իվանը։ Այդ նամակը հանկարծ նրա աչքին մաթեմատիկական ճշգրտության նշանակություն ստացավ։ Նրա համար այլևս ոչ մի տարակույս չէր կարող լինել, որ Միտյան է մեղավորը։ Ի դեպ, նա երբեք չէր ունեցել այն կասկածը, թե Միտյան կարող է Սմերդյակովի հետ միասին սպանած լինել, և դա փաստորեն էլ չէր բռնում։ Իվանը լրիվ հանգստացավ։ Հաջորդ առավոտ պարզապես արհամարհանքով հիշեց Սմերդյակովին ու նրա հեգնական խայթոցները։ Մի քանի օր հետո սկսեց նույնիսկ զարմանալ, թե ինչպես ինքը կարող էր այդքան տանջալիորեն վիրավորվել նրա կասկածներից։ Որոշեց արհամարհել նրան ու մոռանալ։ Այդպես մի ամիս անցավ։ Այլևս ոչ մի հարցուփորձ չէր անում Սմերդյակովի մասին, բայց երկու անգամ լսեց հարեվանցիորեն, որ նա շատ հիվանդ է և խելքը գլխին չէ։ «Ի վերջո կխելագարվի»,— ասաց մի անգամ երիտասարդ բժիշկ Վարվինսկին, և Իվանի մտքում մնաց այդ բանը։ Այդ ամսվա վերջին շաբաթվա ընթացքում Իվանն ինքը սկսեց շատ վատ զգալ իրեն։ Արդեն գնացել էր խորհրդակցելու այն բժշկի հետ, որին Կատերինա Իվանովնան հենց դատից առաջ հրավիրել էր Մոսկվայից։ Եվ հենց այդ ժամանակ էլ Կատերինա Իվանովնայի հետ նրա հարաբերությունները ծայր աստիճան սրվեցին։ Իրար սիրահարված երկու թշնամիներ էին կարծես։ Կատերինա Իվանովնայի «վերադարձները» դեպի Միտյան, զգացմունքի վայրկենական, բայց բուռն այդ պոռթկումները կատարյալ մոլեգնություն էին հասցնում արդեն Իվանին։ Տարօրինակ էր, որ մինչև մեր նկարագրած այն վերջին տեսարանը, երբ Ալյոշան Միտյայից բաժանվելուց հետո եկավ Կատերինա Իվանովնայի մոտ, Իվանը ամբողջ ամսվա ընթացքում ոչ մի անգամ չէր լսել, որ Կատյան տարակուսանք հայտնի Միտյայի մեղավոր լինելու վերաբերյալ,

չնայած նրա այն բոլոր «վերադարձներին», որոնք այնքան ատելի էին Իվանի համար։ Ուշագրավ է նաև այն, որ Իվանը, զգալով, թե օրից օր ավելի ու ավելի է ատում Միտյային, միաժամանակ հասկանում էր՝ ոչ թե Կատյայի «վերադարձների» համար է ատում նրան, այլ հենց այն պատճառով, որ նա սպանել է իրենց հորը։ Զգում էր այդ բանը և լրիվ գիտակցում։ Այնուամենայնիվ, դատից տասը օր առաջ գնաց Միտյայի մոտ և փախուստի ծրագիր առաջարկեց նրան, մի ծրագիր, որ ըստ երևույթին վաղուց էր կանխամտածված։ Բացի գլխավոր պատճառից, կար մի ուրիշ բան էլ, որ նրան մղեց այդ քայլին. դա իր սրտում դեռ կոտտացող այն վերքն էր, որ մնացել էր Սմերդյակովի ասածից, թե իրեն՝ Իվանի համար իբր թե շահավոր է եղբոր դատապարտվելը, որովհետև այդ դեպքում իրենց հորից ժառանգվելիք գումարը քառասունից վաթսուն հազարի կբարձրանա իր և Ալյոշայի օգտին։ Նա որոշեց երեսուն հազար ռուբլի զոհել հենց միայն իր կողմից՝ Միտյայի փախուստը կազմակերպելու համար։ Այն օրը, երբ Միտյայի մոտից էր վերադառնում, սոսկալի տխուր ու շփոթված էր Իվանը. հանկարծ սկսել էր զգալ, որ ինքը Միտյայի փախուստն է ցանկանում ոչ միայն երեսուն հազար ռուբլի զոհելու և իր սրտի այդ վերքը բուժելու համար, այլև մի ուրիշ պատճառով։ «Գուցե որովհետև ե՞ս էլ նույնպիսի մարդասպան եմ իմ հոգու խորքում»,— հարցրեց նա ինքն իրեն։ Հոգու խորքում մի հեռավոր, բայց այրող բան կար, որ խոցում էր իր խիղճը։ Եվ մանավանդ, իր հպարտությո՛ւնը սոսկալի տանջանքներ էր կրում այդ ամբողջ ամսվա ընթացքում, բայց դրա մասին՝ հետո... Ալյոշայի հետ խոսակցությունից հետո ձեռքը դնելով իր դռան զանգին և հանկարծ որոշելով Սմերդյակովի մոտ գնալ, Իվան Ֆյոդորովիչը ենթարկվեց իր սրտում անակնկալորեն բորբոքված մի յուրահատուկ զայրույթի մղումին։ Հանկարծ հիշեց, թե ինչպես Կատերինա Իվանովնան հենց քիչ առաջ գոռացել էր իրեն՝ Ալյոշայի ներկայությամբ. «Դո՛ւ, միայն դո՛ւ հավատացրիր ինձ, որ նա է սպանողը (այսինքն Միտյան)»։ Հիշելով այդ, Իվանը նույնիսկ քարացավ մի րոպե. երբեք, ոչ մի անգամ չէր հավատացրել նրան, որ սպանողը Միտյան է, և դեռ ավելին՝ ինքը ի՞նչ մասին կասկած էր հայտնել, երբ այդ օրը վերադարձել էր Սմերդյակովի մոտից։ Ընդհակառակը, նա էր, Կատյան, որ իր առաջ այդ «փաստաթուղթը» դրեց և ապացուցեց իր եղբոր հանցանքը։ Եվ հանկարծ նա, հենց

Կատյան, բացականչում է. «Ես ինքս գնացի Սմերդյակովի մոտ։ Ե՞րբ է գնացել։ Իվանը ոչինչ չգիտեր դրա մասին։ Ուրեմն Կատյան բոլորովին էլ վստահ չէ այնքան, որ Միտյան է մեղավորը։ Եվ ի՞նչ կարող է ասած լինել Սմերդյակովը նրան։ Ի՞նչ է ասել հատկապես, ի՞նչ։ Ահավոր մի զայրույթ բռնկվեց Իվանի սրտում։ Չէր հասկանում, թե ինչպե՞ս կարող էր ինքը կես ժամ առաջ այդպես անպատասխան թողնել Կատյայի ասածը, առանց տեղն ու տեղը գոռալու։ Թողեց զանգը և վազեց Սմերդյակովի մոտ։ «Այս անգամ գուցե կսպանեմ նրան»,— մտածում էր ճանապարհին։

VIII

ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԵՐԴՅԱԿՈՎԻ ՀԵՏ

Դեռ կես ճանապարհին շոր ու կծու քամի բարձրացավ, հիշտ այնպիսի քամի, որ փչում էր այդ օրը վաղ առավոտյան, և մանր, առատ ու շոր ձյուն սկսեց տեղալ։ Ձյունը չէր նստում, քամին ոլոր-ոլոր քշում էր, և շուտով իսկական ձյունամրրիկ բարձրացավ։ Մեր քաղաքի այն մասում, ուր ապրում էր Սմերդյակովը, համարյա ոչ մի լապտերասյուն չկա։ Իվան Ֆյոդորովիչը քայլում էր խավարի մեջ, առանց նկատելու ձյունամրրիկը, բնազդորեն գտնելով ճամփան։ Գլուխն էր ցավում և տանջալի մի թխթխկոց կար բունքերի մեջ։ Զգում էր, որ ձեռքերը ջղաձգվում էին։ Քիչ էր մնացել մինչև Մարյա Կոնդրատենայի խրճիթը, երբ հանկարծ Իվան Ֆյոդորովիչը հանդիպեց միայնակ մի հարբածի, որ կարճահասակ գեղջուկ էր, կարկտված ու քոստոտ կապա հագած, քայլում էր զիգզագներով, փնթփնթում էր ու հայհոյում։ Հանկարծ նա թողեց հայհոյելը և սկսեց երգել հարբածի խոպոտ ձայնով.

Ա՜խ մեր Վանկան գնաց Պիտեր,
Ջե՜մ սպասի ես նրան։

Բայց նա ամեն անգամ ընդհատում էր այդ երկրորդ տողի վրա և նորից սկսում հայհոյել մեկի հասցեին, հետո հանկարծ նորից ձայնը գցում ու երգում էր նույն երգը։ Իվան Ֆյոդորովիչն արդեն սոսկալի ատելություն էր զգում նրա դեմ, դեռ բոլորովին էլ չմտածելով նրա մասին, և հանկարծ գիտակցեց նրա ներկայությունը։ Նույն վայրկյանին անդիմադրելի մի ցանկություն ունեցավ բռունցքն իջեցնել նրա գլխին ու գետնին փռել

նրան։ Հենց նույն վայրկյանին էլ նրանք կողք-կողքի եկան, և գյուղացին, սաստիկ օրորվելով, իր ամբողջ ծանրությամբ բախվեց Իվանին։ Իվանը կատաղորեն ետ հրեց նրան։ Գեղջուկը թոավ-գնաց ու կոճղի նման շրմփաց սառած գետնին, միայն մի անգամ ցավագին տնքաց՝ «Օ—օ՜», և լռեց։ Իվանը մոտեցավ նրան։ Մարդը պառկել էր մեջքի վրա, բոլորովին անշարժ, անզգա։ «Կոտրվի»,— մտածեց Իվանը և շարունակեց իր ճամփան դեպի Սմերդյակովի տունը։

Մարյա Կոնդրատևնան, որ մոմը ձեռքին վազել էր դուռը բացելու, դեռ միջանցքում շշնջաց Իվանին, թե Պավել Ֆյոդորովիչը (այսինքն Սմերդյակովը) շատ հիվանդ է, շա՜տ, ոչ թե պառկել է, այլ համարյա թե խելքը կորցրել է մի տեսակ և նույնիսկ հրամայեց ետ տանել թեյը, չուզեց խմել։

— Գժությունն՞ր է անում, ինչ է,— կոպտորեն հարցրեց Իվան Ֆյոդորովիչը։

— Չէ՜, ինչ գժություն, ընդհակառակը, բոլորովին սկզբնստել է, միայն թե դուք շատ երկար մի՛ խոսեք նրա հետ...— խնդրեց Մարյա Կոնդրատևնան։

Իվան Ֆյոդորովիչը դուռը բացեց ու ներս մտավ։

Անցյալ անգամվա նման շատ տաք էր սենյակը, բայց մի քանի նկատելի փոփոխություններ կային. պատի տակ դրված նստարաններից մեկը դուրս էին տարել և դրա տեղը դրավել էր կարմիր փայտե մի բազմոց՝ մեծ, հին, կաշեպատ։ Բազմոցի վրա անկողին էր փռված՝ սպիտակ ու բավական մաքուր բարձերով։ Անկողնի վրա, նույն տնային զգեստը հագած, նստել էր Սմերդյակովը։ Սեղանը բերել էին բազմոցի առաջ, այնպես որ սենյակում շարժվելու տեղ չէր մնացել։ Սեղանի վրա դեղին շապկով մի հաստ գիրք կար, բայց Սմերդյակովը չէր կարդում, նստել էր ու ոչինչ չէր անում կարծես։ Երկար, լուռումունջ հայացքով դիմավորեց Իվան Ֆյոդորովիչին, և երևում էր, որ բոլորովին շշարմացավ նրան տեսնելով։ Շատ էր փոխվել Սմերդյակովի դեմքը, շատ էր նիհարել ու դեղնել։ Աչքերը փոս էին ընկել, ներքևի կոպերը կապտել էին։

— Ինչ է, իսկապե՞ս հիվանդ ես,— կանգ առավ Իվան Ֆյոդորովիչը։— Ես քեզ երկար չեմ զբաղեցնի, նույնիսկ վերարկուս էլ չեմ հանի։ Բայց ո՞ւր կարելի է նստել այստեղ։

Նա անցավ մյուս ծայրը, մի աթոռ մոտեցրեց ու նստեց։

— Ի՞նչ ես լուռ-լուռ նայում ինձ։ Ես միայն մի հարցով եմ եկել, և երդվում եմ, չեմ գնա, մինչև պատասխան չտաս ինձ. քեզ մոտ եկե՞լ է այն օրիորդը՝ Կատերինա Իվանովնան։

Սմերդյակովը երկար լուռ մնաց, շարունակելով հանգիստ նայել Իվանին, բայց հանկարծ ձեռքը թափ տվեց ու երեսը դարձրեց մյուս կողմ։

— Ի՞նչ է,— բացականչեց Իվանը։

— Ոչինչ։

— Ինչպե՞ս թե ոչինչ։

— Դե հա, եկավ։ Ձե՞ր ինչ գործն է։ Հանգիստ թողեք ինձ։

— Չէ՜, չեմ թողնի։ Ասա՜, ե՞րբ եկավ։

— Է՜, նրան մոռացել եմ նույնիսկ,— ասաց Սմերդյակովը արհամարհական մի ժպիտով և հանկարծ նորից, դեմքը դարձնելով Իվանին, աչքերը հառեց մի տեսակ մոլեգին ատելությամբ լի հայացքով, հենց այն հայացքով, որով նայել էր նախորդ տեսակցության ժամանակ, մեկ ամիս առաջ։

— Ինքներդ ասես հիվանդ լինեք, տես է՞, լղարել եք, գույն չկա ձեր երեսին,— ասաց նա։

— Մի կողմ թող իմ առողջությունը, ասա՜ այն, ինչ հարցնում են քեզ։

— Բայց ինչո՞ւ դեղնել են ձեր աչքերը։ Սպիտակուցները լրիվ դեղին են։ Շա՜տ եք տանջվում, ի՞նչ է։

Նա արհամարհանքով ժպտաց և մեկ էլ հանկարծ ուղղակի ծիծաղեց։

— Լսի՛ր. ասացի, որ չեմ գնա, մինչև պատասխան չտաս,— գոռաց Իվանը սոսկալի զայրացած։

— Ինչո՞ւ եք կպել ինձ։ Ինչո՞ւ եք ինձ տանջում,— ասաց Սմերդյակովը տատապալից ձայնով։

— Է՜, գրո՛ղը տանի։ Ես գործ չունեմ քեզ հետ։ Պատասխանի՛ր հարցիս, և անմիջապես կգնամ։

— Ո՛չ մի պատասխան էլ չունեմ,— հայացքն իջեցրեց նորից Սմերդյակովը։

— Հավատա ինձ՝ կստիպե՛մ քեզ, որ պատասխանես։

— Ի՞նչ եք այդպես անընդհատ անհանգստանում,— հանկարծ ուղղակի նայեց նրան Սմերդյակովը, բայց ոչ թե պարզապես արհամարհանքով, այլ արդեն մի տեսակ զզվանքի արտահայտությամբ։— Որովհետև դա՞տն է սկսվում վաղը։ Ձեզ ոչինչ չի լինի, հասկանո՞ւմ եք, հավատացե՛ք վերջապես։ Գնա-

ցնք տուն, պառկեք ու հանգիստ քնեք, ոչ մի բանից մի՛ վախեցեք։

— Չեմ հասկանում քեզ... վաղը ինչի՞ց պետք է վախենամ,— ասաց Իվանը զարմացած, և հանկարծ իսկապես նրա հոգին սարսռաց վախի սառեցնող մի զգացումով։ Սմերդյակովը հայացքով չափեց նրան։

— Ձեք հասկանո՞ւմ,— երկարեց նա հանդիմանորեն։— Զարմանում եմ, որ խելոք մարդը այսպես ծիծաղելի դերասանություն է անում։

Իվանը լուռ նայում էր նրան։ Միայն այդ խոսելու ձևն արդեն, այդ բոլորովին անսպասելի, մի տեսակ անհավատալիորեն մեծամիտ շեշտը, որով հիմա իրեն դիմում էր իր նախկին ծառան, արտասովոր մի բան էր ինքնին։ Նույնիսկ անցյալ անգամ այսպիսի շեշտով չէր խոսել նա համենայն դեպս։

— Ասում եմ ձեզ, վախենալու բան չունեք։ Ոչ մի վկայություն չեմ տա ձեր դեմ, ոչ մի հանցանշան չկա։ Տես է՞, դողում են ձեռքերը։ Ինչո՞ւ ձեր մատները այդպես պար են գալիս։ Գնացեք տուն, դուք չեք սպանիչը։

Իվանը ցնցվեց։ Հիշեց Ալյոշային։

— Գիտեմ, որ ես չեմ...— թոթովեց նա։

— Գի-տե՞ք,— նորից վրա բերեց Սմերդյակովը։

Իվանը վեր թռավ ու բռնեց նրա ուսից։

— Ասա՛ ամեն ինչ, գարշելի՛ արարած։ Ամե՛ն ինչ ասա։

Սմերդյակովը բոլորովին չվախեցավ։ Պարզապես խելահեղ մի ատելությամբ աչքերը բևեռեց նրան։

— Դե ուրեմն հենց դո՛ւք սպանեցիք, եթե այդպես է,— կատաղորեն փսփսաց նա։

Իվանը դանդաղ ետ ընկավ իր աթոռին, կարծես մի բան կշռադատելով։ Եվ ծիծաղեց չարախնդորեն։

— Նորից այդ օրվա մասի՞ն է խոսքդ։ Այն, որ անցյալ անգամ էլ ասացիր։

— Անցյալ անգամ էլ կանգնել էիք իմ առաջ և ամեն ինչ հասկանում էիք, հիմա էլ հասկանում եք։

— Հասկանում եմ միայն, որ դու խելագար ես։

— Դեռ չի՞ էլ ձանձրանում մարդը։ Երես-երեսի նստել ենք, էլ ի՞նչ կարիք կա միմյանց աչքին փոշի փչելու, ի՞նչ կարիք կա դերասանություն անելու։ Կամ էլ թե չէ՝ դեռ ուզում եք ի՞նձ վրա գցել մենակ, այն էլ իմ աչքի առա՞ջ։ Դո՛ւք սպանեցիք,

բուն սպանիչը հենց դուք եք, իսկ ես պարզապես ձեր կամակատարն էի, ձեր հավատարիմ ծառան, և ձեր ասածով էլ այդ գործը կատարեցի։

— Կատարեցի՞ք։ Ինչ է, դո՞ւ սպանեցիր,— սառեց-մնաց Իվանը։

Կարծես մի բան ցնցվեց նրա ուղեղում, և ամբողջ մարմինն սկսեց դողալ մանր, մթսեցնող սարսուռով։ Հիմա էլ Սմերդյակովն էր, որ զարմացած նայեց նրան. վերջապես երևի նա էլ շշմեց, երբ տեսավ, որ անկեղծ է Իվանի զգացած վախը։

— Բայց մի՞թե իսկապես ոչինչ չգիտեիք,— թոթովեց նա թերահավատորեն, ծուռ-ծուռ ժպտալով նրա երեսին։

Իվանը անընդհատ նայում էր նրան, կարծես լեզուն կապվել էր։

Ա՞խ մեր Վանկան գնաց Պիտեր,
Ջե՞մ սպասի ես նրան,—

հնչեց հանկարծ նրա գլխում։

— Գիտե՞ս ինչ. վախենում եմ, որ դու երազ ես, դու ուրվական ես իմ առաջ նստած,— թոթովեց նա։

— Ոչ մի ուրվական չկա այստեղ, միայն մենք երկուսս ենք, և մեկ էլ մի երրորդը։ Կասկած չկա, նա այստեղ է հիմա, այդ երրորդը՝ մեր երկուսի միջև։

— Ո՞վ է։ Ո՞վ կա այստեղ։ Ո՞վ է երրորդը,— բացականչեց Իվան Ֆյոդորովիչը վախեցած, և շուրջը նայեց՝ աչքերն շտապշտապ մի անկյունից մյուսը տանելով։

— Այդ երրորդը աստվածն է, նույնինքն նախախնամությունը, նա հիմա այստեղ է, մեզ մոտ, միայն թե մի՛ փնտրեք նրան, չեք գտնի։

— Սո՛ւտ ես ասում, որ դու ես սպանել,— կատաղորեն բղավեց Իվանը։— Դու կա՛մ խելագար ես, կամ էլ իմ հոգու հետ ես խաղում, ինչպես անցյալ անգամ։

Սմերդյակովը դեռ շարունակում էր հետաքրքրությամբ հետևել նրան, բոլորովին չվախենալով։ Դեռ ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել իր թերահավատությունը, դեռ նրան թվում էր, թե Իվանը «ամեն ինչ գիտե», բայց պարզապես այդպես է ձևացնում, որպեսզի «հենց իր աչքի առաջ ամեն ինչ իր վրա գցի»։

— Սպասեք մի րոպե,— ասաց նա ի վերջո թույլ ձայնով և

Հանկարծ, սեղանի տակից դուրս հանելով իր ձախ ոտքը, սկսեց տաբատը վեր ծալել։ Երկար ու սպիտակ գուլպա էր հագել և հողաթափ։ Առանց շտապելու արձակեց կապիչը և մատները խցկեց գուլպայի մեջ, մինչև խորքը։ Իվան Ֆյոդորովիչը նայում էր նրան և հանկարծ ցնցվեց՝ սարսափից չղաձգվելով։

— Գի՜ծ, խելագա՜ր,— բղավեց նա և, արագորեն ցատկելով տեղից, ետ նետվեց, այնպես որ մեջքով զարնվեց պատին ու կարծես կպավ-մնաց, ոտից գլուխ ձգվելով ու քարանալով։ Խելահեղ սարսափով նայում էր Սմերդյակովին։ Իսկ Սմերդյակովը, առանց մազաչափ անգամ ազդվելու նրա սարսափից, շարունակում էր քրքրել գուլպայի խորքերը, կարծես չանալով մի բան բռնել այնտեղ մատներով ու դուրս քաշել։ Իվան Ֆյոդորովիչը տեսավ, որ ինչ-որ թղթեր էին դրանք կամ թղթերի մի ծրար։ Սմերդյակովը դուրս քաշեց ծրարը և դրեց սեղանի վրա։

— Ահա՜,— ասաց նա մեղմորեն։

— Ի՞նչ է,— պատասխանեց Իվանը դողալով։

— Հաճեցեք նայել,— նույն մեղմ ձայնով ասաց Սմերդյակովը։

Իվանը մոտեցավ սեղանին, վերցրեց ծրարը և սկսեց բանալ, բայց հանկարծ մատները ետ քաշեց, կարծես նողկալի, սարսափելի մի սողունի էր դիպել։

— Ձեր մատները անընդհատ ցնցվում են է՞, դող է բռնել,— նկատեց Սմերդյակովը և ինքն անձամբ, առանց շտապելու, բացեց ծրարը։ Հարյուր ռուբլիանոց վարդագույն բանկնոտների երեք կապոց կար ծրարի մեջ։

— Ամբողջն էլ այստեղ է, ամբողջ երեք հազարը, կարող եք չհաշվել։ Վերցրեք,— առաջարկեց նա Իվանին, գլխի շարժումով ցույց տալով փողը։ Իվանը փուլ եկավ աթոռին։ Պատի պես գունատ էր։

— Վախեցրիր ինձ... այդ գուլպայովդ...— ասաց նա, մի տեսակ տարօրինակ ժպտալով։

— Բայց իրո՞ք, իրո՞ք մինչև հիմա չգիտեիք,— կրկին հարցրեց Սմերդյակովը։

— Չէ, չգիտեի։ Միշտ էլ մտածում էի, որ Դմիտրին է։ Եղբա՜յր իմ։ Եղբա՜յր։ Ա՜խ։— Նա հանկարծ երկու ձեռքով բռնեց գլուխը։— Լսի՜ր. մենա՞կ ես սպանել։ Առա՞նց եղբորս, թե եղբորս հետ։

— Միայն ձեզ հետ, ձեզ հետ միասին եմ սպանել, իսկ Դմիտրի Ֆյոդորովիչն այնպես էլ ոչ մի մեղք չունի։

— Լավ, լավ... Իմ մասին հետո։ Ինչո՞ւ եմ այսպես անընդհատ դողում... Բառերը չեմ կարողանում արտասանել։

— Միշտ էլ քաջ էիք այն ժամանակ, այսինքն թե «ամեն ինչ թույլատրելի է» ասում էիք, իսկ հիմա ա՜յ թե վախեցաք այսպես, հա՞,— քրթմնջում էր Սմերդյակովը, զարմանալով։— Լիմոնադ չե՞ք ուզում, անմիջապես կասեմ, որ բերեն։ Շատ լավ կթարմացնի։ Միայն թե նախ այս բանը պետք է ծածկել։

Եվ նա նորից գլխով ցույց տվեց փողը։ Նա հենց վեր էր կենում, որպեսզի դռնից կանչի Մարյա Կոնդրատևնային և ասի, որ պատրաստի ու բերի լիմոնադը, բայց նախ մի բան փնտրեց փողը ծածկելու և աղչկա աչքից թաքցնելու համար. սկզբում թաշկինակը հանեց, բայց որովհետև դա շատ կեղտոտ էր նորից, վերցրեց այն հաստ ու դեղին գիրքը, որ Իվանը ներս մտնելու ժամանակ նկատել էր սեղանին, և դրեց փողի կապոցների վրա։ Գիրքը կոչվում էր «Սրբո հորն մերո Իսահակ Ասորու ճառերը»։ Իվան Ֆյոդորովիչը մեքենաբար կարդաց վերնագիրը։

— Լիմոնադ չեմ ուզում,— ասաց նա։— Իմ մասին՝ հետո։ Նստիր ու պատմիր՝ ինչպե՞ս արեցիր այդ բանը։ Ամեն ինչ պատմիր...

— Գոնե վերարկուն հանեիք, թե չէ կքրտնեք։

Իվան Ֆյոդորովիչը, կարծես հիմա միայն գլխի քնկնելով, քաշեց-հանեց վերարկուն և, առանց աթոռից վեր կենալու, նետեց նստարանի վրա։

— Դե պատմիր, պատմի՛ր խնդրեմ։

Խաղաղվել էր կարծես։ Վստահ սպասում էր, որ Սմերդյակովը ամեն ինչ կասի հիմա։

— Պատմեմ, թե ինչպե՞ս կատարվեց դա,— հառաչեց Սմերդյակովը։— Ամենաբնական ձևով կատարվեց, հենց այն ձեր խոսքերից ելնելով...

— Իմ խոսքերի մասին՝ հետո,— ընդհատեց նորից Իվանը, բայց արդեն ոչ թե առաջվա նման գոռալով, այլ հաստատորեն արտասանելով բառերը և կարծես լիովին իշխելով իրեն։— Միայն թե մանրամասն պատմի՛ր ինչպե՞ս արեցիր այդ բանը։ Կարգով պատմիր ամեն ինչ։ Ոչինչ մի՛ մոռանա։ Մանրամասնությունները, հատկապես մանրամասնությունները։ Խնդրում եմ։

— Դուք գնացիք, հետո ես նկուղ ընկա...

— Իսկապես նոպա՞ էր, թե կեղծեցիր։

— Պարզ է, որ կեղծեցի։ Ամեն ինչ կեղծեցի։ Սանդուղքից հանգիստ իջա, հենց մինչև հատակը, հանգիստ պառկեցի այնտեղ, և հենց որ պառկեցի, սկսեցի գոռալ։ Եվ երբ դուրս էին տանում, ցնցվում էի։

— Սպասի՛ր։ Եվ շարունակ կեղծո՞ւմ էիր, հետո՞ էլ, հիվանդանոցո՞ւմ էլ։

— Չէ, բնավ երբեք։ Հենց հաջորդ օրը, առավոտ շուտ, դեռ հիվանդանոց տանելուց առաջ, իսկականը խփեց, և այնքան ուժեղ նոպա էր, որ արդեն քանի՞ տարի է այդպիսի բան չէր եղել։ Երկու օր բոլորովին կորցրել էի ուշքս։

— Լավ, լավ։ Շարունակիր։

— Դրեցին ինձ այն անկողնի վրա, հենց գիտեի, որ այնտեղ էլ կդնեն, այն բարակ պատի ետևը, որովհետև ամեն անգամ, երբ հիվանդ էի լինում, Մարֆա Իգնատևնան գիշերը ինձ պառկեցնում էր հենց այդ բարակ պատի ետևը, իրենց մոտ։ Նա միշտ էլ ինձ քնքուշ է վերաբերվել, հենց իմ ծնված օրից։ Գիշերը տնքում էի, միայն թե մեղմ։ Անընդհատ սպասում էի Դմիտրի Ֆյոդորովիչին։

— Ինչպե՞ս թե սպասում էիր։ Քեզ մո՞տ էր գալու։

— Ինչո՞ւ ինձ մոտ։ Սպասում էի, որ կգա, տուն կմտնի, որովհետև այլևս ինձ համար ոչ մի տարակույս չկար, որ նա հենց այդ գիշեր կգա, քանի որ այլևս ինձ չտեսնելով և ոչ մի լուր չստանալով՝ անպայման ստիպված էր ինքը անձամբ տուն մտնել ցանկապատից, ինչպես որ կարող էր արդեն, և մտնելուց հետո մի բան պիտի անե՛ր։

— Իսկ եթե չգա՞ր։

— Այդ դեպքում ոչինչ չէր պատահի։ Առանց նրան ես սիրտ չէի անի։

— Լավ, լավ... ավելի հասկանալի պատմիր, մի՛ շտապիր. և մանավանդ՝ ոչինչ բաց մի՛ թողնի։

— Սպասում էի, որ նա կսպանի Ֆյոդոր Պավլովիչին... հաստատ կսպանի։ Որովհետև այդպես նախապատրաստել էի նրան... վերջին օրերը... և մանավանդ որ այդ նշանները իմացել էր արդեն։ Նրա կասկածամտությունը և այն կատաղությունը, որ այդ օրերին կուտակվել էր նրա մեջ, պետք է անպայման

ստիպեին նրան, որ այդ նշանների միջոցով հենց տան ներսը մտնի։ Անպայման։ Հենց այդպես էլ սպասում էի։

— Կա՛ց,— ընդհատեց Իվանը,— եթե նա սպաներ, ուրեմն կվերցներ ու կտաներ փողը. հենց այդպես պետք է մտածեիր, չէ՞։ Դրանից հետո քե՞զ ինչ էր հասնելու։ Չեմ տեսնում այդ բանը։

— Բայց նա երբեք էլ չէր կարող փողը գտնել։ Ես հենց միայն ասել էի նրան, որ փողը անկողնի տակ է։ Բայց դա ճիշտ չէր։ Առաջ տուփի մեջ էր փողը, հասկանո՞ւմ եք։ Իսկ հետո, քանի որ Ֆյոդոր Պավլովիչը ամբողջ աշխարհում միայն ինձ էր վստահում, ես նրան միտք տվի, որ այն փողի ծրարը պահի անկյունում, սրբապատկերների ետևը, որովհետև ոչ ոքի մտքով էլ չէր անցնի այդտեղ նայել, մանավանդ եթե ամապարանքով ներս մտնի։ Այնպես որ, այդ ծրարը հենց այդտեղ էր, սրբապատկերների ետևը։ Իսկ անկողնի տակ պահելը բոլորովին ծիծաղելի կլիներ, տուփը գոնե կարելի էր բանալիով կողպել։ Բայց այստեղ հիմա բոլորն էր հավատացել են, որ անկողնի տակ էր փողը։ Հիմար դատողություն։ Այ ուրեմն եթե Դմիտրի Ֆյոդորովիչը կատարեր հենց այդ սպանողությունը, ոչինչ չէր գտնի և շտապ կփախչեր, ամեն մի խշշոցից վախենալով, ինչպես միշտ էլ լինում է սպանիչներին, կամ էլ թե չէ՝ կձերբակալվեր։ Այնպես որ այդ դեպքում ես միշտ էլ կարող էի, ասենք հաջորդ օրը, կամ էլ հենց նույն գիշերը ելնել սրբապատկերների ետևը, այդ փողը վերցնել ու տանել, և ամեն ինչ Դմիտրի Ֆյոդորովիչի վրա կգցեին։ Միշտ էլ կարող էի դրա վրա հույս դնել։

— Լավ, բայց եթե չսպաներ, այլ պարզապես ծեծե՞ր։

— Եթե չսպաներ, ես անշուշտ չէի համարձակվի փողը վերցնել և ամեն ինչ զուր կլիներ։ Բայց այսպիսի հաշիվ էլ կարող նա այնպես կծեծի, որ Ֆյոդոր Պավլովիչը ուշքը կկորցնի, ես էլ այն ժամանակ կհասնեմ ու կվերցնեմ փողը, իսկ հետո Ֆյոդոր Պավլովիչին այնպես կասեմ, որ հենց միայն Դմիտրի Ֆյոդորովիչն է փողը հափշտակել, նրան ծեծելուց հետո, ուրիշ ոչ ոք։

— Սպասիր... խառնում եմ արդեն։ Ուրեմն, համենայն դեպս Դմիտրին սպանեց, իսկ դու միայն փո՞ղը վերցրիր։

— Չէ, նա չի սպանել։ Ինչ կա որ, ես հիմա էլ կարող էի ձեզ ասել, որ սպանիչը նա է... Բայց չեմ ուզում հիմա ձեր առաջ սուտ ասել, որովհետև... որովհետև եթե դուք իսկապես, ինչպես

ինքս էլ տեսնում եմ, մինչև այս րոպես ոչինչ չէիք հասկանում և ձեր չէիք թափում, որ ձեր բացահայտ մեղքը հենց իմ երեսին գցեք, համենայն դեպս նորից էլ դուք եք մեղավորը ամեն ինչում, որովհետև գիտեիք սպանողության մասին և ինձ էլ հանձնարարեցիք սպանողության գործը, իսկ ինքներդ, ամեն ինչ իմանալով հանդերձ, ելաք գնացիք։ Դրա համար էլ ուզում եմ այս երեկո ձեր երեսին ապացուցել, որ այս բոլորի մեջ գլխավոր սպանիչը միայն դուք եք, իսկ ես բոլորովին երկրորդական եմ, թեև ես եմ սպանել։ Իսկ ամենաօրինավոր սպանիչը հենց դո՛ւք եք։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ եմ մարդասպան։ Օ՜ աստված իմ,— չդիմացավ վերջապես Իվանը, մոռանալով, որ իրեն վերաբերող բոլոր հարցերը թողել էր պարզելու խոսակցության վերջում։ Այդ նույն Ջերմաշնյայի հա՞րցն է նորից։ Սպասիր, ասա՛ ինձ, ինչո՞ւ քեզ պետք էր իմ համաձայնությունը, եթե իրոք Ջերմաշնյան որպես համաձայնություն ընդունեցիր։ Հիմա՞ ինչպես կբացատրես այդ բանը։

— Վստահ լինելով ձեր համաձայնության, ես արդեն կիմանայի, որ դուք, վերադառնալուց հետո, այդ կորած երեք հազարի համար աղմուկ-աղաղակ չեք բարձրացնի, եթե մի որևէ պատճառով իշխանությունը ինձ վրա կասկածեր Դմիտրի Ֆյոդորովիչի տեղ կամ էլ որպես Դմիտրի Ֆյոդորովիչի մեղսակից։ ընդհակառակը ինձ կպաշտպանեիք ուրիշներից... Իսկ ժառանգությունը ստանալով, հետագա ձեր ամբողջ կյանքում, երբ որ կարողանայիք, այնպես էլ կվարձատրեիք ինձ, որովհետև համենայն դեպս այդ ժառանգությունը ի՛մ միջոցով ստացած կլինեիք, այնինչ եթե Ագրաֆենա Ալեքսանդրովնայի հետ ամուսնանար՝ ճիվերս միայն կստանայիք։

— Հա՜։ Ուրեմն դու միտք ունեիր հետո՞ էլ տանջել ինձ, ամբո՞ղջ իմ կյանքում,— կրճտացրեց Իվանը։— Հապա՞ եթե չգնայի այն ժամանակ, այլ ուղղակի հայտնեի քո մասին։

— Իսկ ի՞նչ կարող էիք հայտնել այն ժամանակ։ Թե ես ձեզ համոզում եմ Ջերմաշնյա՞ գնալ։ Բայց դա հիմարություն է, չէ՞։ Բացի այդ, մեր խոսակցությունից հետո կա՛մ պիտի գնայիք, կամ էլ մնայիք։ Եթե մնայիք, ուրեմն ոչինչ էլ չէր պատահի, այնպես էլ կիմանայի, որ դուք չեք ուզում այդ բանը, և ոչ մի քայլ չէի անի։ Բայց քանի որ գնացիք արդեն, ուրեմն, նշանակում է, ինձ վստահացրիք, որ չեք համարձակվի իմ դեմ

հայտնել դատարանին և այդ երեք հազարն էլ ներում եք ինձ։ Եվ բոլորովին չէիք էլ կարող հալածել հետո, որովհետև այդ դեպքում ես ամեն ինչ կպատմեի դատարանում, այսինքն ոչ թե այն, որ ես գողացել եմ կամ սպանել (այդ բանը չէի ասի), այլ այն, որ դուք ինքներդ ինձ դրդում էիք գողանալ ու սպանել, բայց ես պարզապես չհամաձայնվեցի։ Հենց դրա համար էլ այն ժամանակ ինձ պետք էր ձեր համաձայնությունը, որ դուք ոչ մի բանով չկարողանայիք նեղը դնել ինձ, որովհետև ի՞նչ ապացույց կարող էիք բերել որ, իսկ ես միշտ էլ կարող էի ձեզ նեղը դնել, մեջտեղ հանելով, թե ինչպիսի մարմաջ ունեիք ձեր ծնողի մահվան, և այ ասում եմ՝ հասարակության մեջ բոլորն էլ դրան կհավատային և դուք ամոթով կմնայիք ամբողջ կյանքում։

— Ուրեմն ունեի՞, ունեի՞ այդ մարմաջը, ունեի՞,— կրճտացրեց նորից Իվանը։

— Անպայման ունեիք և ձեր համաձայնությամբ դուք լուռումունջ թույլ տվիք ինձ, որ անեմ այդ գործը,— Սմերդյակովն անհողդողդ նայեց Իվանին։ Շատ տկար էր նա և խոսում էր մեղմ ու հոգնած, բայց ներքին թաքուն մի բան հրահրում էր նրան, երևի մի որևէ մտադրություն ուներ։ Իվանը նախազգաց այդ բանը։

— Շարունակիր,— ասաց նա,— շարունակիր այդ գիշերվա մասին։

— Էլ ի՞նչ շարունակեմ։ Պառկել էի ուրեմն, և մեկ էլ լսեցի՝ Ֆյոդոր Պավլովիչը կարծես թե գոռաց։ Իսկ դրանից առաջ Գրիգորի Վասիլևիչը հանկարծ վեր էր կացել ու գնացել էր դուրս, և հանկարծ բոռացել էր, հետո ամեն ինչ լուռ էր, խավար։ Պառկել եմ, սպասում եմ, սիրտս խփում է, չեմ կարողանում համբերել։ Վեր կացա վերջապես ու գնացի. տեսնում եմ՝ ձախ կողմից պատուհանը բաց է այգու վրա, մի քանի քայլ էլ գնացի ձախ, որ ականջ դնեմ՝ ողջ-առողջ նստե՞լ է այնտեղ, թե չէ, և լսեցի՝ Ֆյոդոր Պավլովիչը ետ ու առաջ է անում, ախ է քաշում, ուրեմն ողջ է։ Է՜խ, մտածեցի։ Մոտեցա պատուհանին, «Ես եմ» գոռացի նրան։ Իսկ նա թե՝ «Այստեղ էր, այստեղ էր, փախա՜վ»։ Այսինքն ուզում էր ասել՝ Դմիտրի Ֆյոդորովիչը։ «Գրիգորիին սպանե՞ց»։— «Որտե՞ղ»,— փսփսացի ես։ «Այնտեղ, անկյունում»,— ցույց տվեց նա, ինքն էլ փսփսաց։ «Սպասեք»,— ասացի։ Գնացի անկյունը, փնտրելու, և պատի մոտ էլ հենց դեմ առա Գրիգորի Վասիլևիչին՝ պառկել էր արյունլվա, ուշքը կորցրած։

«Ուրեմն ճիշտ է, որ Դմիտրի Ֆյոդորովիչն է եկել»,— անցավ անմիջապես մտքովս, և իսկույն տեղն ու տեղը որոշեցի հենց միանգամից վերջացնել գործը, քանի որ Գրիգորի Վասիլևիչը եթե դեռ ողջ էլ էր, առայժմ ոչինչ չէր տեսնի՝ այդպես անզգա պառկած։ Միակ վտանգը այն էր, որ հանկարծ Մարֆա Իգնատևնան կարող էր զարթնել։ Զգացի դա այդ րոպեին, բայց այդ մարմաջը ինձ բռնել էր արդեն, այնքան, որ շունչս կտրվեց։ Նորից եկա պատուհանի տակ և ասացի Ֆյոդոր Պավլովիչին. «Այստեղ է, եկել է, Ագրաֆենա Ալեքսանդրովնան է եկել, ուզում է ներս գալ»։ Ուղղակի ոտից գլուխ ցնցվեց երեխայի նման։ «Ո՞ւր այստեղ, Ո՞ւր»,— հառաչեց ուղղակի, բայց դեռ չէր հավատում։ «Այնտեղ կանգնել է,— ասացի,— բաց արեք»։ Հենց պատուհանից էլ նայում էր ինձ, հավատում էր ու չէր հավատում, բայց վախենում էր դուռը բանալ. է՛, ինձնից էլ արդեն վախենում է, մտածեցի։ Եվ ծիծաղելի բան. հանկարծ խելքիս փչեց, որ այդ նշանը թիկացնեմ պատուհանի շրջանակին, հենց իր աչքի առաջ, այսինքն թե Գրուշենկան է եկել. խոսքերիս կարծես թե չէր հավատում, բայց հենց որ նշանը թիկացրի, անմիջապես վազեց դուռը բանալու։ Բացեց։ Ներս էի մտնում, բայց նա կանգնել էր, մարմնով փակել ճանապարհը, չէր թողնում։ «Ո՞ւր է նա, ո՞ւր»,— նայում է ինձ ու դողում է։ է՛, մտածեցի, եթե այսպես վախենում է ինձնից, վա՜տ է բանը։ Եվ մեկ էլ ոտքերս թուլացան վախից, որ նա ինձ ներս չի թողնի, կամ էլ կգոռա, կամ հանկարծ Մարֆա Իգնատևնան կվազի-կգա, և կամ էլ մի որևէ բան կպատահի. էլ չեմ հիշում, երևի գույնս գցել կանգնել էի նրա առաջ։ «Այնտեղ է ախր, այնտեղ,— փսփսացի,— պատուհանի տակ, ինչպե՞ս չտեսաք նրան»։— «Իսկ դու բե՛ր նրան այստեղ, բե՛ր նրան այստեղ»։— «Վախենում է,— ասացի,— գոռոցից վախեցել։ Թփի տակ է թաքնվել, գնացեք ինքներդ կանչեցեք ձեր սենյակից»։ Վազեց ներս, մոտեցավ պատուհանին, մոմը դրեց պատուհանի մեջ։ «Գրո՜ւշենկա,— կանչեց,— Գրուշենկա, այստե՞ղ ես»։ Այդպես կանչում էր, բայց չէր ուզում պատուհանից դուրս թեքվել, չէր ուզում ինձնից մի քայլ հեռանալ, հենց այդ ահուդողից էր, որովհետև շատ էր վախեցել ինձնից, դրա համար էլ չէր համարձակվում իմ կողքից հեռանալ։ «Ա՜յ այնտեղ է,— ասացի ես (մոտեցա պատուհանին, ինքս լրիվ դուրս թեքվեցի),— ա՜յ այնտեղ, թփի մեջ, ծի-

ծաղում է ձեզ, տեսնո՞ւմ եք։ Մեկեն հավատաց, ուղղակի սկսեց դողալ, սոսկալի սիրահարված էր ախր. և ամբողջ մարմնով պատուհանից դուրս թեքվեց։ Ես իսկույն վերցրի այն երկաթե մամլակը, նրա սեղանի վրա էր, հիշո՞ւմ եք, մի երեք ֆունտ կլինի ծանրությունը. թափ առա և նետեց... ուղղակի գագաթին՝ մամլակի անկյունով։ Զգոռաց նույնիսկ։ Միայն փուլ եկավ հանկարծ, իսկ ես մի անգամ էլ խփեցի, երրորդ անգամ էլ։ Երրորդին զգացի, որ չարդեցի գանգը։ Հանկարծ մեջքի վրա ընկավ, երեսը վեր, ամբողջ արյուն։ Նայեցի շուրջս, արյուն չկար վրաս, չէր ցայտել. մամլակը սրբեցի, տեղը դրի, ելա սրբապատկերների մոտ, ծարից հանեցի փողը, իսկ ծարը գցեցի հատակին, վարդագույն ժապավենն էլ կողքը։ Իջա այգի, ոտից գլուխ դողում էի։ Մոտեցա ուղղակի այն խնձորենուն, որի վրա խոռոչ կա, գիտեք այդ խոռոչը. իսկ ես արդեն վազուց էի նկատի առել, այնտեղ արդեն մի լաթի կտոր ու թուղթ կար, վազուց էի պատրաստել։ Ամբողջ գումարը փաթաթեցի թղթի մեջ, հետո էլ լաթի մեջ և խցկեցի դրա խորքը։ Այդպես էլ երկու շաբաթից ավելի մնաց այնտեղ, այ հենց այս գումարը, հետո երբ հիվանդանոցից դուրս եկա՝ հանեցի։ Ուրեմն այդուց ետ եկա, պառկեցի անկողնիս և ահուդողով մտածեցի։ «Եթե Գրիգորի Վասիլևիչը ուղղակի սպանված է, այդ դեպքում շատ վատ կարող է լինել, իսկ եթե չի սպանված և ուշքի գա, շա՜տ լավ կլինի, որովհետև այդ դեպքում նա վկա է, որ Դմիտրի Ֆյոդորովիչը եկել էր, ուրեմն հենց նա է սպանել ու փողը տարել»։ Եվ սկսեցի երկմտանքից ու անհամբերությունից տնքալ, որպեսզի շուտով արթնացնեմ Մարֆա Իգնատևնային։ Վերջապես նա վեր կացավ, ուղղակի վազեց ինձ մոտ, բայց երբ հանկարծ տեսավ, որ Գրիգորի Վասիլևիչը չկա, վազելով դուրս գնաց, հետո լսեցի՝ սկսեց ճչալ։ է՛հ, դրանից հետո այդ ամբողջը շարունակվեց մինչև առավոտ, իսկ իմ սիրտն էլ լրիվ հանգստացավ այլևս։

Սմերդյակովը կանգ առավ։ Իվանը մեռելային լռության մեջ լսել էր նրան շարունակ, առանց շարժվելու, աչքերը չհեռացնելով նրանից։ Իսկ Սմերդյակովը պատմելու ընթացքում մեկ-մեկ միայն նայում էր նրան, ավելի շատ մի կողմ էր թեքում հայացքը։ Երբ վերջացրեց իր պատմությունը, հայտնապես հուզվել էր ու ծանր էր շնչում։ Դեմքին քրտինք երևաց։ Բայց կարելի չէր կռահել՝ զղջահարությո՞ւն էր զգում, թե ինչ։

— Սպասիր,— վրա բերեց Իվանը, մի բան մտածելով։—

Իսկ դո՞ւռը։ Եթե նա քո՛ առաջ միայն բացեց, հապա ինչպե՞ս կարող էր Գրիգորին դուռը բաց տեսնել մինչ այդ։ Որովհետև Գրիգորին մինչև քո գալն է տեսել, չէ՞։

Ուշադրավ է այն, որ Իվանը հարցնում էր խաղաղ ձայնով, կարծես բոլորովին ուրիշ, բոլորովին անհիշաչար շեշտով նույնիսկ, այնպես որ եթե որևէ մեկը դուռը բանար այդ բոպեին ու շեմքից նայեր նրանց, անպայման կգար այն եզրակացության, որ նստել ու հաշտ ու խաղաղ խոսում են մի որևէ սովորական, թեև հետաքրքրաշարժ նյութի մասին։

— Ինչ վերաբերում է այդ դռանը, և որ Գրիգորի Վասիլևիչը իբր թե տեսել է, որ բաց էր, դա պարզապես նրան թվացել է,— ասաց Սմերդյակովը, ծուռ ժպտալով։— Նա հո մարդ չէ, ասեմ ձեզ, համառ ջորու նման մի բան է. չի էլ տեսել, բայց իրեն թվացել է, որ տեսել է և էլ չեք կարող տեղից շարժել նրան։ Է՛հ, մեր բախտը բերից, որ նա հնարեց այդ բանը, որովհետև Դմիտրի Ֆյոդորովիչին լրիվ կմերկացնեն դրանից հետո, անպայման։

— Լսի՛ր,— ասաց Իվան Ֆյոդորովիչը, կարծես նորից սկսելով գլուխը կորցնել ու մի բան մտաբերելու ճիգ անելով,— լսիր... Ես դեռ շատ բան ուզում էի հարցնել քեզ, բայց մոռացա... Անընդհատ մոռանում եմ ու խառնում իրար... Հա՛, այո։ Գոնե այս մի բանը ասա ինձ. ինչո՞ւ բացեցիր ծրարը և հենց այնտեղ էլ թողեցիր, հատակին։ Ինչո՞ւ պարզապես վերցնելով չտարար ծրարը... Երբ պատմում էիր, ինձ թվաց, թե այնպես խոսեցիր այդ ծրարի մասին, որ կարծես հենց այդպես էլ պետք է վարվեիր... իսկ ինչո՞ւ այդպես պետք է վարվեիր՝ չեմ կարողանում հասկանալ...

— Այդպես արեցի որոշ պատճառով։ Որովհետև՝ եթե մարդս գիտի բանը և սովոր է դրան, ինչպես որ ես, օրինակ, որ այդ փողը առաջուց տեսել էի և գուցե ինքս էլ դրել այդ ծրարի մեջ, հետո էլ իմ սեփական աչքերով նայել էի, թե ինչպես կնքվեց դա և վրան էլ գրվեց, ուրեմն այդպիսի մարդը, եթե, օրինակ, նա է սպանել, ինչո՞ւ համար սպանողությունից հետո պետք է սկսեր բաց անել ծրարը, այն էլ այդպիսի հապճեպության մեջ, առանց այն էլ արդեն բոլորովին հաստատ իմանալով, որ փողը անպայման այդ ծրարի մեջ է։ Ընդհակառակը, եթե նա գող է, ինչպես որ ես, օրինակ, ուրեմն պարզապես այդ ծրարը պետք է գրպանը խոթեր, բոլորովին էլ չբանալով և շուտով պետք է

ծլկեր։ Բոլորովին ուրիշ բան է, եթե Դմիտրի Ֆյոդորովիչը լիներ. նա ծրարի մասին լսել էր միայն, իր աչքերով չէր տեսել, և եթե, օրինակ, վերցնում է ծրարը, իբր թե անկողնի տակից, ուրեմն շուտով տեղն ու տեղը պետք է բաց անի, որպեսզի իմանա՝ իսկապես կա՞ մեջը այդ փողը։ Իսկ ծրարը այնտեղ էլ գցում է, այլևս չկարողանալով կշռադատել, որ կմնա որպես հանցանշան, որովհետև նա անվարժ գող է և դրանից առաջ երբեք էլ ոչ մի բան չի գողացել ուղղակի, ծնունդով ազնվական լինելով, իսկ եթե հիմա որոշել է գողանալ, կարծես թե եկել է ոչ թե հենց գողանալու համար, այլ պարզապես իր սեփական փողը նա վերցնելու, քանի որ նախօրոք ամբողջ քաղաքին հայտարարել է դրա մասին և նույնիսկ առաջուց բացեիբաց գլուխ է գովել բոլորի ներկայությամբ, որ կգնա և իր սեփականությունը կխլի Ֆյոդոր Պավլովիչի ձեռքից։ Հենց այս միտքը ես դատախազին հասկացրի իմ հարցաքննության ժամանակ, ոչ թե բացեիբաց, այլ ընդհակառակը, մի ակնարկությամբ գլխի դցեցի նրան, իբրև թե ես չեմ հասկանում և իբրև թե ի՛նքը խելքի ընկավ, ոչ թե ես հուշեցի. և նույնիսկ պարոն դատախազի բերանի ջրերը վազեցին իմ այդ ակնարկությունից...

— Բայց մի՞թե, մի՞թե այդ բոլորը դու տեղն ու տեղը մտածեցիր այդ բոպեին,— բացականչեց Իվան Ֆյոդորովիչը, զարմանքից այլայլված։ Նա նորից վախով էր նայում Սմերդյակովին։

— Ի սե՛ր աստծո, կարելի՞ է այդ բոլորը մտածել այդպիսի հապճեպության մեջ։ Առաջուց ամեն ինչ մտածվել էր։

— Դե՛... դե ուրեմն... հենց սատանա՛ն է օգնել քեզ,— բացականչեց նորից Իվան Ֆյոդորովիչը։— Չէ, դու հիմար չես, դու շատ ավելի խելացի ես, քան կարծում էի...

Նա վեր կացավ, սենյակում քայլելու ակնհայտ մտադրությամբ։ Ահավոր մի տխրություն էր պատել նրան։ Բայց քանի որ սեղանը փակել էր ճանապարհը և սեղանի ու պատի արանքից համարյա թե խցկվելով պետք էր անցնել, նա պարզապես դարձավ իր կանգնած տեղում և նորից նստեց։ Գուցե հենց այն, որ չկարողացավ քայլել, ջղայնացրեց նրան հանկարծ, այնպես որ համարյա առաջվա պես մոլեգնորեն գոռաց միանգամից.

— Լսի՛ր, թշվառական, ստոր, անպե՛տք արարած։ Չե՞ս հասկանում, ինչ է. եթե քեզ չսպանեցի մինչև հիմա, պատճառը պարզապես այն է, որ պահում եմ քեզ՝ վաղը պատասխան կտաս

դատարանում։ Տեսնում է սառված,— ձեռքը բարձրացրեց Իվանը,— գուցե ես էլ մեղավոր էի, գուցե իրոք մի թաքուն ցանկություն ունեի, որ... մեռնի հայրս, բայց երդվում եմ՝ ես այնքան մեղավոր չէի, որքան կարծում ես դու, և գուցե բոլորովին էլ չեմ դրդել քեզ։ Ո՞չ, ո՞չ, չեմ դրդել։ Բայց միևնույն է, ես ի՞նքս պիտի վկայություն տամ իմ դեմ, հենց վաղը, դատարանում, վճռե՛լ եմ։ Ամե՛ն ինչ կասեմ, ամեն ինչ։ Բայց մենք միասին կներկայանանք, քե՛զ հետ։ Եվ դատարանում ի՞նչ էլ ասես իմ դեմ, ի՞նչ վկայություն էլ տաս՝ ընդունում եմ և չեմ վախենում քեզնից. ի՞նքս կհաստատեմ ամեն ինչ։ Բայց դո՛ւ էլ պետք է խոստովանես դատարանի առաջ։ Պե՞տք է, պե՞տք է խոստովանես, միասին կգնանք։ Հենց այդպես էլ պետք է լինի։

Իվանը հանգիստավոր ու վճռականորեն ասաց այդ բանը, և միայն նրա փայլատակող հայացքից երևում էր արդեն, որ այդպես էլ պիտի լինի։

— Դուք հիվանդ եք, տեսնում եմ, կատարյալ հիվանդ եք։ Ձեր աչքերը բոլորովին դեղնել են,— ասաց Սմերդյակովը, բայց առանց դուրգն հեգնանքի, կարծես նույնիսկ կարեկցելով։

— Միասի՛ն կգնանք,— կրկնեց Իվանը,— իսկ եթե չգաս՝ միևնույն է, ես մենակս կխոստովանեմ։

Սմերդյակովը մի րոպե լուռ մնաց, կարծես խորհրդածելով։

— Ոչ մի այդպիսի բան չի լինելու, դո՛ւք էլ չեք գնալու,— որոշեց նա վերջապես կտրականորեն։

— Ձե՛ս հասկանում դու ինձ,— բացականչեց Իվանը կշտամբանքով։

— Ձափից դուրս ամոթով կմնաք, եթե ամեն ինչ խոստովանեք։ Եվ ավելին ասեմ՝ անօգուտ բան կլինի, բոլորովին անօգուտ, որովհետև ես ուղղակի կհայտարարեմ, որ ոչ մի այդպիսի բան չեմ ասել ձեզ երբե՛ք, և որ դուք կա՛մ հիվանդ եք (և հենց այդպես է կարծես թե), կամ էլ այնքան եք ցավել ձեր եղբոր համար, որ զոհում եք ձեզ, իսկ այդ բոլորը հնարել եք իմ դեմ, քանի որ ինձ մժուկի տեղ եք դրել ձեր ամբողջ կյանքում, ոչ թե մարդու տեղ։ Եվ ո՞վ կհավատա ձեզ, և ի՞նչ ապացույց ունեք, գոնե մի հատիկ ապացույց։

— Լսիր, այս փողը հիմա ցույց տվիր, որ անշուշտ համոզես ինձ։

Սմերդյակովը փողի վրայից վերցրեց Իսահակ Ասորու գիրքը և մի կողմ դրեց։

— Վերցրեք այս փողը և տարեք ձեզ հետ,— հառաչեց Սմերդյակովը։

— Ի՞նչ կտանեմ։ Բայց ինչո՞ւ ես ինձ տալիս, եթե սրա համար սպանեցիր,— մեծ զարմանքով նայեց նրան Իվանը։

— Բոլորովին պետք չէ ինձ այս փողը,— ասաց Սմերդյակովը դողացող ձայնով ու ձեռքը թափ տվեց։— Առաջ միտք ունեի, որ այսպիսի գումարով նոր կյանք սկսեմ Մոսկվայում, կամ էլ ավելի լավ է՝ արտասահմանում, այդպիսի մի երազ ունեի, և ամենից ավելի այն պատճառով, որ «ամեն ինչ թույլատրելի է»։ Դա ճիշտ բան էր, որ սովորեցրիք ինձ, որովհետև այն ժամանակ դուք ինձ շատ էիք ասում դրա մասին. որովհետև՝ եթե անսկիզբ ու անվախճան աստված չկա, ուրեմն ոչ մի առաքինություն էլ չկա, և այդ դեպքում պետք էլ չէ առաքինություն կոչվածը։ Ճիշտ էիք ասում։ Հենց այդպես էլ դատեցի։

— Քա խելքո՞վ հասար դրան,— ծուռ ժպտաց Իվանը։

— Ձեր ղեկավարությամբ։

— Իսկ հիմա ուրեմն հավատո՞ւմ ես աստծուն, քանի որ փողը ետ ես տալիս։

— Չէ, չեմ հավատում,— շշնջաց Սմերդյակովը։

— Ուրեմն ինչո՞ւ ես տալիս։

— Դե բավակա՛ն է... կարիք չկա,— նորից ձեռքը թափ տվեց Սմերդյակովը։— Այ դուք ինքներդ անընդհատ ասում էիք այն ժամանակ, որ ամեն ինչ թույլատրելի է, իսկ հիմա ինչո՞ւ եք այսպես տակնուվրա եղել, ինքներդ, հա՞։ Նույնիսկ ուզում եք գնալ ու ինքներդ ձեր դեմ վկայություն տալ... Միայն թե ոչ մի այդպիսի բան չի լինելու։ Ձե՛ք գնա վկայություն տալու,— վճռեց նորից Սմերդյակովը հաստատ ու համոզված։

— Կտեսնե՛ս,— ասաց Իվանը։

— Այդ բանը չի կարող լինել։ Դուք շատ խելոք եք։ Փող եք սիրում, գիտեմ դա, հարգանք ու պատիվ էլ եք սիրում, որովհետև շատ հպարտ եք, կանացի հրապույրները չափից ավելի եք սիրում, իսկ ամենից ավելի՝ հանգիստ ու ճոխ կյանքով ապրել և ոչ մեկի առաջ գլուխ չծռել. այս մեկը՝ ամենից ավելի։ Ձեք ուզենա ձեր կյանքը վերջնականապես փչացնել, դատարանում այդպիսի խայտառակություն ընդունելով։ Դուք Ֆյոդոր Պավ-

լովիչի նման եք, ամենից ավելի, բոլոր զավակների մեջ ամենից ավելի դո՛ւք եք նրան քաշել, նույն հոգին ունեք։

— Դու անիծելք չես,— ասաց Իվանը, մի տեսակ շշմած. արյունը խուժեց նրա դեմքին։— Առաջ կարծում էի, որ հիմար ես։ Հիմա լո՛ւրջ ես դու,— նկատեց նա, հանկարծ մի նոր հայացքով նայելով Սմերդյակովին։

— Ձեր հպարտությունից էիք մտածում, որ ես հիմար եմ։ Վերցրեք փողը։

Իվանը վերցրեց բանկնոտների երեք կապոցը և գրպանը դրեց, առանց որևէ բանի մեջ փաթաթելու։

— Վաղը դատարանում ցույց կտամ,— ասաց նա։

— Ոչ ոք ձեզ չի հավատա այնտեղ, քանի որ դուք հիմա ինքներդ էլ բավական փող ունեք. վերցրել եք ձեր դրամատուփից ու բերել դատարան։

Իվանը վեր կացավ։

— Կրկնում եմ, եթե չսպանեցի քեզ, պատճառը միայն այն է, որ դու ինձ պետք ես վաղը, հիշի՛ր դա, մի՛ մոռանա։

— Ինչ կա որ, սպանեցեք։ Հիմա սպանեցեք,— հանկարծ տարօրինակորեն ասաց Սմերդյակովը, տարօրինակորեն նայելով Իվանին։— Այդ էլ չեք համարձակվի անել,— ավելացրեց նա, դառն ժպտալով,— ոչ մի բան չեք համարձակվի, դո՛ւք, որ առաջ հանդո՛ւգն մարդ էիք։

— Վա՛ղը կտեսնվենք,— գոռաց Իվանը և շարժվեց դեպի դուրս։

— Սպասեք... նորից ցույց տվեք ինձ այդ փողը։

Իվանը հանեց բանկնոտները և ցույց տվեց նրան։ Սմերդյակովը մոտ տասը վայրկյան նայեց։

— Դե գնացեք,— ասաց նա, ձեռքը թափ տալով։— Իվա՛ն Ֆյոդորովիչ,— նորից գոռաց հանկարծ նրա ետևից։

— Ի՞նչ է,— դարձավ Իվանը առանց կանգնելու։

— Մնա՛ք բարով։

— Մինչև վա՛ղը,— գոռաց նորից Իվանը և դուրս եկավ խրճիթից։

Ձյունամրրիկը դեռ շարունակվում էր։ Առաջին քայլերը կայտառ էին, բայց հանկարծ սկսեց մի տեսակ երերալ։ «Ֆիզիկական մի բան է սա»,— մտածեց, ինքն իրեն ժպտալով։ Ուրախության նման մի բան էր ծագել հիմա նրա հոգում։ Անսահման մի ամրություն զգաց իր մեջ. վե՛րջ իր տատանումներին,

որոնք այնքան սոսկալիորեն տանջել էին իրեն այս մեկ-երկու ամսվա ընթացքում։ Որոշումը տրված էր արդեն «և այլևս չի փոխվի»,— մտածեց նա երջանկությամբ։ Այդ վայրկյանին հանկարծ ոտքը զարնվեց մի բանի և քիչ մնաց ընկներ։ Կանգ առավ ու իր ոտքերի առաջ տեսավ այն գեղջուկին, որին ինքը գետին էր գցել, նույն տեղում պառկած մնացել էր նա, անզգա ու անշարժ։ Ձյունամրրիկն արդեն ծածկել էր համարյա ամբողջ դեմքը։ Իվանը հանկարծ բռնեց նրան ու շալակը վերցրեց։ Աջ կողմը լույս տեսնելով մի տնակի մեջ, մոտեցավ, թակեց փեղկը, և երբ տանտերը պատասխանեց իր կանչին, նրա օգնությունը խնդրեց, որ գեղջուկին տանեն ոստիկանատուն, խոստանալով անմիջապես երեք ռուբլի տալ դրա համար։ Տանտերը պատրաստվեց ու դուրս եկավ։ Մանրամասնորեն չեմ նկարագրի, թե ինչպես Իվան Ֆյոդորովիչը կարողացավ հասնել իր նպատակին և դյուղացուն պատսպարել ոստիկանատանը, կարգադրելով, որ անմիջապես բժիշկ կանչվի ու քննություն կատարվի, ըստ որում նա նորից առատաձեռն եղավ, վճարելով «ծախսերի համար»։ Ասեմ միայն, որ գրեթե մի ամբողջ ժամ խլեց այդ գործը։ Բայց Իվան Ֆյոդորովիչը դոհ մնաց։ Նրա միտքը աջ ու ձախ աշխատում էր անընդհատ։ «Եթե այսքան հաստատորեն որոշում չընդունեի վաղվա համար,— մտածեց նա հանկարծ հաճույքով,— մի ամբողջ ժամ կանգ չէի առնի գեղջուկին տեղավորելու, կանցնեի-կգնայի և կարևորություն անգամ չէի տա, որ նա սառչելու է... Բայց ինչպե՞ս կարողանում եմ դիտել ինքս ինձ,— մտածեց նա նույն րոպեին ավելի մեծ հաճույքով,— իսկ նրանք որոշել են, որ ես խելագարվո՞ւմ եմ»։ Հասնելով իր տունը, հանկարծ կանգ առավ՝ անակնկալ մի հարց տալով իրեն. «Իսկ պետք չէ՞ արդյոք հենց հիմա, այս րոպեիս գնալ դատախազին ու հայտնել ամեն ինչ»։ Հարցը լուծեց, նորից դեպի տուն դառնալով. «Վաղը ամեն ինչ միասի՛ն»,— շշնջաց նա ինքն իրեն և, տարօրինակ բան, մի վայրկյանում չքացավ գրեթե ամբողջ ուրախությունը, ամբողջ իր ինքնագոհ վիճակը։ Իսկ երբ իր սենյակը մտավ, հանկարծ սառցաստան մի բան դիպավ նրա սրտին, կարծես մի հիշատակ լիներ, ավելի ճիշտ՝ հիշեցում այն մասին, թե տանջալի, նողկալի մի բան կա հիմա հենց այս սենյակում, հենց այս րոպեիս, մի բան, որ առաջ էլ եղել է այստեղ։ Հոգնած փուլ եկավ իր բազմոցին։ Գլուխը ինքնաբերաբար թերեց։ Իվանը թեյ պատրաստեց, բայց այնպես էլ թողեց առանց խմելու։ Գլուխ-

վին արձակեց մինչև հաջորդ օրը։ Նստել էր բազմոցին և գլխապտույտ էր զգում։ Զգում էր, որ հիվանդ է և ուժասպառ։ Սկսել էր քունը տանել, բայց անհանգիստ վեր կացավ ու քայլեց սենյակում, որպեսզի քունը վանի։ Լինում էին րոպեներ, երբ թվում էր իրեն, թե զառանցում է կարծես։ Բայց հիվանդությունը չէր նրա մտահոգության գլխավոր առարկան. նորից նստելով, սկսեց մերթ ընդ մերթ շուրջը նայել, կարծես մի բան էր փնտրում։ Մի քանի անգամ այդպես եղավ։ Վերջապես նրա հայացքը մի կետի վրա սևեռվեց ու մնաց։ Իվանը ժպտաց, բայց դեմքը կարմրեց զայրույթից։ Երկար նստեց նա իր տեղում, գլուխը երկու ձեռքի վրա ամուր հենած, և այնուամենայնիվ թեք-թեք նայելով այդ նույն կետին՝ դիմացի պատի տակ դրված բազմոցին։ Երևի մի բան կար այնտեղ, մի առարկա, որ չդադարեցնում էր նրան, խռովում, տանջում։

IX

ՍԱՏԱՆԱՆ։ ԻՎԱՆ ՖՅՈԴՈՐՈՎԻՉԻ ՄԳԶԱՎԱՆՔԸ

Ես բժիշկ չեմ, բայց այնուամենայնիվ զգում եմ, որ հասավ այն րոպեն, երբ ուղղակի անհրաժեշտորեն պետք է ընթերցողին գոնե մի որևէ չափով բացատրեմ Իվան Ֆյոդորովիչի հիվանդության բնույթը։ Կանխելով դեպքերի ընթացքը, միայն մի բան ասեմ. այդ պահին, հենց այդ երեկո, նրա մեջ սկիզբ էր առնում տենդախտը, որ վերջապես լիովին տիրել էր նրա վաղուց խախտված, բայց համառորեն հիվանդության դիմադրող կազմվածքին։ Թեև ոչինչ չգիտեմ բժշկությունից, բայց հանդգնեմ անել այն ենթադրությունը, թե գուցե իրոք, կամքի սոսկալի լարումով, նա կարողացել էր առժամապես ետ մղել հիվանդությունը, հույս ունենալով անշուշտ, որ բոլորովին կհաղթահարի։ Գիտեր, որ անառողջ է, բայց, խորշանք զգալու չափ, չէր ուզում հիվանդ լինել այդ ժամանակ՝ իր կյանքի ճակատագրական րոպեներին, որոնք մոտենում էին ահա, և երբ պետք է դեմ հանդիման պատրաստ լիներ, համարձակորեն ու վճռականորեն ասեր իր խոսքը և անձամբ «արդարացներ ինքն իրեն իր առաջ։ Բայց և այնպես, մի անգամ գնացել էր այն նոր բժշկի մոտ, որին Կատերինա Իվանովնան Մոսկվայից հրավիրել էր ցնորական մի նկատառումով, ինչպես նշել եմ արդեն։ Բժիշկը, լսելով ու քննելով Իվանին, եկել էր այն եզրակացության, որ նույնիսկ ուղեղի խանգարման պես մի բան ունի նա, և բոլորովին չէր զարմացել, երբ Իվանը, խորշելով հանդերձ, մի որոշ խոստովանություն էր արել։ «Ձեր վիճակում շատ հնարավոր են զգայախաբությունները,— որոշել էր բժիշկը,— թեև ավելի լավ կլիներ ստուգել դրանք... Իսկ ընդհանրապես անհրաժեշտ է լրջորեն սկսել բուժումը, առանց մի րոպե կորցնելու, թե չէ վատ կլինի»։ Բայց Իվան Ֆյոդորովիչը, բանի տեղ չդնելով այդ ողջամիտ խորհուրդը, չէր պատկել բուժվելու. «Դեռ կարողանում եմ քայլել, ուժերս տեղն են, եթե անկողին ընկնեմ՝ ուրիշ հարց, ով ուզում է թող բուժի այն ժամանակ»,— որոշեց նա, ձեռքը թափ տալով։

Այսպես ուրեմն, նա նստել էր հիմա, ինքն էլ համարյա գիտակցելով, որ զառանցանքի մեջ է, և ինչպես ասացի արդեն՝ համառորեն նայում էր դիմացի պատի տակ գտնվող բազմոցին։ Հանկարծ այնտեղ երևաց մեկը, որ նստել էր, բայց ասված դիտե, թե ինչպես էր ներս մտնել, որովհետև երբ Իվան Ֆյոդորովիչը, վերադառնալով Սմերդյակովի մոտից, իր սենյակը մտավ, այդպիսի մեկը չկար ներսում։ Նստողը մի պարոն էր, ավելի ճիշտ՝ որոշ տեսակի մի ռուս չինովնիկ, որ արդեն տարիքն առել էր, «qui faisait la cinquantaine[1]», ինչպես ասում են ֆրանսիացիները, դեռ ոչ այնքան ալեհեր, սև, բավական երկար ու խիտ մազերով և փոքր, սրածայր մորուքով։ Հագել էր սրճագույն մի բաճկոն, որ երևի լավագույն դերձակի ձեռքից էր ելել, բայց մաշված էր արդեն, մոտավորապես երեք տարի առաջվա նորաձևությամբ էր կարված այդ բաճկոնը, և այդ ձևն արդեն դուրս էր եկել գործածությունից, այնպես որ բարձրաշխարհիկ ու բարեկեցիկ մարդկանցից ոչ մեկը այդպիսի բան չէր հագնում երկու տարուց ի վեր։ Նրա վերնաշապիկը, երկար, վզնոցի նման փողկապը և առհասարակ ամեն ինչ այնպես էր, ինչպես սովորաբար հագնում են բոլոր չինովնիները, բայց եթե ավելի մոտիկից նայեիք, վերնաշապիկը կեղտոտ էր մի քիչ, իսկ լայն վզնոցը շատ էր քրքրված։ Հյուրի քառակուսավոր տաբատը հոյակապ էր նստում, բայց դարձյալ չափազանց բաց գույնի էր և չափազանց նեղ, իսկ հիմա արդեն այդքան նեղ չեն հագնում։ Սպիտակ, փափուկ, բմբուլե գլխարկն էլ բնավ հարմար չէր

[1] «Մոր հիսունին մոտ էր» (Ֆրանս.)։

տարվա եղանակին։ Մի խոսքով, արժանավայել արտաքին՝ նյութական շատ նեղ միջոցների ներած չափով։ Կարծես թե այդ ջենտլմենը պատկանում էր նախկին դատարկապորտ կալվածատերերի այն դասին, որ բարգավաճում էր ճորտատիրական իրավունքի ժամանակ. երևում էր, որ աշխարհ տեսած և վայելուչ հասարակության մեջ ապրած մարդ էր նա, ժամանակին կապեր էր ունեցել և դուցե մինչև հիմա էլ պահպանել էր դրանք, բայց հետզհետե, երիտասարդ տարիների ուրախ կյանքից և ճորտատիրական իրավունքի վերացումից հետո աղքատանալով, դարձել էր մի տեսակ հաճելի նիստուկաց ունեցող ձրիակեր, որ քարշ է գալիս իր հին ու լավ ծանոթների տները, իսկ նրանք ընդունում են նրան՝ հարմարվող ու հոժարակամ բնավորության համար և նաև նկատի առնելով, որ համենայն դեպս կանոնավոր մարդ է նա և կարելի է նույնիսկ որևէ մեկի ներկայությամբ հրավիրել սեղանին մասնակցելու, թեև, անշուշտ, համեստ մի տեղ նստեցնելով։ Այդպիսի ձրիակերները, հոժարակամ բնավորության տեր այդ ջենտլմենները, որ կարող են համովհոտով պատմել, թղթախաղի ընկեր լինել, և որ ուղղակի չեն սիրում իրենց պարտադրվող որևէ հանձնարարություն ստանձնել, նովորաբար միայնակ մարդիկ են՝ ամուրի կամ այրի. դուցե և երեխաներ ունեն, բայց նրանց երեխաները միշտ էլ աչքից հեռու մի տեղ են դաստիարակություն ստանում, մի որևէ հորաքրոջ կամ մորաքրոջ մոտ, որի մասին ջենտլմենը համարյա չի էլ հիշատակում վայելուչ հասարակության մեջ, կարծես մի քիչ ամաչելով այդպիսի ազգականությունից։ Իսկ երեխաներից բոլորովին խորթանում է կամաց-կամաց, միայն մերթ ընդ մերթ նրանցից շնորհավորական նամակներ է ստանում ծննդյան տոնի կամ իր անվանակոչության առթիվ և երբեմն էլ նույնիսկ պատասխանում է նրանց։

Անսպասելի հյուրի դեմքին ոչ այնքան բարեհոգություն կար, որքան հենց հոժարակամություն, և նա պատրաստ էր, ըստ հանգամանքի, որևէ մի սիրալիր արտահայտություն ընդունելու։ Ժամացույց չուներ, բայց ուներ կրեոսկրե լորնետ՝ սև ժապավենով։ Աջ ձեռքի միջնամատին փայլում էր ոսկյա զանգվածեղ մի մատանի, որ էժանագին մի արևաքարով էր զարդարված։ Իվան Ֆյոդորովիչը գայրալից լոում էր և չէր ուզում խոսակցություն սկսել։ Հյուրն սպասում էր և նստել էր հենց ձրիակերի նման, որ դեռ նոր է իջել իրեն հատկացված սենյակից, որպես-

զի տանտիրոջը զրուցակից լինի թեյի ժամանակ, բայց խոնարհաբար լռում է, տեսնելով, որ տանտերն զբաղված է և խոժոռ դեմքով մտածում է մի բանի մասին։ Սակայն նա պատրաստ էր որևէ սիրալիր խոսակցության, միայն թե սկսեր տանտերը։ Հանկարծ նրա դեմքին մի տեսակ անակնկալ մտահոգություն երևաց։

— Լսիր,— սկսեց նա, դիմելով Իվան Ֆյոդորովիչին,— ներիր ինձ իհարկե, բայց պարզապես ուզում եմ հիշեցնել. դու Սմերդյակովի մոտ գնացել էիր Կատերինա Իվանովնայի մասին իմանալու համար, բայց դուրս եկար առանց որևէ բան իմանալու, երևի մոռացար...

— Ախ այո՞,— բացականչեց հանկարծ Իվանը, և նրա դեմքը մոռյվեց մտահոգությունից,— այո, մոռացա... Բայց հիմա միևնույն է արդեն, վա՜ղը ամեն ինչ,— մրթմրթաց նա ինքն իրեն։— Իսկ դու,— ջղայնորեն դիմեց նա հյուրին,— ես ինքս հիմա պետք է հիշեի, որովհետև հենց դա՛ էր տանջում ինձ։ Ի՞նչ է այդպես մեջ ընկար, կարծում ես կհավատա՞մ, որ դու հուշեցիր ինձ, և ոչ թե ինքս հիշեցի։

— Է՛հ, մի՛ հավատա,— սիրալիր ժպտաց ջենտլմենը։— Էլ ի՞նչ հավատք, եթե բռնությամբ է լինելու։ Մանավանդ որ, ապացույցները երբեք չեն օգնում հավատքին, հատկապես նյութական ապացույցները։ Թովմասը հավատաց ոչ թե այն պատճառով, որ տեսավ հարուցյալ Քրիստոսին, այլ որովհետև նախօրոք ցանկանում էր հավատալ։ Ահա, օրինակ ոգեհարցները... ես շատ եմ սիրում նրանց... երևակայիր, նրանք համարում են, որ օգտակար գործ են անում հավատքի համար, որովհետև սատանաները մյուս աշխարհից իրենց եղբյուրներն են ցույց տալիս նրանց։ «Դա արդեն, այսպես ասած, նյութական ապացույց է, որ կա՛ մյուս աշխարհը»,— ասում են նրանք։ Մյուս աշխարհը և նյութական ապացույցնե՞ր, հայ-հա՛յ։ Եվ վերջապես, եթե ապացուցված է սատանայի գոյությունը, դեռ հայտնի չէ, թե աստծո գոյությունը ապացուցվա՞ծ է։ Ուզում եմ իդեալիստական մի ընկերության արձանագրվել, ընդդիմադիր կուսակցություն կազմել այնտեղ. կասեմ՝ ռեալիստ եմ, ոչ թե մատերիալիստ, հե-հե՛։

— Լսիր,— վեր կացավ հանկարծ Իվան Ֆյոդորովիչը սեղանից։— Ես հիմա կարծես զառանցում եմ... և... զառանցում եմ, իհարկե... փչի՞ր ինչ որ ուզում ես, ինձ համար միևնույնն է։

Դու ինձ կատաղություն չես հասցնի, ինչպես անցյալ անգամ եզավ։ Միայն թե ամաչում եմ մի տեսակ... Ուզում եմ քայլել սենյակում... Երբեք չեմ տեսնում քեզ և նույնիսկ քո ձայնն էլ չեմ լսում, ինչպես անցյալ անգամ, բայց միշտ կռահում եմ քո գուրս տված հիմարությունները, որովհետև ե՛ս եմ ասում դրանք, ե՛ս եմ խոսում, ոչ թե դու։ Միայն թե չգիտեմ, քնե՞լ էի անցյալ անգամ, թե բաց աչքերով էի տեսնում քեզ։ Այ հիմա սրբիչը կթրչեմ պաղ շրով ու կդնեմ գլխիս, գուցե թե ցնդես, չքանաս։

Իվան Ֆյոդորովիչը գնաց անկյունը, սրբիչը վերցրեց, արեց իր ասածը և թաց սրբիչը գլխին դրած՝ սկսեց ետ ու առաջ անել սենյակում։

— Ինձ դուր է գալիս, որ մենք ուղղակի դու ենք ասում իրար,— սկսեց Հյուրը։

— Տխմա՛ր,— ծիծաղեց Իվանը,— դուխ-ո՞վ եմ խոսելու քեզ հետ, ինչ է։ Զվարթ տրամադրություն ունեմ հիմա, բայց քունքս է ցավում...և գլխիս կատարը... միայն թե խնդրում եմ, մի՛ փիլիսոփայիր, ինչպես անցյալ անգամ։ Եթե չես կարող լռել, գոնե ուրախ մի բան փչիր։ Բամբասանք արա. ձրիակեր ես, չէ՞, դե ուրեմն բամբասիր։ Ա՛յս ինչ մղձավանջ է կպել։ Բայց չեմ վախենում քեզնից։ Կհաղթահարեմ քեզ։ Գժանոց չե՛ն տանի։ ինձ։

— C'est charmant[1], ձրիակե՛ր։ Այո, ես հենց հիմա իմ դերի մեջ եմ։ Ի՞նչ եմ երկրի վրա, եթե ոչ ձրիակեր։ Ի դեպ, լսում եմ քեզ և զարմանում մի քիչ. ասված վկա, կարծես թե արդեն կամաց-կամաց սկսում ես մի իրական բան համարել ինձ, և ոչ թե միայն քո երևակայության ծնունդը, ինչպես պնդում էիր անցյալ անգամ...

— Ոչ մի րոպե չեմ ընդունում, որ դու իրական մի բան ես,— մի տեսակ կատաղորեն գոռաց Իվանը։— Դու սուտ ես, իմ հիվանդությունն ես, ուրվական ես դու։ Միայն թե չգիտեմ, ինչպե՞ս ոչնչացնեմ քեզ, և տեսնում եմ, որ մի որոշ ժամանակ պետք է տառապեմ։ Դու իմ բանդագուշանքն ես։ Դու մարմնացնում ես իմ սեփական անձը, բայց միայն մեկ կողմը իմ անձի... իմ մտքերն ու զգացումները, բայց ամենազզվելի ու հիմար մտքերն ու զգացումները։ Այդ իմաստով դու կարող էիր նույնիսկ հետաքրքրական լինել ինձ համար, եթե միայն ժամանակ ունենայի քեզնով զբաղվելու։

[1] Հիանալի է (ֆրանս.)։

— Թույլ տուր, թույլ տուր մի րոպե, ես քեզ բռնեմ հիմա. քիչ առաջ, լապտերասյան տակ, վրա տվեցիր Ալյոշային ու գոռացիր. «Երանի՞ց ես իմացել։ Ինչպե՞ս իմացար, որ ես ինձ մոտ է գալիս»։ Այդ պահին ինձ էիր հիշում, չէ՞։ Ուրեմն մի ակնթարթ հավատացիր, հավատացի՛ր, որ ես իսկապես գոյություն ունեմ,— մեղմ ծիծաղեց ջենտլմենը։

— Այո, դա իմ բնության թերությունն էր... բայց ես չէի կարող հավատալ քեզ։ Չգիտեմ, քնե՞լ էի անցյալ անգամ, թե քայլում էի։ Գուցե այդ ժամանակ քեզ իմ երազում եմ տեսել միայն, իրականում բոլորովին էլ չեմ տեսել...

— Իսկ ինչո՞ւ քիչ առաջ այդքան խիստ վարվեցիր Ալյոշայի հետ։ Անուշ տղա է նա. ես նրա առաջ մեղավոր եմ հայր Զոսիմայի համար։

— Չխոսե՛ս Ալյոշայի մասին։ Ինչպե՞ս ես համարձակվում, պնակալե՛զ,— ծիծաղեց նորից Իվանը։

— Հայհոյում ես, բայց ինքդ էլ ծիծաղում ես. լավ նշան է։ Սակայն այսօր դու շատ ավելի սիրալիր ես վարվում ինձ հետ, քան անցյալ անգամ, և հասկանում եմ, թե ինչու. քո այդ մե՛ծ որոշումը...

— Չխոսե՛ս իմ որոշման մասին,— կատաղորեն գոռաց Իվանը։

—Հասկանում եմ, հասկանում եմ, c'est noble, c'est charmant[1], դու վաղը գնում ես եղբորդ պաշտպանելու և զոհաբերում ես քեզ... c'est chevaleresque[2]։

— Լռի՛ր, թե չէ քացի կտամ ետևիցդ։

— Մասամբ ուրախ կլինեմ, որովհետև այդ դեպքում կհասնեմ իմ նպատակին. եթե քացի ես տալիս, ուրեմն հավատում ես իմ իրականության, որովհետև ուրվականին քացի չեն տալիս։ Կատակը մի կողմ. ինձ համար միևնույնն է՝ հայհոյիր, եթե ուզում ես, բայց համենայն դեպս ավելի լավ է գոնե մաղաչափ ավելի քաղաքավարի լինել, թեկուզ նույնիսկ իմ նկատմամբ։ Թե չէ՝ տխմա՛ր, պնակալե՛զ, ի՞նչ բառեր են սրանք։

— Հայհոյելով քեզ, ի՞նձ եմ հայհոյում,— նորից ծիծաղեց Իվանը,— դու իմ եսն ես, իմ սեփական եսը, միայն թե ուրիշ մոութով։ Դու հենց ասում ես այն, որ ես արդեն մտածում եմ... և ուրիշ ո՞չ մի նոր բան չես կարող ասել ինձ։

[1] Գեղեցիկ բան է, սքանչելի բան (ֆրանս.)։
[2] Ասպետական բան է (ֆրանս.)։

— Եթե ես քեզ նման եմ մտածում, դա ինձ պատիվ է բերում միայն,— ասաց ջենտլմենը նրբանկատորեն և արժանապատվությամբ։

— Միայն թե անընդհատ իմ զզվելի մտքերն ես վերցնում, և մանավանդ՝ իմ հիմար մտքերը։ Դու հիմար ես ու գոհհիկ։ Սոսկալի հիմար։ Չէ՞, չեմ կարող հանդուրժել քեզ։ Ինչպե՞ս անեմ, ի՞նչ անեմ,— կրճտացրեց Իվանը։

— Սիրելի բարեկամս, ես համանայն դեպս ուզում եմ ջենտլմեն լինել և ուզում եմ, որ այդպես էլ ընդունեն ինձ,— սկսեց հյուրը, զուտ ձրիակերներին հատուկ և արդեն նախօրոք զիջող ու բարեհոգի պատվախնդրությամբ տարված։— Ես աղքատ եմ, բայց... չեմ ասի, որ շատ ազնիվ եմ, բայց... սովորաբար հասարակության մեջ որպես աքսիոմ է ընդունված, որ ես անկյալ հրեշտակ եմ։ Ասված վկա, չեմ կարող պատկերացնել, թե ինչպես կարող էի հրեշտակ լինել մի ժամանակ։ Եթե նույնիսկ եղել եմ երբևիցե, երևի դա այնքան վաղուց էր, որ մոռանալն էլ մի մեծ հանցանք չէ։ Ես հիմա թանկ եմ գնահատում միայն կանոնավոր մարդու վարկ ունենալը և ապրում եմ այնպես, ինչպես բախտը բերում է, ջանալով հաճելի լինել։ Ես անկեղծորեն սիրում եմ մարդկանց. օ՜, շատ բաներում զրպարտել են ինձ։ Այստեղ, երբ ժամանակ առ ժամանակ տեղափոխվում եմ ձեզ մոտ, կյանքս կարծես թե իսկական է դառնում, և դա է ամենից ավելի դուր գալիս ինձ։ Չէ՞ որ ես ինքս էլ, քեզ նման, տառապում եմ ցնորականությամբ, և դրա համար էլ սիրում եմ ձեր երկրային ռեալիզմը։ Այստեղ ամեն ինչ շրջագծված է ձեզ մոտ, ամեն ինչ բանաձև է, երկրաչափություն, իսկ մեզ մոտ ինչ-որ անորո՞շ հավասարումներ են միայն։ Ես թափառում եմ այստեղ ու երազում։ Սիրում եմ երազել։ Մանավանդ որ սնոտիապաշտ եմ դառնում երկրի վրա. մի՛ ծիծաղիր խնդրեմ, ինձ դուր է գալիս հենց այն, որ սնոտիապաշտ եմ դառնում։ Ես այստեղ յուրացնում եմ ձեր բոլոր սովորությունները. սիրեցի ձեր հասարակական բաղնիքը, կարո՞ղ ես պատկերացնել. և սիրում եմ շոգու լոգանք ընդունել վաճառականների ու տերտերների հետ։ Իմ երազն այն է, որ այլևս վերջնականապես, անվերադարձորեն մարմնավորվեմ մի որևէ վաճառականի կնոջ կերպարանքով՝ հաստ, յոթ փթանոց մի կնոջ, և հավատամ ամեն ինչի, որ նա է հավատում։ Իմ իդեալն է եկեղեցի մտնել և անկեղծ սրտով մոմ վառել. այդպես է, ասված

վկա։ Այն ժամանակ վերջ կգտնեն իմ տառապանքները։ Ա՜յ մեկ էլ բուժվելը սիրեցի ձեզ մոտ. գարնանը ծաղկախտի համաճարակ էր, գնացի ու ծաղկախտի դեմ պատվաստվեցի մանկատանը։ Եթե իմանայիր, թե ի՞նչ գոհունակություն վայելեցի այդ օրը. տասը ռուբլի նվիրեցի ի նպաստ սլավոն եղբայրների... Բայց դու չես լսում։ Գիտե՞ս, մի տեսակ շատ մտահոգ ես այսօր,— լռեց մի քիչ ջենտլմենը։— Գիտեմ, երևի այդ բժշկի մոտ գնացիր... էհ, ինչպե՞ս է առողջությունդ։ Ի՞նչ ասաց քեզ բժիշկը։

— Տխմա՛ր,— շշպռեց Իվանը։

— Էհ, գոնե դո՛ւ ես խելոք։ Նորի՞ց ես հայհոյում։ Ես ոչ թե կարեկցելուց էր, որ հարցրի, այլ հենց այնպես։ Ուզում ես՝ մի՛ պատասխանիր։ Այ հիմա նորից հոդացավն սկսվեց...

— Տխմա՛ր,— կրկնեց Իվանը։

— Անընդհատ քոնն ես ասում, իսկ ես այնպիսի՛ մի հոդացավ ունեցա անցյալ տարի, որ մինչև հիմա հիշում եմ։

— Սատանան՝ հոդացա՞վ։

— Իսկ ինչո՞ւ չէ, եթե ես երբեմն մարմնավոր կերպարանք եմ ստանում։ Մարմին ստանալով, ընդունում եմ նաև հետևանքները։ Սատանա sum et nihil humanum a me alienum puto։[1]

— Ինչպե՞ս, ինչպե՞ս։ Սատանա sum et nihil humanum... դա բավակա՞ն խելոք բան է սատանայի համար։

— Ուրախ եմ, որ վերջապես գոհացրի։

— Բայց դա ինձնից չես վերցրել,— կանգ առավ մեկեն Իվանը, կարծես շշմելով,— երբեք այդպիսի բան չի եկել իմ միտքը, տարօրինակ է դա...

— C'est du nouveau, n'est-ce pas?[2] Այս անգամ ես աղնիվ կվարվեմ ու կբացատրեմ քեզ։ Լսիր. երազների և մանավանդ մղձավանջների մեջ, դե ասենք մարսողության խանգարումից կամ մի ուրիշ պատճառով, մարդ երբեմն այնպիսի գեղարվեստական բաներ է տեսնում, այնպիսի բարդ ու շոշափելի մի իրականություն, այնպիսի դեպքեր ու նույնիսկ դեպքերի մի ամբողջ աշխարհ, այնպիսի մի ինտրիգով, այնպիսի անսպասելի մանրամասնություններով՝ ձեր ամենավսեմ դրսևորումներից մինչև

---

1 Սատանա եմ և ոչ մի մարդկային բան խորթ չէ ինձ համար (լատ.)։

2 Նոր բան է, չէ՞ (ֆրանս.)։

հեռին կոճակը կրծկալի վրա, որ երդվում եմ քեզ՝ և Տոլստոյն անգամ չի հորինի այդպիսի բան, այնինչ երբեմն այդպիսի երազներ են տեսնում ոչ թե գրողները, այլ ամենասովորական մարդիկ, պաշտոնյաները, ժուռնալիստները, տերտերները... Դա նույնիսկ մի ամբողջ խնդիր է դառնում. մի մինիստր ուղղակի խոստովանեց ինձ, որ իր բոլոր լավագույն մտքերը գալիս են քնած ժամանակ։ Դե այ հիմա էլ այդպես է։ Ես թեև քո բանդագուշանքն եմ, բայց ճիշտ այնպես, ինչպես լինում է մղձավանջում, ինքնատիպ բաներ եմ ասում հիմա, բաներ, որ մինչև հիմա միտքդ էլ չէին գալիս, այնպես որ բոլորովին էլ չեմ կրկնում քո գաղափարները, և սակայն ես քո մղձավանջն եմ միայն, ուրիշ ոչինչ։

— Ստում ես։ Քո նպատակն է հենց համոզել ինձ, որ դու անձամբ կաս, և ոչ թե իմ մղձավանջն ես, և ահա ինքդ ես հաստատում հիմա, որ երազ ես։

— Սիրելի բարեկամս, այսօր հատուկ մի մեթոդ եմ ընտրել, հետո կբացատրեմ քեզ։ Սպասիր, ի՞նչ էի ասում։ Հա՞, այո, մրսեցի ուրեմն այն ժամանակ, բայց ոչ թե ձեզ մոտ, այլ դեռ այնտեղ...

— Որտե՞ղ այնտեղ։ Ասա, երկա՞ր ես մնալու ինձ մոտ, չե՞ս կարող գնալ այստեղից,— համբերյա հուսահատորեն բացականչեց Իվանը։ Նա դադարեց ետ ու առաջ անել, նստեց բազմոցին, նորից արմունկները սեղանին դրեց ու երկու ձեռքով սեղմեց գլուխը։ Թաց սրբիչը քաշեց ու մի կողմ գցեց վրդովմունքով. երևի չէր օգնում։

— Ձեզերդ քայքայվել են,— նկատեց չենտլմենը անփութորեն համարձակ, բայց կատարելապես սիրալիր արտահայտությամբ։— Բարկանում ես ինձ վրա նույնիսկ այն բանի համար, որ ես կարող էի մրսել, այնինչ դա ամենաբնական ձևով պատահեց։ Շտապում էի մի դիվանագիտական երեկույթի՝ պետերբուրգի բարձրաստիճան մի տիկնոջ մոտ, որ աչքը տնկել էր մինիստրի իշխանությանն։ Է՛հ, ֆրակ էի հագել, սպիտակ փողկապ, ձեռնոց, բայց դեռ ասված գիտե որտեղ էի և պետք է թռչի-անցնեի անշրջիկը, ձեր այս երկրագունդը հասնելու համար... Իհարկե, մի ակնթարթի բան էր միայն, բայց դե լույսի ճառագայթն էլ ամբողջ ուժ բոպե ճամփորդում է արևից երկիր, իսկ ես, պատկերացրու, ֆրակով էի և բաց բաճկոնակով։ Ոտինները չեն սառչում, բայց դե երբ մարմնավոր կերպարանք ես

ստացել... մի խոսքով, թեթևամտություն արեցի, ճանապարհ ընկա, իսկ այդ տարածություններում, եթերի մեջ, այդ ջրի մեջ, որ ի վերո հաստատությանն, այնպիսի՞ մի սառնամանիք է որ... այսինքն սառնամանի՞ք ինչ է, չի էլ կարելի սառնամանիք կոչել դա, կարո՞ղ ես պատկերացնել՝ հարյուր հիսո՞ւն աստիճան զրոյից ներքև։ Գիտես գյուղացի աղջիկների այն հայտնի զվարճությունը. երեսուն աստիճան սառնամանիքին առաջարկում են մի որևէ համբակի, որ կացինը լիզի. լեզուն վայրկենապես սառչում-կպչում է, և դմբոն ետ է քաշում ու պոկում է մաշկը, արյունոտվում։ Բայց դա երեսուն աստիճան է դեռ, հապա եթե հարյուր հիսուն աստիճա՞ն լինի. հենց բավական է միայն, որ մատդ դնես կացնին, և կարծում եմ՝ բան չի մնա այդ մատիցդ, եթե անշուշտ... եթե կարող է կացին լինել այնտեղ...

— Իսկ կարո՞ղ է կացին լինել այնտեղ,— ընդհատեց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը մտացիր, նողկանքի զգացումով։ Ամբողջ ուժով դիմադրում էր նա, որպեսզի չհավատա իր զառանցանքին ու չխելագարվի վերջնականապես։

— Կացի՞ն,— հարցրեց հյուրը զարմացած։

— Դե հա, ի՞նչ կպատահի այնտեղ կացնին,— գոռաց հանկարծ Իվանը, մի տեսակ մոլեգին ու անկոտրում համառությամբ։

— Տարածությա՞ն մեջ ինչ կպատահի կացնին։ Quelle Idée![1]։ Եթե հեռու մի տեղ ընկնի, կարծում եմ, որ կսկսի պտտվել երկրի շուրջ, առանց ինքն էլ իմանալու, թե ինչու, արբանյակի նման։ Աստղագետները կհաշվեն կացնի ծագման ու մայրամուտի պահերը, Գատցուկը կմտցնի իր օրացույցի մեջ, և ուրիշ ոչինչ։

— Դու հիմա՞ր ես, սոսկալի հիմար,— ասաց Իվանն անսաստորեն։— Ավելի խելոք փչիր, այլապես չեմ լսի։ Դու ուզում ես հաղթել ինձ ռեալիզմով, հավատացնել ինձ, որ կաս, բայց ես չե՛մ ուզում հավատալ, որ կաս։ Ջե՞մ հավատում։

— Բայց ես չեմ փչում, այդ ամբողջը ճշմարիտ է. դժբախտաբար ճշմարտությունը գրեթե միշտ էլ տափակ է լինում։ Տեսնում եմ, դու անպայման մի մեծ բան ես սպասում ինձնից, դուցե գեղեցիկ բան։ Դա շատ ցավալի է, որովհետև ես տալիս եմ միայն այն, ինչ կարող եմ...

---

1 Ինչպիսի՞ գաղափար (ֆրանս.)։

— Մի՛ փիլիսոփայիր, ավանա՛կ։

— Էլ ինչ փիլիսոփայեմ, երբ լրիվ աջ կողմս փայտացել է, ոնքում եմ ու մոլոտում։ Փորձեցի ամբողջ բժշկությունը. սքանչելի կարողանում են ախտորոշել, տեղը-տեղին կբացատրեն քեզ ամբողջ հիվանդությունդ, բայց դե բուժել չեն կարողանում։ Այստեղ մի խանդավառ ուսանողի հանդիպեցի. եթե նույնիսկ մեռնեք, ասաց, համենայն դեպս կիմանա՞ք, թե ինչ հիվանդությունից եք մեռնում։ Եվ հետո՝ մասնագետների մոտ ուղարկելու այդ ձևը. մենք միայն ախտորոշում ենք, ասում են, բայց գնացեք ահա այսինչ մասնագետի մոտ, նա էլ կբուժի։ Ասեմ քեզ՝ բոլորովին, բոլորովի՛ն չքացել է այն նախկին բժիշկը, որ բոլոր տեսակի հիվանդությունները բուժում էր, հիմա մասնագետներ կան միայն և անընհատ հայտարարություններ են տալիս թերթերում։ Եթե քիթդ ցավի, Փարիզ են ուղարկում քեզ. ասում են՝ այնտեղ համաեվրոպական մի մասնագետ կա, որ քիթ է բուժում։ Գնում ես Փարիզ, քննում է քիթդ. ասում է՝ ես կարող եմ միայն ձեր աջ ռունգը բուժել, որովհետև ձախ ռունգը չեմ բուժում, դա իմ մասնագիտությունը չէ, բայց այստեղից էլ գնացեք Վիեննա, այնտեղ մի հատուկ մասնագետ կա, որ ձեր ձախ ռունգը կբուժի։ Ի՞նչ անես։ Ժողովրդական բուժամիջոցների դիմեցի, մի գերմանացի բժիշկ խորհուրդ տվեց, որ բաղնիքում մեղր ու աղով շփեմ մարմինս։ Պարզապես մի ավելորդ անգամ էլ բաղնիք ընդունելու համար գնացի. ոտից գլուխ կեղտոտվեցի, և ոչ մի օգուտ։ Հուսահատված՝ գրեցի կոմս Մատտեիին, Միլան. գիրք ու կաթիլներ ուղարկեց, է՛հ, ասված նրա հետ։ Ու երևակայիր՝ Հոֆֆի մայց-էքստրա՞կտը օգնեց։ Պատահաբար գնեցի ու խմեցի մեկուկես շիշ և արդեն ուղղակի պատրաստ էի պարելու. ցավ-մավ, ամեն ինչ սրբեց տարավ։ Որոշեցի հրապարակով նրան «շնորհակալ եմ» ասել անպայման, տպել թերթերում, երախտագիտության զգացումը խոսեց իմ մեջ։ Եվ ահա երևակայիր, այստեղ արդեն մի ուրիշ պատմություն սկսվեց. ոչ մի խմբագրություն չէր ընդունում։ «Շատ հետադիմական բան կլինի,— ասացին,— ոչ ոք չի հավատա, le diable n'existe point[1]։ Առանց ստորագրության տպեցեք»,— խորհուրդ տվեցին։ Դե էլ ի՞նչ «շնորհակալ եմ», եթե ստորագրություն չկա։ Միծաղեցի խմբագրության աշխատողների հետ. «Մեր դարում,— ասացի,— աստծուն հավատալն է հետադիմական բանը, իսկ ես սատանա եմ, չէ՞, ինձ կարելի է հավատալ»։— «Հասկանում ենք,— ասացին նրանք,— ո՞վ չի հավատում սատանային։ Բայց այնուամենայնիվ չի կարելի, դա կարող է վնասել մեր գաղափարականին։ Գուցե կատակի՞ ձևով անենք»։ Բայց դե մտածեցի, որ կատակի ձևով տպելն էլ տափակ բան կլինի։ Այնպես էլ չտպեցին։ Եվ կհավատա՞ս, մինչև հիմա էլ ցավ է եղել սրտիս։ Իմ լավագույն զգացումները, ինչպես երախտագիտությունը, օրինակ, պաշտոնապես արգելված են ինձ՝ միայն իմ սոցիալական դրության պատճառով։

— Նորի՞ց քշեցիր-մտար փիլիսոփայության մեջ,— կրճատացրեց Իվանը ատելությամբ։

— Աստված ինձ հեռու պահի դրանից, բայց հո չի կարելի երբեմն չգանգատվել։ Զրպարտված մարդ եմ ես։ Այ դու ամեն րոպե ասում ես երեսիս, որ հիմար եմ։ Ուղղակի երևում է՝ երիտասարդ ես։ Սիրելիս, խնդիրը միայն խե՞լքը չէ։ Ես ի բնե բարի ու զվարթ սիրտ ունեմ, «ես էլ ամեն տեսակի մանր-մունր վոդեվիլներ եմ գրում»։ Կարծեմ դու ինձ ուղղակի դնում ես տարիքն առած Ֆլեստակովի տեղ, բայց իմ ճակատագիրը շատ ավելի լուրջ է։ Անդրժամանակյան մի հրամանագրով, որը երբեք չեմ կարողացել հասկանալ, ինձ համար նախասահմանվել է «ժխտելու» դերը, այնինչ ես անկեղծորեն բարի եմ և բոլորովին ընդունակ չեմ ժխտելու։ Չէ՞, գնա ժխտի՛ր, ասում են, առանց ժխտելու քննադատություն չի լինի, իսկ ի՞նչ ժուռնալ, եթե չկա «քննադատության բաժին»։ Առանց քննադատության՝ «օվսանննա» կլինի միայն։ Բայց միայն «օվսանննան» քիչ է կյանքի համար, պետք է որ այդ «օվսանննան» տարակույսների բովով անցնի և այլն, և այլն, այդ տեսակ բաներ։ Սակայն ես չեմ խառնվում այդ բոլորին, արարիչը ես չեմ, պատասխանատուն էլ ես չեմ։ Բայց դե քավության նոխազ են ընտրել ինձ, ստիպել են, որ գրեմ քննադատության բաժնում, և արդյունքը եղել է կյանքը։ Մենք հասկանո՞ւմ ենք այդ զավեշտը. ես, օրինակ, ուղղակի և պարզորեն իմ ոչնչացումն եմ պահանջում։ Չէ, ասում են ինձ, ապրի՛ր, որովհետև առանց քեզ ոչինչ չի լինի։ Եթե երկրի վրա ամեն ինչ բարեկարգ լիներ, ոչինչ տեղի չէր ունենա։ Առանց քեզ ոչ մի իրադարձություն չի լինի, իսկ պետք է, որ իրադարձություններ լինեն։ Ահա ուրեմն ծառայում եմ ցավ ի սիրտ, որպեսզի իրադարձություններ լինեն, և անբարեկարգ

[1] Սատանան բնավ էլ գոյություն չունի (Ֆրանս.)։

բաներ եմ ստեղծում, ըստ հրամանի։ Մարդիկ այս ամբողջ զավեշտը որպես լուրջ բան են ընդունում, հակառակ նույնիսկ իրենց անուրանալի խելքին։ Եվ այդ է նրանց ողբերգությունը։ Է՛հ, տառապում են անշուշտ, բայց...ապրո՞ւմ են այնուամենայնիվ, ապրում են իրական կյանքով, ոչ թե ցնորական, որովհետև հենց տառապանքն է կյանքը։ Առանց տառապանքի ի՞նչ հաճույք կունենար ապրելը. ամեն ինչ կվերածվեր մի անվերջանալի դոհբանական մաղթանքի՝ սրբանվեր, բայց մի քիչ ձանձրալի։ Է՛, իսկ ե՞ս։ Ես տառապում եմ, բայց այնուամենայնիվ չեմ ապրում։ Ես իքս եմ՝ անորոշ մի հավասարման մեջ։ Ես կյանքի ուրվականն եմ մի տեսակ, որ կորցրել է ամեն ինչի սկիզբն ու վերջը, և նույնիսկ ինքն էլ մոռացել է վերջ ի վերջո, թե ինչ է իր անունը։ Մեծաղում ես... չէ, չես ծիծաղում, բարկանում ես նորից։ Միշտ ու միշտ բարկանում ես, քեզ հետաքրքրում է բանականությունը միայն, բայց կրկնում եմ դարձյալ՝ ես ամե՞ն ինչ կտայի, ամբողջ այս անդրաստղային կյանքը, բոլոր նվիրապետական աստիճաններն ու պատիվները, միայն թե մարմնավորվեի վաճառականի կնոջ կերպարանքով, ստանայի այդ յոթ փթանոց կնոջ հոգին և մոմ վառեի աստծուն։

— Նույնիսկ դո՞ւ էլ աստծուն չես հավատում,— ժպտաց Իվանը ատելությամբ։

— Այսինքն ինչպես ասեմ քեզ. եթե լուրջ ես հարցնում...

— Կա՞ աստված, թե չէ,— նորից մուրգին մի համառությամբ գոռաց Իվանը։

— Հա՛, ուրեմն լո՞ւրջ ես հարցնում։ Սիրելիս, աստվա՛ծ կա՝ չգիտեմ. ա՛յ, գերագույն խոսքն ասացի հիմա։

— Չգիտես, բայց տեսնում ես աստծուն, հա՞։ Չէ՛, դու առանձին գոյություն չունես, դու իմ ենն ես, դու իմ անեն ես, ուրիշ ոչինչ։ Անպե՞տք մի բան ես դու, իմ ցնո՞րքն ես։

— Այսինքն, եթե ուզում ես, դու և ես նույն փիլիսոփայությունն ունենք. այ սա ճիշտ կլինի։ Je pense, donc je suis[1], այս բանը հաստատ գիտեմ, իսկ ամբողջ մնացյալը, որ շրջապատում է ինձ, բոլոր այս աշխարհները, աստված և նույնինքն սաղայելը—այդ ամբողջությունն ինձ համար ապացուցված չէ՝ կա՞ արդյոք ինքնին, թե պարզապես իմ արտաբխումն է միայն, հետևողական զարգացումն իմ ենի, որ գոյություն ունի ժամանակից էլ առաջ ու միանձնականորեն... մի խոսքով, շատ ընդհատում եմ, որովհետև ինձ թվում է՝ հիմա տեղիցդ կցատկես ու կծեծես ինձ։

[1] Մտածում եմ, ուրեմն կամ (Դեկարտ.)։

— Ավելի լավ կլիներ՝ մի որևէ անեկդո՞տ պատմեիր,— ասաց Իվանը ցավագին շեշտով։

— Կա մի անեկդոտ և հենց մեր նյութի մասին է, այսինքն անեկդոտ չէ, այլ պարզապես առասպել։ Այ դու ինձ կշտամբում ես անհավատության համար. ասացիր՝ «տեսնում ես, բայց չես հավատում»։ Բայց, սիրելի բարեկամս, հո միայն ես չեմ այդպես. մեզ մոտ, այնտեղ, հիմա բոլորն են շվարել, և ամբողջ այս ձեր գիտությունների երեսից։ Քանի դեռ աստվածներ կային, հինգ զգայարաններ, չորս տարրերը, է՛հ, այն ժամանակ ամեն ինչ մի կերպ բռնում էր իրար։ Աստվածները հենց հին աշխարհում էլ կային։ Բայց ահա, երբ մենք խմացանք, որ դուք այստեղ «քիմիական մոլեկուլ» եք հայտնաբերել, «պրոտոպլազմա» եք հայտնաբերել և էլ ստատանա՞ն գիտե, թե ինչ-ինչ բաներ, է՛, մեր պոչերը կծկեցինք։ Պարզապես շիլաշփոթ սկսվեց, և մանավանդ՝ սնահավատություն, բամբասանքներ. մեզ մոտ էլ նույնքան բամբասանք կա, որքան ձեզ մոտ, նույնիսկ մի քիչ ավելի շատ, և վերջապես մատնություն էլ կա, մենք էլ ունենք մի այնպիսի հատուկ բաժանմունք, ուր որոշ «տեղեկություններ» են ընդունում։ Ահա ուրեմն այդ անհեթեթ առասպելը մեր միջնադարից է մնացել (ոչ թե ձեր, այլ մեր միջնադարից), նույնիսկ մեզ մոտ էլ ոչ ոք չի հավատում դրան, բացի յոթ փթանոց կանանցից, այսինքն դարձյալ ոչ թե ձեր, այլ մեր կանանցից։ Ձեր բոլոր ունեցածները մենք էլ ունենք. ահա, բարեկամությունից մղված, մեր մի գաղտնիքը հայտնում եմ քեզ, թեև արգելված է։ Այդ առասպելը, ուրեմն, դրախտի մասին է։ Ասում են՝ այստեղ, ձեր երկրի վրա եղել է մի մտածող ու փիլիսոփա, որ «ժխտում էր ամեն ինչ՝ օրենքներ, խիղճ, հավատք», և մանավանդ՝ հանդերձյալ կյանքն էր ժխտում։ Մեռնում է մարդը, մտածում է, որ ուղղակի պիտի կորչի խավարի ու մահվան մեջ, բայց մեկ էլ տեսնում է՝ հանդերձյալ կյանքն է իր առաջ։ Զարմանում է ու վրդովվում. «Սա հակասում է իմ համոզմունքներին»,— ասում է նա։ Ահա հենց դրա համար էլ նրան դատապարտում են... այսինքն, գիտե՞ս ինչ, դու ներիր ինձ, ես պատմում եմ այն, ինչ լսել եմ, սա առասպել է միայն... հասկանո՞ւմ ես, պատիժ են տալիս նրան՝ մի կվադրիլիոն կիլոմետր քայլել խավարի մեջ (դե

մեզ մոտ էլ հիմա կիլոմետրերով են հաշվում), և երբ վերջացնի այդ կվադրիլիոնը, դրախտի դռները կբանան նրա առաջ և ամեն ինչ կներեն...

— Իսկ ի՞նչ տանջանքներ կան ձեր անդենական աշխարհում, բացի կվադրիլիոնից,— տարօրինակ մի աշխուժությամբ ընդհատեց Իվանը։

— Ինչ տանջանքնե՞ր։ Ա՜խ, մի՛ էլ հարցնի։ Առաջ ամեն տեսակն էլ կար, իսկ հիմա ավելի շատ բարոյական տանջանքներ են կիրառում, «խղճի խայթ» և այլն, ամբողջ այդ հիմարությունների շարքը։ Սա էլ նույնպես ձեզնից եկավ, ձեր «բարքերի մեղմացումից»։ Ի՜հ, ո՞վ չահեց. շահեցին միայն անխիղճները, որովհետև նրանց համար ի՞նչ է որ խղճի խայթը, երբ հենց խիղճ ասվածը չունեն բոլորովին։ Բայց տուժեցին կանոնավոր մարդիկ, որոնց մեջ դեռ մնում է խիղճն ու պատիվը... Ա՜յ հենց երբ բարեհորդումները կատարվում են չնախապատրաստված հողի վրա, և այն էլ դեռ օտար հաստատություններից ընդօրինակվելով, միայն ու միայն վնա՜ս է գալիս։ Հնադարյան կրակը մնար՝ ավելի լավ էր։ Ուրեմն այդ կվադրիլիոնի գատապարտվածը կանգնում է, նայում, և պառկում է ճանապարհի լայնքով։ «Չեմ ուզում գնալ, սկզբունքով դեմ եմ, չե՛մ գնա»։ Վերցրու ռուս լուսավորյալ աթեիստի հոգին և խառնիր հոգու հետ Հովնան մարգարեի, որ երեք օր ու գիշեր քիթը կախել էր կետի որովայնում, և ահա քեզ՝ ճանապարհի լայնքին պառկած այդ մտածողի նկարագիրը։

— Իսկ ինչի՞ վրա է պառկել այնտեղ։

— Դե մի որևէ բան կար երևի։ Հո չե՞ս ծիծաղում։

— Կեցցե՛ս,— գոռաց Իվանը նույն տարօրինակ եռանդով։ Հիմա նա մի տեսակ անսպասելի հետաքրքրությամբ էր լսում։— Եվ ի՞նչ, հիմա՞ էլ դեռ պառկած է։

— Անդիրն էլ հենց այն է, որ պառկած չէ հիմա։ Գրեթե հազար տարի պառկել է ու սկսել է քայլել։

— Այ քեզ ավանա՜կ,— բացականչեց Իվանը ջղայնորեն քրքջալով և կարծես մի բան ըմբռնելու ճիգ անելով տակավին։— Հավիտենապես պառկել կամ մի կվադրիլիոն կիլոմետր քայլել՝ ի՞նչ տարբերություն։ Մեկ բիլիոն տարվա ճանապարհ է, չէ՞։

— Նույնիսկ շատ ավելի. թուղթ ու մատիտ չկա, թե չէ կարելի էր հաշվել։ Բայց նա վաղուց հասել է արդեն, և հենց այստեղից էլ սկսվում է անեկդոտը։

— Ինչպե՞ս թե հասել է։ Իսկ որտեղի՞ց է գտել մեկ բիլիոն տարին։

— Է՜հ, դու մեր այս ներկա երկրի մասին ես մտածում միայն։ Բայց չէ՞ որ այս ներկա երկիրը գուցե բիլիոն անգամ կրկնվել է. դե ասենք՝ ապրել է իր դարը, սառցակալել է, ճեղքվել է, քայքայվել, վերածվել է բաղկացուցիչ տարրերի, և նորից շուր, որ ի վերո հաստատությանն, հետո նորից գիսաստղ, նորից արև, նորից երկիրն առաջացել է արևից... և այս զարգացումը գուցե անհունորեն կրկնվել է արդեն, միշտ նույն ձևով, մինչև ամենահետին մանրամասնությունը։ Անտանելի՜, խայտառակորեն ձանձրալի բան...

— Դե լավ, լավ, ի՞նչ պատահեց նրա հասնելուց հետո։

— Ուրեմն, հենց որ բացում են դրախտի դռները և նա ներս է մտնում, դեռ երկու վայրկյան էլ չանցած, այն էլ ժամացույցի, ժամացույցի վայրկյաններ (թեև նրա ժամացույցը, ըստ իս, ճանապարհին վաղուց արդեն պետք է քայքայված լիներ ու վերածվեր բաղկացուցիչ տարրերի), ուրեմն երկու վայրկյան էլ չանցած նա բացականչում է, որ այդ երկու վայրկյանի համար ոչ միայն մի կվադրիլիոն, այլ կվադրիլիոն անգամ կվադրիլիոն կարելի է քայլել, այն էլ դեռ կվադրիլիոնապատի՛կ աստիճանին բարձրացնելով։ Մի խոսքով, «օվսաննա» է երգում, բայց համբ հանում է արդեն, այնպես որ դրախտաբնակներից ոմանք, ավելի աղնիվ մտածելակերպ ունենալով, սկզբում չեն էլ ուզում նրա ձեռքը սեղմել, այսինքն թե՝ մարդը չափից ավելի շուտ թռավ պահպանողականների կողմը։ Ռուսական բնավորություն։ Կրկնում եմ՝ առաստպել է։ Ինչպես առել, այնպես էլ ծախում եմ։ Ուրեմն ահա թե ինչ հասկացություններ կան տակավին մեզ մոտ, այնտեղ, այս բոլոր հարցերի մասին։

— Բռնեցի՜ քեզ,— գոռաց Իվանը գրեթե մի տեսակ մանկական հրճվանքով, կարծես արդեն մի բան էր հիշել վերջնականապես,— կվադրիլիոն տարիների մասին այդ անեկդոտը ես ի՞նքս եմ հնարել։ Այն ժամանակ տասնյոթ տարեկան էի, սովորում էի գիմնազիայում... հնարեցի այդ անեկդոտը և պատմեցի մի ընկերոջ, Կորովկին էր ազգանունը, Մոսկվայում... Այդ անեկդոտը այնքան բնորոշ է, որ չէի կարող որևէ տեղից վերցրած լինել։ Կարծես թե մոռացել էի... բայց հիմա անդիտակցորեն միտքս եկավ, ի՞նքս հիշեցի, ոչ թե դու պատմեցիր։ Ինչ-

պես որ ձրբեմն հազար ու մի բան է գալիս մարդու միտքը, անգիտակցորեն, նույնիսկ երբ մահապատժի են տանում... երազի մեջ միտքս եկավ։ Այ հենց դո՛ւ ես այդ երազը։ Դու երազ ես, գոյություն չունես։

— Դատելով այն մոլեգին եռանդից, որով դու ինձ ժխտում ես,— ծիծաղեց չենտլմենը,— համոզվում եմ, որ համենայն դեպս հավատում ես ինձ։

— Բնա՛վ երբեք։ Հավատի մի հարյուրերորդ մասնիկն էլ չունեմ քո նկատմամբ։

— Բայց մի հազարերորդ մասնիկը ունես։ Հոմեոպատիկ չափերը գուցե ամենաուժեղն են, չէ՞։ Խոստովանիր, որ հավատում ես, դե ասենք մի տասհազարերորդական չափով...

— Ո՛չ մի բոպե,— կատաղորեն գոռաց Իվանը։— Եվ սակայն պիտի ուզեի՞ հավատալ քո գոյությանը,— հանկարծ ավելացրեց նա տարօրինակորեն։

— Էհե՛։ Այ քեզ խոստովանությո՛ւն համենայն դեպս։ Բայց ես բարի եմ, այս կետում էլ կօգնեմ քեզ։ Լսիր. ե՛ս քեզ բռնեցի, ոչ թե դու ինձ։ Դիտմամբ քեզ պատմեցի քո իսկ հնարած անեկդոտը, որ մոռացել էիր արդեն, պատմեցի, որպեսզի վերջնականապես հավատդ կորցնես իմ նկատմամբ։

— Ստո՛ւմ ես։ Քո հայտնվելու նպատակն է՝ ինձ համոզել, որ դու կաս։

— Հենց այդ է։ Բայց տատանումները, անհանգստությունը, պայքարը հավատի և անհավատության միջև՝ այս բոլորը այնպիսի՞ մի տանջանք են խղճամիտ մարդու համար, այ քեզ նման մի մարդու, այնպիսի՞ տանջանք, որ ավելի լավ է՝ մարդ կախի իրեն։ Ես հենց գիտեի, որ դու մի քիչ հավատում ես ինձ, և այս անեկդոտը պատմելով՝ արդեն վերջնականապես անհավատություն ներարկեցի քո մեջ։ Ես փոխնիփոխ տարուբերում եմ քեզ հավատի և անհավատության միջև, և սրա մեջ իմ նպատակն ունեմ։ Նոր մեթոդ է. երբ բոլորովին կորցնես հավատդ իմ նկատմամբ, իսկույնևեթ կսկսեմ իմ աչքի առաջ համոզել ինձ, որ ես երազ չեմ, այլ իսկապես գոյություն ունեմ։ Գիտեմ քեզ, չէ՞։ Այ հենց այն ժամանակ էլ կհասնեմ իմ նպատակին։ Իսկ նպատակս ազնիվ է։ Հավատքի մի մանրիկ սերմ կնետեմ քո մեջ, և այդ սերմը կդառնա կաղնի, այն էլ այնպիսի՞ մի կաղնի, որ դու հենց այդ կաղնու վրա էլ նստած՝ կցանկանաս «ճգնավոր հայրերի ու անարատ կանանց» շարքը մտնել,

որովհետև գաղտնորեն ուզում ես այդ բանը, շատ ես ուզում, չա՛տ. մորեխ կուտես, անապատում քարշ կգաս՝ հոգիդ փրկելու համար։

— Ուրեմն դու իմ հոգու փրկությա՞ն համար ես աշխատում, անպիտա՛ն։

— Է՛հ, պետք է գոնե երբևիցե մի բարի գործ անել։ Տեսնում եմ՝ բարկանում ես, բարկանո՛ւմ։

— Խայտառա՛կ։ Իսկ դու երբևիցե փորձության ենթարկե՞լ ես այդպիսիներին, այ հենց նրանց, որ մորեխ են ուտում և տասնյոթ տարի աղոթում են լերկ անապատում, մամռակալում են ոտից գլուխ։

— Սիրելի՛ս, հենց այդ եմ արել միայն։ Կարելի է մոռանալ ամբողջ աշխարհն ու բոլոր աշխարհները և այդպիսի մեկին կպչել եռանդով, որովհետև շատ թանկագին ադամանդ է դա։ Մեկ հատիկ այդպիսի սուրբի հոգին երբեմն մի ամբողջ համաստեղություն արժե. մենք մե՛ր թվաբանությունն ունենք, հասկանո՞ւմ ես։ Հաղթանա՛կն է թանկարժեք։ Իսկ չէ՞ որ նրանցից ոմանք, ասված վկա, քեզնից պակաս չեն իրենց զարգացմամբ, թեև դու չես հավատա դրան. նրանք կարող են հավատքի և անհավատության այնպիսի՞ անդունդներ խորազննել միևնույն պահին, որ, ճիշտն ասած, երբեմն թվում է՝ մազ է մնում, որ մարդը «գլուխկոնծի տա», ինչպես ասում է դերասան Գորբունովը։

— Եվ ի՞նչ, քթիդ տվեցին ու հեռացա՞ր։

— Սիրելի բարեկամս,— նկատեց հյուրը խրատական շեշտով,— համենայն դեպս ավելի լավ է, որ քթիդ տան, քան թե երբեմն բոլորովին առանց քթի մնաս, ինչպես դեռ վերջերս մի հիվանդ մարկիզ (երևի մասնագետն է բուժել նրան) խոստովանության ժամանակ ասաց իր ճիզվիտ խոստովանահորը։ Ես ներկա էի, սքանչելի՞ էր պարզապես։ «Վերադարձրե՞ք ինձ իմ քթիքը»,— ասում էր նա և կուրծքն էր ծեծում։ «Որդյակ իմ,— խուսափուկ պատասխանեց քահանան,— ամեն ինչ իր լրումն է գտնում նախախնամության անքննին կամքը, և տեսանելի դժբախտությունը երբեմն իր հետ բերում է արտակարգ, թեև անտեսանելի մի օգուտ։ Եթե անագորույն ճակատագիրը զրկել է ձեզ քթից, ապա ձեր օգուտն այն է, որ այլևս ձեր ամբողջ կյանքում ոչ ոք չի համարձակվի ասել ձեզ, որ ձեր քթին են տվել»։— «Հայր սուրբ, դա մխիթարություն չէ՞,— բացականչեց հուսահատ մարկիզը։— Ընդհակառակը, ես հրճվանքո՞վ կընդու-

նեի, որ իմ ամբողջ կյանքում ամեն օր քթիս տային, միայն թե քիթս իր պատշաճ տեղում լիներու։— «Որդյակ իմ,— հառաչեց քահանան,— կարելի չէ բոլոր բարիքները միանգամից պահանջել, և դա արդեն տրտունջք է նախախնամության դեմ, որ նույնիսկ այս պարագային էլ չի մոռացել ձեզ. վասնզի եթե դուք աղաղակում եք, ինչպես աղաղակեցիք հիմա, ասելով, թե ուրախությամբ հոժար եք, որ ամբողջ կյանքում ձեր քթին տան, ապա այս պարագային էլ արդեն կատարվել է ձեր ցանկությունն անուղղակիորեն. քանզի երբ կորցրել եք ձեր քիթը, դրանով էլ համենայն դեպս ձեր քթին են տվել կարծես թե...»։

— Թո՛ւհ, ինչ հիմար բան,— գոռաց Իվանը։

— Սիրելի բարեկամս, ես ուզում էի պարզապես զվարճացնել քեզ, բայց երդվում եմ՝ սա իսկական ճիզվիտական կազուիստիկա է, երդվում եմ նորից՝ այս ամբողջը տառ առ տառ պատահեց այնպես, ինչպես պատմեցի քեզ։ Վերջերս եղավ այս դեպքը և շատ գլխացավանք պատճառեց ինձ։ Դժբախտ երիտասարդը տուն վերադարձավ և նույն գիշերն էլ ատրճանակով խփեց իրեն. ես նրա մոտից չհեռացա մինչև վերջին վայրկյանը... Իսկ գալով այդ ճիզվիտական խոստովանախուցերին, իսկապես որ դա իմ ամենասիրելի զվարճությունն է կյանքիս ամենատխուր րոպեների ընթացքում։ Ահա քեզ մի դեպք ևս, որ հենց այս վերջին օրերս պատահեց։ Մեր քահանայի մոտ մի շեկ աղջիկ եկավ, նորմանուհի, քսան տարեկան։ Գեղեցկություն, մարմին, անմիջականություն... լորձունքներդ կվազեին։ Թեքվեց ու լսախորշից փսփսաց քահանային իր մեղքը։ «Ինչ է, դուստր իմ, մի՞թե նորից մեղքի մեջ ընկաք արդեն...— բացականչեց քահանան։— Օ՜, Sancta Maria[1], ի՞նչ եմ լսում. ուրի՞շ մեկի հետ այս անգամ։ Բայց մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս, ինչպե՞ս չեք ամաչում»։— «Ah mon père[2],— պատասխանեց մեղսագործ աղջիկը, զղջման արցունքով ողողված։— Ça lui fait tant de plaisir, et á moi si peu de peine!»[3]։ Է՜, պատկերացնո՞ւմ ես այսպիսի պատասխանը։ Այստեղ արդեն ես էլ ետ քաշվեցի. դա հենց բնությա՛ն ճիչն է, և եթե ուզում ես՝ հենց

1 Սուրբ Մարիամ (լատ.)։

2 Ա՜խ, հայր սուրբ (ֆրանս.)։

3 Դա նրան այնքա՜ն հաճույք է պատճառում, իսկ ինձ՝ այնքա՜ն քիչ դժվարություն (ֆրանս.)։

անմեղությունից էլ լավ է դա։ Տեղն ու տեղը թողություն շնորհեցի նրա մեղքին և դարձել էի, որ գնամ, բայց անմիջապես ստիպված եղա ետ դառնալու. լսեցի՝ քահանան լսախորշից ժամադրություն է նշանակում նրան նույն իրիկվա համար։ Կայծքարի պես ամուր էր ծերունին, և ահա մի վայրկյանում ընկա՜վ։ Բնությունը, բնության ճշմարտությո՜ւնը հաղթանակեց։ Ինչ է, նորի՞ց քիթդ տնկում ես, նորի՞ց ես բարկանում։ Էլ չգիտեմ ինչով հանդոյնամ քեզ...

— Հանգիստ թող ինձ, մղձավանջի նման կպել ու թքխթքխկում ես ուղեղիս մեջ,— ցավագին տնքաց Իվանը, անզոր զգալով իր տեսիլքի առաջ։— Զանձրանում եմ քեզնից, անտանելի՜ է, տանջալի՜։ Ինչ ասես կտայի, միայն թե կարողանայի վռնդե՜լ քեզ։

— Կրկնում եմ, չափավորիր քո պահանջները, մի՜ պահանջիր ինձնից «ամեն ինչ, որ վեհ է ու գեղեցիկ», և կտեսնես, թե ինչպես հաշտ ու համերաշխ կլինենք իրար հետ,— ասաց ջենտլմենը ազդեցիկ շեշտով։— Իրականում դու ինձ վրա բարկանում ես այն բանի համար, որ ես քո առաջ չհայտնվեցի մի տեսակ կարմիր փայլածությամբ, «որոտալով և հուրհրալով», բոցակիզված թևերով, այլ այսպիսի համեստ տեսքով ներկայացա։ Վիրավորվել են, նախ և առաջ, քո գեղասիրական զգացումները, և երկրորդ՝ քո հպարտությունը. այսինքն թե՝ ինչպե՞ս այսպիսի մի գռեհիկ սատանա կարող էր ներկայանալ քեզ նման մեծ մարդուն։ Չէ՜, համենայն դեպս քո մեջ կա՜ այն ռոմանտիկ կրակը, որ այնպե՞ս ծաղրել է Բելինսկին։ Ինչ անենք, երիտասարդ ես։ Այ քիչ առաջ, երբ պատրաստվում էի քեզ մոտ գալ, մտածեցի, որ կատակի համար ներկայանամ իսկական պետական խորհրդականի տեսքով՝ Կովկասում ծառայած պաշտոնաթող գեներալի, ֆրակին Աստղի և Արևի աստղը կպցրած. բայց ուղղակի վախեցա, որովհետև դու ինձ կծեծեիր հենց միայն այն բանի համար, որ համարձակվել եմ Աստղն ու Արևը կպցնել ֆրակիս, և գոնե Բեռնային աստղը կամ Սիրիուսը չեմ կպցրել։ Եվ անընդհատ ասում ես, որ ես հիմար եմ։ Բայց աստված իմ, ես հավակնություն էլ չունեմ իմ խելքով հավասարվելու քեզ։ Մեֆիստոֆելը, հայտնվելով Ֆաուստին, հավաստեց, որ ինքը չարիք է ցանկանում, բայց միայն բարիք է անում։ Է՜հ, նա ինչ ուզում է թող ասի, իսկ ես ճիշտ հակառակն եմ։ Ամբողջ բնության մեջ գուցե միակ մարդն եմ ես, որ սիրում է

ճշմարտությունը և անկեղծորեն բարիք է ցանկանում։ Ես ներկա էի, երբ խաչի վրա մահացած Բանը երկինք էր բարձրանում, իր կրծքին կրելով ընդ աշխարհ խաչյալ ավազակի հոգին. լսեցի բերկրալից ճիչերը քերովբեների, որոնք երգում էին և աղաղակում՝ «Օվսաննա՜», լսեցի նաև սերովբեների ցնծության որոտաձայն աղաղակը, որ ամբողջ երկինքն ու ամբողջ տիեզերքը ցնցեց։ Եվ ահա, երգվում եմ ամենայն սրբությամբ, ես էլ ուզում էի միանալ երգչախմբին ու գոչել բոլորի հետ՝ «Օվսաննա՜»։ Արդեն թռչում էր բառը բերանիցս, արդեն պոկվել էր կրծքիս խորքերից... գիտես, չէ՞, ես շատ զգայուն եմ և գեղարվեստական դյուրընկալություն ունեմ։ Բայց ողջամտությունը, օ՜, ամենաղժբախտ հատկությունը իմ բնության, այստեղ էլ ինձ պահեց պատշաճ սահմաններում, և ես բաց թողեցի ակնթա՜րթը։ Որովհետև ի՞նչ կպատահի,— մտածեցի նույն րոպեին,— ի՞նչ կպատահի իմ «օվսաննայից» հետո։ Ամեն ինչ իսկույն կհանգի աշխարհում և այլևս ոչ մի իրադարձություն չի կատարվի։ Եվ ահա, միայն պարտականության գիտակցությունից և իմ սոցիալական դրության բերմամբ, ստիպված եղա խեղդել իմ մեջ այդ լավ պահը և մնալ իմ պիղծ պաշտոնում։ Մարդու մեկը բարիք գործելու ամբողջ պատիվն իրեն է վերապահում, իսկ ինձ բաժին են մնացել միայն պիղծ բաները։ Բայց ես չեմ նախանձում պորտաբույծ խաթեքայի կյանք ապրելու պատվին, ես փառասեր չեմ։ Ինչո՞ւ աշխարհի բոլոր էակներից ե՞ս եմ միայն դատապարտվել բոլոր կանոնավոր մարդկանց անեծքներին և նույնիսկ ինձ տրվող քացիներին. քացիների՞ն, այո, որովհետև երբ մարմնավոր կերպարանք եմ ստանում, երբեմն ստիպված եմ նաև այդպիսի հետևանքներ ընդունել։ Ես հո գիտե՞մ, որ այստեղ մի գաղտնիք կա, բայց ոչ մի կերպ չեն ուզում հայտնել ինձ այդ գաղտնիքը, որովհետև գուցե այդ դեպքում, հասկանալով, թե ինչը ինչոց է, «օվսաննա՜» կրոռամ հանկարծ, և իսկույն կչքանա անհրաժեշտ բացասականը, ամբողջ աշխարհում ողջամտությունը կտիրի, և դրանով էլ անշուշտ վերջ կգտնի ամեն ինչ, նույնիսկ թերթերն ու ամսագրերը, որովհետև ո՞վ կբաժանորդագրվի այլևս դրանց։ Գիտեմ անշուշտ, որ վերջ ի վերջո կհաշտվեմ, ես էլ կանցնեմ իմ կվադրիլիոնը և գաղտնիքը կիմանամ։ Բայց մինչ այդ, քիթս կախում եմ ու ցավ ի սիրտ կատարում իմ դերը, այսինքն հազարներ եմ կործանում, որպեսզի փրկվի մեկ հոգի։ Օրինակ, քանի՞-քանի հոգի պետք եղավ կործանել և քանի՞-

քանի պատվավոր անուններ խայտառակել՝ միայն Հորին ձեռք բերելու համար, այդ արդարակյաց մարդուն, որի կապակցությամբ այնպե՞ս չարախնդորեն ինձ ծուղակը գցեցին այդ հին օրերին։ Չէ՞, քանի դեռ չի հայտնված գաղտնիքը, ինձ համար երկու տեսակ ճշմարտություն կա. մեկը անդենականն է, նրա՞նց ճշմարտությունը, որ դեռ բոլորովին անծանոթ է ինձ, իսկ մյուսը՝ ի՞մ ճշմարտությունը։ Եվ դեռ հայտնի չէ, թե ո՞րն է ի վերջո ավելի լավը... Քնեցի՞ր։

— Անշո՞ւշտ,— տնքաց Իվանը զայրալից,— դու ինձ որպես մի նորություն՞ ես մատուցում այն ամբողջ հիմարությունը, որ կա իմ մեջ, բոլո՞ր այն բաները, որ արդեն վաղուց են անցել իմ գլխով, մանր-մանր աղացվել են իմ ուղեղում ու դուրս շպրտվել լեշի նման։

— Նորի՞ց չկարողացա զոհացնել։ Իսկ ես մտածում էի նույնիսկ, որ իմ գրական ոճով կհրապուրեմ քեզ. ճիշտն ասած, վատ չէր այդ «օվսաննան» երկնքում, չէ՞։ Հետո էլ այդ հեգնական շեշտը à la Հայնե, հը՞, ճիշտ չե՞մ ասում։

— Չէ՞, ես երբե՞ք այսպիսի պնակալեզ չեմ եղել։ Ուրեմն ինչպե՞ս իմ հոգին կարող էր ծնունդ տալ քեզ նման մի պնակալեզի։

— Սիրելի բարեկամս, ես ճանաչում եմ մի սքանչելագույն և շատ համակրելի երիտասարդ ազնվորդու. երիտասարդ մտածող է նա, մեծ սիրահար է գրականության ու նրբագեղ բաների, հեղինակել է մի խոստմնալից պոեմ, որ կոչվում է «Մեծ հավատաքննիչը»... Միայն նրա՞ն նկատի ունեի ես։

— Արգելո՞ւմ եմ քեզ խոսել «Մեծ հավատաքննիչի» մասին,— բացականչեց Իվանը, ամոթից կաս-կարմիր կորելով։

— Դե լավ, իսկ «Երկրաբանական հեղաշրջո՞ւմ»-ը։ Հիշո՞ւմ ես։ Այ դա արդեն պոե՞մ էր։

— Լռի՞ր, թե չէ կսպանեմ քեզ։

— Ի՞նձ կսպանես։ Չէ՞, կներես, պիտի խոսեմ։ Հենց եկել եմ, որ այդ հաճույքը մատուցեմ ինքս ինձ։ Օ՜, ես սիրում եմ իմ կրակոտ, երիտասարդ, կյանքի ծարավով թրթռուն բարեկամների երազանքները։ «Նոր մարդիկ կան այնտեղ,— որոշեցիր դու անցյալ գարնանը, երբ պատրաստվում էիր այստեղ գալ,— նրանք մտադիր են կործանել ամեն ինչ և սկսել մարդակերությունից։ Հիմարնե՞ր, իմ կարծիքը չեն հարցրել։ Ըստ իս, կարիք էլ չկա որևէ բան կործանելու, պետք է միմիայն

աստծո գաղափարը կործանել մարդկության մեջ, ահա՛ թե որտեղից պետք է սկսել գործը։ Սրանից, սրանի՞ց պետք է սկսել, օ՜ կույրեր, ոչինչ չհասկացող կույրե՜ր։ Հենց որ մարդկությունը համայնորեն հրաժարվի աստծուց (իսկ ես հավատում եմ, որ այդ դարաշրջանը, երկրաբանական դարաշրջաններին համանման, իրականություն կդառնա), ամբողջ նախկին աշխարհայացքը և մանավանդ ամբողջ նախկին բարոյականությունը ինքնաբերաբար կտապալվի, առանց մարդակերության, և ամեն ինչ նորից նոր կսկսվի։ Մարդիկ կհամախմբվեն, որպեսզի կյանքից վերցնեն ամեն ինչ, որ նա կարող է տալ, բայց միայն ու միայն ա՛յս աշխարհում երջանկություն և ուրախություն վայելելու համար։ Մարդը կբարձրանա աստվածային, տիտանական հպարտության ոգով, և կհայտնվի մարդ-աստվածը։ Ժամ առ ժամ հաղթահարելով բնությունը առանց այլևս չափ ու սահմանի, իր կամքով ու գիտությամբ, մարդը այնպիսի՞ բարձր մի հանույթ պիտի զգա ամեն ժամ, որ դա պիտի փոխարինի երկնային հանույթներ վայելելու բոլոր նախկին հույսերը։ Ամեն ոք պիտի իմանա, որ ինքը լիովին մահկանացու է, առանց հոգու հարության, և մահը պիտի ընդունի հպարտորեն ու խաղաղորեն, աստծո նման։ Իր հպարտության շնորհիվ պիտի հասկանա, որ կարիք չկա տրտնջալու, թե կյանքը մի ակնթարթ է, և այլևս առանց որևէ հատուցման պիտի սիրի իր եղբորը։ Սերը կյանքի ակնթարթի՛ն միայն պիտի գոհացում տա, բայց հենց ակնթարթայնության գիտակցությունն էլ այնքա՛ն պիտի սաստկացնի սիրո հուրը, որքան որ առաջ ճապաղում էր դա՝ անդրշիրիմյան անհուն սիրո հույսերով»... դե և այլն, և այլն, այս տեսակ բաներ։ Հիանալի՞ է։

Իվանը, ձեռքերն ականջներին սեղմած, նստել ու նայում էր հատակին, բայց սկսեց դողալ ամբողջ մարմնով։ Ձայնը շարունակեց.

— Հարցը հիմա այն է,— խորհրդածում էր իմ երիտասարդ մտածողը,— հարցը այն է, թե հնարավո՞ր է արդյոք, որ այդպիսի մի դարաշրջան գա երբևիցե։ Եթե գա այդ դարաշրջանը, ուրեմն ամեն ինչ կլուծվի և մարդկությունը կարգի կընկնի վերջնականապես։ Բայց քանի որ դա, մարդու մեջ միս ու արյուն դարձած հիմարության պատճառով, գուցե հազար տարուց էլ չի իրականանա, ուրեմն ամեն ոք, որ այժմ էլ արդեն ունի գիտակցությունը ճշմարտության, կարող է բացարձակապես իր ուզածի նման

կարգավորել իր կյանքը՝ նոր սկզբունքներով։ Այդ իմաստով նրան «ամեն ինչ թույլատրելի է»։ Ավելին՝ եթե նույնիսկ այդ դարաշրջանը երբեք չհասնի, բայց քանի որ համենայն դեպս չկա աստված և անմահություն, ուրեմն նոր մարդը կարող է մարդ-աստված դառնալ, թեկուզ և նա միակը լինի ամբողջ աշխարհում, և անշուշտ, նոր աստիճանի բարձրացրած, կարող է թեթև սրտով կոխել-անցել նախկին ստրուկ մարդու բարոյականության ամեն մի խոչընդոտ, եթե պետք լինի։ Աստծո համար չկա՛ օրենք։ Ուր որ կանգնում է աստված՝ դա սրբազա՛ն վայր է արդեն։ Ուր որ կանգնեմ ես՝ դա իսկույնևեթ կլինի առաջնագույն վայրը... «ամեն ինչ թույլատրելի է» ու վե՛րջ։ Շա՛տ հիանալի է այդ ամբողջը. միայն թե կարծում եմ, որ եթե սիրտդ ուզում է սրիկայություն անել, այլևս ինչի՞դ է պետք ճշմարտության անունով վավերացնել քո ուզածը։ Բայց այդպես է մեր ժամանակակից ռուս մարդուկը, այնքա՛ն է սիրահարվել ճշմարտության, որ առանց վավերացման չի կարողանում մինչև իսկ սրիկայություն անել...

Հյուրը խոսում էր, հայտնապես տարված իր պերճախոսությամբ, ավելի ու ավելի բարձրացնելով ձայնը և հեգնականորեն նայելով տանտիրոջը։ Բայց նա չկարողացավ վերջացնել։ Իվանը հանկարծ վերցրեց բաժակը սեղանից և թափով նետեց հատակի վրա։

— Ah mais c'est bête enfin![1]— բացականչեց հյուրը, վեր թռչելով բազմոցից և մատներով թափ տալով թեյի կաթիլներն իր վրայից։— Լյութերի թանաքամա՛նը հիշեցիր։ Ի՞նքն է ինձ երազ համարում, և բաժա՛կ է նետում երազի վրա։ Կնավարի բան է դա։ Այո, ես կասկածում էի արդեն, որ դու ձևացնո՛ւմ էիր պարզապես, թե փակել ես ականջներդ. լսում էիր...

Հանկարծ դրսից ուժգին ու համառորեն բախեցին պատուհանը։ Իվան Ֆյոդորովիչը վեր թռավ բազմոցից։

— Լսո՞ւմ ես։ Լավ կլինի, որ բանաս,— գոչեց հյուրը,— քո եղբայր Ալյոշան է, խիստ անակնկալ ու հետաքրքրական լուր է բերել, հաստա՛տ բան եմ ասում քեզ։

— Լռի՛ր, խաբեբա, ես քեզնից առաջ գիտեի, որ Ալյոշան է, նախազգում էի. և անշո՛ւշտ թե իզուր չի գալիս, անշուշտ «լուր» է բերում...— բացականչեց Իվանը մոլեգնորեն։

---

1 Է՛, բայց սա հիմա՛ր բան է վերջապես (ֆրանս.)։

— Դե բա՛ց դուռը, բա՛ց։ Ինչպե՞ս է դրսում, իսկ նա եղբայրն է քո։ Monsieur sait-il le temps qu'il fait? C'est à ne pas mettre un chien dehors[1]...

Թակոցը շարունակվում էր։ Իվանն ուզում էր դեպի պատուհանը նետվել. բայց կարծես մի բան կաշկանդեց հանկարծ նրա ոտքերն ու ձեռքերը։ Թոլոր ուժերը լարեց, որ քանդի կապանքները, բայց իզուր։ Թակոցն ավելի ու ավելի էր աստիճանում։ Վերջապես հանկարծ քանդվեցին կապանքները, և Իվան Ֆյոդորովիչը վեր ցատկեց բազմոցից։ Շուրջը նայեց վայրագ մի հայացքով։ Երկու մոմերը համարյա լրիվ վառվել էին, սեղանին մնում էր այն բաժակը, որ նա հենց քիչ առաջ նետել էր հյուրի վրա, իսկ դիմացի բազմոցին ոչ ոք չկար։ Դեռ համառորեն շարունակվում էր թակոցը պատուհանի շրջանակին, բայց բնավ էլ այնքան ուժգին չէր, որքան հենց հիմա թվացել էր նրան երազում, ընդհակառակը, շատ զուսպ էր։

— Երազ չէ՞։ Ոչ, երդվում եմ, երազ չէր, այդ ամբողջը կատարվե՛ց հիմա,— գոչեց Իվան Ֆյոդորովիչը, նետվեց դեպի պատուհանը և օդանցքը բաց արեց։

— Ալյոշա՛, ասացի՞ քեզ, չէ՞, որ չգաս,— կատաղորեն գոռաց նա եղբորը։— Երկու խոսքով՝ ի՞նչ ես ուզում։ Երկո՛ւ խոսքով, լսո՞ւմ ես։

— Մի ժամ առաջ Սմերդյակովը կախեց իրեն,— պատասխանեց Ալյոշան դրսից։

— Անցիր դեպի դուռը, իսկույն կբացեմ,— ասաց Իվանը և գնաց դուռը բացելու Ալյոշայի առաջ։

X

«ԵՍ ԷՐ ԱՍԱԾՈՒ»

Ալյոշան, ներս մտնելով, Իվանին ասաց, թե մոտ մի ժամ առաջ Մարյա Կոնդրատևնան վազել-եկել էր իր բնակարանը և հայտնել, որ Սմերդյակովը անձնասպան է եղել։ «Հենց մտել էի, ինքնահոս վերցնեմ, մեկ էլ տեսա՝ պատի մեխից կախվել է»։ Ալյոշան հարցրել էր՝ «Հայտնեցի՞ր ում որ պետք է», և աղջիկը պատասխանել էր, թե ոչ ոքի չի հայտնել, «առաջինը հենց ուղղակի ձեզ մոտ թռա, ամբողջ ճանապարհը վազեվազ եկա»։ Հելլագարի նման էր, ասաց Ալյոշան, տերևի պես դողում էր։ Իսկ երբ Ալյոշան աղջկա հետ վազել էր նրանց խրճիթը, Սմերդյակովին գտել էր նույն կախված վիճակում։ Սեղանի վրա մի երկտող կար. «Ոչնչացնում եմ իմ կյանքը իմ սեփական կամքով ու ցանկությամբ, որպեսզի ոչ ոքի վրա մեղք չգցեմ»։ Ալյոշան այնպես էլ թողել էր այդ երկտողը սեղանի վրա և ուղղակի գնացել ոստիկանապետի մոտ, ամեն ինչ հայտնել նրան, «իսկ այնտեղից ուղղակի քեզ մոտ եկա»,— վերջացրեց Ալյոշան, ուշադիր նայելով Իվանի դեմքին։ Նվ պատմելու ժամանակ աչքերը անընդհատ հառել էր եղբորը, կարծես նրա դեմքի արտահայտության մեջ նկատելով մի բան, որ սաստիկ զարմացրել էր իրեն։

— Եղբա՛յր,— գոչեց նա հանկարծ,— սոսկալի հիվանդ ես երևում։ Նայում ես, և թվում է՝ չես հասկանում իմ ասածը։

— Լավ է, որ եկար,— ասաց Իվանը մի տեսակ մտախոհ և կարծես թե բոլորովին լսելով Ալյոշայի բացատրությունները։— Բայց ես գիտեի, որ նա կախել է իրեն։

— Իսկ ո՞վ ասաց։

— Չգիտեմ ով։ Բայց գիտեի։ Իսկապես, գիտեի՞։ Այո, նա՛ ասաց ինձ։ Հենց նոր էր ասում...

Իվանը կանգնել էր սենյակի մեջտեղը և խոսում էր նույն մտախոհ արտահայտությամբ, նայելով հատակին։

— Ո՞վ է նա,— հարցրեց Ալյոշան, ակամա նայելով շուրջը։

— Մլկեց, փախավ։

Իվանը վեր առավ գլուխը և մեղմ ժպտաց։

— Քեզնից վախեցավ, քեզնից, քեզ նման աղավնյակից։ Դու «անարատ քերովբե» ես, հրեշտակ։ Դմիտրին քեզ քերովբե է կոչում։ Քերովբե... Որոտաձա՛յն աղաղակը սերովբեների ցնծության։ Ի՞նչ է սերովբեն։ Գուցե մի ամբողջ համաստեղություն։ Բայց գուցե այդ ամբողջ համաստեղությունը մի քիմիական մոլեկո՛ւլ է միայն... Աստղերի և Արևի համաստեղություն կա՞, չգիտե՞ս։

— Նստի՛ր, եղբայր,— ասաց Ալյոշան վախեցած,— նստիր այստեղ, բազմոցի վրա, ի սեր աստծու։— Զառանցում ես, գլուխդ դիր բարձին, այ այսպես։ Թաց սրբիչ ուզո՞ւմ ես գլխիդ։ Գուցե ավելի լա՞վ զգաս։

[1] Գարոնը գիտե՞, թե ինչ եղանակ է դրսում։ Այսպիսի եղանակին շանն էլ դուրս չեն անում... (Ֆրանս.)։

— Տուր սրբիչը, այ այստեղ է, աթոռի վրա, քիչ առաջ այստեղ գցեցի։

— Այստեղ սրբիչ չկա։ Մի՛ անհանգստանա, գիտեմ որտեղ է,— ասաց Ալյոշան, մի մաքուր, ծալած ու դեռ չօգտագործած սրբիչ գտնելով սենյակի մյուս անկյունում, Իվանի արդասեղանի մոտ։ Իվանը տարօրինակորեն նայեց սրբիչին. հիշողությունը կարծես մի ակնթարթում տեղը եկավ։

— Սպասիր,— վեր կացավ նա բազմոցից,— ես մի ժամ առաջ այս նույն սրբիչը վերցրի այնտեղից և թրջեցի։ Դրի գլխիս և հետո գցեցի այստեղ... Իսկ ինչո՞ւ չոր է։ Ուրիշ սրբիչ չկար։

— Ա՞յս սրբիչը դրել էիր գլխիդ,— հարցրեց Ալյոշան։

— Այո, և սենյակում քայլեցի, մի ժամ առաջ... Ինչո՞ւ մոմերը այսպես լրիվ վառվել են։ Ժամը քանի՞սն է։

— Տասներկուսի մոտ։

— Չէ, չէ, չէ՛,— գոռաց հանկարծ Իվանը,— երազ չէ՞ր դա։ Նա այստեղ էր, նստել էր այստեղ, ահա այն բազմոցին։ Երբ դու պատուհանն էիր թակում, ես բաժակը նետեցի նրա վրա... ահա այս բաժակը... Սպասիր, անցյալ անգամ էլ քնել էի, բայց այս երազը երազ չէ։ Անցյալ անգամ էլ եղավ։ Ալյոշա, երազներ եմ տեսնում հիմա... բայց երազներ չեն, իրական են. քայլում եմ, խոսում, տեսնում... բայց քնած եմ։ Բայց նա կա՞ր, նստել էր այստեղ, ահա այդ բազմոցին... Սոսկալի հիմար է նա, Ալյոշա, սոսկալի հիմար,— ծիծաղեց հանկարծ Իվանը և սկսեց քայլել սենյակում։

— Ո՞վ է հիմար։ Ո՞ւմ մասին ես խոսում, եղբայր,— նորից անձկությամբ հարցրեց Ալյոշան։

— Սատանա՛։ Սկսել է այցելել ինձ։ Երկու անգամ եկավ, համարյա նույնիսկ երեք անգամ։ Մաղրում էր ինձ, ասում էր՝ իբր թե ես բարկանում եմ, որ ինքը հասարակ սատանա է, և ոչ թե սաղայելը՝ բոցակեզ թևերով, որոտով ու փայլով։ Բայց սաղայելը չէ նա, ստում է։ Ինքնակոչի մեկն է։ Պարզապես սատանա, անպետք, չնչին մի սատանա։ Բաղնիք է գնում։ Մերկացնես նրան, կտեսնես, որ պոչ ունի, վստահ եմ, երկար, ողորկ մի պոչ, դանիական շան նման, մի կանգուն երկարությամբ, մուգ շագանակագույն... Ալյոշա, մրսել ես, ձյունների մեջ ես եղել, թեյ ուզո՞ւմ ես։ Ի՞նչ։ Սա՞ն է։ Ուզո՞ւմ ես՝ ասեմ, նոր թեյ բերի։ C'est à ne pas mettre un chien dehors[1]...

1 Այսպիսի եղանակին շանն էլ դուրս չեն անում... (Ֆրանս.)։

Ալյոշան վազեց լվացարանի մոտ, թրջեց սրբիչը, համոզեց Իվանին, որ նստի նորից, և թաց սրբիչը փաթաթեց գլխին։ Ինքն էլ նրա կողքին նստեց։

— Ի՞նչ էիր ասում քիչ առաջ Լիզայի մասին,— սկսեց նորից Իվանը։ (Նա սկսում էր արդեն շատախոս դառնալ)։— Ինձ դուր է գալիս Լիզան։ Մի զզվելի բան ասացի քեզ նրա մասին։ Սուտ էր, նա ինձ դուր է գալիս... Կատյայի համար եմ վախենում վաղը, ամենից ավելի նրա համար եմ վախենում։ Ապագայի համար։ Վաղը նա ինձ դեն կգցի ու կտրորի ոտքերի տակ։ Կարծում է, որ խանդո՞ւմ եմ իրեն և դրա համար կործանում եմ Միտյային։ Այո, այդպես է կարծում։ Բայց չէ՛, այդպես չէ՛։ Վաղը խաղ է, բայց ոչ կախաղան։ Չէ, ես ինձ չեմ կախի։ Գիտե՞ս, որ ես երբեք չեմ կարող անձնասպան լինել, Ալյոշա։ Որովհետև ստո՞ր եմ, հա՞։ Ես վախկոտ չեմ։ Կյանքի ծարա՞վն է։ Ինչպե՞ս իմացա, որ Սմերդյակովը կախել է իրեն։ Այո՞, նա ինձ ասաց...

— Եվ դու հաստատ համոզված ես, որ մեկը նստե՞լ էր այստեղ,— հարցրեց Ալյոշան։

— Ահա այն բազմոցի վրա, անկյունը։ Դու կվռնդեիր նրան։ Բայց այո, հենց դու էլ վռնդեցիր նրան. երբ դու երևացիր, նա չքացավ։ Սիրում եմ քո դեմքը, Ալյոշա։ Գիտեի՞ր, որ սիրում եմ քո դեմքը։ Իսկ նա... իմ անձն է, Ալյոշա, ես եմ նա, ես ինքս։ Ամեն ինչ, որ ստո՞ր է իմ մեջ, ամեն ինչ, որ անարգ է ու քստմնելի։ Այո, ես «ռոմանտիկ» եմ, նկատեց այդ բանը... թեև դա զրպարտություն է։ Նա սոսկալի հիմար է, բայց դրանով է գործը գլուխ հանում։ Խորամանկ է, անասնորեն խորամանկ, գիտե, թե ինչով կարող է կատաղեցնել ինձ։ Անընդհատ ծաղրում էր ինձ, որ չեմ հավատում իրեն, և դրանով էլ ստիպեց, որ լսեմ իր ասածը։ Խաբեց ինձ, երեխայի պես խաբվեցի։ Բայց նա իմ մասին ճշմարիտ բաներ էլ շատ ասաց, ի՛նձ ասաց։ Ես երբեք չէի ասի այդ բոլորը ինքս ինձ։ Գիտե՞ս, Ալյոշա, գիտե՞ս,— ավելացրեց Իվանը սոսկալի լուրջ ու մի տեսակ խորհրդապահ շեշտով,— ես շատ կցանկանայի, որ նա իսկապես նա լիներ, ոչ թե ես։

— Նա քեզ տանջել է,— ասաց Ալյոշան, կարեկցանքով նայելով եղբորը։

— Մաղրո՞ւմ էր ինձ։ Եվ գիտե՞ս, վարպետորեն, վարպետորեն։ «Խի՛ղճ։ Ի՞նչ է խիղճը։ Ես ինքս եմ հնարում դա։ Ուրեմն ինչո՞ւ եմ տանջվում։ Սովորություն է։ Մարդկության համաշխարհային սովորությունը՝ յոթ հազար տարուց ի վեր։ Ուրեմն թող-

նենք այդ սովորությունը և առաջնորդներ լինենք։» Նա՛ էր ասում դա, նա՛ էր ասում։

— Եվ ո՞չ թե դու, ո՞չ թե դու,— անդիմադրելիորեն գոչեց Ալյոշան, պարզ նայելով եղբորը։— Թող նա ի՞նչ ուզում է ասի, ձեռք քաշիր նրանից, մոռացի՛ր նրան։ Թող իր հետ տանի ամեն ինչ, որ անիծում ես հիմա, և թող երբե՛ք չգա։

— Այո, բայց նա չար է։ Սիծաղում էր ինձ վրա։ Անպատկառ էր նա, Ալյոշա,— ասաց Իվանը, վիրավորանքից դողալով։— Բայց զրպարտում էր ինձ, շատ էր զրպարտում։ Հենց իմ երեսին սուտ էր ասում իմ մասին։ «Ո՞, դու գնում ես առաքինության սխրանք կատարելու, պիտի հայտարարես, որ սպանել ես հորդ, որ ծառան քո դրդումով է սպանել հորդ...»։

— Եղբա՛յր,— ընդհատեց Ալյոշան,— զսպիր քեզ, դու չես սպանողը։ Դա ճիշտ չէ։

— Նա է ասում, նա, իսկ նա գիտե։ «Դու՝ գնում ես առաքինության սխրանք կատարելու, բայց հենց առաքինության էլ չես հավատում. ահա թե ինչն է քեզ զայրացնում ու տանջում, ահա թե ինչու այդպես քինախնդիր ես դուս։ Նա էր ինձ ասում այդ բանը իմ մասին, իսկ նա գիտե ինչ է ասում...

— Դո՛ւ ես ասում, ոչ թե նա,— վշտագին բացականչեց Ալյոշան,— և ասում ես, որովհետև հիվանդ ես, զառանցում ես, տանջո՛ւմ ես քեզ։

— Ջէ, նա գիտե ինչ է ասում։ Դու գնում ես հպարտությունից դրդված, ասում է, դու կկանգնես ու կասես. «Ծ՛ո սպանեցի, և ինչո՞ւ եք ինձանից սարսափից, ստո՛ւմ եք դուք։ Արհամարհում եմ ձեր կարծիքը, արհամարհում եմ ձեր սարսափը»։ Նա էր ասում այդ բանը իմ մասին, և հետո ասաց. «Բայց գիտե՞ս, դու ուզում ես, որ գովեն քեզ նրանք. այսինքն թե՝ ոճրագործ է, մարդասպան, բայց ի՞նչ վեհանձն զգացմունքների տեր է, ուզեց փրկել իր եղբորը և խոստովանեց»։ Ա՛յ սա արդեն սո՛ւտ է, Ալյոշա,— գոռաց հանկարծ Իվանը, և աչքերը փայլատակեցին։— Ես չե՛մ ուզում, որ սուտ ռամիկները գովեն ինձ։ Նա սուտ ասաց այդ բանը, Ալյոշա, սուտ ասաց, երդվո՛ւմ եմ քեզ։ Դրա համար էլ բաժակը նետեցի նրա քթին-բերանին, և չարդվեց բաժակը նրա մռութի վրա։

— Հանգստացիր, եղբայր, վե՛ր կաց,— խնդրում էր Ալյոշան։

— Ջէ, նա կարողանում է տանջել, դաժան է նա,— շարունակում էր Իվանը, առանց լսելու— Ես միշտ նախատրամադիր էի, թե ինչու է գալիս։ «Ասենք, դու հպարտությունից դրդված պիտի գնաս, բայց նաև հույս ունեիր համենայն դեպս, որ Սմերդյակովին կմերկացնեն ու կուղարկեն տաժանակիր աքսորի, Միխայլին կարդարացնեն, իսկ քեզ կդատապարտեն լոկ բարոյապես (լսո՞ւմ ես, նա ծիծաղե՞ց այդ ասելով), իսկ ոմանք էլ ուղղակի կգովեն քեզ։ Բայց ահա մեռավ Սմերդյակովը, կախեց իրեն. է՛հ, հիմա մենակ մնացիր, և ո՞վ կհավատա քեզ դատապարտում։ Բայց չէ՞, դու գնում ես, գնում, կգնաս այնուամենայնիվ, որոշել ես, կգնաս։ Էլ ինչո՞ւ ես գնում սրանից հետո։ Սարսափելի է, Ալյոշա, ես չեմ կարող հանդուրժել այսպիսի հարցերը։ Ո՞վ կհանդգնի այսպիսի հարցեր տալ ինձ։

— Եղբայր,— ընդհատեց Ալյոշան, թուլանալով վախից, բայց դեռ կարծես հույս ունենալով, որ խելքի կբերի Իվանին,— ինչպե՞ս նա կարող էր մինչև իմ գալը ասել քեզ, թե Սմերդյակովը մեռել է, երբ դեռ ոչ ոք չգիտեր դրա մասին, և ժամանակ էլ չկար, որ ուրիշ որևէ մեկը իմանար։

— Ասաց նա, ասաց,— պնդեց Իվանը, տարակույսի հնարավորությունն անգամ մերժելով։— Հենց միայն դրա մասին էր խոսում, եթե ուզում ես։ «Եվ գոնե հավատայի՞ր առաքինության,— ասաց նա։— Կարող էիր մտածել՝ թող չհավատան ինձ, սկզբունքի համար եմ գնում։ Բայց չէ՞ որ դու խոզի ձագ ես Ֆյոդոր Պավլովիչի նման, և ինչի՞դ է պետք առաքինությունը։ Իսկ ինչո՞ւ ես ուզում քարշ գալ այնտեղ, եթե քո զոհողությունը ոչ մի բանի չի ծառայելու։ Որովհետև ի՞նքդ չգիտես, թե ինչու ես գնում։ Ո՞, դու շատ բան կուզիր, որպեսզի ինքդ էլ իմանայիր, թե ինչու ես գնում։ Եվ իբր թե որոշե՞լ ես։ Դեռ չես որոշել։ Ամբողջ գիշեր պիտի նստես ու տատանվես՝ գնա՞մ, թե չէ։ Բայց համենայն դեպս գնալու ես և գիտես, որ գնալու ես։ Ինքդ էլ գիտես, որ ինչ որոշում էլ տաս, քեզնից չի կախված վերջնական որոշումը։ Պիտի գնաս, որովհետև չես համարձակվի չգնալ։ Իսկ թե ինչո՞ւ չես համարձակվի՝ այդ արդեն ի՞նքդ կուահիր, ահա քեզ հանելուկ։ Ելալ ու գնաց։ Դու եկար, իսկ նա գնաց։ Նա ինձ վախկո՞տ կոչեց, Ալյոշա։ Le mot de l'énigme[1]-ը այն է, որ ես վախկո՞տ եմ։ «Այսպիսի արծիվների գործը չէ՞ երկրից վեր սլանալը։ Նա՛ ավելացրեց այս բանը, նա՛ ավելացրեց։ Եվ Սմերդյակովն էլ նույն բանը ասաց։ Պետք է սպանե՞լ նրան։

[1] Հանելուկի լուծումը (Ֆրանս.)։

Կատյան արհամարհում է ինձ, արդեն մի ամիս է՝ տեսնում եմ դա, և Լիզան էլ կսկսի արհամարհել։ «Գնում ես, որ քեզ գովենք». դա ճիվաղայի՞ն սուտ է։ Եվ դու էլ արհամարհում ես ինձ, Ալյոշա։ Հիմա ես նորից կատեմ քեզ։ Եվ հրեշին էլ եմ ատում, հրեշի՞ն էլ եմ ատում։ Չեմ ուզում փրկել հրեշին, թող փտի՛ տաժանավայրում։ Օրհներգությո՞ւն սկսեց երգել։ Օ՜, վաղը ես կգնամ, կկանգնեմ նրանց առաջ և կթքե՛մ բոլորի երեսին։

Նա վեր թռավ մոլեգնահար, քաշեց ու շպրտեց սրբիչը և սկսեց նորից քայլել սենյակում։ Ալյոշան հիշեց նրա քիչ առաջվա ասածը. «Կարծես թե քնում եմ արթուն վիճակում... Քայլում եմ, խոսում և տեսնում, բայց քնած եմ»։ Հենց այդ էր ասես կատարվում հիմա։ Ալյոշան չէր հեռանում նրա մոտից։ Մտքովն անցավ, որ վազի՝ ու բժիշկ բերի, բայց վախեցավ եղբորը մենակ թողնել. չկա՛ր մեկը, որի խնամքին թողներ նրան։ Վերջապես Իվանն սկսեց հետզհետե բոլորովին կորցնել դիտակցությունը։ Շարունակում էր խոսել, խոսում էր անդադար, բայց բոլորովին անկապ։ Նույնիսկ վատ էր արտասանում բառերը և հանկարծ սաստիկ օրորվեց կանգնած տեղում։ Բայց Ալյոշան ճիշտ ժամանակին բռնեց նրան։ Իվանը թույլ տվեց, որ նա իրեն տանի անկողին, Ալյոշան մի կերպ հանեց նրա հագուստները և պառկեցրեց։ Դեռ երկու ժամ նստեց նրա մոտ ու հսկեց։ Հիվանդը պինդ քնում էր, առանց շարժվելու, հանգիստ ու համաչափ շնչելով։ Ալյոշան մի բարձ վերցրեց ու պառկեց բազմոցի վրա, առանց հանվելու։ Քուն մտնելով, նա աղոթեց Միտյայի ու Իվանի համար։ Սկսում էր հասկանալ Իվանի հիվանդությունը. «Հպարտ բախտորոշման տանջանքներ, խորունկ խիղճ»։ Աստված, որին չէր հավատում նա, և աստուծո ճշմարտությունն սկսում էին տիրել նրա սրտին, որ դեռ չէր ուզում ենթարկվել։ «Այո,— անցավ Ալյոշայի մտքով, երբ նրա գլուխն արդեն հանգչում էր բարձի վրա,— այո, քանի որ Սմերդյակովը մեռավ, այլևս ոչ ոք չի հավատա Իվանի ցուցմունքին. բայց նա կգնա՞ ու կտա՞ իր վկայությունը։— Ալյոշան մեղմ ժպտաց։— Աստվա՛ծ կհաղթանակի,— մտածեց նա։— Կա՛մ ոտքի կկանգնի եղբայրս ճշմարտության լույսով, և կամ... կկործանվի ատելության մեջ ընկած, վրեժ լուծելով իրենից և բոլորից՝ նրա համար, որ ծառայել է մի բանի, որին չի հավատում»,— դառնորեն ավելացրեց Ալյոշան ու նորից աղոթեց Իվանի համար։

Գիրք տասներկուերորդ

ԴԱՏԱԿԱՆ ՍԽԱԼ

I

ՁԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՕՐԸ

Իմ նկարագրած դեպքերից հետո, հաջորդ օրը, առավոտյան ժամը տասին, մեր շրջանային դատարանում սկսվեց Դմիտրի Կարամազովի դատը։

Նախօրոք ասեմ, և ասեմ հաստատապես՝ ես բնավ էլ ինձ ի վիճակի չեմ համարում պատմելու այն ամբողջը, որ տեղի ունեցավ դատի ընթացքում, և ոչ միայն հարկ եղած լիությամբ, այլև հարկ եղած կարգով պատմել չեմ կարող։ Ինձ միշտ էլ թվում է, որ եթե ամեն ինչ հիշեի և ամեն ինչ բացատրեի այնպես, ինչպես պետք է, մի ամբողջ գիրք հարկավոր կլիներ գրել և նույնիսկ շատ խոշոր գիրք։ Ուստի թող չդժգոհեն ինձնից, որ ես պատմում եմ միայն այն, ինչ անձնապես ինձ վրա տպավորություն է գործել, և որ հատկապես հիշում եմ ես։ Կարող է պատահել, որ երկրորդականը որպես գլխավոր եմ քննարկել, գուցե նույնիսկ բոլորովին աչքաթող եմ արել ամենացցուն, ամենաէական կետերը... Բայց տեսնում եմ, որ ավելի լավ է շարադրանալ։ Կանեմ այնպես, ինչպես կարող եմ, և ընթերցողները իրենք կհասկանան, որ արել եմ միայն այն, ինչ կարող էի։

Եվ նախ, դատարանի դահլիճ մտնելուց առաջ, հիշատակեմ այն, ինչ հատկապես զարմացրեց ինձ այդ օրը։ Ի դեպ, ինչպես պարզվեց հետո, ոչ միայն ինձ զարմացրեց դա, այլև բոլորին։ Խնդիրն այս է. բոլորս էլ գիտեինք, որ այս գործը շատ-շատերին է հետաքրքրել և բոլորն էլ այրվում են անհամբերությունից, թե երբ է սկսվելու դատը, որ մեր քաղաքի հասարակությունն ամբողջ երկու ամիս խոսում էր դրա մասին, ենթադրություններ անում, բացականչում ու գլխից դուրս տալիս։ Բոլորս էլ գիտեինք նույնպես, որ այս գործը ամբողջ Ռուսաստանում է հրաշակվել, բայց այնուամենայնիվ չէինք պատկերացնում, որ այդ աստիճան այրող, այդ աստիճան ցնցող հետաքրքրություն է առաջացրել բոլորի և յուրաքանչյուրի մեջ, և ոչ միայն մեր քա-

զաքում, այլև ամենուրեք, ինչպես պարզվեց այդ օրը, բուն իսկ դատավարության ժամանակ։ Այդ օրը մեզ մոտ հյուրեր եկան ոչ միայն նահանգի կենտրոնական քաղաքից, այլև Ռուսաստանի մի քանի ուրիշ քաղաքներից, և վերջապես Մոսկվայից ու Պետերբուրգից։ Եկան իրավաբաններ, եկան նույնիսկ մի քանի ականավոր անձինք, ինչպես նաև տիկիններ։ Բոլոր տոմսերը խլխլվեցին։ Դատավորների սեղանի ետև նույնիսկ բոլորովին արտակարգ տեղեր էին հատկացրել առանձնապես պատվարժան ու մեծազարմ այրերի համար, որոնք հյուր էին եկել. այդ այլազան անձնավորությունների համար բազկաթոռների մի ամբողջ շարք էր երևացել այնտեղ, մի բան, որ առաջ երբեք չէր թույլատրվում մեր դատարանում։ Հատկապես շատ էին տիկինները՝ թե՛ մեր քաղաքից, թե՛ դրսից. կարծում եմ նույնիսկ, որ ներկա եղող հասարակության կեսն էին կազմում նրանք, ոչ պակաս։ Ամեն կողմից եկած իրավաբանները միայն այնքան բազմաթիվ էին, որ էլ չգիտեին մինչև իսկ, թե ուր տեղավորեին նրանց, քանի որ բոլոր տոմսերն արդեն վաղուց բաժանել էին խնդրողներին ու աղաչողներին։ Ես ինքս տեսա, թե ինչպես դահլիճի խորքում, վերնահարթակի ետև, ժամանակավոր մի ցանկափակ էին կառուցել հապճեպորեն, և բոլոր այդ իրավաբաններին ընդունել էին այնտեղ, և նրանք մինչև իսկ երջանիկ էին համարել իրենց, որ կարող են գոնե կանգնել ցանկափակում, որովհետև, տեղ շահելու համար, բոլոր աթոռները դուրս էին հանել այդ վայրից. և հավաքված բազմությունը ամբողջ «գործի» ընթացքում ուս-ուսի կանգնեց այնտեղ, մի մեծ կույտ կազմած։

Տիկիններից ոմանք, հատկապես հյուրերից, արտակարգորեն զուգված-զարդարված եկան ու տեղ գրավեցին դահլիճի վերնատանը, բայց տիկինների մեծ մասը նույնիսկ արդուզարդն էր մոռացել։ Նրանց դեմքերին հիստերիկ, ոգահ, գրեթե հիվանդագին հետաքրքրասիրություն էր գրոշմված։ Դահլիճում հավաքված ամբողջ այդ հասարակության ամենաբնորոշ յուրահատկություններից մեկն այն էր (և սա պետք է նշել), որ համարյա բոլոր տիկինները, գոնե նրանց մեծագույն մասը, Միտյային էին պաշտպանում և կողմնակից էին նրա արդարացմանը, և այդ պարագան հետագայում հաստատվեց բազմաթիվ դիտումներով։ Դրա գլխավոր պատճառը գուցե այն էր, որ Միտյան կանացի սրտեր նվաճողի համբավ էր վայելում։ Գիտեին,

որ երկու մրցակից կանայք պետք է ներկայանան դատարան։ Նրանցից մեկը, այսինքն Կատերինա Իվանովնան, հատկապես հետաքրքրում էր բոլորին. չափից ավելի շատ և արտասովոր քաներ էին պատմում նրա մասին, զարմանալի անեկդոտներ էին շրջում, թե նա բուռն կիրք է տածում Միտյայի նկատմամբ, հակառակ նույնիսկ նրա կատարած ոճրագործության։ Հատկապես շեշտում էին Կատերինա Իվանովնայի հպարտ բնավորությունը (նա գրեթե ոչ ոքի մոտ այցելության չէր գնացել մեր քաղաքում), հիշում էին նրա «ազնվականական կապերը»։ Ասում էին, թե նա մտադիր է խնդրանք ներկայացնել կառավարությանը, որ իրեն թույլ տան ուղեկցել հանցագործին մինչև աքսորավայր և նրա հետ պսակվել մի որևէ հանքում, գետնի տակ։ Գրեթե նույն անհամբերությամբ սպասում էին նաև, որ Գրուշենկան երևա դատարանի առաջ, որպես Կատերինա Իվանովնայի մրցակիցը։ Տանջալի հետաքրքրասիրությամբ սպասում էին երկու մրցակցուհիների՝ ազնվական հպարտ օրիորդի և «հետերայի» հանդիպմանը դատարանի առաջ։ Բայց Գրուշենկան ավելի հայտնի էր մեր տիկիններին, քան Կատերինա Իվանովնան։ Մեր տիկինները առաջ էլ տեսել էին նրան՝ «Ֆյոդոր Պավլովիչի և նրա դժբախտ որդու կործանման պատճառ եղողին», և բոլորն էլ, գրեթե առանց բացառության, զարմանում էին, թե ինչպես հայր ու որդի կարող էին այդ աստիճան սիրահարվել այդպիսի «ամենահասարակ մի ռուս քաղքենուհու, որ նույնիսկ գեղեցիկ էլ չէ բոլորովին»։ Մի խոսքով, շատ էին սենսացիաները։ Հաստատ գիտեմ նույնիսկ, որ հենց մեր քաղաքում մի քանի ընտանեկան լուրջ վեճեր էին տեղի ունեցել Միտյայի պատճառով։ Տիկիններից քանիսը բուռն բախվել էին իրենց ամուսինների հետ՝ այս ամբողջ սարսափելի գործի նկատմամբ տարբեր հայացքների հետևանքով, և դրանից հետո բնական էր, որ բոլոր տիկինների ամուսինները դատարան էին եկել՝ ոչ միայն արդեն անբարեհաճ տրամադրված լինելով մեղադրյալի նկատմամբ, այլև նույնիսկ նրա գեմ զայրույթով լցված։ Եվ առհասարակ հաստատորեն կարելի էր ասել, թե ամբողջ արական տարրը, ի հակադրություն տիկինների, տրամադրված էր մեղադրյալի դեմ։ Երևում էին խստահայաց, խոժոռ դեմքեր, նույնիսկ ուզգակի քինախնդիր դեմքեր, և այդ բոլորը մեծ թիվ էին կազմում։ Ճիշտ էր և այն, որ Միտյան, մեր քաղաքում ապրած ժամանակ, կարողացել էր արդեն անձնապես վիրավորանք

հասցնել նրանցից շատերին։ Իհարկե, այցելուներից ոմանք գրեթե զվարթ էին նույնիսկ և շատ անտարբեր էին բուն իսկ Միտյայի ճակատագրի նկատմամբ, բայց և նրանց էլ այնուամենայնիվ հետաքրքրում էր դատաքննության ենթակա գործը։ Բոլորին էլ մտահոգում էր գործի ելքը, և տղամարդկանց մեծ մասը ուղղակի ցանկանում էր, որ հանցագործը պատժվի, բացի թերևս իրավաբաններից, որոնց համար թանկ էր ոչ թե գործի բարոյական կողմը, այլ լոկ, այսպես ասած, իրավաբանական հանգամանքը՝ ժամանակակից տեսանկյունով։

Բոլորին հուզել էր նշանավոր դատապաշտպան Ֆետյուկովիչի ժամանումը։ Նրա տաղանդը հայտնի էր ամենուրեք և արդեն առաջին անգամը չէր, որ նա երևում էր գավառական վայրում՝ քրեական մեծադղորդ գործեր պաշտպանելու համար։ Եվ նրա պաշտպանությունից հետո այդպիսի գործերը միշտ էլ նշանավոր էին դառնում ամբողջ Ռուսաստանում և երկար ժամանակ հիշվում էին։ Մի քանի անեկդոտ էր շրջում նաև մեր դատախազի, ինչպես և դատարանի նախագահի մասին։ Պատմում էին, որ մեր դատախազը դողում էր Ֆետյուկովիչի հետ հանդիպելուց, և որ նրանք հին թշնամիներ էին՝ դեռ Պետերբուրգից, դեռ իրենց գործունեության սկզբից. ասում էին, թե մեր պատվախնդիր Իպոլիտ Կիրիլովիչը, որ դեռ պետերբուրգյան օրերից էլ մշտապես իրեն վիրավորված էր համարում, որովհետև պատշաճ կերպով չէր գնահատվել նրա տաղանդը, հիմա նորից ոգի էր առել Կարամազովների գործով և նույնիսկ երազում էր այս առթիվ վերականգնել իր գործունեության խամրած աստղերեզը, բայց միայն Ֆետյուկովիչն էր վախեցնում նրան։ Սակայն այդ խոսակցությունները, թե նա դողում է Ֆետյուկովիչի առաջ, այնքան էլ ճիշտ չէին։ Մեր դատախազը այն մարդկանցից չէր, որոնք վհատվում են վտանգի առջև, այլ ընդհակառակը, մեկն էր այն մարդկանցից, որոնց ինքնասիրությունը աճում ու թափ է առնում հենց այն չափով, որքանով մեծանում է վտանգը։ Իսկ առհասարակ պետք է նկատել, որ մեր դատախազը շափազանց տաքարյուն էր և հիվանդագին կերպով զգայունակ։ Երբեմն մի դատական գործի մեջ իր ամբողջ հոգին էր դնում և այնպես էր վարում, որ կարծես դրա լուծումից էր կախված ամբողջ իր ճակատագիրը և ամբողջ իր ունեցած-չունեցածը։ Իրավաբանական աշխարհում մի քիչ ծիծաղում էին դրա վրա, որովհետև մեր դատախազը հենց իր այդ հատկությամբ էր որոշ

ճանաչում ձեռք բերել, եթե ոչ ամենուրեք, համենայն դեպս շատ ավելի, քան կարելի էր ենթադրել, նկատի առնելով իր համեստ պաշտոնը մեր դատարանում։ Հատկապես ծիծաղի առարկա էր իր կրքոտ հակումը հոգեբանության նկատմամբ։ Ըստ իս, բոլորն էլ սխալվում էին. մեր դատախազը, ինձ թվում է, ավելի լուրջ մարդ էր, լուրջ բնավորությամբ, քան կարծում էին շատերը։ Բայց դե այդ հիվանդկախ մարդը այնպես էլ չէր կարողացել ըստ պատշաճի հաստատել իրեն իր գործունեության առաջին իսկ քայլերից, հետո էլ արդեն ամբողջ կյանքի ընթացքում։

Գալով մեր դատարանի նախագահին, կարելի է ասել միայն, որ նա զարգացած, բարեսեր մարդ էր, գործնականորեն գիտեր իր գործը և ամենաժամանակակից գաղափարների տեր էր։ Բավական ինքնասեր էր նա, բայց շատ էլ չէր մտահոգվում իր համար դիրք ստեղծելու մասին։ Նրա կյանքի գլխավոր նպատակն էր պառաջադեմ մարդ լինելը։ Ըստ որում կապեր ու հարաբերություն ուներ։ Կարամազովների գործին, ինչպես պարզվեց հետո, բավական սրտանց էր նայում, բայց միայն ընդհանուր առումով։ Նրան հետաքրքրում էր բուն իսկ երևույթը, դրա տեղը ընդհանուր դասակարգման մեջ, դրա գնահատումը որպես մեր սոցիալական հիմունքների արգասիք, որպես ռուսական տարերքի բնորոշում և այլն։ Իսկ գործի անձնական կողմին, դրա ողբերգական բնույթին, ինչպես նաև մասնակից դարձած անձնավորություններին, սկսած մեղադրյալից, նա բավական անտարբեր ու վերացական մոտեցում էր ցույց տալիս, բայց գուցե այդպես էլ պետք է լիներ։

Դատավորների գալուց դեռ շատ առաջ դահլիճն արդեն լեփ-լեցուն էր։ Մեր դատարանի դահլիճը լավագույնն է քաղաքում՝ ընդարձակ, բարձր, լավ հնչականությամբ։ Դատավորները նստում էին բարձր պատվանդանի վրա, որի աջ կողմը մի սեղան ու երկու շարք բազկաթոռ էին պատրաստել երդվյալ ատենակալների համար։ Ձախ կողմը մեղադրյալի և նրա դատապաշտպանի տեղն էր։ Դահլիճի մեջտեղը, պատվանդանի մոտ, մի սեղան կար, որի վրա դրված էին «իրեղեն ապացույցները»,— Ֆյոդոր Պավլովիչի մետաքսե սպիտակ, արյունոտ տնազգեստը. պղնձե այն ճակատագրական սանդիկոթը, որի միջոցով կատարվել էր ենթադրյալ սպանությունը. Միտյայի վերնաշապիկը՝ արյունոտ թևքով. նրա սերթուկը, որի ետևի մասում, այնտեղ, ուր գրպանն էր, արյան բծեր կային, որովհետև այն օրը Միտ-

յան իր ամբողջովին արյունաթաթախ թաշկինակը խոթել էր այդ գրպանը. նույն այդ թաշկինակը նաև, որ կոշտացել էր արյունից և արդեն բոլորովին գեղնել. ատրճանակը, որ Միքայան անձնասպան լինելու համար լցրել էր Պերխոտինի տանը, և որ Տիխոն Բորիսովիչը աննկատելիորեն վերցրել էր Մոկրոեում. մակագրված ծրարը, որի մեջ երեք հազար ռուբլի էր դրված եղել Գրուշենկայի համար, ինչպես նաև այն վարդագույն, բարակ ժապավենը, որով կապված էր եղել այդ ծրարը. և բազմաթիվ այլ իրեր, որ չեմ էլ հիշում։ Մի քիչ ավելի հեռու, դահլիճի խորքից, սկսում էին հասարակությանը հատկացված տեղերը, սակայն դեռ ճաղաշարքի առջև մի քանի բազկաթոռ էր դրված այն վկաների համար, որոնք իրենց վկայությունը տալուց հետո պետք է մնային դահլիճում։

Ժամը տասին եկավ դատական կազմը, որ բաղկացած էր նախագահից, մի այլ անդամից և պատվավոր հաշտարար դատավորից։ Պարզ է, անմիջապես երևաց նաև դատախազը։ Նախագահը թիկնեղ, ամրակազմ, կարճահասակ մարդ էր, մոտ հիսուն տարեկան, թթախտից տառապողի գունատ դեմքով. մի քիչ սպիտակած ու կարճ կտրած մուգ մազեր ուներ և չեմ հիշում ո՞ր շքանշանի կարմիր ժապավենն էր կրում։ Իսկ դատախազը մի տեսակ շատ գունատ թվաց ինձ, և ոչ միայն ինձ, այլև բոլորին. համարյա թե կանաչ էր դարձել դեմքը, կարծես հանկարծ նիհարել էր գուցե մի գիշերվա մեջ, չգիտես ինչու, որովհետև դեռ երեք օր առաջ տեսել էի նրան իր սովորական կերպարանքով։ Նախագահն սկսեց նիստը՝ նախ և առաջ հարց տալով դատական կատարածուին, թե ներկայացե՞լ են բոլոր երդվյալ ատենակալները...

Բայց տեսնում եմ, որ այլևս չեմ կարող այսպես շարունակել, թեկուզ նույնիսկ այն պատճառով, որ շատ բան խուսափել է իմ ականջից, ուրիշ բաներ իմ ուշադրությունից են վրիպել, որոշ բաներ էլ մոռացել եմ, բայց մանավանդ այն պատճառով, որ, ինչպես ասացի արդեն, բոլոր ասվածներն ու կատարվածները հիշատակելու համար ոչ ժամանակը կհերիքի, ոչ էլ տեղը՝ բառացի իմաստով։ Գիտեմ միայն, որ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմը, այսինքն դատապաշտպանն ու դատախազը, երդվյալ ատենակալների մեծ մասին չբացարկեցին։ Իսկ տասներկու ատենակալների կազմը հիշում եմ. չորս պաշտոնյա, երկու վաճառական և վեց հոգի էլ գյուղացիներից և մեր քաղաքի արհեստավորների դասից։ Մեր քաղաքի բարձր հասարակության մեջ, հիշում եմ, գեռ դատից էլ շատ առաջ, որոշ զարմանքով հարց էին տալիս, հատկապես տիկինները. «Մի՞թե այսպիսի նուրբ, բարդ ու հոգեբանական գործի բախտորոշ լուծումը պիտի կախում ունենա ինչ-որ պաշտոնյաներից ու վերջապես գյուղացիներից, և ի՞նչ կարող է հասկանալ այս գործից մի որևէ պաշտոնյայի մեկը, մանավանդ գյուղացին»։ Իրոք, ատենակալների կազմի մեջ բոլոր չորս պաշտոնյաները մաքր, ցածրաստիճան, ալեհեր մարդիկ էին (միայն մեկն էր մի փոքր ավելի երիտասարդ), մեր հասարակության մեջ քիչ էին հայտնի, խղճուկ մի ոռճիկով քարշ էին տվել իրենց կյանքը, և ըստ երևույթին ամեն մեկը մի ծեր ու աննկարագրելի կին ուներ, նաև մի կույտ երեխա, որոնք գուցե նույնիսկ ոտաբոբիկ էին. այդ մարդիկ իրենց ազատ ժամանակը շատ-շատ թղթախաղով էին անցկացնում մի որևէ տեղ և անշուշտ ոչ մի գիրք չէին կարդացել իրենց կյանքում։ Իսկ երկու վաճառականները թեև ծանրաբարո տեսք ունեին, բայց մի տեսակ տարօրինակորեն լուռ էին ու անդրդվելի. մեկը եվրոպական ձևով էր հագնված ու երեսն ածիլում էր. մյուսը մի փոքրիկ, սպիտակած մորուք ուներ և ինչ-որ մեգալ էր կրում վզին՝ կարմիր ժապավենով։ Քաղքենի արհեստավորների ու գյուղացիների մասին խոսելու կարիք էլ չկա։ Մեր սկոտոպրիգոնևսկցի քաղքենիները համարյա նույն գյուղացիներն են, նույնիսկ հող են մշակում։ Նրանցից երկուսը նույնպես եվրոպական ձևով էին հագնվել և գուցե դրա համար էլ ավելի կեղտոտ ու խղճուկ էին երևում, քան մյուս չորսը։ Այնպես որ իսկապես մարդ կարող էր մտածել, ինչպես օրինակ ես մտածեցի անմիջապես, երբ նայեցի նրանց. «Այսպիսի մարդիկ ի՞նչ կարող են հասկանալ այսպիսի գործից»։ Բայց այնուհանդերձ նրանց դեմքերը մի տեսակ տարօրինակորեն ազդու և համարյա սպառնագին տպավորություն էին գործում. խիստ ու խոժոռ էին դրանք։

Վերջապես նախագահը հայտարարեց, որ սկսվում է պաշտոնաթող տիտղոսակիր խորհրդական Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի սպանության վերաբերյալ գործի ունկնդրությունը. լրիվ չեմ հիշում, թե ինչպես արտահայտվեց նա այդ ժամանակ։ Դատական կատարածուին հրամայվեց, որ ներս բերի մեղադրյալին, և ահա երևաց Միքայան։ Դահլիճում կատարյալ լռություն տիրեց, կարելի էր ճանճի տզզոցը լսել։ Չգիտեմ, թե ուրիշներն ինչպես

ընկալեցին, բայց ինձ վրա Միտյայի տեսքը ամենատհաճ տպավորությունը գործեց։ Մանավանդ այն, որ նա սոսկալի պճնամոլի պես ներկայացավ, նոփ-նոր սերթուկով։ Հետո իմացա, որ նա այդ օրվա համար հատկապես պատվիրել էր սերթուկը Մոսկվայի իր դերձակին, որի մոտ մնացել էին իր չափերը։ Սև լայքե նոփ-նոր ձեռնոց էր հագել և պճնագեղ վերնաշապիկ։ Ներս մտավ իր լայն, կանգունաչափ քայլերով, անշարժ հայացքով նայելով ուղղակի իր դիմացը, և նստեց իր տեղը՝ կատարելապես անվեհեր արտահայտությամբ։ Հենց անմիջապես, իսկույնևեթ երևաց նրա դատապաշտպանը՝ նշանավոր Ֆետյուկովիչը, և մի տեսակ զսպված վժվժյուն անցավ դահլիճով։ Երկարահասակ, չոր-չոր մարդ էր նա, երկար ու բարակ ոտքերով, չափազանց երկար, գունատ ու բարակ մատներով, ածիլված դեմքով, համեստ սանրված, բավական կարճ մազերով և բարակ շրթունքներով, որոնք մերթ ընդ մերթ ծռվում էին՝ չգիտես հեգնելո՞ւ, թե ժպտալու համար։ Մոտ քառասուն տարեկան էր երևում։ Դեմքը կարող էր նույնիսկ հաճելի թվալ, եթե չլիներ աչքերի կառուցվածքը, ինքնին փոքր էին դրանք ու անարտահայտիչ, տակայն բացառիկ կերպով մոտ էին իրար, և միայն երկարավուն, բարակ քթի բարալիկ ոսկորն էր բաժանում մեկը մյուսից։ Մի խոսքով, այդ դեմքը խիստ թռչնային մի բան ուներ իր մեջ, և դա ուղղակի աչքի էր զարնում։ Նա ֆրակ էր հագել ու սպիտակ փողկապով էր։

Հիշում եմ նախագահի առաջին հարցերը Միտյային՝ անունը, կոչումը և այլն։ Միտյան կտրուկ պատասխանեց, բայց մի տեսակ անսպասելիորեն բարձր ձայնով, այնպես որ նախագահը հանկարծ ետ շարժեց գլուխը և համարյա զարմանքով նայեց նրան։ Հետո հայտարարվեց ցուցակն այն անձերի, որոնք կանչվել էին մասնակցելու դատաքննության, այսինքն վկաներն ու փորձագետները։ Երկար ցուցակ էր։ Վկաներից չորսը չէին ներկայացել. մեկը Միուսովն էր, որ ներկայիս գտնվում էր Փարիզում, բայց իր ցուցմունքը տվել էր նախնական քննության ժամանակ. տիկին Խոխլակովան ու կալվածատեր Մաքսիմովը բացակայում էին հիվանդության պատճառով, և Սմերդյակովը՝ անակնկալ մահվան պատճառով, ըստ որում հավաստագիր էր ներկայացվել ոստիկանության կողմից։ Սմերդյակովի մահվան լուրը սաստիկ խլրտում ու փսփսուք առաջացրեց դահլիճում։ Հասարակության մեջ շատերը, իհարկե, դեռևս ոչինչ չգիտեին

այդ անակնկալ անձնասպանության մասին։ Բայց հատկապես շշմեցուցիչ տպավորություն գործեց Միտյայի անակնկալ պոռթկումը. հենց որ հայտարարվեց Սմերդյակովի մահվան լուրը, հանկարծ նա իր տեղից բացականչեց ամբողջ դահլիճով մեկ.

— Շուն էր, շա՛ն պես էլ մեռավ։

Հիշում եմ, ինչպես դատապաշտպանը նեռվեց նրա մոտ և ինչպես նախագահը դարձավ նրան, սպառնալով խիստ միջոցներ ձեռք առնել, եթե մի անգամ էլ կրկնվի այդպիսի արտառոց վարմունքը։ Միտյան, գլուխը կտրուկ-կտրուկ շարժելով, բայց կարծես բոլորովին առանց զղջալու, ցածր ձայնով պատասխանեց դատապաշտպանին, մի քանի անգամ կրկնելով.

— Չեմ անի, չեմ անի։ Բերնիցս թռավ։ Էլ չե՛մ անի։

Եվ, իհարկե, այդ կարճառոտ դրվագը նրա համար նպաստավոր կարծիք չստեղծեց ատենակալների ու հասարակության մեջ։ Նկարագիրը երևան էր գալիս ու ցույց տալիս իրեն։ Այդ տպավորության տակ էլ դատարանի քարտուղարը կարդաց ամբաստանագիրը։

Ամբաստանագիրը բավական կարճ էր, բայց հանգամանալից։ Շարադրված էին ամենագլխավոր պատճառները, թե ինչու այսինչը կալանքի է ենթարկված, ինչու պետք է դատի տալ նրան և այլն։ Բայց այնուամենայնիվ դա ուժեղ տպավորություն գործեց ինձ վրա։ Քարտուղարը կարդաց հնչեղ ձայնով, հստակ ու պարզորոշ։ Ամբողջ այդ ողբերգությունը կարծես նորից պարզվեց բոլորի առաջ՝ ցայտուն, համահավաք գծերով, ճակատագրական, անողոք մի լույսի տակ։ Հիշում եմ, թե ինչպես ընթերցումից հետո նախագահը խիստ հարցրեց Միտյային՝ բարձր ու ազդեցիկ ձայնով.

— Մեղադրյա՛լ, դուք մեղավոր ճանաչո՞ւմ եք ձեզ։

Միտյան հանկարծ վեր կացավ տեղից։

— Ես ինձ մեղավոր եմ ճանաչում հարբեցողության ու անառակության մեջ,— բացականչեց նա, դարձյալ մի տեսակ անսպասելի, գրեթե մոլեգին ձայնով,— ծուլության ու շվայտության մեջ։ Ուզում էի ընդմիշտ ազնիվ մարդ դառնալ հենց այն վայրկյանին, երբ ճակատագիրը տապալեց ինձ։ Բայց ծերունու մահվան, իմ թշնամու և հոր մահվան մեջ՝ մեղավոր չե՛մ։ Նրան կողոպտելու մեջ՝ ո՛չ, ո՛չ, մեղավոր չեմ, և չեմ էլ կարող մեղավոր լինել։ Դմիտրի Կարամազովը սրիկա է, բայց ո՛չ գող։

Այդպես դուշելուց հետո նա նստեց իր տեղը, հայտնապես դողալով ոտից գլուխ։ Նախագահը նորից դիմեց նրան մի կարճ, բայց ազդու հորդորով, թե պետք է պատասխանել միայն հարցերին, և ոչ թե գործի հետ առնչություն չունեցող ու մոլեգին բացականչություններ արձակել։ Ապա հրամայեց սկսել դատաքննությունը։ Բոլոր վկաներին ներս բերեցին երդում ընդունելու։ Նրանց բոլորին էլ միանգամից տեսա այդ պահին։ Մեղադրյալի եղբայրներին, այնուամենայնիվ, թույլատրեցին առանց երդում ընդունելու տալ իրենց վկայությունը։ Քահանայի և նախագահի հորդորանքներից հետո, վկաներին տարան ու զատ-զատ նստեցրին, հնարավորին չափ իրարից հեռու։ Ապա սկսեցին մեկ առ մեկ կանչել նրանց։

II

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԿԱՆԵՐ

Չգիտեմ, նախագահն առանձին խմբերի բաժանե՞լ էր արդյոք դատախազության կողմից և պաշտպանության կողմից ներկայացված վկաներին, և չգիտեմ, թե հատկապես ի՞նչ կարգով էր ենթադրվում կանչել նրանց։ Երևի այդ ամբողջը նախատեսվել էր։ Գիտեմ միայն, որ առաջին հերթին կանչեցին դատախազության վկաներին։ Կրկնում եմ, ես մտադիր չեմ բոլոր հարցաքննությունները նկարագրել քայլ առ քայլ։ Մանավանդ որ իմ նկարագրելը մասամբ ավելորդ կլիներ, որովհետև երբ անցան դատավեճին՝ բոլոր տրված ու լսված վկայությունների ամբողջ ընթացքն ու իմաստը ի մի բերվեց դատախազի և դատապաշտպանի ճառերում, վառ ու բնորոշ լույսի տակ, իսկ ես այդ երկու նշանավոր ճառերի գոնե առանձին մասերը լրիվ գրի եմ առել ու կներկայացնեմ ընթերցողին, երբ դրա ժամանակը հասնի. կնկարագրեմ նաև դատավարության մի արտակարգ ու բոլորովին անսպասելի դրվագը, որ հանկարծ տեղի ունեցավ դեռ դատավեճից առաջ և անտարակուսելիորեն ազդեց դատի ահավոր ու ճակատագրական վախճանի վրա։ Նշեմ միայն, որ դատավարության հենց առաջին իսկ բոպեներից ակնհայտորեն երևան եկավ այս «գործի» մի յուրահատուկ կողմը, որ բոլորը նկատեցին, այսինքն մեղադրանքի արտասովոր ուժը՝ համեմատած այն միջոցների հետ, որ ուներ պաշտպանությունը իր տրամադրության տակ։ Բոլորն այդ քանը հասկացան հենց առաջին վայրյանից, երբ դատարանի այդ ահավոր դահլիճում փաստերն սկսեցին համախմբվել ու կենտրոնանալ մի կետի վրա և աստիճանաբար ի հայտ եկան ամբողջ այդ զարհուրանքն ու այդ արյունը։ Հենց առաջին իսկ քայլերից գուցե հասկանալի դարձավ բոլորին, որ սա բնավ էլ վիճելի գործ չէ այլևս, որ էլ ոչ մի տարակույս չկա արդեն, որ ըստ էության դատավեճի կարիք էլ չկա, որ դատավեճը պարզապես ձևի համար է լինելու, և որ մեղավո՛ր է հանցագործը, ակնհայտորեն մեղավոր է, վերջնականորեն մեղավոր։ Կարծում եմ նույնիսկ, որ տիկիններն էլ, բոլորն առանց բացառության, թեև այնպիսի՞ անհամբերությամբ ցանկանում էին հմայիչ դատապարտյալի արդարացումը, բայց միաժամանակ կատարելապես համոզված էին, որ նա մեղավոր է։ Ավելին, ինձ թվում է, որ նրանք պիտի վշտանային նույնիսկ, եթե լիովին չհաստատվեր նրա հանցապարտությունը, որովհետև այդ դեպքում գործի վախճանը այնքան տպավորիչ չէր լինի, երբ արդարացնեին ոճրագործին։ Տարօրինակ բան, բոլոր տիկինները համարյա մինչև վերջին բոպեն հաստատ համոզված էին, որ կարդարացնեն նրան. «Մեղավոր է, բայց կարդարացնեն մարդասիրությունից դրդված, այն նոր գաղափարներից, նոր զգացումներից, որ սկսել են տիրել հիմա», և այլն, և այլն։ Հենց դրա համար էլ տիկիններն այդպիսի անհամբերությամբ վազելհավաքվել էին այստեղ։ Իսկ տղամարդկանց էլ ամենից ավելի հետաքրքրում էր դատախազի և հռչակավոր Ֆետյուկովիչի պայքարը։ Բոլորը զարմանում էին և հարց տալիս իրենց մտքում, թե նույնիսկ Ֆետյուկովիչի նման տաղանդը ի՞նչ կարող է գլուխ բերել այսպիսի անհուսալի գործից, այսպիսի կոտրած տաշտակից։ Եվ դրա համար էլ քայլ առ քայլ հետևում էին նրա քաջագործություններին, լարված ուշադրությամբ։

Բայց Ֆետյուկովիչը մինչև վերջ, մինչև իր ճառը, հանելուկ մնաց բոլորի համար։ Փորձառու մարդիկ նախազգում էին, որ նա մի որոշ սիստեմով է գործում, նրա մտքում արդեն կազմվել է մի բան, և նա որոշ նպատակ ունի իր առաջ. բայց ի՞նչ նպատակ էր դա՝ համարյա թե անկարելի եղավ գուշակել։ Սակայն աչքի էին զարնում նրա վստահությունն ու անձնապաստան վարվելակերպը։ Բացի այդ, բոլորն էլ անմիջապես հաճույքով նկատեցին, որ նա, այդքան կարճ ժամանակ գտնվելով մեր քաղաքում, գուցե ընդամենը մի երեք օրվա

մեջ, կարողացել էր զարմանալիորեն ծանոթանալ գործին և «ուսումնասիրել էր ամենայն նրբությամբ»։ Հետագայում, օրինակ, հրճվանքով էին պատմում, թե ինչպես նա կարողացավ դատախազության բոլոր վկաներին «անհարմար վիճակի մեջ գցել» և ըստ հնարավորին շփոթեցնել նրանց, մանավանդ արատավորել նրանց բարոյական վարկը, ուրեմն և, բնականաբար, արժեքազրկել նրանց տված վկայությունը։ Բայց ենթադրում էին, որ նա այդ բանը անում էր պարզապես խաղի համար, այսպես ասած՝ մի քիչ իրավագիտական փայլ տալու, որպեսզի ընդունված փաստաբանական հնարներից ոչ մեկը անտեսված չլինի. բոլորը համոզված էին, որ նա չէր կարող մի մեծ ու վերջնական օգուտ ձեռք բերել վկաների այդ «արատավորումով» և որ հավանաբար ինքը ամենից լավ է հասկանում դա, խորքում ունենալով իր մտադրությունը, առայժմ դեռ թաքցրած իր պաշտպանական զենքը, որ հանկարծ երևան է հանելու, երբ ժամանակը հասնի։ Բայց մինչ այդ, դիտակցելով իր ուժը, նա մի տեսակ խաղում էր այնուամենայնիվ, ուրախ-զվարթ, հրճվելով։ Այսպես օրինակ, երբ հարցաքննում էին Գրիգորի Վասիլևիչին՝ Ֆյոդոր Պավլովիչի նախկին սեներկապետին, որ ամենից ավելի ծանրակշիռ ցուցմունքն էր տվել «այգու վրա բացված դռան» մասին, դատապաշտպանն ուղղակի կպավ նրա օձիքից, երբ իր հերթին սկսեց հարցեր առաջարկել նրան։

Պետք է նշել, որ Գրիգորի Վասիլևիչը դահլիճում կանգնեց հանգիստ ու համարյա վեհաշուք երևույթով, մազաչափ անգամ չշփոթվելով ո՛չ դատարանի վեհությունից, ոչ էլ իրեն լսող հսկայական բազմության ներկայությունից։ Իր ցուցմունքները տալիս էր այնպիսի վստահությամբ, որ կարծես առանձին խոսում էր իր Մարֆա Իգնատևնայի հետ, միայն թե գուցե ավելի հարգալից։ Անկարելի էր նրան շփոթեցնել։ Սկզբում դատախազը երկար-բարակ հարցաքննեց նրան՝ կարամազովների ընտանեկան բոլոր մանրամասնությունների մասին։ Ընտանիքի պատկերը վառ գույներով երևան եկավ։ Կարելի էր աչքով ու ականջով համոզվել, որ վկան անկեղծ ու անկողմնակալ մարդ է։ Իր նախկին տիրոջ հիշատակի հանդեպ խորագույն հարգանք ունենալով հանդերձ, նա այնուամենայնիվ հայտարարեց, օրինակ, թե հանգուցյալը անարդար էր Միտյայի նկատմամբ և «այնպես չէր դաստիարա-

կում երեխաներին։ Եթե ես չլինեի, փոքր մանչուկին ոչիլները կուտեին,— ավելացրեց նա, Միտյայի մանկության տարիների մասին պատմելով։— Նմանապես, հոր համար անվայել բան էր, որ իր որդուն նեղացրեց նրա մայրական ժառանգության հարցում»։ Իսկ դատախազի այն հարցին, թե նա ի՞նչ հիմքեր ունի պնդելու, որ Ֆյոդոր Պավլովիչը դրամական հաշիվների մեջ նեղացրել է որդուն, Գրիգորի Վասիլևիչը, ի զարմանս բոլորի, ոչ մի հիմնական տվյալ չներկայացրեց բացարձակապես, բայց այնուամենայնիվ հաստատ մնաց իր ասածի վրա, թե որդու հետ կատարված հաշվարկը «սխալ» էր, և թե իսկապես «պետք էր մի քանի հազար էլ դեռ վճարել նրան»։ Ի դեպ նշեմ, որ այդ հարցը, թե ինչպե՞ս արդյոք Ֆյոդոր Պավլովիչը մի բան պակաս էր տվել Միտյային, դատախազը հետագայում էլ համառորեն դրեց բոլոր այն վկաների առաջ, որոնց կարելի էր հարցնել այդ բանը, չբացառելով ո՛չ Ալյոշային, ոչ Իվան Ֆյոդորովիչին, բայց ոչ մի վկայից էլ որևէ ճշգրիտ տեղեկություն չստացավ. բոլորը հաստատում էին փաստը, բայց ոչ ոք չէր կարողանում գոնե մի քիչ որոշակի ապացույց բերել։ Երբ Գրիգորին նկարագրեց ճաշից հետո պատահած տեսարանը, այսինքն այն, որ Դմիտրի Ֆյոդորովիչը ներս էր խուժել, ծեծել էր հորը և սպառնացել, որ կվերադառնա ու կսպանի նրան, մոայլ մի տպավորություն տարածվեց դահլիճում, մանավանդ որ ծերունի սպասավորը պատմում էր հանգիստ, առանց ավելորդ խոսքերի, յուրահատուկ լեզվով, և սակայն սոսկալի պերճախոս մի բան ստացվեց։ Ծերունին հիշեց նաև այդ նույն օրը իր կրած վիրավորանքը, երբ Միտյան հարվածել էր իր դեմքին ու գետին էր գլորել իրեն, բայց ավելացրեց, որ չի բարկանում դրա համար և վաղուց է ներել։ Հանգուցյալ Սմերդյակովի մասին խոսելով, Գրիգորին խաչակնքեց ու ասաց, որ ընդունակություն ունեցող տղա էր նա, բայց հիմար էր ու հիվանդությունից ընկճված, և մանավանդ անաստված մարդ էր, և որ անհավատությունը նրան սովորեցրել էին Ֆյոդոր Պավլովիչն ու նրա միջնակ որդին։ Բայց Սմերդյակովի ազնվությունը համարյա թե եռանդով հաստատեց և պատմեց, թե ինչպես Սմերդյակովը մի ժամանակ բակում գտել էր տիրոջ կորցրած փողը և չէր թաքցրել, այլ բերել էր տիրոջը և սա էլ նրան «մի ոսկի» էր նվիրել դրա համար և այնուհետև սկսել էր լիուլի վստահել նրան։ Իսկ գալով

դան հարցին, նա համառորեն պնդեց, թե բաց էր եղել դուռը այդու վրա։ Բայց այնքան շատ հարցեր տվեցին նրան, որ նա այդ բոլորը չեմ էլ կարող հիշել։

Վերջապես դատապաշտպանն սկսեց հարցեր տալ և առաջին հերթին ուզեց տեղեկանալ այն ծրարի մասին, որի մեջ «իբր թե» Ֆյոդոր Պավլովիչը երեք հազար ռուբլի էր պահել «մի որոշ անձնավորության» համար։ «Դուք անձամբ տեսե՞լ եք այդ ծրարը, դուք, որ այնքան երկար տարիներ եղել եք ձեր տիրոջ մերձավոր մարդը»։ Գրիգորին պատասխանեց, որ չի տեսել, և ոչ ոքից չի էլ լսել այդպիսի փողի մասին, «մինչև հենց այն ժամանակ, որ այ հիմա բոլորն էլ սկսեցին խոսել»։ Սրարի մասին այդ հարցը Ֆետյուկովիչն իր կողմից նույնպես առաջարկում էր բոլոր այն վկաներին, որոնց կարող էր հարցնել այդ բանը, նույն համառությամբ, որով դատախազը ժառանգության մասին իր հարցն էր տալիս, և Ֆետյուկովիչը նույնպես բոլորից էլ ստանում էր միայն մեկ պատասխան, թե ոչ ոք չի տեսել ծրարը, թեև շատ շատերը լսել են դրա մասին։ Այդ հարցում դատապաշտպանի համառությունը բոլորն էլ նկատեցին հենց սկզբից։

— Հիմա կարո՞ղ եմ ձեզ դիմել մի հարցով, եթե իհարկե թույլ կտաք,— հարցրեց հանկարծ Ֆետյուկովիչը, բոլորովին անապատելիորեն։— Ինչի՞ց էր բաղկացած այն բալասանը կամ այսպես ասած այն թրմօղին, որով դուք այդ երեկո, քնելուց առաջ, ինչպես հայտնի է նախնական քննությունից, լվել եք ձեր մեջքը, հուսալով, որ դա կբուժի ձեզ։

Գրիգորին բուռ հայացքով նայեց հարցաքննողին և, մի քիչ լռելուց հետո, մրթմրթաց.

— Ոգեստուկ կար մեջը։

— Միա՞յն եղեստուկ։ Ուրիշ բան չե՞ք հիշում։

— Ջրախոտ էլ կար։

— Եվ պղպե՞ղ էլ դուքն,— հետաքրքրվեց Ֆետյուկովիչը։

— Պղպեղ էլ կար։

— Եվ այլն։ Եվ այդ բոլորը օղու մեջ խառնվա՞ծ։

— Սպիրտի մեջ։

Մի թեթև խնդուք անցավ դահլիճով։

— Տեսնում եք, նույնիսկ սպիրտի մեջ։ Ձեր մեջքը լվալուց հետո, շշի մնացյալ պարունակությունը հաճեցիք խմել մի

որոշ բարեպաշտ աղաքիրոջ, որ միայն ձեր կողակցին է հայտնի, այնպես չէ՞։

— Խմեցի։

— Օրինակ, շա՞տ կլինեք ձեր խմածը։ Օրինակ, ինչքա՞ն։ Մի ըմպանա՞կ, երկո՞ւ։

— Մի բաժակ կլիներ։

— Նույնիսկ մի բաժա՞կ։ Գուցե և մեկուկե՞ս բաժակ։

Գրիգորին լռեց։ Նա կարծես մի բան հասկացավ։

— Մեկուկես բաժակ մաքուր սպի՞րտ՝ բնավ էլ վատ չէ, հա՞, ինչ եք կարծում։ Կարելի է և «արքայության դռները բացված» տեսնել, ոչ միայն այդի տանող դուռը, չէ՞։

Գրիգորին լուռ էր մնում։ Նորից մի խնդուք անցավ դահլիճով։ Նախագահը շարժվեց իր տեղում։

— Հաստատ գիտե՞ք արդյոք,— ավելի ու ավելի ամուր կպչում էր Ֆետյուկովիչը,— այն բոպեին, երբ դուռը բաց տեսաք, ննջո՞ւմ էիք, թե չէ։

— Ոտքի վրա կանգնել էի։

— Դա դեռ ապացույց չէ, որ չէիք ննջում (նորից ու նորից խնդուք դահլիճի մեջ)։ Կարո՞ղ էիք, օրինակ, այդ բոպեին պատասխանել, եթե մեկը ձեզ մի որևէ բան հարցներ, դե ասենք, օրինակ, թե ո՞ր տարեթիվն է հիմա։

— Այդ բանը չգիտեմ։

— Իսկ ո՞ր տարեթիվն է հիմա, Քրիստոսի ծնունդից հետո, մեր թվարկության ո՞ր տարեթիվը, չգիտե՞ք արդյոք։

Գրիգորին կանգնել էր շլմորած տեսքով, աչքերն ուղղակի իր տանջողին հառած։ Տարօրինակ թվաց այն, որ նա երևի խոսկապես չգիտեր՝ ո՞ր տարեթիվն է հիմա։

— Բայց գուցե գիտե՞ք, թե քանի մատ ունեք ձեր ձեռքի վրա։

— Ես ծառա մարդ եմ,— ասաց հանկարծ Գրիգորին բարձր ու հստակ ձայնով,— եթե մեծավորի սիրտն ուզում է ինձ վրա ծիծաղել, ես պետք է համբերող լինեմ։

Ֆետյուկովիչը կարծես մի քիչ կարկամեց, բայց նախագահն էլ միջամուխ եղավ ու հորդորական շեշտով հիշեցրեց դատապաշտպանին, որ պետք է ավելի պատշաճ հարցեր տալ։ Ֆետյուկովիչը լսեց, հետո արժանապատվությամբ գլուխ տվեց ու հայտարարեց, որ վերջացրել է իր հարցերը։ Իհարկե, թե՛ հասարակության, թե՛ ատենակալների կարծիքի մեջ կարող էր

արդեն տարակույսի մի փոքրիկ ցեց մտած լինել ծերունու վկայության նկատմամբ, մի մարդու, որ բուժման համար ընկել էր մի հատուկ վիճակի մեջ և հնարավորություն էր ունեցել «արքայության դռները տեսնելու», և որ, բացի այդ, նույնիսկ չգիտեր, թե Քրիստոսից հետո ո՞ր տարեթիվն է հիմա. այնպես որ դատապաշտպանն այնուամենայնիվ հասավ իր նպատակին։ Բայց Գրիգորիի հեռանալուց առաջ մի դրվագ ևս տեղի ունեցավ։ Նախագահը, դառնալով մեղադրյալին, հարցրեց, թե նա որևէ ասելիք ունի՞ այս տրված ցուցմունքների կապակցությամբ։

— Բացի դռան խնդրից, ամեն ինչ ճիշտ ասաց,— բարձր ձայնով գոռաց Միտյան։— Ինձ ոջիլներից է մաքրել՝ շնորհակալ եմ, իմ տված հարվածները ներել է՝ շնորհակալ եմ. ծերուկն իր ամբողջ կյանքում ազնիվ է եղել ու այնքա՞ն հավատարիմ հորս հանդեպ՝ յոթ հարյուր բուլդոգի չափ։

— Մեղադրյա՛լ, զգույշ եղեք ձեր արտահայտությունների մեջ,— խստորեն ասաց նախագահը։

— Ես բուլդոգ չեմ,— քրթմնջաց նաև Գրիգորին։

— Դե ուրեմն ե՛ս եմ բուլդոգը, ե՛ս,— գոռաց Միտյան։— Եթե վիրավորական է, ի՛նձ վրա եմ վերցնում, իսկ նրանից ներողություն եմ խնդրում. գազա՛ն էի և դաժան վարվեցի նրա հետ։ Եզոպոսի հետ էլ դաժան վարվեցի։

— Ի՞նչ Եզոպոս,— նորից խստորեն նայեց նախագահը։

— Դե Ֆիերոն, էլի... հայրս, Ֆյոդոր Պավլովիչը։

Նախագահը նորից ու նորից, ազդեցիկ ու արդեն խստագույն շեշտով հորդորեց Միտյային, որ նա ավելի զգույշ ընտրի իր արտահայտությունները։

— Ձեր դատավորների կարծիքի առաջ ինքներդ եք ձեզ վնասում դրանով։

Ճիշտ նույն ձևով, դատապաշտպանը շատ վարպետորեն իր գործը տեսավ նաև Ռակիտինի վկայաբերության ժամանակ։ Նշեմ, որ Ռակիտինը ամենակարևոր վկաներից մեկն էր և դատախազն անտարակուսելիորեն թանկ էր գնահատում նրան։ Պարզվեց, որ նա ամեն ինչ գիտեր, զարմանալիորեն շատ բան գիտեր, բոլորի մոտ եղել էր, ամեն ինչ տեսել էր, բոլորի հետ խոսել էր, ամենայն մանրամասնությամբ գիտեր Ֆյոդոր Պավլովիչի և բոլոր Կարամազովների կենսագրությունը։ Ճիշտ է, ծրարի մեջ դրված երեք հազար ռուբլու մասին նա էլ հենց Միտյայից էր լսել միայն։ Բայց նա մանրամասնորեն նկարագրեց

Միտյայի քաջագործությունները «Մայր քաղաք» գինետանը, հիշեց նրան վարկաբեկող բոլոր խոսքերն ու արարքները և պատմեց փոխկապիտան Սնեգիրյովի «ճիլոպի» պատմությունը։ Սակայն Ռակիտինն անգամ չկարողացավ որևէ բան ասել այն հատուկ կետի մասին, թե Ֆյոդոր Պավլովիչը ժառանգության հարցում Միտյային պարտք մնացե՞լ էր արդյոք. նա պարզապես արհամարհական ձևով ընդհանուր բաներ ասաց, այսինքն՝ «ո՞վ կարող էր գլուխ հանել, թե նրանցից ո՞ր մեկն է մեղավորը, ո՞վ ում պարտք է մնացել այդ խենթուխելառ կարամազովականության մեջ, ուր ոչ ոք չէր կարողանում հասկանալ՝ ի՞նչ է ինքը, ի՞նչ է ուզում»։ Այս ոճրագործության ամբողջ ողբերգությունը նա ներկայացրեց որպես արգասիք այն հնացած բարքերի, որոնք հատուկ են ճորտատիրական իրավունքին և անկարգության մեջ թաղված, համապատասխան հաստատությունների պակասից տառապող Ռուսաստանին։ Մի խոսքով, թույլ տվեցին, որ նա մի քիչ արտահայտվի։ Այս դատավարության առթիվ պարոն Ռակիտինը առաջին անգամ ցույց տվեց իր շնորհքը և նկատելի դարձավ. դատախազը գիտեր, որ վկան այս ոճրագործության մասին հոդված է պատրաստում ամսագրի համար, և հետո իր մեղադրական ճառում (ինչպես կտեսնենք հետո) մի քանի միտք մեջբերեց այդ հոդվածից, ուրեմն արդեն ծանոթ էր Ռակիտինի գործին։ Վկայի նկարագրած պատկերը մռայլ ու ճակատագրական էր և մեծապես ամրապնդեց «մեղադրող կողմի դիրքերը։ Իսկ առհասարակ Ռակիտինի ատենաբանությունը ունկնդիրներին գրավեց մտքի անկախությամբ և արտակարգորեն ազնիվ թռիչքով։ Նույնիսկ երկու-երեք անգամ ծափահարություն պայթեց անակնկալորեն, հենց այն պահին, երբ նա խոսում էր ճորտատիրական իրավունքի և անկարգությունից տառապող Ռուսաստանի մասին։ Բայց Ռակիտինը, այնուամենայնիվ երիտասարդ լինելով, մի փոքրիկ սայթաքում արեց, և դատապաշտպանն անմիջապես կարողացավ գերազանցորեն օգտվել դրանից։ Երբ պատասխանում էր Գրուշենկային վերաբերվող որոշ հարցերի, Ռակիտինը, տարվելով իր հաջողությամբ, որ ինքն էլ արդեն գիտակցում էր անշուշտ, ոգևորվելով ազնիվ զգացմունքների այն բարձունքից, ուր նա ճախրում էր, իրեն թույլ տվեց մի քիչ արհամարհական արտահայտվել Ագրաֆենա Ալեքսանդրովնայի մասին՝ որպես «վաճառական Սամսոնովի հոմանուշ»։ Հետո նա ամե՛ն ինչ պատրաստ էր տալու, որպեսզի ետ առնի

իր այդ առածը, որովհետև հենց այդ խոսքի վրա էլ Ֆեյլուկովիչը բռնեց Ջրան անմիջապես։ Եվ պատճառն ամբողջ այն էր, որ Թակիտինի մտքով անգամ չէր կարող անցնել, թե դատապաշտպանը կարող էր այդքան կարճ ժամանակում ծանոթանալ գործի այդպիսի նուրբ մանրամասնություններին։

— Թույլ տվեք իմանալ,— սկսեց դատապաշտպանը ամենասթրալիր ու նույնիսկ հարգալից ժպիտով, երբ հարցեր տալու հերթը հասավ իրեն,— դուք, անշուշտ, այն նույն պարոն Թակիտինն եք, չէ՞, որի «Վարք ի տեր Հանգուցյալ սրբահայր Զոսիմայի» կոչվող գրքույկը, թեմական առաջնորդարանի կողմից հրատարակված, խորունկ և կրոնաշունչ մտքերով լի, Սրբազան առաջնորդին ուղղված հոյակապ ու բարեպաշտ մի ձոնով, վերջերս առիթ ունեցա այնպիսի՞ հաճույքով կարդալու։

— Ես մամուլի համար չեմ գրել... հետս էր, որ հրատարակեցին,— մրթմրթաց Թակիտինը, հանկարծ չգիտես ինչու շվարելով ու գրեթե ամոթ զգալով։

— Օ՜, դա հիանալի է։ Ձեզ նման մի մտածող կարող է և նույնիսկ պարտավոր է շատ լայն հայացքով նայել ամեն մի հասարակական երևույթի։ Սրբազան առաջնորդի հովանավորությամբ, ձեր հույժ օգտակար գրքույկը տարածում գտավ և համապատասխան օգուտ բերեց... Բայց ես գլխավորապես ահա թե ինչ կցանկանայի իմանալ ձեզնից. դուք հենց քիչ առաջ հայտարարեցիք, թե շատ մերձավոր ծանոթն եք եղել օրիորդ Սվետլովայի։ (Nota bene. պարզվեց, որ Գրուշենկայի ազգանունը «Սվետլովա» է։ Առաջին անգամ այդ օրը միայն իմացա այդ բանը, դատավարության ընթացքում)։

— Ես չեմ կարող պատասխան տալ իմ բոլոր ծանոթությունների համար... Երիտասարդ մարդ եմ... և ո՞վ կարող է պատասխան տալ բոլոր նրանց համար, որոնց հետ հանդիպում է,— ուղղակի կրակ կորեց Թակիտինը։

— Հասկանո՞ւմ եմ, շատ լավ հասկանում,— բացականչեց Ֆեյլուկովիչը, կարծես ինքն էլ շփոթվելով ու կարծես փութալով ներողություն խնդրել անմիջապես։— Ինչպես ուրիշ որևէ մեկը, դուք էլ կարող էիք ձեր հերթին նախանձախնդիր լինել ծանոթանալու մի երիտասարդ ու գեղեցիկ կնոջ հետ, որ սիրահոժար ընդունում էր տեղվույա երիտասարդության ընտրանին, բայց... ես ուզում էի պարզապես մի բան իմանալ. մեզ հայտնի է, որ Սվետլովան երկու ամիս առաջ արտակարգ ցանկություն է ունեցել ծանոթանալու իրատեր Կարամազովի՝ Ալեքսեյ Ֆյոդորովիչի հետ, և որ նա ձեզ խոստացել է քսանհինգ ռուբլի տալ՝ միայն այն բանի համար, որ դուք Ալեքսեյ Ֆյոդորովիչին բերեք նրա մոտ, և հենց այն վանական դրեստով, որ նա կրում էր այն ժամանակ։ Իշխելս հայտնի է, դա տեղի է ունեցել հենց այն երեկո, երբ կատարվեց տույն դատական գործի հիմքը հանդիսացող ողբերգական աղետը։ Դուք Ալեքսեյ Կարամազովին բերեցիք օրիորդ Սվետլովայի մոտ և... ստացա՞ք Սվետլովայից այդ քսանհինգ ռուբլի պարգևը այն ժամանակ, ահա թե ինչ կցանկանայի լսել ձեզնից։

— Դա կատակ էր... Չեմ հասկանում, թե ինչո՞ւ կարող է ձեզ հետաքրքրել։ Վերջերի կատակի համար... և որպեսզի հետո նա տամ...

— Ուրեմն վերջերիք։ Բայց դե մինչև հիմա էլ հո չեք տվել, չէ՞... և կամ տվե՞լ եք։

— Դատարկ բան է...— քրթմնջաց Թակիտինը,— ես չեմ կարող այսպիսի հարցերի պատասխանել... Իհարկե կտամ։

Միլյատոնց նախագահը, բայց դատապաշտպանը հայտարարեց, որ այլևս հարցեր չունի պ. Թակիտինին։ Պ. Թակիտինը մի քիչ արատավորված իլով բեմից։ Ակնհայտորեն փչացավ այն գերազույն ազնվության տպավորությունը, որ մնացել էր նրա հետից, և Ֆեյլուկովիչը, աչքերով ուղեկցելով նրան, կարծես ցույց էր տալիս հասարակությանը և ասում. «Ահա՞ թե ինչպիսի մարդիկ են ձեր ազնվամիտ մեղադրողները։ Հիշում եմ, այդ դրվագն էլ առանց միջադեպի չանցավ. Միտյան, կատաղելով այն շեշտից, որով Թակիտինը արտահայտվում էր Գրուշենկայի մասին, հանկարծ իր տեղից գոռաց. «Բեռնա՞ռ։ Իսկ երբ նախագահը, Թակիտինի հարցաքննության վերջանալուց հետո դարձավ մեղադրյալին, թե արդյոք նա չի՞ ցանկանում որևէ բան ասել իր կողմից, Միտյան բարձր ձայնով գոռաց։

— Նա իմ ձերբակալվելո՞ւց հետո էլ պարտքով փող է պահել ինձնից։ Անպե՞տք բեռնարի մեկն է, կարիերիստ, և տատիս էլ չի հավատում, խարե՞լ է Սրբազան առաջնորդին։

Իհարկե, Միտյային նորից խելքի բերեցին իր մոլեգին արտահայտությունների համար, բայց պ. Թակիտինի մուխը մարել էր արդեն։ Փոխկապիտան Մեհդիրյովի վկայությունն էլ անհաջող անցավ, բայց թոլոթովին այլ պատճառով։ Նա ներկայացավ ոտից գլուխ պատատոմված, կեղտոտ հագուստով, կեղտոտ ֆո-

շիկներով, և չնայած բոլոր նախազգուշություններին և նախնական «փորձաքննության», հանկարծ պարզվեց, որ լրիվ հարբած է։ Երբ հարցրին այն վիրավորանքի մասին, որ Միտյան հասցրել էր նրան, հանկարծ մերժեց պատասխանել։

— Աստված նրա հետ, տիարք։ Իլյուշկան պատվիրեց, որ չասեմ։ Աստված ինձ կվարձատրի այնտեղ, տիարք։

— Ո՞վ է պատվիրել ձեզ, որ չասեք։ Ո՞ւմ մասին եք խոսում։

— Իլյուշկան, իմ որդյակը։ «Հայրի՛կ, հայրի՛կ, ինչպե՞ս նա քեզ ստորացրեց»։ Քարի մոտ ասաց։ Հիմա մեռնում է, տիարք...

Փոխկապիտանը հանկարծ սկսեց հեկեկալ և ուղղակի ընկավ նախագահի ոտքերը։ Շտապ դուրս տարան նրան, հասարակության ծիծաղի տակ։ Դատախազի պատրաստած տպավորությունը բոլորովին չիրականացավ։

Իսկ դատապաշտպանը շարունակում էր օգտվել բոլոր միջոցներից և ավելի ու ավելի զարմանք էր պատճառում իր այն հմտությամբ, որով ծանոթացել էր գործի ամենահետին մանրամասնություններին։ Այսպես, օրինակ, Տրիֆոն Բորիսովիչի վկայությունը շատ ուժեղ տպավորություն էր գործել և, անշուշտ, չափազանց աննպաստ էր Միտյայի համար։ Այսինքն նա գրեթե մատների վրա հաշվելով ցույց տվեց, որ Միտյան, երբ առաջին անգամ եկել էր Մոկրոե, աղեղից համարյա մի ամիս առաջ, երեք հազարից պակաս չէր կարող ծախսած լինել, «կամ էլ դրանից շատ քիչ պակաս։ Միայն էդ գնչուհիների համար ինչքա՞ն փող քամուն տվեց։ Իսկ մեր ոչնոտ գյուղացիներին ոչ թե «կես ռուբլիանոց էր գցում փողոցը», առնվազն քսանհինգ ռուբլիանոց թղթադրամներ էր նվեր անում, պակաս չէր տալիս։ Իսկ որքա՞ն էն օրը պարզապես գողացան նրանից։ Ախր գողացողը հո ստորագրություն չի տալիս, էլ ո՞նց բռնես գողին, երբ որ ի՞նքը զուր տեղը թափոտում էր փողը։ Ախր ավազակ է մեր ժողովուրդը, իրենց հոգու մասին չեն մտածում։ Իսկ աղջկերքի՞ն, մեր գյուղացի աղջկերքի՞ն ինչքան փող գնաց։ Ասեմ ձեզ, էն օրից հարստացան մերոնք, առաջ աղքատություն էր»։ Մի խոսքով, նա հիշեց ամեն մի ծախս և այդ բոլորը գումարեց կարծես համրիչի վրա։ Այսպիսով, անկարելի էր դառնում այն ենթադրությունը, թե միայն հազար հինգ հարյուր ռուբլի է ծախսվել, իսկ մնացածը պահվել է լաթե քսակի մեջ։ «Ի՞նքս եմ տեսել,

ինքս եմ նրա ձեռքում երեք հազար ռուբլին տեսել մի կոպեկի պես, իմ էս աչքերով եմ նայել, մենք հո հաշիվ ասած բանը գիտե՞նք, չէ՞»,— բացականչում էր Տրիֆոն Բորիսովիչը, ամեն ինչ անելով, որ գոհացնի «ջոջերին»։ Բայց երբ հարցեր տալու հերթը դատապաշտպանին հասավ, Ֆետյուկովիչը համարյա չփորձեց բացասել այդ վկայությունը, այլ հանկարծ սկսեց խոսել այն մասին, թե Մոկրոեում, այդ առաջին կերուխումի ժամանակ, ձերբակալությունից դեռ մի ամիս առաջ, կառապան Տիմոֆեյը և Ակիմ անունով մի ուրիշ գյուղացի հարյուր ռուբլի են գտել միջանցքում, գինով վիճակում Միտյայի գցած հարյուր ռուբլին, և այդ փողը Տրիֆոն Բորիսովիչին են հանձնել, իսկ նա մեկական ռուբլի է տվել նրանց դրա համար։ «Դե ուրեմն դուք այն ժամանակ վերադարձրի՞ք այդ հարյուր ռուբլին պարոն Կարամազովին, թե ոչ»։ Տրիֆոն Բորիսովիչը ամեն կերպ աշխատեց խուսք տալ, բայց գյուղացիների հարցաքննությունից հետո խոստովանեց, որ գտել էին այդ հարյուր ռուբլին, միայն թե ավելացրեց, որ հենց այն օրն էլ սրբությամբ վերադարձրել է Դմիտրի Ֆյոդորովիչին և հանձնել է «ամենայն ազնվությամբ, բայց դե նա էն ժամանակ լրիվ հարբած էր և հազիվ թե կարողանա հիշել»։ Բայց քանի որ նա, գյուղացի վկաների կանչվելուց առաջ, այնուամենայնիվ ժխտել էր այդ հարյուր ռուբլու հարցը, բնականաբար խիստ տարակուսանքի ենթարկվեց նաև նրա այն ցուցմունքը, թե գումարը վերադարձրել է գինով Միտյային։ Այսպիսով, դատախազության առաջադրած ամենավտանգավոր վկաներից մեկը դարձյալ կասկածի տակ ընկավ ու խիստ վարկաբեկված հեռացավ ատյանից։ Նույնը պատահեց նաև լեհերին։ Նրանք ներկայացան հպարտ ու անկախ երևույթով։ Բարձրագոչ հավաստեցին, որ նախ և առաջ երկուսն էլ «ծառայել են թագին», և որ «պան Միտյան» երեք հազար ռուբլի է առաջարկել իրենց պատիվը գնելու համար, և որ իրենք անձամբ մի մեծ գումար են տեսել նրա ձեռքում։ Պան Մուսյալովիչը սոսկալի շատ լեհերեն բառեր էր խառնում իր նախադասությունների մեջ, և տեսնելով, որ դա պարզապես ավելի մեծ կշիռ է տալիս իրեն նախագահի և դատախազի աչքում, ի վերջո բոլորովին ոգեպնդվեց և սկսեց արդեն լրիվ լեհերեն խոսել։ Բայց Ֆետյուկովիչը նրանց էլ գցեց իր ծուղակը. նորից կանչեցին Տրիֆոն Բորիսովիչին, և որքան էլ աշխատեց նա խուսք տալ, բայց այնուամենայնիվ ստիպված եղավ ընդունել, որ իր տված խաղաթղթերի

կապոցը պան Վրուբլյովսկին նենգափոխել էր իր սեփական խաղաթղթերով, և որ պան Մուսյալովիչը խաղի ժամանակ խարդախություն էր արել։ Կալգանովն էլ, իր հերթին վկայություն տալով, հաստատեց այդ բանը, և լեհերը մի քիչ խայտառակված հեռացան, նույնիսկ հասարակության ծիծաղի տակ։

Հետո ճիշտ նույն բախտին արժանացան համարյա բոլոր այն վկաները, որոնք ամենից ավելի վտանգավոր էին։ Ֆետյուկովիչը կարողացավ ամեն մեկին բարոյապես արատավորել ու թողնել հիմար դրության մեջ։ Դատի սիրահարներն ու իրավաբանները հիանում էին պարզապես, միայն թե տարակուսանքով մտածում էին դարձյալ՝ ի՞նչ մի մեծ ու վճռական նպատակի կարող է ծառայել այդ ամբողջը, որովհետև, կրկնում եմ, բոլորն էլ զգում էին մեղադրանքի անգիմադրելի ուժը, որ ավելի ու ավելի ողբերգականորեն աճում էր։ Բայց «մեծ կախարդի» ինքնավստահությունը տեսնելով, եզրակացնում էին, որ նա հանգիստ է, և սպասում էին. «այսպիսի մարդը» հո իզուր չէր եկել Պետերբուրգից, և այնպիսի մարդ էլ չէ, որ դատարկ ետ գնա։

III

ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻ ՖՈՒՏՑ ԿԱՌԻՆ

Բժշկական փորձաքննությունը ևս շատ չօգնեց մեղադրյալին։ Եվ Ֆետյուկովիչը ինքն էլ կարծես շատ հույս չէր դնում դրա վրա, և այդպես էլ պարզվեց հետագայում։ Հիմնականում կատերինա Իվանովնայի պնդումով էր միայն, որ կատարվեց այդ փորձաքննությունը. նա էր, որ նշանավոր բժշկին դիտմամբ կանչել էր Մոսկվայից։ Դատապաշտպանությունը դրանից ոչինչ չէր կարող կորցնել իհարկե, իսկ լավագույն դեպքում կարող էր մի որևէ բան շահել նույնիսկ։ Այնուամենայնիվ, դա մասամբ զավեշտի նման մի դրվագ եղավ՝ բժիշկների միջև որոշ տարաձայնության հետևանքով։ Որպես փորձագետ ներկայացան երեք հոգի՝ Մոսկվայից եկած նշանավոր բժիշկը, ապա մեր բժիշկ Հերցենշտուբեն և վերջապես երիտասարդ բժիշկ Վարվինսկին։ Վերջին երկուսը հանդես էին գալիս նաև որպես պարզ վկաներ՝ դատախազի կողմից հրավիրված։

Նախ դոկտոր Հերցենշտուբեն հարցաքննության կանչվեց իբրև փորձագետ։ Ցոթանասունամյա ծերունի էր նա, ալեհեր ու Ճաղատ, միջահասակ, ամրակազմ։ Մեր քաղաքում բոլորն էլ շատ էին գնահատում ու հարգում նրան։ Բարեխիղճ բժիշկ էր, սքանչելի ու բարեպաշտ մարդ, ինչ-որ հեղինակություն էր կամ «մոբուսի նշան»։ Հաստատ չգիտեմ։ Արդեն շատ վաղուց էր ապրում մեզ մոտ և արտակարգ արժանապատվությամբ էր պահում իրեն։ Բարի էր ու մարդասեր, աղքատ հիվանդներին ու գյուղացիներին ձրի էր բուժում, ինքն էր գնում նրանց հետևախոշերն ու խրճիթները և փող էր թողնում դեղի համար, բայց միաժամանակ չորս ոտ հանած էր։ Եթե մի որևէ գաղափար նստեր նրա մտքում, անկարելի էր տարհամոզել նրան։ Ի դեպ, արդեն համարյա բոլորին հայտնի էր, որ Մոսկվայից եկած նշանավոր բժիշկը, մի երկու-երեք օր գտնվելով մեր քաղաքում, դոկտոր Հերցենշտուբեի ընդունակությունների մասին մի քանի շափազանց վիրավորական ակնարկություններ էր արել։ Ենդիրն այն է, որ թեև մոսկվացի բժիշկն ամեն մի այցի համար առնվազն քսանհինգ ռուբլի էր վերցնում, բայց այնուամենայնիվ մեր քաղաքում ոմանք ուրախացան նրա դալու առթիվ, չնայած-ցին փողը և փութացին նրա խորհուրդներն առնել։ Բոլոր այդ հիվանդներին, իհարկե, դոկտոր Հերցենշտուբեն էր բուժում մինչ այդ, և ահա նշանավոր բժիշկը շափազանց խիստ քննադատել էր նրա բուժումը բոլոր դեպքերում։ Ի վերջո նույնիսկ, այցելելով հիվանդին, ուղղակի հարցնում էր. «Է՛հ, տեսնենք ո՞վ էր ձեզ մնտռում այստեղ, Հերցենշտուբե՞ն։ Հե-հե՛»։ Դոկտոր Հերցենշտուբեն, իհարկե, իմացել էր այդ բոլորը։

Եվ ահա երեք բժիշկները, մեկը մյուսի ետևից, ներկայացան հարցաքննության։ Դոկտոր Հերցենշտուբեն ուղղակի հայտարարեց, որ «մեղադրյալի մտային կարողությունների անհարմարությունը ինքնըստինքյան նկատելի է»։ Հետո, ներկայացնելով իր պատճառաբանությունները, որոնք զանց եմ առնում ասելու, ավելացրեց, որ այդ անհարմարությունը նկատելի է մեղադրյալի ոչ միայն նախկին բարմաթիվ արարքներից, այլև մանավանդ հիմա, այս րոպեին։ և երբ խնդրեցին բացատրել, թե ինչի՞ց է դա նկատելի հիմա, այս րոպեին, ծերունի բժիշկն իր ամբողջ պարզամիտ շիտակությամբ մատնացույց արեց այն, որ երբ մեղադրյալը դատարանի դահլիճն էր մտնում, «այս իրադրության համար ուներ անտարբեր ու տարօրինակ տեսք, ինչպես նման քայլում էր տուչ, աչքերն ուղղակի դիմացը հառած, մինչդեռ նրա համար ավելի բնական կլիներ նայել դեպի

ձախ, ուր հասարակության մեջ տիկնայք են նստած, որովհետև նա գեղեցիկ սեռի մեծ սիրահար է և պետք է շատ մտածեր այն մասին, թե ինչ կասեն հիմա տիկնայք իր վերաբերյալ»,— եզրակացրեց ծերուկը իր յուրօրինակ լեզվով։ Պետք է ավելացնել, որ նա շատ ու սիրով էր խոսում ռուսերեն, բայց նրա ամեն մի նախադասությունը մի տեսակ գերմաներենի պես էր ստացվում, թեև դա երբեք չէր խանգարում նրան, որովհետև ամբողջ կյանքում նա թուլություն էր ունեցել համարելու, որ ինքը օրինակելի ռուսերեն է խոսում, «նույնիսկ ավելի լավ, քան ռուսները»։ և նույնիսկ շատ էր սիրում ռուսական առածներ օգտագործել, ամեն անգամ էլ հավաստելով, որ ռուսական առածները ամենալավ և ամենից ավելի արտահայտիչ առածներն են աշխարհում։ Նշեմ նաև, որ խոսակցության մեջ, ցրվածությա՞ն պատճառով, թե ինչ, նա հաճախ մոռանում էր ամենահասարակ բառերը, որ շատ լավ գիտեր, բայց որոնք հանկարծ թռնում էին նրա գլխից։ Բայց նույն բանն էր պատահում, երբ նաև գերմաներեն էր խոսում, և այդ դեպքում միշտ էլ ձեռքը թափահարում էր դեմքի առաջ, կարծես ջանալով բռնել կորած բառը, և մինչև այդ բառը չգտներ, ոչ ոք չէր կարող ստիպել նրան, որ շարունակի իր սկըսած խոսքը։ Նրա այն դիտողությունը, թե մեղադրյալը ներս մտնելիս պետք է նայեր տիկիններին, աշխույժ մի շշուկ առաջացրեց հասարակության մեջ։ Քաղաքի բոլոր տիկինները շատ էին սիրում մեր ծերուկին, գիտեին նաև, որ նա, ամբողջ կյանքում ամուրի մնացած լինելով, բարեպաշտ ու անարատ մարդ, կանանց նայում էր որպես վսեմ ու իդեալական էակների։ Դրա համար էլ նրա անսպասելի դիտողությունը սոսկալի տարօրինակ թվաց բոլորին։

Մոսկվացի բժիշկը, իր հերթին հարցաքննության ենթարկվելով, կտրականապես ու համառորեն պնդեց, թե մեղադրյալի մտային վիճակը աննորմալ է համարում, «նույնիսկ վերին աստիճանի»։ Նա շատ ու հմտորեն խոսեց «աֆեկտի» և «մտամոլության» մասին և եզրակացրեց, որ ըստ բոլոր հավաքված տվյալների՝ մեղադրյալը ձերբակալությունից դեռ մի քանի օր առաջ արդեն գտնվում էր անտարակուսելիորեն հիվանդագին աֆեկտի մեջ, և եթե նա է գործել ոճիրը, ուրեմն թեպետ և գիտակցելով, բայց գրեթե ակամա է արել, բոլորովին անզոր լինելով պայքարելու այն բարոյական հիվանդագին մղման դեմ, որ տիրել է նրան։ Սակայն աֆեկտից բացի, բժիշկը ախտանշում

էր նաև մտամոլությունը, որն արդեն, ըստ նրա ասածի, հետագայում ուղիղ ճանապարհով պետք է տանի դեպի կատարյալ խելագարություն։ (NB։ Ես պատմում եմ իմ բառերով, իսկ բժիշկը շատ գիտական ու մասնահատուկ լեզվով բացատրեց)։ «Նրա բոլոր արարքները հակառակ են ողջամտության և տրամաբանության,— շարունակեց նա։— Էլ չեմ խոսում այն բանի մասին, որ չեմ տեսել, այսինքն բուն իսկ ոճրագործության ու ամբողջ այս ազետի մասին, բայց նույնիսկ երկու օր առաջ, ինձ հետ խոսելու ժամանակ, նա անբացատրելիորեն քարացած մի հայացք ուներ։ Անակնկալ մի ծիծաղ, երբ բոլորովին առիթ չկա ծիծաղելու։ Մշտական ու անհասկանալի ջղագրգռություն, տարօրինակ բառեր՝ «Բեռնար, էթիկա» և այլն, որոնք անտեղի են։ Բայց բժիշկն այդ մտամոլությունը հատկապես նկատում էր այն բանում, թե մեղադրյալը չի էլ կարողանում առանց արտակարգ ջղայնության խոսել երեք հազար ռուբլու մասին, համարելով, որ այդ հարցում խաբել են իրեն, այնինչ իր բոլոր մյուս անհաջողությունների ու կրած վիրավորանքների մասին բավական հանգիստ է խոսում ու հիշում։ Եվ վերջապես, ըստ տեղեկությունների, նա առաջ էլ, ամեն անգամ, երբ շոշափվում էր այդ երեք հազար ռուբլու հարցը, ճիշտ նույն ձևով ընկնում էր համարյա մոլեգնության մեջ, այնինչ վկայում են, որ նա անշահախնդիր մարդ է և փողի ձգտում չունի։ «Իսկ գալով իմ գիտական պաշտոնակցի այն կարծիքին,— հեգնականորեն ավելացրեց բժիշկը, վերջացնելով իր ճառը,— թե մեղադրյալը դահլիճ մտնելու ժամանակ պետք է տիկնանց նայեր, և ոչ թե ուղիղ իր դիմացը, միայն մի խոսք ասեմ. նման եզրակացությունը, բացի աշխույժ, թվոռուն մի բան լինելուց, նաև արմատապես սխալ է. որովհետև, թեպետ ես լրիվ համաձայն եմ, որ երբ մեղադրյալը դատարանի դահլիճ էր մտնում, մի դահլիճ, ուր վճռվում է իր բախտը, չպետք է այդպես անշարժ հայացքով նայեր իր դիմացը, և որ դա իսկապես կարող էր նրա աննորմալ հոգեվիճակի ախտանշան համարվել տվյալ րոպեին, բայց և միաժամանակ պնդում եմ, որ նա պետք է նայեր ոչ թե ձախ՝ տիկիններին, այլ ընդհակառակը, հենց աջ պետք է նայեր ու հայացքով փնտրեր իր դատապաշտպանին, որի օգնության վրա է իր ամբողջ հույսը, և որի պաշտպանությունից է հիմա կախված իր ամբողջ ճակատագիրը»։ Բժիշկը իր կարծիքը հայտնեց վճռականորեն ու պնդեց։

Բայց երկու գիտնական փորձագետների տարաձայնությունը

հատկապես զավեշտական երանգ ստացավ, երբ նրանցից հետո հարցաքննված բժիշկ Վարվինսկին իր անակնկալ եզրակացությունը հայտնեց։ Նրա կարծիքով, մեղադրյալը և՛ այդ պահին, և՛ առաջ էլ, կատարելապես բնականոն վիճակում էր գտնվում, ու թեև իսկապես ձերբակալությունից առաջ նա պետք է շղային ու շփոթված դրության մեջ լիներ, բայց դա կարող էր ծագել խիստ ակնհայտ բազմաթիվ պատճառներից՝ խանդից, ղայրույթից, անընդհատ հարբած վիճակից և այլն։ Սակայն այդ շղային դրությունը չէր կարող իր մեջ բովանդակել այն յուրահատուկ «աֆեկտը», որի մասին խոսվեց հիմա։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե մեղադրյալը դահլիճ մտնելու ժամանակ ձա՞խ պետք է նայեր, թե՞ աջ, ապա բժշկի «հմտեստ կարծիքով», մեղադրյալը հենց պետք է ուղղակի իր դիմացը նայեր դահլիճ մտնելու ժամանակ, ինչպես և նայեց իսկապես, որովհետև ուղիղ իր դիմացը նստում էին նախագահն ու դատարանի անդամները, որոնցից կախված է իր ամբողջ ճակատագիրը հիմա, «այնպես որ, հենց ուղղակի իր դիմացը նայելու փաստով էլ նա ապացուցեց իր մտքի կատարելապես բնականոն վիճակը ավելի բոպեին»,— մի քիչ կրկնոտ շեշտով ավարտեց երիտասարդ բժիշկն իր «հմտեստ» վկայությունը։

— Ապրե՞ս, բժիշկ,— գոռաց Միտյան իր տեղից,— հենց այդպե՞ս է։

Միտյային լռեցրին իհարկե, բայց երիտասարդ բժշկի կարծիքը վճռական ազդեցություն ունեցավ ինչպես դատավորների, այնպես էլ հասարակության վրա, որովհետև, ինչպես պարզվեց հետագայում, բոլորն էլ համաձայնվեցին նրա հետ։ Բայց դոկտոր Հերցենշտուբեն, արդեն որպես վկա հարցաքննվելով, հանկարծ բոլորովին անսպասելիորեն օգտակար եղավ Միտյային։ Որպես քաղաքի հին բնակիչ, որ վաղուց ծանոթ էր Կարամազովների ընտանիքին, նա «մեղադրող կողմի» համար շատ հետաքրքրական մի քանի վկայություններ տվեց և հանկարծ, կարծես մի բան մտաբերելով, ավելացրեց.

— Եվ սակայն, խնդրեմ երիտասարդը կարող էր անհամեմատ ավելի լավ ճակատագիր ձեռք բերել, որովհետև լավ ոիրտ ուներ թե՛ երեխա ժամանակ, թե՛ երեխայությունից հետո, որովհետև ես գիտեմ այդ բանը։ Բայց առաջին առածն ասում է. «Եթե մարդս մի խելք ունի, լավ բան է, իսկ եթե մի ուրիշ խելքի մարդ էլ հյուր գա, ավելի լավ կլինի, որովհետև այն ժամանակ երկու խելք կլինի միասին, և ոչ թե միայն մի խելք...»։

— Մի խելքը լավ է, երկուսն ավելի լավ,— անհամբեր հուշեց դատախազը, որ վաղուց գիտեր ծերուկի այդ սովորությունը՝ խոսել դանդաղ, ձգձգված, առանց մտահոգվելու, թե ինչ տպավորություն է գործում, և թե մարդկանց ստիպում է սպասել, այլև ընդհակառակը՝ շատ բարձր գնահատելով իր գերմանական ծանրաշարժ, անհամ և միշտ ուրախորեն ինքնագոհ սրամտությունը։ Իսկ ծերուկը սիրում էր սրամտել։

— Օ՜, այո-այո՜, ես էլ նույնն եմ ասում,— համառորեն կրկնեց նա,— մի հատ խելքը լավ է, իսկ երկու հատ խելքը շատ ավելի լավ է։ Բայց մի ուրիշ խելոք մարդ հյուր չեկավ նրան, իսկ նա իր խելքն էլ ուղարկեց... Ի՞նչ էին ասում, ո՞ւր ուղարկեց։ Մոռացա այդ բառը... Թե իր խելքը ուր ուղարկեց,— շարունակում էր նա, ձեռքը պտտեցնելով իր աչքերի առաջ,— ախ հա՜, spazieren։

—Ման գալո՞ւ։

— Դե այո՜, ման գալու, ես էլ նույնն եմ ասում։ Ահա ուրեմն նրա խելքը գնաց ման գալու և հասավ այնպես մի խորունկ տեղ, ուր կորցրեց իրեն։ Այնինչ, նա երախտագետ և զգայուն պատանի էր, օ՜, ես շատ լավ հիշում եմ նրան՝ ահա դեռ այսքան մի մանուկ, հոր տան ետևի քակում լքված, երբ գետնի վրա վազում էր առանց կոշիկների և փոքրիկ տաբատն էլ մի կոճակից կախված...

Գոբովալի և Հուզիչ մի շեշտ լսվեց հանկարծ պարկեշտ ծերուկի ձայնի մեջ։ Ֆեդյուկովիչն ուզգալի ցնցվեց, կարծես մի բան նախազգալով, և անմիջապես կպավ դրանից։

— Օ այո՜, ես ինքս տակավին երիտասարդ էի այն ժամանակ... ես... հա, այո, քառասունհինգ տարեկան էի այն ժամանակ, հենց նոր էի եկել այստեղ։ Եվ այն ժամանակ մեղքացա մանչուկին, և հարցրի ինքս ինձ՝ ինչո՞ւ չեմ կարող նրա համար գնել մի ֆունտ... գե, այո, մի ֆունտ ի՞նչ։ Մոռացա ինչպես են ասում... մի ֆունտ այն բանից, որ երեխաները շատ են սիրում... ի՞նչ են ասում դրան, է՞հ, ի՞նչ են ասում...— բժիշկը նորից թափահարեց իր ձեռքը,— ծառի վրա է աճում այդ բանը, հավաքում են և բոլորին նվիրում...

— Խնձո՞ր։

— Օ չէ-է-է՜։ Մի ֆունտ, ֆունտ։ Ինձորը մի տասնյակ է լինում, ոչ թե ֆունտ... չէ՜, շատ-շատ է լինում դա և փոքր-փոքր, դնում են բերանը և թրը՛խ...

— Կաղի՞ն։

— Դե այո՜, կաղին, ես էլ նույնն եմ ասում,— հաստատեց բժիշկը ամենայն հանգստությամբ, կարծես բոլորովին էլ չէր փնտրել այդ բառը։— Եվ ես մի ֆունտ կաղին բերեցի նրան, որովհետև ոչ ոք դեռ երբեք մի ֆունտ կաղին չէր բերել մանչուկին, և ես մատս բարձրացրի և ասացի նրան. «Մանչո՛ւկ, Gott der Vater[1]»։ Նա ծիծաղեց ու ասաց. «Gott der Vater»։— «Gott der Sohn»[2]։ Նա նորից ծիծաղեց ու թոթովեց. «Gott der Sohn»։— «Gott der heilige Geist»[3]։ Եվ նա նորից ծիծաղեց ու ասաց ինչքան որ կարող էր. «Gott der heilige Geist»։ Իսկ ես գնացի։ Երկու օր հետո անցնում էի, և նա ինքը գոռաց ինձ. «Քեռի՛, Gott der Vater, Gott der Sohn», և միայն մոռացավ Gott der heilige Geist, բայց ես հիշեցրի, և նորից շատ մեղքացա նրան։ Բայց տարան այստեղից, և ես այլևս չտեսա մանչուկին։ Եվ ահա անցավ քսաներեք տարի, մի առավոտ նստել եմ իմ աշխատասենյակում, արդեն սպիտակ գլխով, և հանկարծ ներս է մտնում մի ծաղկուն երիտասարդ, որին ոչ մի կերպ չեմ կարողանում ճանաչել, բայց նա մատը բարձրացրեց և ծիծաղելով ասաց. «Gott der Vater, Gott der Sohn, Gott der heilige Geist! Ես հենց նոր ժամանեցի այս քաղաքը և եկա շնորհակալություն հայտնելու ձեզ մի ֆունտ կաղինի համար, որովհետև ոչ ոք երբեք ինձ մի ֆունտ կաղին չի դնել, և միայն դուք մի ֆունտ կաղին դնեցիք ինձ»։ Եվ այն ժամանակ ես հիշեցի իմ երջանիկ երիտասարդությունը, հիշեցի խեղճ մանչուկին բակում, առանց կոշիկների, և սիրտս տակնուվրա եղավ, և ես ասացի. «Դու երախտագետ երիտասարդ ես, որովհետև ամբողջ կյանքիդ մեջ հիշել ես այն մի ֆունտ կաղինը, որ ես բերեցի քեզ քո մանկության օրերին»։ Եվ ես գրկեցի նրան ու օրհնեցի։ Եվ սկսեցի արտասվել։ Նա ծիծաղում էր, բայց և նա էլ արտասվում էր... որովհետև ռուս մարդը շատ հաճախ ծիծաղում է այնտեղ, ուր պետք է արտասվել։ Բայց և արտասվում էր նա, ես տեսա այդ բանը։ Իսկ հիմա, ավա՜ղ...

[1] Հայր աստված (գերմ.)։

[2] Հայր աստված։— Որդի աստված (գերմ.)։

[3] Որդի աստված։— Հոգին սուրբ աստված (գերմ.)։

— Հիմա՜ էլ արտասվում եմ, գերմանացի, հիմա՜ էլ արտասվում եմ, սրբաշնորհ մարդ,— գոռաց հանկարծ Միտյան իր տեղից։

Համենայն դեպս այդ փոքրիկ պատմությունը որոշ բարենպաստ տպավորություն գործեց հասարակության վրա։ Բայց Միտյայի օգտին ամենակարևոր ներգործությունն ունեցավ Կատերինա Իվանովնայի ցուցմունքը, որի մասին կասեմ հիմա։ Եվ առհասարակ, երբ սկսեցին հարցաքննվել à décharge վկաները, այսինքն նրանք, ովքեր կանչվել էին դատապաշտպանի կողմից, բախտը կարծես միանգամից և նույնիսկ լրջորեն ժպտաց Միտյային, և ամենաուշագրավն այն էր, որ մինչև իսկ դատապաշտպանի համար անսպասելի էր դա։ Բայց դեռ Կատերինա Իվանովնայից առաջ Ալյոշան հարցաքննության ենթարկվեց, և նա հանկարծ հիշեց մի փաստ, որ կարծես նույնիսկ դրական վկայություն էր երևում՝ մեղադրող կողմի առաջ քաշած մի շատ կարևոր կետի դեմ։

IV

ԲԱԽՏԸ ԺՊՏՈՒՄ Է ՄԻՏՅԱՅԻՆ

Նույնիսկ իրեն՝ Ալյոշայի համար դա բոլորովին անսպասելիորեն եղավ։ Նա կանչվեց առանց երդման, և հիշում եմ, որ հարցաքննության հենց առաջին բառերից՝ երկու կողմերն էլ չափազանց մեղմ ու համակրական վերաբերմունք ցույց տվեցին նրան։ Երևում էր, որ նրան նախորդել էր իր բարի համբավը։ Ալյոշան համեստ ու զուսպ էր պատասխանում, բայց նրա ցուցմունքների մեջ ակնհայտորեն երևում էր չերմ համակրանքը դժբախտ եղբոր հանդեպ։ Պատասխանելով մի հարցի, նա իր եղբոր բնավորությունը նկարագրեց ու ներկայացրեց նրան որպես մի մարդու, որ գուցե ամեհի է ու կրքերով տարված, բայց և ազնիվ է, հպարտ ու մեծահոգի, պատրաստ է նույնիսկ զոհողության, եթե պահանջվի նրանից։ Սակայն ընդունեց, որ վերջերս իր եղբայրը, Գրուշենկայի հանդեպ տածած բուռն զգացմունքի և հոր հետ ունեցած մրցակցության հետևանքով, անտանելի վիճակի մեջ էր ընկել։ Բայց վրդովմունքով մերժեց այն ենթադրությունն անգամ, թե իր եղբայրը կարող էր սպանել կողոպտելու նպատակով, թեև ընդունեց, որ այդ երեք հազար ռուբ-

լին համարյա մի տեսակ մտամոլորություն էր դարձել Միտյայի գլխում, որ նա այդ գումարը համարում էր իր ատանալիք ժառանգության մի մասը՝ հոր խաբեության պատճառով իրեն չտրված, և որ, բոլորովին անշահասեր մարդ լինելով հանդերձ, մինչև իսկ չէր կարողանում առանց մոլեգին կատաղության խոսել այդ երեք հազար ռուբլու մասին։ Իսկ, ինչպես արտահայտվեց դատախազը, երկու «կանացի անձնավորություններին», այսինքն Գրուշենկայի և Կատյայի մրցակցության մասին Ալյոշան խուսափուկ պատասխաններ տվեց և նույնիսկ մեկ կամ երկու հարցի բոլորովին չուզեց պատասխանել։

— Ձեր եղբայրը զոնե ասե՞լ է ձեզ, որ մտադիր է սպանել ձեր հորը,— հարցրեց դատախազը։— Կարող եք չպատասխանել, եթե անհարկի եք գտնում,— ավելացրեց նա։

— Ուղղակի չի ասել,— պատասխանեց Ալյոշան։

— Իսկ ինչպե՞ս։ Անուղղակի՞։

— Մի անգամ ինձ ասաց, թե անձնական ատելություն ունի հոր հանդեպ և վախենում է, որ... ծայրահեղ մի բոպեում... նողկանքի բոպեում... գուցե և կարող է սպանել նրան։

— Եվ դուք, լսելով այդ բանը, հավատացի՞ք։

— Վախենում եմ ասել, թե հավատացի։ Բայց ես միշտ էլ համոզված էի, որ մի գերագույն զգացում կփրկի նրան ճակատագրական բոպեին, ինչպես որ փրկեց իսկապես, որովհետև նա չէ իմ հորն սպանողը,— հաստատակամորեն վերջացրեց Ալյոշան բարձր ձայնով, որ հնչեց ամբողջ դահլիճում։

Դատախազը ցնցվեց մարտական ձիու նման, որ շնչաբեր ազդանշանն է լսում հանկարծ։

— Վստահ եղեք, որ ես կատարելապես հավատում եմ ձեր համոզմունքի ամենալրիվ անկեղծությանը, և բնավ էլ այդ բանը չեմ պարմանավորում ձեր դժբախտ եղբոր հանդեպ սիրո զգացումով և չեմ նույնացնում այդ զգացման հետ։ Արդեն նախնական քննությունից հայտնի է մեզ ձեր յուրօրինակ հայացքը այն ամբողջ ողբերգական պատահարի նկատմամբ, որ տեղի է ունեցել ձեր ընտանիքում։ Չեմ թաքցնում ձեզնից, որ վերին աստիճանի առանձնահատուկ է այդ հայացքը և հակասում է դատախազության ստացած բոլոր մյուս ցուցմունքներին։ Ուստի և անհրաժեշտ եմ գտնում հարցնել արդեն հարապնդորեն՝ ի՞նչ տվյալներ են առաջնորդել ձեր միտքը և ուղղել դեպի այն վերջնական համոզմունքը, թե ձեր եղբայրն անմեղ է և, ընդհակառակը, մեղավոր է մի ուրիշ անձ, որի դեմ արդեն ուղղակի ցուցմունք տվեցիք նախնական քննության ընթացքում։

— Նախնական քննության ընթացքում ես հարցերին էի պատասխանում միայն,— մեղմ ու հանգիստ ասաց Ալյոշան,— և ոչ թե անձամբ իմ կողմից մեղադրանք էի բարդում Սմերդյակովի վրա։

— Եվ այնուամենայնիվ ցուցմունք տվեցի՞ք նրա դեմ։

— Իմ եղբայր Դմիտրիի ասածից ելնելով տվեցի այդ ցուցմունքը։ Դեռ հարցաքննությունից առաջ ինձ պատմել էին, թե ինչ է կատարվել ձերբակալության ժամանակ, և թե ինքը այդ երեկո մատնանշել է Սմերդյակովին։ Ես լրիվ հավատում եմ, որ եղբայրս անմեղ է։ Եվ եթե նա չի սպանել, ուրեմն...

— Ուրեմն Սմերդյակո՞վը։ Իսկ ինչո՞ւ հատկապես Սմերդյակովը։ Եվ ինչո՞ւ մանավանդ դուք այնպես վերջնականորեն համոզվեցիք, որ անմեղ է ձեր եղբայրը։

— Չէի կարող չհավատալ եղբորս։ Ես գիտեմ, որ նա ինձ սուտ չի ասի։ Ես նրա դեմքից տեսա, որ սուտ չի ասում ինձ։

— Միայն դեմքի՞ց։ Ա՞յդ է ձեր ունեցած ամբողջ ապացույցը։

— Ուրիշ ապացույց չունեմ։

— Եվ Սմերդյակովի մեղավորության մասի՞ն էլ ուրիշ ոչ մի նվազագույն ապացույցի վրա չեք հիմնվում, բացի ձեր եղբոր խոսքերից և նրա դեմքի արտահայտությունից։

— Այո, ուրիշ ապացույց չունեմ։

Դրանով դատախազը վերջացրեց իր հարցափորձը։ Ալյոշայի պատասխանները խիստ հիասթափեցնող տպավորություն թողեցին հասարակության վրա։ Դեռ դատից առաջ արդեն մեր քաղաքում խոսում էին Սմերդյակովի մասին. մեկը մի բան էր լսել, մյուսը մի ուրիշ բան էր մատնանշում, ասում էին, թե Ալյոշան ինչ-որ արտակարգ ապացույցներ է հավաքել իր եղբոր օգտին և Սմերդյակովի մեղավոր լինելու մասին, և ահա՝ ոչի՞նչ չկա, ոչ մի ապացույց, բացի որոշ բարոյական համոզմունքներից, որոնք այնքան բնական են նրա համար, քանի որ մեղադրյալի հարազատ եղբայրն է։

Բայց սկսեց հարցեր տալ նաև Ֆետյուկովիչը։ Երբ հարց տրվեց, թե հատկապես ե՞րբ է մեղադրյալը Ալյոշային ասել հոր հանդեպ ունեցած ատելության մասին և այն մասին, որ կարող էր սպանել նրան, և թե արդյոք ինքը այդ բանը մեղադրյալից

լսել է, օրինակ, աղետից առաջ իրենց վերջի՞ն տեսակցության ժամանակ,— Ալյոշան, պատասխանելիս, հանկարծ ցնցվեց մի տեսակ, կարծես հենց հիմա միայն հիշեց մի որոշ բան և հասկացավ այդ բանը.

— Ես հիմա հիշում եմ մի հանգամանք, որ ինքս էլ բոլորովին մոռացել էի, բայց այն ժամանակ դա այնքա՜ն անորոշ էր ինձ համար, իսկ հիմա...

Եվ Ալյոշան, ինքն էլ հայտնապես հենց հիմա՛, հենց նոր այդ միտքը կռահելով, փութեռանդորեն սկսեց վերհիշել, թե ինչպես Միտյայի հետ իր վերջին տեսակցության ժամանակ, այն երեկո, ծառի մոտ, վանքի ճանապարհին, Միտյան կուրծքն էր ծեծել, «կրծքի վերի մասը», և մի քանի անգամ կրկնել էր, որ ինքը իր պատիվը վերականգնելու մի միջոց ունի, և որ այդ միջոցը այստեղ է ահա, ա՛յ այստեղ, իր կրծքի վրա... «Ես այն ժամանակ մտածեցի, որ նա, իր կուրծքը ծեծելով, խոսում է իր սրտի մասին,— շարունակեց Ալյոշան,— ուզում է ասել, որ իր սրտում կարող էր ուժ գտնել՝ ազատվելու համար ինչ-որ մի ահավոր անպատվությունից, որ սպառնում էր նրան, և որի մասին չհամարձակվեց խոստովանել մինչև իսկ ի՛մ առաջ։ Խոստովանում եմ, ես այն ժամանակ հենց մտածեցի, որ նա մեր հոր մասին է ասում և անպատվություն է համարում այն միտքը, թե կգնա ու մի դաժան բան կանի հորը, և դողում է այդ մտքից, այնինչ հենց նույն պահին նա կարծես մի բան էր ցույց տալիս իր կրծքի վրա, այնպես որ, հիշում եմ, հենց նույն պահին էլ իմ մտքով անցավ, որ սիրտը կրծքի այդ կողմը չի գտնվում, այլ ավելի ներքև, իսկ նա խփում է շատ ավելի վեր, ահա այստեղ, վզից անմիջապես ցած, և անընդհատ այդ տեղն է ցույց տալիս։ Իմ մտածածն այն ժամանակ հիմար բան թվաց ինձ, բայց նա գուցե ցույց էր տալիս հենց այդ լաթե քսակը, որի մեջ կարված էր այդ հազար հինգ հարյուր ռուբլին...»։

— Հենց այդպե՞ս է,— գոչեց հանկարծ Միտյան տեղից։— Ճիշտ է, Ալյոշա, այդպես է, ես այն ժամանակ դրա՞ն էի խփում բռունցքով։

Ֆեոդյուկովիչը հապշտապ վազեց նրա մոտ, աղաչելով, որ հանգիստ մնա, և նույն վայրկյանին էլ ուղղակի կառչեց Ալյոշայի ասածից։ Ալյոշան, ինքն էլ տարված իր հիշողությամբ, փութեռանդորեն հայտնեց իր ենթադրությունը, թե այդ անպատվությունն ամենայն հավանականությամբ հենց այն էր, որ Միտյան,

այդ հազար հինգ հարյուր ռուբլին իր վզին կրելով, կարող էր վերադարձնել Կատերինա Իվանովնային՝ որպես իր պարտքի կեսը, բայց այնուամենայնիվ որոշել էր չտալ այդ կեսը նրան և օգտագործել ուրիշ բանի համար, այսինքն Գրուշենկային այստեղից տանելու, եթե համաձայնվի Գրուշենկան...

— Այդպես է, հենց այդպես է,— բացականչում էր Ալյոշան հանկարծակի հուզմունքով,— եղբայրս այն ժամանակ հենց գոռում էր, որ անպատվության կեսն է, կեսը (նա մի քանի անգամ ասաց՝ կե՛սը), և ասաց, որ կարող էր անմիջապես ազատվել դրանից, բայց այն աստիճան դժբախտ է իր թույլ բնավորությամբ, որ չի անի այդ բանը... նախօրոք գիտե, որ չի կարող, ուժ չունի անելու այդ բանը։

— Եվ դուք հաստատ, պարզ հիշում եք, որ նա կրծքի հենց ա՞յդ տեղն էր ծեծում,— ագահորեն հարցրեց Ֆեոդյուկովիչը։

— Պարզ ու հաստատ, որովհետև հենց մտածեցի այդ բոպեին, թե ինչո՞ւ նա այդքան վերև է խփում, երբ սիրտը ավելի ներքև է, և նույն բոպեին էլ իմ մտածածը հիմար բան թվաց ինձ... հիշում եմ, որ հիմար բան թվաց... մտքովս անցավ այդ բանը։ Այ դրա համար էլ հիմա իսկույն հիշեցի։ Եվ ինչպե՞ս կարող էի այդ բանը մոռանալ մինչև ա՛յս պահը։ Հենց այդ փոքրիկ քսա՛կն էր ցույց տալիս նա, ասելով, որ միջոցներ ունի, բայց չի տա այդ հազար հինգ հարյուրը։ Իսկ ձերբակալության ժամանակ, Մոկրոեում, հենց գոռացել է (գիտեմ այդ բանը, ասել են ինձ), գոռացել է, թե իր ամբողջ կյանքի ամենախայտառակ արարքն է համարում այն, որ միջոցներ ուներ՝ իր պարտքի կեսը (հենց կե՛սը) վերադարձնելու Կատերինա Իվանովնային և գող չլինելու նրա առաջ, բայց այնուամենայնիվ կամք չի արել վերադարձնելու և նախընտրել է գող մնալ նրա աչքում, քան թե հրաժարվել փողից։ Եվ ինչպե՞ս էր տանջում այդ պարտքը նրան, ինչպե՞ս էր տանջում,— բացականչեց Ալյոշան, վերջացնելով։

Իհարկե, դատախազն էլ մեջ մտավ։ Նա խնդրեց, որ Ալյոշան մի անգամ ևս նկարագրի, թե ինչպես կատարվեց այդ ամբողջը, և մի քանի անգամ պնդեց, թե իսկապե՞ս մեղադրյալը, իր կուրծքը ծեծելով, կարծես մի բան էր ցույց տալիս։ Գուցե պարզապես կո՞ւրծքն էր ծեծում բռունցքով։

— Բայց բռունցքո՞վ էլ չէր,— բացականչեց Ալյոշան,— հենց մատներո՞վ էր ցույց տալիս, և ցույց էր տալիս այստե՛ղ,

շատ քաջար... Բայց ինչպե՞ս կարող էի այդպես բոլորովին մոռանալ մինչև այս պահը։

Նախագահը դիմեց Միոյային, հարցնելով թե ի՞նչ կարող է ասել տվյալ ցուցմունքի առթիվ։ Միոյան հաստատեց, որ հենց այդպես է եղել այդ ամբողջը, ինքը հենց ցույց էր տալիս այդ հազար հինգ հարյուր ռուբլին, որ կրում էր կրծքի վրա, վզից անմիջապես ներքև, և իհարկե, անպատվություն էր դա, «անպատվություն, որը չեմ ուրանում, ամենախոյտառա՛կ արարքը ամբողջ կյանքումս»,— գոչեց Միոյան։ «Կարող էի վերադարձնել ու չվերադարձրի։ Նախընտրեցի գող մնալ նրա աչքում, բայց չվերադարձրի, իսկ ամենագլխավոր անպատվությունն այն էր, որ նախօրոք գիտեի՝ չեմ վերադարձնելու։ Ճի՛շտ է Ալյոշան։ Շնորհակա՛լ եմ, Ալյոշա»։

Դրանով վերջացավ Ալյոշայի հարցաքննությունը։ Կարևոր ու բնորոշ էր հատկապես այն հանգամանքը, որ գոնե գտնվեց մի փաստ միայն, գոնե մի ապացույց, ասենք ամենաչնչին ապացույցը, համարյա թե ապացույցի մի նշույլ պարզապես, որը գեթ դույզն չափով հավաստում էր այնուամենայնիվ, թե իրոք գոյություն է ունեցել այդ քսակը, թե հազար հինգ հարյուր ռուբլի է եղել դրա մեջ, և թե մեղադրյալը չէր ասում նախնական քննության ժամանակ, երբ հայտարարում էր Մոկրոուսով, թե «իրենն էր» այդ հազար հինգ հարյուր ռուբլին։ Ալյոշան ուրախ էր. լրիվ կորմրած, շարունակեց կրկնել ինքնիրեն. «Ինչպե՞ս էի մոռացել այդ բանը։ Ինչպե՞ս կարող էի մոռանալ։ Եվ ինչպե՞ս եղավ, որ միայն հիմա՛ հիշեցի հանկարծ»։

Սկսվեց Կատերինա Իվանովնայի հարցաքննությունը։ Հենց որ նա երևաց, արտակարգ մի բան կատարվեց դահլիճում։ Տիկիններից կարծես իրենց կոթակոցներին ու հեռադիտակներին, տարտարիկ խլացուցիչ, ոմանք վեր կացան, որ ավելի լավ տեսնեն։ Հետագայում բոլորը պնդում էին, որ Միոյան հանկարծ գունատվեց «պատի նման», երբ օրիորդը ներս մտավ։ Ոտից գլուխ սև հագնված, համեստ ու գրեթե ծերկտտ արտահայտությամբ մոտեցավ նա ու կանգնեց իրեն ցույց տրված տեղը։ Կարելի չէր կռահել գեմքից, որ հուզված է նա, բայց վճռականության մի փայլ կար նրա մութ, մատչ հայացքում։ Պետք է նշել՝ հետագայում շատ շատերը պնդում էին, որ նա զարմանալիորեն գեղեցիկ էր այդ րոպեին։ Սկսեց խոսել մեղմ, բայց հստակ, ամբողջ դահլիճում լսելի ձայնով։ Ցավոքանց հանգիստ էր արտա-

հայտվում կամ գոնե ճիգ էր անում հանգիստ երևալու։ Նախագահն սկսեց իր հարցերը տալ զգուշությամբ, շափազանց հարգալից, կարծես վախենալով դիպչել «որոշ լարերի» և հարգելով նրա մեծ դժբախտությունը։ Բայց Կատերինա Իվանովնան, պատասխանելով առաջարկված հարցերից մեկին, հենց ինքը առաջին իսկ խոսքերից հայտարարեց հաստատորեն, որ մեղադրյալի նշանածն էր եղել «մինչև այն պահը, երբ նա լքեց ինձ...»,— ավելացրեց նա մեղմ ձայնով։ Երբ հարցրին այն երեք հազարի մասին, որ նա Միոյային հանձնել էր՝ փոստատուն տանելու և իր ազգականներին ուղարկելու համար, Կատերինա Իվանովնան հաստատորեն ասաց. «Ես նրան տվեցի ոչ թե ուղղակի փոստատուն տանելու համար. նախազգում էի, որ փողը շատ անհրաժեշտ է նրան... այդ րոպեին... Այդ երեք հազարը տվեցի այն պայմանով, որ եթե ուզում է՝ մի ամսվա ընթացքում ուղարկի։ Իզուր էր նա հետո այդքան տանջում իրեն այդ պարտքի համար...»։

Ես չեմ վերարտադրում բոլոր հարցերը և նրա բոլոր պատասխանները ամենայն ճշգրտությամբ, տալիս եմ միայն նրա ցուցմունքների էական իմաստը։

— Ես հաստատ համոզված էի, որ նա միշտ էլ կկարողանա ուղարկել այդ երեք հազարը, հենց որ ստանա իր հորից,— շարունակեց Կատերինա Իվանովնան, պատասխանելով հարցերին։— Ես միշտ էլ վստահ էի նրա անշահախնդրության ու ազնվության վրա... բարձր ազնվության... դրամական հարցերում։ Նա հաստատ համոզված էր, որ երեք հազար ռուբլի կստանա հորից, և մի քանի անգամ ասել էր ինձ այդ մասին։ Ես գիտեի, որ նա հակառակություն ունի հոր հետ, և միշտ էլ համոզված էի, մինչև հիմա էլ համոզված եմ, որ հայրը վիրավորել էր նրան։ Ես նրա կողմից ոչ մի սպառնալիք չեմ հիշում հոր նկատմամբ։ Գոնե ինձ մոտ ոչինչ չի ասել, ոչ մի սպառնալիք։ Եթե այն ժամանակ գար ինձ մոտ, ես իսկույն կվարատեի նրա տագնապը այդ չարաբաստիկ երեք հազար ռուբլու համար, որ պարտք էր ինձ, բայց նա այլևս չեկավ ինձ մոտ... իսկ ես ինքս... ես այնպիսի վիճակի մեջ էի դրված... որ չէի կարող նրան կանչել ինձ մոտ... Եվ ես իրավո՞ւնք էլ չունեի նրա հանդեպ խստապահանջ լինելու այդ պարտքի համար,— ավելացրեց նա հանկարծ, և վճռական մի քան զնգաց նրա ձայնի մեջ,— ես ի՞նքս մի անգամ դրամական օժանդակություն եմ ստացել նրանից՝ երեք հազարից

ավելի մեծ մի գումար, և ընդունել եմ օժանդակությունը, չնայած որ այն ժամանակ չէի էլ կարող նախատեսել, թե երբևիցե ի վիճակի կլինեմ վերադարձնելու նրան իմ պարտքը...

Նրա ձայնի մեջ կարծես հախուռն մի շեշտ զգացվեց։ Հենց այդ րոպեին Ֆետյուկովիչը սկսեց իր հարցերը տալ։

— Այդ բանը կատարվեց ոչ թե այստեղ, այլ ձեր ծանոթության սկզբո՞ւմ,— զգույշ մոտեցումով արձագանքեց Ֆետյուկովիչը, բարենպաստ մի բան նախազգալով ակնթարթորեն։ (Փակագծում նշեմ, որ նա, չնայած որ մասամբ նաև հենց Կատերինա Իվանովնայի նախաձեռնությամբ էր հրավիրվել Պետերբուրգից, այնուամենայնիվ ոչինչ չգիտեր այն հին հազար ռուբլու մասին, որ Միտյան դեռ այն քաղաքում տվել էր Կատյային, չգիտեր «մինչև գետին խոնարհվելու» պատմությունը։ Կատյան չէր ասել այդ բանը նրան, թաքցրե՛լ էր։ Եվ զարմանալի էր դա։ Կարելի է հաստատ ենթադրել, որ Կատյան ինքն էլ մինչև վերջին րոպեն չգիտեր՝ կպատմի՞ այդ դրվագը դատարանում, թե ոչ, և մի տեսակ վայրկենական ներշնչման էր սպասում)։

Չէ՛, երբեք չեմ կարող մոռանալ այդ րոպեները։ Նա սկսեց պատմել, ամեն ինչ պատմեց, ամբողջ այն դրվագը, որ Միտյան հայտնել էր Ալյոշային, և՛ «մինչև գետին խոնարհվելը», և՛ պատճառները, և՛ իր հոր խնդիրը, և՛ իր գալը Միտյայի մոտ, բայց ոչ մի բան չասաց, մի հատիկ ակնարկ անգամ չարեց այն մասին, որ Միտյան ինքը, նրա քրոջ միջոցով, առաջարկել էր «իր մոտ ուղարկել Կատերինա Իվանովնային՝ փողն ստանալու»։ Վեհանձնորեն թաքցրեց այդ բանը և չամաչեց այնպես ներկայացնել, որ իբր թե ի՛նքը անձամբ վազել է երիտասարդ սպայի մոտ, իր սեփական մղումով, հույսը դնելով մի բանի վրա... որպեսզի փող խնդրի նրանից։ Ցնցող մի բան էր դա։ Ես սառչում ու դողում էի լսելու ժամանակ, դահլիճը քարացել էր, որսում էր ամեն մի բառը։ Անօրինակ մի բան կար դրա մեջ, այնպես որ մինչև իսկ Կատյայի նման ինքնիշխան ու արհամարհող հպարտությամբ տոգորված աղջկանից էլ համարյա անկարելի էր սպասել այդպիսի խիստ անկեղծ մի վկայություն, այդպիսի զոհողություն, այդպիսի ինքնազոհաբերում։ Եվ ինչի՞ համար, ո՞ւմ համար։ Փրկելո՛ւ համար նրան, ով դավաճանել ու անարգել էր իրեն. գեթ մի որևէ բանով, գեթ մի փոքր բանով նպաստելո՛ւ համար նրա փրկությանը, լավ տպավորություն ստեղծելով նրա օգտին։ Եվ իրոք, շատ համակրելի ու հմայիչ մի կերպար կանգնեց բոլորի աչքի առաջ՝ մի սպա, որ տալիս է իր վերջին հինգ հազար ռուբլին, այն ամբողջը, որ կյանքում մնացել էր իրեն, և հարգալից խոնարհվում է մի անմեղ աղջկա առջև։ Բայց... սիրտս ցավագին սեղմվեց։ Զգացի, որ հետագայում կարող է զրպարտությա՞ն առիթ լինել այդ բանը (և այդպես էլ եղավ հետո, եղա՛վ)։ Հետագայում շարախնդորեն սկսեցին խոսել ամբողջ քաղաքում, թե եղելությունը գուցե այնքան էլ ճիշտ չէր պատմվել, հատկապես այն մասը, ուր սպան «իբր թե միայն հարգալից խոնարհությամբ» թողել է, որ օրիորդը գնա իր մոտից։ Ակնարկում էին, թե մի բան «բաց է թողնվել» այդ կետում։ «Բայց եթե նույնիսկ բաց չի թողնվել, եթե նույնիսկ ճշմարիտ է այդ ամբողջը,— ասում էին մեր ամենապատկառելի տիկիններն անգամ,— դեռ այդ դեպքում էլ պարզ չէ, թե մի օրիորդի համար շա՞տ ազնիվ բան էր արդյոք այդպես վարվելը, թեկուզ և իր հորը փրկելու սիրույն»։ Եվ մի՞թե Կատերինա Իվանովնան իր այդ խելքով, իր այդ հիվանդագին խորաթափանցությամբ չէր կարողացել զգալ նախօրոք, թե մարդիկ կսկսեն խոսել այդպես։ Զգացել էր անպայման, բայց թե ահա սիրտ արեց ամե՞ն ինչ պատմել։ Իհարկե, հետագայում էր միայն, որ ծայր առան այդ լրբությունի կասկածները նրա պատմածի ճշմարիտ լինելու մասին, իսկ առաջին րոպեին լրիվ ցնցվել էին բոլորը։ Դատական կազմի անդամները լսեցին երկյուղածությամբ, նույնիսկ, այսպես ասած, ամոթխած լռությամբ։ Դատախազը մի հատիկ հարց անգամ թույլ չտվեց իրեն այդ նյութի շուրջ։ Ֆետյուկովիչը խոր հարգանքով գլուխ տվեց օրիորդին։ Օ՜, համարյա թե հաղթանակում էր դատապաշտպանը։ Շատ բան էր ձեռք բերվել. մի մարդ, որ ազնիվ մղումով տալիս է իր վերջին հինգ հազար ռուբլին, և հետո նո՛ւյն մարդը իր հորն է սպանել գիշերը՝ նրանից երեք հազար ռուբլի գողանալու նպատակով... դա մասամբ անհարիր մի բան էր արդեն։ Գոնե առնվազն կողոպուտի խնդիրը կարող էր վերացնել հիմա Ֆետյուկովիչը։ «Գործը» հանկարծ մի նոր լույսի տակ երևաց։ Համակրանքի մի շունչ տարածվեց Միտյայի օգտին։ Իսկ նա... պատմում էին, որ Կատերինա Իվանովնայի վկայության ընթացքում նա մեկ կամ երկու անգամ վեր էր թռել տեղից, հետո նորից ընկել էր նստարանին և ափերով ծածկել դեմքը։ Բայց երբ Կատյան վերջացրեց, Միտյան հանկարծ բացականչեց հեկեկուն ձայնով, ձեռքերը մեկնելով նրան։

— Կա՞տյա, ինչո՞ւ խորտակեցիր ինձ։

Եվ ամբողջ դահլիճը լսեց նրա բարձրաձայն հեկեկոցը։ Սակայն նա վայրկենապես զսպեց իրեն և նորից գոռաց.

— Էլ հիմա դատապարտվե՞լ եմ արդեն։

Հետո նա մի տեսակ փայտացավ իր տեղում, ատամները սեղմած ու թևերը կրծքին խաչաձևած։ Կատերինա Իվանովնան մնաց դահլիճում և նստեց իրեն ցույց տրված աթոռի վրա։ Գունատ էր նա և նստել էր աչքերը խոնարհած։ Նրա մոտ եղողները պատմում էին, որ երկար ժամանակ դողում էր ոտից գլուխ, կարծես տենդի մեջ։ Հարցաքննության ներկայացավ Գրուշենկան։

Սրգեն մոտենում եմ այն աղետին, որ տեղի ունեցավ անակնկալորեն և ցույց իսկապես Միտյայի կործանման պատճառը եղավ։ Որովհետև ես համոզված եմ, և բոլորն էլ նմանապես, բոլոր իրավաբաններն այդպես էին ասում հետո, որ եթե չլիներ այդ դրվագը, հանցագործին գոնե մեղմացում կտային։ Բայց դրա մասին՝ քիչ հետո։ Նախ մի երկու խոսք միայն՝ Գրուշենկայի մասին։

Նա դահլիճ մտավ նույնպես ոտից գլուխ սև հագած, իր սքանչելի սև շալը ուսերին։ Իր սահուն, անձայն քայլվածքով, մի թեթև օրորվելով, ինչպես քայլում են երբեմն գիշերուկ կանայք, մոտեցավ ճաղաշարքին, աչքերը նախագահին սևեռած և ոչ մի անգամ չնայելով ոչ աջ, ոչ ձախ։ Ըստ իս, նա շատ սիրուն էր այդ բոպեին և բոլորովին էլ գունատ չէր, ինչպես պնդում էին հետո տիկնայք։ Պնդում էին նաև, որ նրա դեմքին ինքնամփոփ ու շարացած մի արտահայտություն կար։ Ես կարծում եմ միայն, որ նա շղայնացել էր և խայտառակ տեսարանների սիրահար մեր հասարակության արհամարհական ու հետաքրքրված հայացքները ծանրորեն ղգում էր իր վրա։ Հպարտ բնավորություն ուներ Գրուշենկան, արհամարհանք չէր հանդուրժում. մեկն էր այն մարդկանցից, որոնք երբ ամենագույշն կասկածն են ունենում, թե մեկն արհամարհում է իրենց, իսկույն ևթ բռնկվում են զայրույթով և հակահարված տալու մարմաջով։ Դրա հետ կար նաև, իհարկե, երկչոտությունը և ներքին ամոթը այդ երկչոտության համար, ուստի զարմանալի չէր, որ խոսակցության ժամանակ դյուրափոփոխ էր նա՝ մեկ ցասկոտ, մեկ արհամարհոտ ու սառնակորեն կոպիտ, մեկ էլ հանկարծ ինքնադատապարտման, ինքնամեղադրման անկեղծ, սրտագին մի շեշտ էր հնչում նրա խոսքի մեջ։ Իսկ երբեմն էլ խոսում էր այնպես, որ կարծես թա-

վալորը ընկնում էր անդունդ, այսինքն թե՝ «միևնույն է, ինչ ուզում է լինի, ասելո՛ւ եմ...»։ Ֆյոդոր Պավլովիչի հետ իր ծանոթության մասին կարուկ կերպով նկատեց. «Դատարկ բա՞ն է. ինչ է, ես մեղավո՞ր եմ, որ նա իմ պոչից կպավ»։ Իսկ մի բոպե հետո ավելացրեց. «Այդ բոլորը ի՛մ մեղքն է, ես երկուսի վրա էլ ծիծաղում էի՝ թե՛ բիձուկի, թե՛ սրա վրա, և երկուսին էլ այս օրը հասցրի։ Ի՛մ երեսից եղավ ամեն ինչ»։ Մի կերպ Սամսոնովի անունն էլ շոշափվեց։ «Ո՞ւմ ինչ գործն է,— իսկույն վրա տվեց նա մի տեսակ լայտռ հանդգնությամբ,— նա իմ բարերարն էր, նա ինձ ոտաբոբիկ վերցրեց, երբ իմ հարազատները դուրս շպրտեցին ինձ»։ Նախագահը հիշեցրեց նրան, թեև շատ քաղաքավարի կերպով, որ պետք է ուղղակի հարցերին պատասխանել, առանց ավելորդ մանրամասնությունների մեջ մտնելու։ Գրուշենկան կարմրեց և աչքերը փայլատակեցին։

Նա չէր տեսել այն ծրարը, որի մեջ փողն էր դրված, միայն լսել էր «չարագործից», որ Ֆյոդոր Պավլովիչը ինչ-որ ծրար ունի՝ մեջը երեք հազար ռուբլի։ «Բայց այդ ամբողջը հիմարություն է. ես ծիծաղում էի և ոչ մի դեպքում չէի գնա այնտեղ...»։

— Ո՞ւմ մասին էր, որ «չարագործ» ասացիք հիմա,— հարցրեց դատախազը։

— Այդ ծառան, Սմերդյակովը, որ իր տիրոջն սպանեց, իսկ երեկ էլ կախեց իրեն։

Իհարկե, անմիջապես հարցրին՝ ի՞նչ հիմքեր ունի այդպիսի վճռական մեղադրանքի համար, բայց պարզվեց, որ նա էլ ոչ մի հիմք չունի։

— Դմիտրի Ֆյոդորովիչն ինքը ասաց ինձ, և հենց նրան էլ հավատացեք։ Մեզ բաժանող օրի՞ցը խորտակեց նրան, ա՛յ ասեմ ձեզ, նա է ամեն ինչի պատճառը, ա՛յ ասում եմ,— ավելացրեց Գրուշենկան, կարծես ամբողջովին դողալով ատելությունից, և քինախնդիր մի շեշտ հնչեց նրա ձայնի մեջ։

Հարցրին, թե ում է ակնարկում նորից։

— Այս օրիորդը, ա՛յ այս Կատերինա Իվանովնան։ Իր տունը կանչեց ինձ այն ժամանակ, շոկոլադ հյուրասիրեց, հրապուրել ուզեց։ Նրա մեջ իսկական ամոթ տալած բանը շա՛տ քիչ է, ա՛յ ասեմ ձեզ...

Այստեղ արդեն նախագահը խստորեն ընդհատեց նրան, խնդրելով, որ չանցավորի իր արտահայտությունները։ Բայց խան-

դուռ կնոջ սիրտը բռնկվել էր արդեն, նա պատրաստ էր թեկուզ անդունդ նետվելու...

— Ձերբակալության ժամանակ, Մոկրոեում,— հարցրեց դատախազը վերհիշելով,— բոլորը տեսան ու լսեցին, թե ինչպես դուք դուրս վազեցիք մյուս սենյակից ու գոռացիք. «Ես եմ ամեն ինչում մեղավորը, միասին աքսոր կգնանք»։ Ուրեմն այդ բոպեին դո՞ւք էլ վստահ էիք արդեն, որ նա հայրասպան է։

— Այդ բոպեի իմ զգացմունքները չեմ հիշում,— պատասխանեց Գրուշենկան,— բոլորը այն ժամանակ սկսեցին գոռալ, որ նա իր հորն է սպանել, դե ես էլ զգացի, որ ես եմ մեղավորը և իմ երեսից է սպանել։ Բայց երբ ինքը ասաց, որ անմեղ է, իսկույն հավատացի նրան, հիմա էլ հավատում եմ և միշտ պիտի հավատամ. այնպիսի մարդ չէ, որ սուտ ասի։

Ֆեոդուկովիչն սկսեց հարցեր տալ։ Ի միջի այլոց, հիշում եմ, հարցրեց Ռակիտինի մասին և այն քսանհինգ ռուբլու, որ նա ստացել է «Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովին ձեզ մոտ բերելու համար»։

— Իսկ ի՞նչ զարմանալու բան է, որ նա վերցրեց փողը,— շարախինդ արհամարհանքով ժպտաց Գրուշենկան։— Նա միշտ էլ գալիս էր մոտս, աղաչում-պաղատում, թե փող տուր, լինում էր, որ ամիսը մի երեսուն ռուբլի էր վերցնում, շատը՝ գիզի-բիզի բաների համար. առանց իմ տվածի էլ ուտել-խմելու փող ուներ։

— Իսկ ի՞նչ հիման վրա դուք այդպես առատաձեռն էիք պարոն Ռակիտինի նկատմամբ,— վրա բերեց Ֆեոդուկովիչը, չնայած որ նախագահը անհանգիստ շարժվեց տեղում։

— Դե նա իմ մորաքրոջ տղան է։ Իմ մայրը և նրա մայրը հարազատ քույրեր են։ Միայն թե նա միշտ աղաչում էր, որ այստեղ ոչ ոքի չասեմ դրա մասին, դե շա՞տ էր ամաչում իմ պատճառով։

Այս նոր փաստը կատարյալ անակնկալ էր բոլորի համար, մինչև հիմա ոչ ոք չգիտեր դրա մասին ամբողջ քաղաքում, նույնիսկ վանքում չգիտեին, նույնիսկ Միտյան չգիտեր։ Պատմում էին, որ Ռակիտինը ամոթից կասկարմիր է կորել, իր աթոռին նստած։ Գրուշենկան դեռ դահլիճ մտնելուց առաջ իմացել էր մի կերպ, որ նա Միտյայի դեմ է վկայել, դրա համար էլ շարացել էր։ Պ. Ռակիտինի ամբողջ քիչ առաջվա ճառը, ամբողջ դրա ազնվաշունչ ոգին, նրա բոլոր հարձակումները ձորտատիրական իրավունքի, Ռուսաստանի հասարակական անկարգու-

թյան վրա՝ այդ ամբողջը վերջնականապես փուլ եկավ այս անգամ ու ընչվեց հասարակության աչքին։ Ֆեոդուկովիչը գոհ էր։ Ասուված նորից իր հացին յուղ քսեց։ Գրուշենկային շատ էլ երկար չհարցաքննեցին, և իհարկե նա չէր էլ կարող հատկապես մի որևէ նոր բան հայտնել։ Հասարակության վրա նա շատ տհաճ տպավորություն թողեց։ Հարյուրավոր արհամարհական հայացքներ ուղղվեցին նրան, երբ նա վերջացրեց իր վկայությունը և նստեց դահլիճում՝ Կատերինա Իվանովնայից բավական հեռու։ Նրա հարցաքննության ժամանակ Միտյան լուռ մնաց անբնդհատ, կարծես քարացած, աչքերը հատակին։

Վկայություն տալու ներկայացավ Իվան Ֆյոդորովիչը։

V

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՂԵՏՔ

Նշեմ, որ նրան դեռ Ալյոշայից առաջ էին կանչել։ Բայց դատական կատարածուն այն ժամանակ զեկուցել էր նախագահին, որ անակնկալ տկարության կամ մի տեսակ նոպայի հետևանքով՝ վկան չի կարող այդ բոպեին ներկայանալ, բայց հենց որ լավ զգա իրեն, պատրաստ է որևէ բոպե տալ իր վկայությունը։ Բայց կարծես թե ոչ ոք չէր լսել այդ բանը, հետո միայն իմացան։ Առաջին բոպեին համարյա անկատելի անցավ նրա երևալը. գլխավոր վկաները, հատկապես երկու մրցակից կանայք, հարցաքննվել էին արդեն. մարդկանց հետաքրքրասիրությունը բավարարված էր առայժմ։ Հասարակության մեջ նույնիսկ հոգնածություն էր զգացվում։ Դեռ պետք է հարցաքննվեին մի քանի վկաներ, որոնք հավանաբար ոչ մի առանձին բան չէին կարող հայտնել այն բոլոր ցուցմունքներից հետո, որ արդեն տրվել էին։ Իսկ ժամանակն անցնում էր։ Իվան Ֆյոդորովիչը մի տեսակ զարմանալիորեն դանդաղ մոտեցավ, ոչ ոքի չնայելով ու նույնիսկ գլուխը հակած, կարծես խոժոռադեմ խորհրդածելով մի բանի մասին։ Անթերի էր հագնվել, բայց նրա դեմքը ցավագին տպավորություն թողեց, գոնե ինձ վրա. կարծես հոգի չունեցող էր դիպել այդ դեմքին, մեռնող մարդու դեմքի էր նման։ Աչքերը պղտոր էին, բարձրացրեց հայացքը և դանդաղորեն նայեց ամբողջ դահլիճին։ Ալյոշան հանկարծ վեր թռավ աթոռից ու ցնցվեց դահլիճին։

քաց՝ ա՜խ։ Հիշում եմ այդ բանը։ Բայց դա էլ հանարյա ոչ ոք չնկատեց։

Նախագահը սկսեց ասել նրան, թե նա վկայություն է տալիս առանց երդում ընդունելու, թե կարող է պատասխանել կամ լուռ մնալ, բայց թե անշուշտ բոլոր ցուցմունքները պետք է խղճմտանքով տրվեն և այլն։ և այլն։ Իվան Ֆյոդորովիչը լսում էր ու պղտոր հայացքով նայում նրան։ Բայց հանկարծ նրա դեմքի վրա մի ժպիտ սկսեց տարածվել դանդաղորեն, և հենց որ նախագահը, զարմացած նայելով նրան, վերջացրեց իր խոսքը, Իվան Ֆյոդորովիչը հանկարծ ծիծաղեց։

— Է՜, ուրի՞շ ինչ,— բարձրաձայն հարցրեց նա։

Դահլիճում լռություն տիրեց, կարծես զգացին, որ մի բան կա։ Նախագահը սկսեց անհանգստանալ։

— Դուք... դեռ գուցե այնքան էլ առողջ չե՞ք,— ասաց նա և աչքերով փնտրեց դատական կատարածուին։

— Մի՛ անհանգստացեք, ձերդ գերազանցություն, ես բավական առողջ եմ և կարող եմ մի հետաքրքրական բան ասել ձեզ,— պատասխանեց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը՝ կատարելապես հանգիստ ու հարգալից։

— Դուք մի որևէ հատուկ ծանուցո՞ւմ ունեք ներկայացնելու,— շարունակեց նախագահը դեռ անվստահությամբ։

Իվան Ֆյոդորովիչը հայացքն իջեցրեց, հապաղեց մի քանի վայրկյան, հետո գլուխը նորից բարձրացրեց ու պատասխանեց մի տեսակ կակազելով.

— Չէ... չունեմ։ Ոչ մի առանձնահատուկ բան չունեմ։

Սկսեցին հարցեր առաջարկել։ Նա պատասխանում էր մի տեսակ խիստ դժկամորեն, չափից ավելի կարճ, նույնիսկ մի տեսակ զզվանքով, որն ավելի ու ավելի էր աճում, թեև պատասխաններն այնուամենայնիվ խելամիտ էին։ Շատ հարցերից հրաժարվեց, պատճառաբանելով, թե չգիտե։ Հոր և Դմիտրի Ֆյոդորովիչի հաշիվների մասին ոչինչ չէր իմանում։ «Չեմ էլ զբաղվել գրանով»,— ասաց նա։ Մեղադրյալից լսել էր ապառնալիքներ, թե կսպանի հորը։ Սրարի մեջ դրված փողի մասին լսել էր Սմերդյակովից...

— Անընդհատ նույն բանը,— ընդհատեց հանկարծ հոգնած երեսույթով։— Ես ոչ մի հատուկ բան չեմ կարող հաղորդել դատարանին։

— Տեսնում եմ՝ անառողջ եք, և հասկանում եմ ձեր զգացմունքները...— սկսեց նախագահը։

Նա դիմեց երկու կողմերին՝ դատախազին ու դատապաշտպանին, հրավիրելով նրանց, որ հարցեր առաջարկեն, եթե անհրաժեշտ են գտնում, բայց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը ուժասպառ ձայնով խնդրեց.

— Թողեք ինձ, գնամ, ձերդ գերազանցություն, շատ անառողջ եմ զգում։

Եվ այդ ասելով, առանց թույլտվության սպասելու, հանկարծ դարձավ ու սկսեց հեռանալ դահլիճից։ Բայց չորս քայլից հետո կանգ առավ, կարծես հանկարծ մի բան մտածելով, մեղմ ժպտաց ու վերադարձավ նույն տեղը։

— Ես այն գյուղացի աղջկա նման եմ, ձերդ գերազանցություն... գիտեք, ինչպե՞ս էր. «Ուզեմ՝ կկանգնեմ, ցուզեմ՝ ցեմ կանգնի»։ Սաբաֆանը բռնած սպասում են, որ նա վեր կենա, հագցնեն ու տանեն պսակելու, իսկ նա ասում է. «Ուզեմ կկանգնեմ, ցուզեմ՝ ցեմ կանգնի»... Մեր ազգությունների մեկի բանահյուսության մեջ է դա...

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով,— խստաշեշտ հարցրեց նախագահը։

— Ահա՛,— Իվան Ֆյոդորովիչը հանկարծ մի կապոց հանեց,— ահա՛ փողերը... հենց այն փողերը, որ ահա այն ծրարի մեջ էին,— նա գլխի շարժումով ցույց տվեց իրեղեն ապացույցների սեղանը,— և որոնց պատճառով սպանեցին մեր հորը։ Ո՞ւր դնեմ։ Պարոն դատական կատարածու, վերցրեք ու հանձնեցեք։

Դատական կատարածուն վերցրեց ամբողջ կապոցը և հանձնեց նախագահին։

— Ինչպե՞ս այս փողը կարող էր ձեզ մոտ գտնվել... եթե նույն փողն է,— զարմանքով հարցրեց նախագահը։

— Սմերդյակովից ստացա, մարդասպանից, երեկ։ Մոտն էի երեկ, հենց իմ գնալուց հետո կախել է իրեն։ Նա՛ սպանեց մեր հորը, ոչ թե եղբայրս։ Նա սպանեց, իսկ ես իրեն դրդեցի, որ սպանի... Ո՞վ չի ցանկանում իր հոր մահը...

— Ձեր խելքը տե՞ղն է, թե չէ,— ակամա թռավ նախագահի բերանից։

— Հենց այն է, որ խելքս տեղն է... ստո՛ր խելքս, ինչպես ձերն էլ է ստոր, ինչպես բոլոր այս... մո-ռուբների՛ խելքը,— դարձավ նա հանկարծ դեպի հասարակությունը։— Սպանել են

հոբս, և սրանք ձևացնում են, թե վախեցել են,— կրճատացրեց նա ցասումնալից արհամարհանքով։— Պոչ են խաղացնում մեկը մյուսի առաջ։ Ստախոսնե՞ր։ Բոլորը ցանկանում են իրենց հոր մահը։ Մի սողունը կուլ է տալիս մյուս սողունին... Եթե չլիներ հայրասպանությունը, սրանք բոլորն էլ կբարկանային ու շարացած կգնային իրենց տները... Տեսարա՞ն են ուզում։ «Հաց ու տեսարա՞ն»։ Բայց ե՞ս էլ մի լավ պտուղ եմ, հա՞։ Ջուր ունե՞ք, թե չէ, տվեք խմեմ, ի սե՞ր Քրիստոսի,— հանկարծ իր գլուխը բռնեց նա։

Դատական կատարածուն անմիջապես մոտեցավ նրան։ Ալյոշան հանկարծ վեր թռավ ու գոռաց. «Հիվա՞նդ է, մի՛ հավատացեք նրան, տենդի մեջ է»։ Կատերինա Իվանովնան թափով վեր կացավ իր աթոռից և, սոսկումից անշարժացած, նայում էր Իվան Ֆյոդորովիչին։ Միտյան ոտքի ելավ ու մի տեսակ մոլեգին, այլայլված ժպիտով, ագահորեն նայում էր ու լսում եղբորը։

— Հանգստացեք, չեմ խելագարվել, պարզապես մարդասպան եմ,— սկսեց նորից Իվանը։— Մարդասպանից հո պերճախոսություն չի կարելի սպասել...— ավելացրեց նա հանկարծ չգիտես ինչու, և ծուռ ծիծաղեց։

Դատախազը, հայտնապես շփոթված, թեքվեց դեպի նախագահը։ Դատարանի անդամները անհանգիստ փսփսում էին իրար միջև։ Ֆետյուկովիչն ականջները սրած լսում էր։ Դահլիճն սպասում էր, քարացած։ Նախագահը կարծես հանկարծակի սթափվեց։

— Վկա՛, ձեր խոսքերը անհասկանալի են և անկարելի են այստեղ։ Հանգստացեք, եթե կարող եք, և պատմեցեք... եթե իրոք ասելու բան ունեք։ Ինչո՞վ կարող եք հաստատել այդպիսի խոստովանությունը... եթե միայն չեք զառանցում։

— Հենց այն է խնդիրը, որ ոչ մի վկա չունեմ։ Շունչանորդի Սմերդյակովը այն աշխարհից վկայություն չի ուղարկի ձեզ... ծրարի մեջ։ Ձեզ միայն ծրարներ են պետք, մի հատն էլ բավական է։ Վկաներ չունեմ... Բացի միայն մեկ վկայից գուցե,— մտախոհ ժպտաց նա։

— Ո՞վ է ձեր վկան։

— Պո՞չ ունի, ձերդ գերազանցություն, անվայել բան կլինի։ Le diable n'existe point![1] Ուշադրություն մի՛ դարձրեք, անպետք, չնչին մի սատանա է,— ավելացրեց նա, հանկարծ դադարելով ծիծաղել և կարծես խորհրդապահորեն խոսելով,— այստեղ է նա անկասկած, մի որևէ անկյունում, ա՛յ այն իրեղեն ապացույցների սեղանի տակ, էլ ո՞ւր պետք է նստի, եթե ոչ այնտեղ։ Հասկանո՞ւմ եք, լսեցեք ինձ. ես նրան ասացի՝ չեմ ուզում լռել, իսկ նա երկրաբանական հեղաշրջման մասին սկսեց... հիմարությո՞ւն է՛հ, աղատեցեք ճիվաղին... Նա սկսել է օրհներգել, դե որովհետև հե՞շտ է նրա համար։ Միևնույնն է, թե հարբած սրիկան սկսի բղավել՝ ինչպե՞ս «վանկան գնաց Պիտերը», իսկ ես երկու վայրկյանի ցնծության համար կվադրիլիոն անգամ կվադրիլիոն կտայի։ Դուք չգիտե՞ք ինձ։ Օ՛, ինչ հիմար բան է ձեր այս ամբողջ արածը։ Դե՛հ, վերցրեք ինձ նրա փոխարեն։ Հո իզուր չեմ եկել... Ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան հիմար է ամեն ինչ, ծայրից ծայր...

Եվ նա նորից սկսեց դանդաղ ու կարծես մտախոհ նայել շուրջը՝ դահլիճին։ Բայց բոլորն սկսել էին արդեն իրար անցնել։ Ալյոշան իր տեղից վազեց նրա մոտ, բայց դատական կատարածուն արդեն բռնել էր Իվան Ֆյոդորովիչի ձեռքը։

— Սա՞ ինչ բան է,— գոռաց նա, շեշտակի նայելով կատարածուի դեմքին, և հանկարծ բռնեց նրա ուսերից, կատաղորեն հրեց ու շրմփացրեց հատակին։ Բայց պահակ ոստիկանները հասել էին արդեն ու բռնեցին նրան։ Այդ վայրկյանին նա մի մոլեգին աղաղակ արձակեց։ Եվ երբ տանում էին նրան, շարունակ աղաղակում էր ու անկապ մի բան գոռգոռում։

Դահլիճն իրար անցավ։ Ամեն ինչ կարգով չեմ հիշում, ինքս էլ հուզված էի և չէի կարող հետևել։ Միայն գիտեմ, որ հետո, երբ արդեն ամեն ինչ խաղաղվել էր և բոլորը հասկացել էին խնդիրը, դատական կատարածուն մի լավ հանդիմանություն ստացավ, թեև նա հիմնավորապես բացատրեց, որ վկան միշտ էլ առողջ էր, և երբ մի ժամ առաջ թեթև անհանգստություն էր զգացել՝ բժիշկը նայել էր նրան, իսկ մինչև դահլիճ մտնելը միշտ էլ խելքը գլխին էր խոսում, այնպես որ անկարելի էր մի որևէ բան նախատեսել. և ընդհակառակը, ինքն էր պնդում և անպայման ուզում էր վկայություն տալ։ Բայց հազիվ էին գեթ մի քիչ խաղաղվել և ուշքի եկել, երբ այդ տեսարանին անմիջապես հաջորդեց մի ուրիշը. Կատերինա Իվանովնան հիստերիկ նոպա ունեցավ։ Նա սկսեց բարձրաձայն ճչալով հեծկլտալ, բայց չէր

1 Սատանան բնավ էլ գոյություն չունի (ֆրանս.)։

ուզում գնալ դահլիճից, մաքառում էր, աղաչում, որ իրեն դուրս չտանեն, և հանկարծ գոռաց նախագահին.

— Ես պետք է մի ցուցմունք էլ հայտնեմ ձեզ, անմիջապես... անմիջապե՞ս... Ահա՛ մի փաստաթուղթ, նամա՛կ... վերցրե՛ք, կարդացե՛ք, շո՛ւտ, շո՛ւտ։ Այս հրեշի՛ նամակն է, ահա ա՛յս, ա՛յս,— ցույց տվեց նա Միտյային։— Նա՛ է սպանել իր հորը, կտեսնեք հիմա, նա ինձ գրո՛ւմ է, թե ինչպես է սպանելու հորը։ Իսկ մյուսը հիվանդ է, հիվա՛նդ, տենդի մեջ է նա։ Երե՛ք օր է արդեն տեսնում եմ, որ տենդի մեջ է։

Այսպես գոռգոռում էր նա, իրեն կորցրած։ Դատական կատարածուն վերցրեց այն թուղթը, որ նա մեկնում էր նախագահին, իսկ Կատերինա Իվանովնան, ընկնելով աթոռին ու դեմքը ծածկելով, սկսեց ջղաձգորեն ու անձայն հեծկլտալ, ատից գլուխ ցնցվելով ու խեղդելով ամենափոքր տնքոցն անգամ՝ այն վախից, թե իրեն դահլիճից դուրս կհանեն։ Նրա հանձնած թուղթը հենց այն նամակն էր, որ Միտյան գրել էր «Մայր քաղաք» գինետնից, և որ Իվան Ֆյոդորովիչը «մաթեմատիկական» կարևորություն ունեցող փաստաթուղթ էր կոչել։ Ավա՛ղ, հենց այդ մաթեմատիկական նշանակությունն էլ տրվեց դրան, և եթե չլիներ այդ նամակը՝ գուցե և Միտյան չէր կործանվի, կամ էլ գոնե այդքա՛ն ահավոր չէր լինի նրա կործանումը։ Կրկնում եմ, դժվար էր հետևել մանրամասնություններին։ Հիմա էլ այդ ամբողջը իմ աչքին պատկերանում է այնպիսի՛ խառնաշփոթության մեջ։ Երևի նախագահն իսկույն ևթ նոր փաստաթուղթը ցույց տվեց դատավորներին, դատախազին, դատապաշտպանին, ատենակալներին։ Հիշում եմ միայն, թե ինչպես սկսեցին վկային հարցեր տալ։ Երբ նախագահը մեղմորեն դիմեց նրան այն հարցով, թե հանգստացե՞լ է նա արդյոք, Կատերինա Իվանովնան թափով բացականչեց.

— Պատրաստ եմ, պատրա՛ստ։ Կատարելապես ի վիճակի եմ պատասխանելու ձեզ,— ավելացրեց նա, երևի դեռ սոսկալի վախենալով, որ այս կամ այն պատճառով չեն լսի իր վկայությունը։ Խնդրեցին, որ բացատրի ավելի մանրամասնորեն՝ ի՞նչ նամակ է դա, և ի՞նչ պայմաններում է ստացել։

— Հենց ռեբրագործության նախորդ օրը ստացա, իսկ նա գրել է դրանից էլ մի օր առաջ, գինետանը, ուրեմն իր ռեբրը գործելուց երկու օր առաջ, նայեցե՛ք, ինչ-որ հաշվեթղթի վրա է գրվել նամակը,— գոռաց նա շնչասպառ։— Նա այն ժամանակ

ատում էր ինձ, որովհետև ի՞նքը ստոր բան էր արել ու գնացել այդ արարածի ետևից... և մեկ էլ որովհետև այդ երեք հազար ռուբլին էր ինձ պարտք... Օ՜, իրեն անարգված էր զգում այդ երեք հազարի համար, հենց ի՛ր իսկ ստորության երեսից։ Այդ երեք հազարը ահա թե ինչպես եղավ. խնդրում եմ ձեզ, աղաչում եմ՝ լսեցեք ինձ։ Իր հորը սպանելուց երեք շաբաթ առաջ մի առավոտ նա եկավ ինձ մոտ։ Ես գիտեի, որ փող է պետք նրան, և գիտեի, թե ինչու։ այո, այո, հենց այս արարածին գայթակղեցնելու և հետը տանելու համար։ Գիտեի այն ժամանակ, որ արդեն դավաճանել է և ուզում է լքել ինձ. ես ի՞նքս տվեցի նրան այդ փողը, ի՞նքս առաջարկեցի՝ իբր թե քրոջս ուղարկելու համար, Մոսկվա։ Եվ երբ տալիս էի, նայեցի երեսին ու ասացի, որ կարող է ուզած ժամանակ ուղարկել, «թեկուզ և մի ամիս հետո»։ Ինչպե՞ս, ինչպե՞ս կարող էր չհասկանալ, որ ուղղակի ասում էի իր երեսին. «Քեզ փող է պետք, որ դավաճանես ինձ այդ արարածի հետ, դե ուրեմն ահա՛ քեզ այդ փողը, ի՞նքս եմ տալիս, վերցրո՛ւ, եթե այնքա՞ն անազնիվ ես, որ կարող ես վերցնել...»։ Ես ուզում էի նրա դիմակը պատռել, և ի՞նչ։ վերցրեց, վերցրե՞ց փողը և տարավ, ծախսեց այս արարածի հետ այնտեղ, մի գիշերվա մեջ... բայց նա հասկացավ, հասկացա՞վ, որ ես ամեն ինչ գիտեմ։ Հավատացնում եմ ձեզ, հասկացավ նաև, որ ես այդ փողը տալով փորձում եմ նրան պարզապես՝ արդյոք այնքա՞ն անազնիվ կլինի, որ վերցնի փողը ինձնից։ Նայում էի աչքերին, ինքն էլ իմ աչքերին էր նայում ու ամեն ինչ հասկանում էր, ամե՛ն ինչ հասկանում էր, և վերցրեց, վերցրե՞ց ու տարավ իմ փողը։

— Ճի՞շտ է, Կատյա,— բղավեց հանկարծ Միտյան,— աչքերիդ նայում և հասկանում էի, որ անպատվում ես ինձ, բայց վերցրի՛ փողը։ Արհամարհեցե՛ք ինձ նման սրիկային, արհամարհեցե՛ք բոլորդ, արժանի՛ եմ դրան։

— Մեղադրյա՛լ,— գոչեց նախագահը,— մի խոսք ևս, և կհրամայեմ դուրս հանել ձեզ այստեղից։

— Այդ փողը տանջում էր նրան,— շարունակեց Կատյան, ջղաձգորեն շտապելով,— Ուզում էր ետ տալ ինձ, ուզում էր, ճիշտ է, բայց այս արարածի՛ համար էլ փող էր պետք նրան։ Եվ ահա սպանե՞ց հորը, բայց այնուամենայնիվ փողը ետ չտվեց ինձ, այս արարածի հետ գնաց այդ գյուղը, ուր նրան ձերբակալեցին։ Այնտեղ նորի՞ց մխսեց այն փողն էլ, որ գողացել էր իր

սպանած հորից։ Իսկ հորն սպանելուց մի օր առաջ էր, որ ինձ գրեց այս նամակը, գրեց հարբած վիճակում, ես այն ժամանակ անմիջապես նկատեցի դա. զայրույթից գրեց, և իմանալո՞վ, հաստատ իմանալով, որ ես ոչ ոքի ցույց չեմ տա այս նամակը, եթե նույնիսկ սպանի իրոք։ Թե չէ՝ չէր գրի։ Գիտե՞ր, որ չեմ ուզենա վրեժ լուծել իրենից ու խորտակել իրեն։ Բայց կարդացեք, կարդացե՛ք ուշադիր, ավելի ուշադիր, խնդրում եմ, և կտեսնեք, որ նա ամեն ինչ նկարագրել է նամակի մեջ, ամե՛ն ինչ նախօրոք, թե ինչպե՛ս է սպանելու հորը, և որտե՛ղ է պահված նրա փողը։ Նայեցեք, բաց մի՛ թողեք աչքից, խնդրում եմ, այնտեղ մի նախադասություն կա. «Կսպանեմ, միայն թե Իվանը գնացած լինի»։ Ուրեմն արդեն նախօրոք մտածե՛լ է, թե ինչպես է սպանելու,— չարախնդորեն ու նենգաբար հուշում էր դատաբանին Կատերինա Իվանովնան։ Օ՜, պարզ երևում էր, որ նա ամենայն նրբությամբ խորացել էր այդ ճակատագրական նամակի մեջ, ուսումնասիրել էր ամեն մի մանրամասնություն։— Եթե հարբած չլիներ, չէր գրի ինձ, բայց նայեցեք, այստեղ ամեն ինչ նկարագրված է նախօրոք, ամե՛ն ինչ՝ կետ առ կետ, ինչպես սպանեց հետո, ամբո՛ղջ ծրագիրը։

Այդպես բացականչում էր նա գլուխը կորցրած և անշուշտ արհամարհելով բոլոր հետևանքներն իր համար, թեև, պարզ է, դեռ մի ամիս առաջ նախատեսում էր դրանք, որովհետև այն ժամանակ էլ գուցե, դողալով զայրույթից, մտմտում էր. «Չկարդա՞մ արդյոք այս նամակը դատարանում»։ Իսկ հիմա կարծես ուղղակի նետվեց գլխիվայր։ Հիշում եմ, քարտուղարը բարձրաձայն կարդաց նամակը, կարծեմ հենց անմիջապես, և դա ցնցող տպավորություն գործեց։ Դառնալով Միտյային, հարց տվեցին նրան՝ ընդունո՞ւմ է այդ նամակը։

— Ի՛մն է, ի՛մը,— բացականչեց Միտյան։— Հարբած չլինեի, չէի գրի... Շատ բանի համար իրար առում էինք, Կատյա, բայց երդվում եմ, երդվում, ես քեզ ատելո՞վ էլ սիրում էի, իսկ դու ինձ՝ ո՞չ։

Նա ընկավ իր աթոռին, հուսահատորեն գլխին տալով։ Դատախազն ու դատապաշտպանը սկսեցին խաչաձև հարցաքննել Կատերինա Իվանովնային, մանավանդ այն առումով, թե «ի՞նչը ձեզ քիչ առաջ մղեց թաքցնել այսպիսի փաստաթուղթը և բոլորովին այլ ոգով ու տրամադրությամբ վկայություն տալ»։

— Այո, այո, քիչ առաջ սուտ ասացի, ստում էի պատվի

ու խղճի դեմ, բայց ուզում էի փրկել նրան քիչ առաջ, որովհետև նա այնպե՞ս ատում էր ինձ, այնպե՞ս արհամարհում,— խելագարի նման բացականչեց Կատյան։— Օ՜, նա սոսկալի արհամարհում էր ինձ, միշտ արհամարհում էր, և գիտե՞ք, գիտե՞ք, արհամարհում էր հենց այն րոպեին, երբ ես նրա ոտքերին խոնարհվեցի այդ փողի համար։ Տեսա ես այդ բանը... Ես այդ րոպեին իսկույնևեթ զգացի դա, բայց երկար ժամանակ չէի հավատում ինքս ինձ։ Քանի՞ անգամ կարդացել եմ նրա աչքերում՝ «Համենայն դեպս դու ի՞նքդ եկար ինձ մոտ այն ժամանակ»։ Օ՜, նա չհասկացավ, բոլորովին չհասկացավ, թե ինչո՞ւ ես իր մոտ վազեցի այդ օրը, նա ընդունակ է միայն ստորությո՞ւն կասկածելու։ Իր չափո՞վ էր չափում, կարծում էր, որ բոլորն էլ այնպես են, ինչպես ինքը,— կատաղորեն կրճտացրեց Կատյան, արդեն բոլորովին մոլեգնած։— Իսկ ինձ հետ ամուսնանալ ուզեց, որովհետև ես ժառանգություն ստացա, մի՞ այն դրա համար ուզեց, դրա՞ համար։ Ես միշտ կասկածում էի՝ դրա՞ համար։ Օ՜, գազան է նա։ Միշտ էլ համոզված էր, թե ես իմ ամբողջ կյանքում դողալո՞ւ եմ նրա առաջ ամոթից, որ այդ օրը եկա իր մոտ, և թե ինքը կարող է հավիտյան արհամարհել ինձ դրա համար, ուրեմն և վերևի՞ց նայել ինձ. ահա՛ թե ինչու ուզեց ամուսնանալ ինձ հետ։ Այդպես է, լրի՞վ այդպես է։ Ես փորձեցի հաղթել նրան իմ սիրով, իմ անսահման սիրով, ուզում էի նույնիսկ նրա դավաճանությունը հանդուրժել, բայց նա ոչինչ, ոչինչ չհասկացավ։ Եվ մի՞թե նա կարող է որևէ բան հասկանալ։ Հրե՞շ է նա։ Այդ նամակը հաջորդ օրը միայն ստացա, երեկոյան, գինետնից բերեցին ինձ, իսկ դեռ առավոտյան, այդ նույն օրը առավոտյան ուզում էի ամե՞ն ինչ ներել նրան, ամե՛ն ինչ, նրա դավաճանությո՞ւնն անգամ։

Իհարկե, նախագահն ու դատախազը հանգստացնում էին նրան։ Համոզված եմ՝ գուցե նույնիսկ ամոթ էին զգում նրանք բոլորն էլ, որ այդպես օգտվում են նրա մոլեգնությունից և այդպիսի խոստովանություններ են լսում։ Հիշում եմ՝ լսեցի, թե ինչպես նրանք ասում էին Կատյային. «Հասկանում ենք, թե որքան ծանր է ձեզ համար, հավատացեք, մենք կարող ենք զգալ» և այլն, և այլն, բայց, այնուամենայնիվ, հիստերիկ ցնորամտության մեջ ընկած կնոջ բերանից ցուցմունքներ քաղեցին։ Վերջապես Կատյան, այն արտակարգ հստակությամբ, որ այդպիսի լարված վիճակում անգամ երևում է հաճախ, թեև մի վայրկյան,

նկարագրեց, թե ինչպես Իվան Ֆյոդորովիչը ամբողջ այս երկու ամսվա ընթացքում համարյա խելքն էր կորցնում, որ փրկի «հրեշին ու մարդասպանին», այսինքն իր եղբորը։

— Տանջո՞ւմ էր իրեն,— բացականչեց Կատյան,— անընդհատ ուզում էր փոքրացնել իր եղբոր հանցանքը, խոստովանելով ինձ, որ ինքն էլ չէր սիրում հորը և գուցե ինքն էլ նրա մահն էր ցանկանում։ Ծ՞, ինչ խորո՞ւնկ խիղճ է, խորո՞ւնկ։ Տանջեց իրեն իր խղճով։ Ամեն ինչ հայտնում էր ինձ, ամե՞ն ինչ, գալիս էր մոտս և ամեն օր խոսում էր ինձ հետ՝ որպես իր միակ բարեկամի։ Ես պատիվն ունեմ նրա միակ բարեկամը լինելու,— բացականչեց նա հանկարծ, ասես մի տեսակ մարտահրավեր կարդալով, և աչքերը փայլատակեցին։— Երկու անգամ գնաց Սմերդյակովի մոտ։ Մի օր եկավ ու ասաց ինձ՝ եթե եղբայրս չէ սպանողը, այլ Սմերդյակովը (որովհետև այստեղ բոլորն էլ տարածեցին այն առասպելը, թե Սմերդյակովն է սպանել), ուրեմն գուցե ես էլ մեղավոր եմ, որովհետև Սմերդյակովը գիտեր, որ ես չեմ սիրում հորս, և գուցե մտածել է, թե հորս մահն եմ ցանկանում։ Այն ժամանակ ես հանեցի այդ նամակը և ցույց տվեցի, և նա արդեն լրիվ համոզվեց, որ եղբայրն է սպանել և արդեն ուղղակի շանթահար եղավ։ Չէ՞ր կարողանում հանդուրժել, որ իր հարազատ եղբայրը հայրասպան է։ Դեռ մի շաբաթ առաջ ես տեսա, որ նա հիվանդանում է դրա պատճառով։ Վերջին օրերս նստում էր ինձ մոտ ու զառանցում։ Տեսնում էի, որ խելագարվում է։ Քայլում ու զառանցում էր, մարդիկ փողոցներում են տեսել այդ բանը։ Մոսկվայից եկած բժիշկն իմ խնդրանքով քննեց նրան երկու օր առաջ և ասաց ինձ, որ տենդախտ է սպառնում նրան՝ սրա՛ երեսից ամբողջ, այս հրեշի՛ երեսից։ Իսկ երեկ իմացավ, որ Սմերդյակովը մեռել է, և դա այնպե՞ս ցնցեց նրան, որ խելագարվեց... և ամբողջը այս հրեշի՛ երեսից, ամբողջը այն պատճառով, որ փրկի՛ հրեշին։

Ծ՞, իհարկե, կյանքում լոկ մի անգամ կարելի է այսպես խոսել ու այսպես խոստովանել՝ մահից մի բոպե առաջ, օրինակ, կառափնարան բարձրանալու պահին։ Բայց Կատյան հենց իր տարերքի մեջ էր, և այդպիսի բոպե էր նրա համար։ Դա նույն այն խելահեղ Կատյան էր, որ մի ժամանակ վազել էր երիտասարդ անառակի մոտ՝ իր հորը փրկելու սիրույն. նույն այն Կատյան, որ քիչ առաջ, հպարտ ու անարատ աղջիկ, զոհաբերեց իրեն և իր օրիորդական ամոթխածությունը ամբողջ այդ հասարակության առջև՝ պատմելով «Միտյայի ազնիվ արարքի» մասին, պարզապես մի քիչ մեղմացնելու համար այն ճակատագիրը, որ սպասում էր նրան։ Եվ ահա հիմա ճիշտ նույնպես զոհաբերեց իրեն նորից, բայց արդեն մյուսի համար, և գուցե հիմա միայն, ա՛յս բոպեին միայն զգաց ու գիտակցեց առաջին անգամ, թե որքա՞ն թանկ է այդ մյուս մարդը իր սրտին։ Կատյան զոհաբերեց իրեն՝ վախենալով նրա ճակատագրի համար, հանկարծ երևակայելով, որ նա իրեն կործանեց իր այն ցուցմունքով, թե ինքն է սպանել, ոչ թե եղբայրը, Կատյան զոհաբերեց իրեն՝ փրկելո՛ւ համար նրան, նրա համբավը, նրա անունն ու պատիվը։ Եվ սակայն մի ահավոր կասկած մեջտեղ եկավ։ Ո՞ւմ էր նա արդյոք Միտյայի մասին, երբ նկարագրում էր իր նախկին հարաբերությունները նրա հետ. ահա խնդիրը։ Ոչ, ոչ, դիտավորյալ զրպարտություն չարեց նա, երբ գոռաց, թե Միտյան արհամարհում էր իրեն այն բանի համար, որ ինքը խոնարհվել է նրա ոտքերին։ Կատյան ինքը հավատում էր դրան, խորապես համոզված էր, գուցե այդ խոնարհվելու պահից էլ համոզված էր, որ պարզապես Միտյան, դեռ այն ժամանակ իրեն պաշտող Միտյան ծիծաղում էր իր վրա և արհամարհում իրեն։ Եվ միայն հպարտությունից էր, խոցված հպարտությունից, որ Կատյան ինքը այն ժամանակ կապվել էր նրա հետ սիրո զգացումով, հիստերիկ ու չլատված սիրո զգացումով, և այդ սիրը նման էր ոչ թե սիրո, այլ վրիժառության։ Ծ՞, գուցե այդ չլատված սիրը պիտի վերաճեր իսկական սիրո, գուցե Կատյան հենց այդ էր միայն ցանկանում և ուրիշ ոչինչ, բայց Միտյան իր դավաճանությամբ վիրավորեց նրան մինչև հոգու խորքը, և հոգին չներեց։ Իսկ վրիժառության պահը վրա հասավ անակնկալորեն, և այն ամբողջը, որ այնքա՞ն երկար ժամանակ ու ցավագին կերպով կուտակվել էր վիրավորված կնոջ կրծքում, դուրս ժայթքեց միանգամից, և դարձյալ անակնկալորեն։ Նա մատնեց Միտյային, բայց և իրե՞ն էլ մատնեց։ Եվ բնական է, հենց որ վերջացրեց իր սրտի պոռթկումը, լարվածությունը կբտրվեց միանգամից, և ամոթը ճնշեց նրան։ Նորից սկսեց հիստերիկան, հեծկլտալով ու ճչալով ընկավ նա հատակին։ Նրան վերցրին ու դուրս տարան։ Այն բոպեին, երբ նրան դուրս էին տանում, Գրուշենկան վեր թռավ իր տեղից ու վայնասունով նետվեց դեպի Միտյան, այնպես որ ժամանակ էլ չունեցան նա պահելու։

— Մի՞տյա,— ոռնոցեցեց նա,— կործանե՞ց քեզ քո օձը։

Ա՛յ նա ձեզ ցույց տվեց իր ի՞նչ լինելը,— գոռաց նա դատավորներին, զայրույթից դողալով։ Նախագահը ձեռքով մի նշան արեց, և նրան բռնեցին ու սկսեցին դուրս հանել դահլիճից։ Չէր ենթարկվում նա, մաքառում էր ու ետ նետվում դեպի Միտյան։ Միտյան մի աղաղակ արձակեց ու նույնպես առաջ նետվեց։ Նրան զսպեցին։

Այո, կարծում եմ, որ գոհ մնացին մեր հանդիսատես տիկինները. հարուստ տեսարան էր։ Հետո հիշում եմ՝ երևաց Մոսկվայից եկած բժիշկը։ Կարծեմ դեռ մինչ այդ էլ նախագահն ուղարկել էր դատական կատարածուին, որ կարգադրություն անի՝ Իվան Ֆյոդորովիչին բժշկական օգնություն ցույց տալու։ Բժիշկը զեկուցեց դատարանին, որ հիվանդը տենդախտի սաստիկ վտանգավոր նոպայի մեջ է գտնվում, և որ անմիջապես պետք է տանել նրան։ Պատասխանելով դատախազի և դատապաշտպանի հարցումներին, նա հաստատեց, որ հիվանդն անձամբ եկել էր իր մոտ երկու օր առաջ և ինքը այն ժամանակ նախազգուշացրել էր նրան, թե շուտով տենդախտի նոպա է ունենալու, բայց նա չէր ցանկացել բուժվել։ «Իսկ նա, հաստատապես, մտային առողջ վիճակի մեջ չէր, ինքը անձամբ խոստովանեց ինձ, որ արթուն ժամանակ ցնորքներ է ունենում, փողոցում հանդիպում է զանազան անձերի, որոնք մահացել են արդեն, և որ ամեն իրիկուն նրա մոտ հյուր է գալիս սատանան»,— եզրակացրեց նա։ Իր ցուցմունքը տալուց հետո, նշանավոր բժիշկը հեռացավ։ Կատերինա Իվանովնայի ներկայացրած նամակն ավելացվեց իրեղեն ապացույցներին։ Խորհրդակցելուց հետո դատարանը որոշեց շարունակել դատաքննությունը, իսկ երկու անակնկալ ցուցմունքները (Կատերինա Իվանովնայի և Իվան Ֆյոդորովիչի) մտցնել արձանագրության մեջ։

Բայց այլևս չեմ նկարագրելու դատաքննության հետագա ընթացքը։ Եվ մնացյալ վկաների ցուցմունքներն էլ արդեն նախկինների կրկնությունն էին ու հաստատումը, թեև բոլորն էլ իրենց բնորոշ յուրահատկություններն ունեին։ Բայց կրկնում եմ, ամեն ինչ ի մի է բերված դատախազի ճառում, որին և անցնում եմ հիմա։ Բոլորը հուզագրգիռ վիճակում էին, բոլորը էլեկտրականացել էին վերջին աղետից և այրող անհամբերությամբ սպասում էին միայն շուտափույթ վախճանին՝ կողմերի ճառերին ու դատավճռին։ Ֆետյուկովիչը հայտնապես ցնցվել էր Կատերինա

Իվանովնայի ցուցմունքներից։ Սակայն հաղթական էր զգում զատախազը։ Երբ դատաքննությունը վերջացավ, հայտարարվեց նիստի ընդմիջում, որ համարյա մեկ ժամ տևեց։ Վերջապես նախագահը բաց արեց դատավեճը։ Կարծեմ երեկոյան ուղիղ ժամը ութն էր, երբ մեր դատախազ Իպոլիտ Կիրիլովիչը իր մեղադրական ճառն սկսեց։

VI

ԴԱՏԱԽԱԶԻ ՃԱՌԸ։ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իպոլիտ Կիրիլովիչը իր մեղադրական ճառն սկսեց ոտից գլուխ դողալով չղային սրսփուքով, ճակատն ու քունքերը սառն, հիվանդագին քրտինք պատած, փոխնիփոխ ցուրտ ու տապ զգալով ամբողջ մարմնում, ինքն էր այդպես պատմում հետո։ Այդ ճառը իր chef d' oeuvre[1]-ն էր համարում, իր ամբողջ կյանքի chef d' oeuvre-ն, իր կարապի երգը։ Ճիշտ է, ինը ամիս հետո նա մեռավ չարորակ թոքախտից, այնպես որ, ինչպես պարզվեց, իսկապես իրավունք ուներ իրեն համեմատելու իր վերջին երգը երգող կարապի հետ, եթե վաղօրոք նախազգար իր վախճանը։ Այդ ճառի մեջ իր ամբողջ սիրտն էր դրել ու իր ունեցած ամբողջ խելքը, և անսպասելիորեն ապացուցեց, որ իր մեջ թաքնված էին թե՛ քաղաքացիական զգացմունքը, թե՛ «անիծյալ» հարցերը, գոնե այն չափով, որքան մեր խեղճ Իպոլիտ Կիրիլովիչը կարող էր բովանդակել դրանք իր մեջ։ Այն, ինչ հատկապես գրավիչ դարձրեց նրա ճառը, անկեղծությունն էր. նա անկեղծորեն հավատում էր, որ մեղադրյալը հանցավոր է։ Ոչ թե պատվերով, ոչ միայն պաշտոնի բերումով էր մեղադրում նրան. և «հատուցման» կոչ անելով՝ իսկապես տոչորվում էր «հասարակությունը փրկելու» ցանկությամբ։ Նույնիսկ մեր տիկինները, որոնք վերջ ի վերջո թշնամաբար էին տրամադրված Իպոլիտ Կիրիլովիչի հանդեպ, ընդունեցին, որ արտակարգ տպավորություն էին կրել նրա ճառից։ Նա սկսեց խոսել բեկբեկուն, սայթաքող ձայնով, բայց հետո շատ շուտով ձայնը ամրացավ ու հնչեց ամբողջ դահլիճով մեկ, և այդպես՝ մինչև ճառի վերջը։ Բայց հենց որ վերջացրեց, համարյա ուշագնաց եղավ։

1 Գլուխգործոց (ֆրանս.)։

«Պարոնայք երդվյալ ատենակալներ,— սկսեց մեղադրողը,— ներկա գործը դղրդաց ամբողջ Ռուսաստանով մեկ։ Բայց կարծես թե ի՞նչ կա զարմանալու, ի՞նչ մի հասուկ սարսափելի բան կա սրա մեջ։ Մե՛զ համար, մե՛զ համար հասկանալու։ Չէ՞ որ մենք այդ բոլորին այնքա՞ն սովոր մարդիկ ենք։ Հենց այն է սարսափելին, որ այսպիսի մռայլ գործերը համարյա դադարել են սարսափելի լինել մեզ համար։ Ահա՛ թե ինչից պետք է սարսափել՝ մեր սովոր լինելուց, և ոչ թե այս կամ այն անհատի եզակի չարագործությունից։ Իսկ որո՞նք են պատճառները մեր անտարբերության, մեր հազիվ զարդ վերաբերմունքի, որ ցույց ենք տալիս այսպիսի գործերի նկատմամբ, մեր ժամանակի այսպիսի նշանակների, որոնք անխախանձելի ապագա են գուշակում մեզ համար։ Մեր ցնո՞ղն է արդյոք, արդյոք մարի՞ ու երևակայության վաղաժամ հյուծվածությո՞ւնը մեր հասարակության մեջ, որ այնքա՞ն երիտասարդ է տակավին, բայց այնքա՞ն ապաժամոթն զառամել է արդեն։ Արդյոք ա՞յն, որ մեր բարոյական սկզբունքները խախտվել են հիմքն ի վեր, կամ վերջապես արդյոք ա՞յն, որ մենք զուցե նույնիսկ բոլորովին չունենք այդ բարոյական սկզբունքները։ Չեմ լուծում այս հարցերը, բայց դրանք տանջալի են այնուամենայնիվ, և ամեն մի քաղաքացի ոչ թե միայն պետք է տառապի, այլև պարտավոր է տառապել դրանցով։ Մեր սկսնակ, մեր տոկամին երկչոտ մամուլն այնուամենայնիվ որոշ ծառայություններ մատուցել է արդեն հասարակությանը, որովհետև, առանց նրան, մենք երբեք էլ չէինք իմանա, քիչ թե շատ լիությամբ, անզուսպ ապերասանության ու բարոյական անկման այն սարսափների մասին, որ նա անընդհատ հաղորդում է իր էջերում՝ ոչ միայն նրանց համար, ովքեր հաճախում են ներկա իշխանության չնորհած այս նոր դռնքաց դասարանի դահլիճները, այլև բոլորի համար։ Եվ ի՞նչ ենք կարդում մենք համարյա ամեն օր։ Ծ՛, ամեն րոպե պատահող այնպիսի՛ բաներ, որոնց առաջ գալիանում է նույնիսկ ներկա գործը և գրեթե սովորական մի բան է թվում արդեն։ Բայց ամենակարևորն այն է, որ մեր ռուսական, մեր ազգային բարքերի քրեական գործերը հենց վկայում են համընդհանուր մի բանի մասին, ընդհանուր մի դժբախտության, որ մեր կյանքի մասն է կազմել, և որի դեմ, որպես համընդհանուր չարիքի, դժվար է արդեն պայքարել։ Ահա այսինչ վայրում մի երիտասարդ, փայլուն ապա, բարձր

հասարակության մարդ, որ դեռ հազիվ է սկսում իր կյանքն ու ապագան, հանկարծ ստոր կերպով, լուռեմունջ, առանց որևէ խզմի խայթի սպանում է մի մանր պաշտոնյայի, որ մասամբ իր բարեբարն է եղել մի ժամանակ, սպանում է նաև նրա սպասուհուն, որպեսզի զողանա իր պարտատերհակը և միաժամանակ պաշտոնյայի մնացյալ դրամը, ասելով՝ «պետք կգա իմ բարձրաշխարհիկ հաճույքների և իմ ապագայի համար»։ Սպանելով երանց, բարձր է դնում երկու մեռյալների գլխի տակ և հեռանում է։ Մի ուրիշ տեղ՝ մի երիտասարդ հերոս, որ շքախաչերով է զարդարված իր քաջության համար, ճանապարհի վրա սպանում է իր առաջնորդի ու բարերարի մորը, ավազակի նման, և իր ընկերներին հանդգնելու համար վստահացնում է, որ «այդ կինը իրեն սիրում է հարազատ որդու պես, դրա համար էլ կհեռանի իր խորհուրդներին և նախազգուշական միջոցներ ձեռք չի առնի»։ Նա ճիվաղ է անշուշտ, բայց ես այժմ, մեր ժամանակում, չեմ համարձակվի արդեն ասել, թե եղածի մի ճիվաղ է նա։ Մի ուրիշը չի էլ սպանում, բայց ճիշտ նրա պես է մտածում և զրում, իր հոգում հենց նույնպես մենանգնիվ է, ինչպես նա։ Գուցե լռելյան, իր խղճի հետ մենամենակ, հարցնում է ինքնիրեն. «Բայց ի՞նչ է պատիվ ասածդ և արդյոք նախապաշարմունք չէ՞ արյունից սոսկալը»։ Թերևս մարդիկ գտան իմ երեսին և ասեն, թե ես հիվանդագին, հիստերիկ մարդ եմ, հրեշավոր դրդարարության եմ անում, զառանցում եմ, չափազանցում։ Թո՛ղ ասեն, թո՛ղ ասեն, և ասվա՞ծ իմ, առաջինը ես ի՞նքս ուրախ կդայի, որքա՞ն ուրախ, եթե այդպես լիներ։ Ծ՛, մի՛ հավատաք ինձ, հիվանդ համարեցեք ինձ, բայց այնուամենայնիվ հիշեցե՛ք իմ խոսքերը. եթե իմ ասածի թեկուզ մի ասանելորդը, մի քանելորդը միայն ճշմարիտ է, չէ՞ որ ա՛յդ դեպքում էլ սարսափելի է նույնիսկ։ Նայեցեք, պարոնայք, նայեցե՛ք, թե ինչպես են անձնասան լինում մեր երիտասարդները, ո՛, առանց ամենազայրի չափազանց իսկ հավելյան հարցեր ասելու, թե ի՞նչ է լինելու այնուհետև, առանց նշույլն անգամ ունենալու այդ հարցերի, կարծես թե նրանց էության մեջ վաղուց խոշ է քաշվել այն խնդրի դեմ, որ վերաբերում է մեր հոգուն և գիտակցությունից հետո մեզ ապասող բոլոր բաներին, խոշ է քաշվել, թաղվել ու ծածկվել ավազով։ Նայեցեք վերջապես մեր անտարբերությանը, մեր հեշտասիրությունը։ Ինչպես Պավլովիչը, դժբախտ գոհը ուրի գատական գոր-

ծի, գրեթե անմեղ մի մանուկ է այդ հեշտամոլներից շատերի առաջ։ Իսկ մենք բոլորս ճանաչում էինք նրան, չէ՞, «նա մեր մեջ էր ապրում»... Այո՞, գուցե մի օր կզբաղվեն ռուսական հանճարագործության հոգեբանությամբ՝ թե՛ մեր, թե՛ եվրոպական առաջնակարգ մտքերը, որովհետև նյութը արժանի է դրան։ Բայց այդ ուսումնասիրությունը կկատարվի երբևիցե հետագայում, երբ ազատ ժամանակ լինի, և երբ այս մեր ներկա օրերի ամբողջ ողբերգական խառնիճաղանջը ավելի հեռավոր մի բան դառնա, այնպես որ արդեն հնարավոր լինի ավելի խելացի և ավելի անկողմնակալ կերպով քննել այս ամբողջը, քան կարող են անել, օրինակ, ինձ նման մարդիկ։ Իսկ մենք այժմ կա՛մ սարսափում ենք, կա՛մ էլ ձևացնում, թե սարսափում ենք, իսկ իրականում, ընդհակառակը, ըմբոշխնում ենք տեսարանը՝ որպես արտառոց զգացողությունների սիրահարներ, զգացողությունների, որոնք աշխուժություն են տալիս մեր ցինիկորեն ծույլ դատարկապորտությանը. և կամ, վերջապես, փոքր երեխաների նման մեր ձեռքերը թափ տալիս, վանում ենք սոսկալի ուրվականները և թաքցնում մեր գլուխը բարձի տակ, մինչև որ անցնի-գնա սոսկալի տեսիլքը, որպեսզի հետո զվարճության ու խաղերի մեջ իսկույն մոռանանք ամեն ինչ։ Բայց մե՛նք էլ պետք է երբևիցե մեր կյանքն սկսենք զգաստ ու խոհուն կերպով, մե՛նք էլ պետք է մեզ վրա, որպես հասարակության, մի հայացք նետենք, մե՛նք էլ պետք է գտնե մի որևէ բան իմաստավորենք մեր հասարակական գործում կամ թեկուզ միայն սկսենք այդ իմաստավորումը։ Նախորդ դարաշրջանի մի մեծ գրող, իր մեծագույն երկի ավարտական մասում Ռուսաստանը մարմնավորելով որպես ռուսական քաջարի մի տրոյկա, որ քառատրոփ սլանում է դեպի անհայտ մի նպատակ, բացականչում է. «Ա՜խ տրոյկա, թռչնաթև՝ տրոյկա, ո՞վ հնարեց քեզ», և ավելացնում է հպարտ զմայլանքով, թե բոլոր ժողովուրդները հարգալից մի կողմ են քաշվում ու ճանապարհ տալիս գլխապատառ սլացող տրոյկային։ Դե՛հ, պարոնայք, ասենք թե այդպես է, այդպես, մի կողմ են քաշվում, հարգալից կամ ոչ, բայց իմ մեղավոր կարծիքով՝ հանճարեղ արվեստագետն իր երկը այդպես է ավարտել կա՛մ երեխայորեն անմեղ լավատեսության մի նոպայում, կա՛մ էլ պարզապես վախենալով այն ժամանակվա գրաքննությունից։ Որովհետև, եթե նրա տրոյկային լծենք միայն նրա իսկ հերոսներին՝ Սոբակևիչներին, Նոզդրևներին ու Չիչիկովներին,

ապա ում էլ կառապան կարգեն, ոչ մի խելամիտ բանի չենք հասնի այդպիսի ձիերով։ Իսկ նրանք դեռ հին ձիերն են միայն, որոնք շա՜տ հեռու են մնում այսօրվանցից, մերոնք հիմա ավելի թունդ են...»։

Այստեղ Իպոլիտ Կիրիլովիչի ճառն ընդհատվեց ծափերով։ Ռուսական տրոյկայի այդպիսի ազատամիտ պատկերումը դուրեկավ։ Ճիշտ է, միայն երկու-երեք տեղից ծափեր լսվեցին, այնպես որ նախագահը հարկ էլ չհամարեց հասարակությանը դիմել «դահլիճը մաքրելու» սպառնալիքով, այլ պարզապես մի մել «դահլիճը մաքրելու» սպառնալիքով, այլ պարզապես մի խիստ հայացք նետեց ծափ տվողների կողմը։ Բայց Իպոլիտ Կիրիլովիչը քաջալերվեց. մինչև հիմա երբեք չէին ծափահարել նրան։ Մարդուն այսքա՜ն տարի չէին ուզում լսել, և ահա հանկարծ հնարավորություն՝ ամբողջ Ռուսաստանի առաջ իր խոսքն ասելու։

«Իրոք,— շարունակեց նա,— ի՞նչ է այս Կարամազովների ընտանիքը, որ հանկարծ այսպիսի տխուր հռչակի արժանացավ նույնիսկ ամբողջ Ռուսաստանով մեկ։ Գուցե ես խիստ չափազանցում եմ, բայց ինձ թվում է, որ այս ընտանեկան պատկերի մեջ կարծես թե երևում են մեր ժամանակակից մտավորական դասի մի քանի ընդհանուր հիմնական գծերը. օ՜, ոչ թե բոլոր գծերը, և այն էլ լոկ մանրադիտակային ձևով են դրանք երևացել, «ինչպես արևը ջրի փոքրիկ կաթիլում», բայց համենայն դեպս արտացոլվել է մի բան, հայտնվել է մի բան։ Մտաբերեցեք այն շարաբախտ, ապերասան ու անառակ ծերունուն, այն «ընտանիքի հորը», որ այսքան տխուր վախճան ունեցավ։ Մենակով ապնվական, որ իր կյանքի ասպարեզն սկսել է որպես մի խեղճ ձրիակեր, հետո անակնկալ ու անսպասելի ամուսնության շնորհիվ մի փոքրիկ դրամագլուխ է ձեռք բերել որպես օժիտ, սկզբում եղել է մի մանր խաբեբա և շողոքորթ խեղկատակ, ունենալով բավական ուժեղ, թեև սաղմնային վիճակում գտնվող մտային կարողություններ, և ամենից առաջ՝ վաշխառու։ Տարիների ընթացքում, այսինքն իր փոքրիկ դրամագլխի աճելու հետ, նա գոտեպնդվում է։ Նվաստացումն ու քծնանքը չքանում են, մնում է միայն հեգնասեր ու չարամիտ ցինիկն ու հեշտամոլը։ Հոգեկան կողմի վրա լրիվ խաչ է քաշվում, իսկ կյանքի ծարավը չափազանց մեծ է նրա մեջ։ Հետևանքը լինում է այն, որ նա կյանքի մեջ ոչինչ չի տեսնում, բացի հեշտասիրական հաճույքներից, և իր երեխաներին էլ այդպես է սովորեց-

նում։ Հոգեկան ոչ մի պարտականություն չի զգում որպես հայր։ Սիծաղում է այդ պարտականությունների վրա, թաղնում է, որ իր փոքրիկ երեխաները դաստիարակվեն բակում, և ուրախանում է, երբ նրանց տանում են ուրիշ տեղ, իրենից հեռու։ Նույնիսկ բոլորովին մոռանում է նրանց։ Ներունու ամբողջ բարոյական սկզբունքն է՝ après moi le déluge[1]։ Ամեն ինչ, որ հակառակ է «քաղաքացի» հասկացության. լիակատար, նույնիսկ թշնամական մեկուսացում հասարակությունից. «Թեկուզ ամբողջ աշխարհը վառվի կրակի մեջ, միայն թե ես ինձ լավ զգամ»։ Եվ նա իրեն լավ է զգում, շատ գոհ է, տենչում է դեռ քսան-երեսուն տարի էլ ապրել այդպես։ Խաբում է իր հարազատ որդուն, և նրա իսկ փողերով, նրա մորից մնացած ժառանգությամբ, որ չի ուզում տալ նրան, փորձում է խլել նրա սիրուհուն, խլել իր սեփական որդուց։ Ո՞չ, ես չեմ ուզում մեղադրյալի պաշտպանությունը զիջել մեծատաղանդ դատապաշտպանին, որ ժամանել է Պետերբուրգից։ Ես ինքս էլ կասեմ ճշմարտությունը, ես ինքս էլ հասկանում եմ այն գունդ-գունդ դայրույթը, որ նա կուտակել է իր որդու սրտում։

Բայց բավական է, բավական է այդ եղերաբախտ ծերունու մասին, նա ստացել է իր հատուցումը։ Հիշենք սակայն, որ նա հայր էր, և ժամանակակից հայրերից մեկը։ Արդյոք հասարակությանը վիրավորա՞նք հասցրած կլինեմ, եթե ասեմ, որ նույնիսկ բազմաթի՞վ ժամանակակից հայրերից մեկն էր նա։ Ավա՜ղ, արդի հայրերից շատ-շատերը պարզապես այնքան ցինիկորեն չեն արտահայտվում, որքան այս մեկը, որովհետև ավելի լավ են դաստիարակված, ավելի են կրթված, սակայն ըստ էության՝ համարյա նույն փիլիսոփայությունն ունեն, ինչ որ նա ուներ։ Բայց ասենք թե ես հոռետես եմ, թող այդպես լինի։ Մենք արդեն պայմանավորվեցինք, որ դուք ներում եք ինձ։ Համաձայնվենք նախօրոք. դուք մի՛ հավատաք ինձ, մի՛ հավատաք, ես պիտի խոսեմ, իսկ դուք մի՛ հավատաք։ Բայց համենայն դեպս թույլ տվեք ինձ արտահայտվել, համենայն դեպս որոշ բաներ հիշեցեք իմ խոսքերից։

Ահա, սակայն, զավակներն այդ ծերունու, այդ ընտանիքի հոր. մեկը գտնվում է մեր առաջ՝ մեղադրյալի աթոռին, մեր ամբողջ խոսքը նրա մասին է լինելու հետագայում, մյուս երկուսի մասին խոսեմ լոկ հարևանցիորեն։ Այդ երկուսից մեկը, ավագ եղբայրը, փայլուն կրթություն ստացած ժամանակակից երիտասարդներից է, բավական ուժեղ խելքի տեր, որ սակայն ոչ մի բանի չի հավատում արդեն, կյանքում արդեն շատ բան, շատ շատ բան մերժել է ու վրան խաչ քաշել, ճիշտ ու ճիշտ ինչպես իր հայրը։ Մենք բոլորս էլ լսել ենք նրան, նա մեր հասարակության մեջ սիրալիր ընդունելություն էր գտել։ Չէր թաքցնում իր կարծիքները նա, մինչև իսկ հակառակն էր անում, ճիշտ հակառակը, և դա ինձ այժմ համարձակություն է տալիս փոքր-ինչ բացահայտորեն խոսելու նրա մասին՝ անշուշտ ոչ թե իբրև մասնավոր անձի, այլ լոկ իբրև կարամազովների ընտանիքի անդամ։ Երեկ այստեղ, քաղաքի ծայրամասում, անձնասպան եղավ մի հիվանդ մարդ, մի ցավագար ապուշ, որ սերտորեն առընչված է սույն գործին, Ֆյոդոր Պավլովիչի նախկին ծառան և գուցե նաև նրա հիստերիկ արցունքոտ ապօրինի զավակը՝ Սմերդյակովը։ Նա հիստերիկ արցունքներով պատմում էր ինձ նախնական քննության ժամանակ, թե ինչպես այս երիտասարդ կարամազովը՝ Իվան Ֆյոդորովիչը, ահաբեկել է նրան իր հոգեկան ապերասանությամբ։ «Նրա ասելով,— պատմում էր ինձ Սմերդյակովը,— ամեն ինչ, որ կա աշխարհում, թույլատրելի է, և սրանից հետո ոչ մի բան չպետք է արգելվի. ահա թե ինչ էր նա սովորեցնում ինձ անընդհատ։ Ինձ թվում է, ցավագարը վերջնականապես խելագարվել է այս տեսության հետևանքով, որ սովորեցրել են նրան, թեև, իհարկե, նրա մտային խանգարման վրա ազդել են նաև ընկնավորությունը և նրանց տանը պայթած այս ամբողջ ահավոր աղետը։ Բայց այդ ցավագարը մի շատ ու շատ հետաքրքրական դիտողություն արեց հարևանցիորեն, մի դիտողություն, որ պատիվ կբերեր նույնիսկ նրանից ավելի խելացի մեկին, և այդ պատճառով էլ խոսում եմ դրա մասին։ «Եթե Ֆյոդոր Պավլովիչի որդիներից կա մեկը,— ասաց նա ինձ,— որ բնավորությամբ ամենից ավելի նման է հորը, հենց Իվան Ֆյոդորովիչն է»։ Այս դիտողության վրա ես ընդհատում եմ սկսած բնութագրումը, գտնելով, որ անհրաժեշտություն կլինի շարունակելը։ Օ՜, ես չեմ ուզում հետագա եզրակացություններ հանել և, ագռավի նման կռկռալով, միայն կործանում գուշակել երիտասարդ մարդու ճակատագրի մեջ։ Դեռ այսօր, այստեղ, այս դահլիճում մենք տեսանք, որ նրա երիտասարդ սրտում դեռ ապրում է ճշմարտության անմիջական ուժը, նրա մեջ ընտանեկան կապերի զգացումը չի խա-

[1] Ինձնից հետո՝ ջրհեղեղ (Ֆրանս.)։

փանված բարոյական ցինիզմով ու անհավատությամբ, որոնք ավելի ժառանգաբար են ձեռք բերված, քան թե մտքի ճշմարիտ տառապանքով։

Անցնենք մյուս որդուն. օ՜, նա դեռ պատանի է, բարեպաշտ ու խոնարհ՝ ի հակադրություն իր եղբոր մռայլ ու եղծանող աշխարհայացքի, ձգտում է հարել, այսպես ասած, «ժողովրդական հիմունքներին», կամ էլ այն բանին, որ մեր խորհող մտավորականության որոշ տեսաբան շրջանակներում կոչում են այդ դժվարիմաց հորջորջումով։ Եվ ի՞նչ. նա հարեց վանքին, և քիչ էր մնացել, որ ինքն էլ վանական դառնար։ Ինձ թվում է, նրա մեջ մի տեսակ անգիտակցորեն, և այսքան կանուխ, արտահայտություն է գտել այն երկչոտ հուսահատությունը, որով հիմա այնքա՜ն շատ մարդիկ, վախենալով մեր խեղճ հասարակության մեջ տիրող ցինիզմից ու անառակությունից, և ամբողջ շարիքը սխալմամբ վերագրելով եվրոպական լուսավորության, նեռվում են դեպի «հարազատ հողը», ինչպես ասում են նրանք. ընկնում են, այսպես ասած, մայրական գիրկը հարազատ երկրի, ուրվականներից վախեցած երեխաների նման, և տենչում են գոնե միայն հանգիստ քնել ուժասպառ մոր շորացած կրծքի վրա, նույնիսկ քնած անցկացնել ամբողջ կյանքը, միայն թե չտեսնեն իրենց վախեցնող սարսափները։ Ես իմ կողմից ամենայն բարիք եմ ցանկանում առաքինի ու շնորհառատ պատանուն, ցանկանում եմ, որ հետագայում նրա պատանեկան բարեմտությունը և ժողովրդական հիմունքների նկատմամբ հակումը չվերածվեն, ինչպես պատահում է հաճախ, բարոյական կողմից՝ մռայլ միստիցիզմի, իսկ քաղաքական կողմից՝ բթամիտ շովինիզմի, երկու հատկություններ, որոնք գուցե ավելի մեծ չարիք են սպառնում ազգին, քան նույնիսկ վաղահաս եղծանումը՝ սխալ հասկացված ու ձրիաբար ձեռք բերված եվրոպական լուսավորության հետևանքով, մի բան, որով տառապում է նրա ավագ եղբայրը»։

Շովինիզմի և միստիցիզմի համար նորից երկու-երեք ծափ լսվեց։ Դե իհարկե, Իպոլիտ Կիրիլովիչը տարվել էր իր ճարտասանությամբ, և այդ ամբողջը շատ էլ կապ չուներ բուն գործի հետ, էլ չխոսելով այն մասին, որ բավական տարտամ բան դուրս եկավ. բայց դե հյուծախտավոր ու մաղձոտած մարդը չափից ավելի էր ցանկանում գեթ մի անգամ իր կյանքում արտահայտել իր մտածածը։ Հետագայում մեզ մոտ ասում էին, որ

Իվան Ֆյոդորովիչին բնութագրելիս նա առաջնորդվում էր նույնիսկ աննրբանկատ մի զգացումով, որովհետև Իվանը մեկ կամ երկու անգամ հրապարակավ պապանձեցրել էր նրան վեճի ժամանակ, և Իպոլիտ Կիրիլովիչը, հիշելով այդ բանը, ուզում էր հիմա իր վրեժը լուծել։ Բայց չգիտեմ, կարելի՞ էր արդյոք այդպիսի եզրակացություն անել։ Համենայն դեպս, այդ ամբողջը նախաբան էր միայն, հետո նրա ճառն ավելի ուղղակիորեն առնչվեց գործին։

«Բայց ահա ժամանակակից ընտանիքի հոր երրորդ որդին,— շարունակեց Իպոլիտ Կիրիլովիչը,— մեղադրյալի աթոռին է նա, մեր աչքի առաջ է նա։ Մեր աչքի առաջ են նաև նրա քաջագործությունները, նրա կյանքն ու արարմունքները. հասավ ժամանակը, և ամեն ինչ պարզվեց, ամեն ինչ երևան եկավ։ Ի հակադրություն իր եղբայրների «եվրոպականության» և «ժողովրդական հիմունքներին», նա կարծես իր անձով ներկայացնում է անմիջական Ռուսաստանը. օ՜, ոչ թե ամբողջ Ռուսաստանը, ո՜չ, աստվա՜ծ պահի մեջ, եթե այդպես լիներ։ Եվ սակայն, ահա այստեղ է նա՝ մեր Ռուսաստան մայրիկը, նրա հոտն ենք առնում, նրա ձայնն ենք լսում։ Օ՜, ահա նա՝ անմիջական մարդը, չարիքի ու բարիքի զարմանալի մի խառնուրդ, որ լուսավորության ու Շիլլերի սիրահար է և միաժամանակ մոլեգնում է պինետներում, իր բաժակակից հարբեցողների մորուքներն է պոկում։ Օ՜, նա էլ կարող է պատվական ու հիանալի մարդ լինել, բայց միայն այն ժամանակ, երբ ինքն է լավ ու հիանալի զգում իրեն։ Եվ ավելին, նույնիսկ փոթորկվում է, հենց ուղղակի փոթորկվում է ազնվագույն իդեալներով, բայց միայն այն պայմանով, որ դրանք ինքնաբերաբար ձեռք բերվեն, երկնքից ընկնեն իր սեղանին, և մանավանդ՝ ձրի լինեն, ձրի, ոչինչ չվճարվի դրանց համար։ Սոսկալի չի սիրում վճարել, բայց շատ է սիրում ստանալ, և այդպես է նա ամեն ինչում։ Օ՜, տվեք, տվե՞ք նրան կյանքի ամեն տեսակ բարիքներ (հենց ամեն տեսակ, ավելի էժանը չի գոհացնի նրան), և մանավանդ՝ ոչ մի արգելք մի՛ դնեք նրա բնավորության առաջ, և այն ժամանակ նա կապացուցի, որ ինքն էլ կարող է պատվական ու հիանալի մարդ լինել։ Ապահ չէ նա, ո՜չ, բայց և այնպես փող տվեք նրան, շատ, շատ որքան կարելի է շատ փող, և կտեսնեք, թե ինչպիսի՜ մեծահոգությամբ, անարգ մետաղի հանդեպ ինչպիսի՜ արհամարհանքով ջրիվ կտա այդ փողը մի գիշերվա ընթացքում, սանձարձակ

խրախճանքի մեջ։ Իսկ եթե գրկեն նրան փողից, այդ դեպքում նա ցույց կտա, թե ինչպե՞ս կարող է ձեռք բերել, երբ շատ ու շատ է ցանկանում փող ունենալ։ Բայց դրա մասին՝ հետո. այժմ կարգով հետևենք դեպքերին։

Նախ մեր առաջ տեսնում ենք մի խեղճ, լքված մանչուկ, «հոսի բակում՝ առանց կոշիկների», ինչպես քիչ առաջ արտահայտվեց մեր պատվարժան ու հարգելի համաքաղաքացին, որ օտար ծագում ունի, ավա՜ղ։ Կրկնում եմ նորից՝ ոչ ոքի չեմ զիջի մեղադրյալի պաշտպանությունը։ Ես եմ մեղադրողը, ես էլ պաշտպանն եմ։ Այո՜, մենք էլ մարդ ենք, մենք էլ մարդկային արարած ենք, և ընդունակ ենք կշռադատելու, թե բնավորության վրա ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ մանկության ու հարազատ բույնի առաջին տպավորությունները։ Բայց ահա մանչուկը պատանի է արդեն, երիտասարդ է արդեն, ապա. մենամարտի հրավեր կարդալու և անզուսպ արարքների համար նրան աքսորում են մեր բարեշնորհ Ռուսաստանի սահմանային հեռավոր քաղաքներից մեկը։ Այնտեղ ծառայում է նա, այնտեղ էլ ինչություններ է անում, և անշո՜ւշտ՝ մեծ նավին մեծ տարածություններ են հարկավոր։ Միջոցներ են պետք նրան, փող է պետք ամենից առաջ, և ահա, երկար վեճերից հետո, համաձայնության է գալիս հոր հետ՝ վերջին վեց հազար ռուբլին ստանալու, և ուղարկվում է նրան այդ գումարը։ Նկատեցեք, նա փաստաթուղթ է տալիս, կա նրա նամակը, որով նա գրեթե հրաժարվում է մնացյալից և այդ վեց հազար ռուբլով վերջացնում է ժառանգության համար իր հակամարտությունը հոր հետ։

Ապա տեղի է ունենում նրա հանդիպումը մի երիտասարդ աղջկա հետ՝ բարձր նկարագրի ու զարգացման տեր մի օրիորդի։ Օ՜, ես չեմ համարձակվում կրկնել մանրամասնությունները, դուք հենց նոր լսեցիք դրանք. պատվի հարց է այստեղ, անձնազոհության հարց, և ես լռում եմ։ Մեր առաջ երևաց չափազանց համակրելի կերպարը մի երիտասարդ մարդու, որ թեթևամիտ ու անառակ լինելով հանդերձ՝ խոնարհում է իր գլուխը ճշմարիտ ազնվության առաջ, բարձրագույն գաղափարի առաջ։ Բայց հանկարծ, դրանից հետո, հենց այս նույն դատարանի դահլիճում բոլորովին անսպասելիորեն տեսանք նաև մեղադրյալի հակառակ երեսը։ Դարձյալ չեմ համարձակվում ենթադրություններ անել ու չեմ վերլուծում, թե ինչու այդպես պատահեց։ Բայց այնուամենայնիվ պատճառներ կային անշուշտ, որ այդպես պատահեց։ Նույն այդ օրիորդը, զայրույթի արցունքով ողողված, երկար ժամանակ թաքնված զայրույթի, հայտարարեց, որ հենց նա էր առաջին մարդը, նա՛ էր, որ սկսեց արհամարհել անձնազոհ աղջկան՝ այդ անզգույշ, այդ անզուսպ զուցե, բայց այնուամենայնիվ վսեմ ու վեհանձն մղումով կատարված արարքի համար։ Հենց նրա, նրա դեմքին, փեսացուի՜ դեմքին ամենից առաջ երևաց այն հեգնական ժպիտը, որ աղջիկը հենց նրանի՛ց միայն չէր սպասում ու չէր կարող հանդուրժել։ Իմանալով, որ նա արդեն դավաճանել է իրեն (դավաճանել է այն համոզմունքով, որ աղջիկն այլևս ամեն ինչ պետք է հանդուրժի նրանից, նույնիսկ դավաճանությունը նրա), իմանալով այդ բանը, օրիորդը դիտմամբ երեք հազար ռուբլի է առաջարկում նրան և միաժամանակ պարզորեն, չափազանց պարզորեն հասկացնում, որ այդ փողն առաջարկում է, որպեսզի նա օգտագործի հենց այդ դավաճանության համար։ «Դե տեսնենք, կվերցնե՞ս, թե չէ, կարո՞ղ ես արդյոք անամոթ լինել»,— ասում է լռելյայն՝ իր դատապարտող ու փորձող հայացքով։ Նա նայում է աղջկան, կատարելապես հասկանում նրա մտքերը (չէ՞ որ նա ինքը խոստովանեց այստեղ ձեր ներկայությամբ, որ հասկանում էր ամեն ինչ), և անվերապահորեն յուրացնում է այդ երեք հազարը, երկու օրվա խրախճանքի մեջ մսխո՜ւմ է իր նոր սիրուհու հետ։ Ուրեմն ո՞ր մեկին հավատանք։ Արդյոք առաջի՞ն առասպելին, այսինքն բարձր ազնվության մղումի՞ն, որով նա իր ապրուստի վերջին միջոցներն է զոհում և գլուխն է խոնարհում առաջինության առաջ, թե՞ մեկ դալի մյուս երեսին, որ այնքա՜ն նողկալի է։ Սովորաբար կյանքում այնպես է լինում, որ երկու հակադրությունների մեջ ճշգրիտ մարտությունը պետք է փնտրել մեջտեղում. ներկա դեպքում բոլորովին էլ այդպես չէ։ Ամենից հավանականն այն է, որ առաջին դեպքում նա անկեղծորեն ազնիվ է եղել, իսկ երկրորդ դեպքում՝ նույնքան անկեղծորեն ստոր։ Ինչո՞ւ։ Հիշտ այն պատճառով, որ նա լայն բնավորություն է, կարո՞ղ ազգության (ես հենց սրան էլ բերում էի իմ խոսքը), մի բնավորություն, որ ընդունակ է ամեն տեսակի հակադրություններ պարունակելու իր մեջ, հայացքը երկու անհատակ խորության ուղղելու միաժամանակ՝ դեպի վերին անհունը, անհունը բարձրագույն իդեալների, և դեպի վայրաքաշ անդունդը, անդունդը ամենաստորին ու գարշահոտ անկման։ Հիշեցնեք այն փայլուն միտքը, որ քիչ առաջ արտահայտեց դիտող աչք ունեցող մի երիտասարդ՝ պարոն Ռակի-

տինը, մի մարդ, որ մոտիկից ու խորապես զննել է Կարամազովների ամբողջ ընտանիքը. «Անկում ապրելու ստորության զգացողությունը նույնքան անհրաժեշտ է այս սանձարձակ, անզուսպ բնավորություններին, որքան բարձրագույն ազնվության զգացողությունը»։ Եվ դա ճիշտ է. հենց այս անբնական խառնուրդը մշտապես ու անընդհատ պետք է նրանց։ Երկու անհատակ խորություն, պարոնայք, երկո՞ւ անհատակ խորություն՝ միևնույն պահին. այլապես, առանց դրան, դժբախտ են նրանք ու չբավարարված, անկատար է նրանց գոյությունը։ Լայն են նրանք, լայն, ինչպես ամբողջ մեր մայր Ռուսաստանը, ամե՞ն ինչ կարող են ներառնել իրենց մեջ և ամե՞ն ինչի հետ լինել համերաշխ։

Ի դեպ, պարոնայք երդվյալ ատենակալներ, մենք հիմա շոշափեցինք այդ երեք հազար ռուբլու հարցը, և ես ինձ թույլ եմ տալիս մի քիչ առաջ ընկնել։ Երևակայեցե՞ք միայն, թե նա, այսպիսի նկարագրի տեր մարդը, այդ գումարն ստանալուց հետո, այն էլ ա՞յդ ձևով, այդպիսի ամոթի, այդպիսի խայտառակության, ծայր աստիճան ստորացման գնով ստանալուց հետո, երևակայեցե՞ք, իբր թե նույն օրն էլ կարողացել է առանձնացնել գումարի կեսը, կարել է մի փոքրիկ քսակի մեջ և հետո մի ամբողջ ամիս հաստատակամություն է ունեցել իր վզին կրելու այդ քսակը, հակառակ բոլոր գայթակղություններին և փողի արտակարգ կարիքին։ Նա չի՞ համարձակվել դիպչել այդ փոքրիկ քսակին՝ ո՞չ գինետներում կատարած իր գինարբուքների ժամանակ, ո՞չ էլ այն օրը, երբ ստիպված էր սուրալ քաղաքից հեռու մի տեղ՝ ասված գիտե, թե ումի՞ց ձեռք բերելու համար այն փողը, որ չափազանց անհրաժեշտ էր իրեն, որպեսզի հեռու տանի իր սիրուհուն և ազատի նրան իր մրցակցի, այսինքն իր հոր գայթակղություններից։ Բայց թեկուզ հենց այն բանի համար միայն, որ իր սիրուհուն չթողնի ենթարկվելու ծերունու գայթակղություններին, ծերունու, որին այնքան խանդում էր, նա պետք է բանար այդ քսակը և տանը մնար՝ աննահանջ հսկելու համար իր սիրուհուն, սպասելով այն բոպեն, երբ նա վերջապես կասի իրեն՝ «ես քոնն եմ», և ինքը անմիջապես կտանի նրան հեռու մի տեղ, հեռու ճակատագրական շրջապատից։ Բայց ո՞չ, նա ձեռք չի տալիս իր հուսությանը, և ի՞նչ պատրվակով։ Առաջնագույն պատրվակը, ասացինք, հենց այն էր, որ երբ իրեն ասեն՝ «ես քոնն եմ, տար ինձ ուր որ ուզում ես», միշտներ

ունենա տանելու. բայց այդ առաջին պատրվակը, մեղադրյալի սեփական խոստովանությամբ, դժգունել է երկրորդ պատրվակի առաջ։ Այսինքն թե՝ քանի դեռ իմ վզին կրում եմ այս փողը, «սրիկա եմ, բայց ոչ գող», որովհետև միշտ էլ կարող եմ գնալ իմ հարսնացուի մոտ, որին վիրավորել եմ, և խաբեությամբ յուրացրած ամբողջ գումարի կեսը դնելով նրա առաջ, միշտ էլ կարող եմ ասել նրան. «Տեսնո՞ւմ ես, քո փողի կեսը մսխեցի և դրանով ապացուցեցի, որ ես թույլ ու անբարոյական մարդ եմ և, եթե ուզում ես, սրիկա եմ (ես արտահայտվում եմ հենց մեղադրյալի լեզվով), այո, սրիկա եմ թեկուզ, բայց գող չեմ, որովհետև եթե գող լինեի, չէի բերի այս մնացած կեսը, այլ սա էլ կյուրացնեի առաջին կեսի նման»։ Զարմանալի՞ բացատրություն։ Այս նույն կրակուրոց, բայց թույլ մարդը, որ չի կարողացել դիմադրել այդպիսի՞ խայտառակությամբ երեք հազար ռուբլի ստանալու գայթակղությանը, այս նույն մարդը հանկարծ ինչպիսի՞ ստոյիկյան հաստատակամություն է զգում իր մեջ և իր վզին հազարավոր ռուբլիներ է կրում, չհամարձակվելո՞վ ձեռք տալ այդ գումարին։ Գեթ որևէ չափով դա համապատասխանո՞ւմ է արդյոք այն նկարագրին, որ վերլուծում ենք այժմ։ Ոչ։ Եվ ես ինձ թույլ եմ տալիս ասելու ձեզ, թե այդպիսի դեպքում ինչպես կվարվեր իսկական Դմիտրի Կարամազովը, եթե նույնիսկ իրոք վճռականություն ունենար իր փողը կարելու քսակի մեջ։ Առաջին իսկ գայթակղության առթիվ, դե ասենք, օրինակ, նորից զվարճացնելու համար իր այն նոր սիրեցյալին, որի հետ արդեն մսխել էր այդ փողի առաջին կեսը, նա կքանդեր իր քսակը և այդ առաջին առիթով կհաներ, ասենք, թեկուզ միայն հարյուր ռուբլի, որովհետև կմտածեր, թե ինչո՞ւ անպայման վերադարձնի ուղիղ կեսը, այսինքն հազար հինգ հարյուր ռուբլի, բավական է նաև հազար չորս հարյուր ռուբլին. չէ՞ որ նույնը կարող էր ասել նորից՝ «սրիկա եմ, բայց գող չեմ, որովհետև գոնե հազար չորս հարյուր ռուբլի ետ բերեցի համենայն դեպս, իսկ գողն ամբողջը կյուրացներ ու ոչինչ ետ չէր բերի»։ Այնուհետև, մի որոշ ժամանակ հետո, նորից կքանդեր քսակը և նորից մի հարյուր ռուբլի կհաներ, հետո՝ երրորդ հարյուրը, հետո՝ չորրորդ հարյուրը, և վերջապես, դեռ ամիսը չլրացած, կհաներ նախավերջին հարյուրը, մտածելով, թե մի հարյուր ռուբլի էլ եթե ետ տանի, նույն բանը կարող է ասել նորից՝ «սրիկա եմ, բայց գող չեմ. քսանինը հարյուրանոց մսխեցի, բայց այնուամենայնիվ մեկ

հարյուրանոց վերադարձրի, գողը այդ էլ չէր վերադարձնի»։ Եվ վերջ ի վերջո, այդ նախավերջին հարյուրն էլ վատնելուց հետո, կնայեր մնացած վերջին հարյուրանոցին ու կասեր ինքն իրեն. «Չէ՞, իսկապես, չարժե մի հատ հարյուրանոցը ետ տանել. արի՛ այս էլ ծախսեմ»։ Ահա՛ թե ինչպես կվարվեր մեր ճանաչած իսկական Դմիտրի Կարամազովը։ Իսկ այդ քսակի առասպելը այնպիսի՛ մի հակասություն է իրականության հանդեպ, որ ավելին չի էլ կարելի պատկերացնել։ Կարելի է ենթադրել ամեն ինչ, բայց ոչ դա։ Բայց մենք դեռ կվերադառնանք դրան»։

Կարգով նշելով հոր և որդու դրամական վեճերի և ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ բոլոր այն փաստերը, որ հայտնի էին դարձել դատաքննության ժամանակ, և նորից ու նորից եզրակացնելով, թե ժառանգությունը բաժանելու հարցում, ըստ հայտնի տվյալների, ոչ մի կերպ հնարավոր չէ որոշել՝ ով ում է խաբել կամ ով ում հաշվին ավելի է ստացել, Իպոլիտ Կիրիլովիչը անցավ այն հարցին, թե երեք հազար ռուբլին մտասևեռում էր դարձել Միտյայի գլխում, և այդ առթիվ անդրադարձավ բժշկական փորձագետների կարծիքին։

VII

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Բժշկական փորձագետները ձգտում էին ապացուցել մեզ, որ մեղադրյալի խելքը գլխին չէ և մտամոլ է նա։ Ես պնդում եմ, որ նրա խելքը գլխին է հենց, և դա է ամենավատը. եթե խելքը գլխին չլիներ, գուցե շատ ավելի խելոք վարվեր։ Իսկ գալով նրա մտամոլ լինելուն, կարող էի համաձայնվել դրան, բայց միայն մի կետ նկատի ունենալով, հենց այն կետը, որ մատնանշեցին նաև փորձագետները, այսինքն մեղադրյալի մտասևեռումը այդ երեք հազար ռուբլու վրա, որ իբր թե հայրը դեռ պետք է վճարեր իրեն։ Այնուամենայնիվ, այդ փողի նկատմամբ մեղադրյալի մշտական մոլուցքը բացատրելու համար, կարելի է գուցե անհամեմատ ավելի անմիջական մի հայեցակետ գտնել, քան այն, որ նա իբր թե խելագարության հակում ունի։ Իմ կողմից՝ լրիվ համաձայն եմ երիտասարդ բժշկի հետ, որ գտնում է, թե մեղադրյալը մտային լիակատար ու բնականոն ընդունակությունների տեր է եղել և է, և թե պարզապես բորբոքված ու

զայրացած է եղել նա։ Ահա այս է խնդիրը. մեղադրյալի մշտական ու մոլեգին զայրույթի առարկան ոչ թե երեք հազարն էր, ոչ թե այդ գումարը, այլ այն, որ մի հատուկ պատճառ կար այստեղ, նրա մեջ ցասում հարուցող մի պատճառ։ Այդ պատճառը խա՛նդն է»։

Այստեղ Իպոլիտ Կիրիլովիչը մանրամասնորեն պարզեց Գրուշենկայի հանդեպ մեղադրյալի ուծած ճակատագրական զգացմունքի ամբողջ պատկերը։ Սկսեց հենց այն պահից, երբ մեղադրյալը դեռացել էր «երիտասարդ անձնավորության» մոտ, որպեսզի «ծեծի նրան» («աբստահայտվում եմ նրա սեփական բառերով»,— բացատրեց Իպոլիտ Կիրիլովիչը), «բայց ծեծելու փոխարեն՝ մնաց նրա ոտքերն ընկած. ահա այդ սիրո սկիզբը։ Միաժամանակ նույն անձնավորությամբ հրապուրվում է նաև ծերունին՝ մեղադրյալի հայրը. զարմանալի և ճակատագրական զուգադիպում, որովհետև երկուսի սիրտն էլ բռնկվել է հանկարծակի, միաժամանակ, թեև երկուսն էլ մինչև այդ գիտեին ու հանդիպել էին այդ անձնավորությանը։ Եվ այդ երկու սրտերը բռնկվել են ամենասանձարձակ, բուն իսկ կարամազովյան կրքով։ Այստեղ մենք ունենք այդ անձնավորության սեփական խոստովանությունը. «Ես,— ասում է նա,— ծիծաղում էի թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա»։ Այո, նա հանկարծ ուզեց ծիծաղել թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա. առաջ չէր ուզում, բայց ահա հանկարծ նրա խելքին փչեց այդ դիտավորությունը, և հետևանքը եղավ այն, որ երկուսն էլ, հայր ու որդի, ծնկի եկան նրա առաջ։ Ծերունին, որ պաշտում էր փողը աստծու նման, իսկույն երեք հազար ռուբլի պատրաստեց լոկ այն բանի համար, որ այդ անձնավորությունը այցելի իր տունը, բայց շուտով այն աստիճան տարվեց, որ նաև երջանկություն ոչիսի համարեր նրա ոտքերի առաջ դնել իր անունն ու իր ամբողջ հարստությունը, միայն թե նա համաձայնվեր իր օրինական կինը լինել։ Մենք այդ մասին հաստատ վկայություններ ունենք։ Իսկ գալով մեղադրյալին, նրա ողբերգությունը ակնհայտ է, մեր առաջ է ահա։ Բայց այդպես էր երիտասարդ անձնավորության «խաղը»։ Գայթակղիչ կինը հույս անգամ չէր տալիս դժբախտ երիտասարդին, որովհետև հույսը, իսկական հույսը նրան տրվեց ամենավերջին պահին միայն, երբ նա, իրեն տանջող կնոջ առաջ ծնկի եկած, մեկնում էր նրան իր ձեռքերը, որոնք արդեն իր հոր ու մրցակցի արյունով էին ներկվել. այդ վիճակում էլ նա ձերբակալվեց։

«Ի՞նձ էլ, ինձ էլ նրա հետ ուղարկեցեք տաժանակիր աքսորի, ե՛ս հասցրի նրան այս վիճակին, ե՛ս եմ ամենից ավելի մեղավոր»,— բացականչում էր այդ կինը անձամբ, արդեն անկեղծ զղջումով, նրա ձերբակալության բոպեին։ Այն տաղանդավոր երիտասարդը, որ հանձն է առել սույն գործը նկարագրել հոդվածում,— նույն պարոն Ռակիտինը, որի մասին արդեն հիշատակեցի,— մի քանի սեղմ ու բնորոշ նախադասություններով բնութագրում է այս հերոսուհու նկարագիրը. «Վաղաժամ հիասթափություն, վաղաժամ մոլորություն ու անկում, դավաճանությունը փեսացուի, որ գայթակղել ու լքել է նրան, հետո աղքատություն, անեծքը պատվավոր ընտանիքի և, վերջապես, հովանավորությունը մի հարուստ ծերունու, որին նա սակայն հիմա էլ համարում է իր բարերարը։ Նրա երիտասարդ սրտում, որի մեջ գուցե լավ բաներ շատ կային, դեռ խիստ վաղ տարիքից ծվարել է զայրույթը։ Կազմվել է հաշվենկատ, դրամագլուխ դիզող մի նկարագիր։ Առաջացել է հեգնական ու վրիժառու մի վերաբերմունք հասարակության նկատմամբ»։ Այս բնութագրությունից հետո հասկանալի է, որ այդ կինը կարող էր երկուսի վրա էլ ծիծաղել՝ պարզապես խաղ խաղալու համար, շարախինդ մի խաղ։ Եվ ահա, այդ մի ամսվա ընթացքում մեղադրյալը ոչ միայն տառապում է անհույս սիրով ու բարոյական անկում է ապրում, դավաճանելով իր հարսնացուին և յուրացնելով ուրիշի փողը, որ իր պատվին էր վստահված, այլև անդադրում խանդի հետևանքով հասնում է գրեթե մոլեգնության, հասնում է կատաղության։ Եվ ո՞ւմ է խանդում։ Իր հո՞րը։ Եվ մանավանդ՝ խելացնոր ծերունին նրա սիրո առարկային հրապուրում ու գայթակղեցնում է հենց այն երեք հազար ռուբլու միջոցով, որը որդին իր տոհմական սեփականությունն է համարում՝ իբրև իր մորից մնացած ժառանգություն, և որի համար կշտամբում է հորը։ Այո՞, համաձայն եմ, դժվար էր դիմանալ դրան։ Նույնիսկ մտամոլության կարող էր հասնել բանը։ Ոչ թե փողն էր խնդիրը, այլ այն, որ ա՛յդ իսկ փողի միջոցով, և այնպիսի՞ նողկալի անամոթությամբ, խորտակվում էր նրա երջանկությունը»։

Հետո Իպոլիտ Կիրիլովիչն սկսեց նկարագրել, թե ինչպես է հայրասպանության գաղափարը աստիճանաբար ծագել մեղադրյալի մտքում, և քայլ առ քայլ հետևեց դրան փաստերով։

«Սկզբում նա միայն զոռում է գինետներում, ամբողջ մի ամիս զոռում է։ Օ՜, նա սիրում է մարդկանց մեջ լինել և իսկույն հաղորդել նրանց ամեն ինչ՝ իր ամենադժոխային ու վատնգավոր մտքերն անգամ, սիրում է իր մտքերը կիսել մարդկանց հետ և, չգիտես ինչու, հենց տեղն ու տեղը, անմիջապես պահանջում է նաև, որ այդ մարդիկ իսկույն ևեթ լիակատար համակրանք ցուցաբերեն իրեն, մտնեն իր բոլոր հոգսերի ու տագնապների մեջ, միշտ այդ ասեն և արդեք չլինեն իր ցանկություններին։ Թե չէ՝ նա կզայրանա ու շարդուփշուր կանի ամբողջ գինետունը։ (Այս խոսքերին հաջորդեց փոխկապիտան Սնեգիրյովի պատմությունը)։ Այդ ամսվա ընթացքում մեղադրյալին տեսնողներն ու լսողները վերջապես զգացին, որ նա կարող է արդեն չսահմանափակվել միայն զոռգոռալով ու սպառնալով իր հոր դեմ, այլև, այդպիսի մոլեգնության մեջ, սպառնալիքները կարող են գործի վերածվել։ (Այստեղ դատախազը նկարագրեց ընտանեկան հավաքույթը վանքում, խոստակցությունները Ալյոշայի հետ և բռնության այլանդակ տեսարանը հոր տանը, երբ մեղադրյալը ներխուժել էր ճաշից հետո)։ Ջեմ ուզում համառորեն պնդել,— շարունակեց Իպոլիտ Կիրիլովիչը,— թե մինչև այդ տեսարանը մեղադրյալն արդեն նախամտածված ու դիտավորյալ կերպով որոշել էր սպանել իր հորը։ Բայց, այնուամենայնիվ, այդ գաղափարն արդեն մի քանի անգամ կանգնել էր նրա առաջ, և նա մտմտացել էր դրա շուրջ. այդ մասին ունենք փաստեր, վկաներ ու նրա սեփական խոսքերը։ Խոստովանում եմ, պարոնայք երդվյալ ատենակալներ,— ավելացրեց Իպոլիտ Կիրիլովիչը,— ես մինչև այսօր իսկ տատանվում էի լիակատար ու գիտակից կանխամտածություն վերագրել մեղադրյալին՝ ոճիր կատարելու նրա ձգտման մեջ։ Հաստատ համոզված էի, որ նրա հոգին բազմիցս ներհայել է գալիք ճակատագրական պահը, բայց ներհայել է միայն, պատկերացրել է լոկ իբրև հնարավորություն, բայց չի որոշել ո՛չ իրագործման ժամկետը, ո՛չ հանգամանքները։ Բայց ես տատանվում էի մինչև այսօր միայն, միայն մինչև այն բոպեն, երբ օրիորդ Վերխովցևան այդ ճակատագրական փաստաթուղթը ներկայացրեց դատարանին։ Դուք ինքներդ, պարոնայք, լսեցիք նրա բացականչությունը. «Նախագի՞ծ է սա, սպանության ծրագի՞ր»։ Ահա թե օրիորդը ինչպես բնորոշեց դժբախտ մեղադրյալի այդ շարաբաստիկ, «հարբած» նամակը։ Եվ իրոք, այդ նամակը ծրագրի և կանխամտածվածության նշանակություն ունի լիովին։ Գրված է ոճրից երկու օր առաջ, և այսպիսով՝ այժմ հաստատ

հայտնի է մեզ, որ իր ահավոր մտադրությունը իրագործելուց երկու օր առաջ մեղադրյալը երդվելով հայտարարել է՝ եթե փող չճարի, ուրեմն կսպանի հորը, որպեսզի նրա բարձի տակից վերցնի փողը «կարմիր ժապավենով ծրարի մեջ, միայն թե Իվանը գնացած լինի»։ Լսո՞ւմ եք, «միայն թե Իվանը գնացած լինի», ուրեմն ամեն ինչ կանխամտածված է արդեն, հանգամանքները ծանր ու թեթև են արված։ Եվ ի՞նչ։ Հետո ամե՞ն ինչ կատարվում է հենց գրվածի նման։ Կանխամտածված դիտավորությունն անտարակուսելի է, ոճիրը պետք է կատարվեր կողոպուտի նպատակով, ուղղակի հայտարարված է այդ բանը, գրված է և ստորագրված։ Մեղադրյալը չի հրաժարվում իր ստորագրությունից։ Կարող են ասել՝ հարբած մարդն է գրել այդ նամակը։ Բայց դրանով ոչինչ չի նվազում և ընդհակառակն, դառնում է ավելի կարևոր. հարբած վիճակում գրել է այն, ինչ մտադրել է զգաստ ժամին։ Եթե չմտադրեր զգաստ ժամին, չէր գրի հարբած վիճակում։ Գուցե ասեն՝ ինչո՞ւ էր նա իր մտադրության մասին գոռում գինետներում։ Դիտավորյալ կերպով այդպիսի բան որոշող մարդը լուռ է մնում և պահում է իր մեջ։ Ճիշտ է, բայց նա գոռում էր այն ժամանակ, երբ դեռ ծրագիր ու դիտավորություն չուներ, այլ պարզապես ցանկությունը կար միայն, ձգտումն էր լոկ հասունանում։ Հետո արդեն ավելի քիչ է գոռում դրա մասին։ Այն իրիկուն, երբ այդ նամակը գրվել է «Մայր քաղաք» գինետանը, նա հարբած է եղել, բայց իր սովորության հակառակ՝ լուռ է մնացել, բիլիարդ չի խաղացել, նստել է մի կողմ, ոչ ոքի հետ չի խոսել. միայն մի առևտրական գործակատարի ջնջել է տեղից, սակայն դա արել է գրեթե անգիտակցորեն, կռիվ անելու սովորության հետևանքով, որովհետև գինետուն մտնելուց հետո չէր կարող մի որևէ անկարգություն չանել։ Ճիշտ է, վերջնական որոշումն ընդունելուց հետո մեղադրյալի մտքով պետք է անցներ այն երկյուղը, թե ինքը նախապես չափից ավելի է գոռգոռացել քաղաքում և դա կարող է պատճառ լինել, որ իրեն բռնեն հանցանքի մեջ ու մեղադրեն, երբ իրագործի իր մտադրությունը։ Բայց ի՞նչ կարող ես անել. ասվածը ասվել է արդեն, չես կարող ետ առնել խոսքերդ, և վերջապես բախտը օգնել է սրանից առաջ, հիմա էլ կօգնի։ Մարդը իր աստղի՞ն էր հավատում, պարոնայք։ Բացի այդ, պետք է խոստովանեմ, որ նա շատ բան է արել, որպեսզի շրջանցի ճակատագրական բոպեն, շատ ու շատ ճիգեր է ի գործ դրել, որպեսզի խուսափի արյունահեղությունից։ «Վաղը երեք հազար ռուբլի եմ խնդրելու բոլոր մարդկանցից,— ինչպես գրում է նա իր յուրօրինակ լեզվով,— իսկ եթե չտան մարդիկ, արյուն է թափվելու։ Ահա դարձյալ՝ գրվել է հարբած վիճակում, և զգաստ ժամին կատարվել է հենց գրվածի նման։

Այստեղ Իպոլիտ Կիրիլովիչն սկսեց մանրամասնորեն նկարագրել այն բոլոր ջանքերը, որ Միտյան արել էր փող ճարելու համար, որպեսզի խուսափի ոճիր գործելուց։ Նկարագրեց նրա բախտախնդիր այցելությունը Սամսոնովին, ճանապարհորդությունը՝ Լյուբավիին հանդիպելու, և այդ բոլորը՝ փաստաթղթերով։ «Վերջապես քաղաք է վերադառնում, տանջված, ծաղրված, քաղցած, այդ ճամփորդության համար ժամացույցը ծախած (և սակայն իր վրա հազար հինգ հարյուր ռուբլի՞ ունենալով իբր թե, օ՜, իբր թե), վերադառնում է՝ քաղաքում թողած իր սիրո առարկայի համար տանջվելով խանդից, կասկածելով, որ նա իր բացակայության ժամանակ Ֆյոդոր Պավլովիչի մոտ գնացած կլինի։ Սակայն փա՜ռք աստծու։ Ֆյոդոր Պավլովիչի մոտ չի եղել նա։ Ինքը անձամբ ուղեկցում է սիրուհուն, որ գնում է իր խնամակալի՝ Սամսոնովի մոտ։ (Տարօրինակ բան, Սամսոնովին չի խանդում, և դա հոգեբանական շա՜տ բնորոշ մի յուրահատկություն է այս գործի մեջ)։ Հետո վազում է դեպի իր դիտակետը հոր տան «հետևներում» և այնտեղ... և այնտեղ իմանում է, որ Սմերդյակովին ընկնավորության նոպա է խփել, և որ մյուս ծառան էլ հիվանդ է. աղա՜տ է ասպարեզը, իսկ ինքը տեղյակ է «նշաններին»... ինչպիսի՜ գայթակղիչ բոպե։ Բայց այնուամենայնիվ դիմադրում է փորձությանը. գնում է մեր քաղաքի ժամանակավոր բնակիչ, մեր բոլորի կողմից մեծապես հարգված տիկին Խոխլակովայի մոտ։ Այս տիկինը, որ վաղուց արդեն կարեկցանքով էր նայում նրա ճակատագրին, ամենաողջամիտ խորհուրդն է տալիս նրան՝ հրաժարվել բոլոր այդ զեխ կերուխումներից, այդ այլանդակ սիրահարությունից, գինետներում պարապ-սարապ քարշ գալուց, իր երիտասարդական ուժերի ապարդյուն վատնումից, և գնալ Սիբիր՝ ոսկու հանքերը. «Այնտեղ եկք կգտնեն ձեր եռուն ուժերը, ձեր ռոմանտիկ բնավորությունը, որ ծարավ է արկածախնդրության»։

Նկարագրելով այդ խոստակցության վախճանը և այն պահը, երբ մեղադրյալը հանկարծ լուռ է ստանում, թե Գրուշենկան բնավ էլ չի մնացել Սամսոնովի մոտ, նկարագրելով խանդոտ

ու դժբախտ, ջղերը տանջված մարդու վայրկենական մոլեգնությունը այն մտքից, թե նա հենց խաբել է իրեն և հիմա գտնվում է Ֆյոդոր Պավլովիչի տանը, Իպոլիտ Կիրիլովիչը եզրակացրեց՝ ուշադրություն դարձնելով պատահմունքի ճակատագրական նշանակության վրա. «Եթե աղախինը ասեր նրան, թե սիրուհին գնացել է Մոկրոե, իր «առաջին» ու «անվիճելի» սիրածի մոտ, ոչինչ էլ տեղի չէր ունենա։ Բայց աղախինը գլուխը կորցնում է վախից, երդում-պատառ է լինում, և եթե մեղադրյալը տեղն ու տեղը չի սպանում նրան, պատճառն այն է, որ հապշտապ վազում է իր դավաճան սիրուհուն գտնելու։ Բայց նկատեցեք՝ որքան էլ կորցրել էր իրեն, համենայն դեպս պղնձե սանդղակը վերցրեց ու տարավ հետը։ Ինչո՞ւ հատկապես սանդղակը, ինչո՞ւ ոչ թե մի ուրիշ զենք։ Բայց եթե մի ամբողջ ամիս արդեն մտովի տեսնում էր այդ պահը և պատրաստվում դրան, ապա հենց որ զենքի նման մի բան երևաց աչքին, իսկույն վերցրեց դա իբրև զենք։ Իսկ արդեն մի ամբողջ ամիս նա պատկերացնում էր, որ այդ տեսակի մի որևէ առարկա կարող է զենք ծառայել։ Հենց դրա համար էլ այդպես ակնթարթորեն, առանց տատանվելու ընդունեց դա որպես զենք։ Ուստի, համենայն դեպս, նա այդ ճակատագրական սանդղակը վերցրեց ոչ թե ակամա, ոչ թե անգիտակցորեն։ Եվ ահա, նա գտնվում է իր հոր այգում. ազատ է ասպարեզը, վկաներ չկան, խոր գիշեր է, խավար ու խանդ։ Շունը կտրվում է այն կասկածից, թե այնտեղ է իր սիրուհին, նրա հետ, իր մրցակցի հետ, նրա գրկում, և գուցե ծիծաղում է իր վրա այդ բոպեին։ Եվ ո՞չ միայն կասկածից. էլ ի՞նչ կասկած, բացահայտ է խաբեությունը, ակնհայտ, այնտեղ է իր սիրուհին, ահա այն սենյակում, որտեղ լույս կա, այնտեղ է, նրա հետ, ձեղկի ետևում... և ահա ուրեմն, դժբա՞խտ մարդը գաղտագողի մոտենում է պատուհանին, հարգալից նայում է ներս, հեզաբարո կերպով խաղաղվում է և խոհեմաբար հեռանում, շուտափույթ փախչում է փորձանքից, որպեսզի հանկարծ վտանգավոր ու անբարոյական մի բան չպատահի.... Եվ ուզում են, որ մենք հավատա՞նք դրան, մենք, որ գիտենք մեղադրյալի բնավորությունը, մենք, որ հասկանում ենք, թե ինչ հոգեվիճակի մեջ էր նա, մի հոգեվիճակ, որ մեզ հայտնի է փաստերով, և մանավանդ երբ գիտենք, թե նա ծանոթ էր այն նշաններին, որոնցով իսկույն կարող էր ներս մտնել»։

Այստեղ, «նշանների» առնչությամբ, Իպոլիտ Կիրիլովիչն

առժամապես մի կողմ թողեց իր մեղադրական փաստարկումը և անհրաժեշտ գտավ մանրամասնորեն խոսել Սմերդյակովի մասին, որպեսզի կատարելապես սպառի այդ միջանկյալ դրվագը և մի անգամ ընդմիշտ վերջ դնի այն կասկածին, թե Սմերդյակովն է սպանողը։ Այդ բանը շատ հանգամանորեն արեց, և բոլորը հասկացան, որ թեև նա լիակատար արհամարհանք էր ցուցաբերում այդ ենթադրության նկատմամբ, բայց այնուամենայնիվ խիստ կարևոր էր համարում դա։

VIII

ՏՐԱԿՏԱՏ ՍՄԵՐԴՅԱԿՈՎԻ ՄԱՍԻՆ

«Նախ և առաջ, որտեղի՞ց ելավ այդպիսի կասկածի հնարավորությունը,— այս հարցով էլ սկսեց Իպոլիտ Կիրիլովիչը։— Առաջին մարդը, որ գոռաց, թե Սմերդյակովն է սպանել, հենց մեղադրյալն էր՝ իր ձերբակալության պահին, և սակայն նա իր այդ առաջին գոռոցից մինչև դատի այս բոպեն ոչ մի փաստ չի ներկայացրել իր մեղադրանքը հաստատելու համար, և ոչ միայն փաստ, այլև որևէ մի փաստի նշույլն անգամ, որ գոնե մարդկային խելքի մոտ լիներ մի քիչ։ Այնուհետև, միայն երեք հոգի հաստատում այդ մեղադրանքը. մեղադրյալի երկու եղբայրները և օրիորդ Սվետլովան։ Բայց ավագ եղբայրն իր կասկածը հայտնեց այսօր միայն, հիվանդ վիճակում, անվիճելի խելացնորության ու տենդի նոպայում, իսկ առաջ, ամբողջ երկու ամիս, ինչպես հաստատորեն հայտնի է մեզ, լիովին հարում էր այն համոզմունքին, թե իր եղբայրը մեղավոր է, նույնիսկ չէր էլ ձգտում առարկել այդ մտքի դեմ։ Բայց մենք դեռ հատկապես կզբաղվենք դրանով հետո։ Այնուհետև, կրտսեր եղբայրը քիչ առաջ անձամբ հայտարարեց մեզ, թե Սմերդյակովի մեղավոր լինելու մասին իր միտքը հաստատելու համար ոչ մի փաստ չունի. ոչ իսկ ամենադույզն փաստը, այլ հենց մեղադրյալի խոսքերից ու «նրա դեմքի արտահայտությունից» է միայն այդպես եզրակացնում. այո՞, այդ վիթխարի՞ ապացույցը այստեղ երկու անգամ առաջ քաշվեց մեղադրյալի եղբոր կողմից։ Իսկ օրիորդ Սվետլովայի ասածը մինչև իսկ ավելի վիթխարի մի բան էր գուցե. «Ինչ որ մեղադրյալը ասի, հավատացեք դրան, այնպիսի

մարդ չէ, որ սուտ խոսի»։ Ահա բոլոր փաստական ապացույցները Սմերդյակովի դեմ այս երեք անձերի կողմից, որոնք շահագրգռված են մեղադրյալի ճակատագրով։ Եվ այնուամենայնիվ, Սմերդյակովի դեմ մեղադրանքը ընթացք էր առել ու մնում էր, և հիմա էլ դեռ մնում է. կարելի՞ է հավատալ սրան, կարելի՞ է պատկերացնել այսպիսի բան»։

Այստեղ Իպոլիտ Կիրիլովիչը անհրաժեշտ գտավ թեթևակի բնութագրել հանգուցյալ Սմերդյակովին, «որ իր կյանքին վերջ է տվել հիվանդագին մտամոլուցքի ու խելագարության մի նոպայում»։ Ներկայացրեց նրան որպես տկարամիտ մարդու, որ տարտամ մի կրթություն էր ստացել, մոլորվել էր իր խելքից վեր եղող փիլիսոփայական գաղափարներով և վախեցել էր պարտականության վերաբերյալ ժամանակակից որոշ ուսմունքներից, որոնք լայնորեն մատուցված էին նրան, գործնականորեն՝ իր հանգուցյալ տիրոջ ու գուցե նաև հոր, այսինքն Ֆյոդոր Պավլովիչի անզուսպ կյանքի օրինակով, իսկ տեսականորեն՝ իր տիրոջ միշնակ որդու, այսինքն Իվան Ֆյոդորովիչի հետ փիլիսոփայական այլազան, տարօրինակ խոսակցություններով, որ վերջինս հաճույքով անում էր զվարճության համար, հավանաբար ձանձրույթից կամ հեգնելու պահանջից գրգռված, ավելի լավ կիրառում չգտնելով իր այդ պահանջին։ «Նա ինքը ինձ պատմեց տիրոջ տանը անցկացրած վերջին օրերի ընթացքում իր ունեցած հոգեվիճակի մասին,— բացատրեց Իպոլիտ Կիրիլովիչը,— բայց նույն բանը վկայում են նաև ուրիշները՝ մեղադրյալն ինքը, նրա եղբայրը և նույնիսկ ծառա Գրիգորին, այսինքն բոլոր այն մարդիկ, որոնք բնականաբար շատ մոտիկից էին ճանաչում նրան։ Բացի այդ, ընկնավորությունից ազատած Սմերդյակովը մնան էր վախկոտ հավիտ։ «Նա ընկնում էր իմ ոտքերը և համբուրում էր իմ ոտքերը,— հայտնեց մեզ անձամբ մեղադրյալը այն րոպեին, երբ դեռ չէր գիտակցում, թե այդպիսի հայտարարությունը որոշ վնաս է բերում իրեն։— Ընկնավոր հավի մեկն է»,— արտահայտվեց նա Սմերդյակովի մասին՝ իր բնորոշ լեզվով։ Եվ ահա, մեղադրյալը հենց նրան է ընտրում որպես իր վստահյալը (մի բան, որ ինքն է վկայում) և այնքան է վախեցնում նրան, որ նա վերջապես համաձայնվում է լրտեսություն անել մեղադրյալի համար։ Տնային լրտեսի հանգամանքով դավաճանում է իր տիրոջը, մեղադրյալին հայտնում է՝ ծրարված փողի գոյության, և՝ այն նշանների մասին, որոնցով

կարելի էր մտնել տիրոջ մոտ։ Եվ միթե կարո՞ղ էր չհայտնել «կապաներ ինձ, ուղղակի տեսնում էի, որ կապաներ ինձ»,— ասաց նա հարցաքննության միջոցին, նույնիսկ մեր առաջ ցընցվելով ու դողալով, չնայած որ նրան ահաբեկողն ու տանջողը այդ ժամանակ արդեն գտնվում էր կալանքի տակ և չէր կարող դալ ու պատժել նրան։ «Ամեն րոպե կասկածում էր ինձ, ես էլ ահուդողի մեջ ընկած՝ նրա բարկությունը իջեցնելու համար շուտով հայտնում էի ամեն մի գաղտնիք, որպեսզի տեսներ, որ ես անմեղ եմ իր առաջ և ինձ ողջ-առողջ բաց թողներ մեղքերս քավելուց։ Ահա նրա սեփական խոսքերը, ես գրի եմ առել դրանք ու հիշում եմ. «Հենց որ սկսում էր գոռալ ինձ վրա, ուղղակի ծնկի էի ընկնում նրա առաջ»։

Ի բնե մեծապես ազնիվ երիտասարդ լինելով, նա իր տիրոջ վստահությունն էր շահել, և Ֆյոդոր Պավլովիչը գնահատել էր այդ ազնվությունը, երբ իր կորցրած փողը նա գտել ու վերադարձրել էր. ուստի պետք է ենթադրել, որ դժբախտ երիտասարդը սոսկալի տանջվում էր զղջահարությունից՝ դավաճան լինելու համար իր տիրոջը, որին սիրում էր որպես իր բարերարին։ Ընկնավորությամբ սաստիկ տառապողները, ըստ խորագետ հոգեբույժների վկայության, մշտապես տրամադիր են հարատև ու անշուշտ հիվանդագին ինքնամեղադրման։ Նրանք տանջվում են այն մտքից, որ իրենք «մեղավոր» են մի բանի համար ու այսինչի առաջ, տանջվում են խղճի խայթից, և հաճախ, մինչև իսկ առանց որևէ հիմքի, չափազանցում են և նույնիսկ զանազան մեղքեր ու հանցանքներ են հնարում, վերագրում են իրենք իրենց։ Եվ ահա հենց այդպիսի մի անձնավորություն իսկապես մեղավոր ու հանցավոր է դառնում՝ վախի և ահաբեկման ազդեցության տակ։ Բացի այդ, նա ուժգնորեն նախազգում էր, որ իր աչքի առաջ ստեղծվող իրավիճակից կարող է մի վատ բան դուրս գալ։ Երբ Իվան Ֆյոդորովիչը հենց աղեռից առաջ Մոսկվա էր մեկնում, Սմերդյակովն աղաչում է նրան, որ մնա այստեղ, բայց, ըստ վախկոտ մարդու իր տվյալության, չի համարձակվում բացեիբաց ու վճռականորեն հայտնել իր երկյուղը։ Բավարարվում է միայն ակնարկություններ անելով, բայց չեն հասկանում այդ ակնարկությունները։ Պետք է նկատել, որ Իվան Ֆյոդորովիչի մեջ նա տեսնում էր կարծես իր պաշտպանին, մի տեսակ երաշխիք էր զգում, որ քանի դեռ նա տանն է, դժբախտություն չի պատահի։ Հիշեցնեք այն արտահայտությունը Դմիտրի Ֆյոդորովիչի

«հարբած» նամակի մեջ. «Կսպանեմ ծերուկին, եթե միայն Իվանը գնացած լինի»։ Ուրեմն Իվան Ֆյոդորովիչի ներկայությունը բոլորին էլ մի տեսակ երաշխիք էր թվում, որ տան մեջ խաղաղություն ու կարգուկանոն կպահպանվի։ Եվ ահա նա մեկնում է, իսկ Սմերդյակովն էլ անմիջապես, իր երիտասարդ տիրոջ մեկնելուց գրեթե մի ժամ հետո, ընկնավորության նոպա է ունենում։ Բայց դա կատարելապես հասկանալի է։ Այստեղ պետք է հիշել, որ Սմերդյակովը, վախից և յուրատեսակ մի հուսահատությունից ընկճված, վերջին օրերի ընթացքում հատկապես զգում էր իր մեջ ընկնավորության մոտալուտ մի նոպայի հնարավորությունը, մանավանդ որ առաջ էլ միշտ բարոյական լարման ու ցնցումի պահերին այդպիսի նոպա էր ունենում։ Այդ նոպաների օրն ու ժամը չի կարելի գուշակել անշուշտ, բայց ամեն մի ընկնավոր կարող է նոպայի տրամադրությունը իր մեջ զգալ նախօրոք։ Այդպես է ասում բժշկությունը։

Ահա ուրեմն, հենց նոր է մեկնել տնից Իվան Ֆյոդորովիչը, և Սմերդյակովն իր այսպես ասած որբ ու անպաշտպան մնալու տպավորության տակ նկուղ է գնում տնային մի գործով, սանդուղքով իջնում է և մտածում. «Լինելո՞ւ է, թե չի լինելու նոպան, իսկ եթե հանկարծ ա՞յս բոպեիս գա»։ Եվ ահա հենց այդ տրամադրության, այդ կասկածամտության, այդ հարցերի հետևանքով էլ ջղաձգվում է կոկորդը, մի բան, որ միշտ նախորդում է ընկնավորության նոպային, և նա գլխիվայր, ուշակորույս գլորվում է նկուղի հատակին։ Եվ ահա, մարդիկ հնարք են գտնում այս ամենաբնական պատահարի մեջ ինչ-որ կասկած տեսնելու, ինչ-որ մատնանշում, ինչ-որ ակնարկություն, թե նա դիտմա՞մբ է հիվանդ ձևացել։ Բայց եթե դիտմամբ էր, ապա իսկույն ևեթ հարց է ծագում՝ ինչո՞ւ։ Ի՞նչ հաշիվ ուներ, ի՞նչ էր նպատակը։ Էլ չեմ խոսում բժշկության մասին. գիտությունը իբր թե սուտ է ասում, գիտությունը սխալվում է, բժիշկները չեն կարողացել ճշմարտությունը տարբերել կեղծիքից. թո՛ղ այդպես լինի, բայց դե պատասխանեցեք այն հարցին, թե ինչո՞ւ նա պետք է կեղծեր։ Մտադրված լինելով սպանել տիրոջը, արդյո՞ք ուզում էր նախօրոք և անմիջապես իր վրա ուշադրություն հրավիրել տանը՝ այդպիսի նոպա ունենալով։ Ասեմ ձեզ, պարոնայք երդվյալ ատենակալներ, սպանության գիշերը հինգ մարդ է եղել Ֆյոդոր Պավլովիչի տանը. նախ և առաջ՝ նույնինքն Ֆյոդոր Պավլովիչը, բայց հո նա ինքը չի սպանել իրեն, դա պարզ է. երկրորդ՝ նրա

ծառա Գրիգորին, բայց դե քիչ էր մնացել, որ նրան էլ սպանեին. երրորդ՝ Գրիգորիի կինը՝ Մարֆա Իգնատևնան, բայց պարզապես ամոթ է երևակայել, թե նա սպանել է իր տիրոջը։ Ուրեմն երկու հոգի են մնում աչքի առաջ՝ մեղադրյալը և Սմերդյակովը։ Բայց քանի որ մեղադրյալը հավատացնում է, թե ինքը չի սպանել, ուրեմն Սմերդյակովը պետք է սպանած լինի, ուրիշ ելք չկա, որովհետև ուրիշ ոչ մի անձնավորություն չես կարող հնարել, ուրիշ ոչ մի մարդասպան չես կարող ցույց տալ։ Ահա, ահա՜ թե ուրեմն որտեղից է ծագել այդ «ճարտար» ու վիթխարի՜ մեղադրանքը դժբախտ ու տկարամիտ մարդու դեմ, որ երեկ անձնասպան եղավ։ Պատճառը հենց այն է միայն, որ ուրիշ ո՛չ ոքի չես կարող հնարել։ Թեկուզ և մի ստվեր, թեկուզ և մի կասկած լիներ ուրիշ մեկի վրա, որևէ մի վեցերորդ անձնավորության վրա, ես համոզված եմ, որ նույնիսկ մեղադրյալն էլ կամաչեր այդ դեպքում ամբաստանել Սմերդյակովին և կամբաստաներ վեցերորդ անձնավորությանը, որովհետև այս սպանության մեջ Սմերդյակովին մեղադրելը բացարձակ անհեթեթություն է։

Պարոնայք, թողնենք հոգեբանությունը, թողնենք բժշկությունը, թողնենք հենց տրամաբանությունն անգամ, դիմենք միայն փաստերին, միայն ու միայն փաստերին, և տեսնենք, թե ինչ են ասում մեզ փաստերը։ Սմերդյակովն է սպանել, բայց ինչպե՞ս։ Մենա՞կ, թե մեղադրյալի մասնակցությամբ։ Քննենք նախ առաջին պարագան, այսինքն՝ Սմերդյակովը մենակ է սպանում։ Պարզ է, եթե սպանել է, ուրեմն մի որևէ բանի համար, մի շահից ելնելով է արել։ Բայց քանի որ նշույլն էլ չուներ այն շարժառիթների, այսինքն ատելության, խանդի և այլն, և այլն, որոնք սույն մեղադրյալին մղում էին սպանության, ուրեմն Սմերդյակովը, անտարակույս, կարող էր սպանել միմիայն փողի համար, որպեսզի յուրացնի այն երեք հազարը, որ անձամբ տեսել էր, երբ իր տերը ծրարի մեջ էր դնում։ Եվ ահա, սպանություն նյութելով, փողի և նշանների մասին ամեն ինչ հայտնում է մի ուրիշ անձնավորության, այն էլ վերին աստիճանի շահագրգռված անձնավորության, այսինքն մեղադրյալին, հայտնում է, թե որտեղ է դրված ծրարը, ինչ է գրված ծրարի վրա, ինչով է ծրարը կապված, և մանավանդ, մանավանդ հայտնում է այն «նշանները», որոնցով կարելի է մտնել տիրոջ մոտ։ Ինչ է, ուղղակի իրեն մատնելո՞ւ համար է անում այդ բանը։ Կամ էլ իր մրցակի՞ցը դարձնելու համար մի ուրիշին, որ նույնպես կարող է ցանկանալ ներս

մտնել ու ձեռք բերել ծրարը։ «Այո,— կասեն ինձ,— բայց չէ՞ որ նա վախից է հայտնել։ Բայց ինչպե՞ս թե վախից։ Մի մարդ, որ ժպրհել է այդպիսի հանդուգն ու գաղանային մի գործ ծրագրել ու հետո ի կատար ածել, հայտնում է այնպիսի տեղեկություններ, որ միայն ինքը գիտե ամբողջ աշխարհում, և որոնք ոչ ոք երբեք չի կռահի, եթե ինքը լռեր դրանց մասին։ Չէ՞, որքան էլ վախկոտ լիներ մարդը, բայց եթե իրոք այդպիսի մի ոճիր էր ծրագրել, գոնե ծրարի ու նշանների մասին ոչ մի դեպքում ոչինչ չէր ասի որևէ մեկին, որովհետև դա կնշանակեր, որ նախօրոք լրիվ մատնում է իրեն։ Իսկ եթե անպայման տեղեկություններ էին պահանջում նրանից, մի որևէ բան կհնարեր դիմամամբ, մի որևէ սուտ կասեր, բայց դրա մասին չէր խոսի։ Ընդհակառակը, կրկնում եմ, թեկուզ միայն փողի մասին եթե ոչինչ չասեր, իսկ հետո սպաներ ու յուրացներ փողը, ամբողջ աշխարհում ոչ ոք երբեք չէր կարող մեղադրել նրան գոնե կողոպուտի համար սպանած լինելու մեջ, որովհետև նրանից բացի ոչ ոք չէր տեսել այդ փողը, ոչ ոք չգիտեր, թե տանը այդպիսի փող կա։ Եթե նույնիսկ մեղադրեին նրան, ապա անպայման կմտածեին, թե նա որևէ ուրիշ շարժառիթով է սպանել։ Բայց քանի որ նախապես ոչ ոք չէր նկատել այդ շարժառիթները նրա մեջ, այլ ընդհակառակը, տեսել էին, որ նա տիրող սիրելին է, վայելում է տիրող վստահությունը, ուրեմն, իհարկե, վերջին կասկածելի մարդը պիտի լիներ նա, իսկ ամենից առաջ պիտի կասկածեին այնպիսի մեկի վրա, որ ունեցե՛լ էր այդ շարժառիթները, որ անձամբ գողացել էր, թե ունի՞ այդ շարժառիթները, չէր թաքցրել դրանք, պարզել էր բոլորի առաջ, մի խոսքով՝ պիտի կասկածեին սպանվածի որդու, այսինքն Դմիտրի Ֆյոդորովիչի վրա։ Սմերդյակովն սպանած ու կողոպտած կլիներ, բայց կմեղադրեին որդուն, և դա մարդասպան Սմերդյակովի համար ձեռնտու կլիներ, այնպես չէ՞։ Բայց դե արի տես, որ Սմերդյակովը, սպանություն նյութելով, հենց այդ որդուն էլ, այսինքն Դմիտրիին, նախօրոք հայտնում է փողի, ծրարի և նշանների մասին. որքա՞ն տրամաբանական է, որքա՞ն պարզ։

Հասնում է Սմերդյակովի ծրագրած սպանության օրը, և ահա նա ընկնավորության նոպա է կեղծում ու գլխիվայր գլորվում է. ինչո՞ւ։ Դե իհարկե՝, նախ և առաջ որպեսզի ծառա Գրիգորին, տեսնելով, որ բացարձակապես ոչ ոք չկա տունը պահպանող, գուցե մի կողմ թողնի իր մտադրած բուժումը և պահակ նստի։ Եվ երկրորդ, իհա՞րկե, որպեսզի Ֆյոդոր Պավլովիչն էլ կրկնապատկի իր անվստահությունն ու զգուշությունը, տեսնելով, որ ոչ ոք պահակություն չի անում, և սոսկալի վախենալով իր որդու այցելությունից, մի բան, որ չէր թաքցնում։ Եվ վերջապես մանավանդ, իհա՞րկե, որպեսզի իրեն էլ, այսինքն նոպայից ուժաթեկված Սմերդյակովին, անմիջապես տեղափոխեն խոհանոցից, ուր նա միշտ առանձին էր գիշերում և ուզած ժամանակ կարող էր մտնել ու դուրս գալ, տանեն նրան շենք՝ մյուս ծայրը՝ Գրիգորիի սենյակը, նրանց սեփական անկողնից երեք քայլ հեռու, միջնորմի հետև, ինչպես միշտ էլ անում էին հնուց անտի, Ֆյոդոր Պավլովիչի և սրտացավ Մարֆա Իգնատևնայի կարգադրությամբ, հենց որ նոպան խփում էր նրան։ Այնտեղ, միջնորմի հետև պառկած, իսկապես հիվանդ ձևանալու համար պետք է սկսեր տնքալ իհարկե, այսինքն ամբողջ գիշերը արթնացնել նրանց (ինչպես որ եղել է իրոք, Գրիգորիի և նրա կնոջ վկայությամբ)։ Եվ այս բոլորը, այս բոլորը ա՛յն նպատակով, որ ավելի հարմա՛ր լիներ հանկարծ վեր կենալ ու հետո սպանել իր տիրոջը։

Բայց կարող են ասել ինձ, թե Սմերդյակովը հենց նոպա է կեղծել, որպեսզի, հիվանդ համարելով իրեն, չկասկածեն իր վրա, իսկ փողի ու նշանների մասին մեղադրյալին հայտնել է հենց այն նպատակով, որ նա գայթակղվի և գա, սպանի։ Եվ երբ, հասկանո՞ւմ եք, սպանելուց հետո նա հեռանա և փողն էլ տանի հետը, հավանաբար և աղմկելով, գոռգոռալով, արթնացնելով վկաներին, այն ժամանակ, հասկանո՞ւմ եք, Սմերդյակովն էլ վեր կկենա ու կգնա... է՞, կգնա ի՞նչ անելու։ Այ հենց երկրորդ անգամ սպանելու իր տիրոջը և երկրորդ անգամ գողանալու արդեն գողացված փողը։ Սիծաղո՞ւմ եք, պարոնայք։ Ինքս էլ ամաչում եմ, որ այսպիսի ենթադրություններ եմ անում, բայց երևակայեցեք, մեղադրյալը հենց ա՛յդ է պնդում, չէ՞։ Այսինքն թե՝ երբ ինքը արդեն դուրս է ելել տնից, տապալելով Գրիգորիին և տագնապ առաջացնելով, իրենից հետո Սմերդյակովը վեր է կացել, գնացել է, սպանել է ու կողոպտել։ Էլ չեմ խոսում այն մասին, թե ինչպե՞ս կարող էր Սմերդյակովը նախօրոք հաշվի առնել այդ բոլորը և իմանալ հինգ մատի նման, այսինքն նախատեսել, թե ղողանցած ու կատաղած որդին կգա հենց միայն ակնածանքո՞վ ներս նայելու համար պատուհանից և, նշանները գիտենալով հանդերձ, եռ կգաշվի, ամբողջ ավարը թողնելով

նրան՝ Սմերդյակովին։ Պարոնա՛յք, ես լուրջ եմ դնում հարցը. ո՞րն է այն բոպեն, ուր Սմերդյակովը կատարել է ոճիրը։ Ցույց տվեք այդ բոպեն, որովհետև առանց դրան չի կարելի մեղադրել։

«Բայց գուցե նոպան իսկական էր։ Հիվանդը հանկարծ ուշքի է եկել, գոռոց է լսել ու ելել է դուրս»։ Է՛հ, հետո ինչ։ Շուրջը նայեց ու ինքնիրեն ասաց՝ գնամ սպանեմ տիրոջս, հա՞։ Իսկ որտեղի՞ց իմացավ, թե ինչ է եղել, ինչ է կատարվել. չէ՞ որ նա մինչ այդ ուշագնաց պառկել էր։ Համենայն դեպս, երևակայության թռիչքներն էլ չափ ու սահման ունեն, պարոնա՛յք։

«Լա՛վ,— կառարկեն ինձ նրբամիտ մարդիկ,— իսկ եթե երկուսը խոսքը մեկ էին արել, եթե երկուսը միասին սպանել ու փողը բաժանել են, այդ դեպքո՞ւմ ինչ կասեք»։

Այո՛, իսկապես, լո՛ւրջ կասկած է. նախ և առաջ՝ ուղղակի շշմեցուցի՛չ հանգանշաններ կան, որ հաստատում են այդ բանը։ Մեկը սպանում է և հանձն առնում բոլոր հոգսերը, իսկ մյուսը նոպա է կեղծել ու պառկել կողքի վրա, երևի հենց այն նպատակով, որ նախօրոք կասկած հարուցի բոլորի մեջ, տագնապ՝ իր տիրոջ սրտում, տագնապ՝ Դրիգորիի մտքում։ Հետաքրքրական է, թե ինչ շարժառիթներից դրդված կարող էին այդպիսի խելագար մի ծրագիր մոգոնել երկու մեղսակիցները։ Բայց գուցե դա բոլորովին էլ գործոն մասնակցություն չէր Սմերդյակովի կողմից, այլ, այսպես ասած, կրավորական մի նահատակություն. ահաբեկված Սմերդյակովը գուցե համաձայնվում է պարզապես չընդդիմանալ սպանությանը, բայց նախազգալով, որ իրեն իսկ կմեղադրեն, թե ինչո՞ւ է թողել, որ սպանվի իր տերը, ինչո՞ւ չի զգուշացել, չի ընդդիմացել, նախօրոք Դմիտրի Կարամազովից թույլտվություն է ձեռք բերում, որ այդ ժամանակ ինքը նոպա կեղծի ու պառկի, «իսկ դու սպանիր ինչպես ուզում ես, իմ ի՞նչ գործն է»։ Բայց եթե նույնիսկ այդպես է, ապա քանի որ այդ նոպան էլ դարձյալ պետք է իրարանցում առաջ բերեր տանը, Դմիտրի Կարամազովը կնախատեսեր դա և ոչ մի կերպ չէր կարող համաձայն լինել այդպիսի պայմանի։ Սակայն ես զիջում եմ. ասենք, թե նա համաձայնվել է. բայց չէ՞ որ այդ դեպքում էլ, այնուամենայնիվ, ստացվում է, որ Դմիտրի Կարամազովն է մարդասպանն ու դրդողը, իսկ Սմերդյակովը պարզապես կրավորական մասնակից է, և մասնակից էլ չէ նույնիսկ, այլ պարզապես թողտվություն է արել վախից ու իր կամքին հակառակ. այս բանն արդեն անպայման կարող է տարբերել դատարանը։

Եվ ահա, ի՞նչ ենք տեսնում սակայն։ Հենց որ ձերբակալվում է մեղադրյալը, իսկույնևեթ ամեն ինչ գցում է Սմերդյակովի վրա և միայն նրան է մեղադրում։ Մեղադրում է ոչ թե որպես իր մեղսակցին, այլ բացառապես նրան. այսինքն թե՝ նա մենա՞կ է արել այդ բանը, նա՞ է սպանել ու կողոպտել, նրա՞ արած գործն է։ Բայց դե այդ ի՞նչ մեղսակիցներ են, որ անմիջապես սկսում են իրար դեմ խոսել. չէ, երբեք էլ այդպիսի բան չի լինում։ Եվ նկատեցեք, ի՞նչ վտանգավոր հանդգնություն է Կարամազովի համար. ինքն է գլխավոր մարդասպանը, իսկ մյուսը թողտվություն է արել միայն ու պառկել է միջնորմի ետև, և ահա նա մեղքը գցում է պառկած մարդու վրա։ Չէ՞ որ այդ պառկած մարդը կարող էր բարկանալ և պարզապես ինքնապաշտպանության համար իսկույն հայտնել բուն ճշմարտությունը, ասել, որ երկուսն էլ մասնակցել են, բայց ինքը չի սպանել, այլ միայն թողտվություն է արել վախի ազդեցության տակ։ Չէ՞ որ նա՝ Սմերդյակովը, կարող էր հասկանալ, թե դատարանը անմիջապես կտարբերի իր մեղավորության աստիճանը, ուրեմն և կարող էր հաշվի առնել, որ եթե պատժեն էլ իրեն, ապա ինքը անհամեմատ ավելի շնչին մի պատիժ կստանա, քան մյուսը՝ գլխավոր մարդասպանը, որ ուզում է ամեն ինչ իր վրա գցել։ Բայց ուրեմն Սմերդյակովն արդեն ստիպված կլիներ խոստովանել այդ դեպքում։ Եվ սակայն այդ բանը մենք չտեսանք։ Սմերդյակովը մի բառ անգամ չասաց մեղսակցության մասին, չնայած որ իսկական ոճրագործը հաստատորեն մեղադրում էր նրան և շարունակ պնդում էր, թե նա է միակ մարդասպանը։ Ավելին՝ հենց Սմերդյակովը հայտնեց հարցաքննության ժամանակ, թե ծրարված փողի և նշանների մասին ինքը հաղորդել է մեղադրյալին, և թե առանց իր ասելու նա ոչինչ էլ չէր իմանա։ Եթե նա իրոք մեղսակից լիներ, արդյոք այնքան հեշտորեն կհայտնե՞ր այդ բանը հարցաքննության ժամանակ, այսինքն կասե՞ր, թե ինքն է հաղորդել այդ բոլորը մեղադրյալին։ Ընդհակառակը, կջանար ուրանալ և անպայման աղավաղել փաստերը, փոքրացնել դրանք։ Բայց նա չէր աղավաղում և չէր փոքրացնում։ Այդպես կարող է անել միայն անմեղ մարդը, որ չի վախենում, թե իրեն կմեղադրեն մեղսակցության մեջ։ Եվ ահա, հիվանդագին մեղամաղձության մի նոպայում, որ իր ընկնավորության և ամբողջ այս աղետի հետևանքն էր, երեկ նա կախեց իրեն։ Կախվելուց առաջ թղթից մի երկտող՝ յուրահատուկ ձեռով գրված.

«Ոչնչացնում եմ ինձ իմ կամքով ու ցանկությամբ, որպեսզի ոչ ոքի վրա մեղք չգցեմ»։ Է՜հ, ի՞նչ կկորցներ, եթե ավելացներ իր երկտողում՝ մարդասպանը ես եմ, ոչ թե Կարամազովը։ Բայց այդ բանը չի ավելացրել։ Ինչ է, խիղճը մղել է անձնասպանության, իսկ խոստովանելու համար խիղճ չի՞ ունեցել։

Եվ ի՞նչ ենք տեսնում հետո։ Քիչ առաջ փող են բերում այստեղ՝ դատարան, երեք հազար ռուբլի, և ասում են մեզ. «Հենց այն փողերն են, որ ահա այն ծրարի մեջ էին, իրեղեն ապացույցների սեղանին դրված ծրարի մեջ, երեկ ստացա Սմերդյակովից»։ Բայց դուք ինքներդ, պարոնայք երդվյալ ատենակալներ, հիշում եք քիչ առաջվա տխուր տեսարանը։ Մանրամասնությունները չեմ մտաբերի, սակայն ինձ թույլ եմ տալիս երկու-երեք բան նկատի առնել, ընտրելով ամենից աննշան կետերը, հենց այն պատճառով, որ աննշան են դրանք, ուստի ամեն մեկի ուշադրությունը չեն գրավի և կմոռացվեն։ Նախ և առաջ, ենթադրենք դարձյալ, որ Սմերդյակովը երեկ խղճի խայթից մղված ետ է տվել փողը և կախել իրեն։ (Որովհետև առանց խղճի խայթի ետ չէր տա փողը)։ Եվ անշուշտ, միայն երեկ իրիկուն առաջին անգամ խոստովանել է իր ոճիրը Իվան Կարամազովին, ինչպես հայտարարեց նաև ինքը՝ Իվան Կարամազովը, որն այլապես ինչո՞ւ պետք է լռեր մինչև հիմա։ Այսպես ուրեմն, եթե խոստովանել է, ապա ինչո՞ւ, կրկնում եմ նորից, մեռնելու պահին գրած երկտողում չի հայտնել մեզ ամբողջ ճշմարտությունը, իմանալով հանդերձ, որ անմեղ մեղադրյալը հենց հաջորդ օրը կանգնելու է ահավոր դատի առաջ։ Միայն փողը հո չի կարող ապացույց լինել։ Դեռ մի շաբաթ առաջ, օրինակ, բոլորովին պատահականորեն, ինձ և այս դահլիճում գտնվող երկու ուրիշ անձերի հայտնի դարձավ մի փաստ, այսինքն այն, որ Իվան Ֆյոդորովիչ Կարամազովը երկու հինգտասնոց բանկոտոմս է ուղարկել նահանգիս կենտրոնական քաղաքը՝ մանրելու համար, յուրաքանչյուր բանկոտոմսը հինգ հազար ռուբլու արժողությամբ, ուրեմն ընդամենը տասը հազար ռուբլի։ Ուզում եմ ասել միայն, որ ամեն մարդ էլ կարող է փող ունենալ տվյալ պահին, և երեք հազար ռուբլի բերելով չի կարելի անպայման ապացուցել, թե դա հենց այն փողն է, ահա նույն այդ արկղից կամ ծրարից հանված փողը։ Եվ վերջապես, Իվան Կարամազովը երեկ այնքա՞ն կարևոր մի տեղեկություն է ստանում բուն մար-

դասպանից, և հետո հանդիսատ նստում է։ Բայց ինչո՞ւ խելքն ենթ չհայտնեց դրա մասին։ Ինչո՞ւ ամեն ինչ հետաձգեց մինչև առավոտ։ Կարծում եմ՝ իրավունք ունեմ ենթադրելու, թե ինչու։ Արդեն մի շաբաթ է՝ խանգարվել է նրա առողջությունը, ինքն էլ խոստովանել է բժշկին ու իր մերձավորներին, թե ցնորքներ է ունենում, հանդիպում է մեռած մարդկանց. նրա մեջ հաստատվում էր այն տենդը, որ հենց այսօր էլ խփեց նրան, իսկ երեկ, տենդի նախօրյակին, նա հանկարծ իմանում է Սմերդյակովի մահվան լուրը և անմիջապես հետևյալ դատողությունն է անում. «Մարդը մեռել է, կարող եմ նրա վրա գցել մեղքը և փրկել եղբորս։ Փող ունեմ մոտս, մի կապոց թղթադրամ կվերցնեմ ու կասեմ, որ Սմերդյակովն է ինձ տվել մահից առաջ»։ Պիտի ասեք, որ անազնիվ բան է դա. թեկուզ և մեռած մարդու դեմ, նույնիսկ եղբորը փրկելու համար, բայց անազնիվ բան է դրպարտելը։ Ճիշտ է, բայց եթե նա անդիտակցաբա՞ր է ստել. չէ՞ որ Սմերդյակովի այդ անակնկալ մահվան լուրը կարող էր վերջնականապես խախտել նրա գիտակցությունը, և նա կարող էր երևակայել, թե իրոք այդպես էլ եղել է։ Դուք հո տեսաք այն, ինչ կատարվեց քիչ առաջ, տեսաք, թե ինչ վիճակի մեջ էր այդ մարդը։ Կանգնած էր ոտքի վրա և խոսում էր, բայց ո՞ւր էր նրա խելքը։

Այդ տենդահար մարդու վկայությունից հետո երևան եկավ մի փաստաթուղթ՝ մեղադրյալի նամակը օրիորդ Վերխովցևային, այն նամակը, որ նա գրել է ոճիրը կատարելուց երկու օր առաջ, և ուր նախօրոք նկարագրված է ոճրագործության մանրամասն ծրագիրը։ Դե էլ ինչո՞ւ ենք ուրիշ ծրագիր փնտրում։ Ճիշտ ու ճիշտ այդ ծրագրով էլ կատարվել է ոճիրը, և կատարել է ոչ այլ ոք, քան այդ ծրագիրը կազմողը։ Այո, պարոնայք երդվյալ ատենակալներ, «հենց գրվածի պես էլ կատարվել է»։ Երբեք, երբեք էլ նա հարգանքով ու երկյուղով չի փախել հոր պատուհանի տակից, այն էլ դեռ հաստատ համոզված լինելով, որ իր սիրեցյալը նրա մոտ է այդ պահին։ Ոչ, անհնթեթ ու անհավատալի է դա։ Նա մտել է ու... վերջացրել գործը։ Հավանաբար սպանել է ջղային վիճակում, զայրույթից բորբոքված, անմիջապես որ նայել է իր ատելի մրցակցին, և սպանել է գուցե մի անգամից, սանդակոթով զինված իր ձեռքի մի հարվածով. և ապա, մանրամասն խուզարկությունից հետո համոզվելով, որ իր սիրեցյալը այնտեղ չէ, այնուամենայնիվ չի մոռացել ձեռքը խոթել բարձի տակ և հանել փողի ծրարը, որի պատռված երեսը ահա այստեղ

է հիմա՝ իրեղեն ապացույցների սեղանին։ Այս բանը ասում եմ, որպեսզի նկատեք մի հանգամանք՝ ըստ իս շատ բնորոշ։ Եթե նա փորձառու մարդասպան լիներ և սպաներ հենց միայն կողոպուտի նպատակով, մի՞թե ծրարի երեսը կթողներ հատակին այնպես, ինչպես գտան այդ իրը դիակի մոտ։ Եթե, օրինակ, կողոպուտի համար սպանող Սմերդյակովը լիներ, դե նա պարզապես ծրարը կտաներ իր հետ, բնավ էլ նեղություն չէր քաշի, որ իր զոհի դիակի առաջ բաց անի ու նայի մեջը, քանի որ հաստատ գիտեր, թե ծրարի մեջ փող կա (չէ՞ որ իր աչքի առաջ էին փողը դրել ու կնքել), և գիտեր նաև, որ եթե բոլորովին վերցնի ու տանի ծրարը, ոչ ոք չի իմանա՝ կողոպուտ եղե՞լ է, թե ոչ։ Հարց եմ տալիս ձեզ, պարոնայք երդվյալ ատենակալներ, այդպես կվարվե՞ր արդյոք Սմերդյակովը, ծրարը կթողնե՞ր հատակին։ Ոչ, հենց այդպես պետք է վարվեր մոլեգնած մարդասպանը, որն արդեն վատ է կշռադատում, այն մարդասպանը, որ գող չէ և մինչ այդ երբեք ոչինչ չի գողացել, և այդ բոպեին էլ անկողնի տակից փողը դուրս է քաշել ոչ թե որպես գողություն անող մի գող, այլ որպես մի մարդ, որ իր գողացված սեփականությունն է ետ վերցնում գողից, որովհետև Դմիտրի Կարամազովը հենց այդպիսի համոզմունք է ունեցել այդ երեք հազար ռուբլու մասին, մտամոլության հասած մի համոզմունք։ Եվ ահա, վերցնելով ծրարը, որ առաջ երբեք չէր տեսել, պատռում և բաց է անում, որպեսզի ստույգ համոզվի՝ փող կա՞ արդյոք մեջը, հետո փողը գրպանը դրած փախչում է, նույնիսկ մոռանալով նկատի առնել, թե ծրարի այդ պատռված երեսը նետելով հատակին՝ վիթխարագույն մի մեղադրանք է թողնում ինքն իր դեմ։ Եվ դա՝ պարզ այն պատճառով, որ Կարամազովը, այլ ոչ թե Սմերդյակովը, չի մտածել, չի կշռադատել, և ինչպե՞ս կարող էր։ Նա փախչում է, նա լսում է իր ետևից հասնող ծառայի աղաղակը, ծառան բռնում է նրան, կանգնեցնում է և պղնձե սանդկոթի հարվածով ընկնում գետին։ Մեղադրյալը, խղճահարությունից մղված, ցատկում է ներքև՝ նրա մոտ։ Պատկերացրե՞ք, նա հանկարծ ուզում է հավատացնել մեզ, թե այդ բոպեին պատից ետ է ցատկել խղճահարության, կարեկցանքի մղումով, որպեսզի նայի, թե չի՞ կարող մի բանով օգնել նրան։ Բայց մի՞թե դա այն բոպեն է, ուր կարելի է կարեկցանք ցուցաբերել։ Ոչ, նա ետ է ցատկել հենց համոզվելու համար, թե արդյոք կենդանի՞ է իր չարագործության միակ վկան։ Որևէ այլ զգացում, որևէ այլ

շարժառիթ անբնական կլիներ։ Նկատի առեք, որ նա նեղություն է քաշում, թաշկինակով սրբում է Գրիգորիի գլուխը, և համոզվելով, որ նա մեռած է, խելակորույս վազում է նորից իր սիրուհու տունը, ոտից գլուխ արյունով թաթախված. իսկ ինչպե՞ս չի մտածել, թե ինքը արյունով է թաթախված և անմիջապես կբռնվի հանցանքի մեջ։ Բայց մեղադրյալն անձամբ հավատացնում է մեզ, որ ուշադրություն անգամ չի դարձրել, թե ինքը արյունով էր թաթախված. դա կարելի է ընդունել, դա շատ հնարավոր բան է, ոճրագործները միշտ էլ այդպես են լինում այդպիսի բոպեներին։ Մի բանը դժոխային հաշվենկատությամբ են անում, իսկ մի ուրիշ բանի համար խելքը դադարում է գործել։ Բայց այդ բոպեին նա մտածում էր միայն, թե որտեղ է իր սիրուհին։ Ուզում էր իսկույն իմանալ, թե որտեղ է նա, և ահա վազում է նրա բնակարանը և իմանում իր համար անսպասելի, ահռելի մի լուր. նա գնացել է Մոկրոե՝ իր «առաջին», «անվիճելի» սիրահարի մոտ»։

IX

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՔ ԱՌԱՎ ԳՆՈՒՄ Է։ ՍՐԱԲԵԱՎ ՏՐՈՇԿԱՆ։ ԴԱՏԱԽՈՒԶԻ ՇԱՌԻ ԱՎԱՐՏԸ։

Իպոլիտ Կիրիլովիչը հայտնապես քնտրել էր շարադրանքի խստորեն պատմական մեթոդը, մի մեթոդ, որին շատ են սիրում դիմել բոլոր չղայլին հռետորները՝ դիտմամբ ձգտելով խստադիր շրջանակների մեջ մնալ, որպեսզի զսպեն իրենց սեփական անհամբեր ոգևորությունը։ Եվ Իպոլիտ Կիրիլովիչը, հասնելով իր ճառի այդ կետին, հատկապես մանրամասն խոսեց Գրուշենկայի «առաջին» ու «անվիճելի» սիրահարի մասին և մի քանի յուրովի հետաքրքրական մտքեր հայտնեց այդ նյութի շուրջ։

«Կարամազովը, որ կատաղելու չափ խանդում էր բոլորին, հանկարծ ու միանգամից ընկնում է կարծես ու չքանում այդ «առաջին» ու «անվիճելի» սիրահարի առաջ։ Եվ մանավանդ դա տարօրինակ է այն պատճառով, որ մինչ այդ նա գրեթե բոլորովին ուշադրություն չէր դարձնում նոր վտանգին՝ ի դեմս այդ դալիք, իր համար անսպասելի մրցակցի։ Բայց նա դեռ այնքա՞ն հեռու է պատկերացնում այդ վտանգը, իսկ Կարամազովը միշտ էլ ներկա բոպեով է ապրում։ Հավանաբար, նույնիսկ մտացածին էր համարում այդ բանը։ Բայց նա վայրկենապես հաս-

կացավ իր վիրավոր սրտով, որ եթե այդ կինը մինչ այդ թաքցրել էր նոր մրցակցին, եթե խաբել էր իրեն այդ երեկո, պատճառը գուցե հենց այն էր, որ նորից հայտնված այդ սիրահարը բոլորովին էլ ցնորք ու մտացածին բան չէր այդ կնոջ համար, այլ ամեն ինչ էր նրա կյանքում, նրա ամբողջ հույսը։ Վայրկենապես հասկանալով այդ բանը, Կարամազովը համակերպվեց։ Ճիշտն ասած, պարոնայք երդվյալ ատենակալներ, ես չեմ կարող լուության մատնել այդ անակնկալ դիծը մեղադրյալի հոգում. կարծես թե նա բոլորովին ընդունակ չէր այդպիսի բան ի հայտ բերելու, և հանկարծ արդարության անողոք մի պահանջ է երևում նրա մեջ, կնոջ հանդեպ հարգանքի, կնոջ սրտի իրավունքները ճանաչելու մի պահանջ, այն էլ ե՞րբ. այն պահին, երբ այդ կնոջ համար իր ձեռքերը ներկել էր իր հոր արյունո՞վ։ Ճիշտ է նաև, որ թափված արյունն էլ արդեն վրե՞ժ էր աղաղակում այդ բոպեին, որովհետև նա, մեղադրյալը, որն իր սեփական հոգին ու իր ամբողջ երկրային կյանքն էր կործանել, պետք է որ այդ վայրկյանին ակամա զգացած ու հարց տված լինի ինքն իրեն. «Ի՞նչ եմ ես և ի՞նչ նշանակություն կարող եմ ունենալ հիմա նրա համար, այդ էակի համար, որին ես իմ հոգուց ավելի եմ սիրում, ի՞նչ եմ ես այդ «առաջին» ու «անվիճելի» սիրահարի համեմատությամբ, որ զղջացել է ու վերադարձել այդ կնոջ մոտ՝ մի ժամանակ իր խորտակած կնոջ, վերադարձել է նոր սիրով, պատվավոր առաջարկություններով, վերածնված ու արդեն երջանիկ կյանքի խոստումով։ Իսկ ես, դժբախտս, հիմա ի՞նչ կարող եմ տալ նրան, ի՞նչ կարող եմ առաջարկել»։ Կարամազովն այդ բոպեին հասկանում է այդ ամբողջը, հասկանում է, որ իր կատարած ոճիրը փակել է բոլո՞ր ճանապարհները իր առաջ, և որ ինքը պատժվելու դատապարտված մի ոճրագործ է միայն, այլ ո՞չ թե այն մարդը, որին կյանքն է ժպտում։ Այդ միտքը ճզմում ու ոչնչացնում է նրան։

Եվ ահա, նա վայրկենապես կանգ է առնում մի մոլեգին ծրագրի վրա, որ Կարամազովի բնավորությունն ունեցող մարդու համար միակ ու ճակատագրական ելքը պետք է թվար իր ահավոր դրությունից։ Այդ ելքը անձնասպանությունն էր։ Նա վազում է պարոն Պերխոտինի մոտ՝ ետ վերցնելու իր գրավ դրած ատրճանակները, և միաժամանակ ճանապարհին, վազելու ընթացքում, գրպանից հանում է ամբողջ իր փողը, որի համար դեռ քիչ առաջ իր ձեռքերը թաթախել է իր հոր արյունով։ Օ՜,

հիմա փողն ամենից ավելի է պետք նրան. մեռնո՞ւմ է Կարամազովը, անձնասպա՞ն է լինում Կարամազովը, և պիտի հիշե՞ն այդ բանը։ Զուր չէ՞, որ բանաստեղծ է նա, զուր չէ՞, որ իր կյանքն ապրել է երկու կողմից վառված մոմի նման. «Ուզղակի նրա՞ մոտ, նրա՞ մոտ՝ իմ սիրեցյալի՞, և այնտեղ, օ՜, այնտեղ մի փառավոր խնջույք կսարքեմ բոլորի համար, չտեսնված մի խնջույք, որ հիշեն ու պատմե՞ն երկար ժամանակ։ Խենթ ու խելառ գոռում-գոչումի մեջ, գնչուական խուլ երգերի ու պարերի մեջ բաժակ կբարձրացնեմ, կխմեմ պաշտելի կնոջ կենացը, կշնորհավորեմ նոր երջանկությունը նրա, իսկ հետո, տեղն ու տեղը, նրա ոտքերն ընկած, կշարժեմ իմ պանդը նրա աչքի առաջ և կպատժե՞մ իմ կյանքը։ Կգա ժամանակ, որ կհիշի նա Միտյա Կարամազովին, կտեսնի, թե ինչպե՞ս էր սիրում նրան Միտյան, կափսոսա՞ Միտյայի համար»։ Այս բոլորի մեջ շատ է երևում տպավորություն գործելու մարմաջը, ռոմանտիկ մոլուցքը, Կարամազովյան վայրի անսանձությունն ու դյուրազգացությունը, և դեռ, այո՞, մի ուրիշ բան էլ, պարոնայք ատենակալներ, մի բան, որ աղաղակում է նրա հոգում, արտիսում է նրա հոգում անդադար և թունավորում է նրա սիրտը մինչ ի մահ. այդ բանը խի՞զն է, պարոնայք ատենակալներ, խղճի զատաստանը, խղճի ահավո՞ր տանջանքները։ Բայց ատրճանակը ամեն ինչ կհարթի, ատրճանակն է միակ ելքը, և չկա ուրիշ ելք, իսկ հետո, այնտեղ... չգիտեմ, Կարամազովն արդյոք մտածո՞ւմ էր այդ բոպեին, թե «ինչ է լինելու այնտեղ» և կարո՞ղ է արդյոք Կարամազովը համլետորեն մտածել, թե ինչ է լինելու այն կողմը։ Ո՜չ, պարոնայք ատենակալներ, նրանք Համլետներ ունեն, իսկ մենք՝ դեռ Կարամազովնե՞ր միայն»։

Այստեղ Իպոլիտ Կիրիլովիչն ամենայն մանրամասնությամբ նկարագրեց, թե ինչպես Միտյան պատրաստվել է Մոկրոե գնալու, նկարագրեց այն, ինչ տեղի է ունեցել Պերխոտինի տանը, խանութում, կառապանների հետ։ Բերեց բազմաթիվ խոսքեր ու արտմունքներ՝ բոլորն էլ վկաներով հաստատված, և պատկերը սոսկալի համոզիչ տպավորություն գործեց ունկնդիրների վրա։ Ազդեցիկ էր մանավանդ փաստերի համադրությունը։ Մոլեգնորեն խռովահույզ և արդեն զգուշությունը կորցրած այդ մարդու մեղավորությունը անժխտելիորեն ի հայտ էր գալիս։

«Այլևս կարիք չուներ զգույշ լինելու,— ասաց Իպոլիտ Կիրիլովիչը։— Երկու կամ երեք անգամ, քիչ է մնացել, որ լրիվ

խոստովանի, համարյա ակնարկել է, միայն թե պարզապես կես է թողել իր ասելիքը։ (Այստեղ դատախազը վկաների ցուցմունքները մեջբերեց)։ Ճանապարհին նույնիսկ գոռացել է կառապանին. «Գիտե՞ս, որ մարդասպան ես տանում»։ Բայց, այնուամենայնիվ, չէր կարող դեռ լրիվ ասել ամեն ինչ. նախ պետք է Մոկրոե հասներ և այնտե՛ղ արդեն վերջացներ պոեմը։ Եվ սակայն, ի՞նչ էր սպասում դժբախտ մարդուն այնտեղ։ Մոկրոեում նա առաջին իսկ բոպեներից տեսնում է և ի վերջո կատարելապես հասկանում, որ իր «անվիճելի» մրցակիցը գուցե բոլորովին էլ անվիճելի չէ, և որ կենացի բաժակ ու նոր երջանկության շնորհավորանքներ չեն ուզում իրենից ու չեն ընդունում։ Բայց դուք, պարոնայք ատենակալներ, գիտեք արդեն փաստերը նախնական քննությունից։ Անժխտելի է Կարամազովի հաղթանակն իր մրցակցի վրա, և ահա այստեղ, օ՜, այստեղ արդեն բոլորովին նոր մի փուլ է սկսվում նրա հոգում, և դա նույնիսկ ամենասոսկալի փուլն է, որով երբևիցե անցել է կամ դեռ անցնելու է այդ հոգին։ Հաստատորեն կարելի է ասել, պարոնայք ատենակալներ,— զոչեց Իպոլիտ Կիրիլովիչը,— որ անարգված բնությունն ու հանցագործ սիրտը իրե՛նց վրեժն են լուծում, և ավելի՛ ևս լիակատար կերպով, քան որևէ երկրային արդարադատություն։ Եվ ավելին՝ արդարադատությունն ու երկրային պատիժը նույնիսկ թեթևացնում են բնության պատիժը, և նույնիսկ դրանք անհրաժեշտ են ոճրագործի հոգուն այդպիսի բոպեներին, փրկում են հոգին հուսահատությունից, որովհետև ես չեմ էլ կարող պատկերացնել Կարամազովի ապրած այն սարսափն ու բարոյական տանջանքները, երբ նա իմացավ, որ այդ կինը սիրում է իրեն, որ հենց ի՛ր համար հրաժարվում է «առաջին» և «անվիճելի» սիրահարից , և որ հենց իրեն, իրեն, «Միտյայի՛ն» է կանչում դեպի նորոգ մի կյանք, խոստանում է երջանկություն, և այն էլ ե՞րբ։ Երբ արդեն ամե՛ն ինչ վերջացել է Կարամազովի համար և այլևս ո՞չ մի բան հնարավոր չէ։ Ի դեպ, մի շատ կարևոր կետ նշեմ հարևանցիորեն, բացատրելու համար մեղադրյալի դրության բուն էությունը այդ պահին. մինչև այդ վերջին բոպեն, մինչև բուն իսկ ձերբակալության վայրկյանը, նրա համար այդ կինը մնում էր անմատչելի մի էակ, մոլեգնորեն ցանկալի, բայց անհասանելի։ Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ նա անձնասպան չեղավ հենց այդ ժամանակ, ինչո՞ւ հրաժարվեց իր ընդունած որոշումից և նույնիսկ մոռացավ, թե որտեղ է իր ատրճանակը։ Ահա,

սիրո այդ բուռն ծարավն էր հենց, տեղն ու տեղը այդ ծարավը հագեցնելու հո՛ւյսն էր, որ ետ պահեց նրան։ Խրախճանքի արբեցման մեջ նա կորել էր իր սիրուհուն, որ նույնպես խրախճանք էր անում նրա հետ և ավելի չքնաղ ու հրապուրիչ էր նրա համար, քան երբևիցե, ու Կարամազովը չէր հեռանում նրա կողքից, սքանչանում էր նրանով, անէանում նրա առաջ։ Այդ բուռն ծարավը կարող էր նույնիսկ մի վայրկյան խեղդել ոչ միայն ձերբակալության վախը, այլև բուն իսկ խղճի խայթը։ Բայց մի վայրկյան, օ՜, մի վայրկյան միայն։

Իմ պատկերացումով՝ ոճրագործի հոգեվիճակն այդ պահին անպայմանորեն ենթարկվել էր երեք բանի, որոնք կատարելապես ստրկացրել էին նրան. նախ, հարբած վիճակը, խելահեղ ժխորը, պարերի դոփդոփյունն ու երգերի ճղճղոցը, և նա, նա՝ իր սիրուհին, որ շառագունել էր գինուց, երգում էր ու պարում, հարբել էր ու ծիծաղադեմ նայո՜ւմ էր նրան։ Երկրորդ, այն հեռավոր, քաջալերող հույսը, թե ճակատագրական վախճանը հեռու է տակավին, մոտ չէ համենայն դեպս, առնվազն հաջորդ առավոտ միայն կգան ու կձերբակալեն իրեն։ Ուրեմն դեռ մի քանի ժամ կա, և դա շա՜տ է, սոսկալի՜ շատ։ Մի քանի ժամվա մեջ կարելի է շատ բան մտածել։ Պատկերացնում եմ, որ նրա զգացածը նման էր այն զգացողության, որ ունենում է մահապարտ ոճրագործը, երբ նրան տանում են մահապատժի, տանում են կախաղան. դեռ պետք է մի երկա՜ր ու երկար փողոց անցնել, այն էլ քայլաչափ ընթացքով, հազարավոր մարդկանց մոտով, հետո մի ուրիշ փողոց պետք է դառնալ և այդ փողոցի մյո՜ւս ծայրին է միայն սարսափելի հրապարակը։ Ինձ թվում է, որ երթի սկզբում, իր խայտառակության սայլին նստած, դատապարտյալը պետք է հենց այնպես զգա, որ դեռ մի անհուն կյանք կա իր առջև։ Բայց ահա տները ետ են մնում, սայլը շարունակ գնում է առաջ. օ՜, վնաս չունի, դեռ այնքա՜ն հեռու է մինչև երկրորդ փողոցի անկյունը, և նա դեռ արիաբար նայում է աջ ու ձախ՝ այդ հազարավոր անբարեգթորեն հետաքրքրասեր մարդկանց, որ իրենց հայացքները բևեռել են մահապարտին, և նրան դեռ թվում է, թե ինքն էլ ճիշտ նրանց պես մի մարդ է։ Բայց ահա արդեն մյուս փողոցի անկյունն էլ է հասնում. օ՜, վնաս չունի, վնաս չունի, դեռ մի լրիվ փողոց կա։ Եվ որքան էլ տներ անցնեն, նա միշտ էլ պիտի մտածի. «Դեռ շատ տներ կան առջևում»։ Եվ այդպես՝ մինչև վերջ, մինչև բուն իսկ հրապարա-

կը։ Իմ պատկերացումով՝ Կարամազովն էլ այսպես էր զգում այն ժամանակ։ «Դեռ մինչև հասնեն նրանք, կարելի է մի ելք գտնել,— մտածում էր նա,— օ՜, դեռ ժամանակ կա դիմադրության մասին խորհելու, պաշտպանության մի ծրագիր կազմելու, իսկ հիմա, հիմա... հիմա այնքա՜ն չքնաղ է իմ սիրուհին»։

Շփոթությամբ ու սարսափով է լցված նրա հոգին, բայց նա կարողանում է, այնուամենայնիվ, մի կողմ դնել իր փողի կեսը և պահել մի տեղ, այլապես չեմ կարող բացատրել, թե ո՜ւր կորավ մի ամբողջ կեսը այն երեք հազար ռուբլու, որ դեռ քիչ առաջ վերցրել էր հոր բարձի տակից։ Առաջին անգամը չէ, որ նա գնացել էր Մոկրոե, մի անգամ արդեն երկու օր խնջույք էր արել այնտեղ։ Նա գիտեր այդ փայտե հին, խոշոր տունը իր բոլոր ծակուծուկերով։ Ես ենթադրում եմ, որ փողի մի մասը թաքցրվել է հենց այն ժամանակ, ձերբակալությունից ոչ շատ առաջ և հենց այդ տանը՝ մի որևէ ճեղքի, մի որևէ խոռոչի մեջ, մի որևէ տախտակի տակ, մի որևէ անկյունում, կտուրի տակ,— և ինչո՞ւ։ Ինչպե՞ս թե ինչու։ Աղետը կարող է իսկույն վրա հասնել, և դեռ չի մտածել անշուշտ, թե ինչպես դիմադրավի, ժամանակ էլ չուներ մտածելու, գլխի մեջ մուրճով խփում են կարծես, սիրտը էլ ձգտում է նրան՝ իր սիրուհուն, բայց դե փո՜ղը... ամեն դեպքում էլ անհրաժեշտ է փողը։ Փող ունեցող մարդը ամեն տեղ էլ մարդ է։ Այդպիսի՜ բոպեին այդպիսի հաշվենկատություն գուցե անբնակա՞ն է թվում ձեզ։ Բայց չէ՞ որ ինքն է հավատացնում, որ դրանից մեկ ամիս առաջ, երբ նույնպես տագնապի ու ճակատագրական մի պահ էր նրա համար, երեք հազար ռուբլուց առանձնացրել է կեսը և կարել քսակի մեջ. ու թեև դա ճիշտ չէ իհարկե, և մենք հիմա կապացուցենք այդ բանը, բայց համենայն դեպս դա ցույց է տալիս, որ այդ գաղափարը ծանոթ էր Կարամազովին, նա մտմտացել էր դրա շուրջ։ Ավելին. երբ նա հետո քննիչին հավատացնում էր, թե հազար հինգ հարյուր ռուբլին առանձնացրել է քսակի մեջ (մի բան, որ երբեք չի եղել), գուցե հենց այդ պահին էլ հնարում էր քսակի պատմությունը, հնարում էր տեղն ու տեղը, վայրկենաբար, որովհետև դրանից երկու ժամ առաջ, անակնկալ մի ներշնչումով, առանձնացրել էր փողի կեսը և մի որևէ տեղ թաքցրել էր Մոկրոեում, որպեսզի ամեն պարագայի համար թողնի այնտեղ մինչև առավոտ, միայն թե իր մոտ չպահի փողը։ Երկո՞ւ անհատակ խորություն, պարոնայք ատենակալներ, հիշեցեք, որ Կարամազովը կարող է իր հայացքը ուղղել երկու անհատակ խորության, և երկուսին էլ միանգամից։ Մենք այդ տանը փնտրեցինք փողը, բայց չգտանք։ Գուցե հիմա էլ դեռ այնտեղ է այդ փողը, կամ էլ գուցե հաջորդ օրն իսկ անհետացել է և հիմա գտնվում է մեղադրյալի մոտ։ Համենայն դեպս, երբ նրան ձերբակալեցին, նա իր սիրուհու հետ էր, ծնկի էր եկել սիրուհու առաջ, օրիորդը պառկել էր մահճակալի վրա, իսկ մեղադրյալն իր ձեռքերը մեկնել էր նրան և այնքա՜ն էր մոռացել ամեն ինչ այդ բոպեին, որ նույնիսկ չլսեց ձերբակալողների մոտենալը։ Դեռ ժամանակ չէր ունեցել մի որևէ պատասխան պատրաստելու իր մտքում։ Ե՛վ նա, և՛ իր միտքը անակնկալի եկան։

Եվ ահա, նա գտնվում էր իր դատավորների առաջ, իր ճակատագիրը վճռողների առաջ։ Պարոնայք երդվյալ ատենակալներ, մեր պարտականությունները կատարելու ժամանակ այնպիսի պահեր են լինում, երբ մե՛զ համար էլ սոսկալի է դառնում մարդու հետ դեմ առ դեմ հանդիպելը, սոսկում ենք նաև մարդո՛ւ ճակատագրի համար։ Մարդու անասնական սարսափը դիտելու բոպեներն են դրանք, երբ ոճրագործն արդեն տեսնում է, որ ամեն ինչ կորավ, բայց դեռ շարունակում է պայքարել, դեռ մտադիր է պայքարել ձեր դեմ։ Դրանք այն բոպեներն են, երբ ինքնապահպանման բոլոր բնազդները միանգամից ոտքի են կանգնում նրա մեջ, և նա, փրկելու համար իր անձը, նայում է ձեզ հարցական ու տառապող մի հայացքով, ծակող մի հայացքով, որը գայթում և ուսումնասիրում է ձեր դեմքը, ձեր մտքերը, սպասում է, թե ո՞ր կողմից եք հարվածելու, և իր սասանվող մտքում հազար ու մի ծրագիր է կազմում վայրկենաբար, բայց և այնուամենայնիվ վախենում է խոսել, վախենում է, որ կմատնի՞ իրեն։ Սոսկալի՞ են մարդկային հոգու այդ ստորացուցիչ պահերը, հոգու այդ դեգերումները շարչարանքից շարչարանք, ինքնափրկության այդ անասնական տենչը, և երբեմն նույնիսկ քննիչի էլ սրտում դրանք ահուդող ու կարեկցանք են հարուցում ոճրագործի նկատմամբ։ Եվ ահա մենք այդ բոլոր բաներին ականատես եղանք այն ժամանակ։

Սկզբում նա շշմել էր, և իր սոսկումի մեջ մի քանի բառ թոցրեց բերանից, բառեր, որոնք շատ էին մատնում նրան. «Արյո՜ւն։ Արժանի՞ եմ»։ Բայց իսկույն զսպեց իրեն։ Ի՞նչ ասի, ի՞նչ պատասխանի։ Դեռ ոչինչ չի պատրաստել, միայն մի բան ունի պատրաստ՝ անհիմն մի ժխտում. «Հորս մահվան մեջ մեղավոր

չեմ»։ Ահա՛ նրա ցանկապատը առժամապես, իսկ այդ ցանկապատի ետև գուցե դեռ մի բան կկառուցի, մի որևէ մարտապատնեշ։ Մեր տալիք հարցերը կանխելով, նա շտապում է բացատրել իր առաջին մատնող բացականչությունները և ասում, թե իրեն մեղավոր է նկատում միայն ծառա Գրիգորիի մահվան համար։ «Այդ արյան համար մեղավոր եմ, բայց ո՞վ է սպանել հորս, պարոնայք, ո՞վ է սպանել։ Ո՞վ կարող է սպանած լինել, եթե ես չեմ»։ Լսո՞ւմ եք. մեզ է հարցնում այդ բանը, մեզ, որ եկել ենք այդ նույն հարցը հենց իրեն տալու։ Լսո՞ւմ եք այդ նախատրամադրող պստիկ մի խոսքը՝ «եթե ես չե՞մ», այդ կենդանական խորամանկությունը, այդ միամտությունն ու կարամազովյան անհամբերությունը։ Ես չեմ սպանողը, և էլ մտքովդ էլ չանցնի, թե ես եմ։ «Ուզում էի սպանել, պարոնայք, ուզում էի սպանել,— խոստովանում է իսկույն (շտապում է, օ՜, սոսկալի շտապում),— բայց մեղավոր չե՞մ այնուամենայնիվ, ես չե՞մ սպանողը»։ Նա զիջողություն է անում մեզ, թե ուզում էր սպանել, այսինքն թե՝ տեսե՞ք որքան անկեղծ եմ, դե ուրեմն իսկույն ևեթ հավատացեք, որ ես չեմ սպանողը։ Օ՜, այսպիսի դեպքերում ոճրագործը երբեմն անհավատալիորեն թեթևամիտ ու դյուրահավատ է դառնում։ Եվ ահա այդ պահին, իբրև թե բոլորովին պատահականորեն, քննիչը հանկարծ ամենամիամիտ հարցը տվեց նրան. «Բայց արդյոք Սմերդյակովը չէ՞ սպանողը»։ Եվ պատահեց այն, ինչ սպասում էինք. նա սոսկալի բարկացավ, որ կանխեցինք իրեն և անակնկալի բերեցինք, երբ ինքը դեռ ժամանակ չէր ունեցել նախապատրաստելու, ընտրելու և որսալու այն վայրկյանը, ուր Սմերդյակովին մեջտեղ հանելն ամենից ավելի հավանական կլիներ։ Ըստ իր բնավորության՝ ուղղակի նետվեց դեպի մյուս ծայրահեղությունը և ինքն սկսեց ամբողջ եռանդով հավատացնել մեզ, թե Սմերդյակովը չէր կարող սպանել, ընդունակ չէ սպանելու։ Բայց մի՛ հավատաք նրան, դա պարզապես նրա խորամանկությունն է. դեռ ինա՞վ, բնավ էլ չի հրաժարվում Սմերդյակովից, ընդհակառակը, դեռ մեջտեղ կգցի նրան, որովհետև էլ ո՞ւմ կարող է մեջտեղ գցել, եթե ոչ նրան. բայց մի ուրի՛շ անգամ կանի այդ բանը, որովհետև այդ բոպեին փչացավ գործը։ Գուցե միայն հաջորդ օրը կամ նույնիսկ մի քանի օր հետո մեջտեղ կգցի, գտնելով այն պահը, երբ ի՛նքը կգտնա մեր երեսին. «Տեսնո՞ւմ եք, ես ինքս ձեզնից ավելի էի ժխտում Սմերդյակովի խնդիրը, ինքներդ հիշում եք, բայց հիմա ես էլ համոզվեցի, որ նա՛ է սպանել, նա՛ պետք է սպանած լինի»։ Իսկ առայժմ նա ընկրկում է մոայլ ու ջղային մի ժխտումով, սակայն ահաբեկությունն ու ցասումը նրան թելադրում են շա՞տ անճարակ ու անճշմարտանման մի բացատրություն տալ, թե ինչպես ինքը հոր պատուհանից ներս է նայել ու պատկառանքո՞վ ետ քաշվել պատուհանից։ Խնդիրն այն է, որ նա դեռ չգիտե հանգամանքները, չգիտե, թե ինչ աստիճան կարևոր ցուցմունք է տվել ուշքի եկած Գրիգորին։

Սկսում ենք խուզարկել նրան։ Խուզարկությունը զայրացնում է նրան, բայց և քաջալերում, որովհետև երեք հազարը լրիվ չգտանք նրա մոտ, գտանք միայն կեսը։ Եվ իհարկե, այդ ցասկոտ լռության ու ժխտման պահին էր միայն, որ քսակի գաղափարն առաջին անգամ փայլատակեց նրա մտքում։ Անտարակույս, ինքն էլ զգում էր իր հնարած պատմության ամբողջ անհավատալիությունը և տանջվում էր, սոսկալի տանջվում, թե ինչպես ավելի ճշմարտանման դարձնի, այնպես հնարի, որ մի ամբողջ հավաստի վեպ դուրս գա դրանից։ Այդպիսի դեպքերում քննիչների առաջնագույն, ամենագլխավոր խնդիրն է՝ չթողնել, որ պատրաստվի հանցագործը, հանկարծակիի բերել նրան, որպեսզի իր փայփայած մտքերը դուրս տա ամենայն պարզամտությամբ, դրանց սուտը մատնող անհավանականությամբ ու հակասություններով։ Իսկ ստիպելու համար, որ հանցագործը խոսի, կա միայն մեկ հնարավորություն. անակնկալորեն ու կարծես պատահաբար մի որևէ նոր փաստ հայտնել նրան, դործի մի որևէ հանգամանքը, որ վիթխարի կարևորություն ունեցող բան է, բայց որը նա ոչ մի կերպ չէր ենթադրում մինչ այդ և ոչ մի կերպ չէր կարող նախատեսել։ Այդ փաստը պատրաստ էր մեր ձեռքում, օ՜, վաղուց պատրաստ. դա ուշքի եկած Գրիգորիի ցուցմունքն էր բաց դռան մասին, որտեղից դուրս է փախել մեղադրյալը։ Այդ դռան մասին նա բոլորովին մոռացել էր և չէր էլ ենթադրում, որ Գրիգորին կարող է տեսած լինել։ Ազդեցությունը վիթխարի եղավ։ Նա վեր թռավ ու հանկարծ գոռաց. «Ուրեմն Սմերդյակո՞վն է սպանել, Սմերդյակո՞վը», և ահա այդպիսով դուրս տվեց իր փայփայած, իր հիմնական միտքը, դուրս տվեց ավելի անհավանական ձևով, որովհետև Սմերդյակովը կարող էր սպանած լինել միայն այն պահին, երբ մեղադրյալը արդեն տապալել էր Գրիգորիին ու փախել էր։ Իսկ երբ հայտնեցինք նրան, որ Գրիգորին բաց դուռը տեսել է իր ընկնելուց

առաջ, իսկ սենյակից դուրս գալու բոպեին լսել է Սմերդյակովի տնքոցները միշնորմի ետևից, Կարամազովն ուղղակի շախշախվեց։ Իմ աշխատակիցը՝ մեր հարգելի ու սրամիտ Նիկոլայ Պարֆյոնովիչը հետո ինձ ասաց, որ լալու չափ խղճացել է նրան այդ վայրկյանին։ Եվ ահա հենց այդ վայրկյանին էլ, գործը շտկելու համար, նա փութաց պատմել մեզ այդ տխրահռչակ քսակի մասին, այսինքն թե՝ է՛հ, թող այդպես լինի, լսեցե՛ք այս պատմությունը։

Պարոնայք ատենակալներ, ես արդեն հայտնեցի ձեզ, թե ինչու այդ քսակի մեջ կարված փողի մոտացածին պատմությունը ոչ միայն անհեթեթություն եմ համարում, այլև ամենից ավելի անհավանական հերյուրանքը, որ կարելի էր հնարել տվյալ պարագային։ Եթե նույնիսկ մեկը գրազ գար, որ անհավատալի մի բան կհնարի ու կասի, այդ դեպքում իսկ անկարելի կլիներ ավելի անհավանական մի բան գտնել։ Ենդիրն այն է, որ հոխորտացող վիպասանին կարելի է մանրամասնություններով պապանձեցնել ու շախշախել, հենց այն մանրամասնություններով, որոնցով միշտ էլ այնքան հարուստ է իրականությունը, և որոնք, իբր թե որպես աննշան ու ավելորդ մի մանրուք, միշտ էլ անտեսվում են այդ ձախորդ ու ակամա հորինիչների կողմից և նույնիսկ երբեք նրանց մտքով էլ չեն անցնում։ Օ՜, այդ բոպեին նրանց չեն էլ հետաքրքրում այդ մանրամասնությունները, նրանց միտքը փառահեղ ամբողջությունն է ստեղծում միայն, և մեկ էլ ահա՝ մարդիկ հանդգնում են մի որևէ մանրո՛ւք դեմ անել նրանց։ Բայց հենց դրանով էլ նրանք բռնվում են։ Հարց է տրվում մեղադրյալին. «Լավ, բայց ձեր քսակը կարելու համար որտեղի՞ց բարեհաճեցիք վերցնել կտորը, ո՞վ կարեց ձեզ համար»։— «Ինքս կարեցի»։— «Իսկ կտա՞վը որտեղից բարեհաճեցիք վերցնել»։ Մեղադրյալն արդեն վիրավորվում է, գրեթե անարգական մի մանրուք է համարում դա իր համար, և անկեղծորե՞ն, անկեղծորեն է վիրավորվում, կհավատա՞ք։ Բայց նրանք բոլորն էլ այդպես են։ «Իմ վերնաշապկից պատռեցի»։— «Շատ լավ։ Ուրեմն վաղն ևեթ ձեր սպիտակեղենի մեջ կգտնենք այդ վերնաշապիկը, որից մի կտոր պոկված է»։ Եվ նկատի առեք, պարոնայք ատենակալներ, եթե իսկապես գտնեինք այդ վերնաշապիկը (և ինչպե՞ս կարելի էր չգտնել նրա ճամպրուկում կամ պահարանում, եթե իրոք այդպիսի մի վերնաշապիկ գոյություն ունենար), չէ՞ որ դա մի փաստ կլիներ արդեն, շոշափելի մի փաստ՝ հօգուտ

նրա ցուցմունքի ճշմարտության։ Բայց նա չի կարողանում այդ բանն ըմբռնել։ «Չեմ հիշում, գուցե վերնաշապկից չէր, տանտիրուհու տնային գլխարկի մեջ կարեցի»։— «Ի՞նչ տնային գլխարկ»։— «Ներանից վերցրի, գցել էր մի կողմ, կոլենկորե հին, անպետք մի բան»։— «Եվ հաստա՞տ հիշում եք այդ բանը»։— «Ոչ, հաստատ չեմ հիշում...»։ Եվ բարկանում է, բարկանում, այնինչ պատկերացրեք՝ ինչպե՞ս կարելի է չհիշել։ Մարդկային կյանքի ամենասարսափելի բոպեներին, ասենք երբ մահապատժի են տանում, ահա հենց այդ մանրուքներն են տպավորվում հիշողության մեջ։ Մարդը ամեն ինչ կմոռանա, բայց ճանապարհին մի որևէ կանաչ տանիք է տեսել աչքը, կամ էլ խաչի վրա թառած մի ճայլակ, և ահա այդ բանը կհիշի։ Չէ՞ որ նա, իր քսակը կարելիս, թաքնվում էր տնեցիներից, և նա պետք է հիշեր, թե ի՞նչ սոսրացուցիչ կերպով տանջվում էր ասեղը ձեռքին, վախենալով, որ հանկարծ մեկը ներս կմտնի ու անակնկալի կբերի իրեն, և ինչպե՞ս ամեն մի ձայնից վեր էր թռնում ու վազում միշնորմի ետև (նրա բնակարանում միշնորմ կա)... Բայց, պարոնայք ատենակալներ, ինչո՞ւ եմ այս բոլորը ասում ձեզ, բոլոր այս մանրամասնությունն՞երը, այս մանրուքնե՞րը,— բացականչեց հանկարծ Իպոլիտ Կիրիլովիչը։— Այ հենց այն պատճառով, որ մեղադրյալը դեռ մինչև ա՛յս բոպեն էլ համառորեն պնդում է ամբողջ այդ անհեթեթությունը։ Ամբողջ այս երկու ամսվա ընթացքում, նրա համար ճակատագրական այդ գիշերից ի վեր, նա ոչինչ չի բացատրել, ոչ մի հավաստի, պարզաբանող հանգամանք չի ավելացրել իր նախկին ցնորական ցուցմունքների վրա. այսինքն թե՝ մանրուքներ են այդ բոլորը, դուք հավատացեք իմ աղնի՛վ խոսքին։ Օ՜, մենք սիրով կհավատանք, մենք տենչո՛ւմ ենք հավատալ, թեկուզ և աղնիվ խոսքի՛ն։ Ինչ է, մարդկային արյան ծարավի՞ շնագայլե՞ր ենք մենք։ Տվե՛ք, ցույց տվեք մեզ գոնե մի հատիկ փաստ հօգուտ մեղադրյալի, և մենք կուրախանանք. բայց թող լինի շոշափելի, իրական փաստ, և ոչ թե մեղադրյալի հարազատ եղբոր եղբայրացությունը նրա դեմքի արտահայտությունից կամ էլ այն ենթադրությունը, թե երբ նա իր կուրծքն էր ծեծում՝ անպայման իր այդ քսակն էր ուզում մատնացույց անել, այն էլ մթան մեջ։ Մենք կուրախանանք նոր փաստի համար, առաջինը մե՛նք կհրաժարվենք մեր մեղադրանքից, և կփութա՞նք հրաժարվել։ Իսկ այժմ արդարությունն է

աղաղակում, և մենք պնդում ենք, մենք ոչ մի բանից հրաժարվել չենք կարող»։

Իպոլիտ Կիրիլովիչն անցավ իր ճառի ավարտին։ Տենդի մեջ էր կարծես, աղաղակում էր թափված արյան համար, հայրական արյան, որ թափել էր հայրասպան որդին՝ «կողոպուտի ստոր նպատակով»։ Հարապնդորեն մատնացույց էր անում փաստերի ողբերգական ու աղաղակող ամբողջությունը։ «Եվ ի՞նչ էլ լսեք իր տաղանդով հռչակված դատապաշտպանից,— չկարողացավ զսպել իրեն Իպոլիտ Կիրիլովիչը,— ինչպիսի՞ պերճաբարբառ ու սրտառուչ խոսքեր էլ ասվեն այստեղ, ձեր զգայուն լարերի՞ն դարկող խոսքեր, այնուամենայնիվ հիշեցեք, որ այս բոպեին դուք գտնվում եք մեր արդարադատության սրբավայրում։ Հիշեցե՞ք, որ դուք պաշտպաններն եք մեր արդարության, պաշտպանները մեր սրբազան Ռուսաստանի, նրա հիմունքների, ընտանեկան հարկի, ամենա՞յն սրբության։ Այո՞, դուք այստեղ Ռուսաստանն եք ներկայացնում տվյալ պահին, և ձեր դատավճիռը պիտի հնչի ոչ միայն այս դահլիճում, այլև ամբողջ Ռուսաստանում, և ամբողջ Ռուսաստանը պիտի լսի ձեզ՝ որպես իր պաշտպաններին ու դատավորներին, և ձեր դատավճիռը պիտի քաջալերի կամ հուսալքի նրան։ Արդ՝ մի՞ նահատակեք Ռուսաստանն ու նրա ակնկալությունները, մեր ճակատագրական տրոյական խոյանում է գլխապատառ, և դուցե դեպի կործանում։ Ու վաղուց արդեն, ամբողջ Ռուսաստանում, ձեռքերը մեկնում են և կոչ անում կանգնեցնել այդ կատաղի, այդ անզուսպ արշավը։ Եվ եթե ուրիշ ժողովուրդներն առայժմ դեռ մի կողմ են քաշվում և ճամփա տալիս սրարշավ տրոյկային, դա դուցե բոլորովին էլ պատկառանք զգալուց չէ, ինչպես ուզում էր կարծել բանասաեղծը, այլ պարզապես սոսկումից, նկատի առեք այս բանը։ Սոսկումից, դուցե նաև նողկանքից, բայց դեռ լավ է այն, որ մի կողմ են քաշվում. մեկ էլ տեսար՝ կդադարեն մի կողմ քաշվել և ամուր պատի նման դեմ կելնեն խոյացող տեսիլքի առաջ, իրե՞նք իսկ կկանգնեցնեն մեր սանձարձակության խելագար արշավը, ի խնդիր իրենց սեփական փրկության, լուսավորության ու քաղաքակրթության։ Մենք արդեն լսել ենք այդ տագնապալի ձայները Եվրոպայից։ Դրանք սկսում են հնչել արդեն։ Ուրեմն՝ մի՞ զայթակղեցնեք նրանց, մի՞ կուտակեք նրանց հաբաճուն ատելությունը այնպիսի մի դատավճռով, որ արդարացնում է հոր սպանությունը հարազատ որդու ձեռքով...»։

Մի խոսքով, Իպոլիտ Կիրիլովիչը թեև շատ էր տարվել իր փաստաբանությամբ, բայց այնուամենայնիվ այս ոգեշունչ կոչով ավարտեց իր ճառը, և իրոք, թողած տպավորությունն արտակարգ էր։ Ճառը վերջացնելուց հետո շտապ դուրս եկավ և, կըրկնում եմ, համարյա ուշաթափվեց մյուս սենյակում։ Դահլիճը չէր ծափահարում, բայց լրջամիտ մարդիկ գոհ էին։ Միայն տիկինները այնքան էլ գոհ չէին, սակայն նրանց էլ, այնուամենայնիվ, դուր էր եկել նրա պերճախոսությունը, մանավանդ որ դրա հետևանքներից բոլորովին չէին վախենում և ամենայն վստահությամբ սպասում էին Ֆետյուկովիչի ճառին. «Վերջապես նա կսկսի խոսել և անշուշտ բոլորի՞ն կհաղթի»։ Բոլորը նայում էին Միտյային. դատախազի ամբողջ ճառի ընթացքում նա լուռ նստել էր, ձեռքերը բռունցք արած, աչամները սեղմած, գլխահակ։ Մերթ ընդ մերթ միայն բարձրացնում էր գլուխը և լսում։ Մանավանդ երբ խոսքը վերաբերում էր Գրուշենկային։ Երբ դատախազը մեջ բերեց Ռակիտինի կարծիքը Գրուշենկայի մասին, Միտյայի դեմքին արհամարհական ու զայրալից մի ժպիտ երևաց, և նա բավական լսելի ձայնով բացականչեց. «Բեռնարնե՞ր»։ Իսկ երբ Իպոլիտ Կիրիլովիչը պատմում էր, թե ինչպես է ինքը հարցաքննել ու տանջել նրան Մոկրոեում, Միտյան գլուխը բարձրացրեց ու լսեց ահռելի հետաքրքրությամբ։ Եղավ նույնիսկ մի պահ, երբ նա կարծես ուզում էր վեր թռնել ու մի բան գոռալ, բայց զսպեց իրեն և միայն ուսերը թոթվեց արհամարհանքով։ Հետագայում մեր քաղաքի մարդիկ խոսակցության առարկա դարձրին ճառի ավարտական մասը, այսինքն դատախազի քաջագործությունները Մոկրոեում՝ մեղադրյալին հարցաքննելու ժամանակ, և սկսեցին մի թեթև ծիծաղել Իպոլիտ Կիրիլովիչի վրա. «Չկարողացավ համբերել մարդը, պարծեցավ իր ընդունակություններով»։

Նիստն ընդհատվեց, բայց շատ կարճ տևեց ընդմիջումը՝ քառորդ ժամ, առառավելն քսան բոպե։ Չորս կողմից խոսակցություններ ու բացականչություններ էին լսվում։ Ոմանք մնացել են հիշողությանս մեջ։

— Լո՞ւրջ ճառ է,— նկատեց խոժոռադեմ մի պարոն՝ խմբբերից մեկում։

— Շատ հոդեբանություն խաղացրեց,— լսվեց մի ուրիշ ձայն։

— Բայց դե ամե՞ն ինչ ճիշտ էր, անժխտելի ճշմարտություն։

— Այո, դրա վարպետն է։

— Ամեն ինչ ամփոփեց։

— Մե՞զ էլ, մեզ էլ ամփոփեց,— միացավ մի երրորդ ձայն,— ճառի սկզբում, հիշո՞ւմ եք. թե բոլո՞րն էլ Ֆյոդոր Պավլովիչի նման են։

— Վերջում էլ ասաց։ Բայց դա փչոց էր։

— Եվ անորոշ բաներ էլ կային։

— Մի քիչ տարվեց մարդը։

— Անարդար էր, անարդար։

— Չէ՞, համենայն դեպս վարպետ բան էր։ Երկար սպասում էր մարդը, և ասելիքն ասա՞ց վերջապես, հե-հե՞։

— Տեսնենք դատապաշտպա՞նը ինչ կասի։

Մի ուրիշ խմբում.

— Բայց պետերբուրգցուն իզուր կպավ հիմա. «ձեր զգայուն լարերի՞ն զարկողը», հիշո՞ւմ եք։

— Այո, դա անհարմար բան էր։

— Շտապեց։

— Ջղային մարդ է։

— Այ մենք ծիծաղում ենք, բայց մեղադրյա՞լն ինչ է զգում։

— Այո՞, ի՞նչ է զգում Միտենկան։

— Է՛հ, տեսնենք դատապաշտպա՞նը ինչ կասի։

Երրորդ խմբում.

— Այդ ի՞նչ տիկին է, այն հաստը, լորնետով, որ ծայրն է նստել։

— Գեներալի կին է, ամուսնուց բաժանված, գիտեմ նրան։

— Հա՞, հասկացա՞նք ինչի համար է լորնետը։

— Անպետք բան է։

— Չէ՞, ախորժակ է բացում։

— Երկու աթոռ անդին մի շեկլիկ է նստել, ավելի լավիկն է։

— Բայց ինչպե՞ս են նրան հանկարծակիի բերել Մոկրոեում, հը՞, վարպետություն է, չէ՞։

— է հա՛, վարպետություն է։ Նորի՞ց պատմեց։ Արդեն քանի՞ անգամ է պատմել սրա-նրա տանը։

— Հիմա նորից չհամբերեց։ Ինքնասիրությո՞ւն։

— Նեղացած մարդ է, հե-հե՞։

— Եվ շուտ էլ նեղացող։ Մեկ էլ՝ հռետորությունը շատ էր, նախադասությունները երկա՞ր։

— Եվ ուզում է վախեցնել, նկատի առեք, անընդհատ ուզում է վախեցնել։ Տրոյկայի մասին հիշո՞ւմ եք։ «Նրանք Համլետներ ունեն, իսկ մենք՝ դեռ Կարամազովնե՞ր միայն»։ Ճարպիկ խոսք էր։

— Լիբերալիզմին էր խնկարկում։ Վախենում է մարդը։

— Եվ դատապաշտպանից էլ է վախենում։

— Այո՞, տեսնենք ինչ կասի պարոն Ֆեյուկովիչը։

— Է՛հ, ինչ էլ ասի, մեր այս գյուղացիներին չի կարող տեղից շարժել։

— Կարծո՞ւմ եք։

Չորրորդ խմբում.

— Բայց տրոյկայի մասին լավ ասաց, չէ՞, այսինքն երբ մյուս ժողովուրդների մասին էր խոսում։

— Եվ ճիշտ է, հիշո՞ւմ ես, երբ ասում է, թե ժողովուրդները չեն սպասելու։

— Այսի՞նքն։

— Այ անցյալ շաբաթ անգլիական պառլամենտի մի անդամ վեր է կացել և նիհիլիստների կապակցությամբ հարց է տվել մինիստրությանը՝ արդյոք ժամանակը չէ՞, որ միջամտեն այս բարբարոս ազգի գործերին, այսինքն մեզ բարեկրթեն։ Իպոլիտը նրան էր ակնարկում, գիտեմ, նրան էր ակնարկում։ Անցյալ շաբաթ խոսում էր դրա մասին։

— Լեզուն երկար է, ձեռքը կարճ։

— Ո՞ւմ ձեռքը։ Ինչո՞ւ կարճ։

— Կփակենք կրոնշտադտը և ցորեն չենք տա նրանց։ Էլ որտեղի՞ց կարող են առնել։

— է՛, Ամերիկայից։ Հիմա Ամերիկան է։

— Դատարկ բան ես ասում։

Բայց զանգը հնչեց, բոլորը վազեցին իրենց տեղերը։ Ֆեյուկովիչը բարձրացավ ատյան։

X

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆԻ ՃԱՌԸ։ ԵՐԿՈՍԱՑՐԻ ՄԻ ՍՈՒՐ

Նշանավոր հռետորի առաջին իսկ բառերից կատարյալ լռություն տիրեց։ Ամբողջ դահլիճն աչքերը բևեռեց նրան։ Ջափիշ ավելի ուղղակի, պարզ և համոզված սկսեց նա, բայց առանց ամենադույզն գոռոզության։ Գերնախասությամբ, հրայրքոտ շեշ-

տերով կամ հուզաթաթավ բառերով ազդելու նվաղագույն փորձն անգամ չարեց։ Նման էր մի մարդու, որ սկսում է խոսել համակիրների մտերիմ շրջանակում։ Ձայնը գեղեցիկ էր, զորեղ ու հաճելի, և այդ ձայնի մեջ իսկ արդեն անկեղծ ու պարզասիրտ մի բան էր հնչում կարծես։ Բայց բոլորն էլ անմիջապես հասկացան, որ հռետորը կարող է հանկարծ բարձրանալ մինչև իսկական հրայրքը և «ցնցել սրտերը չտեսնված ուժով»։ Խոսում էր գուցե ավելի անկանոն լեզվով, քան Իպոլիտ Կիրիլովիչը, բայց առանց երկար նախադասությունների և նույնիսկ ավելի ճշգրիտ։ Մի բան դուր չեկավ տիկիններին. նա անընդհատ առաջ էր ծռվում մի տեսակ, հատկապես ճառի սկզբում, ոչ թե գլուխ էր տալիս, այլ կարծես ձգտում էր նետվել դեպի իր ունկնդիրները, ընդ որում իր երկար թիկունքի հենց կեսից էր կռանում, կարծես այդ երկար ու բարակ թիկունքի մեջտեղը ծխնի էր դրված, այնպես որ համարյա ուղիղ անկյունով կարող էր թեքվել։ Ճառի սկզբում մի տեսակ ցաքուցրիվ էր խոսում, կարծես առանց սիստեմի, փաստերն անջատ-անջատ վերցնելով, բայց վերջ ի վերջո ամբողջություն դուրս եկավ։ Նրա ճառը կարելի էր երկու մասի բաժանել. առաջին կեսը քննադատություն էր, մեղադրանքի հերքումը, երբեմն չարախինդ ու հեգնական։ Բայց ճառի երկրորդ կեսում հանկարծ փոխեց իր շեշտը և նույնիսկ պաշտպանության եղանակը, և միանգամից բարձրացավ ոգեշունչ հրայրքի, իսկ դահլիճը կարծես սպասում էր այդ բանին և ծայրից ծայր սկսեց թպրտալ հրճվանքից։

Նա ուղղակի մոտեցավ գործին և սկսեց այն բանից, թե իր ասպարեզը Պետերբուրգն է թեև, բայց առաջին անգամը չէ, որ այցելում է Ռուսաստանի քաղաքները՝ մեղադրյալներին պաշտպանելու, բայց այն մեղադրյալներին, որոնց անմեղությանը համոզված է ինքը, և կամ նախազգում է, որ նրանք անմեղ են։ «Նույնը պատահեց նաև ներկա դեպքում,— բացատրեց նա։— Լրագրային առաջին թղթակցություններից արդեն նկատեցի մի բան, որ խիստ զարմացրեց ինձ հօգուտ մեղադրյալի։ Մի խոսքով, ամենից առաջ ինձ հետաքրքրեց իրավաբանական մի իրողություն, որ թեև հաճախ է կրկնվում դատական առօրյայում, բայց երբեք, ինձ թվում է, չի արտահայտվել այնպիսի լիությամբ ու այնպիսի բնորոշ յուրահատկություններով, ինչպես ներկա գործի մեջ։ Այդ իրողությունը պետք է բանաձևեի միայն իմ ճառի վերջում, խոսքս ավարտելու ժամանակ, բայց միտքս արտա-

հայտեմ նաև հենց սկզբից, որովհետև ես թուլություն ունեմ ուղղակի բուն նյութին անցնելու և տպավորիչ բաները չեմ պահում հետաձգի համար, խնայողաբար չեմ օգտագործում։ Գուցե անհաշվենկատություն է դա իմ կողմից, բայց գոնե անկեղծ է։ Այդ իմ միտքը, այդ իմ բանաձևը հետևյալն է. կա փաստերի ճնշող մի համադրություն մեղադրյալի դեմ, և միաժամանակ չկա մի փաստ, որ դիմանա քննադատության, եթե այդ փաստը քննենք առանձին, ինքն իր մեջ։ Այնուհետև որքան հետևում էի այս գործին ըստ իմ լսածների և լրագրային տեղեկությունների, այնքան իմ միտքը հաստատվում էր ավելի ու ավելի, և հանկարծ մեղադրյալի հարազատներից հրավեր ստացա պաշտպանելու նրան։ Իսկույն շտապեցի այս քաղաքը և այստեղ արդեն վերջնականապես համոզվեցի։ Ահա ուրեմն, փաստերի այդ ահավոր համադրությունը փշրելու և յուրաքանչյուր մեղադրական փաստի անապացույց և ցնորական լինելը ցույց տալու համար էր, որ հանձն առա այս գործի պաշտպանությունը»։

Այսպես սկսեց դատապաշտպանը և հանկարծ բարձրաձայն հայտարարեց.

«Պարոնայք երդվյալ ատենակալներ, ես այստեղ նոր մարդ եմ։ Բոլոր տպավորություններն ստացել եմ առանց կանխակալության։ Մեղադրյալը, անզուսպ բնավորությամբ ու սանձարձակ մարդ, ինձ չի վիրավորել նախօրոք, ինչպես որ արել է գուցե հարյուր հոգու այս քաղաքում, որի պատճառով էլ շատերը կանխապես նախատրամադրված են նրա դեմ։ Իհարկե, ես էլ գիտակցում եմ, որ այստեղի հասարակության բարոյական զգացումը բորբոքվել է իրավացիորեն, մեղադրյալը անզուսպ է և ապերասան։ Եվ սակայն ընդունում էին նրան այստեղի հասարակության մեջ, նույնիսկ մեծատաղանդ մեղադրողի ընտանիքում նա փայփայված անձ էր։ (Nota bene։ Այս խոսքի վրա երկու-երեք ծիծաղ լսվեց դահլիճում, ու թեև ծիծաղողներն անմիջապես զսպեցին իրենց, բայց բոլորն էլ նկատեցին դա։ Մեր քաղաքում բոլորին հայտնի էր, որ դատախազը Միտյային ընդունում էր իր կամքին հակառակ, լոկ այն պատճառով, որ նրան, չգիտես ինչու, հետաքրքրական մարդ էր համարում իր կինը՝ վերին աստիճանի առաքինի ու պատվավոր, բայց ցնորքներով տարված ու քմահաճ մի տիկին, որ սիրում էր որոշ դեպքերում հակադրվել իր ամուսնուն, առավելապես մանրուքների մեջ։ Ի միջի այլոց, Միտյան բավական հազվադեպ էր այցելում

նրանց տունը)։ Բայց այնուամենայնիվ համարձակվում եմ ենթադրել,— շարունակեց դատապաշտպանը,— որ նույնիսկ իմ ընդդիմախոսի նման մի մարդ, որ անկախ մտքի և արդար բնավորության տեր է, կարող էր ինչ-որ կանխակալ ու սխալ կարծիք կազմած լինել իմ դժբախտ պաշտպանյալի հանդեպ։ Օ՜, դա այնքան բնական է. դժբախտ երիտասարդը ամեն ինչ արել է, որ արժանանա նույնիսկ կանխակալ վերաբերմունքի։ Իսկ բարոյական զզացումը և առավել ևս գեղասիրական զզացումը եթե վիրավորվում է, երբեմն անողոք է դառնում։ Իհարկե, մեղադրական մեծատաղանդ ճառում բոլորս էլ լսեցինք մեղադրյալի բնավորության ու արարքների խստապահանջ վերլուծությունը, քննադատական խստապահանջ վերաբերմունք տեսանք գործի նկատմամբ. և մանավանդ՝ հոգեբանական այնպիսի խորություններ ի ցույց դրվեցին գործի էությունը բացատրելու համար, որ անհնար կլիներ թափանցել այդ խորությունների մեջ, եթե իմ ընդդիմախոսը որևէ չափով դիտավորյալ ու չարամտորեն կանխակալ վերաբերմունք ունենար մեղադրյալի անձի նկատմամբ։ Բայց կան բաներ, որ նույնիսկ ավելի վատ, ավելի կործանարար են նման դեպքերում, քան ամենաչարամիտ ու դիտավորյալ վերաբերմունքը գործի հանդեպ։ Այսինքն՝ եթե տարվում ենք, օրինակ, այսպես ասած մի որոշ գեղարվեստական խաղով, և մեզ տիրում է գեղարվեստական ստեղծագործության, այսպես ասած վեպ ստեղծելու պահանջը, մանավանդ երբ ասված մեզ առատորեն օժտել է հոգեբանական ձիրքերով։ Դեռ Պետերբուրգում, երբ դեռ նոր էի պատրաստվում գալ այստեղ, ինձ նախազգուշացրին, և արդեն ինքս էլ գիտեի առանց որևէ նախազգուշացման, թե այս քաղաքում իմ ընդդիմախոսն է լինելու մի խոքաթափանց ու շատ նրբամիտ հոգեբան, որն իր այդ հատկությամբ վաղուց արդեն մի յուրահատուկ հռչակ է ձեռք բերել մեր դեռ երիտասարդ իրավաբանական աշխարհում։ Բայց դե հոգեբանությունը, պարոնայք, թեև խորունկ բան է, բայց այնուամենայնիվ նման է երկսայրի սուրի, որ ա՜յս կողմից էլ է կտրում, ա՜յն կողմից էլ (ծիծաղ դահլիճում)։

Օ՜, իհարկե, ներեցեք իմ այս տափակ համեմատությունը։ Ես պերճախոսության վարպետ չեմ։ Եվ սակայն, ահա մի օրինակ. վերցնում եմ առաջին պատահած կետը իմ ընդդիմախոսի ճառից։ Մեղադրյալը, փախչելով գիշերը այգում, մագլցում է ցանկապատի վրա և սանդկոթի հարվածով տապալում ծառային,

որ հանկարծ իր ոտքից էր բռնել։ Հետո իսկույն ետ է ցատկում այգու մեջ և ամբողջ հինգ րոպե զբաղվում է տապալված ծերունիով, աշխատելով իմանալ՝ սպանե՞լ է նրան, թե ոչ։ Եվ ահա, դատախազը ոչ մի կերպ չի ուզում հավատալ մեղադրյալի այն ցուցմունքին, թե ինքը խղճահարությունից է ետ ցատկել ծերունի Գրիգորիի մոտ։ «Ոչ,— ասում է նա,— կարո՞ղ է այդպիսի դյուրազգացություն լինել այդպիսի բոպեին. անբնական է դա, և մեղադրյալը ետ է ցատկել հենց համոզվելու համար՝ արդյոք կենդանի՞ է, թե սպանված է իր չարագործության միակ վկան, ուստի հենց դրանով էլ հաստատել է, որ կատարե՛լ է այդ չարագործությունը, քանի որ չէր կարող որևէ այլ շարժառիթով կամ զզացումով ետ ցատկել այգու մեջ»։ Ահա սա հոգեբանություն է. բայց վերցնենք այդ նույն հոգեբանությունը և կիրառենք, միայն թե մյուս կողմից, և արդյունքը ճիշտ նույնքան ճշմարտանման կլինի։ Մարդասպանը ետ է ցատկում նախազգուշությունից մղված, որպեսզի համոզվի՝ վկան կենդանի՞ է, թե ոչ, մինչդեռ նա, նույնինքն դատախազի պնդումով, դեռ քիչ առաջ վիթխարի մի հանցանշան է թողել իր սպանած հոր առանձնասենյակում, այսինքն այն պատռված ծրարը, որի վրա գրված էր, թե երեք հազար ռուբլի է եղել մեջը։ «Եթե այդ ծրարը տաներ իր հետ, ամբողջ աշխարհում ոչ ոք չէր իմանա, թե ծրարը է գոյություն ունեցել, մեջն էլ փող, և թե ուրեմն մեղադրյալը գողացել է այդ փողը»։ Սրանք հենց դատախազի խոսքերն են։ Ուրեմն, տեսե՞ք, պարզվում է, որ մի դեպքում իսպառ բացակայել է նախազգուշությունը, մարդը գլուխը կորցրել, վախեցել ու փախել է, հանցանշանը թողնելով հատակին, իսկ երբ երկու րոպե հետո մի ուրիշ մարդու է հարվածում և սպանում, իսկույնևեթ մեջտեղ է գալիս նախազգուշության ամենաքարսիրտ ու հաշվենկատ զզացումը՝ պատրաստ մեզ ծառայելու։ Բայց ենթադրե՞նք, ենթադրենք, թե այդպես է եղել. ասում են՝ հոգեբանության նրբությունն էլ հենց այն է, որ այդպիսի հանգամանքներում մարդը անմիջապես արյունարբու ու սրատես է դառնում կովկասյան արծիվի նման, իսկ հաջորդ բոպեին՝ ողորմելի խլուրդի նման կույր ու երկչոտ։ Բայց եթե ես այնքա՞ն արյունարբու եմ և դժանորեն հաշվենկատ, որ սպանելուց հետո ետ եմ ցատկել պարզապես նայելու համար, թե արդյոք կենդանի՞ է իմ չարագործության վկան կամ ոչ, ապա ի՞նչ կարիք ունեմ ամբողջ հինգ րոպե այդ իմ նոր զոհով զբաղվելու, և մեկ

էլ դեռ առիթ տալու, որ գուցե ուրիշ վկաներ ելնեն իմ դեմ։ Ինչո՞ւ այդ տապալված մարդու գլուխը սրբեմ և թաշկինակս թրջեմ արյունով, այնպես որ հետո այդ թաշկինակն էլ հանցանշան լինի իմ դեմ։ Ո՞չ, եթե մարդը այնքա՞ն հաշվենկատ ու քարսիրտ է, ավելի լավ չէ՞ր լինի, որ ետ ցատկելուց հետո ուղղակի նորից ու նորից խփեր տապալված ծառայի գլխին այդ նույն սանդկոթով, որպեսզի վերջնականապես սպաներ նրան և, ոչընչացնելով վկային, ամեն մի մտահոգությունից ազատեր իր սիրտը։ Եվ, վերջապես, մարդը ետ է ցատկում, որպեսզի ստուգի՝ կենդանի՞ է իր չարագործության վկան, թե ոչ, և նույն րոպեին էլ մի ուրիշ վկա է թողնում արահետի վրա, այսինքն այդ սանդկոթը, որ նա վերցրել է երկու կանանց աչքի առաջ, և որոնք հետո միշտ էլ կարող են ճանաչել այդ սանդկոթը որպես իրենցը և վկայել, թե նա իրենցից է վերցրել այդ իրը։ Եվ խնդիրն այն է, որ նա ոչ թե մոռացել է սանդկոթը արահետի վրա, ոչ թե կորցրել է ցրվածության կամ շփոթմունքի հետևանքով, ո՞չ, նա հենց մի կողմ է շպրտել իր զենքը, որովհետև սանդկոթը գտել են տասնհինգ քայլ հեռու այնտեղից, ուր ընկել էր Գրիգորին։ Հարց է ծագում, ինչո՞ւ է այդպես արել։ Այ հենց որովհետև ցավ է զգացել, որ մարդ սպանեց, ծերունի ծառային սպանեց, ուստի և վրդովմունքով, անիծելով շպրտել է սանդկոթը, որ սպանության զենք էր դարձել. այլապես ինչո՞ւ պետք է այդպիսի թափով նետեր սանդկոթը։ Իսկ եթե նա կարող էր ցավ ու խղճահարություն զգալ այն պատճառով, որ մարդ է սպանել, իհարկե դա նշանակում է, որ հորը չէր սպանել. եթե սպանած լիներ հորը, մի ուրիշի համար ետ չէր ցատկի խղճահարությունից, այդ դեպքում արդեն տարբեր զգացում կունենար, ոչ թե խղճահարության, այլ ինքնափրկության մղումով կգործեր, և դա այդպես է անշուշտ։ Ընդհակառակը, կրկնում եմ, վերջնականապես կչախչախեր նրա գանգը, և ոչ թե հինգ րոպե կզբաղվեր նրանով։ Խղճահարությունն ու բարի զգացումը նրա սրտում տեղ են գտել հենց այն պատճառով, որ մինչ այդ մաքուր է եղել նրա խիղճը։ Ահա ուրեմն, սա արդեն ուրիշ հոգեբանություն է։ Դիտմամբ ես ինքս էլ հոգեբանության դիմեցի հիմա, պարոնայք ատենակալներ, որպեսզի ակնառու կերպով ցույց տամ, թե կարելի է ամեն ինչ ապացուցել դրա շնորհիվ։ Ամբողջ խնդիրն այն է, թե ով է օգտագործում այդ միջոցը։ Հոգեբանությունը ամենալուրջ մարդկանց իսկ տանում է վիպասանության դիրքը,

և դա լինում է բոլորովին ակամայորեն։ Ես խոսում եմ ավելորդ հոգեբանության մասին, պարոնայք ատենակալներ, նկատի ունեմ դրա որոշ չարաշահումը»։

Դահլիճում նորից լսվեցին հավանություն տվող ծիծաղներ, և նորից դատախազի հասցեին։ Ես մանրամասնորեն չեմ մեջբերելու դատապաշտպանի ամբողջ ճառը, միայն մի քանի հատվածներ կվերցնեմ, մի քանի կարևորագույն կետեր։

XI

ՓՈՂ 2Ի ԵՂԵԼ։ ԿՈՂՈՊՈՒՏ 2Ի ԵՂԵԼ

Դատապաշտպանի ճառում կար մի կետ, որ բոլորին էլ շշմեցրեց. նա լիովին ժխտեց այդ ճակատագրական երեք հազար ռուբլու գոյությունը, ուստի և դրանք գողանալու հնարավորությունը։

«Պարոնայք երդվյալ ատենակալներ,— սկսեց դատապաշտպանը,— ամեն մի նոր ու չնախապաշարված մարդու զարմացնում է ներկա գործի մի ամենաբնորոշ հատկությունը, այսինքն այն, որ կա մեղադրանք կողոպուտի համար, և միաժամանակ բացարձակապես անհնար է փաստացիորեն ցույց տալ, թե ինչ է գողացվել։ Ասում են, թե փող է գողացվել, այսինքն երեք հազար ռուբլի, բայց թե արդյոք իսկապես գոյություն ունեցե՞լ է այդ գումարը՝ ոչ ոք չգիտե։ Մտածեցեք. նախ և առաջ, ինչպե՞ս ենք իմացել, որ եղել է այդ երեք հազար ռուբլին, և ո՞վ է տեսել այդ փողը։ Միակ մարդը, որ տեսել է և հավաստել, թե այդ գումարը դրված է եղել մակագրված ծրարի մեջ, ծառա Սմերդյակովն է։ Նա ինքն էլ այդ մասին հաղորդել է մեղադրյալին ու նրա եղբորը՝ Իվան Ֆյոդորովիչին, դեռ աղետից առաջ։ Օրիորդ Սվետլովային նույնպես իմաց է տրվել։ Բայց այս երեք անձերից ոչ ոք իր աչքով չի տեսել փողը, դարձյալ Սմերդյակովն է տեսել միայն։ Այստեղ ինքնաբերաբար մի հարց է ծագում. եթե նույնիսկ ճիշտ է, որ եղել է այդ փողը և Սմերդյակովը տեսել է, ապա ե՞րբ է տեսել վերջին անգամ։ Իսկ ի՞նչ կասեք, եթե Ֆյոդոր Պավլովիչը հանել է փողը անկողնի տակից ու վերստին դրել իր դրամատուփի մեջ, առանց հայտնելու իր ծառային։ Նրկատի ունեցեք, որ փողը, Սմերդյակովի ասելով, դրված է եղել անկողնի տակ, ներքնակի տակ. մեղադրյալը պետք է այդ փողը

դուրս քաշեր ներքնակի տակից, և սակայն անկողինը բոլորովին չի ճմրթվել, մի բան, որ ուշի-ուշով նշված է արձանագրության մեջ։ Ինչպե՞ս կարող էր մեղադրյալը բացարձակապես չճմրթել անկողինը, և ավելին՝ ինչպե՞ս կարող էր իր արյունոտ ձեռքերով չկեղտոտել նոփ-նոր ու նուրբ սավանները, որ հատկապես փռել էին այդ անգամ։

Բայց կարող են ասել ինձ. հապա ծրա՞րը, որ ընկել էր հատակին։ Այո՛, ահա այդ ծրարի մասին արժե խոսել։ Ես մի քիչ դարմացա նույնիսկ, երբ մեծատաղանդ մեղադրողը, խոսելով այդ ծրարի մասին՝ իր ճառի հենց այն հատվածում, ուր նա ցույց էր տալիս անհեթեթությունը այն ենթադրության, թե Սմերդյակովն է սպանել, հանկարծ ի՛նքը (լսո՞ւմ եք, պարոնայք, ինքը անձամբ) հայտարարեց, «եթե չլիներ այդ ծրարը, չմնար հատակին որպես հանցանշան, եթե գողացողը վերցներ ու տաներ իր հետ, ամբողջ աշխարհում ոչ ոք չէր իմանա, թե մի ծրար է եղել, մեջն էլ փող, և թե ուրեմն մեղադրյալը գողացել է այդ փողը»։ Այսպես ուրեմն, հենց դատախազի իսկ խոստովանությամբ, իմ պաշտպանյալի վրա կողոպուտի մեղադրանք բարդելու միակ հիմքը եղել է այդ թղթի պատռված կտորը, որի վրա մակագրություն կա. «այլապես ոչ ոք չէր իմանա, թե կողոպուտ է եղել, գուցե նույնիսկ չէին իմանա, թե փող է եղել»։ Բայց մի՞թե լոկ այն փաստը, որ թղթի այդ կտորը ընկած էր հատակին, կարող է ապացույց լինել, թե փող կար դրա մեջ և թե այդ փողը գողացվել է։ «Բայց չէ՞ որ Սմերդյակովը տեսել է փողը ծրարի մեջ»,— կպատասխանեն ինձ։ Սակայն ե՞րբ, ե՞րբ է նա վերջին անգամ տեսել, ահա ա՛յս եմ հարցնում ձեզ։ Ես խոսեցի Սմերդյակովի հետ, և նա ինձ ասաց, թե տեսել է աղեռից երկու օր առաջ։ Իսկ ինչո՞ւ ես չեմ կարող ենթադրել, օրինակ, այսպիսի մի հանգամանք. ծերունի Ֆյոդոր Պավլովիչը փակվել է տանը, շղագրգիռ անհամբերությամբ սպասում է իր սիրեցյալին, ուրիշ անելիք չունի, և հանկարծ նրա խելքին փչում է հանել ծրարը և բանալ։ «Ի՞նչ կարիք կա ծրարի,— մտածում է նա,— մեկ էլ տեսար՝ չհավատաց, իսկ եթե երեսուն հատ վարդագույն հարյուրանոցները մի այսպիսի կապոցով ցույց տամ իրեն, միգուցե ավելի ուժեղ ազդի, բերնի շրերը վազեն»։ Եվ ահա նա պատռում է ծրարը, փողը հանում, իսկ ծրարը տիրականորեն գցում հատակին, իհարկե

ոչ մի վախ չունենալով, թե հանցանշան է թողնում։ Լսեցեք, պարոնայք ատենակալներ, կա՞ մի բան, որ ավելի հավանական լինի, քան այսպիսի ենթադրությունը և այսպիսի փաստը։ Ո՞վ ասաց, որ անհնար է դա։ Բայց եթե գեթ որևէ նման բան կարող էր տեղի ունենալ, չէ՞ որ այդ դեպքում ինքնըստինքյան չքանում է կողոպուտի մեղադրանքը. փող չի եղել, ուրեմն և կողոպուտ չի եղել։ Եթե հատակին ընկած ծրարը կարող է դիտվել որպես հանցանշան, թե փող է եղել դրա մեջ, ապա ինչո՞ւ ես չեմ կարող պնդել հակառակը, այսինքն՝ ծրարը հատակին ընկած էր հենց այն պատճառով, որ արդեն փող չկար դրա մեջ, տերն ինքը նախօրոք հանել էր փողը այնտեղից։

«Այո,— կասեն ինձ,— բայց այդ դեպքում ո՞ւր կորավ փողը, եթե Ֆյոդոր Պավլովիչը ինքն է հանել ծրարից. չէ՞ որ նրա տունը խուզարկելիս չգտանք այդ գումարը»։ Նախ և առաջ, փողի մի մասը գտնվել է նրա դրամատուփի մեջ, իսկ երկրորդ՝ նա կարող էր այդ գումարը հանած լինել առավոտյան, նույնիսկ դեռ նախորդ օրը, այլ կերպ տնօրինելու համար՝ գուցե որևէ մեկին տալու կամ ուղարկելու, և վերջապես կարող էր հիմնովին փոխած լինել իր միտքը, իր գործողությունների ծրագիրը, ընդ որում բոլորովին էլ անհրաժեշտ չգտնելով, որ նախօրոք այդ մասին զեկուցի Սմերդյակովին։ Իսկ եթե այսպիսի ենթադրության լոկ հնարավորությունն անգամ գոյություն ունի, ապա ինչպե՞ս կարելի է այնքան համառ կերպով ու հաստատորեն մեղադրել իմ պաշտպանյալին, թե նա կողոպուտի համար սպանություն է կատարել, և թե իսկապես եղել է այդ կողոպուտը։ Չէ՞ որ մենք այդպիսով ընկնում ենք վիպասանության գիրկը։ Եթե պնդում եք, որ այս կամ այն իրն է գողացվել, պետք է ցույց տաք այդ իրը, կամ էլ գոնե անհերքելիորեն ապացուցեք, որ այդ իրը գոյություն է ունեցել։ Իսկ այստեղ ոչ ոք չի էլ տեսել փողը։ Վերջերս Պետերբուրգում մի երիտասարդ, համարյա դեռ տղա՝ տասնութ տարեկան, շրջիկ մի մանրավաճառ, օր-ցերեկով լումայափոխի խանութն է մտնում կացինը ձեռքին և արտասովոր, տիպական հանդգնությամբ սպանում է խանութի տերը, հետո հազար հինգ հարյուր ռուբլի է վերցնում ու տանում։ Հինգ ժամ հետո ձերբակալվում է, և բացի տասնհինգ ռուբլուց, որ արդեն ծախսել էր, ամբողջ գումարը գտնում են նրա մոտ։ Բացի այդ, սպանությունից հետո խանութ վերադարձած գործակատարը ոստիկանությանը հայտնում է ոչ միայն

գողացված գումարի չափը, այլև այն, թե ինչ դրամանիշներից էր բաղկացած, այսինքն քանի հատ վարդագույն բանկնոտ, քանի հատ կապույտ, քանի հատ կարմիր, քանի հատ ոսկեդրամ և ինչ արժողությամբ, և ահա հենց այդ բանկնոտներն ու ոսկեդրամներն էլ հայտնաբերվում են ձերբակալված մարդասպանի մոտ։ Ի լրումն ամենայնի, մարդասպանն էլ դրանից հետո լիովին ու անկեղծորեն խոստովանում է, թե ինքը սպանել է իրոք և հենց այդ փողերն է վերցրել ու տարել։ Ա՛յ սա ես հանցանշան եմ կոչում, պարոնայք ատենակալներ։ Ահա այս պարագային գիտեմ, տեսնում եմ, շոշափում եմ դրամանիշները և չեմ կարող ասել, թե չկա փողը կամ չի եղել։

Այդպե՞ս է արդյոք ներկա դեպքում։ Մինչդեռ կյանքի ու մահվան հարց է այստեղ, մարդու ճակատագրի հարցը։ «Այո,— կասեն ինձ,— բայց չէ՞ որ նա նույն գիշերը խնջույք է արել, աջ ու ձախ փող է վատնել, նրա մոտ հայտնաբերվել է հազար հինգ հարյուր ռուբլի. որտեղի՞ց է վերցրել այդ փողը»։ Բայց հենց այն փաստը, որ ընդամենը հայտնաբերվել է հազար հինգ հարյուր ռուբլի, իսկ գումարի մյուս կեսը ոչ մի կերպ չեն կարողացել գտնել ու հայտնաբերել, հենց այդ փաստն էլ ապացուցում է, որ այդ փողը կարող էր բնավ էլ նույնը չլինել, երբեք դրված չլինել որևէ ծրարի մեջ։ Նախնական քննությունը, ժամանակի խստագույն հաշվումներ անելով, մանրամասնորեն տեղեկացել ու ապացուցել է, որ մեղադրյալն աղախինների մոտից դուրս գալով ուղղակի վազել է Գերխոտինի բնակարանը, առանց տուն մտնելու, և առհասարակ ոչ մի տեղ չի մտել; իսկ հետո շարունակ եղել է մարդկանց մեջ, ուրեմն նա չէր կարող երեք հազարի կեսն առանձնացնել ու պահել քաղաքում մի որևէ տեղ։ Ահա հենց այս նկատառումն էլ պատճառ է եղել դատախազի այն ենթադրության, թե նա փողը թաքցրել է Մոկրոե գյուղում, մի որևէ ճեղքի մեջ։ Օ՜, դուցե Ուդոլֆոյի դղյակի նկուղներո՞ւմ է թաքցրել, պարոնայք։ Է՜հ, ցնորական չէ՞, վիպական չէ՞ այս ենթադրությունը։ Եվ նկատի առեք, եթե միայն ա՛յս մի ենթադրությունն ի չիք դառնա, այսինքն այն, թե փողը թաքցվել է Մոկրոեում, ապա կողոպուտի մեղադրանքն ամբողջությամբ հօդս կցնդի, որովհետև ո՞ւր կորավ այդ դեպքում այդ հազար հինգ հարյուր ռուբլին։ Ի՞նչ հրաշքով կարող էր չքանալ այդ փողը, եթե ապացուցված է, որ մեղադրյալը ոչ մի տեղ չի մտել։

Եվ ահա այսպիսի՜ հեքիաթներով պատրաստ ենք կործանելու մարդու կյանքը։

Գուցե ասեն ինձ. «Այնուամենայնիվ նա չէր կարողանում բացատրել, թե որտեղից է վերցրել այն հազար հինգ հարյուրը, որ հայտնաբերվեց նրա մոտ, և բացի այդ՝ բոլորը գիտեին, որ մինչև այդ գիշեր նա փող չուներ»։ Իսկ ո՞վ գիտեր այդ բանը։ Սակայն մեղադրյալը պարզ ու հաստատ ցուցմունք է տրվել, թե որտեղից է վերցրել այդ փողը, և եթե ուզում եք, պարոնայք երդվյալ ատենակալներ, եթե ուզում եք՝ ոչ մի բան չէր կարող ու չի կարող ավելի հավանական լինել, քան այդ ցուցմունքը, և բացի այդ՝ ոչ մի բան չի կարող ավելի համապատասխան լինել մեղադրյալի բնավորությանը և հոգուն։ Դատախազին դուր է եկել իր հյուսած վեպը. այսինքն թե՝ թուլակամ մարդը, որ նախընտրել է վերցնել իր հարսնացուի այնքա՜ն ամոթալի ձևով առաջարկած երեք հազարը, չէր կարող առանձնացնել դրա կեսը և կարել քսակի մեջ, և ընդհակառակը, եթե նույնիսկ կարեր, ապա երկու օրը մեկ պիտի քանդեր քսակը և մի հարյուրանոց դուրս քաշեր այնտեղից, ու այդպիսով վատներ ամբողջ մի ամսվա մեջ։ Հիշեցեք, այս բոլորը ասվեց այնպիսի մի շեշտով, որ ոչ մի առարկություն չէր հանդուրժում։ Լա՜վ, իսկ եթե բանը բոլորովին ա՞յլ կերպ է եղել. հապա՞ եթե դուք վեպ եք հյուսել և բոլորովին ուրի՜շ մարդու մասին։ Այո՜, խնդիրն էլ հենց այն է, ուր դուք ուրի՜շ մարդ եք հնարել։ Գուցե առարկեն ինձ. «Վկաներն ասում են, թե նա, աղետից մեկ ամիս առաջ, Մոկրոե գյուղում վատնել է օրիորդ Վերխովցևայի տված ամբողջ այդ երեք հազարը, միանգամից, մի կոպեկի նման, ուրեմն չէր կարող առանձնացնել այդ գումարի կեսը»։ Բայց ովքե՞ր են այդ վկաները։ Դատարանում արդեն պարզվեց, թե ինչ աստիճան վստահելի են նրանք։ Բացի այդ, ուրիշի ձեռքում պատառը միշտ էլ ավելի մեծ է թվում։ Եվ վերջապես, այդ վկաներից ոչ մեկը անձամբ չի հաշվել փողը, այլ միայն դատել է իր աչքի չափով։ Դե՜հ, վկա Մաքսիմովն էլ ասաց, որ մեղադրյալի ձեռքում քսա՜ն հազար ռուբլի է եղել։ Գիտե՞ք ինչ, պարոնայք ատենակալներ, քանի որ հոգեբանությունը երկսայրի սուր է, թույլ տվեք ինձ այստեղ էլ կիրառել դրա մյուս կողմը, և տեսնենք, թե ինչ կստացվի։

Աղետից մեկ ամիս առաջ օրիորդ Վերխովցևան երեք հազար ռուբլի է հանձնում մեղադրյալին՝ փոստով ուղարկելու

համար, սակայն հարց է՝ հի՞շտ է արդյոք, որ փողը հանձնրվել է այնպիսի ամոթալի ու նվաստացուցիչ ձևով, ինչպես հայտարարվեց քիչ առաջ։ Նույն խնդրի մասին օրիորդ Վերխովցևայի առաջին ցուցմունքը տարբեր էր, բոլորովին տարբեր. իսկ երկրորդ ցուցմունքի մեջ զայրույթի, վրիժառության ճիչեր լսեցինք միայն, երկար ժամանակ թաքնված ատելության ճիչեր։ Բայց արդեն լոկ այն փաստը, որ վկան իր առաջին ցուցմունքը ճիշտ չի ներկայացրել, մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ երկրորդ ցուցմունքն էլ կարող էր ճիշտ չլինել։ Դատախազը «չի ուզում, չի համարձակվում» (իր բառերն են) շոշափել այդ պատմությունը։ Դե լավ, թո՛ղ այդպես լինի, ես էլ չեմ շոշափի, բայց և այնպես ինձ թույլ եմ տալիս միայն նկատել, որ եթե մի մաքուր ու ազնվաբարո անձնավորություն, ինչպիսին և է՛ մեծարգո օրիորդ Վերխովցևան անկասկած, եթե այդպիսի մի անձնավորություն, ասում եմ, իրեն թույլ է տալիս հանկարծ միանգամից, հենց դատարանում, փոխել իր առաջին ցուցմունքը՝ մեղադրյալին խորտակելու բացահայտ նպատակով, ուրեմն պարզ է և այն, որ նրա այդ ցուցմունքը անկողմնակալ, պաղարյուն կերպով չի տրվել։ Մի՞թե իրավունք չունենք եզրակացնելու, որ վրիժառու կինը կարող էր չափազանցել շատ բան։ Այո, կարող էր հենց չափազանցել այն ամոթն ու նախատինքը, որով ինքը առաջարկել է այդ փողը։ Ընդհակառակը, փողը հենց առաջարկվել է այնպես, որ դեռ կարելի էր վերցնել, մանավանդ երբ ընդունողը այնպիսի թեթևամիտ մարդ է, ինչպես մեր մեղադրյալը։ Եվ նամանավանդ, վերցնելու ժամանակ նկատի ուներ, թե շուտով իր հորից կստանա այն երեք հազարը, որ ըստ հաշվարկի նա դեռ պարտական էր իրեն։ Թեթևամտություն էր դա, բայց հենց իր թեթևամտության հետևանքով նա հաստատ համոզված էր, որ հայրը կտա այդ փողը, ինքը կստանա այդ երեք հազար ռուբլին, և ուրեմն միշտ էլ կարող է փոստով ուղարկել օրիորդ Վերխովցևայի հանձնած գումարը և փակել իր պարտքը։ Սակայն դատախազը ոչ մի կերպ չի ուզում ընդունել, որ նա կարող էր նույն օրն էլ առանձնացնել իր ստացած փողի կեսը և կարել քսակի մեջ. «այդպիսի բնավորություն չէ նա, չէր կարող այդպիսի զգացումներ ունենալ»։ Բայց չէ՞ որ ինքներդ էիք գոռում, թե լա՛յն բնավորություն է Կարամազովը, ինքներդ էիք գոռում այն երկու անհատա՛կ խորությունների մասին, որոնց կարող

է իր հայացքն ուղղել Կարամազովը։ Կարամազովը հենց այնպիսի՛ երկկողմանի բնավորություն է, այնպե՛ս է տարուբերվում երկու անհատակ խորությունների միջև, որ նույնիսկ խրախճանքի ամենատանձրաձակ պահանջն ունենալով հանդերձ՝ կարող է զսպել իրեն, եթե մի որևէ բան գրավում է նրան մյո՛ւս կողմից։ Իսկ այդ մյուս կողմը սե՞րն է, հենց այն նոր սերը ահա, որ վառոդի նման բռնկվել էր այդ օրերին, և այդ սիրո համար փող էր պետք. և ավելի էր պետք, օ՜, շատ ավելի, քան այդ նույն սիրեցյալի հետ խրախճանք անելու համար։ Եթե նա ասի իրեն՝ «Ես քոնն եմ, չեմ ուզում Ֆյոդոր Պավլովիչին», ինքը պետք է փող ունենա, որ վերցնի ու տանի նրան։ Դա ավելի կարևոր է քան խրախճանքը։ Կարամազովը կարո՞ղ է այդ բանը չըհասկանալ։ Հենց դրանով էլ, ա՛յդ մտահոգությամբ էլ տառապում էր նա, ուրեմն ի՞նչ անհավատալի բան կա, եթե առանձնացրել է այդ փողը և պահել համենայն դեպս։

Բայց ահա անցնում են օրերը, իսկ Ֆյոդոր Պավլովիչն այդ երեք հազարը չի տալիս մեղադրյալին. ընդհակառակը, լուր է հասնում, որ նա որոշել է հենց այդ գումարով էլ հրապուրել նույն այն կնոջը, որին մեղադրյալն էր սիրում։ «Եթե Ֆյոդոր Պավլովիչը չտա,— մտածում է նա,— ուրեմն ես Կատերինա Իվանովնայի աչքին գող կդառնամ»։ Եվ նրա մեջ միտք է ծագում, որ այդ նույն հազար հինգ հարյուրը, որ շարունակում էր կրել իր վզին, քսակի մեջ, կգնա ու կդնի օրիորդ Վերխովցևայի առաջ և կասի նրան. «Ես սրիկա եմ, բայց ոչ գող»։ Եվ ահա ուրեմն՝ արդեն կրկնակի պատճառ, որ նա աչքի լույսի պես պահի այդ հազար հինգ հարյուրը, բոլորովին չբանա փոքրիկ քսակը և ամեն անգամ հարյուր ռուբլի չքաշի։ Ինչո՞ւ եք դուք մեղադրյալին զրկում պատվի զգացումից։ Չէ՞, կա՛ նրա մեջ պատվի զգացում. ասենք՝ սխալ, ասենք՝ շատ հաճախ մոլորվող, բայց կա՛, կա և կրքի է հասնում, և նա ապացուցել է այդ բանը։ Եվ սակայն գործը ավելի է բարդանում հիմա, խանդի տանջանքները հասնում են ծայր աստիճանի, և նույն այդ երկու հարցերը ավելի ու ավելի են չարչարում մեղադրյալի բորբոքված ուղեղը. «Եթե փողը ետ տամ Կատերինա Իվանովնային, ի՞նչ միջոցներով եմ Գրուշենկային տանելու այստեղից»։ Եթե նա այդպես մոլեգնում էր ամբողջ այդ ամսվա ընթացքում, հարբում էր ու գազազում գինետների մեջ, պատճառը գուցե հենց այն էր, որ դառն էր նրա վիճակը, անտանելի։ Այդ երկու հար-

ցերը վերջապես այնքան սրվեցին, որ ի վերջո հուսահատության հասցրին նրան։ Իր կրտսեր եղբորն ուղարկեց հոր մոտ՝ վերջին անգամ նրանից այդ երեք հազարը խնդրելու, բայց, լսելով պատասխանին, անձամբ ներս խուժեց ու հետևանքը եղավ այն, որ ծեծեց ծերունուն վկաների առաջ։ Դրանից հետո, ուրեմն, ոչ ոքից այլևս չէր կարող ստանալ, ծեծված հայրը փող չէր տա։ Այդ նույն երեկո նա իր կուրծքն է ծեծում, հենց կրծքի վերի մասը, ուր այդ փոքրիկ քսակն էր, և երդվում է եղբորը, թե ինքը միջոցներ ունի սրիկա չլինելու, բայց թե այնուամենայնիվ կմնա սրիկա, որովհետև նախատեսում է, որ չի օգտվելու այդ միջոցից, չի ունենալու այդ հոգեկան ուժը, չի ունենալու այդ կամքը։ Ինչո՞ւ, ինչո՞ւ դատախազը չի հավատում Ալեքսեյ Կարամազովի ցուցմունքին, որ տրվեց այնքան մաքուր հոգով, այնքան անկեղծորեն, հանպատրաստից ու ճշմարտանման։ Եվ ինչո՞ւ, ընդհակառակը, ստիպում է ինձ հավատալ, որ փողը թաքցվել է ինչ-որ մի ճեղքի մեջ, Ուդոլֆոյի դղյակի նկուղներում։

Այդ նույն իրիկուն, եղբոր հետ իր խուսակցությունից հետո, մեղադրյալը գրում է այն ճակատագրական նամակը, և ահա հենց այդ նամակն էլ ամենագլխավոր, ամենավիթխարի՜ հանցանշանն է, որով իմ պաշտպանյալը մեղադրվում է կողոպուտի մեջ։ «Կխնդրեմ բոլոր մարդկանցից, իսկ եթե չտան մարդիկ, կսպանեմ հորս և կվերցնեմ նրա ներքնակի տակից, վարդագույն ժապավենով ծրարից, միայն թե Իվանը գնացած լինի։ Սա իբր թե կատարյա՞լ մի ծրագիր է սպանության, ուրեմն նա է սպանել։ «Կատարվել է գրվածի՜ նման»,— բացականչում է մեղադրողը։ Բայց, նախ և առաջ, հարբած մարդու նամակ է դա և գրվել է սոսկալի բորբոքված վիճակում. երկրորդ, ծրարի մասին գրում է դարձյալ Սմերդյակովի ասածով, որովհետև ինքը չի տեսել այդ ծրարը. և երրորդ, գրելը գրե՞լ է, բայց կատարե՞լ է արդյոք գրվածի նման, ինչո՞վ կարող եք ապացուցել։ Մեղադրյալը վերցրե՞լ է ծրարը բարձի տակից, գտե՞լ է փողը և նույնիսկ այդ փողը գոյություն ունե՞ր արդյոք։ Եվ վերջապես նա փողի՞ համար է վազել հոր տունը, հիշեցե՛ք, հիշեցե՛ք։ Գլխապատառ վազել է՝ ոչ թե կողոպտելու, այլ պարզապես իմանալու համար, թե որտեղ է նա, որտեղ է այդ կինը, որ ջարդուփշուր էր արել իր սիրտը։ Ուրեմն վազել է ոչ թե ըստ ծրագրի, ոչ թե գրվածի նման, այսինքն ոչ թե կանխամտածված կողոպուտի համար, այլ վազել է հանկարծակի, անակնկալորեն, խանդի՜ց կատաղած։ «Այո,— կասեն ինձ,— բայց այնուամենայնիվ, հասնելուց և սպանելուց հետո, փողն էլ է վերցրել»։ Բայց դե վերջ ի վերջո հայտնի էլ չէ, սպանե՞լ է արդյոք։ Կողոպուտի մեղադրանքը մերժո՛ւմ եմ վրդովմունքով. չի կարելի մեղադրել կողոպուտի մեջ, եթե չեք կարող որոշակիորեն ցույց տալ, թե հատկապես ի՞նչ է գողացել. սա աքսիոմ է։ Բայց դեռ՝ սպանե՞լ է արդյոք, առա՞նց կողոպուտի էլ սպանե՞լ է արդյոք։ Հենց այդ բանը ապացուցվա՞ծ է։ Դա էլ մի հեքիաթ չէ՞ արդյոք»։

XII

ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԷԼ ՉԻ ԵՂԵԼ

«Ներեցեք, պարոնայք ատենակալներ, մարդկային կյանքի հարց է սա, և պետք է ավելի զգույշ լինել։ Մենք լսեցինք դատախազի սեփական խոստովանությունը, թե մինչև այսո՛ր իսկ, մինչև դատի օրը, նա տատանվում էր իմ պաշտպանյալին մեղադրել սպանության լիակատար կերպով կանխամտածված լինելու մեջ, տատանվում էր մինչև հենց այդ ճակատագրական «հարբած» նամակը, որ այսօր ներկայացվեց դատարանին։ «Կատարվել է գրվածի՜ նման»։ Բայց դարձյալ կրկնում եմ. նա վազել է այդ կնոջ համար, նրա՛ն փնտրելու, միայն ու միայն իմանալու, թե որտեղ է նա։ Այս մեկը անվիճելի փաստ է։ Եթե տանը լիներ այդ կինը, մեղադրյալը ոչ մի տեղ չէր վազի, այլ կմնար նրա մոտ և չէր կատարի այն, ինչ խոստացել էր նամակում։ Վազել է անակնկալորեն և հանկարծակի, իսկ իր «հարբած» նամակը գուցե բոլորովին էլ չի հիշել այդ պահին։ «Սանդկոթն է վերցրել հետը»,— ասում են, և հիշո՞ւմ եք, թե ինչպե՞ս մի ամբողջ հոգեբանություն կառուցեցին այդ մի սանդկոթի վրա, այսինքն թե ինչու նա պետք է այդ սանդկոթը զենքի տեղ ընդուներ, վերցներ իբրև զենք և այլն, և այլն։ Այս առթիվ շատ հասարակ մի միտք է ծագում իմ մեջ. հապա՞ եթե այդ սանդկոթը աչքի առաջ չլիներ, չլիներ այն դարակի վրա, որտեղից վերցրել է մեղադրյալը, այլ դրված լիներ պահարանում. չէ՞ որ այդ դեպքում մեղադրյալի աչքին չէր ընկնելու այդ իրը, և նա դուրս էր վազելու առանց զենքի, դատարկ ձեռքե-

բով, և ահա, գուցե ոչ ոքի չէր սպանելու այդ դեպքում։ Ինչպե՞ս ուրեմն կարող եմ եզրակացնել, թե այդ սանդկոթը կանխամտության ու զենք վերցնելու ապացույց է։ Լավ, բայց նա գինետներում գոռում էր, թե կսպանի հորը, իսկ երկու օր առաջ, այն երեկո, երբ գրեց իր հարբած նամակը, հանգիստ էր և միայն մի առևտրական գործակատարի հետ կռվեց գինետանը, որովհետև, իբր թե, «կարամազովը չէր կարող չկռվել»։ Իսկ ես դրան կպատասխանեմ, որ եթե նա արդեն մտադրվել էր այդպիսի սպանություն կատարել, այն էլ ծրագրով, իր գրածի նման, ապա գործակատարի հետ էլ չէր կռվի անկասկած, և գուցե գինետուն էլ չէր գնա բոլորովին, որովհետև այդպիսի բան մտադրող անձը լռություն ու մեկուսացում է փնտրում, ձգտում է անհայտանալ, որպեսզի չտեսնեն, որպեսզի չլսեն, կարծես ուզում է ասել՝ «Մոռացեք ինձ, եթե կարող եք». և դա՝ ոչ թե միայն հաշվենկատորեն, այլև բնազդով։ Պարոնայք ատենակալներ, հոգեբանությունը երկսայրի սուր է, և մե՞նք էլ ընդունակ ենք հոգեբանություն հասկանալու։ Իսկ գալով այն բանին, թե նա ամբողջ մի ամիս գոռգոռացել է գինետներում, է՛հ, քի՞չ են գոռում երեխաները կամ հարբած մարդիկ, երբ դուրս են գալիս գինետնից կամ կռվում են իրար հետ. «Կսպանե՞մ քեզ»։ Բայց հո չեն սպանում։ Եվ հենց այդ ճակատագրական նամակն էլ, է՛հ, հարբած մարդու շղայնություն չէ՞ նույնպես, գինետնից ելնողի գոռգոռոց չէ՞. «Կսպանե՞մ, բոլորիդ էլ կսպանեմ»։ Իսկ ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէր կարող այդպես լինել։ Ինչո՞ւ է այդ նամակը ճակատագրական. ընդհակառակը, ինչո՞ւ չեք ասում, որ ծիծաղելի է։ Ա՛յ հենց որովհետև գտնվել է սպանված հոր դիակը, և որովհետև մի վկա տեսել է մեղադրյալին այգում, զենքը ձեռքին փախչելիս, և ինքն էլ հարված է ստացել նրանից, ուրեմն ամե՞ն ինչ կատարվել է գրվածի պես, դրա համար էլ նամակը ծիծաղելի չէ, այլ ճակատագրական։

Փա՞ռք աստծո, հասանք բուն կետին. «Քանի որ եղել է այգում, նշանակում է՝ նա է սպանել»։ Այդ երկու բառով էլ սպառվում է ամեն ինչ, ամբողջ մեղադրանքը. «քանի որ եղել է, նշանակում է, որ անպայման նա է»։ Հապա՞ եթե չի նշանակում, թեկուզ և եղել է։ Օ՜, համաձայն եմ, որ փաստերի համադրությունը, փաստերի զուգադիպումը բավական պերճախոս է իրոք։ Բայց բոլոր այդ փաստերը քննեցեք մեկ առ մեկ,

առանց ազդվելու դրանց համադրությունից. ինչո՞ւ, օրինակ, դատախազը չի ուզում ընդունել, որ կարող է ճշմարիտ լինել մեղադրյալի այն ցուցմունքը, թե ինքը թողել ու վազելով հեռացել է հոր պատուհանից։ Հիշեցեք նույնիսկ այն հեգնական արտահայտությունները, որ արեց դատախազն այս կետում, նկատի ունենալով այն ակնածանքն ու «բարեպաշտ» զգացմունքները, որ հանկարծ համակել են մարդասպանին։ Իսկ եթե իրո՞ք նման մի բան է եղել, այսինքն՝ եթե ոչ ակնածանք, գոնե բարեպաշտ զգացմունքներ։ «Երևի այդ բոպեին մայրս բարեխոս եղավ ինձ համար»,— ասում է մեղադրյալը նախնական քննության ժամանակ. և ահա ուրեմն, հենց որ համոզվել է, թե Սվետլովան իր հոր տանը չէ, անմիջապես թողել ու փախել է։ «Բայց նա չէր կարող պատուհանից նայելով համոզվել»,— առարկում է մեզ դատախազը։ Իսկ ինչո՞ւ չէր կարող։ Չէ՞ որ պատուհանը բացվել է մեղադրյալի տված նշանների վրա։ Այդ վայրկյանին մի որևէ բառ կարող էր թունել Ֆյոդոր Պավլովիչի բերանից, մի որևէ բացականչություն, և մեղադրյալը կարող էր հանկարծ համոզվել, որ Սվետլովան այնտեղ չէ։ Ինչո՞ւ անպայման պետք է ենթադրենք այնպես, ինչպես մենք ենք երևակայում, ինչպես մտադրել ենք երևակայել։ Իրականության մեջ հազար ու մի բան կարող է վայրկենապես պատահել ու անցնել, այնպիսի բաներ, որ խուսափում են ամենանուրբ վիպասանի աչքից։ «Այո, բայց Գրիգորին դուռը բաց է տեսել, ուրեմն մեղադրյալը հաստատապես եղել է տան մեջ, ուրեմն և սպանել է»։ Այդ դռան մասին, պարոնայք ատենակալներ... Գիտե՞ք ինչ, այդ դռան մասին վկայում է մի հոգի միայն, և սակայն նա ինքն էլ այդ բոպեին գտնվել է այնպիսի վիճակում, որ... Բայց լավ, լավ, ասենք թե դուռը բաց է եղել, ասենք թե մեղադրյալը ուրացել է, սուտ է խոսել՝ մղվելով ինքնապաշտպանության բնազդից, որ այնքա՞ն հասկանալի է նրա վիճակում, ասենք թե մտել է, մտել է հոր տունը. է՛հ, հետո՞ ինչ, ինչո՞ւ պետք է ենթադրել, որ եթե մտել է, ուրեմն անպայման սպանել է։ Կարող էր ներս խուժել, վազել սենյակից սենյակ, կարող էր դեն հրել հորը, կարող էր նույնիսկ հարվածել հորը, բայց համոզվելուց հետո, որ Սվետլովան այնտեղ չէ, կարող էր դուրս վազել, ուրախանալով, որ այնտեղ չէ իր սիրեցյալը, ուրախանալով, որ դուրս վազեց առանց հորը սպանելու։ Եվ երբ, մի բոպե անց, հուզագրգիռ վիճակում Գրիգորիին տապա-

լիլուց հետո, անմիջապես ետ է ցատկել նրա մոտ, դա դուցե արել է հենց այն պատճառով, որ ի վիճակի էր մաքուր զգացմունք ունենալու, կարեկցանքի և խղճահարության զգացմունք, որովհետև խուսափել էր հորն սպանելու փորձությունից, որովհետև սիրտը մաքուր էր և ուրախություն էր զգում, որ չի սպանել հորը։

Դատախազը սարսռազդեցիկ պերճախոսությամբ նկարագրեց մեղադրյալի ահավոր հոգեվիճակը Մոկրոե գյուղում, երբ սիրտ երջանկությունը նորից բացվել էր նրա առաջ, կանչելով նրան դեպի նոր կյանք, և երբ նրա համար այլևս անկարելի էր սերը, որովհետև հոր արյունաթաթախ դիակը կար ետևում, իսկ դիակից այն կողմ՝ պատիժը։ Եվ սակայն դատախազն այնուամենայնիվ հնարավոր համարեց սերը, և դա բացատրեց ըստ իր առաջ քաշած հոգեբանության. «Հարբած վիճակ, ոճրագործին տանում են մահապատժի, դեռ շատ ժամանակ կա և այլն, և այլն»։ Բայց նորից հարց եմ տալիս, ձեր նկարագրածը մի ուրիշ անձնավորություն չէ՞ արդյոք, որին դո՛ւք եք ստեղծել, պարոն դատախազ։ Մի՞թե մեղադրյալը այնքան, այնքա՜ն կոպիտ ու անհոգի է, որ այդ պահին կարողանար դեռ մտածել սիրո մասին, դատից խուսափելու մասին, եթե իրոք հոր արյունը լիներ նրա խղճի վրա։ Ո՜չ, ոչ ու ո՜չ։ Այն բոպեին, երբ պարզվեց, որ Սվետլովան սիրում է իրեն, կանչում է իրեն, նոր երջանկություն է խոստանում, օ՜, երդվում եմ, նա պետք է կրկնակի, եռակի պահանջ զգար անձնասպան լինելու, և անպայման կսպաներ իրեն, եթե իր հոր դիա՜կը մնացած լիներ իր ետին։ Օ ո՜չ, նա չէր մոռանա, թե որտեղ են իր ատրճանակները։ Ես գիտեմ մեղադրյալին. նրա բնավորության հետ անհամատեղելի է այն բիրտ, վայրագ անսրտությունը, որ դատախազը վերագրում է նրան։ Նա կսպանե՛ր իրեն, դա հաստատ բան է. չի սպանել իրեն, հենց որովհետև «մայրը բարեխոս էր եղել նրա համար» և նրա սիրտը անմեղ էր, հոր արյունը չէր ծանրացել խղճի վրա։ Այդ գիշեր, Մոկրոեում, նա տանջվում էր միայն ծերունի Գրիգորիի համար, տոչորվում և աղոթում էր աստծուն, որ ծերունին ուշքի գա ու վեր կենա, որ իր հարվածը մահացու եղած չլինի և ինքը պատիժ չկրի դրա հետևանքով։ Ինչո՞ւ չընդունել դեպքերի այսպիսի մեկնաբանությունը։ Ի՞նչ հաստատ ապացույց ունեք, որ մեղադրյալը ստում է։ «Բայց հոր դիա՜կը,— անմիջապես կասեն մեզ նորից։—

եթե նա դուրս է վազել, եթե չի սպանել, հապա ո՞վ է սպանել ծերունուն»։

Կրկնում եմ, ահա այս է մեղադրանքի ամբողջ տրամաբանությունը. ո՞վ է սպանել, եթե ոչ նա։ Այսինքն թե՝ մարդ չկա նրա տեղը դնելու։ Պարոնայք երդվյալ ատենակալներ, այդպե՞ս է արդյոք։ Իսկապե՞ս, հենց ուղղակի ուրիշ ոչ ոք չկա՞։ Մենք լսեցինք, թե ինչպես դատախազը մատների վրա թվեց բոլոր նրանց, ովքեր այդ գիշեր եղել են այդ տանը։ Հինգ հոգի էին։ Նրանցից երեքը, համաձայն եմ, լրիվ անմեղսագրելի են՝ սպանված անձը, ծերունի Գրիգորին և նրա կինը։ Մնում են, ուրեմն, մեղադրյալն ու Սմերդյակովը, և ահա դատախազը խանդաբորբոք բացականչում է, թե մեղադրյալը Սմերդյակովին է մատնանշում այն պատճառով, որ ուրիշ ոչ ոքի չի գտնում մատնանշելու, և եթե լիներ մի վեցերորդ անձ, նույնիսկ վեցերորդ անձի ստվերը լիներ, մեղադրյալն ինքը անմիջապես կըհրաժարվեր Սմերդյակովին ամբաստանելուց, ամաչելով դրանից, և այդ վեցերորդի վրա կնետեր հանցանքը։ Բայց, պարոնայք ատենակալներ, ինչո՞ւ ես չեմ կարող ճիշտ հակառակ եզրակացության հանգել։ Կա երկու հոգի՝ մեղադրյալն ու Սմերդյակովը. ինչո՞ւ չասեմ, որ դուք իմ պաշտպանյալին մեղադրում եք միմիայն այն պատճառով, որ ուրիշ ոչ ոքի չեք գտնում մեղադրելու։ Իսկ չեք գտնում լոկ այն պատճառով, որ նախօրոք, բոլորովին կանխակալորեն, Սմերդյակովին բացառել եք ամեն մի կասկածից։ Այո, ճիշտ է, Սմերդյակովին ամբաստանում են միայն մեղադրյալը, նրա երկու եղբայրները, Սվետլովան, և ուրիշ ոչ ոք։ Բայց չէ՞ որ կա նաև մի այլ ամբաստանություն. կա մի հարց, կա մի կասկած, որ թեև տարտամորեն, բայց խմորվում է հասարակության մեջ, անորոշ մի լուր է պտտվում, զգացվում է, որ մարդիկ մի բան են սպասում։ Վերջապես կա նաև փաստերի շատ հատկանշական, թեև, ընդունում եմ, անորոշ մի զուգորդություն. նախ և առաջ, ընկնավորության այն նոպան, որ պատահել է հենց ազետի օրը, մի նոպա, որի իսկական լինելը փութաջանորեն պաշտպանեց դատախազը, չգիտես ինչու հարկադրված զգալով։ Այնուհետև՝ Սմերդյակովի այս անակնկալ անձնասպանությունը դատի նախօրեին։ Եվ հետո՝ մեղադրյալի միշնակ եղբոր նույնքան անակնկալ ցուցմունքը այսօր դատարանում, ցուցմունքը մի մարդու, որ մինչև հիմա հավատում էր, թե իր եղբայրն է մեղավորը, և հանկարծ

փողի մի կապոց բերեց այստեղ ու նույնպես Սմերդյակովի՞ անունը հայտարարեց, որպես իրենց հորն սպանողի։ Օ՜, ես լրիվ համոզված եմ դատարանի և դատախազության հետ միասին, որ Իվան Կարամազովը հիվանդ է ու տենդի մեջ, և որ նրա ցուցմունքը իսկապես կարող էր հուսահատ մի փորձ լինել, այն էլ զառանցանքի մեջ ծրագրված մի փորձ՝ փրկելու իր եղբորը, հանցանքը նետելով մեռածի վրա։ Բայց և այնպես, նորից Սմերդյակովի անունը տրվեց, նորից կարծես թե առեղծվածային մի բան է զգացվում։ Կարծես թե մի բան առկախ է մնացել, պարոնայք ատենակալներ, չի բացատրվել մինչև վերջ։ Եվ գուցե դեռ կբացատրվի։ Բայց դա թողնենք առայժմ, դա դեռ հետագայի հարց է։ Դատարանը քիչ առաջ որոշեց շարունակել նիստը, բայց առայժմ, դեռ ակնկալություններ ունենալով հանդերձ, ես կարող էի մի քանի բան նշել, օրինակ, հանգուցյալ Սմերդյակովի այն բնութագրի մասին, որ այնքան նուրբ ու այնքան տաղանդավոր կերպով ուրվագծեց դատախազը։ Սակայն զարմանալով նրա տաղանդի վրա, չեմ կարող լրիվ համաձայն լինել բնութագրի էության հետ։

Ես եղա Սմերդյակովի մոտ, տեսա նրան, խոսեցի հետը. նա ինձ վրա բոլորովին այլ տպավորություն թողեց։ Առողջությամբ թույլ էր, ճիշտ է, բայց բնավորությամբ, ոգով՝ ո՜չ, երբեք էլ այն թույլ մարդը չէր, որ նրան տեսնելով եզրակացրել է դատախազը։ Եվ մանավանդ՝ երկչոտություն չգտա նրա մեջ, այն երկչոտությունը, որ դատախազն այնքան բնորոշ կերպով նկարագրեց։ Իսկ պարզամտություն բոլորովին չկար նրա մեջ, ընդհակառակը, միամտության դիմակի տակ թաքնված սոսկալի կասկածամտություն տեսա, և մի խելք, որ ընդունակ էր շատ բան դիտելու։ Օ՜, դատախազը չափազանց պարզամտորեն նրան տկարամիտ է համարել։ Ինձ վրա նա միանգամայն որոշակի տպավորություն թողեց. ես հեռացա այն համոզմունքով, որ ուղղակի չարամիտ, չափից դուրս փառասեր, ոխակալ ու նախանձից այրվող մի արարած է նա։ Որոշ տեղեկություններ եմ հավաքել նրա մասին. առում էր իր ծագումը, ամաչում դրանից և ատամների կրճտոցով էր հիշում, որ «Սմերդյաշչայայից է ծնվել»։ Անհարգալից էր վերաբերվում ծառա Գրիգորիի և նրա կնոջ հանդեպ, որոնք իր մանկության երախտավորներն են եղել։ Անիծում էր Ռուսաստանը և ծիծաղում նրա վրա։ Երազում էր գնալ Ֆրանսիա ու դառնալ ֆրանսիացի։ Հաճախ ու

շատ էր խոսում այն մասին, թե գնալու համար միջոցներ չունի։ Ինձ թվում է, նա ոչ ոքի չէր սիրում, բացի իրենից, և տարօրինակորեն բարձր կարծիք ուներ իր անձի մասին։ Բարեկրթությունը տեսնում էր լավ հագուստ, մաքուր կրծագգեստ և փայլուն կոշիկ հագնելու մեջ։ Ինքն իրեն համարելով Ֆյոդոր Պավլովիչի ապօրինի որդին (և այդ մասին փաստեր կան), նա կարող էր խորշել իր վիճակից, իր տիրող օրինական զավակների հետ համեմատած. նրանց՝ ամեն ինչ, իսկ իրեն՝ ոչինչ, նրանց ժառանգություն է հասնում, իսկ ինքը խոհարար է միայն։ Պատմեց ինձ, թե ինքը Ֆյոդոր Պավլովիչի հետ միասին այդ երեք հազարը դրել է ծրարի մեջ։ Նրա համար, իհարկե, ատելի էր այն նպատակը, որին հատկացված էր այդ գումարը. մի գումար, որ իր ապագայի հիմքը կարող էր լինել։ Ավելին, նա երե՜ք հազար ռուբլի էր տեսել իր աչքով՝ նոր-նոր, վարդագույն բանկնոտների մի կապոց (այդ մասին ես դիտմամբ հարցրի նրան)։ Օ՜, նախանձոտ և ինքնասեր մարդուն երբեք էլ մեծ գումար ցույց մի՛ տաք միանգամից. իսկ նա առաջին անգամ էր այդպիսի մի գումար տեսել մեկ մարդու ձեռքում։ Վարդագույն կապոցի թողած տպավորությունը կարող էր ախտագին անդրադարձ ունենալ նրա երևակայության մեջ, բայց սկզբում առանց որևէ հետևանքի։

Մեծատաղանդ մեղադրողը արտակարգ նրբությամբ ուրվագծեց բոլոր pro և contra նկատառումները, ցույց տալու համար, թե հնարավո՞ր է արդյոք Սմերդյակովին մեղադրել սպանության մեջ, և հատկապես հարց տվեց մեզ՝ ինչո՞ւ նա պետք է ընկնավորության նոպա կեղծեր։ Այո, նա կարող էր բոլորովին էլ կեղծած չլինել, նոպան կարող էր գալ շատ բնականորեն, բայց չէ՞ որ կարող էր և անցնե՞լ շատ բնականորեն, և հիվանդը կարող էր ուշքի գալ։ Ասենք, ոչ թե լրիվ առողջանալ, բայց համենայն դեպս աչքերը բանալ այս կամ այն բոպեին և ուշքի գալ, ինչպես որ լինում է ընկնավորության դեպքում։ Մեղադրողը հարց է տալիս. ո՞րն է այն բոպեն, ուր Սմերդյակովը կատարել է սպանությունը։ Բայց այդ բոպեն ցույց տալը շափազանց հեշտ է։ Նա կարող էր զարթնել խորքնից (որովհետև նա քնած էր միայն, ընկնավորության նոպային միշտ էլ խոր քունն է հաջորդում), կարող էր ուշքի գալ հենց այն վայրկյանին, երբ ծերունի Գրիգորին, փախչող մեղա-

դրյալի ոտքը բռնելով, գոռաց ամբողջ թաղով մեկ. «Հայրասպա՜ն»։ Հենց այդ անսովոր գոռոցն էլ, լռության ու խավարի մեջ, կարող էր արթնացնել Սմերդյակովին, որի քունը այդ րոպեին կարող էր շատ էլ պինդ չլինել. բնական է, նրա զարթնումը կարող էր սկսած լինել արդեն մի ժամ առաջ։ Վեր կենալով անկողնից, նա համարյա անգիտակցորեն և առանց որևէ մտադրության գնում է դեպի գոռոցը՝ տեսնելու, թե ինչ է պատահել։ Նրա գլխում դեռ հիվանդագին մշուշ է, գիտակցությունը թմրած, բայց ահա իջնում է այգի, մոտենում է լուսավորված պատուհաններին և ահավոր լուրն է լսում իր տիրոջից, որն իհարկե ուրախանում է նրան տեսնելով։ Գիտակցությունը միանգամից սկսում է աշխատել։ Ահաբեկված տիրոջից իմանում է բոլոր մանրամասնությունները։ Եվ ահա, հետզհետե, նրա խանգարված ու հիվանդ ուղեղի մեջ գոյանում է մի միտք՝ զարհուրելի, բայց գայթակղիչ և անդիմադրելիորեն տրամաբանական. սպանել, վերցնել երեք հազար ռուբլի փողը և հետո ամբողջ մեղքը գցել երիտասարդ Կարամազովի վրա, որովհետև ո՞ւմ վրա կարող են կասկածել հիմա, եթե ոչ երիտասարդ Կարամազովի, ո՞ւմ կարող են մեղադրել, եթե ոչ երիտասարդ Կարամազովին. բոլոր հանցանշանները կան, նա եղել է այստեղ ու փախել։ Փողի, ավարի զարհուրելի տենչը, անպատիժ մնալու գիտակցության հետ, կարող էր շնչակտուր անել նրան։

Օ՜, այդ անակնկալ և անդիմադրելի մղումները այնքա՜ն հաճախ են գալիս, երբ հարմար առիթ է լինում. և մանավանդ՝ այդպես անակնկալորեն գալիս են այն մարդասպաններին, որոնք դեռ մի րոպե առաջ չգիտեին, թե կարող են սպանելու ցանկություն ունենալ։ Եվ ահա, Սմերդյակովը կարող էր մտնել տիրոջ մոտ և ի կատար ածել իր ծրագիրը՝ ինչո՞վ, ի՞նչ զենքով. է՜հ, այգուց վերցրած որևէ մի քարով։ Իսկ ինչո՞ւ, նպատա՞կն ինչ էր։ Բայց երեք հազա՞րը, չէ՞ որ դա իր ապագայի հիմքը կարող էր լինել։

Օ՜, ես չեմ հասկանում ինձ. փողը կարող էր և գոյություն ունենալ։ Եվ գուցե հենց Սմերդյակո՜վը միայն գիտեր, թե որտեղ է փողը, որտեղ է պահել իր տերը։ «Լավ, բայց պատռված ծրա՞րը, որ ընկել էր հատակին»։ Մեղադրողը, խոսելով այդ ծրարի մասին, հայտնեց իր չափազանց նուրբ ենթադրությունը, թե հենց անվարժ գողը միայն կարող էր ծրարը հատակին թողնել, հենց Կարամազովի նման մեկը, և բնավ երբեք Սմերդյակովը, որ ոչ մի դեպքում այդպիսի հանցանշան չէր թողնի ինքն իր դեմ։ Երբ լսում էի այդ ենթադրությունը, պարոնայք ատենակալներ, հանկարծ զգացի, որ չափազանց ծանոթ մի բան եմ լսում։ Եվ պատկերացրեք, հենց այդ նույն ենթադրությունը, այդ նույն կռահումը, թե Կարամազովն ինչպե՞ս կարող էր վարվել ծրարի հետ, ուղիղ երկու օր առաջ լսել եմ անձամբ Սմերդյակովից։ Ավելին, նա նույնիսկ զարմացրեց ինձ դրանով. ինձ թվաց, թե նա միամտություն է կեղծում, կանխում է ինձ, իմ վզին է փաթաթում այդ միտքը, որպեսզի ինքս այդպիսի ենթադրության հանգեմ։ Կարծես թե նա հուշում էր այդ բանը ինձ։ Արդյոք նա հարցաքննողներին էլ չի՞ հուշել այդ ենթադրությունը։ Արդյոք մեծատաղանդ մեղադրողի վզին էլ չի՞ փաթաթել նույն բանը։

Կարող են ասել ինձ. «Իսկ պառա՞վը՝ Գրիգորիի կի՞նը։ Չէ՞ որ նա լսել է, թե ինչպես հիվանդն ամբողջ գիշերը տնքացել է նրա կողքին»։ Այո, լսել է, բայց այդ վկայությունը չափազանց խախուտ է։ Ես ճանաչում էի մի տիկնոջ, որ դառնորեն գանգատվում էր, թե բակում հաչող մի շնիկ ամբողջ գիշերը արթնացրել է իրեն ու չի թողել, որ քնի։ Եվ սակայն, ինչպես պարզվեց, խեղճ շնիկն ընդամենը երկու-երեք անգամ է հաչել ամբողջ գիշերվա ընթացքում։ Եվ դա բնական է. մարդը քնում է և հանկարծ տնքոց է լսում, զարթնում է վրդովված, որ իրեն արթնացրին, բայց վայրկենապես քուն է մտնում նորից։ Երկու ժամ հետո նորից տնքոց, նորից զարթնում է և նորից քուն մտնում, և վերջապես մի երրորդ տնքոց էլ, նորից երկու ժամ հետո, ընդամենը երեք անգամ՝ ամբողջ գիշերվա մեջ։ Մարդը վեր է կենում առավոտյան և գանգատվում, որ մեկը ամբողջ գիշերը տնքում էր և անընդհատ արթնացնում իրեն։ Բայց հենց այդպես էլ պետք է թվա նրան. քնած պահերը, յուրաքանչյուրը երկու ժամ տևողությամբ, չի հիշում, այլ հիշում է միայն զարթնելու րոպեները, և ահա նրան թվում է, թե ամբողջ գիշերը արթնացրել են իրեն։

Բայց ինչո՞ւ, բացականչում է մեղադրողը, ինչո՞ւ Սմերդյակովը չի խոստովանել իր թողած երկտողում։ «Խիղճը մղել է անձնասպանության, իսկ խոստովանելու համար խիղճ չի՞ ունեցել»։ Բայց ներեցե՛ք, խիղճը արդեն զղջահարություն է նշանակում, իսկ անձնասպանը կարող էր և զղջահարություն չզգալ, այլ միայն հուսահատություն։ Հուսահատությունն ու

զղջահարությունը բոլորովին տարբեր բաներ են։ Հուսահատությունը կարող է լինել քինախնդիր ու անհաշտ, և անձնասպանը, իր կյանքի վրա ձեռք բարձրացնելու պահին, կարող էր կրկնակի ատել նրանց, ում նախանձում էր իր ամբողջ կյանքում։

Պարոնայք երդվյալ ատենակալներ, զգուշացեք դատական սխալից։ Ի՞նչ, ի՞նչ անհավանական բան կա այս բոլորի մեջ, որ նկարագրեցի հիմա ու ներկայացրի ձեզ։ Գտե՞ք մի սխալ իմ փաստարկման մեջ, գտե՞ք մի որևէ անկարելի, անհեթեթ բան։ Բայց եթե իմ ենթադրությունների մեջ կա գեթ ստվե՞րը կարելիության, գեթ ստվերը հավանականության, մի՞ շտապեք դատապարտելու մեղադրյալին։ Իսկ միթե ստվե՞ր կա միայն։ Երդվում եմ ամենայն սրբությամբ, ես լրիվ հավատում եմ սպանության մասին իմ տված մեկնաբանության, որ այժմ պարզեցի ձեր առաջ։ Եվ մանավանդ, մանավանդ, ինձ խռովում ու վրդովում է հենց այն միտքը, թե փաստերի ամբողջ այն զանգվածի մեջ, որ դատախազը բարդում է մեղադրյալի վրա, չկա մի հատիկ ապացույց, որ գեթ որևէ չափով լինի ճշգրիտ ու անժխտելի, և դժբախտ մարդը կործանվում է՝ պարզապես այդ փաստերի համադրության հետևանքով։ Այո, սարսափելի է այդ համադրությունը. արյո՞ւնը, մատներից կաթող այդ արյո՞ւնը, արյունաթաթախ շապիկը, այդ մութ գիշերը, որ թնդում է «հայրասպա՞ն» աղաղակից, և գոռացող ծերունին, որ ընկնում է շարդված գլխով, իսկ հետո՝ խոսքերի, ցուցմունքների, զոռզոռոցների այդ ամբողջ կո՞ւյտը, օ՜, այնպես է ազդում դա, այնպե՞ս կարող է գայթակղեցնել մարդու համոզմունքը, բայց մի՞թե կարող է ձե՞ր համոզմունքը գայթակղեցնել, ձե՞ր, պարոնայք երդվյալ ատենակալներ։ Հիշեցե՛ք, ձեզ անսահման իշխանություն է տրված, կապելու և արձակելու իշխանությունը։ Բայց որքան ավելի մեծ է իշխանությունը, այնքան ավելի սոսկալի է կիրառումը դրա։ Ես մաղալափ անգամ չեմ նահանջում այն ամենից, որ ասացի հիմա։ Բայց դե ենթադրենք. ենթադրե՞նք, թե ես էլ մի բոպե համաձայն եմ մեղադրողի հետ, որ իմ դժբախտ պաշտպանյալն իր ձեռքերը ներկել է հոր արյունով։ Սա ենթադրություն է միայն, կրկնում եմ, ես ոչ մի վայրկյան չեմ տարակուսում, որ նա անմեղ է, բայց դե թող այդպես լինի, ենթադրեմ մի պահ, որ իմ պաշտպանյալը մեղավոր է հայրասպանության մեջ։ Սակայն լսեցեք իմ խոսքը, նույնիսկ եթե այդպիսի ենթադրություն էլ անեմ։ Միրոս ինձ

մղում է մի բան ևս ասել ձեզ, որովհետև ձեր սրտերի ու մտքերի մեջ էլ մի մեծ պայքար եմ նախազգում... Ներեցեք ինձ, որ ձեր սրտերի ու մտքերի մասին խոսեցի, պարոնայք երդվյալ ատենակալներ։ Բայց ես ուզում եմ ճշմարտացի ու անկեղծ լինել սկզբից մինչև վերջ։ Անկե՛ղծ լինենք բոլորս էլ...»։

Այս կետում դատապաշտպանի ճառն ընդհատվեց բավական ուժեղ մի ծափահարությամբ։ Իրոք, նա իր վերջին խոսքերն այնպիսի անկեղծ հնչող մի շեշտով ասաց, որ բոլորն էլ զգացին, թե գուցե իսկապես մի ասելիք ունի նա, և թե այն, ինչ հիմա է ասելու, հենց ամենակարևորն է։ Բայց նախագահը, լսելով ծափահարությունը, բարձրաձայն սպառնաց «մաքրել» դատարանի դահլիճը, եթե նորից «նման մի դեպք» կրկնվի։ Լռություն տիրեց, և Ֆետյուկովիչն սկսեց մի նոր, հուզաթաթավ ձայնով, որ բոլորովին նման չէր այն ձայնին, որով նա խոսում էր մինչ այդ։

XIII

ՄՏՔԻ ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ոչ միայն փաստերի համադրությունն է կործանում իմ պաշտպանյալին, պարոնայք երդվյալ ատենակալներ,— հայտարարեց նա,— ոչ, իմ պաշտպանյալին իսկապես կործանողը մե՛կ փաստ է միայն՝ ծերունի հո՛ր դիակը։ Հասարակ սպանություն լիներ, դուք կմերժեիք մեղադրանքը, նկատի առնելով, որ փաստերը չնչին են, անապացուցելի, ցնորական՝ եթե դրանցից ամեն մեկը առանձին քննվի, և ոչ թե բոլորը համադրաբարկամ էլ գոնե կվարանեիք մարդու կյանքը կործանել սոսկ նրա դեմ կանխակալ կարծիք ունենալու հետևանքով, մի կարծիք, որին նա խիստ արժանի է, ավա՜ղ։ Բայց այստեղ ոչ թե հասարակ սպանություն է, այլ հայրասպանությո՜ւն։ Դա տգավորություն է գործում, և այն աստիճան, որ մեղադրական փաստերի հենց չնչին ու անապացույց լինելն անգամ դառնում է ոչ այնքան չնչին և ոչ այնքան անապացույց՝ նույնիսկ չնախապաշարված մտքի համար։ Դե՛հ, ինչպե՞ս արդարացնես այսպիսի մեղադրյալին։ Հապա՞ եթե իրոք սպանել է, և հանկարծ անպատի՛ժ մնա. ահա թե ինչ է զգում ամեն մեկն իր սրտում՝ գրեթե ակամա, բնազդորեն։ Այո, ահավո՛ր բան է հոր արյունը

թափելը, արյունն այն մարդու, որ ծնել է ինձ, սիրել է ինձ, իր կյա՜նքը չի խնայել ինձ համար, իմ մանկության օրերից շարչարվել է իմ հիվանդություններով, ամբողջ կյանքում տառապել է իմ երջանկության համար և ապրել է միայն իմ ուրախություններով, իմ հաջողություններով։ Օ՜, սպանե՞լ այդպիսի հորը. մտածե՞լն իսկ անհնար է։

Պարոնայք ատենակալներ, ի՞նչ է հայրը, իսկական հայրը, ի՞նչ է այդ մեծ բառի նշանակությունը, ի՞նչ է այն սոսկալի մեծ գաղափարը, որ կա այդ անվան մեջ։ Դեռ այս բոպեիս նշեցինք մասամբ, թե ինչ է իսկական հայրը և ինչ պետք է լինի։ Իսկ ներկա դատական գործում, որով այնպե՜ս զբաղված ենք հիմա բոլորս, որով այնպե՜ս տանջվում են մեր հոգիները, ներկա դատական գործում՝ հայրը, հանգուցյալ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովը, բնավ չէր համապատասխանում հոր մասին այն հասկացության, որ մեր սիրտը թելադրեց այս բոպեիս։ Դժբախտություն է դա։ Եվ իսկապես, կան հայրեր, որոնք նման են դժբախտության։ Քննենք այդ դժբախտությունն ավելի մոտից. չէ՞ որ մենք, նկատի առնելով առաջիկա որոշման կարևորությունը, ոչ մի բանից չպետք է վախենանք, պարոնայք ատենակալներ։ Մենք նույնիսկ հատկապե՜ս չպետք է վախենանք հիմա, և չպետք է, այսպես ասած, մեր ձեռքերը թափահարելով վանենք այս կամ այն գաղափարը, երեխաների կամ վախկոտ կանանց նման, ինչպես ասաց մեծատաղանդ մեղադրողն այդ երջանիկ համեմատությամբ։

Բայց իմ հարգելի ընդդիմախոսը (և նա իմ ընդդիմախոսն էր, երբ ես դեռ իմ առաջին բառն իսկ չէի արտասանել), իմ ընդդիմախոսն իր կրակոտ ճառում մի քանի անգամ բացականչեց. «Ո՜չ, ես չեմ թողնի, որ ուրիշ որևէ մեկը պաշտպանի մեղադրյալին, ես չեմ զիջի նրա պաշտպանությունը Պետերբուրգից եկած դատապաշտպանին. ես եմ մեղադրողը, ես էլ պաշտպա՜ն եմ»։ Ահա այսպես բացականչեց նա մի քանի անգամ, և սակայն մոռացավ հիշատակել մի բան. եթե այս սարսափելի մեղադրյալը ամբողջ քսաներեք տարի երախտապարտ էր եղել ընդամենը մի ֆունտ կաղինի համար, որ ստացել է այն միակ մարդուց, որն իրեն, որպես երեխայի, փայփայել էր իր հոր տանը, ապա ուրեմն, մյուս կողմից, կարո՞ղ էր այսպիսի մարդը ամբողջ քսաներեք տարվա ընթացքում չհիշել, թե ինչպես ինքը ոտաբոբիկ վազվզում էր իր հոր տան «ետևի բակում, առանց կոշիկների և փոքրիկ տաբատն էլ մի կոճակից կախված», ըստ մարդասեր դոկտոր Հերցենշտուբեի արտահայտության։ Օ՜ պարոնայք ատենակալներ, ինչո՞ւ ավելի մոտից քննենք այդ «դժբախտությունը», ինչո՞ւ կրկնենք այն, ինչ բոլորը գիտե՞ն արդեն։ Ի՞նչ է տեսել իմ պաշտպանյալը, երբ եկել է այստեղ՝ իր հոր մոտ։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ իմ պաշտպանյալին ներկայացնել որպես անզգա, եսասեր մի հրեշ։ Անզուսպ է նա, վայրի ու մոլեգին, և ահա դրա համար էլ դատում ենք այժմ նրան, բայց ո՞վ է մեղավորը նրա ճակատագրի համար, ո՞ւմ մեղքով է, որ նա լավ հակումներ ու ազնիվ, զգայուն սիրտ ունենալով հանդերձ, այսպիսի անհեթեթ դաստիարակություն է ստացել։ Որևէ մեկը խելք սովորեցրե՞լ է նրան, ուսում ստացե՞լ է, լուսավորվե՞լ է նրա միտքը, եղե՞լ է մեկը, որ գեթ մի քիչ սիրեր նրան իր մանկության օրերին։ Իմ պաշտպանյալը մեծացել է աստծո խնամքով, այսինքն վայրի գազանի նման։ Նա գուցե տենչում էր տեսնել իր հորը երկար տարիների բաժանումից հետո, և գուցե դրանից էլ առաջ, երազի պես հիշելով իր մանկությունը, հազար անգամ վանել է այն նողկալի ուրվականները, որոնք իր մանկության մղձավանջներն են եղել, և ամբողջ հոգով տենչացել է արդարացնել իր հորը և գրկե՞լ նրան։ Եվ ի՞նչ։ Որովհետև փողի վեճ կա՝ նրան դիմավորում են միայն ցինիկ հանաքներով, կասկածամտությամբ ու խորամանկություններով. նա լսում է միայն սիրտ խառնող խոսակցություններ ու կենցաղային խենթ սկզբունքներ, որոնք ասվում են ամեն օր, «կոնյակ խմելիս». և վերջապես տեսնում է մի հոր, որն իր ձեռքից՝ որդո՛ւ ձեռքից, խլում է սիրուհուն, օգտագործելով հենց որդուն պատկանող փողը։ Օ՜ պարոնայք ատենակալներ, նողկալի է սա ու դաժան։ Ու այդ նույն ծերունին գնում և բոլորին զանգատվում է, թե իր որդին դաժան է ու անհարգալից, վարկաբեկում է իր որդուն հասարակության մեջ, վնասում է նրան, զրպարտում, ձեռք է բերում նրա պարտամուրհակները, որպեսզի բա՜նտ նստեցնի նրան։

Պարոնայք ատենակալներ, շատ հաճախ է լինում, որ իմ պաշտպանյալի նման մարդիկ, որոնք արտաքուստ դաժանասիրտ են, մոլեգին ու անզուսպ, խորքում չափազանց քնքուշ սիրտ են, մոլեգին ու անզուսպ, խորքում չափազանց քնքուշ սիրտ են ունենում, միայն թե ցույց չեն տալիս։ Մի՛ ծիծաղեք, մի՛ ծիծաղեք իմ այս մտքի վրա։ Մեծատաղանդ մեղադրողն անգթորեն ծիծաղում էր իմ պաշտպանյալի վրա քիչ առաջ,

ի ցույց դնելով, թե նա սիրում է Շիլլերին, սիրում է «գեղեցիկն ու վեհը»։ Եթե ես նրա տեղը լինեի, մեղադրողի՛ տեղը, չէի ծիծաղի այդ բանի վրա։ Այո, այսպիսի սրտեր (օ՜ թույլ տվեք ինձ պաշտպանել այսպիսի սրտերը, որոնց այնքա՜ն հազվադեպ և այնքա՜ն անարդար կերպով են հասկանում), այսպիսի սրտերը շատ հաճախ տենչում են քնքշություն, գեղեցկություն և արգարություն, և տենչում են՝ հենց հակադրվելով կարծես իրենց սեփական անձին, իրենց մոլեգնությանը, իրենց դաժանությանը, տենչում են անգիտակցորեն, և տենչո՛ւմ են հատկապես։ Կրքոտ ու դաժան լինելով արտաքուստ, նրանք տանջվելու չափ ընդունակ են սիրելու, օրինակ, մի կնոջ, և անպայման հոգեկան ու բարձրագույն սիրով։ Դարձյալ ասում եմ, մի՛ ծիծաղեք ինձ վրա. շատ հաճախ հենց այսպե՛ս են լինում այդպիսի բնավորությունները։ Միայն թե չեն կարողանում թաքցնել իրենց կրքերը, որոնք շատ կոպիտ են երբեմն, և ահա դա է, որ աչքի է զարնում, դա է, որ նկատվում է, իսկ մարդու ներսը չեն տեսնում։ Սակայն շուտ են հագենում նրանց կրքերը. իսկ ընդհակառակը, ազնիվ ու գեղեցիկ մի էակի կողքին՝ այդ երևութապես կոպիտ ու դաժան մարդը ձգտում է նորոգվել, հնարավորություն է փնտրում ուղղվելու, դառնալու ավելի լավ, լինելու բարձր ու ազնիվ, և այո՝ «վեհ ու գեղեցիկ», որքան էլ ծաղրված լինի այդ խոսքը։ Քիչ առաջ ասացի, որ չեմ հանդգնի շոշափել իմ պաշտպանյալի պատմությունը օրիորդ Վերխովցևայի հետ։ Բայց այնուամենայնիվ կարելի է մի երկու բառ ասել. մենք ոչ թե վկայություն լսեցինք, այլ պարզապես մոլեգնած ու վրեժ լուծող մի կնոջ ճիչը, և նա իրավունք չուներ, օ՜, իրավունք չուներ դավաճանության համար կշտամբել մեղադրյալին, որովհետև նա ի՛նքը դավաճանեց։ Եթե գեթ մի քիչ ժամանակ ունենար մտածելու, այդպիսի վկայություն չէր տա։ Օ՜, մի՛ հավատաք նրան, ո՜չ, իմ պաշտպանյալը «հրեշ» չէ, ինչպես կոչեց նրան օրիորդը։

Խաչյալ մարդասերն իր խաչելության նախօրեին ասաց. «Ես եմ հովիվն քաջ. քաջ հովիվն իր անձն է դնում ոչխարների համար, որպեսզի ոչ մեկը չկորչի...»։ Մենք էլ այնպես անենք, որ չկորչի՛ մարդու հոգին։ Ես հարց տվի քիչ առաջ՝ ի՞նչ է հայրը, և բացականչեցի, թե մեծ բառ է դա, թանկագին մի անուն։ Սակայն բառը պետք է ազնվորեն գործածել, պարոնայք ատենակալներ ,և ես հանդգնում եմ երևույթը կոչել իր սեփական

բառով, իր սեփական անունով. այնպիսի մի հայր, ինչպիսին էր սպանված ծերունի Կարամազովը, չի կարող հայր կոչվել և արժանի չէ այդ անունին։ Անարժան հոր նկատմամբ որդիական սերը անհեթեթություն է, անկարելի բան։ Չի կարելի ոչնչից սեր ստեղծել, աստվա՛ծ միայն ոչնչից բան է ստեղծում։ «Հայրե՛ր, մի՛ զայրացնեք ձեր որդիներին»,— գրում է առաքյալն իր սիրակեզ սրտից։ Ոչ թե իմ պաշտպանյալի սիրույն եմ մեջբերում այս սրբազան բառերը հիմա, ես դրանք հիշատակում եմ բոլո՛ր հայրերի համար։ Ո՞վ է ինձ լիազորել, որ ուսուցանեմ հայրերին։ Ոչ ոք։ Բայց որպես մարդ ու քաղաքացի կոչ եմ անում՝ vivos voco![1] Մենք երկար չենք մնում երկրի վրա, մենք անում ենք բազում վատ գործեր և բազում վատ խոսքեր ենք ասում։ Ուրեմն բոլորս էլ որսանք մեր համախումբ հաղորդակցության պատեհ րոպեն՝ նաև մի լա՛վ խոսք ասելու համար միմյանց։ Այդ եմ անում ես հիմա. քանի այս տեղն եմ բարձրացել, օգտվում եմ իմ բոպեից։ Իզուր չէ, որ այս ատենաբեմը շնորհվել է մեզ գերագույն կամքը. ամբողջ Ռուսաստանն է լսում մեզ այստեղից։ Ոչ միայն տեղվույս հայրերի համար եմ ասում, այլև ձայն եմ արձակում բոլոր հայրերին. «Հայրե՛ր, մի՛ զայրացնեք ձեր որդիներին»։ Այո, նախ ինքներս կատարենք պատգամը Քրիստոսի և հետո՛ միայն հավակնենք պահանջել նաև մեր որդիներից։ Այլապես մենք հայրեր չենք, այլ թշնամիները մեր որդիների, և նրանք մեր որդիները չեն, այլ թշնամիները մեր, և մենք ինքնե՛ս ենք նրանց թշնամի դարձրել մեզ համար։ «Որով չափով չափէք, չափեսցի ձեզ». այս արդեն ոչ թե ես եմ ասում, ավետարանի պատգամն է այս՝ չափել այն չափով, որով ձեզ են չափում։ Ինչպե՞ս ուրեմն կարող ենք մեղադրել որդիներին, եթե նրանք մեզ չափում են մեր չափով։ Վերջերս Ֆինլանդիայում մի աղջիկ, աղախին, կասկածի է ենթարկվում, թե գաղտնորեն երեխա է ծնել։ Սկսում են հետևել նրան, և տան ձեղնահարկում, անկյունք, ապրանքների հետև, գտնում են նրա սնդուկը, որի մասին ոչ ոք չգիտեր. բացում են և այնտեղից հանում նրա սպանած նորածին երեխայի դիակը։ Նույն սնդուկի մեջ գտնում են նաև կմախքները երկու մանկիկների, որոնց նա ծնել էր դրանից առաջ ու ինքն էլ սպանել էր ծնվելու պահին, և նա խոստովանում է այդ բանը։

[1] Կոչ եմ անում ապրողներին (լատ.)։

Պարոնայք ատենակալներ, մի՞թե նա մայրն է իր զավակների։ Այո, ծնել է նրանց, բայց արդյոք մա՞յր է նրանց համար։ Մեզնից որևէ մեկը կհամարձակվի՞ արդյոք «մայր» սրբազան անունը տալ նրան։

Համարձակ լինենք, պարոնայք ատենակալներ, հանդուգն լինենք նույնիսկ, մենք նույնիսկ պարտավո՛ր ենք այդպես լինել սուրբ բոպեին և չվախենալ որոշ խոսքերից ու դաղափարներից, շնմանվել Օստրովսկու պատկերած այն մոսկվացի տիկիններին, որոնք վախենում էին որոշ բառերից։ Ընդհակառակը, ապացուցենք, որ վերջին տարիների առաջադիմությունը մեր զարգացմանն էլ է նպաստել, և ասենք ուղղակի՝ միայն ծնունդ տալը դեռ հայրություն չէ, այլ հայր է նա, ով ծնունդ է տվել և արժանացել է այդ կոչման։ Օ՜, իհարկե, կա նաև «հայր» բառի մյուս նշանակությունը, մյուս մեկնաբանությունը, որ պնդում է՝ թեկուզ և հրեշ լինի քո հայրը, թեկուզ և չարագործ լինի իր երեխաների համար, այնուամենայնիվ նա քո հայրն է մնում, պարզ այն պատճառով, որ ծնունդ է տվել քեզ։ Բայց դա արդեն, այսպես ասած, միստիկ նշանակությունն է, որ ես չեմ հասկանում բանականությամբ, այլ կարող եմ ընդունել լոկ հավատքով, կամ ավելի ճիշտ՝ պարզապես հավատ ընծայելով, ինչպես որ կան շատ ուրիշ բաներ, որ չեմ հասկանում, բայց կրոնը ինձ պատվիրում է հավատալ դրանց։ Բայց այդ պարագային դա թող դուրս մնա իրական կյանքի բնագավառից։ Իսկ այս բնագավառում, ուր իրական կյանքը ոչ միայն իր իրավունքները ունի, այլև ինքն էլ մեծ պարտականություններ է դնում մեր վրա, այս բնագավառում ուրեմն, եթե ուզում ենք լինել մարդասեր, լինել քրիստոնյա վերջապես, մենք պետք է կենսագործենք և պարտավո՛ր ենք կենսագործել լոկ այնպիսի համողմունքներ, որոնք արդարացված են բանականությամբ ու փորձով, որոնք վերլուծության բովով են անցկացվել, մի խոսքով՝ պետք է գործենք բանականորեն, և ոչ թե անմտաբար, ինչպես երազի ու զառանցանքի մեջ, որպեսզի վնաս չհասցնենք մարդ արարածին, որպեսզի չտանջենք ու չկործանենք մարդուն։ Ահա այդ դեպքում է, որ դա կլինի իսկական քրիստոնեական գործ, ոչ թե միայն միստիկ, այլև բնական և արդեն ճշմարտապես մարդասիրական գործ...»։

Այս կետում ուժեղ ծափահարություններ պայթեցին դահլիճի զանազան մասերից, բայց Ֆետյուկովիչն իր ձեռքերը թափահարեց, կարծես աղաչելով, որ չընդհատեն իրեն, և թույլ տան վերջացնել իր խոսքը։ Դահլիճը լռեց իսկույն։ Հռետորը շարունակեց։

«Պարոնայք ատենակալներ, կարծո՞ւմ եք արդյոք, որ մեր զավակները կարող են խուսափել այսպիսի հարցերից, երբ, ասենք, պատանի են դառնում արդեն, երբ սկսում են կշռադատել արդեն։ Ոչ, չեն կարող, և անկարելի ժուժկալություն չպահանջենք նրանցից։ Տեսնելով իր անարժան հորը, մանավանդ համեմատելով նրան ուրիշ հայրերի հետ, իր տարեկից ընկերների արժանավոր հայրերի, պատանին տվայտում է տանջալից հարցերով, որոնք ակամայորեն ծնվում են նրա մեջ։ Նրա հարցերին պաշտոնական պատասխան են տալիս. «Նա ծնունդ է տվել քեզ, և դու նրա արյունից ես, ուրեմն պետք է սիրես նրան»։ Պատանին ակամա խորհրդածում է. «Բայց մի՞թե նա սիրում էր ինձ, երբ ծնունդ էր տալիս,— հարցնում է նա, ավելի ու ավելի զարմանալով,— մի՞թե ի՞նձ համար էր, որ ծնունդ տվեց ինձ։ Այդ բոպեին ոչ ինձ գիտեր նա, ո՛չ էլ նույնիսկ իմ սեռը, տոփանքի այդ բոպեին, երբ գուցե գինին էր նրա կիրքը բորբոքել, և գուցե միայն հարբեցողության հակումն է փոխանցել նա ինձ. ահա այն ամբողջ բարիքը, որ արել է նա... Իսկ ինչո՞ւ ես պետք է սիրեմ նրան. միայն որովհետև ծնո՞ւնդ է տվել ինձ, և որովհետև իմ ամբողջ կյանքում չի՞ սիրել ինձ։ Օ՜, գուցե այս հարցերը կոպիտ ու դաժան են թվում ձեզ, սակայն պատանի մտքից անկարելի ժուժկալություն մի՛ պահանջեք։ «Վատաբիր բնությունը դոնից, ներս կթռչի պատուհանից»։ և մանավանդ, մանավանդ, չվախենանք բառերից և հարցը լուծենք այնպես, ինչպես թելադրում են բանականությունն ու մարդասիրությունը, և ոչ թե այնպես, ինչպես միստիկ հասկացություններն են թելադրում։ Իսկ ինչպե՞ս կարելի է լուծել հարցը։ Ահա թե ինչպես. թող որդին կանգնի իր հոր առաջ և խելամտորեն հարցնի նրան. «Հայր իմ, ասա՛ ինձ. ինչո՞ւ պետք է սիրեմ քեզ։ Հայր իմ, ապացուցի՛ր ինձ, թե ես պետք է սիրեմ քեզ»։ Եվ եթե այդ հայրը ի վիճակի լինի ու կարողանա պատասխանել և ապացուցել, ուրեմն ահա՛ մի իսկական, բնականոն ընտանիք, որ ոչ թե լոկ միստիկ նախապաշարմունքի վրա է հաստատվում, այլ բանական, ինքնագիտակից և զուտ մարդասիրական հիմունքների վրա։ Հակառակ դեպքում, եթե

հայրը չապացուցի, վերջացա՞վ իսկույն այդ ընտանիքը. նա հայր չէ որդու համար, և որդին ազատություն ու իրավունք է ստանում այլևս օտար համարելու իր հորը և նույնիսկ թշնամի համարելու։ Մեր այս ատենաբեմը, պարոնայք ատենակալներ, պետք է ճշմարտության ու առողջ գաղափարների դպրո՞ց լինի»։

Անզուսպ, գրեթե մոլեգին ծափահարություններն ընդհատեցին այստեղ հռետորին։ Իհարկե, ծափահարում էր ոչ թե ամբողջ դահլիճը, բայց դահլիճի կեսն այնուամենայնիվ ծափահարում էր։ Ծափահարում էին հայրերն ու մայրերը։ Վերևից, ուր տիկիններն էին նստած, ճիչեր ու բացականչություններ լսվեցին։ Թաշկինակներ էին ճոճում։ Նախագահն ամբողջ ուժով սկսեց հնչեցնել իր զանգակը։ Նա հայտնապես ջղայնացել էր հասարակության վարմունքից, բայց ուղղակի չհամարձակվեց «մաքրել» դահլիճը, ինչպես սպառնացել էր քիչ առաջ. նույնիսկ բարձրաստիճան անձինք, շքանշան-աստղերով զարդարված ծերունիներ, որոնք հատուկ աթոռների վրա նստել էին դատավորների ետևում, ծափահարում էին և թաշկինակներ ճոճում հռետորին։ Այնպես որ, երբ աղմուկը դադարեց, նախագահը պարզապես բավարարվեց կրկնելով իր խստագույն սպառնալիքը, թե «կմաքրի» դահլիճը, իսկ Ֆետյուկովիչը, հաղթական ու հուզված, շարունակեց իր ճառը նորից։

«Պարոնայք երդվյալ ատենակալներ, դուք հիշում եք այն ահավոր գիշերը, որի մասին այնքան շատ խոսվեց այսօր, այն գիշերը, երբ որդին ցանկապատի վրայից մտավ հոր տունը և վերջապես դեմ առ դեմ կանգնեց իր թշնամու, իրեն ծնունդ տված թշնամու և կեղեքիչի հետ։ Ամբողջ ուժով պնդում եմ՝ փողի համար չէր, որ նա իր հոր տունը վազեց այդ բոպեին. կողոպուտի մեղադրանքն անհեթեթություն է, ինչպես ցույց տվեցի արդեն։ Եվ սպանելու համար չէր, որ ներխուժեց նրա տունը, օ ո՞չ. եթե ուններար այդ դիտավորությունը, գոնե նախօրոք զենքի մասին կհոգար, իսկ պղնձե սանդղակը վերցրեց բնազդորեն, առանց իմանալու, թե ինչու։ Ենթադրենք, թե նա խարեց իր հորը՝ այդ նշանները թիկացնելով, ենթադրենք, թե մտավ հոր մոտ. ասացի արդեն, որ ոչ մի բոպե չեմ հավատում այդ առասպելին, բայց լավ, թող այդպես լինի, ենթադրե՞նք այդ բանը մի բոպե։ Պարոնայք ատենակալներ, երդվում եմ ձեզ ամենայն սրբությամբ, եթե իր հայրը չլիներ, այլ կողմնակի մի հակառակորդ, նա կվազեր մի սենյակից մյուսը, կը-

համոզվեր, որ այդ կինը այնտեղ չէ, և գլխապատառ դուրս կխոյանար, ոչ մի վնաս չհասցնելով իր մրցակցին. գուցե հարվածեր նրան, հրեր, բայց այդքան միայն, որովհետև դա չէր նրա մտահոգությունը, ժամանակ չուներ, պետք է իմանար, թե որտեղ է այդ կինը։ Բայց հա՞յրն էր, հա՞յրը. իր աչքի առաջ կանգնած էր նա՝ իր մանկության օրերից իրեն ատող այդ մարդը, իր թշնամին, իր կեղեքիչը, իսկ այժմ՝ իր հրեշավոր մրցակիցը. և իր հոր այդ կերպարա՞նքը միայն արեց ամեն ինչ։ Ատելության մի զգացում տիրեց նրան ակամա, անդիմադրելիորեն, մտածելն անհնար էր. մի բոպեում ամե՞ն ինչ ծառացավ նրա մեջ։ Խելացնորության ու խելագարության աֆեկտ էր դա, բայց և բնության աֆեկտը, բնության, որ անդիմադրելիորեն ու անդիտակցորեն վրեժ է լուծում իր հավիտենական օրենքների ոտնահարման համար, ինչպես ամեն ինչ բնության մեջ։ Բայց մարդասպանը այդ դեպքում էլ չսպանեց, ես պընդում եմ այս բանը, գոռո՞ւմ եմ սրա մասին. ո՞չ, նա պարզապես սանդղակը թափահարեց զայրալից նոզկանքով, առանց սպանել ուզելու, առանց գիտենալու, որ կսպանի։ Եթե չլիներ այդ ճակատագրական սանդղակը ձեռքին, գուցե միայն ծեծեր իր հորը, բայց չէր սպանի նրան։ Երբ դուրս վազեց, նա չգիտեր, թե սպանված է ծերունին, որին տապալել էր։ Այդպիսի սպանությունը սպանություն չէ։ Այդպիսի սպանությունը հայրասպանություն էլ չէ։ Ոչ, այդպիսի հոր սպանությունը չի կարող հայրասպանություն կոչվել։ Միայն նախապաշարմունքի՝ հետևանքով կարող է այդպիսի սպանությունը համարվել հայրասպանություն։ Բայց կրկին ու կրկին կոչ եմ անում ձեզ իմ հոգու խորքից՝ կատարվե՞լ է արդյոք, կատարվե՞լ է իսկապես այդ սպանությունը։ Պարոնայք ատենակալներ, եթե մենք դատապարտենք նրան, նա կասի ինքնիրեն. «Այս մարդիկ ոչինչ չեն արել իմ ճակատագրի համար, իմ դաստիարակության, իմ կրթության համար, ոչինչ չեն արել, որ ես ավելի լավ լինեմ, որ ես մարդ դառնամ։ Այս մարդիկ ոչ հաց են տվել ինձ, ոչ էլ ջուր, և բանտում էլ չեն այցելել, երբ մերկ ու մենակ էի, և ահա նույն մարդիկ ինձ աքսորեցին տաժանակրության։ Հաշիվս փակեցի, ես հիմա ոչինչ պարտական չեմ նրանց և ոչ ոքի պարտական չեմ հավիտյանս հավիտենից։ Նրանք չար են, ես էլ չար եմ լինելու։ Նրանք դաժան են, ես էլ դաժան եմ լինելու։ Ահա՞ թե ինչ կասի նա, պարոնայք ատենակալներ։ Եվ

երդվում եմ՝ եթե մեղադրեք նրան, պարզապես կթեթևացնեք նրա վիճակը, նրա խիղճը կթեթևացնեք, նա կանիծի իր թափած արյունը, և ոչ թե կզղջա դրա համար։ Միաժամանակ դուք կոչնչացնեք մարդ դառնալու հնարավորությունը նրա մեջ, որովհետև նա իր ամբողջ կյանքում կմնա չար և կույր։ Բայց ուզո՞ւմ եք սոսկալի, ահեղ մի պատիժ տալ նրան, ամենասարսափելի պատիժը, որ կարելի է երևակայել, և ուզո՞ւմ եք միաժամանակ փրկել ու վերածնել ընդմիշտ նրա հոգին։ Եթե ուզում եք, ապա ընկճեցեք նրան ձեր գթասրտությա՞մբ։ Դուք կտեսնեք, դուք կլսեք, թե ինչպես կցնցվի ու կսարսափի նրա հոգին. «Ես կարո՞ղ եմ դիմանալ այս գթասրտության, ես կարո՞ղ եմ դիմանալ այսքան սիրո, ես արժանի՞ եմ մի թե սրան»։ Ահա այսպե՞ս կբացականչի նա։ Օ՜, ես գիտեմ, գիտեմ այդ սիրտը, այդ վայրի, բայց ազնի՞վ սիրտը, պարոնայք ատենակալներ։ Այդ սիրտը կխոնարհվի ձեր սխրանքի առաջ, այդ սիրտը ծարավի է սիրո մեծագործության, նա կբոցավառվի և հարություն կառնի ընդմիշտ։ Կան հոգիներ, որոնք, իրենց սահմանափակության մեջ ծվարած, մեղադրում են ամբողջ աշխարհը։ Բայց խոնարհեցրե՞ք այդպիսի հոգին գթասրտությամբ, սեր ցույց տվեք նրան, և նա կանիծի իր արածը, որովհետև այնքա՞ն շատ են բարի սաղմերը նրա մեջ։ Հոգին կլայնանա ու կտեսնի, թե որքա՞ն գթասիրտ է աստված և որքա՞ն սքանչելի ու արդար են մարդիկ։ Նա կսարսափի, նա կընկճվի զզջահարությունից և այն անսահման պարտականությունից, որ սպասում է նրան այնուհետև։ Եվ նա չի ասի այն ժամանակ՝ «Հաշիվս փակեցի», այլ կասի. «Ես մեղավոր եմ բոլոր մարդկանց առաջ և բոլորից ավելի անարժան եմ»։ Զղջման ու տառապակեզ խանդաղատանքի արցունքներով կբացականչի նա. «Մարդիկ ավելի լավ են, քան ես, որովհետև ուզեցին ոչ թե կործանել, այլ փրկե՞լ ինձ»։ Օ՜, ձեզ համար այնքա՞ն հեշտ է կատարել այդ բանը, գթասրտության այդ արարքը, որովհետև, երբ չկա գեթ մի քիչ ճշմարտանման օրևէ ապացույց, ձեզ համար չափազանց ծանր կլինի արտասանել. «Այո, մեղավոր է»։ Ավելի լավ է տասը մեղավորի ազատ արձակել, քան պատժել մի անմեղի. լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք այս վսեմ ձայնը մեր փառավոր պատմության անցյալ հարյուրամյակից։ Ինձ նման չնչին անձը չէ, որ պիտի հիշեցնի ձեզ, թե ռուսական դատարանը ոչ միայն պատժելու համար է, այլև կործանված մարդուն փրկելո՞ւ համար։ Թո՞ղ ուրիշ ժողովուրդներ կառչեն տառին ու պատժին, մեզ համար ոգին է կարևոր և իմաստը, կործանվածների փրկությունն ու վերածնունդը։ Եվ եթե այդպես է, եթե իրոք այդպիսին են Ռուսաստանն ու նրա արդարադատությունը, ուրեմն՝ օն առա՞ջ Ռուսաստան. և մի՛ վախեցնեք, օ՜, մի՛ վախեցնեք մեզ ձեր կատաղի տրոյկաներով, որոնցից նողկալով մի կողմ են քաշվում բոլոր ժողովուրդներն իբր թե։ Ոչ թե կատաղի մի տրոյկա, այլ ռուսական վեհապանծ շքակառքն է հանգիստ ու հանդիսավոր ընթացքով հասնելու իր նպատակին։ Դուք եք տնօրինում իմ պաշտպանյալի ճակատագիրը, դուք եք տնօրինում նաև ճակատագիրը մեր ռուսական արդարության։ Դուք կփրկեք, դուք կպաշտպանեք մեր արդարությունը, դուք կապացուցեք, որ կա՛ն մեր արդարությունը պահպանող մարդիկ, կապացուցեք, որ դա գտնվում է լա՛վ ձեռքերի մեջ»։

XIV

ԳԵՂԶՈՒԿՆԵՐՆ ԱՄՈՒՐ ՄՆԱՑԻՆ

Այսպես վերջացրեց Ֆետյուկովիչը, և ունկնդիրների ցընծությունն այս անգամ պայթեց անսանձելի փոթորկի նման։ Ջսպելու մասին խոսք անգամ չէր կարող լինել. կանայք արտասվում էին, լաց էին լինում նաև տղամարդկանցից շատերը, նույնիսկ երկու բարձրաստիճան անձինք արցունք թափեցին։ Նախագահն ստիպվեց ենթարկվել և նույնիսկ հապաղեց հընչեցնել իր զանգակը։ «Ոտնձգություն անել այդպիսի խանդավառության դեմ՝ ոտնձգություն կլիներ սրբությա՛ն դեմ»,— ինչպես գոռում էին հետո մեր քաղաքի տիկինները։ Հռետորն ինքը անկեղծորեն հուզվել էր։ Եվ ահա այդպիսի՞ բոպեին էր, որ մեր Իպոլիտ Կիրիլովիչը նորից վեր կացավ «առարկություններ փոխանակելու»։ Հանկարծ տեսնելով այդ բանը, ատելությամբ նայեցին նրան. «Ի՞նչ։ Սա՞ ինչ է։ Նա դեռ համարձակվում է առարկե՞լ, նա՞»,— սկսեցին բլբլալ տիկինները։ Բայց եթե նույնիսկ ամբողջ աշխարհի տիկիններն իրենց լեզուները բանեցնեին, և բուն իսկ դատախազի կնոջ գլխավորությամբ, անկարելի կլիներ նրան ետ կանգնեցնել այդ վայրկյանին։ Գունատ էր նա, ցնցվում էր հուզմունքից. առաջին բառերը, առաջին նախադասությունները անհասկանալի էին նույնիսկ. շունչը կը-

տրվում էր, վատ էր արտասանում, սայթաքում էր։ Այնուամենայնիվ, շուտով գտավ իրեն։ Բայց միայն մի քանի նախադասություն կբերեմ նրա այդ երկրորդ ճառից։

«...Մեզ հանդիմանում են, որ վեպեր ենք ստեղծել։ Իսկ ի՞նչ էր դատապաշտպանի ճառը, եթե ոչ վեպ՝ վեպի վրա։ Միայն բանաստեղծությունն էր պակաս։ Ֆյոդոր Պավլովիչը, սիրած կնոջն սպասելով, պատում է ծարը և գցում հատակին։ Նույնիսկ մեջ են բերում, թե նա ինչ է ասել այդ զարմանալի բանն անելիս։ Բայց ինչ է, պոեմ չէ՞ դա։ Եվ ի՞նչ ապացույց կա, որ նա փողը հանել է ծարից, ո՞վ է լսել, թե ինչ է ասել նա։ Տկարամիտ ցավագար Սմերդյակովն այլակերպվում է ինչ-որ բայրոնյան հերոսի, որ իր ապօրինի ծնունդի համար վրեժ է լուծում հասարակությունից. ինչ է, բայրոնյան ճաշակի մի պոեմ չէ՞ սա։ Իսկ որդին, որ բռնությամբ մտել է հոր տունը, սպանել է նրան, բայց և միաժամանակ չի սպանել, սա վեպ էլ չէ արդեն, պոեմ էլ չէ, սա մի սֆինքս է, որ հանելուկներ է առաջարկում մեզ, բայց անշուշտ ինքն էլ չի կարող լուծել դրանք։ Եթե սպանել է, ուրեմն սպանել է. իսկ ի՞նչ է նշանակում՝ եթե սպանել է, ուրեմն չի սպանել. ո՞վ գլուխ կհանի սրանից։ Այնուհետև հաշտարարում են մեզ, թե մեր ատենաբեմը բեմն է ճշմարտության և առողջ հասկացությունների, և ահա «առողջ հասկացությունների» այս բեմից, երդում պատառ լինելով, քարոզում են որպես աքսիոմ, թե հոր սպանությունը հայրասպանություն կոչելը նախապաշարմո՞ւնք է միայն։ Բայց եթե հայրասպանությունը նախապաշարմունք է և եթե ամեն մի երեխա պիտի հարցաքննության ենթարկի իր հորը՝ «Հայր իմ, ինչո՞ւ պիտի սիրեմ քեզ», ապա ի՞նչ կլինի մեր բանը, ի՞նչ կդառնան հասարակության հիմունքները, ո՞ւր կմնա ընտանիքը։ Հայրասպանությունը, ուրեմն, հասկանո՞ւմ եք ինչ, մոսկվացի տիկիններին վախեցնող խրտվիլակ-բա՞ն է պարզապես։ Ռուսական դատարանի կոչումն ու ապագան երաշխավորող ամենաթանկագին, ամենասրբազան ավանդները մատուցում են մեզ խեղաթյուրված ու թեթևամիտ ձևով, պարզապես իրենց նպատակին հասնելու համար, պարզապես ձեռք բերելու համար արդարացումն այն բանի, որ չի կարելի արդարացնել։ Օ՜, ընկճեցեք նրան գթասրտությամբ, բացականչում է դատապաշտպանը. բայց ոճրագործին էլ հենց ա՛յդ է պետք միայն, և վաղն եթե բոլորը կտեսնե՞ն, թե նա ինչպես է ընկճվելու։ Եվ

արդյոք չափից ավելի համեստություն չի՞ անում դատապաշտպանը, որ մեղադրյալի արդարացումն է պահանջում միայն։ Ինչո՞ւ չպահանջել, որ մի թոշակ հիմնադրվի հայրասպանի անունով, հավերժացնելու համար նրա սխրագործությունը մեր հետնորդների ու երիտասարդ սերնդի մեջ։ Սրբագրվում են ավետարանն ու կրոնը. այդ բոլորը իբր թե միստիկ բաներ են, իսկ ահա մե՛նք, մե՛նք ենք միայն քարոզում իսկական քրիստոնեությունը, որն արդեն ստուգվա՞ծ է բանականության ու առողջ հասկացությունների վերլուծությամբ։ Եվ ահա, մեր առաջ կանգնեցնում են կեղծ նմանությունը Քրիստոսի։ «Ոով չափով չափէք, չափեսցի ձեզ», բացականչում է դատապաշտպանը և նույն վայրկյանին էլ եզրակացնում է, թե Քրիստոս պատվիրում էր չափել այն չափով, որով ձեզ են չափում. և սա՝ ճշմարտության ու առողջ հասկացությունների ատենաբեմի՞ց։ Մենք մեր ճառերի նախօրյակին է միայն, որ մի հայացք ենք գցում ավետարանին, որպեսզի փայլե՞նք այդ համենայն դեպս բավական յուրօրինակ երկի ծանոթությամբ, մի երկի, որ կարող է պիտանի լինել ու ծառայել որոշ տպավորություն գործելու համար, ըստ անհրաժեշտությա՞ն, ամե՞ն ինչ անհրաժեշտության չափով։ Իսկ Քրիստոս հենց պատվիրում է չանե՞լ այդպես, զգուշանալ այդպես անելուց, որովհետև չար աշխարհն է այդպես անում, իսկ մենք պետք է ներենք և մեր մյուս ծնոտը դարձնենք ապտակողին, և ոչ թե չափենք այն չափով, որով մեզ չափում են մեր կեղեքիչները։ Ահա՛ թե ինչ է սովորեցրել մեզ աստվածն մեր, և ոչ թե այն միտքը, թե զավակներին իրենց հոր սպանությունն արգելելը նախապաշարմունք է։ Եվ ճշմարտության ու առողջ հասկացությունների այս ամբիոնից չսրբագրենք ավետարանը մեր աստծո, որին դատապաշտպանը շնորհ է անում կոչել «խաչյալ մարդասեր», ի հակադրության համայն ուղղափառ Ռուսաստանի, որ կոչ է անում նրան՝ «Ջի դո՛ւ ես աստված մեր...»։

Այստեղ նախագահը միջամուխ եղավ ու լռեցրեց տաքացած հռետորին, խնդրելով նրան, որ չլափազանցնի, մնա պատշաճ սահմանների մեջ և այլն, և այլն, ինչպես սովորաբար ասում են նախագահները նման դեպքերում։ Եվ դահլիճն էլ անհանգիստ էր արդեն։ Հասարակությունը խլրտում էր, նույնիսկ բացականչում վրդովված։ Ֆեյուկովիչը շառաչեց անեծք, նա պարզապես եռավ, որպեսզի ձեռքը դնի սրան և վիրավոր-

ված ձայնով մի քանի խոսք ասի, արժանապատվությամբ լեցուն խոսքեր։ Միայն թեթևակի ու հեգնականորեն շոշափեց նորից «վեպերի» և «հոգեբանության» հարցը և, խոսքը տեղը բերելով, ասաց. «Յուպիտե՛ր, բարկանո՞ւմ ես դու, ուրեմն իրավացի լեռ»։ Եվ դրանով հավանության ընդհանուր մի ծիծաղ առաջ բերեց դահլիճում, որովհետև Իպոլիտ Կիրիլովիչը դե բոլորովին նման չէր Յուպիտերի։ Այնուհետև, անդրադառնալով այն մեղադրանքին, թե ինքը երիտասարդ սերնդին իբր թե թույլատրում է իրենց հայրերին սպանել, Ֆետյուկովիչը խոր արժանապատվությամբ նկատեց, որ ինքը չի էլ պատասխանի դրան։ Իսկ գալով «Քրիստոսի կեղծ նմանության» և այն մեղադրանքին, թե ինքը շնորհ չի արել Քրիստոսին աստված կոչել, այլ պարզապես կոչել է «խաչյալ մարդասեր», մի բան, որ «իբր թե հակառակ է ուղղափառ դավանանքին և չէր կարելի ասել ճշմարտության և առողջ հասկացությունների ատենաբեմից», Ֆետյուկովիչը ակնարկեց, թե դա «սադրանք» է իր դեմ, և թե ինքը, երբ այստեղ էր գալիս, զոնե այն հույսը ուներ, որ այս դատարանում իր անձը ապահովված կլինի այնպիսի մեղադրանքներից, «որոնք վտանգավոր են իմ անձնավորության համար՝ որպես քաղաքացու և հավատարիմ հպատակի...»։ Բայց այդ խոսքերի վրա նախագահը նրան էլ լռեցրեց, և Ֆետյուկովիչը, խոնարհվելով, վերջացրեց իր պատասխանը, մինչ դահլիճն ընդհանուր մի խլրտյունով հավանություն էր տալիս նրան։ Իսկ Իպոլիտ Կիրիլովիչը, մեր տիկինների կարծիքով, «վերջնականապես ջախջախվեց»։

Այնուհետև խոսքը տրվեց նույնինքն մեղադրյալին։ Միտյան վեր կացավ, բայց քիչ բան ասաց։ Սոսկալի հոգնել էր թե՛ մարմնապես, թե՛ հոգեպես։ Անկախության և ուժի այն արտահայտությունը, որով նա դահլիճ էր մտել առավոտյան, գրեթե չքացել էր հիմա։ Այդ օրվա ընթացքում իր ունեցած ապրումները կարծես ցկյանս իրեն սովորեցրել ու հասկացրել էին մի շատ կարևոր բան, որ մինչ այդ չէր հասկանում ինքը։ Ձայնը թուլացել էր, այլևս չէր գոռում առաջվա նման։ Նրա խոսքերի մեջ մի նոր շեշտ կար, հնազանդված, պարտված ու կռացած մարդու շեշտը։

«Ի՞նչ ասեմ, պարոնայք ատենակալներ։ Եկավ իմ դատաստանը, զգում եմ աստծո աչքը ինձ վրա։ Վերջացա՛վ անառակ մարդը։ Բայց ինչպես որ պիտի խոստովանեի աստծո առաջ,

այնպես էլ ասում եմ ձեզ. «Իմ հոր այրան մեջ՝ ո՞չ, մեղք լուսնե՛մ»։ Վերջին անգամ կրկնում եմ՝ «ես չեմ սպանողը»։ Անառակ էի, բայց սիրում էի բարին։ Ամեն րոպե ձգտում էի ուղղվել, բայց ապրում էի վայրի գազանի նման։ Շնորհակալ եմ դատախազից, նա ինձ շատ բան ասաց իմ մասին, որ ես չգիտեի. բայց ճիշտ չէ՛, որ սպանել եմ հորս, սխալվեց դատախազը։ Շնորհակալ եմ նաև դատապաշտպանից, լաց էի լինում, երբ լսում էի նրան. բայց ճիշտ չէ՛, որ սպանել եմ հորս, ենթադրել անգամ պետք չէր։ Իսկ բժիշկներին մի՛ հավատաք, միտքս կատարելապես առողջ է, միայն թե սիրտս է ծանր։ Եթե խնայեք, եթե ազատ արձակեք, կաղոթեմ ձեզ համար։ Ավելի լավ մարդ կդառնամ, խոսք եմ տալիս, աստծո առաջ խոսք եմ տալիս ձեզ։ Իսկ եթե դատապարտեք, ի՞նքս կկոտրեմ սուրը իմ գլխի վերև, իսկ կոտրելուց հետո կհամբուրեմ բեկորները։ Բայց խնայեցեք, մի՛ զրկեք ինձ իմ աստծուց, գիտեմ ինձ՝ կորտնջամ։ Ծանր է սիրտս, պարոնայք... խնայեցե՛ք»։

Նա համարյա ընկավ իր աթոռին, ձայնը կտրվեց, վերջին նախադասությունը հազիվ կարողացավ արտասանել։ Այնուհետև դատարանն անցավ հարցերի ձևակերպման և սկսեց դիմել կողմերին՝ խնդրելով նրանց եզրակացությունը։ Բայց մանրամասնությունները չեմ նկարագրում։ Եվ վերջապես ատենակալները վեր կացան, որպեսզի գնան խորհրդակցելու։ Նախագահը շատ էր հոգնել, դրա համար էլ բարեմաղթության շատ անավյուն մի խոսք ասաց նրանց. «Անկողմնակալ եղեք, մի՛ ազդվեք պաշտպանության պերճախոս կոչերից, բայց այնուամենայնիվ ծանր ու թեթև արեք, հիշեցեք, որ ձեզ վրա մի մեծ պարտականություն է դրված» և այլն։ Ատենակալները մեկուսացան և սկսվեց ընդմիջումը։ Կարելի էր վեր կենալ, շրջել, կուտակված տպավորություններ փոխանակել, մի բան ուտել բուֆետում։ Շատ ուշ էր, համարյա գիշերվա ժամը մեկը արդեն, բայց ոչ ոք չէր ուզում տուն գնալ։ Բոլորն էլ այնքան էին լարված, որ հանգստի մասին մտածող չկար։ Բոլորն էլ սպասում էին սրտի նվաղումով, բայց գուցե ոչ, բոլոր սրտերը չէ, որ նվաղում էին։ Տիկինները պարզապես հիստերիկ անհամբերությամբ էին սպասում, բայց նրանց սրտերը հանգիստ էին, այսինքն թե՝ «անխուսափելի է արդարացումը»։ Նրանք բոլորն էլ պատրաստվում էին ընդհանուր խանդավառության զգայացունց բոպեին։ Խոստովանում եմ, աղամարդկանց մեջ էլ

շատ-շատերը համոզված էին, թե արդարացումն անխուսափելի է։ Ոմանք ուրախանում էին, ուրիշները խոժոռվում, իսկ ոմանք էլ ուղղակի կախել էին իրենց քթերը՝ չէի՞ն ուզում, որ մեղադրյալն արդարացվի։ Իսկ Ֆեոդուկովիչն ինքը կատարելապես վստահ էր իր հաջողությանը։ Նրան շրջապատել էին և նա շնորհավորանքներ էր ընդունում, մարդիկ հաճոյանում էին նրան։

— Կան,— ասաց նա մի խմբում, ինչպես պատմում էին հետո,— կան անտեսանելի թելեր, որոնք դատապաշտպանին կապում են ատենակալների հետ։ Դեռ ճառի ընթացքում հաստատվում են դրանք, և մարդ նախազգում է։ Ես զգացի, կան այդ թելերը։ Շահեցինք գործը, հանգիստ եղեք։

— Է՛, տեսնենք մեր գեղջուկնե՞րը ինչ կասեն հիմա,— ասաց մի խոժոռ, գեր ու չեչոտ պարոն, քաղաքամերձ մի կալվածատեր, մոտենալով խոսակցող պարոնների մի խմբի։

— Բայց դե միայն գեղջուկներ չեն։ Ջորս հոգի պաշտոնյա կա այնտեղ։

— Այո՛, պաշտոնյաներ կան,— ասաց գավառական վարչության մի անդամ, մոտենալով խմբին։

— Իսկ դուք Նազարևին գիտե՞ք, Պրոխոր Իվանովիչին, ա՛յ այն մեդալով վաճառականը, ատենակալ։

— Է՛ հետո՞ ինչ։

— Խելքի ծով է։

— Բայց նա ե՞րբ է բերանը բացում որ։

— Հա, շատ խոսող չէ, բայց դե ավելի լավ։ Պետերբուրգցի՞ն է նրան խելք սովորեցնելու. ի՛նքը ամբողջ Պետերբուրգին խելք կսովորեցնի։ Տասներկու երեխայի հայր է, պատկերացրե՛ք։

— Բայց ներեցե՛ք խնդրեմ, մի՞թե չեն արդարացնի,— գոռում էր մեր երիտասարդ պաշտոնյաներից մեկը մի ուրիշ խմբում։

— Կարդարացնեն անկասկած,— լսվեց մի վճռական ձայն։

— Ամո՛թ, խայտառակությո՛ւն կլինի չարդարացնելը,— բացականչում էր մի պաշտոնյա։— Ենթադրենք սպանել է, բայց դե հայր կա, հա՛յր էլ կա։ Եվ, վերջապես, մարդը այնպիսի՛ մոլուցքի մեջ է եղել... Իսկապես որ, դուցե հենց միայն ովել է սանդիոթով, իսկ մյուսը ուղղակի փովել է գետնին։

Բայց վատն այն է, որ ծառային խցկեցին մեջը։ Պարզապես ծիծաղելի ենթադրություն էր դա։ Ես դատապաշտպանի տեղը լինեի, հենց ուղղակի կասեի՝ սպանել է, բայց մեղավոր չէ, դե՛ գնացեք, դրո՛ղը ձեր գլխին։

— Դե հենց այնպես էլ արեց, էլի, միայն թե գրողը ձեր գլխին չասաց։

— Չէ, Միխայիլ Սեմյոնիչ, համարյա թե ասաց,— վրա բերեց մի երիտասարդ ձայն։

— Ներեցեք, պարոնայք, բայց չէ՞ որ մեծ պահքին մեզ մոտ արդարացրին այն դերասանուհուն, որ իր սիրահարի օրինական կնոջ կոկորդն էր կտրել։

— Է հա, բայց մինչև վերջ չէր կտրել։

— Միևնույնն է, միևնույնը, սկսե՛լ է կտրել, չէ՞։

— Իսկ որդիների՞ մասին ինչպես էր խոսում։ Հոյակա՞պ։

— Հոյակապ։

— Է՛, հապա միստիկայի՞ մասին, միստիկայի՞, հը՞։

— Դե թողե՞ք միստիկան,— գոռաց ուրիշ մեկը,— դուք Իպոլիտի՞ մասին խոսեցեք, ի՞նչ է լինելու նրա բանը սրանից հետո։ Ախր կինը հենց վաղն էլ նրա աչքերը կհանի Միտենկայի համար։

— Իսկ հիմա այստե՞ղ է կինը։

— Այ քեզ բա՛ն։ Եթե այստեղ լիներ, հենց այստեղ էլ աչքերը կհաներ։ Նստել է տանը, ատամներն են ցավում։ Հեհ-հե-հե՛։

— Հեհ-հե-հե՛։

Մի երրորդ խմբում.

— Բայց դե Միտենկային կարդարացնեն երևի։

— Է՛հ, մեկ էլ տեսար՝ վաղը ամբողջ «Մայր քաղաքը» տակնուվրա կանի, տասը օր կկոնծի անընդհատ։

— Սատանայի բան է, հա՛։

— Սատանա՞, ինչ՞ երկե սատանայի մատը կա այս գործի մեջ. էլ ո՞ւր կարող է լինել սատանան, եթե ո՛չ այստեղ։

— Լավ, պարոնայք, պերճախոսությունք՝ պերճախոսություն, բայց դե չի՞ կարելի հայրերի էլ գլուխը ջարդել սանդիոթով։ Թե չէ՝ ո՞ւր կհասնենք։

— Շքակա՞ռքը, շքակա՞ռքը, հիշո՞ւմ եք։

— Այո՛, սայլը դարձրեց շքակառքը։

— Վաղն էլ չքակուքը սայլ կդարձնի, «ըստ անհրաժեշտության, ամե՞ն ինչ անհրաժեշտության չափով»։

— Ճարպիկ տիպեր են մեջտեղ ընկել հիմա։ Ճշմարտություն ասված բանը կա՞ մեր Ռուսաստանում, պարոնայք, թե՞ բոլորովին չկա։

Բայց զանգակը հնչեց։ Ատենակալները ուղիղ մեկ ժամ խորհրդակցել էին, ոչ ավելի, ոչ պակաս։ Հենց որ հասարակությունը նորից նստեց իր տեղը, դահլիճում խոր լռություն տիրեց։ Հիշում եմ, թե ինչպես ատենակալները դահլիճ մտան։ Վերջապե՞ս։ Ջեմ բերում հարցերն ըստ կետերի, և նույնիսկ մոռացել եմ դրանք։ Հիշում եմ այն պատասխանը միայն, որ տրվեց նախագահի առաջին ու գլխավոր հարցին, այսինքն՝ «սպանե՞լ է կողոպուտի նպատակով ու դիտավորյալ»։ (Բուն բառերը չեմ հիշում)։ Բոլորը քարացան։ Ատենակալների ավագը՝ հենց այն պաշտոնյան, որ ամենաերիտասարդն էր, բարձրաձայն ու հստակ հայտարարեց՝ դահլիճի մեռելային լռության մեջ.

— Այո՛, մեղավոր է։

Եվ հետո նույն բանը կրկնվեց ըստ բոլոր կետերի՝ մեղավոր է ու մեղավոր, և առանց ամենադույզն մեղմացուցիչ հանգամանքի։ Այդ արդեն ոչ ոք չէր սպասում, գրեթե բոլորն էլ համոզված էին, որ գոնե մեղմացուցիչ հանգամանքներ կլինեն։ Դահլիճի մեռելային լռությունը չէր խզվում, կարծես բոլորն էլ քառացիորեն քարացել էին՝ և՛ նրանք, ովքեր մեղադրյալի դատապարտումն էին ցանկանում, և՛ նրանք, ովքեր տենչում էին նրա արդարացումը։ Բայց դա միայն առաջին րոպեներին էր։ Հետո մի սոսկալի քաոս սկսվեց։ Տղամարդկանցից շատերը խիստ գոհ մնացին։ Ոմանք հենց ուղղակի իրենց ձեռքերն էին շփում, չթաքցնելով իրենց ուրախությունը։ Դժգոհները մի տեսակ ընկճվել էին, ուսերն էին թոթվում, փսփսում էին իրար մեջ, բայց կարծես դեռ չէին համակերպվում կատարված փաստին։ Բայց աստվա՞ծ իմ, ի՞նչ օրի ընկան մեր տիկինները։ Ինձ թվաց, թե ապստամբություն կբարձրացնեն։ Սկզբում կարծես չէին հավատում իրենց ականջներին։ Եվ հանկարծ, ամբողջ դահլիճով մեկ, բացականչություններ լսվեցին. «Բայց ի՞նչ բան է սա։ Սա՞ ինչ բան է»։ Նրանք վեր էին թռնում իրենց տեղերից։ Երևի նրանց թվում էր, թե այդ ամբողջը իսկույն ևթ կարելի է փոխել և ուրիշ կերպ անել։ Այդ վայրկյանին հանկարծ վեր

կացավ Միտյան և սրտաճմլիկ մի աղաղակով գոռաց, թևերն առաջ նետելով.

— Երդվո՞ւմ եմ աստուծով և նրա ահավոր դատաստանով, մեղք չունե՞մ իմ հոր արյան մեջ։ Կա՛տյա, ներում եմ քեզ։ Եղբայրնե՞ր, բարեկամնե՞ր, խնայեցե՞ք մյուսին։

Նա չկարողացավ շարունակել և սկսեց սարսափելիորեն հեկեկալ բարձրաձայն, ամբողջ դահլիճով մեկ, մի տեսակ նոր, անսպասելի, ոչ իր սեփական ձայնով, որ ասված գիտե, թե որտեղից հանկարծ հայտնվեց նրա մեջ։ Վերնատան ամենահեռավոր անկյունից կանացի մի սուր ճիչ լսվեց. Գրուշենկան էր։ Նա աղաչել էր մեկին, և դեռ դատախազի ճառից առաջ նրան ներս էին թողել նորից։ Միտյային դուրս տարան։ Դատավճռի հայտարարումը հետաձգվեց հաջորդ օրվան։ Ամբողջ դահլիճը վեր կացավ թոհուբոհով, բայց ես այլևս չսպասեցի կարծիքները լսելու։ Հիշում եմ միայն մի քանի բացականչություն, որ ականջիս հասավ դուրս գալու ժամանակ, անդաստակում։

— Քսան տարի հանքերի օդը կշնչի։

— Ոչ պակաս։

— Այո՛, մեր գեղջուկներն ամուր մնացին։

— Եվ մեր Միտյայի մո՞ւխը մարեցին։

ՎԵՐՋԱԲԱՆ

I

ՄԻՏՅԱՇԻՆ ՓՐԿԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐ

Դատից հինգ օր հետո, առավոտյան շատ կանուխ, դեռ ժամը իններին, Ալյոշան գնաց Կատերինա Իվանովնայի մոտ, երկուսի համար էլ շատ կարևոր մի գործի մասին վերջնական համաձայնության գալու և, բացի այդ, իրեն հանձնարարված մի բան հաղորդելու նրան։ Կատերինա Իվանովնան նստել ու նրա հետ խոսում էր հենց այն սենյակում, ուր մի ժամանակ ընդունել էր Գրուշենկային։ Իսկ կողքի սենյակում Իվան Ֆյոդորովիչն ուշագնաց պառկել էր տենդի մեջ։ Դատի այն տեսարանից անմիջապես հետո Կատերինա Իվանովնան հրամայել էր իր տունը տանել հիվանդ ու գիտակցությունը կորցրած Իվան Ֆյոդորովիչին, արհամարհելով հասարակության հետագա անխուսափելի բամբասանքներն ու պարսավանքը։ Իր հետ ապրող երկու ազգականուհիներից մեկը դատի տեսարանից հետո իսկույն մեկնել էր Մոսկվա, իսկ մյուսը մնացել էր։ Բայց եթե նույնիսկ երկուսն էլ գնային, Կատերինա Իվանովնան չէր փոխի իր որոշումը և կմնար խնամելու հիվանդին, գիշեր ու ցերեկ նստելու նրա մոտ։ Նրան բուժում էին Վարվինսկին ու Հերցենշտուբեն. իսկ մոսկվացի բժիշկը ետ էր գնացել Մոսկվա, հրաժարվելով իր կարծիքը հայտնել հիվանդության հնարավոր վախճանի մասին։ Մյուս բժիշկները թեև քաջալերում էին Կա-

տերինա Իվանովնային ու Ալյոշային, բայց երևում էր, որ դեռ չէին կարող հաստատ հույսեր տալ։ Ալյոշան օրը երկու անգամ այցելում էր իր հիվանդ եղբորը։ Բայց այս անգամ մի հատուկ, շատ կնճռոտ գործ ուներ և նախազգում էր, թե որքան դժվար է լինելու խոսք բանալ դրա մասին, և միաժամանակ շատ էր շտապում. մի ուրիշ տեղ մի ուրիշ անհետաձգելի գործ ուներ այդ առավոտ և պետք է ամապարեր։

Արդեն քառորդ ժամ է խոսում էին նրանք։ Կատերինա Իվանովնան գունատ էր, սաստիկ հոգնած և միաժամանակ չափազանց հուզագրգիռ վիճակում. նախազգում էր, թե ինչու, ի միջի այլոց, Ալյոշան հիմա եկել է իր մոտ։

— Նրա որոշման մասին մի՛ մտահոգվեք,— վստահորեն ասաց նա Ալյոշային։— Այսպես թե այնպես, միևնույն է՝ նա կհասկանա, որ այդ է ելքը. պե՞տք է փախչի։ Այդ դժբախտը, պատվի և խղճի այդ ասպետը... չէ՞, ոչ թե նա, ոչ թե Դմիտրի Ֆյոդորովիչը, այլ այս դռան եռև պառկողը, որ իր եղբոր համար զոհեց իրեն,— ավելացրեց Կատերինա Իվանովնան փայլատակող աչքերով,— նա վաղուց ինձ հայտնել է փախուստի ամբողջ ծրագիրը։ Գիտե՞ք, նա արդեն կապեր է հաստատել... Ես ձեզ մի քանի բան ասացի արդեն... Հասկանո՞ւմ եք, շատ հավանաբար դա կլինի այստեղից երրորդ հանգրվանում, երբ աքսորականների խումբը տանեն Սիբիր։ Օ՛, դեռ շատ հեռու է մինչև այդ օրը։ Իվան Ֆյոդորովիչն արդեն գնացել է երրորդ հանգրվանի պետին։ Միայն չգիտենք, թե խմբի պետը ով է լինելու, և չի էլ կարելի այսքան շուտ խմանալ։ Վաղը գուցե մանրամասներին ցույց տամ ձեզ ամբողջ ծրագիրը, որ Իվան Ֆյոդորովիչն ինձ մոտ թողեց դատի նախօրեին... որ եթե մի բան պատահի... Դա հենց այն անգամն էր, հիշո՞ւմ եք, երբ երեկոյան եկաք ու մեզ գժտված գտաք. նա դեռ նոր էր իջել տանդուղքից, իսկ ես, ձեզ տեսնելով, ստիպեցի նրան, որ ետ դառնա, հիշո՞ւմ եք։ Գիտե՞ք ինչ պատճառով էինք ընդհարվել այն օրը։

— Ոչ, չգիտեմ,— ասաց Ալյոշան։

— Իհարկե, նա այն ժամանակ թաքցրեց ձեզնից. այ հենց այդ փախուստի ծրագիրն էր պատճառը։ Դրանից դեռ երեք օր առաջ հայտնել էր ինձ ամենաոչխավորը, և ահա այդ օրից էլ սկսել էինք կռվել, ամբողջ երեք օր կռվեցինք։ Ինչո՞ւ կռվեցինք։ Երբ նա ինձ ասաց, թե Դմիտրի Ֆյոդորովիչը, եթե դա-

տապարտեն, արտասահման է փախչելու այդ արարածի հետ, ես հանկարծ զայրացա. չեմ կարող ասել, թե ինչու, ինքս էլ չգիտեմ ինչու... Օ՜, իհարկե, այդ արարածի համար զայրացա, այսինքն այն բանի համար, որ նա՜ էլ Դմիտրիի հետ փախչում է արտասահման,— բացականչեց հանկարծ Կատերինա Իվանովնան, բարկությունից դողացող շրթունքներով։— Հենց որ Իվան Ֆյոդորովիչը տեսավ՝ ես այնպես զայրանում եմ այդ արարածի համար, իսկույն մտածեց, թե խանդում եմ նրան, ուրեմն դեռ սիրում եմ Դմիտրիին։ Ահա դրանից էլ սկսվեց մեր առաջին կռիվը։ Ես չուզեցի բացատրություն տալ, չէի կարող ներողություն խնդրել. ծանր էր ինձ համար, որ այսպիսի մարդը կարող է կասկածել, թե ես շարունակում եմ սիրել այդ... Եվ դա այն դեպքում, երբ ինքս ուղղակի ասել էի նրան, արդեն վաղուց էի ասել, որ Դմիտրիին չեմ սիրում, միայն ու միայն իրե՜ն եմ սիրում։ Պարզապես այդ արարածի՜ դեմ գազազելուց էր, որ զայրացա Իվան Ֆյոդորովիչի վրա։ Երեք օր հետո, ա՜յ հենց ձեր եկած իրիկունը, նա մի փակ ծրար բերեց ինձ, որպեսզի ես անմիջապես բանամ, եթե իրեն մի բան պատահի։ Օ՜, նախատեսում էր իր հիվանդությունը։ Հայտնեց ինձ, որ ծրարի մեջ փախուստի մանրամասնությունները կան, և եթե ինքը մեռնի կամ վտանգավոր կերպով հիվանդանա, ես մենակս փրկեմ Միտյային։ Եվ տեղն ու տեղը մի գումար թողեց ինձ, համարյա տասը հազար ռուբլի, այ հենց այն փողը, որ դատախազը հիշեց իր ճառում, չգիտես որտեղից իմացած լինելով, որ նա բանկտոմսերն ուղարկել էր մանրելու։ Ինձ սոսկալի շշմեցրեց այն, որ Իվան Ֆյոդորովիչը, դեռ ինձ խանդելով հանդերձ, դեռ համոզված լինելով, որ ես Միտյային եմ սիրում, այնուամենայնիվ չէր հրաժարվել իր եղբորը փրկելու մտքից և ի՞նձ էր, ի՞նձ էր վստահում այդ փրկության գործը։ Օ՜, դա զոհողություն էր։ Չէ՜, դուք ամբողջ լիությամբ չեք հասկանա այդպիսի ինքնազոհությունը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Ես ուզում էի նրա ոտքերն ընկնել երկյուղածությամբ, բայց երբ հանկարծ մտածեցի, որ նա այդ բանը կընդունի միայն որպես իմ ուրախությունը Միտյայի փրկության համար (և նա անպայման պիտի մտածեր այդպես), հանկարծ այնքան ջղայնացա հենց միայն այդպիսի անարդար մի մտքի հնարավորությունից, այնքա՜ն ջղայնացա, որ նորից զայրույթս եկավ, և փոխանակ նրա ոտքերը համբուրելու, նորի՜ց տեսարան սարքեցի։ Օ՜, դժբախտ եմ

ես։ Այսպես է իմ բնավորությունը, սոսկալի՜, դժբա՜խտ մի բնավորություն։ Օ՜, դեռ կտեսնենք, վերջ ի վերջո բանը այնտեղ կհասցնեմ, որ նա էլ Միտյայի նման կլքի ինձ և կգնա մի ուրիշի մոտ, որի հետ ավելի հեշտ է ապրելը, բայց այդ դեպքում... ո՜չ, այդ դեպքում արդեն չեմ դիմանա, կսպանե՛մ ինձ։ Իսկ երբ այն օրը դուք ներս մտաք և ես ձեզ կանչեցի, իսկ նրան էլ ստիպեցի, որ ետ դառնա, և երբ նա ձեզ հետ ներս մտավ ու հանկարծ ատող, արհամարհական մի հայացքով նայեց ինձ, ես այնպե՜ս զայրացա այդ հայացքից, որ հիշո՞ւմ եք՝ հանկարծ դռռալով ասացի ձեզ, թե նա, միայն նա էր ինձ համոզողը, որ իր եղբայր Դմիտրին մարդասպան է։ Ես դիտմամբ զրպարտեցի, որ մի անգամ էլ խայթեմ նրան, իսկ նա երբեք, երբեք չի համոզել ինձ, որ եղբայրը մարդասպան է. ընդհակառակը, ե՛ս էի, ես էի համոզում նրան։ Օ՜, իմ կատաղությունն էր ամեն ինչի պատճառը, ամե՜ն ինչի։ Դատարանի այդ անիծյալ տեսարանն էլ իմ դրդումով եղավ, ի՜մ դրդումով։ Նա ուզեց ապացուցել ինձ, որ ինքը ազնիվ մարդ է և թեկուզ ես սիրում եմ իր եղբորը, բայց ինքը չի խանդի և վրեժ լուծելու համար չի կործանի նրան։ Եվ ահա ներկայացավ դատարան... ե՛ս եմ ամեն ինչի պատճառը, ե՛ս եմ միայն մեղավոր։

Կատյան դեռ երբեք այսպիսի խոստովանություններ չէր արել Ալյոշային, և Ալյոշան զգաց, որ նա հիմա գտնվում է անտանելի տառապանքի այն աստիճանին, երբ ամենահպարտ սիրտն անգամ ցավատանջորեն խորտակում է իր հպարտությունը և քնկնում վշտից պարտված։ Օ՜, նրա այս ներկա տառապանքի մի ուրիշ ահավոր պատճառ էլ գիտեր Ալյոշան, թեև Կատյան դատից հետո թաքցրել էր այդ բանը նրանից. բայց Ալյոշայի համար, չգիտես ինչու, չափազանց ցավալի կլիներ, եթե Կատյան սիրտ աներ այնքա՜ն խոնարհվել, որ այդ պատճառի մասին էլ ի՞նքը սկսեր խոսել հիմա, այս րոպեին։ Աղջիկը տառապում էր դատի ժամանակ իր արած «դավաճանության» համար, և Ալյոշան նախազգում էր, որ խիղճը նրան մղում է խոստովանելու իր հանցանքը, հենց Ալյոշայի առաջ խոստովանելու՝ արցունքներով, ճիչերով, հիստերիկ ցնցումներով, հատակին ընկնելով։ Բայց Ալյոշան վախենում էր այդ բանից և ուզում էր խնայել տառապող աղջկան։ Դրանով ավելի էր դժվարանում այն հանձնարարությունը, որի համար եկել էր հիմա։ Նա նորից սկսեց խոսել Միտյայի մասին։

— Ոչի՜նչ, ոչի՜նչ, մի՛ վախենաք նրա համար,— սկսեց նորից Կատյան համառ ու կտրուկ մի շեշտով,— այդ ամբողջը բոպեի ազդեցությունն է նրա մեջ, գիտեմ նրան, շատ լավ գիտեմ նրա սիրտը։ Վստահ եղեք, նա կհամաձայնվի փախչել։ Մանավանդ որ՝ անմիջապես չի լինելու այդ բանը. դեռ ժամանակ կունենա որոշելու։ Իվան Ֆյոդորովիչը կառողջանա մինչ այդ և ինքը կկարգադրի ամեն ինչ, այնպես որ ես ոչ մի գործ չեմ ունենա դրա մեջ։ Մի՛ անհանգստանաք, կհամաձայնվի փախչել։ Եվ նա համաձայն է արդեն. կարո՞ղ է հրաժարվել այդ արարածից։ Իսկ այդ կնոջը չեն թողնի, որ գնա Սիբիր՝ նրա մոտ, ուրեմն կարո՞ղ է նա չփախչել։ Զեզնի՛ց է հատկապես վախենում, վախենում է, որ դուք բարոյակա՞ն կողմից հավանություն չեք տա փախուստին, բայց դուք պետք է վեհանձնորեն բույլատրեք նրան, եթե այնքա՞ն անհրաժեշտ է ձեր հավանությունը այս հարցում,— ավելացրեց Կատյան թունոտ։ Եվ լռեց մի բոպե, քմծիծաղ տվեց։

— Նա այնտեղ ինչ-որ օրհնության մասին է խոսում, սկսեց նորից Կատյան,— այն խաչի մասին, որ պետք է կրի, խոսում է ինչ-որ պարտականության մասին։ Հիշում եմ, Իվան Ֆյոդորովիչն այն ժամանակ շատ բաներ էր պատմում ինձ դրա շուրջը, և եթե իմանայիք, թե ինչպե՜ս էր խոսում,— հանկարծ անդիմադրելի մի զգացումով բացականչեց Կատյան,— եթե իմանայիք, թե նա ինչպե՜ս էր սիրում այդ թշվառականին, երբ նրա մասին պատմում էր ինձ, և հենց նույն բոպեին էլ ով գիտե ինչպե՜ս էր ատում նրան։ Իսկ ես, օ՜, ես գոռոզամիտ քմծիծաղո՞վ լսեցի նրա պատմածն ու արցունքները։ Օ՜, բիրտ արարածներ։ Ե՜ս եմ բիրտ արարածը, ե՜ս։ Ե՜ս եմ նրա հիվանդության պատճառը։ Իսկ մյուսը, դատապարտյալը... մի՞թե պատրաստ է նա տառապելու,— ջղայնորեն վերջացրեց Կատյան,— և կարո՞ղ է տառապել այդպիսի մարդը։ Նրա նմանները երբե՛ք չեն տառապում։

Արդեն ատելության ու նողկացող արհամարհանքի մի զգացում հնչեց այդ բառերի մեջ։ Այնինչ հենց ինքն էր, որ դավաճանել էր Միտյային։ «Իրեն այնքա՞ն մեղավոր է զգում նրա առաջ, որ գուցե այդ պատճառով էլ մեկ-մեկ ատում է նրան»,— մտածեց Ալյոշան ինքնիրեն։ Հուսով էր, որ դա «մեկ-մեկ» է լինում միայն։ Կատյայի վերջին բառերի մեջ հրահրող մի շեշտ զգաց, բայց չընդառաջեց։

— Ես այսօր հենց կանչեցի ձեզ, որպեսզի ինձ խոստանաք, թե ինքներդ կհամոզեք նրան։ Կամ գուցե դո՞ւք էլ համարում եք, որ փախչելը անազնիվ բան կլիներ, անարի բան և կամ թե ի՞նչ... քրիստոնեական ոգուն հակառա՞կ,— ավելի ևս հրահրող շեշտով ավելացրեց Կատյան։

— Չէ, վնաս չունի։ Ես ամեն ինչ կասեմ նրան...— կրմկրմաց Ալյոշան։— Այսօր նա ձեզ իր մոտ է կանչում,— ուղղակի ասաց հանկարծ, հաստատորեն նայելով նրա աչքերին։ Կատյան ցնցվեց ու բազմոցի վրա մի քիչ հետ քաշվեց նրանից։

— Ի՞նձ... բայց մի՞թե հնարավոր է,— թոթովեց նա գունատված։

— Հնարավոր է և պե՛տք է,— սկսեց Ալյոշան հաստատակամորեն ու լրիվ աշխուժանալով։— Դուք շատ հարկավոր եք նրան, հենց հիմա։ Ես չէի սկսի այս մասին խոսել ու վաղօրոք տանջել ձեզ, եթե անհրաժեշտ չլիներ։ Հիվանդ է նա, խելագարի նման, ձեզ է խնդրում անընդհատ։ Ոչ թե հաշտվելու համար է խնդրում, որ գնաք մոտը, այլ ուզում է, որ հենց միայն գնաք ու երևաք շեմքին։ Այդ օրից ի վեր շատ բան է կատարվել նրա մեջ։ Հասկանում է, որ անսահմանորեն մեղավոր է ձեր առաջ։ Ոչ թե ուզում է, որ ներեք իրեն. «Անկարելի է ինձ ներել», ինքն է ասում։ Միայն ուզում է, որ երևաք շեմքին...

— Դուք ինձ հանկարծ...— թոթովեց Կատյան,— այս օրերին անընդհատ նախազգում էի, որ կգաք այս բանն ասելու... Այնպես էլ գիտեի, որ կկանչի ինձ... Անկարելի՞ է։

— Թեկուզ անկարելի, բայց արե՛ք։ Հիշեցեք, առաջին անգամն է, որ նա ցնցվել է այն մտքից, թե ինչպե՜ս է վիրավորել ձեզ, առաջին անգամը իր կյանքում, մինչև հիմա երբե՛ք այսքան լրիվ չէր ըմբռնել այդ բանը։ «Եթե հրաժարվի գալ,— ասում է,— այլևս իմ ամբողջ կյանքում ապերջանիկ կլինեմ»։ Լսո՞ւմ եք, քսան տարվա տաժանակրության դատապարտվածը միտք ունի դեռ երջանիկ լինելու. մի՞թե սրտաճմլիկ բան չէ դա։ Մտածեցե՛ք, դուք անմեղորեն կործանված մարդուն եք այցելելու,— մարտահրավերի նման ժայթքեց հանկարծ Ալյոշայի սրտից,— նրա ձեռքերը մաքուր են, արյուն չկա՛ դրանց վրա։ Ի սեր այն անհուն տառապանքի, որ նա կրելու է ապագայում, այցելեցե՛ք նրան հիմա։ Եկեք, ճանապարհեցեք նրան դեպի խա-

վար... կանգնեցեք շեմքին, և ուրիշ ոչինչ... Պետք է անեք այդ բանը,— եզրակացրեց Ալյոշան, լռեսնված ուժով շեշտելով «պետք է» բառը։

— Պետք է, բայց... չեմ կարող,— մի տեսակ տնքաց Կատյան,— նա ինձ է նայելու... չեմ կարող։

— Ձեր աչքերը պետք է հանդիպեն իրար։ Ինչպե՞ս եք ապրելու ամբողջ կյանքում, եթե հիմա քաջություն չունենաք այդ բանը անելու։

— Ավելի լավ է տառապեմ ամբողջ կյանքում։

— Պետք է գաք հիմա, պե՛տք է գաք,— նորից անողոք կերպով շեշտեց Ալյոշան։

— Բայց ինչո՞ւ այսօր, ինչո՞ւ հիմա... Չեմ կարող հիվանդին թողնել...

— Մի բոպեով կարող եք, մի բոպե ընդամենը։ Եթե չգաք, մինչև գիշեր նա կհիվանդանա տենդով։ Ես հո կարիք չունեմ սուտ ասելու, մեղքացե՛ք նրան։

— Ի՞նձ մեղքացեք,— դառնորեն հանդիմանեց Կատյան և սկսեց լալ։

— Ուրեմն կգա՞ք,— ասաց Ալյոշան հաստատորեն, տեսնելով նրա արցունքները։— Գնամ ասեմ նրան, որ հիմա գալիս եք։

— Չէ՞, ոչ մի դեպքում չասեք,— ճչաց Կատյան վախեցած։— Կգամ, բայց նախօրոք մի՛ ասեք նրան, որովհետև կգամ, բայց գուցե ներս չեմ մտնի... Դեռ չգիտեմ...

Նրա ձայնը կտրվեց։ Դժվար էր շնչում։ Ալյոշան վեր կացավ գնալու։

— Իսկ եթե որևէ մեկին հանդիպե՞մ,— ասաց հանկարծ Կատյան մեղմ ձայնով, նորից սաստիկ գունատված։

— Հենց դրա համար էլ հիմա պետք է գաք, որպեսզի ոչ ոքի չհանդիպեք այնտեղ։ Ոչ ոք չի լինելու, հաստատ եմ ասում։ Սպասելու ենք ձեզ,— վերջացրեց նա վճռականորեն և դուրս եկավ սենյակից։

II

ՍՈՒՏԸ ՄԻ ՐՈՊԵ ԴԱՌՆՈՒՄ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Նա շտապեց հիվանդանոց, ուր այժմ պառկած էր Միտյան։ Դատավճռի հաջորդ օրը նա հիվանդացել էր ջղային տենդով, և նրան ուղարկել էին քաղաքային հիվանդանոց՝ կալանավորների բաժանմունքը։ Բայց բժիշկ Վարվինսկին, Ալյոշայի և շատ ուրիշների խնդրանքով (Խոխլակովայի, Լիզայի և այլն), Միտյային տեղավորել էր ոչ թե կալանավորների մոտ, այլ առանձին, հենց այն խցիկում, ուր առաջ պառկել էր Սմերդյակովը։ Ճիշտ է, միջանցքի մյուս ծայրին պահակ զինվոր էր կանգնած, իսկ լուսամուտը վանդակապատ էր, Վարվինսկին կարող էր հանդիստ լինել իր զիջողության համար, որ այնքան էլ օրինական չէր. սակայն բարի ու կարեկցող երիտասարդ էր նա։ Հասկանում էր, թե Միտյայի պես մարդու համար որքա՞ն ծանր է հանկարծ միանգամից ընկնել մարդասպանների և ստահակների միջավայրը, և թե նախ պետք է վարժվել դրան։ Իսկ հարազատների և ծանոթների այցելությունը թույլատրվել էր թե՛ բժշկի, թե՛ վերակացուի և նույնիսկ ոստիկանապետի կողմից, անպաշտոն կերպով։ Բայց միայն Ալյոշան ու Գրուշենկան այցելեցին Միտյային այդ օրերին։ Ռակիտինն արդեն երկու անգամ ձգտել էր տեսնվել նրա հետ, բայց Միտյան համառորեն խնդրել էր Վարվինսկուն, որ ներս չթողնեն նրան։

Ալյոշան իր եղբորը գտավ անկողնին նստած, հիվանդանոցի զգեստով. մի քիչ շերմություն ուներ, քացախաջրով թրջված սրբիչ էր փաթաթել գլխին։ Անորոշ մի հայացքով նայեց ներս մտած Ալյոշային, բայց այդ հայացքի մեջ այնուամենայնիվ մի տեսակ վախ երևաց։

Հենց դատի օրից նա քնդհանրապես սոսկալի մտախոհ էր դարձել։ Երբեմն կես ժամ անընդհատ լուռ էր մնում, մոռանալով իր մոտ գտնվողին, կարծես ծանր ու տանջալի մի մտքով տարված։ Իսկ եթե թոթափում էր իր մտահոգությունը և սկսում խոսել, ապա միշտ էլ խոսում էր անակնկալորեն և անպայման ասում էր այնպիսի մի բան, որ այն չէր, ինչ ուզում էր ասել իրոք։ Երբեմն տառապանքով էր նայում եղբորը։ Գրուշենկայի մոտ կարծես ավելի թեթև էր զգում իրեն, քան Ալյոշայի։ Ճիշտ է, համարյա չէր էլ խոսում, երբ լինում էր Գրուշենկայի հետ, բայց հենց որ նա ներս էր մտնում, դեմքը լուսավորվում էր ուրախությամբ։

Ալյոշան լռեցնեց նրա մոտ, մահճակալին։ Այս անգամ Միտյան տագնապահար սպասում էր Ալյոշային, բայց սիրտ չարեց որևէ բան հարցնել։ Անհրաժեշտ էր համարում, որ Կատյան համաձայնվի գալ, և միաժամանակ զգում էր, որ եթե

նա չգա, ուղղակի անկարելի մի բան կլինի։ Ալյոշան հասկանում էր նրա զգացմունքները։

— Ասում են, որ Տրիֆոնը, Բորիսիչ Տրիֆոնը,— շտապշտապ սկսեց խոսել Միտյան,— իր ամբողջ պանդոկը քանդրսել է. հատակի տախտակները հանում է, պոկոտում. ասում են՝ ամբողջ «պատշգամբը» ջարդուփշուր է արել։ Գտ՚նձ է փընտրում, այ հենց այն փողը, այն մեկուկես հազարը, որ դատախազն ասաց, թե ես այնտեղ եմ թաքցրել։ Հենց սուն է հասել թե չէ՝ սկսել է այդ հիմարությունը։ Տե՛ղն է այդ սրիկային։ Պահակը ինձ ասաց երեկ, այնտեղացի մարդ է։

— Լսի՛ր,— ասաց Ալյոշան,— գալու է, բայց չգիտեմ երբ. գուցե այսօր, գուցե վաղը, մյուս օր՝ չգիտեմ, բայց կգա, կգա հաստատ։

Միտյան ցնցվեց, ուզեց մի բան ասել, բայց լուռ մնաց։ Լուրը ահռելիորեն ազդեց նրա վրա։ Երևում էր, որ սոսկալի կուզեր իմանալ խոսակցության մանրամասնությունները, բայց դարձյալ վախենում էր հարցնել. Կատյայի կողմից որևէ մի դաժան ու արհամարհական բան դանակի հարված կլիներ նրա համար այդ րոպեին։

— Ահա թե ինչ ասաց նա ի միջի այլոց. ասաց, որ ես անպայման հանգստացնեմ քո խիղճը փախուստի հարցում։ Եթե Իվանը չառողջանա մինչ այդ, նա ինքն է հանձն առնելու այդ գործը։

— Արդեն ասել ես ինձ դրա մասին,— նկատեց Միտյան մտախոհ։

— Իսկ դու էլ արդեն Գրուշկային ասացիր,— նկատեց Ալյոշան։

— Այո,— խոստովանեց Միտյան։— Նա այս առավոտ չի գալու,— երկչոտ նայեց եղբորը։— Միայն իրիկունն է գալու։ Հենց որ երեկ ասացի նրան, թե Կատյան գործի է կպել, ինքը բան չասաց, բայց բերանը ծռմռեց։ Միայն փսփսաց. «Թո՛ղ անի»։ Հասկացավ, որ կարևոր բան է։ Էլ չհամարձակվեցի տնտղել։ Կարծեմ էլ հասկանում է հիմա, որ Կատյան ոչ թե ինձ է սիրում, այլ Իվանին, չէ՞։

— Հասկանո՞ւմ է որ,— ակամա ասաց Ալյոշան։

— Գուցե և չի հասկանում։ Բայց այս առավոտ չի գալու,— շտապեց նորից նշել Միտյան,— ես նրան մի հանձնարարություն տվեցի... Լսիր, մեր եղբայր Իվանը բոլորին էլ կգերազանցի։ Նա՛ պետք է ապրի, ոչ թե մենք։ Կառողջանա՞։

— Պատկերացրու, Կատյան թեև դողում է նրա համար, բայց համարյա վստահ է, որ կառողջանա,— ասաց Ալյոշան։

— Ուրեմն համոզված է, որ կմեռնի։ Վախից է այդպես վստահ, որ կառողջանա։

— Մեր եղբայրը ամուր կազմվածք ունի։ Եվ ես էլ շատ հույս ունեմ, որ կառողջանա,— նկատեց Ալյոշան անձկալից։

— Այո, կառողջանա։ Բայց Կատյան համոզված է, որ նա կմեռնի։ Շատ է Կատյայի վիշտը...

Լռություն տիրեց։ Մի շատ կարևոր բան տանջում էր Միտյային։

— Ալյոշա, ես սոսկալի սիրում եմ Գրուշային,— ասաց նա հանկարծ դողդողուն, արտասվալից ձայնով։

— Նրան չեն թողնի, որ դա այնտեղ՝ քեզ մոտ,— վրա բերեց իսկույն Ալյոշան։

— Եվ մեկ էլ ահա ինչ էի ուզում ասել քեզ,— շարունակեց Միտյան, հանկարծ մի տեսակ զրնգուն ձայնով— Եթե սկսեն ծեծել ճանապարհին կամ այնտեղ, չեմ թողնի, կսպանեմ և ինձ կգնդակահարեն։ Եվ քա՞նի տարի այդպես։ Այստեղ արդեն սկսում են «դուս»-ով խոսել։ Պահակներն ինձ «դուս» են ասում։ Այսօր ամբողջ գիշերը պառկել ու դատում էի ինքս ինձ. պատրաստ չե՞մ։ Չե՞մ կարող ընդունել այս բանը։ Ուզում էի «օրհներգ» երգել, բայց պահակների «դուս» ասելն անգամ չեմ կարողանում հանդուրժել։ Գրուշայի համար ամեն ինչի կտոկայի, ամեն ինչի... բացի սակայն ծեծից... Բայց նրան չեն թողնի այնտեղ։

Ալյոշան մեղմ ժպտաց։

— Լսիր, եղբայր, մի անգամ ընդմիշտ,— ասաց նա,— ահա ասեմ քեզ, թե ինչ եմ մտածում այդ մասին։ Եվ դու գիտես, որ սուտ չեմ ասի քեզ։ Ուրեմն լսիր. դու պատրաստ չես, և քեզ համար չէ այսպիսի խաչը։ Ավելին՝ այսպիսի մարտիրոսական խաչը պե՛տք էլ չէ քեզ, երբ պատրաստ չես դրան։ Եթե սպանած լինեիր մեր հորը, պիտի ցավեի, որ մերժում ես քո խաչը։ Բայց դու անմեղ ես, և այսպիսի խաչը չափազանց շատ է քեզ համար։ Դու ուզում էիր տառապելով վերածնվել և ուրիշ մարդ դառնալ. լաստ իս, հիշի՛ր միայն, մշտապես հիշիր այդ ուրիշ մարդու մասին, ամբողջ կյանքում և ո՛ւր էլ փախչես՝ հի-

չի՛ր, և այդքանը բավական է քեզ։ Զարշարանաց մեծ խաչը մերժած լինելու գիտակցությունը կնպաստի, որ ավելի մեծ պարտականություն զգաս քո մեջ, և հետագա քո ամբողջ կյանքում այդ մշտական զգացումը ունենալով՝ գուցե ավելի ևս սատարես քո վերածնմանը, քան եթե այնտեղ գնայիր։ Որովհետև այնտեղ դու չես դիմանա և կտրտնջաս, և գուցե իսկապես կասես ի վերջո. «Հաշիվս փակեցիր»։ Դատապարտյանն այդ կետում ճիշտ ասաց։ Բոլորի համար չեն այդպիսի ծանր բեռները, ոմանց համար անկարելի են դրանք... Ահա իմ մտածածը, եթե այնքան անհրաժեշտ է քեզ։ Եթե քո փախուստի համար ստիպված լինեին պատասխան տալ ուրիշ մարդիկ՝ սպաներ, զինվորներ, այդ դեպքում ես «չէի թույլ տա», որ փախչես,— ժպտաց Ալյոշան։— Բայց ասում են և վստահացնում (այդ հանդրվանապետն անձամբ ասել է Իվանին), որ եթե հմտորեն արվի, մեծ գլխացավանք չի լինի և կարող են հեշտ պրծնել։ Իհարկե, նույնիսկ այսպիսի դեպքում անազնիվ բան է կաշառելը, բայց դե այստեղ արդեն ոչ մի կերպ հանձն չեմ առնի դատել, որովհետև, ճիշտն ասած, եթե օրինակ Իվանն ու Կատյան ի՛նձ հանձնարարեին այս գործը անել քեզ համար, ես կգնայի ու կկաշառեի, գիտեմ. պետք է ամբողջ ճշմարտությունը ասեմ քեզ։ Դրա համար էլ ես չեմ կարող դատավոր լինել քո գլխին, վարվիր ինչպես ուզում ես։ Բայց իմացիր, որ ես քեզ երբեք չեմ դատապարտի։ Եվ տարօրինակ էլ է, ինչպե՞ս կարող էի ես քո դատավորը լինել այս հարցում։ Դե հիմա արդեն ամեն ինչ քննարկեցի կարծեմ։

— Բայց ե՛ս ինձ կդատապարտեմ,— բացականչեց Միտյան։— Պիտի փախչեմ, դա արդեն առանց քեզ էլ որոշված էր. կարո՞ղ է Միտյա Կարամազովը չփախչել։ Բայց դե կդատապարտեմ ինձ և հետո հավիտյանս հավիտենից կքավեմ իմ մեղքը։ Ճիզվիտներն են այս ձևով խոսում, չէ՞, ա՛յս ձևով։ Ա՜յ ինչպես հիմա ես ու դու, հա՞։

— Դե հա,— մեղմ ժպտաց Ալյոշան։

— Սիրո՛ւմ եմ քեզ նրա համար, որ միշտ լրիվ ճշմարտությունն ես ասում և ոչի՛նչ չես թաքցնում,— բացականչեց Միտյան, ուրախ ծիծաղելով։— Ուրեմն ես իմ Ալյոշային ճիզվիտությա՞ն մեջ բռնեցի։ Պետք է ոտից գլուխ համբուրել քեզ դրա համար, հասկանո՞ւմ ես։ Դե հիմա լսի՛ր մնացածն էլ, իմ հոգու մյուս կեսն էլ բացեմ քեզ։ Ահա թե ինչ եմ մտածել ու որոշել.

եթե փախչեմ էլ, նույնիսկ փողով ու անձնագրով, և նույնիսկ Ամերիկա էլ փախչեմ, համենայն դեպս ինձ սրտապնդում է այն միտքը, որ ոչ թե ուրախ կյանքի համար եմ փախչում, ոչ թե երջանկության համար, այլ, ճշմարի՛տ, մի ուրիշ աքսոր գնալու, գուցե նույնքան վատ, որքան այս մեկը։ Նո՛ւյնքան վատ, Ալեքսեյ, ճշմարիտ եմ ասում, նո՛ւյնքան վատ։ Ատում եմ արդեն այդ Ամերիկան, գրո՛ղը տանի դրան։ Ասենք՝ Գրուշան է ինձ հետ լինելու, բայց նայի՛ր նրան՝ ամերիկուհի՞ է նա։ Ռուս աղջիկ է, մինչև ուղն ու ծուծը ռուս աղջիկ. նա կկարոտի հարազատ մայր երկրին, և ես ամեն բոպե պիտի տեսնեմ, որ ի՞նձ համար է նա այդպես կարոտում, ի՞նձ համար է այդպիսի խաչ վերցրել իր վրա, բայց նա՞ ինչ մեղք ունի։ Իսկ ես ինքս կարո՞ղ եմ հանդուրժել այնտեղի ռամիկներին, թեև նրանք բոլո՞րն էլ գուցե ավելի լավ են, քան ես։ Ատո՛ւմ եմ այդ Ամերիկան հենց հիմիկվանից։ Ու թեկուզ նրանք բոլորն էլ, առանց բացառության, հոյակապ մեքենագետներ լինեն կամ չգիտեմ ինչ, գրո՛ղը տանի նրանց, իմ հարազատ մարդիկը չեն, օտար են իմ հոգուն։ Ռուսաստա՞նն եմ սիրում, Ալեքսեյ, ռուս աստծուն եմ սիրում, թեկուզ և սրիկա եմ ինքս։ Ես այնտեղ շնչահե՞ղձ կլինեմ,— բացականչեց նա հանկարծ, և աչքերը փայլատակեցին։ Զայնը դողաց արցունքներից։

— Դե ուրեմն ահա թե ինչ եմ որոշել, Ալեքսեյ, լսի՛ր,— սկսեց նա նորից, զսպելով հուզմունքը։— Գրուշայի հետ կհասնենք այնտեղ, և անմիջապես կսկսենք հերկել, աշխատել հեռավոր մի անկյունում, առանձնության մեջ, վայրի արջերի հետ։ Այնտե՛ղ էլ իհարկե մի հեռավոր անկյուն կգտնվի։ Ասում են՝ դեռ կարմրամորթներ կան այնտեղ, հեռո՛ւ-հեռու անկյուններում, հորիզոնի ծայրին, դե այ ուրեմն կգնանք այդ կողմերը, վերջին մոհիկանների երկիրը։ Եվ անմիջապես կկպնենք քերականության, Գրուշան ու ես։ Աշխատանք ու քերականություն, և այդպես՝ մի երեք տարի։ Այդ երեք տարվա մեջ ուղղակի անգլիացու նման կսովորենք անգլերենը։ Եվ հենց որ սովորեցինք՝ պրծա՛վ Ամերիկան։ Վազում ենք այստեղ՝ Ռուսաստան, որպես ամերիկյան քաղաքացիներ։ Մի՛ վախենա, չենք երևա այս փոքրիկ քաղաքում։ Կթաքնվենք հեռու մի տեղ՝ հյուսիսում կամ հարավում։ Մինչ այդ ես փոխված կլինեմ, նա էլ. այնտեղ, Ամերիկայում, բժիշկը մի տեսակ գորտնուկ կսարքի երեսիս, հո իզուր չէ, որ մեքենագետներ են նրանք։ Իսկ եթե չեղավ, ուրեմն մի աչքս

կհանեմ, մի կանգուն էլ մորուք կթողնեմ, սպիտակած մորուք (Ռուսաստանի կարոտի՞ց կսպիտակեմ)։ Գուցե թե չճանաչեն։ Իսկ եթե ճանաչեն, թո՛ղ աքսորեն, միևնույնն է, ուրեմն այդ է մեր բախտը։ Այստեղ էլ մի որևէ խուլ անկյունում հոգ կմշակենք, և ես իմ ամբողջ կյանքում ամերիկացի կձևանամ։ Բայց գե հարազատ երկրում կմեռնենք։ Ահա իմ ծրագիրը, և անխախտ է սա։ Հավանություն տալի՞ս ես։

— Տալիս եմ,— ասաց Ալյոշան, շուշենալով նրան հակաճառել։

Միտյան մի բոպե լռեց և հանկարծ ասաց.

— Բայց ինչպե՞ս բոլորն էլ տունս քանդեցին դատարանում։ Ինչպե՞ս քանդեցին։

— Ինչ էլ լիներ, միևնույն է՝ քեզ դատապարտելու էին,— ասաց Ալյոշան հառաչելով։

— Այո՞, այստեղի հասարակության աչքի փուշն էի դարձել։ Է՛հ, ասուված ազորմի նրանց, բայց ծա՞նր է,— տառապագին հառաչեց Միտյան։

Նորից մի բոպե լուռ մնացին։

— Ալյոշա, հոգիս մի՛ հանի, ուղղակի ասա՛,— բացականչեց նա հանկարծ,— գալո՞ւ է նա հիմա, թե չէ, ասա՛։ Ի՞նչ ասաց։ Ինչպե՞ս ասաց։

— Ասաց, որ կգա, բայց չգիտեմ՝ այսո՞ր կգա։ Նրա՛ համար էլ դժվար է, հասկանո՞ւմ ես,— Ալյոշան երկչոտ նայեց եղբորը։

— Է՛, իհարկե դժվար է, իհա՛րկե։ Ալյոշա, ես ուղղակի կբխելագարվեմ այս բանից։ Գրուշան անընդհատ ինձ է նայում։ Հասկանում է։ Աստվա՛ծ իմ, տե՛ր իմ աստված, հանգստացրու ինձ. ի՞նչ է ուզածս։ Կատյայի՛ն եմ ուզում։ Ես շա՞տ գիտեմ, թե ինչ եմ ուզում։ Կարամազովյան անզուսպ ոգին է, պի՛ղծ ոգին։ Չէ՛, ես տառապանքի ընդունակ չեմ։ Սրիկա եմ, ու վե՛րջ։

— Ահա՛ նա,— բացականչեց Ալյոշան։

Այդ վայրկյանին հանկարծ Կատյան երևաց շեմքին։ Մի ակնթարթ նա կանգ առավ, նայեց Միտյային՝ շփոթված հայացքով։ Միտյան ընդոստ վեր թռավ, դեմքին վախ երևաց, գունատվեց նա, բայց իսկույն ևթ երկչոտ, աղերսող մի ժպիտ եկավ շրթունքներին և նա հանկարծ, անդիմադրելի մղումով, ձեռքերը մեկնեց Կատյային։ Տեսնելով այդ, Կատյան շեշտակի սլացավ նրա մոտ։ Բռնեց նրա ձեռքերից և համարյա ուժով նրա-

տեցրեց անկողնին, ինքն էլ նստեց մոտը, շարունակելով բռնել նրա ձեռքերը և ամուր, ջղաձգորեն սեղմելով։ Երկուսն էլ մի քանի անգամ բուռն մղում զգացին խոսելու, բայց ամեն անգամ էլ կանգ էին առնում և նորից նայում իրար՝ լուռ, կարծես բևեռված հայացքով, տարօրինակ ժպիտով. այդպես երկու բոպե անցավ։

— Ներե՞լ ես, թե չէ,— թոթովեց ի վերջո Միտյան և նույն վայրկյանին էլ դարձավ Ալյոշային, ուրախությունից այլայլված դեմքով գոռաց նրան.

— Լսո՞ւմ ես ինչ եմ հարցնում, լսո՞ւմ ես։

— Վեհա՛նձն է քո սիրտը, դրա՛ համար էլ սիրում էի քեզ,— ասաց հանկարծ Կատյան բուռն մղումով։— Եվ պետք էլ չէ քեզ իմ ներելը, ոչ էլ քո ներելը՝ ինձ. ներես, թե չներես՝ միևնույնն է, ամբողջ կյանքումս վերքի՞ պես մնալու ես իմ հոգում, ես էլ՝ քո՛ հոգում. այդպես էլ պե՛տք է...— կանգ առավ նա շունչ քաշելու։

— Ինչո՞ւ եկա ես,— սկսեց նորից հրայրքով ու հապճեպորեն,— եկա քո ոտքերը գրկելու, քո ձեռքերը սեղմելու, ա՛յ այսպես, ցավեցնելո՞ւ չափ, հիշո՞ւմ ես, ինչպես Մոսկվայո՛ւմ էի սեղմում, եկա նորից ասելու քեզ, որ դու իմ աստվա՛ծն ես, իմ ցնծությո՛ւնը, եկա ասելու, որ խենթի նման սիրո՛ւմ եմ քեզ,— մի տեսակ տնքաց նա տանջահար, և հանկարծ ագահորեն շրթունքները սեղմեց Միտյայի ձեռքին։ Արցունքը հորդեց նրա աչքերից։

Ալյոշան կանգնել էր լուռ ու շփոթված. երբեք չէր սպասում այն, ինչ տեսնում էր հիմա։

— Անցա՛վ սերը, Միտյա,— սկսեց նորից Կատյան,— բայց մորմոքելու չափ թանկ է ինձ համար այն, ինչ անցավ։ Հավիտյա՛ն իմացիր այս բանը։ Բայց հիմա, մի բոպե, թող լինի այն, ինչ կարող էր լինել,— թոթովեց նա այլայլված ժպիտով, նորից բերկրանքով նայելով նրա աչքերի մեջ։— Դու հիմա ուրիշին ես սիրում, ես էլ ուրիշին եմ սիրում, բայց և այնպես՝ հավիտյա՛ն հավիտենից սիրելու եմ քեզ, դու էլ ի՛նձ ես սիրելու, գիտե՞ր այս բանը։ Լսո՞ւմ ես, սիրի՛ր ինձ, քո ամբողջ կյանքում սիրի՛ր ինձ,— բացականչեց նա, ձայնի մեջ համարյա սպառնագին մի դողով։

— Գիտի սիրեմ և... գիտե՞ս Կատյա,— ասաց նաև Միտյան, ամեն մի բառից հետո շունչ քաշելով,— գիտե՞ս... հինգ

օր առաջ, այն նույն իրիկունը, սիրում էի քեզ... երբ դու ընկար, և քեզ տարան... Ամբո՜ղջ կյանքումս։ Այդպե՜ս կլինի, հավիտյան այդպես կլինի...

Երկուսն էլ, այսպես թոթովելով, գրեթե անիմաստ ու խելահեղ խոսքեր էին ասում իրար, գուցե նույնիսկ ոչ ճշմարիտ խոսքեր, բայց այդ բոպեին ամեն ինչ ճշմարիտ էր, և իրենք անվերապահորեն հավատում էին իրենց ասածին։

— Կա՜տյա,— բացականչեց հանկարծ Միտյան,— հավատո՞ւմ ես, որ ես եմ սպանել։ Գիտեմ, որ հիմա չես հավատում, բայց այն ժամանակ... երբ վկայություն էիր տալիս... Մի՞թե, մի՞թե հավատում էիր։

— Ա՜յն ժամանակ էլ չէի հավատում։ Երբե՜ք չեմ հավատացել։ Ատում էի քեզ ու հանկարծ համոզեցի ինքս ինձ, այ հենց այդ վայրկյանին... Երբ վկայություն էի տալիս... համոզեցի ինքս ինձ և հավատում էի, իսկ երբ վերջացրի, անմիջապես նորից դադարեցի հավատալ։ Իմացիր այս բոլորը։ Մոռացա՜, որ եկել եմ պատժելո՛ւ ինքս ինձ,— ասաց նա հանկարծ բոլորովին նոր մի արտահայտությամբ, որ բոլորովին նման չէր քիչ առաջվա սիրո թոթովանքին։

— Ծա՜նր է քո բեռը, կի՛ն դու,— մի տեսակ բոլորովին անզսպելիորեն դուրս թռավ հանկարծ Միտյայի բերանից։

— Թո՛ղ ինձ,— շշնջաց Կատյան,— նորից կգամ, հիմա ծանրը է շատ։

Նա վեր էր կացել տեղից, բայց հանկարծ ուժեղ մի ճիչ արձակեց ու ետ նետվեց։ Անակնկալորեն, թեև բոլորովին անձայն, ներս մտավ Գրուշենկան։ Ոչ ոք չէր սպասում նրան։ Կատյան սրընթաց քայլեց դեպի դուռը, բայց, երբ հասավ Գրուշենկայի մոտ, հանկարծ կանգ առավ, կավճի պես գունատված ու մեղմ, համարյա շշնջալով, տնքաց.

— Ներեցե՜ք ինձ։

Գրուշենկան շեշտակի նայեց նրան, սպասեց մի ակնթարթ և պատասխանեց թունոտ, քինախնդիր ձայնով.

— Մաղձո՜տ ենք մենք, քույրս, դու էլ, ես էլ։ Երկուսս էլ մաղձ ունենք։ Էլ ո՞նց ներենք իրար, դու էլ, ես էլ։ Այ փրկի՛ր նրան, և ամբողջ կյանքումս կպաշտեմ քեզ։

— Իսկ ներել չե՞ս ուզում,— գոռաց Միտյան Գրուշենկային՝ խելահեղ կշտամբանքով։

— Հանգիստ եղիր, կփրկեմ նրան քեզ համար,— շշնջաց Կատյան արագ-արագ և դուրս վազեց սենյակից։

— Եվ դու կարողացար մերժե՞լ նրան, երբ ի՛նքը քեզ ասաց՝ «ներիր»,— դառնորեն բացականչեց նորից Միտյան։

— Միտյա, չհամարձակվե՛ս հանդիմանել նրան, իրավունք չունե՛ս,— սրտանց գոռաց Ալյոշան իր եղբոր վրա։

— Նրա հպարտ շրթունքներն էին խոսում, ոչ թե սիրտը,— ասաց Գրուշենկան մի տեսակ զզվանքով։— Եթե ազատի քեզ, ամեն ինչ կներեմ։

Նա լռեց, կարծես մի բան զսպելով իր հոգում։ Չէր կարողանում ուշքի գալ։ Ինչպես պարզվեց հետո, մտել էր բոլորովին պատահականորեն, բացարձակապես որևէ կասկած չունենալով ու չսպասելով, որ կհանդիպի այն բանին, ինչին հանդիպեց։

— Ալյոշա, վազի՛ր նրա ետևից,— Միտյան շեշտակի դիմեց իր եղբորը,— ասա՛ նրան... մի՛ թողնիր, որ այդպես գնա։

— Երեկոյան դեմ կգա՛մ,— գոչեց Ալյոշան և վազեց Կատյայի ետևից։

Աղջիկը հիվանդանոցի բակից դուրս էր եկել արդեն, երբ Ալյոշան հասավ նրան։ Արագ էր գնում Կատյան, շտապում էր, բայց հենց որ Ալյոշան հասավ իր ետևից, դարձավ ու հապճեպորեն ասաց.

— Ո՛չ, այդ կնոջ առաջ չե՛մ կարող ինձ պատժել։ «Ներիր ինձ» ասացի նրան, որովհետև ուզում էի ծայր աստիճան պատժել ինձ։ Ջնարեց... Սիրո՛ւմ եմ նրան դրա համար,— ավելացրեց Կատյան այլայլված ձայնով, և աչքերը փայլեցին կատաղի քինախնդրությամբ։

— Եղբայրս բոլորովին չէր սպասում,— մրթմրթաց Ալյոշան,— համոզված էր, որ նա չի գա...

— Անկասկած։ Թողնենք այդ բանը,— կտրեց Կատյան։— Լսեցեք, ես չեմ կարող հիմա ձեզ հետ գնալ այնտեղ թաղման։ Սաղիկներ ուղարկեցի նրանց, գազաղի համար։ Դեռ փող ունեն, կարծում եմ։ Եթե պետք լինի, ասացեք, որ երբեք չեմ լքի նրանց... Դե՛հ, հիմա թողե՛ք ինձ, թողե՛ք ինձ, խնդրում եմ։ Արդեն ուշացաք, ժամերգության զանգն են տալիս... Թողե՛ք ինձ, խնդրում եմ։

III

ԻԼՅՈՒՇԿԱՅԻ ԹԱՂԱՒՈՐԸ, ՇԱՐ ՄԵՍ ՁԱՂՈՒ ՄՈՏ

Իսկապես, ուշացել էր նա։ Սպասում էին նրան և արդեն նույնիսկ որոշել էին առանց նրա ուղեկցության եկեղեցի տանել փոքրիկ, գեղեցիկ, ծաղկազարդ դագաղը։ Իլյուշկայի դագաղն էր դա, խե՜ղճ մանչուկի։ Նա մահացել էր Միտյայի դատավճռից երկու օր հետո։ Տան դարպասի մոտ տղաները գոռում-գոչումով դիմավորեցին Ալյոշային։ Բոլորն էլ անհամբեր սպասում էին նրան և ուրախացան, որ նա եկավ վերջապես։ Տասներկու հոգի էին հավաքվել, Իլյուշայի դասընկերները, բոլորն էլ եկել էին իրենց դպրոցական պայուսակներով՝ ուսից կախած։ «Հայրիկը լաց կլինի, հայրիկի հետ եղեք»,— պատվիրել էր նրանց Իլյուշան մեռնելու պահին, և տղաները իրենց միտքն էին պահել այդ բանը։ Նրանց պարագլուխը Կոլյա Կրասոտկինն էր։

— Որքա՜ն ուրախ եմ, որ եկաք, Կարամազով,— բացականչեց նա, ձեռքը մեկնելով Ալյոշային։— Սոսկալի է այստեղ։ Ճիշտն ասած, շատ ծանր է նայելը։ Սենեկիցյովը հարբած չէ, հաստատ գիտենք, որ այսօր ոչինչ չի խմել, բայց կարծես հարբած լինի... Ես միշտ էլ ամուր մարդ եմ, բայց այս բանը սոսկալի է։ Կարամազով, եթե չեմ ուշացնի ձեզ, միայն մի հարց էլ ուզում էի տալ՝ ձեր ներս մտնելուց առաջ։

— Ի՞նչ է, Կոլյա,— կանգ առավ Ալյոշան։

— Անմե՞ղ է ձեր եղբայրը, թե մեղավոր։ Նա՞ է սպանել ձեր հորը, թե ծառան։ Ինչպես որ ասեք, այնպես էլ կլինի։ Ջորս դիշեր չեմ քնել այդ մտքից։

— Ծառան է սպանել, իսկ եղբայրս անմեղ է,— պատասխանեց Ալյոշան։

— Ե՞ս էլ նույնն եմ ասում,— գոռաց հանկարծ Սմուրովը։

— Ուրեմն նա ճշմարտությա՛ն համար է կործանվելու որպես անմեղ զոհ,— բացականչեց Կոլյան։— Թեև կործանվել է նա, բայց հրշանի՛կ է։ Կարող եմ նախանձե՛լ նրան։

— Ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կարելի է։ Եվ ինչո՞ւ,— բացականչեց Ալյոշան զարմացած։

— Օ՜, եթե ես էլ կարողանայի գեթ որևէ ժամանակ զոհաբերել ինձ ճշմարտության համար,— ասաց Կոլյան խանդավառությամբ։

— Բայց ոչ թե այսպիսի գործում, ոչ թե այսպիսի խայտառակությամբ, ոչ թե այսպիսի ահ ու սարսափով,— ասաց Ալյոշան։

— Իհարկե... ես կցանկանայի մեռնել ամբողջ մարդկության համար, իսկ գալով խայտառակության, միևնո՞ւյնն է՝ թող կոչեն մեր անունները։ Ձեր եղբորը հարգո՞ւմ եմ ես։

— Ե՞ս էլ,— հանկարծ ու արդեն բոլորովին անսպասելի գոռաց խմբի միջից այն տղան, որ մի ժամանակ հայտարարել էր, թե ինքը գիտե ով է հիմնել Տրոյադան. և, գոռալուց հետո, մինչև ականջները կարմրեց քաշվարդի նման, ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ։

Ալյոշան սենյակ մտավ։ Երկնագույն դագաղի մեջ, որ զարդարված էր սպիտակ փոթփոթիկներով, պառկել էր Իլյուշան՝ փոքրիկ ձեռքերը ծալված և աչուկները փակ։ Նիհարիկ դիմագծերը գրեթե բոլորովին չէին փոխվել, և տարօրինակ բան՝ դիակից համարյա հոտ չէր գալիս։ Դեմքի արտահայտությունը լուրջ էր և կարծես մտախոհ։ Հատկապես գեղեցիկ էին խաչաձև ծալված ձեռքերը՝ կարծես մարմարից քանդակված։ Ձեռքերի մեջ ծաղիկ էին դրել, և արդեն ամբողջ դագաղն էլ դրսից ու ներսից զարդարված էր ծաղիկներով, որ Լիզա Խոխլակովան էր ուղարկել առավոտյան մութուլույսին։ Բայց Կատերինա Իվանովնայից էլ ծաղիկներ էին բերել, և երբ Ալյոշան դուռը բացեց, փոխկապիտանն իր դողացող ձեռքերում մի փունջ բռնած՝ նորից ծաղիկներ էր շաղ տալիս իր սիրելի մանչուկի վրա։ Նա հաղիվ նայեց ներս մտած Ալյոշային, և ոչ ոքի էլ չէր ուզում նայել, ոչ իսկ իր լացող, խելագար կնոջը՝ իր «մայրիկին», որ անընդհատ ճիգ էր անում վեր կենալու իր հիվանդ ոտքերի վրա և ավելի մոտիկից նայելու իր մեռած մանչուկին։ Իսկ Նինային երեխաները վերցրել էին իր աթոռի հետ և ուղղակի դագաղի մոտ էին բերել։ Նա գլուխը դագաղին սեղմած նստել էր ու երևի լուռ արտասվում էր նույնպես։ Սենեկիցյովի դեմքն աշխույժ մի արտահայտություն ուներ, բայց կարծես շփոթված ու միաժամանակ դաժանացած մի արտահայտություն։ Նրա շարժումների, նրա բերանից թռչող բառերի մեջ խենթացնող մի բան կար։ «Հայրի՛կ, անուշի՛կ հայրիկս»,— բացականչում էր նա ամեն բոպե, նայելով Իլյուշային։ Դեռ Իլյուշայի կենդանության ժամանակ նա սովորություն ուներ փաղաքշորեն ասել նրան՝ «Հայրի՛կ, անուշի՛կ հայրիկս»։

— Հայրի՛կ, ինձ էլ ծաղիկ տուր, վերցրու նրա թաթիկից,

ա՞յ էն սպիտակ ծաղիկը, ի՞նձ տուր,— խնդրեց խելագար «մայրիկը» հեկեկալով։ Գուցե նրան շատ էր դուր եկել Իլյուշայի ձեռքի փոքրիկ, սպիտակ վարդը, կամ էլ գուցե ուզում էր նրա ձեռքից մի ծաղիկ վերցնել ի հիշատակ, խեղճ կինը սկսեց այս ու այն կողմ շարժվել, ձեռքերը երկարելով ծաղկի համար։

— Ո՞չ ոքի չեմ տա, ոչի՛նչ չեմ տա,— անողոք բացականչեց Սենգիրյովը։— Նրա՛ ծաղիկներն են, ոչ թե քոնը։ Ամե՛ն ինչ նրանն է, քեզ ո՞չ մի բան։

— Հայրի՛կ, տվեք ծաղիկը մայրիկին,— հանկարծ Նինան բարձրացրեց իր դեմքը, որ թրջվել էր արցունքից։

— Ոչինչ չեմ տա, և հատկապես նրա՛ն չեմ տա։ Նա չէր սիրում Իլյուշկային։ Այն օրը թնդանոթը խլեց նրա ձեռքից, իսկ Իլյուշկան նը-վի-բեռ՛ց,— հանկարծ բարձրաձայն սկսեց հեծկլտալ փոխկապիտանը, հիշելով այն, թե ինչպես Իլյուշան իր փոքրիկ թնդանոթը զիջել էր մայրիկին։ Խեղճ, խելագար կինը ուղղակի սկսեց աղի արցունք թափել, լուռ ձեռքերով դեմքը ծածկած։ Տղաները, տեսնելով վերջապես, որ հայրը ազատ չի թողնում դագաղը, այնինչ արդեն ժամանակն է տանելու, հանկարծ մի սեղմ շրջանակ կազմեցին դագաղի շուրջը և սկսեցին բարձրացնել։

— Ձե՛մ ուզում եկեղեցու խաչբակում թաղել,— աղաղակեց հանկարծ Սենգիրյովը,— քարի մոտ եմ թաղելու, մե՛ր քարի մոտ։ Այդպես պատվիրեց Իլյուշան։ Ձեմ թողնի, որ տանեք։

Առաջ էլ, ամբողջ այդ երեք օրվա ընթացքում, նա ասում էր, որ թաղելու է քարի մոտ. բայց Ալյոշան, Կրասոտկինը, տանտիրուհին, նրա քույրը, բոլոր տղաները սկսեցին համոզել նրան։

— Տե՛ս ինչ է փչել խելքին, ուզում է էն պիղծ քարի մոտ թաղել, ոնց որ թե խեղդվածի է թաղում,— խստորեն ասաց պառավ տանտիրուհին։— Խաչբակում օրհնված է հողը։ Էնտեղ նրա համար աղոթք են կարդալու։ Եկեղեցուց երգն ու պատարագը լսվում է, սարկավագն էլ էնպես մաքուր ու բարը բարին է կարդում, որ ամեն անգամ էլ ծայրից ծայր կհասնի երեխուն, ոնց որ նրա գերեզմանի վրա կարդան։

Վերջապես փոխկապիտանը ձեռքերը թափ տվեց, կարծես ասելով՝ «Տարե՛ք ուր ուզում եք»։ Երեխաները բարձրացրին դագաղը, բայց երբ մոր կողքով էին անցնում, կանգ առան մի րոպե նրա առաջ և իջեցրին, որպեսզի նա կարողանա հրաժեշտ տալ Իլյուշային։ Բայց հանկարծ մոտից տեսնելով այդ պստլիկ, թանկագին դեմքը, որին մի փոքր տարածությունից էր միայն նայել ամբողջ երեք օր, նա մեկեն ոտից գլուխ ցնցվեց ու սկսեց իր ալեհեր գլուխը չղաձգորեն ետ ու առաջ թափ տալ դագաղի վրա։

— Մայրի՛կ, խաչակնքիր նրան, օրհնիր նրան, համբուրիր նրան,— գոչեց Նինան իր մորը։ Բայց կինը ավտոմատի նման թափ էր տալիս գլուխը անընդհատ, և հանկարծ, տոչորող վշտից դեմքը ծամածռված, առանց մի ձայն հանելու, սկսեց կուրծքը ծեծել բռունցքով։ Դագաղը շարունակեցին տանել։ Երբ անցնում էին Նինայի մոտով, աղջիկը վերջին անգամ շրթունքները սեղմեց իր հանգուցյալ եղբոր շրթերին։ Ալյոշան, երբ դուրս էր գալիս, դարձավ տանտիրուհուն և խնդրեց, որ նա հոգ տանի մնացողներին, բայց կինը չթողեց էլ, որ նա վերջացնի։

— Դե պարզ է, հետները կլինեմ, մենք էլ քրիստոնյա մարդ ենք։— Ասելով այդ, պառավը լաց էր լինում։

Հեռու չէին տանելու, երեք հարյուր քայլ էր մինչև եկեղեցին, ոչ ավելի։ Պայծառ, խաղաղ օր էր. սառնամանիք էր, բայց թեթև։ Եկեղեցու զանգերը դեռ հնչում էին։ Սենգիրյովն ամապարոտ ու շփոթահար վազում էր դագաղի ետևից, իր հնամաշ, կարճ, գրեթե ամառային վերարկուով, գլխաբաց, և հին, լայնեղր, փափուկ գլխարկը ձեռքին։ Մի տեսակ անլուծելի մտահոգություն էր տիրել նրան. մեկ երկարում էր ձեռքը, որպեսզի դագաղի գլխակողմին նեցուկ տա, և միայն խանգարում էր տանողներին, մեկ էլ հանկարծ սկսում էր վազել կողքից ու նայում, թե որտեղից ինքն էլ կարող է բռնել դագաղը։ Մի ծաղիկ ընկավ ձյան վրա, և նա ուղղակի խոյացավ վերցնելու, կարծես այդ մի ծաղկի կորստից աստված գիտե ինչեր էին կախված։

— Հացի կտո՛րը, հացի կտո՛րը մոռացանք,— բացականչեց նա մեկեն սոսկալի վախեցած։ Բայց երեխաներն իսկույն հիշեցրին նրան, որ դեռ քիչ առաջ վերցրել է հացի կտորը և գրպանն է դրել արդեն։ Նա հացը վայրկենապես դուրս քաշեց գրպանից, համոզվեց ու հանգստացավ։

— Իլյուշկան պատվիրեց, Իլյուշկան,— բացատրեց անմիջապես Ալյոշային,— պառկել էր գիշերը, ես էլ կողքն էի նստել, և հանկարծ պատվիրեց. «Հայրիկ, երբ իմ գերեզմանը լցնեն, վրան մի կտոր հաց փշրտիր, որ ճնճղուկները գան. ես կլսեմ, որ եկել են, և կուրախանամ, որ մենակ չեմ պառկում»։

— Շատ լավ է դա,— ասաց Ալյոշան,— պետք է հաճախ անել։

— Ամե՜ն օր, ամե՜ն օր,— բլբլաց փոխկապիտանը կարծես լրիվ աշխուժանալով հանկարծ։

Վերջապես հասան ու դագաղը դրին եկեղեցու մեջտեղը։ Տղաները շրջապատեցին դագաղը և ամբողջ աբարողության ընթացքում այդպես բարեվայելուչ կանգնած մնացին։ Հնամենի էր եկեղեցին ու բավական աղքատ, շատ սրբապատկերներ բոլորովին շրջանակ չունեին, բայց այդպիսի եկեղեցիների մեջ մի տեսակ ավելի լավ ես աղոթում։ Պատարագի ժամանակ Սենգիրյովը կարծես հանդարտվեց մի քիչ, թեև մերթ ընդ մերթ նույն անգիտակից ու շփոթահար մտահոգությունը տիրում էր նրան. մեկ մոտենում էր դագաղին՝ ծածկույթը կամ փոքրիկ պսակն ուղղելու, իսկ մեկ էլ երբ մոմակալից մի մոմ ընկավ, հանկարծ վազեց տեղը դնելու և սոսկալի երկար զրաղվեց դրանով։ Հետո արդեն խաղաղվեց ու հանգիստ կանգնեց դագաղի գլխակողմը՝ բութորեն մտահոգ ու մի տեսակ վարանող դեմքով։ «Առաքելոցի» ընթերցումից հետո հանկարծ թեքվեց Ալյոշային, որ իր կողքին էր կանգնած, և փսփսաց նրան, որ «Առաքելոցը» այնպես չկարդացին, և սակայն չբացատրեց, թե ինչ էր ուզում ասել։ Երբ «Հրեշտակային» էին երգում, սկսեց ձայնակցել, բայց չշարունակեց մինչև վերջ. ծունկի եկավ, ճակատը սեղմեց եկեղեցու քարե հատակին ու բավական երկար մնաց այդպես։ Ի վերջո սկսեցին թաղման ծիսակատարությունը, մոմեր բաժանեցին։ Վշտացնող հայրը իրար անցավ նորից, բայց թաղմանական սրտառուչ, հոգեցունց երգեցողությունն սթափեցրեց ու սասանեց նրա հոգին։ Նա հանկարծ կծկվեց մի տեսակ ու սկսեց կողկողել արագ ու կարճ-կարճ հեկեկոցներով, սկզբում զսպելով ձայնը, հետո արդեն բարձրաձայն հեծկլտալով։ Իսկ երբ սկսեցին հրաժեշտ տալ ներեցյալին ու փակել դագաղը, նա թևերը առաջ նետեց, կարծես չթողնելով, որ ծածկեն Իլյուշային, գրկեց դագաղը և սկսեց արագ-արագ, ագահորեն, առանց պոկվելու համբուրել իր մեռած մանչուկի շրթունքները։ Վերջապես համոզեցին ու իջեցրին նրան պատվանդանից, բայց նա հանկարծ թափով երկարեց ձեռքը և դագաղից մի քանի ծաղիկ վերցրեց։ Սկսեց նայել ծաղիկներին, և կարծես մի նոր միտք ծագեց նրա գլխում, այնպես որ մի բոպե մոռացավ կարծես գլխավորը։ Հետզհետե մտածմունքի մեջ ընկավ մի տեսակ և այլևս չդիմադրեց, երբ դագաղը բարձրացրին ու տարան դեպի գերեզման։

Հեռու չէր փոքրիկ գերեզմանը, բակի մեջ էր, հենց եկեղեցու մոտ, և թանկ էր գինը. գումարը վճարել էր Կաթերինա Իվանովնան։ Սովորական ծեսից հետո գերեզմանափորները դագաղն իջեցրին։ Սենգիրյովը, իր ծաղիկները ձեռքին, այնքան վար թեքվեց բաց գերեզմանի վրա, որ երեխաները, վախեցած, բռնեցին նրա վերարկուից և սկսեցին ետ քաշել։ Բայց նա կարծես լավ չէր հասկանում արդեն, թե ինչ է կատարվում։ Երբ սկսեցին լցնել գերեզմանը, հանկարծ մտահոգ արտահայտությամբ ցույց տվեց թափվող հողը և սկսում էր նույնիսկ մի բան ասել, բայց ոչ ոք ոչինչ չհասկացավ, և ինքն էլ մեկեն լռեց։ Հետո հիշեցրին նրան, որ պետք է հացը փշրի, և նա սոսկալի իրար անցավ, հանեց հացի կտորը և սկսեց մանր-մանր բրդել, փշրանքները շաղ տալով գերեզմանի վրա։ «Դե եկե՛ք թռչնիկներ, դե եկե՛ք, ճնճղուկներ»,— մրմնջում էր նա մտահոգ։ Տղաներից մեկը նկատել տվեց նրան, որ ծաղիկները ձեռքում բռնած դժվար է հացը բրդել, և առաջարկեց, որ դրանք որևէ մեկին տա՝ մի բոպեով պահելու։ Բայց նա չտվեց, նույնիսկ հանկարծ վախեցավ իր ծաղիկների համար, կարծես թե ուզում էին բոլորովին վերցնել դրանք իր ձեռքից, և նայելով գերեզմանին ու ասես համոզվելով, որ արդեն ամեն ինչ արված է, փշրանքներն էլ շաղ են տրված, հանկարծ անսպասելիորեն, նույնիսկ կատարյալ հանգստությամբ դարձավ ու քայլեց դեպի տուն։ Բայց քայլերն ավելի ու ավելի արագ ու անհաստատ էին դառնում, շտապում էր նա, համարյա վազում էր։ Տղաներն ու Ալյոշան աշխատում էին ետ չմնալ նրանից։

— Ծաղիկները մայրիկի՞ն, ծաղիկները մայրիկի՞ն։ Վիրավորեցինք մայրիկին,— սկսեց բացականչել հանկարծ։ Մեկը գոռաց նրան, որ գլխարկը հագնի, թե չէ ցուրտ է արդեն, բայց լսելով այդ բանը, նա կարծես զայրացած շպրտեց գլխարկը ձյան վրա և սկսեց բացականչել. «Չե՛մ ուզում գլխարկ, չե՛մ ուզում գլխարկ»։ Սմուրովը վերցրեց գլխարկը և տարավ նրա ետևից։ Բոլոր տղաները, առանց բացառության, լաց էին լինում, և ամենից ավելի՝ Կոլյան ու այն տղան, որ Տրոյադայի հիմնադիրներին էր հայտնաբերել. ու թեև Սմուրովը, կապիտանի գլխարկը ձեռքին, նույնպես սոսկալի լաց էր լինում, բայց այնուամենայնիվ հասցրեց վազելու ընթացքում գետնից վերցնել աղյուսի մի կտոր, որ կարմրին էր տալիս արահետի ձյան վրա, և նետեց ճնճղուկների երամին, որ արագորեն թռչում-անցնում էր։

Վրիպեց իհարկե, և շարունակեց վազել՝ լաց լինելով։ Ճանապարհի կեսին Սենգիրյովը կանգ առավ մեկեն, կես բոպե կանգնեց այդպես՝ կարծես մի բանից շշմած, և հանկարծ, ետ դառնալով եկեղեցու կողմը, սկսեց վազել դեպի լքված գերեզմանը։ Բայց տղաները վայրկենապես հասան ու բոլոր կողմերից փաթաթվեցին նրան։ Եվ նա արդեն անզոր, տապալված մարդու նման ընկավ ձյան վրա ու սկսեց գալարվելով, հեծկլտալով, ոռնալով աղաղակել. «Հայրի՛կ, Իլյուշկա՛, անուշի՛կ հայրիկս»։ Ալյոշան ու Կոլյան չանացին բարձրացնել նրան, թախանձագին համոզել։

— Վերջ տվեք, կապիտան, քաջ մարդը պարտավոր է տոկալ,— մրթմրթում էր Կոլյան։

— Ծաղիկնե՞րը կփչացնեք,— ասաց նաև Ալյոշան,— իսկ «մայրիկն» սպասում է դրանց, նստել լաց է լինում, որ Իլյուշկայի ծաղիկներից չտվեցիք իրեն։ Իլյուշկայի անկողինը դեռ այնտեղ է...

— Այո, այո, մայրիկի՛ն,— հանկարծ հիշեց նորից Սենգիրյովը։— Անկողինը լվերցնե՞ն, չվերցնե՞ն,— ավելացրեց նա, կարծես վախենալով, որ իրոք կվերցնեն անկողինը, և վեր թռավ, նորից վազեց դեպի տուն։ Բայց արդեն հեռու չէր, և բոլորը միասին վազեցին հասան։

Սենգիրյովը թափով բացեց դուռը և ձայն տվեց կնոջը, որի հետ այնպես անողոքաբար գժտվել էր դուրս գալուց առաջ։

— Մայրի՛կ, թանկագին մայրիկ, Իլյուշկան քեզ ծաղիկնե՞ր ուղարկեց, ոտքիդ հիվա՞նդ մայրիկ,— գոչեց նա, երկարելով փոքրիկ փունջը ծաղիկների, որոնք սառել ու կոտրտվել էին, երբ նա քիչ առաջ թավալվում էր ձյան վրա։ Բայց այդ նույն վայրկյանին, Իլյուշայի անկողնի առաջ, անկյունում, տեսավ Իլյուշայի կոշիկները, որ տանտիրուհին կարգի էր բերել ու մոտիկ-մոտիկ դրել իրար կողքի։ Տեսնելով այդ հնամաշ, խունացած, կոշտացած, կարկատած կոշիկները, նա ձեռքերը վեր նետեց և ուղղակի հոյացավ դրանց մոտ, ընկավ ծնկների վրա, վերցրեց կոշիկներից մեկը, սեղմեց շրթունքներին և ագահորեն սկսեց համբուրել, աղաղակելով. «Հայրի՛կ, Իլյո՛ւշկա, անուշի՛կ հայրիկս, ո՞ւր են քո տոտիկնե՞րը»։

— Ո՞ւր տարար նրան։ Ո՞ւր տարար նրան,— ողբաց խելագար կինը սրտաճմլիկ ձայնով։ Եվ ահա նինան էլ սկսեց հեկեկալ։ Կոլյան դուրս վազեց, նրա հետևից տղաներն էլ սկսեցին

դուրս գալ սենյակից։ Վերջապես դուրս եկավ նաև Ալյոշան։ «Թող լաց լինեն,— ասաց նա Կոլյային,— այս բոպեիս օգուտ չունի անշուշտ մխիթարելը։ Սպասենք մի բոպե ու վերադառնանք»։

— Այո, օգուտ չունի, ահավոր բան է,— հաստատեց Կոլյան։— Գիտե՞ք, Կարամազով,— իջեցրեց նա ձայնը հանկարծ, որ ոչ ոք չլսի,— սոսկալի տխուր եմ, և եթե հնարավո՞ր լիներ վերակենդանացնել նրան, ամե՞ն ինչ կտայի։

— Ա՜խ, ես էլ,— ասաց Ալյոշան։

— Ի՞նչ եք կարծում, Կարամազով, այս իրիկուն գա՞նք այստեղ։ Կխմի ու կհարբի նա, հասկանո՞ւմ եք։

— Գուցե խմի ու հարբի, այո։ Միայն մենք երկուսս կգանք, և բավական է. կնստենք մի ժամի չափ նրանց հետ՝ մոր ու Նինայի։ Իսկ եթե բոլորս միանգամից գանք, նորից ամեն ինչ կըհիշեցնենք նրանց,— խորհուրդ տվեց Ալյոշան։

— Հիմա այնտեղ տանտիրուհին սեղան է պատրաստում, այդ հոգեհա՞ց են ասում, թե ինչ, դա է լինելու, քահանան էլ կգա. վերադառնա՞նք հիմա այնտեղ, թե չէ, Կարամազով։

— Անպայման,— ասաց Ալյոշան։

— Տարօրինակ է այդ բոլորը, Կարամազով, այդպիսի վի՞շտ և հանկարծ ինչ-որ յուղաբլիթներ. ի՞նչ անբնական է այդ ամբողջը մեր կրոնի մեջ։

— Սալմոն ձուկ էլ կլինի,— հանկարծ նկատեց այն տղան, որ հայտնաբերել էր Տրովադայի հիմնադիրներին։

— Լրջորեն խնդրում եմ ձեզ, Կարտաշով, էլ չխառնվե՞ք ձեր այդ հիմարություններով, հատկապես երբ չեն խոսում ձեզ հետ և չեն էլ ուզում իմանալ՝ դուք աշխարհի վրա կա՞ք թե չէ,— ջղայնորեն շշպռեց Կոլյան։ Տղան կաս-կարմիր եղավ, բայց չհամարձակվեց որևէ բան պատասխանել։ Միաժամանակ բոլորն էլ դանդաղ քայլում էին արահետով, և հանկարծ Սմուրովը բացականչեց.

— Ահա՛ Իլյուշայի քարը, որի տակ ուզում էին թաղել նրան։

Բոլորը լուռ կանգ առան մեծ քարի մոտ։ Ալյոշան նայեց, և միանգամից ամբողջ մի պատկեր վերակենդանացավ նրա հիշողության մեջ՝ այն, ինչ Սենգիրյովը մի ժամանակ պատմել էր Իլյուշայի մասին, թե ինչպես նա, լալով ու գրկելով իր հորը՝ բացականչում էր. «Հայրի՛կ, հայրի՛կ, ինչպե՞ս նա ստորացրեց քեզ»։ Կարծես մի բան ցնցվեց Ալյոշայի հոգում։ Նա լուրջ ու ծանրակշիռ արտահայտությամբ նայեց բոլոր այդ դպրոցական-

ների՝ Իլյուշայի դասընկերների, անուշիկ, պայծառ դեմքերին, նայեց բոլորին մեկիկ-մեկիկ, և հանկարծ ասաց նրանց.

— Տղաներ, կուզեի ձեզ մի խոսք ասել հենց այստեղ։

Տղաները շրջապատեցին նրան և անմիջապես իրենց ուշադիր, ակնկալող հայացքներն ուղղեցին նրա դեմքին։

— Տղաներ, մենք շուտով բաժանվելու ենք։ Ես առայժմ որոշ ժամանակ այստեղ եմ իմ երկու եղբայրների հետ, որոնցից մեկը աքսոր է գնալու, իսկ մյուսը պառկել է մահամերձ։ Բայց շուտով պիտի թողնեմ այս քաղաքը, գուցե շատ երկար ժամանակով։ Եվ ահա ուրեմն, բաժանվելու ենք, տղաներ։ Ուրեմն եկեք համաձայնվենք այստեղ, Իլյուշայի քարի մոտ, որ երբեք չենք մոռանալու նախ Իլյուշային, իսկ երկրորդ՝ իրար։ Եվ ինչ էլ պատահի մեզ հետագայում կյանքի մեջ, թեկուզ և քսան տարի չհանդիպենք այսուհետև, այնուամենայնիվ հիշենք, թե ինչպես թաղեցինք խեղճ տղային, որին առաջ քարկոծում էինք, հիշո՞ւմ եք, կամրջակի մոտ, իսկ հետո բոլորս այնպես սիրեցինք նրան։ Հրաշալի տղա էր, բարի ու քաջ տղա, զգում էր իր հոր պատիվը և նրան հասցված վիրավորանքը, որի համար էլ ըմբոստացավ։ Այսպես ուրեմն, նախ և առաջ հիշենք նրան, տղաներ, հիշենք մեր ամբողջ կյանքում։ Ու թեկուզ զբաղված լինենք խիստ կարևոր գործերով, թեկուզ պատիվների արժանանանք կամ ընկնենք մի ոչնչ մեծ դժբախտության մեջ, այնուամենայնիվ մի՛ մոռանաք երբեք, թե ինչպե՞ս մի անգամ մեզ լավ զգացին այստեղ, բոլորս միասին, երբ միավորվել էինք այնպիսի՞ գեղեցիկ ու բարի մի զգացումով, որը գուցե ավելի լավ մարդ դարձրեց մեզ՝ խեղճ տղայի հանդեպ մեր սիրո այս օրերին, ավելի լավ, քան ենք իրականում։ Իմ աղավնյակնե՞ր,— թույլ տվեք այսպես կոչեմ ձեզ՝ աղավնյակներ, որովհետև դուք բոլորդ էլ շատ նման եք դրանց, այդ սիրունիկ, կապուտակ թռչնիկներին՝ հիմա, այս րոպեիս, երբ ես ձեր բարի, անուշիկ դեմքերին եմ նայում,— իմ սիրելի՞ երեխաներ, գուցե դուք չհասկանաք այն, ինչ ասելու եմ ձեզ հիմա, որովհետև հաճախ շատ անհասկանալի եմ խոսում ես, բայց այնուամենայնիվ իմ ասածը կմնա ձեր մտքում և հետո կգա մի ժամանակ, երբ համաձայն կլինեք իմ խոսքերին։ Գիտցե՛ք ուրեմն, որ հետագա կյանքի համար չկա ավելի բարձր ու զորեղ, ավելի առողջ, ավելի օգտակար բան, քան մի որևէ լավ հիշատակ, և մանավանդ մանկությունից, քնատենկան հարկիք մնացած մի հիշատակ։ Ձեզ շատ բաներ են

ասում ձեր դաստիարակության մասին, բայց ահա այդպիսի մի գեղեցիկ, սուրբ հիշատակ, որ պահպանվել է մանկությունից, հենց ամենալավ դաստիրակությունն է թերևս։ Եթե մարդ այդպիսի բազմաթիվ հիշատակներով հարստացած մտնի կյանք, ապա նա փրկված կլինի ամբողջ կյանքում։ Եվ եթե նույնիսկ մի հատիկ լավ հիշատակ մնա մեր սրտում, դա էլ կարող է մի որևէ ժամանակ ծառայել մեր փրկությանը։ Գուցե նույնիսկ շարանանք հետագայում, մինչև իսկ չկարողանանք դիմադրել վատ արարք կատարելու փորձության, գուցե ծիծաղենք մարդկային արցունքների և այն մարդկանց վրա, որոնք ասում են այն, ինչ Կոլյան ահա բացականչեց քիչ առաջ՝ «Ուզում եմ տառապել բոլոր մարդկանց համար», և գուցե նույնիսկ շարամտորեն ծաղրենք այդպիսի մարդկանց։ Բայց որքան էլ չար լինենք (թեև ասված չանի այդ բանը), այնուամենայնիվ երբ հիշենք, թե ինչպե՞ս թաղեցինք Իլյուշային, ինչպե՞ս սիրում էինք նրան վերջին օրերին և ինչպե՞ս այսքան համերաշխորեն ու միասին խոսում էինք ահա այս քարի մոտ, ապա մեր մեջ ամենադաժան ու ամենածաղրասեր մարդն անգամ (եթե այդպիսին դառնանք) չի համարձակվի ներքուստ ծիծաղել այն բանի վրա, թե որքա՞ն լավ ու բարի է եղել ինքը այս ներկա րոպեին։ Եվ ավելին, գուցե հենց ա՛յս հիշատակը միայն ետ պահի նրան մի մեծ չարիքից, և նա խորհրդածի ու ասի. «Այո, ես այն ժամանակ բարի էի, համարձակ ու ազնիվ։ Թող ծիծաղի ինքնիրեն, վնաս չունի, մարդ հաճախ է ծիծաղում բարի ու լավ բաների վրա. դա պարզապես թեթևամտությունից է։ Բայց հավատացնում եմ ձեզ, տղաներ, հենց որ ծիծաղի, իսկույն ևթ կասի իր սրտում. «Ոչ, վատ արեցի, որ ծիծաղեցի, որովհետև չի՛ կարելի ծիծաղել դրա վրա»։

— Անպայմա՛ն այդպես կլինի, Կարամազով, ես հասկանո՞ւմ եմ ձեզ, Կարամազով,— բացականչեց Կոլյան բոցկլտուն աչքերով։ Տղաները հուզվեցին ու նույնպես ուզում էին մի բան ասել, բայց զսպեցին իրենց, ուշադիր ու գորովալից նայելով հռետորին։

— Ես այս բանն ասում եմ այն ենթադրությամբ, որ մենք վատ մարդիկ կդառնանք,— շարունակեց Ալյոշան,— բայց թե ինչո՞ւ վատ մարդիկ դառնանք, ճիշտ չէ՞, տղաներ։ Նախ և առաջ ու ամենից ավելի՝ բարի լինենք, հետո՝ ազնիվ, և հետո՝ երբեք չմոռանանք իրար։ Այս բանը կրկնում եմ դարձյալ։ Ես իմ

կողմից խոսք եմ տալիս ձեզ, տղաներ, որ ձեզնից ոչ մեկին չեմ մոռանալու. ամեն մի դեմք, որ ինձ է նայում հիմա, այս բոպեիս, ես միշտ էլ հիշելու եմ, թեկուզ երեսուն տարի անցած լինի։ Քիչ առաջ ահա Կոլյան ասաց Կարտաշովին, որ իբր թե մենք չենք էլ ուզում իմանալ՝ «նա կա՞ աշխարհի վրա, թե չէ»։ Բայց մի՞թե ես կարող եմ մոռանալ, որ Կարտաշովը կա աշխարհի վրա, և որ ահա հիմա չի կարմրում այլևս, ինչպես Տրոֆիմովի հիմնադիրներին հայտնաբերելու ժամանակ, այլ նայում է ինձ իր սքանչելի, բարի, ուրախ աչուկներով։ Տղաներ, իմ սիրելի տղաներ, բոլորս էլ լինենք վեհանձն ու համարձակ, ինչպես Իլյուշան էր, լինենք խելացի, համարձակ ու վեհանձն, ինչպես Կոլյան է (բայց որ շատ ավելի խելացի է դառնալու, երբ մեծանա), և լինենք նույնքան ամոթխած, բայց խելացի ու անուշիկ, որքան Կարտաշովն է։ Բայց ինչո՞ւ եմ այս երկուսի մասին խոսում։ Դուք բոլորդ էլ, տղաներ, սիրելի եք ինձ այսուհետև, բոլորիդ էլ կպահեմ իմ սրտում, և ձեզ խնդրում եմ, որ ինձ էլ ձեր սրտում պահեք։ Իսկ ո՞վ մեզ միացրեց այս բարի, այս լավ զգացման մեջ, որ մենք մեր ամբողջ կյանքում պիտի հիշենք ու մտադիր ենք հիշել, ո՞վ, եթե ոչ Իլյուշկան՝ բարի տղան, սիրելի տղան, մեզ համար հավիտյանս հավիտենից թանկագի՞ն տղան։ Չմոռանա՞նք ուրեմն նրան երբեք, թո՞ղ հավերժ ու բարի լինի նրա հիշատակը մեր սրտում, այժմ և միշտ և հավիտյա՞նս հավիտենից։

— Այո, այո, հավիտյա՞ն, հավիտյա՞ն,— գոչեցին բոլոր տղաներն իրենց զնգուն ձայներով, խանդաղատալից դեմքերով։

— Հիշենք և՛ դեմքը նրա, և՛ հագուստը նրա, և՛ խղճուկ կոշիկները նրա, և՛ դագաղը, նրա, և՛ դժբախտ ու մեղավոր հորը նրա, հիշենք և այն, թե ինչպես նա իր հոր համար կանգնեց ամբողջ դասարանի դեմ՝ համարձակորեն, մեն-մենակ։

— Պիտի հիշե՞նք, պիտի հիշե՞նք,— գոչեցին նորից տղաները,— նա քա՞ջ էր, նա բարի՞ էր։

— Ա՞խ, ինչպե՞ս էի սիրում,— բացականչեց Կոլյան։

—Ա՞խ, երեխաներ, ա՞խ սիրելի բարեկամներ, մի՛ վախենաք կյանքից։ Որքա՞ն լավ է կյանքը, երբ որևէ լավ ու արդար բան ես անում։

— Այո, այո,— կրկնեցին տղաները ոգևորությամբ։

— Կարամազո՛վ, մենք սիրո՛ւմ ենք ձեզ,— անզուսպ մղումով բացականչեց մի ձայն, որ երևի Կարտաշովինն էր։

— Սիրո՛ւմ ենք ձեզ, սիրո՛ւմ ենք ձեզ,— ձայնակցեցին բոլորը։ Շատերի աչքին արցունքներ էին փայլում։

— Ուռա՛ Կարամազովին,— խանդավառ գոչեց Կոլյան։

— Եվ հավե՞րժ հիշատակ ենչեցյալ մանչուկին,— ավելացրեց նորից Ալյոշան ոգացմունքով։

— Հավե՞րժ հիշատակ,— ձայնակցեցին տղաները։

— Կարամազո՛վ,— գոռաց Կոլյան,— Իսկապե՞ս ճիշտ է ասում կրոնը, որ մենք բոլորս հարություն կառնենք մեռյալներից ու կվերակենդանանանք, նորից կտեսնենք իրար, և բոլորին էլ, Իլյուշկային էլ։

— Անպայման հարություն կառնենք, անպայման կտեսնենք և ուրախությամբ, ցնծությամբ կպատմենք իրար ամեն ինչ, որ եղել է,— պատասխանեց Ալյոշան՝ մասամբ ծիծաղելով, մասամբ հրճվագին։

— Ա՞խ, ինչ լա՞վ կլինի այդպես,— գոչեց Կոլյան։

— Դե լավ, իսկ հիմա վերջացնենք ճառերը և գնանք նրա հոգեճաշին։ Մի՛ վրդովվեք, որ յուղաբլիթ ենք ուտելու։ Չէ՞ որ դա հնավանդ, հավիտենական սովորություն է, և լավ բան կա դրա մեջ,— ծիծաղեց Ալյոշան։— Դե գնա՞նք ուրեմն։ Ահա, ձեռք-ձեռքի ենք գնում հիմա։

— Եվ մի՞շտ այսպես, մեր ամբո՞ղջ կյանքում ձեռք-ձեռքի։ Ուռա՛ Կարամազովին,— նորից գոչեց Կոլյան խանդավառությամբ, և նորից բոլոր տղաները ձայնակցեցին։

ԵՂԾԻ ԱՂԱՂԱԿ

Ֆ. Մ. Դոստոևսկու կյանքն ու ստեղծագործությունը

«Ձեր առաջ, որպես գրողի, ճշմարտությունն է բացահայտված, որված է ձեզ ճշմարտությունն իբրև շնորհ. գնահատեցեք, ուրեմն, ձեր այդ շնորհը, հավատարիմ մնացեք նրան, և մեծ գրող կդառնաք։ Այսպես ասաց Բելինսկին քսանչորսամյա Դոստոևսկուն, 1845-ի մայիսին, նրա առաջին վիպակի ձեռագիրը կարդալուց հետո։ Գրականության պատմության բացառիկ դեպքերից էր դա. հեղինակավոր քննադատը «հանձնարար» էր կոչում մի սկսնակ գրողի, որի առաջին երկը տակավին չէր էլ լույս տեսել։ Եվ նա չէր սխալվում։ Ջախջախվեց նաև ընթերցող հասարակությունը, երբ «տնեզի մարդիկ» վիպակը կարդալով զգաց, որ երիտասարդ հեղինակը մի նոր ու հզոր շունչ է բերում ռուս գրականության մեջ։ Իրոք, Դոստոևսկին դարձավ ոչ միայն ռուս, այլև համաշխարհային գրականության տիտաններից մեկը, կանգնեց մարդկային ոգու պատմության մեծագույն դեմքերի շարքին։ Անշուշտ, յուրաքանչյուր մեծ արվեստագետ մի ուրույն աշխարհ է ստեղծում։ Իսկ Դոստոևսկու աշխարհը ոչ թե պարզապես ուրույն է, այլև աննախընթաց մի տեսանկյունից դիտված. ասես նա հոգեբանության մեջ ստեղծեց ու կիրառեց «հարաբերականության տեսությունը», ճանապարհ բանալով դեպի մարդկային հոգու անհունը, այնպես, ինչպես էյնշտեյնը բնագիտության մեջ արեց այդ հեղաշրջող գյուտը և անհունորեն ընդլայնեց մարդու պատկերացումները՝ իրենից դուրս գտնվող բնության, տիեզերքի մասին։

Անսովոր է թվում վիպագիր Դոստոևսկու ստեղծած աշխարհը, և նրա արվեստը՝ բացառիկ։ Սակայն նրա կյանքն էլ անսովոր ու բացառիկ եղավ. ճակատագիրն ամենադաժան հարվածները ավեց նրան, և նա, հանձարով օժտված մարդ, անցավ մեծագույն փորձություններ միջով, որոնք կարող են վիճակվել մարդ էակին։ Մանկության տարիներին խեղճ մարդկանց տառապանքները տեսավ Մոսկվայի ամենատխուր թաղամասում, ուր աղքատների հիվանդանոցում ծառայում էր իր բժիշկ հայրը՝ դառնություններից անժպիտ դարձած, խստաբարո ու ցասկոտ, ալկոհոլին անձնատուր մարդ, որ իր ընտանիքում անշնչի մթնոլորտ էր ստեղծում։ Պատանեկության տարիներին կորցրեց իր սիրելի մոր՝ գրական ձիրքով օժտված, հեզահամբույր, բազմաչարչար, բարոյական մաքրության տիպար մի կին, որ բանապետ ամուսնու ձեռքի տակ հլուծվեց անդադրում հոգեկան տառապանքով ու մահացավ թոքախտից։ Շատ չանցած՝ դատապարտվեցին հոգեկան մի այլ ծանր ցնցում ապրեց, երբ կնոջ մահից հետո ավելի դաժանացած, բարոյալքված, հարբեցողությամբ տարված իր հորն ապանեցին նորտերը գյուղում։

Սրանք դեռ ճակատագրի առաջին հարվածներն էին։ Ավելի ուշ Դոստոևսկին տառացիորեն հասավ բանի մահվան դուռը և վերադարձավ, հետո տառացիորեն իբավ երկրային դժոխքը և դարձյալ վերադարձավ. այնինքն, դեռ հազիվ մի քանի տարվա գրական կյանք ապրած քսանութամյա գրողին, որ տարված էր ֆրանսիական ուտոպիստների, հատկապես Ֆուրյեի մարդասիրական դաղափարներով և իր գործուն մասնակցությունն էր բերում Պետրաշևսկու գլխավորած ռուս ուտոպիստների գաղտնի հավաքույթին, ցարական կառավարությունը ձերբակալեց որպես պետական հանցագործի, դատեց ու դատապարտեց մահվան և ապա, ցարի ստորագրած երկրորդ դատավճռով՝ աքսորի ու տաժանակիր աշխատանքի։ Դոստոևսկին արդեն գտնվում էր մահվան հրապարակում, պատրաստվում էր գնդակահարվելու և մոտի հրաժեշտ տալիս կյանքին ու իր մեծ երազներին, երբ կարդացվեց երկրորդ դատավճիռը։ Նա վերածնված զգաց իրեն։ Նույն օրը բանտից գրեց իր ավագ եղբորը. «...մարդ լինել մարդկանց մեջ և միշտ մարդ մնալ բոլոր դժբախտությունների մեջ, չհուսալքվել ու չընկճվել՝ ա՛յս է ահա կյանքը, ա՛յս է կյանքի նպատակը։ ...Երբեք իմ մեջ հոգեկան կյանքի այսքան առատ ու առողջ պաշարներ չեմ զգացել, որքան հիմա։ Եվ նույն գիշերը, ձեռքերն ու ոտքերը շղթայակապ, դեկտեմբերյան սառնամանիքին, Դոստոևսկին ճանապարհ ընկավ դեպի Սիբիր՝ իր տասնամյա աքսորը։ Չորս տարի ապրեց Օմսկի տաժանավայրում, ամենատխուր հանցագործների մեջ, ըստ բանտի վիճակագրական ցուցակի՝ որպես «կարդալ-գրել իմացող սնապործ բանվոր», որը սակայն զրկված էր կարդալու և գրելու իրավունքից, միայն ավետարանը, անցյալի հիշատակները և դժբախտ ներկայի տպավորություններն ուներ իբրև հոգեկան սնունդ, և ֆիզիկական պարտադիր աշխատանքը կատարում էր ավելի դաժան պայմաններում, քան մարուկը, ձեռքերն ու ոտքերը միշտ շղթայակապ։ Երբ վերադարձավ այդ դժոխքից, իր հետ բերեց ոչ միայն շղթայված ոտքերի ծանր քայլվածքը, որ մնաց ամբողջ կյանքում, այլև անգունդից եկող մարդու հարուստ ու խորունկ, մինչև կյանքի ամենամութ հանանախորշերը թափանցած փորձառությունը, որ նրա հանճարի քուրայում դարբնվում էր արդեն՝ արվեստի հզոր, փոթորկալից ու իմաստուն երկեր տալու համար աշխարհին։ Բերեց այն համոզմունքը, թե բոլոր պայմաններում մարդու մեջ պետք է փնտրել բուն մարդկայինը, բարոյական կորիզը, կյանքի, ճշմարտության լույսը, որ միացնում է մարդկանց, փնտրել այն, որ նույնիսկ բոլոր էակներին ու իրերին է միացնում։ Սակայն բերեց նաև մարդկային ճակատագրի, բուն իսկ կեցության հակասություններին, անլուծելի առեղծվածների տառապանքը, որ միշտ մնաց նրա հոգում և հանախ ժայթքեց ահեղ, երկյուղազդու գոչյունով։

Մահից ու դժոխքից վերադարձած հանճարը, որի վրա դեռ երկար ժամանակ ոստիկանական գաղտնի հսկողություն էր սահմանված, ամբողջ թատատանը ցնցեց մի երկով, որ համաշխարհային գրականության ուժեղագույն վավերաթղթերից մեկն է մնալու տակավին։ «Հուշեր Մեռյալ տնից» կոչվող գիրքն է դա, ուր Դոստոևսկին խիստ ապավորիչ պատկերներով ու փիլիսոփա-

յական խորությամբ նկարագրում է տաժանավայրի կյանքն ու մարդկանց, այն որոշակի մարդկանց, որոնցից ոմանք իր ապագա մեծ վեպերում մի քանի կարևոր կերպարների նախատիպերը դարձան։ 1880 թվականին, Դոստոևսկու մահից մի քանի ամիս առաջ, Տոլստոյը գրեց իր մի բարեկամին, թե դա «լավագույն գիրքն է ամբողջ նորագույն գրականության՝ Պուշկինն էլ ներառյալ»։

Դեռ ձերբակալությունից առաջ գրած երկերում արդեն ակնհայտ երևում էին Դոստոևսկու արվեստի հիմնական հատկանիշները. սրատաբուխ ու ցավագին մարդասիրությունը, ճշմարտության սուր զգացողությունը, հոգեբանական վերլուծման անօրինակ խորությունը, լարված իրավիճակներ ստեղծելու, տարորեն տիպական կերպարներ ու միջավայր պատկերելու, արտահայտիչ ու բազմաբովանդակ երկխոսություններ կերտելու բոլորովին ինքնատիպ միջոցները,— հատկանիշներ, որոնց շնորհիվ նրա երկերն անսովոր ներգործություն էին ունեցել ընթերցողների վրա։ Իր ստեղծագործության երկրորդ շրջանում, աքսորից վերադառնալուց հետո, այդ հատկանիշներն ավելի ու ավելի խորացան, ընդլայնվեցին, և դրանց համադրությամբ կերտվեց նրա մեծ վեպերի բազմաբարդ աշխարհը։ Վեպերի առաջին վերցնել կենդանի իրականությունից, պահել առօրյա կյանքի փաստերի հոգեբանական և փիլիսոփայական խորքը, մինչև վերջ պարզել մարդկային արարքների բուն շարժառիթները, ի հայտ բերելով թեր ու դեմ գաղափար-զգացումների պայքարը թե՛ անհատ մարդու հոգում, թե՛ մարդկային փոխհարաբերությունների մեջ,— ահա այն ստեղծագործական մեթոդը, որով նա այդ բազմաբարդ աշխարհը կերտեց, հասնելով այնպիսի խորքային բացահայտումների, որոնք համաբյա ֆանտաստիկ են թվում։ «Երբ,— գրել է նա,— ուշադիր նայեցեք իրական կյանքի որևէ մի փաստի, որը նույնիսկ բոլորովին աչքի չի ընկնում առաջին հայացքից, և եթե դուք ի զորու եք և այլ ունեք, այդ փաստի մեջ կտեսնեք այնպիսի խորություն, որ Շեքսպիրն անգամ չունեցավ։ Եվ իրավացի է Դոստոևսկին, երբ իր այդ ստեղծագործական մեթոդը կոչում է «իրապաշտություն՝ գերագույն իմաստով»։

Բնական է, ստորացված ու անարգված զրոզը, տառապանքի ամենախոր վիհերով անցած մարգասները, կրոնափիլիսոփայական ու սոցիալ-քաղաքական հարցերում իր տանջալի ուսումնասիրություններով հանգերձ, եղավ համաշխարհային գրականության այն գիծը, որ ամենից ավելի խոր թափանցեց ստորացվածների և անարգվածների հոգու մեջ, ամենաջերմ սիրով սիրեց նրանց։ Ու վերադարձից հետո նրա գրած վեպերից մեկը կոչվում է հենց «Ստորացվածներ ու անարգվածներ»։

Դոստոևսկու ստեղծագործության այդ երկրորդ շրջանը փաստորեն սկսվում է «Հուշեր մեռյալ տնից» գրքով, բայց «Ոճիր և պատիժ» վեպն էր այն երկը, որի մեջ նրա տիտանական ձայնն առաջին անգամ հնչեց ամբողջ ուժով։ Ժամանակակից հրատապ մի հարց՝ դրամի վաշխառուական անիմաստ կուտակման և, մյուս կողմից, չքավորության պատճառով կյանքերի ու տաղանդների խորտակման հակադրությունը, մի հարց, որի ահավոր ծանրությունն իր սեփական ուսերի վրա զգում էր Դոստոևսկին դրամական նեղության այդ տարիներին, վերածվում բարձրացվել է բարոյա-փիլիսոփայական մեծագույն խնդրի։ Տաղանդավոր, բայց աղքատ ուսանող Ռասկոլնիկովը, հիմնվելով իր այն տեսության վրա, թե մարդկությանը «նոր խոսք» ասելու կոչված «նապոլեոնյան տիպի արտասովոր անհատ իրավունք ունի իր խղճին թույլ տալու ամեն մի արգելք վերացնել իր ճանապարհից, նույնիսկ արյուն թափել,— ավելի ճիշտ՝ այդ տխուր տեսությամբ տանջալիորեն արդարացնելով իրեն ու ելք փնտրելով իր հուսահատական վիճակից, սպանում է մի պառավ վաշխառուի՝ մի չար ու վնասակար կնոջ, նրա հարստությամբ փրկելու համար մորը, քրոջը և իր սեփական ապագան, ճանապարհ բացելու իր կաշկանդված ուժերի առաջ, որպեսզի զարգացնելու, ապրելու և սիրելու իրավունք ունենա, «կարողանա գեթ որևէ տեղ գնալու։ Բայց երբ կատարում է արդեն ոճիրը, երբ խախտում է կյանքի օրենքը, լոր բանականությամբ ոտնահարված խիղճն սկսում է հատուցում պահանջել, լինելով կյանքի այդ բուն օրենքն իրագործող գաղափարը նրա սեփական հոգու մեջ։ Եվ բուն պատժից, այսինքն հոգեկան ծանր տառապանքից հետո, որ անանխընթաց խորությամբ նկարագրել է Դոստոևսկին, երիտասարդը ինքն է խոստովանում իր ոճիրը պաշտոնական դատարանի առաջ, ընդունում նաև տաժանակիր աքսորի պաշտոնական պատիժը իրեն քավարան, և վերածվում է օրպես մարդ, ազատագրվում մարդկանց տարանջատող ծայրահեղ անհամապատասխանությունից ու վերադառնում մարդկանց միացնող սրտագին կապերին։ Հաղթանակում են «ճշմարտության օրենքն ու մարդկային բնությունը։ Կուռ գործողությամբ հավաստող, արտակարգ ճշմարիտ կերպարներով ու ցնցող տեսարաններով հարուստ այդ գլուխգործոցը համաշխարհային ճանաչում բերեց հեղինակին։

Բայց Դոստոևսկին այդ վեպն ստեղծելու շրջանում էլ շարունակում էր ծանր կյանք ապրել։ Ճակատագրի հարվածները չէին դադարում։ Մահացան հիվանդ կինն ու շատ սիրելի ավագ եղբայրը, որ նաև իր ամենամտերիմ բարեկամն ու գրական գործակիցն էր։ Ոչ միայն եղբոր ընտանիքի խնամքը, այլև իրենց հրատարակած ամսագրից մնացած պարտքերն ընկան Դոստոևսկու ուսերին, քան որում նա իր խղճի և պարկեշտության թելադրանքով միայն ստանձնեց այդ ծանր բեռը, հսկա գումար կազմող պարտքերը մանավանդ, որոնք իրավականորեն բոլորովին պարտավոր չէր ստանձնելու, և որոնցից լրջորդացավ վերջնականապես ազատվել իր կյանքի վերջին տարում միայն։ Եվ, ինչպես հաճախ լինում է նման դեպքերում, յուրայինները անխղճորեն շահագործում էին իրենց բարեսիրտ ազգականին, նրանց հետ նաև հանգուցյալ կնոջ առաջին ամուսնու տղան, որին նա սիրով դրդեցել ու վերցրել էր իր խնամքի տակ։ Մի անգամ նույնիսկ, «ընտանեկան խորհուրդի» որոշմամբ, նոյեմբերի ցուրտ օրերին նա իր ձմեռային վերարկուն ուղարկում է գրավ դնելու, որպեսզի կարողանա դրամ տալ այդ օրը գլխին հավաքված ազգականներին։ Հանգիստ չէին թողնում նաև պարտատերերը, որոնք սկզբում գոհ էին, որ նա իրենց խնդրանքին ընդառաջելով ստանձնեց պարտքերը, և խոստանում էին բարյացակամ լինել, բայց շուտով սկսեցին «խեղդել» նրան։

Այդ տարիներին Դոստոևսկին մի քանի անգամ գնում է արտասահման, «ոչ միայն ճանապարհական ժամումներով, այլև պարտատերերի հետևումից, նույնիսկ պարտքային բանտ նստեցնելու սպառնալիքից խուսափելու համար։ Բայց դրամական նեղությունը ամեն տեղ ուղեկցում է նրան։ Մինչև իսկ կիսաքաղց օրեր է անցկացնում, երբ հյուրանոցում մերժում են նաև տալ անվճարունակ հյուրերին։ Դրամի կարիքը նրան մղում է իր բախտը փորձելու եվրոպական նշանավոր խաղարաններում։ Մի քանի անգամ շահելուց հետո, խաղամոլի կիրքով հանձնվում է ռուլետին, մի կիրք, որի գերին դարձավ մոտ տասը տարի, հակառակ բանականության ձայնին, միշտ այն սին հույսով, թե կկարողա-

նա մի մեծ գումար շահելով ազատվել պարտքերից և գրական նեղության հարատև ճնշումից։ Այդ կիրքը, որ նա նկարագրել է իր «Հաղորդագրություն» նշանավոր վեպում, հուսադրման ուր ապրումներից ավելի հզգիկան ասելիք էր պատճառում Դոստոևսկուն։ Հատկապես իր երկրորդ ամուսնությունից հետո, երբ շահել կնոջ հետ գնաց արտասահման ու ստիպված եղավ, երբեք ամենամ փոխարեն, չորս տարի մնալ այնտեղ, խազարդելի այդ կիրքն ավելի ուստերեն էր ասելում նրան, ասեն անգամ խզելի ուր խայթ պատճառելով, չնայած կնոջ հավատացող ու ներողամիտ վերաբերմունքին։

Միշտ նյութական նեղության մեջ, ու նաև ստատպելով հայրենիքի կարոտից, այդ չորս տարիների ընթացքում նա անդադար աշխատում էր, երբեմն չկարողանալով ծայրը ծայրին հացնել ու նամակներում աղաչելով, որ Ռուսաստանից շտապ կանխավճար ուղարկեն «Ապուշը» վեպի համար, որ գրում էր ու հացնում ամսագրին մաս առ մաս. ի դեպ, ստիպված հաշվում էր նաև այն նվաստացուցիչ իրողության հետ, որ իրեն՝ կարիքավորին, վճարում էին երկնաքի պակաս հանոյալ, քան հարուստ կալվածատերը Տոլստոյին և Տուրգենևին։ Այս բոլորի վրա նաև իր անբուժելի հիվանդությունն էր ավելանում՝ հոր ապանության լուրն առնելու օրից սկսված և աստիճանաբար կյանքից սատակացած անողոք ընկավորությունը, որի դաժան նոպայից հետո մի շաբաթ չէր կարող ձեռքը գրիչ վերցնել, այլապես երկու-երեք նոպայից հետո՝ կաթվածոտ։ Շվեյցարիայում նրան հարվածեց նաև իր առաջնեկի՝ երեք ամսական դուստր մահվան վիշտը, որ շատ ծանր տարավ, մանավանդ որ ինքը քառասունչորս տարեկան էր արդեն ու այնքա՜ն ուզ իրեն չեռոհվել էր հայր լինելու երջանկությունը, այնպիսի՞ քնքշությամբ սիրում էր իր առաջին երեխային։

Հակառակ այդպիսի ծանր ճակատագրին, նա միշտ էլ, ամբողջ կյանքում, աշխատում էր անհրաժեշտի չանգիրությամբ, ստեղծելով իր հանճարեղ վեպերը։ Նա ի բեռ արտակարգորեն աշխատասեր էր, ինչպես վկայում է գիրը, բայց հենց նյութական ծանր վիճակն էլ, երևի, ստիպում էր նրան բնավ չհանգրստանալ, միշտ աշխատել գերլարված ուժերով։ Ճիշտ է, մինչև վերջ էլ գանգատվում էր հարկադրյալ շտապողականությունից, գանգատվում, որ ապահովված գրողների նման չէ ինքը, ժամանակ չունի հանգիստ աշխատանքով իր երկերը հղկելու, վերջնական մշակումով ներկայացնելու ընթերցողին, նույնիսկ խոստովանում էր, որ «նախանձում է այն գրչակիցներին, որոնք ապահովված են նյութապես, բայց ճշմարտությունն այն է, որ նա երբեք չէր կորցնում արվեստագետի խստապահանջությունն ինքն իր հանդեպ, այլ ընդհակառակը, կամքի սիստանական լարումով և հանճարի ուժով ստեղծում էր վիպագրական բոլորովին նոր մի արվեստ. և ո՞վ գիտե, գուցե հենց շտապողականությունն էլ օգնում էր նրան՝ ներշնչման թափը պահպանելու մշտապես, մի տեսակ ժայթքումով իրագործելու իր նորարարությունը։ Այնուամենայնիվ, չնայած շտապողականության հարկադրանքին, նա խոստանում էր իր գրածը, եթե տեսնում էր, որ իր բուն մտահղացմանը չի համապատասխանում. հայտնի է, օրինակ, որ «դեռ է գցել իր «Ապուշը» վեպի սկզբնավորության նախնական տարբերակը՝ երեք ամսվա աշխատանք, հետո մեկ ամսում, տենդագին լարվածությամբ, հացրել է նոր ծրագիր մշակել, գրել առաջին գլուխները և Շվեյցարիայից ուղարկել Ռուսաստան՝ ամսագրին։

Նրա մի նամակում, ուր պարզ ու վեհ արժանապատվությունից բխող գործնական չեշտով խոսում է իր ծանրածանր վիճակի մասին, հանկարծ կարդում ենք այսպիսի խոսքեր, որոնք անապատելի են թվում առաջին հայացքից. «Բայց մի՛ երեսակայեք (եթե ուզում եք մոռանել իմ մասին), թե ես շատ եմ տանջվում։ Ոչ, ուզել են նաև քաղաքիվ ուրախ բանեներ... Կյանքն ու հույսը դեռ չեն սպառվել ինձ համար»։

Այո, գիտել կլիներ այնպես պատկերացնել, թե հիվանդ, մռայլ, մշտապես տանջանքներով ընկճված մարդ էր նա։ Ոգեկան վիթխարի ուժի տեր էր Դոստոևսկին, հոգատանջվել չգիտեր քնավ։ Հոխորտան ու կրքոտ էր բնավորությամբ, մեծ թափով էր անում ամեն ինչ։ Հենց որ ժամանակ ու ուժեր էր գտնում, վերցնում էր նաև կյանքի պարզ, սովորական հաճույքները, և նույնպես թափով։ Երբ 1866 թվականի ամռան, օրինակ, արդեն աստիճանած, Մոսկվայի մոտակա էյուբլին գյուղում ուսերդագրական մեծ լարվածությամբ գրում էր «Ոճիր և պատիժ» վեպը, իսկ մոտակա ամառանոցում, ընդարձակ այգու մեջ, իր քրոջ բազմանդամ ընտանիքի էր ապրում, նա ամեն օր աշխատանքից հետո գնում էր տեսնել երեխան անգիտանալու և տերեփալի նման զվարճանում էր։ Շահելների հետ, աշխատասիրին ժամանակցում նրանց խաղերին, ինքն էր խաղը հարում, երաժշտություն էր լսում, մի խոսքով՝ հանձնվում էր այդ զվարթ մթնոլորտին, որն այնպիսի՞ բանաստեղծական թարմությամբ, այնպի՞ս գունագեղ պատկերել է մի քանի տարի հետո իր «Հավիտենական ամուսին» վիպակում։ Արտահայտում էլ, երբ չորս տարի տարից այնտեղ կնոջ հետ, տարիքը կորցնում դիտելու արվեստի գանձերը Դրեզդենում, Միլանում, Ֆլորենցիայում, գիտելու այնպես, որ ոչ մի այլ գեղագիտական հաճույք, այլև ոճագործական ներշնչում էր ստանում հատկապես իր սիրած նկարիչների՝ Ռաֆայելի, Ցիցիանի, Ռեմբրանդտի, կրտսեր Հոլբայնի, Կլոդ Լորենի գործերից։ Նաև երաժշտությունը էր շատ սիրում և կնոջ հետ հաճախում էր գրասրահները՝ բացօթյա հաճույան էր շատ սիրում և կնոջ հետ հաճախում էր գրասրահները՝ բացօթյա հաճելի զբոսանքներ անելու հատկապես Մոսքվա ու Բեռլինում, որոնց ամենից ավելի բարեկամ էր գնահատում։ Նկատելի է ու հատկանշական, որ նրան առավելապես գրավում էին արվեստի այնպիսի գործեր, որոնց պատմությունն իրենց ոգով կամ ստորագրված են խորունկ մարդասիրությամբ ու երջանկության իգձալով, ունեն փիլիսոփայական հարուստ խորք. նրա ամենասիրելի նկարչական երկը Ռաֆայելի «Ինքնաբերության մադոնան» էր։

Բնական է, Դոստոևսկին ուներ նաև մարդկային թուլություններ. իր անհազար հիվանդությունն էլ երբեմն, մանավանդ ծանր նոպաներից հետո, բացատրություն էր ազգում բնավորության վրա։ Սակայն նա բարեհոգի էր միշտ, պատրաստ էր խոսքի զղջալու և ներողություն խնդրելու, եթե անիծում վշտացներ մեկին. հիշաչարություն բոլորովին չուներ, նույնիսկ բարկանալուց հետո մեղմանում էր խոսքն, հայացքը գտնում էր հեզ ու բարի։ Նրա ամբողջ ստեղծագործության գլխավոր հերոսը, եթե կարելի է ասել ուսուցիչ, մարդկային խիզճն է, և իր անձնական կյանքում էլ նա միշտ ականջ էր գնում խղճի ձայնին, ըստ այնմ ուղղությունն կամ ստատպանը ապրելով։ Միշտ պատրաստ էր բարեկամ և նույնիսկ նյութական աջակցություն տալու բոլոր նրանց, ովքեր նեղմակով կամ անձամբ դիմում էին իրեն։ Հակառակ իր նյութական նեղ դրության, անկիզելի օգնում էր կարիքավորներին, լինի ազգական թե օտար՝ լրավոր, ուսանող, վերապատված աղջրական, երբեմն նույնիսկ հնարավորից ավելի անելով, այսինքն գրկելով իրեն։ Կյանքի վերջին մի քանի տարում, շատ կնոջ անելով, այսինքն գրկելով իրեն։ Կյանքի վերջին մի քանի տարում, շատ կնոջ վերադարձությամբ, երբ Պետերբուրգից գնում էին Ստարայա Ռուսա՝ ամռան անցկացնելու, Դոստոևսկին նստում էր երբեմն կարգի վագոն, հանդարտ ժողովրդի

վերջի մեջ, բաց էր անում դրամապանակը և դնում մեջտեղ, որպեսզի կարիքավոր մարդիկ օգտվեն. ու պատահում էր, որ Ստարայա Ռուսա հասնելուց հետո ստիպված էին լինում հեռագրել Պետերբուրգ, որպեսզի փող ուղարկեն իրենց։ Նաև շատ ընտանեսեր մարդ էր Դոստոևսկին. խիստ հոգատար էր կնոջ ու երեխաների հանդեպ, սիրում էր ամեն տեսակ ընտանեկան տոնախմբություններ տարքել, խաղալ երեխաների հետ, մի խոսքով՝ լեցի մթնոլորտ ստեղծել տանը (դուցե հիշում էր իր հոր խստությունները ընտանիքում և իր սեփական մանկության մռայլ մթնոլորտը էր «սրբագրում»)։ Ճակատագրի հարվածներին դիմադրած, անդադրում աշխատանքից հոգնած գրողը, որ ուշ տարիքում բախտ ունեցավ ընտանեկան ջերմ օջախի քաղցրությունը վայելելու, այսպես է գրում իր մի բարեկամին. «Մարդկային երջանկության երեք քառորդը ամուսնության մեջ է, իսկ մնացյալում՝ հոգիվ մեկ քառորդը միայն»։ Նշանակալից է այսպիսի մի փաստ. նրա մահից շատ ու շատ տարիներ հետո, երիտասարդ կոմպոզիտոր Պրոկոֆիևը, որ նշանավոր մարդկանցից խնդրում էր արևի մասին արևել բան գրել իր ծոցատետրում, դիմում է նաև մեծ գրողի պատվավոր այրուն և վերջինս գրում է, որ իր կյանքի անմար արևն է Դոստոևսկին։

Ի դեպ, Դոստոևսկու մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ նրա երկրորդ ամուսնության պատմությանը, որ ուղղակի առնչված է նրա դժվար կյանքի հզնաժամային մի պահի և բուն իսկ ստեղծագործության հետ, ու ավելին՝ եղել է շրջադարձային դեպք։

1866 թվականի աշնանը Դոստոևսկին ընկել էր կատարելապես հուսահատական վիճակի մեջ։ Մինչ այդ, երբ պարտատերերն սպառնում էին բանտ նետել հանձարեղ գրողին, նա փող ճարելու համար ստիպված էր եղել, ոչ մեծ գումարի դիմաց, ստորագրել մի նենգ հրատարակչի առաջարկած պայմանագիրը, որով հանձն էր առնում որոշյալ ժամկետին բոլորովին նոր վեպ տրամադրել նրան. ուշացնելու դեպքում՝ ամբողջ ինը տարի նրա ստեղծելիք բոլոր երկերը դառնալու էին հրատարակչի սեփականություն, և վերջինս ըստ իր հայեցողության էր վարվելու հեղինակի հետ։ Եվ ահա, մեկ ամիս էր մնացել մինչև ժամկետը, իսկ Դոստոևսկին դեռ ոչ մի տող չէր գրել նոր վեպից, քանի որ աշխատում էր «Մեղեր և պատիժ»-ի վրա, մաս առ մաս հասցնելով ամսագրին։ Իրոք որ հզնաժամային, անելանելի վիճակ՝ մեկ ամիս հետո այդ գիշատիչ հրատարակչի սարսուռը դառնալու հեռանկարով։ Բայց նոր վեպի ծրագիրը արդեն մշակված ուներ մտքում, և բարեկամներից մեկը առաջարկում է հավաքվել ընկերներով, գլուխները քաջանել այդ ծրագիրը և գրել միացյալ ուժերով։ Դոստոևսկին մերժում է այդ առաջարկը. «Ես երբեք իմ անունը չեմ դնի ուրիշի աշխատանքի տակ»։ Բայց ընդունում է մի ուրիշ առաջարկ՝ վեպը թելադրել մի ստենագրուհու, թեպետ երբեք չէր փորձել աշխատելու այդ ձևը։ Հաջորդ օրը նրա մոտ ուղարկում են ստենագրական դպրոցի լավագույն ուսանողուհի Աննա Սնիտկինային։ Դոստոևսկին ընդհատում է «Մեղեր և պատիժ»-ը և... քսանվեց օրում կարողանում է ստեղծել «Խաղամոլը» վեպը, թելադրելով ստենագրուհուն։ Երևի հիշող է, որ չկա չարիք առանց բարիքի։ Հենց այդ օրերից էր, որ մի նոր կյանք սկսվեց քառասունհինգամյա Դոստոևսկու համար. ճակատագիրը ժպտաց հանկարծ, անցած տառապանքների դիմաց նրան վարձատրեց անփոխարինելի, տակավին երջանկությամբ, որի անունն էր Աննա Գրիգորևնա Սնիտկինա։ Ծանոթներս ստենագրուհին մի քանի ամիս հետո դարձավ նրա կինը՝ ոչ միայն սիրազեղ, այլև գործնական խելքի տեր Անյան, որ եղավ նրա զավակների մայրը, եղավ նրա մշտական քարտուղարն ու ստենագրուհին, եղավ նաև, այսպես ասած, նրա գործերի կառավարիչը. նա իր վրա վերցրեց բոլոր ֆինանսական ու հրատարակչական գործերը և կամաց-կամաց կարգավորեց դրանք, նա էր, որ մեծ գրողին ազատեց ի վերջո ոչ միայն դրամական հոգսերից, այլև անողոք պարտատերերի սպառնալիքներից։ Մի խոսքով, նա եղավ կյանքի այնպիսի ընկեր, որ տասնչորս տարի հետո, մահվան անկողնում, Դոստոևսկին շնորհակալություն հայտնեց նրան՝ պարգևած երջանկության համար։ Իր վերջին, խոշորագույն վեպը՝ «Կարամազով եղբայրները», նվեցեց իր Անյային, որը նրա մահից հետո էլ շարունակեց հանձնաբեղ ամուսնու հիշատակին ծառայել, ամբողջ կյանքը նվիրեց նրան մինչև վերջ։

Այդ տասնչորս տարիների ընթացքում Դոստոևսկին գրեց գեղարվեստական, քննադատական, հրապարակախոսական, մինչև իսկ քաղաքական բազմաթիվ երկեր (չհաշված հատորներ կազմող նամակները, որոնք երբեմն գեղարվեստական երկի արժեք ունեն), ըստ որում չորս մեծ վեպ՝ «Ապուշը», «Դեմերը», «Պատանին» և «Կարամազով եղբայրները», որոնք, «Մեղեր և պատիժ»-ի հետ, նրա ստեղծագործության գլխավոր կառույցն են կազմում՝ նրա մեծ վեպերի «հեղամասյանը»։

Դոստոևսկու ամենասիրելի գրքերից էր Սերվանտեսի մշտենշենական գլուխգործոցը։ Բարի ու ծիծաղելի, տխուր ու գեղեցիկ, իր «խենթությամբ» իսկ իմաստուն և վսեմ Դոն Կիխոտը՝ մարդկության հավիտենական երազանքների և գեսի իդեալը ձգտող անվհատ «արկածախնդրություններին» այդ մարմնացյալ պատկերը, խորապես հուզում էր Դոստոևսկուն։ Դոն Կիխոտի մասին ամենաուժեղ արտահայտություններից մեկը պատկանում է նրան. «Ասում եմ դա վերջին ու մեծագույն խոսքն է մարդկային մտքի... և եթե վերջ պտեր երկիրն ու հետու մի տեղից հարցնեին մարդկանց՝ «Ի՞նչ է, հասկացա՞ք ձեր կյանքը երկրի վրա և ի՞նչ եզրակացրեք դրա մասին», մարդը կարող էր լռելյայն մեկնել Դոն Կիխոտը՝ «Ահա իմ եզրակացությունը կյանքի մասին, և կարո՞ղ եք ինձ դատապարտել դրա համար»։ Դոստոևսկին, անկասկած, իր սեփական հոգու ամենախոր, ամենանվիրական ձգտումներն էր տեսնում այդ մեծ կերպարի մեջ, որ առնչվում էր նաև իր համար իգեալ դարձած Քրիստոսի հետ, և այդ երկու կերպարներն էլ մշտապես ոգեորում էին նրան, հակառակ իր նույնքան խոր տարակուսանքների և իրատես հոգեբան-մտածողի տրտում և բարեմիտ իրոնիային, ավելի ճիշտ՝ այդ տարակուսանքի և իրոնիայի բովից անցնելով։

Զարմանալի չէ, ուրեմն, որ Դոստոևսկին ձգտեր ստեղծել ժամանակակից Դոն Կիխոտի կերպարը՝ իր գարշելի իրականության հետ բախվող «կատարելապես գեղեցիկ մարդուն», մի նոր իմաստուն «ասպետի»։ Եվ այդ ձգտումից ծնվեց «Ապուշը» վեպը՝ անմոռանալի Միշկինը, այդ նոր «արկածախնդիրը», բարոյական անհուն մաքրության, խղճի գերագույն իմաստության տեր մարդը, բնական, անկեղծ, «միամիտ» մարդը, որ հենց իր հոգեկան մեծության պատճառով դատապարտված էր ծաղրի ու կործանման։ Եթե Դոն Կիխոտը խենթ էր իր շրջապատի համար, Միշկինին էլ անվանեցին «ապուշ»։ Եթե Դոն Կիխոտի վրա ծիծաղում էին զվարճանալով և չար կատակներ խաղում գլխին, Միշկինի վրա ծիծաղեցին մասյորին, դրամապաշտ գարի հեգնանքով, հաստրին իսկական ապուշության, երեխաների և տատապալների անկեղծ ու համեստ քարկամ, բոլոր մարդկանց երջանկությունը երազող Միշկինը գե-

գեղեցիկի և բարու արամահույզ բանաստեղծությունն էր գաժան ու արմատական իրականության մեջ, որ բարեկրթության և իմաստասիրության «ողջախոհության գիտակի» ասպետ է և՛ բուն գեղեցիկը, և՛ բարին, և՛ բանաստեղծությունը. թեպետ ունի «էմբրյոնական» իգեալների վրա։ Այդ հեգնանքի ժայռերն այնպիսին էր, որ ոչ թե սերվանտեսյան սխրաժիտ երգիծանք, այլ գոսոսեակիական ցնցող դրամատիզմ էր հարկավոր՝ բացահայտելու համար այն նոր Դոն Կիխոտի «արկածախնդրության» ողբերգականությունը։ Նրա մեծությունն խոհապես հակացավ «անասակ», այսինքն նույն այդ իրականության սորուկը գարձած կինը՝ մեծ կրքերի ու մեծ հոգու տեր գեղեցկուհի Նաստասյա Ֆիլիպովնան, որ տեսնելով այդ մարգարդ հասպետին, առաջին անգամ «իսկական մարդ» տեսնելով՝ խորապես սիրեց նրան ու վերածվեց, ոգի ելով, մի տեսակ գոնկիխոտացավ նույնպես, սկսեց ապրել։ Բայց գուրս գալով անարդ ու անկենսական իրականությունից, նա հանդիպեց բուն իսկ կյանքի երկու հավատարարար բնեռների՝ Միշկինին ու Ռոգոժինին, հոգեկան բարձրության «ասպետին» և ճակատագրական կրքերի «ասպետին»։ Եվ ընկավ մարգկային սիրոջ փոթորկող մշտնջենական երկվության մեջ։ Իրեն անարժան համարեց հոգու ասպետին, Ռոգոժինը համբուրեց նրա ձեռքերը, արասավելով, և գնաց դեպի կրքերի վիհը, գեպի իր կործանումը։ Միշկինն իր անարատ սիրո զորությամբ ուզեց փրկել այդ գեղեցիկ ասատայլին, Ռոգոժինն իր անհագ, բայց նույնքան խոր ու անկեղծ կրքով սենյաց նրան և... սպանեց։ Բարու և գեղեցիկի բանաստեղծությունը դարձավ երգի պես հոյակապ, բայց կյանքի իրականության պես ողբերգական պոեմ։ Անհասկանալի խորհրդանշական է վեպի վերջին տեսարանը, որ Նաստասյա Ֆիլիպովնայի գիակի առաջ կիսախելագար վիճակում իրար են գտնվում եղբայրացած Միշկինն ու Ռոգոժինը՝ կյանքի ճակատագրական երկվության բնեռները՝ հոգու և մարմնի ասպետները։

«Կարամազով եղբայրները» Դոստոևսկու վերջին վեպն է, որի հիմքում նա, ինչպես հանախ նրա երկերում, քնված է իրական մի պատմություն՝ հայրասպանության «սահմանը մեղադրանքով» իրար գատապարտված մի երիտասարդ ազգի ողբերգություն։ Դոստոևսկին չորս տարի ապրել էր այդ ազգի հետ արտասահմանում, հատուկ հետաքրքրություն ցուցաբերելով հայրասպանի հանգեպ, որ չէր ընդունում մեղադրանքը, և հետո նկարագրել էր նրան իր «Հուշեր Մեռյալ տնից» գրքում։ Իսկ երբ ավելի ուշ պարզվել էր, որ իրոք անմեղ է այդ ազգան և իզուր է խորտակվել նրա կյանքը, Դոստոևսկուն առավել ևս ցնցել էր այդ «ամբողջ խորությամբ ողբերգական պատմությունը»։ Եվ տարիներ հետո այդ պատմությունը, որ քաղաքակրթությունների իմաստասիրվելով, խորհրդանշական բնույթ էր ստացել նրա ստեղծագործական մտածողության մեջ, ի վերջո հիմք է ծառայում փիլիսոփայական մեծ ընդգրկում ունեցող վիթխարի վեպի համար, ուր համադրվում և մարմնավորվում են նաև այլ մտահղացումներ, որոնք վաղուց հասունացել էին, եկը փնտրում. ժամանակակից կյանքի և ռահատարակ մարգկային կեցության էական խնդիրներ շոշափող մեծ մտահղացումներ...

Արդարև, այս կոթողային երկը՝ տիտանի երկ, որ համաշխարհային գրականության գլուխգործոցներից է, ամփոփում է Դոստոևսկու ստեղծագործական բոլոր ձգտումները, համադրում այն բոլոր հարցերը, որոնց նրան հանդիպել, ստանալ են կյանքի ընթացքում՝ կյանքի և մարվան խորհրդի, ստատ

գոյության կամ չգոյության, մարդու բարոյական էության և կրքերի բանության, բանականության և սրտի, ստեղծության ու սիրո, կյանքի գեմ գործված ոճրի և բնական հատուցման, խղճի գատաստանի և օրինական գատի, մարդկանց տարանջատող իրականության և միավորման իգեալի, աշխարհի անկատար կարգադրության և ապագա գեղագույն ներդաշնակության, հրեշտակային գեղեցկության և սոդոմական գեղեցկության, անմտաբ բարի և ուրբ վարքի, բարոյական կործանման ու վերածնման, մի խոսքով՝ մարդկային գոյության կենսական խնդիրները։ Եվ այդ բոլորը տրված են հայրասպանության մեծագույն ոճրի շարշ ալեկոծվող կրքերի, զգացումների և գաղափարների հարձանագրությամբ, ուր աշխարհվում են վեպի գաղաթնակետերը, որտեղից կարծես Դոստոևսկին՝ մեծ տատապյալն ու իմաստունը, մարդկային խղճի ու մարի ձայնն է արձագանում գարերի, նույնիսկ տիեզերքի մեջ։ Այդպիսի գաղաթնակետերից է, օրինակ, «Մեմբրանասիրություն» գլուխը՝ Իվան Կարամազովի հրեղեն բոցաբեր տատաբ ստեղծած աշխարհը գեմ, ուր ոչ միայն տառապանք է հոշոտվել նեղիկին, այլև մարգն է հոշոտում մարդուն, և ուր ամենասոսկալին այն է, որ կատարելապես անմեղ երեխան անգամ գերծ չէ տատապանքից ու հոշոտումից։ Թանձրացյալ կերպարներով, իրավիճակներով ու գործողություններով հարուստ, գեղարվեստական ու գաղափարական լիցքերով ծայր աստիճան հագեցված այս վեպը, որի համաչափությունները զգացականորեն, ստանվածաշնչային են թվում իրենց նախատեսված ահագնությամբ, ստեղծում է կարամազովյան ամբողջության մեջ ընդգրկել մարդկային բնության էական կողմերը։ Եվ միաժամանակ, կերպարների, գործողությունների, երկխոսությունների մեջ արտահայտված միտք-հույզերը, զարմանալի մի երաժշտականությամբ, ինչպես մեծակամ սիմֆոնիայում, ընդլայնվում են իրար, խորանում, ամբողջանում իրարով, կազմում մի մեծ ու բարդ ներդաշնակություն, որ ընթերցողին տալիս է կյանքի խորքերը բացահայտող, գժվար հանապարհով գեպի գեղեցկությունը տանող ու «միրուկային զորությամբ» լի գարոյական ապրումներ։ Այդ ապրումների ոգանչելի է արտահայտել ուստ նշանավոր նկարիչ Կրամսկոյը, երբ Դոստոևսկու մահվան օրերին գրել է մի նամակում, թե «Կարամազով եղբայրները» կարդալուց հետո սասկումով նայում էր շուրջը և զարմանում էր, որ աշխարհը գեռ շարունակում է հին ձևով ընթանալ և շուտ չի եկել իր առանցքի վրա, ու թե՝ ինչպե՞ս գեռ կան մարդիկ, որոնց կողոպտում են մերձավորին, կա քաղաքականություն, որ բացահայտորեն կեղծավորություն է գավանում, կան հովվապետներ, որոնց ամենայն հանգստությամբ համարում են, թե Քրիստոսի գործը մի բան է, կյանքի գործնական կողմը՝ ուրիշ բան։ Նշանակալից է, որ մեր ժամանակի մեծագույն բնագետ էյնշտեյնը հատկապես սիրել է «Կարամազով եղբայրներ» վեպը, և նա ասել է. «Դոստոևսկին ինձ ավելին է տալիս, քան որևէ գիտնական, քան նույնիսկ Գաուսը»։

Կյանքի վերջում փառքն ինքը հասավ Դոստոևսկու հոգին։ Պուշկինի հուշարձանի բացման առթիվ Մոսկվայում նրա արտասանած ճառը ցնծությամբ ազազակներով ընդունվեց։ Եվ գագիներով պսակեցին նրան։ Բայց նույն գիշերը նա այդ գաղինապակը դրեց նոր բացված հուշարձանի տակ և, գիշերվա մեռելության մեջ, ռուսական հնավանդ երկրպագությամբ մինչև գետին խոնարհվեց Պուշկինի առաջ, որի աշակերտն էր համարել իրեն։

Իսկ այսօր հանրահայտ իրողություն է, որ Դոստոևսկին, իր անսպառ ստեղ-

ծագործության շատ կողմերով, շատ ու շատ գրողների ուսուցիչ է եղել ու շարունակում է լինել ամբողջ աշխարհում։ Ճիշտ է, քննադատական միտքը, թե՛ Ռուսաստանում, թե՛ մանավանդ Արևմուտքում, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի բարոյական մեծ ճգնաժամն ապրելը դեռ լրիվ չէր հասկանում Դոստոևսկու ստեղծագործության բուն էությունը, նրա արվեստի բերած արմատական նորությունները, որովհետև նրա վեպերը դիտում էր աշխարհի «էվկլիդյան» պատկերացումով ստեղծված «կանոնավոր» արվեստի չափանիշներով, չէր ընկալում հենց այն նոր տեսանկյունը, որով Դոստոևսկին անհունորեն խորանում էր մարդու հոգեկան աշխարհի մեջ։ Սրանով է բացատրվում, անշուշտ, այն տարօրինակ փաստը, որ «Ապուշը», «Դևերը», «Կարամազով եղբայրները» վեպերն այն ժամանակ գրեթե ձախողված էին համարում ոմանք և գտնում էին, որ «Ոճիր և պատիժ» վեպից հետո Դոստոևսկու տաղանդը... անկում է ապրել։ Չէին հասկանում, օրինակ, որ Դոստոևսկու վեպերի կառուցվածքն արտահայտում է կյանքի թաքուն զարտուղությունների միասնությունն ու դրանց փիլիսոփայական իմաստավորումը, հարկ եղած դեպքում անտեսելով արվեստի ընդունված կանոնները, հիշյա այնպես, ինչպես ժամանակին արել էր մի ուրիշ նորարար տիտան՝ Շեքսպիրը։ Նրա «անփույթ, անմշակ» գրելաձևի առաջ չէին տեսնում գեղարվեստական պատկերման նոր հնարանքները, որոնք ծնվել էին հենց այդ նոր, ավելի խորաթափանց տեսանկյունից, արտահայտչական շշմեցուցիչ ուժ հաղորդելով նրա վեպերին։ Չէին հասկանում մանավանդ Դոստոևսկու արվեստի ուժեղագույն կողմը՝ լայն իմաստով երկխոսությունը, որ սիմֆոնիկ է իր կառուցվածքով և հագեցած ոչ միայն բուն իսկ կյանքի տարբերային ուժականությամբ, այլև խորունկ հուներով ընթացող փիլիսոփայական կենդանի որոնումներով ու բախումներով։ Որպես արտառոց փաստ, ի միջի այլոց, կարելի է հիշել, որ այդ շրջանի մի քննադատ (Ֆաբել) Դոստոևսկուն մեղադրել է, թե... նա «իր ապրումը ապահովելու մտահոգությամբ ձգձգել է» և «անվերջանալի մի երկխոսություն» է դարձրել իր վերջին վեպը, այսինքն «Կարամազով եղբայրները», որի հենց ներքին կառուցվածքի վիթխարի, կյանքի պես հակասական ներդաշնակությունը խուսափել է քննադատի աչքից։ մարդը ուզել է տոնական կոկիկ մի հրախաղ տեսնել այնտեղ, ուր հրաբխի լավան է դեպի երկինք ժայթքում։ Բայց նույնիսկ նշանավոր քննադատ Բրանդեսը, որ իր ժամանակին ավելի խոր է թափանցել Դոստոևսկու ստեղծագործության մեջ, հասկանալով մանավանդ նրա երկխոսության ուժը և նրան կոչելով «մեծագույն դիալեկտիկ», համենայն դեպս ասում է. «Լինելով մեծ չափով բանաստեղծ, նա անհրաժեշտ չափով արվեստագետ էր...»։ Եվ այն էլ նկատի ունենալով հատկապես «Ոճիր և պատիժ» վեպը, որ Դոստոևսկու վեպերից ամենակատարյալն է, գուցե, հենց «արվեստի» տեսակետից։

Այսօր այդ կարծիքները ոչ միայն զարմանք են պատճառում, այլև ավելի ևս ակնարկ են դարձնում այն նորությունը, որ Դոստոևսկու ստեղծագործությունը բերեց համաշխարհային գրականության մեջ։ Իրոք, այսօր անկարելի է համաշխարհային գրականությունը պատկերացնել առանց Դոստոևսկու ազդեցության։ Իրարից այնքան հեռու գրողներ, ինչպես հենց Տոլստոյը ամենից առաջ և Գորկին, Գրուսը և Թոմաս Մանը, Ստեֆան Ցվայգն ու Գոլսուորդին, Լեոնովն ու Հեմինգուեյը, Կաֆկան ու Կազանձաքիսը, Լաուբենան ու Տրուայան, Կամյուն ու

Ֆոլկները, Բուլգակովն ու Դյուրրենմատը, վերջապես նաև լատինամերիկյան գրողները՝ սկսած բրազիլացի Հիմարաենս Ռոզայից մինչև կոլումբացի Մարկեսը, ինչպես և շատ ու շատ ուրիշներ (իսկ մեր հայ գրականության մեջ, օրինակ, Նար-Դոսը), կամա թե ակամա, ուղղակի կամ անուղղակիորեն, խոստովանեն կամ ոչ, ինչ-որ բանով պարտական են Դոստոևսկու արվեստին կամ աշխարհազգացողությանը, նրա նորարարության բաց արած հնարավորություններին։

Ինչո՞վ կարելի է բացատրել Դոստոևսկու ներգործության այդ վիթխարի ուժը։ Ամենից առաջ, անշուշտ, նրա խորագույն, տարապարին մարդասիրությամբ, հասարակությանն ու անհատին հուզող սոցիալական ու բարոյական ամենասուր հարցերի անսքող, արտակարգ խորաթափանց պատկերմամբ, դրանց լուծումը գտնելու անձնական մտահոգությամբ, որ բուն իսկ պաթոսն է նրա ստեղծագործության, և որով պայմանավորված են նրա արվեստի յուրահատկությունները։ «Կեղեքից մինչև կորիզը արցունքներով հագեցած» այդ երկրագնդի վրա կյանքի աղաղակող անհեթեթություններով ողողող հանճարը մշտապես տենչացել է սոցիալական ու բարոյական համընդհանուր ներդաշնակություն, այնպիսի ներդաշնակություն, ուր չանտեսվի թեկուզ մի երեխայի արցունքն անգամ, և ուր ամեն մի անհատ իր լիարժեք ձայնն ունենա։ Հակառակ իր տանջալի տարակույսներին, նա հավատում էր, որ հնարավոր է այդ ներդաշնակությունը երկրի վրա, որքան էլ անլուծելի լինեն որոշ բնական հակասություններ, և միաժամանակ կանխատեսում էր ու նախազգուշացնում, որ անհերդաշնակ աշխարհում քաղաքակրթության բուռն առաջընթացը հղի է ճակատագրական աղետներով։

Ուրիշ հարց է այն, թե Դոստոևսկին, մանավանդ իրեն պաղատարախոս, և առավելապես իր հրապարակախոսական գործերում, երկրային ներդաշնակության համար ուղիներ որոնելիս երբեմն հիմնվում էր վիճելի, նույնիսկ հետադիմական տեսակետների վրա, մանավանդ կյանքի վերջին շրջանում, երբ շփում ունեք ցարական քաղաքականության շատագովներ Պոբեդոնոսցևի և Կատկովի հետ, թեպետ նրանց հայացքներին էլ հակադրվում էր հանճարը, տեսնելով իր խղճի ձայնին և ճշմարտանա արվեստագետի իր հանճարին։ Որպես իրապաշտ արվեստագետ ու մեծ մարդասեր, Դոստոևսկին մշտապես որոնումների մեջ էր, մշտապես ողողում էր կյանքի խորքից իր հայտնաբերած հակասություններով և դրանց փիլիսոփայական իմաստավորմամբ, և այդ հակասություններից ծնվում էին թեր ու դեմ գաղափար-զգացումներ, որոնք տարբեր բնեռներից նույն ահռելի ուժով խռովում էին նրա հոգին և նրա վեպերում արտահայտություն էին գտնում որպես հակընդդեմ ու հավասարազոր ձայներ, «որովհետև,— ինչպես ասում էր ինքը,— ամբողջ խնդիրն էլ այն է, թե ինչը պետք է համարել ճշմարտություն։ Ամբողջ «Կարամազով եղբայրները» վեպն էլ հենց մի տիտանական ասպարեզ է, ուր թեր և դեմ կարծիքներ բախվում են մ՛ այդ խնդրի շուրջ, որը վերջին հաշվով մնում է որպես խոշոր հարցական՝ ամբողջ մարդկության ուղղված։

Իր ժամանակի անմիջական հարցերով տոգորված գրողը, որի երկերը եր-

քեմն ոչ թե գրական ստեղծագործության, այլ պարզապես խղճի ձայնից թելադրված խորագույն ապրումների գրաման ապավորություն են թողնում, գրական արվեստի մեծագույն նորարարներից մեկը եղավ, իր հայտնատեսությամբ հաղթական վիպասանություններ բերեց մարդկային հոգու անհունից, մարդկության առաջ ծառացած ճակատագրական խնդիրները շոշափելի կենդանությամբ պատկերեց իր վեպերում, մի խոսքով՝ ստուգանքների ազդամուղում գտնված խղճի աղաղակ։ Եվ նրա իր ժամանակին նա ստրօրինակ էր թվում շատերին, այսօրվա տենդագին ազնարհում ավելի ու ավելի այժմեական է դառնում իր էքսաստատիկ իրապաշտությամբ։

ԿԱՐԳԻՍ ՍԱՅԻՐՆԵՑԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մասն երրորդ

Գիրք յոթերորդ — Ալյոշա 5
Գիրք ութերորդ — Միտյա 56
Գիրք իններորդ — Նախնական քննություն 163

Մասն չորրորդ

Գիրք տասներորդ — Տղաները 260
Գիրք տասնմեկերորդ — Իվան Ֆյոդորովիչ . . . 326
Գիրք տասներկուերորդ — Դատական սխալ . . . 457

Վերջաբան 588
Խղճի աղաղակ — Կարպիս Սուրենյան . . . 626

Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկի

ԿԱՐԱՄԱԶՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Վեպ

Федор Михайлович Достоевский
БРАТЬЯ КАРАМАЗОВЫ
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1984

Խմբագիր՝ Է. Ռ. Մասումյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Զալինակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Թալաքյան

ИБ № 4875
Հանձնված է շարվածքի 30.03.83։ Ստորագրված է տպագրության՝ 20.12.83։ Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 33,6 պայմ. տպ. մամ., 33,91 պայմ. ներկ. թերթ., 32,2 հրատ. մամ.։ Գինը՝ 2 ռ. 90 կոպ.։ Պատվեր՝ 594։ Տպաքանակ՝ 50 000։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան, 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեգապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.